



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# ՌՈՆՏՈՆ

ՄԱՅՈՒԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ



1979



ՀԱՄԱՂԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

## ԳԵՐԱԶԱՆՑՕՐԷ՛Ն ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Ռոստոմ:

Զաւարեանի մահէն ետք, եւ յատկապէս 1915-1918 բախտորոշ քառամեակին, միակ վերապրողը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեանն է:

Ան՝ որուն յեղափոխական գաղափարականն ու սլացքը, որուն կազմակերպչական տաղանդն ու աշխատունակութիւնը, անհատականութիւնը եւ աներեր վճռականութիւնը ամենէն աւելի ուժեղ դրոշմը ձգեցին մեր կուսակցութեան կառոյցին, ըմբռնումներուն, աշխարհահայեացքին եւ գործելակերպին վրայ:

Ռոստոմ՝ ամբողջ երեք տասնամեակ ներկայ ամենուրեք, ժընեւէն Թիֆլիս, Կարինէն Պարսկաստան, Պուլկարիայէն ու Պուլսէն Բագու, յղացած, կազմակերպած, երբեմն նաեւ ուղղակիօրէն ղեկավարած Դաշնակցութեան ապստամբական եւ զինական ձեռնարկներէն շատերը՝ Խանասորի արշաւանք եւ Պարսկական Յեղափոխութիւն, եկեղեցական կալուածներու գրաւման դէմ ծառայում եւ հայթաթարական կռիւներ, Հ. Յ. Դ. Զինուորական Վարժարան եւ Բագուի հերոսամարտ:

Ռոստոմ՝ գերազանցօրէ՛ն Յեղափոխականը եւ մեծ Վարպետը գործին: Ան՝ որուն համար կենդանի աշխատանքը չէր ճանչնար «մեծ» ու «փոքր» տեսակներ, որ միշտ այնտեղ էր ուր կար վտանգ կամ ընդլատակեայ ձեռնարկ, յեղափոխական կռիւ կամ քաղաքական-յարաբերական գործ. որ խմբագիր էր բայց ի պահանջել հարկին՝ նաեւ գրաշար, կազմակերպական գործիչ էր եւ ուսուցիչ միաժամանակ, ղեկավար էր բայց Յեղափոխութեան մարտի՛կ միանգամայն:

Ռոստոմ, վերջապէս, որուն առինքնող եւ հմայող դէմքը չի պարփակուիր միայն Հայ Յեղափոխութեան եւ հայ ազատագրական պայքարի սահմաններուն մէջ. որ ընկերակիցն ու մտերիմն էր Ռուսական Յեղափոխութեան տիտաններուն, կեդրոնական բեւեռներէն մէկը՝ պարսիկ ժողովուրդի յեղափոխական կռուին. որ անժխտելի

հեղինակութիւն էր ե՛լ մակեդոնացի, ե՛լ պուլկար, ե՛լ քիւրտ, ե՛լ վը-  
րացի լեղափոխականներուն մօտ:

Անոր մահուան վաթսունամեակին առթիւ, Հայ Յեղափոխա-  
կան Դաշնակցութեան Բիւրոն, բոլո՛ր մարմիններն ու ընկերները կը  
խոնարհին Մեծ Յեղափոխականին ու Գործի Վարպետին անկորնչե-  
լի վաստակին, ճառագայթող էութեան ու յաւերժօրէ՛ն անմահ յիշա-  
տակին առջեւ:

Ռոստոմի սակաւաթիւ խմբագրականներուն, կորուստէ փըր-  
կըած քանի մը տասնեակ նամակներուն եւ անոր խառնուածքին ու  
գործունէութեան կենդանի վկայութիւնը բերող յուշագրութեանց եւ  
յօդուածներու շարքի մը ընդմէջէն՝ անոր մահուան վաթսունամեա-  
կին նուիրուած այս հատորը թող նոր ներշնչարան մը ըլլայ մեր լե-  
ղափոխական եւ ազատագրական պայքարի ներկայ ու գալիք սե-  
րունդներուն համար: Ո՛չ մէկ հատոր կրնայ անշուշտ սպառիչ կեր-  
պով պատկերել եւ կատարելապէս բնութագրել Ռոստոմի եւ Ռոստոմ-  
ներու դիմագիծը, կեանքն ու վաստակը: Անոնց պատմութիւնը Հայ  
Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւնն է՝ մասնաւորաբար  
իր առաջին երեսնամեակի արիւնոտ այլ պանծալի շրջանին, որ մեզ  
կերտեց իբրեւ մարդ, իբրեւ հայ եւ իբրեւ անկախ պետականութիւն:  
Գիր ու յուշ ըլլալէ առաջ՝ ապրո՛ւմ է այդ պատմութիւնը, հաւատոյ  
հանգանակ եւ անխորտակելի կամքի մը արտայայտութիւն:

Ռոստոմի եւ Ռոստոմներու յաւերժական ներկայութեամբ, այդ  
ապրումը, այդ հաւատքն ու անխորտակելի կա՛մքն է որ կը փոխանցը-  
լին այսօր մեզի, բայց մանաւանդ մեր երիտասարդ սերունդին, իբ-  
րեւ սրբազան եւ ընդմի՛շտ կենդանի աւանդ:

Յունիս 1979



## Ա Յ Ս    Հ Ա Տ Ո Ր Ը

Ռոստոմի մահուան վաթսունամեակին առիթով հրատարակուող այս հատորը, հիմնականին մէջ, կը պարտինք ֆրեզնոյւբնակ բնկեր Յովակիմ Յովակիմեանի (Յ. Արշակունի) հաւաքումի բծախնդիր աշխատանքին, ինչպէս նաեւ, մասամբ, անոր նիւթական նիգերուն:

Լուսապատնէններու, մեքենագրուած թէ՛ ձեռագիր արտագրութեանց ձեւին տակ, մեր վաստակաւոր բնկերը մեզի հայրայքած է ներկայ հատորին մէջ տեղ գտած գրեթէ բոլոր գրութիւնները: Իր այդ համբերատար աշխատանքին վրայ, մենք կատարած ենք կարգ մը յաւելումներ միայն, ինչպէս նաեւ ներկայացման շարքի մասնակի վերադասաւորում մը:

Հատորին մէջ տեղ գտած գրութիւնները, Ռոստոմէն թէ՛ Ռոստոմի մասին, մեծ մասով անտիպներ չեն: Անոնք քաղուած են մեր պարբերական մամուլէն, յատկապէս ԴՐՕՇԱԿԻ, ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի եւ ՎԷՄԻ համարներէն, ինչպէս նաեւ ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱՅՏՈՒԹԵԱՆ երկու հատորներէն, ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄԷՆ եւ կուսակցական թէ՛ անհատական զանազան այլ հրատարակութիւններէ: Օգտագործուած աղբիւրը, իբրեւ կանոն, յիշատակուած է իւրաքանչիւր գրութեան տակ:

Հատորը կը բաղկանայ գլխաւոր չորս մասերէ:

Առաջին մասը կոչուած է տալու Մեծ Յեղափոխականին բարոյական դիմագիծն ու արժէքը՝ հիմնական գիծերու մէջ, յարակցուած անոր կեանքի ամփոփ պատմութեան եւ գործունէութեան կարեւոր հանգրուաններուն հետ: Այս բաժնին մէջ յաջորդաբար տեղ գտած են ողբացեալ Սիմոն Վրացեանի ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄԷՆ՝ Ռոստոմի նուիրուած գլուխը, Միքայէլ Վարանդեանի

բնութագրումը՝ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ գրքի (Ա. հատոր) «Ղեկավարները» գլուխէն առնուած, Ռոստոմի մահուան տասնամեակին առիթով ԴՐՕՇԱԿԻ մէջ լոյս տեսած «Ռոստոմ եւ Արամ» ակնարկը եւ Զապէլ Եսայեանի «Յիշողութիւններ եւ տպաւորութիւններ»ը, Ռոստոմի մասին, 1920 Յունուարի ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ համարներէն առնուած:

Երկրորդ բաժինը յատկացուած է ԴՐՕՇԱԿԻ այն խմբագրականներուն եւ յօդուածներուն որոնք, Սիմոն Վրացեանի, Վահան Նաւասարդեանի եւ ուրիշներու վկայութեամբ, կը պատկանին Ռոստոմի գրչին, ինչպէս նաեւ Ռոստոմի կարգ մը այլ գրութիւններուն (Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ հատորներէն եւ զանազան այլ հրատարակութիւններէ ֆաղուած): Զանց ըրած ենք ԴՐՕՇԱԿԻ 1895-97ի համարներուն մէջ լոյս տեսած կարգ մը թղթակցութիւններ եւ յօդուածներ («Նամակներ պարսկա-տանկական սահմանազլխից», «Նամակ Կարինից» եւ այլ խորագիրներով), որոնք կը վերագրուին Ռոստոմին, բայց որոնց Ռոստոմի կողմէ գրուած ըլլալուն *ապահով* փաստը չունինք: Զանց ըրած ենք նաեւ Հ. Յ. Դ. անդրանիկ Ծրագրի ներածականը որ, ամենայն հաւանականութեամբ, նոյնպէս կը պատկանի Ռոստոմի գրչին (Քրիստափորի եւ Սիմոն Զաւարեանի աշխատակցութեամբ), բայց որ քանի մը առիթներով հրատարակուած է արդէն<sup>(1)</sup>: Ի դէպ, անժխտելի է նաեւ Ռոստոմի, եթէ ոչ ոնին, գէթ շունչի՛ն ներկայութիւնը Հ. Յ. Դ. երկրորդ (1907ի) Ծրագրին մէջ եւս<sup>(2)</sup>:

Երրորդ բաժինը յատկացուած է Ռոստոմի իննսուն նամակներու, որոնք լոյս տեսած են ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ գույք հատորներուն, ՎԷՄԻ համարներուն եւ զանազան այլ հրատարակութեանց մէջ: Նկատի ունեցած ենք ե՛ւ Ռոստոմի կողմէ անձնապէս ստորագրուած նամակները, ե՛ւ անոնք, որոնք գրուած են ԴՐՕՇԱԿԻ իմբագրութեան կամ Արեւմտեան Բիւրոյի անունով, բայց բացայայտօրէն կը պատկանին Ռոստոմի գրչին

(ԴԻԻԱՆԻ հատորներուն մէջ Սիմոն Վրացեանի կողմէ տրուած վկայութեամբ): Հ. Յ. Դ. կեդրոնական արխիւի հնագոյն թղթածրարներու արագ ֆննութիւնը հնարաւորութիւն տուաւ մեզի ունենալու լուսապատկէնները Ռոստոմէն կարգ մը այլ նամակներու, որոնց նոյնպէս տեղ կու տանք՝ «անտիպ» յիշատակութեամբ: Կեդրոնական արխիւին մէջ վստահաբար կը գտնուին Ռոստոմէն այլ նամակներ ու ձեռագրեր՝ տակաւին անտիպ: Անոնք ժամանակի ընթացքին կը հրատարակուին անշուշտ ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքին մէջ:

Հատորի չորրորդ եւ վերջին մասը յատկացուած է զանազան հեղինակներու, յեղափոխական ընկերներու եւ յօդուածագիրներու կողմէ Ռոստոմի մասին գրուած յուշերու եւ տպաւորութիւններու, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութենէն կարգ մը դրուագներու (պայքար հայ եկեղեցական կայուածներու գրաման ցարական որոշման դէմ, մասնակցութիւն Պարսկական Յեղափոխութեան, Բագուի հերոսամարտ եւն.), որոնց մէջ կարեւոր, յանախ նաեւ որոշիչ դեր ունեցած է Ռոստոմ: 43 յօդուածներ տեղ գտած են այս բաժնին մէջ, սկսելով Սիմոն Վրացեանի «Կենսագրական ուրուագիծ»էն (առնուած ԴՐՕՇԱԿԻ 1929 Յունուար-Փետրուարի համարէն) եւ յանգելով ԱԶԴԱԿ ՇԱԲԱԹՕՐԵԱԿ-ԴՐՕՇԱԿԻ «Առաջնորդը» խմբագրականին (24 Փետրուար 1974, Ռոստոմի մահուան յիսունըինգամեակին առթիւ): Երկար յօդուածներու պարագային յանախ գոհացած ենք հատուածներով միայն, զանց ընելով այն բաժնիները, որոնք ուղղակի կերպով չեն աւրնչուիր Ռոստոմի անձին կամ գործունէութեան հետ. բայց չենք վարանած լրիւ տալու առանձին շահեկանութիւն ներկայացնող կարգ մը յօդուածաշարքեր՝ ինչպէս, օրինակ, Արամ Ալշուջեանի «Ռոստոմը Բագուում» երկար յուշագրութիւնը, աւելուած ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի 1956-57ի համարներէն: Ըստ հնարաւորի յարգուած է դէպքերու ժամանակագրական կարգը (Ռոստոմի ուսանողութենէն մինչեւ անոր մահը):

Սիմոն Վրացեանի «Կենսագրական ուրուագիծ»ը կ'ամբողջացնէ միեւնոյն հեղինակի «Ռոստոմ» ակնարկը, ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ հատորէն առնուած եւ տեղ գտած ներկայ աշխատութեան առաջին մասին մէջ: Միասնաբար, այս երկու գրութիւնները կու տան Մեծ Յեղափոխականի կեանքին, գործունէութեան եւ բարոյական դիմագծին մասին *մօտաւորապէս*

(1) Վերջին անգամ՝ ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի ք. հատորին մէջ, էջ 11-14: Տեսնել նաեւ, նոյն հատորին մէջ, էջ 8, անդրանիկ Ծրագրի մասին տրուած բացատրութիւններն ու համապատասխան ծանօթագրութիւնները:

(2) Տեսնել ՆԻԻԹԵՐ Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի Գ. հատորը, ամբողջութեամբ յատկացուած Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովին (1907): Ռոստոմ մաս կը կազմէր Իննի Յանձնաժողովին (տեսնել ի մասնաւորի էջ 294):

ամբողջական պատկեր մը: Մեծ բացական *իրապէ՛ս ամբողջա-  
կան* պատկերն է սակայն, առանձին հատոր մը (եթէ ոչ հատոր-  
ներ)՝ նուիրուած Ռոստոմի կեանքին, դէմքին, գործունէութեան:  
Յաւալի է նկատել, որ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներուն  
մասին մենք ցարդ չունինք քիչ թէ շատ ամբողջական ուսումնա-  
սիրութիւններ<sup>(3)</sup>, իսկ Ռոստոմի մասին ոչ իսկ յուշագրական թէ  
քննական բնոյճանուր ակնարկ մը՝ նման ողբացեալ ընկեր Արշա-  
լոյս Աստուածատրեանի «Արամբ» աշխատութեան, որ առաջին  
էւ հիմնական բաժինը կազմած էր տասը տարի առաջ հրատա-  
րակուած համանուն հատորին: Գիտենք որ իր պաշտած Ռոստո-  
մին առանձին հատոր մը նուիրելը կեանքի առաջադրանքներէն  
մէկն էր եղած մեր մեծ ընկերոջ՝ Սիմոն Վրացեանի, եւ իր վեր-  
ջին տարիներուն նման աշխատանք մը տակաւին իրագործած չըլ-  
լալը՝ անոր մեծագոյն ցաւերէն մէկը: Գիտենք նաեւ, որ ան ան-  
հրաժեշտ թելադրանքն ու ցուցմունքը ըրած էր իր աշակերտնե-  
րէն՝ ընկեր Վարդան Գրիգորեանի — ներկայիս Փենսիլվանիոյ  
Համալսարանի փոխ-նախագահ Փրոֆ. Վարդան Գրիգորեան —  
անոր վստահելով Ռոստոմի մասին քննական ուսումնասիրութիւն  
մը պատրաստելու գործը եւ իր մօտ գտնուող փաստաթուղթերը:  
Յոյս ունինք, որ Փրոֆ. Վարդան Գրիգորեանի այդ աշխատու-  
թիւնը անպայմա՛ն լոյս կը տեսնէ:

Հ. Տ.

(3) Շահեկան են անշուշտ Աւետիս Ահարոնեանի «Քրիստոսական Միջնադար» եւ  
Միքայէլ Վարանդեանի ՍԻՄՈՆ ԶԱՆՎՐԵԱՆՆԸ, առանձին գրքոյկներով հրատարակուած 1926ին  
եւ 1927ին («Հայրենիք» մատենաշար): Բայց անոնք անձնական ծանօթութեան բերմամբ եւ  
մեծ առաջնորդներու կորուստին զգացական տպաւորութեան տակ գրուած կենսագրական  
ակնարկներ եւ արժեւորման փորձեր են աւելի, քան կեանքի, դէմքի եւ մանաւանդ *գործու-  
նէութեան* սպառիչ ուսումնասիրութիւններ:

Ռ Ո Ս Տ Ո Մ

Տարբեր կարգի անհատականություն էր Ռոստոմը: Ոչ Քրիստափորի մտքի անմիջական ուժն ու հնայքը ուներ նա, ոչ էլ Չաւարեանի բուն խառնուածքը: Արտաքինով հակապատկերն էր երկսի: Միջահասակ, ամուր կազմուածքով, աւտոզ, ուժեղ: Լայն ուսերի վրայ՝ սոկրատեան գլուխ: Իմացական լայն ճակատ՝ վշտի կամ վայրույթի պահերին ծածկուած խորունկ կնճիռներով: Սեւ մօրուքն ու գլխի գանգուր մազերը՝ ցրիւ ու խառնափնթոր: Թուխ յօնքերի տակ՝ խոհուն ու խօսուն աչքեր, յաճախ՝ ցուարթ ու հեզնական: Ժպիտը՝ անմոռանալի: Անմոռանալի՝ եւ ցասումը: Հագուստը՝ պարզ ու համեստ: Պարզ ու համեստ՝ եւ իր շարժումները, վերաբերումը դէպի մարդիկ:

Առաջին տպաւորութիւնը Ռոստոմից — սովորակա՛ն մարդ: Երեւոյթը՝ սովորական: Խօսքը՝ անպաճոյճ եւ հասարակ: Հետաքրքրութեան նիւթը՝ առօրեայ, գործնական հարցեր: Ճառախօս չէր. աւելի ձեռքերն էին խօսում, քան լեզուն: Որեւէ տեղ երբեք առաջին շարքերում կարելի չէր տեսնել նրան. ուրիշներին էր առաջ քշում, ինքը մնում էր ստուելի մէջ, շատերի հետ: Անձնական հետաքրքրութիւն չունէր, ինչպէս եւ չունեցաւ անձնական կեանք: Միշտ գործի վրայ էր, եւ Ռոստոմի համար կարելուր ու անկարելուր գործեր չկային. գործեր միայն կային, որոնց վրայ անխնայ թափում էր իր ուժն ու եռանդը: Միշտ շարժման մէջ էր. Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան, Եւրոպայի վանական երկրներ, Հայաստանի քաղաք ու գիւղ — Ռոստոմը ամէն տեղ էր, ուր կուսակցութիւնը անհրաժեշտ էր գտնում իր ներկայութիւնը: Եւ միշտ կեանքով լի, լաւատես ու գործունէայ: «Յեղափոխութիւնը, ասում էր Ռոստոմը, նախ գործ է, լետոյ՝ զաղափար — ա՛յս է ճշմարտութիւնը: Աւելի ճիշդ՝ յեղափոխութիւնը գործ է զաղափարի համար»: Եւ մինչեւ մահ հաւատարիմ մնաց այս սկզբունքին:

Որոշ չափով նաեւ իր բնագիտական մասնագիտութիւնն էր, թերեւս, պատճառ, որ Ռոստոմը ուներ դրական, չասելու համար նիւթապաշտ միտք: Նրան «մարքսիստ» էին կոչում կուսակցութեան մէջ եւ, անշուշտ, ոչ առանց իբրաւունքի: Դաշնակցութեան առաջին ծրագրի մարքսիստական տարրերը Ռոստոմից էին գալիս գլխաւորապէս:

Շատ կարոյացող չէր, բայց ինչ որ կարգում էր՝ իւրացնում էր հիմնովին: Իր սիրած հեղինակներն էին Ռաբլէ, Սերվանտէս, Գոգոլ: Վերջինիս «Տարաս Բուլբա»ն գիտէր գրեթէ գոց: Տարասից շատ բան կար եւ Ռոստոմի մէջ:

Քրիստափոր եւ Չաւարեան շեշտուած անհատականութիւններ էին որոշ մարպերում. Ռոստոմի մէջ համադրուած էին երկսի կարողութիւններն էլ: Նա ուներ մտաւորական բարձր յատկութիւններ, պօրաւոր եւ յարատեւ կամք, օժտուած էր կազմակերպական-վարչական ընդունակութիւններով: Անհունօրէն նըւիրուած էր հայ ժողովրդի դատին: Մարդկային էր եւ յաշխարհէ: Քրիստափոր-

րից եւ Չաւարեանից երկար ապրեց, աւելի գործեց եւ իր մտքի ու գործի դրոշմը աւելի տեսանելի է Հ. Յ. Դաշնակցութեան վրայ: Եթէ Քրիստափորը եղաւ Հ. Յ. Դաշնակցութեան միտքն ու կամքը, եւ Չաւարեանը՝ նրա սիրան ու խիղճը, Ռոստոմը ե՛ւ միտք էր, ե՛ւ կամք եւ խիղճ՝ Դաշնակցութիւնը ինքը իր բովանդակ էութեամբ:

Ռոստոմն եւս գողթնցի էր՝ Քրիստափորի հայրենակից: Ծնուած էր Յղնա գիւղում 1867 Յունուար 18ին, բուն անունով՝ Ստեփան Չօրեան: Ուրեմն, Քրիստափորից 8 տարիով փոքր էր եւ գրեթէ հասակակից Չաւարեանին: Նահապետական ունեւոր ընտանիքի պաւակ էր եւ մանկութիւնը անցկացրեց գիւղում, գեղեցիկ բնութեան ծոցում, զուտ հայկական միջավայրում: Գիւղի ծխական դրօշրոցում, փոքր հասակից երեւան բերեց առանձին սէր դէպի հայերէն լեզուն եւ պատմութիւնը, ինչպէս նաեւ եկեղեցական երգեցողութիւնը: Սիրում էր, լատրամադրութեան մէջ, գրաբար կտորներ արտասանել եւ շարականներ երգել: Հակառակ որ երաժշտական կրթութիւն չունէր, ոչ էլ երգելու ընդունակութիւն, ուր որ լինէր՝ փորձում էր երգեցիկ խմբեր կազմել եւ ազգային ու ժողովրդական կամ յեղափոխական երգեր սովորեցնել:

Գիւղական դպրոցը չաւարտած՝ ծնողները տանում են պատանի Ստեփանին Թիֆլիս, ուր նա, Բեգլարեան մասնաւոր դպրոցում նախապատրաստուելուց յետոյ, 1882ին, մտնում է պետական ռեալական դպրոցը, որ աւարտում է 1886ին: Ռեալական դպրոցը ընդունակ աշակերտներից է լինում եւ առանձնապէս աչքի է ընկնում բնագիտական եւ մատենատիկական առարկաների մէջ: Եւ արդէն դպրոցական նստարանի վրայ՝ սկսում է հետաքրքրուել հասարակական խընդիրներով եւ գործօն մասնակցութիւն է ունենում աշակերտական ինքնապարգացման խմբակների մէջ: Նրա դպրոցական ընկերները վկայում են, որ հանդարտ ու խոհուն տղայ էր. չէր սիրում մասնակցել խաղերին. շատ կարդում էր եւ շատ ստաժում: Ընկերները նրա անունը դրել էին Քոթոթ՝ քոթոթի նմանուղ կապնուածքի պատճառով. այդ անունը մնաց վրան մինչեւ վերջ: Քրիստափորի եւ Չաւարեանի պէս նա եւս գրաւուեց ռուս յեղափոխական ու մտաւոր շարժումներով, բայց հայկականութիւնը իր մէջ աւելի պօրաւոր էր:

Ռեալական դպրոցը աւարտելուց յետոյ, նա, նոյն տարին իսկ, մտաւ Նովո-Ալեքսանդրեան Գիւղատնտեսական ձեւարանը, Վարշաւայի մօտ, ուր, սակայն, երկար չմնաց. ուսանողական խռովութեան մասնակցելու պատճառով ձերբակալուեց եւ ոստիկանի հսկողութեան տակ աքսորուեց ծննդավայրը՝ Յղնա՝ արկուելով ուրիշ դպրոց մտնելու իրաւունքից: Յղնայում Ռոստոմը ճարեց Արքահամեան անունով մի անցագիր, մեկնեց Թիֆլիս եւ մտաւ յեղափոխական խմբակների մէջ: Քրիստափորի յուշերից տեսնում ենք, որ, 1887ին, նա փորձում է գաղտնի տպարան պահել Թիֆլիսում, Քրիստափորի հետ, որ, սակայն, նիւթական միջոցների բացակայութեան պատճառով, չի յաջողում:


Թիֆլիսից Ռոստոմը անցնում է Բազու, ուր Արքահամեան անունով քըննութիւն է տալիս ռեալական դպրոցում եւ 1889ին մտնում է Մոսկուայի Պետրովսկայա Գիւղատնտեսական ձեւարանը, ուր ուսանում էին Ս. Չաւարեանը, Ա. Ստիակեանը եւ ուրիշներ, որոնք յետոյ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր կամ ղեկավար ուժերը դարձան: Ռոստոմը մեծ եռանդով մասնակցում է հայ եւ



ՍԻՄԵՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ  
1866—1913

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵՆՆԻ  
1859—1905

ԱՏԵՓԱՆ ՉՕՐԵԱՆ  
1867—1919





Ռոստոմի Պոլկարիոյ Դպրոցը

ռուս ուսանողական շարժումներին: Եւ 1890ին, ուսանողական ցոյցի ժամանակ, ձեռքակալուում եւ նորից քստրուում է ծննդավայր: Աքստրի ժամանակը զուգահիշում է Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր ժողովներին, որով Ռոստոմը անմիջական բաժին չի ունենում Դաշնակցութեան կազմակերպութեան գործում:

Երբ Ռոստոմը Թիֆլիս հասաւ, Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն կազմակերպուած էր: Նա ամբողջ էութեամբ նետուում է գործի մէջ եւ դառնում է Կեդրոնական Վարչութեան աջ բաւուկը, իբրեւ մտերիմ գործակից Քրիստափորի եւ Չաւարեանի: «Նա վարչութեան մէջ չէր, վկայում է Մ. Շաթիրեանը, բայց ամենից գործունէայ անդամն էր դարձել մեր կազմակերպութեան: Խմբեր կազմել, թուուցիկներ հրատարակել, պինավարժութեան գործը վարել — բոլորը նրա վրայ էր ընկած»:

Հիմնադիր ժողովից անմիջապէս վերջը, տեղի ունեցաւ գործոն ուժերի բաժանում շրջանների վրայ. Չաւարեանը, Արղուսեանը եւ Յ. Իւսուֆեանը նշանակուեցին Տրապիզոն, Արամ Արամեանն ու Տ. Օքանեանը՝ Կարին, Պետոն՝ Վան, Յովնան Դաւթեանը մի խումբ ընկերներով՝ Թաւրիզ: Ռոստոմն եւս մեկնում է Թաւրիզ, ուսուցչական պաշտօնով, ուր մնում է մէկ տարի՝ պաշտօնը զլիսաւորապէս Դաշնակցութեան գործերով:

Վերադառնալով Թիֆլիս՝ նա մասնակցում է Հ. Յ. Դ. Առաջին Ընդհ. Ժողովին, 1892ին, ուր հաստատուում է Դաշնակցութեան Ծրագիրը: Ռոստոմը, Քրիստափորի եւ Չաւարեանի հետ, ժողովի մղիչ ոգին է հանդիսանում եւ ծրագրի հեղինակներից սէկը. նրա գրչին է պատկանում ծրագրի ներածական մասը, որ աւելացուեց ծրագրին Ընդհ. Ժողովից յետոյ՝ վաւերացուելով յաջորդ՝ Երկրորդ Ընդհ. Ժողովում:

1893ի սկիպը, Բիւրոյի որոշումով, Ռոստոմը անցնում է Ռումանիա կազմակերպելու համար «Դրօշակ»ի հրատարակութիւնը, սակայն քաղաքական պայմանները թոյլ չէին տալիս Ռումանիայում հրատարակել «Դրօշակ»ը: Նա Քրիստափորի թողած տառերը փոխադրում է ժընեւ, ուր եւ հաստատուում է «Դրօշակ»ի խմբագրութիւնը՝ Ռոստոմի ղեկավարութեան տակ: Նա ե՛ւ խմբագիր է, ե՛ւ գրաշար եւ ամեն ինչ, եւ միաժամանակ վարում է կուսակցական թղթակցութիւնը: Խմբագրատունն ու գրաշարանոցը նրա ուսանողական համեստ սենեակն էր: Միեւնոյն ժամանակ դասախօսութիւններ էր լսում համալսարանում՝ բնագիտութիւնից եւ ընկերային գիտութիւններից: Գործօն մասնակցութիւն է բերում տեղական հայ ուսանողական կեանքին: Իրեն աջակից էին ուսանող Սիմոն Շիւեանը, որ ինստական թուականների Դաշնակցական աչքի ընկնող գործիչներից էր, Օր. Լիպա Մելիք-Շահնապարեանը՝ իր ապագայ կեանքի ընկերը եւ ժընեւ գտնուող մի քանի ուսանող-ուսանողուհիներ:

Ժընեւը, սակայն, բաւարարութիւն չէր տալիս Ռոստոմի եռուն եւ յարաշարժ բնաւորութեան: Նա երկար մէկ տեղ նստող եւ խաղաղ աշխատանքին նըւիրուող մարդ չէր: Նրա հոգին ձգտում էր կենդանի գործի ասպարէզ, երկիր, ժողովրդի մէջ, ուստի բազմաթիւ անգամներ խնդրում է Բիւրոյի ընկերներից ապատել իրեն «Դրօշակ»ի խմբագրութիւնից: «Ես խեղդում եմ այստեղ, օդ չըկայ», գրում էր նա իր նամակներից մէկում: Եւ, ի վերջոյ, յաջողեց «ապատուել» ժընեւից. 1895ին, պարսկական անցագրով, իբրեւ «սամովարի վաճառական»,

Տրապիպոնի վրայով, մեկնեց Կարին: Ճանապարհին, Պոլսի նաւահանգստում, նաւի վրայ, տեսնուեց Յ. Իւուֆեանի հետ, որ Բիւրոյի ներկայացուցիչն էր Պոլսում: Տրապիպոնում մի օր մնաց ընկերների հետ՝ յանձնելով նրանց հետը բերած առքանակները, Կարինում հրաւիրուեց ուսուցիչ ապգային վարժարանի եւ նուիրուեց կուսակցական աշխատանքների տեղական ընկերների եւ Ղարա-Մելիքի հետ, որ այդ օրերին Կարնում էր:

Ռոստոմը նոր էր հասած Կարին, երբ սկսուեցին հայկական շրջանների ընդհանուր կոտորածները: Նրա ջանքերով երիտասարդներից կազմուեցին ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք, Կարինի կոտորածի օրը, դիմադրեցին շարդարարներին, որի շնորհիւ կոտորածը, համեմատաբար, լայն ծաւալ չստացաւ: Շուտով, սակայն, ձերբակալուեց եւ, իբրեւ պարսկահպատակ, Ղարա Մելիքի հետ միասին, աքսորուեց Պարսկաստան: Թէ՛ Կարնից եւ թէ՛ թուրք-պարսկական սահմանագլխից Ռոստոմը հետաքրքրական թղթակցութիւններ ուղարկեց «Դրօշակ»ին:

Պարսկաստանից Ռոստոմը անցաւ Թիֆլիս, ուր մի առ ժամանակ վբաղուեց Կովկասեան կուսակցական գործերով: 1898ին մասնակցեց Հ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. ժողովին, ուր, ի միջի այլոց, որոշուեց «կապեր հաստատել մակեդոնացիներու, յոյներու եւ ուրիշներու հետ»՝ թրքական բռնակալութեան դէմ ընդհանուր ձակատ ստեղծելու նպատակով: Ռոստոմը առանձնապէս հետաքրքրուած էր գործակցութեան գաղափարով մակեդոնացիների հետ եւ ռուսութեամբ փարեց այդ գործին: Յաջորդ տարիները նա անցկացրեց Բալկաններում՝ հետապնդելով հայ-մակեդոնական գործակցութեան ծրագիրը: Կովկասում ամուսնացել էր Օր. Լիպա Մելիք-Շահնապարեանի հետ. կնոջ հետ միասին նա Ֆիլիպպեում մասնաւոր դպրոց հաստատեց, որպէսզի հնարաւորութիւն ունենար ապրելու Բուլգարիայում: Այդ դպրոցը դարձաւ մի տեսակ հնոց նոր սերունդը դաշնակցական գաղափարներով թրծելու:

1902ին Ռոստոմը վերադարձաւ Կովկաս եւ երբ 1903ին, ցարական կառավարութիւնը ձեռք դրեց հայ ապգային-եկեղեցական կալուածների վրայ, եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոտքի հանեց հայութիւնը ի պաշտպանութիւն ապգային իրաւունքների, Ռոստոմը դարձաւ այդ շարժման ոգին: Յանուն Հ. Յ. Դաշնակցութեան նա այցելեց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկին, Էջմիածնում՝ յայտնելով նրան կուսակցութեան կամքը, որ մերժէ գործադրել ցարի հրահանգը: Խրիմեան Հայրիկի համար, անշուշտ, մեծ նշանակութիւն ունեցաւ Դաշնակցութեան աջակցութիւնը ապգային իրաւունքների պաշտպանութեան գործում:

Եւ այնուհետեւ Ռոստոմը անընդհատ շրջում էր գաւառից գաւառ՝ տեղական ուժերի հետ կազմակերպելով եւ ղեկավարելով համապգային դիմադրութիւնը ընդդէմ ռուս բռնապետութեան ստնձգութիւնների: Նա ամէն տեղ էր եւ բոլորի հետ, ոգեւորում ու պայքարի էր մղում ժողովրդական վանգուածները: Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպած դիմադրութեան շնորհիւ, ցարական կառավարութիւնը, ի վերջոյ, դիմեց անփառունակ նահանջի՝ յետս կոչելով հայկական կալուածների գրաման հրամանը:

1904ին Ռոստոմը մասնակցեց Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհ. ժողովին, Սոֆիայում, որտեղ գլխաւոր հարցերն էին Թրքահայաստանի լեղափոխական ձեռնարկ-

ները, Կովկասի ինքնապաշտպանութիւնը եւ Սուլթանի մահափորձը: Ռոստոմը համաձայն չէր Սուլթանի մահափորձի ձեռնարկին. մանաւանդ, հակառակ էր, որ Քրիստափորը պբաղուի այդ գործով: Քրիստափորի մահից յետոյ, երբ արդէն սկսուած էին հայ-թաթարական ընդհարումները, նա վերադարձաւ Կովկաս եւ անցաւ ինքնապաշտպանութեան գործի գլուխը: Կոիւների ամբողջ տեւողութեան ընթացքին նա շրջում էր վտանգուած վայրերը եւ Վարդանի, Նիկոյ Դումանի, Արմէն Գարոյի, Ա. Գիլխանդանեանի եւ ուրիշ ղեկավար դէմքերի հետ վարում դիմադրութիւնը մահմետական հորդաների եւ կառավարական շահատակութիւնների դէմ: Հ. Յ. Դաշնակցութեան շնորհիւ հայ ժողովուրդը այս պայքարից էլ դուրս եկաւ յաղթանակով: Ռոստոմը այդ պայքարի ոգին ու մղիչ ուժն էր՝ ըստ սովորութեան միշտ եւ ամէն տեղ մնալով ստուերի մէջ:

Ռուսաստանի 1905ի յեղափոխութեան եւ Կովկասեան ինքնապաշտպանութեան հետեւանքով առաջ եկած «երիտասարդ դաշնակցականների» եւ «միքրանական» շարժումները, այլեւ թրքահայ-ռուսահայ դատերի եւ ընկերվարական-հակաընկերվարական հարցերը մի պահ վրդովեցին Հ. Յ. Դաշնակցութեան ներքին անդրորութիւնը՝ սպառնալով նրա միասնականութեան: Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհ. ժողովը, Վիեննայում, 1907ի գարնանը, կոչուած էր հաշուեյարդարի ենթարկելու այդ խնդիրները: Եւ Ռոստոմը, իր բարոյական անսահման հեղինակութեամբ ու խոհականութեամբ, նախախնամական դեր կատարեց այդ հարցերի լուծման մէջ: Առաւելապէս Ռոստոմին ենք պարտական, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը այդ ժողովից դուրս եկաւ միական, համերաշխ եւ աւելի ուժեղ: Ռոստոմի պնդումի վրայ էր նաեւ, որ Ընդհ. ժողովը իւրացրեց Պարսկաստանի պատագրական շարժման մասնակցելու առաջարկը:

Ընդհ. ժողովից յետոյ, Ռոստոմը անցաւ Բուլգարիա Հ. Յ. Դ. Չինուրական Վարժարանի գործով, որ հաստատուած էր գլխաւորապէս իր ջանքերով: Ապա՝ ներկայ եղաւ Ընկերվարական Միջապգային Համագումարին, Շտուտգարտում, ուր Հ. Յ. Դաշնակցութիւնը ընդունուեց Ընկերվարական Միջապգայականի անդամ: Այնտեղից անցաւ Կովկաս ու Թաւրիպ, որպէս ղեկավար Պարսկաստանի յեղափոխական կոիւների՝ Նիկոյ Դումանի եւ Քեռիի հետ:

Թաւրիպի ռուսների կողմից գրաւուելուց յետոյ, 1909ին, Ռոստոմը Նիկոյ Դումանի հետ անցաւ Թուրքիա: Նոյն տարուայ ամառը մասնակցեց Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. ժողովին, Վառնայում եւ միաժամանակ, որպէս Բիւրոյի անդամ գործելով Պոլսում, 1910ին, իբրեւ անդամ Հ. Յ. Դ. Բիւրոյի Հայաստանի հատուածի եւ որպէս Ապգային վարժարանների ընդհանուր տեսուչ, հաստատուեց Կարնում, ուր մնաց մինչեւ 1914ի ամառը, յաջորդաբար մասնակցելով նաեւ Հ. Յ. Դ. Վեցերորդ, Եօթներորդ եւ Ութերորդ Ընդհ. ժողովներին: Ռոստոմի ներկայութիւնը Կարինում, կարելի է ասել, յեղաշրջեց այդ քաղաքի ապգային կեանքը:

Հ. Յ. Դ. Ութերորդ Ընդհ. ժողովը, 1914ի ամառը, որոշեց Ռոստոմին մէկ տարուայ «հանգիստ» տալ ժընելում՝ պարտք դնելով նրա վրայ, որ գրէ նաեւ Դաշնակցութեան պատմութիւնը: Բայց ի՞նչ հանգիստ կարող էր ունենալ պատերազմի եւ Մեծ Եղեռնի արհաւիրալից օրերին: Արտասահմանում էլ նա հանգիստ ու հոգեկան անդորրութիւն չտեսաւ: Գերագոյն ճիգ թափեց ամոքելու

համար հայութեան տառապանքները, բայց ի՞նչ կարող էր անել աշխարհաստան պատերազմի խօլական մորիկների մէջ:

1915ին, Սկանտինավայի վրայով, Ռուստունը անցաւ Կովկաս: Հայութիւնը այստեղ գերագոյն յոյսերի եւ տագնապի օրեր էր ապրում: Մի կողմից՝ կուսակազմական շարժումն ու ռուս քաղաքականութեան նենգութիւնները: Միւս կողմից՝ տեղահանութեանց ու ջարդերի վարիւրելի յուրերը Թուրքիայից: Ճնշուած սրտով Ռուստունը նետուեց դէպքերի մէջ, իբրեւ ղեկավար դէմք Դաշնակցութեան: Նրա ներկայութիւնը նոր թափ ու ոգեւորութիւն ներշնչեց նաև տեղական ուժերին: Այնուհետև նրան տեսնում ենք ամեն տեղ եւ բոլոր գործերի մէջ — Ազգ. Բիւրօ, Կամաւորական շարժում, գաղթականներին օգնող կազմակերպութիւնների մէջ, արեւմտահայերի գործերում, քաղաքական ձեռնարկներում, կուսակցական ասպարէզում: Նա ճաշակեց ցարական նենգ քաղաքականութեան բոլոր դառնութիւնները, տեսաւ Թրքահայաստանի ամայացումը եւ հոգեւէն տառապեց, առանց ցոյց տալու ուրիշներին իր ներքին խռովքը:

1917ի ռուսական յեղափոխութիւնը չխանդավառեց Ռուստունին. նա բնագործէն սարսափում էր ռուսական վօրութեան անժամանակ փրկուումից: Հակառակ դրան, ստիպուած էր մասնակցել յեղափոխական շարժումներին, իբրեւ դաշնակցական շարքերի հեղինակաւոր առաջնորդը: Ռուստունը գործում էր անյոգնում. խօսում էր հրապարակային ժողովներում, Դաշնակցութիւնն էր ներկայացնում յեղափոխական խորհրդակցութիւնների ու մարմինների մէջ. ներկայ էր լինում համակուկաստան կազմակերպութիւնների ժողովներին. ճամբորդում էր գաւառները, թրքա-հայկական նուաճում փայրերը, ռազմաճակատ: Կարինը գրաւուելուց յետոյ՝ շտապեց այնտեղ՝ տեսնելու եւ ողբալու համար այդ շէն եւ քաղցր յիշատակներով լեցուն քաղաքի կործանումը:

Իբրեւ Դաշնակցութեան առաջին ներկայացուցիչը, Ռուստունը ընտրուեց Համառուսական Սահմանադիր Ժողովի անդամ եւ 1917ի աշնանը մեկնեց Պետրոգրատ, ուր, տեղական Հայկական Կոմիտէի գործակցութեամբ, յաջողեց հայկական պահանջներն եւս մտցնել Ժամանակաւոր Կառավարութեան հաշտութեան պայմանների մէջ: Ապա անցաւ Ստոկհոլմ, ներկայացնելու համար Հ. Յ. Դաշնակցութիւնը, գումարուելիք Ընկերվարական Միջազգային Համաժողովին: Այստեղ եւս, Կազմակերպիչ Մարմնում, ընդունել տուեց Հայկական Հարցը, իբրեւ պատերազմի նպատակներից մեկը:

Երբ վերադարձաւ Ռուսաստան, իշխանութիւնը արդէն անցել էր բոլշեւիկների ձեռքը, եւ ողջ երկիրը բռնուած էր քաղաքացիական պատերազմի հրդեհով: Ռազմաճակատը արագ կերպով քայքայւում էր: Յարաբերութիւնները Կովկասի հետ կտրուած էին: Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, Լենինի գլխավորութեամբ, պատրաստուած էր հաշտութեան դաշնագիր կնքել Գերմանիայի եւ սրա պինակից պետութիւնների հետ: Ռուստունը, Պետրոգրատի եւ Մոսկուայի հայ գործիչների հետ միասին աշխատեց կապեր հաստատել Խորհրդային իշխանութեան հետ եւ Թրքահայաստանի ապատութեան պահանջն էլ մտցնել խաղաղութեան ռուսական պայմանների մէջ: Եւ որոշ խոստումներ ստացաւ էլ, բայց Բրեստ-Լիտովսկում բոլշեւիկները ոչ միայն Թրքահայաստանից ձեռք քաշեցին, այլ Ռուսահայաստանի մի մասն էլ պիշեցին թուրքերին:

Ռուսաստանի վանազան վայրերում գերման-աւստրիական ճակատից մեկնած բազմաթիւ հայ վիճուորներ էին հաւաքուած, որոնք ձգտում էին հայրենիք՝ Կովկաս վերադառնալ, բայց խորհրդային իշխանութիւնը արգելք էր հանդիսանում: Միւս կողմից, Բագուն, մերժելով Անդրկովկասեան Սեյմի իշխանութիւնը, Լենինի կողմից նշանակուած Անդրկովկասեան Կոմիսար Ստ. Շահումեանի եւ Հայոց Ազգային Խորհրդի գլխավորութեամբ, ուժեր էր համախմբում թուրք-աղբբեջանեան սպանակիքի դէմ: Ռուստունը եւ ուրիշ դաշնակցական գործիչներ, ինչպէս բժ. Յ. Չարեանը, Լիպ. Նապարեանը, կարողացան հստակել խորհրդային իշխանութեան, որ արտօնեց հայ սպաներին եւ վիճուորներին վէնքով եւ ռազմամթերքով անցնել Բագու: Քիչ լետոյ, Ռուստունն ինք եւս մեկնեց Բագու եւ մինչեւ վերջ մնաց այնտեղ, իբրեւ Բագուի Հերոսամարտի ղեկավար ոգին:

Բագուի ողբերգական անկումից լետոյ, Ռուստունը բազմախաղար հայերի հետ մեկնեց Պարսկաստան, ուր մի կողմից ջանաց սպանուել գաղթականութեան օգնութեան գործը՝ ազգային մարմինների ու պարսիկ եւ անգլիական իշխանութիւնների օժանդակութեամբ, միւս կողմից յարաբերութեան մէջ մտաւ Եւրոպայի եւ Ամերիկայի ազգային ու քաղաքական կազմակերպութիւնների հետ՝ Հայաստանին օգնութիւն փութացնելու համար: Հակառակ ընդհանուր յուսալքութեան, Ռուստունը երբեք չընկճուեց եւ միշտ մնաց լաւատես ու կորովի:

Ընդհանուր պինդադարից լետոյ, 1918 Նոյեմբերին, Երբ ճանապարհները բացուեցին, Ռուստունը շտապեց վերադառնալ Կովկաս: Հայաստանը այլեւս անկախ հանրապետութիւն էր: Նոր յոյսեր ու նոր հեռանկարներ էին բացուում հայութեան առջեւ: Բայց Թիֆլիսում նրան սպասում էր սարսափելի մի հարուած. Վրաստանը, իր մտերիմ ընկեր Նոյ ժողովների գլխավորութեամբ, պատերազմի մէջ էր Հայաստանի հետ, եւ Թիֆլիսի հայ բնակչութիւնը խուժուած հալածանքի առարկայ՝ վրացիների կողմից: Ռուստունը գերագոյն ճիգ թափեց վերջ տալու այդ անիմաստ, անպատիւ արիւնահեղութեան: Անձամբ դիմեց Ժողովներիային: Բախեց ամեն դուռ, մինչեւ որ անգլիացիների միջամտութեամբ պատերազմը վերջ գտաւ: Իր կեանքում հազիւ թէ Ռուստունը երբեւիցէ այդքան տառապած լինէր, որքան այդ օրերին:

Գիշեր ու ցերեկ Ռուստունը հանգիստ չունէր: Անվերջ ոտքի վրայ էր, ժողովների եւ խորհրդակցութիւնների մէջ, ձմեռուայ ցրտին, մի թեթեւ վերարկուով ու ծակ կօշիկներով, անփոյթ դէպի իր առողջութիւնը, անտես առնելով ընկերների թախանձանքը՝ խնայելու իր անձը: Ու մի գիշեր էլ, ժողովից ուշ վերադառնալով տուն, անկողին ընկաւ ու այլեւս ոտքի չելաւ. պարուկեց, որ վարակուած էր բժաւոր տիֆով: Քիչ անցած՝ տիֆը վերածուեց թոքերի բորբոքման: Բժշկական գիտութիւնն անպօր էր այլեւս օգնելու: Եւ 1919 Յունուար 19ի գիշերը, Ռուստունը յաւիտենապէս փակեց աչքերը: Մեծ սիրտը, որ յոգնել չգիտէր, կանգ առաւ: Ռուստունը մեռաւ անկախ Հայաստանը չտեսած...

«ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ 2. 8. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ»,  
Պոսքըն, 1950



Եւ ահա Ռոստոմը: Նա ինքն ալ խոշոր «լրացուցիչ» մըն էր, ինքն ալ ոչ պակաս անհրաժեշտ Երրորդութեան մէջ՝ թէ՛ իր նուրբ իմացականութեամբ եւ թէ՛ իր աւելի հանգիստ, հարթ ու հաւասարակշռուած խառնուածքով: Միայն գիտէր ինքզինք ջնջել միւսներու առջեւ — եւ այդ կ'ընէր սիրով, բնականօրէն, առանց ցոյցի ու կեղծ համեստութեան: Մեծամոլութեան արատը, որ իր հիւանդագին արտայայտութիւններով այնքան յատուկ է հայ մտաւորականին առհասարակ, խորթ, օտար էր մեր Երրորդութեան անդամներուն, — այն օտար էր մանաւանդ Ռոստոմին: Դժուար է գտնել մեր հին ու նոր, ռուսահայ ու թրքահայ բարձր մտաւորականութեան շարքերուն մէջ ուրիշ դէմք մը, որ լինելով ի բնէ այնքան լայնօրէն օժտուած, ունենալով խելքի, հիւմուրի, արիւթեան ու անձնապոհութեան այնքան առատ պաշար մը, միեւնոյն ժամանակ այն աստիճան վերծ լինէր ինքնապաշտումի, փառասիրութեան, ունայնամտութեան հակումներէն, ինչպէս Ռոստոմ:

«Կատարե՛նք մեր պարտքը մեր թշուառ ժողովուրդի հանդէպ... Փա՞ռք, ծա՞փ, դափնինե՞ր — ունայնութիւն ունայնութեանց»... Այդպէս կ'ըսէր մեզի անոր մշտապուարթ ու ժպտուն դէմքը, անոր իւրաքանչիւր խօսքը եւ ժեսթը:

Գիծ մը՝ որ այնքան կը գեղեցկացնէ գաղափարական գործիչը, կու տայ անոր փայլ ու հրապոյր, կը դարձնէ վայն մտաւորականութեան ու վանգուածներու սիրելի (\*):

(\*) Քրիստափորը շատ կը սիրէր Ջաւարեանը, բայց առանձին բնչութիւն մ'ունէր դէպի Ռոստոմը: Պէտք էր տեսնել. զգալ Քրիստափորի տառապանքը ամէն անգամ, երբ որեւէ չարագուշակ լուր կ'առնէր իր սիրելի Քորոքի մասին: Օր մը, 1903ին, ըստ սովորութեան երկուսով խմբագրատունն էինք, աշխատանքի սեղանին շուրջ: Այդ օրը մեզի լուր հասեր էր Կարսի ուժանակային պայքումի մասին. որուն գոհ գացին չորս ընկերներ: Բնականաբար, ամէնքս էիք-չառ ընկնուած էինք. խորհելով, որ թանկագին կեանքեր գոհուեր են եւ որ դէպքը անշուշտ ռուս ու թուրք կառավարութիւններու ուշադրութիւնն է երաւիքեր մարմիններուն վրայ: Բայց Քրիստափոր աւելի ծանրակշիռ պատճառ մ'ունէր յուզուելու: Ամբողջ օրը մտայլ, սգաւոր տրամադրութեան մէջ էր: Բառ մը չէր արտասաներ, ստէպ կը թռչուր աշխատանքը, կը փալեր սրահին մէջ ու անկերջ կը ծխէր: Եւ մինչ ես լուռ կը գրէի, յարգելով իր մտահոգ լուսնիւնը, նա կանգ առաւ ետեւս ու դողդոջուն ձայնով.

— Գիտե՞ս, մեզ մի ծանր հարուած է սպասում...

Յայտարարութեան խորհրդաւոր տոնը ցնցեց զիս, թռչի գրիչս ու հարցական արտայայտութեամբ դարձայ դէպի Քրիստափորը, որ շարունակեց աւելի յուզուած.

— Իմ հաշուով Ռոստոմը այդ պայքումի միջոցին Կարս պիտի գտնուէր...

Ու լռեց: Մնացածը պարզ էր: Ռոստոմը «Դաշնակցութեան» ուժանակային գործի մասնագէտներէն էր եւ այդ օրերը Կարս էր. բնականաբար, զժրախտ փորձին ներկայ պիտի լինէր եւ ուրեմն, սպանուածներէն մէկը նա էր:

Չարդարացաւ Քրիստափորի ենթադրութիւնը. Ռոստոմ դեռ ողջ էր եւ ինքը Քրիստափորն էր, որ շատով գոհ պիտի երթար ուժանակային ազէտաւոր արկածին...

Մոսկուայէն Թիֆլիս վերադառնալով (1890ին), Ռոստոմ իր ընկեր Ջաւարեանին հետ առաջին փարողներէն եղաւ նորածին Հ. Յ. Դաշնակցութեան եւ անոր ամենէն գործօն անդամներէն մէկը: Յղնա գիւղէն էր, նոյն Գողթանէն, որ ծնէր է Քրիստափորը: Ընթաց մըն էր արդէն Մոսկուայի Պետրոսեան ձեմարանին մէջ, ուր մասնակցեր էր ուսանողական ծանօթ խառնակութիւններուն: Սպարտական տիպ մըն էր, խստաբարոյ, չարքաշ կեանքի եւ դժուակ աշխատանքի մարդ մը: Ֆիզիքայէս ամենէն ուժեղն ու յաղթանալու էր Երրորդութեան մէջ, որու կրտսեր անդամն էր: Փոքր ինչ դանդաղ էր Քրիստափորի պէս եւ անոր պէս կանքոտ ու կորովոտ: Առողջ, համաչափ մարմին մը, խիտ ու ցրիւ մալերով, կարճ ու ցանցառ մօրուքով: Աչքերուն մէջ մշտական, հեզնախառն ժպիտ մը: Սուր ըմբռնողութիւն, որ օժտուած էր նաեւ սրախօսելու անսովոր կարողութեամբ: Վերին աստիճանի բարի, ընկերասէր եւ մարդասէր, ինչպէս իր երկու մտերիմները: Չափազանց պարզ իր շարժումներէն եւ ամբողջ կեցուածքի մէջ:

Ժընեւում, 1892էն ի վեր, խմբագիրն էր «Դրօշակ»ի եւ ինքն իսկ գրաշարը: Տարի մը յետոյ, իրեն միացան նոյն կրկնակ պաշտօնին մէջ՝ Յովնան Դաւթեան, Գարեգին Խաժակ, Սիմոն Շխեան եւ ուրիշներ: Թիֆլիսէն ետք, մտերմիկ ընտանիք մըն ալ հաստատուեցաւ Լեմանի ափերուն: Ռոստոմ — անոր իմացական, յեղափոխական գլուխը:

Գրելու ձիրք մը չունէր, թէեւ լաւագոյնն էր եղածներուն մէջ: «Դրօշակ»ի խմբագրապետն էր եւ ինքն առաջինը կը խնդար իր տիտղոսին վրայ: Յօդուած մը գրել, ճառ մը ըսել, բանախօսութիւն մը ընել — ճշմարիտ տառապանք էր իրեն համար: Մեծ մասամբ ընկերներուն գրել կու տար «Դրօշակ»ի յօդուածները եւ ինքը սիրով կը շարէր: Քիչ կը կարդար, բայց լաւ կը մարսէր կարդացածը:

Խմբագրութիւնը եւ իր ամբողջ ժընեւեան կեանքը տաղտուկ կը բերէր ծնեալ դաւադիր-յեղափոխականին եւ 1895ի սկիզբները նա ձգեց «Դրօշակ»ը իր ընկերներուն, անցաւ Կովկաս ու նոյն տարուան ամառը մտաւ Թուրքաց Հայաստան, Էրզրում, որպէս սամովարի [ինքնաեռ] վաճառական:

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»,  
Ա. հատոր

## ՌՈՍՏՈՄ ԵՒ ԱՐԱՄ

(ՔԱՆԻ ՄԸ ԳԻԾԵՐ)

Տարբեր սերունդի եւ տարբեր տարիքի մարդիկ, բայց մեր այս երկու թանկագին ընկերները որքա՞ն կը նմանեին իրարու շատ մը տեսակետներով:

Ամենէն առաջ՝ իբրեւ սերմանացան: Ուսուցիչ՝ երկուքն ալ, իրենց տըքնութիւնը խոր հետքեր կը ձգէր նոյնիսկ այս տարրական եւ խաղաղ ասպարեպին մէջ: Կը յիշենք Ռոստոմը, երբ թուաբանութեան դաս կու տար 8-10 տարեկան մանուկներու, ի հարկին ամբողջ դասաժամը յատկացնելով միայն մէկ դանդաղամիտ աշակերտի դասը սորվեցնելու: Եւ այս տաղտկալի ճիգը՝ ամենէն հասուն տարիքին մէջ. թէեւ ծանրաբեռնուած՝ իր բուն պաշտօնին մտահոգութիւններով, բայց առանց տրտնջալու, միշտ բարի ժպիտ մը դէմքին: Տեսնելու էր, դարձեալ, թէ ի՞նչ ոգեւորութեամբ հարիւրաւոր աշակերտներ կ'առաջնորդէր դէպի դաշտերն ու սարերը, իրագիտական դասեր տալով ճամբան հանդիպած քարի կտորի մը, բոյսի մը, ծաղիկի մը, ծառի մը կամ ճճիի մը մասին: Եւ այս՝ ոչ միայն քաղաքին մէջ, այլ ամէն ուր որ կ'երթար, Կարինէն մինչեւ Մուշ եւ Սասուն, իր հետ առած՝ 10-15 դպրոցականներ, խումբ մը շրջիկներ ալ ետեւէն:

Ուսուցիչ էր նաեւ Արամը: Օսմանեան Սահմանադրութեան արշալոյսին, հապիւ ապատած Վանի քստմնելի նկուղներէն, կը հանգստանար ժընեւ, յետոյ կ'անցնէր Օրտու, Սեւ Շուվու ավիը, իբրեւ դպրոցի ուսուցիչ, յետոյ նորէն Վասպուրական, իբրեւ գործիչ եւ ուսուցիչ: Դժուար է ըսել, ուսուցիչն էր որ կը լրացնէր յեղափոխականը, թէ յեղափոխականն էր, որ սովորական դաստիարակ-վարժապետի միօրինակութենէն կը բարձրացնէր զինքը կախարդական ուժի մը: Աշակերտը, ինչպէս ամբողջ, ոչ թէ դաս կ'առնէր, այլ կը խմորուէ՛ր, իր նայուածքին տակ, կը թրծուէր ինքնաբերաբար, հասարակ ընթերցարանը կը դառնար կենդանի աշխարհի մը, ուր պճլտուն աչքեր հաճութեամբ կը գտնէին ինչ որ կ'ուզէր սորվեցնել ուսուցիչը:

\*\*\*

Այս նոյն թաթաւուն, անպալի այլ տիրական եւ յարատեւ գիծը՝ նաեւ կուսակցական կեանքի մէջ, քաղաքական-յեղափոխական գործունէութեան ընթացքին:

Ճիշդ է, որ խառնուածքի տարբերութիւնը կը շեշտուէր այստեղ: Ռոստոմը՝ միշտ լռակեաց եւ ստուերի մէջ. կը խուսափէր աղմուկէն եւ ամբոխէն, բայց կ'երեւար ամէն տեղ: Աւելի շատ՝ պարզ խմբական ժողովներու քան միթիւններու: Եթէ ստիպուէր բեմ ելլել, համեստօրէն կը նստէր աթոռին վրայ,

«կրոյց անելու», ոչ թէ ճառ խօսելու համար: Իսկ իր կրոյցները... Ափսո՛ս որ ոչ իսկ պատճէն մը կայ թուղթի վրայ: Ինքն իսկ արգիլած է գրի առնել:

Արամը, աւելի տաքարին, նոյնքան սիրելով հանդերձ մրջիւնի աշխատանքը, վախ չունէր ամբոխէն, եւ ոմբածիգ բառեր կը հոսէին իր բերնէն, բեմի վրայ: Հռետոր չէր, բայց պողպատի ձայն կու գար իր խօսքերէն: Կը պոռթկար անձիգ եւ անարուեստ, բայց կը վգայիր որ միտքն ու կամքը վուզընթաց կ'երթան:

Ինչպէս տարբերութիւնը, միացման գիծն ալ այստեղ կը շեշտուէր: Բեմէն, հրապարակէն, աղմուկէն յետոյ, երկուքն ալ, Ռոստոմը եւ Արամը, կարծես միեւնոյն մարմնին երկու թեւերն էին, որ առանց նեղութիւն պատճառելու կը գրաւէին, գործի կը կապէին բոլոր պիտանի տարրերը: Կը թուի թէ — արդեօք իրենց գիտութեա՞ն բերունով — երկուքին համար ալ գաղտնիք չունէր մարդիկը տարրալուծելու յատկութիւնը: Մէկ տղայ, մէկ աղջիկ, գիւղացի, ստաւորական, խումբ մը երիտասարդներ, փոք չէ, կը բաւէ որ հանդիպեցան մէկուն կամ միւսին սուր հայեացքին, իրենց այս կամ այն գիծով, այլեւս ապատում չկար: Միայն մէկ լաւ յատկանիշ բաւական էր, որ երկուքն ալ մոռնային թեկաճուրին գէշ կողմերը ու ճգնէին գործի մղել վայն, այդ մէկ բարեմասնութեամբ սրբագրելու համար թերիները:

Այսպէ՛ս էր որ, ե՛ւ Ռոստոմին ե՛ւ Արամին հետ կապուած անուններ, ամենէն համեստէն մինչեւ ամենէն փայլունը, դարձած են հաւատարիմ եւ գործօն պիտուրեալներ Հ. Յ. Դաշնակցութեան: Սովորական իմաստով աշակերտներ չեն եղած անոնք, այլ մասնիկները կամ ժառանգորդները վարպետներուն պանապան յատկութեանց:

\*\*\*

Ամեհի լեռան մը կողքին թառած կաղնի մըն էր Ռոստոմը: Աւելի ճիշդ՝ ժայռի ստորոտէն բխած վճիտ առու մը, որ կը հոսի ու կը ժպտի, որ հետքեր կը ձգէ ու կը խուսափի, մերթ ժածկուած՝ թուփերու տակ, մերթ խառնուած՝ մեծ ջուրերուն: Ե՛ւ ներկայ ե՛ւ բացակայ, ե՛ւ այստեղ ե՛ւ այնտեղ: Իրեն համար չկար գործին մեծն ու պպտիկը, խոնարհն ու շքեղը: Եւ իրեն համար չէին մեծ ուստաններն ու քաղաքները, Տարին մէկ անգամ Պոլիս կու գար Կարինէն, օրերը համբելով: Երեք օր կամ մէկ շաբաթ՝ կուսակցական գործերու համար: Յետոյ երեք օր ալ ժընեւ՝ կինը տեսնելու: Եւ շոգեպինդ վերադարձ՝ դէպի Կարին: Այն աստիճան արագ, որ կը մերժէր ճամբորդի կառք առնել Տրապիպունէն ու կը նստէր թղթատարական սայլը, որպէսզի, փոխանակ վեցի, երեք օրէն հասնի Կարին, անշուշտ, գիշեր ցերեկ քշելով սայլը, սուրհանդակին հետ քով քովի: Յաճախ կը պատահէր, որ ընկերները թելադրէին Պոլիս մնալ, իբրեւ Բիւրոյի անդամ, քանի որ այնտեղ էր կուսակցութեան վարիչ կեդրոնը: Շատ կարճ էր Ռոստոմի պատասխանը.

— Եթէ դժգոհ էք Երպրում կենալէս, պատրաստ եմ Խարբերդ անցնելու:

Եւ մինչեւ Մեծ Պատերազմը մնաց Կարին, թէ՛ իբրեւ Բիւրոյի անդամ, եւ թէ իբրեւ ազգային դպրոցներու տեսուչ, — յիշելով միայն իր գլխաւոր պաշտօնները:

Չափազանց բարեհամբոյր՝ ընկերական կեանքի մէջ, փիլիսոփայի պէս ներողամիտ՝ ոչ-դաշնակցականներու հանդէպ, առիւծի պէս կը մռնչէր Ռոստոմը, ապացուցուած յանցանքի մը առէն: Միս-մինակը, մէկ նայուածքով եւ երկու բառով, վինաթափ կ'ընէր ամենէն անոպայ վեղծարարը, կը խոստովանցընէր ամենէն քարացած խաբեբան: Իր կեցուածքն իսկ ահ ու դողի կը մատնէր յանցաւորը, կամ խուճը մը յանցաւորներ միասին, դէմ դիմաց: Թերեւս, մեր անդրանիկ ընկերներէն ոչ մէկուն առջեւ այնքան սարսուռ վգացած են մեր շատ մը ընկերները, որքան Ռոստոմի բարոյական սաստին տակ: Լեռ ըլլար՝ կը փլէր անոր երեւութապէս խաղաղ, ժպտուն, այլ հատու ակնարկէն:

Այլապէս եպակի տիպար մըն էր Արամը: Վարժ՝ բուն ձեւերու, յաճախ ձեռքը մաուկերին, ան կրանիտ կը դառնար վտանգի պահուն, ու վճիռներ կ'արձակէր կատարեալ ինքնավստահութեամբ: Գրեթէ անսխալ էր, բոպէի պահանջը ըմբռնելու տեսակէտէն: Ամբոխը շատոնց մոռցած էր նախասահմանադրական շրջանի դաւադիր Արամը, եւ իր առջեւ կը տեսներ հանրային գործիչը, մշակութային աշխատանքի նուիրուած ուսուցիչը:

Եկա՛ւ 1915 Ապրիլը, հայաջինջ սարսափներու բոլոր նախանշաններով: Իշխանը սպաննուած՝ դաւադրաբար, Վռամեանը ձերբակալուած՝ նոյն խարդախութեամբ:

Եւ Արամը կու տայ Վանի ապստամբութեան մարտակոչը, առանց մէկ վայրկեան տատանելու: Ուսուցիչը կ'անհետանայ յանդուգն յեղափոխականին առջեւ:

Նոյն վճռական թափը՝ 1918 Մայիսին: Վասպուրականը՝ նահանջի հարկադրուած. այնքան գերմարդկային ճիգերով շահուած նուաճումները՝ վըտանգի տակ, Երեւանը՝ շղթայակապ եւ հեղձամահ, հարիւր հազարաւոր փախըստականներ գալարուն՝ կեանքի եւ մահուան այլիքներուն մէջ. ո՛չ բարեկամ ուժ, ո՛չ ապաւեն: Թշնամին սրընթաց կը քրքջայ, դանակը շողացնելով...

— Կոխ՛ւ, կը գոռայ Արամը: Ու իր մոգական խօսքին տակ, ամբողջ ժողովուրդը մը մէկ մարդու պէս ոտքի կանգնած, կը խոյանայ դէպի Սարդարապատ եւ Ղարաքիլիսէ. վարներու եւ վարներու համար: Թերեւս ինքն ալ կը կասկածէր յաղթական ելքէն. բայց պատրանք չէր այլեւս. Խալիլ փաշաները խաղաղութեան դափնիներով կը դիմաւորէին արժանաւոր հակառակորդը:

Դաշնակցութիւնը չի սիրեր աստուածացնել անհատները, ինչքան ալ բարձր արժանիք ունենան: Դաշնակցութեան համար անհատը՝ խտացումն է հաւաքական առաքինութեանց: Կենդանի, տեսանելի եւ շօշափելի արտայայտիչը՝ հաւաքական կամքին: Բայց ժողովուրդը, որ ունի իր առանձին աշխարհահայեացքը, այնքան տարերային ու հարպատ, 1918 Մայիս 28էն յետոյ, Արամը հոչակեց հիմնադիր հայկական անկախութեան: Եւ, անշուշտ, սխալ չէր այս եկրակացութիւնը, մեր ժամանակակից պատմութեան ամենէն ճակատագրական օրերուն համար:

\*\*\*

Անխոցելի՝ բոլոր կոթիւներուն եւ վտանգներուն մէջ, մեզմէ բաժնուեցաւ երկուքն ալ՝ ամենէն անյուսալի պատահարով, — համաճարակ հիւանդութեամբ: Ու գացին այնպիսի ատեն մը, երբ այնքան կարօտ էինք երկուքին ալ, ինչպէս նման տիպարներու: Մեր ճակատագրական դժբախտութիւններէն մէկն ալ՝ այս: Իրարու ետեւէ, խուճը-խուճը կամ հատ-հատ, հայաջինջ սարսափներու ընթացքին կամ տխմար դիպուածներու հետեւանքով, կորսնցուցինք ամբողջ փաղանգ մը, որ չարաչար տքնեցաւ յաղթանակը փութացնելու համար, բայց չհասաւ յաղթանակի օրուան: Կամ տեսաւ վայն քառասային վիճակի մէջ, տակաւին չձեւաւորուած: Ամբողջ սերունդ մը, որ կոչուած էր բախտորոշ դեր կատարելու: Մնացինք որբեւայրի, ե՛լ իբրեւ ժողովուրդ, ե՛լ իբրեւ կուսակցութիւն:

Այդ կսկիծը շատ աւելի խոր է այսօր եւ աւելի ուժգնօրէն կը խոցոտէ մեր սիրտը օրուան այս ժամուն, երբ այնքան մոռալ է հորիվոնը, եւ այնքան միօրինակ՝ հայկական իրականութիւնը:

Բայց, մենք մեծագոյն անարգանքը ըրած պիտի ըլլանք Ռոստոմներու եւ Արամներու յիշատակին, եթէ, նկուն եղերամայրերու պէս, տարուինք հառաչանքներով, — «մեռանք-կորանք» — փոխանակ տասն անգամ տասնով բազմապատկելու մեր կորովը:

Անփոխարինելի են Ռոստոմն ու Արամը, ինչպէս այնքան ուրիշներ, որ անդարձ գացին. բայց Հ. Յ. Դաշնակցութիւնը միշտ ալ ընդունակ է Ռոստոմներ եւ Արամներ յարուցանելու, ո՛րեւէ ճակատագրական ժամու. կը բաւէ, որ անթարթ աչքերով եւ սրբազան հաւատքով նայի անոնց թողած յեղափոխական հանգանակին. տիրաբար, խորապէս ըմբռնէ անոնց կորովին իմաստը, եւ անդաւան յարատեւութեամբ քալէ անոնց ճամբէն: Յեղափոխական միտքը չի հանդուրժեր քարացած կաղապարներու: Եւ Ռոստոմներն ու Արամները կը նըսեմանան ա՛յն օրը, կամ Հ. Յ. Դաշնակցութեան դիմագիծը կ'աղձատուի ա՛յն ժամուն, երբ յաջորդ սերունդը մոռնայ ոգին, տառը միայն հողովելով, կամ իրական ճիգը շփոթէ սնամէջ «քիշէ»ներու հետ:

Առաջնորդող յօդուած «ԴԻՐՕՇԱԿ»ի, թիւ 1-2,  
Յունուար - Փետրուար 1929

**Ռ Ո Ս Տ Ո Մ**

**(ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)**

Մարդիկ կան, որոնց մասին խօսիլը դժուար է, գրելը ա՛լ աւելի դժուար: Անբացատրելի պզտու մը կարծես մեկ լուծական կը հրաւիրէ, որովհետեւ կը պահէ խորապէս, որ մարդկային արտայայտութեան միջոցները անբաւական են պատկերացնելու այն բարոյական պատկերը, որ ամէն **մէկս** մեր յիշողութեան մէջ կը պահպանենք երկխղաժութեամբ: Քանի անգամներ փորձեր են գրել Ռոստոմի մասին եւ պզտուներ են անկարողութիւնս, քանի անգամներ փորձեր են խօսիլ իր մասին եւ կցկտուր բառեր են արտասաներ միայն. այսուամենայնիւ տարիէ մը ի վեր է, որ անիկա իր աչքերը փակեր է բայց անդադար կենդանի մնացեր է իմ մտածումիս մէջ եւ եղեր են օրեր, որ իմ **մտքիս** բոլոր հորիզոնները ամբողջութեամբ գրաւուեր են իր յիշատակովը:

Ինձ համար եւ մեզմէ շատերուն համար, ան **դեռ** մեռեալ չէ, անոր դիմագիծը յարատեւ կերպով կանգնած է մեր դիմաց, յաճախ կը խօսինք իրեն հետ եւ յաճախ վարանումի եւ անձկութեան չարչարող ժամերու մէջ, կը պահէ ու կ'ընդունինք իր **հաւանութիւնը** կամ **մերժումը**. աւելի թափանցող, աւելի կատարեալ, աւելի **անտարկելի** կերպով մը կենդանի է անիկա մեկ համար եւ խօսքերը որ արտասանած է, վերաբերումնքը որ ունեցած է այս կամ այն ճրգնածամային օրերուն՝ բարոյական օրէնքներ են դարձած եւ անխախտելի հիմք ուրիշ օրերու եւ գալիք դէպքերու մէջ մեր ունենալիք վարմունքին ու կեցուածքին:

Քիչ անգամ կը պատահի, որ մարդ մը այնքան ուժեղ եւ **լուսեղէն** հետք մը թողու իր ետեւը, որ մարդ կարողանայ այդքան մեծ բարոյական տիրապետութիւն ունենալ հոգիներու վրայ. թանկագին եւ հպուստիալ բան է այդ յետ մահու պօրութիւնը, որ այլեւս ապատագրուած ժամանակի եւ հեռաւորութեան սահմանափակումներէն՝ կայ ու կը մնայ ամէն տեղ ու ամէն ատեն եւ որուն ապրեցողութիւնը պիտի կրեն գիտակցաբար թէ անգիտակցաբար ամէն անոնք որոնց հոգին որեւէ բարեբախտ առիթով մը հաղորդակցութեան մտած է Ռոստոմի հոգիին հետ:

\*\*\*

Հեղինակաւոր անձեր, իր ուղղակի աշխատակիցները, շատ բաներ կ'ունենան գրելիք անշուշտ իր մասին: Ռոստոմի կենսագրութիւնը հարուստ է դէպքերով եւ այնպիսի նկրթերով, որոնք սերտ կերպով կապուած են մեր ապատագրութեան պատմութեան հետ: Անոր կեանքի պատմութիւնը միեւնոյն ատեն

պատմութիւնն է հայ ժողովուրդի ամենամեծ եւ ամենէն հաստատ կերպով կառուցուած կուսակցութեան պատմութեան. իր հասարակական գործունէութիւնը սերտ կերպով կը սկսի 'Իաշնակցութեան հետ, որուն հիմնադիրներէն մէկն է, որուն ամուր սիւներէն մէկը եղած է եւ որուն լայն գմբէթին բոլոր ծանրութիւնը միջոց մը մինակը տարաւ իր անձկելի ուսերուն վրայ: Ես չեմ ուզեր սակայն ծանրանալ իր հասարակական գործունէութեան մասին, այդ բանը ընելու ոչ միջոցները ունիմ եւ ոչ հարկ եղած ձեռնհասութիւնը, եւ պիտի ջանամ ներկայացնել իր բազմադիմի հոգիին մէկ երեսը, ներքին մարդը, իր հոգիին ժպիտները, այն ինչ որ շատ շատերուն անծանօթ մնացած է, որովհետեւ իր բազմաբաղ եւ հեւ ի հեւ կեանքին մէջ, առիթ չունէր, ժամանակ չունէր արտայայտուելու եւ որ տարօրինակ եւ խիստ վերապահութեամբ մը կարծես քողարկուած կը պահէ:

\*\*\*

Ամէն անոնք որոնք Ռոստոմը անձամբ ճանչցած են, գիտեն որ անիկա սակաւախօս էր, յաճախ լռակեաց. իր դէմքը խոժոռ էր եւ անժպիտ, իր խիստ դիմագիծը, խորշոմներով ծածկուած՝ առաջին հանդիպումին կը մնային անհաղորդ եւ ներամիտ: Անիկա կարողութիւնը ունէր ընդմիջաւ անհաղորդ մնալու անոնց համար: Իր խորթափանց աչքերը մէկ անգամէն կը սուսուէին մարդոց հոգիին մինչեւ խորքը եւ այդ էր պատճառը, անշուշտ, որ անիկա մէկ անգամէն կը սիրեր, կամ ոչ. իր ատելութիւնները եւ սէրերը հպօր էին եւ գրեթէ մշտնջենական. իր պօրաւոր խառնուածքը չէր հաշտուեր այնպէս, գաղջ համակրութիւններու, փոքրիկ պատմութիւններու, միջակ գնահատութիւններու եւ անցողակի տրամայրութիւններու հետ: Այսպէս էր կամ այնպէս, կ'ընտրէր կամ կը մերժէր եւ անոնք որոնք բախտը ունէին իր համակրութիւնը վայելելու, անոնք որոնք իր սրտին ճամբան գտած էին, անոնք միայն գիտեն թէ գորովանքի, սիրոյ, անձնուիրութեան եւ ներողամտութեան ինչ անսահման ծով մը կար այդ խիստ, խոժոռ եւ անհաղորդ երեւոյթով մարդուն հոգւոյն խորքը. անոնք միայն գիտեն արժէքը այն դժուարին ժպիտին, որ իր դէմքին վրայ կը ծաղկէր, որ իր ամբողջ էութիւնը կը լուսաւորէր եւ որուն յիշատակը շատ թանկագին բանի մը նման կ'ընկերանար մարդու մտածումին եւ պզտուներուն:

\*\*\*

Առաջին անգամ իրեն հանդիպեցայ Պոլսոյ մէջ. Ատանայէն նոր վերադարձեր էի. ճաշի սեղանի մը շուրջն էինք. իր անունը լսած էի բայց իր դէմքը անծանօթ էր ինձի. անձնական սուգ մը մթագնած էր պինքը. ուշադրութեամբ կը նայէի այդ խիստ դէմքին մեծութեան եւ տարօրինակ ու անբացատրելի պզտու մը կը ներշնչէր ինձ. լոյն էր ու ճաշի ամբողջ տեսողութեան բառ մը չարտասանեց: Իմ քովս նստած էր Կարոն. հարցուցի իրեն թէ ո՞վ է. անմիջապէս մեկ ծանօթացուց. իր նայուածքը քանի մը անգամ ծանրօրէն սեւեռեց իմ վրաս. իմ տաժանելի ճամբորդութենէս դրուագներ կը պատմէի. ամէնքն ալ հետաքրքիր էին եւ ամէնուն ուշադրութիւնը կեդրոնացած էր իմ խօսքերուս վրայ ու երբ

սեղանէն կ'ելլայինք, ինձ մօտ եկաւ, ձեռքս սեղմեց, կարծես բան մը ուզեց ըսել, ոնգանքը լայնացան, շրթները շարժեցան անձայն եւ լռեց ու իր գսպուած յուզումով դէմքին արտայայտութիւնը այլեւս դրոշմուած մնաց իմ մտքիս մէջ:

Քանի մը շաբաթներ յետոյ Էրպրուսէն նամակ ստացայ իրմէն: Ազգային վերածնունդը իր մեծ թափին մէջ էր եւ այդ մեծահոգի մարդը իբր դպրոցի տեսուչ գացեր էր Էրպրուս, երկրի կուրծքին մէջ, իր կամքի ուժովը **դրոշմուած** ժողովուրդին վանգուածը, որպէսզի գիտակցելով իր դերին՝ դիմէր դէպի ճակատագիրը: Այս նամակով եւ յաջորդող ուրիշ նամակներով կը հրաւիրէր զիս երթալ Էրպրուս, կը յայտնէր թէ գաղափարական եւ կրթութեամբ կնոջ մը դերը ինչ մեծ կրնար ըլլալ այդ բեղմնաւոր շրջանին մէջ: Աւաղ, անձնական պատճառներ, պզտիկ պատճառներ արգելք եղան ինձ այդ հրաւերին պատասխանելու, ու երբ յաջողեցայ վերջապէս այդ արգելքներուն յաղթելու, երբ պատրաստուած էի ճամբայ ելլելու, երոպական պատերազմը ծագեցաւ եւ ամէն ինչ իր հիմերէն խախտեցաւ:

\*\*\*

Ռոստոմ կրցեր էր սահմանը անցնիլ եւ գիտէի որ Կովկաս էր. եւ երբ Պուլկարիա եւ անկից ալ Ռումանիա ապաստանելու ստիպուեցայ, Պուլքարեստի մէջ իմ դիմացս երկու ճամբաներ կը բացուէին, դէպի Կովկաս կամ դէպի Փարիզ, ու հետեւեցայ առաջին ճանապարհին. Ռոստովէն հեռագրեցի իրեն, հասկալի թէ զինքը կը ճանչնայի անձամբ, բայց ներքին խոր պզտուած ունէի, որ դէպի հարապատ բարեկամ մըն է որ կ'երթայի:

Սոսկայի էր հոգեկան դրութիւնը որուն մէջ էինք այդ միջոցին... սուգերու ահագին շղթայ մը կապուած էր մեր ոտքերուն. պատառուած սրտերով, հոգիներս բեռնաւորուած հապար ցաւով, խելացնոր, ջիղերս քայքայուած, հալածական մշտատեւ մղձաւանջէն՝ հասանք Թիֆլիս: Ամբողջ ամիսներ, հակառակ այն սիրալիք եւ տաք մթնոլորտին որուն մէջ սկսանք վերապրիլ, հակադէմոսթրիաներ մեր կրած տառապանքներուն այնքան ուժգին էր որ ինձ թուեցաւ որ այլեւս երբեք, բայց երբեք ժպիտը պիտի չերեւայ մեր դէմքերուն վրայ եւ թէ մեր ուղեղները միանգամընդմիջ խեղանդամուած պիտի մնան:

Աւելի քան երկու ամիս մնացի Ռոստովի տան մէջ. հարապատ եղբոր գուրգուրանքով վարուեցաւ անիկա ինձ հետ. հոգեպէս հիւանդ, ֆիզիքապէս հիւանդ, մատնուած մտային ապիկարութեան, անտանելի ինձ եւ ուրիշներուն համար, իմ թմրած ուղեղիս ընդմէջէն կարողացայ ընդհանրապէս վերջապէս գորովանքի, համբերութեան, ներողամտութեան եւ անձնուիրութեան այն անսահման գանձը՝ որ այդ խոժոռ, անհաղորդ եւ խիստ երեւոյթով մարդը շռայլելով կ'ընծայէր ինձ եւ այնքան ուրիշներու համար:

Այդ անդրադարձումն իսկ եղաւ առաջին լոյսի նշոյլը, որ ծագեցաւ իմ մթազնած էութեանս մէջ եւ խաւարը փարատեցաւ հետզհետէ:

Վերջին օրերը որ անցուցի իր յարկին տակ անմոռանալի պիտի մնան ինձ համար: Ամբողջ օրը վրադուած տենդագին գործունէութեամբ մը, անիկա տուն կը վերադառնար ճաշի ժամուն յաճախ ընկերակցած հիւրերով: Բոլոր անանուն մարդիկը, բոլոր այն ընկերները որ որեւէ գործով Թիֆլիս էին, իր հիւրերն էին,

իր համեստ սեղանին շուրջ բոլորուած էին միշտ ամէն դասակարգի եւ ամէն աստիճանի պատեկանող մարդիկ. ընդհանրապէս, իր սովորութեան համեմատ քիչ կը խօսէր ինքը բայց իր արտասանած բառերը կ'ընդունուէին պատգամներու նման. քիչ չէր պատահեր նաեւ, որ ունէ մէկու մը շատախօսութիւնը լսելիս, մեղմօրէն կը ննջէր ընկճուած մշտատեւ յոգնութենէ: Ամէն կարգի խնդիր, ամէն կարգի վէճեր կու գային այդ սեղանին շուրջը եւ պէտք էր շատ խորաթափանց ու խորամանկ ըլլալ կարենալ գուշակելու համար թէ ի՞նչ էր իր անձնական տրամադրութիւնները այդտեղ յուզուող խնդիրներու մասին, այնքա՛ն իր դէմքը կ'ըլլար անթափանցելի:

Ճաշէն յետոյ կրկին կը մեկնէր եւ կը վերադառնար կէս գիշերը անց, յաճախ շատ ուշ, եւ եւ իր սիրելի մայրիկը կը սպասէինք իրեն ընթրիքի, ու շատ ուշ գիշերներուն մէջ, ընթրիքէն յետոյ Ռոստոմ կ'այլափոխուէր, կը վերադառնար իր նսին ու եթէ լաւ տրամադրուած էր՝ երկարօրէն կը պատմէր իր մանկութեան յիշողութիւնները, իր առաջին երիտասարդութեան ոգեւորութիւնները, իր ներքին պզտուածները, գնահատութիւններն եւ յուզումները:

Օ՛հ այդ գիշերները, կը տեսնեմ իր սիրելի մայրիկին վտիտ **սիլուէթ** որ հակառակ իր յառաջացած տարիքին լիքն էր կորովով եւ ոգեւորութեամբ. անիկա հակառակ օրուան յոգնութիւններուն չէր երթար հանգչելու մինչեւ որ իր Ստեփանը չքնէր, ու յաճախ իր գոց աչքերով որոնց մէջ երիտասարդական ցոլք մը լսուեցած էր, կը հետեւէր սիրական պակիին վերջիշումներուն. խօսքով մը, բառով մը կ'արծարծէր վանոնք, վերստին կը յուզուէր եւ թարմ կեանքի ալիք մը կարծես կը բարձրանար սենեակին մթնոլորտին մէջ:

Ինչպէս լաւ կը պատմէր Ռոստոմ, եւ ինչպէս իր հոգին կը յայտնուէր հարուստ ու ծանրաբեռն յուզումներով, տպաւորութիւններով եւ պզտուածներով — երբեմն, շատ քիչ անգամ, կը խօսէր իր ունեցած յուսախաբութիւններուն եւ դառնութեան մասին, այն ալ միայն անձին կամ այս կամ այդ դէպքին վերաբերմամբ, բայց ընդհանրապէս իր պատմութիւնները ոսկեպօծուած էին ուրախութիւնով, յաղթանակի լաւատեսութեամբ: Կարծես նորօրինակ արեւ մը կը ծագէր, կարծես լոյսի մէջ կ'ողողէր մեզ, կարծես թեւեր կու տար մեր հոգիներուն եւ իրականութենէ վեր կը սաւառնէինք գաղափարի եւ իտեալի աշխարհի մը մէջ, հաղորդակցութեան մէջ մտնելով տիեզերական յուզումներու:

Ընդլայնուած հոգիով, խաղաղած ու պայծառացած հրաժեշտ կ'առնէի եւ կը քաշուէի իմ սենեակս. հոգեկան հապուղեպ վիճակներ կան, որոնց միջոցին մարդուս ներքին հայեցողութեան սահմանները, չափերը կը վերնան, ուր ամենէն վերացական մտածումներու եւ երազներու աննիւթական **սիլուէթ** իսկ կ'անհետի, որովհետեւ մարդուս հոգին անսահման երկնակամար մը կը դառնայ լիացած իր լոյսով, իր անսահմանութիւնով:

\*\*\*

Այն ժամանակ Անդրկովկասի հայերու կեանքը եռուպեռ վիճակի մէջ էր: Ռոստոմ գնաց դէպի նոր գրաւուած հայկական գաւառները. եւ գացի մինչեւ Պետրոկրատ եւ վերադարձիս մնացի Բագու: Ընդմիջաբար կը հանդիպէինք ի-

րարու եւ ամէն անգամուն վինքը նոյնը կը գտնէի, նոյն բարձրութեան վրայ. պէտք էր աչքերը շատ վեր բարձրացնել իրեն մակարդակին հասնելու համար եւ ինչքա՞ն տխրութիւնով կը մտածեմ որ մարդկային ակարութիւններ մեզ արգելք կ'ըլլան յարատեւ կերպով այդքան անմատչելի ոլորտներու մէջ մնալու: Իր անապատ ներողամտութեանը շնորհիւ անշուշտ մինչեւ վերջը բախտը ունեցայ վայելելու իր համակրումը, ինչ որ իմ ներքին ամենամեծ գանձերէս մէկը կը համարեմ: Բագուի կոիւնտերուն նախօրեակին հասաւ այնտեղ եւ մնաց մինչեւ վերջը, մինչեւ թուրքերուն քաղաք մտնելը:

Իր կեցուածքը, իր վարմունքը ոչ միայն ահագին նշանակութիւն ունեցան, այլեւ ինքն էր որ փրկեց մեր ազգային պատիւը, իր հեղինակաւոր խօսքով, իր ցատումով վերջ դնելով բոլոր վարանումներուն եւ մտավախութիւններուն: Իր կեանքին այդ դրուագը, իր կենսագրութեան ամենէն գեղեցիկ էջերէն մէկն է, որուն պատմութիւնը կարող է սերունդներ դաստիարակել եւ ապնդուցնել: Թէեւ իմ գրութեանս շրջանէն դուրս է իր կենսագրութիւնը՝ բայց չեմ կարող այստեղ չիջել իր խօսքը, որ վճռական ազդեցութիւն ունեցաւ եւ որուն առաջ բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները խոնարհեցան:

Երբ առարկութիւն եղաւ, որ թուրքերու հետ կռուի մտնելէ առաջ պէտք է հաշուի առնենք մեր ուժերը եւ կշռենք թէ հաւանակա՞ն է որ յաղթող դուրս պիտի գանք եւ թէ հակառակ պարագային պէտք է հպատակութիւն յայտնենք կեանքերնիս փրկելու համար, Ռոստոմ ընդոստ դարձաւ դէպի ժողովը եւ ցասմալից աչքերով գոռաց.

«Երբ թուրքը քաղաքին առաջքն է, այլեւ ընտրութիւն չկայ մեզի մեռնելու եւ ապրելու մէջ, այլ մեռնելու եղանակի՛ն մէջ»:

\*\*\*

Վերջին անգամ Ռոստոմին հանդիպեցայ Պարսկաստանի մէջ: Թեհրանէն Ղազուին եկեր էի Միջագետքի վրայով Երոպա գալու համար: Ինքը էնպէս լի էր Թեհրան երթալու համար: Տարբեր ճամբաներով նոյն օրը հասեր էինք Ղազուին. ինձ հեռագրեր էր նախապէս, որ առանց զինք տեսնելու չմեկնիմ, բայց ինձմէ բոլորովին անկախ պատճառներով հարկադրուած էի ճամբայ ելլել: Մեծ եղաւ ուրախութիւնս երբ իմացայ, որ վերջապէս պիտի տեսնեմ զինքը մեկնելէ առաջ: Ուշ ատեն հասեր էի Ղազուին ու դեռ ճամբու փոշին չթօթուած փութացի իր մօտ: Սիրտս ճնշուած էր շատ դառնութիւններով եւ մտահոգ էի մասնաւորաբար այն պատճառով, որ ինքը կարող էր մոլորուած ըլլալ կարգ մը թիւր տեղեկութիւններէ. առաջին իսկ հանդիպումին իր սիրելի ժպիտը զիս հանգստացուց: Կարծելով թէ հետեւեալ առաւօտ կանուխ պիտի մեկնիմ, շատ երկար ատեն մնացինք միասին եւ խօսեցանք, բոլոր թիւրփմացութիւնները հարթուեցան որովհետեւ իր մտքի խորքին մէջ հարթուած էին արդէն, զիս քաջալերեց ու ոգեւորեց եւ զգացումը ունեցայ, որ իր ամուր ձեռքովը ձեռքէս բռնած զիս դուրս կը հանէր մանուածապատ եւ մթին ճամբէ մը: Խօսեցաւ ինձի գորովանքով եւ համարումով եւ իրեն հաշիւը տալով իմ գործունէութեանս, իր հաւանութիւնը ստանալով, ըսի իրեն խորին անկեղծութեամբ.

— Ռոստոմ, եթէ քեզ համար այսպէս լաւ է, բոլոր մնացածը ինձ համար նշանակութիւն չունի:

Այդ խօսքերը որ արտասանեցի այդ անգամուան համար չէին միայն այլեւ գալիք օրերուն, այլեւ իմ կեանքի բոլոր հանգրուաններուն համար: Եւ հիմա որ մեռած է անիկա, որ այլեւ երբեք այս աշխարհիս վրայ պիտի չհանդիպիմ իրեն, որ այլեւս երբեք իր համուպիչ, իր ոգեւորիչ ձայնը պիտի չլսեմ, դարձեալ անդիմադրելի կերպով իմ վարանումի, երկբայութեան ժամերուս, մըտքով կը խօսիմ իրեն հետ, կը խորհրդակցիմ իրեն հետ, գիտեմ թէ ինչն է լաւ եւ ինչն է վատ իրեն համար եւ անիկա ընդմիջտ կենդանի է եւ պիտի մնայ բոլոր անոնց համար, որոնք մեծ բախտը ունեցած են իր հոգեկան ջերմութիւնը զգալու, որոնց վրայէն իր լայն շունչը անցած է:

Նախախնամութիւնը ուզեց, որ հետեւեալ առաւօտը չկարենամ մեկնիլ եւ երեք օր շարունակ երկար ժամեր անցուցիմք միասին խօսելով օրուան յուզումնալի կացութեան վրայ, մեր անվերջ ցաւերուն եւ անվերջ յոյսերուն վրայ: Թուրքերու հետ զինատաղարը կնքուած էր եւ լայն հորիզոններ կը բացուէին մեր անխոնջ յոյսերուն: Տաճկական Հայաստանի ազատագրութիւնը կատարուած փաստ կը համարէր եւ մեր ողբակները կը կապւէինք վստահութեամբ եւ հաւատքով:

Պէտք էր տեսնել զինքը թէ ինչ մեծ ոգեւորութեամբ ինքն էր, թէ ինչ անսահման ուրախութեամբ կ'անդրադառնար կատարուածին, թէ ինչ արագութեամբ իր բոլոր ցաւերը եւ վիշտերը կը սպիանային եւ ինչպէ՞ս պատրաստ էր նուիրուելու նոր կեանքի կառուցումի հսկայական աշխատութեան:

Աւա՛ղ, ո՞վ կարող էր երեւակայել, որ այդ անյաղթ եւ անխոնջ մարդը իր մէջ կը կրէր մօտալուտ մահը:

\*\*\*

Մարսիլիա հասած առաջին օրս տարօրինակ դիպուածով մը հիւրանոցին սպասման սրահին մէջ հանդիպեցայ Վահան Փափալեանին, որ նոյն օրը նոյն միջոցին կը հասնէր Մարսիլիա՝ Կովկասէն: Ու առաջին բանը որ ինձ ըսաւ Ռոստոմի մահուան լուրն էր. ասիկա այնպիսի անհաւատալի, անսպասելի, անհրեշնաբին լուր մըն էր, որ կարծես չթափանցեց իմ ներքին էութեանս, ես այդ գոյժը ընդունեցայ մտքովս բայց հոգիս մերժեց ընդունիլ, ու այդ է անշուշտ ճրջմարտութիւնը: Ռոստոմը չի կրնար մեռնիլ, մահը անպօր է իր դէմ. այն ինչ որ կայ լաւագոյն, ինչ որ կայ մաքուր եւ լուսեղէն՝ անմահ պիտի մնայ, անիկա պիտի ապրի մեր մէջ, մեր հոգիներուն մէջ, մենք զինքը կենդանի պիտի պահենք ինչպէս անգին գանձ մը ու պիտի աւանդենք գալիք սերունդներուն իր համադրական արժէքին մէջ, որպէսզի իր կեանքը, իր խտէկները բեղմնաւոր դառնան եւ որպէսզի վերջապէս հնարաւոր ըլլայ իրականացնել այն՝ որուն իրականացումը չտեսաւ ինքը մարմնեղէն աչքերով:

«ՎԵՐԱՆՆՈՒՆԻ», Գ. տարի, քիւ 3 եւ 4, 24 եւ 31 Յունուար 1920  
Անճուած «ԱԶԳԱԿ-ՇԱԲԱԹՕՐԵԱԿ»էն, Ե. տարի, քիւ 10, 1974

Ռ Ո Ս Տ Ո Մ Է Ն  
Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերի մասին որոշ գաղափար է տալիս Ռոստոմի մէկ յօդուածը, որ ձեռագիր վիճակում մնացել է Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանի թղթերի մէջ: Այդ յօդուածը գրուած պէտք է լինի 90ական թուականների կէսերին, Հ. Յ. Դ. առաջին (1892) եւ երկրորդ (1898) Ընդհանուր ժողովների արանքում: Դժբախտաբար, վերջին մասը կորել է: Ռոստոմի գրածով Հ. Յ. Դ. Առաջին Ընդհանուր ժողովը հրատարակուած է Կենտրոնական Վարչութեան կողմից. որոշ տեղեկութիւններ տրուած են ժողովի կազմի եւ աշխատանքների մասին: Այդ յօդուածը տալիս ենք այստեղ, իբրեւ Հ. Յ. Դ. առաջին քայլերը եւ ժամանակի պայմաններն ու մտայնութիւնը լուսարանող մի վաւերագիր:

ԽՄԲ. «ԴԻԻԱՆ»

1892ը ընդհանրապէս ծանր տարի էր հայ ազգաբնակչութեան համար: Տաճիկ կառավարութիւնը հայկական շարժումը խեղդելու նպատակաւ ամենուժայրայեղ միջոցների պատրաստութիւններ էր սկսում տեսնել: Ամէն մի փոքրիկ յեղափոխական դէպքին ու պատասխանում էր դժոխային խստութիւններով: Հարուածը ոչ միայն յեղափոխական անհատների դէմ էր, այլ շարժման արմատի՝ համայն հայ տարրի դէմ. թէեւ այդ տարրի ընդհանրութիւնը ստրկաբար շարունակում էր կրել ծանր շղթաները: Մասային ձեռքակալութիւնները տարածում էին Մուշ, Սասուն, Վան, Կարին, Տրապիզոն, Երզնկա, Գարահիսար, Արաքլիր, մինչեւ իսկ Կիլիկիա:

Կառավարութիւնը գուցրնքացաբար գրգռում էր մահմետական ամբոխը հայ ազգաբնակչութեան դէմ հաւատացնելով նրան, թէ հայերը ձգտում են ազգային գերիշխանութեան, մահմետականների ստրկացման: Իսկ նորակազմ համիտիական զնդերը ամենագորեղ զէնքն էին կառավարութեան ձեռքին, բոլորովին ուժասպառ անելու հայ տարրը:

Ասպարէզ մտած ամէն գոյնի, ուղղութեան, դիրքի տէր «գործիչներ», որոնք համախմբուել էին ընդհանուր ոգեւորութեան ժամանակ, բնականաբար, պէտք է ընդհատուէին, երբ այդ ոգեւորութիւնը սկսեց աստիճանաբար իջնել: Բուն յեղափոխական գործը շատ ծանր պայմաններ էր ներկայացնում, իսկ այդ պայմաններին էջերն էին պատրաստ եմքարկուելու, եւ աւելի էջերը՝ ընդունակ մինչեւ վերջը տանելու յեղափոխական կեանքի բոլոր դառնութիւնները: Շատերը, մանաւանդ «խոհեմները», լուռ ու մունջ քաշուեցին իրենց տեղերը եւ շարունակեցին վարել նախկին անվրդով, ապահով կեանքը: Ասպարէզի վրայ գտնուածների մէջ սկսեցին երեւան գալ ներքին երկպառակութիւններ: Դաշնակցութիւնից բաժանուեց մի խումբ «Յրակցիա» Միւ-

քիւն անունով, որն ունեցաւ իր կեդրոնական վարչութիւնը, իր մասնա-  
նիւղերը եւ որը արդարացնում էր իր գոյութիւնը նրանով, որ Դաշնակցու-  
թեան կենտրոնը հարկաւոր եռանդով չէ գործում: «Ֆրակցիա» Միութեան  
կողմէն բուսաւ մի նոր կազմակերպութիւն եւս, «Տանկահայաստանի Ազա-  
տութեան վարչութիւն» անունով: Այս բաժանումները, որ պարզ *հետեւանք*  
էին յեղափոխական գործունէութեան իսկական պայմաններին պարզուելուն,  
անժամանակ ոգեւորութեան իջնելուն, համարուեցան *պատճառ* յեղափոխա-  
կան գործի դանդաղ ընթացակարգ: Հասարակութիւնը, անընդունակ գտնուե-  
լով հասկանալու գործի դանդաղութեան իսկական պատճառները եւ ամբողջ  
չարիքը տեսնելով կուսակցական բաժանումների մէջ, միաբերան «միութիւն»  
էր պահանջում: Դաշնակցութեան կենտրոնական վարչութիւնը երկար բա-  
նակցութիւններից յետոյ (\*), իր կողմից մեծ զիջումներ անելով, յաջողեցրեց  
միութիւնը: Բայց այդ, ի հարկէ, գործի ընթացքին շատ քիչ օգնեց. հասա-  
րակութիւնը, մանուաւոր հարուստ դասը, որ անընդհատ պահանջում էր  
միութիւն, որպէսզի իր «առատ նուէրները» քափի, ոչ մի կոպէկ աւելի չտը-  
ւեց: Ռէակցիան աւելի եւ աւելի սկսեց ասստկանալ, մանուաւոր, երբ ան-  
ցան գարունը, ամառը, աշունը, եւ տանկահայ ժողովուրդը բնաւ չմտածեց  
շարժուել:

Ստեղծուեց մի ցաւալի դրութիւն: Հիմնուած հասարակութեան ոգե-  
ւորուած տրամագրութեան վրայ, Դաշնակցութեան կենտրոնը լայն-լայն  
ծրագիրներ էր կազմում, դաշնակցական գործակալները բուն երկրում մեծ  
աջակցութիւն էին խոստանում, տեղական գործիչները մեծ-մեծ յոյսերով  
սնուում, սակայն ոգեւորութիւնն իջնելուն պէս հասարակութեան խոստում-  
ներն չկատարուեցան, կենտրոնի լայն ծրագիրները կիսակատար մնացին, իսկ  
աւելի ցանկալին այն է, որ թէ՛ հարուստ դասը, թէ՛ կենտրոնը, թէ՛ գործա-  
խարուած տեսան եւ մէկ մէկու հետ թշնամացան: Ո՞վ էր իսկական յանցա-  
ւորը: Ռէակցիան իր գագաթնակէտին էր հասել. «յուսասիաք» ուսահայ ժողո-  
վրդի ականջները խլացել էին. յեղափոխական շարժման այլեւս չէին հա-  
ւատում:

Ահա այս հանգամանքներումն էր, որ 1892ի սկզբին միտք յղացաւ  
Դաշնակցութեան ընդհանուր ժողով կազմելու, որը եւ իրագործուեց 1892ի  
ամառը: Ներկայ էին Դաշնակցութեան Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Տան-

(\*) ԵՄԱՆՈՒՄ. ՌՈՍՏՈՒՄ.— Այստեղ աւելորդ չէ յիշել, որ բանակցութիւններն մաս-  
նակցում էր եւ շնչակեան կուսակցութիւնը: Դաշնակցութիւնը կազմակերպուելուց յետոյ,  
շնչակեան կուսակցութիւնը պաշտօնապէս միացած էր համարուած Դաշնակցութեան, բայց  
յետոյ յայտնուեց, որ շնչակի խմբագրութիւնը ոչ մի պայմանով համաձայն չէ այդ տեսակ  
միութեան: Նա ցանկանում է առանձին լինել: Դաշնակցութեան միացած մի-երկու շնչակ-  
եան անհատներ եւս, որոնցից մէկը բանակցութիւնները պաշտօնապէս տանողը (Ռուբէն  
Քան-Ազատ՝ ՌՄԲ.) բուսական ժամանակ դաշնակցական համարուելով, Դաշնակցութեան  
հաշուով ապրելուց յետոյ, Դաշնակցութեան գործերով թիֆլիսից մեկնելով, անսպասելի  
կերպով ճանապարհը ծռեց դէպի Ժընև եւ միացաւ շնչակի խմբագրութեան: Դաշնակցու-  
թեան մէջ մնաց սակայն շնչակեան կենտրոնը, որն այդ ժամանակ Տրապիզոն էր:

կատանի ներկայացուցիչները: Հրաւեր ուղարկուեց նաեւ միւս կուսակցու-  
թիւններին (Արմենիայի եւ Հնչակի), բայց անպատասխան մնաց:

Երկարամեայ դատը փորձառութեամբ զինուած, ժողովի անդամներն  
անողոք քննադատութեան ենթարկելով անցեալի գործունէութեան ձեւը եւ  
ուղղութիւնը, կենսական փորձերի հիման վրայ գծեցին այն համապարիչ,  
որի վրայ մինչեւ այժմ կանգնած է Դաշնակցութիւնը:

Աւելորդ եւս համարում երկար կանգ առնել ժողովի պարապմունքնե-  
րի վրայ: Դաշնակցութեան Ծրագիրը, որ մշակուած է այդ ժողովում, կարող  
է ամփոփ գողափար տալ նրա մասին: Յիշատակեմք միայն մի կէտ: Ժողո-  
վր ունէր խորհրդակցական բնաւորութիւն, առաւել՝ մտքերի փոխանակու-  
թիւն. այդ պատճառով բոլոր այն հարցերը, որ դրում էին, ենթարկուում  
էին վիճարկման մինչեւ այն ժամանակ, երբ բոլորն էլ համաձայնուում  
էին հարցի այս կամ այն վերջնական ձեւակերպման վրայ. ո՛չ մի հարց չի  
ենթարկուել քուէարկութեան. բոլորը ընդունուել են միաձայն հաւանու-  
թեամբ:

Ժողովակազմները հասկանում էին, որ յեղափոխական կազմակերպու-  
թեան բուլանալը բնաւ նշան չէ հայ ժողովրդի յեղափոխական ճգնաժամների  
բուլանալուն, շարժման կանգ առնելուն, որ ընդհանուր հիասթափութիւնը  
անխուսափելի էր, քանի որ յուսահայ հասարակութիւնը շատ մեծ ակնկա-  
լութիւններ ունէր, որոնք ոչ մի դէպքում իրագործուել չէին կարող այն ժա-  
մանակուայ հանգամանքներում, որ կուսակցութիւնը չէր կարող չբուլանալ,  
քանի որ գործունէութեան նախկին ծրագիրը չէր համապատասխանում զըլ-  
խաւոր կէտերում յեղափոխական կեանքի իսկական պահանջներին: Պարզ էր  
նոյնպէս, որ յեղափոխութեան յեռարանը պէտք էր փնտռել ո՛չ կովկասում  
եւ ոչ արտասահմանում, ուր կարող են շատ շուտով ոգեւորուել եւ նոյն ա-  
րագութեամբ էլ ստոչել եւ անտարբերութեան մէջ ընկղմուել, այլ այնտեղ,  
հեռո՛ւ, հայ ժողովրդի տանջուող սրտի մէջ, եւ որ յեղափոխութիւնը կանգ  
չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ, քանի գոյութիւն ունին կեանքի տան-  
ջանքները, — նա միայն կը փոխի իր *ձեւը*, յարմարուելով նոր պայմաննե-  
րին, երբեք իր *կուսիւնը*:

Ժողովը ցրուեց շատ աննպաստ պայմաններում: Դաշնակցութիւնը նիւ-  
թական միջոցներից բոլորովին զուրկ էր: Ոչ միայն գործիչների համար նա-  
նապարհածախս չէր գտնուում, այլեւ ժողովին եկած պատգամաւորների շատ  
համեստ ապրուստը համարեա թէ չէր հայթայթուում: Բայց հասարակութեան  
վրդովեցուցիչ անտարբերութիւնը, կեանքի դառը պայմանները, փոխանակ  
յուսահատեցնելու, աւելի եռանդ էին ներշնչում բուն գործիչների սրտերում:  
Մի շատ նեղ դրամական շրջանի աջակցու... .

(Ձեռագրի վերջին մասը կորած է: Պէտք է լինի՝ մի շատ նեղ շրջանի դրամական  
աջակցութեամբ ժողովակազմները ցրուած են իրենց տեղերը, եւ Դաշնակցութիւնը ձեռնար-  
կում է գործունէութեան, համաձայն ընդհանուր ժողովի տուած որոշումների: ՌՄԲ.):

## ԱՅՔ ՈՒ ԲԵՆ

ԱՅՔ ՈՒ ԲԵՆ յօդուածաշարքի առաջին երկու մասերը կը պատկանին, իրականութեան մէջ, Քրիստափոր Միքայէլեանի զբօր-չին. բնագիրը կը գտնուի Հ. Յ. Դ կեդրոնական արխիւի Քուղ-Քերուն մէջ. Սիմոն Վրացեանի վկայութեամբ, Քրիստափոր այդ երկու բաժինները գրած է Սիմոն Չաւարեանի աշխատակցու-թեամբ: Այդ բնագրի եւ ԴՐՕՇԱԿԻ 1893 Նոյեմբերի ու 1894 Յուն-ուարի համարներուն մէջ հրատարակուած ԱՅՔ ՈՒ ԲԵՆԻ բաղ-դատութիւնը ցոյց կու տայ, որ Խմբագրութիւնը (Ռոստոմ) կա-տարած է մասնակի փոփոխութիւններ եւ յաւելումներ միայն: Բայց ամենայն հաւանականութեամբ Ռոստոմի գրչին կը պատ-կանին շարքին վերջին երկու բաժինները (1894 Մարտ եւ Մա-յիս), որոնց բնագիրը գտած չենք կեդրոնական արխիւին մէջ:

Հ. Տ.

Նոյեմբեր, 1893

Այր ու բեն կայ կարդալ-գրել սովորելու համար, կայ այր ու բեն, այ-սինքն՝ տարրական օրէնքներ՝ գտնագտն մասնագիտութիւնների համար. կայ այր ու բեն նաեւ հասարակական խնդիրների շրջանում:

Դժբախտաբար, այս վերջին տեսակի այր ու բենն անհասկանալի կամ տարօրինակ է համարում շատերի համար: Չնայելով, որ հասարակական երեսոյթներն աշխարհիս բոլոր անկիւններում պատմութիւնը դարէ ցդար կրկնում է գարնանալի նմանութեամբ՝ մեր յեղափոխականներից շատերի հա-մար, կարծես, հայր եւ Հայաստանը մի բացառութիւն են. որ դուրս պիտի համարուին համաւարդկային ընդհանուր օրէնքների ազդեցութիւնից: Հայ-յեղափոխականը չէ ուզում որեւէ առընչութիւն ունենալ մարդկային պատ-մութեան հետ: Անմեղների անարար արիւնով շողախուած, անարդարու-րեան սեւ դրոշմով կնքուած, միլիոնաւոր ժողովուրդների հառաչանքներով եւ սգով արատաւորուած պատմութեան էջերը մենք չենք ուզում մանաչել: Այո, յեղափոխական այբուբենը գտնուած, ընդունուած չէ մեր *զանազան* գործիչների կողմից:

Բայց չէ՞ որ այդ այր ու բենը կայ, եւ չէ՞ որ նրա ընդունելը կը լի-նէր ամենամպատակաշարմար միջոց մեր երկրի յեղափոխական ձգտումները մի ընդհանուր լեզուով եւ ոգով արտայայտելու համար:

Այո, այդ այր ու բենը կայ, եւ մեզնով չէ. որ նա որոշում է: Մի միայն, բնականաբար, նա կը մնայ անըմբռնելի բոլոր այն «գործիչների» համար, որոնք չեն արտայայտում ո՛չ բաւականաչափ զգացմունք դէպի մեր

անբախտ ժողովրդի անպաշտպան շահերը եւ ոչ էլ առողջ միտք՝ համաւարդ-կային պատմութեան եւ ներկայ ժամանակների ուսումնասիրութեամբ հայի դրութիւնը լուսաբանելու համար:

Հայ ժողովուրդը *ազատութիւն* է ուզում, — այս ամէնքի համար պարզ է, եւ այս խօսքը միակ տառն է, *միակ այրն է*, որի անհրաժեշտութիւնն ընդ-հանուրի կողմից ընդունուած պէտք է համարել: Բայց մի տառ *այր ու բեն* չէ կարգում. *այրից* յետոյ գալիս է *բենը*:

Ի՞նչ է նշանակում *ազատութիւն*. Ի՞նչ է հասկանում մեր ժողովուրդը *ազատութիւն* խօսքը արտասանելիս:

Շատերը կ'ասեն. *բազաքական ազատութիւն, ազգային անկախութիւն, հայկական կառավարութիւն տաճկականի տեղ*:

Դա, ի հարկէ, շատ որոշ պայման է. բայց բովանդակում է արդեօք իր մէջ ժողովրդի բոլոր իդէերը, գաղափարները, նրա բոլոր պահանջներն *ազատ* դրութիւնից: *Ազատութեան* ձգտելով՝ արդեօք մեր ժողովուրդն ու-զո՞ւմ է միմիայն իր ազգային ինքնասիրութեանը բաւականութիւն տալ, թէ այդ դրութեան հետ նա անշուշտ կապում է *սոհասարակ իր կեցութեան ընդ-հանուր բարեփոխումը*: Մենք չենք հերքում առաջին մտաւի նշանակութիւ-նը, բայց հակառակ ենք այն հայեացքներին, որոնք ժողովրդի դրութեան բարեփոխումն անպայման կապում են նրա անկախութեան հետ, համարելով այդ բարեփոխումը ինքնըստինքեան հասկանալի, բնական, անհրաժեշտ հետե-ւանք անկախութեան: Սա է այն *բենը*, որի վրայ անհրաժեշտ է կանգ առ-նել: Բայց համաձայնուեմք նախօրէն, որ իսկապէս ժողովուրդն ազատու-թիւն է կամենում ոչ թէ լոկ ազգային ինքնասիրութիւնից դրդուած, այլ գլխաւորապէս իր առօրեայ կեանքը մաշող, մնշող հանգամանքների ազդե-ցութեան ներքոյ:

Խօսեցրէ՛ք Հեփթարի, Մանգկերտի, Սասնոյ մի մասի հային, որը յայտնի է իր տեղում *Ֆլահ* (ստրուկ) անուան տակ: Դա *պատկանում* է այս կամ այն ֆիւրտ աղային, որը հարստահարում է նրան ուզածին պէս, ծա-խում է նրան ուրիշին 10–20–30 լիրայով, եւ միեւնոյն ժամանակ հովանա-ւորում է հայ վաշխառուի եւ միւս ֆիւրտ աղաների դէմ. այդ հայը, որ տա-րին մի երկու անգամ հագիւ է տեսնում տէրութեան պաշտօնեայ, դժուար թէ հետաքրքրուի հայկական օրէնքի ժողովով կամ ազգային ազատ մա-մուլով. նրա համար, ի հարկէ, աւելի բնական է ազատութեան տակ հաս-կանալ *Ֆլահ* դրութիւնից դուրս գալը, Փէռոյալ բէկի կամայականութիւնից անկախ լինելը եւայլն...

Վերցրէ՛ք Կարնոյ դաշտի, Փոքր Հայաստանի, վանայ շրջակայքի ժո-ղովուրդը. ֆրտերի յարձակումներն այս կողմերում նուազում են այն նշա-նակութեան առաջ, որ ունեն հարկերի չափազանց ծանրութիւնը եւ վաշխա-ռուների կողպտումները՝ վարչական կազմակերպութեան փտածութեան հետ միասին: Հարկային բարեփոխումները, հողի եւ նրանից ստացուած արդիւնք-ների ապահովութիւնը գտնագտն էֆենդիների ֆակտից, — ահա այն պայ-մանները, որ առաջնակարգ տեղ են բռնում այս հայերի կեանքում:

Ալաշկերտի հայը, իր յետին չփաւորութեան մէջ, ազատութիւնից ա-

ւելի շուտ կ'ուզենար խաղաղ դրացի: Թէ որքան նշանաւոր է նրա համար այս պայմանը, այդ պարզ է նրանից, որ գիտեմալով հանդերձ, որ ազգային անկախութիւնը Ռուսաստանի սահմաններում հայերի համար կատարեալ ցնորք է, գիտեմալով, որ ազգային ինքնասիրութիւնը պահանջում է հաստատ լինել իր ազգային կրօնին, այսուամենայնիւ իր անհանգիստ դրացիից — քրիստոնիստից — ազատուելու համար՝ նա այսօր պատրաստ է ամբողջ գաւառներով Ռուսաստան գաղթել եւ, եթէ պահանջուի, նաեւ ռուսադաւանութիւն ընդունել:

Խօսեցրէ՛ք հայ գիւղացուն, հայ արհեստաւորին, վաճառականին կամ հայ ինտելիգենտին, բնօրինակ եզրակացութիւնը բոլոր լսածներից կը լինի՝ *ագատութիւն ցանկանալով*, հայ ժողովուրդը *ձգտում է այնպիսի գրութեան*, որ ազատում լինի՝ ինչպէս մահմեդականներից հալածուողի իր անարգ դրութիւնից, ինչպէս օրէնքի առաջ եղած անհասարկութիւնից, նոյնպէս եւ հարկերի ծանրութիւնից, քրտերի եւ պաշտօնեաների յափշտակութիւններից, բէկերի եւ վաշխառուների իշխանութիւնից, հողին վերաբերեալ գեղձումներից, իր յատահատ չփառութիւնից, իր աստանդական մուրացկանի դրութիւնից եւ այլն...

Այժմ հարցնում եմ մենք. ի՞նչ կարգեր կարող են ապահովել այդ պահանջները. ի՞նչ կարգեր կարող են բաւականութիւն տալ իր նակատի քրտին՝ քով ապրող մեծամասնութեան բոլոր արդար պահանջներին:

\*\*

Յունուար, 1894

Անցեալ անգամ մենք վերջացրինք այս հարցով, թէ ինչ կարգեր կարող են ապահովել ժողովրդի արդարացի պահանջները:

Հարկատու է պարզ դնել հարցը եւ աներկիւղ ֆիննել դրան, որովհետեւ անխղճութիւն է ֆաղցածին հացի տեղ ֆար տալ, որովհետեւ ապշութիւն է դարման չանել հիւանդի այն վէրքին, որից իսկապէս տանջում է ինքը հիւանդը:

Սակայն «Գաղնակցութեան» սկիզբ առնելուց առաջ այդ հարցերը դրել եւ ըստ իրենանց մշակել եւ երկու աւելի հին հայ յեղափոխական օրգաններ, — «Արմենիա» եւ «Հնչակ»: Ի՞նչպէս են հասկացել այդ օրգանները հայի ցար եւ նրա ապագան բարոյփելու անհրաժեշտ պայմանները:

Իսկապէս «Արմենիա»-ի մասին, այն «Արմենիա»-ի, որը, ինչպէս ինքը վաղուց յայտարարել է, դադարել է յեղափոխական կազմակերպութիւն, յեղափոխական կենդանի գործի օրգան լինելուց, որն այժմ զբաղուած է աւելի փողի եւ ուրիշ տեսակ վիճակախաղեր կազմելով իր բաժանորդների համար. — իսկապէս, ասում եմք, «Արմենիա»-ի մասին չարժէք խօսել. չարժէք, որովհետեւ պարզ է, որ հանդերձ իր յեղափոխական երեւիականներով, այդ բերքը հասել է բարոյական մահուան, իր նիւթականն ապահովելու *միակ* եւ *թշուա* խնդրին:

Բայց մեր միտքը պարզելու համար, աւելի լաւ է, խօսենք՝ աչքի առաջ ունենալով հասարակութեան մէջ պտտող, փոքր ի շատէ յայտնի կարծիքներ, ծրագիրներ, ուղղութիւններ: Ինչքան եւ անորոշ լինէր «Արմենիա»-ը, այդ նախկին «Հայրենասիրաց Միութեան» օրգանի նախկին ծրագիրը, այն ծրագիրը, որը տարեցտարի շաբաթը երկու անգամ նոյն ոչինչ չպարգող խմբագրութեամբ լոյս էր տեսնում թերթի առաջին սիւնակում՝ սակայն այս եւ այն խմբագրական առաջնորդողներից նկատելի էր, որ «Արմենիա»-ի համար առաջնակարգ տեղ էին բռնում *Թուրքիայում տիրող վարչական-քաղաքական թերութիւնները*: Վերացնել այդ թերութիւնները՝ եւ հայի լացը բախտաւոր ժպտի, հայի թշուառ կենցաղը կատարեալ անդորրութեան պիտի վերափոխուին: Այդպէ՞ս է արդեօք:

Աստուած գիտէ, ինչ էր հասկանում Պրն. Փորթուգալեանը վարչական բարեփոխումներ ասելով, բայց ամենայն համբերութեամբ կարդալով այդ ֆարոգները՝ մտածում էինք. — եմք աղքատ թէ, դիւթական մի շարժումով մի թուրքիայում իրականացաւ ներկայ ժամանակներիս համար առաջնակարգ մի *Եւրոպական վարչական դրութիւն*. Ի՞նչ կը լինենք մենք դատած դորանով: Ի հարկէ շատ բան, բայց ոչ այն բոլորը, ինչ հարկաւոր է ժողովրդին, ոչ այն դրութիւնը, որի անունով *միայն* մենք ձեռներս սրտերիս վրայ դրած, առանց մեր խղճի առաջ ամաչելու, կարող լինէինք բարձրաձայն գոչել ժողովրդին. «Հայ ժողովուրդ, ոտ դի՛ր յեղափոխութեան դժոխային ուղին. կոուի՛ր, մեռի՛ր, գոհի՛ր որդիքդ ու ունեցածդ, եւ երբ կը ստանաս այդ վարչական դրութիւնը, դու բախտաւոր կը լինես անպատճառ»...

Պարսիկ գիւղացին *անկախ* է, իր երկրում նա ֆաղափականապէս *իշխող* է, բայց ապահով է նրա կացութիւնը, ազատ է նա. ոչ, նա *ստրուկ* է եւ *աղքատ*: Ռուսմանիս *ազատ* է. նրա ֆաղափական կարգերն՝ առնուած են եւրոպական սահմանադրական մոդելներից, բայց ի՞նչ է նրա գիւղացու դրութիւնը, եթէ ոչ կատարեալ նորտութիւն. բոլոր աշխատաւոր, բայց մեծ մասամբ անհող գիւղացիք իրականապէս պատկանում են մի ֆանի հագար հողատէր ազնուականների: Իտալական ժողովուրդը, որը դեռ երէկ թօթափեց իր վրայից Աւստրիայի լուծը եւ ձեռք բերեց ֆաղափական ազատութիւն, ներկայումս հեծում է դառն ազատութեան տակ: Եւ Սիցիլիան, այն Սիցիլիան, որ իտալական ապստամբութեան յեմարանն էր կազմում, որ համարակալ բարձրացրեց ապստամբութեան դրօշակն օտար կառավարութեան դէմ, հենց այս րոպէիս գէնքը ձեռքին կուրում է իր *սեփական*, իր *արիւնով ստեղծուած կառավարութեան* դէմ... Ուրտուն միլիոն ռուս ժողովուրդը, ֆաղափականապէս ազատ լինելով հանդերձ՝ այսօր այնքան աղքատ է եւ տղէտ, որ համարեա՛ կենդանիների կեանք է վարում: Վերջապէս Եւրոպայի առաջնակարգ ազատ սահմանադրական երկրներում, ժողովրդի առնուագն երկու երբորդ մասը ապրում է օրէցօր, խաղում է ապրանք ստեղծող հասարակ մեքենայի դերանմանակ եւ հասարակական յարաբերութիւնները մարդու համար այդ երկրներում այնքան խիստ որոշուել են, որ ոչ մի երկրում, նոյնիսկ ամենայն յետադէմ երկրների հետ համեմատած, անհատն այնքան երկիւղ չէ կարող ունենալ հենց վաղն անգործ մնալ եւ փողոցի մէջ սովից մեռնել, որքան հենց

այդ քաղաքակրթութեան մեծահոգակ օրրաններում: Ով փոքր ի շատէ ծա-  
նօթ է երոպական ներկայ կեանքին՝ նա կարօտ չէ բացատրութիւններին. յա-  
մենայն դէպս յիշենք, որ Լոնդոն քաղաքը միայն ունի 100.000 փողոցային  
մուրացկաններ, որ բանուորների մշտական գործադուլներն անկարագրելի  
չարիքներ են առաջ բերում այդ միլիոնաւոր դասակարգի համար, դասա-  
կարգի. որ բացի իր ձեռքից եւ ոտքից չունի ուրիշ ոչ մի սեփականութիւն,  
որ երոպական բոլոր պարլամենտներում սոցիալիստ դեպուտատների թուի  
սարկէստարի աւելանալը, բանուորական յուզումները նշան են խիստ դժգո-  
հութեան տիրող կարգերի դէմ, որ վերջապէս *անարխիզմի* սարսափահար  
գործունէութիւնը, իբրեւ մեծամասնութեան դրութեան վերաբերեալ ան-  
զուսպ բողոք՝ ծնուել եւ զարգանում է հենց այդ երկրներում:

Ընդհանրացնելով մեր ասածները երոպական կարգերի բացասական  
կողմերի մասին՝ մենք կր կամենայինք ընթերցողի հետ գալ հետեւեալ եզ-  
րակացութեան. պարզ է, որ երոպան իր քաղաքական կազմակերպութիւն-  
ներով այսօր բարձր է ուրիշ երկրներէն. միեւնոյն ժամանակ ապացուցուած  
պիտի համարել, որ այդ կազմակերպութիւններն անկարող են ապահովել ժո-  
ղովրդի բարեկեցութիւնը եւ հետեւաբար իրենց տիպով դեռ շատ եւ շատ  
ստոր պիտի համարուին:

Մեզ կարող են ասել, որ նոյնիսկ երոպայում չենք գտնում այնպիսի  
քաղաքական ձեւեր, որոնց մենք հաւանէինք. նախանձէինք: — Ճիշդ է. սա-  
կայն հարցը հաւանելու, չհաւանելու մէջ չէ. հարցը միմիայն նրանումն է,  
որ մենք *պարտաւոր* ենք չձեռնկել մեր հասարակութիւնից երոպական քա-  
ղաքական կազմակերպութիւնների անկարողութիւնն իրենց ժողովրդի բարօ-  
րութիւնն ապահովելու. տալու նրան այն, ինչի նա այսօր ձգտում է:

Ծածկել այս ամէնը ժողովրդից, երբ մենք նրան բարօրութեան անու-  
նով կոչում ենք դէպի յեղափոխութիւն՝ այդ անխղճութիւն է մի կողմից  
եւ անհաշի կարմատեսութիւն միւս կողմից: Թո՛ղ նա իմանայ այս ամէնը,  
որպէսզի յեղափոխական մի շարժումից յետոյ, իրականացած չտեսնելով իր  
իզձերը՝ յուսախաբութեան եւ ռէակցիայի չհակի. թո՛ղ նա իմանայ այդ ան-  
մէնը, որպէսզի երբեք նա երես չդարձնի երկրի յառաջադէմ ինտելիգենտ-յե-  
ղափոխականներից, որպէսզի վաղը կարճատեսութեամբ չմերժէ այն, ինչ այ-  
սօր արեան գետեր թափելով՝ ձեռք բերած կը լինի...

\*\*

Մարտ, 1894

Անցնենք «Հնչակ»ին:

Հնչակեան խումբը ասպարէզ դուրս եկաւ, իբր սոցիալիստ-յեղափո-  
խական: Նա հենց սկզբից յայտարարեց, որ ինքը չի բաւականանալու միայն  
ռամկավարական ազգային անկախութեամբ, այլ նրա նպատակն է սոցիա-  
լիզմը: Բայց թէ ինչ բան է սոցիալիզմը, ինչպէս կարող է նա իրականանալ,  
դրա մասին չէր կարելի ոչ մի որոշ գաղափար կազմել «Հնչակ»ի տուած յոյ-

ուածներից, չէր կարելի, որովհետեւ հենց ինքը, «Հնչակ»ի խմբագրութիւ-  
նը, որոշ գաղափար չունէր նրա մասին եւ չունի մինչեւ այսօր էլ:

Հայեացքների բառ, խառնաշփոթութիւն եւ ինքնուրոյնութեան կա-  
տարեալ բացակայութիւն, — սեա թէ ինչ կարելի է նկատել «Հնչակ»ի տե-  
սական հայեացքների մէջ: Եւ երբ «Հնչակ»ի խումբը ասպարէզ դուրս եկաւ  
բոլորովին անպատրաստ, ստանց դրական համոզումներ ունենալու, պէտք  
էր սպասել, որ գոնէ իր 7ամեայ գոյութեան ընթացքում նա այդ ձեռք կը  
բերէր: Սակայն այդ չեղաւ, եւ ներկայումս էլ՝ չնայելով այն փոփոխու-  
թիւններին, որոնց ենթարկուել են «Հնչակ»ի տեսական համոզումները, նա  
նոյն բառով է ներկայացնում, նոյն անիմքնուրոյնութեան կնիքն է կրում,  
ինչպէս եւ առաջ:

«Հնչակ»ը առաջ իրեն հրատարակեց սոցիալիստ-յեղափոխական վեր-  
ջերումս աւելացրել է եւ երկու ուրիշ կոչումներ. մարքսիստ եւ սոցիալ-դե-  
մոկրատ: Հենց այդ երկու նոր տերմինները բացատրելու համար «Հնչակ»ի  
խմբագրութիւնը փերդ. Լասսալի «Սահմանադրութեան էութեան մասին»  
գրքոյկի քարգմանութեան կցել է մի երկու յառաջաբան: Գիրքը նոր է լոյս  
տեսել, այնպէս որ այդ յառաջաբանը նրա վերջին խօսքը կարելի է համա-  
րել, ուստի կանգ առնենք քիչ դրա վրայ: Այդ յառաջաբանը մեր ընթերցող-  
ներից շատ շատերը կարդացած չեն լինիլ, եւ երբ կարդացած էլ լինեն, հա-  
ւատացած ենք, շատ էլ բան հասկացած չեն լինիլ նրա էնգելսական խրթին  
նախադասութիւններից. աւելորդ չենք համարում այս պատճառով կրկնել  
այստեղ նրա մէջ արտայայտած մի բանի մտքերը, որոնք նշանակութիւն ու-  
նեն այժմ:

Հասարակական, քաղաքական կազմակերպութեան հիմքը կազմում են  
երկրի տնտեսական պայմանները: Ուստի, երբ մի երկրի տնտեսական պայ-  
մանները փոխուում են, անպայման պէտք է փոխուեն եւ նրա քաղաքական ձե-  
ւերը: Հայութեան մէջ ներկայումս կատարում է մի այդպիսի պրոցէս: Հայ  
ժողովրդի տնտեսական պայմանները փոխուում են, նոյն ձեւով, ինչ ձեւով  
այդ եղել է երոպայում. մանր սեփականատիրութիւնը քայքայուում է հե-  
տրգիտեւ եւ տեղի տալիս խոշոր սեփականատիրութեան: Տանկահայ գիւղա-  
ցու համար հարկերի պատճառով իր սեփական հողը դառել է «ծանր բեռ»,  
որ չէ տալիս ոչ մի շահ, այլեւ մի չարաբաստիկ գործիք, որ ծառայում է  
միայն շահագործողներին»: Նա թողնում է իր հողը, գնում արդիւնաբերա-  
կան քաղաքները եւ դառնում *վարձկան բանուոր*: Նոյն վիճակին են ենթարկ-  
ւում ե՛ւ արհեստաւորները, որոնք անկարող են լինում մրցել խոշոր գործա-  
րանատէրների հետ: Այսպիսով՝ մեր մէջ պատրաստում է պրոլետարիատ,  
բանուոր դասակարգ: Դրա հետ զուգընթացաբար զարգանում է մի ուրիշ դա-  
սակարգ, բուրժուազականը, որը իր ձեռքի տակ ունենալով *կապիտալը*, ե-  
րեսան կը գայ, իբրեւ բանուոր դասակարգի մշտական կեղեքիչ:—

«Դա է այն պատմական բնական պրոցէսը, որ սկսել է տեղի ունենալ  
Հայութեան մէջ եւ որի սոսաջադիմական բնթացքն անխուսափելի է եւ միեւ-  
նոյն ժամանակ ինքն էլ պայման Հայութեան ընդհանուր յառաջադիմութեան:  
Հայութեան մէջ ծագող տնտեսական այդ նոր յարաբերութիւններն իրանց

չարունակ զարգացումով ազդին աւելի եւ աւելի կը վատեն երկու մասի, երկու դասակարգի վրայ, բուրժուա եւ պրոլետարիատ, որոնք հենց այժմ, իրանց կազմութեան ներկայ սկզբնաւորութեան մէջ, ունեն միմեանց հակառակ տնտեսական շահեր, որ՝ զնալով՝ աւելի ու աւելի կ'որոշուեն եւ վերջը կ'առնեն արդէն սուր կերպարանք»:

Կանգ առնենք այս վերջին կէտի վրայ միառժամանակ:

Ուրեմն այդ պրոցէսն անխուսափելի, փակատագրական է, ուրեմն կապիտալիզմը պէտք է անպայման մեր մէջ մուտք գործի, պէտք է տակնուվրայ անի ներկայ բոլոր կարգերը, մտնեն խոշոր արդիւնագործութեան ձեւեր, հարստութիւնը պէտք է կենտրոնանայ փոքրաքիւ կապիտալիստների ձեռքը, ընդհանրութիւնը անպատեհաւ իր բոլոր սեփականութիւնից գրկուի, եւ այս բոլոր ցաւերից յետոյ միայն կարող է իրագործուել սոցիալիզմը:

Այսպէս է, չէ՞...

Սակայն նոյն «Հնչակ»ի խմբագրութիւնը աւելի մեծ ապլումբով պնդում էր մի ժամանակ, թէ հայ ժողովուրդը կարող է խուսափել կապիտալիզմի շարիքներից, որ յանցանք է աջակցել նրա մուտք գործելուն, որ պէտք է դրա առաջն առնել, որ հենց դրա համար է սոցիալիզմը: Խարկաւոր է միայն ձեռք բերել ընդարձակ ռամկավարական կառավարութիւն, որը երկրի բոլոր հարստութիւնը կը դարձնի հասարակական, հաւաքական սեփականութիւն եւայլն: Եւ երբ «Արմենիա»-ի էջերում Պ. Սիւնին յանդգնեց ասելու, թէ անկարելի բան է, թէ միևնույն իսկ ձգտումը «արգելել կապիտալիզմի մուտքը» հակասում է նշանաւոր սոցիալիստների թեորիաներին, ահա թէ ինչ պատասխանեց «Հնչակ»ը իր օլիմպիական բարձրութիւնից Պ. Սիւնիի հասցէին.

«Մեր կարծիքն այն է, որ եթէ Հայաստանն ամփոփուէ ռամկավարական-հանրապետական պայմաններում, նա իր տնտեսական սոլորութիւններով ու առանձնաշատկութիւններով կարող կը լինի խուսափել կապիտալիստական բուն կազմակերպութիւնից, միանգամայն օգտուելով դրա հարկաւոր ու առողջ պտուղներից: Մեր այս միտքը, ինչպէս ասացինք, Ա. Սիւնին կարծում է թէ հակասում է նշանաւոր սոցիալիստների թէորիաներին: Տեսնենք, ուրեմն, թէ Կ. Մարքսն, սոցիալիզմի հայրը, ինչ է ասում իր «Նամակում» հրատարակութիւն սոցիալիզմի երկրորդ հօր՝ Ֆրիդրիխ Էնգելսի: «Ես այն կարծիքն ունեմ, — ասում է Մարքսը, — որ կարելի է իւրացնել կապիտալիստական կազմակերպութեան պտուղներն, առանց կրելու այն շարժարանքները, որ նրանից անբաժան են եւ զարգանալ սեփական, ինքնուրոյն պատմական պայմանների համեմատ: Ռուսաստանը, որ այնքան ձգտում է դառնալ կապիտալիստական երկիր՝ Արեւմտեան Եւրոպային նմանելու, նա այդ քայլն անելով կը կորցնէ ամենայնպէս առիթներից մէկը, որ իրերի պատմական ընթացքը տուել է նրան խուսափելու համար կապիտալիստական կազմակերպութեան ամէն ձախողութիւններից: Իսկ Արեւմտեան-Եւրոպական կապիտալիզմի ծագման ու ընթացքի իմ նկարագիրն (այսինքն՝ թէ Եւրոպայում կապիտալիզմը կը կերպարանափոխուէ ապագայում սոցիալիզմի) դարձնել պատմական-փիլիսոփայական մի ամբողջ թէորիա եւ ասել, թէ ամէն ժողովուրդը անպատեհաւ պիտի այդպէս ընթանայ (կապիտալիստական շաւ-

ղով գէղի սոցիալիզմ), — ներուրթին»։ Թէորիայիս այդպիսի բացատրութիւնն ինձ համար միանգամայն թէ՛ շատ պատուաբեր է եւ թէ՛ չափազանց ամօթալի: Այսպէս, հեռեւորար, ամէն երկրին պարտաւորեցուցիչ չէ սոցիալիստական կազմակերպութեան հասնելու համար կապիտալիզմի շուրջով անցնել: Կան երկիրներ, որ ունենալով իրենց պատմական ինքնուրոյն պայմանները եւ կամ ամփոփելով նրանց հասարակական նպատակալարմար կերպերում, «կարող կը լինեն իւրացնել կապիտալիզմի առողջ պտուղներն, առանց կրելու նրա շարժարանքները», կարող կը լինեն օգտուել նրա բարիքներով, առանց զգալու նրա շարիքները, «կարող կը լինեն եւ առանց կապիտալիստական շուրջի հասնել սոցիալիստական կազմակերպութեան»: Այժմ պա՞րզ է ձեզ, ս'ով գիտուն Սիւնի, որ նոյն իրէն Մարքսի եւ մեր ասածն իւրար չեն հակասում: Ինչո՞ւ համար էք ձեր վայտէ գրչով Կ. Մարքսի մեծ անունը մրտուում»:

Իսկ «այժմ պարզ է ձեզ, ո՞վ գիտուն» «Հնչակ»ի խմբագրութիւն, որ դուք ձեզ արասափելի կերպով հակասում էք, որ դուք կրկնում էք նոյնը, ինչ որ Փորթուգալեանի «նոր ձեռք բերած դեռահաս արբանեակներից մէկը, ում Ա. Սիւնին» էր ասում. պա՞րզ է նոյնպէս, որ անուանելով ձեզ մարքսիստ, հակասում էք Կ. Մարքսի վերոյիշեալ խօսքերին: «Ինչո՞ւ համար էք ձեր վայտէ գրչով Կ. Մարքսի մեծ անունը մրտուում»:

\*\*

Մայիս, 1894

Անցեալ համարում մեկ ցոյց տուինք, թէ ի՞նչ արմատական հակասութիւնների մէջ է ընկել «Հնչակ»ը եւ ինչպէս է ինքն իրեն ապտակներ հասցրնում:

Շարունակեմք, սակայն, մեր ընդհատուած ֆաղուածքը:

Հայութիւնը բաժանում է երկու իրար թշնամի դասակարգերի՝ բուրժուա եւ պրոլետարիատ: Սակայն այդ երկու թշնամիներն ունեն եւ մի ընդհանուր թշնամի, դա միապետական կարգերն են: Հայկական հարցն այսպէս բարդ լինելով՝ բարդ է եւ հայ աշխատաւոր ընդհանրութեան ու դորա հետ միասին հայ սոցիալիստների դերը: Նոքա մի կողմից պէտք է ձգտեն տապալելու միապետական կարգերը բուրժուազիայի հետ ձեռք ձեռքի տուած. միւս կողմից միջոց պէտք է տան հայ աշխատաւոր տարրին պաշտպանելու իր շահերը բուրժուազիայի դէմ, որը միապետական կարգերի անկումից յետոյ աւելի մեծ ուժ է ձեռք բերելու: Բայց ի՞նչպէս այդ կատարել: — Հարկաւոր է գէնք տալ ժողովրդի ձեռքը: Այդ գէնքը հետեւեալն է.—

«Բացատրել աշխատաւոր ընդհանրութեանն իր պատմական դերը, իր սոցիալական-քաղաքական խնդիրներն ու շահերը, դարդացնել նրա դասակարգային զիտակցութիւնը, լուսարանել ու որոշել նրան իր քաղաքական իւրաքանչիւր պահանջը եւ այդպիսով դարձնել կողմնակից նրան իր շահերի

Համապատասխան յեղափոխութեան, պատրաստել նրա այդ անելիք յեղափոխութիւնը, եւ պրոպագանդայի ու ազդեցիկայի հետ միաժամանակ Համախմբել ու կազմակերպել նրա ուժերը մէկ ընդհանուր կազմակերպութեան մէջ ընդհանուր յեղափոխութեան համար — ահա՛ հայ սոցիալիստի, հայ յեղափոխականի բռնելիք ընթացքն ու աշխատութիւնները»:

Այդ տեսակ զենք տալու դէմ մենք ոչինչ չունենք ասելու. սակայն մի հանգամանք անորոշ է մնում այդ կտորի մէջ, պարզ չէ, թէ ում ձեռքը պէտք է տալ այդ զենքը: Մեր աշխատանքը ընդհանրութիւնը, որ ըստ «Հնչակ»ի անխուսափելի կերպով պէտք է պրոլետարիատ դառնայ, դեռ եւս չէ դառել. դեռ եւս սաղմային դրութեան մէջ է. ինչպէս խոստովանում է ինքը՝ «Հնչակ»ը. եւ մեր աշխատանքը ընդհանրութիւնը կազմում են այսօր գիւղական ազգաբնակչութիւնը արհեստանոց դասի հետ միասին: Այնպէս որ, երբ «Հնչակ»ը խօսում է վերոյիշեալ կտորում «դասակարգային գիտակցութեան» մասին, որ պէտք է մտցնել աշխատանքը ընդհանրութեան մէջ հայ սոցիալիստը, նա պարզ չէ յայտնում, թէ ինչ դիրք պէտք է բռնի հայ սոցիալիստը, իբրեւ սոցիալիստ, դէպի ներկայումս գոյութիւն ունեցող աշխատանքը ընդհանրութեան ամենաէական մասը, դէպի գիւղական դասակարգը: Պարզ չէ թէ այդ սոցիալիստական զենքը դրա ձեռքն էլ պէտք է տալ, թէ միմիայն սաղմի ձեռքը:

Մեզ քում է, որ ըստ «Հնչակ»ի սոցիալիզմն ոչ մի առնչութիւն չունի եւ չպէտք է ունենայ գիւղական դասակարգի անմիջական շահերի հետ. հայ սոցիալիստը, իբրեւ սոցիալիստ, գործ ունի միմիայն բանուորների հետ, հաստատեցած լինելով, որ այսօր-էգուց հայ աշխատանքը ընդհանրութիւնը դառնալու է վարձկան բանուոր:

Մեր այս կարծիքը կազմելուն տեղիք են տալիս «Հնչակ»ի թէ՛ ընդհանուր դատողութիւնները եւ թէ՛ մեր վերելում բերած կտորի անմիջական շահութեան կարգի մասին, որտեղ նա պարզ ասում է, որ հայ ժողովրդի իսկական պաշտպանները կը կատարեն բուն սոցիալիստական գործ՝ բանուորներին կազմակերպելով: Պէտք է խոստովանուենք, որ այս կտորն էլ բաւականաչափ չէ պարզում հարցը, մեր դրած հարցին դրական պատասխան չի տալիս, որովհետեւ, գուցէ, բացի «բուն» սոցիալիզմից բանուորների համար՝ կայ մի այլ սոցիալիզմ, ոչ այնքան «բուն», գիւղական դասակարգի համար: Պարզ եւ դրական պատասխան մենք գտնում ենք «Մի շարք հարցեր» յօդուածում («Հնչակ», № 16, Դեկտ. 1891): Այդ յօդուածում որոշ կերպով ասում է, որ սոցիալիստական ձգտումներն ուղղակի արդիւնք են բանուորական շահերի. որ պէտք է արդիւնաբերութեան կենտրոն կազմող վայրերում բանուորների մէջ տարածել եւ բացատրել սոցիալիստական ձգտումները:

Իսկ «գիւղացի ժողովուրդը»:

Բանից դուրս է գալիս, որ այդ «գիւղացի ժողովուրդը» «իր տնտեսական տարբեր պայմանների շնորհով ընդունակ չէ իւրացնելու սոցիալիզմի գաղափարները»:

Եւ այս տողերը գրողը նոյն «Հնչակ»ն է, որը մի ժամանակ ձգտում էր *գիւղական* համայնական դրութեան վրայ Հայաստանում հաստատել սոցիալիզմը: Իսկ այժմ նա ոչ միայն թողել է սոցիալիզմը հաստատելու այդ

նախապահը, այլ մինչեւ իսկ անհնարին է համարում որեւէ կերպով «գիւղացի ժողովրդին» ըմբռնել տալ սոցիալիզմի սկզբունքները:

«Հնչակ»ի ընթերցողները լա՛ւ գաղափար կը կազմեն նրա քարոզած «գիտական սոցիալիզմի» մասին:

Սակայն տեսնենք, ինչպէս է ցանկանում «Հնչակ»ը իրականացնել սոցիալիզմը բանուորների միջոցով: Առաջ բերենք այդ կտորն էլ.—

«Հայ սոցիալիստները . . . կը կատարեն մի բուն սոցիալիստական գործ. հայ բանուորներից, այդպիսով, նրանք պատրաստում են, կազմակերպում են «սպագայի դիմադրական կուսակցութիւնը», որին ձեռք բերած ուժակարական սահմանադրական պայմանները «կը ծառայեն իբրեւ գործիք» մղելու համար՝ միապետական կարգերի անկումից անմիջապէս յետոյ՝ իր դասակարգային կոխը շահերով իրան հակառակ իշխող դասակարգերի դէմ եւ ձգտելու այլեւս իր անմիջական նպատակ դարձած սոցիալիստական կազմակերպութեան հաստատութեան»:

Այս ի՞նչ «սպագայ դիմադրական կուսակցութիւն» է: Հարկաւոր է քիչ կանգ առնել սրա վրայ, մի քիչ պարզել:

Բանուորական հարցն իբրեւ ինքնուրոյն դասակարգային հարց, հասունացաւ միմիայն քառասնական քուսակներում: Այդ ժամանակ եւրոպական մի քանի երկրներ ազատ էին բոլորովին միապետական ռեժիմից, մի քանի տեղ էլ այդ ռեժիմը թէւ զոյութիւն ունէր, սակայն թոյլ էր, ներգործական դեր չէր կարող խաղալ: Ուստի այդ երկրներում բանուոր դասակարգին մնում էր ուղղակի կոխ մղել անմիջապէս բուրժուական կառավարութեան դէմ: Իսկ Գերմանիայում. ուր գործը էին դեռ միապետական կարգերը, գերմանական սոցիալիստ-յեղափոխականները ձգտում էին կռուել այդ կարգերի դէմ՝ միացած բուրժուազիայի հետ, միեւնոյն ժամանակ չմոռանալով, որ իրենք սոցիալիստներ են, որ պիտի շարունակեն իրենց գործը բանուորների մէջ, կազմակերպեն նրանց, ստեղծեն «սպագայ դիմադրական կուսակցութիւնը», որպէսզի յաղթութիւնը տանելուց յետոյ կապ լինեն իրենց դաշնակից բուրժուազիայի դէմ կանգնեցնել մի *գործիւն*, մի ուժ եւ թոյլ չտան նրան ամբողջ արդիւնքը կլանելու եւ իրենց գլխին նստելու: Այդ ուղղութեամբ գերմանական սոցիալ-դեմոկրատներն ահագին ֆայլեր են առել առաջ, գերմանական բանուորները շատ ֆազաֆական արտօնութիւններ են ձեռք բերել: Այս մենք այսօր տեսնում ենք:

Նոյն ընթացքն առաջարկել են ռուս սոցիալ-դեմոկրատները ռուս յեղափոխականներին, նոյնն առաջարկում են մեզ մեր հայ «սոցիալ-դեմոկրատները»:

Դասեր չառնել պատմութիւնից. միւս ազգերի օրինակից՝ մահացու մեղք է ամէն մի յեղափոխական մարմնի համար. ուստի շատ գովելի է «Հընչակ»ի այդ ձգտումը: Բայց խրատ, դաս վերցնել կեանքից եւ ոչ թէ ընդօրինակել նոյնութեամբ այն, ինչ որ յայտնել են եւ յայտնում են այս կամ այն երկրի յեղափոխականները: Երբ գերմանական սոցիալ-դեմոկրատը ձգտում է միաժամանակ թէ՛ միապետական կարգերը ոչնչացնել եւ թէ «սպագայի դիմադրական կուսակցութիւն» կազմակերպել, կատարելապէս հաս-

կանալի՝ է բոլորի համար նրա անելիքը: Մասամբ հասկանալի է եւ ոռւս սոցիալ-դեմոկրատի ընթացքը, որովհետեւ քէ՛ միապետական կարգերը, որոնց դէմ նրանք ուզում են կռուել, եւ քէ բանուորները, որոնց պէտք է կազմակերպել, գտնուում են *միկոնոյն* երկրում: Իսկ ի՞նչպէս են մեր երկրի պայմանները:

«Հնչակ»ը միշտ կրկնում է, քէ *Տայութիւնը* բաժանում է երկու դասակարգի՝ հայ պրոլետարիատի, հայ բուրժուա դասակարգի, որ հայ գիւղացին բողոքում է հողը եւ գնում արդիւնաբերական ֆադաֆները եւ դառնում «վարձկան բանուոր» եւայլն: Ի՞նչ նշանակութիւն ունեն այստեղ ամէն մի ֆայափոխում կրկնուող *Տայութիւն*, *Տայ բանուոր*, *Տայ բուրժուա* խօսքերը. ի՞նչ արժէք ունեն դրանք *սոցիալիստի* համար: Եթէ հայ գիւղացին բողոքում է հողը, եթէ հայ դարբինը բողոքում է իր մուրհը, նա չի մնում իր մայրենի երկրում, նա գաղթում է օտար երկրներ. գնում է Պոլիս, Ռուսաստան, Յունաստան, Ռումանիա, Ամերիկա, Աւստրալիա... եւ այնտեղ միայն, Հայաստանից դուրս, նա կարողանում է դառնալ «վարձկան բանուոր»: Վերադարձաւ իր երկիրը՝ նա դադարում է բանուոր լինելուց, նա նոյն հողագործն է, նոյն արհեստաւորը: Եւ եթէ նա կարող է «դիմադրական կուսակցութիւն» կազմել, դա այն երկրներում կարող է անել, որտեղ ինքը բանուոր է: Իսկ քէ ինչպէս Ամերիկայի, Յունաստանի, մինչեւ իսկ Պոլսի բանուորներից «Հնչակ»ը պէտք է «ապագայի դիմադրական կուսակցութիւն» ստեղծի Հայաստանի համար, այդ միայն Աստուած գիտէ:

Կրկնում ենք, այստեղ ուշադրութեան պէտք է առնել ոչ քէ հայը, հայութիւնը, հայ բանուորը, հայ բուրժուան, այլ այն երկիրը, որի համար ձգտում կայ ֆադաֆական ազատութիւն ձեռք բերել. ուշադրութեան պէտք է առնել նոյն երկրի տնտեսական պայմանները, նրա մէջ գոյութիւն ունեցող բուրժուային, բանուորին, լինեն դուրս հայ, քուրճ, մասրանի, այդ փոյթ չէ սոցիալիստի համար:

Ահա քէ ի՞նչպէս է հաշտեցրել «Հնչակ»ը սոցիալիստական գաղափարն ազգայնականութեան գաղափարի հետ, եւ ի՞նչ խառնաշփոթութիւն է առաջացել դրանից:

Ինչի՞ն վերագրել այս բոլոր անորոշութիւնները, ինչո՞վ բացատրել «Հնչակ»ի հայեացքների փոփոխութիւնը: Մի՞թէ Հայաստանի տնտեսական պայմաններն այդպէս զգալի կերպով փոխուեցան. գիւղական համայնքներն սկսեցին աւելի արագ ֆայալուել, քէ կապիտալն ահագին ֆայլեր արաւ, կամ մի որեւէ ուրիշ նշանաւոր փոփոխութիւն պատահեց մեր երկրի հետ, որի ազդեցութեան տակ «Հնչակ»ն էլ փոխեց իր հայեացքները: — Ո՛չ այս եւ ո՛չ այն. «տնտեսական մատերիալիզմը», «մարկսիզմը», — որի ասելով գաղափարների փոփոխութեան պատճառները պէտք է որոնել երկրի տնտեսական պայմանների փոփոխութեան մէջ, — անգոր է գտնուում բացատրելու, պարզելու այս երեւոյթը: Իսկապէս մի բան փոխուել է, եւ այդ փոփոխութիւնը կատարուել է ո՛չ քէ Հայաստանում տիրող արդիւնագործութեան ձեւերի մէջ, այլ... արտասահմանեան ոռւս յեղափոխական գրականութեան մէջ:

Քանի դեռ այդ գրականութեան մէջ տիրապետում էր «Նարոդնայա վոլիա» կուսակցութեան հայեացքները, «Հնչակ»ը կրկնում էր նրա ասածը. նա «համոզուած էր», որ կապիտալիզմը կարող է եւ մուտք չգործել Հայաստանում, որ կարելի է, մինչեւ իսկ պէտք է արգիլել նրա մուտքը, որ գիւղական համայնքները կարող են ծառայել իբրեւ հիմք ապագայ սոցիալիստական կազմակերպութեան: Բայց հետզհետէ այդ կուսակցութեան ձայնը քուլացաւ եւ ասպարէզը (գրական) մնաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը: «Հնչակ»ն այն ժամանակ «համոզուեց», որ կապիտալիզմն անխուսափելի կերպով պէտք է մեր երկիրը մտնի, որ անկարելի է նրա առաջն առնել, որ գիւղական համայնքները պէտք է ֆայալուեն, որ գիւղացին դառնում է վարձկան բանուոր, եւ այդ բանուորներից պէտք է կազմակերպել «դիմադրական կուսակցութիւնը» եւայլն:

Եւ այդ «փոխառութիւնը» կատարուել է այնքան պարզ, բնական, անմեղ կերպով, որ «Հնչակ»ի խմբագրութիւնը չի զգացել իր կրած փոփոխութիւնը, կարծել է եւ կարծում է, քէ ինքը միշտ միեւնոյն ուղղութեանն է հետեւել: «Հնչակ»ի գոյութեան առաջին օրից մինչեւ այժմ մեր սկզբունքները *միկոնոյն* են սոցիալ-դեմոկրատական», պնդում էր նա վերջերումս («Հնչակ», № 11 եւ 12, 1893): Այս տողերը կարդալիս մեզ մնում է միայն ուսերը վեր ֆաշել եւ զարմանալ «Հնչակ»ի անչափ միամտութեան վրայ:

Բաւական է որքան խօսեցիմք ուրիշների մասին: Միսս համարում մենք կ'անցնենք մեր ծրագրին, որ կազմուած է 1892 թ. ամառը «Կաշնակցութեան» նդհանուր ժողովում, որից յետոյ «Կաշնակցութեան» հայեացքները հիմնաւորապէս որոշուեցին եւ կազմակերպական ձեւերն արմատականապէս փոխուեցին:

## ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՄԲԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Կուկունեան արշաւանքի միտքը յղացաւ Կարնոյ դէպքից անմիջապէս յետոյ եւ կազմակերպուիւմ էր յեղափոխական խմբերի բանակցութիւնների հետ միաժամանակ :

Երբեմն Գեորգեան ձեւարանի, ապա Պետերբուրգի համալսարանի ուսանող Սարգիս Կուկունեանը, իր երկու ընկերների՝ Կոստանտին Լիսինեանի եւ Ռուրէն Յովհաննէսեանի հետ թողնում է Պետերբուրգը, գալիս Կովկաս եւ տեղական խմբերի միջոցով պատրաստում արշաւանքի :

Դրա մանրամասն պատմութիւնն արդէն յայտնի է հայ հասարակութեան «Կուկունեան խմբի արշաւանքը. Հ. Յ. Դաշակցութեան տպարան, 1894» ծանօթ գրքոյկից : Աւելացնենք միայն, որ խմբի անդամները որոշ կերպով չէին ներկայացնում իրենց, քէ ի՞նչ պէտք է անեն Տանկահայաստանում, ինչպէ՞ս պէտք է անեն, ի՞նչ է սպասում իրենց : Սահմանազլխում ժողովուած այդ հարիւրաւոր երիտասարդները (բացի 78 հոգուց, որոնք մասնակցեցին արշաւանքին, կային դեռ շատ շատերը, որոնք սպասում էին իրենց հերթին) գործնական միջոցների մասին չէին մտածում, չէին խորհում, կարծես կամովին կուրացած՝ դիմում էին դէպի անդունդ : Մի բան նրանց համար շատ պարզ էր. հարկաւոր էր արիւն քափել, հարկաւոր էր վրէժ-խնդիր լինել բազմաթիւ անմեղ գոհերի անբիծ արեան համար : Սա մի տարերային հոսանք էր, ազնիւ, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առնել ոչ մի յորդորանքով, ոչ մի *խելացի* պատճառաբանութիւններով, ոչ մի սարսափելի ապագայի նկարագրութիւններով :

Համառօտակի յիշենք, որ խումբը սահմանն անցնելով՝ բարձրանում է Բոզ-Դաղը, կուում Թուրքակ-Կուլէից եկած գորգերի եւ շրջակայ գիւղերից ժողովուած քրդերի հետ եւ փախցնում նրանց : Պաշարի պակաս զգալով՝ խումբը դիմում է դէպի Թեափա-Բինա ձորը, այնտեղից՝ Աղբուլագի ձորը անցնելիս սպանում է նանապարիին պատահած 5 թուրքեր : Անծանօթ լինելով բոլորովին երկրին (ուղեցոյցները, դժբախտաբար, հենց առաջունից փախած են լինում), խումբը շատ դէս ու դէն ապարդիւն քափառելուց յետոյ, քաղցած, ծարաւ՝ որոշում է անդամների մեծամասնութեամբ վերադառնալ Ռուսաստան՝ գարնան նոր արշաւանքի պատրաստուելու համար : Սահմանազլխի հար գիւղում ընդհարում է տեղի ունենում սահմանապահ ռուս կողակների ու կուսակուած քրդերի հետ եւ խումբը ցրում է : Մի մասը ձերբակալուում է կառավարութեան ձեռքը, դատուում եւ դատապարտուում է :

Նումբն արշաւեց եւ անդամ իրականութեան զարնուելով՝ քայքայուեց, անկարող լինելով իր իղձերը լիովին իրականացնելու : Նրա մի մասը ընկաւ պատերազմի դաշտում, միւս մասը, խմբապետի հետ միասին փտում է Միքիթայի խորհրում, մի մասն էլ դեռեւս շարունակում է հայդուկային խումբերի մէջ գործել :

Հ. Յ. Դ. Կեդրոնական Արխիւէն.

«ՎէՄ», Գ. տարի, թիւ 1, Յունուար-Ապրիլ 1965

## ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՄԲՈՒԻ ԴԵՐԸ

Ա.

Ամէն անգամ, երբ հայ յեղափոխական շարժումը սաստկանում էր եւ ստիպում եւրոպական պետութիւններին աւելի խստիւ պահանջել սուլթանից Տանկահայաստանի մէջ տիրող անկարգ իրերի փոփոխումը, սուլթանը ճարպիկ կերպով օգտուելով շահերի այն հակառակութիւնից, որ կարող է առաջ գալ եւրոպայում Հայկական խնդրի այս կամ այն եղանակով լուծուելուց, ամէն անգամ զանազան առարկութիւններ էր անում կամ «ստիպական միջոցներն» առաջարկում : Եւրոպական պետութիւնները շատ լաւ էին հասկանում այն խաղը, որ իրենց հետ խաղում է սուլթանը, հասկանում էին, բայց եւ այնպէս վախեցնալով հետեւեալ քայլն անելուց, որ կարող էր բարդութիւններ առաջ բերել եւ վնասել անմիջապէս իրենց շահերին կամ գործազանց այս կամ այն հակառակորդին, իրենց տալիս էին լուրջ կերպարանք, սուլթանի ակնյայտնի ծաղրածութիւններն ստիպուած ընդունում էին իբր խելահաս, նպատակայարմար միջոցներ եւ բարձրաձայն աւետում աշխարհին, որ այսուհետեւ ամէն ինչ լաւ կ'ընթանայ :

Բայց ով որ էլ խաբուէր, չէր կարող խաբուել հայ ժողովուորը, որի գլխին էին կատարում այդ բոլոր «օյիմբագութիւնները», որը դարերի ընթացքում լաւ էր ուսումնասիրել իր վեհափառ պետի գործ դրած «հայրախնամ բարեկորդութիւնները» եւ որը վնաս էր միանգամ ընդմիջտ խմել մինչեւ վերջը յեղափոխութեան դառը բաժակը :

Սուլթանի ամենալուրջ առարկութիւններից մէկն էլ հետեւեալն էր. «Եթէ ծրագիրն ընդունուի, եթէ քրիստոնեայ ազգաբնակչութեան տրուի առանձնաշնորհումներ, այն ժամանակ մահմեդական մոլեռանդ ամբոխը կը զրգուի, կը յարձակուի քրիստոնեաների վրայ եւ բոլորին կը կոտորի. իսկ ես իմ ուժերով անկարող կը լինեմ դրա առաջն առնել» : Այս իւր առարկութեամբ նա իսկապէս երկիւղ էր ազդում շատ շատերի վրայ եւ շատ միամիտներ անտեղեակ էին, որ ինքը սուլթանն է ամէն միջոց գործ դնում՝ զրգուելու մահմեդական տարրը, որպէսզի պատրաստ գենք ունենայ ձեռքին՝ իր դժոխային ծրագիրն իրագործելու համար, երբ այդ հարկաւոր կը համարի :

Ներկայ յօդուածով մենք նպատակ չունինք բնաւ ցոյց տալ սուլթանի եւ եւրոպական դիպլոմատիայի կեղծութիւնն ու փարիսեցիութիւնը. դա ինքնընդհանրապէս պարզ է եւ մեկնաբանութիւնների կարօտ չէ : Մեր նպատակն է միայն ցոյց տալ մեր ունեցած փաստերի հիման վրայ կառավարութեան եւ մահմեդական ամբոխի դերերը, իւրաքանչիւրի *նշանակութիւնը*, մասնակցութեան *աստիճանը* վերջին եղանակական գործերում :

Թէ ներկայ ընդհանուր կոտորածի հրամանը բխում էր ուղղակի սուլ-  
քանի պալատից, քէ դրանով սուլքանը եւ իր խորագէտ խորհրդատուները  
նպատակ ունէին ի սպառ լսեցնել բողոքող հայ ժողովրդի ձայնը, դրա մէջ  
դժուար թէ այժմ մէկը կասկածի: Թող դեռ կառավարութիւնը բանտերը լցնի  
հարիւրաւոր պատահական անձնաւորութիւններ, միայն քէ ցոյց տուած լի-  
նի, քէ «սպասամբները» ձերբակալուած են, քող լրբաբար գուր ամբաստա-  
նութիւններ անի սրա, նրա վրայ, որոնց գոյութիւնը գանազան պատճառներով  
անհանդէպ է իրեն, քող շարունակի գործ դնել նրանց վրայ իր բոլոր դժոխա-  
յին տանջանքները՝ գանազան խոստովանութիւններ կորզելու նպատակաւ...  
Թող նա իւր գիշատիչ հանկերով, որոնց վրայ դեռ չի չարացել հարիւր հա-  
զար անմեղների արիւնը, պատառի հայ ժողովրդի արիւնաբաւ կուրծքը, նրա  
վերքերը քրքրելով, քող փնտրի ամենայն եռանդով «կոտորածի հեղինակ-  
ներին», նա ոչ ոքի խաբել չի կարող. ամէնքի համար պարզ է, որ դա նոյն-  
պէս առիթ է հայ ժողովրդի վրայ ահ ու սարսափը միշտ վառ պահելու, նրան  
ի սպառ փհատեցնելու եւ յեղափոխական շարժման միանգամից վերջ տալու:

Միամիտ հայ հասարակութիւնը կարող էր խաբուել. կոտորածից առաջ  
նա դժուարութեամբ էր իրեն քոյլ տալիս մտածելու, որ կառավարութիւնը  
ընդունակ է մի այդպիսի տմարդի գործողութեան. այդ տեսակ գագանական  
եւ միեւնոյն ժամանակ՝ յիմար ընթացք, որ մարդկային պատմութեան մէջ  
բացատրիկ դէպքերի շարքը կը դասուի, հայ ժողովուրդը չէր սպասում մին-  
չեւ իսկ սուլքանի կառավարութեան նման ապուշ եւ վայրենի կառավարու-  
թիւնից:

Սուլքանի բազմանքը կատարուեց. երկիրը ծածկուեց բիւրաւոր դիակ-  
ներով, բազմաթիւ ֆալսեցներ եւ գիւղեր ամառի դարձան:

Ի՞նչ դեր կատարեց ինքը ամբոխը, որով տարիների ընթացքում սար-  
սափեցնում էին մեզ. ի՞նչ կարող էր նա անել առանց կանոնաւոր զօրքի ու-  
ժեղ մասնակցութեան:

— Ոչինչ, համարակ կարող ենք ասել մենք, գոնէ այն տեղերի վե-  
րաբերմամբ, որոնք մեզ ֆաջ յայտնի են, բայց թող խօսեն փաստերը:

Կարնոյ մէջ տանիկ ազգաբնակչութիւնը անհամեմատ շատ է հայերից:  
Բացի այդ, դրսից հաւաքուել էին ամէն տեսակ գիշատիչներ՝ լագեր, չեր-  
քէզներ, քարաֆամաներ, քրդեր... Թուով մօտ 20,000: Այդ ահագին բազ-  
մութիւնը խոնուած էր կարնոյ փողոցներում, անցնելու տեղ չկար: Բայց եւ  
այնպէս՝ հարկաւոր էր 3000ից աւել լաւ գիւնուած զինուորներ, որ համար-  
ձակուէին հայերի վրայ յարձակում գործել: Կոտորածի ժամանակ բաւական  
էր մի ատրնանակի ձայն՝ այդ «առնելի» ամբոխը ցիրուցան անելու համար:  
Հայերի կողմից ամենաքեթեւ ընդդիմադրութիւնը ընդհատում էր մահմե-  
դական ամբոխի «յազրական» ընթացքը: Այդ ժամանակ օգնութեան էին հաս-  
նում մարտիների հրացաններով զինուած զինուորները եւ ամբոխի համար ճա-  
նապարհ բաց անում: Ի՞նչ կարելի է անել ատրնանակով մարտիների դէմ:  
Զինուորները բռնում էին շուկաների երկու կողմն էլ, հեռուից գնդակահար  
անում եւ յետոյ դիակների վրայից ատրնանակները ժողովում: Մի ընդդիմա-  
դրող հայի վրայ միանգամից 20-25 հրացաններ էին ուղղուում: Խանութների,

տների ամուր կողպէքները փշուր փշուր էին լինում նրանց գնդակներից:  
Դրանից յետոյ միայն ամբոխը համարձակուում էր առաջ ընթանալ: Նա այդ  
ժամանակ առիւծ էր դառնում, թալանում էր, սեւրում, բռնաբարում, սրի  
էր անցկացնում դեռ կենդանի մնացածներին, յօշոտում, այլանդակում էր  
արդէն զինուորների գնդակներով ծակծկուած դիակները, գուարնանում էր  
նրանց կաշին ֆերքելով, վիրաւորուածներին այրելով եւայլն: Կոտորածի  
երկրորդ օրուանից սկսած գերեզմանատուն էին բերել 315 դիակ: Նրանք եր-  
կար ժամանակ շարուած մնացին ծառերի տակ: Ամէն մէկը կարող էր գալ եւ  
իր չափով տեսնել: Դիակների վրայ ոչ մի հագուստ չէր մնացել, շատերը բո-  
լորովին մերկ էին. դիակների միայն մի մասի վրայ դեռ կային կամ շապիկ  
կամ ոտաշոր, դա մի անբացատրելի բարեխղճութիւն էր թալանողների կող-  
մից... Այնպէս որ ոչ մի դժուարութիւն չկար գննել դիակները (\*): Շատե-  
րը գննեցին, նաեւ իրենք՝ հիւպատոսները. չկար մի դիակ, որ իր վրայ չկրէր  
գոնէ մի ֆանի հրացանի կամ զինուորական ատրնանակի գնդակների վեր-  
քեր: Կարծես քէ ֆաղաֆի մէջ գտնուող հետեւակ զինուորների ահագին բազ-  
մութիւնը բաւական չէր, ֆաղաֆ իջեցրին նաեւ քնդանօթածիգ զօրքերը, ո-  
րոնք գլխատրապէս զինուած էին իրենց խոշոր ատրնանակներով եւ «Ղա-  
փաղի» հրացաններով: Իսկ ընդհանրապէս դիակները կրում էին, բացի սրի,  
կացնի, կասարուրայի վերքերից, 5-10 եւ աւելի գնդակի վերքեր: Յովհան-  
նէս Կորկոտեանի վրայ հաշուուած է 23 գնդակի վերքեր...

Բաբերդ հայերը կազմում են տեղական մահմեդական ազգաբնակչու-  
թեան 10րդ մասը: Զնայելով դրան, այնտեղ կուտակուած են եղել եւ ան-  
թիւ ֆանակութեամբ լագեր, բայց կոտորածը չի սկսուել, մինչեւ *Երզնկայից  
զօրք չի եկել*:

Ինչպէս յայտնի է, Բաբերդի շրջակայ գիւղերը բոլորովին գոհ գնա-  
ցին խուժանի վայրագութեան, որովհետեւ անգէն էին եւ անպաշտպան: Դեռ  
նոր էր այնտեղ գէնքի կարիքը մուտք գործել, դեռ նոր էր սկսում այնտեղ  
կանոնաւոր յեղափոխական գործունէութիւնը, երբ կոտորածն առաջ եկաւ:  
Այդ ժամանակ այնտեղի դաշնակցական հրոսակային խումբը ցրուած էր գիւ-  
ղերում՝ ձմեռուան պատմաւոր: Լուսհանգ գիւղում այդ խմբի անդամներից  
մէկը հրացանը ձեռքին կարողանում է սպաշտպանել հարիւրաւոր ամբոխի դէմ  
մի տուն, լիքը հարսներով ու աղջիկներով: Մի ուրիշ գիւղում նոյն խմբի ան-  
դամներից մէկը լինում է *միակ* հրացանաւորը ամբողջ գիւղում: Երբ լագե-  
րի վոհմակը մօտենում է, անվեհեր երիտասարդը առնում է հրացանը, դուրս  
գալիս դրանց դէմ եւ երկար ժամանակ թոյլ չէ տալիս այդ ահագին բազմու-  
թեանը գիւղը մտնել: Նրա ընկնելուց յետոյ միայն լագերը կարողանում են  
մուտք գործել բոլորովին անպաշտպան գիւղը:

Տրապիզոնի մէջ, ինչպէս յայտնի է, Սեպտեմբեր 22ին, դէպքի ժա-  
մանակ, երբ մասնակցում էր միմիայն ամբոխը, հայերից ոչ մի *մարդ չըս-  
պանուեց*: Մինչեւ Սեպտեմբեր 26ը կառավարութիւնը պատրաստեց իր կա-

(\* ) Դրանց լուսանկարներն ուղարկուած են Եւրոպական լրագրոց:

նմանոր գործը, իր սեփական հրացաններով զինեց տեղական խուժանը ու բազմաթիւ լազերին եւ յետոյ միայն կարողացաւ յաջողցնել կոտորածը:

Ձօրփերը նոյն դերն են կատարել եւ Բաղէշում:

Մինչեւ այժմ կոտորած չէ եղել Վանայ մէջ շնորհիւ միմիայն այն հանգամանքի, որ տեղական զինուորական ուժը անբաւական է համարում: Կառավարութիւնը լուրջ սպասարաստութիւններ է տեսնում. զինել է հրացաններով տեղական մահմեդականներին, ժողովել է պահեստի զինուորներին, հրաւիրել է մահմեդականներին, քնդանօթները ուղղել է դէպի հայոց թաղերը, կտրտել է Այգեստանի ծառերի մի մասը, որպէսզի քնդանօթերի ռումբերին արգելի չհանդիսանան, վերջապէս ուղարկել է այնտեղ Բաղէշի կոտորածը կարգադրող փաշային... Կոտորած չի եղել դեռեւս, նշանակում է այդ բոլոր պատրաստութիւնները դեռ քիչ են համարում: Սպասենք...

Իսկ Կարնոյ եւ նրա շրջակայ գաւառների, գիւղերի պաշտպանութիւնից, որի մասին անցեալ անգամ գրեցինք, լուսոյ պէս պարզ է, թէ մինչեւ ո՛ր աստիճան անգոր են եղել հարիւրաւոր, հազարաւոր քրդերը ու լազերը մի խումբ զինուած կտրիճների դիմաց, երբ յարձակում է եղել առանց կանոնաւոր գործի օգնութեան:

Կրկնում ենք, որ մահմեդական ամբոխի ընդդիմադրական ուժը չափազանցած է, որ առանց կառավարութեան դրդման, առանց նրա ֆաշալերութեան. առանց նրա վարժուած զօրքերի ջերմ աջակցութեան, մահմեդական ամբոխը չէր համարձակուի շարժուել իր տեղից, եւ եթէ շարժուէր էլ, շատ տեղ անհամեմատ մեծ կորուստ կ'ունենար եւ դա լաւ դաս կը լինէր ապագայի համար:

«ԻՐՕՇԱԿ», № 5, 10 Փետրուար 1896

Բ.

Մենք միշտ գործ ենք անում «մահմեդական ամբոխ»: Բայց մահմեդական ամբոխի վրայ ընդհանրապէս կարելի էր նայել սրանից մի քանի դար առաջ: Այժմ նրա կեանքի բաւականաչափ բարդացել է եւ նրա մէջ առաջացել են տարբեր խաւեր, որոնք ունին իրենց որոշ առանձնաշատկութիւնները ու ձգտումները եւ որոնք, բնականաբար, տարբեր կերպով պէտք էր վերաբերուէին դէպի հայերի կոտորածը: Բայց նախ քան այդ տարբերութեան մասին խօսելը, ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում մի հանգամանքի վրայ: Չնայած, որ լոյսի պէս պարզ է, որ վերջին շարժումները լոկ ֆաղափական բնաւորութիւն ունէին, որ նրանք նախագծում էին սուլթանի ձեռքով եւ նպատակ ունէին ահաբեկել գլուխ բարձրացրած հայ ժողովուրդը, բայց եւ այնպէս մեր մէջ զարմանալի յամառութեամբ շարունակում են տեղի ունեցած ընդհարումներին տալ կրօնական կերպարանք եւ ամբողջ մեղքը ձգել մահմեդական մոլեռանդութեան, դուրանի, սօփտաների վրայ, եւ այլն: Դեռ դրանք չեն ուզում տեսնել, որ այս դէպքում, ինչպէս եւ մարդկային

ամբողջ պատմութեան մէջ, կրօնը եղել է մի քող, որի տակ պատսպարուած առաջ են տարել ամէն տեսակ անձնական շահեր եւ կեղտոտ միտումներ: Մինչդեռ կան ակնյայտի փաստեր, որոնք պէտք էր խախտէին այդ հինաւորաց համոզումը: Տանկահայաստանում բացի հայերից սպարում են եւ ուրիշ քրիստոնեաներ: Ինչո՞ւ երոպացիք ազատ մնացին, ինչո՞ւ ասորիներին չմտեցան, ինչո՞ւ վերջապէս ամենայն հոգատարութեամբ ու խնամքով պատսպարում էին յոյներին, որոնք մի քանի տեղեր այնքան էին լրբացել կառավարութեան փաղափշանքներից, որ զգուանք էին պատճառում բոլորին: Դրա հակառակ մի քանի տեղեր իրենք՝ մահմեդական հոգեւորականութեան ներկայացուցիչները՝ շէյխերն են նախաձեռնող հանդիսացել հայերի պաշտպանութեան, ինչպէս օր. Ղարափիլիսա, Իզվերան:

Գալով մահմեդական ամբոխի տարբեր խաւերի խաղացած դերերին, տեսնում ենք, ինչպէս եւ հարկաւոր էր սպասել, որ ամենափչ մասնակցութիւն ունեցաւ տանիկ զիւղացի երկրագործ դասը: Յարձակողները զլխաւորապէս լեռնաբնակ անասնապահ կամ կիսաերկրագործ ազգաբնակչութիւնն էր՝ քրդերը, լազերը եւ Ռուսաստանից գաղթած չերեքները. իսկ երկրագործ դասը շատ շատ հետեւել է նրանց՝ բալանից բաժին ձեռք ձգելու համար, իսկ զլխաւորապէս կա՛մ անտարբեր են մնացել, կամ թէ, — որքան էլ դա զարմանալի թուայ, — պաշտպանել է իր դարեւոր հարեւան հայ ազգաբնակչութիւնը եւ սաստիկ ընդդիմադրութիւն է ցոյց տուել յարձակուող խուժանին: Բացի այդ, պաշտպանութիւն են ցոյց տուել մի քանի տեղ արհեստաւոր եւ վանատական դասը: Աւելի անսպասելին այն է, որ քրդերը, այդ հայերի անհաշտ համարուած թշնամիները, նոյնպէս պաշտպանել են:

Ընթերցողը կը համաձայնի, որ այսպիսի ժամանակ անհնար է շատ փաստեր հաւաքել, բերենք մեր ձեռքի տակ ունեցածները:

\*\*

Հասան-Ղալան(\*), Կարնոյ մօտ գտնուած կան գիւղը, Բասենի Ամրագումը, մասամբ Իզվերանը, Ալաշկերտի Ղարափիլիսան. Բայագէդը, Երզրնկայի, Խնուսի մի քանի գիւղերը պաշտպանուել են տեղական մահմեդականների շնորհիւ, Նարիմանի գիւղերը պաշտպանուել են շնորհիւ Էմիր աղայի, Ռուսաստանից գաղթած՝ Խասթուր-Մուստաֆա աղի տղերքի:

Խալու, Ամար, Խայաբեկ, Իրից գիւղ՝ պաշտպանել է զիւղացի Սելիմ փաշան:

Իւլիիլիսէի Ս. Յովհաննու վանքը եւ իր շրջակայ գիւղերը՝ Ջուջան, Ղարաբագար, Վանքի գիւղ, Ղումլուպունաղ, Բողին պաշտպանել է հայդարանցի Մուստաֆա բէկը: Բացի այդ, պաշտպանութիւն են ցոյց տուել Միրվա աղէն, Նարի աղէն:

Նոյնիսկ Կարնոյ մէջ, որտեղ կառավարութիւնը հոգեւորականութեան

(\*) Հասան-Ղալանի վանքը, որ աւերուել ու թալանուել է, գտնուած է Հասան-Ղալայի մէկուկէս ժամ հեռաւորութեան վրայ:

հետ միասին տարիների ընթացքում զրգռում էին տեղական մահմեդականներին, որտեղ էր այդ ժամանակ բոլոր կոտորածների հերոս՝ Շաֆիր փաշան, ուր ամենից սաստիկ պէտք էր արտայայտուէր տանիկների կատաղութիւնը, ազգաբնակչութեան մի մասը, գլխաւորապէս վաճառական եւ արհեստաւոր դասը, հետո պահեց իրեն կոտորածից: Մինչեւ իսկ *բազմաթիւ հայեր պատուարուեցին տաճիկներէ մօտ կոտորածի ամենախիստ ժամանակը:*

Մենք արդէն սպասում ենք ընթերցողից զանազան առարկութիւններ եւ վերոյիշեալ պաշտպանների վարմունքի համար բացատրութիւններ: Մենք էլ շատ լաւ գիտեմք, որ մի տեղ ազգաբնակչութիւնը երկիւղ է կրել «ոռասատանցի» հայերից, որոնց հետ ընդհարումներ է ունեցել եւ որոնց վրէժխնդրութիւնից տեղիք ունի երկիւղ կրելու, մի ուրիշ տեղ նա զողալով է յիշում ոռոսական արշաւանքը, երրորդ տեղում աւելի հեռատես գտնուելով, մտածում է ապագայի մասին, հաւատացած լինելով, որ իրերի դրութիւնը անշուշտ կը փոխուի, չորրորդ տեղում զգում է, որ հայերի հետ կապուած է սերտ կերպով, սնտեսական շահերով, հիմնգերորդ տեղում հայերը այս կամ այն բէկի մարաբաներն են, եւայլն... Այս բոլորը մենք շատ լաւ գիտեմք, մենք ոչ մի բոպէ բոյլ չենք տալ մեզ մտածելու, որ այդ զանազան Մոսստաֆաները կարող են դէպի հայերը մի առանձին պատուական սէր տածել:

Մեզ համար առանձնապէս նշանակութիւն ունի այն, որ իրերի այս խառը դրութեան մէջ, երբ կատարութիւնը ինքն է մղում մահմեդականներին դէպի կոտորած, դէպի քալան ու աւերում, երբ նա ինքն է ամբոխի առաջն ընկնում եւ իր մարտիկներով նրա համար ճանապարհ հարթում, երբ այդքան նպաստաւոր պայմաններ է ստեղծում կիսավայրենի ամբոխի գագանական կրֆերի անարգել կերպով դուրս ժայթքելու համար, այդ տգէտ, մոլեռանդ, ֆանատիկոս ամբոխի մի մասը կարողանում է ի նկատի առնել գազանազան հանգամանքներ, չտարուել հոսանքով, գապել իր կրֆերը եւ մինչեւ իսկ դիմադրութիւն ցոյց տալ կատարութեան ոտնձգութիւններին:

Դա պարզ սուպոյց է, որ ազգաբնակչութեան մի մասը արդէն նկատում է շահերի այն անհամբարձիստութիւնը, որ վաղուց ի վեր գոյութիւն ունի սուլթանի եւ բոլոր հպատակների մէջ, բայց որը մնում էր մինչեւ այժմ խորին մքութեան մէջ, շնորհիւ սուլթանի եւ տիրապետող տարրերի համբարաշխ գործունէութեան:

Նա նկատում է այն սնտեսական կապը, որով կապուած է իր հարեւան հայերի հետ եւ որի ահագին նշանակութիւնը նա ընդունակ է դարձել գնահատել:

Վերոյիշեալներից մենք տեսանք, որ վերջին եղերական կոտորածների մէջ մահմեդական ամբոխի դերը բոլորովին երկրորդական էր, մենք տեսանք, որ նրա մի մասը դուրս է եկել մասամբ տգիտութեան, խաւարի, անգիտակցութեան մթնոլորտից, սկսել է *մտածել*, *հասկանալ* իր իրական շահերը, եւ մենք սրտանց ողջունում ենք նրա այդ *առաջին* եւ *դժուարին* քայլը:

## ՎՆԱՍԱԿԱՐ ՏԱՐՐԵՐ

Ամէն անգամ, երբ յեղափոխական փոքրամասնութեան անձնագոհ, տուկուն եւ անվհատ գործունէութեան շնորհիւ յեղափոխական կազմակերպութիւնը ձեռք է բերում ուժ եւ ազդեցութիւն, կեանքի մէջ ստեղծում է հասարակ դէպի գործի յաջողութիւնը եւ հարբում է որոշ աստիճանով յեղափոխական ուղին, ամէն անգամ էլ հասարակութեան տարբեր խաւերի մէջ իրարանցում է ընկնում: Բայց ընդհանրութեան յեղափոխական ոգու բարձրանալու հետ միատեղ, ամէն մի տեղից վերկացող բախտախնդիր, ամէն մի վաշխառու, կեղեքիչ, մինչեւ իսկ մատնիչներ, դաւաճաններ, մի խօսքով ամէն տեսակ սողուններ, որոնք գիտեն հիանալի կերպով յարմարուել հանգամանքներին եւ ամէն տեսակ ջրերում ձուկ որսալ, ասպարէզ են դուրս գալիս, իբրեւ «յեղափոխականներ» կամ յեղափոխութեան համակրող բարեկամներ: Վնասակար են այդ սողունները այդպիսի բոպէներում, երբ փառն խօսքեր փչելով ու փարիսեցիական ձեւեր բանեցնելով, շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնը ու տգիտութիւնը: Իսկ անտանելի են, ցար ու պատուհաս են դրանք յեղափոխական շարժման համար այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը կրում է ժամանակաւոր անյաջողութիւն եւ սկսում են տիրել աւելի վատթար պայմաններ յեղափոխական գործիչների համար: Այդ ժամանակ այդ գազալի արարածները սուս ու փուս քաշում են իրենց բները, եւ արդէն «խռեմութիւն», «հեռատեսութիւն», «ժողովրդասիրութիւն», «միութիւն» եւ այլ դիմակների տակ դարձեալ շարունակում են խաղալ ժողովրդի հետ, աշխատելով մի կերպ քողարկել իրենց իսկական գոյնը: Շարունակելով կրել «յեղափոխական», «ազգասէր» տիտղոսները, դրանք դառնում են իսկական յեղափոխական գործի ամենավնասակար խոչընդոտներ:

Այդ արարածները աղբեր են, որոնք մեծ ու փոքր կոյտելով, տեսակ տեսակ բուրմունքներով եւ գոյներով քափուած յեղափոխական ճանապարհի վրայ, ապականում են յեղափոխական միջավայրը:

Ամէն մի յեղափոխական գործիչ ստիպուած է ժամանակ առ ժամամանակ թողնել իր բուն գործը եւ գրադուել այդ աղբերով, որոնք ընկնում են ոտքերի տակ եւ խանգարում իր կանոնաւոր ընթացքը: Ժամանակ առ ժամանակ, կամայ ակամայ նա իւր վրայ պէտք է առնի այդ գոռելի աշխատանքը, իմանալով հանդերձ, որ իւր ցախաւելի հենց առաջին հարուածից այդ կոյտելը միանգամից կը բացուեն եւ կը լցնեն օդը իրենց գարշահոտութիւններով: Արձակուած բամբասանքների, գրպարտութիւնների, ինտրիգաների մթնոլորտի միջով պէտք է դիմի յեղափոխական իսկական գործիչը դէպի իւր բուն նպատակը:

Կեանքի մէջ տեսնում էինք կուսակցութիւնների միութիւն քարոզող ուտապիստներ, այդ միութեան անուանով նոր, իրենց *անձնական* կուսակցու-

Քիւններ կազմողներ եւ այս ձեւով բուն գործից խոյս տուող սնափառներ, անվերջ պատրաստութիւնների ձգտող եւ ոչ մի պատրաստութիւն չտեսնող խոհեմ յեղափոխականներ, զանազան տեսակ խաբեքաներ, շարլատաններ՝ այժմ էլ քիչ չէ բարեսրտութեան դիմակի տակ մտած բախտախնդիրների թիւը, որոնք իրենց ետեւից տանում են միամիտների մի բանակ: Դրանք սկսել են նոր ձեւի տակ մի նոր արշաւանք «Կաշնակցութեան» դէմ, որի առթիւ անելոք չենք համարում մի քանի խօսք ասել:

«Ժամանակ չէ այլեւս յեղափոխութեամբ պարապուել, այժմ հաց պէտք է տալ ժողովուրդին եւ ոչ թէ գէնք», լսում ենք ամէն կողմից ժողովրդի դրութեան վրայ կոկորդիլոսեան աղի արցունքի քափող փարիսեցիներից:

Իսկապէս, ահա ամենայարմար բոպէն երեսան գալու իբր վերին աստիճանի բարի, զգայուն, փափուկ սրտի տէր մարդ, իբր խոհեմ, ժամանակի պահանջներին յարմարուող, ժողովրդի ցաւերը ճանաչող գործիչ: Բացի այդ, բարեգործութեան դիմակի տակ կարելի է եւ վտանգի չենթարկել իւր անձը, որն այնքան քանկ է հայրենիքի համար. իբր արթուն հովիւ պէտք է հսկել իւր սիրեցեալ ժողովրդի վրայ, չլինի թէ նա մոլորուի եւ տարուի «ծայրայեղ» յեղափոխականների դէպի կորստեան անդունդը տանող գործունէութեամբ: Ահա ամենայարմար բոպէն ամենաարժան գնով ու ամենաանվտանգ նանապարհով իսկական ազգասէրի մեծ հոչակ ձեռք բերելու:

«Ժողովրդին հաց պէտք է տալ», ասում են մեր ժողովրդի «իսկական բարեկամները»: Ո՞վ է հակառակը պնդում. ո՞վ է ասում, թէ հարկաւոր չէ հաց տալ: Բայց դուք ինքներդ ինչո՞ւ գոնէ այդ չէք անում, ինչո՞ւ այդ պարտն էլ ծանրաբեռնում էք յեղափոխական կազմակերպութիւնների վրայ: Ո՞ւր էիք դուք, երբ Սասունի կոտորածից յետոյ «Կաշնակցութիւնը» ստիպուած եղաւ մասամբ շեղուել իւր բուն գործունէութիւնից եւ բարեգործութեամբ զբաղուել՝ իւր սեփական միջոցներից դրամական նպաստներ բաժանելով բոլորովին անօգնական մնացած երկրին: Ո՞ւր էիք դուք վերջին կոտորածներից յետոյ, երբ դարձեալ «Կաշնակցութիւնն» առաջինն եղաւ թըշուառ, թալանուած, արիւնաքամ ժողովրդին անմիջական դրամական օգնութիւն հասցնողը:

Այժմ էլ, երբ դուք զբաղուած էք միայն հայրենասիրական քարոզներ արտասանելով եւ չնչին կոպէկներ էք միայն հանում ձեր հաստափոր բարեկամների գրպաններից, դարձեալ ամերիկացի, անգլիացի, մինչեւ իսկ գերմանացի եւ շվեյցարացի պատարներն են մեր ժողովուրդին օգնութիւն հասցնողը:

Ամօ՛ք ձեզ...

«Ժողովուրդին այլեւս զենք չպէտք է տալ»: Այս խօսքերն արտասանում են այն ժամանակ, երբ փաստերը պարզ ցոյց են տուել, որ կոտորուել, քաղաքուել, անբուել են այն գիւղերը, ուր ինքնապաշտպանութեան համար գէնքի հարկաւոր քանակութիւնը չկար, երբ արդէն ձեռքի տակ ունինք փայլուն ապացոյցներ, որ այն տեղերը, որտեղ մենք ունեցել ենք զենք կամ զինուած հայդուկներ, կոտուել, պաշտպանել են իրենց կայքը, գոյքը կամ թէ

բոլորովին ազատ են մնացել յարձակումներից: Այս խօսքերն արտասանում են այն ժամանակ, երբ Տանկահայաստանի ամէն կողմերում, մանաւանդ ազատ մնացած վայրերում, որք որ սպասուած են նորանոր բնդհարումներ, երբ կառավարութիւնը պատրաստ իւր տրամադրութեան տակ է պահում իրեն ծառայութիւններ մատուցած համադրական գնդերին եւ միւս կիսավայրենի լեռնականներին. երբ միւս կողմից գէնքի նշանակութիւնը հասկացած հայ ժողովուրդը յուսահատական աղաղակներ է հանում եւ ձեռքերը պարզած գէնք է հայցում. երբ թալանուած գիւղերն իրենք իրենց մէջ հանգանակութիւն են բաց անում, իրենց վերջին կոպէկները դուրս են հանում զէնք ձեռք բերելու համար:

Ժողովուրդը զէնք է պահանջում, իսկ մեր խոհեմ գործիչներն աշխատում են հաւատացնել ժողովրդին, որ նա սխալում է. նրան ոչ թէ զենք է հարկաւոր, այլ հաց...: Հարտա՞նք այդ խոհեմների անկեղծութեան:

«Հարկաւոր է դադարեցնել յեղափոխական շարժումը», պահանջում են նրանք: Այս կէտում դրանց հետ միանում են եւ նրանք, որոնք վերջին կոտորածների տպաւորութիւնից դեռ չեն ազատուել եւ խօսում են անելի զգացմունքով, քան թէ խելով:

Մենք արդէն քանիցս անգամ առիթ ենք ունեցել ցոյց տալ, որ յեղափոխական շարժումն անհնարին է կանգնեցնել, քանի որ հետեւանք է Տանկահայաստանում տիրող անտանելի պայմանների, եւ քանի վատթարանան այդ պայմանները, այնքան անելի սաստիկ պէտք կը զգացուի ուժեղ յեղափոխական շարժման: Միմիայն իրերի անկարգ դրութեան բարեփոխումը կարող է վերջ տալ յեղափոխական շարժման:

Պահանջելով դադարեցնել յեղափոխական շարժումը, դրանք կողմնակի կերպով մեղադրում են յեղափոխականներին, համարելով նրանց այդ բոլոր աղէտների պատճառ: Կոտորածների պատասխանատուութիւնը յեղափոխականների վրայ բարդելով եւ յուսահատութեան մէջ ընկնելով, այդ կարճամիտները մոռանում են մարդկային պատմութիւնը. մոռանում են, որ ուրիշ ազգեր անելի սոսկալի արհաւիրքների միջից են անցել եւ իրենց ազատութեանը հասել. մոռանում են ե՛ւ հայոց պատմութիւնը, դարերի ընթացքում հայերի կրած դժոխային տանջանքները:

Դառնալով վերջին կոտորածներին, հարցնում ենք. չե՞նք չափազանցում արդեօք դրանց բացասական նշանակութիւնը:

Վերջին դէպքերը մեծ հարուած էին հայ ժողովուրդի համար, այդ անհերքելի է. ամէնքն այդ զգացին եւ սոսկացին՝ թէ՛ մենք եւ թէ ուրիշները. զգացինք, որովհետեւ մեր թշնամիները գործում էին սրերով, հրացաններով, որովհետեւ ամէնքի աչքի առաջ արիւն էր հոսում եւ այդ բոլորը կատարում էր ազատ համարձակ:

Սակայն մենք մինչեւ այժմ էլ նոյնպէս գոհեր էինք տալիս, հայ ժողովուրդն արիւնաքամ էր լինում, հայարնակ գաւառներն ամայանում էին կամ բռնում էր դերով, չերբէզներով եւ այլ լեռնականներով, բայց ոչ ոքի վրայ այս հանգամանքը հարկաւոր ազդեցութիւնը չէր թողնում, ոչ ոք չէր սոսկում, չէր կատարում, ոչ ոք չէր մտածում հարկաւոր չափով ժողովուր-

դի այս անտանելի պայմանների մասին: Այստեղ սուրբ հագի՛ւ էր խաղում, արիւնը հագիւ էր հոսում. բայց եւ այնպէս ժողովուրդը ուժասպառ էր լինում եւ լուռ ու մուռն *կոտորում* երկրի ընդհանուր պայմանների ճնշման տակ: Ո՞ւր եւ մեր բազմամարդ հայաբնակ գաւառները, ո՞ւր եւ նրանց չար-  
փաշ բնակիչները: Թողնեմ հեռու անցեալը: Մեր աչքի առաջ դատարկում են զգալի կերպով Մշոյ դաշտը, Վասպուրականը, Կարնոյ եւ Բաբերդի շրջակայքը, Խնուսը, Բասենը... Մեր աչքի առաջ Ալաշկերտը Բայազէդի հետ միասին կորցրին իրենց բնակիչների 9/10 մասը. գուտ հայաբնակ հիզմունք մնացել է հագի՛ւ մի երկու գիւղ: Մինչդեռ ոչ ոք չի լսել, որ այդ կէտերում *կոտորած* եղած լինի:

Չէ՛, հայ ժողովուրդը անկարող է ապրել Տանկահայաստանում տիրող կարգերում. նա ուժասպառ է լինում, նա մեռնում է. նա չէ կարող չբողոքել, ոտի չկանգնել եւ չդիմել յեղափոխութեան, իբրեւ իւր միակ փրկա-  
րարին:

Մեր «խոհեմ ազգասէրների» բոլոր ֆարոգները շատ-շատ կ'ունենան բացասական նշանակութիւն, կը դանդաղեցնեն յեղափոխական ընթացքը: Կարո՞ղ էք արմատախիլ անել հայ ժողովուրդի արեան մէջ մտած կեանքի նորանոր պահանջները, կարո՞ղ էք փոխել նրա ուղեղը եւ նեարդները, յոյս ունէ՞ք նրան դնել ստրկական, անասնական դրութեան մէջ, — եթէ այո՛, փորձեցէ՛ք, եւ այն ժամանակ միայն դուք կարող էք յոյս ունենալ յեղափո-  
խութեանը վերջ տալու:

Ժողովուրդը սկսել է յեղափոխութիւնը եւ նա կը տանի մինչեւ վերջը, իսկ առայժմ նրան մնում է լաւ հանաչել յեղափոխական ճանապարհի վրայ ընկած զանազան տեսակ աղբերի իսկական նշանակութիւնը եւ մի կողմը շարտելով դրանց, անարգել կերպով շարունակել իւր փրկարար կռիւը:

«ԴՐՕՇԱԿ», № 12, 1 Մայիս 1896

## Գ Ի Պ Լ Ո Մ Ա Տ < Ի Է Շ Ն Ե Ի (\* )

Հասարակական կեանքի մէջ պատահում են այնպիսի ահռելի չարիք-  
ներ, որ շրմեցնում են ամենամեծ յոռետեսին անգամ: Յոռետեսը, որը միշտ ամենավատ գոյներով է ներկայացնում ապագան իւր երեւակայութեան մէջ դարձնելով ունենում է մի սահման, որից չի կարող անցնել, նրա կարծիքով, այս կամ այն հասարակական չարիքի աստիճանը: Բայց, դժբախտաբար, մենք տեսնում ենք, որ մեր ներկայ կեանքի մէջ յոռետեսի երեւակայած սահ-  
մանն էլ ոչնչանում է, եւ չարիքը տարածում է իր քեւերը աւելի հեռու ու հեռու...

Ամէն անգամ, երբ առիթ ենք ունեցել խօսելու եւրոպական դիպլոմա-  
տիայի մասին, որը պաշտօնապէս իր «հովանաւորութեան» տակ է առել ա-  
րեւելի ֆրիստոնեաներին, մենք հեռու որեւէ յոռետեսութիւնից, յենուած միմիայն պարզ իրականութեան վրայ, պնդել ենք միշտ, որ ո՛չ մի դիպլո-  
մատի համար գոյութիւն չունեն ո՛չ ֆրիստոնէական, ո՛չ մարդասիրական, ո՛չ ֆազաւակիրական եւ ոչ այլ նոյնանման նպատակներ: Մենք ընդունում էինք, որ դիպլոմատիան կարող է եւ ոչ թէ միայն չօգնել մեզ, անտարբեր մնալ, այլ մինչեւ իսկ վնասել մեզ, աշխատել կանգնեցնել ծնունդ առած շարժումը, եթէ այդ իր շահերին վնասակար նկատուի: Բայց մենք — եւ մեզ հետ նոյնիսկ ամենամեծ յոռետեսները — դժուար կարող էինք երեւա-  
կայել, որ ֆազաւակիրը աշխարհի «ֆազաւակիրը» ներկայացուցիչները հաս-  
նէին անխղճութեան, տմարդութեան ու լրբութեան այն ծայրայեղ աստի-  
ճանին. որի վրայ նրանք կանգնած են այժմ, եւ ոչ թէ միայն մեր, այլեւ ամ-  
բողջ արեւելեան հարցի վերաբերմամբ:

Եւրոպական դիպլոմատները «գրութեան փոքրիկ» նման շրջապատել են «հիւանդ մարդուն» եւ ամենասններեղի միջոցներ գործ դնելով՝ աշխա-  
տում են պահպանել նրա նեխուած կեանքը: L'homme malade (հիւանդ մար-  
դը) դատել է enfant gâté (երես առած երեխայ), որին պահում, պահպա-  
նում, շոյում, փայփայում են ամէն կողմից: Հոգատար դիպլոմատները ա-  
մենայն աջողութեամբ մրցում են իրար հետ այդ ասպարիզում: Մէկն իր ար-  
ջի քաքի գորութեամբ միջոց է տալիս նրան կոտորել, ջարդել տասնեակ հա-  
զարաւոր հայեր՝ երկրի «խաղաղութիւնը» վերականգնելու համար: Միւսը իր հաստ գրպանն է բաց անում եւ առաջարկում իր ոսկիները՝ տնտեսական

(\* ) Գրուած է Վասպուրականի կոտորածի առթիւ եւ հրատարակուած «Դրօշակ»-ում իբրեւ առաջնորդող յօդուած, առանց ստորագրութեան:

բացարձակ փայլաշունչ ազատելու համար. երրորդի նախնադրույթները  
ընդհանուր նկշում են գործ դնում ու սպառնալիքներ կարողում ապստամբ  
կրեւտացիներին: Ճնշում են Յունաստանին, որ անուղղակի կերպով օգնում է  
իր արիւնակից եղբայրներին. նկշում են Բուլղարիային, որ չի խանգարում  
մակեդոնական շարժմանը... Բայց ո՛չ մի տեղ, ո՛չ մի պարագայում եւրո-  
պական դիպլոմատը չարտայայտեց իր էութիւնը այնքան ստոր, գգուելի եւ  
կոպիտ կերպով, ո՛չ մի տեղ նա ցոյց չտուեց իր բարոյական այլանդակու-  
թիւնը այնքան շօշափելի փաստերով, որքան վանի եւ ընդհանրապէս վաս-  
պուրականի վերջին աղէտալից դէպքերի ժամանակ: Այդ դէպքերն այնքան  
սրտանմլիկ էին, որ ամենաչոր, ամենափարսախիտ դիպլոմատն անգամ պէտք  
է յիշէր, որ ինքը ո՛չ միայն դիպլոմատ է, այլեւ *ժարդ*: Բայց այդ չեղաւ:  
Պետերսի եւ Աֆրիկայի այլ հերոսների արժանաւոր ընկերակիցը՝ վանի անգ-  
լիական հիւպատոսը, որը շատ առաջ էր ստացել վանեցիներից «ոստիկան-  
հիւպատոս» տիտղոսը եւ քրիստոնէութեան սկզբունքը տարածող բողոքական  
միսիոնար Ռեյնոլսը հաւասարապէս գգուելի են մեզ թէ՛ իրենց բացարձակ լըր-  
բութիւններով եւ թէ՛ իրենց գաղտնի խարդաւանաւանքներով:

Մուտք գործելով Տանկահայաստան, շփուելով յանախակի վայրագ  
կառավարութեան հետ, դրանք կարծես մոռանում են իրենց ծագումը, մո-  
ռանում են այն միջավայրը, ուր ծնուել եւ սնուել են, մոռանում են այն դա-  
րը, որի մէջ ապրում են: Առանց խղճահարութեան, առանց ամօթի, բացար-  
ձակ կերպով պաշտպան հանդիսանալով սուլթանի կառավարութեան՝ դրանք  
ամենանեղ անապարհներով ստիպում են յեղափոխական գնդերին՝ հեռա-  
նալ ֆաղափից. դրանք մատնում են այդպիսով անգէն ժողովրդին վրէժխըն-  
դիր զինուորների ու վայրագ խուժանի կատաղութեան, իսկ յեղափոխական  
գնդերին՝ Պարսկաստանի անապարհի վրայ պատրաստուած զինուորների եւ  
համիդիականների անհամար բազմութեան:

Կոտորածի այդ սարսափից յետոյ նրանք դեռ համարձակուում են բար-  
դել բալար յանցանքը հայերի վրայ, մեղմացնել կառավարութեան եւ բաշի-  
բոզուկների վոհմակների գործած գազանութիւնները, ուրանալ ֆաղափի ուրմ-  
բակոծութիւնը, ֆաղափի եւ շրջակաների աւերուիլը, թալանուիլը, հագա-  
րաւոր գոհերի թիւը... Եւ այս դեռ բաւական չէ. նրանք յանդգնում են հան-  
րագրութիւններ պատրաստել հայերի կողմից, ստիպում են ստորագրել ա-  
հաբեկուած ժողովրդին, իբր թէ նա ինքն է մեղաւոր, որ իրեն կոտորել են,  
թէ նա շնորհակալ է կառավարութիւնից, որ կոտորածը չի շարունակում...  
Սա արդէն չափից դուրս է. այս դէպքում մարդ դժուարանում է հաւատալ,  
թէ դրանք մարդկային արարածներ են եւ ոչ թէ հրէշներ մարդկային կեր-  
պարանով...

Վասպուրականի կոտորածի ահուելիութիւնը անյայտ մնաց շատ շատե-  
րից. դիպլոմատները կարող են դրանով պարծենալ: Բայց ումբակոծուած  
տները, արիւնաներկ փողոցները, անբաղ դիակները, մոխիր դարձած գիւ-  
ղերը դեռ մնայուն վկաներ են սուլթանի գազանութիւնների եւ դիպլոմա-  
տիայի լկտիութեան: Անօթի, մերկ, բոպիկ մնացած բազմաթիւ կենդանի  
դիակների խուլ հեծեծանքը, առեւանգուածների, բռնարարուածների ապար-

դիւն հիշերը, հագարաւոր անմեղ գոհերի բարձրաձայն անէծքը... այս բռ-  
լորը դառը բողոք են եւրոպայի հասարակական դատաստանի առաջ՝ իր ներ-  
կայացուցիչների տմարդութիւնների դէմ:

Վասպուրականն աւերուեց. սուլթանը, Շափիրը, Սաադէտտին եւ այլ  
փաշաները հրնում են: Հրնում են ե՛ւ դիպլոմատները. նրանցից իւրաքան-  
չիւրը հասաւ իր նպատակին: Իսկ մե՞նք...

Ճիշդ է, մենք կրեցինք սուկայի հարուած, անհամեմատ աւելի գոհեր  
տուինք, քան մեր թշնամին. կորցրինք մեր լաւագոյն ընկերներից շատերին,  
բայց, մեր ժամանակաւոր պարտութիւնը, մեր թշնամիների հրնուանքը մեզ  
չեն վիատեցնի: Տասնեակ հագարաւոր դժբախտների յուսահատական հիշերը  
պահանջում են մեզանից արդար վրէժխընդրութիւն, մեր հարիւրաւոր նահա-  
տակուած ընկերների ստուերները կոչում են մեզ դէպի անձնագոհ գործու-  
նէութիւն:

«ԿՐՕՇԱԿ», № 19, 15 Օգոստոս 1896

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

(Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՍՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայ յեղափոխական շարժման տխուր անցեալի մէջ մտնով խորասուզուելիս, մեր աչքի առջեւ են գալիս *րնկամ* նահատակների ուրուականների հետ միասին յեղափոխական կենդանի նահատակների դժբախտ շարքերը:

Յեղափոխական փոքորկալից կեանքի մէջ շատ ֆչերն են յաջողում յարատուել: Շատերը մեր եին գործիչներից, մեր զինուորներից, եթէ միայն չեն սպանուել կամ մեռել. այսօր կա՛մ տառապում են բանտերի խորշերում, կամ դեգերում են ճանկաստանից դուրս՝ ցամաք հացի կարօտ:

Երկար տարիների ընթացքում հայ յեղափոխականը կուռել է պատմութեան մէջ բացառիկ անձնուիրութեամբ. այդ երկար տարիների ընթացքում ահագին ուժեր են խորտակուել ու ցրուել. ստեղծուել է մի մեծ բանակ բանտարկեալների, ախորեալների, անկարների, հաշմանդամների, ուժասպառների, որոնց վրայ աւելանում են նաեւ ժամանակաւորապէս դադար առած զինուորները: Եւ այդ երկար տարիների ընթացքում հայ հասարակութիւնը, նրա ունեւոր դասը իր սարկային բթացած զգացումներով՝ անտարբեր հանդիսատես է եղել յեղափոխական զոհերի կրած բոլոր տանջանքներին. նա նոյնիսկ մարդասիրական տեսակէտից ոչ մի դրական, յարատու միջոց չի ձեռն առել նրանց ողբալի վիճակը քիչ քէ շատ թեթեւացնելու համար:

Երբ մենք լսում ենք, քէ ի՛նչ փառաւոր ընդունելութիւն են գտնում կուռից վերադարձած զինուորները Եւրոպայում, նոյնիսկ Ռուսաստանում, թէ ինչ հացկերոյրներ են տրուում Տրանսփալից եկած անգլիացի կամաւորներին եւ ինչ միջոցներ են ձեռն առնում նրանց ապագան ապահովելու. — ալամայ մեր մտքի առջեւ են գալիս գործից վերադարձած հայ կամաւորները՝ քարքրոտ երկար նանապարհից տրեխները քրքրուած, ոտի տակի մորթր պոկած եւ ուրախ ու երջանիկ, եթէ կարողանում են գամի մի անկիւնում զազտագողի ապաստարան գտնել ու մի կտոր չոր հացով կշտանալ:

Անգլիացի զինուորը, որ կուռի է գնում տաք հագնուած, զգեստի ա-

(\*) Հ. Յ. Դաշնակցութեան Հիմնադրութեան առաջին իսկ օրերից պահանջ է զգացուել յեղափոխական պայքարի զոհերին օգնող մի կազմակերպութեան: Այդ նպատակով, այստեղ ու այնտեղ ստեղծուել են ռմանդակ մարմիններ կամ «Կարմիր Պաշտ» խմբեր: Կարմիր Պաշտ ընդհանուր կազմակերպութիւն ունենալու հարցը քննուել է Դաշնակցութեան ժողովներում: Ռուստոմի այս յողուածը, լոյս տեսած «Դրօշակ»ի տաւնամեակի համարում է. Ս. ստորագրութեամբ, արծարծում է նոյն հարցը: Այստեղ ներկայացնում ենք Ռուստոմի ձեռագրի ընդօրինակութիւնը:

ԽՄԲ.

ւելորդ պաշարը ետեւից, ճաշին, ընթրիքին մի քանի տեսակ կերակուր վայելելով, որը պատերազմ գնալիս չի մոռանում հետը տանիլ եւ իր *Ֆութ-բուլը* (ոտնագնդակ), որի համար ամէն բոպէ պատրաստ կանգնած են բժիշկները, վիրաբոյժները, գրուրեան բոյրերը...

Այս բոլոր յարմարութիւններով շրջապատուած անգլիացի զինուորը *Հերոս է*, եթէ մասնակցել է մի երկու պատերազմների, ուր թշնամու երեսն անգամ չի տեսել:

Աժա՛ն հերոսութիւն...

Բայց գիտէ՞ նա գիշերները քրտնաթոր վագել, ահագին բեռը շալակին, վագել, որպէսզի դեռ լոյսը չբացուած այսինչ լեբան կատարին դիրք բռնի: Գիտէ՞ նա երկու-երեք օր անօթի մնալուց յետոյ՝ գոհանալ ոչխարապահ շների համար պատրաստած կոպիտ, «էնոթ»ով (թէժահաց): Գիտէ՞, թէ ինչ է նշանակում լեբան կատարին, մի քարի տակին կծկուած՝ ծարաւից տապակուել, երբ մօտակայ ձորի միջով աղբիւրն է կշկչում: Կուռել է նա փամփուշտները համրելով՝ ձիւնի վրայ փռուած առաւօտից երեկոյ. գիտէ՞ նա երգել ու «կլոր» պար բռնել զնդակների տարափի տակ՝ ցրտից փայտացած ձեռներն ու ոտները բանալու համար...

Ամբողջ զնդից հազիւ մի տասնեակ մարդ կորցրած անգլիացի կամաւորները ընդունում են ամբողջ ազգի կողմից իբր առանձին պատիւների արժանի հերոսներ, իսկ հարիւրապատիկ թուով թշնամիների դէմ օրհասական կռիւ մղած եւ ընկերների կէսը գոհ տուած հայ զինուորները ամենաբարեխաջող դէպքում միտքարութիւն են գտնում միայն իրենց սրտակից մտերիւնների նեղ շրջանում:

Իսկ դէս ու դէն ցրուած հալածական զինուորները. իսկ զոհուածների անտէր մնացած ընտանիքները, սուլթանի ճակկերում բռնուածները...

Հասարակութիւնը նրանց չի ճանաչում, նրանցով չի գրադում, նրանց վիճակի մասին չի մտածում: Դեռ լաւ որ սուլթանի արտասահմանեան թուլաների հաջոցները նրանց շատ ֆչերի ականցն է հասնում:

Մեր անգգայ հասարակութիւնը այդ բեռն էլ է դրել դրել յեղափոխականների ու յեղափոխական կազմակերպութեան վրայ. այդ օգնութիւնն էլ նրանցից է սպասում՝ բողոքելով նոյնիսկ երբեմն, որ այստեղ կամ այնտեղ անխնամ ձգուածներ կան: Բայց ո՛չ յեղափոխական ընկերները եւ ոչ յեղափոխական կազմակերպութիւնը, չնայած իրենց գործ դրած ջանքերին, չեն կարող զգալի օգնութիւն հասցնել այն պարզ պատհառով, որ իրենց նիւթական միջոցները չափազանց սահմանափակ են: Եւ այդ մինչեւ այն աստիճան, որ յանախ յանցանք է համարում կենդանի գործից կտրել եւ նպաստ տալ նոյնիսկ գործից նոր վերադարձած եւ դեռ աշխատանք չգտած ընկերոջ:

Ուրիշ կերպ էլ չի կարող լինիլ: Ամենամեծ պետութիւններն անգամ, իրենց միլիարդներով հանդերձ, անկարող են հանդիսանում հիւանդ զինուորների, վիրաւորեալների հոգատարութեան ծախքերը ամբողջովին իրենց վրայ առնել: Նրանք դիմում են ժողովուրդի աջակցութեան: «Կարմիր հաշի» հաստատութիւնները ամէն երկիր ունի: Եւ ամէն տեղ, ուր կայ կռիւ, կամ ուր սպասում է կռիւ, որի անխուսափելի հետեւանքը պիտի լինեն կեն-

դանի նահատակները, բուն մարմինն կից պէտք է գոյութիւն ունենայ եւ մի ուրիշ կազմակերպութիւն, որի նպատակը լինի խնամել վտանգուածներին, վնասուածներին: Այդ դէպքում միայն կր բեթեւանայ բուն կոուող մարմնի բեռը, այդ դէպքում էլ կոուողները աւելի սրտով կր դիմեն առաջ: Ռուս «Ժողովրդային կամֆ» կուսակցութեան կուուի շրջանում Յեղափոխական «Կարմիր հաչի» շնորհիւն էր, որ հազարաւոր ախտաբաններ, բանտարկեալներ, փախստականներ հնարաւորութիւն ունէին քիչ քէ շատ տանելի վիճակ ունենալու իրենց դժբախտութեան վայրերում: Դա մեր պակասներից մէկն է: Հայկական «Կարմիր հաչի» հաստատութիւնն է, որի անհրաժեշտութիւնը ծանրացած է մեզ վրայ տարիների ընթացքում եւ որի իրագործման մեծ գոնէ հիմա դիմենք: Դրամ, գրեթէ, ներմակեղէն բաշխել բանտարկեալներին, ախտաբաններին, նախնական օգնութիւն հասցնել կուուից դարձածներին, գործ գտնել այնպիսիների համար, որոնք ընդունակ են աշխատելու, հայրաքայքել կուուի գնացողներին վերք կապելու համար անհրաժեշտ իրեր եւայլն, — ահա այն լայն սպարէզը, որ ունի իր առաջ հայկական «Կարմիր հաչը», մի գործ, որ նա կարող է տանել մի քանի դէպքերում օրինակաւորութեան սահմանից դուրս չգալով:

Այս առաջարկը անելիս, մենք չենք մոռանում գործնական զանազան դժուարութիւնները: Բայց յոյս ունինք յաջողութեան՝ աչքի առաջ ունենալով, որ այս հարցը մի քանի անգամ դրուել է յեղափոխական ժողովներում եւ ընդունելութիւն գտել ընդհանրութեան կողմից: Մեզ յոյս է ներշնչում, մանաւանդ, այն հանգամանքը, որ «չէզոք» սրտերի, «չէզոք» ուղեղների մէջ նոյնիսկ ծագել է եւ մասամբ իրականացել բանտարկեալներին օգնելու ճիշտումը:

Հայկական «Կարմիր հաչի» ընկերութիւնը անհրաժեշտ է, մանաւանդ, ապագայ կուուի յաջողութեան համար: Պահանջը մեծ է եւ շարունակ պիտի մնայ: Մարդիկ, որոնք մի ժամանակ ամենայն յօժարութեամբ գոհել են իրենց ունեցած-չունեցածը, իսկ հիմա թափառում են յետին քշուտութեան մէջ, տեղ չգտնելով իրենց չոր գլուխը դնելու համար. երիտասարդներ, որոնք դժբախտութիւն են ունեցել կրակի մէջ ամբողջովին չխորովուելու, բռնոր հաշմանդամները, իրենց ապրուստի միակ ապաւէնը կորցրած ընտանիքները, յեղափոխական բոլոր կենդանի մնացած գոհերը, վերջապէս, նրանք, որոնք աչքի առաջ ունին նոյն դրութեան մէջ ընկնելու տխուր հեռանկարը, — բոլորն էլ օգնութեան են սպասում մի հասարակութիւնից, որի համար իրենք այնքան բուռն տենչով կրակն են նետուել եւ դեռ պիտի նետուին:

Եւ մի՞թէ հայ գիւղերը դեռեւս չի արժանացել այդ օգնութեան:

«ԴՐՕՇԱԿ», № 1. Յունուար 1901

## ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանից արեւելով՝ հրատարակութեան ենք տալիս «Դրօշակ» արաջին խմբագիր Ռոստոմի Ներկայ գրութեանը: Ձեռագիրը կիսատ է, եւ մեզ յայտնի չէ, թէ արդեօք որեւէ տեղ տպուած է: Յօդուածը գրուած է 1905 թուին, Կովկասում տեղի ունեցող դէպքերի տպաւորութեան տակ եւ այսօրուայ համար էլ դեռ հնացած չէ:

ԽՄԲ.

Երբ Դաշնակցութիւնը, իբրեւ կազմակերպուած կուսակցութիւն, երեւան եկաւ Տանկաստանում, առաջին քայլից յայտարարուեց, որ նրա կոնքր բացարձակապէս բռնակալ կառավարութեան դէմ է եւ ոչ դրացի ազգութիւնների, ինչպէս են տանիկները եւ քիւրդերը: 15 տարուայ փորձերը ցոյց տուին, սակայն, որ Դաշնակցութեան տրամադրութիւնը բաւական չէ եղած խոչընդոտները խորտակելու եւ իր կոնքր միմիայն բռնակալութեան դէմ կենտրոնացնելու: Դեռ մինչեւ այսօր մենք ստիպուած ենք մեր ուժերը ջլատել, դիմադրելով ե՛ւ վայրենի քիւրդական ցեղերին ե՛ւ թալանի ծարաւ ու մոլեռանդ թուրք ամբոխին:

Սկսելով մեր կոնքր կովկասում, մենք մեզ աւելի բարեյաջող պայմանների մէջ էինք համարում: Չէ թէ այլեւայլ հաշիւներ չունէինք մեր դրացիների հետ, չէ, բայց այն հանգամանքը, որ կովկասեան ցեղերի մէջ աւելի գիտակցութիւն կայ, քան Թուրքիայում, որ բոլորն էլ անխտիր գգում են իրենց վրայ ծանրացած միապետութեան լուծը, որ յաճախ դժգոհութիւնը արտայայտում է բողոքի այլեւայլ ձեւերով, այս բոլորը լուրջ գրաւական էր համարում, որ միապետութեան դէմ յայտարարուելիք կուուի մէջ բոլորն էլ պատրաստ կը լինեն միանալու եւ փոխադարձ հաշիւները մոռանալու: Հայ ժողովուրդը, որ յանդգնութիւն ունեցաւ առաջինը գէնքը ձեռն դուրս գալու ընդհանուր թշնամու դէմ, այն էլ բռնակալութեան ամենագորեղ օրերին, երբ դեռ չկար պատերազմ եւ ամբողջ Ռուս կայսրութիւնը կաշկանդուած էր Պէվէրի ճանկերում, այդ ժողովուրդը իրաւունք ունէր սպասելու, որ նրա արած գոհողութիւնները կը գնահատուին վիճակակից ցեղերի կողմից եւ մոռացութեան կը տրուին մանր մուր հաշիւները: Երբ հսկայի դէմ կուուի էր դուրս գալիս մի ժողովուրդ, որ փոքրաթիւ էր միւսների շարքերում, մինչեւ այդ ժամանակ վախկոտի համբաւ էր հանել, որ ընդունակ էր համարուել միմիայն տնտեսապէս կեղեքելու ասպարէզի մէջ, երբ գէնքի է դիմում իր իրաւունքները պաշտպանելու համար, մի ժողովուրդ, որ դարերով ստրկութեան մէջ էր ապրել, պէտք էր սպասել, որ աւելի նպաստաւոր պայմանների մէջ ապրած նրա դրացիները ոչ միայն համակրէին, այլեւ հետեւելով նրա օրինակին, աւելի առաջ անցնէին: Բայց այդպէս չեղաւ:

Համակրանք մեզ չզրացան, այդ մենք տեսնեմք բազմաթիւ օրինակներ

րով : Հետեւելու փորձեր էլ եղան, նոյնիսկ մահմեդական ամբօթի կողմից : Բայց հետզհետէ դրուք ինքն սկսեց փոխուել, եւ այսօր մենք տեսնում ենք, որ բռնակալութեան տակ նկշուած, իր իրաւունքների մէջ վերջին ծայր սեղմրած մահմեդական ազգաբնակչութիւնը իր միջից դուրս է հանում տարրեր, որոնք կոչը գործիք դասնալով բռնակալութեան ձեռքին, մոլեգնաբար յարձակում են հայերի վրայ : Ուշագրութեան արժանի է այն, որ այդ կոչը բերը իրենց բշխումութիւնը պատմաաւարանում են նրանով, որ հայ ժողովուրդը յեղափոխական է, որ նա բմբոստանում է կառավարութեան դէմ, այն կառավարութեան, որին իրենք միաբերան անիծում էին մինչեւ հիմա : Տեսնում ենք մի ուրիշ, անելի անսպասելի երեւոյթ, — վրացիներն էլ սկսել են իրենց ատամները սրել : Մենք կարեւորութիւն չտուինք այն հանգամանքին, որ Բագուայ դէպքի ժամանակ Թիֆլիսում եւս ցրուեցին վրացերէն կոչեր, որով հրաւիրում էին նրանց եւս յարձակուել հայերի վրայ : Դրանից յետոյ վրաց ազգային օրգան «Իվէրիա»ում երեւացին պահանջներ՝ էշելու Սեւ ծովի անփերից այնտեղ ժամանակաւորապէս բնակութիւն հաստատած հայ գաղթականներին. դրա վրայ արդէն չէր կարելի կանգ չառնել, բայց վերագրելով դա շովինիստական մի խմբակի քթու տրամադրութեան, դարձեալ ուշագրութիւն չդարձրինք, հաւատացած լինելով, որ խնդիր հանողները իրենք կ'ամաչեն եւ կը լուեն, իսկ եթէ չլուեն էլ, դա կը մնայ միայն «Իվէրիա»յի էջերում եւ արձագանգ չի գտնի վրաց հասարակութեան մէջ : Բայց այսօր լըսում ենք, որ Քուրայիսում, նահանգապետի տան առջեւ, ինչ որ ժողովրդը դական ցոյց է եղել, ուր պահանջել են էշել նահանգից բոլոր հայերին : Ի հարկէ, լուրը չափազանցութիւն է, բայց չկայ ծուխ առանց կրակի, նշանակում է մի բան պատրաստում է, եւ զարմանալի չի լինիլ, եթէ, օրինակ, Բաբումում տեղի ունենան արիւնահեղ ընդհարումներ նոյնիսկ մեր եւ վրացի բանուորների միջեւ :

Այս բոլորից պարզ է, որ հակառակութեան, թշնամութեան որոշ պատճառներ կան : Մենք միշտ կառավարութիւնն ենք պատհառ բռնում, հայեռում ենք *Վելիկոյին* (\*), Գալիցիին, սպանում ենք Նակաշիճներին, բայց սրա հետ միասին պարզ պէտք է լինի, որ որպէսզի կառավարութիւնը կարողանայ յաջողութիւն ունենալ, պէտք է, որ պատշաճ հող գտնի իր պրոպագանդի համար : Թէ ինչո՞ւ է կառավարութիւնը մեզ թշնամի, դրա վրայ չարժէ կանգ առնել, խօսինք այլ օրիկտների մասին :

*Մեր զրացիները*. մահմեդականներ : (Այստեղ ձեռագիրը վերջանում է) :

«ԳՐՈՇԱԿ», № 5. Մայիս 1931

(\*) «Վաւկագ» պաշտօնաթերթի խմբագիր եւ Գալիցիին հայակեր զործակէցը :

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԸՆԿԵՐԸ

Լոյսը դեռ նոր էր բացուել, երբ հասանք Աջի-չայ : Բուն Բարեկենդանի կիրակին էր : Դէպքերը այնպէս էին դասաւորուել, որ հենց նոյն օրը պիտի պատրաստուէինք արշաւել Ռահիմ խանի դէմ, որ ամբացած էր Ալվար եւ Սալվան գիւղերում, Թարիգի եւ Սոփիանի մէջտեղը : Նայն կէտի վրայ միաժամանակ պիտի յարձակուէին Մարանդի եւ շրջակայ վայրերի սահմանադրական ուժերը՝ համախմբուած Սոփիանում : Այդպէս էր ծրագրուած նախորդ օրերի ժողովներում :

Եւ մենք ուզում էինք հաւատալ, որ իբօք Թարիգից դուրս կը գայ 2000նոց մի բանակ, որ նրա աջ թեւը գիշերանց կը գրաւի խնուղու ուղղութեամբ ձգուող լեռնաշղթան, ձախ թեւը պատուար կը կանգնի Սամատ խանի ուժերի հանդէպ, իսկ կենտրոնը, բնախր ուժերով, բնդանօթների օգնութեամբ բուռն յարձակում կը գործի թշնամու վրայ :

Ուզում էինք հաւատալ նաեւ, որ Սոփիանում այդ ժամանակ ճիշդ որ համախմբուած սպասում են 1500 սահմանադրական ձիաւորներ, որ նրանք էլ, համաձայն նախօրօք մշակուած ծրագրին, գրոհ կը տան Ալվարի վրայ, նոյն ժամին, նայնպէս բաժանուած երեք մասերի :

Ամբողջ շաբաթը, մանաւանդ վերջին գիշերը, անցրնում էինք այն յոյսով, որ եթէ կազմուած յատակագիծը նոյնիսկ կիսկատար իրագործուի, այնուամենայնիւ Ռահիմ խանը կը քախչախուի, եւ Թարիգը կ'ազատուի պաշարման շղթայից :

Հայ մարտիկների համար մասնաւորապէս կարեւորութիւն ունէր նաեւ այն հանգամանքը, որ Սոփիանի սահմանադրական բանակի մէջ կային մեր ընկերներից 15 հոգի :

Բայց այն ինչ տեսանք Աջի-չայ հասնելով, ի դերեւ հանեց մեր բոլոր երագները : Հաւաքուել էին հագիւ 250 հոգի : Այդ 250 հոգին պիտի կազմէին մեր կենտրոնը, մեր աջ ու ձախ թեւերը : Թնդանօթները, որոնց վրայ էր մեր գլխաւոր յոյսը, նոյնպէս չկային : Սաքար խանը կուտրուած էր. Բեռին յուգուած՝ առաջ ու յետ էր գնում. տղաները լուր՝ ձիաներն էին պտտեցնում :

Ի՞նչ անել... Սաքար խանը հաւատում ու հաւատացնում էր, քէ հազարաւորներ կը լինենք, բաւական է որ առաջ շարժինք եւ կոխը սկսուի : Քեռին հաւատացնում էր, որ, ընդհակառակն, եղած քանակն էլ հատած կը տեսնենք, երբ կուռի վայրին մօտեցած կը լինենք :

(\*) Այս յօդուածը Ռոստոմը գրել է 1914ին, Կարնում : Լոյս տեսաւ Նոր Սանասարեան վարժարանին նուիրուած «Հայրենիք»ի բացառիկ թիւում՝ «Հինգ տարի առաջ» վերնագրով եւ Ականատես ստորագրութեամբ :

Գնա՞լ, թէ չգնալ:

Գնալ... բայց ի՞նչ ուժով, ի՞նչ վստահութեամբ եւ ո՞ւմ դէմ... Ռա-  
հիմ խանի հազարաւոր ձիաւորները, որ ամենակատաղիներն էին Թարսիզը  
պաշարողներին եւ, բացի այդ, արդէն իրենց համար ամուր դիրքեր պատ-  
րաստած:

Զգնալ... բայց ի՞նչպէս ձգել սովորացներին, եթէ նրանք յոյ-  
սերը մեզ վրայ դրած՝ զան ու մենակ մնան... Բայց կը գա՞ն արդեօք. որ-  
քա՞ն նիշդ եւ մեզ հաղորդուած տեղեկութիւնները: Եւ Ռահիմ խանի դիմաց  
մենակ մնացողը մենք չե՞նք լինելու...

Լուսաբացը արդէն մտնում էր: Դա էր, որ վերջ դրեց տատանման  
վիճակին: «Որոշուեց», որ պարտաւոր ենք շարժուել: Ամէն մէկը գնաց իր  
տեղը:

Քեռու նշանի վրայ մերոնք ձի նստեցին, միւսները՝ պարսիկ եւ վրացի  
մարտիկները նոյնպէս պատրաստ էին: Ով ձի չունէր՝ կառքի մէջ տեղա-  
ւորուեց:

Արշալոյսումը առաջ շարժուեց դանդաղ ֆայլերով: Առաջ էինք գը-  
նում, բայց շարունակում էինք երբեմն յետ նայել հեռաւոր մթութեան մէջ  
օգնական ուժեր նշմարելու յոյսով: Տղաները խոյս էին տալիս իրարու հետ  
խօսելու: Զիւնները չէին ուզում իրարու առաջ կտրել: Որքա՞ն քիչ էր յիշե-  
ցրում խմբերի սովորական արշաւանները...

Անցանք Աջի-չայի կամուրջը եւ ղնկանք լայն խնուղին: Լոյսը սկսում  
էր բացուել: Մի անգամ էլ չափեցինք աչքով մեր ուժերը. իրօք որ, ինչպէս  
Քեռին էր պնդում, մեր թիւը սկսում էր նուազել...

Գնացողներին ո՞րը պիտի մնայ, ո՞րը վերադառնայ եւ որի՞նք ընկեր-  
ները պիտի բերեն, այս բացուող առատոր որի՞ համար պիտի լինի վերջինը,  
— ակամայ մտածում էի նայելով ընկերների շարքերին:

Զախ թեւր, որ բաժանուեց մեզանից, հետզհետէ աներտութեամբ ար-  
տաւորներին յետնոււմ, աջ թեւր առաջուանից պիտի բռնած լինէր լեռնա-  
շղթան. արշալոյսումը բաղկացած էր հազիւ 45 հոգուց: Նրա մէջ էին Սա-  
քար խանը իր մտերիներով եւ հայ ու վրացի մարտիկներով: Գնում էինք  
ձգուելով խնուղու ուղղութեամբ, ըստ կարելույն երկար. այդպիսով աւելի  
մեծ ուժի տպաւորութիւն կարող էինք թողնել:

Բաւական անցել էինք, երբ Մարտիրոսը (\*), որը Քեռուց սովորաբար  
չէր բաժանում, ձին պահեց եւ ինձ հաւասարեցնելով՝ խորհուրդ տուեց քա-  
ղաք վերադառնալ, իրենց հետ չգալ: Նրա առանց այն էլ տժգոյն դէմքը է՛լ  
աւելի էր գունատուել գիշերուայ անհունութիւնից:

«Յանկարծ ինքը չիփուի». անցաւ մտքովս, երբ տեսայ նրա մեռելա-  
յին գունատութիւնը: Եւ որտեղից-որտեղ յիշեցի, սկզբում կցկտուր կեր-  
պով, հետզհետէ միայն ամբողջացնելով ու նշդելով երկու փրանսերէն տա-

(\*) Մարտիրոս Զարուիւնան, զազափարական յանդուգն ահաբեկիչ, Գրոյի մտերիմ  
ընկերն ու զործակիցը:

դեր, որ այն ժամանակ չգիտէի, թէ ո՞ւր եւ ե՞րբ էի կարդացել, — Un quart  
d'heure avant sa mort, il était encore en vie. (\*):

Արշալոյսումը արագացրեց իր ֆայլերը: Դրութեան անորոշութիւնը  
կարծես շտապեցնում էր՝ անծանօթ վտանգի հանդէպ ժամ առաջ կանգնելու:

Լոյսը արդէն բացուել էր, երբ մտեցանք վերի Ալվարին: Սպասում  
էինք կրակի, բայց ձայն, շարժում չկար: Պարզուեց շուտով, որ մեր բախ-  
տից գիւղում Ռահիմ խանի մարդկանցից ոչ ոք չկայ, նոյնիսկ պահապաններ  
չէին դրել:

Հագիւ էինք, սակայն, գիւղը մտել, դեռ ձիաները չէինք տեղաւորել,  
երբ վարի Ալվարից լսուեցին քմբուկի ձայներ, եւ Ռահիմ խանի ձիաւորները  
սկսեցան գիւղից դուրս: Կարծես լաւատեղեակ մեր յատակագծին՝ նրանց  
ստուար մասը մի շրջան անելով՝ ուղղուեց դէպի լեռնաշղթան: Միւսները,  
երկու թեւի բաժանուած, մեզ վրայ եկան: Գնդակները կարկտի նման տեղա-  
ցին գիւղի վրայ: Մերինները, շտապով դիրքեր բռնելով, համազարկի բռ-  
նեցին յարձակողներին. եւ կարն ժամանակից յետոյ թեւերն էլ ստիպուած  
եղան յետ ֆաշուել: Առաջինը կանգնած մնաց Սալավանի հանապարհի վրայ,  
հրացանի տարածութիւնից դուրս, միւսները իջան ձիերից եւ առունքի մէջ  
մտնելով՝ սկսեցին մտնելով մեր դիրքերին:

Կռուի թափը շուտով կտորուեց: Նա վերածուեց Պարսկաստանի յա-  
տուկ հրացանաձգութեանը՝ տարտամ, ապարդիւն: Պատերի, դիրքերի յետե-  
ւում պատսպարուած՝ հրացան էին արձակում, առանց տեսնելու հակառա-  
կորդին:

Տղաները՝ ձանձրացան, սկսեցին կամաց-կամաց ֆաշուել դիրքերից:  
Մի քանի հոգի միայն մնացին՝ հսկելու համար թշնամու շարժումները:

Զանազան դիրքերում ֆաշուած, պատերի տակ շարուած կռուողները՝  
փոխանակում էին իրենց տպաւորութիւնները: Քեռուց դժգոհ էին, որ հա-  
կառակ իր տուած հրամանին, ինքը չհամբերեց եւ կրակը բացեց, երբ թըշ-  
նամին բաւականաչափ մտեցած չէր: Այդ էր պատճառը, որ նա միայն եր-  
կու գոհ տալով է նահանջել: Յանդիմանում էին Մարտիրոսին, որ դիրքի մէջ  
չի պահուել. «կանգնած» է կռուել: Պարզուեց, սակայն, որ նոյնը արել են  
ե՛ւ Կարոն, ե՛ւ Քեռին, ե՛ւ Միսաքը: Մարտիրոսը, Կարոն եւ միւսները ժըպ-  
տում էին ներքին գոհունակութիւնը ծածկել չկարողանալով: Հիացմունքով  
էին պատմում թշնամու մի ձիաւորի մասին, որը, գնդակների տարափի տակ,  
ազատել է ձիուց ընկած վիրաւոր ընկերոջը:

Հոգ տարին ձիերի մասին, ինչ որ տեղից գտան նրանց համար առույտ  
եւ մէկի պայուսակից ուտելու հաց: Գիւղը թալանուած էր անխնայ կերպով  
Ռահիմ խանի ձեռքով, բնակիչները ցրուած էին զանազան տեղեր. մի քանի  
հոգի էին միայն մնացել աւերակների մէջ:

Մեր դիրքը արդէն պարզ էր: Դուրս գալ գիւղից չէինք կարող: Մեր  
յոյսը Սովիանից գալիք բանակն էր, որին սպասում էինք ամէն րոպէ՝ յար-

(\*) Իր մահունից քսուորդ ժամ առաջ նա դեռ կենդանի էր:

ձակողականի դիմելու համար: Բայց նա չէր երեւում: Միայն Սաթար խանն էր, որ մի ասն «բալախանից» հեռադիտակի օգնութեամբ գտնում էր նրա երեսալու նշանները: Մենք էլ, յանախ, ուզում էինք հաւատալ, որ ժայռերի միջում նշմարուող ստուերները իրօք մերոնք են:

Մի անգամ էլ մեծ յոյս ներշնչուեց մեր մէջ, երբ քաղաքի կողմից երեսաց մի ահագին բազմութիւն: Յոյսը կրկնապատկուեց, երբ լսեցինք թրմ-դանօրի ձայնը: «Նկան, վերջապէս, օժանդակ ուժերը, հասարակութեանը», մտածեցինք մենք:

Բայց այդ բազմութիւնը կանգնած մի կէտի վրայ, այլեւս առաջ չշարժուեց. երբեմն միայն արձակում էին բնդանօթ, Աստուած գիտէր, թէ ի՞նչ ուղղութեամբ... Յետոյ իմացանք, որ բազմութիւնը մեծ մասամբ կազմուած է եղել հանդիսատեսներից, որոնք փութացած են եղել դիմաւորելու «գերի բռնուած» Ռահիմ խանին եւ նրա հարիւրաւոր ձիաւորներին, — այդպէս է եղել տարածուած քաղաքում:

Ռահիմ խանն էլ դուրս բերեց իր թնդանօթը: Նրա թնդանօթաձիգները աւելի վարժ էին երեւում, կարողանում էին արձակել ամէն մի 5 բուպէից յետոյ, ոտմբերը անցնում էին նիշդ գիւղի ուղղութեամբ եւ երբեմն էլ պայքում էին գիւղի գլխին:

Կարճատեւ կենդանութիւնից յետոյ, նորից տիրեց ընդհանուր տարտառութիւնը: Հրացանաձգութիւնը շարունակուում էր աննպատակ: Այդ բոլոր ժամանակում մեր կողմից վիրաւորուել էր միայն մի պարսիկ, այն էլ ոչ կոռուղներից:

Կէս օրը մօտենում էր: Տղաներից շատերը պառկել էին պատերի տակ: Արեգակի ջերմութիւնը մի առանձին հանելիք քմրութիւն է առաջ բերում յոգնածների ու քնատների վրայ: Մի քանիսը ննջում էին, միւսները խորատուգուն էին յիշողութիւնների մէջ: Բուն բարեկեանի օրն էր, երբ ակամայ անցնում էս բնտանեկան յարկը, ընկերական շրջանակները, վերջիշում էս մանկութիւնը:

Նորից բարձրացայ Սաթար խանի բռնած վերնայարկը: Նա շարունակում էր դիտել լեռնաշղթան. երբեմն էլ հրացան էր արձակում, ամէն մի անգամին, ինչպէս շրջապատն էր պնդում, մի մի թշնամի գլորելով:

Յենուած պատուհանի վրայ հանգստանում էի, երբ, յանկարծ, ինձ կանչեցին: Վ.ի նիչն էր մի ուրիշի հեկեկանքի հետ միասին: «Մարտիրոսը գարնուեց», լսուեց ուրուակի: Տղաները դուրս վազեցին: Ինչպէ՞ս եւ ո՞ւր կարող էր սպանուել. մի՞թէ թշնամին անցել է դիրքերի յետեւը: Հայերի մի խումբ եւ վրացի մարտիկները վազեցին դէպքի վայրը: Թշնամին խնուղու միւս կողմի խոր առունների մէջ լաւ պատսպարուած էր անտեսանելի սաստկացրել էր իր կրակը: Մերիկները պատասխանում էին խնուղու եզերքից, ընդամէնը հագին 40-50 քայլ հեռաւորութեան վրայ: Ջարմուեց եւ վրացի կողմի. նա վիրաւորուած էր ծնօտից՝ կամուրջի տակից արձակուած գրնդակով: Պարզ էր, որ դիրքերը չափազանց աննպատակ էին, եւ պէտք էր մեծ պաշարիւնութիւն եւ զգուշութիւն՝ նոր վտանգների չենթարկուելու համար: Պէտք էր կծկուած մնալ եւ գլուխ չբարձրացնել: Բայց ահա ոտքի ելաւ կա-

րոն, տասնոցը ձեռին: Բոլորը հասկացան նրա միտքը: «Մի՛ գնա, դիրք մտիր», պտտացին ամէն կողմից, իսկ նա բարձրացաւ խնուղու վրայ, իր ամբողջ հասակով. գնդակի տարավի տակ, մէկ յետ գալու շարժում արեց՝ ընկազմամբ ձախ բեր գլխի առջեւ բռնելով, մէկ էլ ոստիւն գործեց եւ վազեց դէպի թշնամին, վազեց միւս-մինակ եւ այլեւս չերեաց: Տասնոցը 10 հարուածը չլրացրեց, նշան, որ կարոն արդէն ընկած էր: «Վիրաւորուած եմ», լսում է քիչ յետոյ խնուղու միւս եզերքից նրա ձայնը: Այդ բուպէին բարձրանում է Սեթոն, կարոյի անբաժանելի ընկերը: Նոյնպէս տասնոցը արձակելով՝ նա իրեն նետում է առաջ՝ վիրաւոր ընկերոջը մեռակ չթողնելու համար: Տասնեակներով արձակուած գնդակների տակ, նա էլ է ընկնում, աւելի ծանր վիրաւորուած: Գրգռումը պատել էր բոլորին. նորանոր գոհեր անխուսափելի կը լինէին, երէ տարիքոտ եւ փորձառու ի. տայու եւ իր խմբի ջանքերը չզրսպէին: Թշնամուն դիրքերից հանելու ոչ մի հնարաւորութիւն չկար, պէտք էր միայն թոյլ չտալ, որ նա դուրս գայ մօտեմայ վիրաւորներից: Այդ է, որ յաջողութեամբ գլուխ բերին տղաները:

Մինչեւ երեկոյ արքունի հսկելով, նրանք կարողացան միջոց տալ կարոյին, թշնամու կրակի թուլացած պահուն, արձակել գէնքերը, փամփուշտները եւ թեթեւցած իրեն նետել վերստին մեր կողմը: Ջիւր վրայ դրած՝ Ս.ի պահպանութեան տակ նա ուղարկուեց քաղաք: Կողման առաջուանից էր գրնացել:

Իսկ մութը ընկնելուն պէս, տղաները յաջողեցան քշել թշնամու մնացորդներին իրենց դիրքերից, առնել Սեթոյի արդէն անշնչացած դիակը, կարոյի գէնքերը եւ նախապահուել քաղաք:

Կարոն մեռաւ գիշերը՝ չկորցնելով իր գիտակցութիւնը: Վերջին ժամերին նրան միայն մի բան է զբաղեցրել. ընկերներից ո՞րը ինչ վէրք է ստացած եղել...

Ծանր էր կորուստը: Երբեմն էլ աչքի ընկնող ուժեր էին, սիրուած, յարգուած ընկերներ: Այսպիսի կորուստ մինչ այդ ուրիշ անգամ չէինք ունեցել. զրկուել էինք մեր խմբի մէկ եօթներորդից: Քաղաքն էլ սուգի մէջ էր:

Այսպէս անցաւ 1909ի մեր բուն Բարեկեանը:

Երբեք ընկերների ընկնելը, կատարուած ընդամէնը 10-15 բուպէի մէջ, ամփոփումն է մեր յեղափոխական պատմութեան հոգուն:

Մարտիրոսը, որը գնում էր գործի այնքան եռանդով ու պատրաստակամութեամբ, որքան աւելի մեծ էր նրա հետ կապուած վտանգը, չէր կարող չուղղուել, առանց իսկ հրամանատարին լուր տալու, դէպի ամենավտանգաւոր դիրքը, չէր կարող չուզենալ չափուելու թշնամու քաղաքեան հետ մօտիկից, անպատրաստ դիրքի մէջ՝ գլուխը վեր բարձրացնելով նրանց գրնդակների դէմ: Նա յեղափոխական խոյանքի մարմնացումն էր:

Սեթոն, որ ընկաւ կարոյի պատճառով, գոհ էր ընկերասիրութեան: Միասին էին եկել կովկասից, միասին էին լինում միշտ: Կարոյի բուն թափին նա հակադրուում էր իր հանդարտամտութիւնը եւ զգուշաւորութիւնը: Մեծ եղբոր նման սանձահարում էր կարոյին, որը կոխը սկսելուն պէս կորցնում

էր սովորաբար իր գլուխը եւ երբ չէր կարողանում պահել, նետում էր նրա ետեւից:

Կարոն արտայայտիչը եղաւ աւելի խոր զգացմունքի: Նա էլ նետուեց կրակը ուրիշի պատճառով. բայց այդ ուրիշը նրա մտերիմը չէր, նոյնիսկ ընկերը չէր: Կարոն ու Մարտիրոսը բաժանուել էին Մուժամբարի կռուից յետոյ: Կար ժամանակ, որ չէին խօսում իրարու հետ: Բայց Մարտիրոսը Կարոյի համար *կազմակերպական* ընկեր էր, որի հետ կապուած էր ուրիշ ընկերների, ընկած հերոսների պաշտամունքով. այդ կազմակերպական զգացումն է. որ միացնում է ընկերներին, ինչպէս մի ընտանիքի անդամներին: Եւ դա է հայ յեղափոխութեան յատկանիշ կողմը, մեր մեծ գործերի գաղտնի գապանակը:

«ՀԱՅՐԵՆԻՔ» բացառիկ թիւ, թիւ 2, 1914

## ՌՈՍՏՈՄԻ ՃԱՌԸ

1917 Ապրիլ 6ին. Թիֆլիսում, բաց անելով Հ. Յ. Գաշնակցութեան ռաշոնական ժողովի հանդիսուոր նիստը՝ Ռոստոմը արտասանեց հետեւեալ ճառը:

«Ընկերներ՛ք, բաց եմ անում Գաշնակցութեան առաջին ազատ Ռայոնական ժողովը ազատ Ռոսաստանում: Մենք ունեցել ենք շատ ազատ միջավայրեր, ուր գործել է մեր կուսակցութիւնը.— Ամերիկա, Եգիպտոս, Բալկաններ, Պարսկաստան եւ Տանկաստան: Եւ եթէ մենք այսօր աւելի զուսպ ենք ու չենք խանդավառում ուրիշների պէս, պատճառն այն է, որ մենք տեսել ենք Տանկաստանի «ազատութիւնը», որ այնքան աղէտաւոր եղաւ մեզ համար:

Տանկաստանի եւ Պարսկաստանի ազատութիւններն անկայուն եղան, որովհետեւ նրանց կողքին ապրում էր բռնապետական Ռոսաստանը, որ խանդարում էր նրանց: Հիմա այդ բռնապետութիւնն այլեւս չկայ, եւ ռոսական ազատութիւնը ազատութիւն է բերում ո՛չ միայն Ռոսաստանի ներքին ժողովուրդներին, այլեւ բոլոր տեղերի համար: Ռոսական յեղափոխութիւնը սկիզբն է սոցիալիստական յեղափոխութեան, որ մօտալուտ է եւ որ ծայր տուեց համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրում:

Պատերազմի սկզբին ամէն տեղ սոցիալիստական կուսակցութիւնները գէնքեր առած դիմեցին հայրենիքի պաշտպանութեան: Հայրենիքը վտանգուած էր, պէտք էր նրան պաշտպանել, եւ մի պահ վերացան բոլոր դասակարգային շերտաւորումները, եւ բոլոր դասերն անխտիր նետուեցին պատերազմի գիրկը: Թւում էր, թէ սոցիալիստական շարժումը ֆայֆայում է, քում էր, թէ աշխատաւորութեան ուժի վերջն է հասել, եւ ինտերնասիոնալը այլեւս կորցրել է իր հմայքը: Իրականութեան մէջ, սակայն, այդպէս չեղաւ. պատերազմի ընթացքին սոցիալիստների ազդեցութիւնն աւելի մեծացաւ. նրանք մտան կառավարութեան մէջ եւ ազդեցիկ գործօն դարձան, այնքան ազդեցիկ, որ այլեւս վնասակար դեր են խաղում ֆաղաֆական դէպքերի վրայ:

Նոյնը պատահեց եւ Ռոսաստանում: Պատերազմի սկզբին ամէն բան իրար խառնուեց. սոցիալիստն ու բուրժուան միացան միեւնոյն բանակի մէջ դիմադրելու համար գերմանական զրոհին: Բայց շուտով դեմոկրատիայի նշանակութիւնն այնչափ անեց, որ այլեւս պատերազմի յաջողութիւնն ամբողջապէս նրանից կախուեց: Ցարական կառավարութիւնը, որ առաջ էր բերել պատերազմը, յանկարծակիի եկաւ եւ ստիպուած էր ընտրութիւն անել երկու կարելիութիւնների մէջ. կա՛մ ետ ֆաշուել եւ անպատիւ հաշտութիւն կնքել թշնամու հետ եւ կամ ընդունել աշխատաւորութեան ազդեցութիւնը: Նա ընդունեց առաջինը եւ փորձեց վերջացնել պատերազմը, բայց այլեւս ուշ

էր: Ժողովրդի ցասումը հասել էր իր գագաթնակէտին, եւ յեղափոխութեան փոքորիկը սրբեց տարաւ բռնապետութեան ամենավերջին հետեբերը: Ռուս միապետութիւնը ինքն իրեն տապալեց:

Ի՞նչ եղաւ հայ ժողովրդի դերը այս իրադարձութիւններէ մէջ: Նա առանց տատանումի իր համակրանքն ու յոյսերը կապեց դեմոկրատական սկզբունքներէ պաշտպան դաշնակիցներէ հետ: Հայ յեղափոխական տարրերը գգում էին այն անմասնալ դրութիւնը, որ իրենք ստիպուած են ռուս բռնապետութեան հետ միասին գործել յանուն դեմոկրատիայի ոտնակոխ եղած իրաւունքներէ: Բռնապետութիւնը տապալուեց, եւ հայ ժողովուրդը նորից գտաւ իր դէմքը:

Այս պատերազմի ընթացքին առանձնապէս ծանր եղաւ տանկահայերի վիճակը. բայց նա էլ ամենապատուաւոր կերպով բռնեց դժուար բնութիւնը: Նա հրապարակ դուրս եկաւ որպէս դեմոկրատիկ գաղափարներով տոգորուած եւ ազատատենչ մի տարր, որ գոհաբերուեց քաղաքացիութեան սեղանի վրայ: Աշխարհաւեր պատերազմը սարսափելի եղաւ մեր ժողովրդի համար, բայց եւ այնպէս, այսօր էլ, ինչպէս երէկ, մեր առաջին գործը պէտք է լինի նպաստել պատերազմի յաջողութեան, որովհետեւ դրա մէջ է ազատութեան ապահովութեան գրաւականը:

Պատերազմի ընթացքին հայ ժողովուրդը ցոյց տուեց մարտական բարձր ընդունակութիւններ, եւ նրա ներկայացուցիչները մեր մէջ են — Արամը, Ռուբէնը, Վահանը — ողջոյն նրանց (*դա՛շլիճը թնդում է ծափերից*): Ողջոյն նաեւ մեր հերոս կամաւորներին եւ նրանց խմբապետներին, որոնցից մի քանիսը նոյնպէս հիմա մեր մէջ են (*բուռն ծափեր*): Չմոռանանք եւ այն ծանր կորուստը, որ մենք ունեցանք այս երկու ու կէս տարուայ ընթացքին — Քեռին, Խէչոն, Աւոն, Կոթիւնը, Մոնոն, Արտաշէսը, Իշխանը եւ ուրիշ շատ շատերը, որոնք ընկան կռուի դաշտում (*Ժողովը յոտնկայս յարգանք է մատուցանում*):

Ես յիշում եմ այն հիացկոտ խօսքերը, որ մեզ էր ուղղում 1903ին յայտնի սոցիալիստ-յեղափոխական Մինորը, ի տես այն անմեղ անձնագրողութեան, որ ցոյց էր տալիս հայ երիտասարդութիւնը, որը անվանելի մի գործութեամբ դէպի երկիր էր վազում՝ մեռնելու համար ազատութեան ցանապարհին. Մինորը քացազանչում էր. — «Ի՞նչ է սրա պատճառը, ո՞րն է այն ուժը, որը այսօր հերոսներ է ստեղծում ձեր մէջ: Մենք այնքան ուժ ու եռանդ ենք վատնում եւ հագրւում մի քանի հերոսներ պատրաստում, ինչպէ՞ս է որ ձեր կէս գրագէտ, հասարակ երիտասարդները այդպիսի անձնագրողութիւն են ցոյց տալիս»:

Այն ժամանակ որոշ քացատրութիւն էինք տալիս Մինորին, բայց այժմ ինձ համար էլ անհասկանալի է. — ո՞րտեղից են այս հերոսները, ո՞րն է այն գործութիւնը, որ առաջ է բերում Քեռիի եւ Խէչոյի պէս բարոյական տիտաններ:

Ընկերներ՝, մեր նահատակներին յիշելիս ես ուզում եմ մի հին նահատակի յիշատակն էլ յարգել — Քրիստափորի, որը առաջին անգամ՝ 1884ին բռուցիկ հրատարակեց ռուս կառավարութեան դէմ (*Ժողովը լուռ ոտքի է*

*կանգնում*): Ես յիշում եմ նաեւ առաջին բանուոր յեղափոխականին — ընկեր Միխայէլ Խոջայեանին — մեր բանուոր Մեխակին, որը ցրեց Քրիստափորի տպած բռուցիկները (*սրտորնդոսս ծափեր*):

Ընկերներ՝, ու քսուական յուսկաններէց հայ ինտելիգենցիայի տրամադրութիւնն այս էր, թէ ոչինչ պէտք չէ խօսել ու գրել ռուս կառավարութեան դէմ: Եւ 1892ին Սիմոն Զաւարեանը եղաւ, որ կարողացաւ յաջողացնել «Իբօրակ»ի մէջ յողուած տպելու ռուս կառավարութեան դէմ: Յարգա՛նք նրա յիշատակին (*բողորր սարի են կանգնում*):

Այնքան շատ են մեր հերոսներն ու նահատակները, որ հնար չկայ բոլորին բուռնելու: Ես կ'ուզեմայի, որ նրանց ոգին մեր մէջ լինէր. այս օրերին մենք չկորցնենք մեզ: Ես կ'ուզեմայի, որ Դաշնակցութիւնը, ինչպէս Սիմոն Զաւարեանն էր սիրում ասելու, «Հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանը լինէր»:

Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունենք ազգովին վըտանգուելու հոգսը, եւ մենք չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անգամ, երբ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալու ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա բուրժուական է, կղերական: Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի վտանգուելու վայրը կայ, մեզ մեղադրողները իրենք են դուրս եկել ազգովին գործելու: Ես կը կամեմայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք էր ժամանակ պաշտպանէր ազգի շահը, ինչպէս այդ անում են այսօր անգլիացի եւ ֆրանսիացի սոցիալիստները:

Չեմ տանք միւս յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւններին եւ առաջ գնանք: Եւ յոտնկայս յարգենք յիշատակը այն մարտիկների, որոնք ընկան Ռուսաստանի ընդհանուր ազատութեան համար»:

«ՀՈՐԻՉՈՆ», 9 Ապրիլ 1917

«ԻՐՕՇԱԿ», № 8-10. Օգոստոս-Հոկտեմբեր 1926

## ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄԸ (\*)

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կնքուած Սան Ստեֆանոյի դաշնագրով, Բուլղարիայի իշխանութեան կազմի մէջ պէտք է մտնէին նաեւ Արեւելեան Ռումելիան ու Մակեդոնիան:

Այսպիսի ընդարձակ տարածութիւն եւ բաւական խիտ բնակչութիւն ունեցող մի նոր պետութեան կազմութիւնը չէր կարող, ի հարկէ, համապատասխանել Յունաստանի, Սերբիայի, Ռումանիայի, Չերնոգորիայի, անգամ Բալկաններէ վերաբերմամբ սեփական հաշիւներ ունեցող հեռուոր Աւստրիայի շահերին: Նման մի պետութիւն շատ շուտով կարող էր դառնալ աւելի գորաւոր ոչ միայն Սերբիայից ու Յունաստանից, այլեւ Ռումանիայից, եւ լուրջ արգելք հանդիսանալ Սերբիայի կամ Աւստրիայի յառաջխաղացման դէպի էգէյեան ծովը: Բացի այդ, վախ կար եւ Ռուսաստանի ուժեղացումից, որի մուտքը Վուսիոր իր ազատած երկրների վրայով թոււմ էր այն ժամանակ ապահովուած, իսկ որ այդ երկրները պիտի լինէին հլու գործիք ազատարար Ռուսաստանի ձեռքին, այդ եւս ոչ մի կասկածի չէր ենթարկուում այն ժամանակ: Ուստի եւ, այլազան շահերի համաձայնեցման նպատակով, Բերլինի վեհաժողովում որոշուել էր Բուլղարիայի Սան Ստեֆանոյի դաշնագրով գրծուած սահմաններից հանել Արեւելեան Ռումելիան ու Մակեդոնիան եւ վերադարձնել Թուրքիայի իշխանութեան:

Այդ երկու նահանգները, սակայն, միատեսակ աննպաստ պայմանների մէջ չընկան: Արեւելեան Ռումելիան աւելի բախտաւոր դուրս եկաւ. նրան

(\*) Յայտնի է, որ Բալկանեան ազգերի ազատագրական պայքարը մեծ ազդեցութիւն է արել Հայ յեղափոխութեան ռահվիրաների մտքերի վրայ: Բուլղարիայի ազատագրումով Բալկաններում, Սուլթանի լծի տակ, մնացել էին միայն Արեւելեան Ռումելիան, Մակեդոնիան եւ Ալբանիան. այս վերջինս՝ հնազանդ փատիշահ Արղուլ Համիտին: 1885ին Արեւելեան Ռումելիան փաստօրէն միացուեց Բուլղարիային. մնաց միայն Մակեդոնիան անազատ: Եւ բնական կերպով ծնունդ առին մակեդոնական հարցը եւ մակեդոնական յեղափոխական շարժումը, որը, հենց սկզբից, իր վրայ գրուեց զաշնակցական գործիչների ու շարժութիւնը: Դաշնակցական-մակեդոնական գործակցութիւնը շուտով դարձաւ իրականութիւն:

Ռոստոմը ամենից շատ հետաքրքրուել ու զրազուել է մակեդոնացիներով: Նրա Բուլղարիա հաստատուելու պատճառներին մէկն էլ այդ էր: Նրա ջանքերով առաւելապէս գլուխ եկաւ պաշտօնական համագործակցութիւնը Դաշնակցութեան եւ Մակեդոնական յեղափոխականների միջեւ: Զ. Յ. Դաշնակցութեան Դիւանում (թիւ 1877) մնացել է Ռոստոմի ռուսերէն լեզուով գրած մէկ յոդուածի ձեռագիրը, զժրախտարար, անաւարտ: Յոդուածը՝ գրուած է 1904ին, նուիրուած է մակեդոնական շարժման եւ, ըստ երեւոյթին, պատրաստուել է ռուսերէն պարբերականի համար: Այստեղ դնում ենք այդ յոդուածի թարգմանութիւնը, որպէս Ռոստոմից մնացած թանկագին մի նշխար: Նա ունի եւ պատմական արժէք, հայ-մակեդոնական շարժման համեմատութեան տեսակէտից:

ԽՄԲ.

չնորհուեց տեղական ինքնավարութիւն. նա կառավարոււմ էր առանձին ընդհանուր-նահանգապետի միջոցով, որին թէեւ Բարձր Դուռն էր նշանակոււմ, բայց անպայման մեծ պետութիւնների համաձայնութեամբ. ունէր սեփական ժանդարմերիա, երկրապահ զօրք, սեփական ժողովրդական ներկայացուցչական ժողով եւ այլն: Այս առաւելութիւնների շնորհիւ, այլեւ իբրեւ հետեւանք թուրք դիւանագիտութեան գործած աներեւակայելի կուպիտ սխալի — մի սխալ, որ գրկեց Թուրքիան ինքնավար շրջանում զօրք պահելու ամէն հնարաւորութիւնից, — ռումելիացիների համար դժուար չէր հինգ-վեց տարի անցած վնասական ու համարձակ մի հարուածով խորտակել թրքական լուծը: Ըստ Բերլինի դաշնագրի մի յօդուածի Սուլթանին իրաւունք էր տրուում սեփական ամրութիւններ կառուցանել Արեւելեան Ռումելիայի եւ Բուլղարիայի իշխանութեան սահմանների վրայ եւ զօրք պահել այնտեղ: Բայց անմիջապէս յետոյ, մի ուրիշ յօդուածով, բացարձակ կերպով արգիլոււմ էր թրքական զօրքերին դէպի այն ամրութիւնները անցնելիս *կանդ առնել* որեւէ տեղ ինքնավար նահանգում: Այս պայմաններում, բուլղարիական սահմանների վրայ ամրոցներ շինել, զօրք փոխադրել այնտեղ, կայ պահել զօրքի հետ հնարաւոր պիտի լինէր գուցէ օղապարիկներով միայն:

1885ին. յայտնի բուլղար հայրենասէր-յեղափոխական Ջաֆարիա Ստոյանովի նախագահութեան տակ Ֆիլիպէում հիմնուեց մի գաղտնի յեղափոխական կոմիտէ, որ շուտով տապալեց Արեւելեան Ռումելիայի ընդհանուր-նահանգապետ կրեստովիչին, եւ նոյն օրը կազմուած ժամանակաւոր կառավարութիւնը շտապով հրաւիրելով Բուլղարիայի իշխան Ալեքսանդր Բատենբերգին՝ յայտարարեց Արեւելեան Ռումելիան միացած Բուլղարիայի հետ: Ռումելիայի յեղաշրջման յաջորդող սերբ-բուլղարական պատերազմը եւ բուլղարների փայլուն յաղթութիւնը միայն արագացրին կատարուած փաստի նախաշումը Բալկանեան թերակղզու վրայ: Մէկ ամիս դեռ չէր անցել խաղաղութեան վերջնական հաստատումից յետոյ, որ Սուլթանը համաձայնուեց նախաչել բուլղար իշխանին միաժամանակ ե՛ւ Արեւելեան Ռումելիայի ընդհանուր-նահանգապետ: Այսպիսով, Արեւելեան Ռումելիայի, կամ, ինչպէս բուլղարներն իրենք են ասում, Հարաւային Բուլղարիայի միացումով Հիւսիսային Բուլղարիային, փաստօրէն իրականացաւ այն, որ սահմանուած էր Ռուսաստանի կողմից Սան Ստեֆանոյում:

Բայց մնում էր դեռ Մակեդոնիան: Ռուս-թրքական պատերազմից առաջ նա միւս նահանգներից ոչ պակաս տառապել էր թրքական լծի տակ. միւսների հետ համահաւասար մասնակցել էր ազատագրական պայքարին, բայց ինչ որ դիւանագէտների ինչ որ քաղաքական նկատումներով պէտք է նորից ընկնէր Սուլթանի ատելի լծի ներքեւ, մինչդեռ հիւսիսային նահանգները ազատոււմ էին նրանից՝ մասամբ կամ լրիւ կերպով: Եթէ մակեդոնացիները բնաւ տեսած չլինէին ազատ, աւելի լաւ օրեր, անընդհատ շարունակուող սովորական ճնշումը պակաս զգալի պիտի լինէր: Բայց տասնեակ տարիներով փայփայտած ազատութիւնը ունենալ, յաղթանակ տօնել դարաւոր թշնամու վրայ, նոր կեանքի ծրագիրներ կազմել, վերջապէս, մարդ զգալ իրեն եւ ոչ թէ իրաւագուրկ ստրուկ եւ վերջը տեսնել ամբողջ շէնքի փլուզու-

մը, նորից ընկնել շուն-գեպուրի վիճակի մէջ, դիւրին չէր տանել այս հարուածը: Բերլինի վեհաժողովի որոշումների այս ձեւի սրբագրումը ընդհանուր վրդովում առաջ բերեց ամբողջ նահանգում. հայդուկների խմբերը նորից գէնի ձեռք առին եւ քառուցին անտառներն ու լեռները՝ գերադասելով մեռնել այնտեղ, քան քէ շարունակել վկայ լինել քրեական տիրապետութեան ամօթանքին:

Այն էլ պէտք է ասել, որ Մակեդոնիան բալթովին իրաւագրկուած չէր. Բերլինի վեհաժողովում նրան խոստացուել էին գրեթէ նոյն ձեւի բարեկարգումներ՝ ինչ որ մշակուած էին կրեմլի համար (1868ի օրգանական կանոնագիր): Բարձր 'Կուր պարտաւորում էր անյապօղ յատուկ յանձնախմբեր կազմել՝ լայն ներկայացուցչութեամբ տեղական տարրերի՝ նոր կանոններ մշակելու իրաւանչիւր նահանգի վարչութեան համար: Այդ յանձնախմբերի կազմած նախագծերը հրատարակու թիւնից ու գործադրութիւնից առաջ պէտք է քննէր ու վաւերացնէր Արեւելեան Ռումելիայի համար ստեղծուած եւրոպական յանձնախումբը:

Չուր է ասել, որ մակեդոնացիներին այլ բան չէր մնում, բայց եթէ հնագանդուել նակատագրին եւ յոյս տածել, որ գոնէ բարեկարգումները կը գործադրուին եւ իրենք գոնէ մասամբ հնարաւորութիւն կը ստանան ազատուելու թուրք պաշտօնեաների կամայականութիւններից եւ այլանական արագակախմբերի շահատակութիւններից: Չէ՞ որ Թուրքիան չէր որ խոստացել էր բարեկարգումները, այլ Բերլինի վեհաժողովը եւ նրանց գործադրութիւնը երաշխաւորել են ոչ թէ մէկ, այլ ամբողջ վեց պետութիւններ, որոնց համար դժուար չէր լինի պատժել Թուրքիան, եթէ նա յանդգնէր խուսափել վեհաժողովի որոշումներից: Վերջ ի վերջոյ, նահանգի ապագայ կառավարութեան մէջ տեղական տարրն էլ ձայն պիտի ունենար, ուրեմն եւ հնարաւորութիւն պիտի ստեղծուէր բոլոր յայտնելու եւ իրաւունք պաշտպանելու...

Որ մակեդոնացիք իրենց այս ակնկալութիւնների մէջ էլ սխալուեցին, որ բարեկարգումները մնացին մեռած տառ եւ *պէտք* պետութիւնների երաշխաւորութիւնները ոչնչով չէր սպառնում Թուրքիային, այլ աւելի վնաս էր հասցնում մակեդոնացիներին, այդ յայտնի է ամէնքին, եւ մենք աւելորդ ենք համարում կանգ առնել այն կատակերգութեան վրայ, որ խաղաց Թուրքիան իր այլազան փորձերով՝ մտցնելու համար շարաքաստիկ բարեկարգումները: Մենք յոյս ունինք, որ առիթ կ'ունենանք քննելու յատկապէս այն հարցը, թէ Սուլթանի կառավարութիւնը որքան անկեղծութեամբ է ձգտում մտցնելու այս կամ այն բարեկարգումները, աւելի է ասել՝ ինչքան նա *ընդունակ* է, որքան *ի վիճակի* է մտցնելու, առանց եւրոպական այս կամ այն պետութեան միջամտութեան:

Սակայն, բարական չէր, որ բարեկարգումները չէին մտցուում, պայմանները մակեդոնացիների համար աւելի եւս վատթարացան: Թուրք կառավարութիւնը, հարպիկ կերպով օգտուելով վեց պետութիւնների անհամաձայնութիւնից, շտապեց կիրառել մի շարք միջոցներ, վերջնականապէս խեղդելու հարցը: Հարկ էր, որքան հնար է, տկարացնել քրիստոնեայ բնակչութիւնը, գրկել նրան մտաւորական ուժերից, քայքայել տնտեսապէս, մի խօս-

ժով՝ այնպիսի վիճակի հասցնել, որ մէկ անգամ ընդ միշտ կորցնէ ամէն յոյս եւ այլեւս չհրազէ բարեկարգումների մասին:

Այն՝ բարեկարգումներ մտցնում էին, բայց միայն սեփական, բըր-բական բարեկարգումներ: Եւ եթէ ընթերցողը քիչ-շատ հետեւել է լրագիրների Մակեդոնիայից հաղորդած լուրերին, նամբորդների բերած տեղեկութիւններին, պետութիւնների ներկայացուցիչների պաշտօնական հաղորդագրութիւններին, դիւրութեամբ կարող է գաղափար կազմել այս դժոխքի մասին, որի մէջ ապրել է եւ ապրում է Մակեդոնիայի տանջուած բնակչութիւնը:

Հարկ ենք համարում աւելացնել նաեւ, որ բացի այն վարչական միջոցներից, որոնք մշակուում են բարձրագոյն շրջաններում գիտակցորէն տկարացնելու համար քրիստոնեայ տարրը, բացի այդ միջոցներից, որոնց դէմ գլխաւորապէս ուղղուած են բողոքող մամուլի յարձակումները, անկատելի, բայց աւելի ծանր բեռ են քրիստոնեայ բնակչութեան համար այն գործօճները, որոնք հետեւանք են թուրք կառավարութեան ողորմելի վիճակի, այսպէս ասած՝ նրա ներկայ գոյութեան հետ օրգանապէս կապուած ազդակները: Այդ ազդակներն ահա հանդիսանում են այն ամուր հիւմը, որի վրայ պիտի հաստատուին վերեւ յիշուած վարչական միջոցները:

Այս ամէնը աչքի առաջ ունենալով՝ բնական էր սպասել, որ Մակեդոնիայի քրիստոնեայ բնակչութիւնը, յուսահատուած արտաքին օգնութիւնից, ինքը պիտի մտածէր իր ապագայի մասին եւ սեփական ուղիներ փնտռէր դաւաւոր լծից ազատուելու համար:

Այս խմորումը գորացաւ եւ աւելի որոշ ձեւ ստացաւ Ռումելիայի յեղաշրջման յաջող գործադրութիւնից յետոյ: Մակեդոնացիները չէին կարող հասկանալի նախանձով չնայել իրենց աւելի բախտաւոր եղբայրների վրայ, որոնք դեռ շատ առաջ չէր, որ իրենց հետ բաժանում էին արհամարհուած ռայայի բնդհանուր դառն նակատագիրը: Նրանք չէին կարող չհետեւել այն ուղիներին, որոնք բացել էին Ֆիլիպէի եւ այլ գաղտնի կոմիտէները: Միւս կողմից, ազատ եւ միացեալ Բուլգարիայի ժողովուրդն էլ անտարբեր չէր Ռիլայի միւս կողմը գտնուող իր եղբայրների վիճակի հանդէպ: Այսպիսով՝ թէ՛ բուն Մակեդոնիայում եւ թէ՛ Բուլգարիայում սկիզբն առաւ եւ հետզհետէ ձեւաւորուեց նոր՝ *մակեդոնական* շարժումը, ծնունդ առին մակեդոնական կոմիտէներն ու ընկերակցութիւնները:

Սեփական կազմակերպութիւն ունենալու անհրաժեշտութիւնը մակեդոնացիների համար ստիպողական էր եւ ուրիշ պատճառով: Նախընթաց դէպքերը ցոյց տուին, որ մակեդոնացիները ստիպուած էին գործ ունենալ ոչ միայն թուրք կառավարութեան, այլեւ իրենց համար բալթովին մի օտարոտի տարրի հետ, որ Թուրքիայի ձգտումների կողքին ասպարէզ էին դուրս գալիս Սերբիայի, Յունաստանի, Ռումանիայի, Աւստրիայի եւ ուրիշների յաւակնութիւնները: Անհրաժեշտ էր մակեդոնական հարցում շահագրգռուած բոլոր կողմերի ձգտումներին հակադրել սեփական ձեւակերպուած կամքը, հարկաւոր էր սեփական ուժ կազմակերպել՝ քաղաքական այս կամ այն բարդութիւնների դէպքում դիւանագիտութեան ձեռքին խաղալիք չդառնալու համար: Եւ ահա Բալկանեան թերակղզու քաղաքական հորիզոնի վրայ, կամաց-

կամաց, գլուխ է բարձրացնում մի նոր ուժ, որը ներկայումս ստիպուած են հաշուի առնել ոչ միայն հարեան, այլև հեռուոր երկրները:

Նախապէս այդ ուժը հագիւ նկատելի էր. սակաւ անգամներ եւ դժկաւմակութեամբ արժանացնում էին նրան ուշադրութեան: Նրա խաղաղ յայտարարութիւններին, պարբերական յուշագրերին, անդադար յիշեցումներին գործադրուող գագանութիւններին եւ խոստացուած բարեկարգումների մասին, վերջապէս, նրա սպասուելիքներին զինուած բողոքի անցնելու — այդ ամէնի շատ էիջ կարեւորութիւն էր տրուում: Աննկատ էին անցնում նաեւ առանձին խմբերի պատահական ընդհարումների գանազան դէպքեր, առանձին անհատների սխրագործութիւնները եւ հերոսական անձնագոհութեանց բազմաթիւ օրինակները, նոյնիսկ այն ժամանակ, երբ կատարուեցին խօսքից գործի անցնելու առաջին լուրջ եւ կազմակերպուած փորձերը, երբ սկսուեցին զինուած խմբերի կանոնաւոր գործողութիւնները փոխ-խմբապետ Եանկովի, գորավար Սոնչեւի, կապիտան Պրոտոգերովի դեկաւարութեան տակ, 1901 եւ 1902 թուականներին, նոյնիսկ այդ ժամանակ չհասկացուեց մակեդոնական շարժման իրական նշանակութիւնը: Տարօրինակ կերպով համարեա թէ ամէնէն հակամէտ էին բացատրելու այդ շարժումը ո՛չ թէ իբրեւ մակեդոնացի ժողովուրդի իսկական բողոքի արտայայտութիւն, այլ բոլգարական քարոզիչների դրդումով ինչ որ կողմնակի, անհատական նպատակներ հետապնդող մի երեւոյթ: Կարծում էին թէ բաւական է ազդու ննչում բանեցնել բոլգար կատաւարութեան վրայ, եւ քարոզիչների սադրանքները, հետեւաբար եւ սկսուած շարժումները, վերջ կը գտնեն: Բայց անցեալ տարուայ ծայր առած ընդհանուր ապստամբութիւնը, որ տարածուեց ամբողջ Մակեդոնիայում եւ նրա սահմաններից էլ դուրս, Ադրիանոպոլիսի վիլայէթը անցաւ, պարզ կերպով ցոյց տուեց, թէ ինչպէս խորունկ կերպով սխալուած էին թշնամիները — եւ նոյնիսկ բարեկամները — մակեդոնական շարժման ծաւալի եւ ուժի մասին: Յիշեմք, որ այդ շարժումը նշանաւոր եղաւ ոչ միայն բազմաթիւ եւ զինուորական գործում հմուտ խմբերի հերոսական եւ երկարատեւ կռուով, այլև ապստամբութիւնների պատմութեան մէջ նախընթացը չունեցող ռումբերի եւ սկանների անվերջ պայթիւններով:

1903ի ապստամբութիւնից յետոյ, որ ոտքի հանեց մինչեւ 300,000 թըրքական զօրք եւ էիջ մնաց զինուած բախում առաջ բերէր Բոլգարիայի եւ Թուրքիայի միջեւ, գործերը Մակեդոնիայում որոշ չափով փոխուել են: Այժմ արդէն այնտեղ է գտնուում իտալական մի զօրավար տեղական ժանդարմերիայի կազմակերպութեան համար. այնտեղ հաւաքուել են նաեւ օտար սպաններ, որոնք պէտք է տեղում պաշտօններ ստանան: Սելանիկ են գալիս նաեւ երկու քաղաքացիական գործակալներ, եւ ինքն հալիլ փաշան կաշուից դուրս է գալիս՝ ցոյց տալու իրեն «իսկական» բարեկարգիչ: Նիշդ է, դեռ ոչ մի գործ չի կատարուել. հաւաքուած կազմակերպիչները ժամանակ են անցկացնում թուրք բարեկարգիչների հետ ժողովներ գումարելով. դեռ համաձայնութիւն չէ կայացել այնպիսի կարեւոր հարցի մասին, թէ, օրինակ, թրքական ծառայութեան մէջ գտնուող եւրոպացիները ի՞նչ պիտի կրեն՝ թըրքական ֆէ՞ս, թէ եւրոպական գլխարկ: Բայց եւ այնպէս, հաւատում են, որ

Միւնցշտեգի համաձայնութեան կէտերը պիտի գործադրութեան դրուին: Միտրարական է նկատում այն, որ *առաջին* փայլ տեսնուած է, եւրոպական իրական միջամտութեան, թէեւ շատ համեստ, *սկիզբը* դրուած է:

Արդ՝ ի՞նչ է լինելու յետոյ: հաղաղ կ'անցնի՞, միջամտութեան առաջին փայլերը նոր բարդութիւններ առաջ չե՞ն բերի. չե՞ն պահանջուի պետութիւնների կողմից աւելի գործօն փայլեր: հալիլ փաշան արդեօք չի՞ դառնայ մի երկրորդ Միդիաս փաշա, որ ազատաբար պատերազմի նախօրեակին Բոլգարիայում բարեկարգիչ դեր էր կատարում, եւ արդեօք ներկայ դէպքերը չե՞ն յիշեցնում Բոլգարիայի եւ կրետէի ազատութիւնից առաջ պատահած դէպքերի պատմութիւնը: Թէ՞, մի գուցէ, Եւրոպան կը նահանջէ, եւ այս ամէնը կը վերջանայ գաւեշտով կամ աւելի վատ՝ ողբերգութեամբ...

Ահա հարցեր, որոնք կանգնած են այսօր մակեդոնական գործիչների առջեւ:

«Հ. Ե. Դ. ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ», Պոսթըն, 1950

### ՀԱՅ - ՎՐԱՅԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յ. Գ. Կենտրոնական Դիտանում, Ռոստոմի նամակների և ձեռագիրների շարքում, պահուցիչ է և այս դրուածքի բնագիրը: Երեք մեծագիր չորս էջնոց թերթեր՝ դրուած Ռոստոմի պարզ ու յստակ գրչով: Տեղ-տեղ ջնջուած ու բարեփոխուած: Ոչ վերնագիր ունի, ոչ տարեթիւ և ոչ ստորագրութիւն: Ե՞րբ է գրուած, ի՞նչ ճակատագիր է ունեցել գրուածքը, — յայտնի չէ: Սակայն բնօրինակու տպագրութիւնը այն է, որ դրութիւնը յատկացուած է «Դրօշակ»ին՝ Տրատարակուելու Կովկասից գրուած նամակի ձեւով: Արդեօք իրօք Կովկասի՞ց է գրել Ռոստոմը, թէ հենց ժրնելում, — այդ էլ կարելի չէ ասել:

Գրութեան բովանդակութիւնից երևում է, որ «նամակ»ը գրուած է այն օրերին, երբ Հայ-վրացական բանակուր ասանձնապէս սուր հանդամանք էր ստացել շնորհիւ Գոյի-ցինեան ազգամիջեան կրքերը հրահրող քաղաքականութեան: Ռուսաստանի առաջին յեղափոխութեան նախորդող տարիներն էին դրանք, երբ Քիֆլիսի ռուս և վրացի մամուլի մէջ շահատակութիւններ էին տնում վերջնական և Ակակի Մերեթելիներէ տիպի հայակեր ասպետներ:

Ռոստոմը հայ-վրացական փոխարարութիւնների հարցը դնում է սկզբունքային հոգի վրայ, քննում պատմական, ընկերային-քաղաքական մեկնակէտից ելնելով և իրեն յատուկ յատկամտութեամբ ներկայացնում է Հ. Յ. Գրանակցութեան տեսակէտը: Բնորոշ է մասնատրական նիւթի հարցադրութեան և գարդացման եղանակը-մեթոդը, որ իր մէջ խտացնում է Ռոստոմի իւրայատուկ «մարքսիզմը»: Ռոստոմը խորքով, անշուշտ ազդուած էր մարքսիստական աշխարհահայեացքից, բայց գտարին մարքսիստ նրան, ի հարկէ, համարել չի կարելի, ինչպէս գտարին նորոգիկ չէր և Քրիստոսիօրը: Եւս առաւել անհեթեթութիւն է «անխիտանական» կամ, մանուսնդ, «նեչայեւեց» ցոյց տալ Ս. Զաւարեանին: Հ. Յ. Գրանակցութեան հիմնադիր երրորդութիւնը, անտարակոյս աւելի կամ պակաս չափով ազդուել են Լեւոպական և Ռուսական այս կամ այն քաղաքական դպրոցի ուսմունքից, բայց նրանց գլխաւոր առաւելութիւնը հենց նրանումն է, որ, ոչ յօրինակ հնչական հիմնադիրներէ, մեկնել են Հայ իրականութեան ասանձնայատուկ պայմաններից, կարողացել են մշակել ու ձեւակերպել որոշ չափով ինքնուրոյն աշխարհահայեացք և ընկերային-քաղաքական սեփական դադափարափօսութիւն:

Հայ-վրացական փոխարարութիւնների խնդիրը, այնպէս ինչպէս ներկայացնում է Ռոստոմը, ըստ էութեան այսօր էլ մնում է իր ուժի մէջ, սակայն, կարելի չէ չընդունել, որ Ռոստոմը խնդիրը չի առել բովանդակ ծաւալով: Դասակարգային բացարթութիւնը, անշուշտ, ճիշդ է, բայց ամբողջ ճշմարտութիւնը չէ: Խնդրի մէջ կան և ներքին-պատմական պատճառներ, երկու ժողովուրդների քաղաքական ճակատագրի բաժանման և քաղաքական հակումի նկատմաներ, և, ի հարկէ, նաև ռուս կառավարութեան քաղաքական դաւերը եւայլն: Այսօր, նոր դէպքերի ու փաստերի լոյսի տակ, Ռոստոմի հիմնական միտքը կարելի է շատ աւելի լայնացնել ու խորացնել:

Այդուհանդերձ, Ռոստոմի գրութիւնը մեծապէս շահեկան է, ոչ միայն լոկ իրրեւ պատմական վաւերագիր, այլև որպէս զործնական արժէք ներկայացնող գրուածք:

#### Ս. ՎՐԱՅԵԱՆ

\*\*

Այս նամակը վաղուց է գրուած, ռուս մամուլի և վրաց հասարակութեան որոշ մասի «ազգասիրական» արշաւանքը համարեա՛ թէ դադարել է,

ռուս կառավարութիւնը արդէն «խեղդում է տանկահայերի և ռուսահայերի մէջ ծագած առաջադիմական շարժումը» (մենք մեր կողմից այդ, ի հարկէ, չենք վերագրում ռուս և մանուսնդ վրաց ազգասէրների արշաւանքին): Բայց մենք գիտենք, որ իրենց ազգի շահերի համար անձր չխնայող այդ հաստատակամ գաղափարական գործիչները մի քիչ շունչ առնելով նորից կը բարձրացնեն իրենց ազգասիրական կոկոնցը և նորանոր, աւելի անմիտ անասպելներ հնարելով՝ կը պղտորեն նորից միամիտների մտքերը, աշխատելով ցոյց տալ, թէ իրենք են ազգի միակ արքուն հովիւները և թէ առանց իրենց ազգի շահերը բոլորովին ռուսատակ կը լինեն:

Ռուս քրու ազգասէրների արշաւանքին մենք վաղուց ենք բնութեացել, ինչպէս և Ռուսաստանում ապրող միւս ազգութիւնները: դրանց բնութեացել է և ըստ արժանւոյն գնահատել և ռուս հասարակութիւնը, որի լաւագոյն մասը ատելով ատում է այդ ուղղութիւնը: Սակայն, մեզ համար անսպասելի էր և միանգամայն ցաւալի՝ մեր հարեւան վրաց հասարակութեան անմիտ յարձակումը և այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ մենք աչք չէինք կարողանում բաց անել մեր գլխին թափուող հարուածներից, երբ մենք «աւելի քան երբեւիցէ կարօտ էինք պաշտպանութեան»: Վրաց ինտելիգենցիան մոռացաւ իւր «ասպետական բնաւորութիւնը», մոռացաւ իւր ազգի իրական շահերը և տարաւ իւր արշաւանքը ամէն կողմից՝ թէ՛ բերանացի, թէ՛ իւր մամուլի միջոցով և թէ ռուս խաւարամիտ մամուլին նիւթ մատակարարելով: Վրաց հասարակութեան մէջ եղան եղակի, բոյլ, հակառակ ձայներ, բայց չգտնուեց մէկը, որ ասպարէզ դուրս գար և խիստ կերպով բողոքէր այդ անտեղի արշաւանքին դէմ: Վրաց հասարակութեան լաւագոյն մասը ինքն էլ կ'ամաչի (եթէ միայն չի ամաչել) այդ անմիտ, անտակտ, փոխադարձ ազգային ատելութիւն գրգռող քայլից:

Այս ի՞նչ արշաւանք է, ի՞նչ են պահանջում հայերից ռուս և վրաց ազգերի անուրից ճառող ինքնակոչ փաստաբանները, ի՞նչ թշնամութիւն կարող է լինել այդ ազգերի մէջ: «Հայերը վաշխառուներ են, նրանք անխիղճ կերպով հարստահարում են հարեւան ազգերին, իրենց ձեռքն են ձգել առեւտուրը, յափշտակել են ամէն ինչ, մինչեւ իսկ... ուղղափառների սրբավայրերը (ա՛խ, չարագործներ)»:

Նախ և առաջ, նի՞շտ է արդեօք այս բոլորը: ճի՞շտ է, որ հայերը կովկասում յափշտակել են ամէն ինչ: Նրա՞նք են միայն երկրի միակ հարստահարիչները: Նոյն ռուսները, վրացիները, մանուսնդ իմերելները վաշխառուներ չե՞ն արտադրում: Ցոյց տա՞նք արդեօք այն գաւառները, որտեղ թուրք վաշխառուներին ոչ ոք չի կարողանում դիմադրել: Նորէլները, Բոսնիաները, Շիրաքները, Մորոզովները, Ալեքսէյեւներ, Կորգինիները, որոնք ահագին կապիտալներով մուտք են գործել կովկաս, հայե՞ր են միթէ: Բորժումի լայնատարած կալուածները փոխարքան չի՞ «յափշտակել»: Այդ փոխարքան չէ՞ր, որ ուժով իր հոգի վրայ բնակուող վրացի խիզաններին գրկեց իրենց դարաւոր իրաւունքներից: Կախեթի ամենալաւ մասը՝ Մուզուրկանը, Յիմանդալը Ռուսաց Կայսերական տունը չէ՞ «յափշտակել»: Հայտնեցէ՛ք «յափշտակողներին». ձեր հայրոջանքի ամենամեծ մասը թափուում է

ձեր պաշտած կայսերական տան վրայ : Այս բոլորը շատ լաւ է յայտնի յարձակում գործողներին շատերին . բայց դրանք դիտմամբ հարցին այս ձեր տալով՝ աշխատում են մուրեքներ հասարակական կարծիքը եւ դա իրենց բուն նպատակին ծառայեցնել :

Ռուսաստանում վերջին ժամանակներս արդէն կազմակերպուել է խոշոր արդիւնաբերողներին . խոշոր վաճառականների . կամ այսպէս անուանեալ բուրժուական դասակարգը : Բայց Ռուսաստանն ընդարձակ երկիր է , բազմակցած բազմաբիւ մասերից . որոնք գտնուում են կուլտուրական շատ տարբեր աստիճանների վրայ : Լեհաստանում մենք տեսնում են կապիտալիզմի ահագին զարգացում . բուն ռուսական կենտրոնում՝ Մոսկուայում եւ իւր շրջակայքում արդիւնագործութիւնը նոյնպէս զարգացած է . բայց ոչ այնպէս , ինչպէս Լեհաստանում . այնուհետեւ Ռուսաստանի միւս մասերում , ինչպէս օրինակ Կովկասում . խոշոր արդիւնագործութիւնը նոր է մուտք գործել . սրա հետ միաժամանակ այլեւայլ անկիւններում պատահում են վայրեր , ուր դեռ տիրապետում է ապրանքների անմիջական փոխանակութիւնը եւ ուր իբր դրամ գործ են ածում կենդանիների մորթին : Շնորհիւ Ռուսաստանի ընդհանուր տնտեսական սկզբունքի թոյլ զարգացման , նրա զանազան մասերի կազմակերպուող եւ կազմակերպուած բուրժուաների մէջ դեռ չէ կարող գոյութիւն ունենալ շահերի ընդհանուր համերաշխութիւն . նրանց մէջ դեռ չի կարող ծագել ընդհանուր դասակարգային գիտակցութիւն : Իւրաքանչիւր մասի բուրժուաները անխուսափելի կերպով պէտք է ուրեմն եւ մրցեն միւս մասերի բուրժուաների հետ . պէտք է ուրեմն եւ թշնաման : Այս թշնամութիւնը շնորհիւ մի քանի պատմական հանգամանքների Ռուսաստանում կարողանում է ֆոդարկուել ազգային գաղափարով : Բուն ռուս օտարների բուրժուաները չեն կարողանում մրցել Լեհաստանի բուրժուաների հետ , որովհետեւ վերջիններս աւելի ուժեղ են եւ ոչ թէ միայն թոյլ չեն տալիս իրենց բայոնում տարածել առաջինների ապրանքները , այլեւ մեծ յաջողութեամբ տարածում են իրենց ապրանքը դրանց բայոնում : Պարզ բան է , քանի որ այդ մրցումը գոյութիւն ունի , թշնամութիւնը անխուսափելի կը լինի , *լեհական հարցը* ասպարէզից չի իջնի , ռուս մամուլի որոշ մասի արշաւանքը լեհացիների վրայ չի դադարի :

Ռուս արդիւնագործողները ուզում են մտցնել իրենց կապիտալները Կովկասում , ռուս վաճառականները իրենք են ուզում ապրանք արտահանել Կովկաս , սակայն դո՛քա երկրի մէջ պատահում են լուրջ մրցակիցներ , որոնք գլխաւորապէս հայերն են , որոնք նոյնպէս ձեռնամուխ են լինում խոշոր արդիւնագործական ձեռնարկութիւնների , նոյնպէս յաջող կերպով մտցնում են երկրի մէջ եւրոպական եւ ռուսական ապրանքներ եւ աւելի լաւ ճանաչելով երկրի պայմանները՝ կա՛մ թոյլ չեն տալիս միւսներին հաստատուելու , կամ մեծ խոչընդոտ են լինում հաստատուածներին :

Կառավարութիւնը գրաւում է Անդրկասպեան երկիրը , գցում է երկաթուղու գիծը , ռուս բուրժուան հրնում է , այդ նրա տեւչալի ցանկութիւնն է՝ իւր ապրանքները մտցնելու , այնտեղից ապրանքներ արտահանելու համար նոր հրապարակ է բացում : Սակայն , մի քանի ժամանակից յետոյ , ռուս

բուրժուան տեսնում է , որ ամբողջ Անդրկասպեան երկիրը պատած է դարձեալ . . . հայ վաճառականներով : Ի հարկէ , այս պայմանների մէջ չի կարելի սպասել , որ զանազան Մորոզովներ . Ալեքսէյեւներ . Կորգինկինները բարեկամական աչքով նայեն հայերի վրայ . պարզ բան է , որ գրգռուած ռուս բուրժուաները եւ իրենց բարեկամները , չուզենալով թշնամույթեան բուն պատճառը երեսան հանել , ամէն տեսակ յիմար գրպարտութիւններ կը քափեն «հայերի» վրայ եւ կը ծափահարեն Սուլթանին հայերի գլխին կատարած վայրագութիւնների առթիւ : Այս պարոնները կովկասեան բոլոր ազգութիւնների մէջ միայն հայերին են մեղադրում ապստամբութեան մէջ կառավարութեան դէմ : Ծիծաղելի չէ՞ այս . կովկասի մահմետականները միշտ պատրաստ են եղել ապստամբելու ռուս կառավարութեան դէմ : Ամէնքը յիշում են անշուշտ վերջին ռուս-տանկական պատերազմի ժամանակ մահմետականների պատրաստութիւնները , եւ երէ տահիկները քիչ էլ առաջ խաղային , երեսանք գրաւէին , բոլոր մահմետականները ոտի կը կանգնէին : Լեռնական Ղազի-Ղուժուղքի դրան էլ չսպասեցին եւ ապստամբուեցին : Ոչ ոք էլ չի կարող ասել , որ վրացիների մէջ ձգտում չկայ ռուսական բռնակալ լծից ազատուելու : Բայց եւ այնպէս , կրկնում ենք , այդ պարոնների աչքում միայն հայերն են մեղաւոր : Ինչո՞ւ : — Որովհետեւ հայերն են դրանց առեւտրական ասպարէզում խոչընդոտ հանդիսանում եւ ոչ վրացիք , կամ թուրքերը : Պարզ է , որ այստեղ ոչ ֆազաֆականութիւնն է դեր խաղում եւ ոչ համայն ռուս ազգի շահերը , այլ Մոսկուայի ծանրամիտ Տիտ Տիտիչների(\*) գրպանի շահերը :

Հաստափոր եւ ծանրագլուխ ռուս բուրժուաները չեն կարողանում մրցել հրեաների հետ : Ահա հրեական հարցը սուր կերպարանք է առնում , հրեաները տանեակ հազարներով փշոււմ են Ռուսաստանից , մնացածների իրաւունքները կրճատում : Այս բոլորը կատարում է ազգասիրաբար , յանուն ռուս ժողովրդի բարեկեցութեան եւայլն : Ցոյց տալու համար , թէ ինքը ռուս ժողովուրդը ինչպէ՞ս է վերաբերում այդ տեսակ ազգասիրութեան , առաջ բերենք մի փաստ : Հարաւային Ռուսաստանում , Բեսարաբիայում ահագին բուռով հրեայ վաշխառուներ կային , ցրուած գիւղերում : Հրեական արշաւանքի ժամանակ այդպիսի խոշոր կալուածատէրերը , հանդիսանալով ջերմ պաշտպան գիւղացիների շահերի , սաստիկ աղմուկ էին բարձրացրել տեղական հրեաների դէմ , աղաղակելով . թէ դրանք ժողովրդի արիւնը ծծողներ են եւայլն , պէտք է դրանց բոլորին փշել , որպէսզի ժողովուրդը կարողանայ մի քիչ շունչ փաշել : Սարակելիչի(\*\*) սերունդների նեարդները շատ էին նըրբացել . նրանք ժողովրդի թշուառ դրութեան վրայ բաւականաչափ աղի արտասուք քափեցին , նրա ազատութեան համար «արդարութիւն» , «արդարութիւն» գոչելով կառավարութեան դիմեցին : Բարեխնամ Հայր-Թագաւորը լըսեց դրանց արդար բողոքները . հրեաները հալածուեցան , Բեսարաբիան գգա-

(\*) Տիտ Տիտիչ — ռուս գրական տիպ՝ կոպիտ վաշխառու վաճառական :

(\*\*) Գոգոլի հերոսներից մէկը՝ գոեհիկ կալուածատէր :

լի կերպով ազատուեց իր կեղեքողներին, բայց յիմար ռուս ժողովուրդը սկըսեց... լալ՝ ափսոսանքով յիշելով մօտիկ անցեալը: Պատճառը շատ պարզ էր: Այդ գիւղացիները չունին սեփական հող. բոլոր հողերը պատկանում են խոշոր, շատ խոշոր կալուածատէրերին: Քանի կային հրեայ վաշխառուները, գիւղացիները փոխ էին առնում դրամ, կապալով վերցնում կալուածատէրերի հողը եւ վարում: Այդ իրենց աւելի ձեռնտու էր: Իսկ վաշխառուների հեռանալուց յետոյ, գիւղացիները ստիպուած էղան անպատճառ աշխատել նրանց արտերում. իբր հասարակ մշակ, որ ստանում է միայն իր օրավարձը, ստիպուած էղան իրենց հարկաւոր դրամի համար անպատճառ կալուածատէրերին դիմել եւ այդպիսով ընկնել բացառապէս դրանց ճանկը:

Եւ ինչպէ՞ս չլալ...

Քանի որ, կրկնում ենք, Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը թոյլ է, նրա զանազան անկիւններում գոյութիւն ունի տնտեսական անհասարակ զարգացում, քանի որ մէկ անկիւնի արդիւնազորժողները, վաճառականները աշխատում են ներս մտնել այնտեղ, ուր տեղացիներն արդէն տարածել են իրենց ցանցերը, դրանց մէջ անխուսափելի է խմբական թշնամութիւնը, որ հետեւանք է պարզ տնտեսական մրցման: Եւ որտեղ որ հնարաւոր է, այդ տնտեսական թշնամութիւնը բողբոջում է այս կամ այն գաղափարով՝ ազգային, բրիտանական եւ այլն: Իսկ երբ Ռուսաստանն էւս մտնի կապիտալիստական գործը կազմակերպութեան մէջ, երբ երթեւեկութիւնը դիւրանայ, իրարից հեռու անկիւններն ընդունեն քիչ քիչ շատ միատեսակ տնտեսական զարգացում, այն ժամանակ այդ խմբական թշնամութիւնը կը վերանայ, այն ժամանակ մրցողները կը լինեն ոչ քէ մի անկիւնի բուրժուաները միւս անկիւնի բուրժուաների հետ, այլ այս անհատը միւսի հետ, որ անկիւնին էլ դրանք պատկանեն: Եւ երբ վերանայ այդ տեսակ թշնամութիւնը, այն ժամանակ երկրի մէջ կը թուլանան եւ հետզհետէ կը կորչեն զանազան ազգային թշնամութիւնները: Ընդհակառակն, այն ժամանակ տեղի կ'ունենայ մի նոր երեւոյթ. Մոսկուայի բուրժուան իւր բարեկամական ձեռքը կը մեկնի իր վաղեմի թշնամի՝ Կովկասի, Լեհաստանի բուրժուաներին: Նրանց մէջ կը զարգանայ դասակարգային ինքնահանաչողութիւնը. նրանք իրար ձեռք ձեռքի կը տան միացեալ ուժերով կռուելու բանուոր դասակարգի կազմակերպութեան դէմ, ա՛յն սարսափելի ուժի, որ անխուսափելի հետեւանք կը լինի կապիտալիստական զարգացման: Իսկ մինչեւ այդ ժամանակ հայ ազգը, լեհ ազգը եւ այլն կը կրեն անընդհատ յարձակումներ ռուս բուրժուագիւղի կողմից, քանզի իրենց բուրժուաների մեղքը:

Ահա ռուս մամուլի որոշ մասի արշաւանքի բուն դրդիչ պատճառները, մամուլի, որ արտայայտիչ է այս դէպքում ռուս բուրժուաների նպատակների: (Սրանով չենք ուզում ասել, ի հարկէ, որ այդ օրգանները բուն բուրժուական են. Ռուսաստանի տնտեսական կեանքը դեռ այն աստիճան չի զարգացած, որ բուրժուաները կարողանան որոշ ուղղութեամբ ասպարէզ դուրս գալ): Գրա այդ ուղղութիւնը գնահատուած է բոլորի կողմից, հասկացող դասի մէջ նա իւր յարձակումներով ու չնաշխարհիկ առասպելներով միայն ծիծաղ է կարողանում շարժել:

Այլ բան է մեր հարեւան վրացիների արշաւանքը, որը դեռ չէ քննադատուած, դեռ չէ գնահատուած նոյնիսկ վրաց հասկացող դասի կողմից եւ որը մի քիչ այլ բնատրուքիւն ունի:

Հայերը շատ վաղուց են ապրում վրաստանում: Հենց առաջուանից հայերի մեծամասնութիւնը երկրագործ էր, բայց եւ այնպէս երկրի առետուրը եւ արհեստները շուտով անցան դրանց ձեռքը: Այդ ժամանակ վաճառականը, արհեստաւորը անհրաժեշտ էին քէ՛ կառավարութեան, քէ՛ ազնուականութեան եւ քէ ժողովրդի համար: Նրանց դէմ թշնամութեան ոչ մէկ նշան չէր նկատուում: Ռուսաց տիրապետութեան ժամանակ էլ հայերը կարողացան պահպանել իրենց դիրքը: Վրաց ազնուականներն այս ժամանակ իրենց շատ լաւ էին գումար. նրանք ազատուել էին իրենց պարսականութիւնից՝ հայրենիքի պաշտպանութեան համար կռուելուց. մի բան, որ արդարացրելու էր նրանց գոյութիւնը, ու անճանաչու էին եղել խաղաղ, անհոգ կեանքի: Վրաց նախկին ազնուականները մրցում էին իրար հետ իրենց քաջութեամբ, հայրենիքի պաշտպանութեան համար արիւն քափելու պատրաստականութեամբ, իսկ այդ ժամանակից սկսած ազնուականները մրցում էին... գինի խմելու ընդունակութեամբ: Այդ խաղաղ, անդորր, անհոգ կեանքը երկար չէր կարող տեւել. երկրի մէջ այդ ժամանակ տեղի էին ունենում նշանաւոր փոփոխութիւններ, որոնք սկսում էին աւելի եւ աւելի վրդովել վրաց ազնուականութեան թռչնային անդարդ կեանքը: Երկրի տնտեսական կեանքը սկսեց արագ զարգանալ, արհեստները ծաղկեցին, առետուրը մեծ ծաւալ ստացաւ, մանապարհները լաւացան, լուսաւորուած երկրների հետ շփումը սաստկացաւ, կեանքի մէջ առաջացան նորանոր կարիքներ, որոնց հարկաւոր էր բաւականութիւն տալ: Այդ կարիքները աւելի ծագում էին ազնուականութեան մէջ, իբր երկրի առաջադէմ տարրի: Նոր կարիքներին բաւականութիւն տալու համար հարկաւոր էր դրամ: Այդ դրամը ազնուականութիւնը չունէր, չէր կարող ստանալ իւր նորտ գիւղացիներից: Վերջիններս միմիայն բնական նիւթ կարող էին տալ: Ահա այստեղ դրամատէրերը՝ հայ վաճառականներն ու վաշխառուները, կամ խօսելով ընդհանուր լեզուով՝ հայերը, սկըսեցին մեծ դեր խաղալ՝ մի տեսակ միջնորդի դեր կատարելով ազնուականութեան եւ գիւղական տարրի միջեւ: Ազնուականին դրամ է հարկաւոր. նա ինքը անընդունակ է առետրական ձեռնարկութիւնների համար, նա չի կարող ծախել ինքը իւր գիւղացիներից ստացած բնական տուրքը՝ ցորենը, գարին, բուրդը, մրգերը եւ այլն: «Հայը» տալիս է ազնուականին հարկաւոր դրամը եւ վերցնում է դրա փոխանակ նրա ստացած արդիւնքը եւ ահագին օգուտով էլ իւր գրպանի համար ծախում այլ տեղեր, նորից դրամի փոխանակում: Գիւղացուն նոյնպէս դրամ է հարկաւոր: Հայը նրան էլ է տալիս եւ մէկին երկու-երեք առնում նրա հասոյթից: Այսպիսով «հայը» կեղեքում է ազնուականին էլ, գիւղացուն էլ եւ երկուսն էլ նրանից գոհ են:

Երբ նորտութիւնը վերացաւ, վրաստանի տնտեսական կեանքը աւելի ազատութիւն ստացաւ, հայը աւելի սաստիկ, աւելի մեծ դիրութեամբ շարունակեց իւր կեղեքումը: Այդ ժամանակ էլ չէր լսում ոչ մի բողոքի ձայն ոչ մի կողմից. այդ ժամանակ էլ վաշխառուն անհրաժեշտութիւն էր երկու-

սի համար էլ. առանց այդ տարրի նրանք չէին կարող յարմարուել կեանքի նոր պահանջներին: Ազնուականութեան կարիքները հետզհետէ մեծանում էին. գիւղացիներից ստացուած տարեկան հասոյքը չէր կարող բաւականութիւն տալ ազնուականի արժանավայել կեանքին: Շուայ ծախսերը ծածկելու համար հարկաւոր էր գրաւ դնել հողերը, ձեռնամուխ լինել, «մայր գումարին», եւ վրաց ազնուականները միշտ գնում էին «չնչին, անպէտ հողերը» նաղդ փող համարելով: Այսպէս, շատ բնական ճանապարհով, մի կողմից քայքայուում էր վրաց ազնուականութիւնը, իսկ միւս կողմից հարստութիւնը դիզուում էր հայ եւ մասամբ էլ նոր ծնունդ առած վրաց դրամատէրերի մօտ: Այս ժամանակ ահա սկսում են կամաց-կամաց լսուել բողոքի ձայներ հայ «վաշխառուների», «հայութեան» դէմ, եւ վրաց հասարակութեան այժմեան ազգասիրական նառերը, նրա կոյր արշաւանքը «Հայութեան» դէմ արտափայլումն է վրաց ազնուականութեան տնտեսական քայքայման: Դո՛ւք ուժասպառ եղած, բուլացած, իրենց անկումը գգացած ազնուականների անգոր նիշերն են. դրանք դէպի վանատականական, վաշխառուական ասպարէզը ձգտող, բայց արդէն փորձուածների հետ մրցելու անընդունակ ազնուականների կատաղած աղմուկներն են. դրանք, վերջապէս, ձուից նոր դուրս եկած եւ իրենց նոր ասպարէզի վրայ արդէն փիչ թէ շատ յաջողութիւն գտած վրացի դրամատէրերի ինքնաբաւական մրքմրքոցն են: Եւ վրաց ինտելիգենտները, որը գիտակցաբար, որը անգիտակցաբար, որը կամայ, որը ակամայ, իրենց գցել են այդ հոսանքի մէջ, հետեւում են վերոյիշեալների շահադիտական միտումներին, մի կողմ բողոքելով իրենց ժողովրդի իսկական շահերը:

Այդ արշաւանքի բուն աղբիւրը պարզ է մեզ համար. մենք չենք խաբուի դրանով եւ չենք վերագրի այդ ամբողջ վրաց ազգին, ինչպէս չենք ընդունի ռուս մամուլի որոշ մասի արշաւանքը իբր արտայայտիչ համայն ռուս ժողովրդի ձգտման: Մենք տեսնում ենք, որ հայ, վրացի, բուրբ, ռուս աշխատաւոր տարրի մէջ վիտում են ամէն ազգի, ամէն դիրքի պատկանող արիւն ծծող վամպիրներ, որոնցից ոմանք ուժով, ոմանք քաղցրութեամբ, ոմանք խաբելով, ոմանք ծնկելով եւ նրա բոյլ կողմերը շոյելով՝ առաջարկում են իրենց ծառայութիւնը... նրան կեղեքելու: Իւրաքանչիւրը դրանցից աշխատում է հաւատացնել, որ եթէ ինքը կեղեքի, աւելի լաւ կը լինի:

Ճնշուած եւ տգէտ ժողովուրդը այդ կեղեքումը համարելով շատ բնական երեւոյթ եւ ընտրութիւնն անխուսափելի, հակում է սրա կամ նրա կողմը, ի հարկէ, որքան դա կախուած է իր կամքից, որքան քոյլ են տալիս իրեն իւր տնտեսական եւ քաղաքական պայմանները: Բացի այդ, նա յաճախ ոչ թէ միայն չի ճանաչում իւր իսկական թշնամիներին, այլ խաբուելով այդ վամպիրների նարպիկ խաղերից, սկսում է թշնամաբար վերաբերուել դէպի միւս տիպերի իւր վիճակակից աշխատաւորները եւ իւր այդ թշնամական վերաբերմամբ աւելի քան լաւ գործիք դառնում վամպիրների շահադիտական նպատակներին: Բայց այսպէս չի մնայ. կը գայ ժամանակ, երկրի դրութիւնը կը փոխուի, աշխատաւոր տարրը կը տեսնի, որ պարտաւոր չէ անպատճառ ընտրութիւն անել կեղեքողների մէջ, որ կարելի է եւ չկեղեքել. նա կը

նախաչի իւր իսկական թշնամիներին, կը նախաչի եւ բարեկամներին. նա միջոց կ'ունենայ բարձրացնել իւր իսկական ջոյսը բազուկը, ջարդել այդ վամպիրների գլուխը եւ լինել տէր իւր աշխատանքին: Իսկ առօրեայ ծանր հոգերի մէջ խորատուաբար աշխատաւոր տարրին կոուելու միջոց տալու պարտականութիւնը ծանրանում է երիտասարդ ուժերի վրայ, եւ իւրաքանչիւր երկրի երիտասարդութիւնը պարտաւոր է կրել այդ ծանր լուծը:

Մենք հաւատացած ենք, որ վրաց երիտասարդութեան այն մասն էլ, որ հասկանում է իրերի դրութիւնը, կը հասկացնի վրաց հասարակութեան այդ թշնամութեան, այդ բողոքների իսկական արժէքը. հաւատացած ենք, որ վրացի երիտասարդ ուժերը, որոնք անկեղծ կերպով ձգտում են իրենց ժողովրդի բարեկաւորութեան, բայց տարում են բնականաբար հոսանքով, կը հասկանան, որ վրացի, հայ, ռուս, բուրբ աշխատաւոր տարրերի մէջ չի կարող լինել շահերի անհամերաշխութիւն, որ այդ անհամերաշխութիւնը կարող է լինել միայն դրանց կեղեքող տարրերի մէջ. հաւատացած ենք, որ վրացի երիտասարդութիւնը չի հետեւի «Խվերիա»(\*) լրագրի օրինակին՝ ծնկելով ռուս մամուլի ստոր մասի առաջ՝ աշխատել ձեռք բերել երկրի համար լաւ դրութիւն, այլ ձեռք ձեռքի տուած բոլոր միւս ազգութիւնների գործողների հետ՝ կը կոուին հայ, վրացի, բուրբ, ռուս հարստահարիչների դէմ, կը կոուին փոխարեւի, կայսերական տան ոտնձգութիւնների դէմ, կը կոուին վերջապէս երկրի գլխաւոր չարիքի՝ միապետական բռնակալութեան դէմ:

Յ. Գ.— Վրաց հասարակութեան մի մասին մէջ տարածուած է այն միտքը, իբր թէ հայերը ձգտում են կովկասում ձեռք բերել ազգային անկախութիւն եւ Թիֆլիզը դարձնել մայրաքաղաք: (Ընթերցողները, անշուշտ, յիշում են «Նովոյէ վրէմիա»-ի(\*\*) յօդուածը, որով ազատ Հայաստանի սահմանները հասնում էին մինչեւ Ռոստով): Դա զարմանալի չէ. վրաց հասարակութիւնը այժմ այնպէս է տրամագրուած, որ դրանից էլ աւելի անհեթեթ կարծիքներ կարող են իբր ստոյգ լուրեր տարածուել, եւ մենք հասկանում ենք վրաց ազգասէրների արդար գայրոյթը... Թիֆլիզի գրաւման առթիւ: Հասկանում ենք, բայց ներել չենք կարող այդ աստիճանի միամտութիւն: Կարող ենք հաւատացնել այդ կարգի բողոքողներին, որ հայ յեղափոխականների կողմից չկայ ոչ մի լուրջ ձգտում ոչ Թիֆլիզը գրաւելու, ոչ էլ առհասարակ Ռուսահայաստանն անջատելու եւ նրա անկախութիւնը հրճակելու: Կարող ենք հաւատացնել, որ հայ յեղափոխականները ռուսահայերի դրութիւնը բարւոյնելու համար չեն դիմի անջատման, այլ Ռուսաստանի բոլոր միւս յեղափոխականների հետ կը կուռեն երկրի ընդհանուր չարիքների դէմ:

(\*) Վրացական ազգայնամուլ-Հայաստանի թերթ:  
(\*\*) Ռուս պահանջողական-Հայակեր թերթ:

Ճիշդ է, հայ սոցիալ-դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան ծր-  
րագրի մէջ կայ մի կէտ, որի համաձայն այդ կուսակցութիւնը, Տանկաստա-  
նի ազատութիւնից յետոյ, պէտք է զբաղուի Պարսկահայաստանի եւ Ռու-  
սահայաստանի ազատութեան գործով՝ աշխատելով կազմել այդ երեքից  
մի ընդհանուր հայկական կառավարութիւն (ուզում է ասել՝ պետութիւն.  
Ս. Վ.): Բայց ամենայն վստահութեամբ կարող ենք հաւատացնել վրաց հա-  
սարակութեան, որ Հնչակեան կուսակցութիւնը ոչ մի ժամանակ այդպիսի  
տղայամիտ ձգտում չի արտայայտի: Ձէ՞ որ նրա ծրագրի համաձայն Ռու-  
սահայաստանի ազատութիւնը ապագայի գործ է, դրանով նա կը զբաղուի  
Տանկահայաստանի եւ գուցէ Պարսկահայաստանի ազատութիւնից յետոյ: Իսկ  
մինչեւ այդ ժամանակը Հնչակեան կուսակցութիւնը կը համոզուի իւր ծրա-  
գրի կատարեալ սնամտութեան մէջ, մենք հաւատացած ենք դրանում: Կա-  
րելի՞՞ բան է, որ այդքան ժամանակուայ ընթացքում գիտական-սոցիալիստ  
Հնչակը չհասկանայ, վերջապէս, գիտական սոցիալիզմի ամենատարրական  
սկզբունքը:

Թո՛ղ վրացիք ի գուր տեղը չվրդովուին. հայերը Թիֆլիզը չեն «յա-  
փըշտակի»: մենք երաշխաւորում ենք Հնչակեան կուսակցութեան կողմից:

«ՎէՄ», Դ. տարի, քիւ 1, Յունուար-Փետրուար 1936

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

*Դանիական թերթէ մը արտասուելով, Փրանսական օրաթերթը կը հրատարակէ «Հայ  
պատգամաւոր» Տոբթ. Զօրեանի հետեւեայ էնթէրվիուն, «Հայկական բանակ մը» վերնա-  
գրին տակ: Անտարակոյտ Տոբթ. Զօրեան մեր յայտնի դաշնակցական պործիչ Ռոստոմն է:*

ՅՈՒՍԱՔԵՐ

Ռուս հանրապետական կառավարութեան մեր հայրենակիցներուն հան-  
դէպ ունեցած վստահութեան ամենէն փայլուն ապացոյցն է որ կ'երբեայ այն  
իրողութեան մէջ, որ որոշում տրուած է հայ զինուորները համախմբել ա-  
ռանձին բանակի մը մէջ: Առ այժմ հայկական վեց զօրագունդեր գոյութիւն  
ունին, որոնք գլխաւորաբար կը գործեն Կովկասի եւ Պարսկաստանի նակատ-  
ներուն վրայ եւ որոնք խառնուած են տարբեր ազգութեանց զինուորներէ կազ-  
մուած ուրիշ զօրագունդերու հետ: Բայց ուրիշ նակատներու վրայ եւս հայ  
զինուորներ գոյութիւն ունին եւ հիմա գուտ հայկական կիսարաժիմներ է որ  
պիտի կազմուին, հայ սպաներու հրամանատարութեան տակ, եւ յոյս ունինք  
որ այսպէսով նուազագոյնը 150-000 հոգինոց Հայկական Բանակ մը պիտի  
յաջողինք կազմել:

Թրքահայերը այդ բանակին մէջ չպիտի մտնան, անոնք պիտի շարու-  
նակեն մաս կազմել այն կամաւորական գունդերուն, որոնք կը գործեն ռուս-  
հայկական բանակին կողքին: Ձեզ կրնամ վստահեցնել, որ այդ կամաւորա-  
կան գունդերը խիստ օգտակար աշխատանք կատարած են եւ անոնց քաջա-  
գործութիւնները, Հայաստանի լեռներուն մէջ, ռուսական բանակին հիաց-  
ման արժանացած են: Թրքահայ պարզ արհեստաւորներ, քանի քանի առիթ-  
ներու մէջ ամենափայլուն կերպով հրամանատարութիւնը վարած են հայ-  
կական կամաւորական մեծ խումբերու:

Շուտով ուրեմն հայկական բանակը ի վիճակի պիտի ըլլայ իր ռազ-  
մական ընդունակութիւնները ի յայտ բերելու հայկական նակատին վրայ:  
Անիկա այդպէսով ոչ միայն պիտի օգնէ մեր մեծ հայրենիքին՝ Ռուսաստա-  
նի, այլ նաեւ առիթը պիտի ունենայ լուծելու վրէժը՝ այն հարիւր հազարա-  
ւոր հայերուն, որոնց անմեղ արիւնը հոսեցաւ 1915ին Հայաստանի մէջ, եփ-  
րատի երկայնքը եւ բոլոր այն նամբաներուն վրայ, որոնցմէ անցան հայ  
տարագիրները խումբերով՝ առաջնորդուելու համար դէպի մահ, դէպի սու-  
րիական անապատը:

Ռուսական օգնութեամբ մենք արդէն սկսած ենք Հայաստանի վերա-  
շինութեան: 300-400 հազար քրքահայեր յաջողած են ինքզինքնին ազատել  
եւ Կովկաս ապաստանիլ: Մեր փրկած այդ փախստականները հիմա մաս առ  
մաս Հայաստան կը վերադառնան, վերականգնելու համար իրենց գիւղերը:

Վանի շրջանին մէջ բնդարձակ տարածութիւններ արդէն իսկ մշակուած են եւ այս ամառ այդ շրջանները նոյնքան արօտեղէն արտադրեցին . որքան պատերազմէն առաջ : Մեր բանակներուն առջեւ թուրքերը ամէն կողմէ խոյս տուած են : Շնորհիւ սպանուած հայերու Ամերիկա գտնուող ազգականներուն՝ մենք ժառանգորդներ գտած ենք գրեթէ ամէն մէկ լեւուած օնախի համար : Մեր կոմիտէներուն միջոցաւ մենք իմաց տուած ենք անոնց , թէ իրենց պարտականութիւնն է Հայրենիք վերադառնալ՝ օգնելու համար վերաշինութեան գործին : Մենք կը յուսանք որ մեր կենսունակ ցեղը , անհետացածներուն տեղը գրաւելով , ցոյց պիտի տայ որ ինք գնած է իր ապրելու իրաւունքը՝ այս պատերազմին ամենէն զարհուրելի գոհողութեանց զնովը :

«ՅՈՒՍԱՔԵՐ», 16 Նոյեմբեր 1917

(ԾԱՆՕԹ.— Հարցազրոյցը պէտք է տրուած ըլլայ Ընկերվարական Միջազգայնականի Համագումարին առթիւ : Թեքթերու անունները կը պակսին) : Հ. Տ.

Ռ Ո Ս Տ Ո Մ Է Ն  
Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

## 1) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ (անտիպ)

Ռոստոմի ձևադրով գրուած առաջին նամակն է, որ կը գըտնուի Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական արխիւի թղթածրարներուն մէջ: Ստորագրուած է՝ ՌՈՍՏՈՄ և ՅՈՆԱՆ (Դաւթեան) և ՍԻՄՈՆ (Շիւսան): Չենք գիտեր՝ ինչո՞ւ տեղ գտած չէ ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ հատորին մէջ:

Գրուած է ժընեւէն: Անթուակիր է: Աւելի ուշ, մեզի անձանօթ ձեռք մը ժակադրած է «ժօտ 95-96»: Սակայն նամակի բովանդակութիւնը ցոյց կու տայ, որ ան գրուած է 1894ի Սեպտեմբերի վերջերը կամ Հոկտեմբերին. իրօք, Հ. Յ. Դ. անդրանիկ Մրազի հրատարակութիւնը կ'աւարտի ԴՐՕՇԱԿԻ 1894 Սեպտեմբերի համարով, և ԴՐՕՇԱԿԻ իրրեւ ամսաթերթ սկսած է կանոնադրապէս յոյս տեսնել 1894 Յուլիսին: Բովանդակութիւնն է նոյնպէս, որ ցոյց կու տայ թէ ԴՐՕՇԱԿԻ խմբագիրներու հաւաքական այս գրութիւնը ուղղուած է Պարսկաստանի (թերեւս նաեւ՝ Վասպուրականի) Հ. Յ. Դ. մարմիններուն:

Հ. Տ.

### Թանկագին ընկերներ.

Պատասխանում ենք ձեր նամակին և չգիտեմք, թէ որտեղ, երբ կամ ինչ հանգամանքներում ձեզանից իրաքանչիւրը ստանալու է մեր այս թղթի կտորը...

Երկար ժամանակ է ձեզ ոչինչ չենք գրել. հարկաւոր է վերջապէս վերջ տալ մեր այս անկանոն յարաբերութիւններին, որ բոլորովին պատահական կերպարանք ունին: Մենք էլ ի հարկէ մեզսակից ենք, — մենք խոստովանում ենք, — սակայն ձեր մեղքը աւելի ծանր է մեզ վիճակուած է միաժամանակ աւելի շատ տեղերի հետ նամակագրութիւն պահպանել, քան թէ ձեզ մէկ էլ՝ մենք հազորդելու բան ամէն ժամանակ չենք ունենում, ընդհակառակը, մենք ենք միշտ տեղեկութիւնների կարօտ: Բայց եթէ դուք պահպանէք մշտական ձեր նամակագրութիւնը, այն ժամանակ այս կամ այն հարցի առթիւ կամայ ակամայ նամակագրութիւն կը հաստատուի: Նամակագրութիւնը դեռ ոչինչ, ահա 3-4 համարներ է դուրս եկել առանց որեւէ լուրի [կամ] թղթակցութեան այդ կողմերից: Այս բանում դուք արդարանալ չէք կարող:

Մեր յարաբերութիւնը Տփլիսի(\*) հետ աւելի կանոնաւոր դարձնելու համար մենք մտադրուեցինք պարբերական նամակներ գրել շարքաբար մի անգամ *անպատճառ*, եթէ մինչև իսկ մի քանի բոլորովին, բայց այս բանը ընդհատուեց տփլիսցիների շնորհիւ:

Եթէ կ'ազդէ, ձեզ հետ էլ փորձենք, ամիսը մի նամակ անպատճառ գրենք: Ուրեմն մի ամսից յետոյ մէկն էլ կը ստանաք մեր կողմից:

Ինչ սակ կ'ուզէ, որ ձեր հաշտութեան լուրը սաստիկ լաւ (կամ ըստ Պետոյի՝ գեղեցիկ) տպաւորութիւն թողցնէ մեզ բոլորիս վրայ:

Այժմ պէտք է շատ պարզ լինի ձեզ համար էլ, որ կենդանի գործի բացակայութիւն

(\*) Թիֆլիս, — կ'ակնարկուի Հ. Յ. Դ. Բիւրոյին (Արեւելեան Բիւրօ):

«ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» Ա. հատորէն առնուած են, ներկայ հատորի թրագրումով, թիւ 2էն թիւ 17 նամակները:

Նոյն հրատարակութեան Բ. հատորէն առնուած են հետեւեալ նամակները, — թիւ 18էն 29, թիւ 31էն 55, թիւ 57էն 60 և թիւ 62. 63:

Ս. վրացեանի խմբագրած «ՎէՄ» հանդէսի Գ. տարուան 3րդ համարէն առնուած են թիւ 70էն 90 նամակները:

Թիւ 1, 30, 56, 61 և 65 նամակները. ցարդ անտիպ, առնուած են Հ. Յ. Դ. Կեդրոնական Արխիւէն: Մասամբ անտիպ է նաեւ թիւ 64 նամակը:

Միւս նամակներու ազդեցութիւնը յիշատակուած են:

Ս. վրացեանի խմբագրութեամբ հրատարակուած նամակներուն համար («ԴԻԻԱՆ», «ՎէՄ» և «ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ...») անփոփոխ պահած ենք խմբագրական ծանօթագրութիւնները: Անհրաժեշտ նկատուած պարագային կարգ մը ծանօթագրութիւններ տւելցուած են մեր կողմէ (Հ. Տ.):

նը որքան նշանաւոր դեր է խաղացել ձեր յարաբերութիւնների մէջ. որ դրա շնորհիւ այն-  
պիսի տասներորդական խնդիրներ. որպիսին են դպրոցական եւ այլ անձնական հաշիւներ.  
որոնք անշուշտ կը մոռացուին ուրիշ դէպքերում. ձեր յարաբերութեանց մէջ առաջնակարգ  
տեղ են բռնել:

Ակամայ յիշում եմ այն ժամանակը. երբ ես էլ ուս դրի այդ Բարբառը: Տէր Աստ-  
ուած, ինչե՛ր միայն չէին կատարում այն ժամանակ, ի՞նչ բամբասանքներ. ոտնձգութիւն-  
ներ. ինզիրգներ, խռովութիւններ... Գա մի պատկեր էր. որը մեր յեղափոխութեան պատ-  
մութեան մէջ կը մնայ ընդմիշտ իբրեւ մի սեւ կէտ. իբրեւ մի անցնջելի արատ: Միմիայն  
Պարսկաստանի նման մի երկրում կարող էին այնքան ներդրում աչելով նայել «ազգասէր-  
ների». «յանուն սուրբ գործի»: Բագարձակ՝ կատարած բոլոր խայտառակութիւնների վրայ:  
Եւ այդ բոլորի պատճառը — նոյն *գործի բացակայութիւնն էր*:

Յուսով եմ, որ այդ երկու մեծ. ծանր փորձերից յետոյ յարատւած կը լինենք՝  
եւ տասնեակներով չենք բափուչիլ այնտեղ. ուր իսկապէս մի երկու մարդու գործ կայ:

Այս՝ ի միջի այլոց: Այժմ կ'աշխատիմ մի քանի տեղեկութիւններ գրել մեր գործի  
մասին, որքան ի հարկէ այդ բոլոր եւ տալիս հանգամանքները: Մեր յարաբերութիւնը դեռ  
այնքան կանոնադրուած չի. ու նամակագրութեան ձեւ չենք դեռ հաստատել մեր մէջ,  
որով կարելի լինի ամէն ինչ գրել:

Այստեղ, արտասահմանում, մեր գործը լաւ է գնում: Ուսանողութիւնը մտնում է  
մեզ աւելի եւ աւելի. բայց ընդհանրապէս նա շատ էլ գլուխ չի պատում: Ամերիկա օրէցօր  
աւելանում է մեր ընթերցողների եւ համակրողների քիւր. եւ արդէն մի երկու տեղից  
խոստացել են դրամական օժանդակութիւն: Նոյնը եւ Ռուսները ու Բուլղարացիները:  
Աւելի միջոցաւանդում այն է. որ այդտեղի բանուորների մէջ խմբեր են կազմում ինքնու-  
րոյն կերպով. այդ խմբերը բանակցում են մեզ հետ եւ ցանկութիւն ունեն միանալու. սպա-  
սում են միայն ծրագրին (որն արդէն տպուած է համարում եւ այս երկու օրերս լոյս կը  
տեսնի առանձին գրքոյկով):

Տանկաստան այստեղից բաւական մեծ քանակութեամբ եւ յաջողութեամբ ցրում  
է: Այնտեղ աւելի լաւ է տարածում. քան թէ Ռուսաստան, ուր համարեա բոլոր ուղարկ-  
ուած համարները բռնում են:

Անս 3 ամիս է. քերթը կանոնադրապէս ամիսը մի անգամ լոյս է տեսնում: Յու-  
սով եմ այդպէս էլ կը շարունակուի: Կանոնադր հրատարակութիւնը կարելի է ապահո-  
ված համարել, եթէ միայն նիւրի պակասութիւն չլինի: Աշխատէ՛ք. ուրեմն, որքան կա-  
րելի է նիւր շատ եւ շուտ ուղարկել: Երէ ձեզանից մէկն ու մէկը հնարաւորութիւն ունի.  
թող ընդհանուր եւ ամփոփ յողումներ գրի հարկային. հողային. կեղեման, վաշխառու-  
ների գործունէութիւնից... Լաւ էին «Լայ Յեղափ. Տանկական բանտում», «հուզարկու-  
թիւն», «Տանկական դատարան»...: Թէ չէ ընթերցողների գահէն գնում է կարողով միա-  
կերպ նկարագրութիւններ. թէ՛ այստեղ սպանեցին, այնտեղ քայանցեցին եւ այլն...:

Ես էլ վաղուց է մտադրել եմ հեռանալ այստեղից. բայց թէ այդ երբ կաջողի  
եւ թէ ուր կը գնամ. դրա մասին շատ դժուար է մի որոշ բան ասել. շատ բան ինձանից  
չէ կախուած: Ամէն տեսակ ծրագիր ոչնչանում է փողի պակասութեան առաջ... Վաղուցէն  
հեռագրով մի գումար էինք պահանջել. բայց դեռ ոչինչ չկայ: Պետքը բոլորում հաւատուած  
կար մի 500 ր.: Յոյսներս նրա վրայ էր. երէկ իմացանք, որ այն էլ կուկունեանի խմբի վրայ  
են գործածել տփխեսեցիների կարգադրութեամբ: Գուցէ հենց ինքն ստիպուած լինեն փողի  
համար Ռուստ. գնալու:

Բայց որքան էլ դժուար լինի դրամական հարցը (որքան էլ փող լինի. դարձեալ փո-  
ղի պակասութիւն միշտ գգալու եմ). մեր դրութիւնը միշտ այսպէս է լինելու. եթէ ուզում  
ենք գործ տեսնել, այնուամենայնիւ գործերի դրութիւնը միջոցաւանդում է: Ձեր խումբը ար-  
դէն անտեղ է. Աշոտը Տ հոգով անցկացած կը լինի արդէն. պատրաստում է անցնել Մար-  
տիրոսը... Սա նշան է, որ քիչ քիչ կովկասը դուրս է գալիս իր թմրած դրութիւնը. որ  
չափազանց ոգեւորութիւնից յետոյ տիրած յեղափոխական վերջ է ստանում: Սպասեմք...:

Վերջացնում եմ նամակը, աւելի մանրամասն տեղեկութիւն (Պոլսոյ. Տրապիզոնի  
մասին օրինակ) գրել անյարմար ենք գտնում:

Անհամբեր սպասում ենք տեղեկութիւնների ձեզանից: Յուսով եմ, դեռ այս նամա-  
կը տեղ չիստած, ձեզանից մի որեւէ տեղեկութիւն կ'իմանանք...:

Մի քանի խօսք էլ:

Կուկունեանի պատմութիւնը շուտով լոյս կը տեսնի դատաւարտեալների պատկեր-  
ների հետ միասին: Դա մեզ վրայ շատ է քանց նստում, բայց ոչինչ. հասարակութիւնը գոհ  
կը լինի շատ: Պատկերների մէջ հիանալի տիպեր շատ կան. չգիտեմ, տպուած արդեօք յա-  
ջող դուրս կը գայ, թէ ոչ: Մի երկու օրից յետոյ լոյս է տեսնելու եւ ծրագիրը առանձին  
գրքոյկով, ինչպէս արդէն գրել եմ մի քիչ վերել: Փոփոխութիւններ շատ էր հարկաւոր  
մտցնել, շատ վատ է դասաւորուած, խմբագրուած, բայց նոյնը թողինք (միայն մի երկու  
տեղ փոխեցինք) տրտուցներ չյարուցանելու եւ ժողովի վճռի դէմ չգնալու համար: Մնաք  
բարեաւ: Համարում ենք ձեզ բոլորիդ...:

Ձեր ՌՈՍՏՈՄ և ՅՈՆԱՆ և ՍԻՄՈՆ

Բարեւներ այժմ ձեզ անծանօթ անձնապէս, բայց սիրող ընկերներից:

## 2) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1895, Հաւանաբար Մայիսի վերջը

Սիրելիք,

Նստած եմ Մէլինարսկու սենեակում եւ գրում եմ այս նամակը: Պատմեմ, թէ ինչ-  
պէս պատահեց այս:

Յիւրիս հասալ առաւօտեան ժամը Տին: Ճանապարհը շատ անհանգիստ էր. վազոն-  
ներն այնպէս էին օրօրում, որ հանգիստ նստել անկարելի էր, ուր մնաց քնել. կարծես  
փորձեցնով գնալիս լինէի: Առաւօտեան դէմ մի քիչ աչքս կպել էր, երբ ինձ գարեքցրեց մի  
հարթած երոպացի, առաջարկելով մի քիչ բճնոթի (մախոյկա) քաշել: Ուզում էի բարկա-  
նալ, բայց տեսայ, որ ինձ թողած, կարգով միւսներին է անցնում, բոլորին էլ քաղաք-  
վարի կերպով բճնոթամանը համեցէ՛ք անելով: Նրա կարծիքով ճանապարհորդի համար դա  
մի անհրաժեշտ բան է, մանաւանդ նրա համար, ում բունը տանում է: Յիւրիս հասալ թէ  
չէ, ընկալ քաղաք ման գալու: Այցելեցի մի քանի զինայանութիւններ, հարց ու փորձ արի  
զինագործարանի մասին: Անցաւ գործարանը գտնում է Բերնում, իսկ հրացաններ, որքան ու-  
զում ես, այստեղ էլ կարող ես գնել, միայն օտարականների համար պէտք է թոյլտուութիւն  
խնդրել փարթիկայի վարչութիւնից: Այդ բանը կատարում է զինավաճառը: Գինը միւսնոյն է  
— 110 ֆր. հրց. 1 բեվոյով. 55 ֆր.: Ունին եւ շվեյցարական հին սիստեմի հրացաններ  
(այնքան էլ ինձ դուր չեկան), աւելի աժան, 2 հատը 100 ֆր., կարելի է եւ աւելի աժան:  
Վերջերի նրանցից 2 կատարող. մէկը ուղարկեցի Պարսկաստան Ստեփանին, միւսը՝ ձեզ Տրա-  
պիզոնի համար: Ուրեմն, բարեհաճեցէ՛ք այս տեղեկութիւնները կատարողի հետ միասին  
այնտեղ ուղարկել:

Եթէ իմանալի որ գործարանը Բերնումն է, կը մնայի անպատճառ այնտեղ: Եթէ  
բան է, հարկաւոր լինի ձեզ դիմելու, ահա հասցէն՝ Fabrique Fédérale à Berne: Մո-  
նացայ գրել, որ շվեյց. հին սիստեմը, որը փոխուած է մի 4-5 տարի առաջ, կոչուած է  
Vetterli: Այս բանը գրէք եւ Թարիզ: Թարիզ ուղարկէ՛ք նաեւ Vetterli հրացանի պատ-  
կերը ու նկարագրութիւնը: Գրավաճառատներում կարելի է գտնել. դա կազմուած է զին-  
ուորների համար: Վերջին սիստեմինը մի քանի ամիս առաջ առայ եւ ուղարկեցի Արիստա-  
կէսին: Այդ ես այստեղ էլ կ'անէի, միայն այստեղ գերմաներէն է, իսկ Թարիզ ֆրանսերէն  
է հարկաւոր ուղարկել:

Յետոյ, էալ յերս ուղղեցի դէպի քաղաքի գանազան կողմերը, ուշադրութեամբ տըն-  
տըղելով արձանները, շինութիւնները, կարդալով գանազան վերնագիրներ: Հիմա ես գի-

տեմ. թէ որտեղ է ապրել Յվինգլիի օգնականը, Սր. Պետրոս եկեղեցու առաջին քահանայ, Ռալս թէ Ռէխ բուրգովհատերները եւայլն... Այս բոլորը պատերի վրայ կարելի է կարդալ:

Ման գալով քիչ-քիչ հասաւ համալսարանին. մի-երկու անգամ անցաւ մօտից աչ ու ձախ, տնտղելով ուսանողներին: Այդտեղ եւս պատահեցի Գինսուրբի, որի հետ միասին գնացին ման գալու: Այցելեցին, ի միջի այլոց, ռուսաց գրադարան-ընթերցարանը: Դա մերի հետ համեմատած փառաւոր կարելի է համարել: Պատերին կախուած են ամէն տեսակ պատկերներ, որոնք ապացոյց են ցիւրիլիցիների բազմազան (այսպէս իսուֆ կա՞յ, Շիտով)(1) ճաշակի. Մարքսի, Լասալի, Լավրովի, Շէվչենկոյի... պատկերների հետ կախուած է եւ մի սրբի պատկեր քահանայի հագուստով. այնուհետեւ գալիս են սլավոնական տիպեր, չէրմո-դորցիների կեանքից պատկերներ եւ ոսկեգօծ տառերով տպագրած ու մկարած Ալեքսանդր Ա-ի մի գրամատ(2): Ընթերցարանը լիքն էր ընթերցողներով: Առհասարակ, նա ամհամեմատ լաւ դուրսեմ մէջ է. մի խումբ է կազմուել յատկապէս գրքերի թիւը անկացնելու համար (երանի՞ ժընելու մի խումբ կազմուէր գոնէ եղած գրքերը պահպանելու համար):

Ընթերցարանի պատերը ուսումնասիրելուց յետոյ, երբ նստեցի կարդալու, տեսնեմ բուն սաստիկ տանում է: Աչքերս բաց քնած *Նովոստի*(2) էի կարդում, երբ Գինսուրբը յայտնեց, թէ հաշի ժամանակ է, հարկաւոր է գնալ: Մի քիչ նազ անելուց յետոյ, ճանապարհ ընկանք: Բանից դուրս եկաւ, որ ճաշում են Մելեքարսու սենեակում: Ահա թէ ինչ-պէս ընկաւ Մելեքարսու մօտ:

Ճաշը բուն ուսանողական էր. բաւական է ասել, որ նա նստում է 50 ս., իսկ վերջին ժամանակներս եւ 30 ս... 50, 30 սանտիմնոց ճաշ, երեւակայնօ՞ւմ էք, պարոններ... Այսպէս է ուսանողութեան ընդհանրութիւնը, ինչպէս պատմում են: Որքան կարողացաւ իմանալ, այստեղ ուսանողութեան մէջ անելի կենդանութիւն կայ, քան թէ ժընելի: Զկարծէք, որ 30, 50 սանտիմնոց ճաշ ուտողները բոլորն էլ փողի պակասութիւն ունին:

Մի քանի քանի մասին մտաւայ խօսել: Հարկաւոր է այս կամ այն յարաբերութիւնը ստեղծել նախ եւ Լէյպցիք տաճկաստանցի ուսանողների հետ: Ես Լէյպցիքի ուսանողի հասցէն, եթէ չեմ սխալուում Մէլեքարսու, վերցրել էի Լ. Աքար(3): Կարելի է նրանից նորից հարցնել եւ ուզարկել նրան ուզողելու եռզգատի մկարագիրը: Իսկ տրապիզոնցու անունը եւ հասցէն հարցրէք Մուսոնից: Գուցէ յանձն է առնում ինքն ուզարկելու Տրապիզոն, մանաւանդ որ նրա մասին լաւ կարծիք էին յայտնել Տրապիզոնից: Միայն գրէք, որ ոչ ոքի չյայտնի, թէ չէ գուցէ Ալլահով. յայտնի: Ինձ թւում էր, որ գրելու քան շատ կայ, բայց զլուխ թմրած է:

Կարօտագին բարեկեցութեան անկարծիք:

Դեռ ինձ թւում է, որ հեռացած չեմ ձեզանից:

Մտաւ Միդովիչը եւ հարց ու փորձ է անում ժընելից... Հերիք է(4):

Ձեր ՌՈՍՏՈՄ

(1) Սիմոն Շիւեան: (2) Ռուսերէն: (3) Լեւոն Աթաբեկեան: (4) Նամակի վրայ ժամանակը նշանակուած չէ — սովորական երեւոյթ Ռոստովի նամակների համար, բայց պարզ է, որ գրուած է 1895ի առաջին կէսերին, հաւանաբար Մայիսի վերջերը:

### 3) «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նամակի վրան թուական չկայ: Գրուած պէտք է լինի 1895ի Մայիսի վերջերը կամ Յունիսի սկզբը:

Սիրելիք,

Ահա Յրդ օրն է թիֆլիսումն եմ գտնուում, բայց ճիշդն ասած, ժամանակ եւ տրա-

մադուրութիւն չեմ ունեցել մամակ գրելու: Ամբողջ ժամանակը տեսնում եմ, նրա հետ: Ստացած տպաւորութիւններս այնքան շատ եւ բազմատեսակ են, որ գլխումս դեռ եւս սուս-բուր է եւ շատ ժամանակ պիտի անցնի այդ տպաւորութիւնները մարսելու համար: Բայց դեռ բոլորին չեմ տեսել, օր. Թօփալին (1): Նա էլ ամբողջ ժամանակը հիւանդանոցում է ընկած: Ամտոնին դժուար է ճանաչել, այնքան է փոխուել: Ի վստահութիւն պատճառով դժուարութեամբ է ման գալիս, վախեցնում է յոգնելուց, քրտնելուց: Բացի այդ, կոկորդացու ունի: Մնացածների հէփը շատ լաւ է երեւում:

Հենց եկած օրս այստեղ գտաւ եղբորս(2), վարդանին(3), որոնք պատրաստուում էին նոյն օրը հեռանալ. վարդանը դարձեալ Պարսկաստան իր առաջուան գործին, իսկ եղբայրս դէպի Մոսկուա խանութի համար պատրաստ ապրանք գնելու: Վարդանը գնաց, իսկ եղբայրս մնաց մի քանի օր, կարելի է էգուց գնայ: Վարդանի հետ գնաց եւ Նատալը(4) Մադիլին տեսնելու համար: Աւելորդ է ասել, թէ որքան ուրախ էի եղբորս տեսնելով: Արդէն 3 շաբաթ է եղել այս կողմերում:

Ուզարկում ենք 301 թ.: Կարծում ենք, որ պարտքերը կը տաք, կը վերջանայ: Միսի-բարին էլ կարող էք տալ, եթէ վերցրել էք ձեզ վրայ: Յովհաննէսի պարտքն էլ ուզարկեցիմք. 250 ֆր. իրեն էի տուել, 200 թ. էլ այստեղից ուղարկեցիմք:

Ձեր ՌՈՍՏՈՄ

(1) Քրիստափոր Միքայէլեան: (2) Արիստակէս Զօրեան: (3) Նանաստրի Վարդանը: (4) Օր. Նատալի Մատիսեան՝ Օր. Սաթիսիկի (Մադիլ) քույրը:

### 4) ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՄԱԿ «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

11 Յունիս 95, Կարս

Սիրելիք,

Արմենակը(1) դեռ եւս այստեղ է: Ուշանալու պատճառը գուրմաչիների(2) վերջեւումն արած յիմար քայլն էր, որ առաջ քերեց սահմանագլխում խստութիւններ: Որքան մեռնեմ աշխատել են դրանց համոզել, որ առանց զենքերի անցնին, խոստանալով իրենք փոխադրել զենքերը, ոչինչ չեն յաջողել: Նրանք անցել են եւ ընդհարուել պահապան զինուորների եւ զիւղացիների հետ: Իրանց այդ քայլով, նոյնպէս եւ Պարսկաստանի քայլով դրանք պարզ ցոյց տուին, որ անընդունակ են, ոչ մի պատրաստութիւն չունին գործել ներկայ պայմաններում, երբ իրենց ազիտացիայի շրջանը անցել է եւ հարկաւոր է ժողովուրդը քիչ թէ շատ զինելով մի լուրջ շարժում առաջ քերել: Նոյն նպատակի համար Մուրատն(3) էլ ստիպուած եղաւ զինելու Դաշնակցութեան, Հնչակեան կուսակցութիւնը անգոր գտնելով... Մարմենակը պատրաստ է հարկաւորը գրելու: Գուցէ եւ հրապարակօրէն հրաժարուի նրանցից: Ուրեմն դեռ սպասէք:

Մրազիր ուզարկէք անպատճառ 50-100 հատ, թէեւ գրել եմ եւ Պարսկաստան, բայց գուցէ այնտեղ չլինի կամ չկարողանան ուզարկել: Այս կողմերը եկաւ յատկապէս մեր յարաբերութիւնները որոշելու համար: Ալեքս.(4) յամառում են եւ իմ ամէն մի պատճառաբանութեան քրտակամ կռիւն են մէջ գցում: Դեռ վերջնականապէս չեմ խօսել: Եթէ դրանց հետ ոչինչ չլինի, ուզարկի ժողովրդին եւ զինելու: Արդէն մի փորձ արել եմ: Կարծում այդ կողմից բաւականին լաւ է: Այստեղ բացատրութիւն ունեցանք տեղւոյս Հնչակեանների հետ, որոնց ներկայացուցիչն էր Ատրպետը(5): Ժողովում լաւ դասեր կերաւ: Առաւել խայտա-

ուակուց, ելք մա մեղադրեց մեզ Մե... (6) փչացնելու: Ես կատաղեցայ եւ խստիւ պահանջեցի, որ ապացուցանի: Նա խոստացաւ, ճարը կտրած: Երէկ պէտք է գար իր ապացուցներով, սակայն չերեւաց, եւ, ի հարկէ, չի էլ երեւայ:

Մի այդպիսի աշուղայիմ բացատրութիւն երես առ երես, բոլորի մերկայութեամբ աշխատում եմ ունենալ եւ Ղազարոսի(7) հետ, որը շուտով մտադիր է գալու այս կողմերը:

Ալեքսանդրապոլում պատահեցայ Ղարա-Մելիքիմ (Գաշմակց): Միասին եկանք Ղարա: Շատ խօսեցինք: Ճիշդը խոստովանած, ես չեմ կարողանում բնադատաբար վերաբերուել դէպի դրա ծրագիրը: Պայմանները բոլորովիմ անձանօք են ինձ: Իրար հետ միշտ յարաբերութիւն եմ պահպանելու եւ հաւատացած եմ, որ իր ծրագրածից դուրս, մեզ հետ շատ եւ շատ օգտակար կը լինի: Առողջութիւնը այնքան էլ լաւ չէ: Նա է, որ... անում է(8)... Շատ եւ շատ բարեւ է անում բոլորիդ: Հիւանդիմ(9) ասպարում է, որ բաց չբողմի, ինչպէս ինքը բաց է բողմի: Թէ ինչ է ուզում ասել, երեսի ինքը կը հասկանայ:

**Հրգրում(10)** է գնացել եւ Ենֆր: Այս պիտիսպատը բաժանուել է մեզանից, կարողացել է գտնել հաւատացեալների մի քանի խմբեր, որոնց միջոցով գործում է անկախ: Իսկ եւ իսկ Սաշի(11) էկեով, միայն... փառասիրական ձգտումներով: Այնպէս որ պատիւ ունիմք ընդհարուելու եւս մի նոր կուսակցութեան՝ Ենովկականների հետ: Քիչ չեմ նպաստել եւ մեր «չէզոք» խմբերը: Թէեւ հիմա դրանք, մասնաւորապէս Ղարսը, ուզում են (*Երկու բառ չի կարողացում*): Գա ամէն տեղ պատելիս սաստիկ հայեոյում է Գաշմակ. եւ մասնաւորապէս քիֆիսցիներին եւ այնպիսի առասպելներ է պատմում, որ դժուար է որոշել, թէ ով է աւելի յիմար՝ մա ով հնարում է եւ աշխատում հաւատացնել (իմքն էլ հաւատատալով), թէ՞ ով հաւատում է:

Ափսոս, որ գրելու եղանակը բո՞նյ չի տալիս մի քանիսը առաջ բերել: Աւելի ծիծաղելի է են Հնչակեանների տարածած առասպելները: Նմուշի համար մէկը բերեմ: Արաբոս երկ է մեզակեան: Գաշմակցութիւնը մայրամից դրդուած, մօտեցնում է իրեն Արաբոյին. խաբում է նրան, տալիս է կեղծ հրացաններ (բարսի նման ամենաընտիրն են եղել): Կուռի ժամանակ այդ հրացանները տրափում են եւ սպանում ձգողներին:

Գրաշարի մասին գրել էի Բագու: Այսօրուան ստացած մի նամակից երեւում է, որ նա դեռ ճանապարհի չի ընկած, չգիտեմ ինչու: Այսօր կը հեռագրեմ:

Աշոտը տեսնուել է Մուրատի հետ, տուել է նրան փող եւ նամակներ առել: Մուրատը տուել է նրան ստացական, թէ շնորհակալութեամբ ստացայ Ղարսի «Գաշմակցական» մասնաճիւղից 12 ոսկի եւայն: Եւ այդ լրբերը(12) պնդում են, թէ սրանք ձեւացրել են նրան հնչակեան:

Մուրատի քաջակցութեան հարցը բոլորովիմ պարզուեց այստեղ: Բոլորն էլ խոստովանում են, բացի Ատրպետից, որի ասելով «Հնչակ»ի մէջ տպագրուած նամակը իրեն է եղել գրած:

Զեր անգոյն քանակով գրութիւնը տեղ տեղ շատ պարզ կարդացում է. երեսի պէտք է քանակը շուտ շուտ փոխել: Այս իմ նամակն էլ է կարդացում, եւ պարզ կարդում եմ, բայց մէկ էլ ծուլութիւն եմ անում նորից գրելու: Այս Յրդ նամակն եմ գրում:

Ստացուել է Տրդը(13): Ուղարկէք 4ից: Ամենեւին չկայ: Սրբագրութիւնը շատ էք վատ արել: Շուտով կարելի է մի լաւ սրբագրիչ ունենալ: Ուղարկէք մի կնիք Պարսկաստանի համար՝ «Պարսկաստանի կենտր. կոմիտէ» միւսը՝ «Կարմոյ կենտրոնական կոմիտէ»: Կենտրոնական կառայի համար արդէն գրել եմ: Յետոյ, բացի այդ՝ կնիք այս ձեւով. Հ. Յ. Գաշմակցութեան կենտրոնական յճ 1 կոմիտէ, կենտրոնական յճ 2 կոմիտէ, կենտրոնական յճ 3 կոմիտէ եւայն — ընդամենը 6 հատ:

(1) Հրայր Գոթիք: (2) Հնչակեանները: (3) Մուրատ Պոյաճեան: (4) Ալեքսանդրապոլցիք: (5) Վիպասան Ատրպետը: (6) Բառը լաւ չի կարողացում: (7) Ղազ. Աղայեան, որ այն ժամանակ դործօն Հնչակեան էր: (8) Լաւ չի կարողացում: (9) Յովն. Դաթեան: (10) Ծածկագիր: (11) «Համայնք»ի խմբագիր Ա. Աթաբէգեանը — անիշխանական: (12) «Հնչակ»ի ղեկավարները: (13) Մուսքը «Գրուակ»ի մասին է:

5) «ԳՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռուստոմի ձեռքով գրուած նամակ: Գրութեան ժամանակը չի նշանակուած: Հետագային ինքը Ռուստոմը մակադրել է. «Ինքիս, ամառը, 95 թ.»: Պէտք է լինի 1-95ի ամառը:

Սիրելիք,

Օգտուում եմ հանգամանքից մի երկար նամակ գրելու, բէեւ երկիւղ եմ կրում, որ չկարողանամ մտադրութիւնս իրագործելու:

Օրիորդներն տղաների հետ եկան գնացին. նրանցից ամէն ինչ տեղեկացանք: Տեղեկացնեմ եւ ձեզ տեղույս գործերի մասին:

Ընդհանրապէս պէտք է նկատել, որ ժողովրդի տրամադրութիւնը զգալի կերպով իջել է, ինչպէս եւ պէտք էր սպասել: Պոլսոյ վերջին դէպքերը մինչեւ իսկ չկարողացում մի շօշափելի արդիւնք ցոյց տալ շնորհիւ այն բանի, որ մենք անընդունակ ենք առեւտարակ օգտուելու հանգամանքներից: Մեզ անհրաժեշտ է եւրոպան խօսեցնել. իսկ դա կախուած է Պոլսի տակտիկայից: Ա՛յ. եթէ սպանութիւնները կատարուած ժամանակ մեր կնիքով իսկոյն յայտարարութիւններ ցրուէին... որպէսզի իսկոյն եւ եր յայտնի լինի գործի հեղինակը: Հենց այդ տրամադրութեան իջնելու պատճառով կամարեա թէ դադարել է ամէն տեղ ժողովարարութիւնը. չկայած որ ամէն կողմ մեր մարդիկ են պտտում. փողի մեծ պակասութիւն է զգացում. ձեռնարկած գործերը անկարող ենք լինում շարունակելու: Երեսակայեցէք. այս բոպէս — դեռ բողած այն հազարների պահանջը. որ քափում են Տանկաստանից — չորս-հինգ մարդ պէտք է ճանապարհ ընկնին զանազան տեղեր. իսկ կասսայում մի քանի բուրլի միայն կայ: Գաւառական մի քանի կոմիտետներում դեռ եւս փող կայ, միշտ է, բայց եթէ այդ էլ վերցնենք, այն ժամանակ ինչ կը լինի, չգիտեմք: Հասարակութիւնը մեզ տուեց համեմատաբար ահագին գումարներ միմիայն հաւատարմով մեր կազմակերպութեան, իսկ մենք անկարող եղանք օգտուել այդ գումարներից եւ ցոյց տալ հասարակութեան, որ այդ գումարները ապարդիւն չեն անցել: Մեր առաջին եւ ամենամեծ սխալը նրանում է, որ մենք ամբողջ Տանկաստանում միակամից ցանկացանք ոտքի կանգնեցնել. մենք չկարողացանք ընտրել մի կէտ եւ կենտրոնացնել այնտեղ մեր ուժերը: Իսկ ցրելով մեր ուժերը՝ մենք դարձեալ անկարող եղանք ընտրել համապատասխան գործունէութեան եղանակ: Այս երկրորդ կէտը պարզ կը լինի, եթէ համատեղաբար պատմեմ զանազան տեղերից եկած առաջարկութիւնները:

Առաջին անգամ պատահեցայ այստեղ Աշոտի ընկերոջ՝ Մկրտչին: Նրա ասելով՝ իրենց շրջած գիւղերում կազմուած են խմբեր: Հարկաւոր է այդ խմբերին տալ գէնք, պատրաստ պահել դրանց. կազմակերպել մի լաւ ոյժ եւ ապա սկսել գործը: Կէտերի համար նա անհրաժեշտ էր համարում առնուազը 350 հրացան: Որպէսզի կարելի լինի տեղափոխել այդքան հրացան, հարկաւոր էր աշխատել. որ ոչ մի ցոյց չլինի ոչ մի տեղ. սուս ու փուս տեղափոխել ինչ հարկաւոր է եւ ապա սկսել: Այդ ծրագրի խելայիւթեան դէմ, ի հարկէ, ոչինչ չէր կարելի ասել. բայց թէ կեանքը, այն էլ յեղափոխական կեանքը այդ տեսակ խելայեղութեան հետ շատ քիչ կապ ունի. նա չի սպասում, որ ձեւեւ, չափեւ եւ այնպէս գործ բռնես. այդ ցոյց տուեց շատ մօտիկ անցեալը: Մոռացայ ասել, որ հենց այդ պատճառով Մկրտչի կարմաքչիկի հայրենակից խմբի համաձայնութեամբ կազմաւորուել է եւ ցրել մեր մի կոմիտետի կազմակերպած եւ ճանապարհ ձգած խումբը, որը տրամադիր էր սպասելու եւ ցանկանում էր իսկոյն եւ եթ սկսել գործը իր սակաւաթիւ հրացաններով: Խումբը բանդել են, չնայած որ դա մեզ վրայ 400 ր. աւելի էր նստել: Դրանից անմիջապէս յետոյ վրայ հասաւ եւ Արմենակը իր մարդկանցով, որը նոյնպէս նոյն մտադրութեամբ էր գնում, այնպիմ մտնել անմիջական կտուի մէջ: Գա էլ փոխեց իր նախկին մտադրութիւնը եւ խոստացաւ առանց գէնքի տեղափոխել մարդկանց եւ այնտեղ միայն տեղափոխած հրացաններով գինելով՝ սկսել այս կամ այն գործը երկրում կազմած մի ընդհանուր ծրագրով: Բայց այս այդքան խոհեմութեամբ, այդքան բարեխղճութեամբ կազմած ծրագիրը տակնուվրայ եղաւ գուռնաչիների մի թեթեւ, ձեզ արդէն յայտնի քայլով, որը բոլորովիմ փչացրեց եղած գիծը: Դուրս եկաւ, որ մի խնք քար գլորեց, իսկ հազար խելոք անկարող եղան հանել քա-

բը: Մինչև երեսուն, չնայած որ մեր խիօֆները սահմանագծի վրայ դէս ու դէմ են ընկնում, հաստատելի գիծը չեն կարողանում: Իսկ թէ այդ երբ կը լինի, այդ Աստուած գիտէ: Մինչ-դեռ այս սպասողական դրուբեան մէջ Արմ. մարդկանց պահելը սահման չունի: Եկել են, վերջապէս, այն եզրակացութեան, որ կամ պէտք է խումբը անցնի, կամ թէ չէ ցրուի: Կերակրելը շարունակելու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Դեռ որոշ ոչինչ չկայ: Թէ ինչ կը լինի, յետոյ կը հաղորդեն ձեզ:

Նոյն ընթացքով է գնում եւ Զալլատը: Նա անդադար փող է պահանջում, խանք վարձում, խանութներ բաց անում զէնք տեղափոխելու համար: Քիչ է մնում սեփական խը-նուդիներ հաստատել:

Ոչ պակաս խելօք ծրագիր է բերել հետը եւ Տաշրեանը: Նա ցոյց է տալիս բոլոր յարմարութիւնները Շ.(1) ապստամբեցնելու: Յատուկ մարդ է գնացել դիրքն ուսումնասի-րելու. սա մինչեւ անգամ քարտէս է կազմել: Բայց այդ ծրագիրը իրագործելու համար հարկաւոր է դարձեալ սուս ու փուս գործունէութիւն տեղափոխելու համար 400 հրացան եւ 200 մարդ աշտեղացիներից: Ապստամբութիւնը պէտք էր աշխատել առաջ բերել այս աշնան: Դրա մասին շատ երկար խօսեցինք, մինչև իսկ գաւառներից ներկայացուցիչներ հրաւիրուեցան խորհրդակցութեան համար: Իրերի դրութիւնն ամենապարզ պայցոյց էր, որ անկարելի է գլուխ բերել այդ մտադրութիւնը եւ այն էլ այդքան կարճ ժամանակամի-ջոցում: Դրագրին չէր կարելի կատարեալ հաւատ ընծայել մանաւանդ այն պատճառով, որ ոչ Պետոն եւ ոչ Տաշրեանը չեն տեսել երկիրը իրենք եւ ամէն ինչ կազմել են ուրիշների ցուցմունքների հիման վրայ: Պետոն միայն վերջերում է ցանկացել գնալ, այն էլ չի յա-ջողուել: Վերջին տեղեկութիւնների համեմատ նա դեռ տեղը նստած է: Բարեբախտաբար, եենց ինքը՝ տեղական մասնաճիւղը փոխել է իր մտադրութիւնը: Իսկ թէ նոր ինչ կը ձեռ-նարկի, դա կ'որոշուի Տաշրեանի գնալուց յետոյ. եթէ ինքը կեանքը իսկական հասնապար-իւր ցոյց չտայ: Տաշրեանը մտադիր է այժմ հրոսակային խմբեր կազմել եւ մասնակի գործել:

Նահապետի առաջարկութիւնը մասամբ ձեռք էլ է յայտնի: Նրանք այժմեանից կազ-մակերպում են հրոսակային խումբ, բայց այնպիսի պայմաններով են աշխատում գործել, որ ոչ մէկի մագին ոչ մի վնաս չդպչի: Իրենք ինձ ասացին, որ հրացանների մի մասը չախ-մախի է եղել: Է՛հ, փառք Աստուծոյ, նրանց տուրքով ամենալաւ բերդաններ, բաւականաչափ ասրճանակ (բացի իմ բերածից), բայց դարձեալ գոհ չեմ. վերջին սխառեմի հրացան են պահանջում: Բայց այդ դեռ ոչինչ: Նրանք պահանջում էին մի հրացան հետադիտակով. որ-պէսզի թշնամում շատ հետուից կարողանան գլորել: Մի ուրիշ հրացան քաղաքի համար, որ ձայն չհանի, թոյն, որ մի անգամ տաս, բայց մի քանի ամսից յետոյ մեռնի, էլ ինկարա-կան լամպա, որ մքուրեան մէջ թշնամում տեսնես. իսկ նա քեզ՝ ոչ... մի խօսքով, այն-պիսի պայմաններով են ուզում շրջապատել իրենց, որ Նոր-Դարականն էլ կարող է յեղա-փոխութիւն անել:

Բնդհանրութիւնը, բացի այդ, շատ է մտածում դիմամիտի համար, որի միջոցով գործելը աւելի անվտանգ է համարում:

Մի խօսքով, շատ մտածել, լաւ-լաւ ծրագիրներ կազմել, գործելը բողբոջով ապա-գային — ահա այժմեան մեր դրութիւնը:

Իսկ թէ ես ինչ պէտք է անեմ, կ'ենթարկուե՞մ արդեօք բնդհանուր հասանքին, թէ մի այլ միջոց կը գտնեմ, չգիտեմ հաստատ, որովհետեւ անձանք է ինձ: Այնտեղ գնալուց յետոյ, տեղական ուժերին ծանօթանալուց յետոյ միայն կարող կը լինեմ մի որոշ ելք գտնել...

Մի բան էլ եմ մտադրուել գլուխ բերելու, որը ունենալու է բնդհանուր նշանակաւ-թիւն, բայց այդ բողբոջն է, վաղ է դրա մասին խօսել:

Գարա-Մելիքի մասին արդէն գրել էի մի քանի բան: Նա էլ մի հիմնական սխալ է իրեն թոյլ տալիս: Իր ժամանակուան պայմանների համաձայն կազմած էին ծրագիրը աշ-խատում է իրականացնել ներկայ պայմաններում(2): Ի միջի այլոց մի քանի խօսք այնտե-րի խառնակութիւնների մասին: Պիլիտպատ Ե-ն, այնտեղ սկսել է եւ յամառութեամբ շա-րունակում է մեզ ամէն կողմից հարուածել, անուանելով մեզ խաչագող, շարլատան Եւայն: Զուր եմ այն դիմումները, որ նրան անում են. ոչինչ չի օգնում: Աշտուր ի գուր է աշխա-տում հաշտեցնել դրան երուանդի հետ: Հարահատ ուզում է վերցնի իր հետ տանի: Զգի-

տեմ, ճիշդն ասած, ինչ պէտք է անեմ, եթէ այդ ապուշին հանդիպիմ: Լաւ բան չի դուրս գալու:

Թարսի նման ես էլ չեմ կարողանում գնալ հանապարհածախսի եւ այլ ծախսերի պատճառով, որոնց գումարը կը հասնի 500-700 ր.: Ես պէտք էր դուրս գալի սրանից ամիս ու կէս առաջ, բայց յետոյ աւելի յարմար դատուեց յետո՞ւ գնալ մի-երկու շաբաթով, գնալ մի քանի տեղ պտտել (որոնց հետ գործ պէտք է ունենամ յետոյ) եւ յետոյ հանապարհ ընկնել: Հենց այդ ժամանակը ես հետագրեցի, որ մնալու եմ դեռ երկու շաբաթ, յոյս ունենալով տեսնել Լիզին... Վերադառնալուց յետոյ ստացուեց Տաշրեանի նամակը, որով գրում էր, որ ես սպասեմ իրենց գալուն, դեռ չգնամ: Ես էլ մնացի, մանաւանդ որ Լիզին դեռ ես չէր եկել: Իսկ երբ այս բոլորից յետոյ պատրաստուեցայ գնալու, հանապարհածախս չգտայ: Մնացել եմ մինչեւ այսօր եւ դեռ կը մնամ...

Տաշրեանը գարեջրերի եւ մի այլ հարց. դա իրենց եւ հակառակորդների՝ Նիկոլի, Սարգսի... յարաբերութիւնների հարցն էր(4): Զեր գլուխը չեմ ուզում ցուցնել սրա ոչ թէ մանրամասնութիւններով, այլ բնդհանուր նկարագրութեամբ. մենք առանց այն էլ շատ ենք ժամանակ եւ արհիւն կորցրել: Կը գրեմ միայն հետեւանքի մասին: Որովհետեւ մի կողմ կանգնած էին Ծաղիկը եւ Պետոյի հայրենակիցները(5), իսկ միւս կողմից Գարսիէլը, միւս օրիորդը, Սարգիսը Եւայն... եւ որովհետեւ Նիկոլի եւ Արիստ. յարաբերութիւնները Պ. հայրենակիցների հետ այնքան էլ լարուած չէին, մինչև իսկ մասամբ լաւ էին, որոշուեց՝ որ Նիկոլը կը մնայ իր առաջում տեղում(6) եւ ամբիջական յարաբերութիւն կ'ունենայ նրանց հետ, իսկ քաղաքում Պ. հայրենակիցները կը մանաչեն միայն Ար., որի հետ միայն կ'ունենան յարաբերութիւն: Նա արդէն ինքը գիտէ, թէ ում միջոցով կը կատարի դրանց պահանջները: Ծաղիկը յայտնի չէ, թէ ուր կը գնայ: Հաւանական է անցնի Պետոյի հայրե-նիքը իբրեւ վարժուհի(7):

Ահա դրանց ժամանակուոր խաղաղութեան պայմանները: Տեսնեմք... Ար.(8) վերադարձել է արդէն: Իսկ նրա տեղ գնում է Միհրանը: Նիկոլը գնաց մի քանի օրով. Բէֆը Բօֆ է. էլի այնպէս քիչ ծուռ-ծուռ մամ է գա-լիս: Կարելի է նա այս տարի առանց պաշտօնի մնայ մեր կամքով:

Սիմոնի(9) նամակը ստացանք շատ ուշ: Մանրամասնութիւնները կը պատմեն: Այլեւս այդ հասցեով եւ այդ ծածկագրով ոչինչ չգրէք:

Կարծեմ ես գրել էի թէ Ս. մօր մասին եւ ձիւարի եղբօր: Երկուսն էլ շատ լաւ են. միայն Ս. եղբայրը քիչ հիւանդ էր:

4րդ համարը(10) ստացանք. տղերքն էին իրենց հետ բերել: Մինչև այդ ժամանակ մենք միայն լսում էինք դրա մասին: Ի միջի այլոց, շատ տեղերից դժգոհութիւն էին յայտ-նում թոյլ տուած մի քանի անտեղի դարձումների մասին. օր. «փիշտ» Եւայն... Յօդ-ուածը լաւ էր, բայց ճիշդ որ շատ անտեղի է այդպիսի բացականչութիւն: Այդ կողմից ձեր հակառակորդները արդար են եղել իմ եւ միւսների կարծիքով: Ծատ լաւ սպաւորութիւն է թողնում Յրդը: Ստացուել է ընդամենը 90 օրինակ: Անհամեմատ աւելի մեծ պահանջ կայ-մարդ շուրջ է մնում այդ պահանջի առաջ:

Ուղարկած տեղեկագրերից օգտուեցէք, ինչպէս ուզում էք. աւելի լաւ է բրոշիւրի ձեւով հրատարակել միայն անպատճառ հարկաւոր է հրատարակել:

(Ստորագրութիւն չկայ)

(1) Շատախը: (2) Դեռ Հ. Յ. Դաշնակցութեան ստեղծումից առաջ Ղարա-Մելիքը եղել էր Կարին-Երզնկա-Գեղարքունիքի աշխատել էր հայ-բրտական համագործակցութիւն առաջ բերել: Նոյն ծրագրով ողկուրում էր եւ այժմ: (3) Ինչպէս եւ Արդութեանի ու Նի-կոլի համակիցների էլ տեսնում է, Թարսիի ընկերները բաժանուել էին երկու հակառակու-րդների. մէկի առանցքը օր. Ծաղիկն ու Յովս. Արդութեանն էին, միւսինը՝ Նիկոլ-Դումանը: Փոխարարութիւնների այս գէշութիւնը վատ անգործարարում էր ունենում Դաշնակցու-թեան վարկի եւ գործունէութեան վրայ: (5) Վանեցիները: (6) Սալմաստում: (7) Վան: (8) Արիստակէսը — Ռոստոմի եղբայրը: (9) Սիմ. Շիւսան: (10) «Դրօշակ»ի:

6) «ԴՐՈՇԱԿ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

12 Սեպտեմբեր 1895, Բաթում

Սիրելիք,

Ուղարկած հեռագիրս ստացած կը լինէք: Ճանապարհորդութիւնս շատ յաջողակ էր: Յովհաննէսի(1) հետ տեսակցութիւնս քէն կարն էր, համարեա քէ ապարդիւն անցաւ, (այնքան շշկլացրեց, որ մինչեւ իսկ մոռացայ տալ իրեն յատկապէս իր համար տարած գրք-էքը, քէն նա դրա մասին մինչեւ անգամ խօսք բացեց), բայց դրա փոխանակ Արսէնեանը(2) շատ լաւ ընդունեց. հրաւիրեց իրենց տուն: Մենք գնացինք միասին, լաւ կերանք, խմեցինք: Ընդհանուր տպաւորութիւնը լաւ էր, քէն մի քանի կասկածելի կէտեր ցկատեցի, որոնք յատուկ են տանկախայեքին: Գրանք, երեւակայեցէք, լաւ պատրաստութիւն են տեսել ընդունել պր. Քահալինեանին(3), բայց այդ անպիսանը ուրիշ նախապահով է գնացել: Տարած ընծաներս(4) սաղ սալամաք իրենց յանձնեցի, քէ՛ Արսէնեանին եւ քէ՛ այստեղի բարեկամներս:

Գրել էի ուղարկէք մի նոր կնիք(5). կը պատուիրէք բոլորովին նոյն ձեւով, ինչպէս որ ատաջ կար. գրութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չմտցնէք. ես այստեղ մի տեղեկացիս (թոյլ կերպով) ցկատեցի, բայց դրա մասին յետոյ:

Այստեղից ուզում էի նոյն օրը երեկոյեան ճանապարհ ընկնել, բայց երեկոյն առաւօտեան ձգելով, առաւօտը երեկոյին, մնացել եմ այստեղ. վերջնականապէս վճռել եմ այս երեկոյ գնալ, բայց դարձեալ վախեցում եմ մնամ:

Առաջին տպաւորութիւնս այնքան էլ լաւ չէր, բայց հետզհետէ լաւացաւ: Ի միջի այլոց, այսօր սպասում է Գժոխքը: Նրանից գուցէ լաւ խաբար գրեմ ձեզ: Մեղաւորեանը(5) այստեղ է. բաւական հաստացել է: Ինքն այդ բանը վերագրում է իր բթամայուն, իսկ իմ կարծիքով դրա պատճառը ուրիշ է: Նա իրրեւ իսկական գաղափարական մարդ, ձգտում է անընդհատ հասնել իր խելային — հաստութեամբ հաւասարել Բակունինին(5): Մերոնց հետ լաւ յարաբերութեան մէջ է եւ լաւ է: Յոնանի աչքը լոյս: Այստեղ իմացայ, որ Նորկի(6) վրայ ազդեցութիւն ունեցողները, նրա ղեկավարներն են Կ. Ազրիպանեանը՝ նրա Շաքիրը եւ վաղինակը՝ նրա անձնական քարտուղարը:

Բարեւներս եւ համբոյրներս բոլորին. Դրոշակի(5) գործը դրսեցնեմք. նրան հասնելիք մեզ հասցնելու համար ուղարկէք Յովհաննէսին (մօտ 50 հատ): Ուրեմն այսուհետ Յովհաննէսին կ'ուղարկէք 150: Մի ուրիշ նախապահ էլ յետոյ ցոյց կը տամ: Քէ՛ք արէք:

Ո՞նց էք, ո՞նց:

Ձեր ՌՈՍՏՈՄ

(1) Յ. Իսուֆեան: (2) Տրապիզոնի կոմիտէն: (3) վանի կուսակալ Քահալին քէյ: (4) Ձէնք, որ մասամբ յանձնել է Տրապիզոնի ընկերներին, մասամբ՝ Բաթումի: (5) Մածկազիր: (6) Խրիմեան կաթողիկոսը:

7) ԹԱԻՐԻՉԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Նամակը գրուած է Կարնից Քարիզ, այնտեղի ընկերներին: Ռոստոմը Քուրքիա էր մտել իբրեւ ինքնաեռի վաճառական, բայց հետը տարել էր նաեւ զէնք:

22 Սեպտ. 95

Սիրելիս,

Շատ ժամանակ է քեզ նամակ չեմ գրել: Բաւականաչափ երկմիտ մնացած կը լինես,

բայց, Աստուած վկայ, մեղաւոր չեմ: Գլուխս այնպէս էր խառը, որ մի րոպէ անգամ ազատ ժամանակ չունէի: Բանը նրանում է, որ Տրապիզոնում գործերս այնքան յաջող չգնացին: Յանկանում էի կիրասուն անցնել, բայց մի քանի վաճառականներ ինձ խորհուրդ տուին կարին գալ: Այնտեղ մէկն էլ խոստացաւ, որ կարինում իր մարդը իմ բոլոր ապրանքները միանգամից կը գնի: Ես էլ յանձնելով ապրանքս(1) մէկին, որ ուղարկի, շտապով եկայ Կարին գնողներ գտնելու համար: Բայց կարող ես երեւակայել, ոչ մի սայլապան չի համաձայնել բերելու, որովհետեւ ապրանքը Ռոստոմի մեծ մեծ կողմների մէջ է եղել: Կոմիտէները ստիպուած է լինում կողմները փոխել եւ սովորական արկղների մէջ դարսել: Այդ ժամանակ միայն սայլապանները համաձայնում են բերել: Ապրանքը կը ստանամ ամսոյ 28ին: Թէեւ այդ անյաջողութիւնը քիչ տրտմեցրեց ինձ, սակայն մի ուրիշ աւելի լաւ եւ անսպասելի յաջողութիւն ունեցայ:

Երբ ես օրէ օր սպասում էի ապրանքի գալուստ, որ ծախեմ ու Ռոստոմում վերադառնամ, յանկարծ ինձ հրաւիրեցին եւ առաջարկեցին տեղւոյս ազգային վարժարաններում ուսուցչի պաշտօն, որը ես ուրախութեամբ ընդունեցի: Գիտեմ, որ այս հանգամանքը ձեզ էլ կ'ուրախացնի: Ուրեմն ես այս տարի այստեղ կը մնամ իբր ուսուցիչ եւ որովհետեւ պարագ ժամանակ կ'ունենամ, կարող եմ կատարել եւ գանազան առեւտրական յանձնարարութիւններ(2): Այս մասին ես արդէն յայտնել եմ իմ պատրաստակամութիւնը, դու էլ քեզ կողմից յայտնիր ում հարկաւոր կը գտնես:

Ապաստում եմ նամակիդ: Ի՞նչ են շինում մեր Արիստակէսը, Պետոն, Մարիամը եւ միւսները:

Նամակ եքէ գրես, Արիստակէսին ասա, որ մի քանի բան էլ նա աւելացնի:

Բարեւներս եւ համբոյրներս Հայկանուշին(3): Ի՞նչ է անում նա, ինչպէ՞ս է առողջութիւնը: Խնդրեմ շուտով պատասխանես: Հայկանուշի վերաբերմամբ ուրիշ բաներ չի ընդունես գուր տեղը, ես պարզ եմ գրում: Սիրելի Բայրիկ, դու էլ պալոյ պատասխանիր. այժմ պարզութեան ժամ է:

Հասցէս՝  
Artaches Rostomiantz  
Erzeroum (Turquie)

Կ'ուզես թուրքերէն էլ գրել տուր:  
Հայկանուշին ասա, որ միամիտ մնայ, իրեն խոստացածը չեմ մոռացել:

Քո՛ ԱՐՏԱՇԷՍ

(1) Ձէնք: Թերեւս եւ որոշ քանակութեամբ ինքնաեւ, որ նա հետը տարել էր իբրեւ վաճառական, թիւրքական ստիկանտիֆիւնը մոլորեցնելու համար: (2) Այսինքն՝ յեղափոխական գործերով: (3) Հայկանուշ — Հ. Յ. Գ. Քարիզի կոմիտէն: (4) Ռոստոմը Քուրքիա էր մտել Արտաշէս Ռոստոմեանց անցազրով:

8) ՅՈՎՀ. ԵՌԻՍՈՒՖԵԱՆԻՆ

Այս նամակը Ռոստոմը գրել է Կարնից հեռանալու նախօրեակին: Նամակում յիշուած 50 ռսկին ստացուել էր տեղական հարուստներից մէկից: Կարնի կոմիտէն պահանջել էր 100 ռսկի: Հարուստը մերժել էր. Առաջնորդ Շիշմանեանի միջնորդութեամբ ստացուել:

էր 50 ոսկի: Դրամը, Առաջնորդի միջոցով, փոխադրուած էր Հ. Յ. Դ. Պոլսի կոմիտէին:

24 Նոյեմբեր 1895

Սիրելի Յովհաննէս,

Նորին Ամենապատուութեան Սրբազան Պատրիարք Հօր կողմից բարեհաճեցէք ստանալ յիսուն օսմ. ոսկի (50 ոսկի). գոր յանձնած եմ տեղույս Առաջնորդ Ղեւոնդ Սրբազանին:

Նոր բան մը չկայ: Միայն իբր հետաքրքիր տեղեկութիւն կը հաղորդեմ, որ տեղույս դպրոցի ուսուցիչներէն մին՝ Արտաշէս Ռաստմեանը եւ վաճառական Բարսեղ Մելիք Գրիգորեանը կ'արտախառն երկրէն շնորհիւ տեղույս վսեմաշուք էֆ.:

Խնդրեմ, եթէ կարելի է, փոխադրած ստակէն մաս մը՝ քսան եւ հինգ (25) ոսկի յանձնէք իմ բարեկամ պրն. Արսէնեանին: Վաղուց է պարտ եմ անոր, սակայն հասցէն չգիտեմալով անկարող եմ ուղղակի իրեն հասցնել:

Յատուկ բարեւներս կը յիշէք Յոնան էֆ.ին:

Ձեր ՍՏԵՓԱՆ

Ինչո՞ւ Յոնանը նամակներուս չի պատասխաներ. քանիցս անգամ դիմած եմ իրեն: Յայտնէ իրեն, որ ինձ գրի նիկողայոսի հասցէով, կամ Արիստակէսի:

ՆՈՅՆ

Վերոյիշեալ ամբաստանածները պարսկահպատակ ըլլալով Պարսկաստան կ'առաքուին:

ՆՈՅՆ

Նամակի վերջը գրուած է Յ. ԵՆՆՈՒՖԵԱՆԻ ԺԵՂՈՎ. «Ռոստոմն է՝ որ նոր հեռագրեր էր կրգրումից (ջարդից յետոյ):»

(1) Ղարա-Մելիք:

**9) ԻՐ ԵՂԲՕՐ՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՋՕՐԵԱՆԻՆ**

Նամակը գրուած է Սալմաստից Թաւրիզ: Կարսից աջնորդուց յետոյ, Բարսեղը (Ղարա-Մելիք) անցնում է Կովկաս, իսկ Ռոստոմը մի առ ժամանակ մնում է Սալմաստում, կուսակցական գործերով:

25 Դեկտեմբեր 1895

Սիրելի Արիստակէս,

Իմ գալը չեղաւ: Քալիս է Բարսեղը որը վաղը դուրս կը գայ եւ 4-5 օրից յետոյ այդտեղ կը լինի: Նա կը քառամի բոլոր մանրամասնութիւնները:

Պէտք է մտածել Ռուսաստանի հետ կանոնաւոր յարաբերութիւն պահպանելու մասին: Անհրաժեշտ է մի յատուկ սուրհանդակ. կարելի է մինչեւ իսկ կաշառել հիւպատոսի չափարին. փող չպէտք է խնայել: Սրա վրայ լուրջ ուշադրութիւն դարձրէք:

Վանից տեղեկութիւն չկայ: Մեր նամակը կորել է: Ուզարկած մարդն էլ վերադարձել է, բայց նամակ չի բերել: Արմենակազմների մի նամակն էլ է կորել, երկրորդի մէջ յիշուած է, որ ուստէն՝ Փանոսը անյայտացել է:

Դրութիւնը խառն է վաճառում: Կառավարութիւնը գէնք է քաժանել մահմետական ժողովրդին, բայց եւ այնպէս շատ են վախենում հայերից: Խմրի թողած սարսափը մեծ է:

Ջանազան առասպելներ էին պատմում մեզ ճանապարհին: Քրտերը երգեր են յօրինել, ուր գովարանում են մանուսանյ «երկար հասակով, սեւ միւրուքով» մէկին, որին սուել են Դուսման անունը:

Այդտեղ յօսեցէք, տեսէք, հարկաւոր է ինձ այստեղ մնալ, թէ վեր կենամ ուրիշ տեղ հեռանամ: Շատ ենք հաւաքուել, դարձեալ կը սկսենք խառնակութիւնները:

Բարեւներս բոլորին:

Քո ՌՈՍՏՈՄ

**10) ԻՐ ԵՂԲՕՐ՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՋՕՐԵԱՆԻՆ**

Նամակը գրուած է, հաւանաբար, Բապուի կայարանից, Պարսկաստանից Թիֆլիս անցնելիս: Ուղղուած է Թաւրիզի ընկերներին, Արիստակէս Ջօրեանի միջոցով:

1 Փետրուար 1896

Սիրելի եղբայր,

Նամակս գրում եմ վագալում. ներողութիւն կ'անիս, որ ուրիշ թուրք չը գտամ: Էսօր գնում եմ, չուզեցիմ երկար մնալ: Ճանապարհին ներողութիւն շատ քաջիմ, համա լաւ էր. որ ներողութիւն չուրաբարուս էր. աւելի դինջ էիմ Արտաբիլից Աստարա գալիս: Պարսիցի վրայ շատ տանջանք քաջեցիմ. ամա, ինչ եղաւ. եղաւ, հիմա սաղ սալամաթ հասամ տեղ եւ սպասում իմ երկաթուղուն ճանապարհս շարունակելու համար:

Արդարից լաւ ճանապարհ գցեցիմ. շատ շնորհակալ իմ պրն. Համբարձումից: Աստարայում մեր բարեկամ Խաչատուրը շատ բարեւ էր անում. խնդրում էր պրն. Գնունուց, որ միշտ իրեն նամակ գրի այս հասցէով ուղղակի. Աստարա (Պարսկաստան), պրն. Խաչատուր Ղազարեանին: Ուրիշ բան հարկաւոր չէ, նամակը կը հասնի: Դրանից էլ եմ շատ շքեցիմ:

Էստեղ մեր համարիներից տեսամ պրն. Ալէքիմ(1): Խօսալուց տեսամ, որ ուզում է մեզ հետ ընկերանալ: Պարսիցի վրայ էլ Սեդրակ Միրզայեանին հանդիպեցիմ, չհարցրի, Էնգելիից թէ Ասխաբադից էր գալիս: Սիրտս շատ փիս էր խառնում, հալումս հալ չէր մնանել նրա հետ խօսելի:

Իմ կողմից ձեզ խորհուրդ. այսուհետ չափարով Արտաբիլ չգնաք, մարդու հագի են հանում: Թամբի համար էլ շատ ներողութիւն են տալիս: Մի տեղ 5 դրամ էին պահանջում. քիչ մնաց խորհիմս առնեմ ուսս. ոտով ճանապարհ ընկնեմ: Հենց առաջին օրը այնքան ներողութիւն կրեցիմ, որ ձիու վրայ (մի ամբողջ օր չէին կերակրել) գլուխ սկսաւ պտոյտ գալ. համբարձեցամ, երբ սիրտ խառնեցիմ: Գիշերուայ ժամը 10ին հագի տեղ հասանք:

Կարն եմ գրում, դու շատ բան հասկացիր գրածիցս:

Դու ինձ որքան փող էիր տուել. խարջեցի. խարջեցի. համա Աստարայում 5 թուսման աւել մնաց:

Մէկ էլ նամակ տեղ հասնելուց յետոյ կը գրեմ:

Ձեր ՄԻՔԱՅԷԼ

(1) Ալէք Ջարայեան, արմենակազմների ներկայացուցիչը Պարսկաստանում, որ Ռոստոմի Հևա Համաձայնուել էր անցնել Ջուլիսից, Համոզելու Համար Մար-Շիմոնին, որ Իխանայ Հայ յեղափոխութեան: Թաւրիզի դաշնակցականները չէին Համակրում նրան եւ դըժգոհ էին Ռոստոմի կարգադրութիւնից:

11) ԹԱԻՐԻՁԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Նամակի վրայ ո՛չ ամսաթիւ կայ, ո՛չ վայրն է նշանակուած, ոչ էլ ստորագրութիւն է գրուած: Բազուից Ռոստոմբ գրել է 1896 Փետրուար 1ին. յաջորդ նամակը Փետրուար 6ից է: Ուրեմն, այս նամակը գրուած պէտք է լինի Փետրուար 1ի և 6ի միջև:

Սա շրդ նամակս է. առաջինը գրել եմ Բագուից, ոտի վրայ. յայտնել եմ Աստա-րայի հասցէն, Խաչատուր Ղազարեանի, գրել եմ եւ Ալէքի մասին: Մենք միասին եկանք Բագուից. նա այժմ մտնում է բոլորովին մեր կազմակերպութեան մէջ եւ որոշ յանձնարա-րութեամբ գնում է Մար-Շիմոնի մօտ: Բժիշկը պէտք է ձեզ յայտնէր եւ հեռագրէր ձեր համաձայնութեան մասին, բայց դեռ եւս հեռագիր չկայ, իսկ նամակը ուշ է, ուստի պա-տասխանատուութիւնը մեզ վրայ առնելով, որոշեցինք ճանապարհ ձգել, յոյս ունենալով, որ դուք մի առանձին հակառակութիւն չէք ունենայ: Սորա միսիայի մասին այդտեղ բե-րանացի կը խօսէք, իսկ մենք այն միայն կ'ասենք, որ դա բացի իր բուն նպատակից՝ ապրս-տամբեցնել ասորիներին, կարող է եւ մասնաւոր նշանակութիւն ունենալ. այդ երկիրը կա-րող է վերջնական ապաստան ծառայել վասպուրականի արշաւախմբերի համար. դրա վրայ մտադիր չենք շատ ոյժ գործ դնել. մեր ուժերը շատ քիչ են մեր ուզակի գործի համար, ուստի այստեղ տուինք Ալէքին 400 ռուբլի ճանապարհի ծախքի եւ այլ ծախսերի համար: Բացի այդ, խոստացանք 3 նոր ձիւի եւ տասն եւ հինգ բերդանի հրացաններ, որը նա խոս-տացաւ ծախել փողով:

Կայ մի խնդիր եւս, դա Արզումանեանների Ջիբրայէլի խնդիրն է (է տոյ կորտուած ևւ անընթեռնելի է. Տասկացում է սակայն, որ Ալէքը նիթական պահանջ ունի՝ ԽՄԲ...)... Այդ պահանջը իրաւացի ենք գտնում. մանաւանդ որ նա քողնում է իր ընտանիքը բոլորովին անապահովութեան մէջ: Եթէ խնդիրը բաւարար լուծում ստանայ, այն ժամանակ այդ մի-սիան բեռ ծանրութիւն չի լինի Դաշնակցութեան համար, բայց ինքը՝ Ալէքը չպէտք է դրանով գրազուի. իսկ դուք ինքներդ վերջացրէք այդ հարցը, հակառակ դեպքում Ալէքը իր ու-զածը կ'անի:

Ի՞նչ եղաւ Ղարան. վահանին ուզում են Կարնոյ համար. յամենայն դէպս, քող գայ այստեղ. ես էլ գուցէ Պոլիս գնամ. ժրնեւ գնալս չեղաւ. հեռագրեցի նրանց հեռագրին. քէ չեմ գալու. բանից երեւում է, որ Յոնանը եւ Սիմ-ը մտադիր են հեռանալ Ջէյքուն. երեւի ինձ իրենց տեղն են հրաւիրում: Միեայելը գնում է կամ Ջէյքուն, եթէ ուրիշ մէկը գնացած չլինի, կամ Պոլիս: Նա կը գնայ առաջ ժրնեւ. ուր կը խօսի տղերանց հետ մեր անելիքների մասին:

Կարելի է գնամ Շուշի: Գրեցէք, քէ այդտեղ ի՞նչ դրութեան մէջ է հրացան առնելու գործը:

(Ստորագրութիւն չկայ)

12) «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռոստոմի ձեռքով գրուած այս այլարանական նամակը ուղղուած է Յ. Դաւթեանին: Ո՞րտեղից է գրուած — յայտնի չէ: Բովանդակութիւնը վերաբերում է «Դրօշակ»ի խմբա-գրութեան ևւ Ռոստոմի անելիքներին:

6 Փետրուար 1896

Սիրելիս,

4-5 օր է այստեղ եմ, գնացել էի գիւղը քիչ ման գալու: Բարեկենդանի օրերն էին.

ուրախութեան ու էէֆի օրեր. կերանք, խմեցինք, ուրախացանք: Յուսով ենք, որ դուք էլ նոյնպէս ուրախ անցկացրած կը լինէք ձեր ժամանակը:

Այժմ մեծ պատուայ օրեր են, աշխատանքի օրեր: Ամէն ոք իր գործին է, ես էլ շա-րունակում եմ իմ ընդհատուած պարապմունքներս:

Տեսնուեցայ քո բարեկամ Ռոստոմի հետ: Նա ստացել է ձեզանից մի նամակ, որով հրաւիրում է ձեր համալսարանում իր ուսումը շարունակելու: Ծնողներն եւ բարեկամները չեն ցանկանում նրա հեռանալը. գտնելով, որ նա կարկառու է այստեղ ընտանիքի հոգսը քա-շելու համար: Նա էլ գործով մտադիր է հեռանալ այստեղից, բայց քէ ուր, դեռ յայտնի չէ. գուցէ իր առաջուան տեղը գնայ. գուցէ եւ Յովհաննէսի հետ ընկերանայ:

Լսում ենք, որ դուք երկուսով ուզում էք քողնել տեղւոյդ համալսարանը եւ տեղա-փոխուել ուրիշ համալսարան: Դա մենք բոլորովին ապարդիւն եւ վնասակար ենք համարում: Դուք արդէն տարիների ընթացքում ընտելացել էք ձեր պրոֆեսորներին, պարապմունքի ձե-ւիքն, տեղական կեանքի պայմաններին եւ այլն. քողնել այդ բոլորը եւ հեռանալ ուրիշ տեղ. նշանակում է գուր տեղը ժամանակ կորցնել: Մեր անկեղծ խորհուրդն է՝ մնալ այդտեղ եւ շարունակել սկսած պարապմունքները:

Յովհաննէսի վրայ յարկացած եմ. հիանալի կերպով էր տանում իր պարապմունք-ները, բայց վերջը անպասելի յետ մնաց: Վերջին համգամանքը աներելի սխալ էր նրա կող-մից: Յուսով ենք, վերջնական ֆննութիւնների ժամանակ նա նորից առաջնակարգ տեղ կը բռնի:

Ռոստոմը հեռագիրը ուղարկել է, մինչեւ ձեր խոստացած նամակի գալը, ուր յու-սով ենք հանգամանօրէն գրած կը լինէք բոլոր պայմանները:

Ընդունիր եւ հազորդիր ծանօթներիս բարեւներս եւ համբոյրներս:

Ձեր ֆ...  
(անընթեռնելի)

6 Փետրուար 1896

Բարեւ Նաճօ.

Այժմ ես այստեղ եմ եւ «Յոզգնած Ֆարիատը» գնում է... չե՞ս զարմանում: Ռոստոմը զարմանում է:

Համբոյրս ՖԱՐ-ՀԱՏ

Բարե՛ւ, Յոնան, ուղարկածս ստացե՞լ ես թէ ոչ:

Քո (անընթեռնելի)

13) ԹԱԻՐԻՁԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Այս նամակի վրայ էլ ժամանակ չի նշանակուած. յայտնի չէ եւ տեղը: Գրուած պէտք է լինի 1896 թ. Փետրուարին: Նախորդ նամակից երեւում է, որ Փետրուարի սկզբին Ռոս-տոմը վերադարձել է գիւղից. այս նամակը գրուած է նախորդից յետոյ:

Սիրելիս,

Մի շաբաթից աւել է, այստեղ եմ. բոլորովին մտադրութիւն չունէի այսօր երկար

**14) ԹԱԻՐԻՁԻ ԿՈՄԻՏԵԻՆ**

Ժամանակ մնալու, բայց մնացի՝ պատճառը մասամբ սուներն էին:

Այստեղի գործերը լաւ են գնում, բաւականին լաւ խրիդ են աճում: Թէեւ վերջին ժամանակներս շատ էին ոգեւորուել եւ ահագին քանակութիւն կարագի տաքած ապրանքից առել, կարծելով թէ ուղարկածները լաւ են ծախուել եւ թէ նոր ապրանքի կարիք կայ: Այնպէս որ հազար թէ մեր այդտեղի կանտօրան Թիֆլիսի հետ միասին կարողանան այդքան ապրանք մի տարուան ընթացքում պատրաստել եւ ծախել: Այնքան լաւ է, որ շատ արժան է. 5 մանէթով: Կարագի տեղ էլ 5-ով էր առել, միայն այս ապրանքը շատ լաւ է նրա առածից: Ուրօքներ էլ կ'առնենք, եւ կ'ուղարկենք: Պատրաստ կայ, բայց գինը դեռ չենք բարելոյել: Միսսաքը հիմա այստեղ է: Շուտով կը գնայ Թիֆլիս: Կարագի տեղ էլ լաւ կ'անի նոյն տեղը գրեցայ: Բայց նրա մասին նախօրօք գրէի Թիֆլիս եւ սպասէք նրանց պատասխանին:

Հիմա մի քանի հին մին խնդիրների վերաբերմամբ:

Գու՛ք շատ դժգոհ էք, որ մենք ընդունել ենք առանց ձեր համաձայնութեան Ալիքսանին մեզ գործակատար, պատճառ բոլորով, որ միւս առեւտրական տները, գլխաւորապէս Արզումանները վատ են դրա հետ եւ կը փոխեն դէպի մեզ ունեցած լաւ յարաբերութիւնները: Իսկ ինձ քու՛մ է բոլորովին հակառակը: Արզումանները պէտք է շատ ուրախ լինեն, որ այդ մարդը մտնելով մեր գործի մէջ, այլեւս չի մրցիլ եւ չի վնասիլ իրենց: Գոմէ այդ է մեր դրած պայմանը: Ձեր ենթադրութիւնը, իբր թէ Ալիքսանը դիտմամբ է մտել մեր ծառայութեան մէջ, որպէսզի աւելի հեշտ կարողանայ վնասիլ Արզ.ին, բոլորովին անհիմն է: Եթէ նա մեզանից առհասարակ վախճում է, եթէ իսկապէս մենք կարող ենք խոչընդոտ լինել Ալիքսանին, աւելի սրանից յետոյ կարող ենք լինել. երբ որոշ պայմաններով կապուում ենք: Իսկ եթէ այդ պայմանները բանդի եւ շարունակի իր ընթացքը, նա պէտք է ի նկատի ունենայ, որ աւելի խստիւ կը լինի մեր միջամտութիւնը յօգուտ Արզումանների, Ջարրայիլի եւայլն... Ուրեմն, յամենայն դէպս, Ալիքսանը չէր կարող այդպիսի հաշիւներ ունենալ: Մենք նրան ընդունելիս այդ ի նկատի ենք ունեցել եւ կարծել ենք, որ Արզ. դրանից պէտք է շատ գոհ լինի, որ այդպէս հեշտ ազատուցեալ անվերջ դալմազալներից: Մի խօսքով, ձեր տակտիկայից շատ բան է կախում: Մինչեւ իսկ ձեր ենթադրած անախորժութիւնները եթէ իսկապէս տեղի ունենան, դարձեալ անհրաժեշտ է նրան ընդունելը, ի նկատի ունենալով Ալիքսանի ընդունակութիւնները: Ինչո՞ւ էք դրան պահում Թաւրիզում, ճանապարհ գցեցէ՛ք ուղղակի իր տեղը, իսկ դրա հին հաշիւները դուք ինքներդ վերջացրէ՛ք, այդ է եղել մեր պայմանը:

Սարգիսը Ջարրայէլին 36 թ. է պարտ: Այդ պարտը խոստացել է վճարել Հայկը: Դուք վճարէ՛ք, Հայկից կը ստանամ: Սարգիսի հետ Սովդան նա է սարքել:

Կարագի տեղը ինձանից մի աորճանակ էր խնդրել: Ներողութիւն եմ խնդրում, որ չկարողացայ ուղարկել ինքս: Դուքս գալու ժամանակ խնդրեցի, որ ուղարկեն: Քանի քանի անգամ միտքս է ընկել, բայց միայն վերջին բաւելին, երբ գնացողներն արդէն ճանապարհի վերջին են եղել:

Ներողութիւն նոյնպէս եւ պ. Համբարձումից, այսինքն՝ ոչ թէ պ. Համբարձումից, այլ Եգանեանից, որին խոստացել էի Արտարիլի համար մի ուսուցիչ գտնել, բայց խոստումնաբաւ չկարողացայ կատարել: Իսկ պ. Համբարձումից կը խնդրէի ներողութիւնս հազորդի պ. Եգանեանից: Վերջինս յուսով եմ ներողամիտ կը գտնուի, ի նկատի ունենալով իմ բացառիկ դրութիւնս, որի պատճառով չէի կարող անձամբ դիմել սրան, նրան, իսկ մի քանի պատահական ուսուցիչներ, որոնց ես դիմեցի, չցանկացան մի քանի ամսուան համար ճանապարհի ընկնել: Թող հաւատացած լինին, որ Սեպտեմբերին մեծ քանակութեամբ ցանկացողներ կը լինին, մանաւանդ որ դպրոցներից շատերը Ռուսաստանում փակուած են:

Արրահամի 5000 պարտից որքան էք ստացել: Բարեւներս եւ համբոյրներս:

**ՋԵՐ ՌՈՍՏՈՄ**

Մկրտչի մահի մասին արդէն իմացած կը լինիք: Յիմար մահ էր. խեղճը շատ տանջուեց:

**ՆՈՅՆ**

Նամակի վրայ ժամանակը չի նշանակուած: Գրուած պէտք է լինի 1896ի դարնան. ճիշդ ամսաթիւր դժուար է որոշել:

Սիրելիք,

Երկար նամակ յետոյ կը գրենք: Առայժմ հարկ ենք համարում հազորդի հետեւեալը: Մի քանի ժամանակ կայ, որ սկսել ենք գործնականապէս գրադուել **Ձէյթուեղ(1)**: «Ընդհանուր» կոչուած ժողովում այդ մասին խօսուել է. ուրեմն աւելորդ է դրա մասին երկար խօսել:

Շատ լաւ կը լինէր, եթէ առաջուանից պատրաստութիւններ տեսնուած լինէին. այժմ կարելի կը լինէր շարժուել: Բայց ինչ եղել է, եղել: Այժմ պէտք է լուրջ կերպով գրադուել: Արդէն մէկը ճանապարհ է ընկել նախնական ծանօթութիւնների համար: Հրաշք համաձայն է այնտեղ գնալու. կը գնան եւ ուրիշները: Բայց մեզ հարկաւոր է մի ազգական այժ, որն իսկապէս տանէր այնտեղի գործերը: Մեր կարծիքով անհրաժեշտ է, որ Նիկոլը ճանապարհ ընկնի: Գործը իր ուզածն է. «Կազմակերպութեան» գործերի մէջ կարող է բոլորովին շխառնուել: Մենք հաւատացած ենք, որ Նիկոլը կարող է մեծ յաջողութիւն գտնել: Եթէ Ազասու, Ապահի, Հրաչեայի նմանները կարողացել են դեր խաղալ, ուրեմն կարելի է երեսակայել. թէ ինչպէս կ'ընդունուի Նիկոլը: Բացի այդ, շատ հարկաւոր կը լինի կարոն եւս: Կարոյի մասին գրեցինք Թիֆլիս, յուսալով, որ նա այնտեղ կը լինի: Եթէ Նիկոլը համաձայն է, խնդրենք անմիջապէս հետագրել ՅՕՈՆ, իսկ եթէ ոչ՝ ՈՍՈՆ: Առաջին դէպքում թող առանց ժամանակ կորցնելու գայ Ռուսաստան, առնի կարոյին եւ Բոլգարիա անցնի:

Պէտք է սասած, որ Կրետէի դէպից յետոյ մանաւանդ, ընդհանրութեան ուշադրութիւնը այնտեղի վրայ է դարձրած: Եւ եթէ մեզ յաջողուի լուրջ բան սկսել, հասարակութիւնը շատ մեծ վստահութեամբ կը վերաբերի մեզ: Ի միջի այլոց հնչակեան երկու խմբերը եւս այնտեղ են ուզում գործել եւ ամէն ջանք են քափում մեզ հետ միութիւն կապելու, զգալով իրենց թուլութիւնը: Հենց այսօր մի դիմում եղաւ արդէն **Ձէյթուեղ(1)** գործիչների կողմից. դրա մասին յետոյ: Մի խումբ եւս (դարձեալ նոյն տեղը) բացարձակապէս դաշնակցական է յայտարարում իրեն: Մի խօսքով հանգամանակները նպաստաւոր են:

Համբոյրներս՝  
**ՋԵՐ ՌՈՍՏՈՄ**

Նրումանդի եւ Մանուկի նամակները ստացայ. դրանց մասին միւս անգամ:

(1) *Մածկազիր*:

**15) ԹԱԻՐԻՁԻ ԿՈՄԻՏԵԻՆ**

Նամակի վրայ տեղ ու ժամանակ չէ նշանակուած: Գրուած է ժընեւից, 1896ին, Հաւանաբար դարնանը:

Այս բովանդակ նամակ ստացայ Սիմոնից. գրում է, որ Howard անունով մի ամերիկացի:

կացի, որ անցեալներում Պարսկաստան է եղել, այժմ Ամերիկայում պրոպագանդա է անում յօգուտ հայերի: Նրա մտադրութիւնն է հայերին գաղթեցնել Պարսկաստան եւ այլ տեղեր: Այդ նպատակով նրան առայժմ յատկացրուած է մօտ 10.000 տոլար: Փող տուողները (վերո- յիշեալ Լիզան — Դաշնակցութիւնը) չեն հաստատում բացարձակապէս **Howardին եւ ուզում են**, որ մեր մէկի մասնակցութեամբ կատարուի գործը: Կարծում են, որ այդպիսի մի մարդ կը գտնուի, օր. *Բժիշկը*(1): **Howard**ի իսկական նպատակն է, ինչպէս գրում են, *զէնք մատակարարել*(1): **Ձեզանից** է կախուած նրա հետ կապը հաստատ պահպանելը: Եթէ նա իր նը- պատակը լաւ գործ չդրեց, անմիջապէս տեղեկացրէք մեզ: Փող, չէք ստանալիս, պէտք է, որ մեր մարդու ստորագրութիւնը լինի: Այս պայմանների մասին որոշ յետոյ էլ կը գրեմ:

Պատրաստուում է եւ մի ամերիկացի երկրասարդ գալ այդտեղ, բայց նախօրօք ցան- կանում է *զինամիտ* սովորելու(1) գնալ:

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

(1) *Մածկազիր*:

## 16) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵԻՆ

*Նամակը գրուած պէտք է լինի Ժընեւից(\*)*:

15 Մայիս 1896

Սիրելիք:

**Զգիտեմ**, ճանապարհի որ կէտից մի նամակ եմ գրել ձեզ: Այն միայն կ'ուզեմ աւե- լացնել, որ 3-4 օրից յետոյ գնալու եմ, շատ եմ ուշացել: Տեղիս գործերը շատացել են, տե- ղացիք էլ դադարել են ու հիւանդացել: Հարկաւոր է մի նոր մարդ: Գրելու եմք Սիմոնին, որ վեր կենայ գայ:

Քարեններս եւ համբոյրներս:

ՌՈՍՏՈՄ

Այն կտը, որի համար խօսում էինք Երուանդի հետ, այդտեղ կը պատրաստե՞ք, թէ այստեղից ուղարկեմք: Շտապեցէք շուտով իմաց անել:

(\*) *Աւելցուած է Յովնան Դաւթեանի մէկ նամակին տակ, 3րդ եւ 4րդ էջերուն վրայ:*

## 17) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵԻՆ

*Նամակը գրուած է Վիեննայից: Ժընեւից Պոլիս գնալիս, ճանապարհին, հիւանդու- ցել ու հիւանդանոց էր մտել:*

16/28 Յունիս 1896

Սիրելիք,

Նամակս գրում եմ, բայց չգիտեմ թէ ձեզանից ով կը կարգայ: Այժմ ո՞վ է այդտեղ, ո՞վ է գնացել, ո՞վ է մնացել, ո՞վ սաղ, ո՞վ մեռած... Ասեմք, ես սպասում էի որ նպատակա- կէտիս հասնեմ, տեղում հաստատուեմ եւ այնուհետեւ սկսեմ կամոնաւոր նամակագրութեան բոլորի հետ: **Ձեզ** ի՞նչ է եղել. դուք ինչո՞ւ էք այդպէս ժլատ նամակագրութեան մէջ. ի՞նչ էք անում, ի՞նչը յաջողուեց, ի՞նչը չէ. որքա՞նը հաստատ է, որքա՞նը սպասելի: Այս քանակ այնպիսի բաներ են, որ բացի այն որ հետաքրքիր են այս տեղագիտների համար, *անհրաժեշտ* էլ են: Վանայ ընդհարման մասին իմացայ տեղական լրագիրների հետագիրներից: Մնում է միայն գուշակութիւններ անել: Ինձ քուտ է. որ առաջին անգամ հայերը լաւ են դիմադրել. յետոյ երեսի տղերքը հեռացել են քաղաքից. դրանից յետոյ տեղի է ունեցել արդէն իսկական ջարդը, որը պէտք է որ ստակալի եղած լինի, ի նկատի ունենալով տանկական աղբիւրի ցոյց տուած թիւը (400): Դեռ լաւ է, որ դրանով վերջանայ: Անշուշտ զանազան տեղերից քափ- ուելու են քաղաքի վրայ, գիւղերն էլ գուցէ բոլորովին ոտնատակ արուին: Ի՞նչ դիրք էք բռն- նելու դուք: Բայց կարծեմ կառավարութիւնը ձեզ շատ է խնայարելու, ժամանակ չի տալու մտածելու: Յովսէփից եւ Ռսկանից խնդրել էի հեռագրով յայտնել ժընեւ ինչ որ պատահելու լինի: Արդեօք կատարե՞լ են խոստումը: Այստեղից (Մարտ. Նապար. հասց.) հեռագրով յի- շեցրի ձեզ. փող խնայել պէտք է այս դէպքում: Ինչ որ է, խնդրեմ նամակս ստանալուց ան- միջապէս պատասխանե՞ք եւ կամոնաւոր կերպով շարաքը, գոնէ երկու շարաքը մի անգամ նամակ գրէք: Ի՞նչն է արգելում: Հեռագիր միշտ կարող էք ուղարկել Յոնանի անունով, կը ստացուի (միայն անունը եւ ազգանունը):

Ես էլ ահա ուղիղ երեք շարաք է պառկած եմ հիւանդանոցում, որտեղից եւ գրում եմ այս նամակը: Կը մնամ գուցէ դեռ 10-14 օր, իսկ հիւանդանոցից դուրս գալու յետոյ ըս- տիպուած եմ վերադառնալ կրկին ժընեւ եւ միաժամանակ այնտեղ մնալ. մինչեւ դրութեանս որոշուելը այս կամ այն կողմը: Տարիների ընթացքում կուտակուած հիւանդութիւնները, որոնք ոչ մի ժամանակ չեն բուժուել, միացեալ ուժերով ինձ հիւանդանոց էջեցին: Այս քանի մը օրերս ես ինձ մինչեւ իսկ շատ լաւ եմ գգում. տեսնեմք: Այնպէս որ իմ Պոլիս գնալու մնաց. չնայելով, որ ամէն պատրաստութիւններ տեսնուած էին մտնելու համար: Իսկոյն յայտնեցի վարդին, որ շտապի իմ փոխանակ գնալու: Երէկուայ ստացած նամակում գրել է, որ արդէն պատրաստ է եւ սպասում է առաջին նաւին: Գուցէ նա այժմ արդէն տեղումը լի- մի: Նոյն տեղը ճանապարհ է ընկնում Միխայէլը (Տէր Մարտ.), իսկ շուտով կը գայ եւ Սըմ- բատը(2): Նա կամ ուղղակի այստեղ կը գայ: Այնպէս որ մարդու պակասութիւն չի լինի այնտեղ:

Արդէն ձեզ յայտնի կը լինի այստեղի մի քանի անախորժութիւնների մասին: Գոր- ծերը բարդացել են: Յոն. հիւանդ է, եղած ուժերը բաւարարութիւն չեն տալիս: Խորհրդակ- ցելուց յետոյ վնասեցինք հրաւիրել Անտոնին, զգալով միեւնոյն ժամանակ, թէ որքան մեծ կո- բուստ կը լինի մեր այնտեղի գործերի համար: Ուրիշ կերպ էլ չէր կարելի վարուել. «Գր- շակ»ի հարցը նոյնպէս լայն նշանակութիւն ունի: Միեւնոյն ժամանակ գրեցի Անուշին, որ գայ գոնէ միաժամանակ մնալու պայմանաւ: Գրանից այդ հարցի վերաբերմամբ համարեա թէ բացասական պատասխան ստացուեց (ստացայ ուշ, այստեղ). նամակս լաւ չէր հասկա- ցել: Անտոնից դեռ դրա մասին ոչինչ չկայ: Իսկ մինչեւ այժմ ստացուած նամակներից պարզ է, որ նա չի կարող թողնել, հեռանալ: Առաջարկում էին ինձ մնալ, բայց ես մերժեցի եւ

խոստացայ կանոնաւոր կերպով աշխատակցել Պուլից, որը ունի շատ յարմարութիւններ: 1) կապուած է բոլոր միւս տեղերի հետ, ուրեմն, այնտեղ կարելի է լաւ հետեւել ընդհանուր շարժման: 2) կապուած է եւրոպայի հետ: կարելի է հետեւել դիպլոմատիային: 3) Ապրիլ-յուլ էի *անկեղայ*, կողմնակի պարապմունք չէի ունենալու, ուրեմն ազատ ժամանակ միշտ կը լինէր: Այնտեղ աւելի յարմար կը լինէր բան թէ ժընեւում, որ բաւականաչափ ու բազմա-տեսակ արգելիքներ կան կանոնաւոր պարապմունքի համար: Հա՛, մոռացայ ասել, որ այն-տեղ ունենէմ արդէն երկու ինտելիգենտ ընկերներ:

Այսպէս, ուրեմն, ես կրկին վերադառնում եմ ժընեւ, որտեղ կը սպասեմ ձեր նա-մակին:

Մի քիչ էլ միւս տեղերի մասին:

Բուլղարիայում, Ռումինիայում, ինչպէս գրում է վարդը, դեռ կանոնաւոր կազմա-կերպութիւններ չի յաջողուել առաջ բերել, չնայելով, որ մեզանից մի քանիսը եղել են այն-տեղ: Դրա պատճառն այն է, որ մշտական մարդ չունենէմ այնտեղ: Գնում եմ, խոստանում եմ, հեռանում եմ, մոռանում եմ: Ամերիկա նախապարհ է ընկել Շէյխը: Դրան յաջողուել է շատ տեղեր կազմել կոմիտէաներ, բայց մի հանգամանք խոչընդոտ է հանդիսացել փող ժողովելուն: Բանից դուրս է գալիս, որ դրա համար անհրաժեշտ է կազմել հրապարակական միտինգներ, սրից յետոյ միայն կարելի է ձեռնարկել հանգանկութեան, իսկ Շէյխին նախապայքար կա-րող են երեւակայել նրա շղկած դէմը, երբ նրան առաջարկել են հրապարակ դուրս գալ եւ նա ասել: Ենդեր նարահատ հեռագիրը հեռագրի ետեւից է խփում եւ Յոնանին կամ Իսու-փին պահանջում խօսալու համար: Շէյխի ամբողջ գործը կը քանդուէր, երբ մեր «մուրթեալ ոչխարներից» մէկը խեղճի չգար: Բանն այն է, որ Ամերիկա պոլսեցիների կողմից էլ մէկ տանկատանցի էր գնացել: Ամերիկա հասնելուց յետոյ, նա համոզում է, որ «կուսակցա-կան» լինել չի հարկաւոր եւ միանում է տեղական «չէֆուական» կուսակցութեան հետ: Այդ դեռ բաւական չէ: նա դեռ աշխատում է Շէյխին էլ իր կողմը գրաւել: Այդպիսով, նա փոխա-նակ օգնելու Շէյխին, սաստիկ նրան խանգարում է: վերջերս նա զոջացել է, տեսնելով իր բայի վնասակարութիւնը, միացել է Շէյխին: Իրեն ստանկատանցի, նա, ի հարկէ, բոլո-րովին բաւականութիւն կը տայ ամերիկացիներին խօսալու պահանջներին: Հիմա, ինչպէս գրում են, տեղական գործերը լաւ են գնում:

Այստեղացիների եւ պոլսեցիների ձեռնարկած գործը Զէյթունի վերաբերմամբ «ֆիաս-կո» կլից: կիպրոսում կոմիտէս էր կազմուել, ինտելիգենտ ուսանող ուժեր էին գնացել, բայց այդ բոլորը պարզիւմ անցաւ, որովհետեւ նախապարհները բոլորովին կտրուած են Ե-դիլ: Իսկ միւս ծրագիրը չեն իրագործել (Զէյթունի շրջակայքում գործել կառավարու-յեան գլուխը խոսնելու համար): որովհետեւ շրջակայքն արդէն աւերուած են եղել: Այնտեղ էր գնացել Միք. Տէր Մարտիրոսեանը, որը, ինչպէս գրեցի, արդէն Պուլտը նախապարհին կը լինի: Զարմանալի մարդիկ են մերոնք: Տփիսիում ուղարկում էինք մի քանիսին հարուստների մօտ գնէի համար փող ժողովելու, եւ նրանք, որոնք գնում էին հարուստներին համոզելու, տեսակցութիւնից յետոյ դատարկ ձեռքերով վերադառնում էին եւ *աշխատում մեզ համոզել*, որ յեղափոխութիւնը այսպէս է, այնպէս է, որ սպասողական դիրք պէտք է բռնել եւ այլն: Մարդ ենք ուղարկում Գաշնակցութեան համար բարոյելու, նրանք մի քիչ պտրտելուց յետոյ դառնում են Գաշնակցութեան երդուեալ քնամի (ենոք, երուանդ)(3): Մի քանի փայլ կա-տարեալ յոյս ունէինք. դա էլ եզրիպտոսից անցնելիս, փոխանակ իր յանձնարարութիւնը կա-տարելու, ենթարկուում է մի քանի պրոծեկտորների ազդեցութեան եւ սկսում է «միութեան» խնդրով գրառուել: Ամէն տեղ կարելի է գտնել մարդիկ, որոնք ուզում են իրենց գործիչ ցոյց տալ, բայց չգործել: Պայմանաւորուելով մի քանի այդպիսիների հետ, նա երկար նամակնե-րով աշխատում է համոզել հմբարցութիւնը, որ լաւ բան է միութիւնը եւ այլն: Մի կողմ էլ են գրել «Իրօշակ»ին, նոյնը «Հնչակ»ին: Մագալուն նա է, որ այդ միամիտը աւելացրել էր, որ մենք աշխատենք որքան կարելի է շուտ տպագրենք, թէ չէ «Հնչակ»ը կը տպագրի առաջինը եւ մեր վարկը կը ձգի: Համոզուած լինելով, որ «Հնչակ»ը շուտով չի տպագրի եւ մեր վարկը չի ձգի, մենք էլ չտպագրեցինք, թողնելով յոգուածագրին մի քիչ էլ մտածել իր ուսուցիչ-տական ձեռնարկութեան վրայ: Այդ «միութեան» խնդրից երեւի մենք երբեք չենք ազատուե-լու: Այդպէս էր եւ հանգուցեալ Մալոյեանը, որը այս տարի դարձել էր *ամենաթուփող դաշ-նակցական* եւ առում էր, թէ համոզուեցինք, որ «գրանց հետ չի կարելի գործ ունենալ»: Այդ-

պէս էր եւ վարդը: Երեկուայ նամակում գրում է, թէ լաւ նախապայքար դրանց, այժմ ինքը «միութեան հարցի ամենակատարի քննամի՞ն է»: Կարծես ամէն մի դաշնակցական սեփական խելով է ուզում հասնել ամէն բանի, կարծես նա անպատճառ պէտք է անցնի «միութեան» հարցի նախապայքար (մի ժամանակ ես էլ էի այդպէս): Զէ՛, ախպէր, մենք շատ ենք ինքնու-րոյն, պէտք է քիչ յիմարանանք, որ գործը առաջ գնայ: Յեղափոխութիւնը խելօք մայրիկ չի սիրում:

Տանկական յեղափոխականների հետ յարաբերութեան մէջ ենք: Բայց դժուար թէ դրանցից բան դուրս գայ, որովհետեւ այր դրանք դեռ եւս միայն անուկով են յեղափոխա-կան: Այլ էի վերաբերմամբ դուր շատ անտակտ էք վարուել տպով նրան ընդամենը 4-5 հատ: Երէ իսկապէս չէք ուզում, այդ ուրիշ բան է: այն ժամանակ դուր բոլորովին մերժեցէք դրա հետ գործ ունենալ: Իսկ կիսատ-պատճառ բանից ոչինչ դուրս չի գայ: Մենք բոլորովին չենք կարողանում օգտուել հանգամանակներից: Իմ խորին համոզմունքով մեր իսկական խմբից 20ը պակաս լինի, այնքան մեծ նշանակութիւն չի ունենալ, մինչդեռ այդ 20ը Այլ էի ձեռքում կա-րող է սահազին աջգործիւն գտնել: կարելի էր գլուխ բերել մի գործ, որն իսկապէս աչքի կ'ընկներ: դա կայտնուած է աւելի գործող անձանց նարախկութիւնից: Այսպէս յարմար բոլք է ձեռքից բաց քողմել չի կարելի: Դարձեալ աչքները այն կողմը դարձրէք, մանաւանդ վերջին դէպքերից յետոյ ոչ թէ 20, այլ 50 եւ աւելի էլ կարելի է յատկացնել այդ բանին: Դրա հետ միաժամանակ երէ Տէրսիւմն էլ շարժուի...:

Գրել էի, որ այն 10-000ը փստ դուրս եկաւ: Այդ արդէն անպատշաճի հարուած էր. իսկայն այստեղի գումարից մօտ 1500 ֆր. մարդու ձեռքով ուղարկեցինք Բագու ձեզ փո-խադրելու համար, իսկ 1000 ֆր. էլ ուրիշ նախապայքարով պէտք է ուղարկէինք: Երեւի արդէն ուղարկել են, ստացած կը լինէք:

Այստեղ աշխարհից կտրուած չեմ, համարեա ամէն օր նամակ եմ ստանում ժընեւից, տեղեկութիւններ միշտ հաղորդում են, բայց թէ այնտեղ էլ ոչինչ չգիտնեմ այդտեղի գործերի մասին: Հիւանդանոցում մէկը կայ, որ փրանսերէն խօսում է. նա է քարգմանում հեռագրի-ները: Լուրքեամբ ի՞նչ կայ այդտեղ. ի՞նչ եղան այդտեղի տղերքը. ի՞նչ եղան Նիկոլը, Պետոն, միւսները: Ո՞վ գնաց, ո՞վ մնաց, ո՞վ է եղել այդ ժամանակ քաղաքում, ո՞վ է սաղ, ո՞վ մե-ռած: Արիստակէսը ո՞րտեղ է: Այդ անպիտանը ինչո՞ւ նամակ չի գրում:

Համբոյրներս բարեկեղ...  
Զեր՝ ՌՈՍՍՈՒ

Հիւանդ չլինէի, այսօր ներկար նամակ չէի գրի:

(1) *Մար-Շիմոն*. (2) *Մմբատ Սաչաուրեան* — *Բորիս*. (3) *Ենոք Գէնջեան, Եր-ուանդ Հազարեան*:

18) «ԻՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նամակի վրայ անձանօթ ձեռքով մակագրուած է. «Յունի. 19, 96, Վառնա»: Ան-շուշտ, սխալմունք է, տակը գրուած է «19 յուն», նշանակում է՝ 19 Յունիս:

Սիրելիք,

Եամպօլից դեռ ոչինչ չեմ ստացել: Երէլ մի նամակ գրեցի Ալոպին, յայտնելով իմ հիւանդութեան մասին. առաջարկեցի, որ ինքն իմ փոխանակ գայ, իսկ ես առողջանալուց յե-տոյ կը գամ ետեւից: Տեսնենք, նա ինչ է պատասխանում:

Գործերն սկսուել են խտտուել: Երկուսն հեռագրից պարզ է, որ վանում համ կոտորած (կամ առելի լաւ է տակ կտել) է եղել, համ բայան: Գործը կարող է տարածուել եւ անկատարան կը տարածուի վասպուրականում, մանաւանդ երբ Պարսկաստանի իմբերն անցնին, երկ միայն չեն անցել: Գրան կը հետեւեն էրզրումի շրջակայքի խմբերի ընդհարումները: Այդ ժամանակ Պոլիսը չպէտք է անտարբեր մնայ, այնտեղ պէտք է շտապել մի բան անել: Պարսկաստանից կարող էլ հեռագիր ստանայ կատարածի մասին: Խնդրել եմ, որ երէ մի բան լինի, անկատարան հեռագրեն: Թուանշանների նշանակութիւնն արդէն գիտէ:

Ռեքեմն, գործի եզրէութիւնը գրէ՛ Պոլիս, բայ Ակոպին(1) անցկացնեն, իսկ ես կը գնամ 3 շաբաթից յետոյ: Յոյս ունեմ, երանդութիւնս չի խանգարի:

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

19 Յուն. 1896

(1) Վարդ-Պատրիկեան:

19) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵԻՆ

3 Յուլիս 1896, Վիեննա

Մտա մի շաբաթ ստաջ մի նամակ էլ եմ ուղարկել Ջարք- հասցէով: Ստացայ երէկ Նիկոլի նամակը: Ակզում կարծեցի, որ դէպքից յետոյ գրած նամակ է (անգլական լրագիրներում կարդացել էի, որ փախստականները դէպքից յետոյ գնացին դէպի Պարսկաստան, աւերելով եւ այրելով նամակարի վրայ գտնուած տանկական գիւղերը, այնպէս որ մասամբ տեղիէ ունէի կարծելու, որ Նիկոլն էլ դրանց մէջն է եղել): Սաստիկ ուրախացայ, կարծելով թէ ստոյգ տեղեկութիւն կը ստանամ պատահածի մասին: Բայց, դրժ-բախտաբար, տեսայ շուտով իսկութիւնը, այն էլ մի այդպիսի անսպասելի իսկութիւն: Ձեմ կարծում, որ յաջողած լինի տղերանց ազատել, երէ միայն նրանք մնացել են բանտում մինչեւ դէպքը, որովհետեւ տանիկ կատարութիւնը հանգիստ չի բողոնի: Նրան, ի հարկէ, կը պաշտպանեն եւ օտար պետութիւնները, մանաւանդ ռուսաց: Պարսիկ կատարութիւնն էլ ուզեմայ-չուզեմայ, պէտք է սկսի իր հալածանքները: Արդէն ով գիտէ, դալմադալը ընկած լինի...

Մի վատ միտք է մտել գլուխս, դուրս չի գալիս: Այժմ ինձ քուտ է, որ հնչակեանները օգտուած կը լինեն այն հանգամանից, որ մեր ուժերը բացակայ են եղել Բաղաբից եւ անապարած կը լինին շուտով «մի բան սարքել», որ դարձեալ իրենց անունը փայլի: Աստուած սպասի, երէ այդ նրանց ըրած բանը լինի, էլ դրանց ձեռքից չենք պրծելու, ամէն տեղ կը հաւատացնեն, որ իրենք են, որ կան: Մինչեւ այժմ մեզ չյաջողուեց մի այնպիսի գործ կատարել, որ մեզ վրայ դարձնենք ընդհանուրի ուշադրութիւնը: Մենք դարձեալ արտաքին ձեռք վրայ, անունի վրայ ուշադրութիւն չենք դարձնում: Ի՞նչ եղան մեր զբօշակները... Գոնէ այդ էլ մէլ դան բերուի: Մեր ուժերը շատ, մեր կատարած գործը անհամեմատ մեծ, բայց էլի նըրանց անունն է տարածուել եւ մինչեւ իսկ մերոնց կատարած գործը նրանց անունով է կնքուում:

Գրա շնորհիւ Հնչակեան կուսակցութեան ոչ միայն յաջողուում է իր գոյութիւնը պահպանել, այլ եւ մրցել մեզ հետ... Կարծես թէ մեր ուժը պատճառ է դառնում մեր բոլորութեան: Թէ մենք չենք կարողանում օգտուել հանգամանքներից, դրան ապացայց հէնց Նիկոլի նամակը: Դա մինչեւ իսկ գլանում է յիշել նամակում բոլոր ընկածների անունները (յիշում է

միայն Շերային), խոստանում է յետոյ գրել: Բայց արդե՞ր կ'անի - կը նկարագրի արդե՞ր հազար ու մի բաներ, որոնց տխուհուս է եղել... չեմ կարծում: Յետոյ էլ դեռ տեղեկանում է, թէ ուղարկածը չապագրէ: Կարծես պարսից կատարութիւնը էնց «հրաշքի ի նամարին է սպասում, որ նրանց ազատ կամ դեռ բանտում պակի: Պարսից կատարութիւնը հատուցած չէ, որ դրանք յեղափոխականներ են: Որ գազարական է մինչեւ այժմ էլ արդէր կատարել...»

Նիկոլը գրում է, որ չընկնուենք, երբ սկսին ծիծաղել խմբի բոնուելու վրայ: Ինչ անեոց մնայ, չեն համարձակուի: Մեր կոյր պարսից կատարութեան ետա չէ: Ուրիշ կերպ անմտութիւն կը լինէր վարուել:

Գեա էլի մի շաբաթ պէտք է մնամ, ետիս դուրս եկա՝ երանդանցի շաբաթներն ի՞նչ երկար են լինում... Լեզու չգիտնալուս պատճառաւ համարեա ամբողջ շաբաթ լուս եմ մընում, ինձ ու ինձ եմ տրում՝ ակամայ ամէն տեսակ մտէր գլուխս տակնուվրայ են անում, մանաւանդ գիշերները:

Լեւոն Սարգսեանը եկել է ժընեւ...: Մի տեսեմ այդ ինչպէս չեն կարողացել ձեզ գրիչներ հասցնել: Նրանք ինձ խոստացան մեծ բանակութեամբ, մինչդեռ Անտոնի նամակից երեւում է, որ իրենց խոստումը չեն կարողացել կատարել:

Անհամբեր սպասում եմ ձեր նամակին:

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

20) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵԻՆ

29 Օգոստոս

Սիրելիք,

Լինելով կատարեալ անորոշութեան մէջ, չիմանալով, թէ արդե՞ր ստացուել են իմ նախկին նամակները, թէ ոչ, գրում եմ այս անգամ այս կարն նամակը:

Արդէն ստացած կը լինէ՛ք «Կարնոյ Յիշատակին» գրիչը: Նոյն ձեռով, նոյն ծրագրով կարելի է կազմել միւս բաղաճների համար, դա շատ հարկաւոր է: Ուստի, կամ դուք կազմէ՛ք եւ ուղարկէ՛ք եւ կամ թէ չէ նիւր ուղարկէ՛ք, մենք ինքներս կը կազմենք:

- 1) Կատարածից ստաջ եղած դրութիւնը, սկսել հետոյից, պատմական ձեռով ներկայացնել շարժման գարգացման բնագրը, երեսների, նախասկզբների անունները, գործերը: Ուղարկեցէ՛ք եւ եղած լուսակարները: Այս պատմական մասը կարնոյ վերաբերմամբ բողոտած է որոշ պատճառներով:

- 2) Կուրի նկարագրութիւնը ամփոփ գրած:

- 3) Ընկած երեսների կենսագրութիւնները եւ լուսակարները:

Ձեր գլուխը խտր կը լինի, գուցէ չկարողանամ բոլորը կատարել, բայց աշխտեցէ՛ք գոնէ հու՛մ նիւր մատակարարել: Գուք մինչեւ այժմ այնքան անփոյր զանուցամ, որ չուղարկեցի՛ք Պետոյի մասին ոչ մի տող: Այս պատճառով նրա մասին միշտ յետաձգում է:

Առաջին երկու կէտերը ծայրայեղ դէպքում այստեղ էլ կարելի է գլուխ բերել, բայց խնդրում ենք, որ վերջին կէտը անպատճառ կատարէ՛ք:

Այս օրերս հրաւեր ստացանք Փարիզի «Հայկական Միութիւնից» ուղարկել մի պատգամաւոր Փարիզ, Հոկտ. ամսին կուսակցութիւնների համերաշխ գործունէութեան մասին խոս-

ւանլու համար: Հրատեղը կ'ընդունին: Արդէն գրել ենք եւ ուրիշ տեղեր, հարցնում ենք այժմ ձեր կարծիքն էլ: Գրէ՛ք. քէ ինչպէս է եղել ձեր յարաբերութիւնը երկուսի հետ էլ անցեալում, ինչ փորձեր է՛ք արել, ինչու յաջողութիւն չէ՛ք գտել եւ ինչ պատճառներից դրդուած նախկին արմենականները դարձան մեր կողմը: Բայց խսկոյն եւ եք ուղարկէ՛ք, շուշացնէ՛ք:

Անունը գրել էք այդտեղ անցածների մասին, որ ձեր մէջ կարծիքների տարբերութիւն կայ եւ քէ ձեզանից մէկը Թիֆ: Է գնալու խորհրդակցելու համար:

Կարծում ենք, որ ժամանակն է մի ընդհանուր բան գումարել այնպէս, ինչպէս ԳՅին: Մեր կարծիքն է, որ այդ բանը յարմար է Հոկտեմբերին եւ արտասահմանում: Առաջ կը կայանայ մի մասնուոր այնպէս, ինչպէս ամէն տարի Յունուարին կայանում է, կ'ընտրուին 2-3 մարդ, որոնք հանապարհ կ'ընկնին արտասահման: Սպասում ենք ձեր կարծիքին տեղի եւ ժամանակի. իսկ գլխաւորապէս նպատակայարմարութեան մասին: Ուրիշների կարծիքներն էլ իմանալուց յետոյ. կը յայտնենք ձեզ:

**Յոհաննէր(1)** վաղուց է հանապարհ ընկել ղէպի **Կ. Պոլիս(1)**: Հասել է քէ չէ, դեռ յայտնի չէ: Սպասում ենք նրա նամակին:

Պոլսոյ խառնակութիւնների մասին արդէն իմացած կը լինէ՛ք: Մեզ դեռ որոշ բան չի յայտնի: Այնտեղ են **Աղբոր, Մարտիրոսը եւ Սմբատ Խաչատրեանը(1)**:

Մեր ընկերներից երկուսը Լոնտոն են եղել եւ ծանօթացել են Հնչակեանների հետ: Գլխաւորը եւ մանաւանդ կինը անտանելի են: Մէկի ասելով, միւսները շատ լաւ են երեսում: Գրանց մէջ խառնակութիւններ կան, գուցէ շատ շատերը բաժանուեն:

Այս ամառ երոպական ուսանողների հաւաք էր սկսուել ղէպի մեր բաղաբը: Առաջ եկան Նանսիի ուսանողները, ծանօթացանք եւ լաւ տպաւորութեան տակ բաժանուեցինք: Այժմ էլ սկսել են գալ գերմանականները, կան եւ Ռուսաստանից: Մի քանի ժողովներ ենք ունեցել, այս երեկոյ էլ մի ժողովի նման բան կ'ունենանք: Հետեւանքները վատ չեն մեզ համար: Այստեղ է եւ հայրենակիցս՝ **Անուշը(1)**:

Սիւնոնի յաջողուել է Ամերիկայում կազմակերպել 13 կոմիտէներ բուն դաշնակցական: Բացի այդ, հաստատուել է այնտեղ մի կազմակերպութիւն եւս, որը կապուած է լինելու բացառապէս մեզ հետ: Այդ կազմակերպութիւնը ահագին դրամական միջոցներ կ'ունենայ. ամերիկացիք են լինելու օգնողները: Անունն է՝ «Հայկական Պաշտպանութեան Դաշնակցութիւն»: Որովհետեւ Սիւնոնը չէ կարող գլուխ հանել իր միամտութեամբ, գուցէ շատ խաչագողներ օգտուին զրանից, ուստի Սիւնոնը վերադառնալու է, իսկ նրա տեղը գնալու է (արդէն հանապարհ է ընկել) Եռստուփեանը:

Բարեւներս եւ համրոյրներս:

**Ձեր՝ ՌՈՍՏՈՄ**

(1) **Մածկազիր:**

**21) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵԻՆ**

6 Սեպտեմբեր 1896

Սիրելիք,  
Ես շատ նամակներ եմ գրում ձեզ, բայց պատասխան չեմ ստանում: Պոլսոյ կողմի մասին արդէն իմացած կը լինէ՛ք: Տղերքը լաւ է՛իմ մտածել, բայց դար-

ձեալ խարդախ դիպլոմատիային են գոհ գնացել: Մարսէլում դրանց բանտ են տանում: Տեղացոց պատրաստութիւնը՝ լաւ ցոյց անելու՝ չի յաջողում: Աւելի փառաւոր ցոյց պէտք է անելին Փարիզի հայերը. ինչպէս եւ այստեղի ուսանողութիւնը: Ինչպէս երեսում է, նրանց կ'մերթիկա կը բռնեն: Պոլսից անմիջական տեղեկութիւն դեռ չունինք, քէ եւ նամակներ ստանում ենք: Նրանք կարծում են, որ եկողները մեզ հասած կը լինին եւ պատմած:

Հասարակութեան վրայ տպաւորութիւնը սաստիկ է. մինչեւ իսկ քչնամի քերքերը խոնարհում են այդ հերոսական բայի առաջ: Սաստիկ ցանկութիւն կայ ամէն տեղ դրանց տեսնել, խօսեցնել եւ լուսանկարները ունենալ: Արդէն այդպիսի դիմումներ եղել են մեզ, դեռ տղերքը տեղ չհասած:

Հետեւանքի մասին միայն այն կարելի է ասել, որ դիպլոմատիայի մէջ երկիւղ է սկսել ակրել, տեսնելով հայերի յուսահատական անձնուրաց բայերը:

Շուտով տեղեկութիւն կ'ունենանք: Ձեր ուղարկած նամակները վանի մասին ստացանք: Աշխատեցէ՛ք մի քանի բան գրել Պետոյի. նրա հետ ընկածների մասին: Մի առանձին գրիչով կը հրատարակենք. երէ չկարողանանք համարի մէջ գետեղել:

Ուղարկեցէ՛ք որքան կարելի է շատ **անցադիրներ(1)** եւ որքան կարելի է շուտ, միայն առանց **ուսական վերայի(1)**:

Աշխատեցէ՛ք շուտ շուտ նամակ գրել, ծախքի մասին հոգ մի՛ ընէ՛ք: Նամակադրոշմները այստեղ անհամեմատ քանկ են ծախում քան քէ իսկապէս արժեն. մանաւանդ հանգուցեալ Շահի պատկերովը: Երէ կարողանաք նոյնպէս համարել ու ուղարկել. շատ մեծ ծառայութիւն արած կը լինէ՛ք մեր գրպանին: Հանաք չեմ անում, շատ է քանկ ծախում:

Մի պարոն է գալու այդտեղ, **Howard**: Նրան բժշկի անունն ենք տալու:

**Ձեր՝ ՌՈՍՏՈՄ**

(1) **Մածկազիր:**

**22) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵԻՆ**

*Նամակի վրայ ժամանակը չէ նշանակուած: Գրուած է Վիեննայից վերադառնալուց երեք ամիս յետոյ: Ռոստոմը Վիեննայից ժրնել էր դնացել 1896 թ. Յուլիսի կէսերին, ուրեմբն, նամակը գրած պիտի լինի Հոկտեմբերի կէսերին:*

Այս բոլորիս ստացայ կարապետի(1) նամակը, որը պարզ ապացոյց է ինձ համար. որ իմ բազմաթիւ նամակները չեն ստացուել, որովհետեւ այդ նամակների մէջ մէկ մէկ կարապետին էլ էի մի քանի խօսք գրել:

Նամակները գրել եմ երեք հասցէներով, որ ինձ տուել էք Տաշրեանը: Կարապետն իմ մասին տեղեկութիւն է ուզում: Արդէն յայտնի կը լինի նրան իմ գնալը եւ Վիեննայից վերադառնալը: Ինձ հարկաւոր էր երեք ամիս մնալ այստեղ եւ ապա նորից նանապարհ ընկնել: Երեք ամիսը լրացել է եւ սպասում եմ, որպէսզի հնարաւորութիւն լինի մուտք գործելու: Արդէն այնտեղից էլ գրում են, որ կարիք են գգում մի ընկերոջ: Թող կարապետը շուշ շուտ նամակ գրի տուն:

**ՌՈՍՏՈՄ**

(1) **Կարապետ — Կարօ-Արիստակէս Զօրեան, Ռոստոմի եղբայրը:**

## 23) ԹԱԻՐԻՋԻ ԿՈՄԻՏԵԻՆ

13 Հոկտեմբեր 1896

Սիրելի ընկերներ,

Ստացում եմ Անտոնի ուղարկած նամակը եւ ցուցակը: Իսկ Մանուկեանի գրածը (Կարապետի նամակի մէջ) միայն 4-5 օրից յետոյ նկատեցի: Քոյ ներուի ինձ այս անփութութիւնը:

Խնդրեմք շատով տեղեկութիւն ուղարկել Նշան Գասպարեանի (վանեցի) մասին, որն իրեն Ամերիկայում յայտարարել է վանի քասիլիար- առաջ էլ եղած է Արնէշի գանձապահ(?): Ինչ տեսակ մարդ է նա. կարելի՞ է նրան հաւատալ: Մերոնք նրան ուզում են սովորեցնել ու՝ ժանակ(1) եւ իր հայրենիքն ուղարկել:

Առաջ էլ գրել էի, այս անգամ էլ կրկնում եմ. աշխատեցէք շատ շուտով ուղարկել անցազրեր(1) առանց ուստիսի վիզայի(1):

Տեղեկութիւններ գրէք շուտ շուտ:

Ձեր՝ ՌՈՍՏՈՍ

(1) Մածկազիր:

## 24) ԹԱԻՐԻՋԻ ԿՈՄԻՏԵԻՆ

13 Նոյեմբեր 1896

Սիրելիք,

Ստացանք վանակի գրած վերջին նամակը (21 Սեպտ.): Որովհետեւ բացի Թարիգ ուղղած բազմաթիւ նամակներից, նամակներ էի գրել եւ Սալմաստ, ուստի այս նամակի պատասխանը էիչ ուշացրի:

Ալէքի մասին այստեղ միայն այն կ'ասեմ, որ գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնում լինէր նրա միսիայի վրայ եւ ոչ նրա անձնաւորութեան: Ալէքին եւ շատ լաւ եմ նախաձեռնում եւ հենց այս պատճառով դարձեալ ձեզ եմ մեղադրում, որ նա ձգտում է իր գնալը: Ի նկատի ունենալով նրա առաքելութեան անհրաժեշտութիւնը, մանաւանդ այսպիսի մի բռնապետի, առաջարկում եմ, էթէ դա անյարմար է դառնում, մի այլ, աւելի հաստատ միջոց գտնելու եւ նրա ծրագրերը իրագործելու: Ո՞վ է այդ Արամայիսը. Յուդայի Արամայիսը ի՞նչ է:

Իսկ ինչ վերաբերում է Խելագարին(1), այդպէս էլ պէտք էր սպասել: Երբ Թիֆլիսից ամէն մի նամակում գրում են, թէ նա խաբեց, եւ չգիտեմ ուրախանա՞մ, թէ տխրեմ, որովհետեւ սկզբից ոչ մի հաւատ չունէի դրա վրայ եւ բոլորովին հակառակ էի:

(1) Խելագար:

հոստանում եւ գրել, թէ ինչու 10-000ր չստացուեց. սպասում ենք: Ի միջի այլոց ո՞վ էր խոստացադ:

Այստեղից ձեր բոլոր փողերը յետ են ուղարկուած, չնայելով, որ կարիք ունէինք: Հագար ֆր. ուղարկուած է ձեզ պ. Թումանյանների միջոցով Մոսկուայից, իսկ 1-500ր ուղարկել ենք Բագու, որ ձեզ հասցնեն: Ձեր ստացածը ո՞ր մասն է:

Պետոյի պատկերը մենք ունէինք, կենսագրական տեղեկութիւններ չկարողացանք ըստանալ: Այս պատճառով գիտեցածիցս մի կարն, ընդհանուր բան սարքեցի: Գրանից յետոյ միայն ստացուեց Կարմրաքշիկի գրած կենսագրութիւնը: Կա կր իրատարակենք գրեթէ մէջ չվանայ Բիշաւակին նուիրում: Թող երուանդը մի ամփոփ բան գրի նրա վանայ կենսակց: Այժմ պատրաստում է Պոլսոյ վերջին դէպքերի ստիքի մի բրոշուր: Այնպէս արե՛ք, որ դրանից յետոյ կարողանանք ձեռնարկել վանիքը: Հասցրէ՛ք որքան կարող է՛ք լուսանկարներ ու կենսագրութիւններ... Թիֆլիսից ոչ մի բան չի կարելի սպասել:

Ի զուր սպասեցինք ձեր հարսանիքի նկարագրութեան, ոչինչ չեղաւ: Վերջապէս, ամօ՛ք է, ասօ՛, գունէ ինձանից ամաչէ՛ք. եւ որ գրում եմ, ձեզ ինչ է եղել:

Միտրեան խնդրի համար ուղղակի դիմում եղաւ Նոր Հնչակի կողմից: Մենք պատասխանեցինք, թէ աւելի լաւ ենք համարում բանակցութիւնները սկսել միայն այն ժամանակ, երբ վերջնականապէս կազմակերպուած կը լինին. իսկ մինչեւ այդ ժամանակը մենք պատրաստակամութիւն յայտնեցինք մասնաւոր կերպով իրար հետ տեսակցելու ու իրար նախաջելու: Այդ մասնաւոր տեսակցութեան համար եկել էր մէկը, որի հետ խօսեցինք գլխաւորապէս ասպակեղորոնացման մասին: Նա յայտնեց, թէ շատով կը սկսուին պաշտօնական դիմումները: Յպատում ենք: Շատ էլ մեծ յոյս չենք դնում դրանց միտրեան վրայ, մանաւանդ որ դրանցից մի էակիսը, մանաւանդ Արիսար, շատ կապածիւր սնձնաւորութիւններ են: Առայժմ դրանք իրար կրծում են:

Ստացանք ուղարկած քարերդ, շնորհակալ ենք: Մարկաները բաւականին քանկ են. աւելի քանկ են նրանք, որոնք այստեղ ուղղած նամակների վրայ են լինում:

Howard-ից այլեւ լուր չունինք: Շատով գուցէ այստեղ գալ մի հարուստ եւ ազդեցիկ ամերիկացի հայ. նա մեզ տեղեկութիւն կը տայ եւ Howard-ի մասին:

Ծրագրիներն ուղարկուած են (100 օր): Թէ հարկաւոր է, դարձեալ ուղարկենք: Հայրենակցիս ստացած 20 ր. մասին տեղեկութիւն չունինք: Ղիմէ՛ք իրեն, նա այժմ Մոսկուայումն է:

Լուսն պարսպում է, թէի վախեցաւ աշնան գնալ Բնութիւններին. լաւ է ապրում, Բէֆը լաւ է: Լօքի է:

Վանայ նոր կտուի մասին դուք դարձեալ, ինչպէս մենք այժմ սովոր ենք ասել «դատապարտելի անտարբերութեամբ» լուր է՛ք, ոչ մի սող չէ՛ք գրում...:

Մեծ է՛ր պիտոսում մնաց. մտացայ գրել Գաղեանի, սուլթանի պատուիրակի մասին: Նա ներկայացաւ իբր մասնաւոր կերպով իր հօր կողմից ուղարկուած եւ առաջարկեց ոչ մի բան չանել, սպասել մի քանի ամիս եւ ժամանակ տալ Սուլթանին իրագործել Բէֆորմները: Իրենք միայն այն կարող էինք ասել, որ դա մեզանից չէ կախուած, այլ տեղական կոմիտէներից: Նա հեռացաւ կարծելով, որ մեր այս խօսքերի տակ ուրիշ միտք է քաղնուած: Այս պատճառով անգլիական լրագիրները հազարդեցին, թէ բոլորը համաձայն են, բացի «ժընեւի կոմիտէից»: Թող հենց այդպէս վախի տակ մնան:

Թիֆլիսից շատ են գանգատուած ձեզանից, որ անընդհատ փող է՛ք պահանջում, բայց ոչինչ չի լինում, նամակ էլ չէ՛ք գրում:

Աստուած վկայ, շատ բաներ ունիմ գրելիք, բայց դիւմամբ չեմ գրում ձեզ պատճելու համար:

Շուտով կը լինի մեր հարսանիքն էլ: Հրախրում ենք ձեզանից էլ: Տեղի եւ ժամանակի մասին կը հետագրենք: Կը գաք Թիֆլիսցիներին հետ:

Կարապետին շատ բարեւ. ասէ՛ք նամակ գրի, նոյնպէս եւ իր հասցէն:

(Ստորագրութիւն չկայ)

Սիրելիք,

Արդէն մի նամակ եմ գրել սրանից մի քանի օր առաջ պ. Մարտի հասցեով պաշտօնական զրուցում, իսկ դրանից յետոյ ստացանք Պետոյի կենսագրութիւնը քղաքակցութիւնների հետ միասին: Պետոյի կենսագրութեան մէջ Բիւրոյի վերաբերմամբ գրուածը կատարեալ նշմարտութիւն է եւ դա ամբողջովին պէտք է մտնի նրա կենսագրութեան մէջ. քղթակց. շատ լաւ ժամանակ եկաւ: «Գրաշուկ»ին նիւր շատ քիչ է գալիս. աշխատէ ասելի ուղարկել եւ ընդարձակ: Ինչ ասել կ'ուզէ, որ չափազանց ուրախ եմ վարդանի հետ ընկերների յաջող վերադարձի համար: Ի՞նչ եղան միաները. ինչո՞ւ չէք գրում իւրաքանչիւրի մասին: չէ՞ որ մեզ հետաքրքիր է: Վանում կոտուղ Բոլցարացին Պետրոսը պիտի լինի. չէ՞: Նա ի՞նչ եղաւ:

Հարսանիքի մասին ձեզ գրած կը լինին Թիֆլիսից (ի միջի ալոց, ինչո՞ւ այնտեղ նամակ չէք գրում): Ժամանակի եւ տեղի մասին մեմ կը յայտնենք *Հեռագրով*(1): Ուրեմն, այժմեանից խորհեցէք եւ մէկին ընտրեցէք: Վահանը ամբողջակ չունի՞:

Այստեղ եմ բաւական բոսով ընկերներ, բացի բանկի (ոչ Թիֆլիսի) հերոսներից, վարդը, Շիտվը... եւ միւսները: Բոլորից շատ բարեւ եւ համբոյր:

Լիզէն էլ է բարեւում:

Համա՛հարի, Պետոյի կենսագրութիւնից կը հանենք Բիւրոյի վերաբերմամբ յարձակումները, բայց գոյ՛շ կացէք այլեւս, միւս անգամ այդպէս վատ յարաբերութիւն չպահպանէք:

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

Սիրելիք,

Ստացանք ուղարկած ծրարները եւ Նշտարի նամակը: Բովանդակութիւնը լաւ, շատ լաւ տպարարութիւն պիտի թողնի, մանաւանդ որ լաւ է նկարագրուած:

Ուղարկած հեռագիրը չենք ստացել. չգիտենք ինչու: Յայտնուեց այս մասին հեռագրատանը: Հեռագրէք նոյն հասցէով:

Ձեր հարսանիքի մասին ոչինչ չիմացանք: Երեւի չի սարճուել:

Նոր Հնչակեանների հետ մեր ունեցած յարաբերութիւնների մասին ձեզ արդէն գրել ենք: Նրանց լաւ ուժերից պէտք է աշխատել ամէն կերպ օգտուել: Յաւելով պէտք է ասել, որ դրանց «ղեկավարներից» մի քանիսին դժուար է վստահիլ: Նոր բան չկայ: Ներկայումս ներքանք դեռ դատուում են Նազ. հետ Հնչակը հրատարակելու իրաւունքի մասին:

Բանկի հերոսները համբուրում են տեղւոյդ հերոսներին հերոսական համբոյներով: Թո՛ղ հերոսները իրար համբուրեն. մենք էլ մէջտեղը եօլա կ'երթանք, քիչ էլ մենք եւ դուք մասնակից կը լինենք:

Ընկածները ովքե՞ր են. դժուար էր գրել: Այստեղ կան մի քանի լուսանկարներ: Գրէք դրանց համարտ կենսագրութիւնը գտնէ, գուցէ հէնց դրանք են: Յետոյ չէք գրում, քէ վիճարարները ինչ եղան եւ վարդանը ինչպէս տեղ հասաւ:

Pictet de Bock, 7 եւ ոչ համալսարան: Յետոյ անուններիս կոմբինացիաների մէջ գգոյ՛շ եղէք (Ռոստ. Գասպ.?):

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

*Նամակի վրայ ժամանակը նշանակուած չէ: Գրուած պէտք է լինի 1896 թ. Գեղտ. 27ին Թիֆլիսում գումարում «Ընդհանուր Ժողովի» նախօրեակին, ուրեմն՝ 1896 թ. Գեղտ. անմարտի կէսերին: Նամակը Վան ուղարկուած է Տրապիզոնի միջոցով, որ միջնորդ կայանի զեր էր կատարում:*

Յարգելի ընկեր Վազգէն,

Ստացանք քո Տրապիզոն գրած վերջին նամակը: Ուղարկում ենք ձեր պատանշած կնիքը. որ հարկաւ շուտով ձեզ կը հասցնենք:

Ձեր կոտի մասին ինչ որ ստացել ենք, շտապել ենք տպագրել: Մենք չենք մեղաւորւում, որ մանրամասնութիւնը ոչ ստացանք եւ յետոյ միայն գրասենի կոտի անագի՛ն նշանակութիւնը: Ընդհանրապէս մեծ տպարարութիւն է թողել: Իսկ շտապիմ անհատապի է բըւում: Եւ իրատուեմ ունին... Եւրոպական լրագրները դրա մասին ոչինչ չեն գրում:

Նայելը եւ տեսողների մասին: Որովհետեւ նամակները յաճախ կարող են կորչել, միեւնոյն բանը երկրորդ անգամ էլ յիշիր:

Պետոյի մասին երկար ժամանակ պատեցինք կենսագրական տեղեկութիւններ: Ոչինչ չստանալով, այստեղ մի կարն եւ ամփոփ բան գրեցինք: Գրանից յետոյ ստացուեցան գանձազան տեղերից (կարծեմ մէկն էլ քո գրածն է): Մշակուում է մի ընդարձակ յոդուած: Լոյս կ'ընծայենք ատանձին գրոյկով: Բայց հարկաւոր է ոչ միայն նրա մասին: Ընկել են շատ ուրիշներ, որոնց մասին ապատեալ հարկաւոր է մի բան գրել, ինչպէս օրինակ. Գանիէլ վարդապետը, Վահան Տարսեցին: Մեզ ուղարկել էին 24 հոգու մի ցուցակ, որտեղ միայն լսկ անուններ կային: Հարկաւոր է ասելի մանրամասն իւրաքանչիւրի համար: Մի՞թէ այդ մարդիկ ոչ մի անցեալ չեն ունեցել: Սպասում ենք այս բոլորը ձեզանից: Գրեցէ՛ք բոլոր ընկածների մասին, ուղարկեցէ՛ք. եթէ կարող էք, լուսանկարները կենդանիների, քէ մեռածների: Ուղարկեցէ՛ք անպատեալ, ձեր Եւ օրիորդ Չարուհու լուսանկարները:

Գրում էք, քէ մարդ էք ուզել Պարսկաստանից: Պարսկաստանից էլ շատ անգամ գրել են դրա մասին: Եթէ Պարսկաստանից չգան էլ, վնաս չունի. ուրիշ տեղից կը գան. դուք առանց մարդու չէք մնայ: Միայն մի բանի վրայ ենք ցանկանում ձեր ուշադրութիւնը դարձնել: Խօսք չկայ. որ եկող մարդը մի ատանձին նշանակութիւն ունի եւ այլևէ, բայց դուք շատ էք չափազանցում դրսից եկողի նշանակութիւնը եւ այդպէս տրամադրուած լինելով՝ ինքներդ վստահ կերպով չէք գործում: Հատուապէս ենք, որ վնաս յեղափոխական կեանքն այնքան է զարգացել, որ ինքնուրոյն կերպով կարող է առաջ տանել իր գործը:

Ի՞նչ եղաւ Պետոյից բաժանուած Ռակահի ընկերների խումբը. որն ատանձին կոմիտէ էր կազմել: Այդ անախորժութիւնը վերացած է արդէն եւ ի՞նչ պայմանների մէջ: Իսկ արմենականների մնացորդները: Նրանց մէջ լաւ կոտուղ ուժեր կային. ի՞նչ են մտածում անել դուք:

Թիֆլիսում կայանալիք մասնակի ժողովում (Ընդհանուր Ժողով անկարելի եղաւ գումարել) Աշտը կը խօսի եւ ձեր գործունէութեան եղանակի մասին:

Պէտք է ասել, որ վերջին ժամանակներս մեր գործունէութիւնը բաժանուած է երկուսի. առաջինը՝ ներքին նահանգներում ժողովրդի մէջ յեղափոխական մեծ ոյժ պատրաստելն է, որի համար անհրաժեշտ են հայդուկային կոմիտէի գործերը. ժողովրդին զինք մատակարարելը, իսկ երկրորդը՝ մեր հարցը դիպլոմատիայի սեզանի վրայ միշտ պահելն է. որի համար եռանդուն գործ պէտք է սկսել այն տեղերում, որ Եւրոպացիք մեծ շահեր ունին: Մեր գործունէութիւնը գլխաւորապէս ամփոփուած էր ներքին նահանգներում մինչեւ Պոլսոյ կոփը: Մեր գործունէութիւնը չէր փայլում, միշտ է. բայց ճա բուն կեանքի մէջ ոյժ էր գոյացնում: Մինչդեռ Պոլսոյ կոփը յեղափոխական ուժի տեսակետից ասելի թոյլ լինելով, քան քէ օրինակ, վնաս կոտները, դիպլոմատիայի, Եւրոպայի, Տանկաստանից դուրս գտնուող հայերի համար անհամեմատ ասելի մեծ նշանակութիւն ունեցաւ: Այժմ շատերը հաւանական է հրապարակուին այս յաջողութիւններով եւ աշխատին Պոլսոյ նման կենտրոններում ամփոփել:

մեր գործունեութիւնը: Բայց մեր կարծիքով, որովհետեւ ներկայ շարժումը գլխաւորապէս հարկաւոր է ներքին նահանգներում ապրողների համար եւ որովհետեւ դո՛ւն ամէն բով: են- րակայ են առեւտրի վտանգների, պէտ է պնդել միշտ, որ ներքին նահանգներում գործունեու- քիւնը բուլացնելու մասին մտածելն անգամ աւելորդ է:

(Ստորագրութիւն չկայ)

### 28) ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

*Նամակի վրայ ամսաթիւ չկայ, բայց բովանդակութիւնից երևում է, որ գրուած է 1896 թ. Դեկտեմբերին: Ուղարկուած է Տրապիզոնի մէջոցով:*

Հետեւեալ գրութիւնը խնդրեմ հաղորդել երզնկա, Կարին, Վան:

Նոր Հնչակեանների հետ ունեցած բանակցութիւնները համարեա թէ կանգ են առել. կեզկատում կայանալի՞ն սեղական ժողովում մասամբ կ'որոշուի. քէ ինչ դիրք կը բռնեն մենք ընդհանրապէս դէպի նրանց առաջարկութիւնը: Մենք կը լսենք առաջմ. դուք էլ ձեր կար- ծիքները ուղարկեցէ՛ք, որպէսզի բոլոր այնմ դեկաւորուեն: Խնդրեմ ուշադրութիւն դարձրէ՛ք մի հանգամանքի վրայ: Որքան մեզ յայտնի է, ոչ Տրապիզոն, ոչ երզնկա, ոչ Կարին եւ ոչ Վան հնչակեան կազմակերպութիւն չկայ: Երէ այս միշտ է (երէ չէ, խնդրեմ հաղորդել իս- կուրքիւնը), այն ժամանակ մի տեսակ տարօրինակ խոսք է դուրս գալիս: Ինչ կարիք կայ խօ- սելու համերաշխ գործունեութեան, առաւել եւս միութեան հարցի մասին. երբ *ժարմին* չը- կայ, որի հետ միանա կամ համերաշխ գործես: Այդ տեսակ հարց կարող է ծագել միայն Պոլսում, իսկ արդէն մեզ լաւ յայտնի է Պոլսոյ հնչակեան ոյժը: Այնպէս որ իսկապէս հար- ցը մնում է միայն բուն երկրից դուրս գտնուած ուժերի համերաշխութեան մասին:

Դեռ բանակցութիւնների առաջին օրերին մեզ նախագործաւորին, քէ Նոր-Հնչակեան- ների նպատակն է շահագործել Գաշնակցութեան անունը: Եւ այժմ բազմաթիւ նշաններից երե- տում է, որ իսկապէս միութեան խնդիրը մէջ գցելով, Նոր-Հնչակեանների ղեկավարները նը- պատակ են ունեցել, օգտուելով Գաշնակցութեան վարկից, իրենց դիրքն ամրացնել: Այլապէս չէր կարելի բացատրել, քէ ինչպէ՞ս Գաշնակցութեան երդուեալ բռնամիները յանկարծ կեր- պարանափոխուեցան եւ մեր բարեկամները դառան: Փափկացել է եւ հին Հնչակը մեր նկատ- մամբ: Նրանց բոլորի վրայ սաստիկ ազդում է մեր բացարձակ լուրքիւնը եւ արհամարհան- քը դէպի մեր նախկին կատարի բռնամիները եւ ներկայիս բարեկամները:

Սրանով չենք ուզում ասել, որ բոլոր Նոր-Հնչակեանները, մինչեւ իսկ բոլոր դեկա- վարները նոյն միտումներն ունին: Հաւատացած ենք, որ նրանց մէջ կան ազնիւ ձգտումնե- րով օժտուած երիտասարդներ, որոնք սրտանց են ցանկանում յանուն գործի, միութեան հար- ցը իրականացնելու: Որքան մենք պէտք է խոյս տանք գանգաւան տեսակ Արփիարներից, նոյն- քան պէտք է մտենանք այդ տեսակներին:

Հնչակեան կուսակցութիւնը պէտք էր ընկներ. դա անխուսափելի էր, որովհետեւ նրա ժամանակն անցել է. դա պատրաստուած չէր ներկայի պահանջների համեմատ կոտել: Այս է պատճառը, որ դո՛ւն միշտ անաջողութիւններ էին կրում (օր. Արտաւազի խումբը), կամ թէ զգալով իրենց կուսակցութեան անգորութիւնը՝ դիմում էին Գաշնակցութեան օգնութեան (օր. Մուրատը, Գիւլիսը): Ինչպէս ընկաւ «Հայրենասիրաց Միութիւնը» (Արմենական), երբ պրոպագանդայի շրջանը անցաւ, այնպէս էլ պէտք է ընկներ Հնչակը, որովհետեւ ազիտա- ցիայի շրջանը անցել էր: Այդ կատարուեց: Հնչակը կը դառնայ մի այնպիսի լրագիր, ինչ- պէս է Արմենիան: Իսկ Նոր-Հնչակը հաւանական է, որ դադարի:

### 29) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵՆ

31 Դեկտեմբեր 1896

*Շնորհաւոր Նոր Տարի*

Սիրելիք,

Անցեալ անգամուան նամակս կիսատ մնաց: Շուտ չպատասխանելու պատճառը ձեր դանդաղկոտութիւնն է նամակ գրելու մէջ: Երբ դուք չէք գրում, իմ ախորժակս էլ չի գալիս:

Ահա ուղարկում ենք այս անգամ «Երիտասարդ Թուրքիայի» մի խմբի պրօկլամա- ցիան սահակերէն լեզուով: Մանրամասնութիւնները չեմ ուզում գրել. գրում եմ միայն վեր- ջին արդիւնքի մասին: Այդ խումբը բաժանուելու վրայ է միւսներից, զուտ յեղափոխական բնութոյսիւն է կրելու եւ մեզ հետ մշտական հաղորդակցութեան մէջ պէտք է լինի: Շու- տով դուրս է գալու դրանց մի բրոշուրը եւ նոր օրգանը. որի անունը կարծեմ չիբաւունք» է լինելու: Այսպիսով հիմն է դրում արդէն բուն տանկական յեղափոխութեան: Երկրի մէջ նոյնպէս արտադրուել են այդ ուժերը. նրանցից մեկի հետ բանտում շփուել է Թաթուրը, այնտեղ էլ մի բան է պատրաստում: Պէտք է քիչ դրանց հետ պարապել, դրանց օգնել, մինչեւ որ բոլորովին կը հաստատուեն: Ուղարկածների մի մասը բաժանեցէք այդտեղ, ու- դարկէ՛ք Վան եւ Ռուսաստան:

Կարոյի եւ միւսների գրելով, վանից ներկայացուցիչ են ուզում եւ ձեզանից ոչ ոք չի ցանկանում գնալ: Դիմում էք, այստեղից էք մարդ ուզում: Ձեր այդ տրամադրութեան պատճառը մեզ անհասկանալի է, մենք կարող ենք միայն ենթադրութիւններ անել, ի նկատի առնելով այդտեղի ձեր փոխադարձ յարաբերութիւնները: Ինչ որ է, այստեղից մէկը պատ- րաստում է գալ այդտեղ Վան անցնելու նպատակով: Գրէ՛ք միայն, քէ ե՞րբ կարելի է անցնել:

Յոնանը զնաց երկրորդ անգամ դէպի Կ. Պոլիս. յոյս ունենք կը կարողանայ ներս մտնել եւ դրան չմնալ, ինչպէս անցեալ անգամն էր: Այստեղացիներից 2-3ը նոյնպէս հեռա- նալու են. դրութիւնը դարձեալ ծանրանալու է:

Ձեր՝ ԲՈՍՏՈՄ

### 30) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵՆ

(անտիպ)

*5 Յունուար 1897 թուակիր Ռոստոմի այս նամակը եւս, առ- նըւած Հ. Յ. Գաշնակցութեան կեդրոնական արխիւէն, տեղ գտած չէ ԴԻԻԱՆ-ի հտտորներուն մէջ: Պատասխանն է Իշխան Յովսէփ Արղութեանէն (Երուանդ) ստացուած նամակի մը: Ձեռադիրն ու ստորագրութիւնը Ռոստոմիին են: Կու տանք առանց յապաւումի: Հ. Տ.*

5 Յունուար 1897

Սիրելիք,

Ստացանք Երուանդի նամակը. շտապում ենք պատասխանել:

Ալեքի խնդրի մասին չարժէ այլեւս խօսել. գոնէ աշխատէք, եթէ հնարաւորութիւն ունէք. մի ուրիշի միջոցաւ նոյն ձեռնարկութեան դիմելու:

1,500 ֆր. ուղարկել ենք մերոնց եւ նրանք ստացել են այդ փողը: Նրանք պէտք է փոխադրէին ձեզ չզիտեմք. բէ ինչու չեն արել:

Պետոյի կենսագրութեան համար ստացած նիւթերը ուղարկել ենք Անուշին, որ նա մի ամբողջութիւն կազմի: Կոտի թղթակցութիւններն ստացուեցան. միայն շատ ուշ: Այդ ինչպէս է պատահում. որ երկրորդական, երրորդական ձեռքերից աւելի շատ ենք ստանում. քան թէ ուղարկի ձեզանց: Առայ ուզում էինք մի ամբողջ Նճ-ում ամփոփել բոլորը, բայց որովհետեւ նիւթ չկար ուրիշ. բաժանեցինք մի քանի Նճ-ների: Շուտով նիւթ հասցրէք, բէ չէ ոչինչ չկայ սպելու:

Պետոյի հետ ընկածների գուցակն ստացուել է: Ախր ինչպէ՞ս չհայտնեմք ձեզ, ի՞նչ նշանակութիւն ունի այդ դատարկ գուցակը. եթէ անձնատրութիւնների մասին գոնէ Քիչ թէ շատ տեղեկութիւններ չտրուին: Օր. ձեր յիշած վարդապետի, Յարութիւնի մասին: Խնդրենք նոր ցուցակ ուղարկել. քիչ թէ շատ տեղեկութիւններ տալով իւրաքանչիւրի մասին: Այս մասին առաջուանց էլ էի գրել. դարձեալ կրկնում ենք: Խնդրենք յայտնել մեզ, ինչ որ գիտէք: Ուղարկէք ձեր բարբի յուսանկարները մեր այբովի համար:

Թիֆլիս մեզանց մարդ չի կարող գնալ: հմբար. գործերի համար կարող էր մերկայանալ Յոնանը. նա էլ Կ. Պոլիս(1) է հասնապարհ ընկել: Ես էլ շարժուել չեմ կարող տեղիցս: Առանց այն էլ մարդ չի մնում. բոլորն էլ կամ հեռացել են, կամ հեռանում են: Վաղը պատրաստում է հեռանալու Հրաչը(2): Նա գուցէ ձեր կողմերը գայ: Սիմոն(3) այստեղ է. բայց հիասթափուած է: Միշտ կրկնում է, թէ ո՞ւր համար է. ոչ մի հայ չի մնացել: Վարդ(4) էլ շուտով կը հեռանայ: Յոնանի մասին արդէն գրեցի: Հնչակեանների մասին նոր բան գրել չեմ կարող: Մեր կասկածներն արդարանում են. ամէն կողմից լուրեր ենք ստանում, իբր թէ Տիւրքիւն է կայացել: Գրանով կարծես ուզում են իրենց խախտուած դրութիւնը ամրացնել: Կարծենք, ոչ մի կողմը ոչ թ չունի(5): Հին փառերով են սպրում: Նորերը իմանալով, որ մենք երկատարող թուրքերի հետ բանակցութիւններ, չնայելով, որ իրենց բերքում յայտարարել են. թէ «մեր կոխը ցեղային կռիւ է»: Գրանից բան չի դուրս գայ, որովհետեւ Պարիզի կոմիտէն յեղափոխական տեսակէտից ոչինչ է:

Գործերն սկսել են յաջող գնալ, որին քիչ չի նպաստել բանտարկեալների ազատութիւնը: Տրայիզոնի մեր ընկերներն արդէն ազատ են: Յոյս կայ, որ միւսներն էլ ազատ լինեն: Այս, մի թարուլը(6) ազատուէր...

Ինչպէ՞ս եղաւ, որ ձեր ծրագրած հարսանիքը, որի մասին գրել էիք, չյաջողուեց: Հիմա ինչպէ՞ս էք անում: Մենք հազիւ էինք կարողանում այստեղ 8 հոգի կերակրել, դուք ի՞նչ էք անում այդ 100ի հետ: Ինչո՞ւ ոչ մի տող չէք գրում վարդանի վերադառնալու մասին. ընդհարումներ չե՞նք եղել:

Ձեռն է, հիմա պարապ-սարապ թափուել էք, ժամանակներդ հիմա այստեղ այնտեղ հի՞րս գնալով էք սպանում: Տո մի օր այդ բոլոր մանրամասնութիւնները գրեցէք էլի: Շնորհաւոր ձեր Նոր-Տարին. ցանկանում ենք, որ նոր յաջողութիւններ գտնէք, պարտքերից ազատուէք եւ մի քիչ ղոչաղանգ մամակներ գրելու մէջ: Բարեւներս բոլորիդ...

Ձեր՝ ՌՈՍՏՈՍ

- 1) Ծածկաղիւր.
- 2) Թիւրեքեան.
- 3) Շիւեան.
- 4) Վարդ Պատրիկեան.
- 5) Կ'ակնարկուի Հնչակեանների ու մար թելիս եւ անկէ բաժնուած հոսանքի.
- 6) Արամ Արամեան:

Նամակը գրում է այլաբանական իմաստով. «Օրիորդներ»՝ ժընեում գտնուող ընկերներն են՝ Հրաչ Թիւրեքեան և այլն: Գնաց «Վաճանի մօտ», այսինքն Բուրգարիա: «Բարեկամների հիւանդութիւն»՝ ձերբակալութիւններ և խուզարկութիւններ Թիֆլիսում: Խուզարկութիւնների առիթ էր տուել և արտասահմանից ուղարկուած թերթերի ու նամակների բռնութիւնը: «Անտանի հիւանդութիւն»՝ խուզարկութիւն Սիւմ. Զատարեանի մօտ: «Գիւղաստեանական և բժշկական լրագրներ»՝ «Դրօշակ» և յեղափոխական զրակահոթիւն:

7 Յուն. 97, ժընեւ

Սիրելիս,

Ստացայ ուղարկած 40 բ., մեծապէս շնորհակալ եմ:

Օրիորդի (Հրաչեայի) պարտքը կարողացայ տալ. նա այսօր տօնների պատհառաւ քանակաբար ընկաւ իր եղբոր՝ Վահանի մօտ: Օր. վարդուհին գուցէ մի երկու շաբաթից յետոյ նոյնպէս գնայ. քաղաքա դատարկում է օրիորդներից: Տխուր է անցնելու մեր ժամանակը, բայց ի՞նչ արած: Լսեցի բարեկամներիս հիւանդութեան մասին. ցաւում եմ, բայց ի՞նչ արած: Բժիշկը, ասում էք, նեղացել է. ու կարծում էք, թէ դիտմամբ եմ ցանկացել մեղացնել նրան: Այդպիսի մտադրութիւն երբեք չեմ ունեցել: Ինչպէս դուք գրել էիք, ես այսպէս էլ վարուեցի. ես ինչո՞վ եմ մեղաւոր: Կարծում եմ, որ Անտոնի հիւանդութիւն էլ վտանգաւոր լինի: Բժիշկների խորհուրդը չգիտեմ թէ ինչ կ'ասի, միայն ես կարծում եմ, որ լաւ կ'անի, քանի հիւանդութիւնը չի ծանրացել, վեր կենայ գայ այստեղ. արտասահման: Միայն չմոռանայ, որ իր բժշկութեան համար հազարներ, գոնէ մի հազար է հարկաւոր: Ուրեմն, եթէ գալու լինի, քող հազարից պակաս փող չվերցնի հետը, եթէ ոչ՝ քող այդտեղ մնայ:

Այստեղ ես դիւրութիւններ ունիմ շատ արժան գներով, համարեա թէ ձրի ունենալ գիւղատնտեսական եւ բժշկական լրագրներ եւ հանդէսներ: Եթէ ցանկացող կայ ձեր մէջ, ուրախութեամբ կ'ուղարկեմ, միայն թէ միշտ հասցէն քող գրեն:

Ստեփանը կ'ուզի՞ թէ ոչ, գուցէ նրան ուղարկեմ: Անպատհառ կ'ուզենայ, նա շատ հետաքրքրուող է առհասարակ եւ խոր մտածող:

Շնորհաւոր ձեր Նոր-Տարին, Մնունդ եւ Մկրտէքիւն:

Ք՞՝ ՌՈՍՏՈՍ

32) «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

Գարեգիկի ով լինելը մեզ յայտնի չէ: Ազատի Նարիկեանցը՝ Զէյթունի Հնչակեան Աղասին է:

Ք՞՞՞՞՞՞՞՞՞՞՞՞՞

Յարգելի ընկեր Գարեգիկն,

Մտացանգ ձեր մամակը: Պ. Ազատի Նարիկեանցի հազարած լուրը, իբր թէ մեր

ընկեր Եւսուփեանը Լոնտոն է գնացել միութեան խնդրոյ համար. Յիշդ չէ: Նա միայն անցել է Լոնտոնով եւ ի միջի այլոց մասնաւոր տեսակցութիւն է ունեցել ղժգոհ հնչակեան-նրի հետ, երբ դեռ նոյն բաժանումն չէին: Միութեան կամ համերաշխ գործունէութեան համար նոր Հնչակը ղիմել էր մեզ: Մենք յայտնեցինք մեր պատրաստակամութիւնը բանակցելու: Միութեան խնդրոյ համար հարկաւոր է համաձայնիլ նպատակի ձեւակերպման եւ կազմակերպչական եղանակի վրայ. իսկ ինչ վերաբերում է համերաշխ գործունէութեան, դա դժուար է. երբ մի կողմից կենտրոնականութիւն է, իսկ մյուս կողմից՝ ապակենտրոնացում. եւ անհնար է. երբ Արփիարը դրանց մէջն է գտնուում: Այս բոլորը կը պարզուի, երբ վերջնական բանակցութիւններն սկսուին:

Եթէ մէկ անգամ էլ տեսնէք պ. Բիբրցեանին(1). յայտնէք նրան, որ իրեն շատ կասկածելի է պահում: Նամակ ենք գրել. գտնաւոր բաներ ենք հարցրել. բայց չի պատասխանել: Եթէ չի ցանկանում շարունակել մեզ հետ իր յարաբերութիւնները, բող *աճապարի, յետ ուղարկել* խմբագրութիւնից ստացած *վկայագիրք եւ տոմարք*: Հակառակ դէպքում, մենք աշխատելու կը վարուենք:

Մկրտիչ Եփրեմեանի մասին. ինչպէս եւ գտնաւոր տեղական խնդիրներին, կարող էք դիմել հետեւեալ հասցեով.— A. K. Erganian, Kutchuk Bezestene, Philippopoli, Bulgarie, յանձնել վ.—ին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»

(1) *Բուզրէշի ուսուցիչ, որին խմբագրութիւնը վկայական եւ հանգանակութեան տոմար էր ուղարկել:*

**33) «ԴՐՕՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ԿՈՄԻՏԵԻՆ**

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

23 Յունուար 1897, ժըննս

Յարգելի ընկերներ,

Տրապիզոնի մեր ընկերները, ինչպէս մեզ հաղորդում են Պոլսից եւ Զմիւռնիայից, արդէն այդտեղ պէտք է լինեն: Անշուշտ. հոգ տարած կը լինէք նրանց մասին:

Այսօր Մար-Շիմոնից նամակ կար. որով յայտնում է, թէ Եգիպտոսի հետ ունեցած իրենց առևտուրը անյաջող էլի ունեցաւ եւ թէ գործն այժմ Բեռլինի ձեռքին է: Նա մեկնում է իր տեղից եւ խնդրում մեզ ղիմել ձեզ, որպէսզի դուք վարձատրէք այդ վաճառականին իր *բաջադործութեան* համար: Մարը այդ գործը կարծես վերջնականապէս անյաջող է համարում: Ենթադրում ենք, որ այստեղ մի քիւրիմացութիւն կայ. գուցէ ձեռք հեռագիրները լաւ չեն հասկացել եւ *վեպին* ու *բեռուն* շփոթել են. երբեք կարծել են թէ փեսացուի փոխանակ *բեռին* է ճանապարհ ընկել: Այդ փոքրիկ քիւրիմացութիւնը կարող է իսկապէս վատ հետեւանք ունենալ: Ինչ որ է, եթէ անհիմն է Մարի երկիւղը, պէտք է շտապել յայտնելու:

5-6 օր առաջ մի անյայտ տեղից ստացանք 1,262 ֆր. խմբագրութեանս հասցեով: Ենթադրում ենք, որ Ամերիկայից է. գուցէ եւ այդտեղից է, ո՛վ գիտէ:

Մարտինը թող շտապէ իզմիր երթալու: Այնտեղ մի տարօրինակ տղայ կայ, մեր

հոգին համեց իր խանգարումը երեւակայութեամբ: Հաւանական է, նա լաւ լինի, եթէ մի ընկեր ունենայ: Իսկ այնտեղ այժմ շատ կարեւոր է մարդիկ ունենալ:

Մեր ընկերներից պատրաստուող կայ նոյն տեղը երթալու, միայն հարկաւոր է առաջունակից դիւրութիւններ ստեղծել:

Մեր ստացած 1,262 ֆր. ի մասին կը տեղեկանանք Ամերիկայից, սակայն, դուք էլ ուշադրութիւն դարձրէք, գուցէ եւ այդտեղից է ուղարկուած:

Խոսքով Չոպանեան անունով մի երիտասարդ (Rue Bein-el- Souren, 31) Գա-հիրէից յայտնում է իր պատրաստակամութիւնը: Այդ անձնատրութեան մասին տեղեկութիւն ստանալու համար ղիմել ենք ուր հարկն է, բայց դեռ պատասխան չկայ: Բայց կարծենք ստանալու համար ղիմել ենք ուր հարկն է, բայց դեռ պատասխան ստանալու, միայն զգոյշ կերպով: Յայտնէք իրեն, որ գրի խմբագրութեանս իր տրամադրութեան տակ դրուած իրեն-րի տեղը եւ ցուցակը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»

**34) ԹԱԻՐԻՋԻ ԿՈՄԻՏԵԻՆ**

*Նամակը ամսաթիւ չունի, բայց պատճենի տոմարից դատելով՝ պէտք է գրուած լինի 1897 Փետրուար 9ին, կամ 10ին:*

Սիրելիք,

Ստացանք Տաշրեանի եւ Մանուկեանի նամակները: Պատասխանեցինք կարճ կերպով: Նոր Հնչակեանների մասին նոր բան հաղորդել չենք կարող, բացի այն, որ ամէն տեղ շահագործում են Դաշնակցութեան հետ միանալու գաղափարը: Արդէն գտնաւոր տեղերից կարծիքներ են ստացուած, սպասում ենք ժողովի կարծիքին էլ. որպէսզի դրանց վերաբերմամբ պատշաճ դիրք բռնենք:

Երիտասարդ Թուրքերից անջատուած յեղափոխական մարմնի շրջաբերականն արդէն ստացած եւ կարդացած կը լինէք «Դրօշակ»ի մէջ: Այդ նոր խումբը *պատրաստ էր* ամէն տեսակ ծայրայեղ գործողութիւնների Պոլսում եղած ձեռքակալութիւնների վրէժը լուծելու համար. պատրաստ էր եւ մեծ ցանկութիւն ունէր, միայն *համարձակութիւն* չունէր: Առաջին անգամը լինելով նրանց համար այդ տեսակ դրութիւն. պարզ է, որ առաջին քայլը դժուարին էր շատ: Պէտք է ասած, որ տաճիկ տարրը դեռ այնքան բարձր չէ հոգեկան զարգացման տեսակետից, որ ընտելացած լինի անձնագոհութեան գաղափարի հետ:

Այս էր պատճառը, որ նրանք հենց սկզբից մեզանից խնդրում էին ռուսա՝ առաջին քայլն անելու համար: Սկզբում մենք չէինք վարանում, պահանջում էինք, որ հրապարակօրէն յայտնեն իրենց գոյութիւնը եւ *գործով ցոյց* տան, թէ իսկապէս ընդունակ են գործունէութեան: Հրապարակօրէն յայտնելը հեշտ էր. այդ նրանք կատարեցին. երկու շրջաբերական են հրատարակել, շուտով պաշտօնական օրգան էլ կ'ունենան: Իսկ գործով դեռ եւս չկարողացան եւ գուցէ չկարողանան էլ, եթէ միայն դրանց ռուս չտրուի: Ռուսերով դուք կը համարակալուիք ասպարէզ գալու, վստահ դա մի գերբնական ոյժ են համարում: Դեռ եւս բանակցութիւնները չեն վերջացել: Մի կողմից մենք շատ ենք ցանկանում ոյժ տալ դրանց, ստեղծել բուն յեղափոխական տարրեր. ասպարէզի վրայից բռնել տալ գտնաւոր Մարտին-րին, Անմէտ Ռիզաներին, որոնք Փարիզ նստած Երիտասարդ Թուրքիայի մերկայացուցիչների անունից ամէն տեսակ յիմարութիւններ են դուրս տալիս ընդհանրապէս եւ մեզ՝ յե-

դափոխականներին ակաումար՝ մասնաորայէս(\*) : Տոսիկ յեղափոխական կուսակցութիւն ստեղծել անհնարին բան չէ. որովհետեւ երկրի մէջ արդէն ցրուած ուժեր են նկատուում, որոնց հետ մեր ընկերները յարաբերութիւն ունին :

Ամերիկայի 25 հազարի մասին գրեցինք էուսոփեանին, որ այժմ այնտեղ է : Բայց չենք կարծում, որ իրօք մի այդպիսի բան գոյութիւն ունենայ :

Յոնանի մասին արդէն գրել էի. կրկնում եմ, նա այժմ Պոլիսում է (ձածկադր) եւ իրեն շատ լաւ է գգում :

Այժմ գանձ Մանուկի նամակին :

(Մարոյի կենսագրութիւնը յոյս կը տեսնի առաջիկայ համարում : Նամակը այնքան շփոթած էր գրուած, որ մնում էր ենթադրութիւններ անել, թէ ինչ պարագանքում է անձնասպանութիւն գործել : Եթէ Խէչոյի(1) նահատակման յուրը ստանալուց յետոյ, այն ժամանակ Մարոյի սեղանի վրայ բողոքած նամակը մնում է անհասկանալի, որովհետեւ Մարոն այդ նամակում գրում է Խէչոյին գործելու. իսկ եթէ յուրը չառած է վերջ տուել իր կեանքին, դա նոյնպէս անհասկանալի է : Մի խօսքով. ընթերցողի համար անհասկանալի է մնում, թէ ինչու՞մ էր կայանում դրա մահուան հետնորդի : Սկզբում մինչեւ իսկ կարծեցինք, թէ ուրիշներն են սպանել : Ճար չկայ. այդպէս կիսատ-պատ կը հրատարակենք, միայն դուք, ի հարկէ, չէ՛ք զլանայ գրել մանրամասնութիւնները մեզ հանգստացնելու համար :)

Վազգէնի համար կեղծ ուղարկուած է ուրիշ նամակներով, իսկ դրան ուղարկել առայժմ չենք կարող. իսկ ինքովուր՝ անհնար : Ջարմանում ենք, որ այդ տեսակ առաջարկութիւն մեզ է անում :

Իսկ ինչ վերաբերում է Մարոյի պատկերը առանձին քղթի վրայ պատրաստել տալուն, պէտք է ասած, որ պատրաստում են բոլորի պատկերները մի այլոք կազմելու համար : Մասնաորայէս Պետրոյինը եւ Բարկէնինը մեծ դիրքով : Բարկէնի նախընթաց պատկերն առնուած էր աշակերտական հասակում ընկերների հետ նկարուածից : Յետոյ գտանք աւելի մեծ հասակում նկարուածը. որից եւ պատրաստում ենք նորը : Դէպքից առաջ նա հոգ է տարել բոլորի յուսանկարների մասին, իսկ իր մասին բնաւ չի մտածել, թէ եւ հաւատացած է եղել, թէ անպատեալ ընկերու է : Մօտ անձնաորութիւնները շատ են խօսում նրա արտաճ կարգի բնաորութեան մասին : Շատ փոքր այդպիսի մի ոյժ...

Մարոյի յուսանկարը կը վերադարձնենք, երբ պատրաստ կը լինի կլիշէն : Ուղարկում ենք ներփակեալ Բողոք-Քեասանում ընկածների պատկերները : Կնդրում ենք անունները գրել եւ շուտով մեզ ուղարկել : Անունները կլիշէ պատրաստող անգղուշաբար կտրել է եւ դէն ձգել :

Ք՝ ՌՈՍՏՈՄ

Վազգէնը սաստիկ դժգոհ է ձեզանից. ամէն մի նամակում նա այդ արտայայտում է : Վազգէնին հաղորդեցէ՛ք, որ իրեն այստեղից երկու մեծ գրութիւն է գրուած : Մէկը ընդհանուր՝ բոլոր կոմիտէներին ուղղուած՝ հնչականների մասին, իսկ միւսը մասնաորայէս իրենց վերաբերեալ :

Կարոն գրել էր, թէ գնալու է Ռուսաստան, գնա՞ց թէ ոչ :

ՆՈՅՆ

(\*) Իսկ միւս կողմից (միւս կողմը մտացել էի) գգուանում ենք, որ դրանց շարժումը այսպէս կամ այնպէս վնաս չբերի մեր հարցին :

(1) Մարոն, Ինչպէս յայտնի է, իր կեանքին վերջ էր տուել, որպէսզի արդէն չլինի Ռուստովի եղբոր՝ Արխանդակի Ջորեանի յեղափոխական գործունէութեան : Սկզբում, սակայն, կարծուած էր, թէ պատճառը Խէչոյն էր : Թիւրիմացութիւնը պարզուեց յետագային :

35) «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ  
ՊՈԼՍԻ ԿՈՄԻՏԵՆ

(Գրուած է Ռուստովի ձեռքով : Ուղղուած է Յովհանն Դաւթեանին) :

16 Փետրուար, 1897

Թիֆլիսի ժողովի մասին Անտոնը մի կարգ բան էր գրել. հասանական է, ձեզ էլ հաղորդած լինին : Ուշագործեան արժանի կէտը հետեւեալն է : Խմբագրութեան, Պոլսոյ եւ Թիֆլիսի Բիւրոյի համաձայնութեամբ կազմել արտասահմանում մի մարմին, որը կը տանի խմբագրութիւնը եւ կը վարէ բնդեանուր գործերը : Այդ մարմինն է Թիֆլիսի Բիւրոյի մէջ կայացած համաձայն վնդը պէտք է պարտաստեցուցիչ լինի բոլոր կոմիտէների համար :

Մեր պատասխանի մէջ մենք միանգամայն հակառակ յայտնեցինք մեզ պարտաստեցուցիչ խօսքին, որ տանում է դէպի կենտրոնականութիւն եւ որ կարող է բոլորովին անտեղի ազնուկների ու երկպառակումների առիթ դառնալ : Դրա փոխանակ առաջարկեցինք մեր նախկին ծրագիրը՝ բողոքել խմբագրութիւնը միայն խմբագրութիւն, իսկ գործերը տանելու համար հիմնել Բուրգարական Բիւրո : Առաջարկեցինք նույնպէս ուղարկել իրենցից 1-2 հոգի արտասահման, որոնք մեզ եւ ձեզ հետ միասին կարող են որոշ համաձայնութեան գալ : Այդ համաձայնութիւնը ընդհանուրի կողմից կ'ընդունուի : Շուտով, ուրեմն, էս կարծիքն էլ գրիւ Ռուսաստան :

Արվախը ուշացել է : Գեո նրա հասնելու մասին նամակ չկայ :

Գալով տանիկներին, դարձեալ հարկաւոր ենք համարում յայտնել նրանց, թէ պատրաստ ենք ռուս տալ : Ափսոս որ անցեալ նամակը չես կարողացել կարդալ : Մենք աւելի շուտ երկիւզ էինք կրում դրանց ստաչելուց : Այսպէս էլ եղաւ : Շատ հետո էին ման գալիս, կարծես խոյս էին տալիս այդ նիւթի վերաբերմամբ խօսելուց : Շուտով Հասանը հեռացաւ Եգիպտոս (ընտանեկան պատճառներով) : Հեռանալուց առաջ Գարոյի հետ երկար խօսել է : Մնաց միայն այն երիտասարդը՝ շատ յուսահատական : Նկատելով այդ, օգտուեցի թաուցիկ տարածելուց առաջ եկած աղմուկից եւ կողմակի կերպով նամակով տուն հրաւիրեցի : Շատ թոյլ էր խօսում, ռուսների մասին ոչ մի խօսք... Այս պատճառով այժմ էլ կրկնում եմ, թէ դրանց հարկաւոր է ասել, որ պատրաստ ենք ռուսը յանձնել (միայն Բուրգարիայում) : Թող դրանց յոյսը միշտ վատ մնայ : Գեո հարց է, թէ ե՞րբ են կարողանալու այդ ռուսները տեղ հասցնել... Եթէ ենթադրենք, որ շատ շուտ հասցրին, մի՞թէ մեզ վնաս կը լինի, եթէ այս օրերս դրանք կարողանան մի բան անել : Եթէ մինչեւ իսկ վնաս լինի, մի՞թէ այդ վնասը կարելի է համեմատել օգտի հետ : Եթէ Ռամազանի օրերին դրանք կարողանային մի ռուսը նետել... :

Պատրիարքի եւ Տատեանի պատգամաւորը նոյն Անէմեանն էր, որ առաջ էր եկել : Նախ՝ շատ գարմացաւ չզոնելով նոյն անձնաորութիւնը : Յետոյ, կոնդակը կարդալուց յետոյ. Պրն. պատուիրակը բերանացի աւելացրեց, որ այժմ ամէն կողմից հայ ժողովուրդը հանգստութիւն է պահանջում եւ թէ ժողովուրդը պէտք է գրում փիչ ազատ շունչ փաշելու եւայլն... Այդ ոգով արտասանած մի ֆարսից յետոյ, վերջ ի վերջոյ աւելացրեց, թէ նրանց բոլորի առաջարկութիւնն է մօտիկ ապագայում (Ռամազանից էին վախճում) ոչ մի ցոյց չանել, քննադատեց 14ի կռիւը. մեղադրելով մեզ ժողովուրդը նախօրէն լաւ չգիտելու. աւելի պատրաստուած դուրս չգալու մէջ : Իր հարցին, թէ արդեօք մենք այժմ վնասակար չենք համարում 14ի ցոյցը, մենք պատասխանեցինք՝ ո՛չ, եւ պարզ կերպով ցոյց տուինք իրեն, որ ցոյցը անհամեմատ աւելի օգուտներ է տուել եւ տալու է Հայկական Հարցին : Յետոյ, մի կողմ թողնելով դրա ֆարսը, մի լաւ յարակուսեցինք Օրմանեանի ֆաղափակաւորութեան վրայ. ցոյց տալով, որ դա տանում է դէպի Աշրգեանականութիւն...

(Ստորագրութիւն չկայ)

36) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿՈՄԻՏԵԻՆ

(Գրուած Ռոստովի ձևագրով)

16 Փետրուար 1897

Ձեր նամակը Իզմիրից (ձածկ-) ստացանք: Կարծեցիկմք թէ նամակ գրողը Մ. (ձածկ-) է, չէ՞ որ նամակ գրելու համար մտանք պետք են: Եղկոտոսից (ծ-) գրել էին ձեր ձերքա- կալման մասին: Իսկոյն գրեցիք Պոլիս: Լա է ազատուել էք. կը միամտացնենք: Մեզ միանգամայն զարմացրեց Մուրեհի մասին հաղորդած լուրը: Արդէն մի նամակով Ակոպը յայտնել էր Մուրեհը հեռացնելու եւ նրա պաշտօնն իր վրայ առնելու մասին: Բայց չանցաւ մի քանի օր, Պոլսոյ դէպքից յետոյ իմացանք, որ Ակոպը փախել է, երկիւղ կրելով տարածուած լուրերից. եւ այդտեղ մնացել է դարձեալ Մուրեհը: Մուրեհը մեզ յայտնի էր իբրեւ եռանդու, գործին նուիրուած երիտասարդ:

Չարմանում ենք, որ չէք ստացած մեր վերջին ուղարկածները: Ուղարկուած են 1) վասպ. կնիքը, 2) մի ընդհանուր գրութիւն Նոր-Հնչակեանների վերաբերմամբ, որ պէտք էր ուղարկել մեր բոլոր կոմիտէներին, 3) մի ընդարձակ նամակ, վան ուղարկելու համար: Խնդրենք անմիջապէս տեղեկացնել զրանց ստանալու կամ չստանալու մասին:

Կիրասնի մասին կը գրենք նամակ: Երգնկայի թղթակցութիւնը ստացանք, իսկ Օր-տուինը մտացել էիք նամակի մէջ դնել:

Գարձեալ էին երգը՝ Հայրենիք Սրբազանը երգեցէք. դա ամենալաւ երգն է: Շուտով դարձեալ կը գրենք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռոստովը այստեղ է եւ ուղարկում է իր համբոյրները: Սեպուհը Բուլգարիա է այժմ:

37) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

18 Փետրուար 1897

Ամերիկայի Գաշնակցական կոմիտէներին,

Վաղուց է պատրաստում ենք մի ընդհանուր տեսութիւն ուղարկել Գաշնակցութեան ընթացիկ գործունէութեան վերաբերեալ: Բայց մեր մտադրութիւնը յետաձգում էինք՝ սպասելով Ռուսաստանում կայացած ժողովի արձանագրութեան:

Արձանագրութիւնը չստացանք դեռ եւս, ուստի առ այժմ բաւականաճում ենք մեր ստացած նամակից քաղուած ձեռք հաղորդելով: Ժողովը, կազմուած Ռուսաստանի, Պարսկաստանի բոլոր կոմիտէների ներկայացուցիչներից, նոյնպէս եւ Տանկահայաստանի, բայց ոչ բոլորի, տեսել է 22 օր: Վնտուել է՝

- 1) Բասենի, Կարնոյ, Մշոյ եւ այլ շրջակայ գաւառների ուժերը կենտրոնացնել Սասնում:
- 2) Արշաւանքներ գործել պարսկա-տանկական սահմանագլխից դէպի վասպուրական:
- 3) Աւելի մեծ ուշադրութիւն դարձնել Զէյթունի եւ Դերսիմի վրայ:
- 4) Խմբագրութեան, Պոլսոյ կենտր. Կոմիտէի եւ Թիֆլիսի Բիւրոյի ձեռքով ընտրել արտասահմանում մի Բիւրօ, որ կը վարի Գաշնակցութեան արտասահմանեան գործունէու-

Քիւնը եւ կը խմբագրի թերթը: Այդ Բիւրոյի եւ Թիֆլիսի Բիւրոյի մէջ կայացած վճիռները պարտաւորիչ պէտք է լինին բոլոր կոմիտէների համար:

Թիֆլիսի ժողովի մի էանի վճիռների հետ մենք համաձայն չենք: Խորհրդակցու- Քիւնը շարունակում է: Հետեւանքի մասին կը հաղորդենք:

Նամակիս վերջին կը գտնէք «Վրէժ» կենտր. Կոմիտէի (Ատրպատականի կենտր. Կո- միտէի) արած ծախսերը, որից կարող էք մտաւոր գաղափար կազմել այնտեղի գործունէու- քեան մասին: Ի նկատի ունեցէք, որ Խաչուի մէջ յիշուած իրացանքները ու փամփուշտները Պարսկաստանում պատահական եւ ճայրայեղ դէպքում գնուածներն են: Պարսկաստանում այդ իրերը սուղ լինելով եւ անկարելի լինելով լաւ ապրանք գտնել, իրացանքների եւ փամ- փուշտների պաշարը սովորաբար տեղափոխում է Ռուսաստանից կամ բոլորովին պատ- րաստ, կամ իբր հում նւթ արհեստանոցի համար:

Նոր-Հնչակեանների մասին նոր բան հաղորդել չենք կարող. բանակցութիւնները հա- մարեալ թէ կանգ են առել. սպասում ենք մեր կոմիտէների բոլորի կարծիքին, որպէսզի դրանց վերջնական որոշ պատասխան տրուի: Մինչեւ այժմ ստացուածները նրանց օգտին չեն խօ- սում: Մեր անձնական համոզումն է, որ այդ միութեան հարցով գրադուելը ապարդիւն է եւ միեւնոյն ժամանակ անհրաժեշտ: Ապարդիւն է, որովհետեւ մենք էլ լաւ գիտենք, իրենք էլ, որ Հնչակեան կազ- մակերպութիւնը քայքայուել է բուն երկրի մէջ եւ որ միայն արհեստական միջոցներով կարելի է դրանց գոյութիւնը պահպանել: Համերաշխ գործունէութիւնը հարկաւոր է եւ կա- յելի է միմիայն բուն երկրում. այս շատ պարզ է, եւ ոչ Բուլգարիայում կամ Ամերիկա- յում: Իսկ մեր բուն երկրի մէջ մեր կոմիտէները անկարող են դրանց հետ միասին գործել, ոչ թէ այս կամ այն զգացումներից դրդուած, այլ այն պարզ պատճառով. որ հնչակեան խմբեր այնտեղ գոյութիւն չունեն: Միակ կէտը, ուր կարող են այժմ մեր ընկերները հան- դիպել հնչակեաններին, դա Պոլիսն է: Իսկ արդէն յայտնի է, թէ Պոլսում դրանք ինչ ոյժ ունին: Միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է այդ խնդրով գրադուել, որպէսզի առիթ չտանք հասարակութեան եւ մասնաւորապէս միութեան անկեղծ ձգտող հնչակեաններին (մենք հա- ւատացած ենք, որ այդպիսիները կան) կարծելու, թէ Գաշնակցութիւնը խոյս է տալիս միու- քիւնից այս կամ այն միտումներով, այն Գաշնակցութիւնը, որ իր ծագման առաջին օրերից սկսած ամէն ջանք է քափել ստեղծել միաբան, համերաշխ գործունէութիւն, առանց մեծ ուշադրութիւն դարձնելու անձնական տեսական հայեացքների վրայ եւ ի նկատի առնելով դիմացինի յեղափոխական կարողութիւնը գլխաւորապէս:

Վերջերումս մեր յարաբերութիւնները տանիկ դժգոհների հետ աւելի մտերմական են դարձել: Երիտասարդ Թուրքները վաղուց գոյութիւն ունին Եւրոպայում ամէն տեսակ գոյներով: Մի բան միայն դրանց մէջ ընդհանուր էր. այդ նրանց կատարեալ անորոշութիւ- նը, դատարկութիւնը եւ կամքի բացարձակ բացակայութիւնն էր որեւէ բան կատարելու: Տանիկ տարրը դեռ այնքան ստոր է կանգնած ընդհանուր զարգացման տեսակէտից, որ նրա մտաւոր ներկայացուցիչները անընդունակ են զգալ իրենց վրայ ընդհանրութեան ցաւերը եւ իրենց անձը գոհել յօգուտ այդ ընդհանրութեան, անընդունակ են, մի խօսելով, յեղա- փոխական գործունէութեան: Մութիւնի վերջին տարիների խաւանակները քիչ սքափեցրել էին դրանց, տանիկ թերթերի թիւը շատացաւ, մտքերը լայնացան բայց եւ այնպէս Պա- րիզում նստած «Երիտասարդ Թուրքիա»-յի պաշտօնական ներկայացուցիչները զանգաւն Մու- րատ բէյերը. Աւմէտ Բիզաները վառ դիրք էին բռնում ընդհանրապէս դէպի հայերը եւ մասնաւորապէս դէպի յեղափոխականները:

Անհրաժեշտ էր այդ ուղղութիւնը փոխել. այդ կարող էր կատարուել, եթէ դրանց մէջ երեսն զար մի իսկական յեղափոխական մարմին:

Բանկի յարձակումից յետոյ. հերոսների այստեղ գալով մեր եւ տեղառջ «Երիտա- տասարդ Թուրքեր»ի մէջ աւելի շփում առաջ եկաւ: Եւ Պոլսում տեղի ունեցած դրանց ծա- նօթների ու բարեկամների բազմաթիւ ձեռքարկութիւններն այն աստիճան գրգռեցին դրանց, որ վնասեցին թողնել խաղաղասիրական ճանապարհը եւ սուլթանական ռեժիմից ազատուելու համար դիմել դրական ու ազդու միջոցների: Բացի այդ, շնորհիւ այն հանգամանքի, որ Տան- կաստանում գործող մեր ընկերները տարածում էին Պարիզում եւ այստեղ հրատարակուած

քերքերի այն համարները, որոնք նպաստաւոր են մեր դատի համար, բուն երկրի մէջ առաջացած յեղափոխական անհատները սկսեցին աչքերը բանալ եւ համակրանքով վերաբերուել հայ յեղափոխութեան եւ ցակերպին յայտնել նոյն միջոցներով գործել: Մեր ընկերներին յաջողուեւ է մի քանիսի հետ մասնաւոր կապ հաստատել:

Նոր կազմակերպուած «Օսմանեան Յեղափոխական Կուսակցութեան» շրջաբերակաւոր կարողացած կը լինէր, անշուշտ, «Գրօլակ»ի մէջ: Աշխատում են ունենալ իրենց սեփական կանոնաւոր օրգանը եւ գործի ձեռնարկել: Մեր բարոյական պարտականութիւնն էր աջակցել այդ մարմնի կազմուելուն: Երկրայ անհասար կոուի մէջ այդ աւելի քան անհրաժեշտ եւ նպատակայարմար է:

Բուէնոս-Այրէսից եկած տղաները այժմ Անգլիա են գտնուում: Պ. Մելիքի հետագիւրն ստանալուն պէս հետագրեցինք Պարիզի մեր ներկայացուցչին անմիջապէս լուստոն հասնել եւ հոգ տանել տղայոց մասին: Պարիզի ներկայացուցիչը սիրով ընդունեց մեր առաջարկը, անմիջապէս լուստոն մեկնեց. ընդունեց տղաներին եւ տեղաւորեց: Այժմ նրանք բոլորովին ապահով դրութեան մէջ են: Մի-երկուսը գտել են իրենց համար աշխատանք. միւսներն էլ փնտրում են. սպասելով, որ նորից կոչուին իրենց իսկական գործին: Բացի այդ, Պոլսոյ ռուսական հիւանդանոց փոխադրուած վիրաւորներից երեքը բոլորովին ապահովեց Յունաստան են տեղափոխուած ռուսաց հիւպատոսի հաշուով եւ խնամքով: Այդտեղից տղայքը նախապարհ են ընկել եգիպտոս: Հարկ եղած խնամքը արուած է: Հիւանդանոցում կը մնան դեռ երկու հոգի (մէկը մեռել է). որոնք կ'առողջանան հաւանական է 2-3 ամսից յետոյ: Հիւանդանոցում դրանց հետ վարուել են շատ լաւ:

Այժմ մի քանի խօսք ներքին նահանգների դրութեան մասին, որ քաղուած ենք ստացուած վերջին նամակներից:

Տրապիզոնը համարեաւ ամբողջովին գաղթել էր. մնացել էր անհաստալի փոքր թիւ՝ 30 տուն: Բայց եւ այնպէս, մեր ընկերները արհամարհելով ամէն վտանգ՝ մնում էին իրենց տեղը եւ յաջողութեամբ տանում իրենց վրայ դրած բեռը, գլխաւորապէս յարաբերութիւն պահպանելը ներքին գաւառների հետ: Այժմ գաղթածները հետգիտել հաւաքուած են: Տրապիզոնի ղառապարտուած ընկերներն ազատուած են ընդհանուր ներման շնորհիւ: Կոմիտէն վերակազմուել է:

Երզնկան գլխաւորապէս գրազած է Գերսիմի խնդրով: Յայտնի Հաջի Գալուստ Արթանեանը իր ընկերներով դեռ բանտն է. ներման չի արժանացել: Նշանաւոր հայդուկ Քեռին արդէն Գերսիմ է գտնուում. այնտեղ նա ընդունուել է ամենալաւ կերպով: Մեր հարցին նըպաստաւոր երկու նշանաւոր ցեղերը բշտամական յարաբերութեանց մէջ են գտնուում իրար հետ: Քեռիի առաջին գործը դրանց հաշտեցնելը պէտք է լինի: Գերսիմի գործերի համար տեղական պայմանները պահանջում են առատ պարգեւներ, առատ զրամական միջոց: Այս էլ Քեռիի ամենագլխաւոր պահանջն է: Քեռիից առաջ անցեալ տարի Գերսիմ նամապարհ ընկած մեր մի գործակալը ձեռքաւորուած է եւ երկար ժամանակ բանտի մէջ է գտնուում: Քեռին յոյս ունի ազատելու նրան:

Կարնոյ մէջ դրութիւնը միտքարական է. միայն մեր հռանդոտ գործիչներից մէկը՝ Աբամ Արամեանը չի արձակուած բանտից: Նա պահուում է իբր սոսկ մարդասպան. չնայելով նրա եւ մեր ջանքերին իրեն բացառապէս յեղափոխական ներկայացնելու: Միւս բանտարկեալների մասին տեղեկութիւն դեռ չունինք:

Վանայ լինալ դրութիւնը զգալի կերպով փոխուել է Սեպտեմբեր 11ի հերոսական կռուից յետոյ: Հայդուկների յանդուգն անվիհերութիւնը եւ նրանց անսպասելի յաջողութիւնը շատ է ոգեւորել տեղական ժողովուրդը եւ նորից նրա մէջ յոյս ներշնչել դէպի յեղափոխութիւնը: Վանում այժմ միակ յեղափոխական կազմակերպութիւնը Դաշնակցութիւնն է, եւ ժողովուրդը միայն նրա ուժին ու տոկոսութեան է հաստ ընծայում: միւսները հենց առաջին հարուածից յետոյ վերացան: Միտքարական այն է, որ կանացի սեռը շատ ջերմ մասնակցութիւն է ցոյց տալիս դէպի Դաշնակցութիւնը, եւ օր- ժեմիայի ղեկավարութեամբ բազմաթիւ կանացի խմբեր են կազմակերպուած:

Գաւառների մասին հետեւեալն է գրում մեր ընկ. Վազգէնը. «Մեր գաւառական ընկերներն ազատ մնացած են ամէն տեղ: Շատախ իր դիմադրութեամբ փրկուեցաւ: Մոկս ա-

գատ է: Գաւաշ, Կարնկան քէեւ շատ գոհ տուին, բայց նուէն կան, իրենց տեղն են: Ենգան, Սպարկերս, Կարկառ այս տարի չկոտորուեցան: Արնէշ քանի մը գիւղեր ծանր հարուած կրեցին: Արնէշ ազատ է»...

Պարսկաստանում հայդուկային ուժերը ցրուած են գարնան հաւաքուելու պայմանաւ: Հայդուկային վերջին գործողութիւններից տեսեալով՝ քրտական մանր գիւղերը համարուում են, մեծ գիւղեր կազմում աւելի լաւ դիմադրելու համար: Գարնան նրանք նորից սպասում են...

Ատրինքերի հետ բանակցութիւններ ունենալու անցեալ տարուան մեր փորձերը ցանկալի արդիւնք չունեցան: Մեզ յաջողութեց միայն պարսկա-տանկական սահմանադրում ապրող մի ցեղի հետ սկսել բանակցութիւնները: Բացի այդ, պարզուեց, որ Մար-Շիւտեմը, որի վրայ էր դարձրած այսօրեան ժամանակ բոլորի հայեացքը, իսկապէս շատ մեծ ոյժ չի ներկայացնում եւ այնքան էլ հեղինակութիւն չունի ատրինքերի մէջ: Վասպուրականի մեր ընկերների կարծիքով աւելի նպատակայարմար է բանակցութիւններ սկսել ուղղակի ատրինքների հետ:

Ահա կարն կերպով իրերի ներկայ դրութիւնը:  
Անցեալներում, 3-4 ամիս առաջ, տեսութիւն ունեցանք Արքին փաշայի որդու հետ, որ եկել էր իր հօր կողմից գանազան առաջարկութիւններ անելու: Վերջին օրերս Արքին փաշայի որդուն ուղեկցող Պրն. Անէմեանը նորից եկել էր խօսելու համար, իբր պատգամաւոր Օրմանեանի եւ Տատեանի կողմից, բերելով իր հետ Օրմանեանի կոմիտէ: Նպատակն էր համոզել մեզ ցոյցեր չանել, չշարժուել. որպէսզի նոր կոտորածների տեղիք չտանք եւ թոյլ տանք, որ բեփոքները մտցունեն: Հարկաւոր պատասխանը տալուց յետոյ, ցոյց տալով առաջարկի անմտութիւնը եւ անկարելիութիւնը, մենք մեր կողմից սաստիկ յարձակուեցինք Օրմանեանի քաղաքականութեան վրայ, որ հետգիտել մտեսնում է Ալըքեանութեան: Իր խօսքերի հիման վրայ (մեր կողմը քննադատելիս ցար էր յայտնում, որ ժողովուրդը լաւ չէ գիտում) պահանջեցինք, որ փոխանակ այդպիսի խորհուրդներ տալու, որի աւելորդ լինելը իրենք էլ են հասկանում, աւելի լաւ կ'անեն նիւքապէս նպաստեն մեզ գործը աւելի լայն, աւելի մեծ ուժով շարունակելու համար:

Ուղարկելով Ամերիկայի դաշնակցական կոմիտէներին ներկայ դրութիւնը՝ խնդրում ենք կոմիտէների անդամներից, կազմակերպութիւնից դուրս չհանել հաղորդուած տեղեկութիւնները, որ կարող է վնաս հասցնել գործի կանոնաւոր ընթացքին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԳՐԾԱԿ»

Խնդրենք արտագրել եւ տարածել միւս կոմիտէներին եւս:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Թ. Գ. «Վերջ»ի կենտր. կոմիտէի հաշիւը 1896 Յունուար 1ից մինչեւ 1896 Գեկտեմբեր 1.

Հրացաններ, մասեր, ատրիանակներ (գնում Պարսկաստանում)՝ 13,810 դրան, փամփուշտամաններ եւ պայուսակներ՝ 3,374 դր. 80 կ., փամփուշտ՝ 20,604 դր. 41 կ., դոնտաղներ՝ 1,664 դր., զէնքի փոխադրութեան՝ 17,184 դր. 83 կ., արհեստանոցի եւ արհեստաւորների՝ 7,641 դր. 25 կ., կաշառքներ զէնքի եւ խմբերի փոխադրութեան ժամանակ՝ 6,024 դր. 35 կ., փոխադրութիւն վան՝ 3,964 դր., սուրհանդակի՝ 3,321 դր., կամաւորների սպարուստի եւ տեղափոխութեան՝ 22,553 դր. 74 կ., հմբագրութեան փոխադրած՝ 2,500 դր., նամակ վան, փոստ, հետագիր, անցագիր՝ 2,381 դր. 20 կ., վնասած օտար պարտքերի՝ 575 դր. 50 կ., տան իրեր՝ 1,025 դր. 50 կ., տպագր. եւ մանր ծախք՝ 403 դր. 65 կ., դրամարկզում՝ 276 դր.: Գումար՝ 107,308 դրան:

**38) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ  
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԿՈՄԻՏԵՒՆ**

(Գրուած Ռոստովի ձեռքով)

19 Փետրուար 97, ժընև

Ընկերներ,

Որքան կարելի է շուտ ուղարկեցէ՛ք Ձէյթուն ձեր նշանակած մարդը. մեզ այժմ շատ հարկաւոր են լուրջ, նիշդ տեղեկութիւններ այդ կէտի վերաբերմամբ: Ինչպէս դուք էլ գրել էիք, այդ ճանապարհորդութիւնը պէտք է խիստ գազանի մնայ. դա մեզ թելադրում է անցեալի արած փորձը:

Յաւալի էլ լսել տղաներից մէկի բռնած ընթացքը, մասնաւոր նրա հայեոյանքները թարկէնի դէմ: Աշխատէ՛ք, որ յիմարութիւններ չանի: Մենք աշխատում ենք տղերանց ճանապարհ ձգել Անգլիայից եզրիպտոս, դա եզրիպտոսից Անգլիա՞ է ցանկանում գնալ: Եթէ շատ յամառի, ասէ՛ք իրեն, որ քանի կազմակերպութեան անդամ է իրեն համարում, պէտք է հպատակի միւսներին կարծիքին եւ իր էէֆով չընթանայ, իսկ եթէ ոչ, — այն ժամանակ ուրիշ բան է. ազատ է իր ուզածն անելու: 100 ֆր. ուղարկուած էր կոմիտէին իբր նպաստ տղայոց կարիքները հոգալու, ուրեմն, կոմիտէի տրամադրութեան տակ էր գտնուում: Ինչո՞ւ է՛ք այդ բանը յայտնում եւ գուր զայմաղալի ասիք տալիս:

Պոլիս վաղուց ենք գրել, որ հաղորդեն ձեզ իրենց հասցէն:

Ժամ կարտաշեանի մասին գրել ենք ուր հարկն է: Կը գրենք ձեզ, երբ մեր մամակի պատասխանն ստանանք:

Իրենից նամակ կար. ողջ եւ առողջ տեղ են հասցրել:

Աքէնից տղաները մեզ նամակ չեն գրել. ոչինչ չենք ստացել. գրողը եղել է Մանիկեան անունով մի հնչակեան: Այս ի՞նչ համելուկ է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»

**39) ՀՐԱՉ ԹԻՐԵԱՔԵԱՆԻՆ**

(Գրուած է ժընևից, Հրաչը գտնուում էր Եմբրու քաղաքում)

20 Փետրուար, 97

Սիրելի Հրա՛չ,

Այս քաղաքի ստացանք անսպասելի կերպով Բելգիայից Գնունու լուսանկարը: Գրեցինք վահագն, որ կենսագրութիւնը ուղարկէ շուտով. դու էլ ինչ գիտես՝ ուղարկիր:

Լուսանկարը շատ յաջող է:

Մի առաջարկութիւն եմ ուզում քեզ անել. չգիտեմ, թէ ինչպէս կը վերաբերուի: Իմ կարծիքով, ի նկատի առնելով թէ՛ գործերի դրութիւնը եւ թէ՛ քաղաքի պայմանները, դու աւելի լաւ կ'անես, եթէ թողնես վանի եւ իզմիրի մասին մտածելը եւ պատրաստուիս դէպի Ձէյթուն: Այդ կէտի կարեւորութեան մասին աւելորդ է խօսել: Եթէ մեզ յաջողուց ունենալ այնտեղ մէկը, որ կարողանայ լուրջ տեղեկութիւններ տալ եւ եթէ մենք սկսենք Ձէյ-

թունում մի գործ, հաստացած կարող ես լինել. որ հասարակութիւնը շատ ջերմ աջակցութիւն ցոյց կը տայ. որովհետեւ նա հաստով կը վերաբերուի մեզ. բաւական է, որ մենք ցոյց տանք նրան. թէ լրջօրէն գրադուած ենք այդ խնդրով: Խաժակը գրել էր, թէ կայ այդպիսի մի անձնատրութիւն, որ կարող է գնալ Ձէյթուն: Ձգիտենք, թէ որքան այդ մարդը կարող է մեզ բաւարարութիւն տալ:

Այս բաների վրայ լաւ մտածիր եւ պատասխանը գրիր. ինքս լաւ եմ մտածել...

Առաւօտը մի carte եւս ուղարկեցի:

Ափսո՛ս, հագար ափսոս, որ այսպիսի բարեյաջող պայմաններում մենք ոչինչ չենք կարողանում անել:

Կրետական հարցը լուծուելու է. այս առիթը անցաւ, կարելի է ասել. միս առիթները աշխատինք բաց չթողնել:

Ժամանակ է մի բան անելու: Մեր ուժերը կորչելու վրայ են՝ պարագութիւնից իբար միս են ուտում, փչանում են: Բանկի տղայքը առ այժմ լաւ են, բայց պարագութիւնը նըրանց էլ կը փչացնի:

Քո՛ ՌՈՍՏՈՎ

**40) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ**

**Ա. ՎՌԱՄԵԱՆԻՆ**

(Գրուած Ռոստովի ձեռքով)

25 Փետրուար 97

Յարգելի ընկեր վահագ

(վարձա),

Արդէն մի քանի մամակ ձեզ գրած ենք poste restante:

Հ. Յ. Դաշնակցութիւն վերմագրով թղթերը կ'ուղարկուին:

Ոչ մի տոմար կոմիտէների հաշուի համար չենք կարող պահել. Ֆիլիպէի գումարը պէտք է մուծարարութեանց ցուցակի մէջ փնտոնել: Արվալը ստացել է եւ այդտեղ բաժանել: Դրա հաշիւը կայ:

Դժբախտաբար, ուղարկուած մուծարարների հաշիւ չկայ: Այնպէս որ չենք կարող ասել թէ. որտեղ եւ որքան է ուղարկուած: Վերջերս ուղարկուած են մուծարարութեան Եմբրու շրջի գրելով (4501-4600): Սրանից յետոյ միայն ձեզ կ'ուղարկենք:

Վարձայի համար ի՞նչ տեսակ կնիք է հարկաւոր: Ձի՞ կարելի էլ էլ սպասել, գուցէ կենտր. կոմիտէ է դառնում. ի նկատի ունեցէ՛ք, որ կոզմայի հասցէով մէկը ուղարկուել է իր ժամանակին. բայց կորել է, իրեն չի հասել: Կարող է այս կամ այն օտարի՛ ձեռք ընկնի եւ կոմիտէի անունը շահագործուի:

Հնչակեանների բոլոր շրջաբերականները ուղարկէ՛ք մեզ: Ժամանակին շատ կարեւոր նշանակութիւն կ'ունենան:

Լուսանկարներն ստացանք: Սուրբնիքը երկրորդ անգամ պատրաստել տուինք, բայց դարձեալ անյաջող է: Ինքը՛ լուսանկարը լաւ չէ: Չմոռանամ գրել, որ Գնունու լուսանկարը իսկականը չէր: Կամ կամեցել էին մեր գլխին օյին խաղալ. կամ թէ՛ միամտաբար ուրիշ Գնունու լուսանկար են ուղարկել:

Ձէնքի մասին Գանարեանին գրուեցաւ:

Գալով աստրիական զենքերին՝ պետք է գոյջ լինել: Լաւ չկարողացայ ջոկել՝ Մանչեստեր Էֆ գրած քէ Մանլիլտեր: Լաւանական է Մանլիլտեր լինի: Այդ հրացանները լաւ են, եթէ միայն իսկական են: զրանք կարող են լինել վատ շինածները, անպէտքները, կամ, ինչպէս մենք ասում ենք, բրակ արածները: Առանց մասնագետի, առանց մէկ-մէկ բնական գնել չի կարելի: Իսկ եթէ Մանչեստեր է՝ ձեռք գրածը, ոչինչ չգիտենք այդ տեսակ հրացանների մասին: միայն աստրիական մի ձեռք կայ՝ վինչեստեր, որ այժմ շատ անպէտք հրացան է: Բայց ամենազլխառորք փոխադրութիւնն է: Բէնդէր-Բուշիի մասին մտածել անգամ չի կարելի, որովհետեւ սարսափելի դժուարութիւններ կան այնտեղից Թարիգ փոխադրելու համար: Գրաւ համար հարկատու են անագին միջոցներ: Բարում փոխադրելուն նոյնպէս չենք հաւատում: գուցէ այդ պարունը կարծում է, քէ Բարումը շարունակում է մնալ porto-franco: Իսկ եթէ կարողացաւ յանձնել մեզ այնտեղ, հիանալի բան կը լինի: Տրայիզոնով Թարիգ աւելի եղաւ է, եթէ միայն բարիկցի մի վանառական համաձայնի իր անունով ստանալ: Չպէտք է մտանալ, որ տրանզիտի ապրանքը նայում են *Տրայիզոնում* եւ Թարիգի մասնատում: Թարիգ կաշտելի եղաւ է, իսկ Տրայիզոնի մասին պէտք է մտածել: Այնպէս որ նախ քան գնելու մասին մտածելը, հարկատու է փոխադրութեան մասին մտածել: Մի հանգամանք էլ կայ. եթէ մեզ յաջողուց լուրջ կերպով գործի ձեռնարկել Ջէյքոնում, այն ժամանակ փոխադրութեան հարցը դժուար չի լինի: Իսկ այս հարցի մասին լուրջ պէտք է մտածել:

Պարսկաստանի հասցէն՝  
 Թարիգ. երկու ծրարի մէջ: Դրսի ծրարի վրայ գրել. — Mr. Martiros Nazarian, Tauris, Perse.

Իսկ ներսի ծրարի վրայ՝ «Յանձնել երուանդին»:  
 Մամաստ. Monsieur le Docteur Chr. Ohanian:  
 Նոյնը՝ հայերէն  
 Salmaste, Perse.

Թիփլիսի համար Բուլգարիայից նամակ գրելու համար յարմար հասցէ չունինք:

Կը գրենք զրա մասին:  
 Այժմ հին հնչակեանների մասին:  
 Թէ հիմ շնչակեան կենտրոնը մեղմացել է մեր վերաբերմամբ, զրա նշանները վաղուց էին երևում: Արդէն, որքան յիշում ենք, սրա մասին ձեզ գրուած էր: Այսօր զրանք արդէն միութեան մասին են խօսում: Լոնտոնից վերադարձած կենտրոնի անդամներից մէկը իրաւորել էր մեզ մի *մասնատու* ժողովի, որին մասնակցում էին մի քանի ուսանողներ եւս, որտեղ նա երկար խօսեց միութեան անկրթութեան, այդ գաղափարի արծարման մասին եւայլն... առաջարկելով, վերջ ի վերջոյ, գործնական միջոցներ փնտռել երկու մեծ կուսակցութիւնները՝ Գաշակցութիւնը եւ շնչակեան կուսակցութիւնը միացնելու համար: Ճառի առաջին կէտին պատասխանեցինք, քէ բոլորովին գուր է այդ տեսակ բարոյներով գրադեցնել մեզ: 6-7 տարի է այդ բարոյները կը կանգնում են, գալիս են տարել: Բոլորի համար հասկանալի նշարտութիւն է եղել, բացի շնչակեան կուսակցութիւնից, որ ամէն միջոցներով կուռել է այդ գաղափարի դէմ: Ուրեմն, առաջին կէտը՝ բարոյը աւելորդ բան է: Գալով գործնական միջոցներին՝ իւրաքանչիւր դաշնակցական ի նկատի առնելով շնչակի ախար անցնելը, կը պահանջի այժմ որոշ երաշխարտութիւն զրա կողմից: 1) Առաջներում մեր ընկերների եւ երկրում գտնուած հնչակեանների մէջ եղել են *փորձեր* միասին գործելու. շնչակեան կենտրոնը ամենախառնակ դեր է խաղացել այդ դէպքերում. ի՞նչ երաշխարտութիւն կայ այժմ, որ նոյնանման դէպքեր չեն կրկնուի: 2) Մինչեւ այժմ մենք շնչակեան կուսակցութեան ուժին նշանակութիւն էինք տալիս, որովհետեւ քիչ քէ շատ հաւատ ընծայելով շնչակին՝ ընդունում էինք, որ նրա մէջ կան *Ներսէս*: Բայց, յանկարծ, նոյն շնչակից իմանում ենք, որ այդ հետոսները ամենակեղտոտ անճարարութիւններ են, մատնիչներ եւայլն... Արդ՝ եթէ եերսս հոշակութեանը այդպէս են, ապա ինչպէ՞ս կը լինեն միւսները: Ինչպէ՞ս կարելի է հաւատ ընծայել այդպիսի մի կազմակերպութեան:

Գործը յիշու կերպով վերջացաւ: Կարծում ենք, որ սրանց հետ որքան կարճ կըսրենք, այնքան լաւ է, քէ չէ թոյլ կը տամք, որ սրանք էլ մեր անունով նորից արմատներ ձգեն

եւ հասարակութեան առաջ իրենց երեսը պարզ անեն:  
 Ֆիլիպիից ուղարկել էին մի ապագրութեամբ ցանկ մատնիչների անունով՝ խնդրելով, որ առանձին հրատարակենք եւ ցրենք: Լաւ է, որ կոմիտէի անուամբ չեն արել: Չգիտենք, քէ որքան արդար են այդ մարդկանց վերաբերմամբ: Նամակը ստորագրուած է «Մուրէն»: Կոմիտէի կողմից չէր: Ի՞նչ է ձեռք կարծիքը այդ անճարարութիւնների վերաբերմամբ: Երեսուրդի մեր այնտեղ եղած ժամանակ խօսակցութիւն է եղել:

Նոյն տեղից ստացել ենք մի բողոքագիր մի քանի դաշնակցական տղաներից, որոնք ընկերական դատ են պահանջում իրենց դէմ ուղղուած հալածանքների համար: Հիմա էլ այնտեղ է սկսուելու...

Մի կերպ պէտք է աշխատել այդ մարդկանց գործի դնել, քէ չէ պարապութիւնից անպատճառ կոռններ կը լինին: Երկրորդ ենք կրում եւ Լոնտոնի տղայոց մասին: Նրանց էլ մաս-մաս պէտք է գանազան տեղեր ցրել: Ուրիշ ոչինչ չէ. հնչակեան ինտրիգաններից ազատ կը մնան: Ինչո՞ւ այժմ մաս առ մաս Պոլիս չեն նանագարելու:

Պոլսից բարակցութիւն ստացանք Գիսակ ստորագրութեամբ: Ո՞վ է դա: Մի բան է ուղարկել, որ մեզ հասցնէք: Ստացե՞լ էք, քէ ոչ:

Մի քիչ առաջ երիտասարդ տանիկը մեզ մօտ էր: Երկրորդ պրոկլամատիոնն էր քերել, որ խնդրել էի Ֆիլիպիի համար: Խօսեցինք եւ իրենց գործերի մասին: Պատմեց, որ ցանկութիւն է եղել Սուլթանին սպանելու. բայց չի յաջողուել. որովհետեւ ծովով է անցել: Շատ մեծ սուտ էր. բայց անփորձի, երեխայի, ուրեմն, եւ ներքի սուտ: Հարցրի լրագրի մասին: Նրա ասելով Պոլսոյ իրենց ընկերները (մեզանից են սովորել՝ «Պոլսոյ ընկերներ») խորհուրդ չեն տալիս, որովհետեւ առանց այն էլ տանկական լրագրներ շատ կան: Բացի այդ՝ եթէ լրագիր հրատարակուի, կառավարութիւնն աւելի հետամուտ կը լինի եւ այլ յիմարութիւններ: Գրա փոխանակ նրանք ցանկանում են բաւականազաւ նոր պրոկլամացիայով, որտեղ գրուած կը լինի իրենց հասցէն. որպէսզի կասկած չմնայ, քէ իսկապէս բուրքեր են: Պնդեցինք օրգանի անկրթութեան վրայ՝ ցոյց տալով իրենց հակասութիւնները: Խոստացաւ գրել Պարիզ օրգանի անկրթութեան մասին: Միայն մի բան խնդրեց. չի՞ կարելի արդեօք ումբերն ստանալ այժմ Բուլգարիայում, որովհետեւ տեղափոխութեան համար անագին ժամանակ է հարկատու: Ազիլ խօսք տուեց միաժամանակ, որ մինչեւ օրգանը լոյս չտեսնի, ումբ պիտի չգործածեն:

Այս բոլոր խօսակցութիւնները յիմարութիւններ եւ հակասութիւններ են: Սա միայն ապացուցանում է մեր նախկին կարծիքը. քէ դո՛ւրս այժմ ոյժ չունին, մինչեւ իսկ նիւթական (օր. օրգանը հրատարակելու փոխանակ բողոքները հրատարակել) եւ քէ առաջին քայլը կայ, եթէ մենք նկատի հանդիսանալք ումբեր սալով: Իսկ մեր կարծիքով պէտք է պատրաստակամութիւն յայտնել հենց այժմ տալու: Այդ դեռ հարց է՝ ե՞րբ են գալու, ե՞րբ են կարողանալու տեղափոխել, ե՞րբ են գործ կատարելու: Մենք չենք կարողանում ներկայ հանգամանակներում. գոնէ զրանց ձեռքով մի բան անենք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ստացանք ձեռք հետագիրը: Լաւ չհասկացանք. սպասում ենք նամակին: Առհասարակ, ուղարկելիս մի-երկու բառ աւելի գրէք: Խնայողական արելի սուղ է նստում:  
 Յոնանից նամակ կար. փող չունի. ինչո՞ւ չէք հասցնում. ո՞ր օրի համար էք հանգանակում:

Մոռացայ տեղեկութիւն հարցնել Գաղատիայի ներկայացուցիչ Քաջբերունու մասին. նա այժմ եղիպտոս է գտնուում: Յանկանում է գործ տեսնել: Տանկաստանի բազմներից միայն Իգմիր է կարող մնալ: Ինքն իրեն առաջադրում է կիպրոս կամ Իգմիր: Ինքը միջոցներ չունի. մեր հաշուով պէտք է ապրի: Գրէք շուտով նրա մասին. կարծեմ ծանօթ էք: Յարմար չի՞ լինի Ջէյքոնի համար:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

# 41) ՅՈՎՆԱՆ ԴԱԽԹԵԱՆԻՆ, ՊՈՒԽՍ

28 Փետրուար

Քա ենթացրութիւնը, իբր թէ տանկները թուլացել են այն պատճառով, որ հրապուրուել են Սուլթանի խոստումներինց, ճիշդ չէ: Միակ պատճառը իրենց թուլութիւնն է: Նիւթական միջոց բաղադրովին չունին: Երեսակայիբ, չեն կարողանում մինչեւ իսկ օրգան հրատարակել: Անցեալ օրը երիտասարդը եկել էր (քերթեր էի խնդրել բերելու): Այդ պարզ երեսաց նրա հակասական եւ յիմար խօսակցութիւնից, որով աշխատում էր արդարացնել իրենց անգործութիւնը: Նա մինչեւ իսկ խնդրեց ռումբեր յանձնել առանց սպասելու, որ իրենց լրագիրը հրատարակուի (կարծեմ արդէն գրել եմ, որ վահապի կարծիքի հիման վրայ, նախ քան ձեր պատասխանը ստանալը, յայտնել էի տանկներին, թէ Բուլղարիայի ընկերները համաձայն են. սպասում ենք այժմ Պոլսոյ ընկերների պատասխանին): Դրան պատասխանեցի, որ մեր ընկերները կտրական կերպով կը մերժեն յանձնել այդպիսի պայմաններով: Նա խնդրեց յամենայն դէպս գրել եւ հարցնել՝ համաձայն չե՞ն լինի արդեօք յանձնել ռումբերը այժմ, ազնիւ խօսք են տալիս չգործածել ռումբերը, մինչեւ որ իրենց օրգանը լոյս չտեսնի:

Կրկնում եմ, բոլոր նշաններից պարզ է, որ ցանկութիւն ունին, բայց ոյժ չունին: Երեսի ռումբերը այժմ են ուզում ունենալ, որպէսզի ցոյց տան ում հարկաւորն է, թէ ոյժ ունին եւ նիւթական միջոցներ ձեռք բերեն: Մենք կարող ենք ամենայն վստահութեամբ դրանց յանձնել հենց այժմ: Ո՞վ գիտէ, երբ են փոխադրելու, երբ են գործածելու: Եթէ շատ գործածեն, մի՞թէ վնասը օգուտի հետ համեմատած աւելի մեծ կը լինի: Իսկ եթէ բնաւ գործ չածեն, շատ շատ չ հարուստ ենք կորցնում...

Թիֆլիսից նոր նամակ կար: Զարմանալի է, որ դու ոչինչ չես գրել ժողովի վնասներին, Բիւրոյի կազմութեան վերաբերեալ: Արվալը տեղ հասած է եղել: Սպասում են Բաբուսայ ներկայացուցչին, որ Բիւրոյի անդամներ նշանակեն: Խօսում են Բորիսի, Մար-Շիմոնի, Տրապիզոնցի մի փաստարան Շահիկեանի, Գարոյի, Տամատեանի (!?) մասին(\*): Երեսի վերջնական որոշումը կը գրեն այստեղի համաձայնութիւնն առնելու համար: Ի՞նչ ասեմ, կարծեմ ամենից լաւը կը լինի սուս ու փուս համաձայնուել, հեռագրել, որ գամ եւ յետոյ ամմիջապէս հեռանալ:

Մի քանի մասնակի ցոյցերից յետոյ, Հմայեակը(1) Պալեսանի հետ միասին մեզ մի ժողովի հրաւիրեցին, ուր մասնաւոր կերպով Հմայեակը մի ճառով բացատրեց միութեան անհրաժեշտութիւնը, առաջարկեց արժարծել այդ գաղափարը եւ միջոցներ գտնել իրագործելու: Ժողովը գնալուց առաջ մենք արդէն կասկածում էինք, թէ մի այդպիսի բան կարող է լինել, ուստի մտադիր էինք ընդհանուր ձեռով պատասխան տալ, մինչեւ որ պաշտօնական դիմումը լինի: Միայն ժողովի ժամանակ չհամբերեցինք եւ շատ կծու կերպով պատասխանեցինք: Յոյց տուինք, որ բաւական ուշ է այդ գաղափարն արժարծելու, մեր գահլէն գնացել է դրանից, մենք չենք մեղաւորը, որ հնչակեանները ուշ են գաբքնել: Գալով գործնական միջոցներին, պահանջեցինք երաշխաւորութիւն, որ ապագայում անցեալ կեղտոտութիւնները չեն կրկնուելու. այլապէս ոչ մի դաշնակցական ոչ մի ցանկութիւն չի ունենայ գործել իրենց խմբի հետ, իմանալով, որ այնտեղ արիւթաւորում է մարտին ռեժիմը: Կասկած յայտնեցինք, որ այդ խումբն այժմ ոյժ է ներկայացնում: Եթէ բոլոր հերոս հռչակուածները լրտեսներ, բախտախնդիր են, ապա ի՞նչ են ներկայացնում իրենցից միւսները՝ հասարակ մահկանացուները: Ինչպէ՞ս կարելի է հաստատու այդ տեսակ կազմակերպութեան

(\* Գրուած, բայց յետոյ ջնջուած է նաեւ Հետեւեալ կտորը, որ բնորոշում է Ռոստոմի վերաբերումը. «Բորիսի մասին գրեցի, որ յամենայն դէպս այդ գանձը իրենց մօտ պահեն»: ԽՄԲ.

բարոյական ուժին: Շատ բթու բաժնուեցանք, բայց, ինչպէս ասում են, Հմայեակը դեռ յոյսը չի կտրել միութիւնը յաջողցնելուց:

Զարմանում եմ, որ Բուլղարիայից փող չեն փոխադրում վեց: Գրեցի, որ փոխադրեն: Յամենայն դէպս, տուր մի հասցէ, որ այստեղից էլ կարողանանք ուղարկել: Փող ունինք:

Թղթակցութիւնը ստացուեց. մէկն էլ Գիսակն էր գրել: Սարգիսը մի ընդհանուր բան կը կազմի: Առաջին բղթակցութեան հաւանեցա՞ք:

Տղերանց քիչ-քիչ ներս բերել տուր: Ի՞նչ են թափուել եւ դալմադալներ սարքում պարապութիւնից:

(Ստորագրութիւն չկայ)

1) Հմայեակի խուլպուիան, Հնչակեան կենտրոնի ներկայացուցիչ:

# 42) «ԳՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով: Նամակի վրայ թուական նշանակուած չէ, բայց բովանդակութիւնից պարզ է, որ գրուած է 1897 Փետրուարի վերջերը):

Միտիւիք,

Միաժամանակ ստացանք Տաշոյի եւ Մանուկի(1) նամակները: Թղթակցութիւնների համար շնորհակալ եմք. «թուղթիկը» առաջուանից էինք ստացել ուրիշ ճանապարհով:

Մանուկը խորհուրդը չի տալիս լուսանկարները տպագրել քերթում (եղջոյնը, Նիկոլայինը), ասելով թէ՛ եթէ մէկին տպագրես, միւսներինք եւս պէտք է տպագրել: Այդպէս, ի հարկէ, քերթում տեղ չի լինիլ. այդ լուսանկարները մենք ուզում ենք յեղափոխական արժանի համար: Կը տպագրենք մեր ձեռքի տակ ընկածը: Այլուր թող հարուստ լինի: Յետ եմք ուղարկում Մարոյի լուսանկարը: Նրա նամակից մի քանի տող հանցեցինք, որովհետեւ կարծես թէ մի տեսակ դժգոհութիւն է յայտնում, որ եղջոն գերադասել է ընդհանուր գործը անհատական երջանկութեան: Բացի այդ դիտողութիւնից, գտնում էին, որ Մարոյի գործունէութեան մասին շատ քիչ բան է ասուած:

Հիմա նոր բան: Հին Հնչակը եւս մեղմացած էր երեսում մեր վերաբերմամբ, սոսը բոլորովին փոխել էր: Նրա մէջ գտնուողներից մէկը՝ Տոնապետեանը(2) իր համակրութիւնն էր յայտնել նամակով Պարիզի մեր ներկայացուցչին, որ Լոնտոն էր գնացել Բուլղոս-Այրլէսից եկած հերոսներին ընդունելու եւ տեղաւորելու: Հին Հնչակեան վարչութիւնը շատ լաւ էր ընդունել: Նազարբեգեանը ճաշի էր հրաւիրել: Խօսացել է գանձագան բաներից, դրժգոհութիւն եւ զարմանք է յայտնել, որ Դաշնակցութիւնը լուսն է եւ թոյլ է տալիս, որ Արփիարակներն իր անունը կեղծեն:

Խօսացել է մինչեւ իսկ միութեան մասին եւսյուն: Դրանից յետոյ, հին Հնչակեան կենտրոնի մի անդամը այստեղ եկաւ եւ սկսեց այստեղ-այնտեղ խօսել միութեան անհրաժեշտութեան մասին: Մեզ հետ էլ խօսելիս խօսքեր էին գցում: Վերջապէս, երէկ մեզ հրաւիրեցին մի ժողովի, ուր կային մի քանի ուսանողներ եւս: Այդտեղ արդէն կենտրոնի անդամը (ձեր ծանօթ Հմայեակը) 3) երկար ճառով բացատրեց միութեան անհրաժեշտութիւնը, առաջարկեց արժարծել միութեան գաղափարը, միջոցներ փնտռել այդ միութիւնն իրագործելու համար: Ի միջի այլոց, նա աւելացրեց, որ այդ առաջարկութիւնն անում է բոլորովին մասնաւոր կերպով: Մենք էլ մասնաւոր կերպով նրան պատասխանեցինք. — Առաջին

կէտի՝ միութեան անընդունարարութեան մասին խօսելը եւ արծարծելը շատ ուշ է: զրա մասին 6 տարի է խօսել եմ: զանազան գնացել է: Իսկ զալով գործնական միջոցներին, պէտք է ասել, որ դժուար կարելի է գտնել մի դաշնակցական, որ համաձայնէր գործ ունենալ այնպիսի մի կազմակերպութեան եւտ, որ իր մէջ պահում է նախկին ռեժիմը, ա՛յն ռեժիմը, որը սկզբից ի վեր դէմ է եղել սրբել: միութեան եւ քանդել է կեանքում տեղի ունեցած փորձերը: Հնչակեան կուսակցութիւնը այդ կողմից չի կարող վստահութիւն ներշնչել: Բացի այդ, մենք չենք կարող վստահ լինել նրա բարոյական եւ նիւթական ուժի վրայ: Մինչեւ այժմ մեր ճանաչած հնչակեան *Տերօնէրը* դուրս եկան մատնիչներ, խաբեբաններ, շարլատաններ: Եթէ հերոսները այդպէս են, մենք չզիտենք, թէ ինչ գաղափար կազմել միւս հասարակ մտկանացուների մասին: Մի խօսեով՝ մենք պահանջեցինք, որ եին Հնչակեան կուսակցութիւնը, եթէ ցանկանում է իրօք Գաշնակցութեան հետ գործել, որոշ երաշխատորութիւններ սայ, ուժ ցոյց սայ եւ մեր հատար, մեր վստահութիւնը **ձեռք բերի: Մտաւորապէս սրանով վերջացաւ մեր խօսակցութիւնը:**

Այժմ էլ սրանց հերքել է հասարակութեան առաջ իրենց արդարացնելու, թէ տեսէ՛՛ մենք ուզում ենք միամալ, իսկ դաշնակցականները չեն ուզում: Եւր առակ լուարում: Եւր հնչակեաններին շեռ որոշ պատասխան շտուած, արդէն նրանց մի մասից ստանում ենք նամակներ, որով յայտնում են իրենց կատաղութիւնը Արփիարի եւ բնի: Ղէմ եւ կողմնակի կերպով ցանկութիւն են յայտնում առանց այլ եւ այլութեան Գաշնակցութեան հետ ձուլուիլ:

Մի խօսեով, նրանց մէջ ամէն ինչ խտն է: Մենք աւելի լաւ կ'անենք գլուխներս քաշ արած մեր գործը շարունակենք: Ցանկացողը թող գայ եւ միասին գործի:

Եթէ ստանանք Թիֆլիսի ժողովի կարծիքը, մի կարն բացատրութիւն կը տպենք:

Եթէ կարող էք, մի երբորդ մարդու, կամ Սարկաւագի բարեկամների **ձեռքով** մի գրութիւն ուղարկեցէք մեզ եւ միւս սրբագրութիւնները՝ Սարկաւագի սպանութեան մանրամասնութեան մասին: Մեր ձայնը, իրրիս հակառակորդի ձայն, այնքան նշանակութիւն չունի: Մի մեծ պատմութիւն ենք ստացել, թէ ինչպէս են դոքա Թիֆլիսում սպանել տուել մի կարին երիտասարդ: Այդ երիտասարդը Գեորգեանի սպանողը, Արովեանի վերաւորողն է **Եղի 4**): Երեւի կորած փողերի համար անհամաձայնութիւններ են եղել:

Բուզարացուն 5) յայտնէք, որ իր ծնողները շատ են անհամգտանում իր մասին. թող շուտ շուտ նամակ գրի: Դրա մայրը այժմ մեծ դեր է կատարում կանանց շրջանում. նա է զեկավարում Ֆիլ. կանանց խումբը:

Որքան մեզ յայտնի է, ամերիկական տոլարները մեծ է: Ովքե՞ր են Հովարդի մասին տեղեկութիւններ հաւաքողը: Մենք արդէն մարդ ունինք Ամերիկայում. կարիք չկայ մի նոր մարդ գտնու: Եթէ Միլոզյեանը 6) կարող է, թող յանձնարարականներ ուղարկի եւտաւփեանին. նա արդէն այնտեղ լաւ դիրք է բռնել եւ ազդեցութիւն ունի: Թող Միլոզյեանը գրի իր եղբորը Մարսէլի (կարծեմ եղբայրներ են), որ անցագրների վերաբերմամբ մեզ չենդացնի: Պարսկականը եթէ ներկայացնում ենք, թող առանց դժուարացնելու փրանսականը տայ: Ի միջի այլոց մեծ յիմարութիւն էք արել, անցագրեր ուղարկել էք, իսկ անունները, որտեղացի լինելը եւ այլ նշանները չէք գրել: Այստեղ մենք որտե՞ղ ենք նարում պարսկերէն իմացող: Տանկերէն իմացողները մի կերպ մտաւորապէս կարդում են, բայց շատ բան սիւսլ է դուրս գալիս եւ հիւպատոսարաններում խայտառակում ենք:

Մի նամակ եւս գրում ենք բժիշկ փաշայեանին. նա Պալիս մեր գործերումն է եղել: Հարկաւ այդտեղ ձեզ հետ կը լինի: Ցայտնում է մեզ իր պատրաստակամութիւնը ձրի բժշկել բոլոր հիւանդ դաշնակցականներին: Երեւի նրան հետու էք պահում: Խնդրում է **«Դրօշակ»**ի անցեալ տարուայ համարներից մի քանիսը: Դրել ենք, որ ձեզանից ստանայ:

Եւտաւփեանի հասցէն՝ **Tigran Vahanian, 520 P. O. Box, Lowell, Mass.:**

1) *Իշխ. Յ. Արզուման եւ Բ. Քր. Օհանեան*: 2) *Պետրոս Տոնապետեան, որ Ազէյի բանտարկութիւնից ազատուելուց Լաք, Հեռացել էր Հնչակեաններին եւ ուզում էր մտնել Գաշնակցութեան շարքերը*: 3) *Հմայակ Խուշպուլեան*: 4) *Հնչակեան ներքին խնդիրները*: 5) *Պետրոս Սեբեճեան*: 6) *Յովսէփ Միլոզյեանը*:

## 43) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՂԵՔԱՆԴՐԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Ընկերներ,

Սեպտեմբերի հետ ոչինչ չի պատահել. միամիտ եղէք:

Ձէյթուն գնացող մարդը թող միայն ուսումնասիրի եւ մեզ հաստատ տեղեկութիւններ տայ. իսկ ամենազոյխաւորը՝ ոչինչ չխոստանայ: Միջոցներ թող գտնի, որպէսզի միւսներն էլ կարողանան դիրութեամբ ներս մտնել: Առայժմ այսքան: Կրկնում ենք, հարկաւոր է խիստ գաղտնապահութիւն:

Քաջբերունին ղիմել էր մեզ, առաջարկելով, որ կա՛մ Իզմիր երթայ, կամ Կիպրոս: Դրա մասին ղիմել ենք, ուր հարկն է (յայտնէք իրեն այս): Դուք ի՞նչ կարծիքի էք դրա մասին:

Շուտով կ'ուղարկենք ձեզ մի տեղեկագիր գործի ընթացքի մասին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

## 44) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ՀՐԱՉ ԹԻՐԵԱՔԵԱՆԻՆ

(Դրուած Ռոստոմի ձեռքով)

5 Մարտ 1897, Ժընև

Սիրելի Սեպուհ,

Ջարմանում ենք, որ այսքան ժամանակ նամակ չկայ քեզանից:

Neuvième Croisade-ից (1) յայտնեալ պէտք է կարենք: Ջարմանի գրելով, այդ ուժերը այժմ Մակեդոնիա են ուղղում: Ա՛յ, ինչ է նշանակում ժամանակին պատրաստ չգտնուել: Գլխաւորը խօսք է տուել մշտական կապ պահպանել մեզ հետ եւ հարկաւոր դէպքում դարձեալ դէպի Հայաստան գալ:

Արդէն քեզ յայտնել էինք, որ հրաւիրել ենք Նիկոլին Պարսկաստանից Կիլիկիա անցնել: Այնտեղից հեռագրով պատասխանեցին, թէ Նիկոլը ցանկանում է, բայց անկարելի է: Հեռագրեցինք նորից, որ հարկաւոր է: Դրան պատասխանեցին հետեւեալ կերպով. «Եթէ Նիկոլը գնայ, այստեղի գործերը կը վնասուեն. գա՞յ թէ մնայ»: Ճիշդ գաղափար չունենալով Պարսկաստանի պատրաստութիւնների մասին, մենք չվստահացանք գրկել Պարսկաստանը Նիկոլից: գրեցինք վառնա, ուր այժմ ժողովուած են տղերքը եւ նրանց որոշման թողնենք Նիկոլի գալու կամ մնալու հարցը:

Սպասում ենք նամակիդ:

Խմբագրութիւն «ԴՐՕՇԱԿ»

(1) Neuvième Croisade — *Իններորդ Պաշակոյթիւն: Բելլիկան մի ձեռնարկ էր, իբր թէ, Հայաստանին դիմում ուժով օղնելու համար: «Դրօշակ»ի խմբագրութեան հետ որոշ բանակցութիւններ վարելուց յետոյ՝ ձեռնարկի նախաձեռնողները յետ քաշուեցին: «Դրօշակ»ի խմբագրութիւնը պայման էր դնում՝ նախ քան խմբի Երկիր մտնելը որոշ քանակութեամբ պարէն մտնել Ձէյթուն:*

45) «ԳՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

3. ԵՌԻՍՈՒՑԵԱՆԻՆ

(Գրուած Ռուստովի ձեռքով)

12 Մարտ 1897  
Մեյիֆին

Րճկեր.

Հետագիքն ստացուել է: Ուղարկուած ենք ահա կնիքը. գիմանշանով թղթերն էլ շուտով պատրաստ կը լինեն:

Պատուիրուած են բլանկներ բոլոր կոմիտէների համար եւս:

Ներկայ պարագաները շատ աննպաստ են մեզ համար: Կրետական հարցը շատ վատ ժամանակ ասպարէզ կ'աւարտուի. բայց դեռ յուսահատուելու տեղիք չունինք: Այս հարցը դեռ ձգձգուելու է. մակեդոնական հարցն է վրայ հասնելու. այնպէս որ մենք դեռ ժամանակ կ'ունենանք ինքներս մի պատկանելի ոյժ ներկայացնելու: Մեր կարծիքով, այժմ աւելի նպատակաշարժար է ուժերը կենտրոնացնել Տէրսիմում եւ Զէյթունում: Առաջ էլ հազարդել էինք, որ Քեռիմ լաւ ընդունելութիւն է գտել այնտեղ, եւ տեղացի տրամադրութիւն ենք ցոյց տրուել այս գարնան շարժուելու: Տէրսիմ մենք կարող ենք մեծ գործ տեսնել դրամական ոյժ մտցնելով: Զէյթունի մասին նոյնպէս ջանքեր են արուած: Մի շատ ճարպիկ երիտասարդ պատրաստուած է ճանապարհ ընկնել (գուցէ արդէն մեկնել է) դէպի Զէյթուն, տեղեկութիւններ հազարդելու համար: Հրաջը խօսք է տուել այնտեղ գնալու, եթէ միայն հասարակութիւնը լուրջ օգնութեան հասնի: Զէնք կարող ենք միշտ հասցնել, այդ դիրքին է: Մեզ միայն Երկրին լաւ ծանօթ մարդիկ են պակաս, կապեր չունինք: Այս տեսակետից ինչ ուղարկութիւնն ենք հրաւիրում տեղում գտնուած գէլթունցիների վրայ, մասնաւորապէս Յակոբ Երկամեանի վրայ: Նրան կարելի է գտնել Զիքչեանի հասցեով՝ Eghia Boyadjian, 13 Fountain Street, Worcester, յանձնել հաշատուր բոյաչեանին: Պէտք է ասել, որ արփիարականներից բաժանուած է (կամ բաժանուելու է) մի խումբ, որ հակումն ունի Դաշնակցութեան մէջ պարզապէս ձուլուելու: Ժամանակի սպառնալից չենք կարողանում կարգին կապ պահպանել, նրանց հարցերին ժամանակին պատասխանել: Բայց այդ շուտով կ'անենք եւ մեր յարաբերութիւնները կ'որոշենք: Եթէ գուշակութիւնս ճիշդ է, դրանց պարագայը Օհանջեանեան է լինելու: Այդ դժգոհներն են, որ մեզ ուղարկել են Երկամեանի հասցէն, որպէսզի դրան մրազիր, թերթ հասցենք եւ մեր կազմակերպութեան ծանօթացնենք: Անկարող լինելով որեւէ երաշխարարութիւն տալ այդ յանձնարարութեան, քեզ ենք թողնում ստուգել միայն զգոյշ կերպով Երկամեանի տրամադրութիւնը եւ ապա հետը գործ սկսել: Այդ խումբը շրջաբերական էր հրատարակելի. երեւի դուք էլ ստացած կը լինէք:

Եթէ մեզ յաջողուցնէ Զէյթունի հետ հաստատ կապ հաստատել, հաւատացած ենք, որ յաջողութիւն կ'ունենանք: Նախ որ իրական օգնութիւն կը հասցենք եւ ոչ թէ խօսքերով կը կերակրենք, երկրորդ՝ որ հասարակութիւնը հաւատով կը վերաբերի դէպի մեր ձեռնարկած գործը:

Ստացանք հանրագիրը (չեմ յիշում, որ քաղաքի), որի տակ կնիքներ էին դրել մեր եւ հնչակեան կոմիտէները: Հարկաւոր պատասխանը կը գրուի, գուցէ եւ խիստ լեզուով: Դու էլ ինչ կողմից հասկացրու կոմիտէին, որ իրենց ընթացքով փոխանակ Դաշնակցութիւնը միացնելու միւս կուսակցութիւնների հետ, փոխանակ ուղարկութիւնը բուն գործունէութեան վրայ կենտրոնացնելու, երկրորդական, անտեղի հարցերով դանդաղեցնում են գործի կանոնաւոր ընթացքը, եւ եթէ իր նմանները շատանան, միութեան փոխանակ՝ դաշնակցական կոմիտէների մէջ էլ ջլատում առաջ կը բերեն:

Մենք այժմ տարակուսում ենք՝ ինչպէ՞ս կարելի է տեղեկութիւններ հազարդել այդ

տեսակ կոմիտէներին: Օրինակ, եթէ մեր տեղեկագրի մէջ գրածները Հնչակեան կուսակցութեան հետ ունեցած բանակցութիւնների մասին դրանք չկարողանան իրենց մէջ պահել եւ յայտնեն հնչակեաններին, դա կարող է շատ վատ հետեւանք ունենալ: Անշուշտ, դու խորիմ կը լինես եւ այդ տեսակ անվստահ կոմիտէներին ուղարկած չես լինի:

Համարը վաղը լոյս է տեսնելու:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ «ԳՐՈՇԱԿ»Ի

Քոյրդ խնդրում է հասցէդ: Ասացի, որ Լուսնբաղի հասցեով գրեն:

46) «ԳՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻՆ, ԹԻՖԼԻՍ

(Գրուած Ռուստովի ձեռքով)

25 Մարտ 1897

Սիրելիք,

Երկու ճամակ եմ գրել Ստեփ. Դանդ. եւ մօրաբնոյս որդու հասցեով: Կրկնում եմ. 1) Շահիկեանը թող ամբիջապէս ճանապարհ ընկնի արտասահմանեան հարուստներից դրամ ժողովելու, 2) մէկն ու մէկին վերջապէս ուղարկէք այստեղ: Յարմարը Անտոնն է, կրկնում ենք դարձեալ: 3) Հնչակեաններին որոշ պատասխան տալ պէտք է: Թող մէկը շուտով գալ ձեզանց, որ որոշ համաձայնութեան գտնէ:

Բուլեռու Այրէսից եկած տղերանց հարկաւոր է փոխադրել Բոլգարիա: Լոնտոնում նրանք ահագին բեռ կը լինեն մեր կազմակերպութեան համար: Ահա թէ ինչու հեռագրեցինք 600 ֆր. ուղարկելու համար:

Պէտք է ասել, որ Զէյթունի, Զմիւռնիայի համար դրամի կարիք է զգացում: Քիչ յետոյ յոյս կայ, որ եզրպտուր եւ Իզմիրը մեծ ֆանակութեամբ դրամ հասցենք, բայց առ այժմ մենք այդ կողմերը փող ուղարկում:

Զէյթունի վրայ լուրջ ուղարկութիւն անհրաժեշտ է, ինչպէս առաջ երկար գրել էինք:

Տանիկ յեղափոխականների հետ շարունակուած են բանակցութիւնները: Սկզբում, ինչպէս մենք պահանջել էինք, դրանք պէտք է ասպարէզ կնիքն սովորական գէնքերով, օրգանը հրատարակելին. ապա մենք պէտք է ռուսը յանձնէինք, որպէսզի իրենց արածը հայերին չվերագրուի: Յետոյ նրանք առաջին պայմանից հրաժարուցան, մենք էլ տեսնելով, որ իսկապէս դրանց համար շատ դժուար է առաջին քայլը սովորական գէնքերով անել, որ առանց ռուսի անկարող կը լինին շարժուել, իբր ոչ բոլորովին յեղափոխական, համաձայնեցինք (բացի Յոնանից, որը պնդում է առաջին պայմանի վրայ), բայց նրանք դեռ տաւտանում են, երկիրը կրելով, որ մենք իրենց կը խաբենք, լրագիրը հրատարակել տանք, իսկ յետոյ խոստումներս չկատարենք: Նրանք ցանկանում են հրատարակել այն ժամանակ, երբ ռուսներն իրենց ձեռքին կ'ունենան: Որովհետեւ այստեղ հաւատի խնդիր կայ, մենք պնդում ենք մեր ասածի վրայ:

(Ստորագրութիւն չկայ)

47) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ԲԱՆԿ ՕՏՏՈՄԱՆԻ ՏՂԱՆԵՐԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

27 Մարտ 1897, ժընև:

Բնկերներ,

Նստացանք ձեր վերջին նամակը, որը իր յիմար բովանդակութեամբ խորին վիշտ պատ-

նակեց մեզ: Երբ ձեզ Հարաւային Ամերիկա ուղարկեցին, մեր պարտքն եղաւ հանգանակութիւն ընկալ, նաւային բնկերութեան հետ պայմանաւորուիլ, որպէսզի ձեզ ախտաւորեց զորս բերենք եւ Հիւսիսային Ամերիկա տեղափոխենք: Գուցէ Լոնտոն նամակարի ընկալ: Լուր ան- նկուն պէս հետագրեցինք պ. Ջարիֆեանին, որը, ձգելով իր գործերը, անմիջապէս Լոնտոն հասաւ, ձեզ ընդունեց եւ տեղաւորեց: Գուցէ էլ գրուած էիք, թէ շատ հանգիստ էք եւ զոհ էք ձեր վիճակից: Գրպանի ծախքի համար էլ ձեզ անմիջապէս 300 ֆր. փոխադրեցինք:

Ձեր դրութիւնը ապահովելուց յետոյ, յայտնեցինք ուր հարկն էր ձեր պատրաստա- կանութիւնը նորից գործին ծառայելու: Սպասում էինք նամակի, որպէսզի ձեզ թուրքարիա տեղափոխենք, երբ, յանկարծ, իմացանք Պ. Ջարիֆեանից, որ դուք քիչ ժամանակ միայն կարող էք ձեր ապաստարանում մնալ: Մի քանի օր սպասելով ձեր սեփական նամակին եւ ոչինչ չստանալով, հարցրինք ձեզանից ամսոյս 16ին ճիշդ տեղեկութիւններ: Նոյն քանը կրկնեցինք 21ի նամակով: Միեւնոյն ժամանակ գրեցինք Պ. Ջարիֆեանին, որ եթէ հաս- տատ է հաղորդած լուրը, կարգադրութիւններ անի ձեզ թուրքարիա տեղափոխելու համար եւ հաղորդի մեզ, թէ որքան դրամ եւ ո՞ւր հասցէով է հարկաւոր փոխադրել ձեր ծախքե- րի համար:

Այս բոլորից յետոյ, մեր նամակների պատասխանի փոխանակ ստանում ենք ձեր վրդովեցուցիչ նամակը, որին ոչ մի բացատրութիւն տալ չենք կարող:

Արդ՝ հաղորդելով ձեզ այս բոլորը, սպասում ենք ձեր վերջնական նամակին: Եթէ դեռ եւս նախկին համոզման էք, եթէ յետ չէք վերցնում ձեր վիրաւորական խօսքերն ու դարձուածքները, գրեցէք, միայն բոլորից ստորագրութեամբ: Այն ժամանակ մենք էլ մեր յարաբերութիւնները կ'որոշենք: Իսկ եթէ դուք զգում էք ձեր մոլորում լինելը, չափը կար- ցընելը, եթէ յետ էք վերցնում ձեր չմտածուած խօսքերը, հեռագրեցէք, որպէսզի կարո- ղանանք ձեզ շուտով նամակարի ձգել: Երկրորդ դեպքում հեռագրեցէք այսպէս. Redaction Droschak, Genève, Oui.:

Յուսով ենք ձեր պատասխանը շուտով կը ստանանք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

● Այս մասին Ռոստոմը, «Դրօշակ»ի խմբագրութեան կողմից, Ապրիլ 10ին գրում է Պուլխս.

«Տղայոց Armée de Salut-ի մէջ մնալը մեծ գէնք է դարձել Արփիարեանների ձեռքին, որոնք գրգռում են Ամերիկայի հասարակութիւնը մեր դէմ՝ օգտուելով, մանաւանդ, այն հանգամանքից, որ Ամերիկայում հանգանակութիւն է արուել յօգուտ այդ տղայոց եւ մեզ է ուղարկուել: Բարկունին(1) Լոնտոն է եւ աշխատում է նրանց նամակարի ձգել՝ անգ- յիացիներից քիչ դրամ հանգանակելով: Մենք փոխադրել ենք 1000 ֆր. այնտեղ էլ կայ 300 ֆր.: Ընդամենը 1300 ֆր.»:

(1) Ջարիֆեանը — բժ. Յ. Լորիս-Մելիքեանը:

48) ԹԱԻՐԻՁԻ ԿՈՄԻՏԵՒՆ

7 Ապրիլ 97(\*), ժընև:

Սիրելիք,

Այսօր ստացանք Շէկոյի մահուան ցուալի լուրը: Ձգլտեմք, թէ ի՞նչ միջոցներ էք ձեռք առել սպանողների դէմ: Ձե՞ որ հասարակութիւնը սպասելու է, թէ ինչպէս ենք վաք- ուելու մենք մեր «ոճրագործ» բնկերների դէմ: Կարծում ենք, որ բնկերական դատարանը անհրաժեշտ է: Կանոնաւորապէս դատի ենք արկէք եւ դատավիճակ ուղարկէք տպագրու- րեան համար:

Իսկ եթէ ոճրագործները բացակայ են, դատարանը ուշ է: Կամիտէն պէտք է գոնէ իր վճիռը կայացնի: Այդ վճիռը ուղարկէք:

Գուցէ իրենք՝ ոճրագործները մեղայի գան, հրապարակուրէն բացատրուին եւ խոս- տանան իրենց գործած յանցանքը քանի այս կամ այն ձեւով...

Վերջապէս, հասարակութեան պէտք է ցոյց տանք. թէ մենք անտարբեր չենք տանում այդ տեսակի գազանութիւններ: Ահա թէ ինչու այսօր հեռագրեցինք ձեզ՝ «բնկերական դատ րացէք»:

Լրագիրներում հեռագիր կար, որ այդտեղ պարսիկների յարձակում է եղել: Այդ ի՞նչ բան է, գրէք մանրամասն:

— Մանուկի(1) նամակը կարդալով, մենք մեզ վրայ զարմացանք. ճիշդ որ չենք հասկանում, թէ ինչի՞ց յանկարծ եզրակացրել ենք, որ Մարոն Խէչոյին է եղել սիրելիս: Ամէն կողմից զանգատներ են գալիս եւ լրացուցիչ տեղեկութիւններ են պահանջում...

Անցեալ անգամուան նամակը ստացած կը լինէք: Եթէ Նիկոլոյն այդտեղ չէ (յուսով ենք, որ վահանը կը հասկանայ, թէ որ Նիկոլոյն է, խօսքը Գումանի մասին է), գրեցէք Ռու- սաստան եւ շտապեցրէք:

Բարփրուշ կարելի՞ է ուղղակի թերթ ուղարկել մեծ քանակութեամբ, չի՞ բռնուիլ: Յոնանի հօրեղբոր որդին է ուզում Ռուսաստան տեղափոխելու համար: Կամ դուք ուղար- կէք, կամ, եթէ կարելի է, այստեղից ուղարկենք:

Ովքե՞ր են այդ 3 քաջերը: Գրեցէք անունները: Ճանաչու՞մ ենք: Բա՛ արհեստաւոր- ները չէ՞ն իմացել: Ի դէպս, ովքե՞ր են այժմ արհեստանոցում:

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

(1) Բժ. Քր. Օհանեան:

49) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵՒՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

15 Ապրիլ 1897

Ամերիկական Կենտրոնական Կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Նոր կնիք պատուիրեցինք «Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէ» անունով: Շուտով կ'ուղարկենք:

(\* Դիմակի բ. հատորին մէջ (էջ 404) թուականը եղած է 98 Թ.: Ըստ երկույթին չնկատուած տպագրական սխալ է: Հ. Տ.

Երկէ ուղարկեցինք ձեզ ապահովագրուած ծրարով Կիլիկիայի հնչակեան գործիչներէ ստացած նամակի եւ մեր մասնաւոր պատասխանի պատճենները, թուով 10 հատ: Խնդրենք ուղարկել մեր ամերիկեան կոմիտէներին: Դա պատասխան կը լինի մեր կողմից նաեւ Հէվրիսիլի եւ Լորէնսի հասարակութեանց համարագրութիւններին: Ներքին նահանգներում հնարաւոր չլինելով որեւէ համաբաշխ գործունէութիւն, մենք ուրախ ենք Կիլիկիայի գործիչներին դիմումին եւ յոյս ունինք որոշ համաձայնութեան գալու ու համերաշխ գործունէութեան սկըսելու, երբ միայն Կիլիկիայի հնչակեան գործիչները այնքան քաջութիւն ունենան, որ մեր առաջարկած կենսական պայմաններն ընդունին: Համաձայնութիւնը կը դիւրանայ, երբ մեր բնկերներն անձամբ տեսնուին հետեւիք եւ բացատրուին: Մենք պարբերաբար կը հաղորդենք ձեզ, ապաստելով ձեր նկատողութիւններին եւ խնդրելով միաժամանակ, որ զգոյշ մնաք անվստահ կոմիտէներին ձեռքը սրելէ զազանի վանձներուց:

Արդէն, ինչպէս առաջ էլ խնդրուած էինք, Պարիզի մեր ներկայացուցիչը Լոնտոն է մեկնել տղաներին նամակաւոր ձգելու համար: Պ. Մելիքի նամակից երեւում է, որ տղաների Armée de Salut-ի ապաստարանում մնալը յուզում է առաջ բերել Ամերիկայում եւ զէնք է դարձել մեր բշխումների ձեռքին: Թշնամիների մասին աւելորդ ենք համարում որեւէ բան ասել, որովհետեւ նրանք պատրաստ են ամէն ինչ զէնք դարձնել, բայց մեզ զարմանք է պատճառում հասարակութեան վերաբերումը: Երբ հասարակութիւնը իրատու է համարում տրտնջալ, որովհետեւ 2.000 ֆր. է մեզ ուղարկել տղայոց ծախքերի համար, մեզ մնում է միայն ցաւել: Ինչպէս առաջ էլ գրել էինք, ինչո՞ւ չէք յայտնում տրտնջողներին, որ մենք պատրաստ ենք վերադարձնել իրենց 2.000 ֆր.: Գիտե՞նք արդեօք դժբաժնոր միմիայն բուլգարիա տեղափոխելու համար մօտ 2.500 ֆր. է հարկաւոր, որ ուղարկուած 2.000 ֆր.ը շատ-շատ 1½ ամսի ծախք կը լինէր Լոնտոնի նման քաղաքում: Մենք ոչ մի հանոյք չենք զգում տղայոց այդ տեսակի պայմաններում պահելով: Մենք շատ ուրախ կը լինէինք, երբ հնարաւորութիւն ունենայինք այդպիսի դէպքերում քիչ առատածեռն լինել, բայց այդ այն ժամանակ կը լինէր, երբ հասարակութիւնը փոխանակ մի քանի դուրսեր տալու եւ ահագին բանքեր պահանջելու, քիչ լայն բանք իր գրպանը: Զարմանալին այն է, որ տղայք իրենք նամակներով միւր գոտիներն են յայտնում, իսկ կողմնակի մարդիկ նըրանց փոխանակ տրտնջում են: «Որոշ» մարդիկ Լոնտոնում մի ժամանակ նոյն տրտնջները տղայոց պահանջին էին փոխացել, ասելով, որ իրենց համար Ամերիկայում ահագին գումարներ են հանգանակուած, բայց մենք իր ժամանակին հասկացրինք տղայոց էութիւնը:

Տղայոց Լոնտոն գալն անպատելի էր: Իսկոյն եւ եք նամակաւոր ձգել բուլգարիա չէր կարելի քէկուզ հետեւիք կորցնելու տեսակետից: Ժամանակ էր հարկաւոր որոշելու համար իւրաքանչիւրի դերը եւ մաս-մաս համապատասխան կէտերը տեղափոխելու: Կրկնում ենք, մենք էլ շատ կ'ուզեանայինք այդ տղայոց, ինչպէս եւ շատ ուրիշներին, որոնք պակաս հերոսներ չեն, լաւ պահել, յարմար կեանք տեղածել... Բայց հասարակութիւնը մեզ այնքան քիչ է տալիս համեմատած գործի պահանջի հետ, որ մեր գործիչները ստիպուած են շատ եւ շատ գրկանգներ կրել, տանջամեքների ենթարկուել. որոնց մասին տեղեկութիւն չունի կամ չի ուզում ունենալ քիչ տուող, բայց մեծ-մեծ պահանջներ անող հասարակութիւնը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԳՐՕՇԱԿ»

Յ. Գ.— Խնդրենք գրել Worcester որ «Գրօշակ»ի մի համար յանձնեն հետեւեալ հասցէին՝ Garabed Melkonian, 11 Fountain St.:

### 50) «ԳՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿԸ ՉԱՐԻՖԵԱՆՆԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

22 Ապրիլ 1897. ժընեւ

Չարիփեանին, ի Լոնտոն

Յարգելի ընկեր,

Մի ժամանակ դուք գրել էիք, քէ միջոցներ էք գտել Նուբար փաշային մտնելու, ի՞նչ եղաւ այդ: Այսօր եզրափակեց եկած մի լուրի համաձայն, Չհանգիւլեանը Նուբար փաշայի որդուց նամակ է տարել հօրը եւ իրք մեծ յաջողութիւն է գտել: Չէ՛ք կարող իմանալ սրա նշանակութիւնը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԳՐՕՇԱԿ»

### 51) «ԳՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

23 Ապրիլ 1897

Սիրելիք,

Ձեր Մարտի 29ին գրած նամակը ստացանք: Մի ինչ որ փոփոխութիւն է նկատում, նամակները շուտ-շուտ են սկսում գրուել: Գժրախտաբար, անկարող ենք անելի արագացնել սպասէք մի քիչ, օգնականներ գան՝ ձեր հոգին կը հանենք:

Կնիք չենք կարող ուղարկել անձնադրութիւններին. պէտք է անպատճառ կոմիտէ հաստատուած լինի: Իսկ առժամանակեայ կերպով կարելի է ուղարկել վկայական, քէ այսինչը մեր կազմակերպութեան ներկայացուցիչն է: Գրեցէք միայն մեզ Գ-ի կեղծ անունը:

Թեկրան քերք չենք ուղարկել, իսկ ձեզ մի 100 հատ անի կ'ուղարկենք, միայն հասցէն չունինք նոր: Մտալի մեծացնելուն դուք հակառակ կը լինէք: Առայժմ միեւնոյն հասցէով մի քանի անգամ կ'ուղարկենք, միայն հասցէ անպատճառ ուղարկէք: Ի միջի այլոց գրէք, քէ ի՞նչ հասցէով է յարմար ուղարկել փոքրիկ ծրարներ, ինչպէս, օրինակ, մեր եւ Կիլիկիոյ հնչակեանների մէջ եղած նամակների պատճենները (այդ պատճեններից ձեզ ուղարկուած է 10 հատ): Չմոռանաք յայտնել, որ հեռագրելիս Redaction բառը կարող էք չդնել, ուղղակի Droschak, Genève:

Բուլգարիա եւ հասել Նիկոս, վարդը եւ միւսները:

«Ապտակ»ի եւ «Հնչակ»ի մասին երբէ միջեւ այժմ լուր ենք, դարձեալ շարունակենք լսել: Մեր լուրքիւնը հարկաւոր տպաւորութիւն է բողոքում: Շատերից համակրութեան ենք հանդիպում: Վերջերում Լոնտոն էր գնացել Պարիզի մեր ներկայացուցիչը Բանկի տղաներին բուլգարիա նամակաւոր ձգելու համար: Նրան հանդիպել է Չեքազը, որ հրաւիրել է իր մօտ, յայտնել է իր համակրանքը դէպի Դաշակցութիւնը, մանաւանդ նրա վրայ ազդել է

Ամերիկական Կենտրոնական Կոմիտեին

Յարգելի ընկերներ,

2 օր ստաջ ձեզ (Պ. Վահանեանի(1) հասցեով) ուղարկեցինք մի հեռագիր, որով խնդրում էինք ձեզանից փող հասցնել մեզ: Առանց այդ հեռագրի էլ դուք արդեն ըմբռնած կը լինէիք րոպէի նշանակութիւնը, որի նմանները պատմութեան մէջ շատ հազիւ կը պատահին եւ միջոցներ ձեռք առած կը լինէիք Հայկական Հարցի այս բարեխաջող հանգամանքներում դրամական նպաստներով զգալի գարկ տալ յեղափոխական շարժման: Այժմ այլեւ կամաց-կամաց պատրաստուելու ժամանակը չէ. պէտք է օգտուել պատերազմական խառը դրութիւնից, որ, յոսով ենք, աւելի եւս կը խառնուի եւ շուտ չի վերջանայ, որպէսզի կարողանանք վճարական հարուած տալ: Եթէ ոչ, եթէ սուլթանական բռնապետութեան յաջողութեց յաղթութիւն տանել այս նկատմամբ, նրա ոգին շատ կը բարձրանայ, նրա լրբութեան չափ ու սահման չի լինի, եւ այն ժամանակ մեր ազատութեան գործը կը յետաձգուի շատ անորոշ ժամանակով, մինչեւ որ նորից նոր բարեխաջող հանգամանքներ ստեղծուին:

Նոր կնիքը Կենտրոնական Կոմիտէի անունով դեռ եւս պատրաստ չէ: Պ. Մելիքը գրել էր, որ անզորներն եւս դնենք. դա անյարմար է: Նամակաթուղթը կարող է փոխարինել. նորերը կը պատուիրենք: Առաջուան ուղարկուածների վրայից կարող էք ջնջել Կենտրոնական խօսքը եւ գործածել Լովէլի կոմիտէի համար:

Առհասարակ, անուան համար պէտք է նկատել, որ ընդհանրապէս ընդունուած է որեւէ բաղաձիւ, կէտի (Պոլսոյ, Տրապիզոնի, Կարնոյ Կենտրոնական Կոմիտէներ...) անունով կոչել կոմիտէն: Կան եւ բացառութիւններ: Եթէ դուք ցանկանում էիք ամերիկեան կոմիտէ կոչել, պէտք է յայտնէիք դրա մասին նախօրոք:

Հնչակեան երկու կողմերից ղեկավարները այժմ Պարիզում շարունակում են իրենց բոնոցիկները: Նրանցից երկուսը Լոնտոնում արդէն միացել են մեզ հետ:

«Հայկազեան Միութեան» յայտարարութիւնն արդէն կարգացած կը լինէիք «Մարտ»ի մէջ: Որքան մեզ օգուտ տուին, բաւական է. այժմ բող հնչակեաններն օգտուեն: «Մարտ»ի հարցման գուցէ պատասխանենք առաջիկայ համարում: Մի քանի խօսք կ'ուղղենք նաեւ այդ կողմերից եկած հանրագրութիւններին: Զգիտենք, թէ որքան գոհ կը մնան մեր պատասխանից, որ ուղղել ենք կիլիկիայի գործիչներին. մեր յօդուածը մօտադրապէս նոյն իմաստով է լինելու:

Այս րոպէին հեռագրատնից յայտնեցինք մեզ, որ Պ. Վահանեանի հասցեով ուղղուած հեռագիրը դեռ եւս չի յանձնուած իրեն: Կը նշանակէ Պ. Մելիքը բացակայ է: Խնդրենք ուղարկել մի կարճ հասցէ հեռագրի համար, որ միշտ մնայուն, հաստատ լինի:

Նոր-հնչակեանների տարածած լուրերը մեր մասին նոր չեն. դա ժառանգութիւնն է նախկին վարչութիւնից մնացած: Շուտով մենք փաստերով կը հերքենք, որ մենք 80.000 չէինք կարող ուտել լոկ այն պատճառով, որ այդքան գումար չենք ունեցել: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ խմբագրատանը 15 հոգի լիաւատ ամակազմներով արքայավայել կենանք կը վարեն, դա ամենայիսք ստանալութիւնն է: Այստեղ այժմ միայն *Երկու* հոգի կ'ապրին Գաշնակցութեան հաշուով. մէկը գրաշարն է, իսկ միւսը խմբագիրներից մէկը(2):

Տղաները մաս-մաս նամակապահ են ձգում: Մեր ներկայացուցչին ուղարկել էինք մի յայտնի գումար, յայտնելով որ հարկաւոր դէպքում պակաս գումարը հեռագրով պահանջի մեզանից եւ տղաներին անմիջապէս նամակապահ ձգի: Մեր ներկայացուցիչը կատարել է մի նոր «մահացու յանցանք»: Նա դարձեալ աշխատել է տղաներին նամակապահ ձգել մասամբ Armée de Salut-ի, մասամբ ուրիշ անզորացիների հաշուով եւ այդ բանում յաջողել է.

մեր բռնած ընթացքը դէպի հնչակեան երկապատկառմանը. այնուհետեւ տարել եւ ներկայացրել է Լոնտոնի յունական կոմիտէի նախագահին, գովաբանել է մեզ եւայլն... Նոյն կոմիտէի հետ կապ սկսում է եզրիպատից: Գուցէ շուտով մենք ներկայացուցիչ ունենանք Աքլեմու. այժմ դա շատ կարեւոր է, մանաւանդ մեր նոր Զէյթունի ձեռնարկութեան համար: Արեւոյդ ենք համարում երկար կամեց առնել դրա նշանակութեան վրայ. մենք գարմանով կարողացինք Նիկոյի մասին ձեռ ուղարկած հեռագիրը: Ինչպէ՞ս թէ impossible. պէտք է անմիջապէս ամեն բան բողնել եւ նամակապահ ընկնի: Մի՞թէ համեմատել կարելի է այդտեղի եւ այնտեղի գործը այս մտնեցում: Գեռ եթէ Մանուկն էլ նամակապահ ընկնէր, հրաշալի բան կը լինէր: Իսկ կարո՞նք արդէն անհրաժեշտ է, մանաւանդ որ այդտեղ իր գործով գրադուել չի կարող: Լակլակի փոքրիկ եզրայրը, Ազեմանդը(1) այստեղ էր եկել: Նրան երկէ նամակապահ դրինք Կիպրոս: Ինչ որ է. խնդրենք այս բոլորը ըստ արժանույն գնահատել եւ ստանալիք, անկողմնապահ լինէիք համեմատութեան մէջ: Թող, ուրեմն, Նիկոյը, կարո՞նք (եթէ միայն այդտեղ է. անպատճառ չի գրում թէ ուր է գնում) եւ Մանուկը (եթէ հնարաւորութիւն կայ) նամակապահ ընկնին շուտափոյթ Բուլգարիա: Գործը լուրջ է. օտարներն եւս միջամտում են: Անա բանը ինչու՞մ է:

Կազմուել է վերջերս մի փրանկո-բելգիական ընկերութիւն Neuvième Croisade անունով, որի համագումարով միայն *զէյթը* կարող է Հայաստանը փրկել: Այս պատճառաւ նա մտադիր է արշաւանք գործել կիլիկիա: Ձեռնարկութիւնը լուրջ է քում: Արշաւանքին մասնակցելու են սպաներ եւ ներասպաներ (մօտ 12 հառ), զինուորներ (30): Առաջին անգամից կարող են ափ իջնել 100 հրացան, 30,000 փամփուշտ. զինուորական համազգեստներով եւ այլ պարագաներով: Երկար ու բարակ փորձերից, նամակներից, հեռագիրներից յետոյ Պարիզի մեր ներկայացուցչին յաջողուել է վերջապէս տեսակցել expédition-ի գլխաւորի՝ Antoine-ի հետ: Որովհետեւ մեզ չյաջողութեց իր ժամանակին սկսել բանակցութիւնները, այժմ շատ դժուար հանգամանքներում ենք գտնուում: Antoine-ը հենց իր առաջին նամակում յայտնել էր մեզ, թէ expédition-ը նամակապահ է ընկնելու շուտ շուտով: Մենք շուտապէս նամակով խնդրել, որ յետաձգեն մի քիչ, որոշ համաձայնութեան գալու համար: Մեր նամակը չէր հասել իրենց, իսկ հեռագիրը ստանալուց յետոյ, վերջապէս, յաջողութեան տեսակցութիւն կազմել Լոնտոնում:

Առաջին տեսակցութեան ժամանակ Antoine-ին նոյն ստաջարկութիւնն է արուել, այսինքն՝ յետաձգել արշաւանքը, որպէսզի կարողանանք մենք եւս պատրաստուել միասին գործելու համար: Նրան յայտնուել է, որ Զէյթունին ոչ թէ կոտոր մարդ, մինչեւ իսկ զենք է հարկաւոր, այլ գլխաւորապէս հացի պաշար: Առանց այդ պաշարի ցանկալի չէ բնաւ որեւէ բան ձեռնարկել, եթէ չենք ուզում սովից կոտորել գէյթունցիներին: Մենք աշխատում ենք այդ միջոցները ձեռք բերելու. բող իրենք էլ մտածենք: Antoine-ը առաջին օրը բաց էր բաց մերձել է յետաձգել, բայց մենք դեռ յոյսներս չենք կորցրել: Եթէ մինչեւ իսկ մեզ չլսի եւ նամակապահ ընկնի, մենք դարձեալ եախից պուկ չենք գայ:

Անցեալ տարի այդտեղ տրամադրութիւն են ցոյց տուել գէյթունցիների օգտին դրամ սալու: Զի՞ կարելի այս տարի օգտուել իսկապէս: Հաստատապէս կարող ենք ասել, որ մեր քանակները գուր չեն անցնի: Եզրիպատից մի քանիսը մեկնել են արդէն. Հրաչը գուցէ շուտով տեղ հասնի: Սպասում ենք այդտեղացիներին: Բացի այդ, յոյս ունինք տեղական հնչակեան գործիչների հետ համաձայնութեան գալ: Նրանց պատասխանը ստանալուց իսկոյն ձեզ կ'ուղարկենք:

Գրամ հասցրէիք մեզ. այդտեղի, Թեհրանի հարուստներին չի՞ կարելի շարժել Զէյթունի անունով:

Համբոյրներ բոլորիդ՝  
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(1) Ոչ թէ Լակլակի, ապէ՛քն՝ Արշակ Թաղէտեանի, այլ նրա կնոջ (Դարբա Գոլշը-Լան) Էզրայրը՝ Ազեմանդը Գոլշը-Լան — յետագային Ազեմանդը Մելիք Ամերիկայում:

քէն շատ ժամանակ կորցնելով: Տղաներին եւս փող է բաժանել աւելորդ ծախքերի համար: Գուցէ այս լուրը եւս վրդովեցնէ Ամերիկայի նուիրատուներին, բայց մենք ուրիշ կերպ վարուել չենք կարող: Ով դժգոհ է, բող իր տուածը յետ ստանայ:

Ընդունեցէ՛ք մեր բարեւները  
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»

(1) Վահանեան — Մէլիք — Յ. Երսուֆեան:

(2) Ռոստոմը:

53) ՄԻ ՀԱՏՈՒԱԾ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԻՑ

Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

4 Մայիս 1897, ժընև

Ընկեր,

Թիւ 69 նամակն ստացուած է:

Քո Կիլիկիա գնալը շատ լաւ կը լինի: Իսկապէս մենք այնտեղ մի փորձառու ընկեր չունինք: Խաժակը, ինչպէս իր նամակներից երևում է, շատ տաք է կպել, շատ է աշխատում, բայց եւ այնպէս մի փորձառու մարդու կարիք է գգում:

Քո առաջարկութեան մասին կը գրենք Վառնա, ուր այժմ հաւաքուած են Վահապը, Յոնանը, Վարդը, Մար-Շիմոնը, Նիկ. Մատինեանը, Տրապիզոնցի Վարազէօզեանը(?), Գուցէ եւ Բորիսը: Այնտեղ վճռելու են արտասահմանեան կազմակերպութեան գործը եւ բաժանելու են ուժերը: Մի շարք է սպասում ենք նամակի, բայց դեռ ոչինչ չկայ: Երեւի շատ են վիճարանում:

Իսկ մեր կողմից առայժմ կարող ենք նկատել, որ ներկայ պարագաներում, երբ հարց կայ Կիլիկիայի ուժերը խաղաղութեամբ միացնելու կամ մեր մէջ համերաշխութիւն հաստատելու, էո ներկայութիւնը այն կողմերում կարող է շատ բարդացնել գործը, որովհետեւ քեզ արդէն նկատում են իբր Արփիարի անձնական քշնամի: Մեր կարծիքով էո այնտեղ գնալը հարկաւոր կը լինի յետաձգել, մինչեւ որ որոշուին մեր յարաբերութիւնները Կիլիկիայի հնչակեան գործիչների հետ: կամ այս կողմը, կամ միւս:

54) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ՀՐԱՉ ԹԻՐԵԱՔԵԱՆԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

8 Մայիս 1897

Սիրելի Հրաչ,

Մենք քեզ Կիպրոս էինք ենթադրում, իսկ յանկարծ Օդեսայից ենք նամակ ստանում: Ոչ մի հեռագիր չենք ստացել: Այսօր սպասում ենք տղերանց: Վկայականը կ'ուզարկենք:

Արեւիկ

Անշուշտ Մարտի Գրաստ  
Քաղաքացիներ: Գրաստ  
սալ պարագայ աստի ծախք  
գոհ եր մէջ եւս <sup>Երսուֆեան</sup> Երսուֆեան  
Նորարարութե ծախքում Մարտի  
Գրաստ: Արեւիկա պարագայ  
Բոլորս զեռ է ստալիս խում,  
Բեյբա Գրաստ ~~Գրաստ~~ Երսուֆեան  
ստալիս խում, Երսուֆեան պարագայ  
Երսուֆեան սալ սալաւոր ժամանակ  
է. Գրաստ խում: Բայ  
պարագայ խում Երսուֆեան  
Երսուֆեան Երսուֆեան  
Երսուֆեան Երսուֆեան

այսպես է իրարից: Այս 4-5-ի  
հարցին ճաշի է հարաբերակ:  
Կարգ կառն է. 4-ից ոչ թուր ցի,  
զից թուր է անհարկուր թե  
հոգի:

Այս իրարից, թե թուր  
թե, ցարգուր թե, ոչ հիւր-  
գութն թուր:

Ահարկուր թե թե թե թե  
Կի թե թուրից թուրից  
գութն թե թե թե:

Կի թուր, ոչ թուր  
Կի թե, թե թե թե թե  
թուր:

Կի թուր թե թե թե, թե  
Կի թե թե, - թե թե թե  
Կի թե թե թե թե թե  
Կի թե, թե թե, թե թե  
Կի թե թե թե թե թե

Կի թե թե  
Կի թե թե  
Կի թե թե

Կի թե թե թե թե թե:  
Կի թե թե թե թե թե:

Կ



Կ ա Ր Օ  
(Արիստակէս Զօրեան)

Շտապում ենք հաղորդելու, որ Անթուանը Պիրէ է գնում Մակեդոնիա անցնելու համար 12 ֆրանս. եւ 3 հայի հետ: Այսօր գրում ենք Պարիզ, որ հաղորդեմ Անրուանին քննասցէն: Տեսնուեցէք, տեսէք, խելքներդ ինչ է կտրում:

Կ'աշխատենք Լոնտոնի յունական կոմիտէի նախագահից յանձնարարական ուղարկելի ձեզ:

Բայց դուք մոռանում էք գլխաւոր կէտը՝ Կիպրոսը: Այնուհետ ո՞վ պետք է լինի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»

### 55) «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ Մ. ՏԱՄԱՏԵԱՆԻՆ

(Գրուած Ռոստոմի ձեռքով)

10 Մայիս 1897, ժընև:

Յարգելի Պարոն Տամատեան,

Ստացանք Հնչակեան Կուսակցութեան վերակազմեալ Կեդրոնական վարչութեան Մայիս Տի գրութիւնը:

Յայտնի պատճառով դժուար է մեզ համար ուղղակի պատասխանել վերոյիշեալ գրութեան: Ուստի մենք դիմում ենք Ձեր միջնորդութեան եւ խնդրում յայտնել Պ. Յարութիւն ձանկիրեանին, որ միշտ պատրաստ ենք ուրախութեամբ ընդունիլ նրան եւ խօսել միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրի մասին:

Ընդունեցէք մեր յարգանաց հաւաստիքը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»

(Կնիք)

### 56) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ (անտիպ)

Ռոստոմի ձեռագրով գրուած այս նամակը, անթուակիր եւ անստորագիր, պէտք է ուղղուած ըլլայ Պարսկաստանի ընկերներուն, Խնաստրի արշաւանքէն առաջ («Ի՞նչ է շինուած Էզրայր»), ըստ բովանդակութեան՝ հաւանարար նաեւ 1896 Դեկտեմբեր-1897 Յունուար ամիսներուն Ռուսաստանի եւ Պարսկաստանի մարմիններու ռայոնական ժողովէն առաջ կամ այդ ժողովի օրերուն:

Աւելի ուշ, նամակը մակագրուած է «մօտ 1897 թ.», ինչ որ համապատասխան է մեր ենթադրութեան:

Հ. Տ.

Սիրելիք,

Կարծեմ իմ այս նամակը երկար պետք է լինի:

Նախ ընդհանուր ժողովի մասին: Վաղուց է, ինչ այդ կարիքը զգացուում էր. այս

պատճառով դիմեցին մի քանի տեղեր (ձեզ էլ), կարծիքներն իմանալու համար: Ձեզանից պատասխան չստացուեց, որ շատ ցաւալի է: Ռուսաստանից գրեցին առաջ, որ աւելի յարմար են գտնում իրենց մօտ անել, յետոյ համաձայնեցան արտասահմանում կատարելու: Տրապիզոնից էլ յարմար են դատում արտասահմանը: Գարձեալ գրեք ենք Ռուսաստան տեղի եւ ժամանակի մասին: Յամենայն դէպս, յոյս ունենք, որ այսպէս կամ այնպէս դուք կը պատրաստուէք այդ ընդհանուր խորհրդակցութեան, լինի դա արտասահմանում թէ Ռուսաստանում: Ի նկատի ունեցէ՛ք հետեւեալ երկու գլխաւոր հարցերը, որոնց մասին հարկաւոր եմ համարում մեր գիտեցածը գրել, որպէսզի դուք այժմեանից քիչ թէ շատ որոշ գաղափար կազմած լինէ՛ք: Սա մասնաւորապէս իմ կողմից եմ գրում, ընդունեցէ՛ք իբր անհատական համոզում:

1) Նորակազմ Հնչակեան կուսակցութեան մասին:

Առաջ էլ մի քանի անգամ առիթ եմ ունեցել գրել սրանց մասին: Կ'աշխատիմ այս անգամ աւելի ամփոփ գրել: Լոնդոն համախմբուած ենչակեան գործիչները մի քանի ընդհարումներ են ունենում Կենտրոնական վարչութեան հետ, երեսի իրաւունքների խնդրի վերաբերմամբ: Նախ եւ առաջ Կենտրոնի կայացած ժողովում վնասում են արաստել Արփիար Արփիարեանին, իբր վնասակար մի անձնաորութիւն: Յետոյ, ինչպէս է լինում, մէկ մէկու յետեւից համախմբում են դրա շուրջը: Մեր ընկերներից մի քանիսը առիթ են ունենում այդ ժամանակամիջոցում տեսնուել եւ շփուել դժգոհների այդ մասի հետ, այնպէս որ մենք առաջումսնից գիտէինք ենչակեան նախկին վարչութեան գլխին գալիքը: Շատ յետոյ հրապարակ ելան դրանց պատկաւումները: Մի կողմ մնացին համարեա թէ բոլոր ենչակեան հերոսները՝ Տամատեան, Աղասի, Օհանջանեան, Ռշտունի, ... իսկ միւս կողմը մարդ ու կին: Արան էլ հաւատում են այստեղից այնտեղից մի քանի խեղճ արարածներ եւ ընդհանուր ժողով կազմում: Մնացած խայտառակութիւնները կին եւ նոր ենչակներից կարող էք իմանալ: Ի միջի այլոց Նազարեէկեանը դատ է բացանում նոր ենչակի դէմ, անուանելով նորերին կեզձ, դասանաններ եւ այլն... Այժմ անգլիական հասարակութեան առաջ այդ բոլոր խայտառակութիւնները մերկացում են:

Դեռ նոր կուսակցութիւնը չձեւակերպուած՝ դիմել էր մեզ բանակցութեանց համար: Մենք պատասխանեցինք, թէ աւելի լաւ ենք համարում բանակցութիւններ սկսել վերջը, երբ սրտշած կը լինին իրենց գոյնը վերջնականապէս: Մենք այդ արինք գոյություն համար: Ճիշդ որ, դուրս եկաւ նրանց նոր Հնչակը, որով յայտարարում են, թէ ոչ մի ուղղութիւն չեն ընդունում, թէ նրանց կոնք ցեղային կոնք է(\*) եւ այլն: Արդէն կեանքի գործը շատ քիչ բացառութեամբ ցոյց է տուել, որ այդ վարագոյրի տակ մտնողները մի «եւ» ունին: Շուտով յայտնի եղաւ նոյնպէս, որ յեղափոխական տեսակետից շատ կասկածելի անձնաորութիւններ այդ նոր խմբի ղեկավարների քումն են գտնուում: Դրանցից ամենագլխաւորն է Արփիարը, որի մատնիչ լինելու դոկումենտի պատճէնը ունինք մեր ձեռքին եւ որի վրայ փորձ էր արուել Պոլսոյ մեր կոմիտէի միջոցով: Այդ անձնաորութեան մասին կասկածներ են յայտնում եւ այնպիսի մարդիկ, որոնք կապ չունին Դաշնակցութեան հետ: Միւսն է Օհանջանեանը (Արտաւագը), որին մասամբ դուք էլ էք նանաչում եւ որը յայտնի էր իբր կատաղի քչնամի Դաշնակցութեան: Դրա շնորհիւ էր ի միջի այլոց, որ վասպուրականի դաշնակցականների մասին տարածուել էր, թէ դո՛քա մատնիչներ են: Երբորդը Ռշտունին, որը յայտնի է իր անբարոյականութեամբ եւ հարբեցողութեամբ (ի հարկէ սա քիչ կապ կարող է ունեալ նրա յեղափոխական գործունէութեան հետ): Միւսներին չենք նանաչում համարեա թէ: Միակ մարդը, որը հաւատ է ներշնչում, դա Տամատեանն է եւ մասամբ Աղասին: Ընդհանուրեան մասին, որքան մենք կարողացել ենք գաղափար կազմել, կարելի է տեսլ, որ փող մսխելու, շռայլութեան կողմից վատ չեն, ապրելը սիրում են:

Երբորդ հանգամանքը, դա կենտրոնականութիւնն է որից չեն ուզում բաժանուել: Թէեւ միաժամանակ յայտնում են, թէ իրենց խմբերին տալիս են իրաւունք ինքնուրոյն գործելու: Կենտրոնականութիւնը, նրանց ասելով, միայն նշանաւոր խնդիրներում է գործած-

(\*) Կարծես թէ սա էլ «ուղղութիւն» չէ:

ուելու, որ ընդհանուր ապստամբութիւն(?) բարձրացնելու հարցում: Կենտրոն պահելու ձգտումը նոյնպէս վատ գաղափար է տալիս նրանց մասին: Իսկ համերաշխ գործունէութեան համար մեր խմբերը չեն կարող կատարեալ հաւատով ձեռնարկել մի գործ դրանց խմբերի հետ, եթէ իմանան, որ դրանց խմբերն ազատ չեն իրենց պէս եւ որ դրանց սրտումը կախում է նոյնպէս մի այլ, արտաքին կամքից:

Ահա այն դժուարութիւնները, որ կարող են առաջ գալ մեր միութեան կամ համերաշխ գործունէութեան հարցում, մասնաւոր ազակենտրոնացման հարցը եւ Արփիարի ներկայութիւնը: Ուղղութեան հարցին կարելի է նշանակութիւն չտալ, թէեւ մենք մեր փորձերից գիտենք թէ ինչ խառնակութիւն է առաջ գալիս, երբ մէկը մի կողմն է էջում, իսկ միւսը հակառակ կողմը եւ դա ինչպէս է ազդում ընդհանուր գործունէութեան վրայ: Ահա ստարակ նրանք, որոնք իրենց բշնամի են երապարակում որեւէ ուղղութեան, ունին միշտ իրենց ուղղութիւնը: Թէ չէ, մենք շատ լաւ տեսնում ենք, որ նրանք՝ ում համար նշանակութիւն չունին զանազան տեսակ ուղղութիւններ, սուս ու փուս գործում են այս կամ այն խմբի հետ եւ ոչ թէ կոխներ են մղում ուղղութիւնների դէմ եւ իրենց սիրած ուղղութիւնը առաջ տանում:

Տեսնենք, գուցէ նոր ենչակեանները ուղղութեան հարցերով այլեւս չեն զբաղուելու — եւ — կողմնակի կերպով մեզ վրայ չեն յարձակուելու...

Դրութիւնը այսպէս է: Ի հարկէ կարող է պատահել, որ յայտնի հանգամանքներում այս բոլոր խնդիրները չնչին երեւան եւ ձեռք ձեռքի տան, բայց ներկայ պարագաներում այդ մենք անկարելի ենք համարում, մասնաւոր Արփիարի ներկայութեամբ: Ի նկատի առնել եւ հետեւեալ հանգամանք: Դեռ մենք դրանց երաւելին որոշակի չպատասխանած՝ դրանք արդէն տարածել են ամէն կողմ այդ լուրը: Արդէն շատ տեղեր «հաստատ» լուրեր են պտտում միութեան մասին, շրջաբերականներ են տարածում եւ մեր կոմիտէներին շփոթեցնում: Միաժամանակ մենք ստանում ենք նամակներ, որով հարցում են այդ լուրերի ստուգութեան մասին եւ ցաւ են յայտնում, որ Դաշնակցութեան անունը արտաւարում է այդ նամակաբեռով (շատերին խրտնեցնում է Արփիարը): Նամակներ գալիս են եւ օտար մարդկանցից: Այս բոլորն ի նկատի առնելով, մենք մտադիր ենք յայտնել Նոր-Հնչակեան Կենտրոնին, թէ համերաշխ գործունէութեան համար անհրաժեշտ է հետացնել Արփիարին:

Այժմ մի հետաքրքիր հարց է ծագում: Ե՛նչ է պատահել, որ Դաշնակցութեան յիշելիք բշնամիները, որոնք այնքան *անձնակամ* հաշիւներ ունին մեզ հետ, որ Արփիարը, Օհանջանեանը (Տամատեանի մասին էլ մենք երատարակել ենք կասկածելի), այժմ այդպէս չենք կերպով ձգտում են *միտքի*: միթէ՞ դո՛քա այդքան զգացունեցան հասարակական շահերով, որ մտուցան իրենց անձնակներ, միթէ՞ դո՛քա բարոյապէս փոխուեցին: Ճիշդ է, ինչպէս խոստովանում է մեզ նամակով Չէյրունի հերոս Աղասին, նրանցից շատերը շատ խեղափութած գաղափար են ունեցել Դաշնակցութեան մասին, իրենց տեղեկութիւնների աղբիւրն ունենալով «Հնչակ» եւ նախկին կենտրոնի մասնաւոր նամակներն ու հրահանգները (Աղասին ցաւ է յայտնում, որ իր ժամանակին նո՛քա իսկական գաղափար չունէին մեր մասին, ուստի եւ չէին կարող մեզ հետ գործել): Բայց եւ այնպէս հարցը մնում է անպատասխան: Շատ նշաններից պարզ է, — եւ մեր ստացած նամակները հաստատում են, — որ նոր-ենչակեանները դրանով *նպատակ ունին ստացուած բաժանումից շատ ժողովրդականութիւն ձեռք բերել* եւ իրենց դիրքը հաստատել: Եւ որովհետեւ ժողովրդի բոլոր խաւերը խօսում էին եւ պահանջում յեղափոխական ուժերի միութիւն, պարզ է որ միութեան հարցը ամենալաւ միջոցն էր:

Մեզ համար աւելի հետաքրքիրն այն չէ, թէ ինչից դրդուած այս կամ այն առաջարկութիւնն են անում, — դա հարկաւոր է դիմացի մարդուն նանաչելու համար, որպէսզի մենք մեր սկսած նանապարհի վրայ հաստատ կարողանանք մնալ եւ գուր տեղից, հաւատով վերաբերուելով, սխալներ չգործենք: Ի նկատի առնելով բոլոր վերոյիշեալ հանգամանքները, մենք բայց եւ այնպէս ոչ մի ժամանակ չպէտք է քողմենք բանակցութեանց հարցը, որովհետեւ շատ լաւ գիտենք, որ այդ կուսակցութեան մէջ, մինչեւ իսկ գուցէ եւ ղեկավարների մէջ, գտնուում են մարդիկ, որոնք ամկեղծ կերպով ցանկանում են բուն գործի համար աշխատել, Դաշնակցութեան հետ միասին գործել, մեր եւ իրենց գործունէութիւնը, ոչժը հա-

մեմատելուց յետոյ: Հարկաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ տեսակ ուժերի վրայ եւ ամէն կերպ աշխատել նրենց հետ միասին գործել: Մեր կարծիքով այդ դրութեան հեշտ կարելի է հասնել, երբ մոր-հնչակեաններն իրենց կազմակերպութեան մէջ մտցնեն ապակեմտրոնացման սկզբունքը, որը կը ոչնչացնի արտաքին ուժի ազդեցութիւնը եւ որը միջոց կը տայ երկրի մէջ գանուող խումբերին, համեմատաբար աւելի ազատ կերպով, տեղական հանգամանքներին քելադրութեամբ մի ընդհանուր գործ ձեռնարկել: Ուրեմն մեր բանակցութեանց մէջ մենք ամէն տեղ լաւ կ'անենք, երբ պնդենք ապակեմտրոնացման վրայ (Արփիարի խնդիրը համարելով արդէն վճռուած): Գրէ՛ք այս մասին եւ ձեր կարծիքը: Իսկ շարունակութիւնը երիտասարդ Թուրքիոյ մասին՝ յետոյ:

Արդէն, որովհետեւ ժամանակ քիչ է մնացել, դժուար քէ կարողանանք հրաւիրել ընդհանուր ժողով: Կարծեմ պէտք է քողմել, որ Ռուսաստանի տեղական ժողովից յետոյ լինի ընդհանուր ժողովը: Բայց սա անպատեհաւ պէտք է անել:

Խնդրեմ շուտով հաղորդել միւսներին:  
Ի՞նչ է շինուում եղբայրս:

### 57) Բժ. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՕՂԱՆԵԱՆԻՆ

13 Օգոստոս 1897

Սիրելի,

Ահա 2-3 օր է լրագիրներում կարդում եմք հեռագիրներ տղերանց ընդհարումների մասին(1): Թէ ինչ հետեւանք կը լինի, չգիտեմ, միայն շատ եւ շատ խնդրում եմ մասնաւորապէս քեզ, որ ամէն մի լուր, որքան էլ աննշան լինի, հաղորդես ժընք: Գիտեմ տղերանց սովորութիւնը, նրանց դանդաղութիւնը: Մի 3-4 ամիս պէտք է անցնի, որպէսզի մի քիչ հաստատ գաղափար ունենաս եղելութեան մասին: Ահա քէ ինչու մասնաւորապէս քեզ եմ խնդրում: Ո՞վ է գնացել, ո՞վ մնացել, ո՞վ սպաննուեց, ո՞վ է կենդանի մնացել եւ ո՞րտեղ: Կարոն(2) հաւանական է նոյնպէս զնացած լինի: Շատ եմ խնդրում նրա մասին ճշմարտութիւնը չծածկես: Այդ անպիտանը ինչո՞ւ ինձ նամակ չէր գրում, չգիտե՞ս պատճառը:

Ես էլ հեռացել եմ ժընքից մի 3-4 ամսով: Ուղեղս կատարելապէս յոգնել է մեծակ լինելու պատճառաւ: Կար ժամանակ, որ հեռագրական լուրեր անգամ չէի կարողանում կարդալ: Դէս ու դէն եմ գնում: Այժմ, ինչպէս տեսնում ես, Նեւշատեյ(3) եմ Սիմոնի հետ: Կը վերադառնամ ժընք եւ այնտեղից Բուլղարիա՝ հանգստանալու համար:

Համբոյրներս քեզ: Զմռանս խնդիրքս:

Քո՝ ՌՈՍՏՈՄ

Յ. Գ.— Յարմար առթիւ մի ուրիշ նամակ կը գրեմ:

Ս. Շիւեանի ձեռքով արկղուած է.

Ձերմ բարեւներս:

Ինձ համար այդտեղ մի տեղ պատրաստիր. այս տարի աւարտում եմ, Հոկտեմբերին:

Ս. ՇԻՆԱՆ

(1) Կ'ակնարկուի Ռանասորի արշաւանքին: (2) Ռոստոմի եղբայրը՝ Արիստակէսը: (3) Ռոստոմը բաւական ծանր հիւանդացել էր եւ բժշկուելուց յետոյ գնացել Նեւշատեյ կազմուելու: Նեւշատեյում էր այդ ժամանակ եւ Սիմոն Շիւեանը, որ նոր էր վերադարձել Ամերիկայից:

### 58) ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵՒՆ

Նամակի վրայ թուական չի նշանակուած, բայց բովանդակութիւնից պարզ է, որ գրուած է Օդոստոսի վերջերս: ԽՄԲ.

Կը վերաբերի Ռոստոմի Լոբոր՝ Կարոյի (Արիստակէս Զօրեան) նահատակութեան, Ռանասորի արշաւանքին ընթացքին:

Առանձին տրուած է ներկայ նամակի պատճէնը, իրրեւ նմոյշ Ռոստոմի ձեռագրին: Զ. Տ.

Սիրելիք,

Ստացայ Տաշոյի գրած կենսագրութիւնը: Եղբորս մահուան պարագաների մասին գրել էր մէկը եւս եւ բոլորովին հակառակ Տաշոյի գրածին: Վերջինիս պատմելով՝ եղբայրս ընկել է առաջին կուռում, մինչդեռ միւսի պատմելով՝ առաջին կուռին, ընկերներին ազատելով, սաղ սպաւմաք միանում է գլխաւոր խմբին: Իսկ այդտեղ, քրդերի նոր յարձակման ժամանակ մի ինչ որ խառնակութեան պատճառաւ սպանում է եղբայրս: Այս դէպքը նոյնպէս մութն է նկարագրուած: Պարզ բան է, մի ինչ որ բան կայ, որ բոլորն էլ աշխատում են ծածկել:

Իբրեւ եղբայր, ես խնդրում եմ, պահանջում եմ, որ ճշմարտութիւնը յայտնէք: Անխղճութիւն կը լինի ձեր կողմից ինձ մշտական մտատանջութեան մէջ պահել: Մի բան որ յայտնուելու է, ինչո՞ւ այժմեանից չէք յայտնում: Միտքարհն(1) էլ գրել էի, ձեզ էլ եմ կրկնում, — խնդրում եմ նրանից մնացած բեքեւ իրերը, բոքերը, նամակները կապոցով ուղարկէք ինձ:

Մնամ ձեր՝ ՌՈՍՏՈՄ

Ովքե՞ր են մնացել այդտեղ: Համբոյրներս բոլորիդ:  
ՆՈՅՆ

(1) Բժ. Քրիստ. Օղանեան:

### 59) ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵՒՆ

Նամակի վրայ ժամանակը չի նշանակուած. գրուած պէտք է լինի 1897 թ. Սեպտեմբերի վերջերս կամ Հոկտեմբերի սկզբին: ԽՄԲ.

Սիրելիք,

Ստացուած են Արքայի(1) Սեպտ. 10/22 նամակները, արշաւանքին վերաբերեալ գրութիւնները եւ լուսանկարների մի ժողովածու:

Արշաւանքի նկարագրութիւնները շատ էլ յաջող չէին: Ի՞նչ հարկ կար այդքան բացատրութիւններով, խորհրդածութիւններով լեցնել կուռի նկարագրութիւնը եւ տպաւորութիւնը բուլացնել: Բացի այդ, նկարագրութիւններից եւ ոչ մէկը ամփոփ գաղափար չի տալիս կուռի մասին (մէկն էլ Յար-Հաւոն(2) էր ուղարկել): Եթէ կարողանաք մի ամփոփ պատկեր գրել, շատ լաւ կը լինի: Այստեղ ստիպուած էինք այդ երեքից կազմել մէկը: Թէ որքան յաջող է, չգիտեմք, բայց անպատեհաւ սխալներ կը լինին, որովհետեւ հակասութիւններ կային ուղարկուածների մէջ. անհնար էր իմանալ, քէ որն է ուղիղը:

Շատ ափսոս, որ լուսանկարի վրայ զլացել էիք դնել իւրաքանչիւրի ազգանունը գոնէ, եթէ ոչ աւելի մանրամասն տեղեկութիւններ: Ի՞նչ չէ ի՞նչ նշանակութիւն ունին այդ գինուած մարդկանց ժողովածուները: Աւելորդ չէր լինէր, եթէ գրէիք, թէ ով ինչ դէպքում նահատակուեցաւ: Գրում էք միայն, թէ այսինչ տեղը 4 հոգի, միւս տեղը երկուսը կորցրինք, բայց թէ ովքեր են այդ չորսը, երկուսը — չէք յայտնում: Նահատակուածների բուռն կայ մէկը, Կարապետ Փանոսեան անունով, Յղմա գիւղից: Չէ՞ք կարող գրել, թէ ինչպէ՞ս եւ ե՞րբ ընկաւ նա խմբի մէջ:

Թիֆլիսի նամակից իմացանք, որ *Քորոսը*(3) վերադարձել է եւ թէ միւսները բոլորը հեռացել են: Ինչո՞ւ դուք միշտ տեղեկութիւն չէք տալիս այդտեղի անցած-դարձներին մասին:

Արշաւանքը ամէն տեղ լաւ տպագրութիւն է թողել, միայն այդ անպիտան ենչակ-եանները ամէն կերպ աշխատում են նահանգները դրա նշանակութիւնը: Գուք բաժանուած ենչակեանների օրգան «Մարտ»ը ստանձնում էք թէ ոչ: Ֆիլիպպի մեր կովիտէն խնդրում է յայտնել արշաւանքի նախածնողներին իր շնորհակալութիւնները:

Ինչո՞վ վերջացան Ռսկանի եւ Շէկոյի սպանողների խնդիրները: Ինչպէ՞ս է այժմ հակառակ — տանկահայերի վերաբերումը արշաւանքից յետոյ: Իսկ ժողովուրդը, մասնաւորապէս Սալմաստինը, հակառակ չէ՞ մեզ կառավարական խտրութիւններից յետոյ:

Գազիկը գրել էր մեզ *Քերթերը և նամակները*(4) իւր հասցեով ուղարկեցիք եւ ոչ թէ ձեր ինչո՞ւ դուք այդ մասին ոչինչ չէք հաղորդում: Մենք կը շարունակենք նախկին ճանապարհով ուղարկել, մինչեւ ձեզանից որոշ պատասխան չստանանք: Ուրեմն գրեցէ՛ք, ստանձնում էք թէ ոչ կանոնաւոր կերպով մեր ուղարկածները, եւ թէ ինչպէ՞ս պէտք է անել ապագայում:

*Արճեստանոցը*(4) ի՞նչ դրութեան մէջ է:

Եթէ ուրիշ լուսանկարներ կան, այն էլ ուղարկեցէ՛ք, միայն անունները գրած եւ տեղեկութիւնների հետ միասին. իսկ եթէ ուղարկածներից կարող էք երկրորդ անգամ եւս ուղարկել, անպատճառ արե՛ք. մենք կը վերադարձնենք ձեզ իսկոյն:

Սպասում ենք ձեր մանրամասն նամակին:

ԽՐԲ.

Յ. Գ.— Արշաւանքի մէջ եղել է, բացի մի տանկից, նաեւ ատրի- գոնէ այդպէս է երեւում պատմութիւնից: Եթէ ճիշդ է, գրեցէ՛ք, թէ քանի՞ հոգի են եղել: Գրեցէ՛ք նոյնպէս, որքան՝ առասպալ է եղել, որքան տանկահայ եւ գլխաւորապէս ո՞ր գաւառներից:

ՆՈՅՆ

(1) *Յոլսէփ Միրզայանց*: (2) *Սարգիս Օհանջանեան*: (3) *Գալուստ Ալոյկան*: (4) *Մածկազիր*:

### 60) ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԹԱԻՐԻԶԻ ԿՈՄԻՏԵՆ

13 Նոյեմբեր 1897

*Նամակը զրուած է Ռոստոմի ձեռքով: Թէեւ ստորագրուած է՝ «Սմբաբուրի», բայց փաստորէն պէտք է համարել Ռոստոմի նամակը, որովհետեւ այդ օրերին Ռոստոմը մենակ էր ժընճուած եւ մենակ էր վարում «Դրօշակ»ի գործերը:*

ԽՐԲ.

Սիրելիք,

Ստացանք Բէկի նամակը Կարոյի մասին, շնորհակալ ենք: Մի քանի օր առաջ մի ու-

րիշ նամակ ենք գրել, ստացած կը լինէք:

Վերջին նամակի հասցեով, այն էլ սխալ գրած, *այլեւս չուղարկէք ոչինչ*: Ահա նոր հասցէ՝ **E. Sissagian, Roseraie, 26**:

Խնդրենք նկարագրել մեզ ճիշդ կերպով այն սպանութիւնները, հալածանքները, որ տեղի ունեցան Սալմաստում եւ Խոյում արշաւանքի պատճառով քողերի եւ կառավարութեան կողմից: Առհասարակ, ուղարկեցէ՛ք մեզ միշտ բոլորակալութիւններ այդտեղի դրութեան մասին (ի հարկէ, այն, ինչ կարող է հետաքրքիր լինել յեղափոխական սեպակետից):

Յաւելով լսում ենք, որ այդտեղի քրոնիական խտրութիւնները աւելի են խստացել, փոխանակ մեղմանալու. եւ մինչեւ իսկ հասել են այն աստիճանի, որ իբր թէ արիւն կարող էր հոսել: Մի՞թէ այս բոլորը ճիշդ է, եւ ի՞նչ է ձեր՝ այդտեղ մնացածների կարծիքը, ի՞նչ միջոցներով կարելի է վերջ տալ այդ դաւմադայիններին:

Ի միջի այլոց, Ռսկանի խնդիրը անպատճառ դեր խաղացած կը լինի: Չգիտեմք, թէ որքան դա ստոյգ է, բայց այստեղ մենք մի քանի խօսք ենք ուզում ասել մեր ընդհանուր պակասութեան մասին, որը մասնաւորապէս տեղի ունեցած կը լինի եւ այդտեղ: Դա մի որոշ ընկերական կարգապահութեան պակասութիւնն է, որ հետեւանք է նախկին դրութեան. երբ ամէն ինչ հիմնուած էր անհատական, ընկերական կապերի վրայ: Այդ տեսակ դրութիւն շատ լաւ է, երբ ընկերները կարողանում են համաձայնել իրար մէջ, բայց երբ մի որեւէ կէտում հաւաքուած են բազմատեսակ մարդիկ, որոնց մէջ չկայ ընկերական յարաբերութիւն, այն ժամանակ անհրաժեշտ է մտցնել որոշ պաշտօնականութիւն՝ վիճելի հարցերը վճռել մեծամասնութեամբ: փոքրամասնութիւնը պէտք է հպատակուի այդ վճռին առանց որեւէ կողմնակի, մասնաւոր փայլեր սնելու: Իսկ որ գլխաւորն է՝ իւրաքանչիւրի դերը խստիւ որոշել: Այս կէտի վրայ շեշտում ենք, որովհետեւ մեր գլխին դառնապէս փորձել ենք անցեալ տարի:

Մի պակասութիւն էլ, որ մասնաւորապէս ձեզ է պատկանում, դա վերին աստիճանի անզաղտնապահութիւնն է: Թէ որոնք են գործիչները, կոմիտէի անդամները՝ դա գիտեն ոչ միայն կազմակերպութեան բոլոր անդամները, այլեւ հասարակութեան մի մասը: Տաշրքեանը գրել էր, թէ այդ պակասութիւնը զգացուած է: Հարկաւ, արդէն միջոցներ ձեռք առած կը լինէք դրա առաջն առնելու: Ձեզ համար չափազանց դժուար կը լինի այդ փոփոխութիւնը իրագործել, բայց մեզ անհրաժեշտ է թուում, որ դուք լարուած ուժերով հենց այժմեանից կարգի բերէք ձեր կազմակերպութիւնը. քանի որ մարդ քիչ կայ, տղերքը հեռացած են, թէ ոչ. եթէ նորից լցուին, դժուար կը լինի գլուխ դուրս բերել: Թող մինչեւ իսկ ժամանակաւորապէս լինի, մինչեւ Միխայիլի, Նիկոլի, միւսների վերադարձը, վնաս չունի, թող հիմքը դրուի:

Մի բան, որ անհրաժեշտաբար պէտք է անէք, դա կոմիտէի անդամների անունների զաղտնի պահելն է: Եթէ օր. Ռսկանը մի որեւէ պահանջով դիմում է Բէկին, ինչո՞ւ նա կըտրուկ կերպով չի ուրանում իր կոմիտէի անդամ լինելը, եթէ մինչեւ իսկ Ռսկանը շատ լաւ համոզուած է այդ բանի մէջ: Չէ՞ որ նա այժմ բոլորովին օտար մարդ է մեզ համար: Սկզբում, ի հարկէ, այս ձեւը կատակերգական բնաւորութիւն կը կրի, բայց յետոյ օրինաւոր մանապարհի մէջ կը մտնի:

Թորոսը անշուշտ Սալմաստ կը լինի: Ուղարկէ՛ք նրան եւս մեր բոլոր նամակները եւ թող մեզ յաճախ գրի:

Համբոյրներ այդտեղ եղած ընկերներին՝

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Գ.— Միխայիլը խոստացել էր ուղարկել Ռոստոմին կարոյի թղթած նամակները, որ Սալմաստ պէտք է լինին: Ռոստոմը խնդրում է շուտով ուղարկել:

ՆՈՅՆ

**61) ԺԸՆԵՒԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ**  
**(անտիպ)**

Ռոստոմի կողմէ գրուած և ստորագրուած բացիկ մըն է (carte-postale), որ կը կրէ խարտուկի փոստի կնիքը՝ 27 Մարտ 1898 թուականով (կայ նաև Ժընևի — ստացման — կնիքը, թուականը անորոշ): Զ. Յ. Դ. Երկրորդ Ընդհանուր Ժողովին մասնակցելու համար Ժընևէն սէպի Թիֆլիս ճամբորդած միջոցին, Ռոստոմ խարտուկի մէջ հանդիպած է Մև-լիքին (Յովհաննէս Եսայուֆեան):

Զ. Տ.

Սիրելիք,

Խարկովում պատահեցի Միլիֆին, գնում եմք միասին: Սահմանը անցել է առանց որեւէ դժուարութիւնների, չնայած, որ Տ տարի է անցած է եղել: Պէտք է ապրի 12 օր իր հայրենիքում: Սիմոնին(1) շտապէք հաղորդել, որ առանց այլեւայլութեան ճանապարհ ընկնի:

Համբոյրներ  
Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

(1) Կ'ակնարկէ Սիմոն Շխեանին:

**62) ԺԸՆԵՒԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ**

Առնուած Դիմակի Բ. հատորէն, — «Զ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովը», էջ 214-215, Հաւանորէն հատուած մըն է նամակէ մը՝ գրուած, ըստ Դիմակի խմբագրութեան, 2 Ապրիլ 1898ին, Թիֆլիսէն:

Զ. Տ.

«Միայն կիրակի գիշերը կարողացանք տեղ հասնել: Ուշ չէր, որովհետեւ դեռ հազար մի 4-5 օրից յետոյ բարեկամներս հաւաքուեան պատկի խնդիրը վերջացնելու:

«Այդ լաւ է, ժամանակ ունիմ այստեղ հօրեղբայրներիս հետ համաձայնութեան գալու: Սրանք չափազանց լարուած են եղել իմ դէմ մի շարք քիւրիմացութիւնների պատճառով, որ հետզհետեւ պարզոււմ են: Յոյս ունիմ, որ բոլորովին կը պարզուի հարցը, եւ հօրեղբայրներս խոչընդոտ չեն հանդիսանայ ընդհանուր խորհրդակցութեան ժամանակ: Գուցէ հարկ լինի երես առ երես դուրս գալ ինձ գրպարտող Բորիսի(1) հետ: Սրանք «նեղամալու» պատճառներից, հանգամանքներից մի քանիսը շատ կոմիկական են: Դրա մասին յետոյ: Ես պինդ եմ կանգնելու, իսկ եթէ համաձայնութեան չեկանք, tant-pis ! Գարեգինին տեսայ. վահապին(2) դեռ եւս ոչ, չի եկել:

«Ես էլ լաւ եմ: Նեարդեքս էլ, բարեբախտաբար, շատ հանգիստ: Հանապարհորդութիւնը շատ լաւ ազդեց վրաս: Ներողութիւն, որ մանրամասն չեմ գրում: Կ'աշխատեմ մի շաբաթ ժամանակ այդ անկէ»:

(1) Մճբատ Խաչատուրեան  
(2) Արշակ Վուսեան

**63) ԺԸՆԵՒԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ**  
**(մասամբ անտիպ)**

20 Ապրիլի (? — թուականը բնագրին վրայ այդքան ալ յստակ չէ) այս նամակը մասամբ հրատարակուած է Դիմակի Բ. հատորին մէջ, էջ 215 («Զ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովը»): Կու տանք ամբողջութիւնը:

Զ. Տ.

20 Ապրիլ 1898

Մի նամակ էլ եմ գրել այստեղից Արշակի անունով, ստացած կը լինէք: Արդէն երկու շաբաթ է, ինչ սկսուել եմ իմ պարապմունքները, բայց դեռ եւս բուն խնդիրն չեմ հասել, հազիւ հազ զեկուցումներով էի զբաղուած: Այսօր յուսով եմ վերջինը կը լինի, եւ վաղը կը սկսիմ կանոնաւոր պարապմունքները:

Որոշ դեռ ոչինչ չեմ կարող գրել: Անտոնը(1) հրաժարոււմ է, կարող է Թոփալը(2) ցայ:

Ի՞նչ եղաւ Սիմոնը(3), գալի՞ս է, թէ ոչ: Թող ամիջապէս ճանապարհ ընկնի, անցարի հարցը շատ դիւրին է: Իր հասցէն կարգրել եմ, ուղղակի գրել չեմ կարող: Թող յայտնի ինձ շտապով իր հասցէն:

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

Ներփակեալը յանձնէք ուր հարկն է:  
Յարմար ժամանակ մանրամասն կը գրեմ:

ՆՈՅՆ

Ինչո՞ւ նամակ չէք գրում, ի՞նչ եղան իմ հաշիւը, միւս քաղերս...  
Բրոշիւրները շտապեցրէք:

(1) Սիմոն Ջաւարեան.  
(2) Քրիստոսփոր.  
(3) Սիմոն Շխեան:

**64) ԺԸՆԵՒԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ**  
**(մասամբ անտիպ)**

24 Ապրիլ 1898ի նամակ, որմէ քանի մը տող միայն կը գտնենք Դիմակի Բ. հատորին մէջ, էջ 215: Կու տանք ամբողջութիւնը, առնելով Զ. Յ. Դ. Կեդրոնական Արխիւի բնագրէն: Գրուած է Թիֆլիսէն, Բ. Ընդհանուր Ժողովի օրերուն:

Զ. Տ.

24 Ապրիլ 1898, Թիֆլիք

Սիրելիք,

Ջարմանալի մարդիկ էք, մինչեւ հիմա ոչ մի տող չէք գրում, եւ ոչ էլ քաղերս ուզարկում:

Գործերս առայժմ լաւ են գնում, յոյս ունեմ մի 2-3 շաբաթից յետոյ վերջացնել: Ուզարկում եմ ներփակ Արամայիսի նկարագրութիւնը (պատկերի տակ սա սխալմամբ

Ախպրացի է նշանակում, իսկապես Ալաշկերտցի է): Կարելի է դրանից էլ օգտուել: Շուտով կ'ազարկեմ Սաբոյի յիշատակարանի շարունակութիւնը:

Համբոյրներով՝  
Ձեր՝ ՌՈՍՏՈՒ

Թէ Աստուած սիրէ՛ք, շուտով նամակ գրէ՛ք:

ՆՈՅՆ

65

(Անտիպ)

*Գտնուած սղր. բնկ. Ս. Վրացեանի թուղթերուն մէջ: Որոշ չէ թէ որո՞ւ ուղղուած է նամակը. «խաչեղբայր»ը հաւանօրէն զործածուած է փոխարեքարար, կուսակցական կամ ազգային պուլիարանակ գործիչի մը հասցէին:*

Հ. Տ.

20 Յուլիս 1901, Ֆիլիպէ

Սիրելի՛ խաչեղբայր,

Շատ հաւանական է, որ ձեզ եւս հասած լինի մակեդոնական մէկ խմբի տանիկ գործելի հետ ընդհարման ցաւալի յուրը: Խմբի մէջ եղել են եւ հայեր, որոնցից երկուսը վիրաւորուած եւ գերի են բռնուած. իսկ երեքը սպանուած են: Ի միջի այլոց տալիս են հետեւալ անունները՝ Թարուլ, դերձակ Օննիկ, մի ուրիշ Օննիկ՝ Թէֆրտաղցի, Անտոն եւ Կարապետ: Ստոյգ տեղեկութիւն առնելու համար մի կարգ միջոցներ ձեռք են առնուած. դիմում եմ եւ ձեզ, խնդրելով, որ եթէ որեւէ հնարաւորութիւն կայ, աշխատէ՛ք ձեր բարեկամների ու ծանօթների միջոցով իմանալ, թէ ովքեր են սպանուած ու գերի բռնուած հայերը: Գուցէ իբր հայ եւ Ֆիլիպէ ապրած, չէ՛ք կարող ի հարկէ չհետաքրքրուել այդ անձերով, մանաւանդ որ սրանց կողմէն տալիս են նաեւ Պետոյի անունը:

Խումբը յարձակուել է քաղաքի մօտ գտնուած (հազիւ 1/4 ժամ հեռաւորութեամբ) մէկ ագարակի վրայ, բռնելու համար վալիս, որ հիւր է եղել այդտեղ: Բայց վալիս կէս ժամ առաջ մեկնած լինելով, խումբը իրեն չմտնելու համար բռնում է յամենայն դէպս ագարակի տիրոջ (մի ինչ որ քէյի) որդուն եւ լեռն է տանում:

Տեղի է ունենում երկու ընդհարում: Առաջինն տղերանցից ոչ ոք չի վնասուում, միւս կողմից ընկնում են ռուսականներ, զինուորներ եւ 15ի չափ ձիաներ: Երկրորդ ընդհարումին, Յը սպանուում են, 4ը գերի բռնում վիրաւոր: Տանիկները կորցնում են սպաներ մի քանի խոզի եւ 70ից արեւ զինուորներ: Կրկնում եմ խնդրիս, յուսալով, որ ձեր ձեռքից եկածը չէ՛ք խնայել ինչ թէ շատ ստոյգ տեղեկութիւններ հաւաքելու նախատեսուած եւ ձեռքակալուած տղաների մասին:

Սպասելով ձեր նամակին, մնամ  
Ձեր ՌՈՍՏՈՒ

Շատ եւ շատ բարեւներ ձեզ բոլորիդ: Մերոնք բոլորը ողջ եւ առողջ են:

66) ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆ ԴԵԿԱՆՈՋԻՆ (1)

*Անուած է շարական զաղանի սպասարկութեան (Օկրուճ) արխիւներէն, եւ հրատարակուած է Ե. Յ. Գ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐԻ Բ. հատորին մէջ, էջ 335-336: Ոստիկանական բաժնի վարիչին ուղարկուած՝ 21 Յուլիս 1904ի թիւ 1684 փաստաթուղթն է: Գրուած է, յայտնապէս, Բրիտանական նահատակութենէն ետք եւ հայ-թաթարական կռիւներու նախօրեակին:*

Հ. Տ.

6 Յունիս 1905

Գեորգի Դեկանոյի, Փարիզ 18, Rue des Fossés Saint Jacques.  
Սիրելի ընկեր,

Ընկեր Գաբունիայի(2) մասին կարող եմ հաղորդել հետեւեալը: Չմանչելով Բուլղարիան (այնտեղ մենք գործում ենք համարեա՛ւ ազատ), նա իրեն ծայրայեղօրէն զգոյշ էր պահում: Նրա չար բախտից, ռուսիկանը մտնելու եւ հարցնում է թէ ո՞վ է. իսկ նա վերցրնում ու ասում է՝ հայ է եւ գնում է Կոստանդնուպոլիս: Անմիջապէս նկատում են ինչ որ անտարբար է, քանի որ հայերի մտաւր Պոլիս անհնարին բան է բուռն: Այդու՛ք նա իր վրայ աւելի մեծ կասկած հրաւիրեց: Այժմ ո՛ր է նա, ոչինչ չեն գրում: Ափսոս որ նախօրօք չեկու մեզ մօտ, ժընեւ: Ես իրեն կը բացատրէի թէ ինչպէս պահէր իրեն: Պիտի ստել, որ բուլղարական կառավարութիւնը շատ բարեացակամ է վերաբերում դէպի մեզ: Վառնայի մէջ ձերբակալուած էին մեր ընկերներից չորս հոգի՝ ուսմբերով. նրանց կ'արձակէին, երէ այդ մասին մեծ պետութիւնների ներկայացուցիչները տեղեկ չլինէին. չնայած նրանց անցկացրին Սերբիա, սակայն մասնաւոր կերպով հասկացրին, որ նրանք այնտեղից կարող են վերադառնալ ուրիշ անունների տակ: Ընկերները այդպէս էլ արին: Յետոյ, դժբախտ մի դէպք Սոֆիայում պատահեց. ուր գոհուեցին մեր ընկերներից երկուսը, եւ կառավարութեան այլ տեսակի վերաբերումի պարագային մեծ գործ (դատ) կը բացուէր, մինչդեռ ոչ ոքի չանհանգստացրին (փորձին ներկայ էին մինչեւ 12 ամէր) եւ ռուսիկանութիւնը եկաւ խուզարկելու Միխայէլեանի սենեակը այն ժամանակ, երբ բոլոր բլթերը դուրս էին տարուած այնտեղից: Ընկեր Գաբունիան պէտք է իրեն պահէր միանգամայն ազատ: Զարմանում եմ թէ ինչո՞ւ են նրանից անցագիր պահանջել: Այդ բանը համարեա՛ւ երբեք չի պատահում այնտեղ:

Մի քանի խօսք մեր գործերի մասին:

Մեր դրութիւնը կովկասում, ինչպէս որ մասամբ քեզ յայտնի է, դառնում է տագնապալի:

Վարչութիւնը բացայայտօրէն զրգոտ է բարբարներին հայերի դէմ: Այդ դեռ քիչ է: Ըստ վերջին տեղեկութիւնների, կովկաս եւ Գլխով գինում են Թիֆլիզի մուսուլմաններին եւ ռուս բանուորներին: Նման պարագաներում ինքնապատահման գործը պիտի կազմակերպուի ոչ միայն հայերով, այլ ընդհանուր նիգերովը հայերի, վրացիների եւ ռուս բանուորների մի մասի: Այդ կը լինի լաւագոյն ապացոյցը յեղափոխական կազմակերպութիւնների համերաշխութեան: Շտապեցէ՛ք գրել այդ մասին ձեր կովկասեան ընկերներին: Չմանչած տեղի վրայ արդէն իսկ համաձայնութիւն կայացած է այս հոգի վրայ, բայց պէտք է աշխատել, որ համերաշխ գործունէութիւններ յստակօրէն կատարուեն այն բոլոր շրջաններում, որոնք բնակուած են հայերով եւ վրացիներով:

Քաղաքների մէջ մերոնք լաւ են գինուած եւ պատրաստուած: Երեսնում արդէն ուժեղ հակահարուած տուին. մանկեղանակների կորուստներն այնտեղ նշանակալից կերպով գերազանց են մերինէն: Միայն գիւղերի մէջ մեր գործը լաւ չէ. ամէն մի գիւղ չի կարող առանձինն դէմ կենալ թուրք եւ ֆիւրդ գինուած խուժանին: Մենք կազմակերպեցինք թուրքի խումբ 80 անձերից, գիւղերը պաշտպանելու համար. նրա առաջին ֆայլերը յաջող էին. մի քանի տեղերում նրան յաջողուեց ցրել թաթար ամբոխները եւ յետ վերցնել կողոպտուած ապրանքները, բայց նրա հետագայ ֆայլերը անգամաւորութեամբ վարչութեան(3) հակառակ

գործունեութեամբ եւ գործով որ դրուեցաւ ճանգարանները պահպանելու» համար: Բագուի մէջ պատրաստուում է նոր յարձակում, այնտեղ այժմ ընդհանուր խուզարկութիւն է տեղի ունենում հայերի տներում եւ արհեստանոցներում, նայնիսկ խուզարկում են անցորդներին: Արդէն գրաւել են 20 հրացաններ, փամփուշտներ եւ ստրեմանակներ: Թուրքերի արհեստանոցը վիժեց: Ցարձակումը կրկնուում է այն ժամանակ, երբ վարչութիւնը համոզուում է որ հայերի մօտ գէնքը էջ է: Բացի այդ, վախենում ենք գործի բացայայտ միջամտութիւնից, ինչպէս որ եղաւ Թուրքիայում: Մէկ խօսքով՝ աղէտի մէջ ենք: Մէկ բան միայն ուրախացրեւում է մեզ, այդ՝ առողջ արամադրութիւնն է մեր տեղական ընկերների, որոնք վստահ են իրենց սեփական ուժերի վրայ: Յոյս ունինք այս եւս անցկացնել:

Ընկեր Գապագին պէտք է որ արդէն ինքի արդիւնքները մեր խորհրդակցութեան ինչ եւս մտածում թողոր կազմակերպութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը հրատարակու մասին: Ինչ է արուած կոմիտէ կազմակերպելու համար:

Կարող է պատահել որ եւ շուտով Փարիզ գամ:

Յտեսութիւն՝ ԲՆ ՌՈՍՈՍ

Կցում եմ Բագուի կոմիտէի կոչը, Նակաշիճէի մահապատժի մասին: Ափսոս որ ճաչէ ստորագրուած նաեւ ձեր կողմից:

- (1) Գէորգի Դեկանոզով, Վրաց Սոցիալիստ-Ճեղերայլիստ կուս. անդամ. անիշխանական:
- (2) Գարունիան այլուղի յեղափոխական էր, Թերեւս վրացի անիշխանական:
- (3) Ցարական պետական վարչութեան մասին է:

Ա. Ա.

67) Հ. Յ. Գ. ԲԻԻՐՈՅԻՆ

Ռուստոմի տեղեկագիր-նամակն է, պարսիկ յեղափոխականներուն հետ Հ. Յ. Գաչ-նակցութեան անունով իր վարած բանակցութեանց մասին: Առնուած է Հ. Յ. Գ. Կեղորնական Արիւնէն եւ հրատարակութեան տրուած, ընկ. Ա. Ամուրեանի կողմէ եւ իր ծանօթագրութիւններով, ԱԶԴԱԿ Շարաթօրեակ-ԴՐՕՇԱԿԻ Ե. տարուան 40րդ համարին մէջ (22 Աւգոս. 1974):

Հ. Տ.

10 Յունուար 1908, Թեհրան

Սիրելիք,

Բանակցութիւնները վերջացան, տեսելով 6 օր: Ուղարկում եմ ձեզ արձանագրութեան պատճէնը. անիւացնում ենք նրան մեզ հետ բանակցողների ներկայացուցիչների մամակը, ուր նրանց բացատրում ենք, թէ ինչ պատճառով արձանագրութեան տակը չեն ստորագրում: Բայց պէտք է իմանաք, որ շտապով գնալու չէ դրա բուն պատճառը, դա միայն մի պատրուակ է: Բանն այն է, որ բանակցողները իբրեւ որոշ հասարակական եւ քաղաքական դիրք ունեցող անձինք՝ խոյս են տալիս ստորագրելու մի պայմանագիր, որ կնքուած է յեղափոխական կուսակցութեան ներկայացուցչի հետ: Ինչպէս երեսում է, նրանք կ'աշխատեն ստեղծել մի ուրիշ մարմին՝ նույնպէս յեղափոխական անունով, ուրիշ անձերից բաղկացած, գուցէ եւ Ֆիկտիւ, որը մեզ հետ կը մտնի պաշտօնական յարաբերութեան մէջ: Իսկապէս՝ ստորագրութիւնը մեզ համար էլ ցանկալի չէր: Այժմ առաջ ունենալով Շամի Մարմնի եւ մի քանի ընկերների տրամադրութիւնը, մեզ համար եւս անհրաժեշտ էր պայմանագիր չկազմել ոչ մի ստորագրութեամբ, այլ համաձայնութեան կէտերի իրագործումը բազմի իրերի ընթացքին:

Բայց գործը այնպէս էր տարուած, որ մեր ստորագրութիւնից հրաժարուելը նրանց կողմից պիտի լինէր: Այդ միջոցով կարելի էր չափել նրանց պատրաստակամութեան աստիճանը, որը հիմնուած պիտի լինէր այն ուժերի ու ֆակտորների վրայ, որ իսկապէս տրամադրելի են նրանց համար: Դրանով միայն կարելի էր հասկանալ, թէ մինչեւ ո՞ր աստիճան կարեւորութիւն են տալիս սահմանագլխի (1) դէպքին եւ իրօք անխուսափելի են համարում պատերազմը կամ պատրաստուում են նրան: Ուղարկում ենք մեր պատասխանի պատճէնը, ուր հասկացրել ենք, թէ մենք ի՞նչ շահով կարեւորութիւն ենք տալիս բանակցութիւնների հետեւանքին:

Համառօտ կերպով առաջ բերեմ բանակցութիւնների պատմութիւնը:

Բագու էի հասել, երբ տեղի ունեցաւ Շահի եւ Մէջլիսի միջեւ կռիւը: Ենթադրելով, որ դա պիտի խանգարի անպատճառ մեր բանակցութիւններին, հեռագրով հարցրի այստեղի ընկերներին՝ հարկաւոր չէ՞ արդեօք յետագել իմ ուղեւորութիւնս, աչքի առաջ ունենալով դուրսեան անկայունութիւնը. եւ երբ Թեհրան հասաւ, սահմանադրականների գլուխը շատ խառն գտաւ. թէեւ Շահի կառավարութիւնը պարտութիւն էր կրել, բայց նրա կողմնակիցները դեռ շարունակում էին գաղտնի դատել լարել սահմանադրութեան դէմ: Կազմուել էին սեւ հարիւրեակներ, որոնք տեղորի միջոցով ձգտում էին ընկնել սահմանադրականներին:

Իմ գալուստը երրորդ օրը տեղորի ենթարկուեց, իր տան մէջ, սահմանադրական շարժման աջակից յայտնի հարուստ Արքաթ Ֆրէյդուրը: Ինչպէս քիչ յետոյ հաստատուեց, հենց Շահի մտերիմ սենեկապետի ձեռքով: Մի օր անց հրացանաձգութեան ենթարկուեց արտաքին գործոց նախարարը, նույնպէս իր տան մէջ: Սա եւս յայտնի է իբրեւ ջերմ սահմանադրական. սրա հայրը հանգուցեալ Մուշի Դովլէն էր, որ սողբողած եղած ժամանակ կարողացել էր համոզել Շահ Մոզաֆարէդդինին՝ սահմանադրութիւնը ստորագրելու: Մէջլիսի անդամները մշտական վախի մէջ էին, շատերը տանը չէին գնում, իրենց կողմից միջոցներ էին խորհում թէ՛ իրենց անձը եւ թէ՛ սահմանադրութիւնը պահովելու համար: Ահա թէ ինչո՞ւ իմ գալուց մի շաբաթ անց միայն, Գեկտեմբեր 30ին(2) տեղի ունեցաւ առաջին նիստը. հետեւեալ նիստերն էին՝ 31ին Գեկտ., 2, 3, 4ին Յունուարի, 1908 թ.: Մեզ հետ բանակցող խմբի մէջ մտնում էին՝ 1) Վուսուդ-օղ-Դովլէն (կառավարութեան վստահութիւն), Մէջլիսի փոխ նախագահը. խօսում է ֆրանսերէն. եթէ Եւրոպայում չի կրթութիւն ստացել, այնտեղ անպատճառ եղել է: 2) Մոսքեշար-էդ-Դովլէն (պետական խորհրդական), պատգամատուր Թարիքի. նույնպէս խօսում է ֆրանսերէն: 3) Հաջի Ամին-օլ-Ջարր (դրամատան հաւատարիմ), պատգամատուր Թեհրանի վանատականների կողմից. Պարսկաստանի ամենահարուստն է նկատուած: 4) Հաջի Մուին-օր-Թոջար (վանատականների օգնութիւն). նույնպէս շատ հարուստ: Հաջի Ամին-օլ-Ջարրի հետ միասին նկատուում է սահմանադրականների ֆինանսական ուժը: Գլխաւորապէս սրանք են հոգում շարժման ծախսերը: 5) Հաջի Միրզա Իրախիմ աղա, պատգամատուր Թարիքի, յեղափոխական անջոմանների պարագլուխ: 6) Աղա Սէյիդ Հասան Թաղի Ջադէ, երիտասարդ պատգամատուր Թարիքի, Մէջլիսի ամենաազդեցիկ եւ կարող անդամը: Սա է բանակցութեան նախաձեռնողը. սա եւս յենում է յեղափոխական անջոմանների ուժի վրայ:

Այս խումբը՝ կազմուած Մէջլիսի գանազան խաւերից՝ ներկայանում է իբրեւ մի կորիզ, որը իր հեղինակութեամբ կարողանում է ուզած ուղղութիւնը տալ գործերի ընթացքին: Նրա հետ են Թեհրանի ամենահեղինակաւոր հոգեւոր պետերը՝ աղա Սէյիդ Արդուլլան եւ աղա Սէյիդ Մոհամէդ Մուշտէյիդները, որոնք համարում են սահմանադրութեան հիմնադրները եւ վայելում են Նաջաֆի հոգեւոր ծայրագոյն պետերի վստահութիւնը:

Ինձ հետ միասին ժողովին մասնակցում էր մի կին ընկեր՝ Յովսէփ Միրզայեանը: Եւ ամէն մի ժողովից յետոյ ունենում էինք խորհրդակցութիւն ուրիշ երեք ընկերների հետ, որոնք մինչեւ իմ գալը, անկախ տեղական կոմիտէի կազմից, վարել էին Յովսէփի միջոցով բանակցութիւնները: Դրանք են՝ 1) ձեզ ծանօթ բժիշկ Տէր Ստեփանեանը, 2) Թուրքականների տան ներկայացուցիչ Ալեքսան Թուրանը, 3) Ալեք Ջալալեանը, բոլորն էլ լաւ ծանօթ տեղական պայմաններին եւ պարսիկների հոգեբանութեան:

Ճաղովերին դրուած էին հետեւեալ հարցերը՝  
1) Ո՛րքան ապահովուած է սահմանադրութեան նորմալ ընթացքը Շահի հետագայ պատերի դէմ:

2) Ի՞նչ միջոցներ են ձեռք առնուած անգլօ-ռուսական համաձայնութեան(3) դէմ, որ ժամանակին կարող է սպառնալ Պարսկաստանի քաղաքական անկախութեանը:

3) Ի՞նչ են սպասուած սահմանագլխի յանձնաժողովից՝ ի՞նչ յոյսեր ունեն տանիկ գործը պարսից սերբիտորիայից հեռացնելու:

4) Ի՞նչ ոյժ կարող են Տանկաստանի դէմ հանել:

5) Ինչո՞ւմ պիտի կայանայ մեր աջակցութիւնը:

6) Իրենե՞ք պարսիկները ի՞նչ օգնութիւն կամ դիւրութիւն կարող են մեզ տալ:

*Առաջին* հարցին պատասխան եղաւ, որ սահմանադրութիւնը հաստատուն հիմքերի վրայ է դրուած եւ որ Շահի ընդդիմադրութիւնը կարող է միայն խանգարել, դանդաղեցնել կանխուած աշխատանքը. բայց ո՛չ վերացնել սահմանադրութիւնը: Աւելացրին նաեւ, որ արդէն արուած են որոշ բայեր՝ վերջ տալու համար խտնակութիւններին, հակառակ պարագային իրենց ձեռքի տակ ունեն միջոցներ, որոնցով կը հարկադրեն ուժով Շահին՝ յարգելու սահմանադրութիւնը:

Խնայալէս. հետեւեալ օրը, երկուշաբթի, յայտարարուեց մեզ, որ Շահը վերջնականապէս զիջել է. կրկնելով մի անգամ եւս հաւատարմութեան երդումը կրօնապետների եւ Մէջլիսի պատուիրակների ներկայութեամբ (փակագծի մէջ ասեմ, որ Շահի ռոհիլը հասցրել են մինչեւ 750-000 (1-500-000 ռուբլի) թումանի. մի հանգամանք, որ մեծ դեր է խաղացել հաշտութեան խնդրի մէջ):

*Երկրորդ* հարցի վերաբերեալ որոշ բան չասուեց: Ձեր երեւում, որ մի բան ծածկելու լինէին. պարզ էր, որ ասելու բան չուներին: Մեր կողմից շեշտուեց անհրաժեշտութիւնը՝ ձեռք բերել աջակցութիւնը որեւէ ուրիշ պետութեան, որը անմիջական կերպով աջ չունենար Պարսկաստանի վրայ՝ ինչպէս Անգլիան է կամ Ռուսաստանը. իբրեւ այդպիսին մատնացոյց արուեց Ֆրանսիան: Այդ առաջարկը հաւանութիւն գտաւ եւ հետեւեալ օրը մեզ յայտնեցին, որ այդ ուղղութեամբ աշխատանք քափում է եւ որ եթէ Դաշնակցութեան կողմից թեթեւ աջակցութիւն լինի, նրա կապերի շնորհիւ Ֆրանսիան կարելի կը լինի մօտեցնել պարսկական գործին: Գրաւական փոխառութիւն կնքելու մասին (սա ամենից ցարտ տեղն է պարսից սահմանադրութեան) խօսք չեղաւ բոլորովին. սակայն կասկած չկայ, որ նրանց բոլորի մտնում այդ խնդիրն էր նստած: Կողմնակի ազդիւրներից իմացանք, որ Ֆրանսիան հրաժարում է դրան տալ Պարսկաստանին՝ առանց Ռուսաստանի երաշխաւորութեան:

Այստեղ հարց դրինք մի բանի անձանց մասին. Մեյլոն խանից նրանք վշտացած են երեւում. բանիցս դիմել են նրան նամակներով. բայց պատասխան չեն ստացել, կամ էլ շատ ուշ եւ ստաս: Նրա վրայ ոչ մի յոյս չունեն: Երբ մենք հարց դրինք, թէ ինչպէս կը վերաբերուին, եթէ Մեյլոն խանը ինքը պատրաստակամութիւն յայտնի, իր կապերով, իր անունով այս կամ այն խնդրում օգնութիւն ցոյց տալ սահմանադրականներին, նրանք պատասխանեցին. թէ ի հարկէ ուրախ կը լինեն: Այս բանը, ուրեմն, ի նկատի ունեցէ՛ք: Արշակ խան Գորդեանին բոլորովին բացասաբար են վերաբերում, իսկ Յովհաննէս խան Մասեհեանին՝ շատ լաւ:

Ֆրանսիայի նման համեմատաբար մի չէզոք պետութեան միջամտութիւնը անհրաժեշտ դատուեցաւ նաեւ սահմանագլխի խնդրի տեսակէտից, իբրեւ հակակշիռ Անգլիային եւ Ռուսաստանին. եթէ տանիկ կտաժարութիւնը յամառի, ռուս կտաժարութիւնը ինքը կարող է ներս խուժել Արապատական տանիկ գործերը էջելու նպատակով կամ պատրուակով: Երկու դէպքում էլ ձեռք չի բաշխ այդ նահանգից: Անգլիան «հաւասարակշռութիւնը պահպանելու» համար իր կողմից որոշ շրջան կ'առնի իր հովանաւորութեան տակ:

*Երրորդ* հարցի վերաբերեալ նրանց կողմից արուեց 3 ենթադրութիւն. 1) Թուրք գործերը կը հետանան գրաւուած վայրերից խնդիրը պարզուելուց եւ վիճելի տերրիտորիան Պարսկաստանի սեփականութիւնը ճանաչուելուց յետոյ: Պատերազմի խնդիրը դրանով ուրեմն կը փակուի: 2) Այլեւայլ պատրուակներով գործը կը ձգձգուի եւ պատերազմը կը յետաձգուի, եւ 3) Թուրք կտաժարութիւնը բացէ ի բաց կը մերժի հետացնել գործերը. այդ դէպքում պատերազմը անխուսափելի կը լինի:

Առաջին ենթադրութիւնը անհիմն նկատուեց, որովհետեւ թուրք կտաժարութիւնը, եթէ նահանջողներից լինէր, առաջ չէր գալ. իսկ եթէ նահանջի՝ դա կը լինի Ռուսաստանի ննչման տակ, որը ինքը կը գրաւի վիճելի վայրը կամ սահմանակից շրջանը՝ «ապագայի ապահովութեան» համար: Դա արեւի մխրարական չի լինի Պարսկաստանի համար:

Երրորդ էլքը նոյնպէս հաւանական չհամարուեց այն պարզ պատճառով, որ Պարսկաստանը պատերազմ յայտարարելու հնարաւորութեան մէջ չէ: Միակ հաւանական եւ Պարսկաստանի համար համեմատաբար արեւի նպատաւոր եւ պատուաբեր նկատուեց երկրորդ ենթադրութիւնը, եթէ նոյնիսկ Տանկաստանը *կատկորթիկ* կերպով մերժի հետացնել իր ոյժերը, այնուամենայնիւ պարսիկները ստիպուած պիտի լինեն *դիպլոմատիկ* նախապարհով ձգձգել խնդիրը, իրենց համաձայնութիւնը չտալ մինչեւ քաղաքական արեւի բարեկարգութեան հանգամանքների առաջ գալը: Զգձգելը, բացի այդ, այն առաւելութիւնը կը ներկայացնի, որ հնարաւորութիւն կը տայ կանոնաւորել Պարսկաստանի ներքին գործերը, պատերազմական պարտաւորութիւնների դիմել եւայլն: Միաժամանակ՝ Թուրքիայի ընդհանուր յեղափոխական շարժումը ծաւալուելով եւ ուժեղանալով՝ զգալապէս կը թուլացնի միապետութեան նուաճողական քաղաքականութիւնը եւ այդպիսով կը հանդիսանայ Պարսկաստանի համար բնական դաշնակից:

Խօսելով քաղաքական նպատաւոր բարդութիւնների մասին, մասնաւորապէս կանգ առինք Բուլղարիայի վրայ: Պարզելով Բուլղարիայի բռնած ընթացքը մակեդոնական խնդրի վերաբերմամբ, պատերազմի անխուսափելիութեան հաւանականութիւնը, որ վաղ թէ ուշ պիտի կախուի երկու կողմերի վրայ էլ, առանձնապէս շեշտեցինք Բուլղար-պարսկական համաձայնութեան անհրաժեշտութիւնը: Նրանց կողմից խոստում եղաւ ամէն ջանք րափել՝ գլուխ բերելու այդ գործը: Մերձենալու նպատակով խոստացան Սոֆիա ուղարկել տալ իրեն ներկայացուցիչ-հիւպատոս մի վստահելի անձ, իսկ մինչ այդ, բանակցութիւնները վարել Բուլղարիայի հետ երապական մի դեսպանատան միջոցով. աչքի առաջ ունէին արեւի՝ Բերլինի դեսպանատունը:

Երբ կարգը եկաւ այն հարցին (IVրդ), թէ ի՞նչ ոյժ կարող են հանել, պատերազմի դէպքում, Թուրքիայի դէմ, նրանց առաջին խօսքը եղաւ, որ չվստահանալով իրենց բանակի ոյժին, գրեթէ ամբողջ յոյսը դրել են անկանոն գործերի, Շահսովան, Ղարատաղի, Լօռիստանի եւ այլ ձիւղերի վրայ: Յոյս ունէին նաեւ ապստամբեցնել շիա ցեղերին, որոնք բնակուում են Տանկաստանում, Բաղդադի մօտերը: Իսկ բանակը կանոնաւորելու մասին չէին խօսում, ապագայի վերաբերմամբ էլ մեծ յոյս չունենալով:

Մենք ստիպուած եղանք նրանց յայտնել, որ մեր զինուորական ժողովի կարծիքով, որ հրախրուած էր Թիֆլիզում Մաջիդ Սալթանէի գալու արքիւ (սա եւս մտածում էր կրօնուել թուրք գործերի դէմ անկանոն գործերի միջոցով), անհնարին նկատուեց թուրք կանոնաւոր բանակի դէմ որեւէ յաջողութիւն յուսալ՝ միայն անկանոն գործերին ապահոված: Աւելացրինք նաեւ, որ ռուս զինուորական իշխանութիւնը ինքը սկսածուած է թուրք բանակից, որ լաւ զինուած է, մարզուած եւ ունի հմուտ ղեկավարներ: Մեր ապագայի աջակցութիւնն էլ, ինչպէս խօսուել է եւ Մաջիդ Սալթանէին, կարող է արտայայտուել պարտիզանական կոմիտիներով. երբ մեր պարտիզանական խմբերը աջակցելու լինեն կանոնաւոր բանակի գործողութիւններին: Այնպէս որ նոյնիսկ քաղաքական նպատաւոր հանգամանքներում, Թուրքիոյ յեղափոխական շարժման առաջ բերելիք ներքին դժուարութիւնների պարագային էլ Պարսկաստանը անհրաժեշտ պէտք պիտի ունենայ իր բանակի կանոնաւորման եւ զինման:

Իսկ գալով այն կէտին, թէ ինչ աջակցութիւն կարող է ցոյց տալ Դաշնակցութիւնը Պարսկաստանի եւ Պարսկաստանը՝ Դաշնակցութեան, արեւորդ ենք համարում կանգ առնել դրանց առթիւ եղած խօսակցութիւնների մանրամասնութիւնների վրայ: Դրանք ամփոփուած են արձանագրութեան մէջ, որ ուղարկուում է նամակիս հետ միասին: Կ'առնենք միայն հետեւեալը.

Կէտերը բաժնուած են երկու մասի.

1) Կէտեր, որոնք վերաբերում են նախապատրաստական շրջանին եւ պարտաւորեցուցիչ պիտի լինէին երկու կողմերի համար էլ հենց հիմնականից. 2) Կէտեր, որոնք կապ ունեն անմիջապէս պատերազմական գործողութիւնների հետ: Դրանց մասին միայն խօսուել

է, այդ կէտերը միայն աչի առաջ պիտի ունենանք. պարտաւորիչ պիտի լինէին մի նոր ժողովից յետոյ, ուր կարող էին դրուել եւ ուրիշ հարցեր, ուր համաձայնութիւն կը կայա-  
նար աւելի կանկրտ կէտերի շուրջը: Երկու մասի բաժանելու պատճառը այն է, որ՝

ա) Մենք պարտաւորեցուցիչ կարող էինք ընդունել միայն այն, ինչ մտնում է ընդ-  
հանուր ժողովի որոշումների սահմանին մէջ: Եւ ինչպէս կը տեսնէ՛ք՝ մեր խոստումները գրե-  
թէ բոլորը այնպիսի բաներ են, որ առանց համաձայնութեան պարսիկների հետ էլ ի կատար  
պիտի ածէինք, հենց մեր շահերից դրդուած: Իսկ մինչեւ մի նոր ժողովը պարսիկների հետ,  
մենք կ'ունենանք մեր հորհուրդը, որը իրաւունք կ'ունենայ խնդրի մանրամասների մէջ  
մտնել:

բ) Պարսիկների համար եւս հնարաւոր չէր պարտաւորութիւններ յանձն առնել.  
Բանի որ նրանք չցիտէին, թէ ովքեր են իրենք եւ ինչ են մեզ հետ բանակցում: Նրանց գոր-  
ծը թեթեւացնելու նպատակով առաջարկեցինք որ կազմեն մի անկախ մարմին՝ թէկուզ  
Comité de la Défense Nationale անունով: Իրենք էլ մտածել էին Մէջլիսում ընտրել  
տալ այդ կոմիտէին կից, որը կը գործէ Մէջլիսից դուրս, մի մասնաժողով, որը յատկապէս  
գրաւուր թուրքերի խնդրով եւ որի մէջ մտնեն իրենք բոլորը: Պառլամենտական կոմիտէինը  
ընտրուեց, բայց բացի իրենցից մտան 3 ուրիշ անձեր եւս. ընտրութիւնը այդ պատճառով  
անյաջող է համարուում. բացուել բոլոր այդ երեքի առաջ՝ նրանք չեն ուզում. գուցէ կանգ  
առնեն միայն մեր առաջարկած Comitéի վրայ:

Բայց նրանց մերժումով՝ արձանագրութիւնը ստորագրել՝ (տես նրանց նամակը)  
պարտաւորեցուցիչ ոչինչ չի մնում, իւրաքանչիւր կողմը բարոյապէս պարտաւորուելով ա-  
ջակցել միւսին, պիտի աշխատի նշանակած կէտերը իրագործել հնարաւորութեան սահմանում:

Այստեղ մնում է իբրեւ միջնորդ Յովսէփ Միրզայեանը, որը յարաբերութիւն կը  
պահպանի պարսիկ խնամիների հետ, խորհրդակցելով միւս երկու կամ երեք ընկերների հետ:  
Տեղական մարմինը չցիտէ մեր բանակցութիւնների մասին. այդ առթիւ պարտք եմ համա-  
րում նախագրուածները ձեզ, որ սխալ բոլոր չտաք ձեզ: Գրէք նախկին հասցեով (թմիչ Տէր  
Ստեփանեանին, յանձնել Արքային):

Մի քանի խօսք ենք ուզում աւելացնել, պարզելով մեր տեսակետը: Մեր կարծիքով,  
եթէ Թուրքիայի դիրքը միշտ սպառնական մնայ, պարսիկներն անպայման կը ձգտեն մեզ  
հետ իրականապէս կապուելու: Եթէ Թուրքիան թուլացնի իր ոյժերը, նահանջի նշաններ  
ցոյց տայ, յոյս չունենք որ նրանց կողմից ակտիւ մերձեցման քայլեր արուեն: Մենք յամե-  
նայն դէպս պիտի աշխատենք պարզել ապագայի վտանգի անխուսափելիութիւնը նրանց հա-  
մար եւ անհրաժեշտութիւնը նպաստել օսմանեան յեղափոխական շարժման՝ հենց իրենց շա-  
հերի տեսակետից: Մենք մեր կողմից անհրաժեշտ ենք համարում իրագործել մեր հետեւեալ  
խոստումները, նայնիսկ անկախ այն բանից, թէ փոխադարձաբար պարսիկները մի շօշափելի  
աջակցութիւն ցոյց կը տան մեզ թէ ոչ: Մի կողմն ենք թողնում 4րդ օրդ կէտերը, որոնք  
առանց այն էլ կատարուում են:

1) Պրոպագանդը եւրոպայում յօգուտ սահմանադրական Պարսկաստանի պէտք է տա-  
նել մեր սովորական եղանակով եւ ցոյց տալ, որ տանում ենք: Ձեզ կ'ուզարկուեն տեղեկու-  
թիւններ, նիւթեր եւրոպական մամուլին մատակարարելու համար: Դուք էլ կարելու կըտ-  
րոնները (թերթերից) կ'ուզարկէք պարբերաբար այստեղ:

2) Ֆրանսիայի խնդրում չենք կարծում, որ առանձին յաջողութիւն ունենանք, քանի  
որ Ֆրանսիան կապուած է բարեկամաբար թէ՛ Անգլիայի եւ թէ Ռուսաստանի հետ. մի համե-  
գամանք, որ աւելի աննպաստ է Պարսկաստանի համար, քան նպաստաւոր: Բայց եւ այնպէս  
անհրաժեշտ կը լինի հարցապնդումների, տեսակցութիւնների միջոցով ազդել եւ հետեւան-  
քը տեղեկացնել այստեղ: Գուցէ այս խնդրում հարկաւոր լինի Մեյլում խանի միջամտութիւ-  
նը կամ՝ լոկ անունը: Ձեր հեռագրի représentant iranien-ը եթէ սա է, աւելի լաւ: Պի-  
տի խնդրէինք, որ այս կէտի վրայ առանձնապէս ուշադրութիւն դարձնէք, որովհետեւ սա  
է ամենից շատ ազդելու մեր պարսիկ բարեկամների հոգեբանութեան վրայ. մանաւանդ որ  
հրապարակի վրայ փոխառութեան խնդիր էլ կայ:

3) Նոյնը պիտի սանկ բուրդար-պարսկական համաձայնութեան վերաբերեալ: Պէտք  
է ձեզ յայտնի լինի, որ Պարսկաստանի վարանոտ դրութիւնը հետեւանք է նրա ամբողջովին

անօգնական լինելուն: Եթէ մեր մտադրութիւնը իրագործուի, դա մեծ ֆաջայերիչ հաճա-  
մանք կը հանդիսանայ շուրջաւոր Պարսկաստանի համար: Ձեռք կարծում, որ Բուրձարիան  
ուրիշ կերպ վերաբերի, եթէ նրան պարզուեն այստեղի պայմանները եւ մեր տեսակետները:  
Այս աշխատանքն էլ ձեռք վրայ է ընկնում:

7րդ եւ 8րդ կէտերի իրագործումը կը նպաստի մեր հայ-թուրքական համաձայնու-  
թեան գործին կովկասում:

Պարսիկ բարեկամների խոստումներից կարելու են մեզ համար եւ գործնական՝ ներ-  
կայ պարագաներում հետեւեալները.

1) Մեր ոյժերի փոխադրութիւնը Պարսկաստանի ներսում, որ գրեթէ ապահովուած է:

2) Պիտի առանձնապէս աշխատենք, որ իրագործուի խոստումների երկրորդ կէտը՝  
արտասահմանից զենք եւ ռազմամթերք փոխադրելը: Եթէ ուրիշ բան չլինի, միայն այս  
բանը հերիք է մեզ:

3) Չորրորդ կէտի համար պէտք է ստել, որ խոստացել են, հարկաւոր դէպքում,  
երբ պահանջելու լինենք, ուղարկել «Ծաղիկ» մի պարսիկ. որը յարաբերութեան մէջ դնի  
մեր ընկերներին այն պարսիկների հետ, որոնք պատրաստ կը լինեն աջակցել մեր այնտեղի  
գործունէութեան: Թէեւ առանձին կարելուութիւն չենք տալիս այս կէտին, այնուամենայնիւ  
դա գրում ենք ի տեղեկութիւն Ծաղիկի ընկերներին:

Այսօրու քաւական է:

Համբարներով՝ Ձեր ՌՈՍՏՈՄ

8. Գ.— Եթէ հարցնելու բաներ ունենաք՝ գրեցէք:

(1) «Սահմանադրիչ դէպքը» Թուրքերի մուտքն էր պարսկական հողը, նրանք ու-  
զում էին առիթից օգտուել եւ պարսկական հողամասեր դրուել Սալմաստի եւ Ուրժիայի  
շրջաններում:

(2) 1907 թուի Դեկտեմբեր 30:

(3) 1907ին ցարական Ռուսիան եւ Անգլիան Պարսկաստանը բաժանեցին ազդեցութեան  
երկու գօտիների, չիւսիսը՝ ցարական, հարաւը՝ անգլիական գօտիներ...:

Ա. Ա.

68) ԵՓՐԵՄԻՆ

26 Յուլիս 1909

Սիրելի Եփրեմ,

Բոլոր այստեղի ընկերների կողմից սրտանց շնորհաւորում ենք Ձեզ յաջողութիւն-  
ները: Միայն թէ անյարմար պաշտօն է քեզ վիճակուել: Լաւ կը լինի, եթէ յեղափոխական  
խառը դրութիւնը անցնելու լինի եւ քիչ թէ շատ խաղաղ կեանք ստեղծուելու լինի, հրաժա-  
րական տաս ոստիկանապետի պաշտօնից:

Արդէն քեզ դիմած կը լինեն մանրամասն տեղեկագրի համար: Եթէ չես ուզարկել,  
պատրաստիր կամ պատրաստել տուր շատ շուտով եւ անպատճառ ուղարկիր Պալիս «Ազատ»-

մարտ»ի հասցեով ինձ յանձնելու համար: Տեղեկագիրը կը սկսես շարժման առաջին օրերից: Եթէ ժամանակ չունենաս դեպքերը մանրամասը նկարագրելու, յիշատակիր գոնէ գլխաւոր դեպքերը ժամանակագրական կարգով:

Տեղեկագիրը պիտի լինի ընդհանուր շարժման մասին եւ մասնաւորապէս Գաշնակ-ցուքեան դերի մասին ձեր շրջանում:

Սրտագին ողջոյններ բոլոր ընկերների կողմից: Մասնաւորապէս Մուրատի եւ Արամի:

Համարյոթներս այդտեղի ծանօթ եւ անծանօթ ընկերներին՞  
Քո ՌՈՍՏՈՄ

(Ա. Ամուրեան, — «Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ, ԵՓՐԵՄ, ՊԱՐՍՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ», — Ա. հտր. Թեհրան 1976 — էջ 180)

**69) ՅՈՎԱԿԻՓ ՄԻՐՋԱՅԵԱՆԻՆ**

26 Մարտ 1909

Սիրելի Յովակի,

Նախ եւ առաջ քարգմանութեան մասին, որ մնացել էր Յովի. Թումանեանցի մօտ. եիմա նա ազատ է եւ դու կարող ես գրել նրան, որ յանձնի քա ուզած մարդուն:

Քո եւ բժշկի ընդարձակ գրութիւններին բաւական ժամանակ պատրաստում էի պատասխանել, բայց. ինչպէս գիտես, դա արտակարգ դժուար բան էր ինձ համար, մամաւանդ այն ժամանակուայ պայմաններում: Հիմա ուրախութեամբ եմ գրիչս ձեռք առնում. պարսկական շարժման վերջաբանը աւելորդ է դարձնում որեւէ արդարացում մեր կողմից:

Յուսով եմ, որ քե՛ր դու եւ թէ բժիշկը աւելի լաւատես դարձած կը լինէ՛ք. եւ մոռացութեան տալով *Միջին չրջանը*, հպարտութեամբ կը յիշէ՛ք եւ կը յիշեցնէ՛ք այն երանելի օրերը, երբ դուք էիք հայհոյում վրէժին՝ նրա պահպանողականութեան, «խոհեմութեան» համար:

Բժիշկը ստացած կը լինի Թարիզից ուղարկած մեր շնորհաւորութիւնները: Շատ կ'ուզեմնայի նման մի շնորհաւորանք էլ քեզ ուղարկել:

Բժշկին ասա, որ ամէն օր նրան յիշում եմ, նոյնիսկ մի քանի անգամ օրը անհրաժեշտաբար, երբ կերակուրը ուտելիս, մտի թելերը բռնում եմ ատամներիս խոռոչները, երբ քթուից կամ տաճից բռնում է ատամիս ցաւը, յիշում եմ, որ մի ժամանակ բժիշկը այստեղ պլումբ էր խոթում, ապահովացնելով ինձ երկար ժամանակով: Մահմադ Ալին էլ այդպիսի յիշողութիւններով հեռացած չլինի՞ բժշկից(1)...

Քո ՌՈՍՏՈՄ

(Ա. Ամուրեան, — «Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ, ԵՓՐԵՄ, ՊԱՐՍՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ», — Ա. հտր., Թեհրան 1976, էջ 181)

(1) *Բժիշկը դոկտ. Յարութիւն Ստեփանեանն է, որ պալատական ատամնաբույժն էր Մահմադ Ալի Շահի. ակնարկն այս առթիւ է: Ա. Ա.*

**ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻՆ (\*)**

1910-11 թուականներին, մի տարի, ինձ վիճակուց բացառիկ բախտ՝ գրեթէ մի յարկի տակ ապրելու Ռոստոմի հետ: Նա կարճում զպրոցական ընդհանուր տեսուչ էր ևւ Հ. Յ. Գ. Բիւրոյի Հայաստանի հատուածի ներկայացուցիչը, թժ. Յ. Տէր-Դաւթեանի հետ: Երբեմն Մշեց գալիս էր թժ. Յ. Զարեանը ևւ բուսական Էրկար մնում մեզ մօտ: Ռոստոմը, թժ. Յ. Տէր-Դաւթեանը, թժ. Յ. Զարեանը, օր. Սաթ. Պարտիզպանեանը (այժմ Տիկ. Տէր-Դաւթեան), Փիլոսոփ ևւ մի զանազանական բնասնիք էինք կազմում՝ համերաջ ու մտերիմ: Այդտեղից սկսում ժտերմութիւնը Ռոստոմի հետ մնաց անազարս մինչև վերջ:

1911 թ. աշնանը, Ռոստոմի կարգադրութեամբ, ևւ մեկնեցի Ամերիկա ստանձնելու համար «Հայրենիք»ի խմբագրութիւնը: Այնուհետև Ռոստոմից ստացել եմ բազմաթիւ նամակներ, որոնց մի փոքր մասը — չգիտեմ ինչ հրաշքով — մնացել է անկորուստ: Ես կարծում եմ օգտակար կը լինի հրատարակութեան տալ այդ նամակները: Նրանք համարեա ամբողջապէս նուիրում են հանրային ինդիւստրի ևւ թէ՛ օրակա պատմական ընդհանուր ներթ, թէ՛ Ռոստոմի կենսագրութեան տեսակէտից անպայման արժէք ևւ ներկայացնում:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

70

22/1 1912

Սիրելի վրացեան,

Երեւի ստացած կը լինես մեր հաւաքական ստորագրութեամբ *Carte-postale*, որ պիտի ուղարկէր քեզ Շաւարշը(1) անցնալ փոստով:

Քո բոլոր նամակները ստացել եմ ժամանակին:

Նախ քան պատասխան գրելս չմոռնամ հարցնել քեզ. թէ ի՞նչ եղան Պարսկ. մասին սեղեկագիրները: Ափսոս եմ, վախեցնում եմ կորչին:

Տխուր եղաւ մեր գործունէութեան փինալը. այսօր այստեղ հասան մի քանի հոգի մուջալիդներից. որ անցել են Բաշկալի վրայով: Գուհարը, Սամսոն Խանը նոյնպէս անցել են: Նրանց հետ եմ մօտ 35 հայ մարտիկներ: Կոռիմ պաշտօնապէս չեմ մասնակցել Թեհրանից (Եփրեմից) եկած հրահանգի համաձայն: Բայց այդ հրահանգը գուցէ կարեւորութիւն չունենար. եթէ չլինէր այն վախը. որ գալիք դժբախտութեան պատճառը կարող էին համարել հայ մարտիկների մասնակցութիւնը: Թէ՛ որու կատաղարութիւնը եւ թէ մոլլաները կարող էին իրենց ձեռքին լաւ զէնք ունենալ հակահայկական հոսանք ստեղծելու համար:

Այս երեկոյ նորից պիտի տեսնուենք. հրաւիրեցի մեր «տունը»: Մէջները կան հին գիւնակիցներից մի-երկու հոգի:

Ձեռնարկել եմք ընտրական նախապատրաստական ժողովների: Ուզում եմք վերընտրել տալ նախկիններին: Հեռագրել եմք, որ վարդգէսը եւ Գարոն շուտով մեր կողմերը անցնին: Ինչ որ քուրդութիւն է նկատում առհասարակ ամէն տեղ: Թուրքերի մէջ պատրաստում են իրիլափը կազմելու: Ինչպէս երեւում է, հայերից մի քանիսը մտնելու են. հաւանական է զազտնի, նրա մէջ: Թէ՛ եւ պէտք է ասած. որ հակառակորդ մասի տրամադրութիւնն է ձայն տալ Գաշնակցութեան քեկնածուներին: Քաղաքական ժողովը արդէն այդ տեսակ որոշում տուել է:

(\*) *Նամակներու այս շարքը (թիւ 70էն 90 ներառեալ) ևւ վերի ծանօթագրութիւնը ստնուած են «ՎիՄ» հանդէսի Գ. տարուան (1935) 3րդ թիւէն (չջ 89-111): Շարքը պահած ենք անփոփոխ, թէ՛ եւ, դէպքերու յաջորդականութենէն դատելով, կը թուի թէ, Թուականի բացակայութեան կամ սխալի հետեւանքով, կարգ մը նամակներ ետ ու առաջ են անցած:*

Հ. Տ.

Լուսկեիչից(2) ստացայ նամակ: Ուղարկել էր եւ հրատարակութիւններ: Կը կա-  
նոնաւորեն:

Եթէ սպորտը որոշ տեղ է բռնում մեր ընկերների գրադամեմբերի մէջ — այդ բա-  
նին եւ շատ ուրախ եմ: Կ'առաջարկէի որ մի քանի հոգի յատկապէս աւերակաճով տար-  
ուէին(3), ոչ թէ սխտեմների վրայ աշխատէին, այլ արդէն գոյութիւն ունեցողների վրայ,  
վարժուէին քոչելու: Մի քանի աւերակաճով ժամանակին մեծ ծառայութիւն կարող են  
մատուցանել: Ընդհանուր ժողովի ժամանակ ուզում էի այդ հարցը դնել, որ մի քանիսը  
լաւ ուսումնասիրէին անքել հետազոտի գործը:

Սպասում ենք Կարմոյ(4) Ուսումնասիրացի կազմուելուն: Պատրաստի 150 դուրբից  
50-60 դուրբ փոխադրեցէք մեզ — արդէն մօտաւորապէս այդքան գումարի պատուէր են ու-  
ղարկել Թիֆլիզ՝ գործիքներ եւ նիւթեր քերել տալու համար: Դա կը լինի սկիզբը մեր քի-  
միական լաբորատորիայի: Մնացած 100 դուրբով ուղարկէք մեզ համար գործիքներ ֆիզի-  
քական կարիքներ համար: Փափաքելի է, որ թէ՛ ֆիզիք. կարիքն էր թէ՛ քիմ. լաբորատո-  
րիան կազմելու ամբողջ ծախսը իրենց վրայ առնէին ամերիկացիք: Ներքակ կը դնեմ ամե-  
նասանհրաժեշտ գործիքների ցանկը: Բայց աւելի լաւ կը լինէր այդ 150 դուրբը ամբողջո-  
վին մեզ ուղարկէին, ապապրանքը Թիֆլիզում անէինք, իսկ ապագային մեծ ապապրանք  
կը բողոքենք մեզ:

Դպրոցը(5) այս տարի շատ լաւ ուսուցչական կազմ ունի. հոստովը, Ղոյինեանը,  
Սերովը, Արսէն Աւետիսեանը, Տերտերեանը, քժ. Սէյիսեանը դասախօսում են կամ ձրի,  
կամ չնչին վարձատրութեամբ: Վերջերս էլ Սիմոն Ազապալեանին քաշեցինք: Յայս ունենք  
հրատիրել նաեւ երկու նոր համալսարանական ուսեր: Ռուբէնը(6) եռամիով է աշխատում:  
Դրա հակառակ Սանասարեանը տակն ու վրայ է լինում:

Սասունի բացառիկ թուի համար մի բան կ'ուղարկեմ. չգիտեմ, թէ երբ պիտի լոյս  
տեսնի այդ թիւը:

Ուրիշ մի քանի բաների մասին էլ պիտի գրէի, բայց մնաց. եթէ անցնեմ երկրորդ  
թերթի, շուտով չեմ վերջացնի: Սրտագին բարեւներս քեզ, Նարինեանին, պատգամաւոր  
ընկերոջ եւ միւս ծանօթներին:

Սաքենիկից շատ բարեւներ:

**ՌՈՍՏՈՄ**

(1) Շաւարշ Միսաքեան, որ «Յատաջ» խմբագիր էր Կարնում: (2) Վ. Լուսկեիչի  
(Աբարատսկի) Սոց. յեղափոխական կուսակցութեան ներկայացուցիչը Փարիզում. Կարնից  
Ամերիկա անցնելիս, Ռոստոմի յանձնարարութեամբ, եւ պայմանաւորուել էի Լուսկեիչի  
հետ, որ Կովկասեան սահմանով սոց.-յեղափոխական գրականութիւն փոխադրենք դէպի Ռո-  
սաստան: (3) Ռոստոմը, իրրեւ յեղափոխական գործի մարդ, շատ մտահոգուած էր մասնա-  
գէտների պատրաստութեամբ եւ երբ դեռ օղակնացութիւնը նախնական վիճակում էր գտնը-  
ւում, արդէն ուշադրութիւն դարձրել էր սոււառնակների կարեւորութեան վրայ, ինչպէս եւ  
անթել հեռագրի: Յաճախ խօսում էր անթելի եւ սոււառնակի վարիչներ պատրաստելու մա-  
սին: Եւ նրա այս խօսքերը յաճախ սրախօսութեան առարկայ էին կազմում ընկերների կող-  
մից: (4) Սոսքը Ամերիկայի Կարնոյ Հայրենակցականի մասին է, որ կազմուեց 1911 թ.: (5)  
Հոփստիմեան Օրիորդաց Վարժարանը, որի հետ մեծ յոյսեր էր կապում Ռոստոմը: (6) Ռու-  
բէն Քալբերունի:

Ս. Վ.

Սիրելի վրացեան,

Պարսկաստանի տեղեկագրերը, ինչպէս նաեւ «Իրօշակ»ի հաւաքածուն վերցրի Ու-  
միկեանների մօտից: Բոլորովին մտառցել էի:

Ինչպէս արդէն տեղեկացած կը լինես, գործերն այստեղ շատ խառնուեցին: Սանա-  
սարեանի խնդրին յաջորդեց առաջնորդինը (հակառակ իմ ջանքերին). սրան էլ կը հետեւի  
ագգային դպրոցների խնդիրը: Երեւի մի կերպ դուրս կը գանք այս խառնաշփոթ վիճակից:  
Հակառակորդները, չնայած իրենց փոքրամասնութեան, աւելի յաջողութիւն են գտնելու.  
Բան սպասում է.— գործնական մարդիկ են. գիտեն օգտուել բոլորից:

Շատ ուրախ եմ, որ Կարմոյ Ուսումնասիրացը յաջողուել է: Նպաստը շատ տեղի  
պիտի հասնի, որովհետեւ մօտ 200 ոսկու բացը ծածկելու ոչ մի հնարաւորութիւն չի լինի.  
Երբ այսքան խնդիրներ են ծագել:

Ընտրութիւնները շատ յաջող անցան: Շարք օրը ճանապարհ դրինք վարդգէսին.  
այսօր էլ — իբր իհասական երեսփոխաններին: Մեծ յոյս ունեմ, որ այս շրջանում մերօր  
աւելի լաւ իրենց ցոյց տան, աւելի հետեւողական կուսակցական լինեն:

Ձեր ողջոյններ այստեղի ընկերների կողմից:

Քո ՌՈՍՏՈՄ

**Սիրելի Սիմոն,**

Ներիր, որ քո նամակներին քիչ եմ պատասխանում եւ ուշ: Յոգնածութիւնն է, թէ  
չգիտեմ ինչն է պատճառը, որ գրիչը ձեռքս եմ առնում թէ չէ, աչքերս ուրիշ բան են փընտ-  
նում, որ նրանով գրադուեմ եւ գրիչս թողնեմ:

Չէքեք դեռ չեն ստացուել. ինչո՞ւ չէիր գրել, թէ ինչ հասցեով են ուղարկուած:  
Լաւ ժամանակին է: Ուսումնական հօրհորդի դէմ (անուղղակի իմ դէմ) ագիտացիա է մղուում  
բիւրոսից դուրս արած ծախսերի առթիւ: Եւ որպէսզի այդ պակասը լրացնել չկարողանանք,  
«ժամի դրանք» վաճառականների կողմից կատարեալ բոլորու է յայտարարուած: Նրանց հա-  
շիւը շատ պարզ է: Որովհետեւ դպրոցների բարեկարգումը անպատճառ պիտի անհրաժեշտ  
դարձնի բիւրոսի յանձնումը, ուրեմն եւ պատճառ պիտի դառնայ իրենց խառնութեան վարձի  
աւելնալուն, աւելի լաւ է դպրոցները պահել հին վիճակի մէջ, կամ իրենց լեզուով՝ «դպ-  
րոցները զգատել դաշնակցականների ձեռքից»:

Եթէ յարմար է քիմիակ. եւ ֆիզիքական գործիքները այդտեղ գնել, աւելի լաւ:  
Միայն ուղարկէք արէյս-կուրսանքը, որ համեմատեմք Գերմանիայի եւ Պետերբուրգի գների  
հետ: Եթէ նոյնիսկ այդտեղից քիչ սուղ ցուտի — ինչ որ չեմ կարծում, — այնուամենայնիւ  
ձեռնարկ է այդ ձեռք. դա կարող է աւելի քաջալերել ամերիկացի մեր երիտասարդ Կար-  
նեցիներին: Ստացուելիք 100 դուրբը կը յանձնեմ Ուսումն. հորհրդին իրրեւ այս տարուայ  
նպաստ: Հաշուեցէք դա արդէն արուած ծախսերի եւ տրուած պատուէրների համար (մօտ  
35 ոսկի — կենդ., բուսաբ. պատկերներ, քիմիակ. գործիքներ, անդամահատութեան հա-  
մար դանակներ, մկրատներ..., մարմնամարզական գործիքներ):

Լաւ եղաւ եւ արհեստանոցի նպաստը: Թէեւ նորից բացել էին եւ նոր վարպետուի  
էին հրատիրել, բայց չատ էին ներում:

Այստեղ էր Պետրոսը, որ եկել էր Թիֆլիսից: Վիճակը լաւ էր նկարագրում: Դա-  
տապարտուածները իրենց լաւ են գգում: Մի քանիսները (վաճառականներից) գուցէ խնդիր  
տան կայսեր: Համոն, Աւետիսը մտադիր են բողոք ներկայացնել Սեմատին: Մնում է մտա-  
ծել բանտարկեալներին եւ նրանց ընտանիքներին օգնել խնդրի մասին: Հարցնում էիր, թէ  
ի՞նչ անեն այդտեղի Կարմիր Խաչի մասնագիտները: Ահա քեզի ստապրէզ — օգնել կովկասի  
(եւ Պարսկաստանի մասամբ) վտանգուածներին:

Սանասարեանների Բնութագրերը վերջացան: Շուտով իբր թէ պիտի սկսուեն դրոշմ-բողի բարեկարգութեան համար ժողովներ: Ինչու քան չի կարու: Մեր դպրոցները կը փակուեն մի ամսից յետոյ: «Խան» շինելու ծրագիրը ընդունուեց. հակառակ բոլոր խոչընդոտներին: Կոմունարը 200 ոսկի եկամուտ կ'աւելանայ: «Հաշի Մուրադ»ը ստացան: Շնորհակալ ենք:

Քա ՌՈՍՏՈՄ

73

27/7 1912

Սիրելի Սիմոն,

Մի անգամ դու հարցրել էիր. քե՛ր ի՞նչ կարող է անել տեղիդ կ' հաշ ընկերութիւնը: Մի գործնական առաջարկ ունեմ: Մեր պտոյտի ժամանակ տեսայ Սեբոսի երկու տղաներին, որոնք սովորում են Ս. Կարապետի դպրոցում. նոյնպէս Հրայրի որդուն: Շատ էին խնդրում զնե՛ր նրանց այնպիսի մի տեղ. որ նրանց հնարաւորութիւն տայ ուսումը շարունակելու: Այդպիսին կարող էր լինել Սանասարեանը. բայց դու արդէն գիտես նրա վիճակը: Գէորգեան ձեմարանի մասին մտածելը ոչ է եւ իմ կարծիքով աննպատակալարմար: Մտածեցի մի բան, — տեղաւորել նրանց Արձնեան դպրոցը: այսօր չէ վաղը պիտի միջնակարգ դառնայ: Մի խումբ կանանց կ'առաջարկեմ իրենց վրայ առնել նրանց ապրուստի եւ այլ ծախսերի հոգը եւ եթէ յաջողուի, — բերել տալ ուրիշ նախաճաշ ընկերների որբերին՝ տղայ եւ աղջիկ. պայմանով, որ Արձնեանը աւարտելուց յետոյ վերադառնան իրենց վայրերը ուսուցչութիւն անելու:

Կարծեմ ձեր կ' հաշը շատ լաւ բան արած կը լինի. եթէ ամսական մի քանի ոսկի յատկացնի այդ նպատակի համար: Առաջարկիր. տես. ինչ կ'ստան: Սպասում եմ պատասխանի: Պտոյտից վերադարձայ եւ քաղաքը շատ խառը տեսայ Սանասարեանի խնդրի պատճառով: Թէ՛ւ յոյս քիչ կայ. բայց պէտք է շարունակել պայքարը:

Առհասարակ թուրքիոյ ընդհանուր վիճակը խառն է: Ընդհանուր գծերով նա զնում է, աւելի ճիշդ — նրան տանում են Պարսկաստանի նամապարհով: Պայքարող սպաները թէ՛ւ ամենալաւ ձգտումներով օժտուած են, բայց չեն զգում, որ իրենց գործունէութիւնը տանում է դէպի պետական մարմնի քայքայումը եւ գործազանցում է արտաքին միջամտութեան հնարաւորութիւնը: Վախեցում եմ, որ պայքարը, եթէ սուր կերպարանք առնի, անիշխանութիւն առաջ բերի հայկական գաւառներում:

Մի երկու օրից մեկնելու եմ Պոլիս: Շատ հաւանական է, որ մնամ տեսչական պաշտօնով այս տարի եւս:

Քա ՌՈՍՏՈՄ

74

10/10 1912

Սիրելի Սիմոն,

Երեւի արդէն կ' Կոմիտէն ստացած կը լինի մանրամասն տեղեկագիրը վաստակաւոր կանի կացութեան մասին: Սարգիսը (Վանի) խոստացաւ այդ բանը անել: Մեր կողմից էլ այսուհետեւ կանոնաւոր լուրեր կը ստանաք. հիմա մի շատ ճշգրտապահ ընկեր ունենք՝ Փար-

174

հատը(1). որը արդէն կարգի է ձգել մեր շրջանի նամակագրութիւնը: Առ այժմ ասեմ միայն, որ դրսի աշխարհում տարածուած սարսափի լուրերը չափազանցութիւններ են, եւ ես անձնապէս համոզուած եմ, որ կոտորած տեղի չի ունենայ: Սրանով չեմ ուզում ասել, որ հայ ժողովուրդը կարողանալու է հանգիստ ապրել եւ դրուել իր առօրեայ աշխատանքին: Եւ ոչ միայն հայ ժողովուրդը, այլ ամբողջ ազգաբնակչութիւնը՝ հայ, բուրք, քիւրդ, կարող է ընկնել անիշխանութեան մէջ: Կառավարական մեխանիզմը վաղուց է թուլացել. աւատականները երես են առել: Առաջիկայ գարնան գուցէ վերադառնան իրանի դէպքերը, նոյնիսկ եթէ պատերազմ ծագելու չլինի Ռուսաստանի հետ: Իսկ եթէ այդ պատերազմը ծագի, երկրի համար, մասնաւորապէս հայ ժողովրդի համար դա կը լինի մի խոշոր չարիք:

Թերթերից իմացած կը լինես Նոր Սանասարեանի բացման մասին: Գործը գլուխ եկաւ հազար ու մի դժուարութիւններով: Ամենամեծ խոչընդոտը այն էր, որ դժուարանում էին խնամակալութեանը անախորժ մի քանի արած լինել: Նիւթականի պատասխանատուութիւնը գրեթէ ինձ վրայ է ծանրացել: Աղամալեանին (2) կը տրուի ամսական Ռուսմական Խորհրդի կողմից միայն այն ժամանակ, երբ կողմնակի հասոյթներով գոցուած կը լինի այս տարուայ բիւդճէի բացը: Հակառակ պարագային ես պիտի տուժեմ:

Այնպէս որ Աղամալեանին վճարել կարողանալու համար պէտք է աշխատեմ, որ ամբողջ բացը գոցուի: Հանգամանակներ համար դիմել եմ զանազան տեղեր: Դիմում եմ եւ քեզ: «Հայրենիք»ի էջերը պէտք է բանաս եւ եթէ մի 100 ոսկի հասցնես, շատ լաւ բան արած կը լինես:

Բացի այն, որ այժմ կարիւր կ'ունենայ կանոնաւոր միջնակարգ վարժարան, խնամակալութեան անբացատրելի կարգադրութեամբ ուսումից զրկուած բոլոր աշակերտները. ա. դասարանից մինչեւ գ-րդը, հնարաւորութիւն կ'ունենան աւարտելու իրենց դասընթացը: Այդ նպատակով էր, որ առանձնապէս աշխատեցի, որ 5-րդ եւ 6-րդ դասարանները անպայման բացուեն: Աշակերտների մի մասը արդէն տեղ է հասել. միւս մասը ճանապարհին է: Ի՞նչ եղաւ փիզիքական Cabinet-ն, որի մասին գրել էի:

Հն. (3) 8-րդ կ'ունենայ այս տարի կանոնաւոր մանկավարժական դասընթաց: Մեր աշակերտուհիներին պիտի միանան Ազգանուէրի ընթացաւարտներից մի երկուսը:

(1) Սարգիս Օհանջանեան — Հին յեղափոխական եւ հասարակական գործիչ: Գոսկան թուականներին աշխատում էր Ատրպատականում Նիկոլ-Դոմեանի եւ ուրիշների հետ: Մասնակցեց պարսկական շարժման եւ ապա՝ միւս ընկերների հետ, անցաւ Պարսկաստան: Մեռաւ 1918 թ. ձմեռը, Երևանում, ուր պաշտօնավարում էր ներքին գործոց նախարարութեան մէջ: (2) Տիրոջ Աղամալեան — բնագիտութեան ուսուցիչ. անցել էր Կարին, ցարական Հայաստանի հետեւանքով: Նահատակուեց Կարսի շրջանում, թուրքական արշաւանքների ժամանակ: (3) Հոփսիսեան վարժարան:

Ս. Վ.

75

14/10 1912

Սիրելի Սիմոն,

Մի շարք առաջ գրել էի նորաբաց Սանասարեանի մասին, խնդրելով «Հայրենիք»ի էջերում հանգանակութիւն բանալ: Յուսով եմ, նամակս ստացած կը լինես: Լաւ կը լինէր այդ առթիւ գրել եւ «Ասպարէզ»ին:

Մոռացել եմ գրել, որ Հրայրի որդին բերել ենք տուել արդէն: Նրան որդեգրել է Ը. Դաբաղեանը: Գրել ենք, որ Սեբոսի տղաներին էլ ուզարկեն: Երեւի շուտով նրանք էլ

175

կու գան: Տեղափոխու եմք նորաբաց Սանասարեանում: Աւոյի որդու ծախքը գուցէ նոյն հաշուին անցկացնենք, եթէ դպրոցի միջոցները անբաւարար լինեն:

Խանգարելու նոր քայլեր են արւում. կառավարութեան միջամտութեանն են դիմել՝ գոյքերը փոխադրել տալու համար:

Գրութիւնը խաղաղ է: Խաղաղ է եւ գաւառներում: Միք Միէն ապաստանել է երեւի Պարսկաստան: Կովկասահայերը «բանի» վրայ են: Ինչ որ դիմումներ են անում: Ապարէզը Առաքելեաններին է մնացել ! Լաւ հոտ չի փչում:

Մնում ենք միշտ այն յոյսով, որ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ պատերազմ չի ծագիլ: Բարդուրիւնների սպառնալիքի տակ առաջ ենք տանում այնուամենայնիւ մեր առօրեայ աշխատանքը: Գպրոցները դեռ կարգի չեն ընկել. նոր շէնքը դեռ պատրաստ չէ: 3-4 օրից յետոյ կը կանոնաւորուեն Հոփսիսիւնանի, Արծնեանի դասընթացները: Կը մնայ խառը վիճակի մէջ Արծնեան մանկապարտէզը եւ նախապատրաստականները: Վարժուհիները (8-րդ լրաց.) աշակերտուելիները լաւ արդիւնք են խոստանում: Այս դասարանով Հոփսիսիւնանը արդէն դառնում է միջնակարգ, 6 դասարանով (երրորդը հաշուելով առաջին):

Սանասարեանում բոլրի են համեմատաբար հայերէնը եւ թուրքերէնը: Վերջինիս համար ուզում ենք հրատարակ Սերովբէի(1). բայց միջոց չկայ: Գարուն(2) ստանձնեց փիզիքի եւ ֆիւզիայի դասերը մինչեւ Ազամալեանի գալը: Ֆիզիքական գործիքները պիտի կարողանա՞ք ուղարկել:

Պոլիս ուզում էի գնել բամբակի ձողեր մեծ բարձրութիւնների վրայով ցատկելու համար, բայց չգտայ. ինձ տուին հասցէ New-York 110 East Twenty-Third st.: Եթէ սեղը ճիշդ է նշանակուած, գնեցէք եւ ուղարկեցէք 2 բամբակի ձող 8 եւ 12 ստֆ երկարութեամբ: Հակառակ պարագային դիմիր հետեւեալ հասցէով՝ Narragansett Machine Compagny, Providence, R. I.

Եթէ մեզ խաղաղ թողնեն, այս տարի շատ բան կայ անելիք:

Քո ՌՈՍՏՈՄ

(1) Սերովբէ Նորասունկեան — Թուրքերէնի հմուտ ուսուցիչ. դաշնակցական լաւ ուժերից: (2) Արմէն Գարս:

Ս. Վ.

16/12 1912

Սիրելի Սիմոն,

Քո 26/11 նամակը ստացայ:

Տեղեկութիւնների մասին էք գանգատում: Ճիշդ է, շատ բան չի արւած, բայց էլի գրուած է: Նախ որ Սարգիսն է (Վանայ) գրել ձեզ մանրամասը վասպուրականի մասին: Երկրորդը իմ ձեռքով է գրուած(1): Ինչպէս երեւում է իմ նամակը ուշադրութեամբ չէք կարդացել. շատ լաւ յիշում եմ, որ նամակի ընդհանուր մասից յետոյ, միւս երեսներում գրել եմ այն բոլոր կէտերը, որ ձեզ հետաքրքրում են: Եթէ նամակս չես պատռել, նորից ա՛ռ, կարդա ուշադրութեամբ

Մեր վիճակը դարձեալ լաւ չէ. դրսի ազդեցիկան, յետադէմների հրապարակ նետուելը լաւ արդիւնքներ չեն խոստանում: Առ այժմ երկիրը խաղաղ է, բայց այդպէս չի մնալ գարնան: Վասպուրականում դրութիւնը լարուած է հիմա էլ: Վալիի ազդութիւնը կատարելապէս վնասակար է: Իբրեւ ֆիրդ մա իրերին նայում է ոչ պետական, այլ քրդական տեսակէտից: Մեր կողմից մեծ պազարիւմութիւն է հարկաւոր: Շատ ուրախացանք, երբ իմացանք, որ Արաքսամը(2) պատրաստակամութիւն է յայտնել վաճառականութեան, բայց վեր-

չերս յայտնուեց, որ հրաժարում է: Վաւանան էլ պիտի կովկաս անցնի ակամջը բժրշկելու համար:

Ռուրէնը նշանակուած է Տարսի կրթական տեսուչ: Ժողովածու հրատարակելու միտքը նոր Սանասարեանի օգտին շատ լաւ է, բայց միւս միջոցները այժաբող չանես.— միակ յոյս մնացել է գրեթէ ձեր խմբակը: Յօդուածները կը հասցնենք ժամանակին, ես էլ խոստանում եմ գրել մի բան: Լուսանկարներն էլ կ'ուղարկուեն:

Սերովբի, Հրայրի երեխաների պէտքերը այստեղի կանանց խումբը կը հոգայ, բայց լաւ կը լինի եթէ կարմիր հաշը նպաստ հասցնի, — նրանց աւելի լաւ կարելի է խնամել եւ բացի այդ, ուրիշ պէտքեր էլ կան:

Մոզական լապտերը ուղարկիր, գործածելու եղանակի հրահանգների հետ միասին: Գպրոցական գործերը շատ լաւ կը գնային, եթէ մաղազանների խնդիրը չլինէր: Ուսուցչական կազմը անցեալից աւելի լաւ է: Շատ բարեխիղճ եւ ձեռնհաս է Տիգրան Աղա-մալեանը: Աշակերտները գգում եւ խոստովանում են տարբերութիւնը: Քո աշակերտուելիները սրտով են պարապում: Լրացուցիչ դասարանը դառաւ կանոնաւոր դասարան մօտ 30 ժամ դասերով: Սկսել են արդէն դասեր տալ ստորին կարգերում:

Այսօր ծնողների ժողով կայ դպրոցների ընդհ. վիճակի մասին խորհրդակցելու համար: «Միութիւնը»(3) շարունակում է առաջուայ պէս: Միայն տուգանքներն են սպառնում խեղդել: Ինձանից չափազանց դժգոհ են, որ պատճառ դարձայ քո այստեղից հեռանալուն:

Ջերմ ողջոյններով՝

Քո ՌՈՍՏՈՄ

(1) Գաղտնի թանաքով գրուած նամակ էր. սկզբում գլխի չընկայ այդ մասին եւ չբացի. յետոյ միայն կարողացայ կարդալ: (2) Ա. Գիւլիսանդանեան, որ վաւանանին էլ խոստացել էր Թուրքիա տեղափոխուել, բայց ի վիճակի չեղաւ այդ խոստումը իրականացնել: (3) Երիտասարդական Միութիւնը, որ հոգում էր «Յառաջ»ի հրատարակութեան ծախքը: Ս. Վ.

23/12 1912

Սիրելի Սիմոն,

Ներփակ կը գտնես տեղեկութիւններ երկրի կացութեան վերաբերեալ: Որը յարմար կը դատես թերթի մէջ տպել՝ տուր: Գրողը մեր ընկեր Ս. Օհանջանեանն է: Նա կը գրէ կանոնաւորապէս, ամէն շաբաթ: Կարծեմ, որ գոհ կը մնաս նրա քրդակցութիւններից:

Ամսական նրան յատկացրէք 3-4 ոսկի, — որքան կը ներքն ձեր միջոցները:

Կ'ուղարկի եւ ուրիշ միւթեր:

Քո ՌՈՍՏՈՄ

27/1 1913, Կարին

Սիրելի Սիմոն,

1/14 ք. նամակդ ստացել եմ:

Շատ ուրախ եմ, որ վերջապէս նամակս կարողացել էք հասկանալ: Երբ քո խոս-

տացած ընդարձակ նամակը ստացուի, նույնպես ընդարձակ կը պատասխանեմ: Առ այժմ ասեմ հետեւեալը:

Մեր շքանք ուսումնական տեսակետից գիտես, որ շատ յետ է: Առանձին կրթասիրացները կարող են մեծ գործ տեսնել: Մենք էլ ոչ մի աջակցութիւն չենք խնայիլ:

Հաւախ(1) մասին երէ բան իմանամ, կը հաղորդեմ:

Վարանդեանի եւ ընկ. խիստ ոգեւորութիւնը կարող է հիասքափում առաջ բերել: Մերոնք շեղուել են մեր ճանապարհից եւ գնում են հին հոսանքի պոչից: Մեր եւ թուրքերի համեմատելիութիւնը միշտ պիտի հաստատուն մնար, բայց, դէ՛հ, ո՞ւմն է մեղքը(2):

Բացառիկ բուի համար պատրաստուած են եւ պատրաստում են լուսանկարներ՝ ուսուցիչների, աշակերտների (մարմնամ., բուրգեր), աշակերտուհիների, տեսարանների եւ այլն...: Մարտը արդէն ուղարկել է մէկը: Սարգիսը գրել է իր յիշողութիւնները. այս փոստով կը ստանա: Եթէ երկար համարես, բաց. բուի համար, առաջին մասից կարող ես հանել: Ուղարկում է նաեւ թղթակց. Հայրենիքի համար, 2 քարգումուքիւնները՝ առանձին բրոշիտով կրատարակելու համար: Նրան հասնելի՛ք դրամները որքան շուտ եւ որքան շատ ուղարկես, այնքան լաւ կը լինի:

Ես էլ եմ ուզում մի բան պատրաստել... բայց չգիտեմ, կարող պիտի լինե՞մ հասցնել:

100 դրամը չստացուեց: Տագնապի մէջ ենք: Այնուամենայնիւ գործը գնում է:

Քո ՌՈՍՏՈՎ

(1) Ամերիկայի Հաւաքիչները որոշ գումար էին յատկացրել իրենց հայրենիքի ինքնապաշտպանութեան համար. գէնքի հայթայթումն ու փոխադրութիւնը ինչ որ զժուարութիւնների էր հանդիպում: Այդ մասին բանակցութիւններ էին սկսուած Հ. Յ. Գ. Բերդի հետ: Ռոստովը մասնաւոր կարեւորութիւն էր տալիս ինքնապաշտպանութեան համար կատարուած գործնական աշխատանքներին: (2) Ռոստովը շատ զժգո՛հ էր մեր եւրոպական պրոպագանդից, որ հակաթուրք զբոսնէ ձեւով էր տարւում: Նա գտնում էր, որ կուսակցութիւնը իր բոլոր արտայայտութիւններով պէտք է կանգնած լինի Օսմանեան պետականութեան հողի վրայ:

12/2 1913

Սիրելի Սիմոն,

1/7 ք. նամակդ ստացայ 40 օր յետոյ !

Ինչպէս տեսնում ես, նամակագրութեան գործը կանոնաւորուել է: Սարգիսը կը շարունակէ ամէն շաբաթ գրել:

Պ. Արսէնը անցեալ փոստով ուղարկել է մի յողում Սանա. անցեալի եւ ներկայի մասին: Գծքախտաբար, չգիտեմ, ինչ է գրել:

Ուղարկուած 7 լուսանկարները ստացած կը լինես: Այսօր ուղարկում ենք դարձեալ 5 հատ: Պատրաստում են ուրիշներն էլ:

Համերգը, յոյսով եմ, արդէն կատարուած կը լինի: Դրամը կը յատկացնեմ Ազամայեանի ամսականների հաշուին:

Աշակերտների համար ուղարկած չէ՛ք ստացայ: Սանուհիներից մէկը՝ Էրամնեանն ամուսնացել է: Մէկ ոսկի տուի վէճմեանին, միւսը — փոքրիկ Արծնեանին: Մնում է մօտս 1 ոսկի եւ 25 դր.: Դրա համար էլ մէկին կը գտնեմ:

Մխիթարական երեսույթ՝ առաջուամ նման չէր, որ վրայ պրծնէին դրամի ձայնը լսելով: Մեծ զժուարութեամբ ընդունեցին:

Ստացայ նաեւ Ռուսումնասիրացի 20 ոսկու չէ՛ք: Առաջիկայ փոստին կը գրեմ վարչութեան:

Քիմիկոս բարեկամիդ ասա, որ իր սասմ նիւրը Silicate de soude է: Գա է, որ գործ է անում ամենայն օգտանքի համար: Թող ստուգի եւ տեսնի, այդ չէ՞ արդեօք:

Հաւախ դրամը ստացայ: ձեւայեանին հրախրում ենք այստեղ՝ կանոնաորելու համար այդ գործը:

Քո ՌՈՍՏՈՎ

24/2 1913

Սիրելի Սիմոն,

Հին եւ նոր մեղքերս քառում եմ նրանով, որ այս գիշեր ժամը 1ին տուն վերադառնալով, ամբողջ գիշերը աշխատել եմ: Խնդրեմ արտագրիր եւ սրբագրիր(1): Առաջիկայ շաբաթը մի փոքրիկ բան էլ կ'ուղարկեմ՝ այս կողմերի կրթական գործին վերաբերեալ:

Կ'ուղարկեմ նաեւ նոր լուսանկարներ, եթէ հասնեն:

Կարելի է պահանջել ժընեւից Մարտիրոսի, Կարոյի եւ Սերոյի լուսանկարները բացառիկ բուի մէջ դնելու համար:

Քո ՌՈՍՏՈՎ

(1) «Նոր Սանասարեան»ին նուիրում «Հայրենիք»ի բացառիկ թուի համար ուղարկում յօդուածն է սկիսարկում: «Բացառիկ»ը լոյս տեսաւ 1914 թ. սկիզբը: Ռոստովը գրել էր առել մի գրուած Պարսկաստանի պատագրական շարժումներից՝ Մարտիրոսի, Կարոյի եւ Սեթոյի մասը: Գրուածքը հրատարակուեց «Հինգ տարի առաջ» վերնագրով եւ Ականատես ստորագրութեամբ: Բացառիկ նոյն համարում տպուած են Ս. Չաւարեանի «Յիշողութիւններ ութսունական թուականներից» եւ Արմէն Գարոյի «Սննստովկեցի օրերէն մէկը» յուշերը:

Ս. Վ.

9/3 1913

Սիրելի Սիմոն,

Այսօր փոստով ուղարկուելու է Ռու. Խորհրդի կողմից շնորհակալութեան մի գիր կարնոյ Ռուսումնասիրաց Ընկերութեան: Այնտեղ կան մի քանի տեղեկութիւններ Հոկոս. դպրոցի մասին: Կարող ես նրանցից օգտուել բացառիկ բուի համար, եթէ միայն ուշ չէ:

Անցեալ անգամ ուղարկած յիշողութիւնս ստացած կը լինես:

Գլուխս շատ է խառ, մանաւանդ այս օրերին: Յրգ ամիսն է, որ ամսականներ չեն տրուում: Մարմինները նոր կազմուեցին եւ նոր են կպել գործի: Ուսուցչ. ժողովը որոշեց դասադուլի դիմել, եթէ մինչեւ երկուշաբթի ամսականները չտրուին: Քաղաքական, քաղական ժողովները այսօր արտակարգ ճիգեր քափեցին եւ հազիւ հաւաքեցին մաղազանքից 53 ոսկի ! Զգիտեմ մնացածը ինչպէս պիտի լրացնեն:

Նոր Ռուսում. Խորհուրդը տաք է կպել: Բայց հաշիւները սաստիկ խնդրուած են. յայտնի չէ, թէ ուր է վերջանում քաղականինը, ուր է սկսում Ռուսումնականինը, ինչպէ՛ս պիտի ճշդել Նոր Սանասարեանին ծախքերը, միւս դպրոցների այս տարուայ եւ անցեալ տարուայ հաշիւները: Սրան աւելացրու իմ եւ Ռուսումնական Խորհրդի միջեւ համաձայնութիւնը Ազամայեանի ամսականների մասին: Այս բոլորը աչքի առաջ ունենալով, լաւ կը լի-

ճէր, երբ գալիք նպաստները չուղարկուէին բացառապէս Նոր Սանասարեանի անուամբ, այլ ընդհանրապէս դպրոցներին: Իսկ երբ այդ ձեւակաւորէն անյարմար կը լինի, եղած յայտաբարութիւններն պատճառով, ուղարկել «Նոր-Սանասարեանի պետքերի համար», բայց բաշխման կերպը բողոքել, երբ խորը չքուի այս խօսքը, — իմ հայեցողութեան:

Գուցէ կարելի լինի կազմուելիք հանդէսի հասոյթը յատկացնել ընդհանրապէս դըպրոցներու պետքերին:

Պատեալով ռուս նստեց մեր վրայ: Ստիպուած ենք սեղմուել ամէն կողմից: Նեղ պարագաները բնականօրէն անդրադարձել են նրանց վրայ, որոնք սովոր են եղել յաջողութիւն գտնել՝ աննշան հիգիեր քափելով: Բայց սրա հակառակ՝ ուրիշերի մէջ էլ նկատուած է եռանդի կրկնապատկում: Նուազ նշանակութիւն չունի նաեւ արդի քաղաքական տարտամութիւնը: Հին ուղիով գնալ չի լինում. նորի մէջ տէրը մեծ է չեմք կարող լինել:

Սպասեմք, տեսնեմք:

Քո ՌՈՍՏՈՄ

Սիրելի Սիմոն,

Թէ Աստուած սիրես, բացառիկ համարք ամառուան չձգես(1). ամէն կերպ աշխատիր, որ մինչեւ արձակուրդները (մինչեւ Յունիսի սկիզբը) անպատճառ ստացուեն փողերը: Թէ չէ խայտառակ վիճակ կը ստեղծուի: Ես նոյնիսկ մտադիր էի խնդրելու յանձնարարին, որ ապագայ վիճակահանութեան հաշուին էլ մի քան այս տարի հասցնէիք: Չես կարող երեւակայել, թէ ինչ է այս տարուայ մեր դրութիւնը:

Ինչ ուզում ես, կ'անեմ. նոր յօդուած կ'ուղարկեմ, լուսանկարս էլ կ'ուղարկեմ, միայն թէ բացառիկ թիւը չուշանայ:

Միւս խնդիրներին մասին յետոյ կը գրեմ: Շտապում եմ դպրոց. փոքրիկները այսօր հանդէս ունեն: Ասպարէզը հիմա նրանցն է:

Քո ՌՈՍՏՈՄ

(1) «Նոր Սանասարեան»ին նուիրուած բացառիկ պէտք է լոյս տեսնէր 1913 թ. դարձանք, բայց խմբագրութեան թափած բոլոր ջանքերն ապարդիւն անցան՝ ժամանակին չիւթ ստանալու համար: Հազիւ կարելի եղաւ լոյս ընծայել 1914 թ. սկիզբը:

Ս. Վ.

Սիրելի Սիմոն,

Ուղարկում եմ Գարոյի(1) մի պատմութեան: Ազամանդ է, որ պետք է յղել, բրիւլիանտ դարձնել:

Կարծեմ, որ արդէն առատ ճիւղ ունիս: Տպագրութիւնը չուշացնես:

Քո ՌՈՍՏՈՄ

(1) Արմէն Գարոյի գրի առած մէկ դրուագը Բանկ Օթոմանի դէպքի օրերից: Հրատարակուած է «Նոր Սանասարեան»ին նուիրուած բացառիկ «Հայրենիք»ում:

Ս. Վ.

Սիրելի Սիմոն,

Այսօր ուղարկում եմ դարձեալ 5 պատկեր(\*): Կարծեմ, որ բաւական է: Ել պակաս բան չես ունենալ:

Սպասում եմ, ուրեմն, դրամի:

Այսօր լսարան ունեցանք արտագաղթի առիւ: Յորդորներ թէեւ չեն օգնիլ, բայց եւ այնպէս գուցէ քիչ մեղմացնեն հոսանքը:

Կարող է նշանակութիւն ունենալ այդտեղի պանդուխտների վիճակի նկարագրութիւնը: Կարող է ազդու փաստեր տալ, մանաւանդ անգործութեան եւ դրամից առաջ եկած աղէտների մասին, կարեւոր փաստեր նաեւ իսլամ պանդուխտների վերաբերեալ:

Ընկերներին յայտնիր, որ իրենց արտայայտած փափաքի համաձայն գործ առաջարկեցինք Թովմասին(1), բայց նա, հակառակ կրկնակի մեր դիմումներին, միշտ ձգձգել է եւ մինչեւ հիմա ոչ մի գործի չի կապել: Վերջերս խնդրեցինք գալ այստեղ ձեր վերջին յանձնարարութեան համար, բայց չեկաւ:

Այնուամենայնիւ ուրիշի միջոցով հնարաւոր ենք տեսնում գործը գլուխ բերել:

Մարգսի դրամը չուշացնես: Կարող է պատահել, որ շուտով հեռանայ մեր քաղաքից: Մտադրութիւն կայ կովկաս անցնելու: Ես էլ յանդգնութիւն ունեմ այդ մասին մըտածելու:

Գարոյի գրութիւնը ստացած կը լինես: Լաւ պէտք է կոկես, ճիւղը շատ լաւ է:

Քո ՌՈՍՏՈՄ

(\*) Այս ամէս սրանով ուղարկուած է մօտ 10 Հատ:

(1) Թովմաս Ճէլալեան — Ամերիկայի գործօն դաշնակցականներին, որ վերադարձել էր իր ծննդավայրը՝ Բալու, երկրում աշխատելու համար: Չոհ դնաց ընդհանուր եղեռնին:

Ս. Վ.

Սիրելի Սիմոն,

Մի շաբաթ առաջ գրած նամակս ստացած կը լինես: Անցեալ փոստին ստացայ 8/5 նամակդ:

Լաւ չեղաւ, որ ուշացաւ «Բացառիկը»: Ամբողջ յոյսս նրա վրայ էր: Դրա պատճառով տակն ու վրայ են լինում ուսուցչ. ամբողջ կազմի ամսականները: Ստիպուած կը լինեմ պարտք անել: Բայց ո՞ւր դիմեմ:

Քանի որ ուշանում է, որքան կ'ուզեմայի աչքի անցընել իմ յօդուածը: Յամենայն դէպս վերջին մասը եթէ հանես, վատ չի լինիլ(1):

Մեր վիճակը այնքան էլ գէշ չէ, ինչպէս ներկայացնում են: Մի տեսակ սպասողական դրութիւն է. «Ազգային» գործերը կանգ են առել: Ներքին ստիպուել չկայ: Ամէն ինչ գընում է ինքնաբոյնով, եթէ միայն գնում է: Կարծում եմ, որ առաջիկայ տարին սքափում կը լինի:

Փիլոսոփ այս փոստով պիտի գրէր: Կազմակերպական կեանքից տեղեկութիւններ տալը նրա վրայ կը դնենք:

Կովկասում երկու տեսակ հոսանք է նկատուում: Որոշ մասի յոյսը ուսու կառավարութեան միջամտութեան վրայ է, եւ այդ պատճառով ոչինչ չի ուզում անել: Աւելի ճիշդն ասած՝ յոյսը կառավարութեան վրայ է դնում, իր կողմից ոչ մի բան չանելու համար: Բայց կան եւ այնպիսիները, որոնք յուրք են կայում գործին:

Լու է, որ Սնարեանը մնաց: Խօսում էր չէմբիլի մասին. կարծեմ գրել էի, որ նա Ամերիկայի համար շատ օգտակար կարող է լինել, միայն թէ Ամերիկան նրա համար ազատարներ կը լինի: Նրա բնատրութեան մէջ կայ բերք, մակերեսային վերաբերում դէպի աշխատանք: Իսկ ձեր դասախօսութիւնները, ճառերը, ժողովները բոլորովին կը մեռնեն նրա մէջ յուրք աշխատանքի ոգին:

Սինիի մասին ես գրած եղել Պոլիս(2):

Ռուբէնը մեզ մօտ է այժմ: Գուցէ շուտով դէպի Մուշ գնայ: Ճէլայեանը յայտնել է, որ շուտով այստեղ կը լինի:

Քո ՌՈՍՏՈՄ

(1) «Նոր-Ստանասթան»ին նուիրուած Բացառիկում տպուած յօդուածի վերջին մասում խորհրդածութիւններ կային գաշնակցական ընկերակառուութեան մասին. տպուէց անփոփոխ: (2) Խօսքը երաժշտագէտ Գ. Սինիի մասին է: 1911 թ. նա արտաբուռել էր Դաշնակցութեան շարքերից անբարոյական վարք ու բարբի պատճառով: Նրա դէմ եղած ամբաստանութիւնները ճնշութիւնը Բիւրոյի կողմից ինձ էր յանձնուած: Պոլսէն Կարին անցնելիս ես երկու շաբաթ զբոսաւորեցի այդ գործով: Իմ ներկայացրած ճնշական նիւթի վրայ չիմուած՝ գտաւական մարմինը նրան վտարեց կուսակցութիւնից: Այնուհետեւ, մի քանի տարի, Սինիին իրեն համեմատարար լուս պահեց. եւ իր թախանձագին ազատամտութիւն վրայ՝ ես թուրքութիւնն ունեցող զիմելու Բիւրոյին, որ պատիժը բաւ համարուի եւ նորից հնարաւորութիւն տարի նրան աշխատելու կուսակցութեան մէջ: Բարեբախտաբար, Բիւրոն ընդհանր չդնաց իմ զիմումին: Հետագայ զկարգերը ցոյց տուին, որ նա արժանի չէր նման ներդրումութեան. Սինիին գործակալ դարձաւ Կարնոյ սուս հիւպատոսի ձեռքին, դաւեց իր ընկերները դէմ, գեղծումներ կատարեց եւ նորից ու նորից Դաշնակցութեան դուրը ապարդիւն բախելուց յետոյ՝ զնաց ընկաւ բոլշեւիկները զերկը:

Ս. Վ.

86

11/8 1913

Սիրելի Սիմոն,

Վազուց է քեզ ոչինչ չեմ գրել: Ասեմք քեզանից էլ բան չեմ ստացել: Մեր ճանապարհորդութիւնը այս տարի աւելի յաջող անցաւ: Ափսոս միայն, որ Ս. Կարապետի եւ Աշտիշատի հանդէսներին չհասան Կովկասի մեր ընկերները: Նրանք ուշ հասան, բայց եւ այնպէս գոն մնացին իրենց տեսած ու լսածով:

Մի ժողովի մէջ, ուր ներկայ էին զանազան գաւառներից ընկերներ, որոշուեց ամէն տարի վարդավառի օրը համախմբուել Ս. Կարապետում: Պիտի աշխատենք վերականգնել Նաասարդեան տոները խաղերով, մրցումներով: Եթէ ուրիշ տեղեր էլ մարմնամարզական խմբեր կազմուեն եւ ներկայանան հանդէսին, տոնը առանձին փայլ կը ստանայ: Մտադրութիւն կայ նաեւ այդ օրերը կազմել ուսուցչական համագումարներ՝ ընդհանուր մի ուղղութիւն տալու համար զպրոցական գործին:

182

Բացի այդ, եթէ հնարուր լինի, պիտի կազմենք ընկերական հաւաքոյթներ՝ իրարու լուսակառու համար:

Յոյս ունենք առաջիկայ տարին ունեալ մեծ բազմութիւն կովկասից եւ ուրիշ վայրերից: Գուցէ Պոլսից էլ ուղենան գալ... (1):

Այժմ այստեղ ենք: Կովկասի ընկերները (Նիկ. Արքայեան, Սիրաբ Գրիգորեան, Արշակ Ջամբ. Արա. Բարապետ) կը մնան մինչեւ Օգ. 25: Տեղի պիտի ունենայ առաջին Ընդի. ժողովը երկրի մէջ: Կաշխատենք, որ դա լինի պատմական մի ժողով: Միայն թէ պատգաւորները ժամանակին հասնէին:

Ընկերները նպատակաւարմար են համարում, որ այս տարի Պոլիս փոխադրուեմ: Տեսնենք, թէ ինչ կը լինի վերջնական որոշումը: Հաւանական է, որ փոխադրուեմ: Այդ պարագային Սիմոնը պէտք է որ այստեղ մնայ:

Նոր-Ստանասթանը կը բացուի: Չգիտեմ, կարցրել եմ քեզ արդեօք 1.100 դոլ. նրպատի մասին: Այդ գումարին ապահովելով է, որ մեզ վրայ ենք առել դպրոցի պահպանութիւնը, նախկին բիւրոնով: Հիմա վախում եմ, չիմի թէ որեւէ արգելք առաջ գայ: Թէ Աստուած սիրես, — նամակով ոչ կը լինի, — հեռագրով յայտնիր՝ կարելի է արդեօք հաստատապէս յոյս դնել: Եթէ այս կամ ոչ, խնդրեմ հեռագրես՝ միայն 3 խօսքով՝

Erzeroum, Rostomian, oui կամ non.

Մեր «բանտարկութեան»(2) մասին արդէն լսած կը լինես: Չոր դիտարորդութիւն չկար. խամութեան արդիւնք էր: Քաղաք բերին քաղաքակարի կերպով: Ժանդարմների մէջ պահեցին մօտ 2 ժամ, մինչեւ միւրեւարիքի գալը: Հետեւեալ օրը եկաւ ինքը առաջնորդարան մեզ այցելութիւն տալու:

Ժողովրդի վիճակը ընդհանրապէս լու է: Տեսեալանք աւելի բարձրացել է: Ապահովութիւն կայ այն վայրերում, ուր ժողովրդի մօտ կան ինքնապաշտպանութեան միջոցներ: Սնունդը, մաքրութիւնը աչի է գարնում: Բաւական է աւել, որ ոչիւնների քիւր գգալապէս պակասել է: Ոչիւր մեր երկրում, իմ կարծիքով, պիտի նկատել ամենալաւ չափանիշը տեսեսութեան բարոյութեան:

Աշակերտները, բոլոր 12 հոգի, աւելի հասակաւոր քան անցեալ տարի. յաջողութեամբ դուրս եկան: Եղաւ օր, որ ամբողջ 13 ժամ քաղցինք:

Այսորժակը չգրգռուեց:

Քո ՌՈՍՏՈՄ

Ապասելու ենք հեռագրիդ:

(1) Բազմակար ցոյց է տալիս Ռոստոմի թերահաւատութիւնը: Առհասարակ, նա չափազանց դժգոհ էր «պոլսեցիներէ» եւ «երոզոպոլսեցիներէ» երկրի հանդէպ ցոյց տուած վերաբերումից: 1914 թ. Ընդհանուր ժողովի ժամանակ նա բոլոր վրդովումով էր խօսում այն ընկերների մասին, որոնք, վախճալով երկրի կեանքի պայմաններից, Նոյնիսկ մերժել էին Ընդհանուր ժողովի գալ: (2) Ռոստոմի պատմած միջոցակար արտասահմանում չափազանցուած ձեւերով էր ներկայացուած եւ քաղաքական գոյն էր ստացած: Աւելի հաւանական է, սակայն, որ բանտարկութիւնը «թիրիմացութեան» արդիւնք չէր, այլ որոշ նպատակ էր հետապնդում:

Ս. Վ.

87

14/8 1913

Սիրելի Սիմոն,

Շնորհաւորում եմ «Հայրենիք»ի երկօրեայ դառնալը: Ուրեմն, դրանով որոշուած է երեսում եւ մի ուրիշ բան — քո այդտեղ մնալը:

183

Վաղը չէ միւս օրը մեր քարտեզը ճանապարհ է ընկնում դէպի Ս. Կարապետ: 1500ամ-  
եակի տօնը շատ անշուք կ'անցնի: Մեր սպասածը չեղաւ: Ծովեզերքից, Պոլսից մարդ չչարժ-  
ուեց: Թիֆլիսից աւելի մեծ յոյս ունէի — գրել էին, որ պատրաստուած են մեծ խմբով՝  
ճանապարհի ընկնել, բայց այդտեղից էլ ձայն դուրս չեկաւ: Երեւի դարձեալ մենք ու մենք  
ենք մնալու: Աշխատեցի երապուրել հեռաուղիներին հին ու նոր պատմական յիշատակարան-  
ներով: Հայաստանի փառունայի աչքի ընկնող ներկայացուցիչներին՝ ոչիլներին մասին, ի հար-  
կէ. ձայն ծագում չհանեցի. բայց ոչիմէ, ինչպէս երեսում է, չօգնեց:

Երեւի մի տարի եւս պիտի մնամ Նոր-Սանասարեանի գոյութիւնը շարունակելու  
համար:

Բայց, յանկարծ, խայտառակ կացութիւն չստեղծուի. 1,100 դուրսի խնդիրը ապա-  
հա՞վ է: Եթէ ոչ, թէ Աստուած սիրես, շուտով յայտնիր. թէկուզ հեռագրով, որ բեռի տակ  
չմտնեմ: Այս տարի առանց այն էլ հոգիս ելաւ: Երեւ խօսքով կարելի է յայտնել՝ Erzeroum,  
Rostomian, oui ou non.

Ի միջի այլոց, փորձեր եղա՞ն Ֆրէզուոյի կողմը գտնուող Կարնեցիներին կապելու:  
Զի՞ կարելի այդ մասին դիմել «Ասպարէզ»ին եւ տեղական դաշնակցական մարմիններին:  
Տեղեկագիրը երբ պատրաստ լինի, մի օրինակ կ'ուղարկեմ ձեր դպրոցասիրացիներ:

Քա ՌՈՍՏՈՄ

20/10 1913

Սիրելի Սիմոն,

Նամակդ ձեռնիս տակ չէ, որ բոլոր կէտերին պատասխանեմ:

Ճիշդ ասաց, չեմ յիշում, որ նախորդ նամակներդ մէջ բան եւ գրած եղել գալուզ  
մասին: Եթէ կարծիք չեմ յայտնել, դրա պատճառը յամենայն դէպս, այն չէ, որ խոյս եմ  
տուել հարցիդ պատասխանելուց: Ընդհակառակը կ'ասեմ, — իմ կարծիքով՝ քա այդ կող-  
մերն անցնելը աներաժեշտութիւն է: Գործող ուժերը աւելի քան անբաւարար են: Եղածների  
մի մասը քայքայուած էութիւններ են, կարօտ հանգստի:

Մասնաւորապէս ինձ գալով՝ անկարելի բան է, որ այլեւս կարին մնամ: Արդէն ժո-  
ղովում դրուած եւ որոշուած էր, որ հեռանամ Պոլիս կամ Ժընեւ: Միայն ուժերի չափազանց  
անբաւարարութեան խնդիրն էր, որ ստիպեց ինձ մի տարի եւս մնալ: Սիմոնն էլ չկայ ! ...  
Աչքի առաջ ունեցիր, որ ընկերների մի մասը պնդում է, որ տարուայ կէսից թողնեմ կա-  
րինը եւ տեղափոխուեմ Պոլիս:

Յայտնիր ընկերներին երկրի պահանջի մասին. գտէ՛ք մարդիկ՝ տեղիդ գործերը վա-  
րելու համար. վերադարձիր Եւրոպա, հանգստացիր, որքան հարկ կը համարես եւ ապա  
քայքայու ուղիդ դէպի մեր կողմերը:

Ընկերները շատ ուրախացան իմանալով մտադրութեանդ մասին. կարծեմ քեզ պիտի  
գրեն: Պարզ բան է, որ գործելավայրդ յետոյ կ'որոշուի:

Կ. Կոմիտէին պիտի գրէի՞նք: Եթէ չկարողացայ եւ ինքս անել, Փիլոսը անպատճառ  
կը գրի: Մօտ մի ամիս է, ինչ բացակայ է: Գնացել էր մեր կողմից պատգամաւոր Սիմոնի  
թղթով:

Մասնաւորապէս պիտի խնդրէի ընկերներին (գոյցի) վերապահութեամբ ընդունել  
Քղից եկած լուրերը: Ինչ որ անախորժ բաներ են կատարուած: Երեւի նրանց հետ ստիպ-  
ուած լինենք յարաբերութիւններս խզել, մինչեւ չիւրացնեն կազմակերպութեան ոգին եւ  
մինչեւ չթողնեն ծուռ ու մուռ ճանապարհները:

Ռուբէնից լաւ լուրեր ենք ստանում: Գոհ է իր վայրից:

Մեզ գրադեցնող խնդիրը — ընտրութիւններն են:

«Բացառիկը» շտապեցրաւ:

Քա ՌՈՍՏՈՄ

1913ի վերջը

Սիրելի Սիմոն

Ամէն փոստի սպասում եմ դրամի. — չէ՞ որ ներկայացումից անմիջապէս յետոյ պի-  
տի դրամները ուղարկելիք, — բայց ոչ փող կայ, ոչ էլ նամակ:

Սարգիսն էլ չստացաւ իր հոնորարը: Որովհետեւ ստիպուած էր գնալու, պարտք  
արեց եւ այնպէս գնաց:

Նրանից յետոյ նամակագրութիւնը եւ թղթակցութիւնը կը շարունակի Փիլոսը: Այն-  
պէս արա, որ ամսական գոնէ 3 լ. բաժին հասնի նրան:

Այժմ նա երգնկա է: Գնացել է ռուբի պայթման պարագաները քննելու և անմեղ բան-  
տարկեալների ազատելու մասին հարկ եղած դիմումներն անելու: Ինչպէս երէկ իմացանք  
նրա հեռագրից, 10 հոգի ազատուած են. մնացել են բանտում 3 հոգի:

Ռուբէնը եկաւ: Առայժմ մեզ մօտ կը մնայ: Յետոյ հաւանական է, Մուշ գնայ:  
Խնչ եղաւ բացառիկը: Տարին վերջանում է: Տպագրութիւնը սկսուե՞ց թէ ոչ: Չես  
կարող երեսակայել, թէ որքան ծանր անցաւ այս տարին:

Թրքական «Գարունը» իր նշաններն է սկսում ցոյց տալ: Ժանդարմներ եկան, 400  
հոգի, կէսը վանի, կէսը Բաղէշի վիլայէթների համար: Այդ երկու նահանգների վալիները  
հռահրուն եւ աշխատող մարդիկ են: Այստեղով անցան նաեւ Իթքիհադի պատուիրակները:  
Խոստումներ շատ են արոււմ, բայց այս անգամ յոյս կայ, որ աւելի իրագործուեն:

Ռուսաստանից լաւ լուրեր են գալիս: Լըժիւնի մտաւոր խանգարումը բաւական դժ-  
բ է խաղում: Սկսել են թեթեւցնել մերոնց վիճակը: 20 տարուայ ախորը իջեցրել են 4 տա-  
րու: Համոյի տաժանակիր աշխատանքը փոխել են ախորի: Արտասահմանում ապաստան-  
ուածներին թէեւ դատի կ'ենթարկեն, բայց թեթեւ կը վերաբերուեն:

Թովմասը լուր է ուղարկել, որ երկու շաբաթից այստեղ կը լինի: Մեր հեռագիրը  
եւ նամակը ստացած չի եղել: Յուսով ենք նրա գալով. այնտեղի խնդիրները կարգի բերել:

Քա ՌՈՍՏՈՄ

5/9 1914

Սիրելի Սիմոն,

Շնորհաւոր Նոր-Տարի: Բաց-գիրք ստացայ, շնորհակալ եմ:  
Շնորհակալութիւններ նաեւ Արտաշէսի (1), Փիլոսի եւ քա «սանամայր» տիկ. վար-  
սենիկի(2) կողմից, որոնք այս բուպէիս ներկայ չեն:

Այս գիշեր մի լաւ երազ տեսայ. «Բացառիկը» արդէն հրատարակուել էր, խոստաց-  
ուած 100 ոսկին ստացել էի, հին պարտքերը վճարել, նոր պէտքերին գոհացում տուել: Ինչ  
լաւ բան է եղել երազը:

Քա ՌՈՍՏՈՄ

(1) Արտաշէս Գաւաֆեան — ուսուցիչ, Կարնոյ աչքի ընկնող դաշնակցականներից,  
«Յառաջ»ի մերձաւոր աշխատակից: Չուն զնաց ընդհանուր եղեռնին: (2) Փիլոսի կինը:

Ս. Վ.

Ս. Վ.

**Միրելի Սիմոն,**

Վաղուց է քեզ չեմ գրել, բայց դրա փոխարէն ուրիշները բոլ բոլ տեղեկութիւններ են տուել ձեզ: Կարծեմ այլեւս գանգատի տեղիք չի մնայ:

Մի քանի, եթէ կ'ուզես, անձնական խնդիրների մասին կ'ուզէի գրել այսօր:

1) Ի՞նչ եզրու «Բացատրիլը»: Զգիտե՞ս, որ բաւական լուրջ պատճառներ ունեմ ան- համբեր սպասելու նրա երեւալու յայտարարութեան:

(2) Մի անգամ գրել էիր, որ տեղիդ կարմիր հաշի մարմինները կարող են նպաստ տալ մեր նահատակների գառակների կրթութեան գործին: Կարելի՞ է այս սարի յոյս ունե- նենալ: Քեզ յայտնի է, որ Սերոբի երկու տղաները եւ Հրայրի մի որդին բերել ենք տուել այստեղ: Անցեալ տարի ծախսի դրամ կարողացանք տեղական միջոցներով հայրաքայել, ո- բովհետեւ Հրայրի որդուն որդեգրել է ամբողջովին մեր բնկերներից մէկը, իսկ Սերոբի որ- դիները ապրում էին Տուրքախի տանը: Մեզ վրայ մնում էր միայն վերջիններին հագուստի, կօշիկի, գրեթեական պիտոյքների եւ այլ մանր-մուրթ ծախսերը: Բայց ինչպէս գիտես, Տուր- քախը մեռել է, եւ այժմ նրա որդիների հոգսն էլ ծանր խնդիր է: Սերոբի որդիներին թողել ենք Տուրքախենց տանը, բայց որոշել ենք վճարել ամսական (գարնանից սկսած արդէն վճա- րում ենք) 3-4 ոսկի ապրուստի ծախսի համար:

Պիտի խնդրէի՞նք, որ կարմիր հաշը գէթ 30 ոսկու նպաստ յատկացնի այս տարի: Եթէ հարկատու է, պաշտօնապէս դիմենք մարմնի կողմից:

Եթէ հնարաւոր լինէր ստելի մեծ գումար յատկացնել, կարող կը լինէի՞նք նպաստ տալ 3 սասունցի որբ աշակերտներին էլ (2ը Սանասարեանի ջրոց եւ մէկը 4րդ կարգի): Գրան- ցից մէկի հայրը սպանուել է Սերոբի հետ: Անցեալ տարի նրանց պահում էին «Ազատամարտ»ի ֆոնդի հաշուին: Հիմա էլ տալիս են «Բացատրիկ» հասոյթի հաշուին:

3) Նամակս ստանալուց անմիջապէս փոխադրիք Փիլոսի հասանելիք գումարը, որ իրօք 5-6 ոսկու հասած կը լինի: Նա չափազանց շատ պէտք ունի:

Երբ այս տեսակ դրամական հաշիւներ վերջացած կը լինեն, կը գրեմ ես էլ ուրիշ նիւթերի մասին:

Այս տարի գլուխս աւելի է խառը: Եթէ քո ռոն-ը փոխուել օսյի-ի, որքա՞ն հան- ցիստ կը լինէի: Երեւակայիր, դեռ մինչեւ հիմա ուսուցիչները չեն պայմանաւորուած բո- լորը (միայն 42 հոգի): Ռուսումն. հորիւորըը հանեց մօտ 500 ոսկիի բաց: Նոր-Սանասար- եանը կարկատանով պիտի առաջ երթայ(\*):

Այս բոլորի վրայ աւելցուր եւ այն, որ շէնք էլ չունենք:

**Քո ՌՈՍՏՈՄ**

(\* ) Գուցէ ստիպուած լինես վիճակահանութեան կամ հանդէսների մասին մտածել: Ի՞նչ բանի պիտի գործադրուի «Ազատ. կոթ.» 1.100 դուրրը:

**91) ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻՆ**

12 Փետրուար 1914, Կարին

Ռոստոմ 1914ին, Կարնոյ զպրոցներուն ընդհանուր տեսուչ էր եւ Նոր-Սանասարեան վարժարանի կազմակերպիչն ու վարիչը: Բոստոն ապրող Կարնեցի Հայրենակիցները խո- տացել էին անոր օգնել նիւթապէս: Կարնոյ Հայրենակցական Ընկերութիւնը հրատարակեց

**Միրելի Սիմոն,**

Զգարմանաւ, որ դեռ առաջին նամակիս պատասխանը չստացած՝ նորից եմ գրում: Արջը եօրը պատմութիւն ունի, եօրն էլ տանի մասին է: Իմ պատմութիւնն էլ միշտ նոյնն է: Ման օյում՝ ի՞նչ եզրու այդտեղի ձեռնարկը՝ Նոր-Սանասարեանի համար: Մինչեւ կոկորդս խրուել եմ. եթէ Ամերիկայից օգնութիւն չհասցնէք, վայն եկել է ինձ: Ազաները ուզում են մեզ խեղդել, դրամ չեն տալիս. մեր մեասիր-ֆիւսիպ ժողովրդի աջակցութեամբ ենք պահում այս հաստատութիւնը: Բայց չես կարող երեւակայել, ի՞նչ ոգեւորութիւն կայ, մանաւանդ երիտասարդութեան մէջ: Եթէ այս նեղ օրերը անցընենք, վստահ եմ թէ փայ- լուն ապագայ կ'ունենանք: Ձեր օգնութեան պէտք ունինք: Շուտով մի շօշափելի գումար հասցրէք:

Հոփսիւմեանի աղջիկների համար ուղարկած դրամդ ստացայ: Ապրի՛ս: Մի քանի սանեք արդէն որոշեցինք, հագուստ-կապուստ առինք: մինչեւ տարուայ վերջը բաւական կը լինի: Լաւ էիր արել, որ ուղարկել էիր: Ձեւ կարող այդտեղի կարենցիների մէջ մարդիկ գտնել, որ մի քանի հոգի էլ նրանք որդեգրեն: Ձեւ կարող երեւակայել, թէ ինչքան լաւ է ազդում այդ: Քն Հոփսիւմեանցիները շատ ոգեւորուած են. էլ չասես, թէ մանկավարժու- թիւնը քո գործը չէ:

Հապա մեր երիտասարդները: Լաւ ես անում, որ նրանց հետ կապը շարունակում ես: Շուտաբան էլ լաւ գործ արեց, միայն թէ մի քիչ այծեր ունի: Երիտասարդաց Միութիւնը լաւ վիճակի մէջ է. Լեւոնը (Մազմանեան), Միտակը եւ միւսները հռանդով աշխատում են: Եթէ այդտեղի կարենցի հայրենակիցները մի քիչ նրանց նիւթապէս օգնեն, շատ ֆաջայեր- ուած պիտի լինին:

Ոջիլի մասին ես հարցնում: Փառք Աստուծոյ, դեռ առատ է, բայց առաջուայ պէս չէ: Կարծեմ քեզ ուրիշ անգամ էլ գրել եմ. ոջիլը մեր երկրի ֆազմակարգութեան չափանիշն է: Սահմանադրութիւնից յետոյ, ամէն տեղ ոջիլը զգալապէս պակասում է, նշանակում է — ազգերին կը յատաչդիմէ կոր: Եւ իսկապէս, եթէ մեզ մի տասը տարի էլ հանգիստ թող- նեն, մեր երկիրը դրախտ կը դառնայ, բայց պիտի բողբոջենք...

Հիմա էլ «Բարենորոգումներ» ենք խաղում: Մեր Պոլսեցիք գլուխները կորցրել են. չունի՞մ, բրատ, չունի՞մ(\*). վախենամ «բարենորոգումը» «չարանորոգում» դառնայ մեր գըլ- խին: մի նոր առիթ հալածանքների ու կատարածների: Եւրպա՞ն մեզ պիտի պաշտպանէ, թէ՞ Ռուսաստանը: Եթէ մերոնք, փոխանակ Պոլսում եւ Եւրոպաներում ազմկելու, գային երկիր, ոջիլ դէմ կուռէին, զիւղացուն այբուրէն սովորեցնէին, հաց ու սալսն տալին, աւելի մեծ բարենորոգումներ կատարած կը լինէին: Մեր ժողովուրդը խաղաղութեան, հացի եւ լոյսի պէտք ունի — ա՛յս է օրուայ պահանջը եւ գլխաւոր բարենորոգումը:

Լաւ ես մտածում վերադառնալ Կարին: Ընդհանուր ժողովին պէտք է գաս եւ կը մնաս այստեղ: Վախենամ դու էլ ամերիկացի դառնաս եւ սկսես դիւանագիտութիւն խաղալ: Քո տեղը այստեղ է. զոջացել եմ, որ զիջեցի Ակնուումն եւ թոյլ տուի որ գնաս: Ընկերներն էլ ուզում են որ գաս: Ես էլ գտնէ մէկ սարիով ուզում եմ հետանալ, որ մի քիչ շունչ առնեմ ու հանգստանամ. փէրուշան եղայ:

Անցեալ օր փիլոսոֆնց հետ Ասրունիենց մօտ էինք. քեզ էլ յիշեցինք: Ասրունին շա- րունակում է կապ պահել կառավարութեան եւ Իրքիկառի հետ: Քն գիտցածի պէս՝ շատ լուրջ է, բայց ծիծաղում էլ է: Նա եւ Վանէն (Թոֆանեան) մեր «սիւններն» են:

Կովկասից լուրեր առնում ենք: Առանձին նորութիւններ չկան: Այնտեղ էլ ոգեւոր-

(\* ) Ռուսերէն՝ «կ'ազմկենք, եզրայր, կ'ազմկենք»:

ուած են բարենորոգումներով: Կուսակցական կեանքը սովորականի պէս է. երիտասարդու-  
րեան է մնացել:

Դրոն թայագէտ է. մեծ վաճառական է դարձել: Լաւ գործ է կատարում: վանեցիք  
էլ լաւ են: Տարօնում էլ կացութիւնը լաւ է:

Կարդա ու զարմացիր. այսօր երկար նամակ կարո՞ղ էիր սպասել: Ես էլ եմ զար-  
մանում: Բայց թէ իմանա ի՞նչ յոյսեր եմ կապում այս նամակի հետ, երբեք չես զարմա-  
նայ: Սպասում եմ փողի դպրոցի համար: Յօդուած էլ կ'ուզարկեմ. նկար էլ կ'ուզարկեմ,  
ինչ ուզում ես կ'անեմ. միայն թէ շուտ մեզ օգնութեան հասէ՛ք:

Ջերմ բարեմներ կարեցի հայրենակիցներին:

Համբոյրներով՝ ՌՈՍՏՈՄ

«ՀԱՅՐԵՆԻՔ» տարեգիրք, 1946. էջ 191-193:

## 92) ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆԻՆ

2 Ապրիլ 1914, Կարին

Սիրելի Սիմոն,

Թէ Աստուած սիրես՝ ինձ շատ չհայտոյես: Եթէ գիտնայիր, թէ ինչ հալի եմ... Յա-  
մենայն դէպս, այսօր պիտի գրեմ քեզ էլ, Սարգիսին էլ: Նա էլ վազուց պատասխանի է սպա-  
սում ինձանից: Եւ միա՞յն նա...

Նախ՝ ժողովածուի(1) մասին — չուշացնես: Պէտք է, որ մինչեւ ուսումն. տարուայ  
վերջը լոյս տեսած եւ փողմ էլ ստացած լինեմք, թէ չէ խայտառակ կը լինեմք: Կարնի հայ-  
րենակիցներին իմ կողմից էլ խնդրիր, որ մեզ փող հասցնեն: Բացատրիր նրանց, թէ ինչ  
ծանր պարտականութիւնների տակ ենք ընկել, եւ նրանց օգնութիւնը անգնահատելի է: Ես  
էլ գիտեմ, որ բոլորն էլ լաւ տղերք են եւ իրենց ծննդավայրի համար ամէն գոհողութիւն  
յանձն կ'առնեն:

Դուք՝ ամերիկացիներդ ի գուր էք կարծում, թէ մենք խբուել ենք դպրոցական գոր-  
ծի մէջ եւ ինքնապաշտպանութեան համար ոչինչ չենք անում: Բացարձակ կերպով սխալ է  
այդ: Դպրոցը՝ իր հերթին, բայց մեր գլխաւոր մտահոգութիւնը ժողովրդի փրկման գո-  
յութեան պահպանութիւնն է: Գիտես՝ ինչ օրեր ենք ապրում: Պոլսեցիք տարուած են բարե-  
նորոգումների յուսով եւ պարլամենտարիզմով: Երանի հաւատացելոց: Այդ բոլորը լաւ, բայց  
մեր յոյսը պէտք է մեր վրայ դնեմք: Ամերիկայի ընկերները թող վստահ լինին, որ մենք  
էլ իրենց պէս ենք մտածում եւ եթէ կարող են ինքնապաշտպանութեան գործին օգնել, թող  
փող չխնայեն: Դրոն թայագէտում, Արամը վաճում, Փիլոսը եւ մի քանի ընկերները այդ  
գործին են լծուած: Ձաւալին այն է, որ միջոցները պակաս են. մեր հարուստները գրգռ-  
մները պիմոյ փակել են, իսկ ազատ ժողովուրդը ի՞նչ կարող է անել: Հայ հարուստը հոգին  
կը տայ, բայց փող չի տայ. չեն մտածում, որ վաղը թշնամին հոգին էլ կ'առնէ, փողն էլ:

Անցեալ օր ճաշի էի Տ. էֆէնտիի մօտ(2): հնդալով պատմեց, թէ քեզ լաւ ուսեցնե-  
լուց յետոյ, ճանապարհ է դրել կէս ոսկիով Հոփսիմեանի համար: Ես էլ առիթից օգտուե-  
լով՝ խօսք բացի Արծնեան դպրոցի մասին: Մի տեսնէիր՝ ինչպէս ազատ Ղազարոս ձեւացաւ:  
Դու աւելի բախտաւոր էիր՝ գոնէ կէս ոսկի տուեց, ես միայն ճաշով բաւականացայ: Այսպէս  
են մեր հարուստները, ի՞նչ կարող ես անել:

Այս օրերս Փիլոսի հետ մի մեծ ծրագիր (3) ենք կազմում, որի մասին յետոյ կը  
գրեմ: Քո վրայ էլ որոշ պարտականութիւններ պիտի դնեմք: Այդ մասին կը խօսեմք այս-  
տեղ, երբ ընդհանուր ժողովին գաս: Սիրտս ինձ ասում է՝ թէ այս տարի ճակատագրական  
տարի պիտի լինի մեզ համար: Յաճախ կարմիր ձի եմ տեսնում երազումս...

Էլի՞ գրեմ. չէ, բալամ, բաւական է: Սարգիսին էլ ժամանակ թող մնայ:

Հա, քիչ մնաց մտնայի: Անցեալ օր Փիլոսի հետ Ատրուցիանց մօտ էի: Միածա-  
նի հիւրասիրութիւնը վայելեցինք: Ատրուցին խնդրեց որ յայտնեմք քեզ, թէ ինքը պէտք  
եղած դիմումը կատարել է կառավարութեան եւ շուտով կ'իմացնէ քեզ դրական արդիւնքը:  
վճարումի մասին խօսք չի կարող լինել, բայց թէ բարեկամը փող ունի եւ տրամադիր է  
տալու, թող նոր-Սանասարեանին մի գումար յատկացնէ. մենք չենք մերժի...

Հոփսիմեանի աղջիկները շնորհակալութիւն են յայտնում ուղարկածդ քարտեւների  
եւ կենդ. պատկերների համար: Եթէ այդքան բարի ես, մի մոզական լապտեր էլ չուզարկե՛ս:

Համբոյրներով քո՝ ՌՈՍՏՈՄ

ՏԱԿԸ ՓԻԼՈՍԻ ԶԵՆՔՈՎ.—

Յ. Գ.— Լեւոն Մազմանեանի, Արտաշէսի եւ իմ որոշումն է — Ռոստոմ էլ համա-  
ձայն է հարիւր տակոսով —, որ ընդհանուր ժողովից յետոյ այստեղ մնաս: «Յատուց»ը ան-  
տէր է: Շատ գործ կայ անելիք: Հետո անպատճառ մի քոտակ կը բերես վարսեթիկի հա-  
մար, ինձ էլ, — դու գիտես: Լեւոնը բան չի սպասում — վրաս գրէ —: Երանի քեզ...

Համբ. Փիլ.

(1) «Ժողովածու»ն «Հայրենիք»ի երկրորդ բացառիկ թիւն էր, որ Կարնոյ Հայր. Միութեան  
աջակցութեամբ Հրատարակուեց ի նպաստ նոր-Սանասարեան վարժարանի:

(2) Տ. էֆէնտի՝ Կարինի մեծահարուստներից: Հոփսիմեան դպրոցում ուսուցիչ ե-  
ղած միջոցիս դպրոցի տնօրէն Գառնիկ Լոյսպարոնեանի եւ մի քանի աշակերտուհիների հետ  
զնայի մօտը նիւթական աջակցութիւն խնդրելու: Ռոստոմը թերահաստ էր, բայց մենք  
յոյս ունէինք 4-5 ոսկի ստանալ: Տ. էֆէնտի մեզ սիրալիւր ընդունելութիւն ցոյց տուեց,  
փառաւոր ճաշ կերցրեց եւ վերջը. կէս ոսկիով մեզ ճամբու դրեց: Ռոստոմը երկար ժա-  
մանակ ծաղրում էր մեր առաջելութիւնը:

(3) «Մեծ ծրագիր»ը — մտածում էին «Յատուց»ը վերածել օրաթերթի, հիմնել  
«Յատուց»ի մատենադարան, ճոխացնել տպարանը, որի համար ուզում էին կազմել առանձին  
հիմնադրամ:

Ս. Վրացեան, — «Հին ԹՂԹԵՐ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ», էջ 24-26:

## 93) Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

1917 թ. աշնանը եւ ձմեռը Ռոստոմը գտնուում էր Պետրոգրադում եւ Ստոկհոլմում:  
Այս վերջին քաղաքում պիտի գումարուէր ընկերվարական Միջազգայինի համազումարը  
եւ Ռոստոմը Հ. Յ. Դաշնակցութեան կողմից զնացել էր մասնակցելու համազումարին եւ  
հայկական պահանջները ներկայացնելու:

2/XII 1917, Ստոկհոլմ

Սիրելի ընկերներ,

Երէկ ուղարկեցի ձեզ «Հայրենիք»ի հասցեով մի օրինակ «Un avant-projet du  
programme de Paix», երատարակուած Համագումարի կազմակերպիչ կոմիտէի կողմից:

ես արդէն ձեզ առաջումնից յայտնել էի. եւ դուք էլ կը տեսնէք. որ չէ՞գո՞ք երկիրների պատ-  
ուիրակների ժողովը պահանջել է Հայաստանի համար *Indépendance et rétablissement*  
*territorial de l'Arménie Turque avec garantie de développement écono-*  
*mique* (\*). «Rétablissement territorial» ասելով պէտք է հասկանալ հետագումը հայ-  
կական գաւառների այն մահմեմականների, որոնց տեղաւորել են քաղաքական նպատակով,  
իսկ *garantie de développement économique*-ը նշանակում է ելք դէպի ծովը: Նույն  
պահանջը դրում է եւ Լեհաստանի համար:

Մանիֆէստին կցւած *Mémoire explicatif*-ի մէջ բնութագրում են (4. 29) «qu'il  
est impossible humainement d'attendre d'eux (հայերից) qu'ils retournent sous  
le joug» (\*\*). անհրաժեշտ եւ ստիպողական են համարում մեր հարցի լուծումը, բայց  
դժուարին:

Գժուարութիւնները երկու տեսակի են. նրանց կարծիքով այսպէս ասած՝ ներքին  
եւ արտաքին. ներքին գժուարութիւններին են վերաբերում հայերի սակաւ քիւր՝ այսօր  
կոտորածներից յետոյ. եւ այն հարցը. թէ ինչպէս պիտի կառավարուեն մահմեմական տար-  
րերը: Հարկ եղած բացառութիւնները սուր թուի մասին. աւելացնելով. որ մի կողմը  
բողոքած բուրժուական տիրակալութեան տակ այժմ գտնուող հայերին, միայն թուրքիայից  
դուրս հաստատուած հայերը կարող են լինել Հայաստանը. եթէ սա ազատ եղջակուի: Գա-  
լով կառավարելու եղանակին՝ դրա վրայ կանգ չառայ ստանճնապէս. գուցէ մեկնելուց ա-  
ռաջ գրաւոր բացառութիւն ներկայացնեմ. այնտեղ կը շեշտեմ մեր մէջ ընդունուած լայն  
ապակենտրոնացման սկզբունքների վրայ. որ չափազանց կը դիրացնէ երկիրը կառավարե-  
լու գործը:

Աւելի լուրջ են նկատում արտաքին գժուարութիւնները. որ նրանց համոզումով  
պիտի բխին Գերմանիայից: Երես 22 պարզ ասուած է. որ Գերմանիան հակառակ կը լինի  
թուրքիայի բաժանման. որովհետեւ հաշտութեան համար անհրաժեշտ պէտք է լինեն փո-  
խադարձ գիշումներ. ուստի մեր դատը կարող է տուժել: Սա այնպիսի խնդիր է. որ միայն  
դէպքերից. ապագայի անցուղարձից է կախուած:

Թէեւ. գուցէ. մօտ ապագայում Գերմանիայի դիրքը պարզուի: Եթէ զինադադարի,  
կամ անջատ հաշտութեան խնդիրը առաջ գայ. եթէ Լեհիներ եւ Գերմ. կանցլերը իրարու գառ,  
եթէ ոչ ամբողջ Հայաստանի. գէթ գրաւուած վայրերի խնդիրը անհրաժեշտօրէն կը դրուի:  
Տեսակէտները երկու կը լինեն՝ գէնքի իրաւունք եւ ինքնորոշման սկզբունք: Գերմանիան կը  
պահանջէ՞ արդեօք, որ գրաւուած վայրերը վերադարձուեն թուրքիային: Բարեբախտաբար,  
Ռուս. Լեհաստանի խնդիրը կայ. ինչպէս Գերմ. գէնքով նուաճուած Լեհաստանը ստանում  
է անկախութիւն. այնպէս էլ ռուսների գէնքով նուաճուած Հայաստանը պէտք է ստանայ  
անկախութիւն: Մեր պահանջը աւելի իրաւացի է. քան որ վասպուրականը ազատուել է  
հայերի ասպատակական ուժերով. վանք՝ արդէն ազատուած՝ դուրս է Ռուսաստանի հո-  
վանաւորութեան տակ: Եթէ խնդիրը գալու լինի ինքնորոշման սկզբունքին, ժողովրդական  
ֆուէարկութեան. — հայ ժողովուրդը վաղուց իր ֆուէները տուել է անհամար դիակներով:

Զինադադարի խնդիրը ո՞ւր պէտք է տանի մեզ վերջ ի վերջոյ: Շուրթած եմ մնա-  
ցել: Հոսանքը մեզ էջում է, եւ դեռ էջելու է. աշխատենք՝ ժայռերի չզարնուել: Մի քանի  
օրից յետոյ. փորձելու եմ անցնել Ռուսաստան. բայց չգիտեմ՝ պիտի կարողանա՞մ կով-  
կաս ինձ ձգել:

#### Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

«ՎԷՄ», Զ. տարի (1933), քիւ 4

(\*) Տաճկահայաստանի անկախութիւն եւ Հողային վերականգնում՝ տնտեսական  
զարգացման երաշխաւորութեամբ:

(\*\*) Որ մարդկօրէն անհնար է սպասել նրանցից, որ վերադառնան լծի տակ:

**Ռ Ո Ս Տ Ո Մ**

**(Կենսագրական ուրուագիծ)**

Մեր կուսակցութեան մէջ չի եղել ու չկայ մէկ ուրիշը, որ իր մէջ այնպէս հարազատօրէն մարմնացրած լինէր Դաշնակցութիւնը, որքան Ռոստոմը: Ռոստոմը նոյն ինքն Դաշնակցութիւնն էր: Մեծ ու բազմակողմանի, ինչպէս Դաշնակցութիւնը:

Եւ, սակայն, ահա տասը տարի է անցել նրա մահից, բայց նրա մասին գրեթէ ոչինչ չի գրուել: Մի-երկու թուոցիկ յուշ — եւ մերջոյցաւ: Նոր սերունդը, նրանք, որոնք բախտ չեն ունեցել ճանաչելու Ռոստոմին, ոչինչ չըզիտեն նրա մասին:

Ինչո՞ւ այդպէս:

Պատճառն, ի հարկէ, Ռոստոմի ընկերների անփութութիւնը չէ: Պատճառը աւելի խորն է — Ռոստոմի անհատականութեան ուրոյնութիւնը, նրա կեանքի եւ գործունէութեան առանձնատկութիւնները:

Ռոստոմը Դաշնակցութեան մէջ ամէն բան էր. ուր որ լինում էր, իր շնչով լեցնում էր ամէն ինչ: Բայց այդ անում էր այնպէս, որ ո՛չ մի տեղ չէիր տեսնի նրա ետը: Ռոստոմը ամէն տեղ էր եւ բոլոր գործերի մէջ, եւ միեւնոյն ժամանակ Ռոստոմ չկար: Չէր սիրում երեւալ եւ նիւթական հետքեր թողնել իր յետեւը: Ճառախօս չէր, յօդուածներ չէր սիրում գրել, նրա նամակները կարճ էին ու միայն առօրեայ խնդիրները նուիրուած: Իր կատարած գործերի մէջ ղնում էր հոգին, բայց երբե՛ք անունը: Անձամբ երեւում էր այն ժամանակ միայն, երբ կարելի չէր խուսափել, այլապէս միշտ մնում էր ստուերի մէջ եւ առաջ էր քշում ուրիշներին:

Եւ, հետեւաբար, դարմանալի չէ, որ Ռոստոմի մասին նիւթական յիշատակներ քիչ են մնացել: Նրա մտքերն ու ասորումները, նրա կատարած գործի մեծ մասը, նրա նմանը չունեցող դերը Դաշնակցութեան եւ հայ հասարակական մտքի զարգացման մէջ — այդ բոլորի մասին կարող են ասել միայն նրա ողջ մնացած ընկերներն ու աշակերտները: Եթէ նրանք այդ պարտականութիւնը չկատարեն, Ռոստոմի եղական գէմբը կը մնայ բոլորովին չպարզուած, եւ հայ ազատագրական պատմութիւնը կը զրկուի իր սքանչելի մէկ էջից:

Բայց հեշտ չէ գրել Ռոստոմի մասին: Ծիշդ է ասում Ռոստոմի մտերիմ վաստակաւոր ընկերներից մէկը. «Ինչքան փորձում եմ գրել Ռոստոմի մասին, դուրս է գալիս՝ Ռոստոմի առթիւ»: Ռոստոմի առթիւ շատ բան կարելի է ասել, բայց Ռոստոմի մասին — դժուար է: Այդ է պատճառը, որ Ռոստոմին նուիրուած գրուածք չկայ: Քրիստափորի, Զաւարեանի մասին որոշ գրականութիւն գոյութիւն ունի, թէեւ նոյնպէս անբաւարար, բայց Ռոստոմի մասին ոչինչ:

տամբ մնում է մեր նոր սերնդի եւ յայն հասարակութեան համար, թէ եւ խորհրդաւոր, բայց անյայտ մի մեծութիւն:

«Իրօջակ»ի ներկայ համարը առաջին փորձն է ներկայացնելու համար Ռոստոմին: Իսկ այս կենսագրական ուրուագիծ՝ մի թոյլ ճիգ՝ տալու համար Ռոստոմի կեանքի պատկերը(\*):

Ինչպէս եւ Քրիստափորը, Ռոստոմն էլ գողթնցի էր: Նրա բուն անունը Ստեփան Զօրեան էր: Մնուել էր Յդնա գիւղում, 18 Յունուար 1867 թրին, նահապետական մի ունեւոր բնտանիքի մէջ: Նոյն գիւղում էլ անցկացրեց իր մանկութիւնը:

Գունտ ու կլոր, առողջակազմ, ուշիմ ու խելօքիկ երեխայ էր, որ վաղ մանկութիւնից սովորել էր դիտել ու մտածել: Գիւղի ծխական դպրոցում, ուր ստացաւ իր նախնական կրթութիւնը, աչքի էր ընկնում իր ընդունակութիւններով ու ջանասիրութեամբ եւ գէշի գրարար լեզուն ցոյց տուած սիրով. բազմաթիւ գրարար կտորներ դիտէր անդիր եւ սիրում էր եկեղեցական երգերն ու շարականները:

Առանց ծխական դպրոց աւարտելու, ծնողների որոշումով, մանուկ Ստեփանը տեղափոխուեց Քիֆլիս՝ Ներսիսեան դպրոց մտնելու նպատակով: Բայց տեսնելով, որ Ներսիսեան դպրոցը պետական իրաւունքներ չի տալիս, վճռեց մտնել Քիֆլիսի ուկրաինական դպրոցը: Իրա համար որոշ ժամանակ նախապատրաստուեց Բեզլարեանի մասնաւոր ուկրաինական դպրոցում, ապա, 1882ին, տեղափոխուեց պետական ուկրաինական դպրոցի 3րդ դասարանը:

Ռէալական դպրոցում էլ Ռոստոմը աչքի ընկաւ իրրեւ լաւ սովորող եւ ընդունակ աշակերտ, մասնաւոր մաթեմատիկական առարկաների մէջ: Նրա դպրոցական ընկերները վկայում են, որ հանդիստ ու խոհուն պատանի էր. չէր սիրում վաղվել ու խաղերին մասնակցել. շատ կարգում ու շատ մտածում էր:

Արդէն դպրոցական նստարանից նա սկսել էր հետաքրքրութիւն ցոյց տալ գէշի հասարակական խնդիրները: Չարն ու բարին, մարդկային անհավասարութիւնը, արդարութեան ու ճշմարտութեան գաղափարը, որ յափըտակում էին այն ժամանակների ռուս առաջաւոր մտաւորականութեան մրտքերը, յուզում էին եւ Ռոստոմին, որ գեռ գիւղում եղած ժամանակ յայտնարեւել էր հասարակական ջիգ: Նրա մասին անում են հետեւեալ բնորոշ պատմութիւնը.—

Յդնա գիւղի միջով հոսում է մի փոքր գետակ, որի ջուրը ամառները չէր բաւականանում ամենքի այգիները ջրելու համար: Ռոստոմը յաճախ լըսում էր, թէ ինչպէս գիւղի չքաւոր բնակիչները տրտնջում են, թէ ամբողջ ջուրը գնում է հարուստներին, իսկ իրենց այգիները փշանում են առանց ջրի:

(\*) Բոլորովին վստահ չեմք, որ այս ուրուագծի մէջ էլ սխալներ չկան, իսկ պակասները շատ-շատ են: Ծնորհակալ կը լինէիք, եթէ Ռոստոմի կեանքին ծանօթ ընկերներն ու բարեկամները գրի առնէին իրենց նկատած սխալները, լրացնէին պակասը եւ ուղարկէին մեզ: Ծնորհակալ կը լինէիք նաեւ, եթէ Ռոստոմի գործունէութեան վերաբերուող զանազան նիւթեր ունեցողները ուղարկէին մեզ՝ օգտուելու եւ վերադարձնելու պայմանով:

Եւ ահա մի օր, հազիւ 10-11 տարեկան, Ռոստոմը իրեն հասակակից մանուկների գլուխն անցած՝ դնում քանդում է գետակի ամբարտակը եւ ջուրը ուղղում գէշի աղքատ գիւղացիների այգիները: Երբ նրան նկատողութիւն են անում աներկիւզ պատասխանում է.

— Հարուստները առանց այգու էլ կարող են ապրել: Ջուրը չքաւորին է հարկաւոր, որ ապրուստի միջոց ունենայ...

Աւելի սքանչելի մի օրինակ, որ պատմում է Ռոստոմի մայրը:

Չատկի օրը, 4-5 տարեկան Ստեփանը, նոր հագուստով ու նոր կօշիկներով դուրս է գալիս փողոց խաղալու ընկերների հետ, բայց քիչ յետոյ վերադառնում է ստարոպիկ:

— Այ, տղայ, ո՞ր եւ քոչերդ, գարմացած հարցնում է մայրը:

Ռոստոմը բացատրում է, թէ տուել է մի աղքատ ընկերոջ:

— Հոյրիկդ կը ծեծէ, սպառնում է մայրը:

— Զի ծեծի, պատասխանում է Ռոստոմը:

— Կը ծեծէ, պնդում է մայրը:

— Մեծում է, ծեծէ, հօ նոր կօշիկներ կ'առնէ, լինում է տղի պատասխանը:

Քիֆլիսում Ռոստոմը մտնում է աշակերտական ինքնադարձագոյական խմբակների մէջ, շփոււմ է յեղափոխական շրջանակների հետ եւ մասնակցում նարողովուցիների գաղանի գործունէութեան: Այդ ժամանակից արդէն ընկերների շրջանում նա յայտնի էր Քոթոթ անունով, երեւի, իր քոթոթի նման կազմուածքի պատճառով: Քոթոթը մինչեւ վերջ էլ մնաց նրա կեղծ անունը:

1886 թուին Ռոստոմը աւարտեց ուկրաինական դպրոցը եւ աշնանը մտաւ Նովո-Ալեքսանդրիայի գիւղատնտեսական ճեմարանը, Վարչաւայի մօտ:

Ռէակցիայի մօտ օրեր էին Ռուսաստանում: Ալեքսանդր Երբորդի անհեթեթ ինքնակալութիւնը ճգնում էր կեանքի ամէն արտայայտութիւն: Լօրիս-Մելիքեանի չափաւոր-աղատական իշխանութեան փոխարէն Պոսեդոնոսցեի կղեր-կայսերարոնապետութիւնն էր տիրապետողը: Բնականաբար, ռուս հասարակութիւնը յուզում ու գեղոհութիւն էր ցոյց տալիս: Ռուսանդութիւնը առաջին արտայայտողներից էր այդ գեղոհութեան:

1887 թուին Մոսկուայում, համալսարանական մի հրատարակային հանդէսի միջոցին, ուսանող Սենեաուսկին ապտակեց համալսարանի տեսչին: Սենեաուսկին աքսորուեց Սիբիր, եւ ամէն կողմ սկսուեցին ուսանողական խռովութիւններ ու բողոքի ցոյցեր կառավարական խստութիւնների դէմ: Սոսիալիստներ տեղի ունեցան եւ Նովո-Ալեքսանդրիայում: Ռոստոմը խռովարարների առաջին շարքերում էր: Եւ շատերի պէս հեռացուեց դպրոցից եւ աքսորուեց ծննդավայր՝ «Վոլչիյ պիլեթ»-ով (գայլի վկայական), այսինքր՝ առանց իրաւունք ունենալու ուրիշ դպրոց մտնելու:

Այդ օրերի Ռոստոմի հոգեկան պատկերը դեղեցիկ կերպով բնորոշում է հետեւեալ գէշքը. Նովո-Ալեքսանդրիայից նա ճանապարհ է դրում մի ծերունի ժանդարմի ուղեկցութեամբ: Ժանդարմը պէտք է նրան հասցնէր Յդնա եւ գիւղապետից վկայական ստանար:

Հինգ-վեց օր տևող ճանապարհորդութեան ընթացքին Ռոստոմն ու ժանդարմը բաւական մտերմանում են: Ռոստոմը շատ լաւ տպաւորութիւն է թողնում ծերունու վրայ:

Երբ գնացքը մօտենում է Աղստաֆա կայարանին, Ռոստոմը դիմում է ժանդարմին, թէ —

— Գիտե՛ս, քեռի, հիմա մենք պէտք է թողնենք երկաթուղին եւ 4-ձ օր էլ փոստային սայլակով ճամբորդենք: Ինչո՞ւ ի դուր տեղը դու էլ յոգնութիւն կրես: Ասելի լաւ չէ՞ ինձ թողնես մենակ, իսկ դու գնաս քո գործին:

— Ո՞նց թէ, ապշում է ծերունին, հապա որ փախչե՞ս — գիտե՞ս, ինձ ինչ կ'անեն:

— Չեմ փախչի, քեռի, պատասխանում է Ռոստոմը, ազնիւ խօսք եմ տալիս, որ չեմ փախչի:

— Հապա որ խոստանաս ու խոստումդ չկատարե՞ս... ինձ պաշտօնից կը դրկեն ու կը պատժեն, բնտանիքս էլ կը մնայ սոված:

Ու պահանջում է, որ Ռոստոմը երգուի:

— Ես երգուելու սովորութիւն չունեմ, պատասխանում է Ռոստոմը, իմ երգումը ազնիւ խօսքս է: Ես կ'երթամ եւ կը ներկայանամ դիւղի ոստիկանութեան:

Ժանդարմը հաւատում է: Բաժանուում են բարեկամարար: Ժանդարմը գնում է Թիֆլիս, Ռոստոմը՝ Յդնա, ուր ստանում է պահանջուած վկայականը եւ ուղարկում ծերունի ժանդարմին:

Յդնայում Ռոստոմը երկար չմնաց: Ճարեց Արրահամեան անունով մի անցադիր եւ մեկնեց Թիֆլիս, ուր նորից մտաւ յեղափոխական խմբակների մէջ: Քրիստափորը իր յուշերում(\*) պատմում է, որ 1887ին Ռոստոմի հետ Թիֆլիսում փորձել են հիմնել դադսնի տպարան, բայց յաջողութիւն չեն ունեցել «նիւթական միջոցների պահասութեան պատճառով: Միջոցներ հարկաւոր էին ոչ թէ տաւեր գնելու համար — տաւեր մենք ժառանգել էինք «Ազատութեան Աւետարներ»ի հիմնադիրներից, — այլ որպէսզի պահենք բնակարանը եւ մի ընկերոջ, որին տեղաւորել էինք այդ բնակարանում աշխատանքի համար: Այդ ամենքը մենք [Քրիստափորը եւ Ռոստոմը — Ս. Վ.] փորձեցինք պահել անձնական միջոցներով, բայց մեր միջոցները բաւական չեղան. մենք ապրում էինք մասնաւոր, կոպէկանոց դասերով»:

Այդ ժամանակ արդէն Թիֆլիսի հայ երիտասարդութեան որոշ շրջաններ, որոնք մինչեւ այդ կանգնած էին համապետական, ռուսական տեսակէտի վրայ, սկսել էին ձեռակերպուել իրրեւ ազգային, հայկական երեւոյթ: Ռոստոմն էլ, Քրիստափորի եւ ուրիշների հետ, ազգային-յեղափոխական կազմակերպութեան գաղափարի պաշտպաններից եւ իրականացնողներից էր: Նոյն օրերին, Թիֆլիսում, Ռոստոմը ծանօթացաւ եւ օր. Լիզա Մելիք-Շահնազարեանի՝ իր ապագայ ամուսնու հետ:

Թիֆլիսից Ռոստոմը անցաւ Բագու, Արրահամեան անունով յաջողու-

թեամբ աւարտական քննութիւն տուեց ոչալական դպրոցում եւ 1889ին դնաց Մոսկուա ու մտաւ Պետրովսկո-Ռազումովսկայա դիւլաոնտեսական ձեւաբանը, որը առաջաւոր ու ազատական դպրոցի հռչակն էր վայելում: Յեղափոխական եւ ըմբոստ ուսանողութիւն ունէր: Հակակառավարական ցոյցերի ու կազմակերպութեան խնդրում նա, Մոսկուայի համալսարանի ուսանողութեան հետ միասին, միշտ ընթանում էր առաջին շարքերում: Ուսանողութիւնը եւ պրոֆեսորութեան որոշ մասը սողորուած էին ժողովրդասիրական ու յեղափոխական գաղափարներով: Ճեմարանի հանրակացարանը, ուր ապրում էին հարիւրաւոր ուսանողներ, միշտ լիքն էր եռուզեռով — անվերջ երեկոյթներ, ժողովներ եւ ամէն տեսակ հաւաքոյթներ:

Ռոստոմը [Արրահամեան] այստեղ էլ մտաւ յեղափոխական խմբակների մէջ եւ դարձաւ պայքարող յեղափոխութեան գործօն անդամներից մէկը: 1890 թուին, ուսանողական մի ցոյցի ժամանակ, ձերբակալուեց ու նորից աքսորուեց Կովկաս: Դրանով էլ փաստօրէն փակուում էր Ռոստոմի ուսանողական շրջանը:

Նոյն 1890ի ամառը, Թիֆլիսում գումարուեց Իւթնի-Նոմերականների նշանաւոր ժողովը. Դաշնակցութեան առաջին գործիչները պանդան կողմերից հաւաքուեցին «Իւթնիա-Նոմերա» հիւրանոցում: Եւ այդ հաւաքոյթը դարձաւ Դաշնակցութեան հիմնադիր ժողովը, որի անունից մի կոչ էլ ուղղուեց ուսանողներին՝ հրաւիրելով նրանց մեկնել Թիւրքիա յեղափոխական գործունէութեան մասնակցելու համար: Ժողովից յետոյ, Ս. Չաւարեանը գնաց Մոսկուա՝ ուսանողութիւնը կազմակերպելու եւ կամաւոր գործիչներ արձանագրելու նպատակով:

Այս ժողովն ու կոչը զուգադիպեց Ռոստոմի աքսորին: Թիֆլիս հասնելուն պէս, նա ոտքով-գլխով նետուեց յեղափոխական գործերի մէջ եւ անմիջապէս, ուսուցչի պաշտօնով, մեկնեց Կարին(\*):

Էրզրումից հեռացաւ 1891 թուին եւ մինչեւ 1893 թ. աշխատում էր Թիֆլիսում, ուր նախապատրաստում էր Հ. Յ. Դաշնակցութեան առաջին Ընդհանուր ժողովը: Լուրջ փորձ էր կատարուած. շատ գործիչներ — Ս. Չաւարեան, Յ. Իւսուֆեան, Յ. Արզութեան, Լ. Սարգսեան, Ռոստոմ եւ ուրիշներ այցելել էին Թիւրքահայաստանի զանազան վայրերը՝ Վան, Էրզրում, Տրապիզոն, ոմանք մնացել էին բաւական երկար, ուսումնասիրել Երկրի միջնակն ու յեղափոխական աշխատանքի պայմանները: Կար Կուկունեան խմբի արշաւանքի փորձը: Աչքի առջեւ էր Հնչակեան կուսակցութեան կազմակերպութեան օրինակը: Միւս կողմից, Կովկասում էլ կատարուած էր խոշոր աշխատանք, պարզուած էին մի շարք տեսական ու կազմակերպական սկզբունքներ, պատրաստուած էր կուսակցութեան ծրագրի նախագիծը: 1890 եւ 91 թուականներին հրատարակուած էր երկու համար «Դրօշակ Թուրքիկ Թերթ»ը: 1891ին, Թիֆլիսում, հրատարակուել էին «Դրօշակ»ի առաջին եւ երկրորդ համարները, իսկ 1892ին, Ռուսմանիայում՝ «Դրօշակ»ի 3րդ եւ 4րդ հա-

(\*) «Հայրենիք» ամսագիր, 1924 թ. № 10, էջ 61:

(\*) Այս շրջանը Ռոստոմի կեանքի ամենամեծ շրջանն է: Երախտապարտ կը լինէին տեղեկ մարդկանց, եթէ տային մեզ լուսարանութիւններ:

մարնները: Ընդհանուր ժողովը ահազին գործ ունէր կատարելիք:

Ռոստոմը այս բոլոր աշխատանքներին անմիջական ու գործօն մասնակցութիւն ունէր: Մասնաւորապէս «Դրօշակ»ի հրատարակութիւնը նրա գործն էր. ինքն էր վարում տպագրական մասը, ինքը նիւթ էր հայթայթում, շարում ու տպում էր: Պատահում էր, որ ստիւկանութիւնը առնում էր տպարանի հօտը, Ռոստոմը տեղից տեղ էր փախցնում տառերն ու գործիքները: Եւ հենց այդ շրջանում երևան բերեց կազմակերպչական եւ գաղանի յեղափոխական աշխատանքի արտակարգ տաղանդ, որ նրան չղաւաճանեց մինչեւ մահ:

Հ. Յ. Դ. առաջին Ընդհանուր ժողովին, 1892 թուին, Ռոստոմը մըտցրեց իր անհատական ոգին նորաստեղծ կուսակցութեան ծրագրի եւ կազմակերպութեան ձևի մէջ: Ծրագրի անտեսական մասը պատկանում է Ռոստոմի գրչին եւ ամբողջապէս արդիւնք է նրա գրական, մի քիչ մարքսիստական մտածողութեան: Այդ գիծը նա յայտնաբերեց եւ յետագային, գրած յօդուածներում եւ գործունէութեան ասպարէզում:

Ընդհանուր ժողովից յետոյ Ռոստոմը Թիֆլիսում երկար չմնաց: 1893ի սկզբին նա արդէն արտասահմանում է, ուր մեկնում է Բիւրոյի որոշումով «Դրօշակ»ի հրատարակութիւնը կազմակերպելու համար: Թիֆլիսից հեռանալուց առաջ նա նշանում է օր. Լիլյա Մելիք-Շահնազարեանի հետ, բայց որովհետեւ վերջինիս ծնողները հակառակ էին, ամուսնութիւնը յետաձգում է եւ տեղի է ունենում հինգ տարի յետոյ:

Առաջ Ռոստոմը անցնում է Ռուսաստան, ուր լոյս է հանում «Դրօշակ»ի հարջ համարը: Ռուսաստանի պայմանները, սակայն, հնարաւորութիւն չէին տալիս մի յեղափոխական կուսակցութեան պաշտօնաթերթի կանոնաւոր հրատարակութեան, եւ Ռոստոմը տեղափոխուում է Փրնէս — այն ժամանակուայ Եւրոպայի ամենապատ վայրը, ուր համախմբուած էին բուսական յեղափոխականները:

Հինգերորդ համարից սկսած «Դրօշակ»ը սկսում է կանոնաւոր կերպով լոյս տեսնել Փրնէսում: Ռոստոմը նրա եւ խմբագիրն էր, եւ գրաշարը, եւ փոստին յանձնողը — ամէն ինչ: Գրաշարանոցն ու խմբագրատունը նրա ուսանողական համեստ սենեակն էր: Յերեկը յաճախում էր համալսարան, ուր լսում էր անտեսական եւ ընկերային գիտութիւնների դասախօսութիւններ, ազատ ժամերին կամ գիշերը խմբագրում, շարում, սրբագրում ու փոստին էր յանձնում «Դրօշակ»ը: Այդ շրջանի «Դրօշակ»ների գլխաւոր նիւթերն էին՝ թղթակցութիւնները երկրից եւ «Այր ու բեն» (ծրագրի բացատրութիւն) խիստ հետաքրքրական յօդուածաշարքը: «Այր ու բեն»ի առաջին մասը գրել են Քրիստափորն ու Զաւարեանը միասին, Թիֆլիսում: Ռոստոմը ամսէ ամս ստանում է թեթեւ սրբագրելուց յետոյ տպում էր «Դրօշակ»ում: Շարունակութիւնը («Դրօշակ»ի 1894 թուի համարներում) գրել է Ռոստոմը ինքը: Այդտեղ նա երևան է բերում ուժեղ քննադատի եւ սրամիտ բանավիճողի կարողութիւն: Առանձնապէս սաստիկ հարուածներ է հասցնում Հնչակեան կուսակցութեան, որի մէջ նա տեսնում էր «հայեացքների քաոս, խառնաշփոթութիւն եւ ինքնուրոյնութեան կատարեալ բացակայութիւն»: Հեզնում էր

նրա մարքսիզմը, պրոլետարացման սկզբունքը, գաղափարական հակասութիւններն ու հայ իրականութեան անձանոթութիւնը:

Փրնէսը, սակայն, չէր զոհացնում Ռոստոմին: Նա կենդանի գործի մարդ էր, եւ «Դրօշակ»ի հրատարակութիւնն ու դասախօսութիւնները նրան բաւարարութիւն չէին տալիս: Նրա սրտովը չէր եւ Փրնէսի հայկական միջուկայրը՝ ուսանողական մանր-մունր հաշիւներով, նախանձով եւ ինտրիգներով: «Յս խեղդում եմ ալտեղ, օղ չկայ», գրում էր նա իր նամակներից մէկում: Եւ հենց որ հնարաւոր եղաւ, «Դրօշակ»ը յանձնեց Յովնան Դաւթեանին եւ ինքը, պարսկական անցագրով, մեկնեց Թիֆլիս, ուր 1895ի ամառը, մասնակցեց կուսակցական մի կարեւոր խորհրդակցութեան եւ ապա անցաւ Կարին կազմակերպական նպատակներով:

Քիչ յետոյ, Հայկական Նահանգները հասաւ հոչակաւոր Շաքիր փաշան: Ռոստոմը «Դրօշակ»ում (1895 թ. Նոյեմբեր) նկարագրում է այդ հրէշի գալուստը եւ հայ ժողովրդի ցուցադրած թշնամական վերաբերումը: Շաքիր փաշայի գալուց յետոյ տեղի ունեցաւ Կարնոյ կոտորածը. Ռոստոմը 500 աշակերտների եւ ուսուցիչների հետ կոտորածի ժամերը անց է կացնում զրոյրոցում: «Դրօշակ»ի 1895 թ. Դեկտ. 15 համարում նա նկարագրել է այդ դէպքերը:

Կոտորածից յետոյ, թիւրք կառավարութիւնը ուզում է ձերբակալել Ռոստոմին, բայց պարսից հիւպատոսի միջամտութեամբ, մի զատաղի ե թիւրք ոստիկանների ուղեկցութեամբ, հեռացում է Պարսկաստան: Գալիս է Մուկու, Ս. Բարթուղիմէոսի վանքը, ապա Սալմաստ ու Թաւրիզ՝ բոլոր վայրերում մասնակցելով կազմակերպական գործերին ու խորհրդակցութիւններին, որոնց մէջ քննում էին Երկրի գործունէութեան վերաբերուող հարցեր: Պարսկաստանից «Դրօշակ»ին ուղարկում է հետաքրքրական թղթակցութիւններ քրդական շարժումների եւ թիւրք-պարսկական սահմանագլխի գործերի մասին:

Պարսկաստանից Ռոստոմը վերադարձաւ Կովկաս եւ նուիրուեց կուսակցական-կազմակերպական աշխատանքներին: Նորից եղաւ Թաւրիզում գէնքի արհեստանոցի գործերով:

1898 թ. Ապրիլին, Թիֆլիսում, գումարուեց Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ Ընդհանուր ժողովը, որը հիմնական քննութեան ենթարկեց նախկին տարիների յեղափոխական գործունէութիւնը, կազմակերպական ձևեր եւ ապագայ գործունէութեան եղանակը: Յատկապէս լուրջ քննութեան առարկայ եղան Բանկ Օթոմանի գրուման եւ Խանասորի արշաւանքի արդիւնքները: Այդ երկու գործերի ղեկավարներն էլ ներկայ էին ժողովում:

Այստեղ զրուեց եւ Թիւրքիայի ուրիշ յեղափոխական տարրերի եւ, մասնաւորապէս, մակեդոնացիների հետ համերաշխելու խնդիրը, որի ամենաջերմ պաշտպաններից էր Ռոստոմը: Առհասարակ, նա խոչոր նշանակութիւն էր տալիս օտար տարրերի հետ գործակցելու գաղափարին եւ համակրանքով էր արտայայտում թիւրք եւ քիւրդ ժողովուրդների արթնացման ու յեղափոխականացման մասին:

Երկրորդ Ընդհանուր ժողովը որոշեց «Չանալ կապեր հաստատել մա-

կեղոնացիներու, յոյներու եւ ուրիշներու» հետ, եւ Ռոստոմը ոգևորութեամբ փարեց այդ ծրագրի իրագործման:

1898 թ. Սեպտեմբերին Ռոստոմը ամուսնացաւ օր. Լիզայի հետ: Ինչպէս յիշեցինք, օրիորդի ծնողները հակառակ էին այդ ամուսնութեան, այդ պատճառով հարսանիքը տեղի ունեցաւ Յ. Քաջաղունու տանը: Պսակից յետոյ անմիջապէս, նոյն ղիշերն իսկ, օստրիականական հետապնդումից ազատուելու համար, անցաւ արտասահման: Ժընևեում նա խորհրդակցութիւններ ունեցաւ ընկերների հետ: Այստեղ էին Քրիստափորը, Զաւարեանը, Արմէն Գարոն, Յովնանը եւ ուրիշներ:

1900ին Բուլղարիա անցաւ տիկ. Լիզան՝ դպրոց հիմնելու ծրագրով: Շուտով հասաւ եւ Ռոստոմը՝ նպատակ ունենալով գլուխ բերել հայ-մակեդոնական գործակցութիւն: Տիկին Լիզան Ֆիլիպսում հիմնեց մի մասնաւոր մանկապարտէզ, որը 1901ից վերածուեց դպրոցի: Մի ամբողջ տարի Ռոստոմը դասաւանդեց այդ դպրոցում՝ ստեղծելով տաք միջոցառում իր շուրջը: Նրան յաջողուեց իրականացնել եւ հայ-մակեդոնական համերաշխութեան ծրագիրը: 1902ին Ռոստոմը ընտանիքով վերադարձաւ Կովկաս եւ 1903ին քարտուղարի պաշտօն էր վարում Թիֆլիսի Հայ. Գիւղ. Ընկերութեան մէջ: Նոյն տարուայ վերջը ձերբակալուեց եւ աքսորուեց Օդեսա, որտեղից փախաւ արտասահման:

1904 թուին, Սոֆիայում, տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. երրորդ Ընդհանուր ժողովը, որի օրակարգի մէջ կային մի շարք ծանրակշիռ հարցեր — Կիլիկիայի եւ Սասնոյ շարժումներ, մարտական խմբերի արշաւանքներ դէպի Նրկեր, ցուցական գործունէութիւն, սուլթանի մահափորձ եւ այլն: Ռոստոմը դէմ էր սուլթանի մահափորձի ձեռնարկին եւ, առհասարակ, ցուցական գործունէութեան, դէմ էր եւ Քրիստափորի մասնակցութեան: Քրիստափորն ինքն էլ թերեւս սրտով չէր գնում այդ գործին, բայց հոգեբանական պայմաններն անհրաժեշտ էին դարձնում նրա անմիջական ղեկավարութիւնը:

Ընդհանուր ժողովում բազմակողմանի քննութեան առարկայ եղան եւ կովկասահայոց գործերը: Եկեղեցական գոյքերի պաշտպանութեան յաջորդող փոթորկայտոյ շրջանն էր: Դաշնակցութիւնն էր վարիչը ինքնապաշտպանութեան պայքարի, թէեւ հրապարակի վրայ երեւում էր անկուսակցական մի մարմին: Ամէն կողմից պահանջում էին, որ Դաշնակցութիւնը պաշտօնապէս իր ձեռքը առնէ շարժման ղեկավարութիւնը: Ընդհանուր ժողովը ընդառաջ գնաց այդ տրամադրութեան: Ընդունուած բանաձեւում ասուում էր. «Դաշնակցութիւնը իր վրայ առնելով կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան պարտը՝ որոշեց յանձնել այդ՝ Կովկասի Պատասխանատու Մարմինն, որ պահելով իր «Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէ» անունը՝ պիտի շարունակէ գործել «Դաշնակցութիւն» պաշտօնական անունան տակ»:

Հետաքրքրական է յաջորդ կէտը. «Ժողովը Կովկասի վերաբերմամբ ընդունեց բերանացի եւ դրաւոր պրոպագանտի, տեւորի, ժողովրդական ցոյցերու եւ զինուած դիմադրութեան տակտիկը՝ մնալով պաշտպանողական հողի վրայ»:

Աւելին դեռ. Ընդհանուր ժողովը ընդունեց ե՛ւ բանուորական շարժման

մասնակցելու անհրաժեշտութիւնը. «Դաշնակցական բանուորական խմբերը, այն գործարաններու սահմաններու մէջ, ուր անոնք կ'աշխատին, կը մասնակցին բոլոր բանուորական գործադուլներուն եւ շարժումներուն, երբ անոնք կապուած են բանուորներու ընդհանուր վիճակին հետ այդ գործադուլներու մէջ, իսկ ինչ կը վերաբերի գործարանական կեանքէն դուրս ցոյցերուն, որոնք կրնան առաջարկուիլ ուրիշ կուսակցութիւններու կողմէն, բայց որոնց առիթներն ու նպատակները կրնան տարբեր ըլլալ, իւրաքանչիւր դէպքի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռէ Պատասխանատու Մարմինը»:

Ռոստոմը այս քաղաքականութեան համոզուած պաշտպաններից էր: Ընդհանուր ժողովից յետոյ, իրրեւ նորընտիր Արեւմտեան Բիւրոյի անդամ, նա անցաւ Ժընևե: 1905 թ. Փետրուար-Մարտին, Ժընևեում գումարուեց Դաշնակցութեան խորհուրդը, որին մասնակցեց եւ Ռոստոմը:

Մորհրդից գրեթէ անմիջապէս յետոյ, Մարտ 20ին, տեղի ունեցաւ Քրիստափորի եղբրական մահը: Ռոստոմը շտապեց Բուլղարիա: Քրիստափորի յուղարկուելու յետոյ, նա կազմակերպեց զինուորական դպրոցի բացումը եւ ուժեղացրեց հայ-մակեդոնական բարեկամական փոխյարաբերութիւնները:

1906ին Ռոստոմն այլեւս Կովկասում է, որը բռնկուած էր հայ-թրքական ընդհանուր ճգնաժամի հրդեհով: Ինքնապաշտպանութեան գործը ամբողջապէս ամփոփուած էր Դաշնակցութեան ձեռքը: Անդրկովկասը բաժանուած էր շքրջանների, որոնց գլխին դրուած էին պատասխանատու վարիչներ. Արմէն Գարոն՝ Թիֆլիսում, Դոմանը՝ Նրեւանում, Վարդանը՝ Ղարաբաղում եւ այլն: Ռոստոմը ամէն տեղ էր. մերթ Ղարաբաղում, մեր Նրեւանում, մերթ Շիրակում ու Կարսում. շրջում, կազմակերպում ու քաջալերում էր, սովորեցնում էր ուժանակ բանեցնել, մակեդոնական բուժբեր գործածել: Մի քանի ամիս մնաց Շուշու շրջանում: Մոռացել էր ե՛ւ ընտանիք, ե՛ւ իր անձը — ապրում էր միայն կազմակերպութեան մտահոգութիւններով:

Հայ-թրքական պայքարից Դաշնակցութիւնը դուրս եկաւ յաղթական: Սակայն, կռիւների հետեւանքով եւ ռուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ կուսակցութեան ներսը ծայր տուին ուժեղ դժգոհութիւններ — մի կողմից զինուորական շարժումները, միւս կողմից անջատողական հոսանքը, հայ բուրժուական խաւերի յարձակումները, ռուսահայ-թիւրքահայ դատի շուրջ ստեղծուած թանձր միջոցառումը: Եւ երբ 1907 թուի Փետրուարի վերջերին, Վիեննայում, բացուեց Կրդ Ընդհանուր ժողովը, մեր հակառակորդները չարախնդրութեամբ ձեռքերն էին չփում՝ անհամբեր սպասելով Դաշնակցութեան քայքայման: Սակայն, այս անգամ էլ յուսախար եղան նըրանք. Դաշնակցութիւնը, հաստարմատ կազմուեց պէս, մնաց անյողողոյ: Ռոստոմը մէկն էր, եթէ ոչ գլխաւորը նրանցից, որոնք սպահովեցին կուսակցութեան միութիւնն ու կենսունակութիւնը: Նրա երկայնամտութեան, լայնախոհութեան, համոզելու կարողութեան եւ անսահման հմայքին ենք պարտական, որ անհաշտելի մտայնութիւններն ու խառնուածքները կարելի եղաւ ոչ միայն պահել միեւնոյն ընդհանուր յարկի տակ, այլեւ միաձուլել, օրգանա-

պէս միացնել մէկ կազմակերպութեան մէջ:

Վիեննայում, առանց չափազանցութեան, հրաշք տեղի ունեցաւ: Հաւաքուել էին մի կողմից Թ. Ճեյալեանի պէս անհաշտ հակառակորդներ ընկերօրէութեան՝ ընկերօրէական ծրագրին դէմ քուէ տալու մտակալ հրահանգով, միւս կողմից՝ Ա. Շասխաթունեանի նման մտերեակ ընկերօրէականներ՝ նոյնպէս շղիջելու կարուկ հրահանգով: Դժուար էր հաշտեցնել ջուրը կրակի հետ. Ռոստոմիրն եւ ընկերներին յաջողուեց ո՛չ միայն հաշտեցնել, այլեւ ընկերօրէութիւնը մերժող Վառժանի ու Զարդարեանի պէս ընկերներին դարձնել ընկերօրէական: Վիեննայից Դաշնակցութիւնը դուրս եկաւ նոր ծրագրով, աւելի միաձուլ, աւելի կուռ ու գործօն:

Գլխաւորապէս Ռոստոմիր պնդումի վրայ, Ընդհանուր Ժողովը ընդունեց եւ պարսկական գործունէութեան անհրաժեշտութիւնը: Բանաձեւը աւսում էր. «Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյթ՝ թէ՛ Պարսկաստանի, թէ՛ Արեւելքի համար եւ գտնելով դրա տարածուելն ու լայնանալը ցանկալի թէ՛ համամարդկային, թէ՛ հայկական տեսակէտից. —

Ընդհանուր Ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին եւ անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման՝ մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ռամկավարական եւ աշխատանքային ոգին, որը բխում է Դաշնակցութեան ծրագրից»:

Ռոստոմիրն անձնապէս էլ ոգեւորում էր պարսկական յեղափոխութիւնը: Նա անվերապահ կերպով համոզուած էր, որ Դաշնակցութիւնը մեծ դեր ունի կատարելիք նրա մէջ, եւ ինքն էլ ձգտում էր անցնել Պարսկաստան՝ Դաշնակցութեան մասնակցութիւնը անմիջապէս կազմակերպելու եւ վարելու համար:

Ռոստոմը ջերմ պաշտպանն էր եւ Դաշնակցութեան ու թիւրք ընդդիմադիրների համագործակցութեան:

Վիեննայից նա մեկնեց Բուլղարիա, ուր գրադուեց զինուորական զբոսայգի գործերով, տեսակցութիւններ ունեցաւ մակեդոնական պետերի հետ, ապա անցաւ Կովկաս:

1908 թ. Մարտ 12-25ին տեղի ունեցան Հ. Յ. Դ. Խորհրդի հերթական նիստերը, որոնց մասնակցեց եւ Ռոստոմը, Կովկասեան Ռայոնական Ժողովի կողմից: Խորհրդի զբաղման գլխաւոր հարցերն էին ռուս-թիւրքական պատերազմի հնարաւորութիւնները եւ Դաշնակցութեան դիրքը, հայ-թիւրքական եւ մակեդոնական համերաշխութիւնը, կազմակերպական խնդիրներ, ծրագրի ամբողջացումը եւ այլն: Ի միջի այլոց, այստեղ Ռոստոմիրն յանձնուեց կուսակցութեան ծրագրի Թիւրքիայի բաժնի մշակումը:

Խորհրդի նիստերից յետոյ, Ռոստոմը անցաւ Թաւրիզ: Հետզհետէ սկսեցին այստեղ հաւաքուել կուսակցական-մարտական ուժերը — Դուրմանը, Քեռին, Խեչոն եւ ուրիշներ: Ստեղծուեց հայ-պարսկական ընդհանուր ոյժ. պարսից յեղափոխականները Սաթթար խանի գլխաւորութեամբ գործում էին ձեռք-ձեռքի դաշնակցական խմբերի հետ: Ռոստոմը շարժման ոգին էր, գա-

ղափարական ղեկավարն ու ներշնչողը:

Պարսկական շարժումները ծանօթ են «Իրօշակ»ի ընթերցողներին(\*): Այդ շարժումներից մի գեղեցիկ դրուագ էլ նկարագրել է ինքը՝ Ռոստոմը(\*\*):

Թաւրիզի անկումից յետոյ, Ռոստոմը Դուրմանի եւ ուրիշ ընկերների հետ անցաւ Վան, այնտեղից՝ Մուշ, Կարին եւ արտասահման: 1909 թուի ամառը մասնակցեց Հ. Յ. Դ. հինգերորդ Ընդհանուր Ժողովին, Վառժայում, որից յետոյ, իբրեւ Բիւրոյի անդամ, զբաղուեց էր կուսակցական գործերով Պոլսում եւ արտասահմանում:

1910 թուին, Ե. Թոփչեանի սպանութիւնից յետոյ, Ռոստոմը հրաւիրուեց Կարին՝ ազգային պարտքների ընդհանուր տեսչի պաշտօնով եւ այնտեղ մնաց մինչեւ 1914ի Սեպտեմբեր ամիսը, ներկայացնելով միաժամանակ եւ Դաշնակցութեան Հայաստանի Բիւրոն: Ամառները միայն, կարճ ժամանակով, անցնում էր Պոլիս կամ արտասահման — 1911 թ. Օգոստոս 17-Սեպտեմբեր 17 մասնակցեց Հ. Յ. Դ. վեցերորդ Ընդհանուր Ժողովին — իսկ մրնացած ժամանակը անց էր կացնում Կարնում կամ ճամբորդում հայկական գաւառներում:

Ռոստոմի շարժման գործունէութիւնը Բարձր Հայքում, բացի ընդհանուր կուսակցական հետեւանքներից, ահագին նշանակութիւն ունեցաւ Կարնի ազգային-մշակութային կեանքի զարգացման, երիտասարդութեան կազմակերպութեան ու դաստիարակութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան ուժի եւ հեղինակութեան աճման տեսակէտից: Նրան պաշտում էր Կարնի երիտասարդութիւնը: Ազգային-ազգայական խառն կողմից ընդունում էր պատկառանքով: Նրան հաշտի էին առնում անգամ կառավարական շրջաններում: Սանասարեան զպրոց, Հոխիսիմեան, Արծնեան, Թաղային վարժարաններ, առաջնորդարան, Երիտասարդական Միութիւն, «Յառաջ», դասախօսութիւններ, գրական ու երաժշտական հանդէսներ, ընկերական հաւաքոյթներ — Ռոստոմը ամէն տեղ էր եւ ամէն ինչ:

Զարմանալի էր այդ մարդը: Առաջին ծանօթութիւնից, բացի համակրելի արտաքինից ու գրաւիչ Ժպիտից, առանձին տալաւորութիւն չէր թողնում. համեստ, մի քիչ թափթիած հագուստ՝ սեւ փողկապը կողքի վրայ, տարատը միշտ տրորուած, կօշիկը փոշոտ: Պարզ շարժումներ: Անպաճօճ խօսքեր: Հոկտոբր չէր — դժուարութեամբ, կմկմալով էր խօսք գտնում, եւ խօսքն էլ անսեթեւեթ էր, սովորական: Բանախօսելիս աւելի շատ ձեռքերն էին գործում, քան լեզուն: Գրում էր նոյնպէս մեծ դժուարութեամբ, քիթն ու ճակատը տրորելով, գրչակոթը կամ եղունգը կրծելով: Մէկ գրում էր, տասը ջնջում...:

Բայց բաւական էր հետը մի քիչ ապրել, մօտենալ նրա հոգուն, որ ամենքի առջեւ բացուեց էր այնպէս քնքարէն, բաւական էր խօսել հետը մտերմական շրջանակում, տեսնել գործի մէջ, որպէսզի համոզուէիր նրա մտքի,

(\*) Տե՛ս «Իրօշակ», 1927 թ.:  
(\*\*) Տե՛ս «Հայրենիք» քաղաքիկ թիւ № 2, 1914 թ.:

հոգու եւ կամքի արտակարգ մեծութեան: Նա գիտէր գրաւել ու հմայել առանց ճիգի: Նրա շնչի տակ ամենամեղկ կամքերն իսկ կենդանանում էին, մշատուածները սիրտ էին առնում: Ինչպէս արեւը ճառագայթներ, Ռոստոմն իր շուրջը տարածում էր եռանդ, կենսունակութիւն, աշխոյժ եւ կենանքի ու գործի սէր: Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր եւ ամենքի հետ՝ հաւասար ընկեր: Ինչպէս իր տան դուռը, այնպէս եւ սիրտը՝ բաց էր ամենքի առջեւ: Եւ ո՞վ ասես չէր մտնում այնտեղ...

Մանաւանդ քաղցր էր մտերիմների շրջանում, սրտակից զրոյցի ժամանակ: Սիրում էր գրականութիւնը, արուեստը, գիտութիւնը: Բայց ամենից աւելի սիրում էր երգիծական-հերոսական գրականութիւնը: Սանչո-Պանսա, Պանտազրիւէլ, Տարտարէն, Տարաս Բուլբան նրա մտերիմ հերոսներն էին, որոնց մասին կարող էր ժամերով խօսել, ամբողջ էջեր անգիր արտասանել: Նրանց գործերով ու խօսքերով հրճւում էր մանկան պէս:

Հաճելի էր տեսնել երբեմն, երբ դուրսը մոլեգին կատաղութեամբ ոտնում էր Բարձր Հայքի հրէշաւոր բորանը, անշուք եւ աղօտ լուսաւորուած սենեակում, թէյի սեղանի շուրջ, Ռոստոմին զուցեկիս երբեմն Մշից Կարին այցելող բժ. Յ. Զաւրեանի հետ: Ի՞նչ հակադիր բնավորութիւններ եւ ինչպիսի սէր ու գուրգուրանք միմեանց հանդէպ: Զաւրեանը՝ ջերմ հաւատացող քրիստոնէայ, խաչն ու աւետարանը միշտ մօտը, ոգեւորում էր արուեստի քնքոյշ օրինակներով. իր անբաժան ընկերն էր Լոնդֆելդոյի «Հայա-Վատա»-ն, որը, աւետարանից յետոյ, նրա ամենից գնահատած գրուածքն էր: Ռոստոմը կրօնական հաւատ չունէր. սիրում էր հերոսական տիպեր, երգիծական էջեր, սուր հեզնանք: Ժամերով կտորներ էին արտասանում կամ կարդում իրենց հեղինակներից եւ չէին կշտանում:

Ռոստոմի հեզնանքը հանրածանօթ էր: Այնպէս էր ձեռք առնում, որ յաճախ շճում է իր. լո՞ւրջ է ասում այս մարդը, թէ կատակ անում: Եւ լուրջն ու կատակը, շատ անգամ, այնպէս էին խառնուում իրար. հեզնական արտայայտութեամբ, մի սուր խօսքով, մի գուարճալի արարքով նա հասնում էր այնպիսի նպատակի, որի համար, ուրիշը երկար ճառեր պիտի արտասանէր եւ անհզին ճիգ թափէր:

Ռոստոմի հեզնանքը եւ Ռոստոմի ժպիտը, եւ խորունկ նայուածքը յօնքերի տակից — կարելի՞ է մոռանալ երբեւիցէ...

Յաճախ, Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան մասին ասում են, թէ՛ Քրիստափորը մարմնացումն էր խելքի, Սիմոնը՝ խղճի եւ Ռոստոմը՝ գործի: Ըստ իս բոլորովին ճիշդ չէ այս համեմատութիւնը. եթէ Քրիստափորին և Սիմոնին կարելի է բնորոշել միակողմանի յատկանիշներով, Ռոստոմը համադրութիւնն է նրանց բոլոր յատկութիւնների — ե՛ւ խելք, ե՛ւ խիղճ, ե՛ւ գործ: Ռոստոմը ամբողջական անհատ էր — մարդ: Համընտի «Մարդ էր նա, Հորացիո» խօսքը նրա մասին է ասուած — մարդ՝ մարդկային բոլոր յատկութիւններով: Եւ նրանք ովքեր բախտ են ունեցել ճանաչելու նրան, վայելելու նրա հոգու բարիքները, նման բնորոշումը չեն համարի չափազանցութիւն:

Կարնում Ռոստոմը տարուած էր իր աշխատանքով եւ ոգեւորուած

Երկրի ժողովրդի ցոյց տուած յառաջդիմութեամբ: 1913 թ. Օգոստոս 11ին նա գրում էր. «Ժողովրդի վիճակը ընդհանրապէս լաւ է: Տնտեսականը աւելի բարձրացել է: Ապահովութիւն կայ այն վայրերում, ուր ժողովրդի մօտ կան ինքնապաշտպանութեան միջոցներ: Սնունդը, մաքրութիւնը աչքի է ընկնում: Բաւական է ասել, որ ոջիւնների թիւը զգալապէս պակասել է: Ոջիւր մեր երկրում, իմ կարծիքով, պիտի նկատել ամենալաւ չափանիշը տնտեսութեան բարւոքման»:

Այս տողերը գրուած են դէպի Ս. Կարապետ կատարած ուխտագնացութեան ժամանակ: Երկու տարի իրար յետեւից, 1912 եւ 13ին, բարձր դասարանի աշակերտների եւ ուսուցիչների հետ Ռոստոմը ճամբորդութիւն էր կատարում դէպի Տարօն: Ուզում էր վերականգնել Նաւասարդեան տօները եւ Ս. Կարապետն ու Աշտիշատը նորից դարձնել աղղային ուխտատեղի: Նոյն նամակում նա գրում էր. «Մի ժողովի մէջ, ուր ներկայ էին դանապան գաւառներից ընկերներ, որոշուեց ամէն տարի Վարդապետի օրը համախմբուել Ս. Կարապետում: Պիտի աշխատենք վերականգնել Նաւասարդեան օրերը խաղերով, մրցումներով: Եթէ ուրիշ տեղեր էլ մարմնամարզական խմբեր կազմուեն եւ ներկայանան հանդէսին, սօսը առանձին փայլ կը ստանայ»:

Մտադրութիւն կայ նաեւ այդ օրերը կազմել ուսուցչական համադրումներ՝ ընդհանուր մի ուղղութիւն տալու համար դպրոցական գործին:

Բացի այդ, եթէ հնարաւոր լինի, պիտի կազմենք ընկերական հասարակութիւն՝ իրարու լաւ հասկանալու համար:

Յոյս ունենք առաջիկայ տարի ունենալ մեծ բազմութիւն Կովկասից եւ ուրիշ վայրերից: Գուցէ Պոլսից էլ ուղենան դալ...»:

Պոլսի մասին Ռոստոմը հեզնանք ունէր միայն:

Ռոստոմի ճիգն էր Հայաստանը դարձնել համազգային ուշադրութեան կենտրոն: Նա ուզում էր Հ. Յ. Դ. Լօթներուրդ Ընդհանուր ժողովն էլ գումարել Ս. Կարապետում. «Տեղի պիտի ունենայ առաջին Ընդհանուր ժողովը Երկրի մէջ, գրում էր նոյն նամակում: Կաշխատենք, որ դա լինի պատմական մի ժողով: Միայն թէ պատգամաւորները ժամանակին հասնէին»: Սակայն, կառավարութիւնը արդիւք եղաւ, եւ ժողովը դումարուեց Պոլսում (\*):

Պոլսի ընկերները պահանջում էին, որ Ռոստոմը թողնէ Կարինը եւ տեղափոխուի Պոլիս: Ռոստոմը երկար ընդդիմութիւնից յետոյ, համաձայնուել էր՝ պայման դնելով, որ իր տեղը գնայ Զաւարեանը, բայց վերջինիս մահից յետոյ, միջոցառումներով մերժեց հեռանալ Երկրից:

Կուսակցական պատճառներից դատ կար եւ մի ուրիշ հանդամաճք, որ պահում էր նրան Կարնում: Պոլսի աղաները, տեսնելով Դաշնակցութեան աղդեցութեան ծաւալուելը Կարնում, որոշել էին Սանասարեան վարժարանը փոխադրել Սեբաստիա՝ յուսալով, որ դրանով աշակերտութիւնը հեռու կը պահեն Դաշնակցութեան «թոյնից»: Կարնի երիտասարդութիւնը ըմբոստացաւ այդ քայլի դէմ եւ որոշեց բանալ Նոր Սանասարեան վարժարան: Ռոստոմը

(\*) Հ. Յ. Դ. Եօթներուրդ Ընդհանուր ժողովը տեղի է ունեցած Կարին: Հ. Տ.

տոմը այդ շարժման ոգին էր եւ Նոր Սանասարեանի ղեկավարը: Անասնաման եռանդ, զոհողութիւն ու բարոյական հեղինակութիւն էր հարկաւոր գործը գլուխ բերելու համար, եւ Ռոստոմին յաջողուեց կազմակերպել օրինակելի մի կրթական հիմնարկութիւն: Մինչեւ Ամերիկա հասաւ նրա շունչը. Կարնի Հայրենակցական Միութիւնը նպաստ ուղարկեց, «Հայրենիք»ը պատկերազարդ բացատրիկ թիւ հրատարակեց (№ 2) Նոր Սանասարեանի օգտին:

1914 թուականը եղաւ Ռոստոմի աննշերից մէկի իրագործման տարին. Հ. Յ. Դաշնակցութեան հերթական, ութերորդ Ընդհանուր ժողովը գումարուեց Կարնու: Ամէն կողմից՝ Կովկասից, Պոլսից, Բալկաններից, Եգիպտոսից, Ամերիկայից, Քուրդիստանի եւ Հայաստանի զանազան կողմերից սկսեցին հաւաքուել պատգամաւորներ, որոնք ընդունուով էին խանդավառ հանդիսաւորութեամբ: Պէտք էր տեսնել Ռոստոմի ուրախութիւնը...

Աւա՛ղ, այդ ուրախութիւնը երկար շտեմեց: Ընդհ. ժողովը դեռ չաւարտած՝ պայթեց համաշխարհային պատերազմը: Զուլումի ամպեր էին կուտակուում եւ հայ ժողովրդի գլխին. Ռոստոմը զգում էր իր արտակարգ բնագոյով: Թշնամին կրնակալիս հետեւում էր նրան: Եւ միայն հրաշքով ազատուեց ձերբակալութիւնից ու Սեպտեմբերի սկզբին, Տրապիզոնի վրայով, անցաւ արտասահման: Եւրոպայում զերազոյն ճիգ էր թափում՝ փրկելու համար հայ ժողովուրդը մահուան վտանգից:

1915ին, Սկանդինաւեան թերակղզու վրայով, անցաւ Ռուսաստան եւ Կովկաս:

Կամաւորական շարժման յուզումնալից օրերն էին: Ռոստոմը սխալ էր համարում այդ շարժումը, բայց քանի որ սկսուած էր, պէտք էր միջից պատուով դուրս գալ: Եւ նա փարեց այդ գործին: Ազգային Բիւրօ, Կարգադրիչ Մարմին, ռազմաճակատ, կամաւորական խմբեր — ամէն տեղ էր: Այցելեց ազատագրուած Վասպուրականը: Երբ գրաւուեց Կարինը, շտապեց դնալ այնտեղ՝ փրկելու համար ինչ որ մնացել էր: Կարողացաւ ազատել Սանասարեան զպրոցի գոյքի որոշ մասը, զբքեր, նկարներ, ձեռագրեր... Կիսուեր եւ անհայ Կարինը ճնշիչ տպաւորութիւն էր արել նրա վրայ, որից երկար չէր կարողանում ազատուել:

Յաճախ այցելում էր Քեռու եւ Անդրանիկի խմբերը: Քեռուն սիրում էր եղբոր պէս: Անդրանիկին աշխատում էր յետ կեցնել սխալ քայլերից, եւ Ռոստոմը միակ մարդն էր, որի առջև Անդրանիկը իրեն պահում էր նորահարսի պէս:

Կամաւորական զնդերի լուծումը եւ ռուսական քաղաքականութեան փոփոխութիւնը դէպի հայերը Ռոստոմի առանց այն էլ դառնացած սիրտը լեցնում էին սուր վշտով: Նրա լայն ճակատը աւելի եւս ծածկուում էր կրնձիւններով: Ժպիտը, հանաքները պակասում էին: Զարհուրելի տանջանք էր ապրում, առանց ցոյց տալու ուրիշներին, թէ ինքը տառապում է: Արտաքին աշխարհի համար աշխատում էր մնալ նոյնը, բայց ներսը կիզիչ կրակը լափում էր հոգին: Կրակը աշխատում էր հանդգնել անվերջ ճամբորդութիւնների եւ աշխատանքի մէջ. նրա երկաթէ մարմինը միայն կարող էր դիմանալ այդ օրերի տանջանքներին, նրա վատնած եռանդին...

Բայց ահա վրայ հասաւ ռուսական յեղափոխութիւնը. 1917 թ. Փետր. 28ին խորտակուեց ցարական միահեծանութիւնը: Ամէն տեղ՝ աննկարագրելի խանդավառութիւն ու ցնծութիւն: Անասնաման ուրախութիւն եւ հայկական շրջաններում: Տխուր է միայն Ռոստոմը. նրա վարմանալի բնազդը զգում է այն, ինչ որ չեն զգում սովորական մարդիկ. նոր աղէտներ, նոր փորձութիւններ հայ ժողովրդի գլխին:

Սակայն, հարկաւոր է աշխատել, օգնել յեղափոխութեան ընծայած պատեհութիւններից՝ Հայաստանի եւ հայ ժողովրդի իրաւունքներն ապահովելու համար: Եւ Ռոստոմը գործում է անդադար. կուսակցական խորհրդակցութիւններ ու ժողովներ, հրապարակային հաւաքոյթներ, ազգային եւ ընդհանուր յեղափոխական կազմակերպութիւնների նիստեր, ճամբորդութիւններ գաւառները, թիրբահայ նուաճուած վայրերը, ռազմաճակատը: Նախագահում է Հ. Յ. Դ. Կովկասեան առաջին ազատ ժողովին, գլխաւորում է Սահմ. ժողովի դաշնակցական թեկնածուների ցանկը, ուղղութիւն է տալիս կուսակցական պրոպագանդին: Այսօր էլ դեռ կենդանի են Ռայ. ժողովի բացման ճառում արտասանած նրա խօսքերը.

«Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունենք ազգովին վրտանգուելու հոգսը, եւ չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անգամ, որ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալ ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա բուրժուական է, կղերական: Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի վտանգուելու վախը կայ, մեզ մեղադրողները իրենք են դուրս եկել ազգովին գործելու: Եւ կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշտպանէր ազգի շահը, ինչպէս այդ անում են այսօր անդլիացի եւ Փրանսացի սոցիալիստները»(\*):

Երբ Պետրոգրադի Բանուորական Խորհրդի եւ ընկերվարական կուսակցութիւնների կողմից հրապարակ դրուեց, հաշտութեան պայմանները մշակելու համար, ընկերվարական միջազգային համազումար հրաւիրելու հարցը, 1917 թուի աշնանը, Ռոստոմը շտապեց Պետրոգրադ: Այստեղ նա, տեղական ընկերների եւ գործիչների աջակցութեամբ, դրեց հայկական պահանջները եւ ընդունել տուեց, որ Ռուսաստանի հաշտութեան պայմաններից մէկն էլ լինելու է հայկական հարցի լուծումը: Ապա անցաւ Շուեդիա՝ Սթոկհոլմի համագումարում Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացնելու առաքելութեամբ: Այնտեղ մտերիմ կապեր հաստատեց միջազգային ընկերվարութեան պարագլուխներից շատերի հետ, նրանց եւս ընդունել տուեց հայկական պահանջները, ընդարձակ զեկուցում ներկայացրեց համագումարի կազմակերպիչ մարմնին եւ բոլոր շրջաններում, ուր պէտք էր, անցկացրեց Հայաստանի ազատութեան պահանջը:

Սթոկհոլմի համագումարը, ինչպէս յայտնի է, ձախողեց: Երբ Ռոս-

(\* «Իրօշակ», 1926 թ., № 8-10, էջ 236:

տոմը վերադարձաւ Ռուսաստան, արդէն ամէն ինչ իրար էր խառնուած. աւելի եւ աւելի տարածուած էր քաղաքացիական երկրաշինջ կռիւր: Հազոր-դակցութիւնը կողկասի հետ կարուած էր: Ի՞նչ էր կատարուած թիֆլիսում, ի՞նչ կար երեւանում, ի՞նչ վիճակի մէջ էր հայկական ուղղափառական — հակասական ու վհատեցնող լուրեր էին հասնում: Պետրոգրադում, Մոսկուայում, Ռոստով-Նախիջևանում, Վլադիկաւկազում հաւաքուել էին արեւմտեան ճակատից հեռացած բազմաթիւ հայ սպաներ ու զինուորներ, որոնք ուզում էին անցնել՝ ոմանք իրենց տները, ուրիշներ հայկական գործաւասերը մտնելու համար: Ռոստովը նրանց ուղղում էր դէպի Բազու եւ ինքն էլ շտապում Բազու ա՛յն հաւատով, որ այստեղ կարելի կը լինի համախըմբել մի գորաւոր բունցք ու ճանապարհը բանալով՝ անցնել Ղարաբաղ ու Երեւան եւ յետոյ՝ ուղղափառ:

Ռոստովը մասնակցեց եւ Բազուի ադատամարտին, ամենատաղնապալի շրջանում: Այստեղ էլ նրա անձնական հմայքը շատ բարձր էր, ո՛չ միայն ընկերների, այլև հակառակորդների աչքին. Ստ. Շահումեանը, որ մի ժամանակ միահնձան աէրն էր Բազուի, ակնածանքով էր վերաբերուած նրան եւ յաճախ հետեւում էր նրա խորհուրդներին: Բազուի դէպքերի մասնակիցներէից շատերն են ազատ եւ կարող են, պարտաւոր են զրի առնել Ռոստովի գործունէութիւնը եւ կատարած դերը Բազուում:

Պաշարի սղերըզական վախճանից յետոյ, Ռոստովը եղաւ վերջին հեռացողը Բազուից: Հազարաւոր զաղթականների ու պարտուած մարտիկների հետ գնում էր Պարսկաստան՝ քամելու համար դառնութեան վերջին բաժակը: Եւ այստեղ էլ նա հաւատարիմ մնաց իր բնաւորութեան, անմիջապէս լծուեց զաղթականների օչնութեան կազմակերպութեան գործին, յարաբերութեան մէջ մտաւ պարսից իշխանութիւնների եւ անդլիական ներկայացուցիչների հետ, զեկուցումներ եւ հրահանգներ ուղարկեց արտասահման: Թըւում է թէ աւելի մոռալլ, յուսահատական վիճակ դժուար է երեւակայել, բայց Ռոստովը այս պայմաններում էլ պահեց իր մտքի պայծառութիւնը, հոգու հաւասարակշռութիւնը եւ հօր կամքն ու կորովը: Քանի՞ քանիները ընկճուեցին, չլիմացան կեանքի ահաւոր հարուածներին. Ռոստովը միշտ մնաց առաջնորդի բարձր դիքերում՝ հաւատաւոր եւ անյողուող:

Հենց որ թիւրք-զերմանական սյժը խորտակուեց եւ ճանապարհները դարձան անցանելի, Ռոստովը շտապեց կողկաս: Նրան քաշում էր Հայաստանը՝ իր կախարդական ուժով. ի՞նչ էր կատարուած այնտեղ: Հայաստանի Հանրապետութիւն էր ստեղծուել — ի՞նչ էր այդ հանրապետութիւնը. ի՞նչ ձեւ էին ստացել հայ պաշտպանութեան ուսման խնամքը: Անկախ Հայաստան — Ռոստովը շտապում էր՝ կարօտով եւ անձկանօք...

Թիֆլիսում նրան սպասում էր մի նոր, սարսափելի հարուած: Հազիւ ազատագրուած՝ Վրաստանն ու Հայաստանը պատերազմի էին բռնուել: Հոսում էր երկու զրկից ու եղբայրական ժողովուրդների արիւնը, այն ժամանակ, երբ Թիֆլիսում եւ Երեւանում իշխանութեան գլուխ կանգնած էին ընկերավարականները: Հրէշաւոր ոճիր էր տեղի ունեցածը: Ռոստովն իր աչքերով տեսնում էր, թէ ինչպէս վրացի սատիկանները հայերին խումբ-խումբ

աքսոր էին ուղարկում, թէ ինչպէս փողոցում շուրջկայներ էին կատարում հայորսութեան համար, թէ ինչպէս հայը Վրաստանի մայրաքաղաքում յայտարարուել էր օրէնքից դուրս, ծագրի եւ հայածանքի տուարկայ: Նա աւսել էր թիւրքական բարքերն ու կարգերը. նոյնը եւ աւելին — այժմ տեսնում էր Թիֆլիսում, ընկերավարական կառավարութեան նախագահ, իր անձնական բարեկամ Ժորդանիայի հրամանով...

Դժուար է աւել, թէ ի՞նչ էր կատարում Ռոստովի ներսը: Նրա հոգին, որ միշտ բաց էր ամենքի առջև, այդ օրերին փակուել էր ամուր: Նա յայտնապէս տառապում էր: Չեմ կարծում, թէ իր ամբողջ փոթորկայտոյզ կեանքում Ռոստովը այդքան դառն ապրումներ ունեցած լինէր: Պժգանքով դիմում էր իր երկկուայ ընկերոջ՝ Ժորդանիային՝ խնդրելու համար, որ վերջ տրուի հայկական հայածանքներին: Դիմում էր ամէն կողմ եւ ամենքին, միայն թէ առաջը առնուի գործուող հրէշաւոր ոճիրին:

Յունուարի սկզբին վերջ գտաւ պատերազմը: Թիֆլիս էր հասել Հ. Հանրապետութեան Փարիզի պատուիրակութիւնը: Սկսուեցին մի շարք խորհրդակցութիւններ, որոնց մասնակցում էր եւ Ռոստովը:

Սոնա ու ցուրտ ձմեռ էր: Ռոստովը ման էր դալիս առանց վերաբերուի, ծակ կօշիկներով: Ճանապարհին մրսել էր, եւ այժմ տաքութիւն ունէր: Կարծում էր՝ մալբախ է: Ժողովներից յետոյ, ու չգիշերով, ոտքով էր վերադառնում տուն՝ ամէն անգամ կտրելով մի քանի կիլոմետր տարածութիւն: Մի գիշեր էլ, ու չ, նոյնպէս ոտքով, վերադարձաւ Ահարոնեանի մօտի ժողովից ու մտաւ անկողին: Ու այլևս ոտքի չելաւ:

Բժշկական քննութիւնը պարզեց, որ վարակուած է բժուոր տիֆով: Քիչ յետոյ տիֆը վերածուեց թոքերի բորբոքման: Նոյն ժամանակ եւ միեւնոյն հիւանդութեամբ պառկած էր Արամը Երեւանում:

Հիւանդութիւնը երկար չտեւեց: 1919 թ. Յունուար 18ի գիշերը Ռոստովը այլևս չկար: Մեծ սիրտը, որ յոգնել չգիտէր բնաւ, կանգ առաւ ընդմիշտ:

Եւ ի՞նչ անողոք ճակատագիր: Ամբողջ կեանքը Ռոստովը ապրել էր Հայաստանով, Հայաստանի գաղափարով եւ մեռաւ անկախ Հայաստանի դրանը, առանց տեսնելու իրականութիւն դարձած երազը...

Եւ ո՞վ գիտէ, գուցէ մի խորհուրդ կար այդ մահուան մէջ. Քրիստափորի աչքերն էլ չտեսան Հայաստանի անկախութիւնը, Սիմոնինն էլ: Չէ՞ որ Իսրայէլի առաջնորդներն էլ, որ իրենց ժողովուրդը ազատեցին եղիպտական գերութիւնից, չտեսան Աւետեաց Երկիրը...

«ԻՐՕՇԱԿ», Իւ 1-2, Յունուար-Փետրուար 1929

ՌՈՍՏՈՄԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

1887 թուին Ռոստոմը ուսանող էր Նոր-Ալեքսանդրիայի բարձրագույն գիւղատնտեսական ճեմարանում, Վարչաւայի մօտ:

Ալեքսանդր Բ. կայսեր սպանութիւնից յետոյ, 1881 թուականից սկըսած Ռուսաստանում տիրում էր ուժեղ ուձակցիւթ: Ռուս յեղափոխական ամենամեծ կազմակերպութիւնը՝ «Նարոդնայա Վոլեա»-ն սոսկալի հարուածների էր ենթարկուել եւ համարեա բոլորովին ջախջախուած էր. մնացել էին հատ ու կտոր անհատներ:

Նկատելով, որ բարձրագույն դպրոցների ուսանողութիւնն է գլխաւորապէս երեւում յեղափոխական սոսկարէղում, կառավարութիւնը հաստատ ու վճռական կերպով այդ դպրոցները իր խիստ հակողութեան եւ հակակշռի տակ էր դնում: Որպէսզի ուսանողները դիւրութեամբ դատուեն հասարակութեան միւս խաւերից, նա մտցրեց համալսարաններում եւ միւս բարձրագույն դպրոցներում յատուկ համադրեաններ, փայլուն կոճակներով, գեղեցիկ ուսնոցներով, կազմակերպեց շատ ուժեղ տեսչութիւն՝ իր ստորաբաժիններով ամէն մի Փակիւլտէի ու մասնաճիւղի համար եւ ամէն մի դասարանի համար «պետել» կոչուած հակիչ «լրտեա»ով. պետելը պաշտօն ունէր արձանագրելու դասախօսութեան ներկաների եւ բացակաների անունները եւ թէ ի՞նչ խօսակցութիւններ կամ երևոյթներ տեղի կ'ունենային դասախօսութիւններից դուրս, կամ ընդմիջումներին, մանաւանդ երբ դասախօսը կասկածուում էր «ընդդիմադիր»ների կողմնակցութեան մէջ:

1887 թուին Մոսկուայի համալսարանում իր խստութիւններով մեծ հռչակ էր ստացել տեսուչ Բրըզգալովը: Եւ ահա համալսարանի տարեդարձի տօնակատարութեան օրը, խուռն բազմութեան եւ, մանաւանդ, բարձրաստիճան պաշտօնէութեան առաջ ուսանող Սինեաւսկին աստակեց այդ Բրըզգալովին: Սինեաւսկին աքսորուեց Սիբիր, բայց նրա աստակը արթնացրեց հասարակութիւնը. Ռուսաստանի համարեա բոլոր համալսարաններում եւ բարձրագույն դպրոցներում ցոյցեր կատարուեցին, Բրըզգալովը պաշտօնանկ եղաւ եւ փոխարինեց Դորբովը, որ շատ սիրուած էր ուսանողների կողմից, թէեւ կառավարական ուժիմը մնաց նոյնը:

1887 թուին Ռոստոմն էլ մասնակցում է այդ ցոյցերին, ձերբակալուում, արտաքսուում է Նոր-Ալեքսանդրիայի ճեմարանից եւ աքսորում կովկաս: Հաղիւ մի տարի անցած, Արբահամեան անունով, նա յաջող քննութիւն է տալիս Մոսկուայի մօտ գտնուող Պետրովսկայա-Քաղումովսկայա բարձրագույն գիւղատնտեսական ճեմարանը եւ ընդունուում իբրեւ ուսանող:

1890ի դարնանը Մոսկուայի ուսանողական կեանքը նորից է ալեկոծուում: Պետրովսկայա ճեմարանում էլ կառավարութիւնը մտցրել էր խիստ օ-

րէնքներ ու հակողութիւն եւ այժմ ուղում էր հակակշռի տակ դնել նաեւ ճեմարանի «Կադետներ» կոչուած ուսանողական հանրակացարանը, ուր ուսանողները կեանքն անցնում էր շատ ազատ եւ ուրախ: Նոր կառուցուած եւ վերջին յարմարութիւններով օժտուած երեք յարկանի տուն էր այդ, 200 սենեակներով, ուր ամսական 7-10 ռուբլիով կարելի էր ունենալ կովիկ, մաքուր սենեակ, թէպէտ անպաճոյճ կահաւորուած, բայց ելկերական լուսաւորութեամբ, մշտական տաք ու պաղ ջրով եւ կենտրոնական վառելիքով: Տան մէջ կար բաւականին ընդարձակ ընդունելութեան սրահ զաշնամուրով: Երիտասարդ կեանքը ետում էր այնտեղ: Հանրակացարանում ծնունդ էին առնում յանդուզն ծրագիրներ ու բողոքներ այն ժամանակուայ տիրապետող քաղաքական ուձակցիայի այս կամ այն արտայայտութեան դէմ:

1890 թուի Մարտ ամսին, ճեմարանի տեսչութիւնը որոշեց արգելել հանրակացարանում հաւաքոյթներ եւ երեկոյթներ սարքելը՝ պատրուակ բրունելով, թէ դրանք խանգարում են ուսանողների աշխատանքներին ու դրադումներին, եւ կարգադրեց նախ եւ առաջ ընդունելութեան սրահից հեռացրեն զաշնամուրը: Բայց այդ բանը նրան չյաջողուեց. ուսանողները ընդդիմացան, ցոյցեր կազմակերպեցին: Տեսչութիւնը հեռախօսով հրաւիրեց ուստիկաններ: Ձերբակալուեցին 150-200 ուսանողներ եւ բանտարկուեցին Մոսկուայի «Բուտիրկի» հռչակաւոր բանտում:

Հետեւեալ օրը, Մարտ 6ին, Մոսկուայի համալսարանում տեղի պիտի ունենային համակրական ցոյցեր, այգում եւ նրա մօտի փողոցներում: Լալիչում եմ. մենք, բժշկական Փակիւլտէի առաջին լսարանի ուսանողներս բնադիտութեան դասախօսութիւն ունէինք: Դասախօսում էր պրոֆ. Ստոլետովը, մի լաւ եւ շատ պահանջկոտ դասախօս: Ամփիթատրոնի ընդարձակ սրահը լեցուն էր ուսանողներով: Ճիշդ ժամը 2ին, վերի նստարաններից լուսեց բարձրաձայն հրաւէր. «Ժամանակ է հաւաքոյթի երթալու»: Բոլոր ուսանողները մէկ մարդու պէս սկսեցին դուրս գալ: Պրոֆեսորը ծամաճուութիւն արաւ եւ ինքն էլ դուրս գնաց:

Բակում ուրիշ լսարանների եւ Փակիւլտէների բազմաթիւ ուսանողներն արդէն հաւաքուել էին եւ ազմուկ ու ճառախօսութիւններ անում: Մենք շարժուեցինք դէպի փողոցը, որը չըջապատուած էր բազմաթիւ ժանդարմներով, ձիաւոր ու հետեւակ ոստիկաններով, որոնք երկու կողմից սեղմում էին մեր շարքերը: Այսպէս, 1000ից աւելի ուսանողներ առաջնորդուեցին «Մանեթ» կոչուած ձիերի մարդարանի հսկայ սրահը եւ գիշերը փոխադրուեցին «Բուտիրկի» բանտը, ուր տեղաւորուեցին մեծ մեծ սենեակներում: Մենք այդ սենեակները միկտեցինք «աուդիտորիա»ներ (լսարան)՝ № 1, № 2 եւ այլն: Ծուլտով մեզ համակրող հասարակութիւնից ստացանք մեծ քանակութեամբ սպիտակ հաց, կարագ, ժամրոն եւ ուրիշ չոր ուտելիքներ: Երբ կշտացանք, սկսուեց անվերջ վիճարանութիւններ, կատակներ, երգեցողութիւն: Գիշերը անցկացրինք շատ գոհ, երեւակայելով մեզ մէկ մէկ «հերոս». պառկեցինք չոր տախտակների վրայ եւ լաւ քնեցինք:

Ընդարձակ կենտրոնական բակի դիմացի կողմը տեղաւորուած էին Պետրովսկայա ճեմարանի ուսանողները: Երկրորդ օրը ցոյցերը համալսարա-

նում և ուրիշ զպրոցներում կրկնուեցին: Երեկոյան մեկ մօտ բերին մօտ 600 ուսանողներ, Երբորդ օրը զարձեայ մօտ 400-500, յետոյ սկսեցին բերել մէկ-մէկ հօգի: Մենք պատահաններէ զխառն էինք: Հայ ուսանողներէ յիշում եմ Տիգր. Յովհաննիսեանին, Միքայէլ Սարգսեանին, Մուրադխան-Կանին, իսկ «պետրոպոլիտներէ» Ա. Սահակեանին, Մ. Շախիրեանին:

Մէկ էլ բարձր յարանի իրարաւան ուսանողներէ մէկը, հետագային յայտնի փաստարան Սովետականիսին, ցոյց տուեց պատահանից և ասաց. — Նայեցէ՛ք, ահա բերում են «պետրոպոլիտ» Արքահամեանին:

Պատահանից զարս նայեցինք և տեսանք ամուր կազմուածքով, միջահասակ, կրտ ու ածղոյն զէմքով, փոքրիկ մօրուքով մի ուսանող, որը հազել էր բուսականին հնացած զպրոցական համազգեստ:

Ազգայ Ռոստոմն էր:

Ինձ անձանօթ էր, բայց ճանաչողները բացատրեցին, որ նա կազմակերպիչ մարմնի մօտիկ աշխատակիցներէից է: Նրան տեղաօրեցին առանձին սենեակում:

Անցան մի քանի տարիներ: Ես աւարակ էի ուսումս և մի քանի ընկերներէ հեռ գնում էի Էջմիածինը տեսնելու: ԱզատաՓա կայարանում պատահեցի Ռոստոմին: Իր տակով՝ գնում էր հայրենիք, Յիցա զիտր: Երբ ևս նրան անուանեցի «Արքահամեան», շատ զարմացաւ և ծիծաղելով հարցրեց, թէ ո՞րտեղից եմ ճանաչում իրեն «Արքահամեան» անունով: Ես պատմեցի մեր «հանդիսումը» 1890 թուին «Բուսիրիի» բանտում:

Շատ վերջը արդէն նա պատմեց ինձ, թէ Նոր-Ալեքսանդրիայի ճեմարանից արատարսուելու պատճառով ստիպուած է եղել՝ Արքահամեան մականունով զնալ Բաղու, կրկին քննութիւն տալ ուկրաինական զպրոցում(\*), որդէս-ցի կարողանայ ընդունուել Պետրոպոլիտ զի պատահական ճեմարանը, և Մոսկուայում յայտնի էր իրբու «Արքահամեան»:

Ինչպէս պատմում էին իր զարնիկները՝ ուսանող ժամանակ Ռոստոմը յապիկաց երիտասարդ էր, թիչ էր խառնուած վիճարանութիւններին, տարուած էր սակի քաղաքական կեանքով, քան զաստիտութիւններով և զիտութիւնով:

«ԴԻՕՇԱԿ», ԲԻԸ 1-2, 1929

(\* ) Ռոստոմը շատ ուժեղ էր մաթեմատիկայից և քննութիւնները անց է կացրել իրստ փայլուն կերպով:



Ռոստոմ, ընդհանուր շրջակայանուած հրիսխիմեայ վարտարանի խումբ մը լուսուցք: Բաղուիսինի խումբ, Երբտան 1918-19 Է. Երբտան (Անցած տարուած արտուած է)

ՌՌՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ, ՄՈՍԿՈՒԱ

Ես Մոսկուայի Պետրոլսկի գիւղատնտեսական ճեմարանը մտայ 1887 թուականին: Հայ կեանքն ու մտաւորական դասն այն ժամանակ երկու պատմական խոշոր զէպքերի զօրեղ ազդեցութեան տակ էին — ռուս-թիւրքական պատերազմը եւ Բուլղարիայի ազատագրութիւնը: Այս զէպքերն առաջ էին բերել մի տրամադրութիւն՝ Հայաստանն եւս ազատագրել թիւրքական լուծից: Մտաւորականութեան մի մասը խմբուած էր «Մշակ» լրագրի շուրջը, միւսը հեռուող էր ռուս յեղափոխական շարժման, որ այն ժամանակ զեկափարում էր «Նարոդնայա Վոլեա» (Ժողովրդական Ազատութիւն) կոչուած ռուսական կազմակերպութիւնը:

Հայ ուսանողութիւնն այն ժամանակ բացառապէս կենտրոնացած էր Մոսկուա եւ Պետրոգրադ:

Մոսկուայում կային երկու կրթական հաստատութիւններ եւս, որ հայ ուսանողներ էին ուսանում — Պետրոլսկի գիւղատնտեսական ճեմարանը եւ Տեխնիքական դպրոցը: Պետրոլսկի ճեմարանի հայ ուսանողները, որ 15-16 հոգի էին, երկու կարգի էին բաժանուած՝ մէկը՝ զրտութեան հետապնդողներ, որ քաղաքական գործունէութիւնից հեռու էին մնում եւ միւսը՝ ռուս յեղափոխական շարժման յարողներ:

Առաջին կարգին էին պատկանում Ռոստոմ Զօրեան, որ առաջին երկու տարին շատ քիչ էր հետաքրքրուած քաղաքական-յեղափոխական կեանքով, եւ Աւետիք Սահակեան:

Իսկ ռուս յեղափոխական շարժմանը ջերմապէս յարած էին Սիմէոն Զաւարեանը, Արշակ Շահնազարեանը (Ռոստոմի աներոջ տղան), Գարբէլէ Դանիէլ-Բէկեանը, մի շատ ընդունակ երիտասարդ, որ վերջը խելագարուեց, Յարութիւն Փիլալեանը, Ստեփան Շահվերդեանը եւ ես, որ ամենից կըրտսերն էի նրանց մէջ:

Տեխնիքական դպրոցում միայն մէկ աչքի ընկնող ուսանող կար — Տիգրան Ստեփանեան:

Պետրոգրադի ուսանողութիւնն, ինչպէս ասի, այդ ժամանակներն ըսկըսել էր ուժեղ ազիտացիոն աշխատանք: Մի քանի անգամ նրանք դիմել էին Մոսկուայի ուսանողութեանը, որ մի համազումար հրախրեն հայ ուսանողներին, մշակելու համար ապագայ գործունէութեան ծրագիր: Վերջապէս Մոսկուա համաձայնեց եւ վերը յիշած չորս հոգին Պետրոգրադից եկան Մոսկուա՝ ուսանողական համազումարին իրրեւ պատգամաւորներ Պետրոգրադի հայ ուսանողութեան:

Համազումարը տեղի ունեցաւ Մոսկուայում 1889 թուականին: Մեր ճեմարանից մարդ չկար այնտեղ, քանի որ մերոնք հայկական տեսակէտ չու-

- Նստած ձախէն աջ.—
- Հրաչեայ Լոյսպարոնեան
- Գառնիկ Լոյսպարոնեան
- Տիկին Աղանի Տէտէեան
- Ռոստոմ Զօրեան
- Տիկին ՀայկանոյՅ Օտապաշեան
- Արտաշէս Գաֆալեան

- Բ. շարք ձախէն աջ.—
- Օր. Արաքսի Մալմանեան
- .....
- Օր. ՍիրանոյՅ Արծնեան
- Օր. Նուարդ Դրմբեան
- Պրն. Կորին
- Օր. Աննիկ Չիլինկիրեան
- Օր. Մարինէ Աէիսեան

- Գ. շարք ձախէն աջ.—
- Պրն. Գալուստ
- Մարուքէ Մառանճեան
- Օր. Մանուշ Հայրապետեան

նէին եւ ազգային-քաղաքական գործունէութեան մասին չէին մտածում: Համալսարանի ուսանողութիւնն էր, որ մասնակցեց այդ համագումարին, ուր պարզուեց, թէ երկու տարրեր տեսակէտ կայ ապագայ գործունէութեան մասին.— Պետրոզրազի ուսանողութիւնը կողմնակից էր լեզալ եւ անմիջական գործունէութեան — ազիտացիայ, համախմբումներ, մարտական խմբերի պատրաստութիւն: (Ռուս կառավարութիւնն այն ժամանակ կարծես թոյլատու ուզով էր նայում այս կարգի գործունէութեան): Իսկ Մոսկուայի ուսանողութիւնը կարծում էր, որ թիւրքապատկան Հայաստանը եւ Հայոց խընդիրը դեռ բաւականաչափ լաւ ուսումնասիրուած ու պարզուած չեն, ուստի նախ պէտք է ուսումնասիրել երկիրն ու հարցը եւ ապա գործունէութեան ծրագիր մշակել:

Համագումարը դրական հետեւանք չունեցաւ իր առաջադրած խնդրի նկատմամբ, նա միայն պարզեց հայ ուսանողութեան մէջ տիրապետող մշտքերի երկու տարրեր հոսանքները եւ մի քանի մոսկուացիներ յարեցին Պետրոզրազի պաշտպանած տեսակէտին:

Համագումարի զրդման տակ զիւզատնտեսական ճեմարանի հայ ուսանողներս սկսեցինք մտածել հայ ժողովրդի օգտին գործելու մասին: Յատկապէս այդ ուղղութեամբ մտահոգ էինք եւ, Ռոստոմն ու Վարդգ. Քաջագնունին (Յովհ. Քաջազնունու մեծ եղբայրը), որ այն ժամանակ ազատ ունկընդիր էր մեր ճեմարանում:

Ես եւ Ռոստոմը որոշեցինք մեր ճեմարանի հայ ուսանողներից մի յատուկ ժողով գումարել, պարզելու համար մեր դիրքը Հայոց հարցի հանդէպ: Միւս ուսանողներն աւելի հասակով էին ու հեղինակուոր. Յար. Փիրալեանն արդէն մի անգամ աքսորուել էր Սիբիր իրրեւ յեղափոխական եւ վերադարձել էր ու նորից մտել ճեմարան իրրեւ ուսանող: Նա արդէն հասուն մարդ էր. տնտեսական բովանդակութեամբ յօղուածներ էր տպագրում «Ռուսկայա Մըսլ» (Ռուսական Միտք) ամսագրում:

Ժողովը գումարեցինք: Այդտեղ Միմ. Չաւարեանն ու Մտ. Շահնագարեանը մեզ կատարելապէս ջախջախեցին իրենց տրամաբանութեամբ: Մեզ աշխատեցին համոզել, որ մեր առաջարկը մի զուտ հայկական, քաղաքական գործունէութիւն սկսելու մասին՝ յիմար բան է. որ հայ ժողովրդի բախտն ու բարեկեցութիւնը կապուած է ուսանողի հետ. որ մենք թուով քիչ ենք եւ անջատուել Ռուսաստանի յեղափոխական մեծ շարժումից նշանակում է շեղուել յեղափոխական ճանապարհից եւ կորստեան մատնուել, ոչնչանալ:

Բայց այս ժողովը մի զարմանալի հետեւանք ունեցաւ: Այդ ժամանակ հայ-վրացական յարաբերութիւնները վատ էին: Միմ. Չաւարեանը, որ հոգով հայ մարդ էր, զգում էր, թէ մի բան պէտք է անել յատկապէս հայութեան համար: Նա այդ անելիքը համարեց հայ-վրացական մերձեցումը, որ նրա կարծիքով պէտք է սկսուէր ուսանողների մէջ եւ ապա կիրարկուէր ու տարածուէր Կովկասում:

Համագումարի արդեցութեան տակ իմ մէջ որոշ տրամադրութիւն արթնացաւ մտածելու եւ գործելու հայութեան համար: Ես կամայ-կամայ մօտեցայ համալսարանի ուսանողներին, որոնց շրջանում թէ՛ հայ լեզու կար,

թէ՛ հայ մտածում: Այդ շրջանում ես սովորեցի հայերէն, ծանօթացայ հայոց պատմութեան հետ, կարդացի հայ հեղինակները գործերը, մի խօսքով կատարելապէս հայացայ հոգով:

1889 թ. ամառը ես դառնալու էի Կովկաս — Թիֆլիս: Քանի որ ես շատ մտերիմ էի Միմ. Չաւարեանին՝ նա ինձ մի նամակ տուեց ոմն Քր. Միքայէլեանի հասցեով եւ ասաց.

— Քանի որ դու շատ ես հետաքրքրում հայ կեանքով, Թիֆլիսում տեսնուիր հետը եւ խօսիր. նա կեանքի մարդ է եւ կարող է քեզ դոհացում տալ:

Հասնելով Թիֆլիս՝ ես առաջին իսկ օրերը գնացի այդ մարդու մօտ: Միմ. Չաւարեանը նամակի մէջ գրել էր, որ ես իր ամենամտերիմ ընկերն եմ, եւ Քրիստափօրն ինձ հետ կարող է լիովին ազատ խօսել:

Քրիստ. Միքայէլեանը մօտ 30 տարեկան մարդ էր, կարճահասակ, կաղ, գունատ՝ կարծես թէ թոքախտուոր, մեծ-մեծ, խելօք եւ բարի աչքերով: Նա ինձ ընդունեց զարմանալի մտերմութեամբ ու ջերմադին եւ, քանի որ մեծ դեր էր խաղում Թիֆլիսի յեղափոխական շրջանակներում, ինձ մանրամասն տեղեկութիւններ տուեց Կովկասի երիտասարդ նարողուցիներէ մասին, որոնցից մէկն էի նաեւ ես:

Մօտ ամիս ու կէս մնացի Թիֆլիս եւ համարեա ամէն օր տեսնում էի նրա հետ, որի հետեւանքն եղաւ մեր մտերմութիւնը: Չարմանալի ընդունակութիւն ունէր մտերմանալու, սիրուելու. նա կարողանում էր զբաւել, իրենը դարձնել մարդուն:

Մի տասնուհինգ օրից յետոյ եկաւ նաեւ Ռոստոմը: Թիֆլիս էին այդ ժամանակ Տիգր. Ստեփանեանը, որին բանտարկել, արձակել եւ վճռուել էին Տէլինիքական դպրոցից եւ աքսորել հայրենիք իրրեւ յեղափոխականի: Այնտեղ էր Օր. Նատալիա Մատինեանը, որ ծանօթ էր Մոսկուայից, ուր սովորում էր մանկարարութիւն: Այնտեղ էր Իշի. Յովս. Արզումանը, Արշ. Թադէոսեանը, որ նոր էր աւարտել անտառագիտական դպրոցը, եւ Նիկոլ Մատինեանը, որ նոր էր վերադարձել Չուիցերիայից ու թարգման էր ֆրանսական հիւպատոսարանի մէջ:

Նիկ. Մատինեանի տունը մի կենտրոն էր, ուր հաւաքում էր ժամանակի երկսեռ երիտասարդութիւնը եւ ամէն տեսակ հասարակական խնդիրների շարքում խօսում ու վիճում էր նաեւ հայկական քաղաքական խնդիրների մասին: Այդտեղ զալիս էին Տիգր. Ստեփանեան, երբեմն նաեւ Երուանդ Թադէոսեանը, որ ազատ ունկնդիր էր Մոսկուայի համալսարանում: Այն ժամանակները շատերը կային, որ միջնակարգ կրթութիւն աւարտած չլինելով կամ ուրիշ պատճառով անկարող իսկական ուսանող գրուելու, զալիս էին Մոսկուա կամ Պետրոզրազ, ապրում էին ուսանողական շրջանում, ծաւաւ ունէին զիտութեան եւ ձգտում՝ ինտելիգենտ դառնալու: Ոմանք մշտնուած էին համալսարան իրր ազատ ունկնդիր, ինչպէս Եր. Թադէոսեանը:

և Վարդգէս Քաջազնունին, իսկ ոմանք էլ պարզապէս գոհանում էին ուսանողական շրջանակում ապրելով և նրանց հետ շփուելով:

Բայց արդէն հասել էր Մոսկուա վերադառնալու ժամանակը: Այնտեղ այլևս հնար չունեցայ այդ կարգի հարցերով զբաղուելու, որովհետև սկսուեց գոտ ուսանողական հոգսերի մի շրջան, որ վերջացաւ 1890 թ. Փետրուարի ուսանողական լայնածաւալ խառնակութիւններով:

Այդ ժամանակները բարձրագոյն դպրոցներում ստորին կարգի աշակերտներ կային — պեդէլներ, որոնք իրօք լրտեսներ էին կառավարութեան: Գիւղատնտեսական ճեմարանի ուսանողներս պահանջ դրինք, որ պեդէլները հեռացուին ճեմարանից: Պահանջը ներկայացրինք մեր ճեմարանի տեսչին, որ այդ ժամանակ նշանաւոր ակնարոյթ Իւնգէնն էր: Նա մերժեց մեր առաջարկը: Այն ժամանակ մենք պահանջեցինք, որ ինքն ևս հեռանայ մեր ճեմարանից, քանի որ մասնագիտութիւնը ոչ մի կապ չունէր գիւղատնտեսութեան հետ: Նա մեր պահանջները հասկանալ չկարողացաւ:

Մենք գումարեցինք մի քանի ժողովներ, որ ճեմարանի վարչութիւնը մտցրեց լրտեսներ և զրա հետեւանքով մեր ընկերներից մի քանիսին բանտարկեցին: Այդ բանտարկութիւններն աւելի զրգուեցին ուսանողներին, և խառնակութիւնն աւելի մեծ ծաւալ ստացաւ: Բանն այնտեղ հասաւ, որ կառավարութիւնը ձերբակալեց ու բանտարկեց ճեմարանի բոլոր ուսանողներին: Ազատ մնացին նրանք, որ ձերբակալութեան ժամանակ պատահաբար քաղաք էին գնացել (Պետրովսկի գիւղատնտեսական ճեմարանը գտնուում էր Մոսկուայի մօտերը):

Քաղաքում եղածների մէջ էինք ևս ևս Ռոստոմը: Միւս օրը երբ ևս ու Ռոստոմը քաղաքից պնուժ էինք ճեմարան, որ մասնակցէինք այդ օրը նշանակուած մեծ միտինգին, պարմանքով տեսանք, որ ղինուորների ուղեկցութեամբ մեր ընկերներին — 350-400 մարդ, ձերբակալուած տանում են քաղաք: Վաղեցինք որ միանանք նրանց, բայց ժանտարմները թոյլ չտուին, ասելով՝ գնացէ՛ք ճեմարան, և թէ պէտք է, որ ձեզ ևս բանտարկեն՝ կը բանտարկեն:

Քանի որ ամենից անդուսպ ուսանողներից մէկը ևս էի, կասկած չունէի, որ պիտի ինձ ևս բանտարկեն: Երբ հասայ ճեմարան ամբողջ հիմնարկութիւնն աչքիս աւերակ երեւաց, մանաւանդ մեր հանրակացարանը, որ պետական մի շէնք էր:

Մի երկու ժամից յետոյ մէկ-մէկ հաւաքուեցին ձերբակալութեան ժամանակ ճեմարանում չեղածները — մօտ 15-16 հոգի: Ժողով արինք, որի ժամանակ առաջարկ եղաւ՝ ամէն կերպ աշխատելու, որ մեզ ևս բանտարկեն մեր միւս ընկերների հետ: Մեծամասնութիւնը համաձայն չեղաւ այս առաջարկին, բայց եօթ հոգի, որոնց մէջ երկու հայ — ևս ու Ռոստոմը — կողմնակից եղանք այդ առաջարկին և կաղմեցինք «Եօթի միութիւն» և որոշեցինք թոյլ չտալ, որ մեղանից մէկն ու մէկին բանտարկեն առանց միւսների: Ամէն մէկս մեզ հետ առած բաւական ծխախոտ, մի-մի Փուլետ երջիկ և երկուական

Փուլետ հաց, պարկերն ուսերիս՝ ման էինք դալիս միասին և գիշերները քունում անտառում:

Նախ գիմեցինք մեր տեսչին և առաջարկեցինք՝ յայտնէ, ուր հարկն է, որ մեզ ևս բանտարկեն: Նա մերժեց մեր առաջարկը: Գնացինք ոստիկանատուն և առաջարկեցինք, որ մեզ բանտարկեն: Մեզ պատասխանեցին, թէ երբ Պետրոյրատից հրաման ստանան՝ կը բանտարկեն: Տարօրինակ դրութիւն էր ստեղծուած. մենք, որ ամենից աւելի մեղաւորներից էինք, չէինք բանտարկուած: «Ի՞նչ կը մտածեն մեր ընկերները», — անցնում էր մեր մտքով:

Համալսարանի ուսանողները դանդաղ էին շարժուած և լաւ չէին պաշտպանում գիւղատնտեսական ճեմարանի ուսանողներին: Նրանք դժգոհ էին մեզանից և սուտ էին, թէ ճեմարանի ուսանողները շարունակ մեր գլխին փորձանք են բերում:

Համալսարանի 4000 ուսանողներից հազիւ 500 հոգի էին բանտարկուած, որոնց մէջ հայեր չկային: Որոշեցինք մտնել համալսարանի ուսանողութեան մէջ և յուզում առաջ բերել: Այս առաջարկը Ռոստոմն արաւ. ևս հակառակ էի: Եւ քանի որ մեր նպատակը բանտարկուելն էր, ևս առաջարկեցի յարձակուել ոստիկանատան վրայ և զրանով առիթ տայ մեզ ևս բանտարկելու: Այդպէս էլ արինք. յարձակուեցինք ոստիկանատան վրայ, պատուհանները ջարդեցինք: Մեզ ձերբակալեցին, բայց հետեւեալ օրն ևս եօթ արձակեցին, որովհետև Պետրոյրատից կարգադրութիւն էր եղած այլևս ուսանող չձերբակալել:

Այդ օրերը մեր ճեմարանի զրան վրայ մի յայտարարութիւն երեւաց, թէ այսինչ ուսանողները պէտք է ներկայանան նահանգապետին, առնեն իրենց վկայականները և հեռանան Մոսկուայից իրր արձակուածներ: Թղթի վրայ նշանակուած էր 11 հոգու անուն, որոնց թուում իմն ու Ռոստոմինը: Երբ ցանկը կարդացինք՝ մի տեսակ հանդուստացանք: Վերջապէս մենք ևս պատիժ կրեցինք և կարող էինք համարձակ նայել մեր ընկերների երեսին:

Սակայն մեր «եօթի միութիւնից» հինգը հանդուստացաւ. դրանց թուումն էի նաև ևս: Իսկ երկուսը — մեր «եօթի միութեան» գլխաւորը, որ մի հրեայ էր Տերեւտեւ ազգանունով և Ռոստոմը չգոհացան դրանով: Ես իրրեւ յեղափոխական՝ յոգնեցի. իսկ Ռոստոմը կարծես նոր ևս անդի եկաւ: Առաջին անգամ ինձ համար այստեղ պարզուեց Ռոստոմի բնաւորութեան ուժը: Ռոստոմն առաջարկեց շարունակել ազիտացիան համալսարանի ուսանողութեան մէջ. նրան ընկերացաւ Տերեւտեւը, իսկ մնացած հինգս գոհացանք մեր ստացած պատժով:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, քի 5, 1923

«Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից»

(Մարտին Շաքիրեանի յուշերը),

գրի առաւ Ն. Հանգոյց [Ն. Ագրալեան]

ՍԱՄՈՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

1895 Սեպտեմբերի սկզբի օրերէն մէկն էր: Տրապիզոնի մէջ Քելլալ Ալեքսան իր գոռ ձայնով շուկայի մասերը կը թնդացնէր՝ աւետելով թէյասէր հասարակութեան, որ առաջին անգամ ըլլալով Ռուսիայէն ժամանած է թուրք քաղաքի սամովարի գործարաններու ներկայացուցիչ այսինչ այսինչեան, սամովարներու ճոխ մթերքով մը եւ շատ աժան գներով, ուստի ո՛վ որ կը փափաքէր չըրկուիլ պատահ առիթէն, պէտք է փութար Եկնի խանի թիւ այսինչ սենեակը:

Շատեր փութացին եւ գեղեցիկ սամովարներ գրկած դուրս ելան: Ես ալ կը փափաքէի ունենալ գեղեցիկ սամովար մը, բայց իմ մէջ աւելի բունն էր ցանկութիւնը, վայրկեան մը առաջ, տեսնել սամովարի մեծ վաճառականը, որը բացի սամովարներէն, բերած պիտի ըլլար նաեւ շատ թանկագին եւ հետաքրքիր տեղեկութիւններ Կովկասէն եւ պիտի հարթէր շատ մը տարակարծութիւններ, որ մէկ կողմէն ծագած էին Արեւելեան Բիւրոյի եւ Տրապիզոնի կոմիտէին միջեւ, եւ միւս կողմէն մեր մէջ հետեւելիք թաքթիքի շուրջ: Բայց ի՛նչպէս կրնայի հակառակ երթալ մեր իսկ դրած արգելքին. ու երանի կու տայի մեր ընկեր Վրէնին, որ իր յարմարութիւններով առաջին օրէն իսկ ելեւմուտ ունէր սամովարի մեծ վաճառականին մօտ, որ ուրիշ մէկը չէր, բայց եթէ մեր մեծ ընկեր Ռոստոմը, որ պարսկական անցազրով եւ սամովարի մթերքով Տրապիզոնի գծով Կարին կը մեկնէր:

Տրապիզոնի Կոմիտէի հետ նախապէս թղթակցելով՝ յարմար տեսնուած էր այդ ձեւը, կասկածի տեղի չտալու համար: Կոմիտէի որոշումով, ընկեր Վրէն, իբրև յանձնակատար՝ կը պահէր կապը Ռոստոմի հետ, մինչեւ յարմարութիւն առնէր տեղ մը հաւաքուիլը:

Ընկեր Վրէն ինձ համար ալ գնեց սամովար մը, զոր առանձին գուրգուրանքով տարի տուն՝ զարմանք պատճառելով մերիներուն:

Սամովարի թէյը յայտնի է, որ ախորժելի է, բայց ինձ կը թուէր, թէ այս սամովարի թէյը առանձին համ պիտի ունենայ. չէ՞ որ Ռոստոմի բերածն էր եւ դաւադրական ապրանք: Ասկէ զատ, իմ պատանեկան հոգու մէջ հպարտութիւն մը յառաջ բերած էր այն հանգամանքը, որ այդ սամովարը սովորական ապրանք չէր, ինչպէս եւ զայն ծախող վաճառականը, եւ ես ծանօթ էի գաղտնիքին, ամբողջ քաղաքին մէջ միայն քանի մը ընկերներով: Ռորչած էի սամովարը առաջին անգամ վառել որեւէ նշանակալից օր մը եւ ընկերներու հետ լաւ ժամանց մը ունենալ:

Ռոստոմ իր դերը լաւ տարաւ: Պարզ կեցուածքը, թաթարական աղճատ լեզուն եւ, մանաւանդ, գիմագծերը կը փարատէին ամէն կասկած: Բայց ուսիկանութիւնը անտարբեր չէր դէպի նա: Չէ՞ որ Տրապիզոն եղած էր ուռ-

սահայ գործիչներու յաճախած վայրը: Ռուրէն Սանդատեան, Ս. Զաւարեան, Յ. Արզուիթեան, Լ. Թաղէսեան, օր. Փենիա եւ ուրիշներ հոն բռնուած եւ կամ անկէ արտաքսուած էին (Յ. Նուսուֆեան աննկատ գործեց եւ անցաւ Պոլիս): Դեռ նոր արտաքսուած էր յայտնի մանկավարժ եւ Տրապիզոնի հայ դպրոցներու տեսուչ Յ. Տէր Միրաքեան: Բայց ատոնք ամէնքը եկած էին իբրև տեսուչ կամ ուսուցիչ եւ չփութ ունեցած տեղական յայտնի հայերու հետ, ուստի սամովարի վաճառականին դէմ հետապնդումը խիստ չէր, մանաւանդ որ ոչ մի յայտնի հայի հետ յարարերութիւն ունէր եւ յանձնակատարներու հետ կ'անցընէր իր ժամանակը:

Ռոստոմ, սակայն, կ'աճապարէր. պէտք էր օր առաջ հաւաքուիլ: Մեր աւագ եւ զգուշութեան մասնագէտ ընկեր Արսէն (Մանուկ Թաղէսեան) վրձուեց, որ առաջին ժողովը կայացնելու ամենայարմար վայրը... բաղնիքն է: Քաղաքին կեդրոնը, մէյտանի բաղնիքը ժամադրութիւն տրուեցաւ կիրակի օրուայ համար:

Որոշուած ժամին դացի բաղնիք: Ներկայ էին Արսէն (Մանուկ Թաղէսեան), Տաշրացի (Վրէն Գասպարեան, նահատակուած 1915ին), Զաւէն (Յակոբ Գարակէօղեան, 1897ին Պոլսոյ մէջ ձերբակալուելու ատեն անձնասպան եղած), Սուրէն (Օննիկ Թումանեան) քաջուած էին բաղնիքի խուռնաներէն մէկուն մէջ: Անոնց մօտ թասը ձեռքին նստած էր լայն ու թուխ գէմքով, խոշոր ճակատով, տափակ քիթով եւ արտայայտիչ աչքերով անձանթ մը. խօսք չկար, որ Ռոստոմն էր ան: Ծանօթութիւնը կարճ տևեց. ժողովը սկսաւ խիստ ծիծաղելի պայմաններու մէջ. թէև բաղնիքին մէջ բազմութիւն չկար, բայց զգուշութեան համար, ջուրն ու սապոնը եւ թասերու ձայնը կը խառնուէին մեր օրակարգի հարցերուն, սրոնք, սակայն, շատ լուրջ էին:

Կարծիքներու փոխանակութենէ յետոյ տեսնուեցաւ, որ այդ հարցերը, յամենայն դէպս, բաղնիքի մէջ լուծուելիք բաներ չէին, մանաւանդ որ տարակարծութիւններ կային մեր մէջ ալ: Ընկեր Արսէնի գիւտը հանձարեղ էր՝ զգուշութեան տեսակէտով, բայց գործի համար անպէտք: Ռոստոմ իր քաղցրը քմծիծաղով միացաւ ընկերներէն մէկուն առաջարկին՝ անպայման տուն մը հաւաքուիլ եւ լրջօրէն զրապուիլ: Ընկեր Արսէն, ի վրէժ իր բաղնիքի ծրարարի անյաջողութեան, առաջարկեց իր տունը գումարել ժողովները. բոլորը համաձայնեցան եւ ա՛լ սկսաւ սովորական լուրանքը: Ռոստոմին հետ երկար խօսեցայ: Իր պարզ, անպաճոյճ խօսուածքին մէջ զգացի հոգու մեծ ճարտասանը եւ բարձր մարդը:

Անկէ յետոյ շատ տեղ եւ բազմաթիւ գործերու մէջ մենք իրար պատահեցանք, բայց առաջին՝ բաղնիքի մէջ ստացած տպաւորութիւնս մնաց ամենէն ուժեղն ու քաղցրը:

Այս տողերը գրած ատենս, 35 տարիներ յետոյ, դեռ իմ առջև կենդանի գոյներով կը ներկայանայ բաղնիքի խուռնայիմ մէջ թասը ձեռքին բռնած սամովարի մեծ վաճառական Ռոստոմը, չըջապատուած գաղափարի մը տերիմներով:

«ԴՐՕՇԱԿ», Իւլ 11-12, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1930

ԱՆԵՐԵՒՈՅԹ ՂԵԿԱՎԱՐԸ

1895 թիւն հայութեան համար կը սկսի յուսոյ եւ յուսախարութեան շրջան մը: Մէկ կողմէն՝ բարենորոգմանց ծրագիրներ, եւրոպական միջամբտութիւններ յօգուտ հայ ժողովուրդի, հասարակական կարծիքի հետաքրքրութիւն Հայկական Դատով. միւս կողմէն՝ այդ բոլոր սպառնալիքներու ցնորականութիւնը, շարունակուող հարստահարութիւնները եւ տեղ տեղ կոտորածներ Տաճկաստանի մէջ: Այս երկունքի շրջանին մէջ հայ ժողովուրդի առջև դրուած էր ցարդ եղած յեղափոխական գործունէութեանց վերազնահատման հարցը: Ժողովրդական դանդաղները յուսալքման ենթարկուելով՝ բոլոր դժբախտութեանց եւ անյաջողութեանց մեղքը փաթթեցին Հնչակեան կուսակցութեան վրին: Տեղի ու անտեղի քննադատութեանց կ'ենթարկուի մինչ այդ ղեկավարող կուսակցութիւնը, որ չունենալով խոր արմատներ ժողովուրդի մէջ եւ չլիմանալով աջն ու ձախն եկած հարուածներուն, կը քայքայուի եւ միայն անուանապէս կը շարունակէ իր գոյութիւնը: Բազմաթիւ են այն պատճառները, որոնք 1895 թուականէն յետոյ կործանեցին այդ կուսակցութիւնը: Մեր նիւթէն դուրս է այդ հարցի հետազոտութեամբ բզբազուիլ, այստեղ պիտի յիշենք միայն, որ ճիշդ այդ թուականէն իր ամբողջ հասակով հրապարակ կը նետուի երիտասարդ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ իր երկրորդական դիրքէն դուրս գալով տիրաբար կը խլէ հայ ժողովուրդի ղեկավարութիւնը:

Սասնոյ կռիւներէն եւ Էրզրումի ցոյցերէն յետոյ, երբ ամէն մարդ շուարման ու վհատումի մէջ էր, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռուստամը, Թողլով ժընեւը, ուր կը խմբագրէր Գրօշակը, կ'անցնի Էրզրում: Անոր գալով՝ նոր թափ եւ նոր ուղղութիւն կը ստանայ յեղափոխական գործունէութիւնը Էրզրումի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ: Անոր աշխատանքին հետեւանքով է, որ այդ նահանգներէն ի սպառ կը վերնայ Հնչակեան կուսակցութիւնը եւ կը սկսի Հ. Յ. Դաշնակցութեան միահեծան գործունէութեան շրջանը:

Այդ աներեւոյթ մարդու անշոշափելի գործերը դժուար է ճշդել, կարելի է զգալ կամ առաւել զիտնալ, բայց գրեթէ անկարելի է փաստել: Հասարակ ուսուցիչ մըն է ան Էրզրումի մասնաւոր դպրոցի մը մէջ. համեստ է իր ապրուստով ու հազուստով եւ ոչ ոքի ուշադրութիւնը կրնայ գրաւել իր պարզ շարժումներով. շատ քիչ կը խօսի եւ գրեթէ բնաւ չի ճտներ. կը խուսափի ամէն տեղ իր մտքերը արտայայտել. զինքը շրջապատողներէն շատերը յաճախ շեն ալ հաւատար, թէ ան յեղափոխական կրնայ ըլլալ եւ նոյնիսկ երբեմն յեղափոխութեան ու ըմբոստութեան դասեր ալ կու տան այդ ամէն բանէ անտեղեակ թշուառ վարժապետին:



Ղարաբիլիսա, 14 Օգոստոս 1906ին

- (1) Կարապետ Պարունակեան, (2) Զինուոր, (3) Զօրեան Ռուստոմ, (4) Մատինեան Նիկողա, (5) Օր. Քալանթարեան, (6) ..... (7) ..... (8) ..... (9) Մարկոս Մատինեան, (10) Տիկին Մարիամ Մատինեան-Զաւարեան, (11) ..... (12) Պրն. Մելիքեան, (13) Տիկին Մելիքեան, (14) Տիկին Սաթենիկ Արղութեան, (15) Տիկին Մուշեղեան Էլիսո, (16) Տիկին..... (17) Օր. Ստեփաննայ Գրիգորեան, (18) Օր. Եղիապարեան Հեղուշ, (19) Մելիքեան Ի., (20) Տիկին Մելիքեան, (21) Օր. Եանտալեան Ալեքսանտրա, (22) Արղութեան Յովսէփ, (23) Պրն. Լեւոնիկ, (24) Գրիգոր Միրպայեան («Սիւնի»), (25) Արտաշէս Աբեղեան, (26) Անտրոնեան Վարդգէս, (27) Մելիք-Բեղտիարեան Յովսէփ, (28) Մելիքեան Կ., (29) Տիկին Պարունակեան:



Գ. Ք. Մ. Բրդ Ընդհանուր Ժողովը, Կարին

Բայց այդ մթուժեան մէջ թագնուող մարդը խումբ մը գործիչներ էր բերած իրեն հետ Երկիր, որոշ հրահանգներով գանոնք ցրուած էր Հայաստանի գաւառները եւ անոնց միջոցով է, որ կը տարածէր իր եւ իր կուսակցութեան գաղափարները: Ան կարողացեր էր յեղափոխական գործիչներէն ընտրել այնպիսիները, որոնք ժողովուրդի մօտ ըլլալով իրենց հասկացութեամբ, վարք ու բարքով եւ միաժամանակ մարտած ըլլալով Դաշնակցութեան սկզբունքները, ընդունակ էին հասկցնելու ժողովուրդին յեղափոխական գաղափարները: Ռոստոմը կրցած էր գտնել այնպիսի մարդիկ, որոնք պատրաստ էին մոլեռանդօրէն կուռիլ եւ զոհուիլ իրենց գաղափարներուն համար:

Թագնուած այդ տեսակ գործիչների ետեւ, Ռոստոմ աննկատելի կերպով կը դեկափարէ անոնց գործունէութիւնը եւ հիմք կը դնէ գործի մը, որ անշեղ կերպով կը շարունակուի մինչեւ մեր օրերը: Անոր՝ գաւառները զրկած գործիչներու շարքին մէջ կը գտնուէին Հրայրը (Բասէն), Թաթուլը (Նախ Էրզրում, ապա Սասուն), Տուրպախը եւ Ջալալը (Խնուս եւ Սասուն), Սէրոբը (Ախլաթ), Արթուր եւ Թումասը (Տարօն, Սասուն):

Տեսնենք թէ ինչ գաղափարներ է որ Ռոստոմ կը քարոզէ իր այս ժողովրդական գործիչներու միջոցով:

Առաջին, Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը պէտք է դարձնել ժողովուրդին համար սրբութիւն մը, որ համագոր ըլլայ կրօնական զգացումներուն եւ նոյնիսկ գերազանցէ գանոնք:

Երկրորդ, Հ. Յ. Դաշնակցութեան զրօշին տակ պէտք է կազմակերպել ըստ կանոնադրի քիչերը միայն, որոնք ո՛չ միայն կը հասկնան ու կը համակրին ծրագրին, այլ նաեւ պատրաստ կ'ըլլան անձամբ գործադրելու զայն եւ հարկ եղած պարագային նոյնիսկ զոհարելի իրենց կեանքը:

Երրորդ, Հայկական Դատը Թուրքիոյ մէջ միայն ազգային ու կրօնական դատ չէ, այլեւ դասակարգային, դատ ճշուածներու ընդդէմ ճշուղներու: Եւ քանի որ թուրքերու եւ քիւրտերու մէջն ալ ճշուածներ կան, պէտք է ջանալ անոնց հետ միանալ ընդհանուր ուժերով պայքարելու համար կառավարութեան դէմ, որ բոլոր ճշուղ ուժերու՝ ազգային, կրօնական, դասակարգային՝ մարմնացումն է:

Չորրորդ, հայ ժողովուրդը, որպէս հարստահարուած տարր, միայն զէնքով կրնայ փրկուի ինչ գտնել եւ միմիայն անոր դինուած դիմադրութիւնն է, որ կարող է կասեցնել կամ սահմանափակել բռնութիւններն ու կոտորածները:

Հինգերորդ, յեղափոխական գործիչը, մարտիկը, իր անձնական օրինակով, կարգապահութեամբ, տառապանքով, հերոսութեամբ եւ նահատակութեամբ պիտի դաստիարակէ ժողովուրդը ու պատրաստէ զայն ըմբոստութեան պայքարին համար:

Ասոնք են ահա այն գլխաւոր սկզբունքները, որոնցմով կ'առաջնորդուին դաշնակցական գործիչները երկրէ երկիր:

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ»  
Ա. տպագրութիւն, Գ. հատար, էջ 125-127

**ՌՈՍՏՈՄԻ «ԽԱՐԴԱԽՈՒԹԻՒՆ»Ը**

Միութեան այս քայքայումը, իրրեւ հետեւանք ստեղծուած յօժարա- կամ ֆեդերասիոնի, պիտի հարկադրէր Միութեան հաւատաւոր պաշտպաննե- րին, — վերացնել ֆեդերասիոնը, միաձուլել՝ բոլոր խմբակները եւ ստեղ- ծել մէկ եւ անքաժամ կազմակերպութիւն:

Այս գործը կատարուեց՝ «Յեղափոխականների» դարձնելով «Յեղա- փոխական»:

Ինչպէս վկայում են քննաթիւնների ազօտ յուշերը՝ վիրարութական այս ճարտար գործողութեան վարպետը եղաւ Ռոստոմը:

Կարո՞ղ է լինել: Այս սրբազան «խարդախութիւն»ը յարմարում է ան- զուգական Վարպետի խառնուածքին: Ռոստոմը կարո՞ղ է յղանալ մէ՛կ կու- սակցութեան գաղափարը եւ ապա, «ների» յայտումով, առաջ քշել «սղա- կէտ»ը, քիչ վերջ նաեւ այդ «կէտ»ը փոշիացնելու եւ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»ը ստեղծելու համար:

Յիշում ենք... չա՛տ մութ, չա՛տ ազօտ ձեւով, թէ ինչպէս Ռոստոմը, մեր հետաքրքրութեանը գոհացում տալու համար, պատմում էր, իր հմայիչ ժպիտը դէմքին, այն «խարդախութեան»ը մասին, որ ինք գործել է մեր վե- րամկրտութեան եւ վերափոխութեան հարցի մէջ:

— Յովնանը մի օր ինձ ասաւ, — աւարտեց իր զրոյցը Ռոստոմը, — թէ ես խարդախ եմ եւ խարդախութիւն եմ արել՝ «ների» տեղ «սղակէտ» դնե- լով. իրաւունք ունէր Յովնանը. բայց պէ՛տք էր այդ խարդախութիւնը. ա- ւելորդ «կէտ»ն ալ յետոյ ինքնիրենը գնաց...

Խիզախեցինք զրի առնել այս յուշը, որովհետեւ նա նմանում է մի պատմութեան, որ ունի մեր կնիքը:

Ըստ երեւոյթին՝ նոյն փուլերից անցած է նաեւ այս վերջինը:

Ռոստոմի անուան կապուած մեր յուշը ամբողջացնելու համար՝ դիմե- ցինք ընկ. Հ. Օհանջանեանին եւ խնդրեցինք զրի առնել ինչ որ յիշում է մեր կնիքի եւ զինանշանի մասին: Ընկ. Հ. Օհանջանեան իր 1940 Հոկտ. 30 թը- ւակիր գրութեամբ հետեւեալն էր յայտնում մեզ.

«Ստորեւ գրած պատմութիւնը ինձ հաղորդած է Ռոստոմը (թէեւ չեմ կարող հաստատապէս պնդել, որ իսկապէս Ռոստոմն է պատմողը, բայց Ռու- բինան շատ լաւ կը յիշէ, որ նոյն բանը իրեն պատմել է Ռոստոմը):

«Յատուկ կնիքի եւ զինանշանի անհրաժեշտութիւնը զգացուել է Առա- ջին Ընդհանուր Ժողովից յետոյ, 1892-93 թուականներին, — իր եղերական մահից եօթը տարի առաջ վկայում էր ընկ. Համօն, — Ժընեւ գտնուող ըն- կերների մէջ: Սրանց մէջ է եղել նաեւ Ռոստոմը:

«Դաշնակցութեան գաղափարը եւ գործելակերպը արտայայտելու հա- մար ընդունուել է, որ պէտք է կնիքի մէջ տեղ գտնեն Դաշնակցութեան դրօ-

շակը՝ իրրեւ նրա գաղափարը արտայայտող, եւ սուր, գրիչ ու բահ՝ իրրեւ այդ գաղափարին հասնելու միջոցներ:

«Այդ բոլորը — դրօշակ, սուր, գրիչ եւ բահ — իրական առարկանե- րով դասաւորուելուց յետոյ, Ռոստոմը իր ձեռքի մէջ բռնել է այդ կազմա- ծը, որ եւ լուսանկարուել է: Այդ լուսանկարը օգտագործուել է կնիքը շի- նելու համար:

«Այսպիսով կարելի է ասել, որ ճիշդ է այն կարծիքը, թէ մեր կնիքի եւ զինանշանի մէջ երեւացող ձեռքը — Ռոստոմի ձեռքն է»:

Ո՞րքան լաւ պիտի լինէր, եթէ հներից ողջ մնացածները այսօր զրի առնէին այս հարցերին կապուած իրենց յուշերը, փոխանակ վաղը այդ յու- շերը իրենց հետ գերեզման տանելու:

«ԳԱՎԱՓԱՐՆԵՐԻ ՈԳԻՆ», 1951, Գափրէ, էջ 19-21

ՅՈՒՇԵՐ ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ

Պուլկարահայ գաղութը, կամ՝ առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները յաճախ առիթը ունեցած են Ռոստոմէն առաջ եւ անկէ յետոյ ճանչնալու գաշնակցական գործիչներ, որոնք բոլորն ալ, անշուշտ, ձգած են մտքեր, գեղեցիկ յիշատակներ, սգեւորող ու շինիչ տղաւորութիւններ՝ գաշնակցական զանգուածներու եւ պուլկարահայ հասարակութեան մէջ, բայց անոնցմէ ո՛չ մէկը չէ թողած այնքան խորունկ հետքեր եւ չէ բացած անջընջելի ակօս մը՝ հայ երիտասարդութեան մտքին ու սրտին վրայ, որքան Ռոստոմը: Ահա թէ ո՛ր պէտք է փնտռել գործիչին մեծութիւնը:

1899 թուի կէսին Ռոստոմ առաջին անգամ երեւցաւ Ֆիլիպէի մէջ, ուր եւ հաստատուեցաւ:

Այդ ժամանակամիջոցին հայ ժողովուրդը կ'ապրէր քեակցիայի շրջան մը:

Օսմանեան պանքայի ցոյցէն յետոյ առաջ եկած կոտորածը եւ անոր անմիջական հետեւանք եղող արտադրողներ, իրենց սարսուղեցիկ պատկերներով եւ մանրամասնութիւններով, հողեպէս եւ բարոյապէս ընկճած, խռոված էին հայ ժողովուրդի խոշոր մէկ ստիպի յեղափոխական տրամադրութիւնները: Անշուշտ, այս շրջանը կարելի էր համարել անցողակի բնոյթ ունեցող բնական երեւոյթ մը ժողովրդական զանգուածներու համար: Երբ, սակայն, կ'աւելցնենք ասոր վրայ Արփիարի, Չօղանեանի եւ արբանեակներու «Մարտ»ի, «Նոր կեանք»ի եւ «Անահիտ»ի միջոցաւ ըրած հակայեղափոխական թունաւոր քարոզներն ու մտքերը, կը պարզուի, որ ժողովուրդը այս ուղղութեամբ զէպի բարոյական սնունդութիւն կ'առաջնորդուէր՝ անոր մէջէն փրցնել նեւերով այն ամէնը, ինչ որ սուրբ, նուիրական ու յեղափոխական էին, վերջապէս, ազգային իսկալներու եւ բազմանշաններու իրականացման համար ամենէն հօգր ազդակներն ու յենարաններն էին: Եւ որ ամենէն պէտքային է, այս բոլոր հակայեղափոխական մտքերը, բանասիր ու գրաւոր կերպով պրոպականտ կ'ըլլային արտասահմանի հայութեան՝ տաճկահայ անուանի մտաւորականներու կողմէ «յեղափոխական» մակդիրին տակ, ինչ որ շատ աւելի վտանգաւոր էր, որովհետեւ աւելի դիւրութեամբ կրնար խաբուիլ միամիտ եւ արդէն յուսալքուած ժողովուրդ մը:

Ճիշդ է, «Դրօշակ»ի կողքին «Շարժում» եւս կը ծաղկէր, խիստ կերպով կը մաքառէր այդ հիւանդոտ, սպանիչ արշաւանքին, մթնոլորտին դէմ, բայց պէտք էր ժողովրդականացնել զայն: Անհրաժեշտ էր կազմակերպել հոծ բազմութիւններ յեղափոխական դրօշին տակ:

Այսպիսի փոխանցման շրջանի մը, Ռոստոմի մուտքը Պուլկարի կաբեւոր առաքելութիւն մըն էր:

Պէտք էր բարձրացնել ժողովրդի ընկնուած տրամադրութիւնները, կրթելով նոր սերունդ յեղափոխական եւ ազգային ստող դաստիարակութեամբ: Մամուլի միջոցաւ մերկապարանոց ընել հակառակորդի բոլոր ստութիւնները եւ թունաւոր պրոպագանտը: Ահա Ռոստոմի նշանարանը, որուն խկապէս կառչած մնաց եւ որը հետագոյնց ու գործադրեց, ինչպէս պիտի գործադրէր ճարտարապետ մը, թուղթի վրայ պատրաստած իր յատակագիծը շինութեան պահուն:

Այս վեւեմ նպատակին հասնելու համար, Ռոստոմ գտած էր հետեւեալ միջոցները. 1. Ունենալ սեփական մամուլ, 2. Բանալ մասնաւոր վարժարան, 3. Զարկ տալ գեղարուեստին, 4. Կազմել դաշնակցական երիտասարդներու խումբեր, 5. Պուլկարահայութիւնը սիրցնել պուլկար ժողովուրդին եւ կառավարութեան՝ ամրացնելով անոր դիրքը գաւազան տնտեսական ու քաղաքական ոտնձգութիւններու դէմ:

1. Մամուլ.— «Շարժում» թերթը արդէն կը հրատարակուէր Վառնայի մէջ, որուն կատարած դերի մասին յիշեցի արդէն: Երբ «Շարժում» սայթաքեցաւ իր ուղղութենէն եւ նպատակէն, կորսնցնելով գոյութեան իրաւունքը, լոյս տեսաւ «Ռազմիկ»ը Ֆիլիպէի մէջ՝ աւելի մեծ ծաւալով, խմբազարպետութեամբ Ռ. Զարգարեանի: «Ռազմիկ», վարպետ, սիրուած ու փնտուած գրչի տակ, յեղափոխական շունչով, մեծ դեր կատարեց իր գոյութեան ընթացքին պուլկարահայութեան մէջ, մինչեւ որ Օսմանեան Սահմանադրութիւնը վրայ հասնելով, իր խմբազարկան կազմով անցաւ Պոլիս, ուր ձեռնարկուեցաւ «Ազատամարտ»ի հրատարակութեան:

2. Մասնաւոր վարժարան.— Որպէսզի անկաշկանդ կերպով կարենար կրթել ժամանակակից գաղափարներով օժտուած սերունդ մը, որ ամէն բանէ առաջ ըլլար առողջ մտածումի ու դաստիարակութեան տէր, գերծ որեւէ հիւանդոտ, վնասակար եւ ազգային տեսակէտով սպանիչ մտայնութիւններէ, Ռոստոմ որոշեց եւ իր կնոջ՝ տիկին Նզիթարէթի հետ բացաւ մասնաւոր վարժարան մը, ուր սկսան յաճախել նախապէս չորս-հինգ աղջիկներ եւ նոյնքան մանչեր, որոնցմէ առաջինները, կարծես, սահմանուած են եղեր կրթուելու Ռոստոմի շունչին տակ, ծառայելու համար նոյն ուղղութեամբ, միեւնոյն յարկին մէջ: Այսպէսով հետզհետէ Զօրեան վարժարանը ժողովրդակաւանացաւ եւ ահազին յեղաշրջում առաջ բերաւ Ֆիլիպէի հայ հասարակութեան մէջ: Հոն պաշտօնավարեցին ուսուցչական կոչման արժանաւոր եւ համապատասխան անձեր՝ Պիոնեան, Մանուկէան, Մարզպետ:

3. Զարկ տալ գեղարուեստին.— Ռոստոմ կազմեց երգեցիկ թատերասէր խումբ մը, նպատակ ունենալով մէկ կողմէն գեղարուեստը սիրցնել հայ հասարակութեան՝ միանգամայն ստեղծելով ընտանեկան բոյներու մէջ համակիրներու մտերիմ մթնոլորտ մը: Տալով թատերական ներկայացումներ հայկական կեանքէ՝ նպատակն էր կենդանի հետաքրքրութիւն ու շարժում ստեղծել Հայ Դատին հանդէպ: Յոյց տալով Հայաստանի դիւզացիին

միճակը, անվերջ տատայունքները թխրք անդու թ պաշտօնեաներու լուծին ու քրեառ պէկերու բռնակարութեան տակ՝ աշտխտով յեղափոխականացնել հայ ժողովուրդը, վարժեցնելով գայն սիրելու Հայաստանը եւ ընդունակ դարձնելու Հայաստանի ազատագրութեան համար գոհարութիւններ յանձն առնելու: Թող չզարմանայ ընթերցողը, երբ յայտնեմ, թէ երգեցիկ խումբին ուսուցիչն ալ նախապէս ինքը Ռոստոմն էր: «Մեր Հայրենիք»ը եղաւ առաջին երգը խումբին: Հետզհետէ երգեցիկ խումբը եղաւ սառուարաթիւ եւ ունեցաւ իր պուլկար ուսուցիչը՝ Պոպով:

Թատերական ներկայացումներ սարքելու համար սրոջ չափով ընդունակ երիտասարդներ ունեցանք. կը սրահէր միայն աղջիկ, որ բեմ ելնելու համարձակութիւն ունենար. իսկ եթէ ասիկա գտնել հնարաւոր ըլլար, ո՞ր հայ ծնողքը պիտի յօժարէր ասկէ ուղիղ 30 տարի առաջ թոյլ տալու իր աղջկան երեւալու բեմին վրայ հասարակութեան առջև: Այս ուղղութեամբ փնտռուցներն ու տարուած ջանքերը ապարդիւն անցնելով՝ որոշուեցաւ թատերախաղ մը ներկայացնել՝ վերցնելով աղջկան դերը: Դուրեանի «Սեւ հողեր»ը եղաւ այդ խաղը: Ռոստոմ, Մանուէլեան, Բարթոլդ եւ ես, քանի մը դիշերներ փորձեցինք տանել աղջկան դերը, բայց կէս ճամբուն վրայ իսկ տեսանք, որ խաղը կը դառնայ կմախք մը: Ընդհատեցինք մեր աշխատութիւնները մինչեւ որ, վերջապէս, կարելի եղաւ գտնել զարգացած, ուսումնաւարտ աղջիկ մը, որ առաջին անգամ բեմ պիտի ելնէր՝ պատճառ դառնալով, որ իր օրինակը վարակիչ դառնայ: Այդպէս ալ եղաւ. թատերական ներկայացումները մեծ սղեւորութիւն առաջ բերին Ֆիլիպէի հայ հասարակութեան մէջ, արթնցնելով խոր հետաքրքրութիւն եւ համակրութիւն ու սէր դէպի Դաշնակցութիւնը:

Ֆիլիպէի տենդոտ գործունէութեան արձագանգեցին միւս հայաշատ քաղաքները: Եւ ամէնուրեք սկսաւ նոր ու տաք գործունէութիւն մը նոյն ուղղութեամբ:

Եւ այսպէս, Ռոստոմ յաջողեցաւ խաղող կերպով թափանցել հայ հասարակութեան ամէն խաւի մէջ եւ, որ գլխաւորն է, հայ տուներէն ներս մտցնել նոր մտքեր ու գաղափարներ:

4. Դաշնակցական երիտասարդներու խումբեր. — Ռոստոմէն առաջ Ֆիլիպէի մէջ գոյութիւն ունէր «Պետո Պուլկարացի» խումբը, որուն կը մասնակցէին Անտոն Գոչ, Թահմեղեան, Պետո, Նէվրուզ եւ ուրիշներ: Կազմուեցաւ «Արամեան» խումբը բոլորովին երիտասարդներէ բաղկացած: Ռոստոմ կ'անդամակցէր «Արամեան» խումբին, ամէն կիրակի կանոնաւոր կերպով ժողովներ կը գումարէին, ուր կը կարդացուէին յեղափոխական գրքոյկներ եւ այլ յարմար գրութիւններ. Ռոստոմ կու տար հարկ եղած լուսարանութիւնները, բացի ասկէ կը սորվեցնէր խումբին քաղաքատնտեսութիւն, որը խոր հետաքրքրութիւն առաջ բերաւ երիտասարդներու մէջ: Ֆիլիպէն այլեւս յեղափոխականացած էր: Ետևով «Արամեան» խումբը այնքան ստուարաթիւ եղաւ, որ անհրաժեշտ դարձաւ դայն երկուքի վերածել, երկրորդին անունն ալ մկրտելով «Վազգէն»: Այս խումբերէն դուրս եկան անձնազոհ երիտա-

սարդներ, որոնք եւ մեկնեցան Երկիր, ուր կատարեցին կարեւոր դերեր:

5. Պուլկարահայութիւնը սիրցնել պուլկար ժողովուրդին եւ կառավարութեան. — Պուլկարիոյ դերքը աշխարհագրական տեսակէտով հայ յեղափոխութեան համար խիստ նպաստաւոր էր. իսկ պուլկար յեղափոխական ժողովուրդը եւ անոր գեմոկրատ կառավարութիւնները բարեացակամ վերաբերում ունէին հայերու հանդէպ: Պուլկար ժողովուրդը իր մորթին վրայ զգացած էր թխրք եաթաղանն ու բռնապետութիւնը: Եւ, սակայն, երկու սահմանակից զրացի պետութիւններու բարուք յարաբերութիւններ ունենալու եւ քաղաքական անհրաժեշտութեան տեսակէտով, գոնէ առժամարար, կրնար Հ. Յ. Դաշնակցութեան նպատակներուն եւ ընելիք ձեռնարկներուն արդեւ ըլլալ Պուլկարիոյ մէջ: Իսկ տնտեսական տեսակէտով շատ հաւանական էր հակահայ հոսանքի մը ստեղծուիլը, պուլկար ժողովուրդի յայն խաւերուն մէջ, որովհետեւ Պուլկարիա հիւրընկալուած եւ ապաստանած բոլոր հայերն ալ արհեստաւորներ եւ առեւտրականներ էին: Եւ պէտք է ըսել, թէ որոշ աշխատանքներ եղած էին պուլկար արհեստաւորներու կողմէ Վառնայի մէջ, ուր հայութիւնը խոնուած էր շատ աւելի՝ հայ փախստականներու առաջին հանդիմանն ըլլալուն շնորհիւ:

Հոս պէտք է ի պատիւ պուլկար ժողովուրդին եւ անոր ներկայացուցիչներուն արձանագրել, թէ Վառնայի բողոքը եւ առնուած որոշումները Երեսփոխանական ժողովին կողմէ խստիւ մերժուեցան:

Նիստին նախագահող Վառնայի երեսփոխան եւ դեմոկրատ կուսակցութեան պարազլուխներէն, երեսփոխանական ժողովի փոխ-նախագահ եւ նշանաւոր փաստաբան պ. Նիքոլա Գրնէքի հայանպատ ճառէն յետոյ, ուր ան հայերու ընդունակութիւնները, բարեմասնութիւնները եւ անոնց հալածական հանգամանքը ներկայացնելով՝ այնպիսի մթնոլորտ մը կը ստեղծէ ժողովին մէջ, որ նոյնիսկ հարցապնդում ընող երկու երեսփոխանները իսկոյն ետ կը քաշեն իրենց գրութիւնը եւ ժողովը միաձայնութեամբ կ'որոշէ չզբաղել անով եւ չընդգրկել հայահալած քաղաքականութիւն:

Ռոստոմ կը ջանար ամրացնել եւ ապահովել պուլկարահայութեան դիրքը յաջս պուլկար ժողովուրդին: Ուստի, պէտք էր գտնալ, որոնք յենարան մը: Այդ յենարանը եղաւ մակեդոնական ներքին կազմակերպութիւնը: Ռոստոմ եւ Քրիստափոր մշակեցին յարաբերութիւններ նոյն այդ կազմակերպութեան հետ եւ շուտով մակեդոնահայ 11 յեղափոխականներէ կազմուած խումբը անցաւ Թիւրքիոյ սահմանը, էտիրնէի շրջանը: Մնացեալը ծանօթ է: Մակեդոնացի եւ հայ արիւնը իրար խառնուեցան՝ միեւնոյն թշնամիին դէմ կռուելով եղբայրաբար: Երկու խմբապետներ՝ Մերձանօֆ եւ Պետո Սերէմձեան դէմ դիմաց կախուեցան էտիրնէի հրապարակը:

Մակեդոնահայ եղբայրակցութիւնը արիւնով նուիրագործուած էր:

Երեսուն տարի առաջ պուլկար պետութեան վարչական եւ զինուորական իշխանութեանց ամենաբարձր պաշտօնէութեան մեծագոյն մասը մակեդոնացիներն էին, ուստի դիւրին է այլեւս երեւակայել, թէ այս դէպքը ի՞նչ անեղ ցնցում առաջ բերաւ եւ ի՞նչ եղբայրական համակրութիւն ստեղծեց

պուլկար ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ հայերու հանդէպ :

Եւ ինչե՛ր կատարուեցան ու դարբնուեցան Լ. Յ. Դաշնակցութեան կողմէ Պուլկարի մէջ, միշտ վայելելով օրուան կառավարութեան ուղղակի կամ անուղղակի, իսկ ժողովրդի բացարձակ բարոյական օժանդակութիւնն ու համակրութիւնը :

Այստեղ արժէ յիշել երկու աչքառու դէպքեր : Մէկը՝ Քրիստափորի եւ ընկերոջ՝ Եղուարդի թաղման պարագան : Սոֆիայի թիւրք ղեսպանը դիմում կատարեց նախարարութեան մօտ, որպէսզի անշուք կատարուի Քրիստափորի թաղումը՝ նկատել տալով, թէ ժողովրդական թաղում մը ցոյց մը պիտի ընդունուէր իր կառավարութեան կողմէ՝ ուղղուած Թիւրքիոյ դէմ : Քաղաքական կացութիւնը փափուկ էր եւ, սակայն, նախարարութիւնը անգոր էր, նոյնիսկ եթէ ուզէր ալ, դէմ երթալու մակեդոնական կազմակերպութեան եւ պուլկար ժողովրդի ցասումին : Եւ այն եղաւ, որ Քրիստափորի եւ ընկերոջ յուզարկաւորութիւնը դարձաւ չափազանց ժողովրդական : Դազազին կը հետեւէին մինչեւ գերեզման բազմահազար ժողովուրդ եւ 29 ծաղկեպսակներ :

Իսկ միւս պարագան, Սուլթանի մահափորձի հեղինակներ Թորգոմի եւ Քրիսի Թիւրքիոյ յանձնման խնդիրն էր : Նոյն թիւրք ղեսպանը իմանալով, թէ Թորգոմ եւ Քրիս Ֆիլիպէ կը գտնուին, կը դիմէ արտաքին գործոց նախարարին՝ պահանջելով յիշեալներու յանձնումը թիւրք կառավարութեան : Նախարարութիւնը նախօրօք հարկ եղած կարգադրութիւնները ըրած էր, որպէսզի երկու ընկերները փախցնենք անձանօթ վայրեր ժամանակաւոր կերպով : Եւ երբ Ֆիլիպէի նահանգապետը կարգադրած է, որ, կէսօրէն յետոյ, ժամը 2ին, թիւրք հիւպատոսի գիտութեամբ յիշեալներու բնակարանները երթալով «ձերբակալեն» զանոնք, արդէն մէկը Պայլովա, իսկ միւսը մօտաւոր գիւղ մը ճամբած էինք : Ու երբ ոստիկանապետը ընկերակցութեամբ պաշտօնեաներու նախ ուղղուեցաւ Անտոն Գոչի բնակարանը, ուր կ'ապրէր Թորգոմ, պարզուեցաւ, որ այդպիսի դէմք մը գոյութիւն չունէր, ինչպէս նաեւ Քրիսի բնակարանին խուզարկութիւնը նոյն արդիւնքը տուաւ : Եւ արտաքին գործոց նախարարը տեղեկացուց թիւրք ղեսպանին թէ, ճիշդ չէ, որ մահափորձի հեղինակները Պուլկարի ապաստանած ըլլան : Պուլկար պաշտօնեաները քթերնուն տակէն կը ծիծաղէին Ֆիլիպէի թիւրք հիւպատոսին վրայ :

Շատ չանցած սոյն խնդիրը տարածուեցաւ պուլկար երեսփոխանական ժողովին մէջ, ուր բոլոր երեսփոխանները մէկ միտք մէկ հոգի վճռապէս ամէն զնով մերժեցին այդպիսի ստոր յանձնում մը գործել՝ հակառակ գրտնելով զայն պուլկար սահմանադրութեան հիմնական օրէնքին :

Ես հոս զանց կ'առնեմ յիշատակելու շա՛տ նման դէպքեր ու պարագաներ, աւելորդ անգամ հաստատելու, թէ ի՞նչ բարեբեր ազդեցութիւն եւ հեղինակութիւն առաջ բերած էր մակեդոնահայ եղբայրակցութիւնը : Այսօր եւ թէ քաղաքական պայմանները այնպէս դասաւորուած են, որ այդ նոյն եղբայրութեան կապերը չեն կրնար իրական եւ շօշափելի ըլլալ, այնուամենայնիւ անոնք հօր ներգործութիւն ունեցած են, շնորհիւ այն հեռատես քաղաքականութեան, որուն հիմը դրաւ Ռոստոմ :

Ռոստոմ որպէս անհատ շատ բարի էր եւ բառիս ճշմարիտ առումով

սոցիալիստ, ոչ միայն գաղափարներով, այլեւ գործնականի մէջ : Իր վերաբերուի պատմութիւնը ծանօթ է «Դրօշակ»-ի ընթերցողներուն : Օրինակ մըն ալ ես արձանագրեմ :

Ահանատես եղայ, որ օր մը ընկեր մը եկած էր Ռոստոմի մօտ հրատեղատ առնելու համար : Ընկերը Վառնա կը մեկնէր ամուսնանալու համար : Ռոստոմ, հասկնալէ յետոյ թէ անիկա որքա՞ն դրամ ունի զրպանը, յայտնեց, թէ այդ գումարը անբաւական էր ամուսնանալու եւ վերադառնալու համար, ու առանց սպասելու ընկերոջ տայիք պատասխանին, ինզրեց իր կնոջմէն, որ ոսկի ժամացոյցը եւ շղթան բերէ, ընկերոջ ալ պատուիրելով, թէ զնէ զանոնք աւանդ սեղանաւոր Պոյաճեանի քով, ինք շուտով ետ կը ստանայ վերադարձնելով զանձուած գումարը : Ընկերը ընդդիմացաւ եւ հազիւ կրցաւ համոզել՝ հաշիւ ներկայացնելով, թէ իր դրամը կը բաւէր լիուրի : Ու այսպէս, ետ կեցաւ Ռոստոմ իր առաջարկէն :

Հայ ժողովուրդը, ի մասնաւորի պուլկարահայ գաղութը խորին յարգանքով եւ ակնածանքով պէտք է խոնարհի մեծ հայուն գերեզմանին վրայ, որ գիտցաւ ապրիլ ու մեռնիլ միայն հայութեան ազատագրութեանը եւ քարոքութեանը համար :

«ԴՐՕՇԱԿ», քիւ 1-2, 1929

ՌՈՍՏՈՄԸ ՊՈՒԿԱՐԻՈՅ ՄԷՋ

Մարդիկ կան, որոնց մասին գրելը առաջին նայուածքով շատ հեշտ կ'երևայ: Ի՞նչ աւելի դիւրին քան գրել մէկու մը մասին, որուն կեանքը կուռ եւ օգտակար գործունէութեան շարունակական շղթայ մը եղած է, բայց բաւական է գրիչը ձեռք առնել որ սկսիս տատանիլ, թերահաւատ ինքզ ինքզմ: Ինչպէ՞ս գրել, ինչպէ՞ս տալ գէթ էջ մը մեծ կեանքի մը ամբողջութեանէն:

Ահա թէ ինչո՞ւ գրիչը ձեռքս կը դողամ: Ինչպէ՞ս սկսիլ, ինչպէ՞ս տալ գէթ ուրուագիծը Ռոստոմի գործունէութեան մէկ մասին: Ռոստոմը իր ամբողջ կեանքին մէջ այնքան համեստ եղաւ, այնքան հեռու կեցաւ ցուցադրութիւններէ, որ իր մասին գրելու բնական դժուարութեան կը միանայ եւ այն վախը թէ արդեօք լա՞ւ կ'ընեմ իր վրայ խօսելով եւ թէ ան, եթէ մեզի հետ ըլլար տակաւին, չպիտի՞ վշտանար, չպիտի՞ յանդիմանէր որ ես, իր աչակերտուհին, իր վրայ կը գրեմ:

Այդ տատանումը ինձ հետ է նոյնիսկ հիմա, երբ որոշած եմ խօսիլ Ռոստոմի, ըստ երեւոյթին, ամենախաղաղ գործունէութեան մասին: Խաղաղ անով, որ մահուան կամ ձերբակալութեան վտանգը չէր սպառնար իրեն: Խօսքս անոր Պուլկարիոյ մէջ անցուցած տարիներու մասին է:

Անոնք որ ծանօթ են փոքր գաղութներու կեանքին, անոնք, որ գիտեն թէ հոգեբանութիւններու և բարբերու ինչ խառնուրդներ կային, զանազան հայկական անկիւններէ եւ աշխարհի չորս կողմերէ հաւաքուած գաղութի մը մէջ, մանաւանդ 25-30 տարի առաջ, անոնք պիտի հասկնան թէ ի՞նչ կը նշանակէ գործել այդպիսի միջավայրի մը մէջ: Ֆիլիպէն, որ Ռոստոմ ընտրած էր իր գործունէութեան կեդրոնը, ունէր մօտաւորապէս 1000 տուն հայութիւն, մեծ մասամբ տաճկախօս եւ սաստիկ պահպանողական: Ոչ մէկ շարժում: Թաղականի եւ հոգաբարձուի ընտրութիւնները մէկ-մէկ փոքրիկ շարժում մը յառաջ կը բերէին, շարժում մը սակայն, որ միայն վերին խաւերու մէջ տեղի կ'ունենար. խօսքը աղայինն էր: Ահա այսպիսի միջավայրի մէջ էր, որ Ռոստոմ եւ իր տիկինը բացին մասնաւոր դպրոց մը:

Բանալ դպրոց մը, որ աղաները արդէն իրենցը ունէին, հերոսութեան հասնող յանդգնութիւն մըն էր: Անհաւատալի աղմուկ մը առաջ բերաւ այդ դպրոցի բացումը: Աղաներու շքանքին, զարմանքին այդպիսի յանդգնութեան դէմ՝ յաջորդեցին զայրոյթը և պայքարը ամէն գէնքերով: Անոնցմէ ոմանք չվարանեցան անգամ տաճիկ հիւպատոսին միջոցաւ պուլկար կառավարութեան դիմելու եւ բողոքելու, որ Ռոստոմի դպրոցին մէջ ուսմանը կը պատրաստուին թիւրք կառավարութեան դէմ: Այնպէս որ պուլկար կառավարութիւնը ձեւական քանի մը խուզարկութիւններ կատարել տուաւ դպրոցին

մէջ: Ձեւական, որովհետեւ կառավարական շրջանակները, որոնց մէջ աչքի կը զարնէին մակեդոնական յայտնի գործիչներ, շատ լաւ դիտէին թէ ի՞նչ էր դպրոցի նպատակը: Աղաները այնքան առաջ դացին, որ պուլկար կառավարութեանէն պահանջեցին Ռոստոմի հեռացումը Պուլկարիայէն, յուսալով անոր հեռացումով կասեցնել այն շարժումը, որ դպրոցով սկսած էր:

Ի՞նչն էր որ այսքան իրարանցման պատճառ եղած էր: Նախ այն, որ Ռոստոմի եւ իր տիկինը դպրոցը այնքան համակրութիւն դրաւած էր, որ միջին դասակարգը եւ արհեստաւորները կը համարձակէին իրենց դաւակնները անոր վարժարանը դրկել: Այլ չէին բսր այսինչ աղան բաւ, այլ՝ Ռոստոմը ըսաւ. Ռոստոմի խօսքը պատգամի պէս կ'ընդունուէր: Այնպէս որ երկու տարի վերջ ամբողջ Ֆիլիպէի հայութիւնը, աղաները չհաշուած, Ռոստոմի հետ էին:

Վարժարանին հետ զուգընթաց մինչեւ այն ատեն չլսուած գործունէութիւն մը կը սկսէր: Կը կազմուէին կանանց խմբեր, Կարմիր Խաչ, Շաքիի խումբ, Արիւնբու խմբեր, Խատրոնական եւ երաժշտական խմբեր, երգչախումբ, գիշերային դասախօսութիւններ աշխատաւորներու համար: Բոլոր այս խմբերու հաւաքատեղին վարժարանն էր: Ֆիլիպէի հայութիւնը քանի մը տարուայ մէջ անձանաչելի կը դառնար:

Ռոստոմ բոլոր խմբերու մէջ էր, անոնց ոգին էր. դպրոցին մէջ տեսուչ էր եւ դասատու, երգչախումբին մէջ իր չունեցած ձայնով կ'երգէր միայն իր ներկայութեամբ քաջալերելու համար. ներկայացումներու կարգադրիչն էր, շատ անգամ յուշարարը, գիշերային դասախօսութիւններու դասախօսը, լսարաններու վարիչ, մարզական խմբերու առաջնորդ: Մարդիկ կը զարմանային թէ ինչ հրաշքով այդ անպուզական մարդը կը հասնէր բոլորին: Այս բոլորէն զատ ան ունէր եւ իր կուսակցական ժողովները: Պուլկարիան այդ ժամանակ յեղափոխական պատասխանատու գործերու կեդրոն էր: Հայմակեդոնական բարեկամութիւնը սկսաւ եւ հասունցաւ Ռոստոմի օրով ու անոր շունչին տակ: Պուլկար վարիչները դեռ մինչեւ հիմա ալ չեն մոռցած իրենց «սքանչելի Ռոստոմ»ը:

Գացէք Ֆիլիպէ կամ Պուլկարիոյ ո՛ր քաղաքը որ կ'ուզէք եւ հետաքրքրուեցէք հասարակական բնօյթ կրող սրեւէ հաստատութիւնով եւ պիտի տեսնէք, որ նախաձեռնարկը եղած է կա՛մ Ռոստոմի աշակերտներէն մին, կամ լսարանը յաճախողներէն, վերջապէս մէկը, որը այսպէս թէ այնպէս կրած էր այդ մեծ մարդու բարոյական ազդեցութիւնը:

«ԴՐՕՇԱԿ», ԻԼ 3, 1929

ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԷՆ

Ռոստոմը ուր որ ըլլար, միայն կազմակերպական գործերով չէր զբաղէր, այլ ամէն բանով, որ հասարակական զարգացման կրնար նպաստել — երգեցիկ, թատերասէր, մարմնամարզական խմբեր, դպրոց, ընթերցարան — եւ ոչ մէկ դժուարութեան առջեւ կանգ չէր առնէր: Օրինակ, Ֆիլիպէի մէջ երգեցիկ խումբ մը կառավարելու յարմար մէկը չկար: պուլկար մը հրաւիրած էր, որը Ռոստոմի հանդէպ ունեցած համակրանքին պատճառով սիրով եւ շատ չնչին վարձատրութեամբ ստանձնած էր երգեցիկ խմբի ուսուցչութիւնը: Բացի երգեցիկ, թատերասէր խմբերէն, իր ջանքերով էր, որ կազմուեցաւ «Վահագն» մարմնամարզական խումբը, պուլկար մարզիկներու խումբերու օրինակով եւ առաջնորդութեամբ: Հետագային այդ խմբի անդամներէն շատերն էին, որ զանազան վայրեր հայերու մէջ մարմնամարզական խմբեր կազմեցին:

«Վահագն» մարմնամարզական խմբի առաջին բացման հանդէսին մեր երգեցիկ խումբն ալ պիտի մասնակցէր քանի մը երգերով, բայց, մանաւանդ, նորութիւն մը պիտի ըլլար միջազգային քայլերգը (Ինտերնասիոնալը): Ռոստոմը ժընեւէն բերել տուած էր նոթաները եւ բառերն ալ հայերէնի թարգմանելով երգին յարմարացուցած:

Այդ գիշեր առաջին անգամ ըլլալով հայ հասարակութիւնը ունկնդրեց այդ քայլերգին, որը շատ յաջող անցաւ: Խիստ լաւ տպաւորութիւն թողուց հասարակութեան վրայ եւ քանի մը անգամ կրկնուեցաւ:

Բայց հանդէսին հետեւեալ օրը Ռոստոմը հրաւիրուած էր ոստիկանատուն, ուր իրեն ազդարարուած էր, որ այդ քայլերգը Պուլկարիոյ մէջ արգելուած է եւ որեւէ հանդէսի պէտք չէ որ երգուի: Հանդէսներու մէջ այլեւս չկրկնուեցաւ, բայց դպրոցական աշակերտներու եւ երգեցիկ խմբի անդամներուն միջոցաւ այնքան տարածուեցաւ, որ շատ ընտանիքներու մէջ սիրով եւ ոգեւորութեամբ կ'երգէին երկար ժամանակ:

Ռոստոմի միջոցաւ միջազգային քայլերգը աւելի շատ եւ անարգել տարածուեցաւ էրզրումի մէջ, Օսմ. Սահմանադրութենէն յետոյ, ուր Ռոստոմը երկսեռ վարժարաններու ընդհանուր տեսուչ էր: Ի՞նչպէս շուտ կրցած էր ան համախմբել իր շուրջը երիտասարդութիւնը. ի՞նչպէս ամէն մէկուն հետ վարուելու եւ ամէն մէկը գործի լծելու գաղտնիքը գիտէր. իրեն համար անկարելի որ չկար: Ինչպէս Ակնունին Քրիստափորի վրայ դամբանական խօսած ատեն ըսաւ՝ «Նա մարդ էր շինում...», նոյնը կարելի է ըսել եւ Ռոստոմի մասին. ան ալ «մարդ էր շինում»:

Շատերը կը զարմանային, թէ ի՞նչպէս այսինչ ուսուցիչը, որ ժամ մը աւելի դասի համար ուսումնական խորհրդի հետ ժամերով կը սակարկէր,

հիմա 2-3 ժամ կը ստանձնէ ատանց զրամի խօսք ընելու: Կամ ուրիշ քանի մը ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ, որոնք կարծես մենաշնորհ ըրած են եղեր բնաւ մանկավարժական ժողովներու չյաճախել, սկսած էին շատ կարգապահութեամբ ամէն ժողովին ներկայ լինել անտրտունջ, ի զարմանս իրենց նախկին պաշտօնակիցներուն:

Ի՞նչ կրնային առարկել. պարտաճանաչութեան կենդանի օրինակը կար:

Այն տարին Ռոստոմը ծրագրած էր Մայիս 1ը տօնել եւ երկու ամիս առաջ սկսաւ երգեր պատրաստել տալ, գարձեայ իր սիրելի Միջազգայինը առաջին հերթին:

Աշակերտական մեծ զրօսանք մը կազմակերպուած էր. ծնողներն ալ հրաւիրուած էին մասնակցելու: Մեծ զաշտահանողէս մը պիտի ըլլար եւ, բարեբախտաբար, եղանակն ալ նպաստաւոր էր: Այն օրը շատ երգեր երգուեցան, բայց ամենէն աւելի Միջազգայինն էր, որ կրկնուեցաւ: Ժողովուրդէն շատեր ալ արդէն սորված էին եւ կը մասնակցէին երգեցիկ խումբերուն:

Այնպիսի ոգևորութիւն կը տիրէր ամէն ասպարէզի վրայ եւ այնպիսի եռանդոտ գործունէութիւն սկսուած էր, որ Ռոստոմը, հակառակ իր շատ յոգնելուն, երբեմն կը կրկնէր. «Շատ չէ, տասը տարի եթէ թիւրքերը մեզ այսպէս ազատ թողնեն, այս ժողովուրդը հրաշքներ կը գործէ: Տեսնում էք այսքան քիչ ժամանակուան մէջ ինչքան յառաջդիմութիւն»...

Շատ տարիներ վերջը, երբ բուլչեիկեան կառավարութիւնը եկաւ հաստատուիլ Երևան եւ երբ առաջին անգամ Ինտերնասիոնալը լսեցի, սաստիկ յուզուած՝ չէի կրնար արցունքներս դսպել հակառակ բուն ճիշդութեան: Չէի ուզեր, որ մարդիկ նկատէին եւ սխալ մեկնութիւններ տային: Այդ վայրկեանին ամէն բանէ աւելի միայն Ռոստոմի կորուստն էր, որ անգամ մը եւս զառնօրէն կ'ողբայի ու կը մտածէի.

— Կեանքի ի՞նչ դառն հեզանք. ան, որ այս երգը, գաղափարներն այ միասին, սիրով եւ օրինակով կը տարածէր, այլեւս չկայ. իր գաղափարակից ընկերները հալածական...

Ամենալսեմ գաղափարն ալ ինչքա՞ն կ'այլանդակուի, երբ ստոր քաղաքականութիւնը խառնուի անոր:

«ԴՐՕՇԱԿ», քիւ 10, 1928

ԲԵԿՈՐ ՄԸ ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԷՆ

Երեւանի մէջ, համեմատաբար երկրորդական փողոց մը մկրտած էին Ռոստոմի անունով: Զինքը շատ մօտէն ճանչցողի մը համար աստիկա շատ քիչ գնահատում էր, բայց պոլշեիկեան կառավարութիւնը այդ ալ շատ տեսաւ իրեն:

Երբ առաջին անգամ նկատեցի նախկին Քարխանեան փողոցի փոխուիլը Ռոստոմի անունով, իր բնաւորութեանը եւ հոգիին չափազանց յատկանշական եղող հետեւեալ գեղեցիկ արարքը յիշեցի՝ եւ ակամայ համեմատութիւններու շարք մը սկսաւ մտքիս մէջ...

Ռոստոմը եւ տիկինը 1901ին Պուլկարիա էին եւ միասին հայ մասնաւոր վարժարան մը բացած էին: Մենք ալ՝ չորս օրիորդներ, նոյն դպրոցին մէջ աշակերտուհի եւ միեւնոյն ժամանակ վարժուհի էինք: Հետզհետէ աւելի մտերիմ յարաբերութիւն կը ստեղծուէր մեր եւ անոնց մէջ, եւ փոքրիկներու արձակուրդէն վերջ, երեկոյեան մեր դասերը մտերմական ու հետաքրքրական խօսակցութիւններով կը վերջանային:

Ուսումնարանը թէեւ լաւ ընդունելութիւն գտած էր Ֆիլիպէի հասարակութենէն, բայց նիւթապէս ապահով վիճակի մէջ չէր. եկամուտը ծախսը չէր գոցեր եւ գիտէինք, որ Ռոստոմը եւ տիկինը շատ զոհողութիւններ կ'ընէին ու ստիպուած էին շատ համեստ կեանքով ապրիլ:

Չմեռուան սկիզբն էր, եւ Ռոստոմը վերարկու չունէր. նախորդ տարուանը բնաւ ներկայանալի չէր: Տիկինը թախանձանքով շատ դժուարութեամբ Ռոստոմը համաձայնած եւ իրեն համար նոր վերարկու մը գնած էր: Մենք շատ ուրախացանք եւ նոյնիսկ շնորհաւորեցինք. կ'ուզէինք, որ մեր սիրելի ուսուցիչը եւ մեր վարժարանին ներկայացուցիչը լաւ հազուած երևար:

Ճիշդ այն ժամանակ էր, որ պատահած էր Մուսթաֆա-փաշայի տըխուր դէպքը Պուլկար-Մակեդոնական կոմիտէի գործակցութեամբ եւ այդ դէպքին առթիւ Պետրոս Սերէմճեան եւ իր մի քանի ընկերները էտիրնէի մէջ բանտարկուած էին:

Ռոստոմը իր նոր վերարկուն հագնելէն հազիւ երկու շաբաթ անցած՝ նկատեցինք, որ ան նորէն սկսաւ իր հին վերարկուն հագնիլ: Մենք միամըտութեամբ լաւ պահպանելուն վերադրեցինք: Քանի մը օր վերջը, երեկոյեան, մեր սովորական դասը վերջանալէն ետքը, տիկինը մեզ դիմեց՝ «Ազըկերք, դուք հարցրել էք անք ո՞ր Ռոստոմին, թէ ինչու իր նոր վերարկուն չի հագնում»: Մեր չորսին նայուածքներն ալ հարցական ուղղուեցան դէպի իրեն: Ռոստոմը ժպտեցաւ իրեն յատուկ արտայայտութեամբ՝ միեւնոյն ժամանակ, կարծես, մեր մտածումներու խորը զննող նայուածք մ'ուղղելով մեր դէմքին, իսկ տիկինը կը շարունակէր. «Նա իր նոր վերարկուն ուղարկել է

բանտի իր ընկերոջ՝ Պետրոս Սերէմճեանին»...

Մենք շուարեցանք ու թէեւ այն ժամանակ յետպատերազմեան այս անբարոյացուցիչ նիւթապաշտութեամբ չէին տողորուած մեր հոգիները եւ բնդունակ էինք գաղափարական զոհողութիւններու, բայց եւ այնպէս չկրցանք ըմբռնել այդ արարքին մեծութիւնը: Եւ մէկը մեր մէջէն հազիւ լսելի մըրմընջաց. «Հինն ալ կրնայիք զրկել»: Ռոստոմը միայն ժպտեցաւ իր բարի եւ ամէն բան ներող ժպտով...

Քսան տարիներ անցած էին: Ռոստոմը մեղմէ հեռացած էր բացառիկ լաւ եւ գաղափարական մէկու յիշատակը թողլով: Մենք ցիր ու ցան՝ շատ բաներ մոռցած էինք անցեալէն: Բայց ամէն անգամ, երբ Ռոստոմի փողոցէն կ'անցնէի, կը յիշէի զինքը: Մանաւանդ ամէն անգամ, երբ ցրտահար ու ստիպահար անկիւնը կ'ծկուած կնոջ կամ երեխայի մը քովէն նոր վարիչներու անցնիլը կը տեսնէի իրենց մուշտակներով կամ տաք վերարկուներով, առանց նայուածք մը իսկ ուղղելու այդ դժբախտ արարածներուն, կը խորհրդածէի.

— Քարոզել եւ քարոզածը գործադրել, որքա՞ն հեռու են իրարմէ, որքա՞ն քիչերը միայն ընդունակ են ատոր...

«ԴՐՕՇԱԿ», ԹԻՒ 8-10, 1926

Այդ երեկոյ իսկ Հայկի առաջնորդութեամբ գացի Ռոստոմը տեսնելու :

Դժուար թէ կարողանամ ճշգրտօրէն պատկերել իմ առաջին տպաւորութիւնս այդ սքանչելի մարդու մասին : Տարիներու երկար շարք մը եկաւ անցաւ եւ սակայն ամբողջ քսան տարուայ ընթացքին չեղաւ եղակի դէպք մը, որ գէթ ժամանակաւոր կերպով զիս ստիպէր վերագնահատուիմ եւ թարկելու իմ առաջին անգամին իսկ կազմածս անսահման հիացման տպաւորութիւնը : Ընդհակառակը, տարիներու ընթացքին աւելի հնարաւորութիւն ունեցայ խորապէս գնահատելու եւ սիրելու այդ եղակի մարդը, որուն անսահման բարութիւնը, պարզունակ հոգին, երիտասարդները քաջալերելու անձիգ կերպը մեր կուսակցութեան մէջ բացառիկ դիրք մը ստեղծեց էին իրեն :

Չես գիտեր, թէ ինչի՞ մէջ էր իր ուժը : Եւ սակայն չէիր կրնար չխոնարհիլ այդ ուժին առջեւ : Լիտըր մ'էր, առանց գիտնալու կամ զգացնելու, բարոյական խոշոր արժէք մը, որու գոհունակ ժպիտը միայն, բաւական էր ծայրայեղ գոհողութեան ընդունակ դարձնելու ոեւէ երիտասարդ :

Չեմ գիտեր ինչո՞ւ, ես միշտ Ռոստոմը խոտերու մէջ թաղուած գարնան մանուշակի եմ նմանցուցեր. հազիւ թէ կ'երեւի եւ սակայն բուրմունքը կը զգաս, անով կը գինովնաս :

Ինծի կը թուի, թէ Ռոստոմին հանդիպելով ես Քրիստափորի շարունակութեանը կը հանդիպիմ, այնքան անոնք նման էին իրար որոշ գծերով :

Սիմոնի նամակը յանձնեցի իրեն, որով կը յայտնէր թէ իր աշակերտներէն եմ եղած Տրպալիզոն, Ամերիկայի ընկերներէն, որ երկիր եմ անցնելու :

Վերէն վար զիս շափչփելով թեթեւ, բարի ժպիտ մը ուրուագծուեցաւ դէմքին : Յանձնարարեց Հայկին որ ինձ ուշադրութիւն դարձնէ, քանի որ թէ՛ տեղական լեզուին եւ թէ՛ քաղաքին բոլորովին անծանօթ մ'էի :

Բաժնուեցանք իրարմէ՝ յաջորդ օրը տեսնուելու խոստումով :

\* \* \*

Քանի մը օրեր անցան : Ես սկսնակի իմ անհամբերութեամբ կ'ուզէի, որ օր առաջ գրութիւնս որոշուէր, ու... երկիր անցնէի : Ինծի կը թուէր թէ երկիր անցնելու միտքը բաւական է. դեռ չէի գիտեր, թէ ահագին դժուարութիւններ կային առջեւ : Խամ էի : Մինչեւ որ ես ալ իմ կարգիս հինցայ, շատ փորձանքներ անցան գլխովս :

Չորրորդ կամ հինգերորդ օրն էր, եւ ահա նոր պատմութիւն մը : Ռոստոմը իր հանդարտ կերպովը առաջարկեց, որ «Փոթորիկ»ի մէջ մտնեմ, որպէս հարուստներուն ներկայացող գործակալը կուսակցութեան : Եւ երկարօրէն բացատրեց ինծի Փոթորիկի էութիւնն ու կատարած եւ կատարելիք աշխատանքը :

Խելքիս պառկելու բան չէր, բայց դէ՛հ ինչ օրուան յեղափոխական էի, որ մերժէի... միայն ըսի, որ ոչ լեզուն գիտեմ, ոչ ալ քաղաքը կը ճանչնամ, իսկ այդ երկու յատկութիւնները անհրաժեշտ են գործի յաջողութեան համար :

Պզտիկ քաղաքականութիւն մըն էր բրածս ու Ռոստոմը հասկնալով վարպետութիւնս, սկսաւ ծիծաղել : Չգաց, որ խելքս միտքս երկիր երթալու վրայ էր, մնամ ալ, խեղ մը չպիտի բերեմ :

Բարեբախտութիւն էր, որ այդ ժամանակ Սալմաստի ներկայացուցիչ Սամսոնը, երկար տարիներ այդ շրջանը մնալէն բեզարած, դիմած էր Բիւրոյին, յայտնելով, թէ կ'ուզէ գէթ ժամանակաւոր կերպով հեռանալ. կը խնդրէր, որ իր տեղը ուրիշ մէկը զրկուի :

Ռոստոմը ըսաւ ինձ, որ երթամ ուղիղ Թաւրիզ ու անկէ՛ Սալմաստ, ուր թէ՛ գործերուն կը ծանօթանամ, ու թէ լաւ պատենութիւն մը լինելու պարագային կ'անցնիմ երկիր : Քանի մը անգամ կրկնեց, թէ 6-7 ամիս սահմանի վրայ աշխատելը վերջէն երկրին մէջ գործելու համար շատ օգտակար կը լինի :

Այն ժամանակ դեռ լաւ չէի հասկնար Ռոստոմի հեզնական նուրբ ժըպիտը : Շատ տկար թոքերով, նիհար, աղձկայ քնքշութեամբ, ելեր էի երկիր երթալու, կարծես այդ հարսնիք երթալ լինէր :

«ԱՊՐՈՒՄՆԵՐ», էջ 66-67

**ՊԱՅՔԱՐԸ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱԽՄԱՆ ԴԵՄ**

Տենդի, յուզումի այդ օրերուն՝ հոն էր, Արարատեան երկրին մէջ՝ «Դաշնակցութեան» հին, անխոնջ առաջամարտիկը, գեանալարկերու, մութ, խորհրդաւոր դարաններու հոյակապ դասադիրը — Ռոստոմ:

Շտապ-շտապ կազմակերպուեցաւ, մերիններու նախաձեռնութեամբ, միջկուսակցական յատուկ մարմին, որ պիտի հանդիսանար պրոպագանդի ու շարժման բերան: Անուանեցին այդ մարմինը «Հայկական ԻնՖլուպաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէ»: Անոր մէջ մասն այլ եւ այլ տարրեր՝ վարելու համար դորձ մը, որ համադրային բնոյթ ունէր: Մտան նաեւ սոցալ-դեմոկրատ հայազգի բնկերվարականները:

Ահա թէ ինչ կ'ըսէր այդ յատուկ մարմինը իր հրատարակած թոուցիկներէն մէկուն մէջ, շարժման տաք վայրկեաններուն.

«Ռուս կառավարութեան դիմակը պատուած է: Բոյսը հայ տարրերը հասկացել են նրա խարդախ նպատակները — ոչնչացնել հայ ժողովուրդի ինքնուրոյնութիւնը, ոչ մի միջոց չիմայել՝ ձուլելու նրան: Եւ հայ ժողովուրդը ընդունեց ուրախութեամբ անհասարկ կոխը, որ լիրբ կառավարութիւնը յայտարարել է հայութեանը... Թշնամին ուժեղ է... ունի զօրք ու թնդանօթներ, իսկ մենք զրանից եւ ոչ մէկը: Մեր միակ զէնքը արդարութիւնն է... մէկը այն բարձր ուժերից, որ կարողացել է... մեծամեծ պետութիւններ ջախջախել»...

Ի՞նչ կ'ընէր էջմիածինը: Աւելորդ է ըսել, որ մեր վեղարաւորներու մտքովն անգամ չէր անցնէր ցարի կամքին դէմ ըմբոստանայու գաղափարը: Շատեր առաջին իսկ վայրկեաններէն ցոյց տուին զիջելու տրամադրութիւն: Ցարը յայտարարած էր, որ եկեղեցու սպասարները կանոնաորակա պիտի ստանան իրենց ոսճիկները. այլեւս ի՞նչ էր պէտք հայ կղերին... Ամենէն ըմբոստ եւ սրտցաւ վեղարաւորներն անգամ — եւ նոյն ինքը Հայոց Կաթողիկոսը — չէին համարձակեր իրենց խորունկ վրդովմունքը արտայայտել — այնքան զարհուրելի կը թուէր անոնց՝ ցարիզմի վրիժառու բռունցքը... Հայը կ'ըմբոստանար սուլթանին դէմ, գիտնալով, որ իր ու այդ սուլթանին միջեւ կայ Եւրոպան, կայ միջազգային դաշնադրի «հովանին» ու երաշխիքը: Բայց այստեղ, Ռուսաստանի մէջ, ցարը գերագոյն իրաւարար էր եւ ոչ ոք կարող էր միջամուխ լինել անոր ներքին գործերուն...

Զարմանալի չէր այն սահմուկումն ու խորտակուած տրամադրութիւնը, որ կը տիրէր էջմիածնում: Վտանգ մը կար այդ կողմը... Հոգեւոր իշխանութեան դիջումը մեծապէս պիտի քաջալերէր թշնամին եւ պիտի վհատեցնէր ժողովուրդը: Հարկ էր փութալ ազդելու նախ հոգեւոր ղառակարգին վրայ: Եւ ահա օր մը դաշնակցական պատգամաւորը յանուն Հայկական «ինք»

նպաշտպանութեան Կոմիտէի», գաղտնի, խորհրդաւոր այդ մը տուաւ էջմիածին, քանի մը կտրուկ բացատրութիւններ ու յորդորներ ըրաւ, մասնաւորապէս թուլամորթ, ստրկամիտ ճանչցուած վեղարաւորներուն եւ հեռացաւ:

Նոյնինքը Ռոստոմն էր: Այցի գլխաւոր նպատակն էր՝ համոզել հայոց Կաթողիկոսին, որ հրատարակել իր հանդիսաւոր մերժման կոնդակը, ի պատասխան ցարի ուկադին: Մեր ընկերը կը խոստանար Դաշնակցութեան կողմէ ամէն աջակցութիւն: Կոնդակը հրատարակուեցաւ: Եւ անմիջապէս յետոյ լոյս տեսաւ նորակազմ Ինքնապաշտպանութեան Մարմնի առաջին «Ազդ»ը, որու միակ օրինակը գտեր է նոյն Ռոստոմը ուրիշ վաւերագրերու հետ, 1917ին, Պետերբուրգի ցարական կառավարութեան Դիւանին մէջ:

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», Ա. հտր., էջ 336-337:

ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Ռոստոմին առաջին անգամ հանդիպեցի 1903ի գարնանը՝ առանց իմանալու, որ նա Ռոստոմն է եւ առանց գաղափար ունենալու այն դերի մասին, որ նա կատարել էր եւ կատարում էր Դաշնակցութեան մէջ: Սակայն, այդ առաջին հանդիպումն իսկ անջնջելի հետք թողեց ինձ վրայ:

1901ի վերջերից սկսած կոստակցական կեանքը եռուզեռի մէջ էր Այգեաստանում (Գանձակ): Կարծէք վերահաս փոթորիկների կանխազգացութեամբ՝ հայ ժողովուրդը խուսնեւում գիմում էր դէպի Դաշնակցութեան շարքերը թէ՛ քաղաքում եւ թէ՛ գիւղերում: 1903ի սկզբին ես էլ մտայ 'Իաշնակցութեան մէջ: Եւ որովհետեւ ազատ ժամանակ ունէի — սպասում էի աշնանը համալսարան գնալու համար — աչքի ընկնող մասնակցութիւն ունեցայ խմբերի կազմակերպութեան գործում եւ մինչեւ իսկ ընտրուեցի Այգեաստանի Կոմիտէի անդամ:

Գարնան սկզբներին կոմիտէն պէտք է մարդ ուղարկէր Թիֆլիս՝ Բիւրոյին դրամ տանելու եւ կազմակերպական գործերի մասին զեկուցում տալու համար: Եւ որովհետեւ, ինչպէս ասացի, ազատ ընկերը ես էի, այս պաշտօնը յանձնեցին ինձ՝ խստիւ պատուիրելով, որ դրամը առանց Բիւրոյի ստացականին ոչ ոքի չյանձնեմ:

Լաւ յիշում եմ, մի շաբաթ օր էր, երբ ես ներկայացայ կոմիտէի նամակով բժ. Տէր-Դաւթեանին, որի միջոցով յարարերութիւն էինք պահում Բիւրոյի հետ — եւ բացատրեցի Թիֆլիս գալուս նպատակը: Նա մի տոմսակով ճամբեց ինձ Կովկասեան Գիւղատնտեսական Միութեան գրասենեակներէից մէկը, ուր ինձ ընդունեց վերին աստիճանի բարեհամարող դէմքով, թիկնեղ եւ բարձրահասակ — չզիտեմ ինչու նա ինձ բարձրահասակ երեւաց — մի անձնաւորութիւն:

Կարդալով ընկ. Տէր-Դաւթեանի տոմսը եւ Այգեաստանի կոմիտէի նամակը՝ անձանօթ անձնաւորութիւնը նախ ու շաղրութեամբ լսեց իմ զեկուցումը եւ ապա սկսեց ինձ հարց ու փորձ անել մեր կազմակերպական գործերի մասին այնպիսի մտերմութեամբ եւ հետաքրքրութեամբ, ինչպէս որ կ'անէր մի ծնող՝ հետու օտարութեան մէջ գտնուող իր զուակներին մասին: Երբ բոլոր հարցերը սպառուեցին, ես նրա առաջ զրի բերածս դրամը:

- Հազար ռուբլի՞ է:
- Այո՛:

Ձրուցակիցս, որ առաջին անգամն էր ինձ տեսնում եւ անունս իսկ չըզիտէր, առանց համբելու դրամը ծոցի գրպանը դրաւ: Նրա այս վարմունքի մէջ այնքան վստահութիւն կար իմ հանդէպ, որ ես ամաչեցի ստացականի մասին խօսք անել:

Այգեաստանի Կոմիտէն, ի հարկէ, զորս դու պատուիրեցիր, յանդիմանեց ինձ, որ ստացադիր չէի պահանջել: Ոմանք սկսեցին մինչեւ անգամ կասկած յայտնել, թէ ես մի խարերայի դստ եմ դնացել, որովհետեւ ասում էին նորա, «Բիւրոն առանց ստացական տալու երբեք դրամ չէ ընդունում»: Կասկածներն ոյժ էին առնում մանաւանդ այն պատճառով, որ «խարերան» կարիք էլ չէր դգացել զուամարն ստուգելու. ո՞վ է համարում «գտած» դրամը...»

Մի քանի օրից անդորրադիրը ստացուեց, ի հարկէ, եւ կասկածները փարատուեցին. սակայն, այն ընկերակաւն վստահութիւնը, որ ես առաջին անգամ տեսայ մի անձանօթ անձնաւորութեան կողմից դէպի մի ուրիշ անձանօթ անձնաւորութիւն՝ շատ խորունկ տպաւորութիւն թողեց վրաս, թէ եւ տարիներ պիտի անցնէին, որպէսզի ես հասկանայի, որ այդ վստահութիւնը մեր դաշնակցական ընկերակաւնութեան հիմնական խարխիւներից մէկն է կազմում...»



Երկրորդ հանդիպումս եղաւ Վիեննայի Ընդհանուր Ժողովին (1907), որին մասնակցում էի իրրեւ Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան պատգամաւոր: Այդ ժամանակ ես այլեւս թոթովախօս պատանի չէի, այլ «հասուն» երիտասարդ եւ մանաւանդ յաւակնութիւններ ունեցող դաշնակցական: Չէ՞ որ ես մի քանի հասարակագիտական գրքեր էի կարդացել եւ մի երկու շարք յօդուած գրել կովկասեան մեր թերթերում ընկերվարութեան եւ բանուորական շարժումների մասին: Եւ մի՞թէ այսքան բաւական չէր, որպէսզի ես ինձ իրաւունք համարէի «ըննդատական» վերաբերմունք ունենալու դէպի Դաշնակցութեան գործունէութիւնն ընդհանրապէս եւ դէպի նրա անդրկովկասեան գործունէութիւնը մասնաւորապէս...»

Պէտք է ասել, որ այս յաւակնութիւններով ես մենակ չէի ընդհանուր ժողովում. կային ուրիշ երեք հոգի էլ — Աւ. Շահխաթունեան, Ս. Վրացեան եւ Մաշուրեան: Չորսս միասին կազմում էինք Ընդհանուր Ժողովի «անջատական» հատուածը: Մեր նպատակն էր անջատել իրարից թիւրքահայ եւ ուսասայ դատերը, որոնցից առաջինի գլուխը պէտք է կանգնէր հին, «ազգային Դաշնակցութիւնը», իսկ երկրորդի համար ստեղծուելու էր մի «Նոր Դաշնակցութիւն», զուտ ընկերվարական ծրագրով, որ իր դրօշակի տակ պէտք է համախմբէր հին Դաշնակցութեան շարքերում գտնուող աշխատաւորական եւ ընկերվարական տարրերին: Այս տեսակէտները պաշտպանելու համար, Շահխաթունեանը եւ ես պատրաստել էինք զեկուցումներ, որոնց մասին յայտարարուած էր Ընդհ. Ժողովի դիւանին եւ, բացի սրանցից, Դաշնակցութեան ծրագրի մի-մի նախագիծ՝ զուտ ընկերվարական սկզբունքներով կազմած, որ պիտի ներկայացնէինք Ընդհ. Ժողովի հաւանութեանը այն դէպքում, եթէ երկու դատերի անջատման առաջարկը չանցնէր: Մեր մտածումն այն էր, որ եթէ այս նախագծերից մէկն ու մէկն անցնէր, երկու դատերի անջատումն ինքն իրեն տեղի կ'ունենար կարճ ժամանակի ընթացքում:

Չախակողմեան անջատականների հակոտնեան էր կաղմում ամերիկահայ թովմաս Չելալեանի խմբակը, որ նոյնպէս հետապնդում էր ուսասայ

և թիւրքահայ դատերի անջատումը, բայց այն խմաստով, որ առաջինը ի սպաս դուրս ձգուէր Դաշնակցութեան գործունէութեան շրջանակից և Դաշնակցութիւնը մնար միմիայն թիւրքահայ դատով զրազուող մի համազգային կազմակերպութիւն, առանց ս'ընէ ընկերվարական երանդաւորման: Այս խմբակին էին պատկանում Սարգիս Մինասեանը, Վոսմեանը, Սաֆոն (Մարտիրոս Մարգարեան) և մեր հին մարտիկների մեծամասնութիւնը: Ամերիկահայ երկրորդ պատգամաւորը — Վոսադն Տաթևեանը նոյնպէս այս տեսակէտներով էր ճամբայ ելել Ընդհ. Ժողովին մասնակցելու համար: Սակայն, Անդրկովկասում, մեր Ժողովրդի փրձակին և կազմակերպութեան տրամադրութիւններին ծանօթանալուց յետոյ՝ փոխել էր իր կարծիքները, կամ, ինչպէս Ջելալեանն էր դառնացած ասում, «դաւաճանել էր իր սկզբունքներին»:

Յիշեալ երկու հատուածների միջև ընկած կենտրոնի հատուածը չէր ուզում խօսք անդամ լսել ուսաստանայ և թիւրքահայ դատերի անջատման մասին: Նրա համար կար մի հատիկ դատ, որ կոչոււմ էր հայկական դատ և մի հատիկ Դաշնակցութիւն, որ պէտք է վարէր այդ դատը թէ՛ Տաճկաստանում, թէ՛ Ռուսաստանում և թէ՛ մինչև իսկ Պարսկաստանում: Քանակով և սրակով այս կենտրոնական հատուածը ամենուրեք էր, որովհետև նրա մէջ էին գտնուում կուսակցութեան բոլոր անուանի գէմքերը — Ռոստոմ, Չաւարեան, Արամ, Ակնունի, Վարանդեան, Համօ, Չարդարեան, Վահագն, Սեպուհ, Մուրատ, Ահարոնեան, Թոփչեան ևն., սակայն, նա էլ իր հերթին բաժանուած էր երկու խմբակցութեան: Մէկը, համեմատաբար մեծը, անհրաժեշտ էր գտնուում կուսակցութեան հիմնական ծրագիրը յարմարցնել ժամանակակից ընկերվարութեան պահանջներին, որպէսզի կարելի լինէր ներդաշնակութիւն մտցնել հայկական դատի երեք ճիւղերի միջև, իսկ միւսը, փոքրը, պնդում էր, որ հիմնական ծրագիրը չպէտք էր փոխել և, յամենայն դէպս, նրա ընկերվարական տրամադրութիւնները չպէտք էր խորացնել, որպէսզի կուսակցութեան ազգային նկարագիրն անաղարտ մնար:

Այս գլխաւոր հատուածներից դատ՝ կային և առանձին խմբաւորումներ գանաղան կազմակերպական և դատական հարցերի շուրջը, ինչպէս Պոլսի մահափորձը, միհրանական շարժումը, մարտական ուժերի վերակազմութիւնն ու դասաւորութիւնը, կուսակցական ուժերի բաշխումն եւայլն: Վերջապէս, պակաս չէին Ընդհ. Ժողովում նաև անձնական դժկամակութիւններ և մինչև իսկ ներհակութիւններ, որոնք յաճախ պիտի դժուարացնէին իրարհասակացողութիւնը այս կամ այն հարցի շուրջը:

Ընդհանուր Ժողովը իր հակոտնեայ և տարամերժ տրամադրութիւններով նմանուում էր մի մխացող հրարութի, որ ամէն վայրկեան կարող էր պայթել՝ ջարդ ու փշուր անելով իր պատեանը, որ Դաշնակցութիւն էր կոչուում: Եւ յաճախակի պոռթկումները, որոնք տեղի էին ունենում մանր միջադէպերի առթիւ, օրհասական վախճանի նախանշաններն էին կրում իրենց մէջ:

Սակայն, այդ տաղնապալի ժողովից Դաշնակցութիւնը դուրս եկաւ վերջնականապէս կազմուած իր ձախակողմեան և աջակողմեան հիւանդութիւններից, դուրս եկաւ մի ծրագրով, որից լաւը դժուար էր ենթադրել և

մի պողպատեայ, միաձոյլ կազմակերպութեամբ, որպիսին հայ Ժողովուրդը իր պետական կեանքի լաւագոյն օրերին իսկ չէր տեսել:

Ինչո՞վ պէտք է բացատրել այս հրաշքը: Ես բացատրում եմ երկու հանգամանքներով. նախ նրանով, որ Դաշնակցութեան առողջ բնազդը վերջին պահին միշտ յաղթահարում է իր ներսի տաղնապններին և ապա՝ որ Ընդհանուր Ժողովում մի Ռոստոմ կար, որ կարողացաւ ժողովականներին մէջ հրահրել այդ առողջ բնազդը և նրան տիրական դարձնել մնացած բոլոր նրկատումների վրայ:

Պաշտօնական նիստերի ժամանակ Ռոստոմը քիչ էր երեւում. աւելի եւս քիչ արտայայտուում այս կամ այն հարցի քննութեան ժամանակ: Նրա աշխատանքները սկսուում էին նիստերից ազատ ժամերին և դիշերները: Բացի Սաֆոյից, որի հետ չէր խօսում մի որոշ արարքի պատճառով, նրան կարելի էր տեսնել ամէնքի հետ և ամէնքի մօտ: Ճաշում էր Ջելալեանի, Ս. Մինասեանի և իրենց համախոհների հետ, բնթրում Անդրանիկի, Մուրատի, Սեպուհի և միւս մարտիկների հետ, դիշերներն անցնում մեզ մօտ՝ կամ ուրիշների մօտ: Այստեղ մի թիրիմացութիւն էր պարզում, այնտեղ մի միտք յուսաբանում, երրորդ տեղը հաշտութիւն առաջ բերում ներհակուած ընկերների միջև և այսպէս անվերջ: Առանց որեւէ բռնադրօսիկ ճիւղի, առանց որեւէ արհեստականութեան, նա ամէն մէկի հետ խօսում էր նրան հասկանալի լեզուով, որովհետև ամէնքի հետ էլ հոգով հարազատ էր. ամէնքին նա ի՞նչ էր համարում և իրեն՝ ամէնքին:

Արամը դժգոհ էր Վանի Իշխանից գանաղան պատճառներով: Ինքը Ռոստոմն էլ դժգոհ էր Իշխանից: Բայց պէտք էր տեսնել, թէ նա Արամի հետ ինչպէ՛ս էր խօսում Իշխանի մասին: Կարծում էր նուազեցնու՞մ էր նրա թերութիւնները: Բնա՛ւ: Ինքը Արամն էլ — դրական թէ բացասական — նոյն գնահատութիւնն էր տալիս Իշխանին, ինչ որ Ռոստոմը: Բայց արդիւնքն այն էր, որ այդ խօսակցութիւնից յետոյ Արամն այլևս այն ցաւալի վերաբերմունքը չուէր դէպի Իշխանը ինչ որ առաջ:

Մի ուրիշ օրինակ, որի մասին յիշողութիւնս աւելի վառ է:

Քննութեան էր դրուած թիւրքահայ և ուսաստանայ դատերի փոխյարաբերութեան խնդիրը, որին սրտատրոփ սպասում էինք «ձախակողմեաններս»: Առաջին գեկուցանողը ես էի: Չեկուցմանս առաջին մասում պարզարանուած էր, որ թիւրքահայ դատը առարկայօրէն անհրաժեշտ և ենթակայօրէն նուիրական դատ է ամէն մի հայ մարդու համար (կարծեմ այն ժամանակ հայ խօսքը չասացի): Իսկ երկրորդ մասում՝ որ մի կուսակցութիւն չի կարող այդ դատը ուսաստանայ դատի հետ միասին վարել, որովհետև եթէ այդ կուսակցութիւնը ընկերվարական ծրագիր որդեգրի՝ նա կը խրտնեցնի թիւրքահայ դատից ազգայնական տարրերին, որոնց օգնութիւնը անհրաժեշտ է նրան. իսկ եթէ ընկերվարական ծրագրից վաղ անցնի՝ չի կարող ուսաստանայ գանաղաններին համախմբել իր դրօշի տակ: Հետեւաբար, այդ երկու դատերը պէտք է անջատել իրարից: Երբ ես գեկուցմանս առաջին մասի ընթերցումն աւարտեցի՝ Ռոստոմը իրեն յատուկ չարաճճի ժպիտով ընդմիջեց.

— Արշա՛կ, լաւ է, որ դրանով էլ վերջացնես գեկուցումդ:

Ես շարունակեցի, ի հարկէ, ընթերցումը մինչև վերջը: Բայց չգիտեմ ինչու, մտքիս մէջ տպաւորուեց, թէ լաւ էր լինել, որ Ռոստոմի ասած տեղը կանգ առնէի:

Հերթը հասաւ Աւ. Շահխաթունեանին: Նա էլ էր մեկնում այն տեսակէտից, որ թիրաքահայ դատը մի նուիրական գործ է, որի համար ոչ մի գոհողութիւն մեծ չպէտք է համարի հայ ժողովուրդը: Բայց եւ այնպէս, աւելի՛ եւս կուռ տրամաբանութեամբ եւ կուռ փաստերով, յանդում էր այն եղբակացութեան, թէ երկու դատերը պէտք էր անջատել իրարից: Զեկուցման ժամանակ այս եւ այն կողմերից շարունակ ընդմիջում էին Շահխաթունեանին եւ ջղայնացնում: Նա երկու անգամ ծալլեց իր տետրակը եւ պատրաստուեմ էր հեռանալ սրահից: Սակայն, Ռոստոմի ազդու միջամտութեան շնորհիւ, ժողովականները լսեցին եւ Աւետիքը վերջացրեց իր դեկուցումը:

«Բայց եւ այնպէս սատանան այնպէս սարսափելի չէ, ինչպէս նրան նրկարում են» — սուտերէն ասաց Ռոստոմը իր ծանօթ ժպիտով, մտտենալով Շահխաթունեանին եւ ձեռքը մտերմօրէն դնելով նրա ուսին: Ուզում էր ասել, որ նրա զեկուցումից դատելով՝ անհնարին չէր իրարհասակացողութեան եզր գտնել:

— Մոյ ուվիծիմ, սթրաշէն իլի նյէ սթրաշէն, — (Կը տեսնենք՝ սարսափելի է՞, թէ սարսափելի չէ), սպտոնողին վրայ բերեց Շահխաթունեանը, որ բաւական յուզուած էր ժողովականների վերաբերմունքից:

Նոյն գիշեր Ռոստոմը Շահխաթունեանի սենեակումն էր, ուր հաւաքուել էինք «ձախակողմեաններս»: Խօսեցինք երկա՛ր, երկա՛ր, գրեթէ մինչեւ լուսարաց: Նիւթն էր երկու դատերի միացման կամ անջատման հարցը: Զեմ յիշում թէ ի՛նչ խօսեցինք: Այնպէս էլ չեմ տպաւորուած, թէ Ռոստոմը փաստե՞ր բերեց ի պաշտպանութիւն երկու դատերի միացման, որոնք մեզ անծանօթ էին, կամ աւելի՛ գորեկ տրամաբանութեամբ հերքեց այն առարկութիւնները, որ մենք բերում էինք միմեանց դէմ: Սակայն, երբ նա «բարի գիշեր» ասաց եւ հեռացաւ, ամէնքս էլ զլացինք, որ մեր դիմադրական կորովից հետք չէր մնացել...

— Լա՛ւ, այս կէտում էլ կը դիջենք: Թող երկու դատերը միացած մընան: Սակայն, ծրագրի խնդրում ոչ մի դիջում: Կամ մեր նախագիծը կ'ընդունեն, կամ կը հեռանանք ժողովից:

Այսպէս ամփոփեց Շահխաթունեանը այդ գիշերուայ մեր խօսակցութեան եզրակացութիւնը:

Հասաւ եւ ծրագրի քննութեան օրը: Նախորդ գիշերը Ռոստոմը նորից մեզ հետ էր, այս անգամ Մաշուրեանի սենեակում: Նա հետը բերել էր Թիֆլիսի ընկերների մասնակցութեամբ իր կազմած նախագիծը եւ ուզում էր իմանալ, թէ մենք ի՛նչ դիտողութիւն ունէինք նրա դէմ: Մենք առաջուց արդէն ուսումնասիրել էինք այդ նախագիծը եւ ձեւակերպել մեր դիտողութիւնները, որ մէկիկ-մէկիկ շարեցինք Ռոստոմի առաջ: Նա սկսեց պատասխանել մեր դիտողութիւններին, բայց յօրանջելով, առանց հաւաստի եւ առանց խորանալու նրանց մէջ: Երեւում էր, որ նրան իր նախագծի «թերութիւնները» չէին զբաղեցնում եւ ոչ էլ մեր դիտողութիւնները, որոնցից մի քանիսը նա

պատրաստ էր առանց այլեւայլութեան նկատի առնել, որովհետեւ իր գործի եւ մեր ասածի մէջ բառերի տարբերութիւնն էր միայն տեսնում, իսկ բառերին նա այն նշանակութիւնը չէր տալիս ինչ որ մենք:

Ռոստոմի բացատրութիւնները մեզ չհամոզեցին. բայց, չգիտեմ ինչու, մենք պատրաստակամութիւն յայտնեցինք մի դիջում անելու: Առաջ մենք պահանջում էինք, որ ի փոխարինութիւն մեր արած բոլոր «գիջումների», Ռոստոմը յետ վերցնի իր նախագիծը եւ միայն Շահխաթունեանի նախագիծը(\*) ներկայացուի ժողովին: Սակայն, այժմ համաձայն էինք, որ երկու նախագիծն էլ ներկայացուի ժողովին եւ ընտրութիւնը նրան թողուի:

Ըստ երեւոյթիմ հենց սա էր Ռոստոմի մտահոգութեան պատճառը եւ նա մեզ մօտ էր եկել զլխաւորապէս այն նպատակով, որպէսզի ընդհանուր ժողովին երկու նախագիծ ներկայացնելու առաջն առնի: Եւ նա սկսեց համաձայնօրէն բացատրել երկու նախագիծ ներկայացնելու անպատեհութիւնները: Ասաց, որ ժողովն անշուշտ կ'ընդունի իր նախագիծը եւ կը մերժէ մերը, բայց ինքը վախենում է, որ դա վատ կ'ազդի մեր վրայ եւ մանաւանդ կովկասում եւ արտասահմանում գտնուած այն երիտասարդների վրայ, որոնք դեռ եւս տատանուում են Դաշնակցութեան եւ անջատականութեան միջեւ: Աւելացրեց նաեւ, որ այս մտահոգութիւնն այնքան մեծ էր իր մէջ, որ, մեր յամառութեան դէպքում, ինքը կը գերազասէր իր նախագիծը յետ վերցնել, սակայն, երկիւղ էր կրում, թէ դա մեծ դժգոհութիւն կը պատճառի Թիֆլիս մնացած ընկերներին, որոնք աշխատել էին այդ նախագծի վրայ. երկիւղ էր կրում նա՛եւ, որ մեր նախագիծը ժողովում կարող էր պաշտպան մեծամասնութիւն չհասնել եւ մինչև անգամ տապալուել՝ մեծ դժուարութիւնների մատնելով կուսակցութիւնը եւայլն, եւայլն:

Ռոստոմը խօսում էր երկար եւ ջերմօրէն, խօսում էր ոչ թէ լեզուով, այլ սրտով: Եւ մենք զզում էինք, որ Ռոստոմը մեր մատերով չէր շահագրգռուած, քանի որ առանց այդ մատերի էլ նրա նախագծի յաջողութիւնն ասպահովուած էր — այլ մեր անձնաւորութիւններով: Նա գիտէր այն, ինչ որ մենք դեռ եւս չգիտէինք. գիտէր, որ ցնորք է Դաշնակցութիւնից դուրս մի նոր Դաշնակցութիւն առաջ բերել հայ իրականութեան մէջ, եւ չէր ուզում, որ մենք, այդ ցնորքի յետեւից ընկնելով, տպարդին վատնէինք մեր ուժերը, եւ ազգային-քաղաքական կեանքից դուրս շարտուէինք — ինչպէս որ յետագային դուրս շարտուեցին անջատականութեան մէջ յամառած մեր միւս ընկերները: Նրա այս անկեղծ սրտցատութիւնը կապում կաշկանդում էր մեր լեզուները, եւ խօսակցութեան վերջին, մեր սկզբնական «ուժեղ առարկութիւնները» դարձել էին անճարակ թոթովանքներ...

Երբ Ռոստոմը, սովորական «բարի գիշեր»ի տեղ կատակելով «բարի լոյս» ասելով — արդէն լուսացել էր — հեռացաւ՝ Շահխաթունեանը դարձաւ դէպի մեզ՝ իր ներքին յուզումը մատնող կատակախառն հարցումով.

— Եա՛, սրա՞ն ինչ կ'ասէք:

(\*) Շահխաթունեանը մտքեղ էր իր նախագծի մէջ իմ առաջարկած ուղղումները, որպէսզի ես իրաժարուեմ իմ կազմած նախագծից, որ, ի դէպ ասած, աւելի՛ զոգմատիկ էր եւ անյաջող, քան նրանը:

Ի՞նչ պէտք է ստէինք. «Դաշնակցութեան առողջ բնազդը» հրահրուած էր մեր մէջ եւ տիրակառնորէն իշխում էր մեր մտքերի եւ սրտերի վրայ: Նրա ճնշման տակ մենք պէտք է մեր վերջին դիմադրական դիրքն էլ լքէինք...

Որ Ռոստոմը աւելի՛ եւս մեծ եռանդով այս կարգի աշխատանքներ էր կատարում ընդհանուր ժողովի «աջակողմեան» շրջանակներում — այդ մենք կռահում էինք այն հանգամանքներից, որ նրա աղատ ժամերի մեծ մասը նըրանց հետ էին անցնում: Բայց թէ նա ի՞նչ ձեւով էր նրանց հետ խօսում — չգիտէինք: Մեր մէջ կար մէկը — Գրիգոր Շահլամեան (այժմ վարդապետ), որ իբրեւ ուսանող եւ անձնական ընկեր միշտ մեզ հետ էր լինում, իսկ իբրեւ «սահայանողական»՝ «նրանց» հետ: Նա էլ, իրեն յատուկ հաստատումութեամբ, ո՛չ նրանց մօտ տեսածն էր մեզ պատմում եւ ո՛չ էլ մեզ մօտ տեսածը՝ նրանց: Սակայն, այն հանգամանքը, որ Ջերալդանն ու իր համախոհները վերջ էին վերջոյ ոչ միայն ընդունեցին երկու դատերի միացումը, այլեւ համաձայնեցին, որ այդ միացեալ հայկական դատը վարող Դաշնակցութիւնը մի ընդհանուր ընկերավարական ծրագիր ունենայ եւ ընկերավարական Միջազգայինն անդամագրուի՝ այս փաստն ինքնին կարող է զաղափար տալ, թէ Ռոստոմը նրանց մօտ ի՞նչ դեր էր կատարում եւ ինչպէ՛ս էր կատարում...

Այդ ժամանակից սկսած, ամէն անգամ, երբ մեր կուսակցութիւնը կամ նրա որեւէ հատուածը ներքին դժուարութիւնների էր մատնւում, եւ երբ զաշնակցական ղեկավարութեան մէջ տարամերժ տրամադրութիւնները գերակշռում էին իրարհակացողութեան ոգուն՝ առաջին միտքը, որ ծագում էր իմ մէջ, միշտ այս էր.

— Ա՛խ, եթէ Ռոստոմն այստեղ լինէր...



Երբ նորից բարձրացանք վանքը՝ Ռոստոմը սկսեց բացատրել մեզ, թէ ի՞նչ նկատումներ ունի այս հինաւորաց հաստատութեան մասին: «Սա, ասում էր Ռոստոմը, պէտք է մեր յեղափոխական-ազատագրական պայքարի Պանթէոնը լինի: Այստեղ կը կանգնեցնենք Քրիստափորի արձանը, իսկ այնտեղ, հարաւային եւ հիւսիսային պատերի երկարութեամբ կը շարունեն շրայրի, Գէորգ Չաւուչի, Վազգէնի, Միսաքի եւ միւս նահատակների րըլիֆները»: Այսպէս խառը եւ պատահական ձեւով չէր շարում նա մեր նահատակներին, այլ իւրաքանչիւրի համար մի որոշ տեղ ունէր յատկացրած:

Վանքից դուրս առաջնորդելով՝ Ռոստոմը մեզ ցոյց տուեց արեւելեան պատի երկարութեամբ շարուած սքանչելի խաչքարերը, որոնց վրայ մակագրուած էին մեր հին պատմագրերի — Մովսէս Խորենացի, Նզնիկ Կողբացի, Դաւիթ Անյաղթ եւայլն — անունները: «Տեսնո՞ւմ էք, ասում էր նա, Ս. Կարապետը ազգային Պանթէոն դարձնելու միտքը մեզնից չէ ծագում. մեր հին սերունդներն էլ մտածել են այդ մասին այս խաչքարերն այստեղ դնելով: Մենք միայն լրացնելու ենք նրանց գործը՝ հին հերոսների կողքին նորերի համար եւս տեղ բանալով»:

Նորը հնին միացնելու այս ցանկութիւնը բխում էր այն բուռն սիրուց,

որ Ռոստոմն ունէր դէպի մեր հայրենի երկր յիշատակարանները: Հայ յեղափոխական պայքարը, անկախ իր բուն, ազատագրական արժէքից, նրա աչքում մի առանձին հմայք էր ստանում այն համոզումից, թէ հայ ժողովուրդը, ազատուելով քաղաքական, ընկերային եւ տնտեսական կապանքներից՝ պէտք է վերակենդանացնի մեր հին ազգային մշակոյթը եւ նրան նոր ստեղծագործութիւնների հիմք դարձնի:

Ռոստոմի սէրը դէպի հայրենի յիշատակարանները մի անգամ եւս տեսնելու առիթ ունեցայ երեք օր անց, երբ մենք Ս. Կարապետից իջնելով Առաքելոց վանքը՝ տեսնում էինք նրա հնութիւնները եւ մանաւանդ հոշակաւոր «Յայամաուրքը», որ իր գեղեցիկ գրերով եւ հոյակապ մանրանկարներով, ամենաառաջնակարգ եւրոպական թանգարանների վարդը կարող էր կազմել: Եւ երբ, վանքից մեկնելիս, Ռոստոմը պատկասանքով համբուրում էր ծերունագրող վանահօր — Յովհաննէս վարդապետի աջը, զգում էի, որ նա ոչ միայն արժանի հարկն էր տալիս այն աջակցութիւնների, որ Յովհաննէս վարդապետը տուել էր ժամանակին Առաքելոց վանքում եւ շրջակայ վայրերում գործող մեր հայդուկներին՝ այլեւ իր երախտագիտութիւնն էր յայտնում նրան՝ եւ յանձին նրա՝ բոլոր դարերի հայ վանականներին, որոնք աչքի լոյսի պէս պահել եւ մեզ էին հասցրել հայրենի երկրի այս թանկագին յիշատակները...



Ս. Կարապետից պիտի վերադառնայինք էրզրում, որովհետեւ մեզ լուր հասաւ, որ ընդհ. ժողովի միւս պատգամաւորները հաւաքուել էին այնտեղ եւ մեզ էին սպասում ժողովը բանալու համար:

Տպաւորութիւններ շատ ունեմ այս վերին աստիճանի հետաքրքրական եւ փոքրիկ արկածով համեմուած ճանապարհորդութիւնից. բայց եւ կանգ կ'առնեմ Ռոստոմից ստացած եւ նրա համար խիստ յատկանշական մէկ տըպաւորութեան վրայ: Դա նրա վառվառն սէրն էր դէպի մեր Երկիրը եւ նրա շէնթիւնը: Ամբողջ ճանապարհի ընթացքին, մե'րթ իր անյաջող ջորու վերայ ճօճուելով եւ մե'րթ ոտքով քայլելով, նա որոնող հայեացքով շարունակ նայում էր չորս կողմը՝ կարծէք ցանկանալով հայրենի ամբողջ բնութիւնը հաւաքել եւ ծրարել իր հոգու մէջ: Նրա աչքից չէին վրիպում ո՛չ լեռ, ո՛չ բլուր, ո՛չ դաշտ եւ ո՛չ առուակ: Իսկ երբ սրանց մէջ ուշադրաւ մի բան էր տեսնում՝ անմիջապէս հրաւիրում էր մեր ուշադրութիւնը զրայ վրայ՝ մեզ եւս տպաւորելու ակնյայտ մտադրութեամբ:

Մեծ էր նրա հետաքրքրութիւնը մանաւանդ դէպի այն երեւոյթները, որոնք շինարար ձեռքի արդիւնք էին հանդիսանում:

— Տեսնո՞ւմ էք այս մատղաշ ծառերը. Մահմանադրութիւնից առաջ ծառ ասած բանը զոյութիւն չէ ունեցել այս կողմի գիւղերում: Թէեւ խիստ դժուարութեամբ, բայց ժողովուրդն սկսում է վարժուել ծառատնկութեան:

— Այս հնձած արտերը նախանցեալ տարուանից են սկսել մշակել: Դրանից առաջ այս բոլորը խոպան հողեր էին:

— Հիմա հօ տեսա՞ք, որ մեզ մօտ էլ գիւղական ուսումնարանը կանո-

նաև որ չէնք ունի, լուսամուտներով եւ ծեփած պատերով: Կովկաս վերադառնալուց յետոյ, էլ շատէք, թէ մեր Երկրում Տէր-Թողիկեան վարժարաններից զատ ուրիշ բան չկայ: Նկատեցի՞ք, որ դասարանում նստարաններ կային. գիւղացիք սեփական աշխատանքով են շինել:

— Քիչ է մնում, որ Մշոյ առաջնորդարանը Թիֆլիսի առաջնորդարանի հետ համեմատէք: Ի հարկէ, նրա սրահը 17 տեսակ թղթով պատառած կը լինի: Սահմանադրութիւնից առաջ... կարծեմ, սակայն, մտադիր են նորը շինելու:

Հասանք Խնուս: Մեզ առաջնորդում են Դաշնակցութեան Տունը, որ մի չէնքի ամբողջ երկրորդ յարկը բռնող սրահ էր ներկայացնում՝ կանոնաւոր լուսամուտներով եւ որոշ կահաւորութեամբ:

— Այս ի՞նչ հրաշալի տուն է, բացականչեց Ռոստոմը հպարտ հայեացքը մեզ ուղղելով: Այստեղ կարող է մինչեւ անգամ արտաքնոց լինել...

Եւ իրօք, այդ էլ կար, թէ եւ բակի հեռաւոր անկիւնում եւ խիստ նախնական կառուցուածքով:

Ահա՛, թէ ինչպիսի երեւոյթներով էր ոգեւորում այս մարդը, որ իր կեանքում այնքա՛ն աշխարհներ էր պտտել եւ քաղաքակրթական նուաճումների այնքա՛ն հոյակապ կոթողներ տեսել...

Ընդհանուր ժողովից յետոյ, Կարնոյ Երիտասարդաց Միութիւնը, ի պատիւ պատգամաւորների, ընթրիք-բանկէտ էր կազմակերպել: Խօսեցին շատերը եւ շատ հարցերի մասին: Մենք, Կովկասի պատգամաւորներս հարկ համարեցինք շեշտելու, որ բոլորովին ա՛յլ տպաւորութեամբ էինք եկել Երկիր եւ ա՛յլ տպաւորութեամբ պէտք է մեկնէինք այնտեղից: Մենք եկել էինք ճշուած հոգով, խորապէս ազդուած այն բանախօսութիւններից, որ ուսու հրապարակապէր Օլղենինը անում էր Թիֆլիսում եւ Բաղուած «Անհետացող Հայաստան»ի մասին: Եւ պիտի հեռանայինք խորին համոզումով, որ Հայաստանը ոչ թէ անհետանում է, այլ վերականգնում է:

Խօսքը պատկանում էր Ռոստոմին: Ես անզօր եմ նկարագրելու այն յափըշտակութիւնը, որով նա խօսում էր վերածնունդ Երկրի եւ նրա շինարարական հեռանկարների մասին: Այդ վայրկեանին նա իմ աչքում մի մարմնացած հայրենասիրութիւն էր այս բառի ամենապարզ, ամենաթողութեամբ իմաստով: Խօսում էր նախասահմանադրական շրջանում եղած այդ Երկրի փոքրիկ յառաջդիմութիւնների մասին այնպիսի դուրդուրանքով, ինչպէս որ տարիներով սեփական այգու մէջ քրտինք թափած այգեպանը կը խօսի իր բացած աճուների, տնկած ծառերի ու քաղած արդիւնքի մասին: Իսկ նրա հեռանկարները, իսկ նրա յոյսերը...

Ո՛ւմ մտքից կ'անցնէր, որ, ընդամէնը երկու տարի յետոյ, դժոխքը պիտի փչէր այս ամենի վրայ...

«ԳԻՐՇԱԿ», քիւ 1-2 եւ 3, 1929

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻ ՄԷՋ

1906 թ. ամառը անցկացրի Թիֆլիսում՝ աշխատելով «Յառաջ» եւ «Ալիք» թերթերում:

Թիֆլիսում էր այդ ժամանակ եւ մեր անմասն Ռոստոմը:

Ասեմ նախօրօք, որ այդ երջանիկ օրերին Դաշնակցութիւնը ներկայացնում էր մի հսկայ ընտանիք, որի անդամների փոխյարարերութիւնները պարզապէս հարազատների յարաբերութիւններ էին: Փոխադարձ սէր ու յարգանք, վստահութիւն եւ անկեղծութիւն, պատրաստակամութիւն ընդառաջելու մէկը միւսի կարիքներին, վշտակից լինել նրա ցաւերին եւ ուրախանալ ընկերոջ յաջողութիւնների համար ու նոյնիսկ պարծենալ նրանցով, — ահա՛ այն գեղեցիկ օրերը, որոնք յատկանշում էին այն ժամանակուայ ընկերական փոխյարարերութիւնները:

Բայց կար եւ մի այլ նշանակալից երեւոյթ, որ Դաշնակցութիւնը վերածում էր իրօք մի մեծ ընտանիքի: Դա՛ մեծերի վերաբերմունքն էր դէպի կրտսերները: Այդ վերաբերմունքը միանգամայն մտերմական ու հայրական էր եւ երբեք չէր կրում մենտորական բնոյթ. մեծն ու կրտսերը կանգնած էին իրար կողքի որպէս հաւասարը հաւասարի հանդէպ: Ահա՛ թէ ինչո՞ւ մենք կրտսերներս, Երիտասարդներս, կարող էինք շօշափել ամենալուրջ հասարակական-քաղաքական ու կուսակցական խնդիրներ եւ միշտ ստանալ բացատրութիւններ, որպէս հաւասարը հաւասարից, երբե՛ք չհանդիպելով ո՛չ հեզանքի եւ ոչ արհամարհանքի:

Ահա՛ եւ փաստեր ու դէպքեր Ռոստոմի կեանքից: Յաւուած եմ միայն, որ չնայած իմ ունեցած բազմաթիւ հանդիպումներին Ռոստոմի հետ, շատ քիչ բան է մնացել իմ յիշողութեան մէջ, իսկ այն մի քանի դէպքերը, որ այսօր ես ուզում եմ գրի առնել, շատ պարզ եւ յստակ դրոշմուէլ են իմ յիշողութեան մէջ:



Յաճախ «Յառաջ»ի խմբագրութիւնից Ռոստոմի հետ գնում էինք ճաշելու մի հանրամատչելի ճաշարանում՝ Վելիամինովսկայա փողոցի վրայ: Երբեմն մեզ միանում էր բժ. Զարիկը:

Հայ-թրքական ընդհարումների մասնակցած հայ կամաւոր զինուորների լուծարքի ժամանակներն էին: Ռոստոմն էր վարում այդ պատասխանատու ու ծանր եւ անախորժ գործը: Ճաշարանից մինչեւ խմբագրատուն՝ Փրէյլենսկայեա փողոցը, ընդամէնը 5 րոպէի ճանապարհ էր: Բայց Ռոստոմը հազիւ էր կարողանում մի ժամուայ մէջ հասնել: Անընդհատ մօտենում էին զինուորները իրենց խնդիրքներով: Եւ պէտք էր տեսնել Ռոստոմին այդ ժա-

մանակ: Ոմանց նա ընդունում էր սիրով, իր աննման ժպիտը երեսին, ուշադրութեամբ լսում խնդրատունն եւ անմիջապէս բաւարարում. տալիս էր ճանապարհածախս ու բարի ճանապարհ մաղթում: Ոմանց ընդունում էր այսպէս ասած պաշտօնական ձևով, բաւարարում նրանց խնդիրը եւ պատուիրում անմիջապէս վերադառնալ զիւզ ու նուիրուել զիւզական աշխատանքներին: Ոմանց էլ յանդիմանում էր, պատուիրում այլեւս չերեւալ իր աչքին եւ վերջին անգամ տալիս էր գրամական նպաստ: Պարզ էր, որ սրանք մի քանի անգամ զիմում արել էին ու բաւարարուել, բայց կրկին ներկայացել էին... Այսպէս մի քանի ամսուայ մէջ զգալիօրէն պակասեց զիմողների թիւը:

\*\*\*

Այդ օրերին, «Մշակ» օրաթերթում Համբարձում Առաքելեանը շարունակ գրում էր զրգոնիչ յօդուածներ Դաշնակցութեան եւ դաշնակցական դործիչների դէմ՝ համեմելով իր յօդուածները հայհոյանքներով եւ պրովակացիաներով:

Մէկ օր խմբագրատնից Ռոստոմի հետ միասին դուրս եկանք եւ գրուցելով դնում էինք Երեւանեան հրատարակով: Ես նոր էի կարդացել Համբ. Առաքելեանի այդ օրուայ զրպարտիչ գրութիւնը Դաշնակցութեան դէմ եւ խորապէս յուզուած էի: Դարձայ Ռոստոմին եւ ասացի.

— Ռոստոմ, ա՛խր մենք մինչեւ ե՞րբ պիտի հանդուրժենք Համբ. Առաքելեանին եւ նրա գարշելի ելոյթներին: Մի՞թէ հնարաւոր չէ լռեցնել այդ մարդուն:

Ռոստոմը հասկացաւ միտքս եւ ժպտալով ասաց.

— Սիրելիս, Համբ. Առաքելեանը իր ելոյթներով մեր դէմ վնաս չի տալիս մեզ. ընդհակառակը, նա մեր ջրաղացին ջուր է կապում: Եթէ Համբարձում Առաքելեանը չլինէր, մենք մի ուրիշ Համբ. Առաքելեան պիտի ճարէինք:

Եւ ապա աւելի զարգացնելով ու պարզարանելով իր միտքը՝ նա միանգամայն ժխտեց որեւէ բռնութիւն գործ դնելու միտքն ու նպատակաւորմարութիւնը նման դէպքերում: Նա մի շարք օրինակներով ապացուցեց ինձ, որ բռնի միջոցները ամէն դէպքում եւ ամէն ժամանակ չեն կարող օգտաւէտ լինել. ընդհակառակը, կարող են բացասական անդրադարձումներ ունենալ թէ՛ հասարակական կեանքի բնականոն զարգացման եւ թէ՛ այդ միջոցները գործադրող կուսակցութեան կենսական շահերի վրայ:

Այդ օրուանից սկսած, ես սկսեցի կարդալ Համբ. Առաքելեանի յերկրանքները ամենայն սառնասրտութեամբ: Յիշում եմ, որ միայն մեր սիրելի Եղիշէ Թոփչեանն էր, որ միշտ շատ յուզուած էր եւ երբեմն խիստ պատասխաններ էր տալիս՝ հերքելով Համբ. Առաքելեանի ամբաստանութիւնները:

\*\*\*

Մի դէպք էլ Ռոստոմի մասնաւոր կեանքից:

Մի օր Ռոստոմը առաջարկեց ինձ գնալ տուն միասին ճաշելու: Նրա

բնակարանը գտնուում էր հեռու, քաղաքի մի համեատ թաղում: Բնակարանը 2-3 սենեակից էր բաղկացած, շատ աղքատիկ կահաւորումով եւ զուրկ առատ լոյսից: Տանը միայն պառաւ մայրն էր: Ռոստոմը հարցրեց՝ ճաշ ունի՞ թէ ո՛չ: Մայրը չփոթուած պատասխանեց, որ նա չէր սպասում որդու գալուն, ուստի ոչինչ չի պատրաստել... Ռոստոմը ժպտաց եւ գրամ տալով մօրը, խնդրեց որ մի քիչ միս աննի, խորոված աննի եւ մի շիշ գինի բերի:

Հազիւ ճաշը վերջացրինք, Ռոստոմը ասաց, որ ժամադրութիւն ունի եւ պիտի գնայ: Հրաժեշտ տուեց մօրը եւ դուրս եկանք:

Ես վերադարձայ տուն խոր տղաւորութեան տակ... Ահա՛ թէ ինչպէ՞ս էր ապրում մեր անզուգական Ռոստոմը...

Պէտք է ասեմ, որ Ռոստոմը այդ կողմից մեր երեք ուսուցիչներին մէջ միանգամայն բացառիկ էր: Քրիստոփորը (Միքայէլեանը), իմ մօրեղբայրը, որի մօտ Թիֆլիսում 1895-1900 թթ. ամբան ամիսներին ես ապրեցի, նոյնպէս շատ համեստ էր ապրում, պարզապէս մի աղքատ ուսանողի կեանք էր վարում, սզմուած երկու փոքրիկ սենեակներով մէջ՝ նոյնպէս շատ հասարակ կահաւորումով, բայց եւ այնպէս ապրում էր բնտանիքով, ընտանեկան կեանքով՝ իր կնոջ եւ մի նուճար փոքրիկ տղայի՝ Ռուրիկի հետ: Սիմոնը (Չաւարեանը) համեմատաբար աւելի բախտաւոր էր այդ կողմից: Ծիչդ է, Սիմոնի բնակարանը եւս սովորական համեստ կահաւորումով էր, բայց նա չըրջապատուած էր իր հարազատներով ու վայելում էր նրանց խնամքն ու դուրգուրանքը: Հայրը, մայրը եւ երեք քոյրերը պարզապէս աղօթում էին Սիմոնի վրայ, եւ Սիմոնն էլ շատ քնքոյշ զպացումներ էր տաժում դէպի նրանց: Նրա տունը իսկապէս մի նահապետական տուն էր, ուր իշխում էր փոխադարձ սէր, յարգանք ու նուիրում, եւ որտեղ հիւրասիրութիւնը պարզ էր, ջերմ ու անկեղծ, իսկ հիւրերն էլ անպակաս:

Ռոստոմը չուներ նման ընտանեկան կեանք: Նա թափառական կեանք էր վարում, ամբողջովին նուիրուած «գործ»ին...

Չափազանց բնորոշ է այն դէպքը, որ ես լսել եմ ընկերներից:

Պատմում էին, որ մի օր Թիֆլիսում, փողոցում, Ռոստոմը հանդիպում է իր կնոջ՝ տիկին Լիլային: Տիկինը զարմացած հարցնում է Ռոստոմին.

— Ե՞րբ ես եկել:

— Մի եօթ օր կը լինի, — պատասխանում է Ռոստոմը, — բայց շատ էի զբաղուած, չկարողացայ տուն անցնել:

— Լաւ, — ասում է կինը, — երբ ժամանակ ունենաս, մէկ տուն էլ հանդիպիր...

Եւ բաժանում են:

Եթէ ենթադրելու լինինք, որ այս պատմութիւնը անեկդոտային բնոյթ ունի եւ իրականութեան չի համապատասխանում, այնուամենայնիւ միանգամայն ճիշդ կերպով ցոյց է տալիս Ռոստոմի վարած անձնական կեանքի բընոյթը՝ կատարեալ ինքնամոռացում — յանուն մի սուրբ ու վեհ գաղափարական գործի...

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 1946

ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԻ ՎԱՐՊԵՏԸ

Դաշնակցութիւնը ԳՈՐԾԻՑ ծնաւ, ձեւաւորուեց ԳՈՐԾԻ մէջ եւ ելաւ ու մնաց զերազանցարար ԳՈՐԾԻ Կուսակցութիւն:

Իր ինքնատպութիւնն ու ազգային նկարագիրը ամենէն առաջ արտայայտուեց ա՛յս կէտի մէջ:

Ռուս յեղափոխական աշխարհը, որի հզօր կնիքը կայ Դաշնակցութեան վրայ, մոլեռանդ սիրահարը մնաց Խօսքի, մինչ Դաշնակցութիւնը՝ Կործի:

Երկու յուշ միայն՝ այս կարեւորագոյն պարագան առանձնաբար ընդգծած լինելու համար:

«Փրնեւ էի, ուսս յեղափոխականների մի ժողովում, — ասաւ մի օր աննման Վարպետը մեր Կուսակցութեան՝ Ռոստոմը՝ իր իմաստուն եւ հեղինակաւոր ժպիտը դէմքին, — վէճ կար այն մասին, թէ ահարեկում պէ՞տք է կատարել թէ ոչ. վիճեցին մինչեւ ուշ գիշեր. ես լուռ էի. երբ ժողովը փակուեց՝ երիտասարդներից մի քանի հոգի ինձ միացան՝ մինչեւ տուն ինձ ուղեկցելու համար. սրանք նոյն կրքոտ վէճը շարունակեցին նաեւ ճանապարհին, մինչեւ իմ տունը. ես դարձեալ լուռ էի. երբ մեր տան դուռը հասանք, սրանցից մէկը, որ նոր նշմարած էր իմ լուռութիւնը, յանկարծ դարձաւ ու ասաւ.

«— Ընկ. Ռոստոմ, դուք լուռ մնացիք ամբողջ ժամանակ, մենք ձեզ շլտեցինք. հետաքրքրական է դիտնալ նաեւ ձե՛ր կարծիքը. պատմա-փիլիսոփայօրէն ու քաղաքականապէս ահարեկումը ձեզ համար անդառնալիօրէն ճշգրտւած սկզբօ՞ւնք է արդեօք»:

«Այս հարցնողը, — նկատեց Ռոստոմը, — ճանաչում էր մեզ եւ մեծ կարծիք ունէր Դաշնակցութեան մասին: Ես դարձայ եւ ասի. — «Եթէ Դաշնակցութիւնը այդքան խօսի՝ նա գործ չի կատարի»: Եւ ընդհանուր ծիծաղի մէջ մենք բաժանուեցինք իրարից»:

Միւս յուշը դարձեալ կապուած է իր անուան:

Որքան յիշում եմ՝ 1907ին էր. մի քանի օրով հիւր էր Բագում՝ այնտեղից Վիեննա՝ Ընդհ. ժողովին մեկնելու համար: Օղտուելով առիթից՝ ընկերները խնդրեցին, որ մեր անվուզական մարտավարը մի գրոյց ունենայ մեզ հետ Դաշնակցութեան գործելակերպի մասին: Հուսալով թէ տեղի ունեցաւ Բագումի ծանօթ ընկերներից բժ. Գր. Սաղեանի բնակարանում: Ռոստոմը, միշտ նոյն հեղնախառն եւ իմաստուն ժպիտը դէմքին, իր գրոյցը բացաւ հետեւեալ նախադասութեամբ.

— «Այնքան շատ գործով տարուեցինք, որ խօսելն իսկ մտապահ»:

«Հ. Յ. Դ. Գաղափարաբանութիւնը» («ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ», էջ 168)

Ռ Ո Ս Տ Ո Մ Ը

(Մի էջ նրա Պարսկաստանում ունեցած գործունէութիւնից)

1908 թիւն էր: Պարսկաստանում յեղափոխութիւն էր ծագել: Արեւելքի այդ մեղի, կիւն, գինի, երգ ու վարդ սիրող ժողովուրդն էր շարժուել եւ ուզում էր մի հարուածով տապալել «չահիդը» ու հաստատել «Մազրութան» (սահմանադրութիւն): Թաւրիզն էր այդ յեղափոխութեան կենտրոնը, նրա վրայ էին շարժուել Մահմադ Ալի շահի զինուորներն ու նրա կողմնակից ցեղերից կազմուած բազմահազար բանակները: Այդ բոլորը չէր: Քաղաքի մէջ զանաւոր յայտնի միապետականները իրենց շուրջն էին հաւաքել ընդդիմադիրները՝ բերդը ներսից խորտակելու համար:

Իսկ ի՞նչ ունէին քաղաքում պաշարուած մի խումբ յեղափոխականները, — ոչինչ, բացի հաւատքից: Ո՛չ բաւականաչափ զէնք ունէին, ո՛չ ռազմամթերք, ո՛չ թնդանօթ (եղածներն էլ հին էին ու ժանգոտած) եւ ո՛չ էլ ուտելիք: Մեծ մասամբ ամէն մի յեղափոխական ինքն էր իր մասին հոգ տանում, զինուած էին ով ինչով կարողանում էր...: Ժողովուրդը տգէտ էր. յաղթութեան շանսերը քիչ:

Չնայած այս բոլոր աննպաստ պայմաններին՝ Դաշնակցութիւնը իր պատուի գնով ասպարէզ նետուեց ազատելու համար մարտնչող ղեմոկրատին բռնակալների ճիրաններից: Այդ գործի համար նա իր ամենալաւ ուժերը տրամադրեց: Նրա կոչի վրայ այնտեղ վաղեցին Քեռին, Մարտիրոսը, Նիկոլը, Խեչոն, Սեբոսն եւ այլն. վերջապէս եւ ինքը մեծ յեղափոխականը — Ռոստոմը: Եւ բոլորն էլ գիշեր-ցերեկ անդադար, առաջաւոր դիրքերում, պարսիկ ղեմոկրատիայի հետ կողք-կողքի կուրծք էին տալիս բռնակալութեան:

— «Մրազիր կայ, այժմ հարկաւոր է գործ», ասում էր Ռոստոմը:

Ու այդ դժոխային դրութեան մէջ, մենք մի խումբ ընկերներս մեզ միանգամայն անյաղթ էինք համարում. չէ՞ որ մեզ հետ էր Ռոստոմը, միշտ բարի, միշտ ժպտուն, միշտ հանդիստ, կարծես ոչինչ չէր կատարում մեր շուրջը, կարծես հենց այդպէս էլ պիտի լինէր: Նրան կարելի էր տեսնել ամէն տեղ, ուր կարիք կար — մէկ իր հսկողութեան տակ փոքրիկ «թնդանօթներ», ձեռնառումբեր, հրձիգներ շինող արհեստանոցում, մէկ առաջաւոր դիրքերում, մէկ փողոցները խուժած թշնամու հետ ճակատող մարտիկների մէջ՝ մաուզէրը ձեռքին, մէկ հրանդանոցի մէջ վիրաւորները մխիթարելիս...

Յիշում եմ, մի խուլ փողոցի փոքրիկ բակի մէջ էր մեր զինուորական արհեստանոցը, այնտեղ էին պատրաստում մեր բոլոր «թնդանօթները», ուումբերը եւ այլն: Մի օր, երեկոյեան ժամը 4ին, սովորական աշխատանքի ժամանակ՝ երբ Բուրջարացի Գէորգը իր ումբի մէջ գինամիտ դնելով էր զբաղ-

ուած, յանկարծ ինչ որ ուժեղ լոյս եւ պայթումի ձայն լսեցինք, բոլորս սենեակից դուրս փախանք. բակի մէջ միայն հասկացանք, որ մեր սենեակի մէջ ումը էր պայթել, մեր եւ դիմացի սենեակի բոլոր ապակիները փշրուել էին, եւ երբ սկսեցինք մեզ հաշուել, տեսանք որ Գէորգը պակաս էր, մեզինց մէկ սրտոտը ներս մտաւ սենեակ եւ եկաւ պատմեց, թէ Գէորգը սպանուել է պայթիւնից: Մենք, հրաշքով ազատուածներս, դուրս եկանք փողոց տուն գնալու համար: Պատահեցինք Ռոստոմին, որ պայթումի ձայնը լսածին պէս շտապով մեզ մօտ էր վազել: Երբ ամէն ինչ պատմեցինք, նա առանց սառնութիւնը կորցնելու, ասաց. «Պէտք է սենեակի մէջ եղածները դոնէ ազատել»: ու շարունակեց իր ճամբան... մենք դիտարկեցինք իրեն...

Մի ուրիշ օր էլ, երբ սանդուխների վրայ նստած ցոյց էր տալիս ինք թէ ի՞նչպէս պիտի պատրաստել պայթուցիկ վառօղը, յանկարծ խառնուրդը պայթեց եւ մօտ գալով ցաւակցութիւններս յայտնեցինք իրեն, նա սովորական փայտն երեսին ասաց. «Ոչինչ, ձախս դեռ կայ»(\*):

Եւ իսկապէս՝ նա դնաց հիւանդանոց, կապեց վէրքը ու անմիջապէս եկաւ գործը շարունակելու...

Ահա՛ Ռոստոմը:

Մեծ էր նրա ազդեցութիւնը Սաթթար ու Բաղրը խաների վրայ, նրանք այնքան էին հիացել Ռոստոմի ու նրա հնարած «թնդանօթների» վրայ, որ ամէն մի յաջող կոտից յետոյ առանձին հաճոյքով սեղմում էին նրա ձեռքը եւ կրկնում. «Եթէ տասը հատ ձեզ պէս մարդ եւ հազար հատ դաշնակ ֆետայի ունենայինք, շահի գորքերը մինչեւ Բաղդադ կը հալածէինք»:

Եւ արդեօք այդ հսկայական ոգևորութիւնը չէ՞ր պատճառը, որ այդ մի բուռ հերոսները երկա՛ր ժամանակ կարողացան դիմադրել օրբստօրէ աճող թշնամուն, մինչեւ որ, վերջապէս, մի գեղեցիկ օր յաղթական դուրս եկան այդ կոտից...

Այո՛, Ռոստոմն այնտեղ էր, ուր իրաւունքի համար մղուող կռիւ կար:

Փա՛ռք նրա անմեռ յիշատակին:

«ԴՐՕՇԱԿ», — Թիւ 8-10, 1926

(\*) Տպագրական անուշադրութեան մը հետեւանով, առ նուազն տող մը կը թուի փախած ըլլալ, հաւանորէն հետեւեալ բովանդակութեամբ «...եւ վիրաւորեց նրա աչ ձեռքը. եւ երբ մօտ գալով...»: Պահած եմք հարազատ՝ «Դրօշակ»ի բնագրին: Հ. Տ.

## Ղ Ա Ջ Ա Ր

### ՄԻ ԷՋ ԹԱԻՐԻՉԻ ԿԵԱՆՔԻՑ

1908-9 թուականներին տեղի ունեցան Թաւրիզի յեղափոխական շարժումները: Կոլուների նախօրեակին Ռոստոմը այնտեղ էր: Ղեկավարում էր շարժումը եւ հայերի մասնակցութիւնը:

Երբ միապետական ուժերը կատաղի յարձակումներով դրաւեցին քաղաքը, պարսիկ յեղափոխականների պարապլուիններ Սաթթար եւ Բաղրը խաները, շրջապատուած 40-50 հաւատարիմ զինուորներով, ամրացան Լիւաւայի եւ Ղալայի հայկական թաղերի մօտի դիրքերում եւ օրհասական դիմադրութիւն էին ցոյց տալիս:

Յուսահատական օրեր էր ապրում նաեւ Թաւրիզի հայութիւնը: Եթէ միապետականները ներս խուժէին, թալանն ու կոտորածը անխուսափելի կը լինէր:

Վերջին տաղնապալից օրն էր յեղափոխականների համար: Թշնամին աւելի եւ աւելի յանդուզն էր դառնում: Պարտութիւնը թւում էր անխուսափելի:

Ռոստոմը շտապեց կոտի վայրը եւ իր ձեռքը առաւ ղեկավարութիւնը: Սառնարին, ինչպէս միշտ, մշակեց յարձակման ծրագիր, դասաւորեց ուժերը եւ ինքը արեւի մայրամուտի մօտերը, ռակետ նետող գործիքը ձեռքին, բարձրացաւ Լիւաւայի թաղի ամենարարձր տներից մէկի կտուրը: Այստեղից յարձակման նշան տուեց եւ սկսեց աջ ու ձախ թշնամու դիրքերի վրայ ռակետ արձակել:

Ռոստոմի նշանի վրայ հայ ու պարսիկ մարտիկները, ձեռնառումքերի որոտով եւ հրացանների անընդհատ համազարկերով գրոհ տուին հակառակորդի վրայ: Ռոստոմի նետած ռակետները ահ ու սարսափի էին մատնում միապետականներին: Նրանց շարքերում տիրեց սարսափելի շփոթ եւ իրարանցում: Եւ շուտով լքեցին դիրքերը եւ խուճապահար, անկարգ ու խառնիճաղանձ ամբոխի վերածուած՝ դիմեցին փախուստի:

Յեղափոխականները դրաւեցին Արք միջնարկը: Ապա, միմեանց յետեւից, տէր պարձան եւ միւս թաղերին ու դիրքերին: Յաջորդ առաւօտ ամբողջ քաղաքն արդէն յեղափոխականների ձեռքին էր: Ռոստոմը փրկեց Ատրըպատականի յեղափոխութիւնը: Յնձութիւնը ամէն կողմ աննկարագրելի էր...

Քիչ յետոյ, Ջուլֆայից հասաւ Քեռին իր 40 հոգինոց խմբով: Ռոստոմը նրան յանձնեց կոտի ընդհանուր ղեկավարութիւնը: Բայց ինքը մնաց պայքարի ոգին, թէեւ միշտ ստուերի մէջ, առանց առաջ նետուելու եւ իր անունն ու անձը ցուցադրելու:

«ԴՐՕՇԱԿ», — Թիւ 1-2, 1929

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԱՐՄԻԿ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ

1907ի Դեկտեմբերի վերջերուն Ռոստոմ կը հասնի Թեհրան՝ ազդեցիկ շրջաններու տրամադրութիւնը շօշափելու եւ բանակցելու նպատակով: Իրեն կ'ընկերանար Յովսէփի Միրզայեան — լաւ ծանօթ երկրի պայմաններուն ու պարսիկներու հոգեբանութեան: Եւ ամէն մի ժողովէ ետք՝ կը խորհրդակցէին երեք ուրիշ տեղացի անձերու հետ, որոնցմէ էր մեր հին ընկեր դոքտոր Ստեփանեան: Մէջլիսը այդ ժամանակ երբեք չէր դուրս եկած Կոնստանտնուպոլիսէն: Բայց Շահն ալ երկիւղի ու տաղնապի օրեր կ'ապրէր: Պարսիկներու կողմէն բանակցութիւններուն կը մասնակցէին Վոսուօղ-Դովլէ, Մէջլիսի փոխ-նախագահը, Մոսթէշատ-օղ-Դովլէ, երեսփոխան, պատգամաւոր Թաւրիզի, Հալի-Ամեն-օղ-Չարը, պատգամաւոր Թեհրանի վաճառականներու կողմէ, նրկատուած որպէս Պարսկաստանի մեծագոյն հարուստը եւ սահմանադրականներու Ֆինանսական ուժը. Հաջի-Մուին-օղ-Թոջար, նոյնպէս մեծահարուստ մը, որ նախորդին հետ կը հոգար յեղափոխական շարժման ծախքերը. Հաջի Միրզա Իբրահիմ աղա, պատգամաւոր Թաւրիզի, յեղափոխական անջումաններու պարագլուխ. վերջապէս Աղա Սէյիդ Թաղը-Չաղէ, Մէջլիսի ամենէն պերճախօս եւ ազդեցիկ անդամը: Գրեթէ բոլորը Փրանսախօս: Այդ խումբը կազմուած էր Մէջլիսի զանազան խաւերէն եւ կը ներկայացնէր այն հեղինակաւոր կորիզը, որ ուղղութիւն կու տար ազատագրական շարժման: Անոր հետ էին Թեհրանի ամենէն հեղինակաւոր հոգեւոր պետերը — Աղա Սէյիդ Աբդուլլահ եւ Աղա Սէյիդ Մոհամմատ մուշտայիդները, որոնք կը համարուէին հիմնադրերը Սահմանադրութեան (\*):

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ — Ռոստոմ եւ Յովսէփի Միրզայեան: Հինգ նիստերու մէջ (1908 թ. Յունուար) քննուեցան շարք մը կարեւոր խնդիրներ: Անոնց պարունակութիւնը ցուցադրուած է Ռոստոմի մէկ ընդարձակ գրութեան մէջ, որուն կցուած են Փրանսերէն վաւերագիրները: Որքան եւ հետաքրքրական ըլլան անոնք Դաշնակցութեան պատմութեան համար, ստիպուած ենք զանց առնել այստեղ: Կու տանք հակիրճ տողեր միայն: Օրակարգի խնդիրներն էին. 1. Ո՞րքան ապահովուած է Սահմանադրութեան բնականոն ընթացքը Շահի հետագայ դաւերուն հանդէպ: 2. Ի՞նչ յոյսեր ունին հեռացնելու տաճիկ զօրքը պարսկական հողերէն: 3. Ինչի՞ մէջ պիտի կայանայ մեր աջակցութիւնը եւ ինչն՞ վ իրենք կարող են մեզ օգնել:

Պարսիկ բանազնացները կը պատասխանեն. 1. որ Շահը կրնայ միայն

(\*) Պարսից կզերը հետագային մեծ մասամբ անցաւ հակայեղափոխականներու կողմը:

դանդաղեցնել ազատագրական գործը, բայց ոչ խեղդել. 2. որ եթէ թուրք կառավարութիւնը բացէ ի բաց մերժէ պարսիկ պարուած վայրերը, պատերազմը անխուսափելի կը գտնայ (\*). 3. որ Դաշնակցութիւնը զգալի աջակցութիւն կարող էր բերել ազատական պարսիկներուն, եթէ իր ունեցած կապերով պաշտպանէր երիտասարդ Պարսկաստանի գաղափարային, մասնաւորապէս Ֆրանսայի մէջ, որ թերեւս հնարաւոր էր փոխառութիւն մը կրնալ: (Կողմնակի աղբիւրներէ կ'իմանայինք, որ Ֆրանսա կը հրաժարէր զրամ տալ Պարսկաստանի, առանց Ռոստոմի երաշխաւորութեան, որովհետեւ Իրանը պարտք էր Ռոստոմին (30 միլիոն):

Պարսիկ սահմանադրականները կ'ուզէին նաեւ, որ Դաշնակցութիւնը տրամադրէր իրենց մէկ-երկու ձեռնհաս սպաններ, այլ եւ քանի մը մասնագէտներ, պայթուցիկ գործիքներ բանեցնելու համար, պատերազմի պարագային:

Երիտասարդ պարսիկները նաեւ յանձնառու կը լինէին լայնացնելու հայոց ազգային իրաւունքները, զորս հայ տարրը կը վայելէր հին բունապետական ռեժիմին տակ:

Կը խոստանային, վերջապէս, յատկացնել հայ փախստականներուն Սալմաստի ու մերձակայ շրջաններու «Սալխասէ» (արքունի) կոչուած մշակելի հողերը:

Ժողովներու մէջ կ'իշխէր ջերմ, բարեկամական տրամադրութիւն երկուստեք: Պարսիկ բարեկամները կը խոստանային մեզի — ինչ որ առանձնապէս կարեւոր էր մեր ժողովուրդի պաշտպանութեան համար — 1. Ապահովել եւ դիւրացնել մեր ուժերու փոխադրութիւնը Պարսկաստանի ներսում: 2. Դիւրացնել մեր պէնքի ու ռազմամթերքի փոխադրութիւնը արտասահմանէն Պարսկաստան:

Սոստացան նաեւ աջակցիլ մեզի համերաշխութեան քարոզը մղելու հայ եւ թուրք տարրերու միջեւ՝ թուրքիոյ եւ Կովկասի մէջ, զրկել, ի հարկին, Կ. Պոլիս յատուկ մարդ մը (պարսիկ ազատական քարոզիչ), որպէսզի մեզ յարարութեան մէջ դնէ օսմանեան մայրաքաղաքի պարսիկ սահմանադրական տարրերուն հետ, որոնք կրնային օգնել մեզի համերաշխութեան այդ պրոպագանդին մէջ:

Ռոստոմ եւ ընկերները խոստացան, ի հարկէ, որ Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոն պիտի օգտագործէ պարսից գաղափարային համար իր կապերը Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսայի հայասիրական շրջաններուն հետ, նաեւ նիւթեր պիտի մատակարարէ արեւմտեան մամուլին, — բան մը՝ որ պիտի ընէինք նաեւ առանց պարսիկ բարեկամներու խնդրանքին (\*\*):

(\*) Թուրքերը, ի վերջոյ, հեռացան Անգլիոյ եւ Ռուսաստանի ճնշման տակ:

(\*\*) Շուտով Թաւրիզէն ժընեւ հասան սահմանադրական Պարսկաստանի համար պայքարող երկու պատուիրակներ — մէկը կովկասահայերուն լաւ ծանօթ կարաբէկով — որուն Արեւմտեան Բիւրոն չզրացաւ տալ ամէն անհրաժեշտ աջակցութիւն՝ մղելու իրենց քարոզչութիւնը մեր օտար բարեկամներու շրջաններում, Պարսից եւ այլուր:

Բայց չատ չանցած՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը պիտի բերէր այդ խանդավառ, բայց անխորձ, անվարժ Պարսկաստանին՝ տարրեր ձեւի աջակցութիւն մը — միանգամայն ուղղակի ու ուղղակի — որ մէկէն ի մէկ վաճառեց զսոսոց ու յաղթական Մեհմէտ Ալիի գահը, ահարեկեց անոր շրջապատն ու ողջ յետագէ՛մ միապետական բանակը եւ միւս կողմէն զարմանքի, հիացումի, երախտագիտութեան հոսանք մը առաջ բերաւ երկրի ազատատենչ, սահմանադրական տարրերուն մէջ...

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», Բ. հատոր, էջ 64-66

### 3. ԷԼՄԱՐ

#### ՌՈՍՏՈՄԻ ՋԵՐՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարներից Ռոստոմը իր անվերապահ աջակցութեամբ ու նուիրում աշխատանքով կարևոր դեր է ունենում Պարսկական Սահմանադրական շարժումների մէջ:

Այդ դերը կայանում է նախ այն բանակցութիւնների արդիւնքը կողմոյ համաձայնութեան մէջ, որ կուսակցութեան անունից կնքուել է 1908ին, Թեհրանում, պարսիկ սահմանադրական ղեկավարութեան հետ, կուսակցութեան բերելիք աջակցութեան մասին:

Ապա՝ 1910ին, Թուրքի ապստամբութեան օրերին, Սաթթար խանի հետ, միասնորար վարած կոիւնների անուղղակի ղեկավարութեան մէջ:

Իր՝ Ռոստոմի ատութեամբ, Պարսկաստանում սկսուած ժողովրդական խլրտումները, հենց սկզբից գրուել են իր ուշադրութիւնը:

Հատուտոր յեղափոխականի հետաետութեամբ նա մեծ նշանակութիւն է տուել պարսկական յեղափոխութեան, Միջին Արևելքի ժողովուրդների դարթօնքի եւ յառաջդիմական շարժումների տեսակէտից: Այդ նկատումով նա անհրաժեշտ է գտել ամէն աջակցութիւն ցոյց տալ այդ յեղափոխութեան եւ ջերմ մտանակցութեամբ սատարել, ծաւալել ու խորացնել յեղափոխութիւնը, առաջնորդուած ընդհանուր, տեղական եւ հայկական շահերի եւ ոակի տեսակէտից:

Կարիք չկայ ասելու, որ Ռոստոմի այդ ողբերգութիւնը բխում էր նրա համամարդկային գաղափարի, յեղափոխական խառնուածքի եւ հայրենասիրական սգուց:

Նա 1890ական թուականներին, թէ՛ իրը ուսուցիչ եւ թէ՛ իրը նորակազմ կուսակցութեան գործիչ, եղել էր Ատրպատականում, Թուրքի, Սալմաստ: Անկասկած անցել էր եւ շրջանները: Տեսել էր բուն ժողովրդի — զիւղացիութեան եւ աշխատատիրութեան իրաւագուրկ, թշուառ եւ ստրկական վիճակը:

Ականատես էր եղել պետական պաշտօնականների, աստական իշխանների, ազանների, խանների եւ նրանց Փարրաշ-ոստիկանների գործադրած անլուր հարստահարութիւններին, բռնութիւններին ու խոչտանգումներին: Անկասկած, խոր ցաւ էր զգացել իրրեւ իրաւ ընկերվարական եւ, հաւանականաբար, այն ժամանակ իսկ պատրաստ էր եղել սրել կերպ օգտակար լինելու անլիզու, թշուառ այդ զանգուածներին, բայց չէր ունեցել այդ հնարաւորութիւնը:

Այժմ, երբ քիչ-չատ զգաստացած ժողովուրդը, սոքի կանգնած, իր իրաւունքներն էր պաշտպանում, պարզ էր, ի հարկէ, որ նա հոգով ու սըր-

տով աջակցութեան պիտի գար իր համար բարձր այլ նպատակի իրագործման:

Բայց նա պարսկական շարժումների յաջողութեան մէջ, բացի տեղական և ընդհանուր բնոյթից, տեսնում էր նաև Հայութեան շահը:

Նա այն հաւատն ունէր, որ նախ՝ սահմանադրական իրաւակարգի բարեփոխելուց պիտի օգտուի պարսկահայութիւնը և ապա սպառնալուց պիտի երեւան բերի իր ստեղծագործական յայն աշխատանքները յօգուտ երկրի և յօգուտ իր ազգային իրաւունքների ու անհատական բարեկեցութեան:

Ապա, նա այն համոզումն ունէր, որ յետամնաց Պարսկաստանի ժողովրդական շարժումները — բայց մանաւանդ յեղափոխութեան յաղթանակը — պիտի ազդի թուրքիայի ու Ռուսաստանի, աւելի շուտ արժնացած ժողովուրդների վրայ և հարեւան այդ երկրներում ևս, առաջ պիտի բերի աւելի ուժեղ շարժումներ: Իրական մի յեղափոխութիւն, որ եթէ չխորտակի էլ բռնապետական այդ երկրների կարգերը, յամենայն դէպս, մեծ փոփոխութիւններ պիտի մտցնի նրանց վարչակարգի մէջ: Իսկ զրանից պիտի օգտուեն և ձեռնամուկից ու հալածանքից պիտի ազատուեն զոյգ այդ երկրների բազմազան տարրերը, նրանց շարքում նաև Հայութիւնը:

1908 թուին թուրքիայում կատարուած յեղաշրջումը, իր բնոյթով թէև գրնտորական, բայց և այնպէս վարչաձևի փոփոխութեան տեսակէտից հաստատուած էր Ռուստոմի նախատեսութիւնը:

Պարսկական շարժումների հանդէպ ունեցած իր բուն հետաքրքրութեամբ Ռուստոմը, տեղեկանալով Մոհամէզ Ալի Շահի գործադրած հալածանքների ու բռնութիւնների հետեւանքով ազատական տարրերի մէջ առաջացած թուլութեան և յուսաբեկման մասին, ընկերների հետ խորհրդակցելուց յետոյ, 1907 Դեկտեմբերի երկրորդ կէսին մեկնում է Թեհրան: Իրանի մայրաքաղաքն է շտապում, անձամբ իրագործելու կուսակցութեան Չորրորդ Ընդհանուր ժողովի սրտումները, որոնք անցել էին իր առաջարկած բանաձևով:

Թեհրանում նա շուտով յարարութեան մէջ է մտնում ազատականների ներկայացուցիչների հետ և յաջողում է շուտով բանակցութիւն սկսել նրանց հետ:

Այդ օրերին Մոհամէզ Ալի Շահը վերջնականապէս սլարգել էր իր դիրքը և ասպարէզ իջել սահմանադրութեան կատարի հակառակորդի թշնամութեամբ:

Մինչ այդ Շահը երկդիմի քաղաքականութեամբ աշխատում էր ժամանակ շահել պատրաստուելու նպատակով:

Նա մերթ երեւան էր գալիս նոր իրաւակարգն ընդունելու գիմակով, բայց մեքենայութիւններ էր լարում նրա դէմ, մերթ Ղուրանի վրայ երդուում էր հաւատարիմ մնալու Սահմանադրութեան, բայց անմիջապէս դաւաճանում էր իր երդումն և դաւեր նիւթում նոր կարգերի դէմ:

1907 թուի վերջերին նա պատրաստ զգալով իրեն, ուղղադաշտ է իջնում իր խկական կերպարանքով:

Սկսում է խիստ հալածել, ձերբակալել, բանտարկել ու խոչտանգում-

ների ենթարկել ազատականներին և աստիճանաբար աւելի խստացնել իր սարսափները:

Նրա հրահանգով կազմուած խոտլարար խմբակցութիւնները հետապնդում են սահմանադրականներին և մշտական երկիրդի ու անարեւմտական մէջ պահում նրանց զեկավարներին:

Ռուստոմը Թեհրանից գրած 10 Յունուար 1908 թուակիր նամակով հետեւեալ կերպով է նկարագրում քաղաքական այդ ծանր վիճակը:

«Շահի կողմնակիցները շարունակում են գազտնի դաւեր լարել Սահմանադրութեան դէմ: Կազմուել են տեղական սեւ հարիւրակներ, որոնք տեռորի(\*) միջոցով ձգտում են ընկճել սահմանադրականներին:

«Իմ գալու երկրորդ օրը տեռորի ենթարկուեց, իր տան մէջ, սահմանադրական շարժման աջակից յայտնի հարուստ արբար Ֆրէյդուներ, հենց Շահի մտերիմ սենեկատեղի մարդկանց ձեռքով:

«Մի օր անց հրացանաձուլութեան ենթարկուեց արտաքին գործոց նախարարը, նոյնպէս իր տան մէջ:

«Սա ևս յայտնի է իբր Չեքմ Սահմանադրական: Նրա հայրը Մուշիրը Դովլէն էր, որ Սողրազամ եղած ժամանակ կարողացել էր համոզել Շահ Մոլաֆարէզին Սահմանադրութիւնը ստորագրել:

«Մէջլիսի(\*\*) անդամները մշտական վախի մէջ էին. շատերը տանը չէին քնում. իրենց կողմից միջոցներ էին խորհում թէ՛ իրենց անձը և թէ՛ Սահմանադրութիւնը ապահովելու համար: Ահա թէ ինչու, իմ գալուց մի շաբաթ անց, միայն Դեկտեմբեր 30ին տեղի ունեցաւ առաջին նիստը»:

Համագործակցութեան բանակցութիւնները սկսուած 1907 Դեկտեմբեր 30ից, ունենում են յաջորդաբար (բացի Յունուար 1ից) վեց նիստ:

Բանակցութիւններին մասնակցում են վեց հոգուց բաղկացած պարսիկ ազատականների մի խումբ «Մէջլիսի զանազան խաւերից. այս խումբը ներկայանում է իբրև մի կորիզ, որը իր հեղինակութեամբ կարողանում է ուղղած ուղղութիւնը տալ գործերի ընթացքին»:

«Վեց հոգուն համախմբողն ու բանակցութիւնների նախաձեռնողը հանդիսանում էր Սէյիդ Հասան Թաղիզադէն, որ եռանդուն և ամենից ազդեցիկն էր ևս յենում էր յեղափոխական անջոմանների (ժողով) վրայ:

Պարսիկ ազատականների ներկայացուցչութիւնը կազմուած էր հետեւեալ անձնաւորութիւններով.

Վըսուզը Դովլէ (Խորհրդարանի փոխ-նախագահ), Մոսթաշարը Դովլէ, Հաջի Էրրահիմ Ազա, Սէյիդ Հասան Թաղիզադէ (երեքն էլ Թուրիդի պատգամաւոր), Հաջի Ամինը Զարը (յայտնի հարուստ և փողերանոցի կապալառու), Հաջի Մուինը Թուշար (վաճառական): Վերջին երկուսն էին զլխաւորապէս հոգում սահմանադրականների ծախքերը«(\*\*\*):

(\*) Ահաբեկում:

(\*\*) Խորհրդարան:

(\*\*\*) Ռուստոմի նոյն նամակից:

Կուսակցությունների կողմից ներկայացուցիչներ էին ինքը՝ Ռոստոմը և տեղացի բնիկներին Յուսուֆի Միրզայանը<sup>(\*)</sup> : Նրանք ամեն մի նիստից յետոյ զբաղվում խորհրդակցում էին փորձառու և քաղաքական խնդիրներին լրացել ենք բնիկներին հետ :

Հիմնումս ձեռքի տակ եղած փաստաթղթերի, ապա Թաւրիզում, նոյն 1908 թուին, այդ բանակցությունների մասին Ռոստոմի տուած որոշ մանրամասնությունների յիշողությունս վրայ, պէտք է ասել, որ բանակցություններն սկսուել և շարունակուել են ջերմ և անկեղծ միջնորդում : Նիստերի ընթացքում եղել են թեթև փոփոխություններ, այն էլ մաքերի պարզաբանութեան համար :

Վեց նիստերում քննութեան են առնուել առաջին հերթին 1) Սահմանադրական իրաւակարգի ապահովութեան և բնականոն ընթացքի հարցը :

Ապա յաջորդաբար՝ 2) անդլո-ուսական 1907ի համաձայնութեան ղէմ առնուելիք միջոցները : 3) ներխուժած տաճկական զորքեր երկրի սահմաններից հեռացնելու, և այդ՝ զիւանադիտական ուղիով շաջողելու և պատերազմի ղէպքում, զինական ուժերի պատրաստութիւնների մասին : Եւ ի վերջոյ՝ 4) սահմանադրականների ու կուսակցութեան փոխադարձ աջակցութեան, օգնութեան և յանձնառութիւնների կարևոր հարցերը :

«Բոլոր խնդիրների շուրջ կատարեալ համաձայնութեան եկած, որոշուել է մօտիկ ապագայում գումարել մի նոր հանդիպում-ժողով, ուր «կարող էին զրուել և ուրիշ հարցեր և ուր համաձայնութիւն կը կայանար աւելի կոնկրէտ հարցերի շուրջ»<sup>(\*\*)</sup> :

Համաձայնութիւնն ամփոփուած էր 12 յօդուածներում, որ բաժանուած էր երկու մասի — անմիջական գործադրելի և հետագայում (պատերազմի ղէպքում) իրագործելի :

(\*) Յ. Միրզայանը մասնակցել էր համառոտի արշաւանքին : Այդտեղից նրա մտերմութիւնը եփնեմի հետ, որ աւելի ջերմօրէն շարունակուել է Թեհրանում :

Հանրային և կուսակցական գործիչ Յ. Միրզայանը որոշ դեր է ունեցել հայ-պարսկական բարեկամական յարաբերութիւնները սերտացնելու մէջ և երկուստեք արժանացել է յարգանքի ու գնահատանքի :

Խորհրդարանի երրորդ նստաշրջանից սկսած, շարունակաբար, մի քանի անգամ ընտրուել է պարսկահայութեան, ապա՝ երբ պարսկահայութեանը տրուեց երկու պատգամաւորի իրաւունք, նա ընտրուեց հարաւային պարսկահայութեան ներկայացուցիչ հորհրդարանում :

Իր այդ հանգամանքով նա գնահատելի ծառայութիւններ է մատուցել երկրին և միաժամանակ պաշտպանել է իր ընտրողների հանրային շահերը :

Իբրև շնորհալի թարգմանիչ, Յ. Միրզայանը խիստ օգտակար աշխատանք է կատարել նաև գրական մարզում : Տարիներ շարունակ նա պարսիկ դասական մի շարք բանաստեղծների գոհարները ծանօթացրել է հայ ընթերցողներին և դրանով նպաստել երկու ժողովուրդների կապերի ամրապնդման :

Պարսկերէնից կատարած թարգմանութիւններից բացի, նա հրատարակել է անգլերէնից և ռուսերէնից թարգմանած առանձին գրքեր : Ռուսերէնից թարգմանել է Լեւոնտուզի «Գեւը» :

(\*\*) Ռոստոմի նամակից :

Արձանագրութիւնները կազմուած էին երկու լեզուով — պարսկերէն և ֆրանսերէն :

Համաձայնութեան իբր առաջին մասի անմիջական գործադրութիւն, կուսակցութիւնը յանձն է առնում իր հնարաւոր աջակցութիւնը բերել սահմանադրականներին թէ՛ ներքին և թէ՛ արտաքին ճակատներում :

Արտաքին ճակատում — Եւրոպայում — նա պիտի պաշտպանի նոր Պարսկաստանի դատը և պիտի աշխատի չէզոք երկրներից որեւէ մէկին չահարկուել Պարսկաստանով, որպէսզի ազատուի ուսումնական կլանումից :

Այս տեսակէտից, նկատի ունենալով պարսիկ բանակցողների ցանկութիւնը, կուսակցութիւնը իր ունեցած կապերի միջոցով այդ աշխատանքը մեծ մասամբ պիտի կատարի Ֆրանսիայում և ջանքեր գործադրի յաջողեցնելու, որպէսզի որոշ գումարի փոխառութիւն տրուի Պարսկաստանին : (Ֆրանսիային չահարկուելու խնդրում բանակցող ազատականներն առաջարկում են օգտուել նաև Մեկքոն խանի ու Յովհ. խան Մասեհեանի օժանդակութիւնից, որոնք այդ ժամանակ Եւրոպա էին գտնուում) : Կուսակցութիւնը խոստանում է հնարաւորութեան ղէպքում կատարել սահմանադրականների ցանկութիւնը և արաժապրել զինական ու սոցիալական օժանդակութիւն, յանձնառ փորձուած զինուորական զեկաւարների և պայթուցիկ նիւթերի մասնաղէտների :

Պարսիկ ազատականները խոստանում են յանձնառու լինել ապահովելու և յարմարութիւններ տալու կուսակցութեան ուժերի տեղափոխութեան երկրի ներսում և ղէնք ու սոցիալական փոխադրութեան արատահամից Պարսկաստան :

Նրանք խոստանում են սահմանադրականների յազմանակից յետոյ աւելի լայնացնել այն իրաւունքներն ու արտօնութիւնները, որ պարսկահայութիւնն ունի, ի վաղուց անդի Շահական հրովարտակներով իր ներքին, ազգային-մշակութային կեանքում :

Պարսիկ ազատականները յանձն են առնում հայ զաղթականներին յատկացնել Սաւմաստի ու շրջակայ վայրերի պետական հողամասերը (խալըսէ) :

Նրանք յանձնառու են լինում ջերմ աջակցութիւն բերել՝ զարկ տալու համերաշխ գործակցութեան հայ և մահմեդական տարրերի մէջ, թէ՛ Թուրքիայում և թէ՛ Կովկասում :

Խոստանում են իրենց հաւատարիմներից մէկին Կ. Պոլիս ուղարկել, որպէսզի կուսակցութեան անդամներին յարաբերութեան մէջ ղնի տաճկական մայրաքաղաքում գտնուող պարսիկ ազատականների հետ, օգնելու այդ համագործակցութեան աշխատանքում :

Համաձայնութիւնից անմիջապէս յետոյ կուսակցութիւնն անցնում է իր յանձնառութիւնների իրագործման :

Ֆրանսիայում նա օգտուում է թէ՛ իր բարեկամ ֆրանսիացի պատգամաւորների ու քաղաքական գործիչների օժանդակութիւնից և թէ՛ մամուլի քարոզչութիւնից Պարսկաստանի հանդէպ համակրանք ստեղծելու ուղղութեամբ, որ յաջողում է : Բայց, ղժբախտաբար, այդ յաջողութիւնը մնում է բարոյական սահմաններում : Գործնական արդիւնք չի ունենում, որովհետեւ ֆրանսիական կառավարութիւնը դաշնակից էր Ռուսաստանի հետ և բա-

րեկամ Անգլիային : Փոխառութեան համար էլ պահանջում էր Ռուսաստանի երաշխաւորութիւնը , որին Պարսկաստանը պարտք էր շօշափելի մի գումար :

Ներքին ճակատում եւս կուսակցութեան աշխատանքը կատարում էր , աւելի քան ծրագրուած եւ կանոնաւոր կերպով :

Կուսակցութեան մարմինների ներկայացուցիչներն ու գործիչ ընկերները բոլոր վայրերում էլ սերտ կապ են պահում սահմանադրական ղեկավարների հետ , խորհուրդներ տալիս , գործունէութեան ուղեգծեր մատնանշում եւ երբեմն էլ զէնք , ռազմամթերք ու ռումբ տրամադրում որոշ գործողութիւնների համար :

Այս կազմում են քիչ-չատ կրթուած պարսիկ երիտասարդներից խմբեր — երբեմն խառն , հայ եւ պարսիկ — եւ դասախօսութիւնների ու զրոյցների միջոցով մտքեր պատրաստում :

Այսպէս շարունակում է մինչեւ Թաւրիզի ապստամբութիւնն եւ ռազմական գործողութիւնները :

Իսկ այդ ժամանակ կուսակցութիւնն իրագործում է իր միւս յանձնարարութիւնը : Մէկը միւսի յետեւից սահմանադրական կոիւնների շրջաններն է ուղարկում մի շարք ռազմավայրերում փորձառու դարձած այնպիսի յայտնի զէմքեր , ինչպիսիք էին՝ Քեօրին , Դումանը , ապա Սամսոնը , Զուլումաթը , Սմբատը , Սեհնն եւ Մարտիրոսը — փաղանդն այն հերոսների , որոնց շարքում անակնկալօրէն երեւան է գալիս նաեւ մեծ ռազմազէտ եփրեմը : Ռուստոմն ինքն էլ է շտապում կոիւնների կենտրոն Թաւրիզ (1908 Հոկտեմբերի վերջերին) եւ ամբողջովին մխրձուած ապստամբ քաղաքի պաշտպանութեան եւ յաղթանակի աշխատանքների մէջ :

Այստեղ նա իրագործում է նաեւ համաձայնութեան միւս խոստումը՝ պայթուցիկների նկատմամբ : Ռուստոմը հիմնում է պայթուցիկների փոքրիկ մի աշխատանոց եւ անձամբ ղեկավարում ռումբերի , հրթիռների եւ պայթուցիկ այլ զէնքերի պատրաստութիւնը :

Ռուստոմի նախաձեռնութեամբ Թաւրիզում եւս կուսակցութեան ներկայացուցիչների եւ սահմանադրական ղեկավարների միջեւ տեղի են ունենում բանակցութիւններ , որոնք յանգում են հետեւեալ համաձայնութեան .

«Հայ մարտիկները գալիս են իրենց զէնքերով . իսկ սահմանադրական ղեկավարութիւնը հողում է նրանց ռազմամթերքը , ձիերն ու սպորուստի միջոցները :

«Կուսակցութիւնն ինք է հայթայթում պայթուցիկ նիւթերն ու զէնքերը . իսկ պարսիկ ղեկավարութիւնն աջակցում է նրանց փոխադրութեանը արասահմանից :

«Հայ մարտիկների պետերը , իբր փորձուած խմբապետներ , պահում են իրենց այդ հանգամանքը , իսկ պարսիկ ղեկավարութիւնը զինուած ուժեր է տրամադրում նրանց հրամանի տակ» :

Ռուստոմի վարած այս բանակցութիւններին , ինչպէս եւ նրա ու Սաթթար խանի ու պարսիկ ղեկավարութեան փոխ-յարարբերութիւններին մաս-

նակցում էր Հ . Յ . Դ . Ատրպատականի Կ . Կոմիտէի քարտուղար Վահան Զաքարեանը(\*) :

Դառնալով նրանց վարած բանակցութիւններին , ցաօք պիտի ասել , որ սահմանադրական ղեկավարութեան կողմից տրուած խոստումները — ինչպէս Թեհրանի , Նոյնպէս եւ Թաւրիզի համաձայնութեամբ — մեծ մասամբ մնում են անգործադրելի :

Ղեկավարութիւնը գործադրում է Թեհրանի համաձայնութեան այն կէտը , որ վերաբերում է կուսակցական ուժերի տեղափոխութիւններին եւ պայթուցիկ նիւթերի ներածման գիւրութիւն տալու հարցին :

Բայց ոչ մի կերպ չի իրագործում սահմանադրականների յաղթանակից յետոյ պարսկահայութեան կրթական-մշակութային մարզում ունեցած արտօնութիւններն ընդարձակելու խոստումը :

Ընդհակառակն , ընդարձակելու փոխարէն , հետզհետէ կրճատում են աւանդական այդ իրաւունքները եւ հասնում մինչեւ համարեա վերացման :

Սալմաստի շրջանի պետական հողերից մի թիւղ անգամ չի տրամադրւում հայ գաղթականներին : Մինչդեռ այդ խոստումի իրագործումը պիտի զարգացնէր գիւղատնտեսութիւնը այդ շրջանում եւ միաժամանակ պիտի զրպւելէին քրդերի յարատեւ խռովութիւններն ու աւաղակային յարձակումները : Նոյն անտարբերութիւնն են ցոյց տալիս սահմանադրական ղեկավարները նաեւ Թաւրիզի համաձայնութեան խոստումների նկատմամբ :

Այսպէս , Ատրպատականի բոլոր շրջանների կոիւնների ամբողջ ընթաց-

(\*) Ծնուել է Թաւրիզում 1883ին : Տեղական «Արամեան» դպրոցն աւարտելուց յետոյ , կեանքի ապարէզ մտնելով , նա հրաժարում է այն պաշտօններից , որոնք իրեն համար պիտի ապահովէին ապագայ «անդորր եւ փայլուն մի կեանք» : Մեթօնով այդ պաշտօնները , նա իրեն ամբողջովին տրամադրում է կուսակցութեան եւ անցնում կովկաս : Մօտ երկու տարի ֆարգլի հանգամանքով շրջագայում է մի շարք շրջաններ եւ խրախուսանքի արժանանում իր կատարած աշխատանքի համար :

Թաւրիզ վերադառնալով , նա ստանձնում է Կ . Կոմիտէի գործավարի աշխատանքները : Ապա մոյճ մարմնի անդամ ընտրուելուց յետոյ , յանձն է առնում ֆարտուղարի եւ ներկայացուցչի պաշտօնը :

Ոգեւորուած պարսկական յեղափոխական շարժումներով , նա հենց սկզբից կողմակից էր կուսակցութեան գործօն մասնակցութեան եւ այդ ուղղութեամբ բուն ֆարգուսիւն է կատարում ընկերների շրջանում :

Ամբողջովին նուիրում Թաւրիզի ապստամբութեան , նա իր ետանդուն գործունէութեամբ մեծ համակրութիւն էր վայելում պարսիկ սահմանադրական բոլոր շրջաններում — ղեկավարութիւնից սկսած մինչեւ շարքային մոջահիդը :

Նա էր , որ կազմակերպութեան կողմից հանդէս էր գալիս հանրային հուափոքներին ու միտինգներին եւ իր կրակոտ ճառերով ընդհանուր խանդավառութիւն ստեղծում :

Ռուսական ներխուժումից յետոյ , խիստ կերպով հետապնդուած , նա ստիպուած է լինում հեռանալ Թաւրիզից եւ իր կուսակցական աշխատանքները շարունակել Եւրոպայում :

Թալաս փաշայի սպանութեան գործով կազմուած Բերլինի դատարանում վերջինս կողմից ընտրուած այն հմուտ քարգման էր , որ այնքան յաջող կերպով կատարեց իր դերը եւ գոհուակութիւն պատճառեց թէ՛ դատարանին եւ թէ՛ մանաւանդ , դատի ելքին անհամբերութեամբ սպասող հայութեան...

քում, հայ մարտիկների բոլոր ծախքերը, — ապրուստի, ձիերի կերի եւ այլ կարիքների հոգացումը — կատարում է կուսակցութեան միջոցներով:

Այդ նպատակով Բիւրոյի կողմից էլ շօշափելի գումարներ են փոխադրում Թաւրիզ:

Բայց այդ վերաբերմունքը երբեք չի արգելում, որ կուսակցութիւնն անվերապահօրէն անցնի իր յանձնառութիւնների կատարման եւ լծուի աշխատանքի:

Եւ ամենից առաջ Ռոստոմը, որ իր հնուանդ սովորութեան համաձայն այստեղ եւս ոգևորուած, իր անսպառ կորովի անխնայ գործադրութեամբ մխրձուում է աշխատանքի մէջ եւ ինքնաբերաբար գտնում շարժումին Ուզին եւ ուղղմական ու այլ գործողութիւնների անուղղակի ղեկավարը:

Մի երկու ընկերների մասնակցութեամբ նա Սաթթար խանի ու իւրաքինների հետ կարգադրում են զինուորական, կամաւորական ուժերի դասաւորութեան, խմբերի կազմի ու փոխ-յարարերութեան, զինուորական խորհրդի կազմութեան, նրան պարտականութիւնների ու իրաւասութեան, ինչպէս եւ ելեւմտական խնդիրները:

Մինչ այդ բոլոր գործերը գտնում էին խառնաշփոթ դրութեան մէջ: Իւրաքանչիւր շրջան — Թաղ — ունէր իր կիսանկախ ղեկավարութիւնը:

Թաղերից իւրաքանչիւրն ունէր իր առանձին գանձարկղը, իր մուտք ու ելքով, առանց հաշիւների հակակշռի:

Չէնքն ու ուղղամթերքն էր, որ գտնում էր Սաթթար խանի իրաւասութեան տակ, նրա կողմից նշանակուած մի հոգու հակոցութեամբ, որ այդ պատճառով կոչում էր Հոսէյն «Փրչանքչի» (փամպուշտների պետ):

Մինչ այդ, խմբապետներից աւելի ազդեցիկները, անուանապէս էին ընդունում Սաթթար խանի ընդհանուր հրամանատարութիւնը, եւ երբեմն, ինքնազուխ գործողութիւններով խանդարում ընդհանուր ճակատի կարգը:

Ռոստոմը, Քեոին ու Կ. Կոմիտէի ներկայացուցիչը Սաթթար խանի ու իր մի երկու խմբապետների հետ կանոնաւորում են զրութիւնը եւ կարգի ու հակոցութեան տակ առնում բոլոր գործերը:

Կենտրոնացնելով ուղղմական եւ այլ գործողութիւններ իրաւասութիւնը զինուորական խորհրդի ձեռքում, նրանք աւելի սերտ յարաբերութիւնների մէջ են դնում Թաղերի խմբապետներին եւ յաջողում են ստեղծել միասնական ուժեղ ճակատ:

Իսկ ելեւմտական խնդիրների կարգադրութիւնն էլ յանձնում են յատուկ մի յանձնախմբի:

Երկու յանձնախմբերը — ուղղմական եւ ելեւմտական — կազմւում են խառն՝ պարսիկ եւ հայ անդամներից (\*):

Այս յանձնախումբը գործի անցնելուն պէ՝ կիրառում է հակակշռի կարգը եւ որոշում է գանձել նաեւ պետական բոլոր եկամուտները, որոնք մինչ այդ անտես էին արուել:

Յանձնախումբը որոշում է նոյնպէս հաւաքել պետութեան հասանելիք հացահատիկի բերքի մասը եւ կտրել իրեն շափ մեծ քանակութեամբ ցորեն ամբարել եւ միաժամանակ կանոնաւորել այլուրի բաշխման գործը:

Չինուորական խորհրդի աշխատանքները մեծ մասամբ ծանրանում էին Ռոստոմի ու Քեոու վրայ:

Նրանք էին, որ նախապէս մշակում էին ուղղմական ծրագիրներն եւ Սաթթար խանի հետ խորհրդակցելով եւ նրա համաձայնութեամբ գործադրութեան դնում միացեալ ուժերով: Կամ սեղի վրայ, Սաթթար խանի հետ խորհրդակցելով, մշակում էին իրենց ուղղմական ծրագիրն ու անցնում գործողութիւնների:

«... Ուրբաթ օրը վեց հոգի հայ զաշնակցականներից — որ Քեոի Փեղայու ղեկավարութեամբ վերջերս են հասել Կոմիտասից — Սաթթարի ղերքերը ղրակելու համար անցնում են այնտեղ:

«Երբ շուտ են գալիս ղերքի յետի մասը, որ յանդիման է Ախմէշիկի ղերքին, նկատում են, որ մեծ թուով պետական ձիւորներ են հաւաքուել այդ ղերպում:

«Չինուորները նրանց տեսնելով, մօտ հինգ հարիւր հոգի, քառասմբակ սլանում են նրանց վրայ:

«Քաջարի Փեղայիները, հակառակ իրենց թուի փոքրութեան, իջնում են ձիերից եւ թշնամուն կրակի տակ առնում: Նրանք ուղղմական այնպիսի վարպետութիւն են հանդէս բերում, որ ձիւորները չփոթւում են:

«Մոջահիդները այդ կոտորածի մասին տեղեկութիւն ստանալով, մի քանի կողմից հասնում են եւ սկսում հրացանաձգութիւն թշնամու դէմ, որ փախչելու մէջ է գտնում իր փրկութիւնը: Նրա մի մասը խոյս է տալիս մինչեւ Սարգարուզ (պետական բանակի կենտրոնը): Թշնամին ունենում է մի քանի սպանուածներ, իսկ հայ Փեղայիներից մէկը թեթեւ վերաւորում է:

«Այս պարտութեան պատճառով իր արժանապատուութեան վերաւորանք զգալով, Սամազ խանը(\*) յաջորդ օրը՝ Շարաթ, իր ամբողջ ուժերը գործի դնելով, կէսօրուայ մօտ Ախմէշիկից յարձակման է անցնում:

«Վրայ հասած մոջահիդները ղիմադրում են: Փամբ մէկին կոխն այնքան է մեծանում, որ Սարգարն(\*\*) ինքն էլ ուղղադաշտ է շտապում:

Հայ զաշնակցական Փեղայիներն ու սոցիալ ղեմոկրատ վրացիները ամէնքն էլ նրա հետ են լինում:

Առաջին անգամն էր, որ կոխը տեղի էր ունենում ուղղմական կարգով: Բոլոր խմբերը թէեւ գտնուում էին Սարգարի հրամանատարութեան տակ, բայց մեծ կամ փոքր խմբապետներից իւրաքանչիւրը իր վայրում առանձին գործ էր կատարում:

(Ընդգծումը մեզնից):

(\*) Ա. Քաթարեան այս մասին յիշում է իր «Պատմութեան» ա. հատորի 710րդ էջում:

(\*) Պետական հեծեալների հրամանատարը: Տիրազուով Շուշա-էդ-Գովիէ:  
(\*\*) Խոսքը Սաթթար խանի մասին է:

«Հեծեալ կամաւորներն էլ ձիերից իջնելով, անցնում են շարքերը :  
«Երեք ժամուայ խիստ դժուարութեամբ երկու կողմից էլ ղիմադրում են ,  
բայց երեկոյեան թշնամին թուլանում է :

«Կամաւորները միահամուռ գրոհով դուրս են մղում թշնամուն իր  
տասեմէկ ղիւրքերից եւ փախուստի մատնում :

«Զխաւորները ունենում են սպանուածներ եւ վիրաւորներ :

«Կամաւորներից ոչ մի սպանուած :

«...Այս կոիւններում (Ալտար, Հոքմաւար, Խարիր եւայլն) հայ եւ վրա-  
ցի Ֆեղայիները եւ որոշ մոջազիդներ մեծ անձնուիրութիւն ցոյց տուին»(\*):

Իր ներքին անցուսպ մղումով, Ռոստոմը Թաւրիզում ընդհանրապէս  
ներկայ էր լինում կոիւններին: Նա համարեա միշտ էլ միանում էր մարտա-  
կան խմբին, անցնում էր ընդհարումների գծերին շատ մօտ եւ անկասկած  
կուսող մարտիկներից գուցէ աւելի մեծ շափով ապրում էր կոիւնների ելե-  
ւէջները եւ սրտի տրոփումները :

Հակառակ ընկերների խիստ զիմադրութեան եւ արգիլելու փորձին,  
զրանից բացի, նա համարեա միշտ էլ, անձամբ էր կատարում (մէկ կամ եր-  
կու տղաների հետ) պայթուցիկների զետեղումները: Այն էլ թշնամու գծին  
շատ մօտ: Նա միաժամանակ ցանկանում էր մօտկից հսկել ռումբերի արձա-  
կումների վրայ: Իր այս ընթացքով անձնուիրութեան բարձր օրինակ էր  
հանդիսանում շրջապատին, որ պաշտամունքով ենթարկւում էր նրա խօսքին,  
հրահանգին, բայց մանաւանդ նրա զաղափարական հմայքին:

Ինչպէս վերելում յիշուեց, Ռոստոմի նախաձեռնութեան արդիւնք էր  
պայթուցիկների արհեստանոցը, որ հաստատուած էր հայկական թաղի մի  
նեղ փողոցում, փոքրիկ մի տան մէջ, Գէորգ Կիրակոսեանի (Բուլղարացի  
տիտղոսով) անմիջական հսկողութեան տակ, կուսակցական մի խումբ երի-  
տասարդներ՝ ռումբեր, պայթուցիկներ եւ հրթիռներ էին պատրաստում:

Ռոստոմի կատարեալ վստահութիւնը վայելող Գէորգը սակայն, երկար  
չի մնում իր գործի վրայ: Նա զոհ է գնում իր մի անզուշուութեան եւ որք  
թողնում իր հսկողութեան տակ աշխատող մօտ տասը երիտասարդներին: Մո-  
ջազիդների մէջ առաջացած մի անախորժ դէպքի պատճառով յուզուած վի-  
ճակով արհեստանոց վերադառնալով, Գէորգն անզիտակցաբար մի քիչ աւե-  
լի ուժեղ է սեղմում ձեռքում լցուած ռումբը, որ պայթում է եւ ուղղակի  
կտոր-կտոր անում, շիտակ, աղնիւ եւ ուրախ բնաւորութեամբ, ամէնքին սի-  
րելի դարձած Գէորգին (1910 թ. Մարտ 25):

Պայթումը կատարւում է ուղղահայեաց, որով փրկւում են նոյն սեն-  
եակում աշխատող երիտասարդները: Առաջանում է թեթեւ հրդեհ, որ ան-  
միջապէս հանգցնում են պայթիւնին ներկայ եղող երկու հոգի եւ ազատում  
պայթուցիկների պահեստը:

(\*) Ա. Քասրաւի «Թարիխը Մաշրութիաք Իրան» (Պատմութիւն Իրանի Սահմանադրու-  
թեան), հատոր ա. էջ 838, 862 եւ 871: (Վերոյիշեալ հատուածը հեղինակը մէջ է բերել տե-  
ղական «Անցուման» եւ «Մուսաւաք» թերթերի հազորագրութիւններից):

Իրենց սիրելի Գէորգին թաղելուց յետոյ, երիտասարդները, հենց յա-  
ջորդ օրուանից, անցնում են իրենց աշխատանքին, այս անգամ Ռոստոմի ան-  
միջական հովանու տակ:

Յիշենք, որ այդ արհեստանոցի պայթուցիկներն իրենց զանազան ձեւե-  
րով սարսափ էին տարածում թշնամու վրայ:

Բայց այսքանով չէր սահմանափակւում Ռոստոմի գործունէութիւնը  
Թաւրիզի ապստամբութեան ժամանակ: Իրր աննկուն պահակ, նա մի բոլոր  
իսկ հանդիստ մնալ չզիտէր: Նա ամէն տեղ էր, ամէն գործի: Ամէն աշխա-  
տանք ծրագրող, հսկող եւ միաժամանակ գործադրող: Նա Սաթթար խանի  
մօտ էր անցնում գրոհների ծրագիրը միասնաբար մշակելու համար: ապա  
ներկայ էր լինում նաեւ նրանց գործադրման ժամանակ:

Արդոյ Հոսէյն Նաւային Ռոստոմի Թաւրիզում ունեցած գործունէու-  
թեան մասին հետեւեալ յիշատակութիւնն է անում(\*).

«...Ընթացողները գիտեն, թէ Թաւրիզի կոիւններում հայերը ինչ մեծ  
մասնակցութիւն ունեցան եւ ինչպիսի անձնագրոհութիւններ կատարեցին: Այդ  
ժամանակ զբեթ էր ընդհանրապէս հայերը «Դաշնակցութիւն» կուսակցութեան էին պատ-  
կանում եւ այդ կազմակերպութիւնը, որ ամբողջ աշխարհի հայաշատ կենտ-  
րոններում ոյժ էր հեղինակութիւն ունէր, առանց որեւէ ակնկալիքի եւ միայն  
ազատութեան գաղափարի համար (ընդգծումը մեղանից) նետուեց պայքարի  
մէջ եւ բաղձաթիւ կոիւններ մղեց:

Ռոստոմը, որ նրանց զեկափարն էր եւ եկել էր Թաւրիզ, կոիւններին եւ  
հայերի տարած աշխատանքներին մօտից վերահասու լինելու համար, Բաղրը  
խանի հետ եւս մի տեսակցութիւն է ունենում: Բաղրը խանը նրան ճաշի է  
հրաւիրում:

Երբ ինքը՝ Բաղրը խանը իր համհարգներով տեղաւորւում են սփռոցի  
չուրջը, իր ծառային կարգադրում է, որ սենեակի անկիւնում, Ռոստոմի եւ  
նրա գործակից եւ թարգման Վահան Զաքարեանի համար առանձին մի սրժ-  
ոց փակ եւ յետոյ, որպէս ներողութիւն, գառնալով Վահան Զաքարեանին,  
ասում է.

— Աչնա՛ (Ծանօթ.— Թաւրիզեցիները այդպէս էին կոչում հայերին),  
կը ներէք, ի հարկէ, բայց մեր կրօնը այդպէս է պատուիրում:

Հետագայում Վահան Զաքարեանը միշտ ասում էր, որ Բաղրը խանի  
այդ արարքը մեզ այնքան էլ անհանդստութիւն չպատճառեց, բայց նրա նե-  
րողութիւն խնդրելու այդ ձեւի համար, — որ Թաւրիզի յեղափոխութեան ճա-  
նապարհին այնքան մեծ գոհողութիւններ էին անում, չափազանց ծանր  
էր»(\*\*):

Ռոստոմը մարտիկների հանրակացարանումն էր — խորհրդակցում էր  
Քեռու հետ, ռազմական ծրագիրներ էին մշակում, միաժամանակ հետաքըր-

(\*) Արդոյ-Հոսէյնը Նաւայի, «Օմիդ Իրան», թիւ 523, էջ 5:  
(\*\*) Բնագիրը վերաբնագրուած է նոյնութեամբ: Լեզուական անհարթութեան մը ա-  
ւելի, տպագրական շարուածքին մէջ մէկ կամ երկու տողի «փախուստ»ի մը արդիւնք կը  
թուի ըլլալ: Հ. Տ.

քըրու մ էր մարտիկները կենցաղով ու վիճակով եւ նրանց կարիքներն ու պահանջները լրացնելու ցանկությունները :

Նա ազգային իշխանությունների կազմակերպչի հետ էր, հայ համայնքին վերաբերող խնդիրների մասին խորհրդակցելու համար :

Վերջապէս, Ռոստոմը ժողովներումն էր, բայց հաղուազիտ անգամ : Ընկերական այն հասարակումներում, որոնք թնդանութիւնների ու հրացանածղութեան որոտումների սյուրաներում, տեղի էին ունենում «հարիւրի վրայ»...

Ռոստոմն ամէն տեղ էր, թէ՛ իր ներկայութեամբ եւ թէ՛ մանաւանդ իր բացակայութեամբ...

«ԵՓՐԵՄ» (էջ 125-145), Թեհրան 1964

## Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ, 1908 -- 1909

Հ. Յ. Դաշնակցութիւնը չէր կարող անտարբեր մնալ դէպի պարսկական շարժումը, ուստի եւ կուսակցական շարքերում սկսում են քննել հարցը. հրապարակ են դալիս երկու տեսակէտներ. ըստ ոմանց այդ շարժումների մէջ մեր մասնակցութիւնը պիտի սպասէր մեր ուժերը, որոնք այնքան պէտք էին թուրքահայ շարժման համար. միւսները կողմնակից էին մասնակցութեան. Ռոստոմը յատկապէս կողմնակից էր մասնակցութեան, գտնելով որ թուրքիայի հարեւան պետութիւնները սահմանադրական կարգեր ունենալով՝ պիտի ազդէին նաեւ թուրքիայի ուժի վրայ :

1906 թուի աշնանը Վրէժի Կ. Կոմիտէն Շրջանային ժողով է գումարում թուրքիում. շրջանների պատգամաւորները իրենց հետ պիտի բերէին իրենց շրջանի ընկերների կարծիքը՝ պարսկական շարժումների առթիւ : Խաչտից (Գիւլանի շրջան) գալիս է Եփրեմը, իրեն հետ բերելով իրենց շրջանի խորհրդակցական ժողովի որոշումը, ըստ որի Գիւլանի ընկերների մեծամասնութիւնը կողմնակից էր շարժման մասնակցելու (\*) :

Վրէժի Շրջանային ժողովը հարցը քննութեան առնելով, իր որոշումը ուղարկում է Հ. Յ. Դաշնակցութեան Հրդ Ընդհանուր ժողովին, Վահան Զաքարեանին ընտրելով իրրեւ պատգամաւոր :

Ընդհանուր ժողովը քննութեան առնելով հարցը, հասնում է հետեւեալ որոշում-բանաձևի. —

«Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյթ՝ թէ՛ Պարսկաստանի եւ թէ՛ Արեւելի համար, եւ գտնելով նրա տարածուելու ու լայնանալը ցանկալի թէ՛ համամարդկային եւ թէ՛ հայկական տեսակէտից. —

Ընդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին ու անհատներին, բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական ռամկավարական-աշխատանքային ոգին, որը բխում է Դաշնակցութեան Ծրագրից (\*\*):

Ընդհանուր ժողովի այս որոշումից յետոյ տատանման մէջ եղող ընկերներն եւս, իրրեւ կուսակցական կարգապահութիւն, որոշում են ակտիւ

(\*) Վկայութիւն Խ. Մ. Եանի :

(\*\*) «Գրոշակ», 1907 թ. թիւ 5 :

մասնակցութիւն բերել պարսկական շարժումներին :

Թաւրիզում արդէն սկսուել էին կոիւնները յեղափոխականների եւ միապետական զօրքերի միջեւ . ժամանակի ժողովրդական հերոսներն էին Սաթթար եւ Բաղրը խաները : Սակայն տեղական ուժերը բաւական չէին դէմ դրնելու համար պետական ջիշ թէ շատ կազմակերպուած զօրքին (որը սպառազինուած էր) եւ միապետական-հակայեղափոխական խաների ձիաուոր խմբերին , որոնք սողորուած էին թաւանի տենչով :

Թաւրիզի պարսիկ յեղափոխականները դիմում են Հ . Յ . Դաշնակցութեան , մարտական ուժեր խնդրելով , դէմ գնելու համար անընդհատ յարձակումներ գործող թշնամուն , որը հաստատուած Թաւրիզի մի քանի թաղերում ( յատկապէս Դաւաշի թաղը , որ հակայեղափոխութեան միջնարկն էր ) ուժակոծում էր քաղաքի յեղափոխական թաղերը եւ այնտեղ հաստատուած դիրքերը , երբեմն գրոհի անցնելով : Սկսուած էր դաշնակցական մարտիկների մուտքը Ատրպատական :

Քեոու խումբը մուտք է դործում Թաւրիզ : Քիչ յետոյ գալիս է նաեւ թէքիրդազցի Գէորգը , որ ուսմբ պատրաստող էր Ռոստոմի ցուցմունքներով եւ ղեկավարութեամբ : Այդ գործում Ռոստոմին օգնում է նաեւ Կարապետ Պրոնեան , որը Լիլաւայի « Հայկազեան - Թամարեան » դպրոցի տեսուչն էր : Խմբի վրայ հետագայում աւելանում են նաեւ Մնջոն եւ Արշակ Սիւնեցին :

Կոիւնները տաքանում են . ամէն անգամ , երբ պարսիկ յեղափոխականները մեծ յարձակումներ են կրում եւ դիրքերը վտանգուած են , լուր են տալիս հայ մարտիկներին , եւ Քեոին , իր խումբը վերցրած , օդնութեան է շտապում , սկսում են գործել հայ մարտիկների մոտիկներն ու մատուցելները եւ թշնամին խուճապահար՝ կորուստներ տալով փախչում է : Այսպէս ուժեղ բախումներ են տեղի ունենում Լալայում , Սարի Դաղում , Հոքմավարում , Ալվարում եւ այլուր , որոնք Թաւրիզի արուարձաններն են :

1908ի Հոկտեմբերին Ռոստոմն արդէն Թաւրիզ էր . ուսմբեր , ոակետներ եւ ականներ է պատրաստում , իրեն օգնական ունենալով թէքիրդազցի Գէորգին : Մեծ ազդեցութիւն են ունենում Ռոստոմի նետած ոակետները , մարտիկների գործածած ուսմբերը եւ թշնամու անցման ճամբին թաղուած ականները , որոնք պայթում են եւ զոհեր խլում : Թշնամին խուճապի եւ սարսափի է մատնում , բարձրանում է յեղափոխական մասսաների հոգեկանը : Այսպէս , Ռոստոմը ականներ է թաղում ( Ջումշուդի հետ ) Սարի Դաղում , միապետական էյնդ Դովլէի բանակի դիրքերի տակ : Մի այլ ական Մարտիրոս Չարուխչեանն ու Ջումշուդը տանում թաղում են Լալայի ճակատում : Այս ականները պայթելով , մեծ զոհեր են խլում յարձակուող թշնամու շարքերից (\*) :

Յեղափոխական Թաւրիզն ապրում էր արտակարգ եռուզեռ , չնայած հակայեղափոխական զօրքերով շրջապատուած լինելուն . տեղի էին ունենում միտինգներ , արտասանում էին կրակոտ ու ոգեւորիչ ճառեր՝ պարսիկ , հայ

(\*) Տե՛ս Մարտին (Ջումշուդ) Տէր Գալստեանի յուշերը (ամսիպ) :

եւ վրացի յեղափոխականների կողմից : Թաւրիզահայ երիտասարդութիւնը խանդավառութեան ու ոգեւորութեան արտակարգ օրեր էր ապրում , մասնակցում կոիւններին , ուսմբերի պատրաստութեան , դէնքերի փոխադրութեան , նշանառութեան եւ այլն : Այդ կոիւններից մէկում է ( Լալայի ) , որ զոհ է դրնում Թաւրիզցի երիտասարդ Սարգիս Տէր Մարտիրոսեանը , իր անուանակոչութեան տօնի օրը : Ընկնում են , հերոսական մահով , նաեւ Քեոու խմբից մի քանի խիզախ մարտիկներ : Յեղափոխականին վայել թաղումներ են տեղի ունենում նուազախմբերով եւ յեղափոխական երգերով , արտասանում են կրակոտ դամբանականներ :

Ռոստոմն ամէն տեղ է , դիրքից-դիրք , ճակատից-ճակատ , դիչեր թէ ցերեկ : Արտակարգ եղբայրական համերաշխութիւն է տիրում այսպիսի յեղափոխականների միջեւ՝ հայերի , պարսիկների , վրացիների եւ կովկասցի թուրքերի : Նրանց մէջ է նաեւ Մոսկուայից եկած մի ուսու յեղափոխական՝ սոցիալ-դեմոկրատ Ալեքսէիւր . նաեւ անգլիական մի թերթի անգլիացի թղթակից , որ ատրճանակը կողքին , այցելում է բոլոր առաջաւոր դիրքերը եւ թղթակցութիւններ ուղարկում (\*) : Վերջը այս թղթակիցը սպանւում է կոուէի միջոցին :

Քաղաքը պաշարուած է , կտրուած են հազարակցութեան ճամբաները , քաղաքում պարէնի սուր կարիք է զգացւում , սովն ու քաղցը տիրել են յատկապէս պարսկական զանգուածներին , բայց « յեղափոխական Թաւրիզի » հոգը չէ , նա տոկում է , տանելով բոլոր զրկանքները , նա ապրում է յեղափոխական ոգու վերելքը :

\*\*\*

1909 թուի Ապրիլ ամսին ոուս ցարական բանակը , գեներալ Մնարսկու հրամանատարութեամբ , մուտք գործեց Ատրպատական եւ եկաւ Թաւրիզի Ալջի գետի կամրջի մօտ ճամբար հաստատեց : Ռուսների դալով՝ կոիւնները դադարեցին : Նոյն ժամանակներում Եփրեմը գրաւեց Թեհրանը , սահմանադրութիւն հռչակեց , Մահմադ Ալի Շահը փախաւ :

Ռոստոմը եւ զինուորական խորհուրդը սրուչեցին , որ Քեոու խումբը Թաւրիզից հեռանայ : Վրէժի Կ . Կոմիտէի ներկայացուցիչ Վահան Չաքարեանը բանակեց Սաթթար խանի հետ եւ պայմանաւորուեցին , որ Սաթթար խանը քանդել տայ քաղաքի հարաւակողմի այգիների պատերը , ճամբայ բանայ , որպէսզի Քեոու խումբը աննկատ դուրս գայ քաղաքից եւ Ալջի չայի կամուրջից բաւական հեռու գետն անցնի եւ հեռանայ :

Վահան Չաքարեանը բանակեց նաեւ գեներալ Մնարսկու հետ եւ պայմանաւորուեց , որ խումբը թողնի քաղաքն ու հեռանայ : Ռուսները կարծում էին , որ խումբը պիտի անցնի Ալջի գետի կամրջով (\*) : Բայց կուսակցական-

(\*) Տե՛ս Մարտին (Ջումշուդ) Տէր Գալստեանի յուշերը (ամսիպ) :

զինուորական խորհուրդը, առ ի գոյություն, իր հասկացած ճամբան ընտրեց :

1909 թուի Մայիս 1ի օրը, զիշերուայ ժամը 12ին, Քեռու խումբը եւ Ռոստոմը կազմ ու պատրաստ խմբուեցին Քուրդիի հայոց Լիւրա թաղի զայրոցի մօտ հրապարակում եւ ճամբայ բնկան : Խումբն անցաւ այգիներէ քանդուած պատերի արանքով . լուսարացի մօտ անցաւ Աջի գետը, կամուրջը թողնելով շատ աջ . իր առաջին կայանը եղաւ Այիշահ գիւղը . ապա խումբը զիշերեց Քասու : Յաջորդ օրը շարունակելով ճամբան Այմա-Սարայի վրայով, Երեկոյեան գէմ հասաւ Ղալասար, ուր ընդունուեց Սամսոնի կողմից(\*) :

Առաջինք, որ պարսկական յեզափոխութեան շրջանին, Խոյի, Սարմասաի եւ Ռարմայի շրջաններում կուսում էր հակայեղափոխականներէ զէմ խրմպապետ Սմբատը իր 25 հոգիներ խմբով : Նրա խմբից սպանուել էին 5 հոգի (Ջուլումաթ, Յարութիւն, Մամիկոն եւ Երկու ուրիշներ) : Սմբատը եւս իր խմբով արդէն եկել էր Ղալասար :

Սարմասատում կար Սամսոնի մարտական խումբը՝ բազմապիսի տեղացի 25 մարտիկներէից . նրանք այլ շրջանը զերծ էին պահում յարձակումներէից եւ հակայեղափոխականներէի ազդեցութիւնից :

Սարմասատում Ռոստոմը լուր է առնում, որ Շարաֆ բէգը (Խանասորի) հիւր է գալիս մեզ . նա պիտի գար Խոսրովա գիւղը : Ռոստոմը, Սամսոնը, Քեռին, Սմբատը, Մշոն եւ Սարհատը իրենց ձիաւորներով, մեծ խմբով մեկնում են Խոսրովա : Շարաֆ բէգն արդէն այնպէս էր մի խումբ զինուած զրդերով : Հիւրասիրութիւն է տեղի ունենում եւ երկար զրոյց : Շարաֆ բէգի նպատակն էր՝ բարեկամական կապեր ստեղծել Դաշնակցութեան հետ, մոռանալ անցեալը : Այդտեղ է, որ զրդերը պատմում են Խանասորի կռուի (1897) մանրամասնութիւնները . նրանց պատմելով, Կարոն (Ստեփան Ջօրեան, Ռոստոմի եղբայրը), որ պաշարուել էր զրդերի կողմից, մենակ կրուել էր մինչեւ զիշեր . առաւօտեան զրդերը տեսել էին, որ Կարոն արդէն մեռել է(\*\*) :

Երեկոյեան Շարաֆ բէգը մեկնում է Խանասոր, իսկ մերոնք վերադառնում են Ղալասար :

Մի քանի օր յետոյ, զիշերը, Ռոստոմը նամակ է ստանում Քեռահաչահարից, Հաջի Փէշնամաղից, որով վերջինս խնդրում էր անմիջապէս օգնութեան հասնել իրեն, որովհետեւ իրենց եւ թուրք կոնսուլատի միջեւ կռիւ էր ծագել : Թուրք հիւպատոսի գրութեամբ՝ թուրք զօրքը պիտի մանի Քեռահաչահար եւ քարուքանդ անի :

Դեռ լոյսը չբացուած՝ Ռոստոմը, Սամսոնը, Քեռին, իրենց հետ վերադարձնելով Մարտիրոսին, Խոսրովին եւ Ջումշուգին, մեկնում են Քեռահաչահար : Տաճկական մի վաշտ, արեւմուտքից գալով, կտրում էր Դիլմանի եւ Քեռահաչահարի միջեւ ընկած ճամբան, երբ վաշտապետը նկատում է Փեղալիների խմբին, զինուորական պատուի է կենում :

(\*) Տես Մարտին (Ջումշուգ) Տէր Գալստեանի յուշերը (անտիպ) :  
(\*\*) Վկայութիւն Մ. Արքահամեանի :

Քեռահաչահարում տաճկական հիւպատոսարանի զինուորները կուսում էին փողոցներում, Ռոստոմն իր խմբով անցնում է դնում Հաջի Փէշնամաղի տունը : Վերջինս ուզում է հիւրասիրել, բայց Ռոստոմն անմիջապէս, չզիջելով ընկերների թախանձանքին, մեն-մենակ գնում է տաճիկ հիւպատոսի մօտ : Ստանալով Ռոստոմի այցեւածքը, թուրք հիւպատոսը անմիջապէս եւ սիրալիք ընդունում է Ռոստոմին, որ յայտնում է, թէ ինքը Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչն է եւ խնդրում էր պաղարեցնել կրակը . թուրք հիւպատոսը պատասխանում է՝ «Այս ստնձգութիւնների համար ես Քեռահաչահարը պիտի պատժէի, քարը քարի վրայ չպիտի թողնէի, բայց քանի որ ինձ մօտ եկողը իմ կառավարութեան զաշնակցի բարձր մարմնի անդամն է, ես պատրաստ եմ զիջել», եւ անմիջապէս կարգադրում է կրակը զաղարեցնել, տաճիկ զօրքը հաւաքում է հիւպատոսարանում(\*) :

Ռոստոմի այս ազդեցիկ քայլը խիստ ուրախացնում է Հաջի Փէշնամաղին, որը խոստանում է երախտահատոյց լինել :

Ռոստոմն ու իր խումբը վերադառնում են Ղալասար : Մի քանի օրից յետոյ կուսակցութիւնը կարգադրում է բոլոր Փեղալիներին թողնել Պարակաստանը, նրանց մի մասը անցնում է Թուրքահայաստան, միւս մասը զէպի Կովկաս, մի քանիսն էլ մնում են Սարմասատում : Այսպիսով փակուած է պարսկական յեզափոխութեան առաջին շրջանը :

«Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ 1890-1918»  
Թեհրան, 1950 (էջ 55-77, հատուածներ)

(\*) Վկայութիւն Մ. Արքահամեանի :

ՅՈՒՇԵՐ ՌՈՍՏՈՄԷՆ

1909 թուի Օգոստոս ամսի վերջերուն, Տրապիզոնի ազգային վարժարանի ընթացաւարանը քանի մը հոգի նոյն դպրոցին ուսուցիչ Բարունակ Տէր Յարութիւնեանի հետ մեկնեցանք Կարին՝ Սանասարեան վարժարանը, սովորելու համար: Քոփ սարի լանջերուն վրայ հանդիպեցանք Եղիշէ Թոփչեանին, որ Կարինէն կու գար Տրապիզոն, Հ.Յ.Դ. Վառնայի Ընդհ. Ժողովին մասնակցելու:

Ձինքը չէինք տեսած, բայց անունը լսած էինք: Մեր ընկերներէն Մեսրոպ Կակոսեանը, որ արդէն Սանասարեանի աշակերտ էր, անձնապէս ծանօթ էր Ե. Թոփչեանին եւ հիացած էր անով:

Ծանօթանալէ յետոյ, Ե. Թոփչեանը քանի մը բոպէ մեզ հետ խօսեցաւ: Եւ քանի մը բոպէի մտերմիկ ու սիրալիր զրոյցը թովիչ տպաւորութիւն թողոյց մեր վրայ: Դիմագծի համաչափութիւնը, լայն ճակատը, աչքերը ազնուական արտայայտութեամբ, պատկառազու էին:

Քանի մը ամիս վերջը Ե. Թոփչեանի դազազը տեսայ Կարնոյ եկեղեցիին մէջ: Ահագին շէնքը բերնէ բերան լեցուն էր եւ, առանց բացատրութեան, բոլորը կ'արտասուէին: Հայուկները խոփու դէմքով պահակ կանգնել էին:

Խորհրդաւոր թախտոտ լուծեան մէջ երեւաց կարծահասակ, փոքրիկ մօրուքով, ճաղատ դրոշմով մէկը, որ դազազի առաջ կանգնելով՝ սկսեց իր դամբանականը: Կը յիշեմ առաջին քանի մը խօսքերը.

«Այսօր Եղիշէն մեր մէջ չէ: Մեզմէ կը բաժնուի առյաւէտ: Դաւաճանի գնդակին դո՛հն է ան: Անփոխարինելի կորուստ մըն է մեզի համար: Սակայն, Եղիշէն բացառութիւն մը չէր: Ձայն ծնող ազգը կը ծնի շատ Եղիշէներ»:

Եւ տակէ յետոյ, կարկուտի նման իրարու ետեւէ խօսքեր թափուեցան: Բազմութիւնը հեծկլտաց...

Խօսողը Ա. Վառնեանն էր, որ 5-6 տարի յետոյ նահատակուեցաւ Մեծ Եղեռնի առաջին օրերուն:

Տխուր էր Կարնեցին եւ զայրոյթով լեցուած: Քանի մը ամիս յետոյ, դաւաճանը կրեց իր պատիժը: Սակայն թափուր էր Ե. Թոփչեանի տեղը: «Յառաջ» չունէր այլեւս իր կարող խմբազիրը: Ազգային վարժարանները զրկուած էին իրենց սիրելի տեսչէն:

Անցան օրեր ու ամիսներ: Կեանքը արագընթաց կը սլանար: Եւ օր մըն ալ Կարինի մէջ երեւաց ուսուցիչներուն ուսուցիչը, գործի ու յեղափոխութեան առաքեալ Ստեփան Չօրեան՝ Ռոստոմը:

Կարին եկաւ, որպէս ազգային վարժարաններու տեսուչ: Գիտէինք, որ Դաշնակցութեան հիմնադիրներէն էր: Բայց անոր մեծութեան մասին դազա-

փար չունէինք: Եւ այն օրերուն զայն ըմբռնելու կարողութիւնն ալ չունէինք: Մենք տակաւին կը սքանչանայինք միայն հայուկներուն վրայ, որոնց ամէն մէկը քայլին կը հետեւէինք: Մենք կը տեսնէինք Տուրպախը, Ձեմլեակը, Կայծակ Առաքելը, Սեպուհը եւ Նիկոլ Դումանը:

Նիկոլը միշտ միմակ կը տեսնէինք: Ձէր ծիծաղեր, չէր խօսեր: Նիհար ու երկարահասակ մարդ մըն էր: Երբ անոր կը հանդիպէինք, անպայման կանգ կ'առնէինք, որպէսզի լաւ դիտենք զինքը: Շեշտակի ու տպաւորիչ հայեացքով՝ լուռ, կ'անցնէր, որսի հրացանը ուսին: Անոր սիրած գործն էր Եփրատի շամփուտներում սագեր որսալը:

Մեր առաջին տպաւորութիւնը Ռոստոմի մեծութեան մասին ունեցանք այն ատեն, երբ տեսանք, որ հայուկները զինուորական բարեւի կը կենային, երբ իրենց մօտով կ'անցնէր ան:

Երեք տարի Ռոստոմը մեր սիրած ուսուցիչը եղաւ, սակայն անոր կարեւոր դասախօսութիւնը կամ բանախօսութիւնը չլսեցի: Գերազանցօրէն զործի մարդ էր: Ամէն տեղ էր, սմէնուն հետ: Թէև սակաւախօս էր, բայց ուր ուր ալ լինէր, անմիջապէս կը զգացուէր անոր ներկայութիւնը եւ անոր կարծիքի անհրաժեշտութիւնը:

Անհուն սէր ու պատկառանք ունէր անոր հանդէպ եւ Սանասարեանի աշակերտութիւնը:

Պրոֆ. Խաչատուրեանի տեսչութեան օրով, Ռոստոմը Սանասարեանի մէջ բնական զիտութիւններ կ'աւանդէր: Միշտ կը խօսէր Լամարքի ու Դարվինի մասին: Խոր լուծեան մէջ կը հետեւէինք անոր մտքերուն: Որովհետեւ կը խօսէր կարճ, ամփոփ եւ բովանդակալից. պէտք է ուշադիր հետեւէինք:

Ամենէն շատ սիրած իր նիւթը Դարվինի էվոլյուցիոն տեսութիւնն էր: Երբ կը խօսէր բնական ընտրութեան, զոյութեան կուրի մասին, ուր ուժեղները կ'ոչնչացնեն թոյլերը, կը մերժէր ընդունել այդ տեսութեան ճշմարտութիւնը բնութեան, առաւել եւս մարդկային հասարակութեան մէջ: Ան կ'ըսէր, թէ մարդկային հասարակութեան մէջ կայ զիտակից անհատը եւ իրերօգնութեան կամ փոխադարձ օգնութեան բնական օրէնքը: Կենդանիներու մէջ ալ կը գործէ այդ օրէնքը, բայց բնագոյրաբար, իսկ մարդոց մէջ՝ գիտակցաբար:

Գիտական հարուստ ու բազմակողմանի հմտութիւն ունէր Ռոստոմը: Ասիկա բաւական էր մեզի համար, որպէսզի պաշտէինք զինքը:

Շատ պարզ ու համեստ էր: Հազորդակից էր մեծին ու փոքրին, մատչելի էր հասարակութեան բոլոր խաւերուն:

Ծեր մամիկ մը կը հարցնէ Ռոստոմին.

— Տղաս, դուն ամուսնացած ես, զաւակներ ունի՞ս:

Ռոստոմը քմծիծաղով պատասխաններ էր.

— Տանը մնալու եւ ընտանեկան հոգսերով զբաղելու ժամանակ չեմ ունեցել:

Դասերէն դուրս մեզ հետ ընկեր էր: Կը խօսէր, կը կատակէր, երբեմն ալ անուշ ծիծաղով կը ձաղկէր մեր թերութիւններն ու երիտասարդական մեղքերը: Անոր ծիծաղին մէջ, կարծես թախծութիւն, վիշտ կար, որ մեզի հա-

մար հրապուրիչ էր: Մենք այդ կը բացատրէինք անոր ծանրարեւոնում լինելով: Աշակերտական ցրտանքներու ժամանակ, մեզ կը վարժեցնէր դիտելու բնութիւնը, գննելու գոյն: Իր դիտողութիւններուն մէջ սրախօսութիւն կար, որմէ միշտ կը զգուշանայինք:

Ռոստոմի բարկութիւնը հազուադէպ էր: Նման պարագային զգոյշ էինք, որովհետեւ գիտէր եւ՛ սպտակել: Անգամ մը ընկերս, աղջկանց վարժարանին մէջ անվայել արտայայտութիւն ունեցած էր: Ռոստոմը երկուքս ալ կանչեց ուսուցչանոց: Ես, իբր ընկերս պաշտպանող, բոլորովին ուրացայ ճշմարտութիւնը: Ռոստոմի զէմքը այլայլուեցաւ:

— Այդ ընկերասիրութիւն չէ, — ըսելով ապտակ մը տուաւ ինձի եւ ուսուցչանոցէն դուրս բրտս, իսկ բուն յանցասրբ ազատուեցաւ:

Այլեւս կ'ամչնայի անոր երեսը նայիլ: Քանի մը օր յետոյ, առիթը զըտաւ զիս խրատելու:

Շատ կը սիրէր երգեցողութիւնը: Երգի գասերուն միշտ կը մասնակցէր, բայց ձայնը չէինք լսեր:

Ռոստոմ երբեք կարեւորութիւն չէր տար իր արտաքինին: Իր գլխարկէն մինչեւ կօշիկները սեւ էին: Փողկապն ալ սեւ էր եւ շատ անգամ ծուռ կապուած: Հազուադէպ թէև արդուկուած չէին, բայց մաքուր էին: Կրքալէր դանդաղ, գլուխը միշտ առաջ թեքած: Դէմքը, որ ծածկուած էր սեւ ու միջակ մեծութեամբ մօրուքով, բնաւ ամէլի տեսած չէր:

1911ի ամառն էր կարծեմ, երբ շրջագայեց Արեւմտեան Հայաստանի բոլոր վայրերը եւ իրեն հետ խումբ մը աշակերտներ բերաւ գպրոց: Անոնց մէջ էին Աղբիւր-Սերորի երկու գաւակները՝ Սամսոնն ու Աղատը, առողջ, կայտառ ու յաղթանդամ պատանիներ: Անոնց մէջ էր եւ Հրայրի տղան, նիհարակազմ, փոքր, ճարպիկ ու վառվռուն պատանի մը՝ կրակաս աչքերով:

Ռոստոմ կը գուրգուրար անոնց վրայ, ինչպէս անոնց հարագատ հայրը պիտի գուրգուրար:

Կը սիրէր կիւլէշը՝ ըմբշամարտը: Իր սիրած փեհչիվանն էր համագիւղացի ընկերս՝ Աւետիս Մաղլումեանը: Զրօսանքներու ժամանակ, կը բռնէր Աւետիսի թեւէն եւ մէյտան կը կանչէր անվախները: Երբեմն, երբ թուրք աշակերտներու կը հանդիպէինք, Ռոստոմի փեհչիվանը մէյտան կու գար:

Ըմբշամարտի ժամանակ, մենք աւելի կը դիտէինք Ռոստոմի հրճուանքն ու ոգեւորութիւնը՝ քան կիւլէշը:

\*\*

1912 թուի ամառը փակուեցաւ Սանասարեան վարժարանը, եւ ամբողջ աշակերտութիւնը որպէս «ըմբոստ» դուրս թափեցաւ:

Դպրոցը նորէն բացուեցաւ Սերաստիոյ մէջ: Պոլսոյ խնամակալութիւնն այս կամակոր քայլը առած էր՝ հակառակ բարերարի կտակին, որուն համաձայն իր դպրոցը պէտք է լինէր մայր երկրի ծոցը, յատկապէս Բարձր Հայքի մէջ: Նորատունկեաններուն պէտք էր, որ Դաշնակցութեան շունչէն հեռու միջավայրի մը մէջ ըլլար դպրոցը:

Սանասարեանի մէջ դաշնակցական ուսուցիչներ միշտ ալ կային: Սակայն, աշակերտութեան մէջ ոչ կուսակցական կազմակերպութիւն գոյութիւն ունէր եւ ոչ ալ այդ ուղղութեամբ որեւէ աշխատանք էր կատարուած:

Վարժարանին գիշերօթիկ հանգամանքը եւ արտաքին կեանքէն բոլորովին կտրուած լինելը հիմնական պատճառներ էին ծայրայեղ հոսանքներու առաջ գալուն: 1911 թուին, Վարժարանին մէջ գոյութիւն ունէր 18 հոգինոց անիշխանական խմբակ մը:

Խումբը ունէր իր վարչութիւնը, որ կը ղեկավարէր գաղանի ժողովները: Ունէր իր սեփական գրադարանը, հարուստ փիլիսոփայական եւ հասարակագիտական գիրքերով:

Մեր ձեռքին տակ էին Բակունինի, Կրայտովիի եւ Փան Գրափի գիրքերը: Տարուած էինք Նիցչէով, որուն բոլոր հեղինակութիւններէն ունէինք Փրանսերէն լեզուով:

Դպրոցական ներքին կեանքին եւ Սանուց Միութեան մէջ՝ այս խմբակը ղեկավար գիրք ունէր:

Զխմացանք, թէ ինչպէ՞ս յայտնի դարձաւ այս գաղտնի խումբին գոյութիւնը, Բայց կը թափ, թէ առիթը Նիցչէի գիրքերն էին, որոնք մեր ձեռքերուն մէջ տեսաւ տեսուչ Ա. Խաչատրեանը եւ, առանց նեղանալու, բտս:

— Այսպիսի գրքերը դուք դեռ եւս չէք կրնար հասկնալ:

Ճիշդ էր նկատողութիւնը, բայց ո՞վ էր ուշադրութիւն դարձնողը:

Օր մըն ալ մեր խմբի մէջ Երեսայ Ս. Վրացեանը, որ անիշխանական անունը փոխեց Երևասարդ Սոցիալիստական Խմբակ անուան: Ան մեզ տրուաւ «Յառաջ»ի գրադարանի գրքերուն ցուցակը իրբեւ ընթերցանութեան նիւթ: Սակայն, մենք այդ գրքերը կարդալու շրջանը անցեր էինք:

Երբ Ս. Վրացեանը Կարինէն հեռացաւ, մեր խմբակը վերանուանեցինք «Անարիտ-Սոցիալիստական Խմբակ»:

Սանասարեանի միջնորդի արդիւնքն էր այս:

Պոլսոյ խնամակալութիւնը 1912 թուի ուսումնական տարուայ վերջերը կարին գրկեց դպրոցի նախկին սաներէն Պալազեան վարդապետը: Երկու ամբողջ ամիս գասերը զազրեցան: Ոչ զասաղուլ էր եւ ոչ ալ որեւէ շարժում կար աշակերտութեան կողմէ: Իսկ Յունիս ամսու վերջերը, բոլոր գիշերօթիկներս զրկուեցանք մեր ծնողներուն մօտ, այլեւս Սանասարեան վարժարանը չվերադառնալու պայմանով:

\*\*

Տրապիզոն քաղաքէն եւ Եոմարայի շրջանէն Կ. Տոգի, վերջիններս գասարանն էինք: Կ'ուղէինք միջնակարգ դպրոցի վկայական ունենալ: Պէտք է դիմէինք Պոլիս:

Օգոստոս ամսուն մեկնեցանք Պոլիս, ուր գանաղան տեղերէ տղաներ էին հաւաքուեր: Սակայն, ուր որ դիմեցինք, պաղ ու անտարբեր վերաբերմունք տեսանք «ըմբոստներ»ու հանդէպ:

Ռ. Զարդարեանի եւ Գ. Խաթակի աջակցութեամբ Կեղրոնական վարժա-

րանը զփոսարութեամբ համաձայնեցաւ ընդունիլ մեզ, պայմանաւ որ քննութեան ենթարկուէինք :

Առաջին քննութեան ատարկան հայոց լեզուն էր : Յաջորդութեամբ արտինք քննութիւնը Լեւոն Շանթին : Երկրորդը՝ մաթեմատիկան էր, որ անյաջող անցաւ : Իսկ Կուրտիկեան էֆէնտին իր թրքապիտութեամբ ջարդուփշուր րրաւ մեզ :

Յուսահատուեցանք : Բոլոր դպրոցներուն դռները դոց էին մեր առջև : Ամէն օր «Ազատամարտ»ի տկուժրին մէջ մեր տարտերու մասին կը խօսէինք : Առաջ ընկերներու հոգին շատ կը հանէինք՝ մեր դանդաւաններով : Բոլորն ալ համբերութեամբ կը լսէին եւ կը խրատէին մեզ, բայց ոչինչ կրնային ընել քննութեան աննպաստ արդիւնքին դէմ :

Ահա օր մըն ալ «Ազատամարտ»ի մէջ երեւաց Ռոստոմը, որ աւետեց մեզ Նոր Սանասարեանի բացումը :

Շատազ մեկնեցանք Տրապիզոն, անկէջ ալ Կարին եւ Սեպտեմբեր մէկին Նոր Սանասարեանի մէջ էինք : Ռոստոմն էր մեր տեսուչը :

Նոր Սանասարեանի շէնքին մէջ արտաքնապէս որեւէ փոփոխութիւն նկատելի չէր : Գոյքի մեծ մասը փոխադրուել էր : Չկար միայն հանրակացարանը : Խնամակալութեան աչքին «անբաղձալի» ուսուցիչները մնացել էին : Բայց անոնք ալ աշակերտութեան սիրելիներն էին : Չգալի էր միայն Ա. Խաչատուրեանի բացակայութիւնը, որ Պոլիս էր տեղափոխուել : Չայն փոխարինեց Ռ. Քաջբերունին, իսկ Ֆիդիքայի ուսուցիչը՝ Տիգրան Ազամալեանը թիֆլիսէն էր եկել : Ան էլաւ մեր սիրելի ուսուցիչը : Հեռաւոր տեղերէ եկած աշակերտները տեղաւորուեցան մասնաւոր տուններու մէջ :

Ռոստոմի շունչին տակ, ուսուցչութիւնը եւ աշակերտութիւնը յաջողութեամբ բոլորեցին 1912-13 ուսումնական տարին : Տարին անցաւ շատ ուրախ եւ շուտ :

Կարնեցիք իրենց ծնողական գուրգուրանքը պահեցին մեզի հանդէպ : Տաներուն անոնց հիւրն էինք :

Բայց ամենէն հարազատը Ռոստոմն էր, որ այժմ մեր հայրիկն էր : Յաճախակի կ'այցելէր մեր բնակարանները, կը նստէր ու կը զրուցէր մեզի հետ, կատակներ կ'ընէր : Իսկ իր բնակարանը մեր հարազատ տունն էր : Իր դուռը միշտ բաց էր մեր առջև :

Ազատ ժամեր չունէր : Հանգստանալու մասին կարծես գաղափար չունէր : Պարզ ու շատ համեստ կ'ապրէր Ազամալեանի հետ միասին : Ննջասենեակին մէջ երկու մահճակալ կար միայն, շատ թեթեւ ծածկոցով : Սենեակը երբեք չէր տաքցուել : Ի՞նչպէս կը դիմանային Կարնոյ ցրտին, մեզ կը զարմացնէր : Միւս սենեակը ե'ւ խոհանոց էր, ե'ւ հիւրասենեակ, ե'ւ աշխատանոց : Հասարակ սեղան մը ու քանի մը հին աթոռներ կային հոն :

Կերակուրը իրենք կը պատրաստէին : Դրսէն ջուրը իրենք կը բերէին : Ազամալեանի հետ հետեւեալ ծիծաղելի դէպքը տեղի էր ունեցել : Տուրտ առաւօտ մը, ջուրի մօտ կը հանդիպի իր դրացիին եւ կը բարեւէ .

— Բարեւ, հարեւան :

Դրացին նեղացած կը պատասխանէ .

— Հայփանը դուն ես :

Ազամալեանը շշկրած տուն կու գայ եւ կը պատմէ Ռոստոմին : Վերջինս բացատրութիւնը լսել յետոյ կը հասկնայ, թէ ինչո՞ւ հարեւանը հայփան էր եղած :

1913ի ամբան Նոր Սանասարեանը տուաւ իր առաջին ընթացաւարտները, իսկ Աերաստիա փոխադրուած Սանասարեանը կ'ապրէր իր կազմաւորման շրջանը :

Ամառուայ արձակուրդներուն, վերջիններս դասարանի աշակերտներուն հետ, Ռոստոմ շրջագայից մայր երկրի խորերը, գնաց մինչեւ Մոյ Ս. Կարապետ վանքը :

Ընկերս՝ Աւետիսը կը պատմէր, որ այդ ուղեւորութեան ամբողջ ընթացքին երբեք հանգիստ չունեցաւ : Հայրարար կը խնամէր աշակերտները եւ գիշերները, մինչեւ որ տղաները չքնէին, ինքը չէր առանձնանար : Ճանապարհին անոնց հետ կը քնէր, անոնց հետ կը ճաշէր :

Ռոստոմը այցելել էր բոլոր սրբատեղերը ու պատմական վայրերը, Ֆետայիներու եւ նահատակներու տները, գերեզմանները : Յուզուած պատմեր էր անոնց մասին : Աշակերտները արցունքներ էին նկատել անոր աչքերուն մէջ :

1914ի Սեպտեմբեր ամսու վերջերը, անսպասելիօրէն հանդիպեցինք Ռոստոմին : Թուրքերը, թէեւ տակաւին պատերազմի չէին մասնակցել, բայց Թուրքիոյ կեանքը կանգ էր առել : Մեր շրջանի հայկական դպրոցները գոց մնացին :

Աւետիսին հետ գիւղէն քաղաք էինք գացել քանի մը կիներու հետ՝ գէնք ու փամփուշտ տեղափոխելու համար : Տրապիզոնի շուկային մէջ յանկարծ հանդիպեցանք Ռոստոմին : Բոպէ մը վարանման մէջ ինկանք : Նոյն հագուստներն էին, բայց գլխուն թրքական ֆէս ունէր եւ պէխերն ու մօրուքը այնպէս էր խուլած, ինչպէս թթու թուրքերը : Կ'աճապարէր, կ'երթար նաւ առնելու :

Շատ չխօսեցանք : Ինքը քանի մը հարցումներ րրաւ, ձեռքերը մեր ուսերուն վրայ դրաւ, թօթուեց եւ արագ քայլերով գնաց դէպի նաւահանգիստ :

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, քիւ 3, 1952

ՄԻ ՔԱՆԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՃՇԴՈՒՄՆԵՐ  
ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ ԳՐԱԾ ՅՕԴՈՒԱԾԻՍ ԱՌԹԻԻ

Ընկ. Յ. Յովակիմեան (Արշակունի) «Հայրենիք»ի մէջ լոյս տեսած իր այս գրութեան լուսապատկերին կցած է ձեռագիր կարգ մը ճշգում-լրացումներ, որոնցմէ կը փայտան հետեւեալ մասերը.

Ընկ. Ռուբէն Դարբինեանը շարք մը փոփոխութիւններ ըրած է, որոնք ըստ իս տեղի ունենալու չէին: Յօդուածիս խորագիրն էր «Աշակերտական յուշեր եւ սպաւորութիւններ»:

Նկարագրել եմ Տուրպախի սրճարանը, իր զրադարան-ընթերցարանը, առանձին սենեակներով, ի հակադրութիւն Ամերիկայի ակումբներուն, որ լոկ խաղալայրեր ու պարասպ փախտի ժամանցներ են: Այդ սրճարանը Փետայինբուրո կեդրոնն էր, ուր երբեմն կը յաճախէինք Սանասարեանցիներս՝ լրագիրներ կարդալու համար: Բոլոր Փետայինները անխտիր, ուր որ կը հանդիպէին Ռոստոմին եւ Նիկոլ Դումանին, զինուորական բարեւի կը կանգնէին:

Այս՝ 20 տարեկան հասակիս Ռոստոմէն սպաւորութիւն էր, բայց ան զիս ուսուցչանոցից զուրս չձգեց, այլ ես զուրս նետուցի ու այլևս նրա աչքին կը խուսափէի երեւալ, ինչ որ ինքը նկատած էր: Օր մը զպրոցի զարպակն ոտքս զուրս գրի թէ չէ՝ Ռոստոմը իրա յատուկ ժպտով երկար մտզերէս բռնելով ասաց. — «Ինչի՞ր ես ինձանից խուսափում» եւ «ուղեղից զարպական կեդրոնը թոյլ է, պէտք է զօրացնես» ըսելով թոյլ տուեց գնալ: Ես սչ թէ նեղացել էի, այլ ամաչում էի նրան հանդիպել: Շատ անգուստ էի եւ շատ բորբոքող: Ռոստոմի այս հաղուսողէս բարկութենէն կը զգուշանային Փետայիններն անգամ, ինչպէս պատմել եմ Տուրպախի դէպքը:

Գրութեանս մէջ չեմ յիշած մի քանի կէտեր, որոնք յատկանշական են մեծահոգի համեստ առաքեալին:

1912ի Մայիս 1ի զաշտահանդէսին հետեւեալ դէպքը պատահեցաւ: Բազմութիւնը կ'առաջնորդէին բոլոր Փետայինները՝ զինուորական քայլերգով: Ռոստոմը ամենից վերջինը՝ իր սովորական քայլուածքով, միշտ զլուխը դէպի առաջ թեքած ու խոհուն կը հետեւէր ամբողջին: Խոհուն մը աշակերտներ եւս հետեւացանք, առանց շարքերը մտնելու: Երբ հասանք զաշտ — սեղանները կանաչ զաշտի վրայ բացուեցան եւ սկսաւ կերուխումը: Շատ չանցած մեր զպրոցի տեսուչ պր. Ա. Խաչատրեանը, որ նոր էր ամուսնացած Եղիշէ Թոփչեանի այրիի հետ, եկաւ զաշտ ու Փետայիններու սեղանին քովէն անցած ժամանակ բարեւեց անոնց: — Սակայն անարդական բառեր չպրտեցին անոր: Փետայու ըմբռնումով՝ Խաչատրեանը իրաւունք չունէր ամուսնանալու իր նըշանաւոր ընկերոջ կնոջ հետ...: Այլայլած դէմքով Խաչատրեանը մտտեցաւ

Ռոստոմին մի բան ասաց ու զաշտէն հեռացաւ: Ռոստոմը զանդաղ քայլերով դէպի Փետայիններու սեղանը դիմեց, ըստ երեւոյթին իրենք կը զգային այդ ու Ռոստոմը զեռ իրենց չհասած՝ Խաչատրեանին վերաւորական խօսքեր ասողները սեղանը ձգել եւ հեռացել էին զաշտից:

Դպրոցական կեանքից յետոյ Ռոստոմին հանդիպել եմ երկու անգամ: Առաջինը 1914ի աշնան, Տրապիզոն քաղաքում, փոսոցի մէջ — որը նկարագրել եմ: Մէկ էլ, վերջին անգամ, Ռոստոմին հանդիպեցի 1917 թուին Երեւանում, Արեւմտահայերի Չրդ համագումարում, ուր Տրապիզոնից պատգամատուր էի ընտրուած: Այս անգամ ազատ պայմանների մէջ ազատ զրուցեցինձ հետ. նոյնիսկ զիս ճաշարան տարաւ: Ինձ պատմել տուաւ 1915-16 թրւերի մեր մի տարուան կեանքը Տրապիզոնի լեռներում եւ խորհուրդ տուեց մանրամասն գրի առնել:

Տրապիզոն վերադարձիս գրի առի եւ յանձնեցի նոյնպէս նոր Սանասարեանի ուսուցիչ Տրիպան Աղամալեանին, Ռոստոմին յանձնելու համար: Աղամալեանը Ռոստոմանի քաղաքների Միւթեան լիազոր ներկայացուցիչն էր, որի մօտ կ'աշխատէի եւ եւ ինձ վիճակուած էր ազատ թուրքերին ձրի հաց բաժանել: Հաւանաբար Աղամալեանի ողբերգական մահով այդ զրութիւնն էլ կտրաւ:

Այնուհետեւ Ռոստոմը հեռաքրքրուեցաւ Տրապիզոնի հայերու ներկայ կեանքով, եւ խորհուրդ տուեց ընտանիքները եւ հաւաքուած երեխաները հեռացնել Տրապիզոնից — համարելով այդ կտրուած եւ վտանգաւոր շրջան: Ինչ որ հետագային իրականացաւ:

Այստեղ կ'արժէ նշել համագումարում եւ անոր փակման հանդէսում տեղի ունեցած դէպքերը:

Համագումարում պատուոյ անդամներ էին Ռոստոմը եւ Անդրանիկը, բեմի վրայ նստած նախագահութեան կողքին:

Ռոստոմը իր սովորութեան համաձայն բնաւ չէր խօսեր եւ կամ ըստ կարգի որոշ թեթաղութիւններ կ'անէր, շատ հակիրճ: Իսկ Անդրանիկը շարունակ կը խօսէր, կը պոռար. մէկի խօսածը որ իրեն ճաշակին չէր համապատասխաներ, կը սպառնար ու աթոռ էլ կը վերցնէր: Զինքը առաջին անգամ կը տեսնէի, հիասթափուեցայ եւ մտալի բաի. — Երանի թէ զինքը չըտեսնայի...: Բայց պատահեցաւ աւելի վատը՝ փակման հանդէսի ժամանակ: Թեմականի սրահը լեցուն էր: Սեղանի գլխին նստած էր Ռոստոմը, նրա ձախ կուշտին Անդրանիկը, իսկ աջ կուշտին Մստր Եարոն. Ռոստոմը վերցրեց բաժակը մի քանի խօսք ըսելու համար. ժամանակի ողու համաձայն առաջին հերթին Վանը յիշեց... մէկէն Անդրանիկը պոսթկաց... Ռոստոմը երեք անգամ կրկնեց, — Անդրանիկ, տեղդ նստիր, — ու ան նստաւ: Սեղանակիցներէն փաշայապաշտ մէկը (անունը չեմ յիշեր) պոռաց Ռոստոմի վրայ. — դուն ո՞վ ես որ փաշան կը լոնցնես —: Ռոստոմը ի հարկէ չպատասխանեց նրան, բայց Արամը, որ ոտքի էր, մէկ էլ տեսնեմ ձեռքը զրպանը խոյացաւ այդ մարդու վրայ. ի հարկէ ընկերները վրայ ինկան եւ թոյլ չտուին: Այդ իրարանցման պահուն, բեմի վարագոյրը մի քիչ բացուեցաւ եւ Տէլի Ղազարը զինուած, վայրկեան մը կանգնած մնաց. նա ուրիշ մի քանի Փետայիններ

րով բեմում կը ճաշէր: Տէլի Ղազարի երեւումով ամէն ինչ խաղաղուեց և սեղանը վերջացաւ հաճելի մթնոլորտում: Արամը ի հարկէ չմասնակցեց սեղանին, ձգեց և հեռացաւ:

Առաջին անգամն էր որ այսպիսի հանդիսաւոր ժողովի և սեղանի կը մասնակցէի, դրա համար էլ այն ատենաւայ տեսածներս և ապաւորութիւններս անմոտանալի են մինչեւ այսօր:

## Ս. ՎՐԱՑԵԱՆ

### Կ Ա Ր Ի Ն Ո Ւ Մ

«Յառաջ»ից զատ իմ ժամանակի մեծ մասը խլում էր կուսակցական աշխատանքը՝ Ռոստոմի անմիջական ղեկավարութեան տակ: Ռոստոմը ոչ միայն կուսակցական, այլեւ ազգային կեանքում կենտրոնական համադրող ու ղեկավարող դէմք էր՝ նոյնքան հեղինակաւոր Առաջնորդարանում ու կուսակցութեան առջեւ, որքան և հասարակական ու կուսակցական շրջաններում: Եւ ոչ մի գործից չէր խուսափում. հաւասար եռանդով արհեստաւոր տղաներից երգչախումբ էր կազմում և ուսուցչական ժողովներ էր գումարում կամ դասախօսութիւններ էր կարգում ընկերներին:

Նոր էի հասել Կարին, երբ Արծնեան դպրոցի սրահում սկսուեցին Ռոստոմի գիշերային դասախօսութիւնները ընկերների համար: Ամէն Շաբաթ երեկոյ Արծնեան սրահը բերնէ բերան լեցւում էր, մեծ մասամբ արհեստաւոր երիտասարդութեամբ, որոնց Ռոստոմը դասախօսում էր Հ. Յ. Դաշնակցութեան ծագման և զարգացման մասին: Սօսելու շնորհքով օժտուած չէր: Սօսում էր հանդարտ, բառերը՝ փնտռելով, պարզ ու հանրամատչելի լեզուով, բայց ունկնդիրները սրով չէին գալիս նրա բերանից:

Գրեթէ շորս-հինգ ամիս նա խօսեց Դաշնակցութեան մասին: Ես համարեա բառացի արձանագրում էի նրա խօսքերը: Իրրեւ ատաղձ, անզնահատելի դանձ էր Դաշնակցութեան պատմութեան համար: Երեք-չորս հարիւր էջնոց հատոր կը լինէր: Ռոստոմից խնդրեցի, որ աչքէ անցընէ ձեռագիրը և սրբագրէ սխալները: Առաւ և մինչեւ իմ հեռանալը Կարինից, ժամանակ չունեցաւ կարդալու: Սոստացաւ վերջը աչքէ անցընել և ուղարկել ինձ, չըստացայ: Վերջը ի՞նչ եղաւ այդ թանկագին ձեռագիրը, չիմացայ: Ռոստոմը մէկին յանձնել էր, բայց չէր յիշում ում:

Եւ զարմանալի էլ չէր: Ռոստոմը մի ժամ հանդիստ չէր մնում Կարինում, միշտ գործի վրայ էր՝ ամէն տեղ, ամէնքի հետ, և ամէն բանի մէջ: Մեծ ու փոքր գործեր գոյութիւն չունէին Ռոստոմի համար: Եւ նրա օրինակին հետեւում էինք և մենք, իր համհարգները կարիւրում՝ Փիլոսը և ես: Կուսակցական ներքին աշխատանքը և արտաքին պայքարը հակառակորդների հետ մեր վրայ էր ծանրացած:

Ձեռ յիշում, ո՞ր ամսին, Կովկասում սոցիալ-դեմոկրատ և թուրքիայում հնչակեան Եսալէմը — Գ. Կողիկեան — եկել էր Կարին, հնչակեան քարոզչութեան համար: Դիմել էր մերոնց, որ իրեն հնարաւորութիւն տրուի հրապարակային դասախօսութիւն կարդալու Արծնեան դպրոցի սրահում: Փիլոսը եկաւ, թէ հնարաւորութիւն տանք: Ես որեւէ առարկութիւն չունէի: Եւ մեր երիտասարդ ընկերները անցան գործի: Ռոստոմը զգուշացրեց. տեսէք, խայտառակութիւն չհանէք:

Պէտք է ասել, որ Եսայի մը բուական կարգացած, խօսելու որոշ ձիրք ունեցող, պարկեշտ գործիչներից էր: Կովկասում անդամ էր Գուրիթ Անանու- նի եւ Բախչի Իշխանեանի սոցիալ-դեմոկրատական հաստատմին՝ ազգային հա- կումներով: Արձնեան սրահում լաւ բազմութիւն կար եւ դասախօսութիւնը անցաւ շատ հարթ, միայն դասախօսը իր խօսքի վերջում անխոհեմութիւնն ունեցաւ քննադատական մի քանի սուր բառեր արտասանելու Դաշնակցու- թեան հասցէին:

Սրահը այնպիսի: Ամէն կողմից յսուկին բողբոջի ձայներ: Գծու խօսքեր դասախօս Եսայի մի հասցէին. բուռն քննարկ...

Ի՞նչպէս եղաւ: Ի՞նչ պատահեց: Մէկ էլ՝ Եսայի մը անհետացել էր բե- մից. ամբիոնը անցել էր մեր բնկերների ձեռքը եւ մեր երիտասարդ բնկեր- ները ձեռքերի վրայ ինձ բարձրացնում են բեմ... Սրահի սրտարնդստ պա- հանջի վրայ գրաւում եմ ամբիոնը եւ սկսում նոր դասախօսութեան Հայ Յե- ղափոխական Դաշնակցութեան մասին: Եսայի մը սարսափահար փախել էր յե- տեի դռնից...

Երբ, դասախօսութիւնից յետոյ, Փիլոսոփ հեռ յաղթական մտանք Ռոս- տոմի մօտ, նա սեւ ամպի պէս մտայլ՝ յանդիմանեց մեզ.

— Չէ՞ք ամաչում, խայտառակեցիք մեզ...

Առանձին խայտառակութիւն չկար մեր կարծիքով, բայց Ռոստոմի կու- սակցական պարկեշտութիւնը էր հաշտում անհաստատութեան հետ. մենք խօսք էինք տուել Եսայի մին օգնելու՝ դասախօսութեան կազմակերպութեան, պարտաւոր էինք հաստատել մնալ տրուած խօսքին:

Բայց նման դէպքեր յաճախ չէին պատահում. Կարինը դաշնակցական քաղաք էր եւ կուսակցական բախումների առիթներ չէին լինում: Ազգային իշխանութիւնը կազմուած էր անկուսակցական գետնի վրայ: Առաջնորդ Սրմ- բատ Եպիսկոպոսը իմաստուն եւ շրջահայեաց մարդ էր: Դպրոցական գործի ղեկավարը ընդհանուր առաջ Ռոստոմն էր, որին ամէնքը յարգում էին: Սա- նասարեան վարժարանի տնօրէնն էր Փրոֆ. Ա. Խաչատուրեանը, թէեւ դաշ- նակցական, բայց նոյնպէս չափաւոր հայեացքների տէր մարդ: Հին սեփմից մնացած ուսուցիչները, Փրոֆ. Սոյիկեան, Արուսեան գործակցում էին սրբ- տանց կամ ստիպում: Դուրսը, հանրային կեանքը գտնուած էր երիտասար- դաց Միութեան ազդեցութեան տակ: Եւ բոլորի վրայ, աննկատելի կերպով՝ Ռոստոմի շունչը: Գործերը բնթանում էին սահուն եւ հաճելի: Կարինի ազ- գային կեանքը փոթորկուեց վերջը, երբ խնամակալութիւնը որոշեց Սանա- սարեան վարժարանը փոխադրել Սրբա՛՛ հակառակ ժողովրդի բուռն բողբոջի եւ ընդդիմութեան: Ի՞նչ հաշի էր այդ, ինչի՞ էին ձգտում Պոլսի ազաները, որոնք, հաւանական է, տեղեակ էլ չէին դպրոցի իրական կացութեան: Հե- տեւանքը եղաւ՝ հին ու նոր Սանասարեան վարժարաններ, որոնց շուրջը փըր- թաւ կրքոտ պայքար:

Ինչպէս ամէն տեղ, Կարինում էլ ազգային վարժարանների նիւթական վիճակը խեղճ էր: Ծնորհի Սանասարեանի, դպրոցները, ընդհանրապէս, ու- նէին պատրաստուած եւ իրենց գործին գիտակից ուսուցիչներ: Ռոստոմի Զան- քը եղաւ, առաջին հերթին, բարեխաւէլ ուսուցչական կազմի նիւթական դը-

րութիւնը: Կային ուսուցչուհիներ, որոնց ոտճիկն էր ամսական մէկ մէքիս: Ես յիշում եմ սրանց ուրախութիւնը, երբ Ռոստոմի առաջարկով, հողարար- ձութիւնը բարձրացրեց երկու արծաթի: Ճիշդ է, սպրտասար տժան էր եւ մէկ արծաթով էլ կարելի էր սովամահ չլինել, բայց հասարակութեան հողերա- նութիւնը ամէն տեղ էլ նոյնն էր. վարժապետը ազգի ծառան է եւ փողի մասին մտածելու չէ... Ունէինք նուիրուած ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ հներից եւ նորերից, որոնց պաշտօնական շունչով դասախօսակուծ էր Կա- րինի մատաղ սերունդը եւ որոնց շատերի անունն անգամ, աւա՛ղ, չի յիշ- տում այլեւս:

... Մօտ մի տարի միայն մնացի Կարինում: Այնուհետեւ շատ երկիր- ներ այցելեցի, շատ ժողովուրդներ տեսայ, բայց զմայլելի Ռիոյում էլ երա- զում էի Կարինի անմահ վերջալուսը, Նիպոպոլի ժխորի առջեւ էլ աչքե- լիս պատկերանում էին Սրտածորի եւ Խաչափայտի զուլալ ջրերը, եւ սըրտ- րաց շէնութիւնը Կարինի անմոռանալի հայութեան...

Բայց ամենից աւելի անմոռանալի է մնում մտերմութիւնը Ռոստոմի հետ: Իր կեանքի եւ գործի օրինակով նա ամբարնուեց իմ մէջ այն պաշտօնա- ներն ու ոգին, որոնցով ապրում ու ոգևորում էր մեր ժամանակի երիտա- սարդութիւնը: Առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ Ռոստոմը ե- դաւ իմ ուսուցիչը եւ կեանքի ուղեցոյց աստղը: Ամէն անգամ, երբ ես մատ- նըւում եմ դժուարութեան, երբ անլուծելի հարցեր մաշում են միտքս, ես ինձ հարց եմ տալիս՝ իմ տեղը ի՞նչ կ'անէր Ռոստոմը այս պայմաններում: Եւ ինչ որ, իմ կարծիքով, պիտի անէր Ռոստոմը՝ անում եմ ես:

Մի յատկանշական դրուագով փակեմ այս գլուխը: Կարինում ես մօտից եւ աւելի լաւ ճանաչեցի Ռոստոմին: Ճանաչեցի եւ աւելի մտերմացայ:

Իր արտաքին երևույթը, իր ապրելակերպն ու մտածելակերպը սիրելի դարձան ինձ: Սովորաբար իմաստուն գլուխը՝ լայն եւ ամուր՝ ուսերի վրայ, խորունկ, բայց սլարդ միտքն ու վճիռ հոգին, եւ իր անանձնական անհատա- կանութիւնը անսահման տպաւորութիւն էին գործել իմ վրայ:

Մի օր Փիլոսոփն ու ես ասացինք Ռոստոմին.

— Բացատրիր մեզ, ի՞նչ է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Նա ժպտաց Ռոստոմի ժպտով: Տրորեց ճակատը եւ պատասխանեց.

— Թէ Աստուած սիրէք, ինձ այդպիսի դժուար հարցեր մի տաք: Ես ինչպէ՞ս բացատրեմ անբացատրելի մի բան: Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել. բացատրելու ամէն փորձ փոքրացնում է Դաշնակցութիւնը: Դաշ- նակցութիւնը կարելի է եւ պէտք է զգալ միայն: Զգալ, ապրել եւ հաստատալ: Մարդ հաւատում է Աստծու, բայց չի կարողանում ասել, թէ ի՞նչ է Աստ- ուած:

- Այնուամենայնիւ, ի՞նչ է քո կարծիքը Դաշնակցութեան մասին:
- Դաշնակցութիւնը, իմ կարծիքով, ամենից առաջ ապրում է եւ գործ: Ասում է՝ ի սկզբանէ էր բանն. ես ասում եմ՝ ի սկզբանէ էր գործն:
- Մեծ գործ, վրայ բերեց Փիլոսոփ:
- Ոչ, մեծ ու փոքր գործեր չկան. կան միայն պատուաւոր եւ ան-

պատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ :

— Ուրեմն, ի՞նչ է Դաշնակցութիւնը, յամառեց Փիլոսը :

Բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանը, որ ուշադրութեամբ հետեւում էր մեր խօսակցութեան, չդիմացաւ եւ ջգայնացած տասց Փիլոսին .

— Ի՞նչ ես թուիմի իման կրկնում՝ ի՞նչ է, ի՞նչ է : Դաշնակցութիւնը Դաշնակցութիւն է, պարզ չէ՞ միթէ : Իսկ եթէ քեզ համար պարզ չէ, դիմիր Վարանդեանին, նա կը բացատրի . . .

Աւելի հետաքրքրուելը իմաստ չունէր . բժիշկը շատ յստակ բացատրեց ամէն ինչ . բանը որ Վարանդեանին հասաւ, նշանակում է, որ մենք անյոյս տգէտ էինք :

Հակառակ իր մարքսիստական համբաւին, Ռոստոմը բացառիկ անհատականութիւն էր : Նա, այսպէս ասած, ներքին գիտակցութեամբ էր ըմբռնում եւ արտայայտում երեւոյթները, կարելի է ասել՝ բնազդով : Ռոստոմի բնազդը զարմանալի էր . Բժ. Տէր-Դաւթեանը ասում էր ձիու բնազդ : Ի՞նչ նակցութիւնն էլ նրա համար աւելի բնազդական սպրտ էր . դաշնակցական էր, որովհետեւ բնութիւնը նրան այդպէս էր ստեղծել : Միտքը, նրա համար գիտակցութիւնը, հարկաւ, անհրաժեշտ էին, որպէսզի մէկը դաշնակցական, այսինքն գիտակից անհատ լինի, բայց դրանից առաջ եւ դրանից աւելի կարեւոր էր անհատի բնական հակումը, տարերքը :

«Մեծ եւ փոքր գործեր չկան, կան պատուաւոր եւ անպատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ» — մի ամբողջ բարոյական փիլիսոփայութիւն, մի ուրոյն աշխարհահայեացք, որ ամէն մարդու տրուած չէ :

Բժ. Տէր-Դաւթեանը աւելի կարճ էր բանաձեւում .

— Մարդը մարդ է եւ գործը՝ գործ, եւ Դաշնակցութիւնը՝ Դաշնակցութիւն :

Մի օր, երբ ես վրդովուած՝ գանգատուում էի հայ մարդու տգիտութեան, ընչասիրութեան, խորամանկութեան եւ ուրիշ վատ յատկութիւնների մասին, Ռոստոմը հարցրեց անվրդով .

- Դու Անին տեսե՞լ ես :
- Անչուշտ, պատասխանեցի եւ դարմացած :
- Անին հայ մարդն է կառուցել : Դու «Նարեկ» կարդացե՞լ ես :
- Ի հարկէ, կարդացել եմ :
- «Նարեկ»ը հայ մարդն է յօրինել : Դու Սասունցի Դաւիթը գիտե՞ս :
- Գիտեմ . ի՞նչ խօսք :
- Սասունցի Դաւիթը Հայ ժողովուրդն է ստեղծել . . .
- Ասա, խնդրեմ, դու ինչո՞ւ համար դաշնակցական ես :

Եւ ծակող հայեացքը ուղղեց աչքերին՝ հողի նկատելի հեղնական ժըպիտը շրթունքին :

Այդ անսպասելի հարցումը ինձ չփոթութեան մասնեց : Ի՞նչ կասունէր իմ դաշնակցականութիւնը Գէոլ Բաշիի մանրամասն հետ, որ երեք զրուշնող բրդէ ձեռնոցը ինձ տասը զրուշով ծախեց :

— Հայ մարդու մեծութիւնը հենց դրա մէջ է, վրայ բերեց Բժ. Տէր-

Դաւթեանը, որ քեզ պէս տասը համայսարան տարտած փիլիսոփայութիւններն երեք զրուշնոց սպրանքը տասը զրուշով է ծախում : Պէտք է հիանաս հայ մարդու հնարամտութեան վրայ եւ ոչ թէ գանգատուես : Հայը սպրեւով գոյլերի հետ՝ սովորել է դայլերի պէս ունալ . . .

Ռոստոմը, որ զարմանքով լսում էր բժիշկի երկար ճառը, նորից դարձաւ ինձ .

— Այնուամենայնիւ, դու չասացիր, թէ ինչո՞ւ ես դաշնակցական եղել :

Եւ խկապէս, ինչո՞ւ էի ես դաշնակցական : Ասել թէ Դաշնակցութիւնը մեծ կուսակցութիւն է եւ դրա համար ես դաշնակցական եմ եղել, այդ պատիւ չէր բերի ինձ . ուրեմն, դիրքի կամ փառքի համար եմ եղել դաշնակցական : Պատմել, թէ հանգամանքները այնպէս դասաւորեցին, որ ես փոխանակ հնչակեան դառնայու, եղայ դաշնակցական, ծիծաղելի պիտի զարձնէր ինձ : Իսկապէս, ես ինչի՞ց զրդուած, դաշնակցական էի :

— Դժուարանում եմ բացատրել, պատասխանեցի ես :

— Տեսա՞ր, շտապով վրայ բերեց Ռոստոմը . ես էլ հենց այդ եմ ասում . Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել . պէտք է զգալ, սպրել եւ հաւատալ :

— Կարո՞ղ ես բացատրել, ինչո՞ւ դու Իղմիր չզնացիր, այլ եկար այստեղ :

— Չեմ կարող, ասացի ես, թէ եւ կարող էի պատասխանել՝ «որովհետեւ դու հեռագրեցիր» :

— Ինչո՞ւ Փիլոսը քանի տարի է այստեղ է, այս ցուրտին, փոխանակ սպրելու Բազում՝ անհամեմատ աւելի լաւ պայմաններում : Ինչո՞ւ Բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանը, Սաթեմիկը այստեղ են : Վերջապէս, Ե՞ս ինչ գործ ունեմ այստեղ, այս ժողովրդի մէջ, որից դու այնպէս դառն գանգատուում ես : Այստեղ ենք, որովհետեւ ոչիլը մեզ աւելի հարազատ է, քան Բազումի ոսկին կամ Ամերիկայի դոլարը : Այստեղ ենք, որովհետեւ դաշնակցական ենք : Իսկ թէ ինչպէ՞ս բացատրել Դաշնակցութիւնը, այդ պարապ բան է : Բժիշկը բացատրեց . Դաշնակցութիւնը Դաշնակցութիւն է . . .

Սրտով եւ Ռոստոմի հետ էի . եթէ հաւատում ես, բացատրութիւնը աւելորդ է, բայց մտքով բաւարարուած չէի . ամէն բան պէտք ունի բացատրութեան, որպէսզի հասկնաս, սիրես ու հաւատաս . . .

Կեանքը, սակայն, հաստատեց, որ Ռոստոմի փիլիսոփայութիւնն էր ճշմարիտը : Ինչքան անհերքելի համարուած տեսութիւններ հիմնայատակ խորտակուեցան, փոշիացան եւ որքա՞ն անհեթեթութիւն կարծուած ցնորքներ իրականութիւն դարձան :

Իրաւունք ունէր Ռոստոմը, երբ ասում էր .

- Դաշնակցութիւնը սպրում է, հաւատ է, գործ է :
- Թերեւս պէտք է աւելացնել .
- Եւ անձնագոհութիւն :

«ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ», Բ. հատար (էջ 165, 1974. քաղուածք)

ՌՈՍՏՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ

Բերայի մէջ «Իթթիհատ» անունով ճաշարան մը կար, որ դարձած էր գաշնակցականներու տեսակ մը ակումբը: Ծաշարանը ունէր մասնաւոր սենեակ մը, որուն մէջտեղը կար միայն մէկ կլոր մեծ սեղան: Յերեկուան եւ երեկոյեան ճաշի ժամերուն, Դաշնակցականներուն էր վերապահուած այդ մեծ սեղանը, թէեւ սենեակին դուռը բաց էր միշտ եւ դէպի փողոց տանող «պասսաժը» դուրս կու գար:

Յերեկ ատեն մանաւանդ, այդտեղ կու գային ճաշելու կամ գէթ սուրճ մը առնելու ուղիք ինկող գաշնակցականներ, նաեւ ոչ-գաշնակցականներ, անգամ օտարներ, որոնք կ'ուզէին ծանօթանալ գաշնակցական ղեկավար շրջանակին:

Պուրոյ մէջ իմ անցուցած գէթ առաջին ամիսներուն ինծի համար ամենէն հետաքրքրական, հրահանգիչ եւ միանգամայն հաճելի ժամերը «Իթթիհատ» ճաշարանի այդ մեծ սեղանին շուրջ բոլորուած բնկերներու եւ բարեկամներու յաճախ մտերմական խօսակցութիւններն էին, մա'նաւանդ՝ որ հոն հրամցուած կերակուրներն ալ բաւականին լաւ էին եւ համեմատաբար աժան:

Այդտեղ էր, որ կը սիրէին զալ դատուներէն եկած հայ մտաւորականները, որոնցմէ շատ բան կարելի էր իմանալ դաւաճներու մէջ տիրող տրամադրութեանց եւ անցուցարձերու մասին: Բնական է, որ ձգողական մեծ ուժ մը ունէր ինծի համար այդ ճաշարանը:

Օր մը, հրաւէր ստացայ «Բաֆֆի Լաւրանական Միութենէն» երթալու Սկիւտար՝ դասախօսութեան մը համար: Ես տրամադիր չէի բնդունելու հրաւէրը, մա'նաւանդ՝ որ գիշերն ալ հոն պիտի մնայի, անձանօթ տան մը մէջ հիւր ըլլալով:

Ճաշի ատեն, երբ Ռոստոմին յայտնեցի այդ մասին, ան վրդովուեցաւ եւ ջանաց համոզել զիս, որ երթամ անպայման: Տեղի տուի, երբ ըստ, թէ ինքն ալ պիտի երթար խօսէր նոյն հարցոյթին մէջ:

Տարիներ ետք, երբ Ամերիկայի մէջ հանդիպեցայ Արտ. Վանարեանին, ան ըսաւ, թէ «Բաֆֆի Լաւրանական Միութեան» վարչութեան կողմէ ինքն էր յանձնարարուած Պուլէն Ռոստոմը եւ զիս առաջնորդելու Սկիւտար:

Երբ հասանք ժողովատեղի, սրահը լեւի-լեցուն էր: Առաջին խօսքը ինծի տրուեցաւ: Չեմ խորհիր, սակայն, թէ ունկնդիրները լաւ տպաւորուեցան իմ ըսածէս, որովհետեւ անոնց ուղածը դասախօսութիւն չէր, այլ խանդավառ առեւտրախօսութիւն: Ռոստոմը, որ թէեւ նոյնպէս հեւտոր չէր, բայց ինձմէ շատ աւելի տպաւորեց ունկնդիրները օրուան հրատապ հարցերուն աւելի համադրատասխանող իր առեւտրախօսութեամբ:

Կէս գիշերին, մեզ առաջնորդեցին Շաւարշ Միտաքեաննց տունը, երբ

տնեցիք արդէն քնացած էին: Բայց Ռոստոմի եւ ինծի համար երկրորդ յարկը խալիի մը վրայ անկողիններ պատրաստուած էին:

Անմիջապէս անկողին մտանք:

Ռոստոմը առտու կանուխ, ինձմէ առաջ, ելած էր անկողնէն եւ վար իջած: Ես ալ, երբ արթնցայ եւ դայն շտեսայ անկողնին մէջ, հագուեցայ ու գացի վար: Ռոստոմը արդէն սեղանատունն էր եւ կը խօսէր օրիորդի մը հետ: Քիչ ետքը, Շաւարշին մայրը եկաւ եւ մեզի նախաճաշ բերաւ: Չարածճի փոքր տղայ մը ներս ինկաւ յանկարծ, որ մինչ այդ կը վաղվղէր սենեակներուն մէջ: Շաւարշի փոքր եղբայրն էր՝ ժիրայրը, ապագայ «Ներս-պաշի»ն:

Նախաճաշէն ետք, Ռոստոմի հետ հրաժեշտ տուինք տանախինոջ ու օրիորդին՝ շորհակալութիւն յայտնելով իրենց սիրայիւր հիւրընկալութեան համար եւ ուղղակի դացինք նաւամատոյց՝ Բերա վերադառնալու համար:

Նոյն օրը, ցերեկուան ճաշի ատեն, երբ Ռոստոմն ու Չաւարեանն ալ միացան մեզի «Իթթիհատ»ի ճաշարանի կլոր սեղանին շուրջ, բնկերները, բնականաբար, սկսան հարցումներ ուղղել ինծի երէկուան մեր ժողովէն ստացած տպաւորութիւններու մասին: Պուրոյ համար ես դեռ բոլորովին նոր մարդ էի, եւ իմ տպաւորութիւններս կը հետաքրքրէին զիրենք:

Ի միջի այլոց, Ս. Չաւարեանն ալ հարցուց, թէ ինչպէ՞ս խօսեցաւ Ռոստոմը: Ըսի, թէ շատ սիրեցի իր բանախօսութիւնը:

Չաւարեանը, որ դուարթ տրամադրութեան մէջ էր այդ օր, զարմանք յայտնեց: Երբ ես հարցուցի իր զարմանքին պատճառը, ըստ խնդալով.

— Եթէ դու էլ ինձ նման լսած լինէիր Ռոստոմի առաջին ճառը, դու էլ պիտի զարմանայիր:

Բոլոր բնկերներն ալ ամէն կողմէ խնդրեցին պատմել Ռոստոմի առաջին ճառի մասին: Եւ Ս. Չաւարեանը պատմեց հետեւեալը.—

«Ես Ռոստոմից առաջ ուսանող էի Պետրոյսկո-Ռադումովսկայա Ակադեմիայի մէջ, Մոսկուա: Այդ ձեւարանը իմ ժամանակ յեղափոխութեան հրնոց էր: Ուսանողներից շատերը անդամ կամ համակիր էին յեղափոխական կուսակցութիւններին: Կազմակերպուած յեղափոխական կամ զազախարական խմբակցութիւններ կային ուսանողութեան մէջ: Այնպէս որ՝ երբ մի նոր ուսանող էր մտնում մեր ձեւարանը, այդ խմբակցութիւնները աշխատում էին իրենց կողմը գրաւել նրան: Երբ Ռոստոմը երեւաց մեր ձեւարանում, բնականաբար, ուսանողները սկսեցին նրա ետեւից բնկնել, որ իրենց կողմը գրաւեն նրան: Բայց Ռոստոմը լուռ էր մեծ մասամբ եւ վերապահ, իր կարծիքները խուսափում էր արտայայտել: Եւ ոչ ոք զիտէր, թէ Ռոստոմը համակիր էր յեղափոխութեան, թէ հակառակ էր:

«Բայց ահա մի օր, մի մեծ ուսանողական ժողով ունեցանք մեր ձեւարանում: Սօսողներ շատ կային: Յանկած Ռոստոմն էլ ձայն խնդրեց: Բոլոր ուսանողները շափազանց հետաքրքրուեցին եւ անհամբեր էին իմանալու, թէ ի՞նչ պիտի ասէր Ռոստոմը, վերջապէս:

«Երբ խօսելու հերթը եկաւ Ռոստոմին եւ նա ուսանողների բազմութիւնը ճեղքելով դանդաղ քայլերով բարձրացաւ ամպին, սրահի մէջ կատարեալ

լուծի են տիրեց : Բոլոր ներկաներն էլ լարուած ու շարժուած էին դարձել : Ռոստոմը չփոթ հայեացքով նայեց ուսանողները բազմութեան , փորձեց յիշել , թէ ի՞նչ էր ուզում ասել , բառական երկար փորձեց : Եւ , ի վերջոյ , յուսահատած՝ առանց մի բառ խոսք արտասանելու՝ ծոծրակը քերելով եւ ձեռքի յուսահատական շարժումով յանկարծ սկսաւ ամպխոնից վայր իջնել : Ամբողջ սրահը ահուկ մի քրքիջ արձակեց : Բայց մեր Ռոստոմը , լուռ եւ անվրդով զնայ ու իր տեղը նստեց , կարծես ոչինչ չէր պատահել :

«Ահա այս էր մեր Ռոստոմի առաջին ճառը : Հիմա տեսնում էք , թէ նա ի՞նչ մեծ առաջնորդութիւն է արել ճառախօսութեան մէջ» :

Բոլորս ալ կուշտ խնդալով՝ նայեցանք Ռոստոմի կողմը : Եւ մեզմէ մէկը հարցուց , թէ ճի՞շդ էր Ս . Զաւարեանի պատմածը , թէ ան կատակ էր կ'ընէր :

Ռոստոմը քիչ մը կարմրելով , ընդունեց որ ամբողջովին ճիշդ էր :

«ԵՐԿԵՐ», Ա . հատրք , (էջ 106-108)

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

**ԶԱՒԱՐԵԱՆ ԵՒ ՌՈՍՏՈՄ**

Ս . Զաւարեանէն բոլորովին տարբեր մարդ էր Ռոստոմը : Թէեւ Ռոստոմն ալ հոգածու , նոյնիսկ հայրական վերաբերում ունէր դէպի երիտասարդները , բայց միայն այն երիտասարդները , զորս կը զնահատէր եւ իրենց յեղափոխական նուիրումին համար կը սիրէր : Այլապէս , Ռոստոմի վերաբերումին մէջ ո՛չ միայն վերապահութիւն , այլեւ երբեմն չորութիւն ու հեղինակար այն երիտասարդներուն հանդէպ , որոնք իր զնահատանքին չէին արժանացած կամ տակաւին չէին արժանացած : Եւ այդ չորութիւնն ու հեղինակար , բնականաբար , չէր կրնար գրաւել այդ երիտասարդները , նոյնիսկ ետ կը մըղէր դանտեք Ռոստոմէն :

Պէտք է ըսել ընդհանրապէս , որ Ռոստոմը Զաւարեանի նման ջերմ եւ հազարդական չէր եւ Զաւարեանի նման մանկական պարզութեամբ չէր վերաբերեր դէպի մարդիկը : Ան շատ աւելի վերապահ էր իր յարաբերութիւններուն մէջ եւ զանդազօրէն կը կատուէր ընկերներուն : Հետզհետէ միայն , երբ սկսէր աւելի մօտէն ճանչնալ դիմացիներ , իր հետաքրքրութիւնը աւելի կը դորանար :

Անկասկած , Ռոստոմը աւելի հաւասարակշռուած մարդ էր , քան Զաւարեանը եւ անկէ աւելի համեստ : Թէեւ Զաւարեանն ալ անհամեստ մէկը չէր երբեք , բայց անոր մէջ կը նկատուէր երբեմն երեսալու , աչքի իյնալու , կեղրոնական դեր կատարելու մղումը : Ան , օրինակ , կը սիրէր նախազահել ժողովներուն , կուսակցական բլլային անոնք թէ ազգային ժողովներ :

Օրինակ , էջմիածնի Ազգ . Կեղրոնական ժողովին մէջ՝ բուռն մրցումի ելած էր Աւետիս Ահարոնեանի հետ՝ այդ ժողովին նախազահ ընտրուելու համար : Նոյնը եւ Պոլսոյ մէջ , Սահմանադրութեան շրջանին , երբ Ակնուրիի դէմ էր լարուած ծայր աստիճան , որովհետեւ ան իր հակառակական փայլուն ընդունակութիւններով եւ ցցուն անձնականութեամբ , ոչ-դաշնակցական հանրութեան կողմէ Հ . Յ . Դաշնակցութեան առաջնորդը կը նկատուէր , մինչդեռ կուսակցական շրջանակի մէջ առաջնորդը ինքն էր :

Կասկած չունիմ , որ եթէ Ռոստոմը բլլար 1906ի Ազգային Կեղրոնական ժողովի պատգամաւոր , հաճոյքով պիտի զիջէր Աւետիս Ահարոնեանին այդ ժողովին նախազահելու պատիւը՝ ո՛չ միայն այն պատճառով , որ Աւետիս Ահարոնեան իրմէ աւելի լաւ պիտի կարենար ղեկավարել , այլեւ ա՛յն պատճառով , որ ինք երեսնալ չէր սիրեր , միշտ կ'ուզէր ստուերի մէջ մնալ : Միշտ այդպէս վարուելով հանդերձ , Ռոստոմը ստուերին մէջէն իր կարելին կ'ընէր օգնելու իր առաջ քաշած ընկերներուն , որպէսզի անոնք լաւապէս կերպով կատարէին իրենց ստանձնած գործը :

Ես շատ քիչ եմ տեսած մարդիկ , որոնց մէջ անձնական փառասիրու-

5261602

թիւնը այնքան տկար ըլլար, որքան Ռոստոմի մօտ: Այդ էր պատճառը, որ ան ունէ մէկուն մէջ նախանձ չէր արթնցներ: Ընկերները կը գրային ու կը տեսնէին իր անձնական փաստաթուղթերնէ զերծ ըլլալը եւ կը խոնարհէին անոր ներողամիտ ու մեծահոգի վերարկութիւնն առջեւ, զոր ցոյց կու տար փաստաթուղթերնէ առաջ եկած կոխներու հանդէպ:

Իր այդ բացառիկ յատկութեան շնորհիւ էր, որ Ռոստոմ կը յաջողէր յաճախ հաշտարար, խաղաղասէր դեր կատարել, ո՛րք ալ ըլլար: Եւ եթէ Չարեան կամ Ակնունի, ինչպէս եւ կուսակցական միւս ականաւոր գէմքերը զիրենք սիրողներ ու չսիրողներ ունէին, Ռոստոմ իր զարմանալի յատկութիւններով ո՛չ միայն իրեն շուրջ հակառակութիւն չէր ստեղծեր, այլևս կը յարգուէր ու կը սիրուէր բոլոր ընկերներէն անխտիր:

Կուսակցութեան մէջ, Ռոստոմ տեսակ մը հայրական դեր կը կատարէր: Ուշադիր եւ հոգածու էր բոլոր այն ընկերներուն, մանաւանդ երիտասարդներու հանդէպ, որոնք որեւէ կերպով օգտակար էին կամ կրնային օգտակար ըլլալ կուսակցութեան կամ մեր դատին, մեր ժողովուրդին: Կր քաջայերէր անոնք, որոնք գրելու ընդունակութիւն ցոյց կու տային: Յաճախ նիւթեր կու տար անոնց գրելու համար: Եթէ անոնք գժգոճ կամ յուսախար էին բանէ մը, եւ կամ ներքին տագնապ մը կ'անցընէին՝ Ռոստոմ իր սուր հայեացքով կը նկատէր այդ եւ, առանց որեւէ խօսք բանալու այդ մասին, կ'աշխատէր անոնց միտքը դրազեցնել ուրիշ, սրտասպնդիչ բաներով: Իր սենեակը կը հրաւիրէր թէյ խմելու եւ մտերմական գրոյցի մէջ ամէն տեսակ հետաքրքրական նիւթերու մասին խօսելու, երբեմն ալ նոյնիսկ համերգի կամ թատրոն կը տանէր:

«ԵՐԿԵՐ», Ա. հատոր (էջ 130-132)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Կ. Պոլիս. 1911ի աշունը, ամբան վերջերն ու աշնան սկիզբը, այն օրերուն՝ երբ բնութիւնը հատնող քաղցրութիւն մը կը դառնայ, հորիզոնները ամպերով կը շղարշուին ու վերջալոյսները, երկար ու հրափայլ, կը սկսին նուաղիլ: Կեանքը կը խլրտի, զպրոցական երիտասարդութիւնը նոր ոգեւորութիւն կ'առնէ եւ համախմբումներն ու հաւաքոյթները կը փոխարկուին ոգեւունչ մակերնթացութեան:

Այդ օրերուն, արտակարգ ալեկոծումի մէջ էր դաշնակցական ուսանողութիւնը՝ համալսարաններէն եւ Ազգ. երկ. վարժարաններու վերջին դասարաններէն՝ շուրջ երկու հարիւրեակ: Խանդավառ, անհանգիստ ու սուրվելու եւ գործելու ծարաւ ուսանողութիւն մը, թշուառ իր նիւթական կացութեամբը, բայց հարուստ հոգիով ու իր անդուստլ ցանկութիւններովը: Անընդհատ վազք մը, ծակ կոշիկներով յաճախ, ու մաշած տարատու, ժողովէ ժողով, դասախօսութեանէ դասախօսութիւն Կ. Պոլսոյ բոլոր թաղերը, ապա թատրոնները լեցուելու համար, կէս զինով կամ ձրի երբեմն, միւս օրն ալ զպրոց վազելու, դաս լսելու կամ դաս ըսելու համար:

Ամիսներէ ի վեր հակամարտութեան մէջ է ուսանողութիւնը. տարուած՝ վիճարանութիւններէ, զպրոցներէն ներս, դուրսը, ակումբներու սրբահաները, սանդուխներուն վրայ եւ թատրոններու միջնարարներուն. ամէն ուր, որ կարելի է վերսկսիլ ընդհատուած խօսքը: Գաղափարական հովեր կ'անցնին իր մէջէն. ընկերվարական ու այլ վարդապետութեանց հոսանքներ կ'ողողեն, կը քշեն զինք եւ ինք կը լողայ ամէն ուղղութեամբ: Կ'ուսանի՞ այս ուսանողութիւնը, թէ կը վիճի, կը գործէ, կը պայքարի: Այս բոլորն ալ կը թրծուի կեանքի մէջ, այլ մանաւանդ կ'որոնէ, ու չի գտներ, եւ կը մնայ միշտ գժգոճ ու միշտ բողոքող...:

Այսպէս է ուսանողութեան, մասնաւորապէս դաշնակցական ուսանողութեան տրամադրութիւնը, շուրջ երեք տարիէ ի վեր. այսպէս պիտի ըլլայ դեռ ան երեք տարի ալ, մինչեւ մեծ ու արիւնոտ եղերերգութիւնը, որ 1914ի պատերազմը եկաւ ու ջլատեց ամէն բան...:

\*\*\*

Վերելքի ու ազգային վերածնունդի մէջ եզոզ սերունդ մը՝ որ գժգոճ է հին կարգերէն, զոր փտած կը կոչէ. հին մարդերէն՝ զոր տիրացու կ'անուանէ, կ'ուզէ դեր կատարել, ինչպէս եւրոպական մեծ ուստաններու ուսանողները. կը տարուբերի ու կը պոթկայ յաճախ, կաշկանդումի երկար տարիներէ ետք: Խոշոր շարժումներ կը դիտէ եւ յաւակնութիւններ ունի անոնց

մէջ նետուելու, դեր խաղալու ազգային ճակատագրին մէջ. կուսակցական ձեռնարկներու մէջ, ընկերային ալիկոծումներէն ներս: Դժգոհ է հայ գրական-նութենէն, զոր տժգոյն՝ գաղափարագործ կը նկատէ, հայ լրագրութենէն՝ զոր «չերիաթճի» կ'անուանէ, հայ եկեղեցականութենէն՝ որ յետադէմ կը թուի իրեն:

Եւ դժգոհ՝ իր իսկ կուսակցութենէն, որ բաւականաչափ վճռական չէ, ընկերավարական չէ, յեղափոխական չէ...

Այս օրերուն է:

Ուսանողութիւնը կը խլրտի ամիսներէ ի վեր. ինք կ'ուզէ ընել ամէն բան. պարտադրել իր կամքը. պոռթկալ իր դժգոհանքը, իր սեփական օրկանով, զոր ունեցաւ տարի մը ետք, ուր առաջին թիւին մէջ իսկ ազգադակեց, հրեղէն ու անզուսպ բառերով, յոռետեսութեան թանձր մշուշի մը մէջէն:

Չորս տարուան սահմանադրական շրջան մը բոլորեցինք: Բերա՞ւ ան վերածնունդ մը մեր մտաւոր հասարակական կեանքին համար: Բաւական է անգամ մը ետ նայիլ եւ անա խորշակարեր անապատ մը, որ կը տարածուի մեր կեանքին մէկ ծայրէն միւսը: Դալկահար ու զգեստնուած հասարակական կեանքի այդ մեռելութեան մէջ պոլսահայ մամուլը իր կարեւոր դերն ունի միշտ:

Առաջին տողերը իր օրկանին՝ «Երկուսի» առաջին խմբագրականին, «Ուսանող սերունդը» խորագրով, 1912ի ամառը, Յուլիսին:

Դատապարտութեան խօսք հին սերունդին դէմ ու «գաղափարագործի» ու «անջիղ» ուսանողութեան դէմ: «Մեր խօսքը հայ ուսանողութեան մասին է, որ կենսունակ ու յարաշարժ գաղափարի սրբազան խորանին առաջ, կարմիր արշալոյսներու եւ հեռուոր հորիզոններու երկունքն ունի, երկունքը՝ նորանոր հեռապատկերներու եւ սպազայ արդարակուտ կարգերու»:

Վերջին խօսքերը նոյն խմբագրականին, որ պայքարի հրաւեր մը կը դառնայ, յանուն մեծ գաղափարներու, ուսանողութեան «արարչագործ» յղացումներուն ու վարդազոյն երազներուն:

Դժգոհանքի առարկան այդ օրերուն (1911) Հ.Յ.Դ. Նրդ Ընդհանուր Ժողովի գումարումէն առաջ ու գումարման պահուն, Իթթիհատի հետ համաձայնութեան վերականգնումն է. մեծ ընկերներու անտարբերութիւնն է, առօրեայ խնդիրներու եւ ընկերական ժողովներու հանդէպ: Չէր ուզեր նըստիլ ու վիճիլ երիտասարդութեան հետ, որ սակայն տէրն է թաղային կազմակերպութիւններուն:

Չեն գար ժողովի. հրաւեր, ազգարարութիւն ու կրկին ու կրկին հրաւեր. ի զուր. եւ օր մըն ալ Հ.Յ.Դ. Բերայի Կոմիտէին կողմէ վերջնագիր բոլորին, հակառակ պարագային «հրաժարում նկատուելու» սպառնալիքով, եթէ յառաջիկայ կիրակի չգան ժողովի...

Հրաւեր:

Կիրակի օր բազմամբոխ ժողով Բերայի ակումբին մէջ. հոն են բոլորը, Ակնունի, Շահրիկեան, Վոսմեան, Տէր Մինասեան, Գ. Բարսեղեանն իսկ. քիչ մը ետք՝ Սիւսանթոն ալ... ուրախութեան ճառագայթ երիտասարդներու ճակատին. եւ վէճ ու լուսարանութիւն եւ խանդավառութիւն հը-

բապարակ դրուած տենդագին հարցերու շուրջ: Ինչ խնդիրներ. բայց ո՞ր մէկն յիշել ու թուել:

Առաջին տեղը սեղանի վրայ՝ Իթթիհատի հետ համաձայնութիւնը — պէտք չէ վերանորոգել. պէտք է փոխել պայմանները, պէտք է դառնալ ընդգրկմադիր: Յետոյ, ազգային ներքին քաղաքականութիւնը. դժգոհ հոս ալ. ու գաղափարօրէն գեկալար դեր ունէր Վոսմեան, ամբաստանութեան աթոռին վրայ՝ ուսանողութեան աչքին, որ համակրանքով կը գիտէր Շահրիկեանը, աւելի ձախ ու ընկերավարական միջնակ իսկ, որ ուսանողական խումբեր կ'ընդունէր իր փոքրիկ սենեակին մէջ, որ Քորփութիւն կը կարդար ու կը թարգմանէր «Իրեն օգնութիւն»ը, որ գործաւորական սենտիքաներուն հետ կապ կը պահէր ու Մայիս մէկին ճառ կը խօսէր գործաւորական միջազգային խառն բազմութիւններուն: Ու վերջապէս դժգոհ էր ուսանողութիւնը՝ Արմէն Գարոյէն. Չեսթըրի ծրագրի օրերուն էր. Արմէն Գարոն ջատագով էր ու լծուած՝ տենդագին աշխատանքի. Շահրիկեան՝ հակառակ. խուլ հակամարտութիւն երկուքին միջև: Մեզի ի՞նչ սակայն այս բոլորը. կարեւորը այն էր որ Արմէն Գարո համակրանք չունէր ուսանողութեան շարքերէն ներս. ոչ խօսքը լսած էինք, ոչ ճառը, բայց գիտէինք, կը զգայինք որ դէմ էր ընկերավարական շարժումին. հեղանք ու արհամարհանք ունէր: Իր շքեղ ու պատկառաղլու կերպարանքը կը տպաւորէր մեզ. բայց իր լուռ ու անժպիտ երեսոյթը, ակնոյցներու տակէն կարծէք անտարբեր, այլ մտախոհ նայուածքը իրմէ հեռու տարած էր ուսանողութիւնը, որ «սեւ ցանկ»ին մէջ անցուցած էր զինք՝ Վոսմեանին հետ միասին:

Ո՞վ երիտասարդութիւն, ի՞նչ ոճիրներ քու անունովդ. խի՞տ է «ոճիրը». ըսէք անդթութիւն, ըսէք անիրաւութիւն կամ ինչ բառ որ կ'ուզէք...

Իրողութիւնները զուրկ են սակայն տրամաբանութենէ եւ արդարութեան զգացումէն: Կեանքը անմիտ է յաճախ ու մարդիկ ողորմելի՝ իրենց դժնահատումներուն եւ իրենց յաւակնութիւններուն մէջ: Բազմութիւնները՝ աւելի չափով: Մեծութիւններու քովէն կ'անցնինք յաճախ. կամ անոնք մեր մօտէն, մեզի բախելով նոյնիսկ, ու մենք՝ կոյր կամ կարճատես՝ չենք տեսներ. կը մնանք անզգած, առնուապն անզկտ ու անտարբեր ու, հետեւաբար, աղքատ ու չքաւոր: Ուսանողութիւնը իր արամաղրութիւններով, ալիկոծութեան մէջ, չէր կրնար ըմբռնել Դաշնակցութեան ձեռնարկներուն էութիւնը. եւ չէր տեսներ, ուրիշներու կարգին, ներքին աշխարհը Արմէն Գարոյի, այդ լուռ ու ապոլոնեան մարդուն, որ պերճաշուք կերպով կ'անցնէր մայթերէն ու չէր ալ տեսներ մեզմէ շատերը:

Բազմաթիւ ջանքեր թափուած էին խաղաղութիւնը վերահաստատելու. վրդովուած միտքերն ու խիղճերը հանդարտեցնելու: Դաշնակցական դործիչներէն շատերը, որոնց կարգին նաև Խաթալը, այնքան գնահատուած ուսանողութենէն, փորձած էին իրենց հաշտարարութեան տաղանդն ու պերճախօսութիւնը, բայց ի զուր: Ուսանողութիւնը մնաց կարծր ու անդրդուելի:

Ու օր մըն ալ հաւաքոյթ, երեկոյեան ակումբին մէջ:

Ռոստոմը պիտի խօսէր: Էրզրումէն Պոլիս էր եկած ժողովին եւ ուզեր էր «հանդիպում մը» ունենալ երիտասարդներու հետ: Սրահը լեցուած էր

դաշնակցական երիտասարդութեամբ եւ մասնաւորաբար ուսանողներով, զժգոճ, խլրատուն եւ սկեպտիկ: Կիսամութիւն մէջ, պատուհանի մը լայն խորշին, սահմանին վրայ սեղանին առջեւն է Ռոստոմը, մտախոճ, սեւեռուն նայուածքով: Անշուք Երեւոյթ, տժգոյն քիչ մը, բայց կարծէք նստած ըլլար ա'լ չչարժելու համար. ապտոածի բեկոր մը, որ յանկարծ մարդկային կերպարանքի փոխարկուած էր, պատրաստ խօսելու եւ պոռթկալու: Թեթեւ շարժում մը, հակում դէպի սեղանը եւ ապա, պոռթկումի տեղ ժպիտ մը՝ որ կը լուսաւորէ իր դէմքը, մինչեւ իր լայն ու կնճոտ ճակատը. յետոյ շոյոյ, մեղմ այլ կորովի շեշտ մը իր ձայնին մէջ: Անակնկալի առջեւ էինք, ու լարումը փչրուած: Կր խօսի առանց հսկողութեան, պարզ, անպաճօճ, կտրուկ: Ի՞նչ բաս եւ ի՞նչպէս բաս. զժուար է յիշել. բայց գիտեմ թէ շուտով նուաճեց իր ունկնդիրները, որոնք պահ մը շարժեցան իրենց աթոռներուն վրայ, աւելի յարումով մտիկ ընելու համար: Ոչ հարցում, ոչ հակաճառութիւն, քանի որ ան կը պատասխանէր արդէն մեր միտքերուն մէջ զծուած հարցումներուն:

Իթթիհատի հետ համաձայնութիւնը. բայց ան էապէս յետադիմութեան դէմ էր. ձեռք բերուած ազատութիւններու համար երաշխիք մը: Եւ վերջապէս ուսանողութեան ի՞նչ դործն է. երբ կան կազմակերպական պատասխանատու մարմիններ, որոնք կը զբաղին այդ հարցերով: Կարծիք յայտնել, տեսակէտներ պարզել՝ հասկնալի՛, բայց «զալմաղալ սարքի» ո՛չ... Դաշնակցութեան ոյժը՝ իր կարգապահութեան մէջ է. ո՛ւր կ'երթաք այսպէս...

Լուս էր ուսանողութիւնը եւ մտորումի մէջ: Ռոստոմ զգացած էր իր տպաւորութիւնը. դարձած էր աւելի քաղցր, ժպտուն, այլ վճռական եւ անսասան:

Ներկաները կը զգային ապառաժին ծանրութիւնը: Ռոստոմ պիտի փրկէր Արմէն Գարոն, պիտի տար անոր պատկերը, պատուելով մեր մէջ նըստած մութը:

«Գիտեմ ձեր զժգոհանքը», — ըսան ան, — յանկարծական ոստումով մը, այլ ճակատի վրայ, Արմէն Գարոյի մասին ակնարկելով: Չեմ ուզեր երկար փնտռել, բայց ձեզի ճանչցնեմ մարդը ու յետոյ դատեցէք դուք: Եւ եզրակացութիւն՝ Արմէն Գարոն դաշնակցական է. կրնաք ապահով ըլլալ: Նման բառեր եւ ապա պատկերը Գարոյի: Տարօրինակ խառնուածք ունի Գարոն. անիկա երբեմն կը մոռնայ ամէն բան. կը մոռցուի ինքն ալ տարիներով. պէտք չէ խաբուիլ սակայն: Գարոն մեծ գործերու եւ մեծ ձեռնարկներու մարդն է. հեռու առօրեայէն. գիտցէք ասիկա: Ահա քանի մը գիծ: Ուսանող էր. գործի մէջ չկար կարծէք. ու յանկարծ, ձգեց ամէն բան եւ գլուխն անցաւ պանքայի դէպքին:

Տարիներ մարեցաւ նորէն. եւ օր մըն ալ երեւցաւ Կովկաս, թաթարական կոիւններու մէջ, ոգի ու բաղուկ դարձած: Նորէն անհետացաւ. ու այսօր երեսփոխան է Օսմանեան խորհրդարանի մէջ եւ Չէսթըրի ծրագրին ետեւէն, Հայաստանը երկաթուղային ցանցով պատելու համար:

Կրնաք վստահ ըլլալ որ վաղը տարիներ դարձեալ լուս եւ անգործ պի-

տի տեսնէք զինք. բայց օր մը նորէն պիտի յայտնուի մեծ գործի մը մէջ, իր չափովը, իր բոլոր ուժերովը նուիրուելով անոր, սրտով ու վճռակամութեամբ, որոնք մեծ են իր մէջ:

Այս է մարդը. պէտք է հասկնալ զայն եւ պահանջել այն՝ որ կրնայ տայ, իր ձեռովը: Գարոն դաշնակցական է ու գիտակից հայ. վստահ եղէք:

Լուս էինք, ու մեր սրտերուն ալիքը իջած. իր շոյոյ ձայնը, իր համոզիչ շեշտը ու պարզութեան շքեղանքը լեցուցած էին մեզ: Գարոն մշուշին մէջ կը յստնէր ու կը մեծնար մեր աչքերուն առջեւ, մեր սիրտերուն ու միտքերուն մէջ: Յարգանքի զգացում մըն էր որ կը պոռթկար: Ռոստոմ նուաճած էր ու Գարոն փրկուած, յաղթական նոյնիսկ:

Ռոստոմ ճիշդ ըսած էր: Տարիներ անցան. ու ժամանակը եկաւ հատատելու Ռոստոմի բարոյական կշռադատումը: Արմէն Գարօ Կովկաս էր անցեր, ու կամաւորական խումբերու գլուխը. յետոյ՝ Ռաչինկիթըն, իբրեւ դեսպան Հայաստանի Հանրապետութեան: Աւելի քան դեսպան. դեկապար ու սղևորող Ամերիկայի մէջ հայանպաստ շարժման՝ քաղաքական շրջանակներու մէջ:

Ռոստոմ այսպէս ճանչցաւ ուսանող այն սերունդը, որ տարիներ ալիքի ու փրփուրի մէջ ապրեցաւ, յուզուեցաւ, պայքարեցաւ, սիրեց ու ատեց, եւ օր մըն ալ խաղաղեցաւ համեստ երեւոյթով, այլ հզօր կամքով ու համոզումով կերպարանքի մը առջեւ, որ Ռոստոմն էր: Խաղաղեցաւ ու զգաց այլ արժէքներ, ու ստոնց կարգին Արմէն Գարոն, անոր էութիւնը, թափելով կիրքը իրմէ եւ լեցուելով յարգանքով:

\*\*

Այսօր, յուշ այս բոլորը...: Ինչքա՛ն անիրաւ յաճախ կեանքը. երիտասա՛րդ կեանքը. բայց ի՞նչքան գեղեցիկ ան, իր անիրաւութեան մէջ իսկ, երբ լի է զաղափարական թռիչքով, ոգեկան կրակներով ու անհուն նուիրումով:

Կեանքը, ինքն ալ այդպէս չէ՞. դաժան ու անիրաւ յաճախ. բայց անհունօրէն գեղեցիկ եւ յուզիչ:

«ՅՈՒՍԱՐԵՐ», 14 Դեկտ. 1940

ՌՈՍՏՈՄԷՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան երեք գլխաւոր հիմնադիրներէն Զաւարեան եւ Ռոստոմ, որոնց տեսնելու եւ անոնց շունչին տակ ապրելու բախտ եմ ունեցած, մեր ազատագրական եւ հասարակական շարժման գրեթէ բոլոր խոշոր երեւոյթներուն մասնակցած եւ գլխաւոր մղիչ ոյժը հանդիսացած են: Բայց անոնց անփառասիրութիւնը եւ մեծահոգի զեկալարութեան ձեւը զիրենք կը թողէին շուքին մէջ, մինչդեռ անոնց առաջ քաշած մտքովի բեմին վրայ կը դառնային գլխաւոր զերակատարներ: Այսպէս ըլլալով հանդերձ մեր կուսակցութեան հիմնադիրներուն հմայքը արտակարգօրէն բարձր էր, եւ որքան կը լայննար Դաշնակցութեան գործունէութիւնը, այնքան այս անփառասէր խոշոր ղէմքերը կը դառնային արիական:

Ռոստոմը, մանաւանդ, շատ ինքնայատուկ ղէմք է մեր կուսակցութեան մէջ: 29 տարի անընդհատ անիկա զեկալար զեր կատարած է մեր գաղտնի եւ յայտնի, մտաւոր ու գործնական յեղափոխական կեանքին մէջ, սակայն այսօր, մեծ դժուարութեամբ կարելի է վերականգնել անոր ամբողջական ղէմքը:

Ո՞ր գործին եւ ո՞ր կողմէ ուղենաք մօտենալ Ռոստոմին, կարծէք թէ ան գործունէութեան բեմի վրայ միայն ներկայ է, հոն է, իսկ պատմութիւնը՝ ուրիշներուն: Մինչդեռ ծրագիրը յղացողը, գործը կեդրոնացնողը, շէնքը պահպանող սիւնը Ռոստոմն է, իր համբերատարութեամբ, յստակ ու բազմակողմանի խելքով, բարի ու հաշտարար ժպիտովը:

\*\*

Բազմաթիւ ղէմքեր ու դրուագներ կապուած են Ռոստոմի անձին հետ, որոնք թէեւ աւելի ուրիշ անհատներու կեանքն ու գործը կը ընդունեն, քան Ռոստոմի ղերը, սակայն ուշադիր ղիտողը ղիւրութեամբ կրնայ տեսնել Ռոստոմի ղեկավար ձեւը եւ, մանաւանդ, յեղափոխական դաստիարակիչ ոգին: Ռոստոմ, լռութեամբ, առանց քարոզի կը դաստիարակէր իր շուրջ հաւաքուողները, կամ անոնք, որ կուսակցական գործով կը կապուէին անոր հետ:

Նման խոր տպաւորութիւն կրած եմ Ռոստոմէն, երբ ուսանողութեանս օրերուն կ'անցնէի էրզրումէն, ու քանի մը օր մնացի Ռոստոմի ու շարք մը ուրիշ ընկերներու մօտ:

1912ի նոյեմբերեան ցուրտ առաւօտ մը, քանի մը ուսանողներ, մեր փոքրիկ ծրարներով Ղալաթիոյ քարափն էինք: Ս. Զաւարեանը մեզի հետ նաւի 4րդ կարգի տոմսեր առած էր, այսինքն պիտի անցնէինք տախտակամածի վրայ, մինչեւ Պաթում:

Զաւարեան մեզ տարաւ Ղալաթիոյ խեղճուկ սրճարան մը, թէյ խմուցուց. ըսաւ, որ կուսակցութեան զանձին խնայելու համար այդպէս աժան

տոմսեր գնած է, որ մենք երիտասարդ ենք, ու պէտք է վարժուինք զիմանալ ցուրտին ու բուքին: Ազա բոլորիս հաղուստները նայեց, պատուիրեց, որ օձիքները հանենք: Ու յետոյ, մեր իրերը խառնչակելէ վերջ, սրճարանէն դուրս գնաց եւ կէս ժամ շանցած վերադարձաւ. մեծ թէյաման մը, թէյ եւ շաքար բերելով:

— Կը վախնամ մտիք. նաու մէջ ետացած ջուր միշտ ձրի կու տան. առէք այս թէյամանը, յաճախ թէյ խմեցէք, որ տարնաք...

Մեր խումբը կը բաժնուէր երկու ուղղութեամբ: Երեք ընկերներ մեկնեցան ղէպի Վան, Արամի տրամադրութեան տակ, իսկ ընկերս եւ ես Կարսի վրայով մեկնեցանք ղէպի էրզրում:

Ս. Զաւարեանի շունչով թեւատրուած կ'երթայինք Ռոստոմի եւ Արամի մօտ, անոնց հրահանգով ու առաջնորդութեամբ հայրենի ժողովուրդի մէջ աչխատելու:

\*\*

— Երբ էրզրում հասնիք, Ռոստոմը ձեզի գործնական անհրաժեշտ հրահանգները կու տայ: Պոլսոյ մեր խօսակցութիւններն ընդհանուր ընդթ կը կրեն, — այս եղաւ Զաւարեանի վերջին խօսքը:

Եւ արդէն հասած էինք ձիւնապատ էրզրումը: Ռոստոմ մեզի դաս տալու պէս հրահանգներ շտուտ: Ընդհակառակը, ընկերական շարք մը խօսակցութիւններու ընթացքին մեզ խօսեցնել տուաւ: Մեր մտածումներն ու գիտցածները լաւ մը հասկնայէն յետոյ, ինք միայն աւելցուց այն անհրաժեշտը, որ մեզի կը պակսէր: Մեզի թուեց շարք մը գործիչներու անունները, անոնց նկարագիրը, անոնց հետ գործելու կերպը, մատնանշեց տեղական կարեւոր հարցերը եւ անոնց լուծման հնարաւորութիւնները: Ամենէն վերջը, թելադրեց, որ տեղական պայմանները եւ մեր շրջապատը լաւ մը ուսումնասիրենք եւ ըստ այդ պայմաններուն շարժինք:

Այն քանի օրերը, որ մնացինք Ռոստոմի հետ, պարապ չանցան: Ընկերական ընդհանուր խօսակցութիւններու ընթացքին, անոգալարար ան մեզի կը ներարկէր բարոյական այնպիսի հասկացողութիւններ, որոնք երկար տարիներ մեր ականջին խրատական օղեր կը մնային:

Մենք տակաւին մոռցած չէինք Պոլսոյ մեր յախուսն ձեւերը: Աջ ու ձախ քննադատութիւններ կ'ընէինք: Ընկերս (Ասլան) բաւական ծանր վերազրումներ ըրաւ մեր հին գործիչներէն մէկու հասցէին, քննադատութիւններ, որոնք, սակայն, գործնական կեանքէ կտրուած ուսանողներէն միայն կարելի էր լսել: Ռոստոմ բարի-բարի ժպտաց, ժպիտ մը, որու ետին մտածումը թաքնուած էր:

— Դուք լաւ չէք ճանչնար ու հասկնար այդ գործիչին, — ըսաւ Ռոստոմ, — դուք առանց կշռելու՝ միշտ կ'ամբաստանէք, սակայն, եթէ պահանջուի, որ ոչ թէ ամբաստանութիւնն ապացուցանէք, այլ նոյնիսկ մօտաւոր բացատրութիւն մը տաք, չպիտի կրնաք: Մենք որքան որ խիստ պիտի ըլլանք բարոյական սայթաքումներու վերարբմամբ, նոյնքան աւելի խիստ քոնթրօլ պիտի ունենանք մեր վրայ՝ անարդար ու անճիշդ վերազրումներ

չընելու ունի ընկերոջ հասցէին: Եւ ընկեր մը ամբաստանելը ամենէն ծանր արարքը կը նկատեմ. ահա 20 տարի է ինչ էս մեր բնկերնէրէն մէկուն վրայ հեռաուր, անփաստ կտակած ունիմ, սակայն, այսքան տարի էս կը կռուեմ իրողութիւնները եւ չեմ կարող պայն ամբաստանել, կամ ունի ուրիշ ընկերոջ խօսիլ այդ մասին, որովհետեւ տակաւին համոզուած չեմ, տակաւին հաւատքս հիմնապէս չէ խախտուած:

Ճնշիչ ու անմոռանալի խրատ էր: Մենք կամաց-կամաց կ'ազատուէինք պոլսական շատախօսութիւններէն:

Դէպի Մուշ մեկնելէ առաջ, օր մը, մեզ տարաւ իր գիտական աշխատանքը: Ռոստոմին հիմնական բնագործութիւնն էր պարծած քիչ մը դրաղելու պայթուցիկ նիւթերով եւ բուստով: Դաշնակցութեան յեղափոխական պայքարի ընթացքին, Ռոստոմի գործնական եւ գիտական միտքը միշտ դրաղուած էր գանելու հասարակ ձեւեր, պայթուցիկ նիւթեր օգտագործելու համար: Եւ ան, յուսելով փորձառութեան մը պէս, ուսմբի մասին բաներ մը կը սորվեցնէր մեր երիտասարդ գործիչներուն: Մեզի ալ սորվեցուց՝ ըսելով, որ յետամնաց ամբոխի վրայ կ'ազդէ եւ կրնայ կայնեցնել խուժանը, մոնաւանդ, քաղաքի նեղ փողոցներուն մէջ: Իր հնարած ձեւը պարզ էր. նիւթերը դիրութեամբ կարելի էր ճարել: Միայն խտտօրէն պատուիրեց, որ ցուցամուտութիւններ չընենք, զանազան փորձեր չկատարենք, պարսպ տեղ թելերնիս կամ գլուխնիս վրայ տալով: Պարզ գոյուչութիւն մը բաւական էր պայթուցիկ վտանգէն ազատ մնալու. իսկ մնացածը՝ կապուած պիտի ըլլար հարկեցուցիչ դէպքերու, ուր վտանգուիլն ինքնին նպատակի մը ծառայել կը նշանակէր:

Գործնական պաշարով կը մեկնէինք դէպի Մուշ. ուրախ էինք: Մեր իրերը պատրաստած էինք ու կը սպասէինք սահնակին, որ մեզ պիտի տանէր Բասէնէն Ալաշկերտ ու անկէ Բուրնըխի վրայով՝ Մուշ: Ռոստոմ մեր սենեակն եկաւ, Էսեւն ալ Մարտիրոս վարժապետը, երկու խոշոր կապոցներով, դրսեւորուած վերմակներով ու հաստ պարաններով:

Ռոստոմը քիչ մը քիթը ճմովեց ու աւելցուց.

— Տղա՛ք, այս վերմակները ձեզ տաք պահելու համար չեն. անոնց մէջ ծրարուած են եօթր մոսին հրացաններ, որ ձեզ հետ Մուշ պէտք է տանէք. այս պէնքերու փոխադրութիւնը ճամբու ծախքը կը թեթեւցնէ: Եթէ տեղ հասցնէք, շատ լաւ, իսկ եթէ բռնուիք՝ կը փորձուիք: Ձգոյ՛ջ եղէք եւ հանգիստ պահեցէք ձեզ, յոյս ունիմ, որ վտանգ չի պատահիր:

Ուրախ էինք, որ դատարի ձեռքով չպիտի մտնէինք Մուշ, ուր գէնքի կարիքը միշտ մեծ էր: Ուրախ էինք նոյնպէս, որ Ռոստոմը մեզի այդպիսի յանձնարարութիւն կ'ընէր: Ուրախութեամբ, թէեւ ոչ առանց պատարասութեան, կատարեցինք այդ յանձնարարութիւնը:

...Երեք օր յետոյ հասանք Մուշ: Հազիւ վար իջած էինք, մեր իրերը կը հաւաքէինք՝ Դաշնակցութեան Տունը մտնելու համար, երբ երեք ոստիկաններ մեզի մօտեցան կեղծ քաղաքաւարութեամբ մը: Ընկերոջս հետ շըշմած՝ մեր շուրջը կը նայէինք գէնքերու ծրարները գանելու, բայց Մշոյ Երկաթեայ խմբի աղաքն արդէն ամէն ինչ թոցուցած էին, ու մէջտեղ կը մնար

մեր զրքերու եւ ճերմակեղէններու ծրարը:

Այդ օր, արդէն անխառն ուրախութիւն ունէինք, որ գէնքերը ապահով տեղ հասած էին, որ մեր ճամբու ծախքը սուղի չէր նստած կուսակցութեան:

\*\*\*

1913ի ամառն էր: Ս. Կարապետի Նաւասարդեան տօնը այդ տարի շատ մեծապայելու էր: Մօտ 20.000 ժողովուրդ հաւաքուած էր այդ հին սրբատեղիին վրայ տօնելու հայ գրքերու դիտի հազար հինգ հարիւրամեակը եւ դպրութեան հինգ հարիւրամեակը:

Ռոստոմ իր աշակերտներու հետ, Բիւրակնեան լեռներէն, ոտքով հասած էր Ս. Կարապետ: Ժողովուրդը կը գտնուէր բազմազան տպաւորութիւններու տակ: Կարծես խոշոր ցուցահանդէս մըն էր մեր կրթական եւ մշակութային կեանքի, հայկական բոլոր նահանգներու վարք ու բարքի, հայկական ազատագրական-յեղափոխութեան: Վերածնունդի նախանշան մը:

Այդ հանդիսաւորութիւններու օրերուն, Ս. Կարապետի վարժարանի սրահին մէջ, տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի առաջին Ռայոնական ժողովը: Որքան դիտեմ, Ռոստոմն էր այդ միտքը յղացած: Այդ ժողովին կը մասնակցէին Էրզրումի, Վանի, Դուրան-Բարձրաւանդակի, Խարբերդի Կ. Կոմիտէները եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի քանի մը անդամներ: Ժողովի նախագահներն էին՝ Ռոստոմ, Արմէն-Գարօ, Վրամեան: Տիգրանակերտի, Սեբաստիոյ եւ Տրապիզոնի մարմինները չկրցան ժամանակին իրենց պատգամաւորները զրկել ժողովին:

Ռոստոմի առաջարկութեամբ, որոշուեցաւ ամէն տարի հաւաքուիլ Ս. Կարապետ, տօնակատարութեան օգտուելով, կատարել Հայաստանի բոլոր Կ. Կոմիտէներու Ռայոնական ժողովը եւ անմիջապէս յետոյ՝ գումարել Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը: Ս. Զաւարեան, Ռոստոմ եւ երկրի գործիչները վերջնականօրէն կը պնդէին Ընդհ. ժողովը Հայաստանի կեդրոններէն մէկու մէջ գումարելու վրայ, բայց այդ տարի կարելի չեղաւ (\*):

Ռոստոմ եւ Արմէն-Գարօ հրճուանքի մէջ էին՝ տեսնելով զանազան վայրերէն Ս. Կարապետ հասած բազմահազար կենսունակ եւ ուրախ ժողովուրդը: Դաշնակցութիւնն իր ամբողջ ուժով հոն էր, Ռայոնական ժողովի մէջ, հայկական ազատագրութեան մտածուքներով. դուրսը՝ Ս. Կարապետի ընդարձակ բակերուն մէջ, բազմաթիւ ամբիոններէ նոյն յեղափոխական մտաւորականութիւնը հայ մշակոյթի տօնի առթիւ՝ հայ հողի եւ հանճարի գովքը կ'ընէր, ապագայ կեանքի վերածնունդի մեծ յոյսերով:

— Միայն տասը տարի մեզ այսպէս հանգիստ թողնեն, մեր ժողովուրդը կը վերածնուի, — կ'ըսէր Ռոստոմ:

Աւա՛ղ, մեզ տասը տարի հանգիստ չթողուցին...

«ԴՐՕՇԱԿ», 1929, քիւ 1-2

(\*) Ս. Վրացեանի մէկ գրութեան մէջ նկատուած քիւրիմացութիւնը կը կրկնուի նաեւ հոս: 1913ին Կարնոյ մէջ գումարուեցաւ Հ. Յ. Դ. Դրդ, Ընդհանուր ժողովը (տեսնել «ՅՈՒՇԱՍՏՈՒՄ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ», էջ 558):

ԱՐԱՄԻ ԵՒ ՌՈՍՏՈՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ (1915)

Մեր առջև կը բացուէր գործելու յայն հորիզոն մը: Բասէն արդէն կազմակերպուած շրջան մըն էր: Հոն նոր վարչութիւն մը կը ստեղծէինք եւ գործերը կը յանձնէինք անոր, ու մենք կը մեկնէինք Երևան, հոն որոշելու մեր բռնելիք ուղին: Երևան հասնելնուս պէս՝ հանդիպում մը կ'ունենայինք Ռոստոմի հետ եւ կը պեկուցէինք մեր կատարած գործերու մասին:

Ռոստոմ, որ յաջորդ օրը ճամբայ պիտի ելլէր դէպի Վան, կարգադրեց, որ վարչութեան անդամները իրեն ընկերանան: Պիթլիսի, Տարօնի եւ Սասունի ազատագրման հրատապ խնդիրը բոլորին մտահոգութեան առարկան էր: Մարտական ուժերը պիտի շարժէին Վանէն, Մալազկերտէն եւ Ախլաթէն՝ դէպի Մշոյ դաշտը:

Վանի յաղթանակին տասներորդ օրը, Ռոստոմի հետ մենք կը մտնէինք Վան: Գիմաւորող երիտասարդները մեզ կ'առաջնորդէին ուղղակի Արամի պաշտօնատեղին, Հայաստանի առաջին նահանգապետը, ազատ կորիզը ապագայ յոյսերուն: Արամ կ'ողջագուրուէր մեզի հետ, բացարտութեամբ, պարզութեամբ, ինչպէս պիտի ընէր խմբական ժողովի մը մէջ: Իր նկարագրի յատկանիշներն էին պարզութիւն, յստակատեսութիւն եւ գործի ընթացքին՝ վճռականութիւն: Այդ պահուն խոնարհ պարզութիւն մը կը ճառագայթէր անոր դէմքէն: Նշմարեցի, որ անոր նայուածքը միշտ Ռոստոմի վրայ է: Ռոստոմ գուրգուրանքի ժպիտը դէմքին, լուռ, անշարժ, կարծես թէ կը շոյժէր Արամը: Հպարտ էր կուսակցութեան հիմնադիրը, իր ձեռնասուններու յաղթանակով:

Արամ դարձաւ Ռոստոմին.

— Ռոստոմ ջա՛ն, եթէ մեր կուսակցական աւանդութիւններին անպատշաճ կը նկատես նահանգապետութիւն ստանձնելու, կը հրաժարիմ եւ իմ տեղը պաշտօնատար մի մարդ կը նարեմք...

— Ի՞նչ ես ասում, Արա՛մ, դու չե՞ս զգում, որ Հայաստանի պետութեան հիմքն ես դնում: Նահանգապետ, նախարար եւ նախագահ բնական պիտի թուին պետական կազմին մէջ:

Ռոստոմ բացուած էր մտերիմ գրոյցի: Մենք ուզեցինք զանոնք առանձին թողուլ ու ոտքի ելանք. կ'ուզէինք «Աշխատանքի Տուն» երթալ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՄԸ», (ԱՐԱՄԸ, էջ 529)

Ռ Ո Ս Տ Ո Մ  
(Ստեփան Զօրեան)

Կամաւորական Առաջին Գունդին մէջ յամառ շուրջներ էին շրջում, թէ Անդրանիկը զայրացած՝ հրաժարական է տուած հրամանատարութիւնից, որովհետեւ զլիսապետ Յովսէփեանը, որ ուստական բանակի ներկայացուցիչն էր եւ տեղեկութիւններ էր հաւաքում մեր գործերի, շարժումների եւ մեծագործութիւնների մասին, ջերմ գովեստով արտայայտուել էր Մարտի ոստանական կարողութեան, գունդ վարելու ճարտարութեան եւ հերոսական յաջող գործողութիւնների համար: Ուրիշի հասցէին ուղղուած գովասանքը, Անդրանիկը համարում է իր սեփական արժէքին ուրացումը: Այնքան նեղսիրտ, դիւրազգած ու անըմբեր էր դառել, որ համոզուել էր, թէ իր դէմ մի դաւ կայ՝ ձիրքերն ու շնորհները ժխտելու. եւ իր արժանապատուութիւնը վիրաւորելու համար: Երբեք չեմ հանդիպել մի անձի, որ համարձակութիւնը ունենար սրեւէ ասան Անդրանիկի տաղանդը եւ մեծութիւնը կասկածի ենթարկելու: Բոլոր կամաւորները, վաշտապետները, ազգային եւ կուսակցական ղեկավարներն ու մարմինները միայն մի միտում են ունեցել. բարձր ու անխոցելի զարծնել հայոց անդուզական հերոսի վարկը, արժէքն ու պատիւը: Այդ նպատակով իսկ չէին խնայել իրենց խոր յարգանքը, բոլորանուէր գուրգուրանքը եւ անհատնում սքանչացումը: Մեր բոլորիս ցան այն էր, որ Անդրանիկը, խիստ զգայնիկ իր խառնուածքին բերումով, յաճախ տարւում էր ծուռ ու անպարկեշտ մարդոց սաղրանքներից, ենթարկուելով նրանց շոյժմարար դարպասներին եւ վարպետօրէն հրամցուած փառաբանքներին: Այս դեռնի վրայ անտեղի ու անպատշաճ միջադէպեր ունեցաւ նա, մինչեւ իսկ առաքելատիպ բժ. Յ. Զաւրիւիի հետ:

Անդրանիկի անսանձ զայրոյթի առանցքը այս անգամ Արարատեան գունդի կազմութիւնն էր: Ինչո՞ւ եւ ի՞նչ ծածուկ զիտումով իմանաորի հերոս՝ Վարդանին էին նշանակել այդ գունդի հրամանատար. ինչո՞ւ իրան ի սպառ անտեսել էին: Իրաւ է, Անդրանիկը սիրում էր փառքն ու փայլը. փառատենչիկ էր, սակայն արտակարգ կերպով ուշիմ էր, սուր եւ թափանցող աչք ունէր եւ արագ ըմբռնողութիւն: Թէեւ անուս մարդ էր, բայց խելք ունէր կացութիւնը ձգրտօրէն պատկերացնելու եւ հարցին էութիւնը հասկանալու: Իրողութիւնը այն էր, որ ոչ անտեսում, ոչ անդիտացում եւ ոչ էլ կուրացում կար: Մմտելուկ ու օձաբարոյ տականքներ, յերիւրածոյ վերակազմներով եւ շարանիւթ թելադրանքներով, չղաղարեցին խաղալ Անդրանիկի տկար լարին վրայ: Զարմանալի չէ: Այսպէս են մեծ մարդոց մեծ սխալները:

Մէկ առաւօտ, կայծակի արագութեամբ լուր տարածուեց, որ Ռոստոմը թիֆլիսից հասել է բանակատեղի՝ կացութիւնը դարմանելու, վխտացող

Թիւրիմացութիւնները փարատելու եւ Անդրանիկին սղոթելու :

Երբեք չէի տեսել Ռոստոմին : Լսել ու կարդացել էի, որ Քրիստափորը Հ. Յ. Դաշնակցութեան ուղեղն է, Չաւարեանը՝ սիրտն ու խիղճը, իսկ Ռոստոմը կամբը : Յարգուն յոյսով խաչապայ բոլորի սիրտը : Բոլորն էլ գոհունակութեամբ շունչ քաշեցին : Ամէն ոք հետամուտ եղաւ միայն իր աշխատանքին, նոր եւանդով լծուեց առօրեայ պարտականութեան, անդիտանալով աչիստի մէջ, որ կատարելի կոհակներով թաւալում էր Անդրանիկի վրանին ասկ : Անսահման լատատեանութեան մի ապահով զգացում պարուրել էր մեզ, թէ ճայթոց ու շառաչոց ամենի փոթորիկին փտաճարար պիտի յաջորդէ հաշտութեան եւ անդորրութեան աւետարար ծիածանը :

Ուժգին եղաւ մեր ցնցումը եւ յոյսի կործանումը, երբ լսեցինք, թէ փաշան անողոք էր, անդիջոց եւ անդրդուելի : Բոլոր հերքումները, բացատրութիւնները եւ յուսարանութիւնները անողոտ էին դառել խաղաղեցնելու իր ալեկոծ հոգին : Նա անդիջօրէն սնդում էր, թէ դա էր սարքուած իրեն արժեկրկելու եւ փարկարեկելու համար : Ընդունալն էին եղած բոլոր թախանձանքները, ողորումներն ու երաշխիքները իր անձնուէր մարտիկներին ու զինակիցներին, որոնք իրեն հետ միասնաբար Սասունի փառքը հիւսել էին :

Անդրանիկը վճռել էր ընդմիջաւ լքել գտնորը :

Դուրս եկել էր վրանից եւ սպասում էր, որ իր ձին թամբեն : Մօտակայ թոյլ քաղաքը պիտի մեկնէր, այնտեղից կովկաս անցնելու եւ առանձնանալու, միանգամայն խզելով իր կապը կամաւորական գունդերի հետ :

Առաջին անգամ էր, որ մարմնական աչքերով տեսնում էի Ռոստոմին : Դէմքը այլալայտած, մի խոր ու անմեկնելի թախիծ աչքերի մէջ. փութկոտ ու մտառանջ, եւ մտածումները այնպէս սեւեռած, որ ոչ ոքին չէր նշմարում : Նայուածքը Անդրանիկին էր յառած. մի նայուածք, որի մէջ կար գործով, խանդակաթ բարեկամութիւն եւ զօրեղ ափսոսանք : Նկատելի էր, որ Ռոստոմը աճադարանքի մէջ էր. յարաշարժ ձիգ էր գործում Անդրանիկից առաջ ձի նստել՝ նրան ընկերանալու համար : Նրա սեղմ շուրթները յայտնում էին, թէ խնդիրը փակուած չէ գեռ եւ Անդրանիկին դարձի պիտի բերէ : Այդ վճռամիտ համոզումով շապուեց, որ ձիուն քամակը նետուի. յանկարծ կենդանին երկու ոտքի վրայ ծառայաւ, Ռոստոմին զգեստեց, ապա ընկաւ նրա վրայ, որովհետեւ Ռոստոմը շարունակում էր ուժգնօրէն սանձը քաշել : Ահ ու սարսափ տիրեց բոլորիս : Այն սպաւորութիւնը ունեցանք, որ եթէ Ռոստոմը մեռած չէ, առնուազն ցմահ խեղանդամ պիտի մնայ : Սեպուհ, Սըմբատ եւ խմբապետներ ու վաշտապետներ վաղեցին օգնութեան :

Անդրանիկը դիտեց տեսարանը անհող, անտարբեր եւ անուշադիր : Այնպիսի պաղութիւն ու անհողութիւն տիրում էին իր նայուածքին մէջ, որ բոլորիս մէջ սրբողանք յառաջացրեց : Մէկ էլ նկատեցի, որ Գրիգոր Ամիրեանը, Մատթէոս Լոպպասեանը, երկուքն ալ օգնական վաշտապետներ, առաջինը փաթաթուել է Նզոր Տէր Մինասեանին, միւսը՝ Նզորի մաուզէր աւարճանակի փողը բռնած, ազաչում, պաղատում են, որ ետ կենայ իր յիմարութիւնից : Մինչ այդ՝ Անդրանիկը, իր Ասլանին վրայ հեծած, մեկնեց թոյլ :

Հետագային պատմեցին, որ Ռոստոմին յիճակուած սարսափելի արկածին հանդէպ Անդրանիկի ցոյց տուած անկարեկից անպաշտութիւնը այնքան վրդովել էր Նզորին, որ քաշել էր ատրճանակը Անդրանիկին սպաննելու համար : Ստակում եմ, երբ վերջէնում եմ ճակատագրական ույր սահմոկեցուցիչ պահը : Եթէ չլինէին Գրիգոր Ամիրեանն ու Մատթէոսը Նզորի կողքին, եթէ չլինէր մէկի արթնամտութիւնն ու բարեկամական կապը եւ միտի վրձնական արդելքը, պիտի գործուէր մի քսամնեցուցիչ ոճիր, որ պատմութիւնը պիտի շնեկէր ոչ ոքին եւ անարգանքի սխնին պիտի դամէր բոլորին : Ի՞նչ սանձակատոր վայնասուն պիտի արձակուէր Հ. Յ. Դաշնակցութեան գէմ, ի՞նչ սուսոյց հեքիաթներ պիտի յորինէին շարախզու բանասրկունները, եւ չարախինդ ողբուկոծով հայութեան հոգին թունաւորէին : Ոճիրը պիտի կրճէր մեր սիրտը, պիտի քամէր մեր աւիշը եւ հայոց պատմութեան մէջ մի անջնջելի խարան պիտի մնար :

Եւ մտածում եմ, ի՞նչքան փխրուն է մեր պատմութիւնը եւ որքա՞ն յեղեղեղուկ նրա ընթացքը : Ի՞նչքան քմածին եւ սփյալփոյ է պատմութեան զէպքերի մեր գնահատութիւնը եւ ո՞րքան անխրատ դատակնիքներ են զրոյժուել արդարների մաքուր ճակատների վրայ : Եւ մտածում եմ, զիպուածն ու պատահականութիւնը եւ մտքի բռնամուղ յաճախանքներից հալածուած խելաւոր, իր մէկ խեղապար արարքով, կարող էր շրջել պատմութեան հունը :

Ռոստոմը ողջ առողջ գուրս եկաւ : Երբ բոլորովին սթափուեց, առաջին խօսքը եղաւ .

— Ո՞ւր է Անդրանիկը :

Նոր ձի բերին եւ թամբեցին : Ռոստոմը հանդարտ, պաղարիւն եւ ստոգատողութիւնով խնդրեց, որ բոլորս էլ գնանք եւ գործի դուխ անցնենք : Այնքան անխոտ ու պաղարիւն էր, որ կարծես ոչինչ պատահել էր : Ոչ մի խօսք կամ ակնարկ միջադէպի մասին. ոչ մի խօսք կամ ակնարկ Անդրանիկի մասին : Նրա գէմքին վրայ սեւ խոշոր գիրերով եւ բացորոշ կարող էր կարդալ անպատում խանդաղատանք եւ գուրդուրանք, հիւսցում եւ ազապատանք հայոց սիրելի ու պանծալի հերոսին՝ Անդրանիկի հանդէպ :

\*\*\*

Խոյում Ռոստոմ կը յաջողի Անդրանիկի վայրոյթը սանձել : Տրապիզոնի մաղձոտ մթնոլորտում անհնար էր հանդարտ հողեվիճակ ստեղծել Անդրանիկի համար, որ ոչ միայն մերժում էր որեւէ բացատրութիւն լսել, այլև հասկանալ չէր ուղում : Չար լեզուներ քէն ու մախանք էին հրահրել, որով նրա վայրոյթը զէթ մեղմելու փորձերն իսկ նախօրօք դատասպարտուած էին դերեւանքի : Անդրանիկը լոյսի մուտքը փակել էր իր մտքի առջև, փակել էր նաև իր վրանի մուտքը Ռոստոմի առջև : Այնքան կուրացել էր Անդրանիկը կիրքի բորբոքումից, որ յատկապէս հրամայել էր իր պահակներին՝ արդիւյլ Ռոստոմի մուտքը իր վրանից ներս :

Խոյում մթնոլորտը հիմնովին տարբեր էր : Տանուաչքը, որի տանն էր օթեւանել Անդրանիկը, հիւրամեծար ու ասպնջական մարդ, իր մօտ հրաւիր-

րել էր նաև Ռոստոմին և Ա. Զամալեանին, որոնք մինչև Պոյ ուղեկցել էին Անդրանիկին:

Տանուտէր Փամկոչեանը, սրտցաւ ու սրտակից ընկեր, առատաձիր ու զոհարերոյ մարդ, վաղեմի մտերիմը Անդրանիկի, պաշտամունքի հասնող հիացումով կապուած Ռոստոմին, ընթրիքի ճոխ սեղանի շուրջ կը բոլորէ իր հիւրերին: Ռոստոմը լուռ է, խորասուզուած ծանր խոհերի մէջ: Անդրանիկի դէմքը կարմրած է ցասումի բոցից ու նրա խոշոր աչքերը փայլատակում են անհաճոյ մի հուրով: Մի վիթխարի սառոյց կայ երկուքին միջև, որ պէտք է կտորել: Զամալեանը չի համարձակում բերան բանալ:

Տանուտէրն է, որ յայտուած այս անօրինակ երեսոյթից, իր պարզ զեղջուկի բառերով ուղեկոչում է հին յեղափոխական, մարտական կռիւների տաժանքն ու դատանքը, ամենաղարհուրելի պայմանների մէջ իսկ Ֆետայիների անհուն զոհարերութեան ոգին, հազարաւոր նահատակների սուրբ արիւնը և աղիխարչ պաղատանքով կոչ է անում չլքել այս անբախտ ժողովուրդը ու հին ոգիով գործը շարունակել:

— Մալս ձեզ զուրպան, հոգիս ձեզ զուրպան: Առէ՛ք, բոլորն էլ ձերն է. մեղք է այս քամրախա ժողովուրդին:

«Բոլորս էլ խորապէս յուզուեցինք, սրտմեց ինձ յետոյ, Գահիրէում, Ա. Զամալեանը: Այնքան իրաւ և ուժգին էր իր աղաչանքը, այնքան անկեղծ ու սրտարուխ էին իր խօսքերը և այնքան անճիգ ու բնական կերպով էին հոսում, որ բոլորս էլ յուզուեցինք՝ լուռ ու անխօս: Սեղանատնից զուրս եկայ, որովհետև զգացի, որ աչքերս թրջում էին: Մի քանի րոպէ հաքր երբ վերադարձայ, Ռոստոմն ու Անդրանիկը զլուխ գլխի խօսում էին: Ռոստոմի ինձ նետած դադատուցիկ հայկացից իմացայ, որ այլևս իմ ներկայութեան կարիքը չկար: Ռոստոմը տէր էր կացութեան»:

Տիգրատիկ վերադարձին նշմարեցինք, որ Անդրանիկի դէմքը արտասովոր պայծառութեամբ փայլում էր և մեզը ու շաքար էր ծորում: Պատաշունչ քամին դադարել էր, և առագաստները իջել էին: Այս բոլոր ցատոթի իրադարձութիւնները թէպէտ մի նշանախեց իսկ չազդեցին կամաւորների եռանդին ու իրանց պարտականութիւնների փարումին վրայ, բայց ակներեւ էր, որ հողիների վրայ մի մոայլ թուխպ էր նստել:

Երբ լուրը արագօրէն շրջան ըրաւ մեր շորքերի մէջ, ցնծութեան հառաչանք արձակեցին բոլորը, և խաղաղութեան օրհնութիւնը տիրեց մեր վրայ:


Շուտով հրաման եկաւ, վաղն իսկ շարժուելու ենք դէպի ուղիմաճակատ:

\*\*

Ապրիլի սկիզբն էր:

Լեռները առատօրէն ծաղկել էին ու դաշտերը զմրուխտէ գորգեր փռուել ամէնուրեք: Գարնանային մեղմ ու անուշ զեփիւոր շոյում էր մեր ճակատները: Վերադարձնող բնութիւնը նորոգ կորով ու ինքնավստահութիւն էր բաշխում:

Պատրաստուում էինք զալիք ահեղ ճակատամարտներին: Լուր էլ հա-



Ռոստոմ և Մառթէոս



Ռոստոմ՝ մօր եւ քրոջ հետ

սեւ, թէ հերոսական Վասպուրականը ապստամբել է, որ սաշարուած է թըշնամու գերակշիռ ուժերով եւ մեղնից շուտափոյթ օգնութիւն է հայցում:

Որոշեցինք մի վերջին անգամ ուխտի դնալ հայոց պատմութեան անմահ հերոսի՝ Վարդանի գերեզմանին, որ մեղնից հազիւ մէկ քիլոմէթր հեռու էր: Հասարակ քարերով մի դմբէթաւոր դամբարան էր նա, որ մեն մենակ կանգնած էր Աւարայրն ու Տղմուտը դիտող կարմրահող մի բլուրի վերայ:

Մեր հոգիները ուխտի ու աղօթքի մրմունջով աւլցուն, մեր հայեացքին առջեւ փոռուող Աւարայրին վրայ տեսանք Վարդան Զօրաւարին՝ իր հրաշագեղ հասակով, փառաշուք սաղաւարտը գլխին, արեւի շողերի տակ պըսպրդուն գէնք ու գրահով, սակեգօծ թուրը ձեռին, իր հազար երեսունըփեց նահատակներով խոյանում եւ ահ ու սարսափ է տարածում թշնամու շարքերի մէջ: Ա՛յ դար է անցել, բայց Աւարայրը դեռ պըրդում էր հայ այրուձիի սմբակների դոփխնից. դեռ լսում էինք շողշող սուրերի շառաչն ու շկահումը եւ հայոց գորքի գրոհի աղաղակը:

Տասնեւհինգ դար է անցել, բայց դեռ տեսնում էինք հայ արիւնք մըշտահոս Տղմուտի մէջ: Եւ այժմ Վարդանանքի որոտումը անմար արծազանգով հնչում է Վասպուրական աշխարհում, որի բարձրաբերձ սարերը թումբ են կանգնել մեր գնացքին, մեր արշաւին դէմ:

Յաջորդ օրը գունդը ամբողջ եւ կարգապահ ճշդութեամբ շարուած, համախմբուած էր Տաւարակի բացաստանում: Անձկայրեաց անհամբերութեամբ եւ ակնդէտ սպասում էինք Ռոստոմին, որ բաղձանք էր յայտնել բարի ճանապարհ մաղթել մեզ: Ուրախութիւնը անսահման էր: Ռոստոմը՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից մէկը՝ գալիս էր մեզ տալու յեղափոխական շարժումի պատգամը: Այդ պատգամը պիտի լինէր միասնականութեան նուիրագործումը եւ վրէժի շեփորը:

Քիչ յետոյ հասաւ Ռոստոմը: Մտաւ գունդի մէջտեղ՝ իր բնական քայլուածքով, սովորական հագուածքով, լռիկ ու մնջիկ, խոհուն ու թախծոտ, սկսեց դիտել բոլոր վաշտերը, գունդի կազմածները եւ կամաւորներին: Նայում էր հին Փետայիներին սքանչացած գոհունակութեամբ, նայում էր Զահլի գինուորներին, որոնց առոյգ, քաջարի կեցուածքը ու հրացայտ նայուածքը վառում էին նրա հպարտանքը: Այսպէս մի քանի վայրկեան մենք մնացինք լռիկ ու անշարժ, իսկ Ռոստոմը որոշապէս ձիգ էր գործում իր յորդող յուզումը զսպելու:

Ապա խօսեց. խօսեց թաւշային քաղցրալուր ձայնով. խօսեց պարզ, յստակ ու անպաճոյճ կերպով, մինչեւ անգամ որոշ տեղեր կմկմալով: Հռետորական ոչ մէկ շարժումէ, ոչ մէկ ձիգ հանդիսաւորութեան: Իր խօսքը ամբողջ յուզում ու հոգու ինքնեկ պոռթկում էր:

Այսպէս խօսեց Ռոստոմը.

«Կտրիճներ հայ ժողովուրդի.

«Վանը ապստամբուել է. Վասպուրականի հերոս ժողովուրդը իր աչքերը ձեր վրայ է սեւեռում: Ձեզնից շուտափոյթ օգնութիւն է սպասում: Դուք բախտաւոր զաւակներն էք այս առաքինի ու պատուական ազգին: Ձեզ

վերապահումն է կենսական մի գործ եւ պատմական մի առաքելութիւն. փրկել օրհասական պայքարով մարտնչող հերոսական Վանը եւ ազատագրել Վասպուրականի համայն հայութիւնը տաճկական զարհուրելի դուրսմիջ, որ մահուան մանդաղով է սպառնում նրան:

«Տարիներով հազիւ տասնեակներ էին զինուորագրում սահմանը անցնելու՝ Երազների աշխարհը մտնելու եւ անրախոտ հայութեան օգնութեան հասնելու: Նրանք անլախօքն զնում էին, թէկուզ ոչ բաւարար կերպով զինուում, փոքրաքանակ ռազմաթերքով ու սարսափելի վատ պայմանների տակ: Այսօր այդ սակաւթիւ տասնեակները աճել, բազմացել են եւ վերածուել հարիւրաւոր տասնեակների եւ վարժ, ընտիր, մարդուած ու կարգապահ մի զորամասի:

«Ափսո՛ս, հազար ափսոս, որ զրկուած եմ արժանաւոր փառքից, որ ձերը պիտի լինի: Կարեւոր եւ անյետաձգելի պարտականութիւններ ինձ պարտադրում են մեկնել Կովկաս: Ինչպիսի՛ր անզուսպ փափաք է եւսում հոգուս մէջ ձեզ հետ լինելու, ձեր զիւցազնական խոյանքներին մասնակից լինելու, ճակատամարտների մէջ ձեր ճակատագիրը բաժանելու եւ ձեզ բախտակից լինելու՝ ձեր տանջանքը, զրկանքը եւ տաժանքը կրելով:

«Գնացէ՛ք, հայ կտրիճներ: Բարձր ու մաքուր պահեցէ՛ք հայ հայդուկի նուիրական սուրբ դրօշը: Աշխարհի համօրէն հայութիւնը, ահնայիչ ու ամէն բոլորէ հետեւում է ձեր քայլերին:

«Գնացէ՛ք, սրբեցէ՛ք հայ տառապակոծ մայրերի արտասուքը. պաշտպան կանգնեցէ՛ք հայ անմեղ ու առաքինի կոյսերի սուրբ պատիւին եւ ուժատէ՛ք, սրտապնդեցէ՛ք ազատատենչ եւ ստեղծագործ հայ ժողովուրդին:

«Հայութիւնը հպարտ է ձեզմով: Անսահմանօրէն հպարտ եմ եւ ես, որ ձեզ նման տոկուհ, շարքաչ, անվեհեր ու մահը արհամարհող հայդուկներ է հասցրել հայ ժողովուրդը:

«Գնացէ՛ք, ողջունեցէ՛ք հայրենի սարերը, ձորերն ու գիւղերը, որոնց ամէն մէկ թիղ հողը ներկուած է ու նուիրագործուած հայու արիւնով:

«Ո՞ր ու անասան հաւատք ունիմ ձեր վրայ. ձեր արիւթեան, ձեր վճռականութեան եւ ձեր կատարելիք մեծագործութիւնների վրայ: Երջանիկ էք դուք, որ ձեզ հրամանատար ունէք հայոց աննման ու թանկագին հերոսները: Բախտաւոր էք դուք, որ ձեզ հայրենի երկիր պիտի առաջնորդեն Անդրանիկի, Սեպուհի, Աւոյի եւ Սմբատի նման փորձառու, քաջարի ուխտեալներ, որոնց բովանդակ կեանքը եւ մտածումը եղաւ հայրենիքի փրկութեան եւ ազատագրութեան վսեմ խոհալը:

«Ո՞ր ու անասան հաւատք ունիմ, որ շուտով, մօտ ապագային, նորէն իրար պիտի հանդիպինք, բայց այս անգամ անհուն ուրախութեամբ եւ հայրենի երկնքի տակ:

«Ապրի՛ք, շատ ապրի՛ք:

«Կեցցե՛ն Անդրանիկը, Սեպուհը, Աւոն եւ Սմբատը:

«Կեցցէ՛ Հայ Կամաւորական Առաջին Գունդը»:

Մինչ հրամանատարները յուզուած ու ոգևորուած համբուրում ու ողջագուրում էին Ռոստոմի հետ, կամաւորները, միասնաբար, ինքնաբերա-

բար, առանց մերին հրահանգի, գլխիկեր բարձրացրին իրենց հրացանները եւ օդը թնդացրին որոտածայն ու իրացուցիչ կեցցէներով:

Յաջորդ օրը Ռոստոմը մեկնեց Կովկաս, լուկ Կամաւորական Առաջին Գունդը սրտապնդուած ու խանդավառուած Ռոստոմի անմոտանալի պատգամով, դարրնեց ու կերտեց փառաւոր յաղթանակը Դիրմանի պատմական ճակատամարտին:

\*\*\*

Դիրմանի ահեղ ու փառահեղ ճակատամարտը նախերգանքը եղաւ մի տասնեակ պանծայի յաղթանակների, որ կերտեց Կամաւորական Առաջին Գունդը. կուռ, տենդագին խոյանքով եւ թաթաւուն քինայոյզ վրէժով հայ ռազմիկները կրնկակոխ հետապնդեցին եւ անխնայ հարուած հասցրին Պալիլ փաշայի գերընտիր բանակին, որի զօրքը Դարդանելի զինարախումբներէն փորձառութիւն էր ձեռք բերած եւ սպառազինուած էր արդիական կատարեալ զէնքերով: Պանասոր, Բաշկալա, Ռազան, Սիկունիս, Լիլին, Միրվանոյ եւ ապա Մորր ու Դատուան՝ Արարատեան գունդի հետ մինչեւ Բիթլիսի դուռները, հայ կամաւորները մեր մարտական նորագոյն պատմութեան մէջ արձանագրեցին հրաշագեղ մեծագործութիւններ եւ մեծաշուք յաղթանակներ:

Ազատութեան ծագող բոսոր արշալոյսը հրավառեց անգամ թերահաւատ հոգիները: Ողջ հայութեան սիրտը թրվոաց աննախընթաց խոյանքով, երբ հայ կամաւորական գունդերի պողպատէ բազուկը իր հովանին տարածեց Գրգուռի եւ Նեմրութի բարձունքների վրայ, որոնք միշտ ասպար կանդնել էին մեր Փետայական խումբերին:

Կուսաճակատ Գրգուռի եւ փրփրահեր ահնազրիւրներով հարուստ Նեմրութի կատարներից, Յոյսի անչափելի հրճուանքով արբշիտ, մեր կարօտակէզ աչքերը յառեցինք Մշոյ սուկեթոյր դաշտին, որ ծփծփում էր արեւի ճաճանչների տակ, եւ Տարօնի թխակարկառ սարերին, որոնք ամպերի հետ էին համբուրում: Տարօնը՝ հոլաթեւ արծիւների օրօրանը եւ հայոց պատմութեան չողպասակ փառքերի յուսթի արգանդը, որ այն պահուն գալարում էր մահուան ճիրանների մէջ:

Աւա՛ղ, թաւալլուր փուլ եկաւ մեր երազը:

Ռուսական բանակը նահանջի անակնկալ մի հրաման արձակեց: Անդրանիկ, Քեռի, Դրօ եւ իրենց աննման զինակիցները, վիրաւոր առիծի նման անզօր կատաղութիւնից մոնչում էին եւ նզովում այդ պահը, որ խորտակեց իրենց մէջքը. կարծես արեւը խաւարեց եւ թանձր մի թախիժ նստաւ մեր բուրբի հոգու մէջ:

Ի՛նչպէս թողնել, ի՛նչպէս լքել սէգ Տարօնի անզուգական մարտիկներին, որոնք անհաւասար դուպարին մէջ հեւասպառ՝ իրենց յետին ճիղովը մարտնչում էին: Մարտնչում էին ջլապինդ բաղուկներով եւ կրակէ աչքերով, որովհետեւ լսել էին կամաւոր եղբայրների անյաղթ զէնքի շաչումը եւ տեսել՝ փրկութեան յուսարեր լոյսը, յաղթանակի թեւերով:

Ի՛նչպէս թողնել, ի՛նչպէս լքել յաղթապանծ Վասպուրականի հայութիւնը, որ մեծախնձիղ ոգեւորութեամբ հայոց նորագոյն Անկախութեան ար-

ձանն էր քանդակում, և որ համակ աւիւն ու թոխը՝ փարեւ էր ստեղծագործ մի վիթխարի աշխատանքի:

Անողորմ հրամանը բռնադատեց մեզ նահանջել: Նահանջել կորաքամակ, թեւաբեկ ու մշտամորմոք, թողլթելով Տարօնի բազմատանջ ժողովուրդը դարձուրելի մի արձաւիրքի մէջ: Այդ ճակատագրական նահանջը տեղահան արաւ Վասպուրականի ժիր, շնչող և շինարար հայութիւնը, որ, անասելի խուճապի մէջ, փախստականի ցուպը ձեռին, շուկայի գէպի նոր Քանանը, Արարատեան հայութեան հիւրընկալ ծոցը:

Հարիւր յիսուն հազար գաղթական անընդհատ խուժեց Արարատեան դաշտը, որ վշտակից ընդունարանը եղաւ անպատում թշուառութեան, աղեկէզ խոցուտքի և անսփոփելի սուգի: Գրեչա չի զորում նկարագրելու սրտաճմրիկ տեսարանը: Համաճարակ՝ վարակիչ և տարափոխիկ հիւանդութիւններ, անօթութիւն, որբերի և կորածների համատարած բազմութիւն, անաէր, անտիրական ու հիւանդկախ երախաներ ու մանուկներ, անթաղ դիակների շարան, և ողբ ու կապան:

Բժիշկի ու աշխատող գործիչի սուղ էր, Անհամբեր սպասում էինք նըպաստամատոյց և առողջապահական խումբերին: Մինչ այդ, Անպրանիկի հրամանով ու պատուէրով, վերցրի մեր բանակի ամբողջ դեղորայքը և լըծւեցի գործի: Բժ. Հայկազուն Նալբանդեանը, դողէրոցքի բռնուած, անկողին էր դամուած:

Վաղ առաւօտից մինչև ուշ դիշեր, առանձին ու հետիոտն, վաղվզում էին դէս ու դէն, բժշկական օգնութեան հասնելու, յարմար վայրերի մէջ տեղաւորելու, ոմանց բնակարան ճարելու, անտէր մանուկներին հաւաքելու և դիակներ թաղելու համար կարգադրութիւն անելու:

Եւ այս բոլորը Իզդիրի մէջ, որի ամառը հեղձուցիչ շոգ է և որի փոշեթաթաւ փողոցները դժոխային հնոց են: Գետինը կարծես մի եռացող կաթսայ է, որի արձակած գոլորշին հրաշէկ ցանցի նման կպչում է մարմինիդ և սեղմում քեզ:

Երկարատեւ քայլելուց ոտքերս սկսեցին ուռչել, այնպէս որ այլևս անհնար եղաւ մոյլ հաղնել, մէկ զոյգ տրեխ ճարեցի իրրեւ լայն ոտնաման, որ կարենամ աղատօրէն ման դալ: Այսուհանդերձ, փոշին և քրտինքը ճաթըտուքներ ու վէրքեր էին դոյացրել ոտքերիս տակ և խոցեր՝ ցաւը ինձ այնպէս էր տաղում, որ տօթակէզ մի յետմիջօրէի գնացի Իզդիրի հանրային պարտէզը, տրեխներս հանեցի և հանդատացայ նստարանին վրայ:

Հաղիւ թէ քառորդ ժամ էր անցել, պատահամբ քովս եկաւ Սիմոն Վրացեանը: Տեսաւ վիճակս, բայց ոչինչ չասաց: Խորապէս զգածուել էր ի տես գաղթականների խեղճութեան և ողորմելի վիճակին, քաշած անօրինակ շարչարանքին և գոհերին: Իսկ ես ընկճուած էի ու յուսարեկ: Ահարկու նահանջը փլուզումի էր ենթարկել յոյսերիս դղեակը և բարոյալքել ինձ: Գաղթականների այս տարապայման գողգոթան սարսուռ էր ազդել հոգուս: Ողբաբող հիւանդների անքոցը, տառապահար մայրերի ստինքների ցամաքումը, անկաթ ու անսնունդ երախաների սրտապատառ ճիչը, մոլորած մանուկների պաղատագին արտասուքը հեղեղել էին յուզական էութիւնս: Քայ-

քայլուել էին ջիգերս և գարձել էի դիւրապրզիո:

— Կորցրինք Տաճկահայաստանը, հայութեան մնացորդն էլ հիմա ամբողջովին մորթուած կը լինի: Իսկ այս գաղթականութիւնը օրէցօր կտառուում է ջերմի, ախի, թանջքի, փորճարինքի, թոքատապի և աղետապի հետեւանքով: Այժմ մեր միակ և դերագոյն մտահոգութիւնը պիտի լինի փրկել Կովկասի հայութիւնը և խնայել նրան վերահաս սարսափներից և ապականներից:

Ասում էի Սիմոն Վրացեանին, իսկ նա խրախուսում էր ինձ և յորդոր էր տալիս գօտեպնդուելու և ամուր պահելու հաւատքս: Ինձ յիշեցնում էր, թէ հակառակ բազմաթիւ ջարդերի և ահաւոր տղէտների, այս ժողովուրդը ապրել է, որովհետեւ յայտ է կտրել, չէ բարոյալքուել, այլ ընդմիշտ մընացել է հաւատաւոր:

Ուշադիր լսում էի Վրացեանին, երբ նկատեցի, որ մէկը գալիս էր դէպի մեզ:

Ռոստոմն էր:

\*\*

Ռոստոմ մօտեցաւ և կանգ առաւ մեր առջև, առանց բարեւի:

Իր թուխ դէմքը այրուել էր խանձուել էր կիզիչ արեւից, սարսուռն էր ու պարտասուն. թուրի նման հատու հայեացքը ինձ վրայ սեւեռեց և...

— Ի՞նչ ես անում դու այստեղ, հարցրեց մեղմօրէն:

Ձայնին մէջ կուտակուած գանգատ և սքողուած յանդիմանութիւն կար: Լուսարանութեան մտօք արձակուած մի հարցում չէր դա, այլ հարցական կաղապարի մէջ դրուած մեղադրանք: Հարցումը ինձ խոսվեց: Տեսել էր, որ տրեխներս հանել եմ. ակներեւ էր, որ վիճակս վիճակ չէր, այլ Յովնան մարգարէի վիճակ:

— Եկել եմ մի քիչ հանգստանալու. ոտքերս վէրք են հանել և ուռել, պատասխանեցի խիստ չոր և վրդով շեշտով:

— Լաւ, յարմար ժամանակ ես ընտրել հանգստանալու, ասաց սուր հեզնանքով, իր լեցուն ձայնով: Տեսն՞ում ես այս ժողովուրդի զարճուրելի վիճակը. ծով կարիքներ ունենք, մարդ չունենք: Բոլորից աւելի դու ես իրազեկ վերահաս վտանգին: Չե՞ս տեսնում, որ ժողովուրդը փճանում, ձեռքից գնում է, նստել ես մի քիչ հանգստանալու. խիզ՞դ կը թողի՞, որ այս փախստական ժողովուրդը ճանձի պէս կտարուի:

Դիւրազգած էի դառել: Ռոստոմի խայթիչ հեզնանքը ու մտրակիչ մեղադրանքը ծանր պարսաւի պէս իջան գլխիս: Արիւնը գլուխս խուժեց. բերանս չորացաւ. կոկորդս սեղմուեց և չունչս բռնուեց: Գիժը զարթնեց մէջըս, անկարող եղայ զսպել կուտակուող մաղձը և պոռթկացի:

— Պիտի կտարուի՞ն, թող կտարուին. ի՞նչ անեմ, խօսեցի և Պիղատոսի նման ուսերս թօթուեցի:

Կայծակ էր, որ շանթագին իջաւ ու ճայթեց: Ռոստոմը քարացած էր իր կեցած տեղը: Անակնկալ էր իմ այս ելոյթը: Մունջ ցատումը վիթխարի կոհակներով ուռչում էր Ռոստոմի աչքերի մէջ: Դիտում էր ինձ անշարժ,

լուս ու անթարթ, կարեկցութեամբ, բայց լեռնացած արգահատանքով:

Իր վերաբերմունքը զգաստութեան բերաւ ինձ, յանկարծ: Ձգացի, որ մեղանչել եմ սրբութիւնների գէմ: Լոկ հայհոյանք չէր սա երկինքի եւ երկրի գէմ, այլ խտացումը եօթը մահացու մեղքերի: Խղճի խայթը սկսեց սիրտս կրծել, երբ նկատեցի, որ ինձ նայում էր ոչ բարկացայտ աչքերով, այլ անծիր ու անուշ արհամարհանքով: Այդ պահուն ո՛րքան կ'ուզէի, որ գանա-կոծէր, անարգէր, Անդրանիկի նման յուտանքներ տեղացնէր գլխիս, միայն թէ այդպէս լուս չմար: Նրա այդ լուսութիւնը սպանիչ էր ինձ համար: Տառապում էի, որ իր բարկութիւնը չէր ժայթքում. չէ՞ որ Եհովան իսկ չէր պահում իր զայրոյթը:

Շփոթ ու չուար, խղճահար ու մեղապարտ, մի ակնարկ նետեցի Սիմոն Վրացեանի վրայ՝ օգնութեան ազերսով: Բայց ի դուր. կարծես թէ Վրացեանը տեսապէս եւ յարածուն սաստկութեամբ շնչում էր ականջիս. «Ան-ներկի մեղք դորձեցիր, յանցաւոր ես, յանցաւոր...»: Այս բառերը արձիճի ծանրութեամբ մըճահարում էին քունքերս:

Տրեխներս կապեցի, շալկեցի դեղերի պայուսակա եւ առանց բառ արտասանելու մեկնեցի: Ամբողջ օրը շարաշար տքնել եմ, հակառակ ոտքերիս ցաւին: Պէտք է մեղքս քուէի. միակ սպառչան էի համարում ոտքի վրայ անդուլ ժուռ գալ առանց հանգիստի, ծարաւ ու քաղցած: Կը բաղձայի, որ ոտքերս աւելի ուռէին, վէրքերս բազմանային ու խորանային, որ չքմեղանքս լինի արդար եւ սպաշխարանքս՝ ընդունելի:

Սրունքներս հազիւ կարող էին ինձ պահել, երբ կէս գիշերին վերադարձայ վրանս: Երբ ներս մտայ, ի՞նչ տեսնեմ. Ռոստոմը:

Մի ժամ սպասել է վերադարձիս: Շտապել է ինձ մօտ. ապսպրել է, որ ջուր եռացնեն ոտքերիս համար: Ռոստոմը յոգնաբեկ ու քնատ էր: Այդ օրն էլ արիւն քրտինք էր մտել, ինչպէս նախընթաց օրերին: Հակառակ իմ ու ընկերոջս աղաչանքին, որ գնայ քնելու, հանգստանալու, Ռոստոմը չմեկնեց, մինչեւ որ ոտքերս ջուրի մէջ դրի, եւ իր թելադրութեամբ պաղլեղով լուացի եւ անկողին մտայ:

Այդ գիշեր քունը թռաւ իմ աչքերից: Տարուած էի իմ մտածումներով, մինչեւ որ խաւարը սպիտակ դառաւ: Խոհում էի Ռոստոմի մասին:

Ի՞նչ աստղի ծնունդ էր այս անօրինակ էակը: Իր լայն ճակատը մերթ վեհութեան եւ պատկառանքի կարկանդակ ունէր եւ մերթ ցատումի եւ դժգոհու-թեան կնճիւղը: Իր աչքերը մերթ մեղանուշ թախիծով ժպտուն, բարեհամբույր եւ ներող եւ մերթ ծակող, սարսիչ ու նետածիգ: Իր ձայնը մերթ ամպրոպի գոռումն ունէր, եւ մերթ ջերմութեան եւ քնքանքի շեշտը: Եւ ի՞նչ սրտազին նուիրում, ի՞նչ անարատ ու ինքնարուխ համեստութիւն եւ ի՞նչ բարութիւն: Մի բարութիւն, որ ովկիանոսին նման լայնածաւալ է ու անյատակ, բայց եւ ալեկոծ ու փոթորկայոյզ:

Ռոստոմը մէկն էր, որի էութիւնը հոգեկան ներդաշնակութիւնների մի դիւթական համանուագ էր:

Հետագայում առիթն ունեցայ նորէն հանդիպելու Ռոստոմին զանազան

առիթներով եւ այլպան պարագաների տակ, բայց մի անգամ միայն տեսել եմ նրան ջգագրելու վիճակում:

Իզգիւր հասան Տարօնի բեկորները, զեկափարտութեամբ Ռուբէնի եւ Կոմսի: Այդպէն Խորհուրդի անգամները եւ գաշնակցական մտաւորականութեան ընտրանին, որ Թիֆլիսից Իզգիւր եկել էին, շատել էին դիմաւորելու Ռուբէնին, Կոմսին եւ նրանց զինակից քաջամտաբեկ Տարօնցիներին: Ներկաները ետուն բերկրանքով սղջագուրուցին մանտանոյ Ռուբէնի եւ Կոմսի հետ, որոնք հազիւ տրեխով եւ հնամաշ հազուատներով հասել էին Կովկաս: Մազ ու մօրուս ահաւոր կեդարի մէջ, բուրբն էլ յոգնաբեկ եւ տխուր, բայց գո՛հ էին, որ կարողացել էին ճարտարել տաճկական գեհեկից:

Մէկը կար այդ բազմութեան մէջ, որ թէ՛ ներկայ էր այնտեղ եւ թէ՛ բացակայ: Դա՛ Ռոստոմն էր:

Ձյակցի իր բերնից ոչ միայն ողջոյնի խօսք, այլ մինչեւ անգամ չնըժմարեցի ուրախութեան սպօտ նշոյլ՝ իր տխրամած դէմքին վրայ: Ուրախ էինք եւ յափշտակութեամբ ուրախ, որ գէթ այս կորիւնները ազատուցին այն քստմնելի աղէտից, որ վիճակուց այնտեղ մնացողներին:

Ռոստոմը չէր տեսնում ոչ ոքին: Մերթ իր քիթն էր տրորում ջգածը-դութեամբ, կարծես իր ներքին փոթորիկին մէջ տապկուած, ուրիշ բան չէր գտնում տրորելիք: Մերթ ճակատն էր քերում, կարծես մի նեղիչ բան կար իր գանկին տակ, որին ջանում էր ճանկերով դուրս քաշել:

Խորասուզումս մի թանձր թախիծի մէջ՝ Ռոստոմը սաւառնում էր Տարօն-Տարուբերանի սարերի վրայ: Անզօր ցատումով եւ անսփոփ մըմուռով տեսնում էր Սասունի զիւղերը, որոնք բոց ու ծուխ էին փսխում, բայց ոչ անմար ծխներից, այլ հրոյ ճարակ տներից: Տեսնում էր կոտորածի զարհուրանքը գիւղերի մէջ եւ սարերի վրայ:

Ռոստոմը ներկայ չէր այնտեղ: Մտքով Տարօնի զարզանդն էր ապրում:

\*\*

Մի երէց ընկեր պատմեց ինձ, թէ Բագու՝ Մարդասիրական Ընկերու-թեան գալուցին մէջ ընկերական մի ժողով էր, ուր օրակարգի միակ հարցն էր Յար. Շահրիկեանի բողոքը մի երկասարգ ընկերոջ դէմ, որ նախընթաց մէկ վիճարանութեան ընթացքին յանդգնել էր յայտարարելու, թէ Շահրիկեանը իր իսկութեամբ՝ գաշնակցական չի: Շահրիկեան պահանջում էր, որ այդ յայտարարութիւնը փաստերով ապացուցուի: Երկասարգ ընկերը, նեղ կացութեան մատնուած, ոտքի կանգնում է յայտնելու, թէ ապացուցանելու եւ փաստեր բերելու հարկ չկայ, յաճախ մարդկային ներքին ձայնը, ներթմացումը բաւ է եզրակացութիւններ հանելու համար:

Յ. Շահրիկեանի դէմ բազմաթիւ դժգոհներ կային: Բայց նրանք լուռ էին, նախընտրելով ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանել:

Ռոստոմը, այդ փոսուցից անցնելիս, պատահաբար ներս կը մտնի: Ականջալուր կը լինի երկասարգի բացատրութեան, բայց լուռ կը մնայ:

Մի հանրածանօթ հայդուկ, որ հայ-թաթարական ընդհարումներին ա-

կընթախ դեր է կատարած, մղուելով երիտասարդի դրդումից, որ կուշտին էր նստած, խօսք ատնելով ոտքի կ'ելլէ:

Հաղի թէ մի քանի անուանարկիչ եւ վարկարեկիչ խօսքեր կ'արտասանէ Յ. Շահրիկեանի դէմ,

— Շո'ւն, կը գոտայ Ռոստոմը լիաթոք հագազով եւ որոտաձայն դայրոյթով: Բոլորը կը սարստան՝ ցասումի սաստկութիւնից եւ զինաթափ կը լինեն իր խոժոտ ու թափանցող նայուածքից: Եւ ապա մատը ցնցելով հայդուկին վրայ, կը յարէ.

— Դու այն անարգ մարդը չե՞ս, որ իր մոտին գնդակին ուժը սոսկ շտփելու համար, Եօթը անմեղ թաթարներին իրար ետեւ կանգնեցրեց եւ բոլորին մէկ գնդակով սպաննեց: Դաշնակցութիւնը քեզ չսատկեցրեց, որ դու այսօր վեր կենաս եւ յանդգնես Շահրիկեանի նման դաշնակցականի վրա՞յ հաջել:

Փողովականները՝ բոլորը շքամտ ու շքմորած են հարուածի ուժգնութեան տակ: Ձայն ծպտուն չկայ: Մեղադրող երիտասարդը, գլուխը գրասեղանին վրայ ծալուած թեւերի մէջ պահած, ամօթահար լուռ կը մնայ: Մի բոպէ ճնշող լուծիւնից յետոյ, մատնանշելով երիտասարդին.

— Բարենչան է, որ քո մէջ գէթ ամաչելու ընդունակութիւնը դեռ վառ մնացել է:

Այնուհետեւ ոչ ոք յանդգնութիւնը ունեցաւ այդպիսի մի յիմարութիւն գործելու:

Ռոստոմը անսակարկ կամք էր Արարատի նման, սէգ ու վսեմ, պատկառազդու եւ հայրական, բայց հրաբուխ էր՝ լուռ մխացող:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, ԼԵ՛ տարի, ԲԻ՛ւ 1-5 (հատուածներ)



Ռոստոմ՝ կնոջ եւ աղջկան հետ



Ռոստոմ եւ Տիգրան

ԲԱԳՈՒ, 1918

Սակայն, դառնանք 1917ի անցքերուն:

Երբ Հ. Յ. Դաշնակցութեան Ռայոնական Ժողովի եւ Հայկական Համադումարի փակումէն ետք, Բագու վերադարձանք, մեր առաջին գործը եղաւ, բնականաբար, Բագուի մէջ եւս կազմել Հայոց Ազգային Խորհուրդ մը, մանաւանդ՝ որ Բագուի թուրքերը արդէն ունէին իրենց ազգային Խորհուրդը, որ ամբողջ Կովկասի համար ղեկավար գեր ստանձնած էր:

Մերինը, հարկաւ, տեղական մարմին մը, մասնաճիւղ մը պիտի ըլլար Բագուի շրջանի համար միայն, ենթակայ Թիֆլիսի մէջ ստեղծուած կեդրոնական Ազգային Խորհուրդին:

Սակայն, իրերու բերումով, երբ Բագուն կտրուեցաւ Թիֆլիսէն, Բագուի մեր Ազգային Խորհուրդը փաստօրէն անկախ մարմին մը դարձաւ՝ իր անկախ քաղաքականութեամբ:

Միւս կուսակցութեանց հետ համաձայնութեան գալով՝ որոշեցինք Բագուի մէջ կազմել եօթը հոգինոց Ազգային Խորհուրդ մը:

Սկիզբները հասկացողութիւն կար, որ այդ եօթէն չորսը դաշնակցականներ պիտի ըլլային, իսկ մնացած երեքն ալ պիտի ըլլային միւս երեք կուսակցութեանց ներկայացուցիչներ: Բայց ետքը, Դաշնակցութիւնը, նկատի ունենալով Բագուի բացառիկ պայմանները, հրաժարեցաւ իր մէկ ձայնէն, որպէսզի ունենոր դասի յատուկ ներկայացուցիչ մըն ալ կարենար մասնակցիլ Ազգային Խորհուրդին: Եւ Բագուի Ազգային Խորհուրդը կազմուեցաւ հետեւեալ անձերէն.— Դաշնակցութեան կողմէ՝ Արրահամ Գիւլիսանդանեան, Խանասորի խմբապետ Վարդանը, Կ. Պարունակեանը: Սոցիալիստ-Յեղափոխականներէն՝ Բժ. Լեւոն Աթաբէկեանը. Սոցիալ-Դեմոկրատներէն՝ Նարեման Տէր Ղազարեանը. Հայ Ժողովրդական կուսակցութենէն՝ Հ. Տէր Միքայէլեանը եւ ունենոր դասէն՝ Ս. Տէր Ղազարեանը:

Ազգային Խորհուրդի այս կազմը հրաւիրեց զիս իբրեւ իր քարտուղարը, իսկ նախագահ ընտրուեցաւ Արրահամ Գիւլիսանդանեանը:

Ազգային Խորհուրդի առաջին իսկ նիստին մէջ սորոշուեցաւ խորհրդակցական ձայնով հրաւիրել Ռոստոմը, Յովհ. Քաջագունին եւ Բժ. Իսախանեանը: Շարաթներ ետք, նոյնպէս խորհրդակցական ձայնով հրաւիրուեցան նաեւ տիկին Զապէլ Նսայեանը եւ Ռ. Քաջբերունին՝ իբրեւ արեւմտահայերու ներկայացուցիչներ:

Շուտով, երբ Ազգային Խորհուրդը կարենոր գործով մը Անդրկասպեան Նրկիրը (Թուրքեստան) ղրկեց Կ. Պարունակեանը, անոր յաջորդեց Սարգիս Արարատեանը:

Թէեւ Ռոստոմ խորհրդակցական ձայնով կը մասնակցէր, բայց ան

փաստորէն դարձաւ Բագուի Ազգային Խորհուրդին իրական ղեկավարը: Եւ, ինչ որ ուշագրաւ էր, գաշնակցականներու շափ ոչ-գաշնակցականներն ալ մեծագոյն կարեւորութիւնը կու տային Ռոստոմի Խորհուրդին: Արդէն Ռոստոմի բնաստրութեան ամենէն գնահատելի եւ սիրելի ղեկերէն մէկն այն էր, որ ան փաստորէն կը ղեկավարէր, բայց միշտ ալ ձեւական, պաշտօնական ղեկավարութեան պատիր կը ձգէր ուրիշներուն:

Միջանկեալ պէտք է ըսեմ, որ գտնայով Բագուի Հայոց Ազգային Խորհուրդի քարտուղար, եւ այլեւ չէի կրնար շարունակել «Գործ» ամսագրին խմբագրութիւնը: Դէպքերը այնպիսի փոթորկայեղ բնթացք մը ստացած էին, որ նախ՝ անկարելի էր արդէն «Գործ»ի հրատարակութիւնը, եւ երկրորդ՝ Ազգային Խորհուրդի քարտուղարութիւնը անձամեծաա աւելի կարեւոր էր կուսակցական եւ ազգային տեսակէտով, քան ամսագրին խմբագրութիւնը:

\*\*

Մարտ 3ին (1918), Ռոստոմ հետեւեալ առաջարկները ըրաւ Բագուի Հայոց Ազգային Խորհուրդին. —

«Նկատի առնելով,

«որ մեր դրութիւնը օրէցօր աւելի է ծանրանում,

«որ քուրբերը մեզ հետ պարգապէս խտրելի խալում՝ կամեցաւով հաշտութեան պայմանների միջոցով ժամանակ շահել միայն,

«որ, իմ խորին համոզումով, քուրբերի հետ կոխը, ուզեմք թէ չուզեմք, պէտք է ընդունեմք,

«որ, վերջապէս, զինուած դիմադրութիւնից դուրս ուրիշ փրկութիւն չկայ մեզ համար,

«Պէտք է օր առաջ ըմբռնեմք այս դրութիւնը եւ բոլոր տրամադրելի միջոցները ձեռք առնեմք՝ մեր կոխը քուրբերի դէմ յայտնութեամբ առաջ տանելու համար:

«Դրա համար անհրաժեշտ եմ համարում ձեռք առնել հետեւեալ միջոցները. —

«1. Ընդհանուր գորակոչի ենթարկել մինչեւ 45 տարեկան հասակ ունեցողները.

«2. Երեսուցի կտրուկ միջոցներով ապահովել պէտք էրաւք.

«3. Ճակատ ուղարկել մեր զինուած ուժերի մեծագոյն մասը, որովհետեւ ինքնապաշտպանութեան լաւագոյն ձեւը հակասի պաշտպանութիւնն է.

«4. Թիկունքը պահել կարողանալու համար՝ ամէն կերպ աշխատել դրութեան տէրը դառնալու Բագուում եւ Գանձակում, որոնք թիկունքի գլխաւոր բանալիներն են եւ թշնամու ամենակարեւոր դիրքերը»:

Ազգային Խորհուրդը բնոյճանուր ամամբ համաձայն գտնուեցաւ Ռոստոմի առաջարկներուն եւ որոշեց հայկական գորակոչ յայտարարել, որոշմանակաւ զրկել Բագու գտնուող հայ զորամասերուն մեծ մասը, Հիւսիսային

Կովկաս ուղեւորել յատուկ գործակալներ, որոնք պէտք է շահագրգռէին կողակները կովկասեան ճակատի պաշտպանութեամբ, եւ պարզէին անոնց, թէ ի՞նչ ահաւոր հետեւանքներ պիտի ունենար Անդրկովկասի եւ մա'նասանդ Բագուի անկումը իրենց համար իսկ: Վերջապէս, Ազգային Խորհուրդը որոշեց կազմակերպիչներ ու ինքնապաշտպանութեան ղեկավարներ զրկել Գանձակի նահանգը:

Այս միջոցներէն զատ, որոշուեցաւ առաջարկել Բագուի Գործաւորներու, Գիւղացիներու եւ Զինուորներու Սովետին, որ պատրաստուի կուուելու Հայրենիքի ու Յեղափոխութեան թշնամիներուն դէմ եւ կոչ մըն ալ հրատարակէ այդ իմաստով:

Մարտ 5ի իր նիստին մէջ, Ազգային Խորհուրդը որոշեց կազմել Գերագոյն Զինուորական Մարմին մը, բաղկացած էրեք անձերէ — Խանասորի արշաւանքը ղեկավարող Վարդանէն եւ ուսական բանակի զնդապետներ Բախտամեանէն ու Ղազարեանէն: Այս մարմինը կոչուած էր ո՛չ միայն ղեկավարելու Բագուի ինքնապաշտպանութիւնը, այլեւ զբաղելու մեր զինուորական ուժերու ռազմական պատրաստութեամբ:

Այսպէսով, սկզբնական անհրաժեշտ քայլերը առնուեցան՝ զայիք վրտանդը զիմազրաւելու համար:

«ԵՐԿԵՐ», Ա. հատոր, էջ 227-237 (ֆազուածք)

ՌՈՍՏՈՍԸ ԲԱԳԻՌՈՒՄ

1917 Փետրուարեան Յեղափոխութեան եռուզեռի օրերն էին Ռուսաստանում, երբ ամէն ինչ տակնուվրայ էր եղել: Յեղափոխական կուսակցութիւնները «յատակի» տակից դուրս էին եկել եւ դիրքորոշումներ էին անում հազարամի խնդիրների շուրջ՝ անվերջ ժողովներ, միտինգներ, կոնֆերանսներ եւ այլ համախմբումներ կազմակերպելով: Հայ հասարակական կեանքը եւս փոթորկուած էր, ընդհանուր համառոտական ընկերային խնդիրների հետ զուգընթաց: Հայ միտքը դրադուած էր նաեւ հայոց հարցով անդրկովկասեան սահմաններում մասնաւորապէս եւ թրքահայաստանում ընդհանրապէս:

Ահա այս օրերին էր, որ Հ.Յ.Դ.եան կուսակցական շրջաններում յայտնի եղաւ, որ Ռոստոմը գայիս է Բագու: Չէի տեսել նրան: Գուցէ ե՛ւ իմ պատանեկան օրերին, նոյնիսկ մեր տանը տեսած լինէի, ինչպէս մեր շատ ակառուր կուսակցական ընկերներից շատ-շատերին, հօրս կամ առագ եղբօրս հետ նրանց մօտիկ լինելուն շնորհիւ, բայց չէի յիշում: Լսել էի Ռոստոմի մասին ընկերների գրոյցներից: Բնականաբար, ես առանձին հետաքրքրութեամբ սպասում էի տեսնելու մեր կուսակցութեան հիմնադիր երեւակից մէկին՝ Ռոստոմին:

Ու նա եկաւ: Առաջին անգամ տեսայ նրան «Արեւ»ի խմբագրատանը: Ինձ ներկայացրին նրան:

— Մեր երիտասարդներից:

Չեղքս թօթուեց, ապա հարցուփորձ արեց իմ մասին: Հօրս ճանաչեց: Յիշեց ե՛ւ Ստեփան Սաեփանեանին, հօրեղբօրս մեծ որդուն, որը «անջատականների» գեկափարներից էր բժ. Լ. Աթարէկեանի հետ եւ յայտնի էր իր թէ՛ Բագուի եւ թէ՛ մանաւանդ Կարսի գործերի շնորհիւ: Յիշեց Ստեփանեանի եղբայրներին (Պորէն եւ Հայկ), որոնց դեռ չէր հանդիպել Բագուում:

Հարց ու պատասխանի ժամանակ խաղում էր իր փոքրիկ մօրուքի հետ եւ երբեմն ժպտում: Ապա հարցումներ արեց թերթի մասին՝ տպարանի, թղթի, տարածման եւ տնտեսականի մասին:

Այնուհետեւ հանդիպում էինք համարեա ամէն օր կա՛մ խմբագրատանը, կամ կուսակցութեան կենտրոնական գրասենեակում, այսպէս կոչուած Բիրոյում, որը գտնուած էր Բուլճայա Մարսկայա փողոցը կտրող Գիմնազիչիսկայա (եթէ չեմ սխալուած) փողոցի վրայ, Եօթներորդ թաղի ոստիկանատան մօտիկ:

Չարմանալիօրէն բոլոր երիտասարդ ընկերները միանգամից մտերիմ զգացին իրենց դէպի Ռոստոմը:

Նրա գալու երրորդ շաբթին կազմակերպուեց իր առաջին ելոյթը: Դա-

սասխոսութեան նիւթն էր՝ «Քաղաքական կացութիւնը եւ մեր անելիքը», — մի ծեծուած նիւթ: Բայց այս անգամ կարծում էինք, որ խօսքը լինելու էր շատ հետաքրքրական ու արժէքաւոր: Չէ՞ որ խօսողը Ռոստոմն էր:

Հայոց դպրոցի սրահը լեցուած էր: Հանդիսականների մէջ երեւում էին քաղաքի աչքի ընկնող մտաւորականները:

Միջհասակ, թիկնեղ, լայն ճակատով, խորաթափանց հայեացքով մէկն էր Ռոստոմը: Հազուած էր շատ համեստ: Հոնտորական շնորհք բնաւ չունէր: Խօսելու ժամանակ պերճասխոսութեան չէր դիմում: Սակայն, նա այնքա՛ն խորն էր վերլուծում ստեղծուած պայմանները, այնպիսի լրջութեամբ եւ պարզութեամբ էր մեկնաբանում իրականութիւնը, հանում էր եզակի եզրակացութիւնները եւ անում իր առաջադրանքները՝ հայ ժողովրդի անելիքների մասին, որ իրաքանչիւր ունկնդիր աշխատում էր մէկ բառ իսկ բաց չթողնել նրա ասածներից:

- Դաշնակցութեան միտքը մեզ հետ է, ասում էին երիտասարդները:
- Մեր անվիճելի առաքեալն է, — ասում էր Պապաչան:
- Ունի վիճելի առաջադրանքներ, բայց ընդհանուր առումով պարզատես ու իրատես է, — ասում էր Աբրահամը:

Աւելի մեծ էր տղաւորութիւնը շարքերում: Բոլորը առանձին հպարտանք էին զգում Ռոստոմի Բագու գալուստ պատճառով: Բոլորը գիտէին, որ դեռ շատ կնճիռներ առաջ պիտի դան, եւ Ռոստոմի ներկայութիւնը այդ կընճիռները լուծելու տեսակէտից փրկարար պիտի լինի:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԷԶ

Այս ժամանակամիջոցին մեր կուսակցութիւնը լծուած էր կազմակերպչական գործին թէ՛ քաղաքում եւ թէ՛ նաւթային շրջաններում: Գործը շատ էր: Ժողովները եւ միտինգները, մանաւանդ միտինգները խլում էին գործիչ ընկերների ժամանակը, եւ խանգարում շինիչ գործը: Միաժամանակ բոլոր կուսակցութիւններն էլ կազմակերպել էին իրենց պրոպագանդային դպրոցները, տեսարանական լսարանները եւ այլ դասընթացները՝ նպատակ ունենալով պատրաստել գիտակից ու գաղափարական երիտասարդութիւն:

Մենք՝ երիտասարդներս պահանջ դրինք, որ Ռոստոմը եւս դասախօսութիւններ կարդայ մեզ համար Հ. Յ. Դաշնակցութեան մասին: Եւ Կ. Կոմիտէի միջնորդութեամբ նա սկսեց իր դասախօսութիւնները:

Մենք՝ երեք ընկերներ, շատ արագ գրողներ, որոշել էինք գրի առնել նրա դասախօսութիւնները, ապա, միասին ճշգրտուց եւ իր վերջնական կարծիքը առնելուց յետոյ, հաւաքել: Շատ հետաքրքրական ձեւով սկսեց նա: Արդէն Եօթ-ութ դասախօսութիւն լսել էինք: Սակայն, իր տուած ահագին նիւթի՛ կուսակցական գործի մէջ ինքը բնաւ չկար: Նկատել էինք նաեւ, որ որոշ գործեր կատարուել էին առանց Կ. Կոմիտէի որոշման: Միաժամանակ հարցումներ էինք անում, թէ՛ այս կամ այն գործի ժամանակ ինքը որտե՞ղ

էր եղել: Ի հարկէ, նախապէս ճշդած էինք լինում Աբրահամից կամ Պապա-  
չուսից առեալ գործում Ռոստոմի մասնակցութիւնը:

Ռոստոմը իր սքանչելի Ժպիւղը դէմքին, խուսափողական պատասխան-  
ներ էր տալիս:

Օրը օրին Ռոստոմը դառնում էր մեր մտքերի վրայ իշխող: Չանազան  
կնճառտ խնդիրներ լուծելու համար, միշտ դիմում էինք նրան:

Առանձնապէս Ստեփան Շահումեանը, Ալեօշա Չափաօրիձէն, ըժ. Լ.  
Աթարէկեանը եւ այլ հակառակորդ կուսակցական ղեկավարներ հիացումով  
էին խօսում նրա մասին եւ յաճախ նրա հետ խորհրդակցելու էին գալիս:

Այդ ժամանակ զեռ ութերորդ թաղամասի (հայկական ամենամեծ  
թաղն էր) կոմիտէի նախագահն էի: Հրչէջ սպասարկութեան փողոցով դէպի  
աջ ու Բողջայա Մատակայա փողոցից այն կողմը թրքական թաղն էր սկըս-  
ւում: Գիտէի, որ Ռոստոմը մասնակցում էր Կ. Կոմիտէի ժողովներին: Բայց  
նա յաճախ գալիս էր եւ մեր թաղային կոմիտէի ժողովներին, հետաքրքրում  
էր նաեւ մեր վիճակով: Անշուշտ, նա դնում էր եւ միւս շրջանները: Ամէն  
տեղ կարելի էր նրան տեսնել: Սակայն, ամենից շատ նա լինում էր մարտիկ  
եւ մարտական գործը վարող ընկերների հետ: Պարզ էր, որ այս խնդրով նա  
առելի էր զբաղում: Գիտէի, որ նա ղեկավարում էր ձեռնառումներ պատ-  
րաստելու գործը:

Բայրախանսկի Նեւտեպրոփող ընկերութեան կառավարիչը՝ ընկ. Աե-  
տիս Աեւտիսեանը (զով, յայտնի դաշնակցական), հօրեղբորս գտեր ամուսի-  
նը, իր գործարանում սենեակներ էր տրամադրել այդ գործի համար: Եւ  
ոտմը շինող մասնագէտները Ստեփան Ստեփանեանի կրտսեր եղբայրներն  
էին՝ Հայկը եւ Խորէնը, որոնք աւարտել էին Վարչաւայի Պոլիտեխնիկումը  
եւ այնտեղ էլ կատարելագործուել էին: Չեմ յիշում թէ ինչպէս էին նրանք  
միացել այս գործին: Սակայն գիտեմ, որ խոր յարգանք ունէին դէպի Ռոս-  
տոմը եւ զարմանալի նուիրումովեամբ կատարում էին գործը:

Ռումբեր էին շինում մի քանի տեսակ: Չրահապատներ պայթեցնելու,  
բարձր տեղերից՝ պատուհանից, կոտորներից վար նետելու (թեւաօր), ամ-  
բոխ ցրելու համար սոսկալի դրդիւն առաջացնող եւ այլն: Այս բոլորը, ի  
հարկէ, յարմարեցում էին քաղաքային (քաղաքամէջի) կռիւների համար:

Թէ՛ կուսակցական շրջանակներում, թէ՛ Աեւտիսի տանը Հայկի եւ Խո-  
րէնի հետ յաճախակի հանդիպումներ էի ունենում Ռոստոմի հետ: Եւ այդ  
հանդիպումների շնորհիւ, շատ մօտիկից ճանաչեցի Ռոստոմին եւ անշուփ  
սիրեցի ու յարգեցի:

\*\*\*

Մարտի դէպքերին, երբ ազերները (կովկասեան թուրքերը), իրենց ղե-  
կավար Մուսաֆաթ կուսակցութեան զլխաւորութեամբ, յարձակուեցին հայ-  
կական թաղերի վրայ՝ աշխատելով գրաւել քաղաքը եւ իշխանութիւնն առնել  
իրենց ձեռքը, Բանուսրական Խորհրդի գործադիր կոմիտէն կորցրել էր իր  
զլուխը: Մուսաֆաթը, փոխանակ իր հարուածը հասցնելու իշխանութեան

կենտրոններին, կոտին տուեց սղգային ընոյթ եւ այժ ու ձախ սկսեց անդէն  
ու անպաշտպան հայեր կոտորել: Մեր կուսակցութիւնը, չնայած որ մեծ ու-  
ժեր դեռ չուէր, բայց անմիջապէս սկսեց կազմակերպել իր մարտական  
խմբերը եւ հրապարակ հանել: Այստեղ արդէն ակնյայտնի եղաւ, որ ռազ-  
մական գործողութիւնների ամբողջ ղեկավարութիւնը կենտրոնացել էր Ռոս-  
տոմի ձեռքը, որին եւ հլու հղատակում էին բոլոր մարտիկ ղեկավարները:

Դեռ նոր էր սկսուել մեր մարտական խմբերի յարձակումը, երբ Ռոս-  
տոմը նստած էր արդէն մեր թաղային կոմիտէի սենեակում՝ Վերինէ Պրի-  
ուստիայա եւ Ստանիսլաւսկայա փողոցները կտրող անկիւնի ներքնատանը եւ  
հեռախօսային դիւ հաստատող խմբի միջոցով կարգադրութիւններ էր անում:

Երբ լուր առաւ, որ հրչէջ սպասարկութեան կենտրոնը գրաւուած է  
մեր կողմից, մինչ այդ շատ մտայն ու մտահոյ Ռոստոմը ժպտաց:

— Այս մեծ թաղը այժմ անվտանգ է, — ասաց ու գնաց դէպի նոր դը-  
րաւուած գիւրքերը:

Ապա լսեցինք, որ Ռոստոմը վեցերորդ թաղամասի կուսակցական  
մարմնի գրասենեակումն էր: Սա հայոց հին եկեղեցու մօտիկում էր, թրչ-  
նամու ամենատեղ գիւրքերի դիմացը: Այստեղ մերոնք ունեցել էին շատ ու-  
ժեղ կռիւներ, որոնք վերջացել էին մեր յաղթանակով: Մերոնք գրաւել էին  
քաղաքային ինքնավարութեան շէնքը:

Նոյն օրը, կէս գիշերին, Ռոստոմը եւ Մարտին Շաթիրեանը եկան մեր  
թաղային կոմիտէի գրասենեակը: Ռոստոմը հարցրեց, թէ կա՞ն արդեօք մեր  
թաղում մեծ գատարկ շէնքեր՝ գերիներ պահելու համար, որովհետեւ նրանց  
թիւը կարող է հազարների հասնել:

Ընկերներս օգնութեան եկան եւ մենք մասնանշեցինք երեք շէնքեր,  
մէկը Նիժնի-Պրիուստիայա փողոցում, միւսը՝ Մագպիլննայա փողոցում,  
իսկ երրորդը՝ Ստանիսլաւսկայա փողոցի վերջում:

— Շատ լաւ է, — ասաց ինձ Ռոստոմը, — քեզ կը տանք մի խումբ  
շատ փատահելի դիմուորներ: Գերիները դանազան թաղերից կուղարկուեն  
քեզ, եւ դու, նրանց ընդունելով, կ'արձանագրես եւ քո գիմուորներով կ'ու-  
ղարկես այդ շէնքերը: Պարտիկներին խիստ անմիաս պէտք է պահել եւ ազատ  
արձակել հաշտութիւնից յետոյ: Նոյնպէս եւ այն թուրքերին, որոնք անդէն  
են եւ մեր դէմ չեն կոտել: Նրանց բոլորի կեանքը պէտք է պաշտպանենք:  
Ուտեստի խնդիրը կը կարգադրուի:

Օրեր տեւեցին կռիւները: Ահագին մտահոյութիւն էր մեզ համար գե-  
րիներին անմիաս պահելու խնդիրը, մանաւանդ կերակրելը: Բայց գործը  
տարուեց ամենայն բարեխոյճութեամբ, Ռոստոմը ինքր օրը մի երկու անգամ  
այցելում էր գերիների հանրակազարանները:

Հաշտութիւն կնքելուց յետոյ, Հայոց Ազգային Խորհրդի մի քանի ան-  
գամները, նախագահ Աբրահամ Գիւլխանդանեանը, Իսպոլկոմի նախագահու-  
թիւնը, պարսից հիւպատոսը իր պաշտօնեաներով եկան հանրակազարաննե-  
րը, հարցուփորձ արին մեր գերիներին, որոնք անասմանօրէն գոհ էին մե-  
զանից, յատուկ արձանագրութիւն կազմեցին եւ ադատեցին բոլորին: Հա-  
րիւրաւոր գերիներ բռնում էին Ռոստոմի, Աբրահամի եւ մեր (որ յաճախ

պատահել էին) ձեռները եւ համբուրում: Շատ շատերը արտասուում էին: Լաց եղաւ նաեւ պարսից հիւպատոսը:

Կոիւր վերջացաւ թուրքերի պարտութեամբ: Համեմատաբար, մենք շատ շնչին գոհերով պրծանք: Ռոստոմի հմայքը աւելի բարձրացաւ:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Բազուի շրջանի Հ. Յ. Դաշնակցութեան Պատգամաւորական Ժողով գումարուեցաւ Տեխնիքական դպրոցի սրահում: Ժողովի ամենակարեւոր խնդիրը այն էր, թէ պէ՞տք էր Բազուն յանձնել Ադրբէյջանի կառավարութեան թէ ոչ:

Անդրկովկասը յեղափոխութիւնից յետոյ կարուել էր ուսական կենտրոնից եւ ստեղծուել էր Անդրկովկասի Դաշնակցային կառավարութիւն՝ յանձին Անդրկովկասի Աէյմի: Աէյմում Վրաց Սոցիալ-Դեմոկրատները դաշնակցեւ էին Ադրբէյջանի ազաների եւ խաների կուսակցութեան՝ Մուսաֆաթի հետ: Եւ սրանք միասին քիչ ոճիրներ չգործեցին հայ ժողովրդի դէմ: Այսպէս, փոխանակ միասին պաշտպանելու ամբողջ Անդրկովկասը, նրանք լքեցին հայերին, դուրս եկան Աէյմից եւ իրենց շրջանները անկախ յայտարարեցին: Չխենկելու անհատական հրամանագիր-հեռագրով Կարսը յանձնուեց թշնամուն:

Երբ կազմուեց անկախ Ադրբէյջանի կառավարութիւնը, Մուսաֆաթականները անցան իշխանութեան գլուխ՝ Խան-Խոյսկու նախագահութեամբ: Նրանք պահանջում էին, որ Բազուն իրենց յանձնուի:

Խորհրդային իշխանութիւնը ոչ մի արամադրութիւն ցոյց չէր տալիս Բազուն յանձնելու ազերներին, որովհետեւ Ռուսաստանը չէր կարող ապրել առանց Բազուի նաւթին: Բազուն համայն Ռուսաստանի գոյութեան յենարանն էր ալդ տեսակէտից: Որով՝ «Բազուն Ռուսաստանինն է» կարգախօսը դառել էր Բազուի բանուորութեան մտասեւեռումը:

Ազերները սկսեցին ճնշումներ գործ գնել Բազուի հայութեան վրայ: Նրանք դիմեցին նաեւ Հայոց Ազգային Խորհրդին, որ Բազուն յանձնուի իրենց: Նրանք ասում էին.

«Եթէ հայերը իրենց հաւանութիւնը տան, յետ քաշեն իրենց ուղղակի օւժը եւ իրենց կողմնակցութիւնը յայտնեն Բազուն ազերներին յանձնելու, Բանուորական Խորհուրդը ոչինչ անել չպիտի կարողանայ, մանաւանդ որ Ռուսաստանից ուղղակիան ոչ մի օժանդակութիւն չի ստանում»:

Հայոց Ազգային Խորհուրդը չէր կարող վճռել այս խնդիրը՝ առանց Հ. Յ. Դաշնակցութեան կարծիքն առնելու: Սոցիալիստ-Յեղափոխականները եւ Սոցիալիստ-Դեմոկրատները հայկական հատուածը անհամբեր սպասում էին Հ. Յ. Դաշնակցութեան որոշման, իսկ իշխանութեան գլուխ կանգնած բոլշեւիկները մեր վճռից կախուած էին համարում Բազուի ճակատագիրը, քանի որ, եթէ մենք լքէինք նրանց, իրենք պաշտպանուելու ոչ մի հնարաւորութիւն չպիտի ունենային:

Ժողովին նախագահում էին ընկերներ Յ. Քաջագինունին եւ Սարգիս Արարատեանը: Ի հարկէ, Քաջագինունին աւելի մեծ ազդեցութիւն ունէր ընկերների վրայ: Բայց պիտի արձանագրեմ, որ երիտասարդութեան մեծագոյն մասը, յարգանք ունենալով հանդերձ նրա հանդէպ, համակարծիք չէր նրա հետ: Նա համարում էր խիստ պահպանողական: Բայց նա մասնակցում էր բոլոր նիստերին մեծ եռանդով, իր համոզումները պաշտպանում էր յամառօրէն եւ աշխատում էր իր համոզումները ընդունել առ ընկերներին: Սակայն, երբ հարցը մտաւ իր վերջնական փուլի մէջ ու դուրեց քուէարկութեան, նա մնաց ձեռնպահ, որով՝ դժգոհութիւն առաջ բերեց իր դէմ: Ի հարկէ, այս կեցուածքը չէր խանգարում, որ նա մնար հաւատաւոր դաշնակցական եւ յարգանք ներշնչէր իր շրջապատին:

Ուրիշ տիպի մարդ էր Սարգիս Արարատեանը: Սա մեր՝ երիտասարդներին տեսարանն էր, լաւ խօսել գիտէր: Պատահում էր յաճախ, որ պրոպագանդայի դպրոցից կամ միջկուսակցական փիճարանական հաւաքոյթներից յետոյ, երիտասարդ ընկերները մինչեւ ուշ գիշեր նրան պահում էին զբոսայի համար, եւ նա անտրտուն շարունակում էր զրոյցը, չնայած որ առատօտեան շուտ գործի գնալու պարտադրանքի տակ էր լինում: Ինչ խօսք որ, Սարգիսը լաւ նախագահ էր: Այնքա՞ն խելօք եւ ճարպիկ ձեւակերպումներ կ'անէր եւ ա՛յնպիսի վարպետ ձեւով կր տանէր ժողովը, որ սուր բախումների առաջն էր առնում եւ սուր վէճերը հմտօրէն լուծում:

Ժողովի գլխաւոր հարցը, ինչպէս ասացի, Բազուն Ադրբէյջանի կառավարութեան յանձնելու կամ չյանձնելու խնդիրն էր: Իրար դիմաց կանգնած էին երկու իրար խաչաձեւող տեսակէտներ, սրունք պաշտպանում էին երկու խոշոր դէմքեր՝ Ռոստոմը եւ Աբրահամ Գիւլիսանյանսանը:

Աբրահամի տեսակէտն էր՝ քանի որ Դաշնակցութիւնը ազգերի անկախութեան պաշտպան է, մենք չէ, որ պիտի ընդդիմանանք Ադրբէյջանի հողը իր տէրերին յանձնելուն: Մեր դարաւոր հարեւանութիւնը եւ աւագայի կենակցութեան պարագան պէտք է թելադրեն մեզ, որ մենք աջակցինք մեր հարեւան ժողովրդին իր անկախութեան տիրանալու: Մեր ընդդիմութիւնը թշնամութիւն պիտի առաջ բերէ մեր միջեւ եւ կարող է ազդեցութիւն ունենալ ամբողջ Ադրբէյջանի հայութեան համար, որ զանցատեղի թիւ չի կազմում:

Այս տեսակէտը պաշտպանող բազմաթիւ ընկերներ կային, որոնք լրացնում էին Աբրահամի բերած պատճառարանութիւնները:

Ռոստոմը միանգամայն հակառակ տեսակէտի վրայ էր կանգնած: Նա գտնում էր, որ թէեւ դադափարականօրէն Աբրահամը ճիշդ էր, բայց գործնականօրէն, այսինքն՝ հայ ժողովրդի Ֆիզիքական գոյութեան եւ հայկական հարցի լուծման տեսակէտից ազդեցութիւն հետեւանքներ պիտի ունենայ, եթէ մենք այժմ Բազուն Ադրբէյջանի թուրքերին յանձնելու վճիռ տայինք:

«Մենք գիտենք, — ասում էր Ռոստոմը, — որ Ադրբէյջանի կառավարութեան թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է որ գծում է ազրբբէյջանցիների անկիւղը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակէտից պարզ է: Տաճիկները ձգտում են հայ ազգի ֆիզիքական ոչնչաց-

ման եւ արդէն մէկ միլիոն սրածել են եւ մայր երկիրը աւերել: Նրանք նոյն դիտաւորութեամբ արշաւեցին Արեւելեան Հայաստանի վրայ, ամայացրին Կարսի շրջանը, Շիրակի շրջանի կէսը եւ շարունակում են իրենց յառաջխաղացումը՝ առանց պատճառի: Եթէ Սարղարապատի, Ղարաքիլիսայի ճակատներում եւ այլուր հայ ժողովրդի բազուկը նրանց չկանգնեցնէր եւ պարտութեան չմատնէր, այսօր ոչ մի հայ մնացած չէր լինի Արարատեան Գաւառում, եւ սրբուած կը լինէր ոչ միայն Երեւանը, այլե՛ւ Չանգեղուրը: Վաղը, հենց որ բացուեն Բագուի դռները Աղբրէյջանի բանակի առջև եւ տաճիկները տեղաւորուեն Բագուում, Խան-Խոյսկու ամբոխը եւ տաճիկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաեւ Բագուի ու Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Չանգեղուր եւ Երեւանը ոտնառակ պիտի տան: Ո՞վ է ընդգիծանալու այդ սանձարձակ մարդակերներին: Եւ ահա այն ժամանակ ազգային-ազատագրական գաղափարը մեր գերեզմանը պիտի դառնայ: Ոչ մի հաւատ Թիֆլիսում երեք ազգերի դաշնը քանդող եւ տաճիկների գործը կատարող ազերներին: Ոչ մի զիջում մեր միասնական ճակատը ճեղքող եւ թշնամուն մեր երկիրը բերող տաճիկների գործակալներին:

«Միաժամանակ — պատճառարանում էր Ռոստոմը — պիտի նկատի ունենալ, որ հայութիւնը երբեք այնքան ուժեղ բռունցք կազմած չէ, այնքան մեծ թուով ուժ եւ անսպառ ուղղամթերք ամբարած չէ, որքան այսօր Բագուում: Աղբրէյջանին յանձնել Բագուն՝ նշանակում է սրածուլեան տալ 4000ի հասնող հայ երիտասարդ ուղղական ուժը, որ Գանձակի, Ղարաբաղի, Չանգեղուրի եւ Երեւանի շրջանների երիտասարդութիւնն է, ուստական ուղղամթերք եկած հասած Բագու եւ որը չի կարողանում անցնել իր բնակավայրերը: Եթէ այս կենդանի ուղղական ուժը կուրի թշնամու դէմ, յետքէ տաճիկներին եւ իր ուղղամթերքով մանի հայկական դուստները, դա մի անչափելի օժանդակութիւն կը լինի մեր մանուկ հանրապետութեան: Բացի այդ, պատերազմը դեռ հաշուեյարդարի չի ենթարկուել: Տաճիկը դեռ պատերազմող կողմ է. պէտք է ժամանակ շահիլ, մինչեւ որ հաշտութիւն կնքուի եւ համեմատական խաղաղութիւն ստեղծուի նաեւ հայութեան համար: Այժմ տաճիկ բանակը եւ թուրք ամբոխը, սանձարձակ ու անպատասխանատու, չոքել են մեր կրծքին եւ, եթէ այսօրուան մեր ուղղական ուժը ցրուի, նրանք պիտի յօշոտեն մեզ»:

Այս պատճառարանութեամբ Ռոստոմը առաջարկում էր պատերազմի մէջ մտնել Աղբրէյջանի թուրքերի ու տաճիկների դէմ եւ քշել ու հետապնդել թշնամուն եւ հասնել մինչեւ երկրի սահմանները: Իսկ եթէ չյաջողինք անել այդ, կ'ամբանանք Բագուում, կը վտանգենք Աղբրէյջանի ամբոխի եւ տաճիկ բանակի թիկունքը, որով՝ կ'արգիլենք նրանց խժոժութիւնները հայաշատ միւս գաւառներում:

Միաժամանակ Ռոստոմը յիշեցնում էր ե՛ւ այն, որ ուստական յեղափոխական կառավարութիւնը իր բանակի եւ երկրի շահերի համար օգնութեան պիտի հասնի Բագուին եւ հնարաւորութիւն պիտի տայ պաշտպանուելու բազուցիներին:

Ընկերների, մանաւանդ երիտասարդ ընկերների ճնշող մեծամասնութիւնը կողմնակից էր Ռոստոմի տեսակէտին:

Ղեկավար ընկերներից Ռոստոմի տեսակէտի վրայ էր կանգնած նաև Սարգիս Արարատեանը: Նա առաջարկում էր մեր բանակը շարժել առաջ եւ դրուել Գանձակը, ապահովել ամբողջ ճանապարհը, ապա Բագուի ամբողջ հայութիւնը, նաև Շամախու շրջանի հայերը եւ առհասարակ ճամբու վրայի հայութիւնը ամբողջ ուղղական ուժով եւ ուղղամթերքով մտցնել մեր նորաստեղծ հանրապետութեան սահմանները՝ Բագուն թողնելով պաշտպանելու անսական կենտրոնական կառավարութեան:

Սարգիսը շատ անկողմնակալ ձեւակերպեց երկու տեսակէտները եւ քուկարկութեան գրեց: Չայների զգալի մեծամասնութեամբ անցաւ Ռոստոմի տեսակէտը:

Նոյն գիշեր Արրահամը Հայոց Ազգային Խորհրդում դրել էր Խան-Խոյսկու կառավարութեան պատասխանելու հարցը: Եւ որոշուել էր մերժել նրանց: Սկսուեց կոխիւր: Եւ Հ. Յ. Գալստիանի Պատգամաւորական Ժողովին մէջ կուսին կատարի հակառակորդ Արրահամը գլխաւորեց Բագուի կուսուղ հայութեան:

### ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՑ ՄԻՆՁԵՒԻ ԲԱԳՈՒ

Մերոնք հարուածային կարգով առաջացել էին եւ զրուել Գեօզայ քաղաքը, որ թշնամին թողել էր կէսօրին, ճաշի ժամանակ, բոլոր բնակարաններում ճաշը պնակների մէջ թողած եւ կաթսաները օձախների վրայ:

Օգնական ուժեր ստանալով՝ թշնամին մեղ նեղել էր: Սակայն, մերոնք չպիտի նահանջէին, եթէ թշնամին օգտագործած չլինէր խմելու ջրի խնդիրը: Նախ՝ ոչ մի հնարաւորութիւն չկար շարժուել երկաթուղազծով, կամ խճուղիով, սրովհետեւ թշնամին քանդել էր ջրերի թումբերը եւ ողողել ամբողջ պաշտավայրը՝ անանցանելի դարձնելով այն: Մեր զօրքը ստիպուած էր եղել շարժուել լեռնավայրով: Սակայն, այստեղ էլ թշնամին կտրել էր բարձրից եկող բոլոր առունները եւ մեր բանակը թողնել առանց ջրի այդ տաք շրջանում:

Մերոնք նահանջել էին մինչեւ Կարամարեան: Սակայն, հնարաւոր չէր եղել կարգադրել ջրի խնդիրը: Կարամարեանում զինուորների եւ սպաների մէջ ծարաւից խելագարուելու դէպքեր էին եղել, ուստի եւ հրաման էր արբուել զօրքին նահանջելու:

Մենք՝ Բանուօրական Խորհրդի Գալստիանի ֆրակցիայից մի խումբ երիտասարդներ, Կ. Կոմիտէի թոյլատուութեամբ, գնացել էինք ճակատ՝ բժշկականախտարական օգնութիւն հասցնելու համար բանակին եւ հսկելու համար նաև պարենաւորման զործին: Մինչեւ Շամախի եւ դեռ մինչեւ Սաչեան ամէնուրեք կազմակերպչական աշխատանքներ կատարելով՝ հասանք Աղսու գետի ափին համանուն աւանը: Այստեղ իրազեկ եղանք Կարամարեանում մերոնց վիճակին:

Գիտէինք, որ մեր բանակը, նահանջելով Կարամարեանից, պիտի անցնէր մի հսկայական անջրդի տարածութիւն եւ յոգնած ու ծարաւ զինուորների համար այդ պիտի լինէր մահացու վտանգ, որովհետեւ նրանց չպիտի թոյլատրուէր գետից ջուր խմել: Բժշկական խմբակը հաւաքեց իր բոլոր ուժերը եւ մեզ էլ աջակցութեան հրաւիրեց: Մեծ թուով թիթեղի ջրաման թէյ-յամանների տակ կրակ արինք եւ ջուր եռացրինք, որ հասնող զինուորներին թէյ տանք:

Արդէն սկսեցին գալ հատուկոր զինուորներ, յոգնած, ծարաւ, ուժասպառ: Քանի եկուորները քիչ էին, հնարաւոր էր կարգը պահպանել եւ թէյ պատրաստել նրանց համար: Բայց երբ զինուորների մեծ զանգուածը հասաւ, թուժ էր թէ դժուար պիտի լինէր նրանց պարտադրել, որ անմիջապէս ջուր չխմեն:

Ահա հենց այդ ժամին, երբ գետափին գտնուող մէկ այգում ծառերի տակ նստած էինք, ձին թափ ու քրտինքի մէջ կորած հասաւ ուսանող Սոկրատը, վար թռաւ ձիուց ու ասաց.

— Ռոստոմը դալիս է, ծարաւից ձեռքից կը գնայ, ջուր հասցրէ՛ք:

Չորս հոգի, որտեղ եւ ուժ մօտ որ զինուորի ջրաման տեսնէք, ջուր լցրինք, կախեցինք վզներովս, թռանք ձիերի վրայ ու քշեցինք Կարամարեան տանող ճամբով:

Տաք, այրող արեւ էր: Բաւական հեռացել էինք Աղսուից, երբ սկսեցին երեւալ հատուկոր զինուորներ, յոգնած, ոտները հազիւ քարշ տալով: Տղաներից մէկին թողինք հանդիպած զինուորներին մի-մի կում թէկուզ ջուր տալու, իսկ մենք երեքով քշեցինք առաջ:

Հեռուից երեւաց ձիւորների մի խումբ, որի առջևից գալիս էր մէկը՝ գլխին սպիտակ երեսարբիչ, գլխարկի տեղ, Ռոստոմն էր: Երբ հասանք, Ռոստոմը գարմացած նայեց մեզ, կարծես ուժ չունէր հարցնելու թէ՛ ինչո՞ւ էինք եկել:

— Ջուր ենք բերել:

— Հա՞, տուէ՛ք:

Վերցրեց առաջին ջրամանը, թռաւ ձիուց վար եւ, մօտենալով քայլող զինուորներին, հերթով տուեց ջրամանը զինուորներին: Մի երկու կում հազիւ էր թոյլ տալիս խմելու, ջրամանը խկոյն յետ էր քաշում եւ դէմ տալիս մէկ ուրիշի շրթներին: Այսպէս մեր մօտի բոլոր ջրամաններից հերթով խմցրեց ծարաւ զինուորներին:

— Դու չխմեցիր, — դժգոհեց մերոնցից մէկը, — էլ չունենք:

Ժպտաց, ձեռին մի կիսատ ջրաման ունէր, դրեց շրթներին եւ, հազիւ մի կում խմած, ջրամանը տուեց իրեն հետ եկող ձիւորներին:

— Բերաններդ թրջեցէ՛ք, — ասաց ու թռաւ ձիուն վրայ:

Ճանապարհին նա մօտենում էր յոգնած զինուորներին եւ խրախուսում: Երբ բաւական հեռացել էինք եւ մեր շուրջը մարդ չէր երեւում, ծոցիցս հանեցի մի թաքցրած ջրաման եւ մեկնեցի նրան:

— Խմի՛ր, վերջապէս, — ասացի:

Նայեց ինձ, գոհունակութեան ոչ մի արտայայտութիւն: Ջրամանը հա-

զիւ էր զրկել շրթներին, երբ նկատեց, որ խոտերի մէջ պառկած է մի զինուոր: Վար թռաւ ձիուց, չօրեց, բարձրացրեց զինուորի զլուխը եւ ջուր տուեց խմելու: Ձինուորը խմեց ու բացեց աչքերը:

— Մի կում էլ, — խնդրեց:

Նորից տուեց: Ձինուորը խմեց եւ նայեց Ռոստոմին:

— Էս իսկապէս Ռոստոմավայել էր, — ասաց, ձեռքը մեկնեց Ռոստոմին եւ, նրա օգնութեամբ ոտքի կանգնելով, բացապանչեց. — Հիմա տեղ կը հասնեմ:

Ու ճամբայ քնկաւ:

Դատարկ ջրամանը Ռոստոմը մեկնեց ինձ: Այժմ գոհունակութեան ժըպիտ կար դէմքին: Մտրակեց ձին, բայց շատ մտահոգ էր: Ամբողջ ճամբին ոչինչ խօսեց:

Երբ տեղ հասանք, անմիջապէս գնաց հրամանատարութեան խրճիթը: Դուրս եկաւ շատ մտայ: Իր մօտ կանչեց մեր խմրից երկու հոգու ու ասաց.

— Մենք պիտի նահանջենք մինչեւ Բագուի շրջակայքը: Այս շրջանում ամբանալու հնարաւորութիւն չկայ, ապա տնապատ է մինչեւ Բագու: Անմիջապէս այս ճամբով կը գնաք եւ կը հասնիք նահանջող Չարդ բրիգադային: Կր տեսնուիք հրամանատար եւ Պահլաւունուն հետ: Ստացած կը լինի նա պաշտօնական հրաման թէ ոչ՝ նշանակութիւն չունի, իմ անունից կ'ասէք նըրան, որ նա իր բրիգադայով պէտք է մնայ յետնապահ եւ պաշտպանի նահանջող ժողովուրդը: Գաւառի ամբողջ հայութիւնը տեղահան ենք անելու եւ այս ձևով բարձրացնելու ենք Սաղիան, ու այնտեղից մինչեւ Բագու: Մինչեւ վերջին մարդը պէտք է նահանջի կոտելով եւ պաշտպանելով նահանջող ժողովուրդը: Ուրիշ որեւէ օգնական զորամաս նա չպիտի ունենայ: Ուրեմն, թո՛ղ դատաւորի իր ուժերը իր հայեցողութեամբ: Լուրը կը տաք, կ'աննէք դրական պատասխանը եւ անմիջապէս կը վերադառնաք:

Տղերքը թռան ձիերի վրայ: Մօտը մնացել էինք չորս հոգի: Քարտէսը դրեց ծնկներին եւ ասաց.

— Կ'անցնէք գետը եւ կը բարձրանաք դիմացի լեռան ճամբով: Բարձրանդակի վրայ փոսած են հայկական զիւղերը, Մադրասան կենտրոնում: Երեք հոգի բաւական է: Սոկրատը կը մնայ մօտս: Երեքդ կը բաժանուէք. մէկը աջից, մէկը ձախից եւ մէկն էլ կենտրոնից՝ կ'անցնէք բոլոր զիւղերը եւ տեղահան անելու հրահանգ կը տաք: Իրար կը հանդիպէք վերջին զիւղում եւ միասին յետ կը գաք: Առաջին զիւղերը անմիջապէս պէտք է շարժուեն, որ յետեւից եկողները խճողում չառաջացնեն: Թո՛ղ վերցնեն հետները, ինչ որ կարող են: Աշխատեցէ՛ք, որ խուճապի չմատնուեն: Միակ ճամբան այս է: Պէտք է իջնեն այն կողմից, անցնեն գետը եւ այս գծով բարձրանան Սաղիան: Աւելի աջ արդէն անապահով կը դառնայ մի օրից: Դէ, ու շանալ չի կարելի: Քնել էլ չէք կարող, գիշերը պիտի ճամբայ կտրէք:

Անցուղարձին շատ մօտիկ կանգնած էինք եւ լաւ գիտէինք, որ եթէ Ռոստոմը տեղին վրայ չլինէր, ոչ ոք պիտի մտածէր Շամախու գաւառի հայ զիւղացիութիւնը տեղահան անելու եւ նրա նահանջը պաշտպանելու մասին:

Տեղին է ասել, որ հայ զիւղացիութիւնը, գտնուելով դէպքերից հե-

ոու, միանգամից անիրազեկ էր անցուղարձից եւ չէր հաւատում մեզ: Մենք ուժով համոզեցինք նրանց եւ միայն, երբ մէկ գիւղ տեղից շարժուեց, միս- ներն էլ հետեւեցին նրան: Այնուամենայնիւ, տեղահանութիւնը հապճեպ ե- ղաւ: Տնտեսագէտ շատ կարող մեր այլ գաւառը ահապին հարստութիւն լքեց:

Երբ ժողովրդի մի մասը իջել էր յետը եւ անցել Աղսուն ու բարձրա- նում էր դէպի Սաղիան, միս կէսը կտրուելու վտանգի էր ենթարկուել: Ե. Պահլաւունու ջոկատը հասել էր եւ կտրել արչաւոց տաճիկների ճամբան ու փրկել մի քանի տասնեակ հազար հայեր: Մինչեւ ժողովրդի դէպի Սաղիան վերելքը ապահովելը, այդ ջոկատը յամառ ու քաջարար կոտել էր թշնամու դէմ եւ կոտելով բարձրացել Սաղիան:

Այստեղ, վերելքի ծայրին դիրք մտած, Չարդ բրիգադան պահեց թըշ- նամուն աւելի քան երկու օր, մինչեւ որ մենք ամբողջ ժողովուրդը անցկա- ցրեինք դէպի անապատ:

Պէտք է արձանագրել, որ Ե. Պահլաւունին իր զօրքով հերոսարար պաշտպանեց նահանջող ժողովուրդը: Իր քաջարի գիւնուորները բազմաթիւ սքանչելի դրուագներ արձանագրեցին: Բազուն զրաւելուց յետոյ, տաճիկ սպաները հիւանդանոցներում եւ գերի ընկած հայ գիւնուորների մէջ որոնել էին Չարդ բրիգադայի գիւնուորներին՝ վրէժխնդիր լինելու համար: Չէր սը- խալուել Ռոստոմը իր ընտրութեան մէջ: Երիտասարդ գիւնուորական Ե. Պահ- լաւունին լիալի արդարացրեց իր վրայ դրուած յոյսերը:

Նահանջի մեր ճանապարհին, Սաղիանից դէնը, բոլոր գիւղերը բռնել էին նահանջի ճամբան:

Մեր խումբը Սաղիանում ի մի եկաւ եւ շարժուեց դադթող ժողովրդի հետ: Արդէն զրազուում էինք՝ առաջին օգնութիւն հասցնելով հիւանդներին: Անօգնական կանանց ու երեխաների համար փոխադրական միջոցներ էինք ձարում, եւ այլն: Գործը շատ էր, մենք՝ քիչուոր:

Ռոստոմը ժողովրդի մէջ էր շարունակ: Երբեմն յետ էր մնում, տես- նում մեզ հետ, հարցափորձ անում ու նորից անյայտանում:

Մի փոքրիկ գետակի ափին էինք: Ժողովրդի վերջին մասն էր հան- դրատանում: Մեզանից հեռու երկու գիւղի ժողովուրդ էր հանգստանում: Ճա- շից յետոյ հրաման ստացանք շարժել ժողովուրդը, քայլել ամբողջ գիշերը եւ առաւօտեան հասնել անապատի եզրին գտնուող Մարկանների գիւղը, ուր պիտի հանգստանայինք մինչեւ կէսօր եւ կարէինք անապատը:

Գիտէինք, որ Ռոստոմը մնացել էր յետեւում:

Գետակի ափին շարուելով՝ օգնում էինք ժողովրդին անցնելու գետա- կը: Նրանց, որ սայլ կամ ձի չունէին, կամ նստեցնում էինք ուրիշի սայ- լերը, կամ չլինելու դէպքում մեր ձիերով էինք անցկացնում:

Ռոստոմը հասաւ մեզ: Ոտով էր: Բոլորս մնացինք շուարած:

— Ինչո՞ւ էք ոտքով, — հարցրինք:

— Ձիս մի հիւանդի տուի: Վերջին կայանն է, կը քայլեմ:

Մի քիչ գրուցեցինք կացութեան մասին: Ասաց, որ ինքը առաջ է ընկ- նում եւ փորձեց նստել մի սայլ՝ ջրից անցնելու համար: Մի անմամն ձի ու-

նէի տակս, ցատկեցի վայր եւ սանձը տուի Ռոստոմին:

— Բազուում ձիս կ'ուզեմ, — ասացի:

— Հապա դո՞ւ, — ժպտաց նա:

— Յոնէ՛, — կանչեցի, — կն սատկածը բեր:

Յոնէն բերեց մեր բռնակիրը, մի սատկած ձի: Վերցրի սանձը:

— Էս էլ իմ ձին, — ասացի:

Գիտէի, որ եթէ չհամոզուէր, որ ձի ունեմ, ձիս չէր վերցնի:

— Արի փոխենք, — ասաց Ռոստոմը՝ նորից ժպտալով:

— Ոչ, — ասացի, — սա եթէ ինձ չկարողանայ բերել, մենք շատուոր ենք, մէկի թարքին կը նստեմ:

Հեռում խճողում էր երևում: Ճիշ ու ազազակ լսուեց: Ռոստոմը թուս ձիու վրայ, անցաւ գետակը եւ քեց սառջ:

Էլ եկուորներ չկային: Մենք էլ անցանք գետակը:

Արդէն մութն ընկնում էր: Գիտէինք, որ տաճիկները այս գծով մեզ չպիտի հետապնդէին: Դեռ չէր երևում Չարդ բրիգադան, որ շատ հեռում նահանջելով գալիս էր յետեւից: Մութին հետ մանր անձրեւ սկսեց: Նոր հնձած արտերի մէջ էինք ընկել: Ձիերը խրում էին: Իջանք ձիերից եւ սկը- սեցինք քայլել: Համ թըջում էինք, համ ցելի մէջ կորչում: Ստի կամ ցո- բնի խուրձերի կամ դէպի հասնելիս այրում էինք, չըջան կազմում եւ աշ- խատում չորացնել մեզ, սպա շարունակում մեր ճամբան:

Լոյսը չբացուած՝ հասանք Մարկանների գիւղը:

Յիստա ու թաց էինք բոլորս էլ: Փորձեցինք չորացնել մեր շորերը, բայց չյաջողեցինք: Գիւղը երկուսի բաժանող լայն փողոցում եւ գիւղից դուրս, գաշտերում, հանգստանում էր ժողովուրդը:

Արևը ծագելուս պէս մտածեցինք մեզ չորացնել արևի ջերմութեամբ: Պատկել էինք գետինին, ընկած մէջքի, կողքի, փորի վրայ: Սա վարակիչ ե- գաւ: Փողոցի ամբողջ երկայնքին եւ գաշտում բոլորը նոյն միջոցին՝ դիմե- ցին: Յոգնած մարդկանց համար սա կրկնակի շահաւէտ էր:

Յանկարձ աղաներից մէկը ձայն տուեց.

— Տղանե՛ր, նայեցէ՛ք, Ռոստոմն էլ է իրեն չորացնում:

Գլորուելով հասանք իր մօտ: Նստեց: Ոչ միայն թըջուած էր, այլևս մինչեւ ծնկները ցելի մէջ էր: Նայեց բոլորիս:

— Լա՞ւ էք: Հիւանդ ունի՞ք, — հարցրեց:

Նայեց ինձ ու ժպտաց:

— Ինչո՞ւ այս վիճակումն էք, — հարցրի:

— Ձեզանից ոչ մէկը ինձանից լաւ վիճակում չէ, — ասաց:

— Այո՛, բայց մեր ձիերը հալ չունէին, իսկ ձեզ հրեղէն ձի էինք տը- ւել, — ասաց մէկը մեզանից:

— Այո՛, բայց կն ծերունին ոտքով էր մնացել: Դուք նրան չէիք օգնել: Հասկացանք, որ խօսքը եպիսկոպոսի մասին էր, որը եկել էր ճակատ եւ որի հետ մենք սուր վէճ էինք ունեցել թիկունքում:

— Թո՛ղ նա զոհ մնայ, որ կենդանի է մնացել, շնորհիւ Ա.ի միջնոր- նորդութեան, — անհամարձակ ասաց թագուոր:

- Այդ մենք քաղաքում կը քննենք, — ասաց Ռոստոմը, — նա գանգա-տաւոր է ձեզանից :
- Ախր ձին արուած էր ձե'զ, — ասացի :
- Ես էլ յարմար համարեցի տալ նրան, — հարցը փակեց Ռոստոմը :

\*\*

Ճաշի մօտ արդէն ժողովուրդը, հազիւ մի բան կերած, սկսեց շարժուել :

Պիտի կտրէինք անջրդի անապատը տաք արևի տակ : Մէկ ընկերոջ հետ խորհրդակցելով՝ որոշեցինք Ռոստոմին բեռնատար ինքնաշարժով ճամբել, սրպէսզի մինչեւ Խուրդալան ստբով չքայլի :

Հեռախօսային կապի մի բեռնատար ընկել էր աչքովս : Գնացինք ու գտանք նրա վարիչին և սպային, որի տրամադրութեան տակ գտնուում էր բեռնատարը : Ոչ սպան էր ծանօթ և ոչ էլ մեքենաւարը : Խօսեցինք սպայի հետ Ռոստոմին տանելու մասին : Սպան, որ ռուս էր, ուրախութեամբ համաձայնուեց և կարգադրեց մեքենաւարին վերցնել Ռոստոմին, իսկ ինքը դեռ պիտի մնար :

Պայմանաւորուեցինք մեքենաւարին հետ, որ մինչեւ Խուրդալան, ուր էլ լինի, ինչ էլ լինի, ինքնաշարժը չկանգնեցի և թոյլ չտայ, որ Ռոստոմը իջնի վայր : Մեքենաւարը խօսք տուեց :

Եկանք Ռոստոմի մօտ :

— Ամբողջ ճանապարհին չէք քնել, ասացի, շատ յոգնած էք երևում : Ձին ձեռքից տուել էք, իսկ մենք վատահելի ձի չունենք : Եկէք, ձեզ ճամբենք բեռնատարով : Ուր էլ ցանկանաք, կարող էք իջնել ցած, մենք ձեզ կը հասնենք :

Ռոստոմը մտածեց :

— Աւելի լաւ է ձեզ հետ լինեմ, — ասաց :

— Բայց մենք վերջինը պիտի շարժուենք, իսկ առաջամասում կամ կենտրոնում ի՞նչ է կատարում, լուր չունենք : Ժողովրդի մի մասը լուսաբացին է սկսել շարժուել :

Ռոստոմը կարծես դեռ տատանուում էր, երբ բեռնատարը կանգնեց մեզ մօտ :

— Ընկեր կոմիսար, — դիմեց նա ինձ, — ո՞վ է գալու ինձ հետ :

Պայմաններից մէկն էլ այն էր, որ մեքենաւարը իբր թէ չէր ճանաչում իր ճամբորդի ով լինելը :

Ռոստոմը հասկացաւ, որ նախապէս խօսել էինք մեքենաւարի հետ :

— Վեր կացէք, ընկ. Ռոստոմ, ահա և բեռնատարը :

Չորս կողմից վրայ տուինք, որ նա շատ յոգնած է, որ ինքնաշարժով շուտ տեղ կը հասնի, և, թեւը վերցնելով, ուղղակի ուժով տեղից բարձրացրինք ու օգնեցինք նրան բարձրանալու բեռնատարի վրայ :

— Ժիվէյ (չուտով), — ասացի մեքենաւարին, — բարի ճանապարհ :

Բեռնատարը շարժուեց : Ռոստոմը, որ մի քիչ կանգնած մնաց, երե-

ւի չկարողացաւ պահել հաւասարակշռութիւնը, նստեց : Երբ բոլորովին մեր տեսողութիւնից հեռացաւ, հանդիստ չունչ առինք : Ճանապարհին նա պահանջել էր, կանգ առնի ինքնաշարժը և ինքը վայր իջնի : Մեքենաւարը մերժել էր : Յետոյ, երբ Ռոստոմը բարկացել էր վրան, մեքենաւարը պատասխանել էր :

— Եթէ ձեզ ցած իջնենմ, կոմիսարը ինձ կը զնդակահարի : Խիստ և կտրուկ հրաման է արուած ձեզ հասցնել մինչեւ Խուրդալան :

Ռոստոմը տեսել էր, որ ճար չունի, համակերպուել էր և բեռնատարով հասել էր Խուրդալան :

\*\*

Նկարագրել մեր ամբողջ նահանջը, ճանապարհին կատարուած աշխատանքները և մանաւանդ այդ անջրդի անապատը արևի տակ սաքով անցնելը կրնեմք և երեխաներով՝ իմ նիւթից գուրս է :

Երեկոյեան դէմ հասանք Խուրդալան : Մօտեցանք ջրի աշտարակին, որ տեղից մի ծորակով ջուր էր հոսում գուրս : Եկողները յարձակուել էին ջրի վրայ : Հրմշտոց, ճիւղ ու աղաղակը երկինք էր հասնում : Ամէն ոք աշխատում էր մի բոպէ շուտ ջուր վերցնել և, իրար խանդարելով, ոչ ոք չէր ձեռք բերում այդ հրաշալի հեղուկը :

Մի տանեակ աղամարդիկ աշխատում էին կարգ հաստատել, իսկ ջրի խողովակի մօտ, աշտարակի դրան աստիճանների վրայ, կանգնած էր մէկը և և ձեռ ու ստով ցուցմունքներ էր տալիս կարգ հաստատողներին :

Ռոստոմն էր :

— Ախր իր ի՞նչ գործն է, — արտնջացին մերոնք :

— Հասնենք, նրան տանենք քաղաք, — ասացի :

Մեծ գծուարութեամբ հասանք ջրի աշտարակին : Խոստացանք կարգ հաստատել և ջուրը ափսոսաբար չափել, որ աղմուկ չլինի : Տղաները անցան գործի : Ես Ռոստոմին ուղեկցեցի մինչեւ զինուորական կայանը : Բարեբախտաբար, այնտեղ էին Պաւլի Բէկըր և մի երկու սպաներ, որոնք իրենց տրամադրութեան տակ ունէին ինքնաշարժ :

Խօսակցութիւնից հասկացանք, որ Ռոստոմը ուզում էր մնալ կա'մ Խուրդալանում, կա'մ գիշերել Բալաջարի կայարանում՝ գաղթողներին Բագուի շրջանները ուղարկելու գործին հսկելու համար : Ժողովուրդը արդէն ապահով վայրում էր գտնուում, և Ռոստոմը կարող էր մի օր հանգստանալ, յաջորդ օրը անցնել Բալաջարի և Բագուի թիկունքում, Հայոց Գիւղ կոչուող արուարձանը, ուր պէտք է տեղաւորուէր ամբողջ ժողովուրդը :

Պաւլի Բէկըրն հասկացրի, որ Ռոստոմին պէտք է տանել քաղաք, որ նրա մնալը աւելորդ է և որ նա սաստիկ յոգնած է : Պաւլի Բէկըր, երբ հասկացաւ մեր նպատակը, հրաւիրեց Ռոստոմին ինքնաշարժով շրջել շրջակայքը և դիտել զիրքերը՝ ուր պէտք է կանգ առնէր մեր բանակը և ուր արդէն խրամատներ էին փորւում : Ռոստոմը անմիջապէս ընդունեց առաջարկը :

Պաւլի Բէկըր ման էր ածել նրան Խուրդալանի և մօտակայ բոլոր դիր-

քերը, ապա տարել էր Բայաջարի եւ այս շրջանի մեր գիծն էլ էր ցոյց տը-  
ւել, ապա իջել էր մինչեւ Գայլի Դուռը, այսինքն՝ Բազուն պաշտպանելու  
գիծը ցոյց տուել քարաէստի եւ քշել տարել Բազու:

Յաջորդ օրը մենք մնացինք ժողովրդի հետ՝ մի մասը Սուրբալան եւ  
մի մասն էլ Բայաջարի տեղափոխելով: Մնացինք այնտեղ մի գիշեր եւս եւ  
ճամբայ ինկանք գէպի Բազու:

Մեր ճամբու վրայ էր Հայոց Գիւղը: Ռոստոմը գտանք այնտեղ: Նա  
կազմակերպել էր արդէն գաղթականութիւնը ընդունող, տեղափոխող եւ պա-  
րենաւորող մի մարմին՝ Աղզային Սորհրդի հսկողութեան ներքոյ, որը եւ  
անցել էր դործի:

Մեր առաջին հանդիպումին Ռոստոմը մեզ ասաց, որ մենք ժողովուր-  
դը թողնենք Գաղթականական Կոմիտէին եւ ինքնեքս գնանք հանգստանալու:  
Կարգադրեց մի շարաթ ոչ մի սեղ չերեւանք: Երբ իմացաւ, որ Սոկրատը  
հիւանդանոց են ուղարկել, «Նեա՛ւեցէ՛ք», որ լաւ խնամք տանին», ասաց:

Մեր բանակը արդէն քաշուել էր գէպի քաղաքի պաշտպանութեան գի-  
ծը, եւ մենք կարտել էինք աշխարհից:

Ռոստոմն էլ մնաց Բազուում:

## ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ ԲԱԳԻՈՒՄ

Մենք շրջապատուած էինք մէկ կողմից՝ ջրով, որ Կասպից ծովն էր,  
Բիրի-էյրաթից մինչեւ Սպիտակ քաղաքի ծայրը: Այնուհետեւ միջոցը Բիրի-  
էյրաթից մինչեւ Երկաթուղին, որ անցնում էր Բազուի թիկունքում եւ չէր  
դործուած, ամբողջ պաշտապայրը ջրի տակ լինելու հետեւանքով: Այդտեղից  
մինչեւ Սուրբալանի բարձունքը եւ Սուրբալանից մինչեւ Բայաջարի գտնը-  
ւում էին թշնամու գիւրքերը, իսկ գիմացը, հովիտի այս կողմը, մեր զիր-  
քերն էին:

Սուրբալանի ամենարարձը դադաթի վրայ ամբարցուած էին թշնամու  
թնդանութիւնը, որոնք կարողանում էին ոմրակոծել քաղաքը: Սակայն, քա-  
ղաքացիք գիտէին, թէ ինչ ուղղութեամբ էին թափում թշնամու ումբերը  
եւ գիշեր ցերեկ երթեւեկում էին փողոցներում ումբերի անկման հակառակ  
զծերով, եւ անվտանգ:

Բարեբախտաբար, քաղաքի փողոցներում եւ տների վրայ ընկած ում-  
բերի մեծ մասը չէր պայթում, իսկ պայթոցներն էլ մեծ վնաս չէին պատ-  
ճառում:

Յաճախ մերոնք քշում էին թշնամուն իր գիւրքերից, սակայն նորից նա-  
հանջում: Երկու անգամ միայն թշնամին մտեցաւ քաղաքին եւ ահա ներս  
պիտի խուժէր: Բայց մերոնք յաջողեցին նրանց յետ քշել: Երրորդ անգամ  
միայն, մեր յետ քաշուելու հետեւանքով, թշնամին կարողացաւ գրաւել քա-  
ղաքը:

Առաջին անգամ Յուլիս մէկին էր, որ թշնամին ընդհանուր յարձակ-  
ման անցաւ, բայց մենք, մեծ զոհեր տալով, յաջողեցինք նրան յետ քշել:

Այդ այն օրն էր, երբ մենք կորցրինք մեր հերոս Մուրատին, Մանուշարեա-  
նին (Համապատիւ օգնական) եւ աննման մարտիկ Մկրտիչ Դանթոյանին:

Երկրորդ անգամը նկարագրուած է Թաղէս Ամիրեանի դէպքի դրու-  
ղին մէջ: Այս ժամանակամիջոցին Ռոստոմը շարունակ քաղաքումն էր, ի  
բաց առեալ այն ժամերը, երբ, ըստ պահանջի, դնացել է Բայաջարի կամ  
նախային շրջանները:

Բազուում նա կա՛մ Աղզային Սորհրդի հետ էր, կա՛մ հրամանատարու-  
թեան եւ կա՛մ Կ. Կոմիտէի մօտ: Մասնակցում էր բոլոր կարեւոր նիստերին  
եւ դործերին: Իրազեկ էր ամբողջ անցուղարձին: Շատ յաճախ մենք չէինք  
իմանում, թէ ո՞ւր էր թէյ խմում ու նախաճաշում, ո՞ւր էր ճաշում կամ  
ընթրում: Լաւ էլ չէր քնում: Հիւժուած էր ու յոգնած:

Սկսեցինք պահանջել, որ քնի անպայման Բիրոյի չէնքի մէջ, ինչպէս  
որ անում էին Բիրոյի աշխատակիցները: Ժամով ու պահակով: Համաձայն-  
ուեց քնել երեք ժամ:

Աղզային Սորհրդի ժողովարարում մի շատ մեծ սեղան կար: Սեն-  
եակը մի դուռ ունէր միջանցքից: Պատահանները նայում էին գէպի բակը:  
Պահակը կանգնում էր դրանք, եւ այլևս ոչ ոք չէր կարող արթնացնել Ռոս-  
տոմին, բացի հերթապահից, այն էլ արտակարգ դէպքերում:

Ես միշտ Ռոստոմից առաջ էի քնում եւ աշխատում էի նրա քնած ժա-  
մանակ հերթապահի մօտ լինել: Մի քանի անգամ, իր քնած ժամանակ, երբ  
բակում աղմուկ-աղաղակ էր լսուել, նա վեր էր կացել, պատուհանը բացել  
եւ հետաքրքրուել թէ րանք ինչո՞ւմն էր: Սպառնացի, որ պատուհանները  
մեխել կը տամ: Նա խոստացաւ էլ պատուհանը չբանալ:

Աղզային Սորհրդի չէնքին մէջ նրա քնելը այն առաւելութիւնն ունէր,  
որ արթնանալուց յետոյ նրան թէյ, կաթ, հաց ու պանիր էր տրուած:

Չարմանալիօրէն շարժուն եւ եռանդուն էր Ռոստոմը: Յաճախ ոտքով  
էր գնում հրամանատարութեան մօտ, ոտքով էր վերադառնում: Ինքնաշարժ  
պահանջել ու սպասել չէր կարողանում. այդքան համբերութիւն չունէր:

Այդ օրերին թէ՛ դեկալար եւ թէ՛ երկրորդական գծում գտնուող եւ  
համեատ շարքայինների մէջ տարօրինակ համերաշխութիւն էր տիրում: Ճիշդ  
է, տկանատես եմ եղել շատ սուր վէճերի, նոյնիսկ ատրճանակ քաշելու շատ  
նշանակալից դէպքերի: Բայց խնդիրները վճռահարելուց յետոյ, օրինակելի  
ջերմ մթնոլորտը վերականգնում էր իսկոյն:

Ռոստոմի եւ Արրահամի փոխյարաբերութիւնները խիստ մտերմական  
էին: Թէեւ Կ. Կոմիտէի մէջ նրանք յաճախ վէճեր էին ունենում, բայց այդ  
չէր խանդարում նրանց ջերմ գործակցութեան:

Մի անգամ, երբտասարդ ընկերների ներկայութեան, Ռոստոմը խիստ  
նկատողութիւն արաւ Արրահամին: Ես չէի տեսել դեռ Ռոստոմին այդպէս  
բարկացած: Այդ պատահեց այսպէս:

Մի օր, երբ թշնամին շատ էր նեղում մեզ, գիտէինք, որ ճակատը  
վտանգաւոր դրութեան մէջ էր. մանաւանդ թուրքաց գերեզմանատան թի-  
կունքում թշնամին նեղում էր մեզ: Արրահամը Բայիլովումն էր եղել: Թէ  
ինչո՞ւ էր գնացել ուղղամթերք տանող բեռնատարով գիւրքերի այդ մասը,

չեմ յիշում: Միայն թէ՛ երբ նա հասել էր այն կէտին, ուր թշնամին արդէն յաղթական առաջ էր շարժուել, մեր ճակատի պետը հրաման էր տուել հակայորձակման անցնելու: Բայց զինուորները չէին շարժուել անդերից: Արբանձակը խլել էր զինուորներից մէկ տասնոցը, կրակ էր բացել դէպի թըշնամին և առաջ վազել դռաւրով:

— Յառա՛ջ, հայ եղբայրներ:

Սպիտակ բաճկոնը հագած, պորտֆիլը թևի տակ, մաուզերից կրակելով առաջ վազող Արբանձակին տեսնելով՝ մեր զինուորները ցնցում և ուռա՛ր՝ դռաւրով դիմել էին հակայորձակման:

Առաջացող հայ զինուորները անցել էին Արբանձակից և թողել նրան թիկունքում:

Տաճիկ զինուորները այս դրոհին չդիմանալով, յետ էին դարձել և փախել: Յաղթութիւնը կատարեալ էր եղել:

Մեկ հեռախօսով յայտնեցին, որ Արբանձակը քաշել է և յարձակման է անցել:

Շփոթութիւն ընկաւ մեր մէջ: Ռոստոմը մոայրուց: Երեւում էր, որ ջլայնացած է:

— Անմիջապէս ինքնաշարժ ուղարկիր և երկու հոգի, որ բերեն նրան:

Երկու բնիկները անմիջապէս գնացին դիրքերը: Արբանձակին գտել էին փոշեթաթախ վիճակում: Բերին Բիւրօ (Գաշնակցութեան շէնքը): Ներս մրտաւ Կ. Կոմիտէի սենեակը:

— Է՛, յետո՞յ, — ասաց Ռոստոմը, — ջահել տղա՞յ ես, որ չհասկանաս արածդ: Մի պատահական գնդակ պիտի ձեզքէր գլուխդ: Հասկանո՞ւմ ես թէ ինչ ես արել:

— Ի՞նչ պիտի անէի: Եթէ չանէի, թշնամին պիտի թափուէր Չամբաւրաքանդ (գերեզմանները), — փորձեց արդարանալ Արբանձակը:

— Ի դուր ևս այդպէս կարծել: Ինչ էլ որ լինէր, դո՛ւ չէիր, որ այդ վիճակովդ առաջ պէտք է վազէիր...

Մի քանի սուր զիտողութիւններ էլ արաւ, որոնցից Արբանձակը իրեն անյարմար զգաց: Բայց մենք հիացմունքով նայում էինք, թէ ինչպէ՛ս դաշնակցական մտաւորական առաջնորդը, մեր բնիկը, պէտք եղած ժամանակ կարող էր գէնք վերցնել ու, մահն արհամարհելով, դիմադրել թշնամուն, ոգեւորել զինուորները և յաղթանակը սպասովել:

Արբանձակը մեծ ընկերով սուր զիտողութիւններին արժանացաւ, բայց մեր աչքում շատ աւելի բարձրացաւ:

\*\*

Մի ուրիշ գէպ էլ յիշեմ՝ Ռոստոմին բնորոշելու համար:

Ռոստոմը երբեք չէր ցուցադրում ևս զգալ տալիս, որ իր խօսքը մեկ համար օրէնք էր, որ ինքն էր, որ ընթացք էր տալիս գործերին և իր ցուցմունքներով էին, որ ընթացքի մէջ ևս դուրս մեր բազմազան գործերը: Նա իրեն այնպէս էր պահում, որ ինքը ևս մի խորհրդատու ընկեր է

միտները պէս, որ մենք բոլորս, միասնաբար, համախորհուրդ վճռում ենք բոլոր խնդիրները և քաղաքի ճակատադիրը: Վէճի առարկայ խնդիրների մասին էլ նա իր կարծիքը յայտնում էր, առանց պարտադրանքի տակ զննելու մեզ:

Օգոստոսի վերջին օրն էր: Յաջորդ օրը, Սեպտեմբեր 1ին, անգլիացիք պիտի թողնէին քաղաքը: Այդ մասին տեղեկացրել էին նաև Ազգային Խորհրդին: Ուստի, մենք պիտի ճշդէինք ոչ միայն մեր դիրքը՝ համաձայնուելու կամ ոչ, այլև երկու դէպքում էլ պիտի որոշէինք մեր անելիքը:

Պապաչան խնդիրը դրեց քննութեան: Զեկուցողն էր Արբանձակը:

Ռոստոմը, ըստ իր սովորութեան, նստած էր անկիւնում դրուած մի երկաթէ սնտուկի վրայ և լուռ հետեւում էր ժողովի ընթացքին:

Բուռն և անհաշտ պայքար էր մղւում Կ. Կոմիտէի մէջ: Մէկ մասը այն տեսակէտին էր, որ պէտք էր թողնել քաղաքը, որ այս անհաւասար պայքարը շարունակելը արդէն շատ դժուար էր, որ ուսները կեղբոնից, բացի զինամթերքից, ոչինչ չպիտի հասցնէին, որ Թիֆլիսը թիկունքից ոչ մի ձեռնարկ չարաւ ու չպիտի անէր, և այլն, և այլն:

Հակառակ տեսակէտը պաշտպանողները այն կարծիքին էին, որ պէտք էր դեռ շարունակել քաղաքի պաշտպանութիւնը, որ անհնար էր լինելու տեղահանել ամբողջ ժողովուրդը ծովով, որ դեռ ռազմամթերքի մեր պահեստը կը բաւականանայ, որ հիւսիսից դեռ յոյս կայ օգնութիւն ստանալու և որ անգլիացիք պարտաւոր են մնալ ու կռուել:

Վէճը շատ սուր բնոյթ ստացաւ: Վերին աստիճանի ջլային մթնոլորտ ստեղծուեց: Արշակը ուշաթափուեց և, ուշքի գալուց յետոյ, աչքերը լայն բացած՝ հարցնում էր, թէ ի՞նչ որոշեցինք: Ինքը քաղաքը պաշտպանելու կողմն էր: Ի վերջոյ, Արբանձակը պահանջով խնդիրը քուէարկուեց:

Պապաչան առհասարակ չէր սիրում խնդիրները քուէարկել, մանաւանդ չէր ուզում քուէարկել այսպիսի մի խնդիր:

Ռոստոմը այնքա՛ն մոայլ ու ընկճուած էր, որ աչքերին արցունքներ էին երեւում:

Ի վերջոյ, քուէարկուեց խնդիրը և որոշուեց քաղաքը չտալ թշնամուն ու պաշտպանուել, քանի դեռ կարելի էր:

Ռոստոմը տեղից վեր ելաւ, մօտեցաւ սեղանին ու ասաց.

— Միակ և խելօք վճիռն էր, որ տրուեց: Ես էլ քաղաքի պաշտպանութիւնը շարունակելու կողմն էի: Հայութեան անունից Ազգային Խորհրդի նախագահը պէտք է ազդարարութիւն անի անգլիական զօրքի հրամանատարին և կարծում ևմ, որ նոյնիսկ սպառնալիքի նման մի արտայայտութիւն էլ պէտք է լինի այդ ազդարարութեան մէջ:

Բոլորը հանդիստ շունչ քաշեցին: Ոչ հակառակորդները ընկճուեցին և ոչ էլ կողմնակիցները հպարտացան: Ընկերական անկեղծ ու անկաշառ մտքերի բախում էր տեղի ունեցել, Կ. Կոմիտէն անկաշկանդ վճիռ էր կայացրել և մեր աւագադոյն ընկերն էլ ոչ թէ իր կարծիքը յայտնելով էր ձնչում գործ դրել, այլ խրախուսել էր կատարուած վճիռը:

Այս բարոյական բարձր մթնոլորտումն էր, որ աշխատում էր Հ. Յ.

Դաշնակցութեան Բազուի Կ. Կոմիտէն այդ պատասխանատու եւ ծանր օրերին: Եւ այդ մենք անշուշտ պարտական էինք նաեւ մեր մեծ Ռոստոմին:

Այս տագնապալի ու շարունակական գոհողութեան մէջ աշխատում ու կուում էր Բազուի հայտնիներ: Ինչ խօսք, որ ծանր եւ ղեկավար դիրքերում էր Հ.Յ.Գ. ամբողջ կազմակերպութիւնը, իր մարմինների եւ Կ. Կոմիտէի ղեկավարութեամբ, Ռոստոմի շունչի տակ:

Բազուն ընկաւ: Այլևս հնարաւոր չեղաւ քննել, համաձայնուել կամ կանխել անկումը, որովհետեւ այդ օրը առուօտից սկսած անդլիայիք քաշում էին իրենց զինուորներին զիրքերից եւ նստեցնում նաւերը: Նրանք զընդակահարում էին իրենց ձիերին եւ այրում օդանաւերն ու պահեստները: Որով՝ մեր ընդհանուր ճակատում 10-15 տեղ լայն բացուածքներ գոյացան. որ մենք լցնել չէինք կարող: Այդ բացուածքներից թշնամին կարող էր արդէն բազմաթիւ կէտերում անցնել մեր թիկունքը, շրջապատել մեր զորամասերը եւ մեծ միասնէր պատճառել մեզ:

Արդէն պարզ էր, որ պէտք է տայինք քաղաքը: Դեռ մինչեւ նահանջի ժամը որոշելը, ընկ. Գ. Բալայեանը նշանակուած էր քաղաքը դատարկելու պատասխանատու հրամանատար: Իր տրամադրութեան տակ նա ունէր Բազուի ծովափին գտնուող բոլոր տեսակի փոխադրական միջոցները, փոքրիկ ինքնաշարժ մակոյկներից սկսած մինչեւ մեծ առևտրական կամ մարդատար նաւերը:

Ժամը Տից ամէնօրեայ ժողովի նման Կ. Կոմիտէն հաւաքուեց: Դարձեալ ղեկուցում տուեց Արքահամր: Էլ տեղ չկար ընդդիմանալու: Արձանագրուեց կացութիւնը եւ որոշուեց անմիջապէս յատուկ ընկերներ ուղարկել թաղերը, Հայոց Գիւղ, նաւթային շրջանների բնակավայրերը: Նրանք պէտք է յորդորէին ժողովուրդը, որ ինչ հնարաւոր էր, վերցնէ եւ զիմի ծովափ՝ նաւերը նստելու համար:

Որոշուեց նաեւ ժամը ճիշդ 12ին ճակատում գտնուած մեր բոլոր զօրամասերը յետ քաշել եւ, առանց խուճապ առաջ բերելու, ծովափ տանել ու նստեցնել նաւերը:

Քաղաքում բնտանիք ունեցող զինուորները հրաման ստացան ճշդելու թէ իրենց ընտանիքները գնացե՞լ էին նստելու նաւերը թէ ոչ. եթէ գնացել էին, իրենք էլ անմիջապէս պիտի գնային: Իսկ նրանք, որոնց ընտանիքները սպասել էին եւ չէին գնացել, իսկոյն պէտք է փոխադրէին նրանց ծովափ:

Ամէն ինչ էլ պէտք է կատարուէր շտապ, որպէսզի մինչեւ լուսաբաց մեր նաւերը կարողանային շարժուել զէպի ծովի բացերը:

Պէտք է արձանագրել, որ շատ դժուար էր համոզել Բազուի հայ բնակիչները, որ լքեն իրենց տները: Դրա համար էլ մեծ թուով հայեր մնացին քաղաքում եւ նրանց մի կարեւոր մասը գոհ գնաց թուրք խուճանի եւ տաճիկ զինուորների խժոժութիւններին:

Բազուն մեծ թուով գոհեր տուեց նաեւ Պետրովսկու եւ Էնգելու հանրակացարաններում եւ նոյնիսկ այն նաւերի մէջ, որոնց անդլիայիք չընդունեցին Էնգելիում, եւ այդ նաւերը ստիպուեցին Գ-Տ օր մնալ ջրերի վրայ:

Ռոստոմի՝ Բազուն թողնելու մասին գրել եմ արդէն:

Էնգելիում նրան գիշերը կարելի չեղաւ որեւէ մասնաւոր տուն տանել քնելու համար: Նա մնաց ժողովրդի մէջ:

Առաւօտեան, արևը նոր էր ծագել, երբ տեսանք, որ Ռոստոմը, մի մեծ խորձ խոտ շալակած, գնում էր զէպի անդլիայիցիները լքած հանրակացարանների հսկայ փայտեայ շէնքերը: Նրան շրջապատեցինք, երբ արդէն հասել էր մի հանրակացարանի:

— Այս ի՞նչ էք անում:

— Հանրակացարաններում բաւական թուով անհատ կանայք ու երեխաներ քնել են տախտակած յատակների վրայ: Տանում եմ, որ փոքեմ անկողնու փոխարէն:

Մտոր շալակից վար դրինք եւ տարանք ու փոսեցինք իր ցոյց տուած տեղը:

Լուրը անմիջապէս տարածուեց Բազուի փախտականներին մէջ: Բոլոր տղամարդիկ դուրս եկան հանրակացարաններից եւ մի քանի ժամ դրազուեցին դաշտում անդլիայիցիների զիջած խոտերը շալակած տեղափոխելով հանրակացարանները:

Ռոստոմը նայում էր այս աշխատանքին եւ ժպտում:

Այստեղ էլ քոլերայի համաճարակ սկսուեց: Կազմակերպեցինք առաջին օգնութիւնը: Հիմք դրուեց պարենուորման գործին: Եւ դարձեալ այս բոլոր աշխատանքների մէջ կարելի էր տեսնել Ռոստոմի մասնակցութիւնը:

Չանագան ուղղութիւններով ընկերներ ուղարկուեցին Էնգելուց (այժմ Փահլաւի): Կ. Պարունակեանը գնաց՝ Ստեփան Շահումեանին եւ ընկերներին փախցնելու համար. Միրաբեանը գնաց Պետրովսկու եւ Էնգելու միջև կապ ստեղծելու համար: Իսկ ես էլ ուղարկուեցի Հիւսիսային Կովկաս՝ հասնելու համար մինչեւ Կիսլովոդսկ՝ Մ. Շաթիրեանի միջոցով՝ դրամական օգնութեան գործը կազմակերպելու համար:

Չկնորսական նաւով ես պիտի ելնէի Կասպից ծովի հիւսիսային մասում գտնուող Կասպայ գիւղը եւ այնտեղից ցամաքով պիտի երթայի Ղզլար, ապա երկաթուղու առաջին կայարանից պիտի գնայի մինչեւ Կիսլովոդսկ, իսկ եթէ պէտք լինէր, մինչեւ Ռոստոմի՝ Պետական Դումայի անդամ Պապաջանեանին գտնելու եւ խնդիրը նրա ուղարկութեան էլ յանձնելու համար:

Հրաժեշտի պահին Ռոստոմը ասաց.

— Կը հանդիպինք Հայաստանում:

Բայց, աւա՛ղ, ես Պետտիգորսկում եւ կէս թաքնուած միճակում էի, երբ մի օր Վլադիկաւկազի վրայով եկած Թիֆլիսի մեր «Աշխատաւոր» առիճեռս ու կարդալի Ռոստոմի մահուան գոյժը:

Սարսափելի ծանր ապրումներ ունեցայ այդ կորստի հանդէպ: Ինձ թուում էր, թէ մեր կազմակերպութեան մէջքը կտորուեց եւ մենք որբացանք: Յուսահատութիւնը ներս էր սողոսկում իմ հոգու մէջ: Եւ միայն Հիւսիսային Կովկաս գաղթած Սասունցիներից սկսած մինչեւ Կարսեցիները Հայաստան փոխադրելու գործը կարողացաւ ցրել ծանր մտորումներս եւ աղատել ինձ իմ հոգեկան տառապանքից:

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ

ԵՒ ԲԺ. Լ. ԱԹԱԲԷԿԵԱՆԻ ՄԱՀԸ

Ռոստոմը դիտելը թափանցել ընկերոջ հողեկան ապրումները եւ ներդրումը լինել, թէկուզ նա վերադառնա ունեցած լինէր, կամ մեղք գործած լինէր, եթէ միայն այդ առաջ էր եկել անկեղծ եւ ազնիւ մտակցումից:

Ահա նման մի դէպք պատահեց այն չարարաստիկ օրը, երբ սպանուեց Բժ. Լ. Աթաբեկեանը եւ ստոյգ մահուանից փրկուեց ընկ. Արրահամ Գիւլխանյանեանը:

Մարտի դէպքերը հակայգափոխական (թուրք Մուսաֆաթ) եւ յեղափոխական (հայ, ռուս, թուրք) ուժերի արինահանգ կռիւր Բագուի փողոցներում նորից գունաւորուել էր հայ-թրքական դոյնով: Գուցէ պատճառը այն էր, որ հայ մարտական խմբերը նեղն էին լծել թուրքերին եւ քշել իրենց թաղերը՝ միանգամայն անպատանգ զարձնելով նրանց՝ հայկական թաղերի համար: Սոցիալիստ-Յեղափոխական եւ Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնների գեկափարութիւնը, Բժ. Լ. Աթաբեկեանի գլխաւորութեամբ, բանակցութեան մէջ էր մտել թուրք զեկափարների հետ եւ նրանց հաւանութիւնն էր ստացել յատուկ պատգամաւորութեամբ դնալու թրքական թաղը եւ, համաձայնութիւն կայացնելով իրենց հետ, վերջ տալու եզրայրասպան կռուին:

Այդ օրը Հայոց Ազգային Խորհուրդը քննել էր այդ խնդիրը, հաւանութիւն էր տուել Բժ. Աթաբեկեանի առաջարկին եւ որոշել էր պատգամաւորութեան մէջ մտցնել նաեւ իր նախագահին՝ ընկ. Ա. Գիւլխանյանեանին:

Հ.Յ.Գ. Կ. Կոմիտէի լայնացրած նիստը տեղի էր ունենում ամէն երեկոյ, ժամը Տից սկսած: Այդ օրը բաւական ուշացած ժողովի եկաւ ընկ. Արրահամը: Նա հազորդեց, որ Հայոց Ազգային Խորհուրդը որոշել է մասնակցել պատգամաւորութեան եւ իրեն էլ մտցրել է այդ պատգամաւորութեան մէջ:

Ազգային Խորհուրդի որոշման դէմ առարկութիւն եղաւ այն իմաստով, որ բանակցութեան պիտի գնայ այն կողմը, որը իրեն պարտուած է զգում: Իսկ մենք արդէն սեղմել ենք թշնամուն Շամախիականային եւ, եթէ մի երկու օր էլ շարունակուի կռիւր, նրանց զինուած ուժերը ցանուցրիւ կ'անենք եւ վերջնական պարտութեան կը մատնենք: Ուստի, մեր կողմից պատգամաւորութիւն ուղարկելը հաշտութիւն հայցելու տպաւորութիւն պիտի թողնի, եւ այդ՝ Հ. Յ. Գաղանկցութեան համար նուաստացուցիչ պիտի լինի:

Արրահամը պնդեց, որ կացութիւնը լուրջ է, որ ուռաները, յատկապէս Իսպոլկումը եւ Յենարո-Կասպին դժգոհ են, որովհետեւ կռիւր հայ-թրքական կռուի բնոյթ է ստացած, որ Սոցիալիստ-Յեղափոխական եւ Սոցիալ-Դեմոկրատ հայ կազմակերպութիւնները տուել են արդէն իրենց հաւանութիւնը, որ մեր մերժումը բացասական տպաւորութիւն պիտի ձգի եւ, որ, վերջապէս, խնդիրը անցել է Ազգային Խորհուրդի բովից եւ ինքն ու մեր միւս ընկերները հաւանութիւն են տուած որոշումին:

Վէճը սուր բնոյթ ստացաւ: Սակայն, Պապաշան մի կերպ հարթեց այն:

— Սկզբունքով, — ասաց նա, — քուկարկութեան չեմ դնում: Ազգային Խորհուրդը մեր ընկերները մասնակցութեամբ խնդիրը որոշել է: Թողնե՛նք, որ գործադրի իր որոշումը: Մեր կուսակցութիւնը պէտք է խրախուսի ամէն մի ձեռնարկ, որի նպատակը խաղաղութեան վերականգնումն է:

— Թո՛ղ այդպէս լինի, չենք առարկում: Բայց մենք դէմ ենք, որ ընկ. Արրահամը մտնի այդ պատգամաւորութեան մէջ:

Այս տեսակէտին ընկերների մեծ մասը հաւանութեան նշան տուեց:

— Ինչո՞ւ, — զարմացաւ Արրահամը:

— Ինչուներ շատ կան: Ամենակարեւորը այն է, որ դու, Ազգային Խորհուրդի նախագահ լինելուց բացի, Հ. Յ. Գաղանկցութեան լիդերն ես եւ Հ. Յ. Գաղանկցութիւնն ես ներկայացնում: Բացի այդ, ես դէմ եմ յատկապէս քո գնալուն: Թո՛ղ Ազգային Խորհուրդը գործադրի իր որոշումը՝ քո փոխարէն ուրիշին ուղարկելով: Ի հարկէ, ցանկալի է, որ նա մեր ընկերը չլինի, — առարկեցի ես:

— Պատճառաբանութիւնդ թոյլ է: Եթէ որոշումը գործադրուած ենք եւ պատգամաւորութիւնը գնում է, ես եմ գնացել թէ ուրիշը՝ նշանակութիւն չունի: Ընդհակառակն՝ վստահելիութեան տեսակէտից Ազգային Խորհուրդի նախագահին մասնակցութիւնը խիստ կարեւոր է. — եւ իրենից անբաժան պորտուէլը դնելով թեւի տակ, ասաց Արրահամը. — Ընկեր նախագահը ինձ թոյլ կը տա՞յ, որ մեկնիմ: Կարեւոր տեսակցութիւն ունիմ այս ժամին:

Եւ դուրս գնաց: Դուրս թռայ յետեւից եւ, հասնելով նրան, ասացի.

— Դու չես գնալու, Արրահամ: Այդ ես ինչ գնով էլ լինի՝ թոյլ չպիտի տամ: Տեղը մի ուրիշ մարդ նշանակի՛ր:

Արրահամը յետ նայեց կէս բարկացած, կէս ժպտադէմ:

— Լաւ, լաւ, — ասաց իր սովորական եղանակով ու հեռացաւ:

Ժողովը վերջանալուց յետոյ, իմ թեւիցս բռնեց եւ մի կողմ քաշեց մեր Գիւլ Քաղոսը: Սա մի բանուորական շարքերից առաջ եկած կէս-մտաւորական, կէս-մարտական ընկերներից էր:

— Էդ ո՞ւր էր գնում Արրահամը, որ ասում է իր թէ չեմ թողնի, — հարցրեց:

Շատ մտերիմ էինք: Թաքցնելիք չունէի նրանից: Պատմեցի ամէն ինչ: Մտածեց ու ասաց.

— Նամարտ ես, թէ թողել ես:

— Ուրեմն, առաւօտ այստեղից չես հեռանայ, մինչեւ պատգամաւորութեան գնալը:

— Քեզ հետ եմ, մինչեւ վերջ:

Թէ ինչպէս անցկացրի «գիշերը», այսինքն՝ քնելու երկու ժամս, նկարագրել չեմ կարող: Վախենում էի, որ առիթ չպիտի ունենամ Արրահամին խանգարելու: Բնազդական մի վախ էր ընկել սիրտս, որ եթէ գնար, մի դժբախտութիւն պիտի պատահէր:

Իմացայ, որ ժամը Յին պատուիրակութիւնը ինքնաշարժով պիտի գնար Կ. Կոմիտէի շէնքը, պիտի վերցնէր Արրահամին եւ, թեքուելով դէպի Թեւեռնակայա փողոցը, պիտի գնար մինչեւ Բոլշակա Մարսկայա, ապա Բա-

լախանակայա փողոցով մինչեւ Ղարա-Մէյդան ու Շամախինակայա փողոցը, Ազամեանի շէնքը :

Տեսայ Գիթ Թաղոսին՝ փողոցի դրանը կանգնած : Մէկ էլ փողոցում հնչեց ինքնաշարժի փողը : Գլուխս պատուհանից հանեցի : Ինքնաշարժի մէջ, մեքենավարի մօտ նստած էին երկու հոգի : Անունները չեմ յիշում, բայց մէկը հայ է, միւսը թուրք Սոցիալ-Դեմոկրատ էր : Յետեւի մասում նստած էր բժ. Լ. Աթարէկեանը և Սոցիալիստ-Յեղափոխական Դեմոկրատները :

— Իմաց տուր Արրահամին, որ մենք իրեն ենք սպասում, — ասաց ինձ բժիշկը :

— Նա չի գալու, — պոռացի ես և վազեցի վայր :

Աստիճաններից փոթորկի պէս իջայ և շունչ առի մեքենայի մօտ : Զարմացայ, երբ տեսայ, որ Արրահամը արդէն մտել էր ինքնաշարժը և տեղափոխուած էր նրա մէջ, իմ կողմում, դրան մօտ : Մեքենայից նայեցի դէպի ինքնաշարժի վարիչը : Գիթ Թաղոսը կանգնած էր նրա մօտ : Ոչ մի խօսակցութիւն չէինք ունեցել այդ մասին, բայց նա արդէն զրուակ էր մի շատ կարեւոր դիրք : Ինձ զօտեպնդուած զգացի : Ինքնաշարժը չէր կարող տեղից շարժուել :

— Դու չպիտի գնաս, Արրահամ, — ասացի, — և մինչեւ որ վայր չիջնես, ինքնաշարժը տեղից չպիտի շարժուի :

Իմ և Թաղոսի հայեացքները հանդիպեցան իրար :

— Ինչպէ՞ս թէ : Հապա ինչպէ՞ս պիտի գնանք առանց Արրահամին, — զարմացած ասած բժիշկը՝ մէկ ինձ և մէկ Արրահամին նայելով :

— Արամ, — դիմեց ինձ Արրահամը : — անյարմար բան ես անում : Ես պիտի գնամ, և դո՛ւ չէ, որ պիտի արգելես :

— Ոչ, չպիտի գնաս, — նորից ասացի ես, — խնդրում եմ իջնես վայր :

Արդէն ընկերներ էին հաւաքուած մայթի վրայ և զարմացած դիտում էին վէճը : Արրահամը ջղախնայած էր : Ջղախնայած էր ե՛ւ բժիշկը, որը այնքա՛ն իրաւունք ունէր ինձ վրայ, որքան ե՛ւ Արրահամը, որին չափից դուրս սիրում ու յարգում էի՝ իմ պատանեկան օրերից սկսած :

Մեր վէճը Արրահամի հետ սկսեց սուր բնոյթ ստանալ : Ես արդէն այնքա՛ն ջղախնայած էի, որ ոտներս դողում էին :

— Անհար է, Արրահամ, պիտի իջնես վայր :

— Դու շատ պատասխանատու և մինչեւ իսկ անպիտան բան ես անում : Հասկանո՞ւմ ես, — ձայնը բարձրացրեց Արրահամը :

— Պայմանաժամը մօտենում է, — ասաց բժիշկը, — վերջ տուէք ձեր վէճին :

— Քչի՛ր, — հրամայեց Արրահամը :

Գիթ Թաղոսը մի շարժում արաւ, որից մեքենավարը հասկացաւ, որ չի կարող տեղից շարժուել :

Ես բռնեցի Արրահամի ձեռքը և սկսեցի ուժով վայր քաշել : Նա ըստիպուած եղաւ ոտքը դուրս դնել ինքնաշարժից : Նրա վայր գալուց յետոյ, իմ թափով քաշելուս և ձեռքս բաց թողնելուս հետեւանքով, նա քիչ մնաց փռուէր մայթի վրայ : Բայց ընկերները բռնեցին նրան :

— Եթէ ես ուժ ու իրաւունք ունենայի, — ասացի ես բժիշկին, — քեզ էլ կ'արդիւնէի գնալ :

Բժիշկը վայրացած մի քանի որակումներ տուեց ինձ և հրամայեց մեքենավարին քշել ինքնաշարժը :

Թաղոսը արդէն իր գրասած դիրքը թողել էր, և մեքենավարը քշեց ինքնաշարժը :

Արրահամը սաստիկ յուզուած ու ջղախնայած, պորտֆիլը թեւի տակ, արագ-արագ մտաւ բակը ու գնաց ուղիղ Կ. Կոմիտէի սենեակը :

Լուրը տարածուել էր, և ընկերները զարմացած քննում էին դէպքը : Ես հետեւեցի Արրահամին և մտայ Կ. Կոմիտէի սենեակը :

Գո՞հ էի արածիցս, բայց միաժամանակ դժգոհ էի, որ պարտաւորուել էի այդ կոպիտ քայլն առնել, սակայն ոչ մի զլջում չունէի :

Անգանի յետեւում իր նստած տեղից նայում էր Պապաշան : Ակնոցները հանեց և նայեց ներքեից վերեւ Արրահամին զարմացած :

— Պատգամաւորութիւնը չմեկնե՞ց :

Ներս էին եկել նաեւ մի քանի ականատես ընկերներ :

— Ինչպէ՞ս թէ չմեկնեց, գնացին, — ասաց Արրահամը, խիստ բորբոքած և, առանց ինձ նայելու, պատմեց դէպքը՝ սպառնալով դատի տալ ինձ :

Ստեղծուել էր մի ճնշիչ մթնոլորտ : Տեղի էր ունեցել մի անթոյլատրելի արարք մի կրտսեր ընկերոջ կողմից հանդէպ աւագ ընկերոջ, այն էլ այդպիսի պատասխանատու պայմաններում :

Ջգում էի, որ ընկերները դժգոհ էին ինձանից, իսկ Պապաշան նայում էր ինձ խիստ դժգոհութիւն արտայայտող հայեացքով :

— Կարող էք պատժել ինձ, բայց ես չեմ զղջում :

Այդ միջոցին ներս մտաւ Ռոստոմը երկու ընկերների հետ : Թու՛ւմ էր թէ նա մի բան գիտէր : Բոլորի գէժքին նայեց : Բոլորն էլ զգացին, որ նրա գալը պիտի փրկէր կացութիւնը :

Արրահամը նրան էլ պատմեց դէպքը և, աւելի յուզուելով, ասաց .

— Թուրքերը գիտեն, որ ես պիտի գլխաւորէի պատուիրակութիւնը : Դա նրանց ցանկութիւնն էր : Այժմ, տեսնելով իմ բացակայութիւնս, ուրիշ ենթադրութիւններ պիտի անեն, ձեռնարկը պիտի վիժի և պիտի աւելի բարդանայ դրութիւնը : Եւ այս բոլորը Արամի անխորհուրդ և անխոհեմ արարքի հետեւանքով : Պէտք է նման արարքների կրկնութեան առաջն առնել, — բացազանչեց Արրահամը :

— Լա՛ւ, Արրահամ, խաղաղուի՛ր, մի քիչ հանգստացիր : Նրա արածը վերագրի՛ր նրա երիտասարդական անկեղծ և աղնիւ բռնկումին : Ես երէկ չկարողացայ հետը խօսել, որ յետ կենայիր այդ մտադրութիւնից : Մի՛ յուզուի՛ր, քո չգնալը կը մեղմենք ուրիշ կերպով :

— Դու քո պաշտպանութեան տակ ես առնում նրան : Բայց ես պիտի պահանջեմ պատժել նրան :

Ես լուռ էի : Ձէի էլ կարող խօսել : Յուզմունքս հասել էր ծայր աստիճանի : Քիչ էր մնում, որ պոռթկայի : Այդ նկատել էր Ռոստոմը և այն-

պիսի հայեացք ձգես միաս, որ ասելիքս մոռացայ, միայն արցունքները  
ժայթքեցին աչքերիցս :

Այդ միջոցին հեռախօսի գանգը հնչեց : Լսելի էր նաև դրսի՝ սպա-  
ման սենեակի հեռախօսի գանգը : Միրաքեանը վերցրեց ընկալուչը, յանկարծ  
գունատուեց և չփոթուած կմկմաց .

— Ի՞նչ, կրա՞կ բացին... Ու՛րե՞ր են սպաննուել...

Ելեկտրականացած մթնոլորտ ստեղծուեց :

Դուռը ուժգին բացուեց, և ներս ընկաւ Ներսիսեանը :

— Ազէա, սճիր, սպանութիւն... Ինքնաշարժի միայ կրակ են բացել, և  
հաշտութեան պատուիրակութիւնը կոտորուած է թուրքերի կողմից :

Լուրը ռումբի պէս պայթեց : Յուզմունքս անսահման էր : Թէ՛ բո՛խչի  
իմ շատ սիրելին էր և թէ՛ Դենեժկինը իմ յեղափոխական ընկերը : Ընկայ  
երկաթէ սնուակի միայ հեծկտալով :

Ռոստոմը մօտեցաւ ինձ և, ձեռը դնելով ուսիս, ասաց .

— Հասկանում եմ քեզ, Արամ : Մենք մեծ կորուստ ունեցանք յանձին  
բո՛խչին, իսկ դու կորցրիր երկուսին, նաև Դենեժկինին : Բայց մի՛ մոռա-  
նայ, որ փրկեցիր Արրահամին :

Երբ մի քիչ հանգստացել էի և նայեցի շուրջս, սենեակում մնացել  
էինք ես ու Պապաչան : Արրահամը բարձրացել էր վերեւ, իսկ ընկերները  
չտապել էին աղէտի վայրը :

Կէս ժամ չանցած, պատուիրակութեան անդամների դիակները Տելի-  
նիքական Ընկերութեան սրահումն էին : Բազուն սգում էր իր թանկագին կո-  
րուստը :

Պարզուեց, որ Բալխանսկայա փողոցի ծայրին, ուր փողոցը թեք-  
ւում է դէպի Շամախինսկայա, թէ՛ անկիւնի երկու կողմերի տների կտուր-  
ների միայ և թէ՛ Դուրի-Մէյդանի բերանին դարան մտած թուրքերը, պատ-  
ուիրակութեան ինքնաշարժի երեւալուն պէս, խաչաձեւ կրակի մէջ էին ա-  
ռել այն և բոլոր պատուիրակներին կոտորել :

Մեր ռազմիկները, այդ լուրն առնելուն պէս, այնպիսի կատաղի յար-  
ձակումներ գործեցին բոլոր ճակատներում, որ թշնամին մեծ կորուստներով  
սկսեց փախչել : Հետեւեալ օրը թուրքերից խառն պատգամաւորութիւն (կրօ-  
նաւորներ, բանուորներ և վաճառականներ) սպիտակ դրօշներով մտաւ հայ-  
կական թաղերը՝ «հաշտութիւն, հաշտութիւն» աղաղակելով : Մեր պատգա-  
մաւորութեան կոտորածը իրենք՝ թուրքերն էլ էին պախարակում :

Կ. Կոմիտէի յաջորդ նիստին Արրահամը խնդիրը դրեց քննութեան :  
Թէ՛ է և իմ հակակարգադասական քայլի հետեւանքով ինքը փրկուել էր, բայց  
նա պահանջում էր, որ ես պատժուէի :

Խնդիրը փակուեց Սարգիս Արարտեանի բանաձեւով : Համաձայն այդ  
բանաձեւին, քանի որ Կ. Կոմիտէն յատուկ որոշում չէր տուած Արրահամի՝  
պատուիրակութեան մասնակցելու մասին, և, ուրեմն, կուսակցական կար-  
գապահանջութեան դէմ չէի մեղանշած...

## «ՊԱՐԱՊ ՏՂԱՅԻՆ ՃԱԿԱՏ ՈՒՂԱՐԿԻՐ»

Մի երեկոյ կայծակի արագութեամբ լուր տարածուեց, որ Ռոստոմի,  
Արրահամի և զօր. Բագրատունու միայ մահափորձ է կատարուել :

Անմիջապէս հասանք դէպքի վայրը : Բայց արդէն ուշ էր : Վերաւոր-  
ուած զօրավար Բագրատունուն արդէն տարել էին հիւանդանոց : Դէպքը պա-  
տահել էր Վերին-Պրիուտսկայա փողոցում, Ռեմեսլեննայա փողոցից քիչ  
վեր, դէպի կայան տանող բլուրի միայ, երկյարկանի տան առջեւ, ուր բնակ-  
ւում էր Արրահամը :

Արրահամի մօտ յաճախ էին ճաշում զօրավարը և Ռոստոմը : Նրանք  
ուշ էին ճաշում. ապա, մի ժամի շափ հանդատանալուց յետոյ, դուրս էին  
գալիս տնից միասին՝ ամէն մէկը իր գործին գնալու համար : Այդ օրը, երբ  
նրանք դուրս էին գալիս, Ռոստոմը մի քիչ ուշացել էր : Դեռ աստիճանների  
միայ նա լսել էր ատրճանակի ձայնը, վազել էր փողոց և տեսել, որ զօրա-  
վարը ընկած էր գետին, Արրահամը գրկած էր նրա գլուխը, իսկ ոճրագործ-  
ները փախած էին :

Այդ տունը գտնուում էր Տրդ թաղամասում, որ հայկական էր : Հարե-  
ւաններն իսկոյն դուրս էին թափուել տներից, սակայն կրակողներին չէին  
կարողացել բռնել :

Ջօրավարը իսկոյն փոխադրուել էր հիւանդանոց : Բայց իր վէրքը այն-  
պէս էր, որ զրկուեց ոտքից, ծնկից ցած :

Գնդակներից մէկը ծակել էր Արրահամի գլխարկը : Դրանից ենթա-  
դրում էինք, որ թուրքերի յարձակման նշանակէտը եղել էր ե՛ւ նա, զուցէ  
նաև Ռոստոմը :

\*\*

Նոյն երեկոյեան, խօսելով ընկերների հետ, յայտնեցի, որ մի մի պա-  
հակ պիտի նշանակեմ երկու աւագ ընկերների միայ, քանի որ նրանք նորից  
կարող են յարձակման ենթարկուել :

Յաջորդ օրը Արրահամը նկատել էր իրեն հետեւող մարտիկին : Նա  
հասկացել էր՝ համարելով շատ բնական նախազուշութիւն մեր կողմից :

Ռոստոմն էլ հենց առաւօտեան նկատել էր, որ մէկը իրեն է հետե-  
ւում : Տելերոննայա փողոցում մտել էր մի բակ, ապա դուրս գալով ստու-  
գել էր, որ այդ մի հայ տղայ է և իրեն հսկելու պաշտօն ունի, ուստի այլ  
ևս չէր փորձել իր հետքը կորցնելու :

Յաջորդ օրը, կէսօրին, Ռոստոմը մտաւ Կ. Կոմիտէի գրասենեակը,  
ինձ կանչեց մի անկիւն և ասաց .

— Այստեղ փողոցներում, մի բարձրահասակ, նիհար տղայ թափա-  
ռում է անգործ : Երէկ ամբողջ օրը թափառել է, հիմա նորից տեսայ թափա-  
ռելիս : Ի՞նչ իմաստ ունի այդ երիտասարդի պարսպ ման գալը, երբ ճակա-  
տում այնքա՛ն կարիք ունինք մարտիկների : Չե՞ս կարծում, որ աւելի լաւ է  
ուղարկել նրան ճակատ :

Աւելորդ էր համարում մի մարտիկի գրադեցնել իրենով :

Երեկոյեան , Կ . Կոմիտէի նիստից յետոյ , Ռոստոմը նայեց ինձ ու ասաց .  
— Այն տղան դեռ թափառում է :

Այս անգամ իր ձայնի մէջ մի քիչ ասատ կար :

Յաջորդ օրը փոխեցի հսկիչին եւ պատուիրեցի , որ խիստ զգոյշ լինի եւ չբռնուի : Պատմեցի նրան նախորդ հսկիչի անզգուշութիւնը եւ մատնուելը :

Մի առժամանակ հսկողութիւնը պահուեց : Բայց յետոյ , երբ արդէն աւելորդ սեպուեց նաեւ Աբրահամի կողմից , վերացրինք :

#### Կ. ԿՈՄԻՏԵԻ ԺՈՂՈՎԱՏԵՂԻՆ ՓՈԽԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Դա այն օրերին էր , երբ հրապարակուել էր անդլիացիների Բագու գալու խնդիրը : Բանուորական խորհրդում արդէն սկսուել էր երկտրականացած մթնոլորտ : Շահումեանի վարչութեան վերջին օրերին էր : Նա դեռ չէր ընկել , բայց ընկնելու վրայ էր : Այս մասին կը խօսինք մանրամասն : Յենարո-Կասպիայի (Կասպից ծովի կենտրոնի) նաւաստիների բուլշեւիկները մի կողմից , եւ Պետրովի տղաները միւս կողմից , ենթակայ բուլշեւիկների եւ ձախ էս-էրներին պրոպագանդային , գաղազած էին մեր դէմ եւ սպառնում էին պայթեցնել Դաշնակցութեան կենտրոնը եւ մեզ էլ օղը հանել : Նրանց յայտնել էին , որ Դաշնակցութիւնը ուղում է Բագու բերել անդլիացիներին՝ խորհրդային կառավարութիւնը տապալելու եւ Բագուն դնելու համար ձերմակ ուսաների տրամադրութեան տակ :

Ներսէս Զաղէթեանը , որ Գործադիր Կոմիտէի (Բագուի փախստական իշխանութեան) հետախուզական բաժնի պետն էր , յայտնել էր Կ . Կոմիտէին , որ այդ օրը , մանաւանդ զիջերը պէտք էր շատ զգոյշ լինել :

Կ . Կոմիտէն գտնուում էր Կուլտուրական Միութեան նոր շէնքում , Տելերոննայա փողոցին մօտ , Ռեմեսլիննայա փողոցի վրայ , մի հսկայ հինգ յարկանի շէնքի մէջ , որի ամբողջ ներքնայարկը լիքն էր ամէն տեսակի ռազմամթերքով : Ներքնայարկը փողոց էր նայում մայթից մօտ մէկ մետր բարձր պատուհաններով :

Ձինուորականները ասում էին , որ բաւական է մի քանի գնդակ կամ ումբ ներս նետուի այդ պատուհաններից , օղը կը ցնդի ամբողջ շէնքը : Պետրովի տղաները եւ Յենարո-Կասպիայի նաւաստիները կ'անէին այդ , եթէ , իրօք , ուզէին իրազործել իրենց սպառնալիքը :

Յենարո-Կասպիայում եւ Պետրովի մօտ աշխատանք էր տարւում՝ այդ կասեցնելու համար : Միաժամանակ շէնքի մեր պահակազույնը ուժեղացուած էր :

Կ . Կոմիտէի նախագահը՝ Պապաշան , անշուշտ մի քանի ընկերների հետ խորհրդակցելով , այդ երեկոյեան ժողովը փոխադրել էր Շրդ թաղամասի կոմիտէի գրասենեակը : (Տելերոննայա փողոցի վրայ , Ստանիսլաւուսկայա փողոցին մօտիկ) :

Ճաշից յետոյ , չեմ յիշում ի՞նչ գործով , Հայոց Գիւղ էի գնացել : Երբ վերադարձայ , Կ . Կոմիտէի շէնքի պահակապետը յայտնեց , որ ժողովի տեղը

փոխուած է : Հասկացայ , որ պատճառը այն սպառնալիքն է , որի մասին հազորդել էր Ն . Զաղէթեանը :

Գնացի ժողովի : Կ . Կոմիտէն հաւաքուած էր : Օրակարգի նիւթն էր անդլիացիներին Բագու բերելու խնդիրը եւ դրա հետ կապուած պրովակասիոնը մեր հասցէին :

Ռոստոմը բացակայում էր : Ժողովը չէին սկսում՝ սպասելով նրան : Մէկ էլ հնչեց հեռախօսի զանգը , որը գտնուում էր սեղանի վրայ : Ընկալուշը վերցրեց Պապաշան : Նա սկսեց բացատրութիւններ տալ ժողովատեղին փոխելու պատճառների մասին :

Հասկնալի էր , որ խօսողը Ռոստոմն էր : Երևում էր , որ Պապաշան չի կարողանում համոզել խօսակցին : Վերջը շատ մեղաւոր ձայնով ասաց .

— Լաւ , լաւ , — եւ ընկալուշը դրեց ցած :

— Վե՛ր կացէք , յետ գնանք մեր շէնքը :

— Հը՞ , ի՞նչ կայ , ո՞վ էր :

— Դէ , Ռոստոմն էր , չէ՞ք հասկանում : Ասաց . «Անմիջապէս վերադարձէք» :

— Բայց դու չկարողացա՞ր բացատրել կացութիւնը , — հարցրեց Աբրահամը :

— Էլ ինչպէ՞ս բացատրէի . լսել չէր ցանկանում :

— Դէ , մենք լսում էինք՝ ինչպէս էիր բացատրում :

— Հիմա մե՞նք լիճենք : Ասում էր . «Անմիջապէս եկէ՛ք» , պրծաւ : Ելէ՛ք , — ասաց ու , տեղից ելլելով , առաջ անցաւ :

Գուրս եկանք : Շրջապատած Պապաշային՝ գնում էինք :

— Ձէր թողնում , որ խօսեմ : Ասում էր այս հսկայ շէնքը ամայացրել էք : Հարիւրաւոր մարդիկ կարող են դալ , թէկուզ ամենաշնչին խնդրով եւ ձեռնունայն վերադառնալ : Մի՞թէ վայել է Հ . Յ . Դաշնակցութեան ղեկավար մարմնին վախենալ ու թաղնուել այս ձախտազրական օրերին , — պատմում էր Պապաշան :

Հասանք մեր շէնքը : Մեծ թուով ընկերներ կային՝ զանազան խնդիրներով եկած : Ռոստոմը չէր գտնուում : Ուստի եւ պահակը չէր արգելում եկողներին ներս մտնելու : Մէկ-մէկ մտանք Կ . Կոմիտէի սենեակը :

Ռոստոմը նստած էր անկիւնում , հեռախօսի տակը դրած սնտուկի վրայ : Դա մեր արխիւի սնտուկն էր , որի վրայ ժողովների ժամանակ միշտ սիրում էր նստել Ռոստոմը :

Պապաշան նստեց իր տեղում , քթին դրեց կրկնակի ակնոցը եւ ասաց .

— Ժողովը յայտարարում եմ բացուած :

Էլ ոչ մի խօսք չեղաւ տեղի ունեցած զէպքի մասին :

Մեր մուտքի ժամանակ Ռոստոմը այնպիսի արտայայտութիւն ունէր , որ կարծես ոչինչ չէր պատահել : Յետոյ իմացանք , որ Ռոստոմը Պապաշային եւ Աբրահամին նկատողութիւն էր արել՝ ասելով , որ Կ . Կոմիտէի արած քայլը անթոյլատրելի էր թէ՛ իր զիբքի եւ թէ՛ կուսակցական-յեղափոխական դաստիարակութեան տեսակէտից :

ԹԱԴՈՍ ԱՄԻՐԵԱՆԻ ԴԵՊՔԸ

Ճակատագրական ժամեր էր ապրում կռուող Բագուն: Սպայակոյտի (չտարի) պետ գնդապետ Ղազարեանը յայտնել էր Ռոստոմին եւ Արրահամին, որ Բագուի ճակատագրերը կարող էր միտնել մի քանի ժամից եւ եւ միայն մի խենթ էրոյթ կարող էր փրկել Բագուն:

Այդ խիզախ ու խենթ էրոյթը պէտք էր անմիջապէս անել: Մի խումբ ձիաւորներ պիտի անցնէին Գայլի Դրունքը (Բագուն շրջապատող լեռնաշղթայի մէջ մի բացուածք, որ տանում էր դէպի այդ լեռնաշղթայի թիկունքը եւ երկաթուղու ճանապարհի վրայ), պիտի մտնէին խորքը, ապա, այդ կէտից ցրուելով աջ ու ձախ, միաժամանակ ու յանկարծակի պիտի արշաւէին դէպի թշնամու թիկունքը, կրակ բանային ու խուճապի մատնէին թըշնամուն: Այս էրոյթը պատճառ կը դառնար, որ թշնամին խուճապահար նահանջէր եւ այդ ժամանակ մեր ճակատում եղած զօրամասերը, հակայարձակման դիմելով, թշնամուն կը հետապնդէին, եւ այդ կերպով քաղաքը կը փրկուէր:

Այդպիսի մի ձիաւոր ջուկատ գնդ. Ղազարեանը ինքը չէր կարողացել գտնել եւ միայն գաշնակցականներից կազմուած մի ձիաւոր խումբ կարող էր մահուան գնալ եւ այդ էրոյթը կատարել:

Արրահամը եկել էր այդ խնդրով զբաղելու, իսկ Ռոստոմը մնացել էր գնդապետ Ղազարեանի եւ զօրավար Բագրատունու մօտ՝ ուրիշ որոնումներ անելու համար:

Ձիաւորների մի այդպիսի խումբ կազմելու մասին Արրահամը սկսեց բանակցել մեր մարտական զեկավարների հետ, որոնք իրենց կողմից, դիմում էին այս ու այն ձիաւոր գնդերից կանչելիք մարտիկներին, երբ պարզուէր, որ Թաղոս Ամիրեանը իր ձիաւորներով քաղաքումն է եւ ճաշում է «Նոր Աշխարհ» ճաշարանի ներքնայարկում:

Սա այն համբաւուր Թաղոս Ամիրովն էր, որ առաջ եղել էր մեր մարտիկներից, յետոյ դառել էր անիշխանական եւ, կազմելով «Կանաչ հարկերեակ», զբամաշորթութեամբ էր զբաղուել՝ ահաբեկելով Բագուի հարուստներին: Այժմ նա Բագում էր, մասնակցում էր պատերազմական գործողութիւններին, ունէր երկու տասնեակից աւելի շատ խիզախ Գանձակեցի եւ Ղարաբաղցի մարտիկներ, մի քանի հերոս երիտասարդ սպաներ, բոլորն էլ ձիաւոր եւ մինչեւ ատամները զինուած:

Արրահամը հեռախօսով հաղորդեց Ռոստոմին, որ Թաղոսը իր խմբով նստած է «Նոր Աշխարհ» ճաշարանում եւ խորոված է ուտում ու խմում, եւ որ ինքը պիտի փորձէ կանչել նրան՝ այդ գործը նրան յանձնելու համար:

Արրահամը կանչում է Կ. Կոմիտէի շէնքի պահակապետ Մկրտիչին, մեր խիզախ ընկերներից, եւ յանձնարարում նրան գնալ յիշեալ ճաշարանը ու յայտնել Թաղոսին, որ Ազգային Խորհրդի նախագահ Արրահամ Գիւլիանդանեանը խնդրում է նրան շատ կարեւոր գործով գալ Զ. Յ. Դաշնակցութեան շէնքը:

Մկրտիչը գնաց: Նա իջել էր «Նոր Աշխարհ» ճաշարանի ընդարձակ սը-

րահը, ուր մի քանի իրար միացրած սեղանների շուրջ նստած են եղել Թաղոսը եւ իր զինուորները:

— Պարոն Թաղոս, — ասել էր Մկրտիչը, — Ազգային Խորհրդի նախագահ պրն. Արրահամ Գիւլիանդանեանը կարեւոր գործով խնդրում է շտապ գնալ Դաշնակցութեան Բիւրոն:

— Տօ, քո Ազգային Խորհուրդն էլ, քո Արրահամն էլ ու Բիւրոն էլ. կորի՛ր հստեղից, քանի լեաշդ չեմ փոել... — Ախր ուզում է բան ասել... — Դուրս, շուտ, շանորդի, — գոռում է Թաղոսը:

Տղաները վեր են թռչում տեղերից, բայց Մկրտիչը տեղի է տալիս ու հեռանում:

Ո՞վ չէր ճանաչում Արրահամին: Թաղոսը շատ էր յարգում նրան, ինչպէս ե՛ւ իր զինուորները: Բայց ժամանակները փոխուել էին, տրամադրութիւնները ուրիշ էին, եւ Թաղոսն էլ խմած էր:

Մկրտիչը զեկուցում է Արրահամին եղելութիւնը: Արրահամը հեռախօսով յայտնում է այդ մասին Ռոստոմին եւ տեղեկացնում, որ պիտի փորձէ երկրորդ անգամ ուղարկել Մկրտիչին:

— Նա հարբած է, պարոն Արրահամ, — ուզում է հրաժարուել Մկրտիչը:

— Ոչինչ, գնա՛, ասա, որ շատ կարեւոր է եւ խնդրում եմ անպայման դայ:

Մկրտիչը երկրորդ անգամ է գնում: Հազիւ աստիճաններից ցած է իջնում, երբ Թաղոսը քաշում է ատրճանակը.

— Տօ, շան լակոտ, էլի երեւացի՞ր: Մէջքդ ցոյց տուր, թէ չէ՛ տասր գնդակն էլ կարձակեմ վրայ:

Մկրտիչը ոչինչ ասել չի կարողանում եւ ընդհանուր հայհոյանքների ուղեկցութեամբ հեռանում է: Այն պահին, երբ նա ներս է մտնում Դաշնակցութեան շէնքը, նրա յետեւից ներս է գալիս Ռոստոմը:

— Նրանք բոլորը հարբած են, — ասում է Մկրտիչը. — չթողին իսկ խօսել:

— Մեր միակ փրկութիւնը նա է, էն էլ լակած է, — ասում է Արրահամը. — Ի՞նչ անենք, — հարցնում է նա Ռոստոմին:

— Դրանք ձիեր կան, — դիմում է Ռոստոմը Մկրտիչին, — թո՛ւր մէկի վրայ եւ գնա՛ Թաղոսի մօտ եւ ասա, որ Ռոստոմը Բիւրոյում ուզում է քեզ անմիջապէս տեսնել:

Մկրտիչը գոյնը նետում է վախից, բայց ոչինչ չի ասում եւ դուրս է գալիս սենեակից:

— Տղերք, ես գիւլի (գնդակի) բաժին եղայ, մնաք բարեւ, — ասում է Մկրտիչը ընկերներին եւ, հեծնելով առաջին ձիւն, մեկնում է:

— Չե՞ս կարծում, թէ լաւ կը լինի, որ մի հարցնես թէ ի՞նչ են արել մերոնք եւ քանի՞ ձիաւոր են համախմբել, — հարցնում է Ռոստոմը Արրահամին:

— Այո՛, այո՛, ես կը գնամ Ազգային Խորհրդի զբառնեակը եւ այն-

տեղից կը խօսեմ, — ասում է Արրահամը եւ դուրս գալիս:

Երբ Մկրտիչը «Նոր Աշխարհ»ի ստալինիստներին վրայ է երեւում կրկին, մեծ ազմուկ է փրթում, եւ մի քանի ստրճանակներ են ուղղում դէպի նա:

— Ռոստոմը, Ռոստոմը, — սարսափահար կոչում է Մկրտիչը:

— Սպասեցէ՛ք, — զոռում է թաղոսը եւ ոտքի ելնում:

— Առաջ արի, լակոս. ի՞նչ ասացիր:

— Ռոստոմը ուզում է քեզ տեսնել: Բիւրոյում սպասում է, — հաղիւ կարողանում է ասել Մկրտիչը:

— Ռոստոմը, ասում ես:

— Այո՛, ինքը՝ Ռոստոմը:

— Չե՞ս խարում, շան որդի:

— Ազնիւ խօսք...

Թաղոսը մոայլում է, ապա դիմում է տղաներին.

— Տղերք, ձիերք, — ասում է ու առաջ անցնում:

Տղաները ազմկելով վեր են ցատկում եւ հետեւում թաղոսին:

Խմբի ձիերը պատրաստ՝ փողոցումն էին: Բոյորը ցատկում են ձիերի վրայ եւ այնպէս սլանում, որ Մկրտիչը մնում է յետեւում:

Բիւրոյի փողոցում ձիերի սարսափելի զզրոյին յսուեց:

— Թաղոսը եկա...

Մենք՝ երիտասարդներս կպանք պատերին: Վայրենին հարբած էր եւ գալիս էր վայրենիների հետ, ինչ ասես որ չէր կարող պատահել:

Դրոփ-դոփինով մինչեւ ատամները դիմումս մի խումբ մարդիկ ներս խուփեցին սպասման սրահը: Թաղոսը բացեց ժողովի սենեակի դուռը եւ ներս մտաւ, դէմքը կարմրած, աչքերը արիւնակալած: Իր հետ ներս մտան երկու սպաներ, որոնք յետոյ եկան Հայաստան եւ հերոսաբար ընկան Ղարաքիլիսայի ճակատում:

Ռոստոմը, արմուկով յենումս գրասեղանին, ձեռք ծնօտին, ցուցամատը միջուքի մէջ մխրճած, ժպտալով ընդունեց թաղոսին:

Թաղոսը եւ ընկերները դիմուորական բարեւ տուին:

— Այս ճակատագրական ժամին Արրահամը քեզ կանչում է, չես գալիս, — ասաց Ռոստոմը ժպտալով:

— Արրահամը ինձ ուզում է այն ժամանակ, երբ ես հաղիւ հանդստանալու եւ կոկորդս թըջելու վրայ եմ, — պատասխանեց թաղոսը եւ, նորից դիմուորական պատուի կեցած, աւելացրեց. — Լսում եմ հրամանդ:

«Հրամանդ» բառը, կարծես, դիտաւորեալ կերպով շեշտեց, ասես ասել ուզելով, որ էս հրամանով եմ եկել:

Ռոստոմը մի աթոռ քաշեց սենեակի սնկիւնը եւ նշան արեց թաղոսին, որ աթոռ վերցրի ու նստի: Եւ նրանք սկսեցին մեզմ ձայնով խօսել: Թաղոսը հարցումներ է անում եւ լսում Ռոստոմին շատ լուրջ, ասես մի բաժակ էլ խմած չէր:

Մէկ էլ թաղոսը շրջուեց դէպի իր սպաները եւ հարցրեց.

— Յուսիկ, քանի՞ ձիւոր կարող ես հանել դէպի մահ:

— Ինձանով 30 հողի, պարոն թաղոս:

— Բա ե՞ս, լակոս:

— 31 հողի, — ժպտաց Յուսիկը:

Նորից շարունակուեց Ռոստոմի եւ թաղոսի խորհրդակցութիւնը: Երեւի, Ռոստոմը նրան օգնական ուժեր էր առաջարկում:

— Ոչ, պարոն Ռոստոմ, ես մենակ, իմ սպաներով միայն, — ասաց թաղոսը եւ ելաւ ոտքի:

— Ուրեմն, թաղոս, անմիջապէս:

— Անմիջապէս — ասաց թաղոսը եւ, դառնալով Յուսիկին, — բոլորդ պատրաստ:

Յուսիկ բացեց դուռը եւ գոչեց.

— Բոյորը պատրաստ ձիերի վրայ...

— Եթէ սպիտակ ձիերի պէտք ունես, վերցրու ներքեւում պահեստապետից: Չեանտումներ շատ ունեցիր:

— Ամէն ինչ ունինք, բայց ուսմբեր կը վերցնենք հենց հիմա, — ասաց թաղոսը եւ կարծես չէր իմանում ինչպէ՞ս հրաժեշտ տար:

Ռոստոմը հասկացաւ եւ ձեռք մեկնեց՝ ասելով.

— Յաջողութիւն, թաղոս, քեզ եւ տղաներիդ:

Թաղոսը հաճոյքով թօթուեց Ռոստոմի ձեռքը, ասլա նորից դիմուորական ձգուեց եւ տարաւ ճակատին.

— Պատիւ ունեմ:

Նայեց բոլորիս, որ ոտքի վրայ հիացմունքով դիտում էինք մահուան դնացող հերոսին, եւ դնաց:

Նոյնը կրկնեցին իր երկու դինակիցները:

— Ես գնում եմ գնդապետ Ղազարեանի մօտ: Կարգադրիք, որ հեռախօսը անընդհատ կապուած պահուի շտաբի հետ եւ ճակատից եկող լուրերն էլ իսկոյն մեզ հաղորդուին, — ասաց Ռոստոմը եւ դուրս ելաւ սենեակից:

\*\*

Ի՞նչ լարուած վիճակ էր, նկարագրել չի կարելի: Մենք, որ իրազեկ էինք կացութեան, անասելիօրէն ճշուած վիճակում էինք: Իրար հետ խօսել չէինք կարողանում: Քաղաքի եւ հայութեան ճակատագիրը այդ կէս-հարբած, բայց խիզախ մարդկանց ձեռքումն էր: Պիտի կարողանայի՞ն արդեօք անցնել Գայլի Դրունքը, թէ պիտի ուշանային կամ բռնուէին թշնամու կողմից:

Ռոստոմը հեռախօսեց, որ ինքը շտաբումն է: Արրահամը մի քանի անգամ վեր ու վար արաւ վերեւի յարկից մեզ մօտ՝ լուր աննելու համար: Թէեւ վստահ էր, որ լուրը անմիջապէս իրեն կը տրուէր, բայց եւ այնպէս անհանդիստ էր ու ինքն էր գալիս ստուգելու:

Որքա՞ն տեւեց մեր սպասողական վիճակը: Երկո՞ւ թէ երեք ժամ, չեմ կարող ասել, որովհետեւ մեզ յաւիտենականութիւն թուեց այդ ժամանակը: Մէկ էլ շտաբից հաղորդեցին.

— Խումբը անցել է Գայլի Դրունքը: Գնդապետ Ղազարեանը խենթի պէս վեր-վեր է թռչում եւ գոչում է՝ «փրկուած ենք, յաղթութիւն»:

Մէկը խկոյն պոկուեց տեղից եւ սլացաւ դէպի վերի յարկը՝ լուրը Արրահամին հաղորդելու:

Նորից ճնշող, սպասողական միտակ: Բոլորիս մտածումը նոյնն էր: Չլինի՞ թէ բոնուի Թաղոսի խումբը թշնամու կողմից:

Մէկ էլ հեռախօսը հաղորդեց Բայրլովի դիրքերից.

— Թշնամու թիկունքից հրացանաձգութիւն է լսուում: Թշնամին նահանջում է, ուռա՛ւ...

Միւս հեռախօսով շտաբից յայտնում էին.

— Թշնամին չփոթի է մասնուել, տեղ-տեղ նահանջ է նկատուում:

Բալաջարից հաղորդում էին.

— Մեզ անյայտ պատճառներով թշնամին նահանջում է:

Եւ, վերջապէս, շտաբից հաղորդեցին.

— Թշնամին նահանջում է ամբողջ ճակատում: Մերոնք հակայարձակման անցան:

Մեր ուրախութեան սահման չկար: Շատեր գրկախառնուում էին: Ումանց աչքերին արցունքներ կային: Պապաչան ակնոցները հանել եւ աչքերն է սրբում:

Թշնամին նահանջեց տասը վերստի չափ, որոշ տեղեր աւելի, եւ դեռ ամիսներ քաղաքը մնաց անվտանգ:



Կէս գիշերը անց էր, մենք դեռ չէինք գրուել: Կ. Կոմիտէի հերթական նիստը վերջացել էր, թէեւ մի քանի անգամ ընդհատուել էր Թաղոսի խմբի խիզախութեան պատմութիւնով: Բայց դեռ ո՞ւր էր նա, չգիտէինք: Ակնհերեւ էր, որ Ռոստոմը մտահոգ էր: Թաղոսը իր խումբով կարող էր ընկած լինել խաչաձեւ կրակի տակ եւ մեծ գոհեր տուած լինել. գուցէ ինքն էլ էր սպաննուել: Ոչինչ յայտնի չէր եւ հազիւ թէ յայտնուէր մինչեւ առաւօտ:

Հետաքրքրական էր, սակայն, Ռոստոմի պատմութիւնը դէպքի մասին.

«Իրօք, դրութիւնը կրիտիքական էր, իսկ Ղազարեանի ծրագիրը՝ հրաշալի: Երբ նրան յայտնեցին, որ Թաղոսը արչաւեց, էլ հեռախօսից պոկ չեկաւ: Կարգադրութիւններ էր անում ճակատի բոլոր մասերին: Թիկունքը անցնող տղաների դիմացը, մեր դիրքերում, կաղմել էր տուել մի ուժեղ բլուռնոցք, որպէսզի թշնամու թիկունքից հրացանաձգութիւնը լսելուն պէս՝ գնդացիրային, ապա հրացանային անդադար կրակ տեղային եւ յարձակուէին թշնամու վրայ: Միաժամանակ թշնամու աջ թեւից, Բայրլով-Բիրիէյրահէից եւ ձախ թեւից, ինուրդուլայի դիմացից մինչեւ Բալաջարի, պատրաստուում էին հակայարձակում դործելու:

«Լուռ էինք երեքս էլ: Ճակատից եկող զեկուցումները Ղազարեանը հաղորդում էր մեզ շշուկով, կարծես թէ ննջեցեալ կար հարեւան սենեակում: Մէկ էլ, երբ լուր առաւ, որ Թաղոսը իր ձիաւորներով անփորձ անցել է Գայլի Դրունքը, Ղազարեանը վեր թռաւ, սկսեց ծափ տալ եւ խնթի պէս թռչկոտել՝ ասելով. «Յաղթութիւն, փրկուած ենք»:

«— Թշնամու թիկունքում համադարկի ձայն էր լսուում, — յայտնեց Բայրլովը, — թշնամու ճակատում շփոթ է երևում»:

«Այս լուրը ուղղակի խնթացրեց Ղազարեանին, որը հեռախօսի մօտ կանգնած՝ պոռում էր մէկ այս ընկալուչի, մէկ միւս ընկալուչի մէջ:

«— Կրակ, ճակատից կրակ:

«Թուում էր, թէ ինքը ճակատումն է:

«— Գրոհ, միաժամանակ գրոհ, յարձակում ամբողջ ճակատով, — հրամայեց նա:

«Մի փոքր անց ասաց.

«— Թշնամին նահանջում է: Մեր ամբողջ ճակատը շարժուեց եւ անցաւ յարձակումի:

«Այլևս Ղազարեանին պէտք էր կայտուել: Չօրափար Բաղրատունին իսկ ուզում էր ցատկոտել իր կազ տեղովը»:

Ռոստոմը շնորհատրեյ էր ե՛ւ դնդապետին, ե՛ւ զօրավարին ու եկել էր Կ. Կոմիտէի նիստին: Այնուհետեւ մի քանի անգամ կապուեց շտաբի հետ եւ հաւաստիացաւ, որ մեր տաղախաղացումը շարունակուում էր եւ թշնամին նահանջում էր անկանոն: Բիրոյի սենեակում, հերթապահն էր եւ չէնքում քնողներս: Ռոստոմը, Արրահամը եւ Պապաչան վերեւում՝ Աղղային ինքնուրուի սենեակումն էին: Զրոյց էին անում, երբ դուրս բացուեց, եւ ներս եկաւ մի թիկնեղ, մինչեւ ատամները դիմում, փոշեթաթախ մարտիկ: Թաղոսի տղաներիցն էր:

— Պարոն Ռոստոմը էստե՞ղ ա, — հարցրեց:

— Ոչ: Եթէ գործ ունես, կը ճարենք, — պատասխանեցի:

— Այո՛, խնդիրք ունի, կարեւոր ա:

— Գնա՛նք, — ասացի:

Եւ երեք ընկերներ, հետներս հերթապահ, ուղեկցեցինք նրան վերել: Դեռ Ռոստոմի քնելու ժամը չէր, բայց արդէն պահակը դրանն էր:

Չարկի դուռը եւ ներս մտայ:

— Ճակատից եկած մի գինուոր կայ: Ուզում է ձեզ տեսնել, — ասացի՝ դիմելով Ռոստոմին:

— Ներս բեր:

Մարտիկը ներս մտաւ եւ ձեռքը տարաւ ճակատին:

Ցոյց տուի Ռոստոմին եւ ասացի.

— Հրամայեցէ՛ք, պարոն Ռոստոմը:

— Ճանաչում եմ, — ասաց գինուորը եւ դիմեց Ռոստոմին.— Պարոն Թաղոս Ամիրովը հրամայել ա, որ ասեմ ձեզ, թէ հրամանդ կատարել անը եւ եկել անք «Նոր Աշխարհ»ը՝ մեր ճաշը շարունակելու եւ խմում անք Ռոստոմին կենացը:

— Շատ շնորհակալ եմ: Ապրին Թաղոսն էլ, իր տղաներն էլ, — ժրպտալով ասաց Ռոստոմը.— Յոյս ունեմ, որ զոհ չէք տուել:

— Ոչ մի վիրաւոր չունենք: Բոլորը սաղ-սալամաթ են եւ ձեր հրամանին պատրաստ:

— Ապրիս, շատ ապրիք: Թաղոսին եւ տղերանց կ'ասես՝ կեցցէ՛ք:

Մարտիկը նորից ձեռքը տարաւ ճակատին:

— Պատիւ ունիմ, բարի զիչեր, — ասաց, յետ ու դարձ արաւ և զինուորական քայլերով քայլեց սենեակից դուրս:

Մեր եւ Թաղոսի յարարերութիւնները այնքան էլ ջերմ չէին: Այդ անաջ էր դալիս թէ՛ նրա անցեալից եւ թէ՛ մեր մարտական ղեկավարների հետ ունեցած սառնութիւնից:

— Այնուամենայնիս, Թաղոսը խիզախ եւ անփոխարինելի մարտիկ է: Նրան պէտք է գնահատել, — ասաց Ռոստոմը, — նրա այսօր կատարած գործը աննման ու եզակի հերոսութիւն էր:

Եւ իրօք, նա իր այդ արչաւով, որը ստոյգ մահուան գնալ էր, փրկելից Բագուն, և թշնամին, քաղաքը մտնելու փոխարէն, նահանջեց, որով մենք կարողացանք քաղաքը պահել գեռ երկար ժամանակ:

### ՌՈՍՏՈՄ ԵՒ ՇԱՀՈՒՄԵԱՆ

Ես չգիտեմ, թէ մինչեւ Բագունի ղէպերը Ստեփան Շահումեանը որտե՞ր էր հանդիպել Ռոստոմին և ի՞նչ փոխյարարերութիւններ էին նրանք ունեցել իրար հետ: Սակայն, այն օրից, երբ Ռոստոմը եկաւ Բագու, Ստեփանը սկզբում, որպէս բոլշևիկների լիզոր, և յետոյ, որպէս կառավարութեան գլուխ, միշտ շփման մէջ էր մեզ և մասնաւորապէս Ռոստոմի հետ:

Յայտնի էր, որ Ստեփանը եւ իր շրջապատը խորին ակնածանք ունէին նրա հանդէպ: Նրա կարծիքը և առաջադրանքները Ստեփանի համար վճռական նշանակութիւն ունէին: Մենք գիտէինք, որ բոլոր ծանրակշիռ խնդիրներում նա անմիջապէս գիմում էր Ռոստոմի օգնութեան:

Պատահել էր (և այդ մենք ստոյգ գիտէինք), որ իրենց կեդրոնում, երբ մի խնդիր լուծելու համար գծուարութեան էին յանդէլ, Շահումեանը խնդիրը առկախ էր թողել, ապա տակն ու վրայ էր արել քաղաքը, գտել էր Ռոստոմին և խորհրդակցել հետը:

Յիշում եմ նաև Պետրովի ղէպը: Սա մի հին, մի քիչ անիշխանական յեղափոխական էր, բայց իրեն բոլշևիկ էր համարում: Ունէր մի շատ ուժեղ թնդանօթային ջոկատ, մի քանի սպաներ և մի երկու հարիւր զինուոր, բոլորը մինչեւ ատամները զինուած: Սրանք իրեն հլու հպատակ էին: Նա մի նաւ էր խորոխած ծովի ափին՝ վճռական դեր կատարելու համար ռազմաճակատում և քաղաքում: Նա յաճախ չէր ենթարկւում կառավարութեան կամ մերժում էր կատարել նրա ռազմական առաջադրանքները:

Մի օր, կէս զիչերանց, երբ Ռոստոմը քնած էր, Շահումեանը ինքնաշարժով եկել էր Բերդ և պահանջել էր իրեն տանել Ռոստոմի մօտ: Պահալը յայտնել էր, որ Ռոստոմը քնած է և ինքը իրաւունք չունի նրան արթնացնելու:

Շահումեանը դտաւ ինձ և ուղղակի պահանջեց, որ Ռոստոմին արթնացնեմ:

— Կէս ժամ չի լինի, որ քնել է, — առարկեցի, — չի կարելի արթնացնել:

— Բայց մի ժամից այնպիսի բարդութիւններ առաջ կը դան, որ յետոյ մարտել պիտի չկարողանանք:

Շատ պնդեց: Գնացի և արթնացրի:

— Ի՞նչ կայ, — հարցրեց:

— Շահումեանը խիստ շտապ ուզում է, — ասացի:

Շահումեանը ներս եկաւ: Այդ այն զիչերն էր, որ Պետրովը բմբուտացել էր կառավարութեան ղէմ: Ռազմայեղափոխական Կոմիտէն որոշել էր ձերբակալել նրան իր խմբի հետ: Նրանք սպառնացել էին պէտքի ուժով դիմադրել, և Շահումեանը չէր յաջողել հաշտութեան ելք գտնել: Գնացել էին բանակցութեան Ջարարիձէն, Զեյնը և Գեյիբովը: Պետրովը սրանց վար էր դրել որպէս պատանդ և սպառնացել առաջին հերթին գնդակահարել նրանց, եթէ մերժուին իր պահանջները և իրենց ձերբակալելու փորձեր արուին: Ռազմա-Յեղափոխական Կոմիտէն արդէն պատրաստութիւն էր տեսել շրջապատելու Պետրովի խումբը, բախումը անխուսափելի էր:

Շահումեանը հանդարտ խօսելու եղանակը կորցրել էր: Գունատ էր ու ջղազրդիւ: Երբ նա սրտմեց այս բոլորը, Ռոստոմը, մի քիչ իր մօրուքի հետ խաղալուց յետոյ, հարցրեց ինձ.

— Պատրաստ ինքնաշարժ կա՞յ:

— Այո՛, — ասացի:

— Ես կը գնամ Պետրովի մօտ:

— Ոչ, — ասաց Շահումեանը, — այդ չի կարելի. նրա պահակը կարող է կրակել:

Շատ դժուարութեամբ մեր հերթապահը գտաւ Պետրովին հեռախօսի մօտ: Նրան չէին միացնում, և Շահումեանին հաջիս յաջողուեց միացնել տալ: Ռոստոմը կանչել տուեց Պետրովին, որ ուզում է նրան տեսնել: Բայց նա վախենալով ծուղակ բնիկնուց, շատ ներողութիւն էր խնդրել և յայտնել, որ եթէ Ռոստոմը ուզում է իրեն տեսնել, երկու սպաներ կը սպասեն նրան Պետրովսկայա հրապարակի և Բոլշայա-Մորսկայա փողոցի անկիւնում ու նրանք Ռոստոմին կ'ուղեկցեն իր սենեակը, նախ վրայ: Նորից ու նորից ներողութիւն էր խնդրել, որ ինքը չէր կարող գալ:

Ռոստոմը Շահումեանին չի բացրեց հետը և խորհուրդ տուեց նրան գնալ Իսպոլկոմ:

Ռոստոմը վայր իջաւ սեղանից, որի վրայ քնած էր և գնաց՝ աչքերը ճմռելով: Նա տեսնուել էր Պետրովի հետ: Մի ժամից աւելի խօսել էր հետը, իր երաշխաւորութեամբ տարել էր նրան Իսպոլկոմ, ուր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի հետ համաձայնութիւն էր կայացրել և յոգնած վերադարձել էր Բիրօ:

Տղաները թէյ էին պատրաստում: Մի բաժակ դրինք առջեւը: Խմեց: Ժպտում էր և կատակում:

— Բոլորը խենթ են, — ասում էր. — դադադած և խիզախ յեղափոխութիւն են անում, երբ պէտք է գործ անել:

— Հիմա խնդրեմ վերադառնաք ննջարանը, — ասացի, — մի ժամ ու կէս պակաս էք քնել:

— Լաւ, միայն մի ժամ: Կ'արթնացնէք, երբ լուսանայ:

Չարմայանք, որ համաձայնուեց: Երևում էր, որ շատ յոգնած էր: Պահակը փակեց դուռը: Բայց հաղի ժամը լրացած՝ Ռոստոմը արդէն իջել էր ներքեւ:

Շահումեանը չափազանց մտահոգուել էր, երբ լսել էր, որ մերոնք արամազիր էին Ռոստոմին Թիֆլիս ուղարկել:

— Խենթացել էք, — ասաց նա. — անհնար բան է: Ես չեմ թողնի, որ նա հեռանայ Բագուից: Ձեր բոլոր յայտնի ու գաղտնի միջոցները ես օդը կը ցնդեցնեմ: Նրան ձերբակալուած պահելու գնով, հասկանում էք, ես չեմ թողնի, որ նա հեռանայ այստեղից: Ի՞նչ է, դուք ուզում էք մեզ անգլուխ թողնել:

Մեր Կ. Կոմիտէի նիստումն էր, որ նա ասաց այդ, երբ խնդրի մը համար եկել էր մեզ մօտ եւ ներկայ էր մեր նիստին:

Երբ քաղաքում՝ Բոնուսորական Խորհրդում, Իսպոլոմում եւ այլուր ընդհանուր բնօրէի կրող խնդիրներ էին ծագում եւ յուզում մտքերը, Ստեփան Շահումեանը, մեզ հետ բախում չունենալու համար, կանխաւ ցանկանում էր մեր Կ. Կոմիտէի հետ համաձայնութեան գալ: Գիտէր մեր ժողովի ժամերը: Գալիս էր ինքնաշարժով, մտնում էր մեծ ժողովի սենեակը եւ նըստում մեզ հետ ժողովի: Իրեն հետաքրքրող խնդիրների քննութիւնից եւ նըրանց մասին որոշում տալուց յետոյ, լսելեայն դուրս էր գալիս սենեակից եւ հեռանում նոյն ինքնաշարժով:

Կ. Կոմիտէին շատ մօտիկ կանգնած ընկերներից շատ քիչերը եւ Բիրոյի պահակապետը միայն գիտէին նրա ով լինելը:

Որքա՞ն յուզումնալից ժողովներ ենք ունեցել Ստեփան Շահումեանի հետ եւ որքա՞ն սուր վէճեր: Բայց, ի վերջոյ, երբեք չենք ընդհարուել ու վերջը երկու կողմը բաւարարող վճիռով փակել ենք խնդիրը:

Ի՞նչ խօսք, որ Ռոստոմի ներկայութիւնը փրկարար գեր էր կատարում, մանաւանդ Ստեփանին համաձայնութեան բերելու տեսակէտից:

Գաղափարական հակառակորդներ էինք, անշուշտ: Սակայն, պէտք է խոստովանեմ, որ Ստեփան Շահումեանը իր զգացումներով լաւ հայ էր:

\*\*\*

Օգոստոս ամիսն էր: Սարգիս Արարատեանը, Ռոստոմի հետ համախորհուրդ, կազմել էր ծրագիր՝ Բագուի հայութիւնը, ինչպէս եւ Շամախից ու չրջանից Բագու գաղթողները, Ղարաբաղ ու հեռուները փոխադրելու մասին:

Ծրագիրը իր բոլոր մանրամասնութիւններով նա ներկայացրեց Կ. Կոմիտէին:

Այս ծրագիրը իրագործելու համար, պէտք էր որ մէկ կարող ընկեր գնար Թիֆլիս:

Թիֆլիսի ընթացքը դէպի Բագուի մղած պայքարը մեզ զայրոյթ եւ մտահոգութիւն էր պատճառում: Թիֆլիսը իր ռազմական ուժով մեծ աջակցութիւն կարող էր հասցնել մեզ՝ խփելով թշնամու թիկունքից: Բայց Թիֆ-

լիսի պատգամները, ուղղակի ապշեցուցիչ էին: Մենք համոզուած էինք, որ Թիֆլիսում միանգամայն սխալ մօտեցում ունէին խնդիրներին եւ չէին պատկերացնում դրա թիւնը ճշգրտէն: Թիֆլիսը թերագնահատում էր Բագուի սպաքարի արժէքը: Թիֆլիսի աշակցութեամբ մենք տաճիկներին պարտութեան կը մատնէինք, որովհետեւ մենք մեն մենակ նրանց այնպիսի վիճակի էինք մատնել, որ, ինչպէս երևում է մեր ձեռքն ընկած փաստաթղթերից, նրանք արդէն պատրաստուած էին լքել Բագուի ճակատը եւ նահանջել, երբ անդ լիացիների համարտ նահանջով ճակատում ճեղքուածքներ առաջացան եւ մենք ստիպուած եղանք թողնել քաղաքը՝ հազարաւոր զսէր տալով:

Կ. Կոմիտէի մէկ մասը, մանաւանդ Արրահամը, Պապաչան եւ Սարգիսը (Արարատեանը), այն կարծիքին էին, որ Ռոստոմը եթէ երթայ Թիֆլիս, պիտի կարողանայ յեղաշրջել նրանց մտածումները եւ ապահովել մեր յաղթանակը, մանաւանդ հայութիւնը Բագուից Հայաստան տեղափոխելու մեր հոյակապ ծրագիրը:

Բայց Կ. Կոմիտէի մէջ երիտասարդների թելը դէմ էր Ռոստոմի մեկնելուն Բագուից: Եւ այդ՝ երկու կարեւոր պատճառաբանութեամբ.

Առաջինը՝ Թիֆլիս երթալու համար՝ Ռոստոմը պէտք է նաւով մեկնէր Պետրոպոլսկ, ապա հիւսիսային Կովկասում մինչեւ Վլատիկապոլ, այստեղից Ռազմա-վերական ճամբով Թիֆլիս, կամ Պետրոպոլսկից մինչեւ Սև. Ծովի ափը, ապա Բաթում եւ այնտեղից Թիֆլիս: Հիւսիսային Կովկասի մէջ տիրող անիշխանութեան եւ համաճարակների այդ օրերին իսկապէս խենթութիւն կը լինէր այդ:

Երկրորդ՝ Բագուից հանել Ռոստոմին նշանակում էր գլխատել Բագուն, որին մենք՝ երիտասարդներս չէինք համաձայնում:

Բուռն վէճեր տեղի ունեցան: Մենք՝ երիտասարդներս մինչեւ արցունք յուզուած էինք, բայց անճար միացինք, երբ Ռոստոմը վճռականապէս յայտարարեց, թէ անհրաժեշտ է իր գնալը:

Մնում էր նրան ուղեկցելու համար մի շատ ձարպիկ երիտասարդ ընկեր գտնել, որ լաւ ծանօթ լինէր Հիւսիսային Կովկասին եւ տեղական լեզուներին:

Որոշուեց խիստ զազանի պահել Ռոստոմի գնալը: Սակայն, երևում էր, որ ինքը՝ Ռոստոմը չէր ուզում իր գնալը անհատապէս թաքցնել Ստեփան Շահումեանից:

— Այստեղ՝ Բագուում վճռուած է Կովկասի, հայ ժողովրդի եւ նոյնիսկ Ռուսաստանի խնդիրը, — ասում էր Ս. Շահումեանը, երբ Ռոստոմի մեկնելու մասին լսելով՝ եկաւ մեզ մօտ. — Իսկ դուք ուզում էք ուղարկել Ռոստոմին, որին ոչ ոք չի կարող փոխարինել: Այստեղ բազմապիսի կազմակերպութիւններ շարունակական բախման մէջ են: Այն ո՞վ է, որ պիտի կարողանար հարթել Յենարո կասպիի (կասպից ծովի նաւատորմի կենտրոնի) եւ մեր հրամանատարութեան բախումները, որոնք երբեմն այնքան սուր բնօրէի են ստանում, որ քիչ է մնում նաւերը իրենց թնդանօթները ուղղեն քաղաքի վրայ: Ո՞վ կարող է հարթել Ռազմայեղափոխական Կոմիտէի, Յենարո-կասպիի, հրամանատարութեան եւ կառավարութեան միջեւ ծագած վէճերը: Մենք՝ բուլշեւիկներս մեր մէջ ծագած եւ չհարթուող վէճերը նրա միջոցով

ենք հարթած : Մտտացել էք, որ, երբ մեր կենտրոնը երկու մասի էր բաժանուել, Ռոստոմբ մեզ համաձայնութեան բերեց : Հապա դո՞ւք՝ ինքներդ, ձեր Ազգային Խորհրդի եւ Կ. Կոմիտէի, ձեր Կ. Կոմիտէի եւ Բանուորական Խորհրդի Փրակցիայի, ձեր թթու ազգայնականների եւ ձախ ընկերվարականների սուր վէճերը ո՞վ պիտի հարթէ :

Սա. Շահումեանի պատճառարանութիւնները ուժեղ էին, բայց որոշուած էր, եւ Ռոստոմբ պիտի գնար :

Ճանապարհ պիտի գնէի նրան պաղտնի, մի փոքր նստով : Ոչ մի ընկեր ձամբու գնելու համար պիտի չգնար նաւահանդիստ :

Թէ ի՞նչպէս էր Սա. Շահումեանը լրտեսել Ռոստոմբի մեկնումը՝ չգիտեմ : Բայց Ռոստոմբ արդէն նախ մէջ էր եւ նստը պիտի շարժուէր, երբ Ստեփանը ինքնաշարժով եկել էր նոյն նաւահանդիստը եւ երկու գինուորների ուղեկցութեամբ մտել նստը :

— Ձեր ընկերները յամառում են, բայց այս քաղաքից ոչ ոք չի կարող մեկնել՝ առանց իմ թոյլտուութեան, — ասել էր նա Ռոստոմբին. — ձեզ հիմա գինուորները նաւից ցած կ'իջեցնեն, եթէ դուք դուրս չվաք ինձ հետ :

Ռոստոմբ փորձել էր համոզել Ստեփանին, որ ձեռք քաշի իր մտադրութիւնից : Բայց Ստեփանը չէր զիջել եւ, երբ տեսել էր, որ իր թախանձանքները չեն ազդում, յայտարարել էր .

— Ուրեմն, դուք ձերբակալուած կը տարուիք իմ բնակարանը :

Ռոստոմբ զիջել էր : Իր բնակարանը հասնելուց յետոյ, Ստեփանը հեռախօսել էր Պապաչային .

— Պապաչա, Ռոստոմբ ձերբակալուած՝ գտնուած է իմ բնակարանում : Մինչեւ որ ձեր Կ. Կոմիտէն խոստում չտայ, որ պիտի թոյլ չտայ Ռոստոմբին մեկնելու քաղաքից, նա կը մնայ ձերբակալուած : Եւ թէկուզ գործը հասնի զինուած բախումի, ես պիտի չզիջեմ :

Զօրավար Բագրատունին, երբ լսել էր այս մասին, Ռոստոմբին հանդիպելիս լաց էր եղել եւ ասել .

— Բա, անաստուած, դու ո՞նց էիր մեզ մենակ թողնում :

Կ. Կոմիտէն երիտասարդներին պնդումի վրայ իր որոշումը փոխեց : Սակայն, սկսեք էր մէկին ուղարկել : Ի վերջոյ, կանգ առանք մեր շատ փորձուած ընկեր Լևոն Քալանթարեանի վրայ : Նա տարիներ զբաղուել էր Զիֆոնի գործով Վլադիկաւակում : Գիտէր ամբողջ հիւսիսային Կովկասը : Չափազանց էր Ռազմավիրական ձամբան : Նաեւ մարտական ղեկավար ուժ էր : Համաձայնուեց երթալ նոյն առաքելութեամբ եւ անմիջապէս մեկնեց :

Թէ ի՞նչ տառապանքներով էր նա տեղ հասել, տեղը չէ այստեղ պատմել : Սակայն, Թիֆլիսի մեր ընկերները չէին համաձայնուել նրա հետ : Որով՝ միայն թշնամու թիկունքում մի քանի կամուրջների պայթեցման գործն էր նա կարողացել կազմակերպել : Հետեւանքը այն եղաւ, որ մենք մնացինք մենակ եւ, երբ անգլիացիք լքեցին ձակատը, մենք եւս ստիպուած եղանք քաշուել, շուրջ նետելով Բագուի հայութիւնը երկիր փոխադրելու փառաւոր ծրագիրը :

Եթէ Ռոստոմբ Թիֆլիս երթար, թերեւս տարբեր պիտի լինէր : Բայց այդ էլ, ի հարկէ, ենթադրութիւն է :

\*\*\*

Այս դրուագը Ռոստոմբի կեանքից լրիւ չի լինի, եթէ այստեղ չլրատմամ նաեւ Ռոստոմբի ջանքերի մասին ազատելու Ստ. Շահումեանին եւ ընկերներին գերութիւնից :

Էնդելիտում (այժմ Փահլեւի) Ռոստոմբ լուր էր առել, որ այն նստը, որի վրայ գտնուած էր Ստեփան Շահումեանը, իր ընկերներով, փոխանակ Պետրովսկի կամ Հաչտարխան գնալու, խարխալ էր նետել Կրասնաուղսկի նաւահանգստում եւ Ստեփանը իր ընկերներով ձերբակալուել են ուս մենչելիկ կառավարութեան կողմից : Դէպքը պատմում էին հետեւեալ ձևով .

Ստեփանը եւ ընկերները, Բագուի կառավարութեան անկումից յետոյ (անգլիացիներին հրաւիրելու առնչութեամբ), ապրում էին մի մեծ նստում : Քաղաքը ընկնելուց եւ նստերը ափից հեռանալու պահին, երբ իմացել էին, որ իրենց նաւապետը մենչելիկ է եւ իրենց անհաշտ հակառակորդ, կամեցել էին նստը տանել Հաչտարխան : Թաղէս Ամիրեանն էլ, որ նոյնպէս այդ նստումն էր գտնում, որովհետեւ իր եղբայրը այդ նստումն էր, ատրճանակը ձեռին, պահակ էր կանգնել նաւապետի խցիկին մօտ հսկելու, որ նա չչեղի Հաչտարխանի ձանապարհից : Նաւավարը խոստացել էր կատարել նրա հրամանը : Սակայն, նա, աւելորդ պտոյաններ կատարելով, սպասել էր մութը ընկնելուն, եւ, օգտուելով մթութիւնից, ջշել էր նստը ուղիղ դէպի Կրասնաուղսկ : Խարխալ նետելուն պէս, անյայտացել էր եւ, ափը իջնելով, իմաց էր տուել տեղական հակառուչելիկ իշխանութեան, թէ բերել է Բագուի բուլչելի 20 կոմիսարներին : Կառավարութիւնը խեղոյն շրջապատել եւ ձերբակալել էր տուել նրանց :

Այս լուրը մեծ մտահոգութիւն էր պատճառել Ռոստոմբին : Նա գիտէր, որ այդ անպատասխանատու եւ խառնակ օրերին, երբ տեղական իշխանութիւնները, առանց խորը մտածելու, աջ ու ձախ ոչնչացնում էին իրենց հակառակորդներին, Ստեփանի եւ ընկերների կեանքն էլ կարող էր վտանգուել : Ուստի որոշել էր ընկերներ ուղարկել՝ նրանց փախցնելու համար :

Այդ նպատակով Ռոստոմբը Կրասնաուղսկ ուղարկեց փորձուած եւ հին դաշնակցական Կարապետ Պարունակեանին, մի քանի խիզախ ընկերների հետ, որոնք տեղական մեր կազմակերպութեան հետ շատ զազտնի կերպով պիտի կազմակերպէին Ստեփանի եւ ընկերների փախուստը :

Կարապետ Պարունակեանը ընկերների հետ տեղ էր հասել ձկնորսական նստով : Տեղական մեր կազմակերպութեան հետ անցել էր գործի : Բայց արդէն ուշ էր եղել : Այդ օրերին Կարմիր Բանակը սկսել էր ճնշել անդրկասպեան Սպիտակ ուժերին եւ այդ պատճառով հակառուչելիկ իշխանութիւնը շատ հապճեպով, առանց դատի, գնդակահարել էր տուել Ստեփանին եւ իր 26 բուլչելիկ ընկերներին :

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԲԱԳՈՒ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ  
Փ Ո Փ Ո Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ռազմական եւ քաղաքական կացութիւնը Ազգային Խորհրդին եւ Կ. Կոմիտէին բերին այն եղբակացութեան, որ պէտք էր Անգլիացիներին հրաւիրել Բազու:

Խնդիրը շատ լուրջ բնոյթ ստացաւ, որովհետեւ դժուար էր համոզել բոլշևիկներին:

Էս-էրները եւ Էս-Դեկները իրենց հաւանութիւնը տուել էին եւ մենք կարող էինք խնդիրը դնել Բանուորական Խորհրդում, տապալել կառավարութիւնը, որ գլխաւորում էր Ստեփան Շահումեանը, եւ կազմել նոր կառավարութիւն, որը եւ Անգլիացիներին Բազու կը բերէր: Բայց մենք չէինք ուզում խնդիրը այդ ձևով կարգադրել, որովհետեւ դա կարող էր բախումներ բերի ստեղծել: Բոլշևիկները ունէին քաղաքում իրենց զբաժանատու ջոկատը եւ բոլշևիկեան արամադրութիւններով վարակուած մի երկու ուսական զնդեր: Կար նաեւ Ռազմայեղափոխական Կոմիտէի գունդը, մեծ մասամբ կազմուած վրացիներից, որ միանգամայն ենթակայ էր Ջալալբեկին: Այդ պատճառով Ռոստոմը մի քանի անգամ խօսել էր Ստեփանի հետ եւ, ի վերջոյ, նրանք համաձայնութեան էին եկել, որով Անգլիացիք ցամաք պիտի իջնէին եւ Ստեփան Շահումեանը, Մուրմանսկի դէպքի օրինակով, իր կառավարութեան կողմից պիտի բողոքէր Անգլիացիների այդ քայլի դէմ, եւ խնդիրը պիտի փակուէր զբանով:

Այս համաձայնութեան նախապայմանն էր խիստ զաղտնապահութիւնը: Ցենտրո-Կասպին էլ, որ արդէն մենշևիկների ձեռքն էր, որոշել էր լուծութիւն պահել անգլիական զօրքը Բազու փոխադրող նաւերը մեր ջրերը մտնելու մասին: Սակայն, այդ լուծիւնը չպահուեց: Մեր հայ Սոցիալ-Դեմոկրատներից մէկը, պարծենկոտութիւնից թելադրուած թէ անփորձութիւնից, իր մտերիմ մի բոլշևիկ ուսի հետ խօսելիս, յայտնել էր այդ գաղանիքը: Բոլշևիկը անմիջապէս խնդիր էր յարուցել եւ իրար խառնել Իսպոլկոմը:

Նոյն երեկոյեան մեր ժողովին եկաւ Ստեփանը, խիստ վրդովուած, եւ յայտնեց եղելութիւնը:

Պարզուեց, որ գաղանիքը դուրս տուող Սոցիալ-Դեմոկրատը Հայոց Ազգային Խորհրդի անգամ էր: Նրան գտան եւ կանչեցին: Ստեփանը պարզեց նրա շնորհիւ ստեղծուած կացութիւնը եւ յայտնեց, որ այլևս իր տուած խոստումը յետ է առնում եւ Բանուորական Խորհրդի առաջիկայ նիստի մէջ պիտի հրապարակի: Ինչ խօսք, որ թէ՛ կառավարութիւնը, եւ թէ՛ բոլշևիկ պատգամաւորները եւ ձախ Էս-էրները պիտի ընդդիմանային եւ Անգլիացիներին հրաւիրելու խնդիրը պիտի վիժէր: Երբ այդ լսեց մեր Սոցիալիստ-Դեմոկրատը, ուշաթափուեց, եւ նրան մեծ դժուարութեամբ ուղքի բերին սպասման սենեակում:

Յաջորդ օրը Ստ. Շահումեանը տեսնուել էր Ռոստոմի հետ եւ խնդրել, որ Դաշնակցութիւնը չտապալի իր կառավարութիւնը՝ խուսափելու համար քաղաքացիական կռուից: Բայց Ռոստոմը չէր կարողացել նրան խօսք տալ, քանի որ, առաջին՝ ինքը կողմնակից էր Անգլիացիներին Բազու բերելուն եւ,

երկրորդ՝ նոյն գիշեր Կ. Կոմիտէն որոշել էր տապալել Ստեփան Շահումեանի կառավարութիւնը՝ Անգլիացիներին Բազու բերել տալու համար:

Աշխատանքները բաժանուած էին արդէն, եւ մեր Կ. Կոմիտէն իր լիակատար պահանջները տուել էր Բանուորական Խորհրդի դաշնակցական Փրակցիային, որ իր նիստը ունեցել էր եւ որոշել իր անելիքը: Ի միջի այլոց դաշնակցական Փրակցիային հաղորդուած էր, որ Կ. Կոմիտէն պիտի աշխատէր թոյլ շտալ բոլշևիկներին քաղաքացիական կռիւ սկսելու: Հակառակ դէպքում զինու զօրութեամբ նա պիտի գործադրի արուած որոշումը:

Նշանակուած էր Բանուորական Խորհրդի նիստը, որի օրակարգն էր՝ «Աջակողմեան կուսակցութիւնների կողմից Անգլիացիներին Բազու հրաւիրելու ցանկութիւնը»:

Բոյրը կուսակցութիւնները մասնակցում էին իրենց լրիւ կազմով: Առհասարակ նստում էինք Նաւուալ կարգով:— Ձախ կողմում՝ բոլշևիկները, ապա ձախ Սոցիալիստ-Եղափոխականները, ապա մեր Փրակցիան կենտրոնում, յետոյ Էս-էրները եւ ծայրայեղ աջ կողմում էլ Էս-Դեկները, իսկ թիկունքում անկուսակցականները:

Ստեփան Շահումեանը որպէս կառավարութեան գլուխ, զեկուցեց խնդիրը եւ շատ բուռն կերպով քննադատեց այդ առաջարկը՝ խելով բուռն ծափեր:

Առաջին խօսք վերցնողն էր Ալեօշա Ջարարբեկն՝ որ շատ սուր, խայթող քննադատական խօսքերով յարձակում գործեց մեզ վրայ՝ աշխատելով վարկարկել մեզ: Մերոնց վրդովմունքը այնքան մեծ եղաւ, որ, հակառակ արուած հրահանգին, մեր ամբողջ Փրակցիան ստփի էաւ եւ աղմկալից բացառանքութիւններով փորձեց լսեցնել Ալեօշային: Բանուորական Խորհրդի աջ թեւը մեզ հետ ստփի ելաւ: Ոտփի ելան եւ բոլշևիկները:

Ստեփանը յայտարարեց, որ եթէ ժողովը չիաղազուի, ինքը զինուորական ուժ կը կանչէ: Այդ յայտարարութեան վրայ մի այնպիսի անասելի ժխոր սկսուեց, որ ամբողջ նախագահութիւնը ոտփի ելաւ՝ աղերսելով խաղաղուել:

Մեր պահանջով, առաջ լսեց բոլշևիկեան Փրակցիան, ապա մեր Փրակցիան եւ մեզ հետեւեց ամբողջ աջ թեւը: Ըստ կարգի, մեր ընկերներից մէկը յայտարարեց, որ ոչ ոք թոյլ չտայ իրեն սպառնալիքներ կարգալու ժողովին, ինչպէս եւ վիրաւորական արտայայտութիւններ անելու:

Նախագահ Ֆիլալետովը ցաւ յայտնեց, որ Ալեօշան մի անգոյշ արտայայտութիւն արեց եւ խնդրեց, որ այլևս նման արտայայտութիւններ չունենան:

Ըստ կարգի խօսեց եւ Ստեփանը եւ խնդրեց կրքերը չբորբոքել: Ասաց, որ դրուած է շատ լուրջ խնդիր, որը պէտք է վճռել ոչ թէ՛ կուսակցական շահախնդրութեամբ, այլ Բազուի բանուորութեան եւ յեղափոխութեան շահերի տեսակէտից:

Ապա Ալեօշան շարունակեց իր ձառը, այս անգամ խիստ զգոյշ: Ի հարկէ, չէր խուսափում երբեմն սլաքներ նետել մեր կողմը:

Սուսեց եւ Այոլոն, Էս-Դեկ լիզը եւ լաւագոյն խօսողը: Նա խիստ տրամաբանական ճառով ապացուցեց, որ մեր պայմաններում անհրաժեշտ է

օգտուել Անգլիացիների ռազմական ուժից, եւ թոյլ չտալ, որ թշնամի, յետագէմ ու հակադիպոտիսական փաշաների բանակը գրաւի յեղափոխական Բազուն: Ճառը լսուեց խոր ուշադրութեամբ:

Սօսեցին եւ մեր ընկերները, ինչպէս եւ հս-էրները: Յետոյ բոլջեւիկները հրատարակ բերին իրենց ծանր թնդանօթները, մինչեւ իսկ Ջեւիին: Վերջում խօսեց Ստեփանը, շատ քաղաքավարի, շատ ուժեղ եւ յոյս յայտնեց, որ քուէարկութիւնը պիտի լինի ի նպաստ իր կառավարութեան եւ ընդգէմ Անգլիացիներին Բազու բերելու առաջարկին:

Դեռ քուէարկութիւնը չսկսուած՝ սրահի պատուհաններից երեւաց, որ շէնքը շրջապատուած էր գրահապատ ինքնաշարժներով: Կասկած չկար, որ գրանց բերել էին տուել բոլջեւիկները՝ իրենց համար աննպաստ քուէարկութեան ղէպքում մեզ ձերբակալելու եւ քաղաքացիական կոիւ սկսելու համար: Քուէարկութիւնը ցոյց տուեց, որ մեր բանաձեւին ձայն էր տուել պատգամաւորների ձնշող մեծամասնութիւնը:

Մեզանից մի քանի հոգի, որ դնացել էին բեմ խօսելու, այլևս ցած չէին գալիս: Նախագահութեան մէջ եղած մեր ընկերները նկատել էին, որ Ստեփանը, Ալեօշան եւ միւս բոլջեւիկ ղեկավարները խորհրդակցում էին այս մասին, որ գրահապատների զինուորները ներս կանչեն եւ կատարել տան ձերբակալութիւններ: Քիչ յետոյ նրանց լուր են բերում, որ գրահապատները բոլոր զինուորները եւ սպաները փոխուած են: Ալեօշան իսկոյն շտապում է հեռախօսի մօտ, կանչում յատուկ գունդի հրամանատարին եւ կարգադրում, որ նա իր վրացի մարտիկներին անմիջապէս բերի Բանուորական Սորհրդի շէնքը: Նրան յայտնում են, որ գունդը բաղնիքումն է եւ որ նրանց ղէնքերը յայտնի չէ թէ ո՛ւմ հրամանով հաւաքուած են եւ փակուած:

Ալեօշան, ուղղակի յուսահատուած, յայտնում է այդ մասին իր ընկերներին եւ պահանջում, որ երկու բոլջեւիկեան գնդեր բերուեն: Նրանց հրամանատարը մօտենում է հեռախօսին: Պարզում է, որ այդ գնդերից մէկը ուղարկուած է անյայտ ուղղութեամբ, իսկ միւսը զինաթափ է արուած ու փակուած Սալիանսկայա զօրանոցի մէջ:

Նախագահութեան եւ կառավարութեան անդամները, գունատ ու ջղային, քննում են խնդիրը եւ ի վերջոյ, Ստեփանը գալիս է բեմի առաջամասը: Նա յուզուած հաղորդում է, որ Բազուի Յեղափոխութեան թիկունքին դանակ է խփուել, որ քուէարկութեան արդիւնքը ի նպաստ աջակողմեան բանաձեւին է եւ որ իր կառավարութիւնը ներկայացնում է իր հրաժարականը:

\*\*\*

Ծանր ու ճնշող պահեր էին: Հեռախօսով լուր արուեց մեր Կ. Կոմիտէին, ուր Ռոստոմը սպասում էր լուրի: Բոլջեւիկեան լիդերները հաւաքուել էին միասին: Նրանց թոյլ տուին ընտրել որեւէ նաւ եւ ապրել նրա մէջ:

Մինչեւ մենք հասանք Կ. Կոմիտէի շէնքը, արդէն Արրահամը նշանակուած էր զիկտատոր եւ հրահանգներ էր տալիս աջ ու ձախ՝ թէ՛ քաղքենի անդորրութիւնը պահպանելու, թէ՛ ճակատը ամուր պահելու եւ թէ՛ առհասարակ իշխանութեան հետ կապուած խնդիրների մասին:

Արրահամի իշխանութիւնը շարունակուեց, մինչեւ որ Բանուորական Սորհուրդը կարողացաւ կազմել իր նոր կառավարութիւնը, որը եւ Բազու հրախիւսեց Անգլիացիներին: Յայտնի է, որ մեր պատգամաւորը Անգլիացիների մօտ Սարգիս Արարատեանն էր:

Պատմութիւնը լրացնելու համար, պիտի աւելացնեմ, որ այդ օրուան մեր յաղթանակը մասամբ միայն պարտական էինք մեր ձայների մեծամասնութեան, սրովհետեւ բոլջեւիկները հաստատ սրտած էին մեզ բոլորիս ձերբակալել, սպա գրաւել մեր Կ. Կոմիտէի շէնքը, ցրել Հայոց Ազգային Սորհուրդը եւ յայտարարել բոլջեւիկեան իշխանութիւն: Եւ մենք պիտի պարտուէինք, եթէ նախապէս զրա առաջին առած չլինէինք:

Այդ նախաինամական աշխատանքը, Ռոստոմի խորհրդով ու ցուցմունքներով կատարել էր Ներսէս Ջաղէթեանը: Վերջինս հետախուզական բաժնի վարիչն էր եւ գիտէր ամէն ինչ: Նրա թելադրութեամբ էր, որ բոլջեւիկ Ջարարիձէին ենթակայ յատուկ գունդը բաղնիք էր ուղարկուել եւ ղէնքերը գրաւուել էին: Նրա շնորհիւ էր, որ գրահապատ գնդի բոլոր սպաները եւ զինուորները փոխուած էին, իսկ երկու բոլջեւիկեան գնդերն էլ անվտանգ դարձած:

Բոլջեւիկները վերջէն վրէժխնդիր եղան, Ներսէս Ջաղէթեանին ձերբակալեցին Ազգային խորհրդայնացման օրերին, տարան բանտարկեցին Բազուի մօտիկ Նարգին կղզում եւ այնտեղ էլ գնդակահարեցին, մեր մի քանի ուրիշ ընկերների հետ:

Ներսէսը անսպառ եռանդով, աննկարագրելիօրէն ճարպիկ, խելօք եւ հաւատաւոր դաշնակցական էր, կազմակերպչական մեծ ընդունակութիւնների տէր: Բազուի այդ ծանր օրերին անդնահատաւի գործ կատարեց, եւ այդ գործն էլ յետոյ նրա գոհուելու գլխաւոր պատճառն եղաւ:

### ԲԱԳՈՒԻ ՊԱՏԱՍԵԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Ստ. Շահումեանի կառավարութեան անկման երկրորդ օրն էր: Արրահամի զիկտատորութեան 25 ժամը լրացել էր: Պէտք էր ուժեղ նոր կառավարութիւն ստեղծել: Պէտք էր Անգլիացիներին Բազու բերելու խնդիրը կարգադրել, — մի խնդիր, որ արդէն սուր պայքարի առիթ էր եղած: Պէտք էր, վերջապէս, ռազմաճակատը փրկել սպառնացող փլուզումից, իսկ քաղաքը՝ անիշխանութիւնից:

Սակայն, գանազան քաղաքական հոսանքների միջեւ միակամութիւն չկար: Այդ զիշեր խառն նիստ էր նշանակուած՝ վերջնականօրէն վճռելու համար խնդիրը: Նիստին մասնակցում էին՝ Յենարօ-Կասպիի, Յամաքային Բանակի, Ռուս հս-էրների, հս-Դեկների, Հայ հս-էրների, Հայ հս-Դեկների, Հ.Յ.Դ.Ի, Արհեստակցական Միութիւնների Կենտրոնի եւ Բանուորական Սորհրդի Փրակցիանների ներկայացուցիչները: Կային նաեւ Բազուի նաւահան-

գիտաբան մտած երկու ուղղությունների ներկայացուցիչները, որոնցից մէկը կրաս-նաուստիկ (Անգլո-կրաստեան շրջանից եկած նաւի հրամանատարն էր՝ յաղթան-դամ եւ թիկինեղ Գոլուրբը) :

Բայելովում մեր կուսակցական ակումբներից մէկի մի ոչ շատ մեծ սենեակումն էինք : Հ. Յ. Գալանկյութիւնը ներկայացնում էին Ռոստոմը, Սարգիս Արարատեանը, Սերգէյ Մելիք-Նոյնեանը եւ ես :

Ես նստած էի Գոլուրբի եւ մի նաւային սպայի միջեւ, որի հետ շատ յաճախ հանդիպել էի Բանուորական Սորհրդում : Նա էս-էր էր եւ եկել էր Յենարո-Կասպիի կողմից : Նա ինձ ներկայացրեց Գոլուրբին :

— Ազգային Սոցիալիստ-Յեղափոխական, — բնորոշեց նա մեր կուսակ-ցութիւնը :

Բուռն վէճեր սկսուեցին մի կողմից՝ Յենարո-Կասպիի ներկայացուցիչ-ների ու էս-էրների եւ միւս կողմից էլ՝ էս-Գեկ(մենչեւիկ)ների ու Արհես-տակցական Միութիւնների միջեւ :

Երբեմն նոյն կուսակցութեան պատկանող, բայց տարբեր մարմիննե-րից եկած ներկայացուցիչներին միջեւ այնքա՛ն սուր վիճարանութիւններ էին լինում, որ քիչ էր մնում ժողովը պայթէր : Մի քանի անգամ մեր կողմից արտայայտուողներ եղան : Սարգիսը բազմաթիւ անգամներ բացատրական լուսարանութիւններ տուաւ : Մեր տեսակէտը պարզ ու մեկին ձեւակերպուած էր Կ. Կոմիտիի կողմից : Սակայն, երեւում էր, որ միւս կողմակերպու-թիւնները վերջնական տեսակէտներ չունէին : Երբեմն ճառեր էին արտասան-ւում, որ ամէն բոլոր սպասում էինք պայթումի : Մենք պիտի դրուէինք շատ ծանր կացութեան մէջ, եթէ իրաւախոհութիւն տեղի չունենար :

Սարգիսը շատ էր աշխատում հող գտնել՝ կառավարութիւն կազմելու համար, բայց չէր յաջողում : Նա նստած էր Ռոստոմի մօտ եւ, խօսելուց ա-ռաջ, նրա կարծիքն էր անում :

Ճիշդ է, որ ուսաները յատկապէս նրան շատ ուշադրութեամբ էին լը-սում, բայց յետոյ նորից բախում էին իրար եւ, նորից ու նորից կրկնելով իրենց փոխադարձ մեղադրանքները, համաձայնութեան չէին գալիս :

Մօտս նստած մեր ծանօթը մի քանի անգամ ականջիս ասաց կամացուկ .

— Ինչո՞ւ Ռոստոմը չի խօսում :

Նախագահ կապիտան Ֆլոտովը, որ Բագում բաւական յայտնի դէմք էր, աչքով էր անում մեզ թէ՛ ասացէք, որ Ռոստոմը խօսի : Ժամը գիշեր-ուան երեքն էր : Մթնոլորտը այնքա՛ն էր ելիկտրականացած, որ այլեւս շա-րունակել չէր կարելի : Սերգէյ Մելիք-Նոյնեանը բաւական բարձր՝ հայերէ-նով ասաց .

— Ռոստոմ, խօսի՛ր վերջապէս :

Ռոստոմը ոտքի ելաւ :

— Փառք Աստծու, — բացազանչեց նախագահը գոհունակութեամբ, — խօսքը պատկանում է Ռոստոմին :

Ռոստոմը ճարտասան չէր, սակայն, այդ օրը զարմանալի լաւ խօսեց : Զարմանալի դանդաղ ու պարզ, լսողի մտքերը մտրակող ուժով արտայայտ-ուեց : Վերլուծեց տիրող կացութիւնը յստակ ու ճիշդ, պարզեց Բագուի բո-

լոր կազմակերպութիւնների վրայ ընկած ծանր պատասխանատուութիւնը : Խստորէն բնորոշեց կողմերի սխալ մօտեցումները զրուած խնդրին, վեր հա-նեց նրանց եսական նկատառումները : Խօսեց այնպիսի անկողմնակալու-թեամբ եւ սրացուցիչութեամբ, որ շահեց բոլորի համակրանքը : Քննեց եղած առաջարկները, որոնք բախման պատճառ էին դառնում եւ մատնանչեց նը-րանց վերացնելու միջոցները :

Ժողովականները դէմքերը պայծառանում էին, եւ մարդիկ կարծես սկսում էին ադաս շնչել :

Ի վերջոյ, Ռոստոմը ձեւակերպեց ստեղծուած կացութիւնից դուրս գալու եւ Բագուն փրկելու միջոցները, ճշգրեց իրաքանչիւր կազմակերպու-թեան դերն ու պարտականութիւնը, Բանուորական Սորհրդի առաջիկայ նիս-տում նոր կառավարութիւն կազմելու եղանակը :

— Կարծում եմ, — եզրակացրեց նա, — որ ձեր յեղափոխական միտքն ու պատասխանատուութեան զգացումը պիտի թելադրեն ձեզ ընդունել իմ ա-ռաջարկները, վերջ տալ անպտուղ եւ վնասակար վէճերին եւ անմիջապէս անցնել զործնական աշխատանքների :

Երբ Ռոստոմը վերջացրեց, մի պահ բոլորը լուռ մնացին : Ոչ ոք այլ-եւս ձայն ուզեց : Նախագահը ոտքի ելաւ .

— Այս վերջին ճոռով, — ասաց նա, — ես կարծում եմ, որ վերջա-նում են նաեւ մեր վէճերը : Ընկեր քարտուղարը արձանագրել է բոլոր առա-ջարկները : Կարծում եմ, որ պէտք է կարդանք եւ քուէարկենք :

Զարմանալի ճշգրտութեամբ արձանագրուած էին Ռոստոմի առաջարկնե-րը : Կարդացուեցին : Մի քանի լրացումներ եղան : Նախագահը առաւ Ռոս-տոմի հաւանութիւնը այդ լրացումների մասին :

— Ուրեմն, ընկերներ, համաձայն էք քուէարկել այս առաջարկները ամբողջութեամբ, մէկ անգամից :

— Այո՛, այո՛ :

— Ովքե՞ր են դէմ :

Ոչ ոք :

— Առաջարկները անցան միաձայն : Նիստը յայտարարում եմ փակ-ուած, — յայտարարեց նախագահը :

Ժողովականները ուրախ բացազանչութիւններով վեր թռան տեղերից եւ շրջապատեցին Ռոստոմին : Առաջինը նախագահ Ֆլոտովն էր, որ սեղմեց նրա ձեռը եւ ասաց .

— Դուք, թէեւ ուշ, բայց փրկեցիք ե՛ւ մեզ ե՛ւ Բագուն :

Գոլուրբը, յաղթանդամ մարմինը առաջ հրելով, նոյնպէս մօտեցաւ Ռոստոմին, վերցրեց նրա ձեռը եւ, ուժեղ թափահարելով այն, իր բամբ ձայնով ասաց .

— Դուք իսկապէս Ռոստամ էք — խոժոռ մտքի, ամուր կամքի եւ մեծ յեղափոխականի սրտի տէր Ռոստոմ : Ես երջանիկ եմ, որ ձեզ հանդիպեցի, եւ յեղափոխական Բագուն հպարտ է, որ ձեզ ունի իր մէջ : Եթէ թոյլ տաք, ես կը համբուրեմ ձեր ձեռքը :

Ռոստոմը ձեռը յետ քաշեց :

— Այդ դէպքում ձեր ճակատը, — ասաց Գոլուբելը, կռացաւ ու համբուրեց Ռոստոմի ճակատը:

Բոլորը յուզուած էին, իսկ մենք՝ դաշնակցականներս՝ աւելի եւս:

Լոյսը բացուած էր, երբ եկանք Հ. Յ. Գաշնակցութեան շէնքը եւ տեղափոխուեցինք բազմոցների մէջ: Բայց մեզինչ ոչ մէկը չկարողացաւ քնել:

Նոյն օրը, Բանուորական Խորհրդի նիստում, զիջելուան խորհրդակցութեան որոշումների համաձայն, կազմուեց Բազուի նոր կառավարութիւնը, եւ Բազուն շարունակեց իր անհասարկ կոխը՝ չըջապատող թշնամու դէմ:

### ՌՈՍՏՈՄԻՆ ԶԻՆԱԹԱՓ ԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Իշխանութեան փոխանցման օրերն էին: Յենարօ-Կասպին աշխատում էր կացութեան տէր դառնալ: Նրա նաւաստիները փոքր խմբերով շրջում էին փողոցներում՝ կարգը պահպանելու պատրուակով եւ գինաթափ էին անում բոլորին, որոնք գէնք կրելու իրաւունք չունէին:

Մի երեկոյ, երբ սրգէն ճրագները վառուած էին, Տեյեղոննայա եւ Ստանիսլաւսկայա փողոցի անկիւնում Ռոստոմին շրջապատում է 6-7 հոգուց կազմուած նաւաստիների մի խումբ:

- Ձէնք ունե՞ս, — հարցնում են նրան:
- Այո՛, մի ատրճանակ, — պատասխանում է Ռոստոմը:
- Արտօնագիր ունե՞ս:
- Ո՛չ:
- Դէ, ուրեմն, ի՞նչ իրաւունքով ես կրում այդ ատրճանակը: Տո՛ւր մեզ:

- Ձե՞զ տամ ատրճանակս:
- Այո՛, այո՛, անմիջապէս:
- Ծատ լաւ, ատրճանակս կը տամ: Բայց լաւ է, որ գնանք այն խանութը, այնտեղ լոյս է, կը տեսնեմ թէ ո՞ւմ եմ տայիս գէնքս:

Նաւաստիները վիճում են իրար հետ եւ, ի վերջոյ, համաձայնում:

— Գնա՛նք, գնա՛նք:

Գնում են Ռոստոմի ցոյց տուած խանութը, որը Նրդ թագամասի մեր Կոմիտէի գրասենեակի առաջամասն էր: Սա մի մեծ խանութ էր, որ ծառայում էր Կոմիտէի հետ գործ ունեցողներին սրպէս սպասման սենեակ: Խանութի յետեւի սենեակներում գտնուում էր մեր Կոմիտէի գրասենեակը:

Խանութին մօտենալով՝ Ռոստոմը տեսնում է անցնում եւ ներս մտնում:

- Տեսէք, թէ սրանք ի՞նչ են ուզում, — ասում է նա եւ մտնում գրասենեակ:
- Նաւաստիները ներս են խուժում:
- Ո՞ւր գնաց, նա ատրճանակ ունի, դուրս կանչեցէք նրան:
- Ի՞նչ ատրճանակ, ի՞նչ էք ասում, — հարցնում են չորս կողմից:
- Պիտի գինաթափ անենք:
- Ո՞ւմ, — հարցնում են ներկաները, — դուք ճանաչո՞ւմ էք նրան:

Նա Ռոստոմն էր:

— Ի՞նչ, Ռոստոմը: Տղաներ, նա Ռոստոմն է եղել, — ասում է նրանցից մէկը: (Ռուսները նրա անունը Ռոստոմ էին արտասանում):

- Ռոստոմ, Ռոստոմ, հապա ինչո՞ւ ասաջ չէր ասում:
- Նա այդ չի սիրում, — բացատրել էին մեր ընկերները:
- Նու ուրեմն (դէ՛, տղաք), գնանք: Ռոստոմն է եղել, ուրեմն, վերջացաւ:

### ՌՈՍՏՈՄԸ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Թէ՛ հնում եւ թէ՛ մանաւանդ մեր օրերին մեր բոլոր ընկերները, մանաւանդ ղեկավար ընկերները շատ բան պէտք է սովորէին Ռոստոմից: Ոչ ոքի ոչ յիշատակը եւ ոչ էլ ներկայումս ապրող ու զործող ընկերների ինքնասիրութիւնը չեմ ուզում վերադարձ լինել, եթէ ասեմ, որ նա եզակի, անզուգական էր որպէս մարդ, ընկեր, ղեկավար՝ իր վերաբերմունքով դէպի բոլոր ընկերները:

Ձեմ կարող ասել, ի հարկէ, որ նա տարբերութիւն չէր դնում ատակ, փորձուած ու ղեկավար ընկերով եւ երիտասարդ, անփորձ ընկերով միջեւ՝ նրանց լսելու, նրանց արժէքատրելու տեսակէտից: Սակայն, նա այդ անում էր այնպիսի ընկերական, անազմուկ, մեղմ ու անկեղծ ձեւով, որ ոչ ոք կարող էր տարբերութիւն տեսնել: Իր վարմունքի մէջ Ռոստոմի համար հին ու նոր, ծեր ու երիտասարդ գոյութիւն չունէր:

Դեռ աւելին. երիտասարդների նկատմամբ նա աւելի ուշադիր էր, հոգացող: Սակայն, ոչ մի ընկեր չէր կարող զգալ, որ Ռոստոմը իր վիճակով հետաքրքրուած է եւ կամ իր վիճակի անօրինութեամբ զբաղուած է: Գիտէր բոլոր ընկերների գոյավիճակը եւ մանաւանդ գիտէր օժանդակութեան կարիք ունեցող կամ հիւանդ ընկերների մասին յատուկ հոգացողութիւն անել: Երբ մի ընկեր հիւանդ էր, նա գիտէր, թէ ո՞վ էր խնամում նրան, ուր էր պառկած: Միշտ հետաքրքրուած էր նրանով: Մի ուրիշ ընկեր զրամ չունէր, հիւսիսից էր եկել, ապրելու, գիշերելու տեղ չունէր: Երբորզը շատ էր ծանրաբեռնուած գործով եւ նեղուած էր: Չորրորդը պարասպ էր, գործ պէտք էր գտնել նրա համար, եւ այլն: Բոլորի մասին Ռոստոմը մտահոգուած էր եւ կարգադրութիւններ անում:

Քանի՛ քանի անգամներ Ռոստոմը կանչել է ինձ եւ ասել.

- Ա.ը, ասում են, ապրելու միջոց չունի. դրամ վերցրու եւ յանձնիր նրան:
- Բ.ը եկել է Հիւսիսային Կովկասից. ապրելու եւ քնելու տեղ չունի: Տե՛ս, ի՞նչ կարող ես անել:
- Դրամ տուր Գ.ին: Ձե՞ս լսել, որ նա հացի դրամ չունի:
- Դ.ը շատ ուժասպառ է: Նայի՛ր նրա գոյնին: Խօսի՛ր՝ ում հետ որ պէտք է եւ աղատել տուր գործից: Թո՛ղ մի քանի օր գնայ տուն եւ հանդրստանայ:

Այսպէս անվերջ: Ես գիտէի, որ ով էլ որ լինէր եւ ինչ օժանդակու-

Թիւն էլ ստանար՝ չզիտի հասկանար, որ իսկական աղբիւրը Ռոստոմն էր:

Չարմանալի էր Ռոստոմի՝ այս կամ այն ընկերոջ գործի զննելու եղանակը: Չէր հրամայում երբեք. հրամայելը նրան միանգամայն անյարիր էր: Նա ուղղակի ներշնչում էր, թէ ի՞նչ ձևով պէտք է կատարուի այս կամ այն գործը, և այն էլ այնպիսի ձևով, որ ենթական համոզուէր, թէ ինքն էր գտել գործը:

Բազում յանձնարարութիւններ է նա արել ինձ և մեր աշխատակից ընկերներին այսպիսի ձևով.—

— Ի՞նչ ես կարծում. այսինչ գործը ի՞նչպէս պէտք է անել, որ թէ՛ Ժամանակ չահուի և թէ՛ լաւագոյն ձևով կատարուի:

«Ի՞նչ ես կարծում» Ռոստոմի առաջին մտեցումն էր: Ու այդ մտեցումի հետ նա այնպէս էր ձևակերպում կատարուելիք գործը և այնպէս էր քննարկում տալիս, որ քո եզրակացութիւնը լինէր յար և և նման իր մը տաճածին:

— Լաւ ես մտածել, դէ՛ անցիր գործի:

Ահա նրա եզրակացութիւնը: Եւ դու կպչում էիր գործի՝ ոչ թէ Ռոստոմի հրամանը գործադրելու, կամ նրա յանձնարարութիւնը կատարողի ըզրացումով, այլ սրպէս նախաձեռնողը գործին:

Ընկերներին բարձրաձայն գիտողութիւն անել Ռոստոմը չզիտէր: Բարկացած էլ լինէր, չէիր հասկանայ, թէ բարկացած էր: Բայց ոչ ոք նրա նըկատողութիւնից կը յուսահատուէր, որովհետեւ իր գիտողութիւնը այնպիսի ընկերական շեշտով էր անում, որ յանցաւորը կը զգար իր յանցանքը: Բայց և ոչ ոք աւելի մեծամիտ կը գտնար Ռոստոմի յայտնած գոհունակութիւնից, որովհետեւ Ռոստոմը զգացնում էր նաև, որ գոհունակութեան արժանի եղողը իր պարտքն էր միայն կատարած:

Ռոստոմը շատ չէր խօսի ժողովների Ժամանակ: Երբեմն այնքան անմասն էր մնում վէճերին, որ թուում էր թէ նա միայն զիտող էր: Պատահում էր, որ նա իր կարծիքը յայտնէր միայն վճիռը կայացնելուց յետոյ: Երբ նեղն էինք ընկնում, այն Ժամանակ նա միջամտում էր վէճին: Սակայն, «այսպէս եմ կարծում», «այսպէս եմ խորհուրդ տալիս» ընդ նրա հագուածիւս մտեցումն էր: Նա ինչիւրը քննում էր, երևոյթները պարզում էր մտեցումի անկիւնից և մեզ մղում յանդերու իր ցանկացած եզրակացութեան:

Չարմանալի սակաւապէտ էր Ռոստոմը: Բնաւ չէր մտահոգւում: Հագուստ-կապուստը՝ համեստ, ինք՝ համեստութեան մարմնացում: Երեւալու, այսինքն՝ ինքն իրեն ցոյց տալու ունակութիւնից զուրկ էր իր ամբողջ էութեամբ: Սիրում էր միշտ ստուերի մէջ մնալ: Բայց հակառակ դրան, նա բոլորի պաշտամունքի առարկան էր, բոլորի սէրն ու յարգանքն էր վայելում:

\* \*

Իր ամիսների ձգտումը Թիֆլիս ընկնելու յաջողւում էր: Նրան ճանապարհ են դնում երկաթուղով: Նոյն բաժնում պառկեցնում են Թիֆլիս դնացող տիֆոյլ հիւանդ Ռուբէն Քաջբերունուն:

Երբեք, երբեք ես չզիտի ներեմ իմ Բագուի սիրելի ընկերների այս անփութութիւնը:

Ռոստոմը ուղեկցում է Ռուբէնին զնայքում ու խնամում նրան, բայց ինքը վարակում է տիֆոյլ:

Գալիս է Թիֆլիս ճակատագրական օրերին: Շտապ և յուրջ խնդիրներ կային կարգադրելու: Պէտք է տեսնուէր Ժողովանիայի, Վրաստանի վարչապետի, և այլոց հետ: Պէտք է կարգադրէր հայ-վրացական փոխյարարերութեանց վերաբերող անյետաձգելի խնդիրներ: Սակայն, Ռոստոմը արդէն յոգնած էր, վարակուած տիֆոյլ: Նա զգում էր, որ ուժերը իրեն դատաճանում են, բայց չի կարող մտնել անկողին՝ առանց տեսողութիւն ունենալու Ժողովանիայի հետ, առանց բանակցելու նրա հետ հայ ժողովուրդի համար խիստ կարեւոր խնդիրների մասին:

Վերջապէս, նա մտնում է անկողին: Ընկերները մատնում են շիֆոթեան: Բժիշկ, խնամք: Բայց ուշ է արդէն. հիւանդութիւնը իր քանդիչ դերը կատարել է: Եւ նա զոհ է դնում իր երկու մեծ սէրերին: 1919 թ. Յունուար 18ի գիշերը նա կնքում է իր մահկանացուն...

«ՀԱՅՐԵՆԻՓ» ամսագիր, 1956 թիւ 7, 8, 10, 11 և 1957 թիւ 1:

ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ  
(Հատուած)

Հրամանատար Բիչերախովը իր կազակներով քաղաքից 40 վերստ հեռու որսաթեան վրայ դանուոց Սուժգայտ կայարանից բաժանուում է հայկական զորամասերից եւ գաղտնի կերպով մեկնում է դէպի Հիւսիսային Կովկաս, դաւաճանելով իր կոչումին եւ թողնելով մեր զորքերը առանց օտարազգի ուժերի օգնութեան: Նրանից յետոյ հրամանատարութիւնը վերցնում է իր վրայ՝ շտարի պետ գնդապետ Աւետիսեանը:

Տաճկական զորքերը, հետապնդելով մերոնց, նոյնպէս մօտենում են Բագուին եւ կանգնում՝ հայկական զորքերի դիմաց:

Հայ զինուորներն ու զինուորականները, չնայած իրենց ունեցած հրակալական կորուստներին եւ զրկանքներին, չստանալով եւ ոչ մի օգնութիւն, չէին մտածում, անդամ չէին երեւակայում, որ իրենք պէտք է պարտուեն եւ քաղաքը տան թշնամուն: Նրանք դեռ եւս լի էին յաղթութեան կորովով եւ ազատութեան ու հայրենասիրութեան զգացումով: Միայն գլխաւոր հրամանատարութիւնը, Աւետիսեանի ղեկավարութեամբ, նկատի ունենալով կրօնուոց ուժերի անհասարկութիւնը եւ մերոնց յոգնածութիւնն ու հիւժուածութիւնը, կասկածում էր, թէ կարելի պիտի լինի երկար ժամանակ քաղաքը պաշտպանել եւ փրկել ժողովուրդը, մանաւանդ հարիւր հազարանոց հայութիւնը:

Բալաջար կայարանից, որը գտնուում է Բագուից 15 վերստ հեռաւորութեան վրայ, Աւետիսեանը մի շարք ստիպողական պահանջներ է անում եւ պաշտօնական հեռագիրներ ուղարկում Շահումեանին եւ Կարգանեանին, խնդրելով օգնական ուժեր, առաջարկելով հակառակ դէպքում սկսել բանակցութիւններ թշնամու հետ աւելի թեթեւացնելու համար դալիք արհաւիրքները: Նա յայտնում է, թէ այլպէս, այսինքն՝ քաղաքը ուժով վերցնելու դէպքում, անխուսափելի է համարում զարհուրելի կոտորածը, մանաւանդ որ տաճիկ հրամանատարութիւնը արդէն ուղարկել էր վերջնադիր քաղաքը յանձնելու:

Շահումեան եւ իր ընկեր Կոմիսարները՝ Արտաշէս Կարինեանը, Սըմբատ Մարգարեանը, Գ. Կարգանեանը, Ջափարիձէն, Ջելինը, Տիւլետովը, Կոլեսնիկովայան եւ նրանց գործակիցներ Ս. Տէր Գարրիշեանը, Աշոտ Յովհաննիսեանը եւ ուրիշներ որոշում են գաղտնի հեռանալ քաղաքից դէպի Հաշտարխան, տանելով իրենց հետ բոլոր կոմունիստ գործիչներին իրենց ընտանիքներով, թուով 400 հոգի, եւ վերցնելով իրենց հետ քաղաքի պահեստների ռազմամթերքը, պարէնը, զանազան ապրանքները եւ բանկերի վալիւտան ու բոլոր հարստութիւնները: Այդ առթիւ նրանք գաղտնի հրամանով հաւաքում

են 21 ամենախոշոր ապրանքատար նաւեր, երկու զինուորական («Արտահան» եւ «Կարս») նաւերի հսկողութեան տակ եւ Յուլիս 28, 29 ու 30ին տեղափոխում են նրանց մէջ բոլոր վերեւ յիշուած ապրանքները, դատարկելով քաղաքը, թողնելով կոտուղ բանակը առանց ռազմամթերքի, դրամի ու պարէնի եւ չյայտնելով այդ մասին ոչ հրամանատարութեան, ոչ կոալիսիոն հիմունքներով կազմուած Գործադիր Կոմիտէին, ոչ Հ. Յ. Դաշնակցութեան կամ միւս կուսակցութիւններին եւ ոչ էլ Հայոց Ազգային Խորհուրդին:

Այդ որոշումը նրանք կայացնում են Խորհուրդի Յուլիս 27ի արտակարգ նիստից յետոյ, երբ նրանք արդէն հրաժարուած էին իշխանութիւնից, բայց դեռ եւս չէին յանձնած այն եւ բռնի շարունակում էին մնալ իրենց պաշտօնի վրայ, միայն իրենց նպատակների համար:

Ի զուր գնդապետ Աւետիսեանը սպասեց պատասխանի եւ կարգադրութիւնների: Ի վերջոյ, վրդովուած՝ նա ստիպուած եղաւ Յուլիս 30ին դիմել Հայոց Ազգային Խորհուրդին, խնդրելով ազդել կառավարութեան վրայ այս կամ այն քայլն առնելու համար:

Եւ ահա այդ միևնոյն օրը, Յուլիս 30ին, վերջացնելով քաղաքի ռազմամթերքի ու պարէնի պարպումը եւ տեղափոխելով ամենալաւ նաւերից մէկուս իրենց ընտանիքները, Շահումեանը կարգադրում է շտապ կերպով ցերեկուայ ժամը 12ին հրաւիրել բանուորա-զինուորա-նաւաստիների խորհրդի արտակարգ ժողով:

Շնորհիւ քաղաքում արդէն սկսուած խուճապին, այդ ժողովին 300 անդամների փոխարէն գալիս են միայն 70-80 հոգի:

Ժամը 13ին նախագահ Ջափարիձէն բանում է նիստը եւ խօսք տալիս կառավարութեան նախագահ Ստեփան Շահումեանին արտակարգ յայտարարութեան համար: Եւ Շահումեանը յայտարարում է մօտաւորապէս հետեւեալը.—

«Ընկերներ, տաճիկները օղակել են մեր քաղաքը եւ սպառնում են զըրաւելու դայն: Ռուսաստանի կարմիր ուժերը չկարողացան հասնել մեզ օդնութեան: Այստեղ բոլոր կուսակցութիւնները, բանուորները, ժողովուրդը եւ նաւատորմի մի մասը արտայայտուել են, որ կ'ուզէին անգլիացիների օդնութիւնը, իսկ Հայոց Ազգային Խորհուրդը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, ցանկանալով, որ անգլիացիներն անսպասուած դան, վերջերս կրաւորական դիրք են բռնել: Դաշնակցութիւնը ներշնչել է իր զինուորներին, յանձինս ամբողջ բանակին, չկոտուել. իսկ Հայոց Ազգային Խորհուրդը մի քանի օր է բանակցութիւններ է վարում տաճիկների հետ քաղաքը յանձնելու համար: Այդ է պատճառը, որ մենք պարտուում ենք. ուստի մենք, Կոմիսարներիս Խորհուրդը, որոշել ենք այսօր հեռանալ քաղաքից եւ թողնել վերջինը իր բախտին: Մենք յոյս ունենք, որ ապագայում ռուսական կարմիր զորքերը կը գան եւ նորից կը գրուեն Բագուն»:

Տողերիս գրողը, որը Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամ էր, շատ լաւ տեղեակ էր թէ՛ Դաշնակցութեան քաղաքականութեան ու գործունէութեան եւ թէ՛ Հայոց Ազգային Խորհուրդի քայլերին: Նա լաւ գիտէր, որ ոչ մէկը եւ ոչ էլ միւսը որեւէ բանակցութիւն չեն վարել թըշ-

նամուհեա եւ չէին էլ թոյլ տայ վարելու՝ առանց իշխանութեան: Նա գիտէր, որ Հ. Յ. Դաշնակցութեան Բազուի մարմինը մի ամբողջ տարի լարել էր իր առաւելագոյն ուժերը, գերմարդկային ճիգեր էր թափել եւ հազարաւոր լաւագոյն զոհեր էր տուել: Եւ այսօր Դաշնակցութիւնը թողնում էր իշխանութեան կողմից ռազմի ճակատներում մենակ, անօգնական, առանց ռազմամթերքի ու պարէնի:

Բնականաբար, խորը յուզումով լցուած, Դաշնակցութեան ներկայացուցիչը պատասխանում է Շահումեանին ու իր ընկերներին.

«Ձեր յայտարարութիւնը բացարձակ պրոֆոկացիա է եւ չէ հիմնուած ոչ մի փաստի վրայ: Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ մի բանակցութիւն չէ վարել թշնամուհեա: Նա պատուով կոտել է ու կը կոտի նորէն եւ մի գուցէ նաեւ մեռնի էլ պատուով: Այդ յայտարարութիւնը տմարդօրէն արւում է կոմունիստական կառավարութեան կողմից իրեն փախուստն արդարացնելու համար: Բայց գիտե՛ք, որ գալիք կոտորածների եւ տանակահազարաւոր անմեղ կանանց, օրիորդների եւ մանուկների արեան պատասխանատուութիւնը ընկնում է փախչող բոլշեւիկ իշխանաւորների վրայ»:

Ժողովը փակում է, եւ Շահումեանի կառավարութիւնը, առանց յանձնելու իշխանութիւնը որեւէ կազմակերպութեան, նստում է պատրաստուած նաւերը եւ հեռանում Բազուից:

Ժողովից յետոյ, սակայն, դահլիճի միջանցքում եւ նորից բռնում եմ Շահումեանին, դատաւարտում նրա քայլը եւ ասում.

— Արդեօք դուք չէ՞ք մտածում, որ ձեր բռնած գիրքով Բազուայ աշխատաւորութիւնը, միեւնոյն թւում եւ հայ զանգուածը եւ ամբողջ հայութիւնը պցում էք դարաւոր թշնամու գիրկը, որ պիտի բնաջնջի նրան վերջնականապէս:

Շահումեանը պատասխանում է ինձ.

— Ես ձեզ պատասխանում եմ ընկեր Լենինի խօսքերով. «Երբ անտան են կտրում, տաշեղները ցրում են»: Մենք կատարում ենք համաշխարհային յեղափոխութիւն, որի ժամանակ ժողովուրդներ եւ ազգեր կարող են ոչնչանալ: Ի՞նչ ցաւ, եթէ սոցիալիզմը իրագործելու համար անգամ հայ ազգը զոհուի:

Ստեղծուեցաւ անտանելի դրութիւն: Երեք հարիւր հազարանոց քաղաքը մնաց առանց իշխանութեան այն ժամանակ, երբ մեր բանակը ճակատներում հրամանի էր սպասում, իսկ տաճիկները ծեծում էին Բազուի գոնները:

Այսպիսի դժոխային պայմաններում, յեղափոխական կուսակցութիւնների Կեդրոնական Կոմիտէները եւ զանազան ազգերի միութիւնները առանձնանում են եւ մտածում իրենց անելիքների ու բռնելիք գիրքի մասին:

Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէն, որին փաստօրէն պատկանում էր բանակը, այսինքն՝ միակ կոուղ ոյժը եւ որին, բնականաբար, վիճակուած էր ասել վճռական խօսքը, Յուլիս 30ի երեկոյեան, ժողովի նըստաւ ելք գտնելու ստեղծուած անելանելի կացութիւնից:

Ժողովը երկար տեւեց: Ձէր գտնուում ոչ մի միջոց փրկութեան: Բոլորը զգում էին եւ պատկերացնում գալիք կոտորածների ու աւերումների

հսկայական չափերն ու ձեւերը: Բոլորին տիրել էր յուսահատական մի զգացում, եւ ամէն մէկը զժուարանում էր անել որեւէ յուսատու տոաջարկ: Ռըովհետեւ ոչ ոք չէր հաւատում, թէ կարելի է թշնամուհեա համաձայնութեան գալ:

Եւ ահա այդ ծանր վայրկեաններին, մօտաւորապէս գիշերուայ ժամը տասնեւմէկին, ներս մտաւ ժողովարահ Ռոստոմը: Նա կանգնեց սեղանի մօտ եւ ասեց հետեւեալը.

— Մի՞թէ մենք պէտք է պարտուինք: Մի՞թէ մեր արդար գատը չըպէտք է իրականանայ: Մի՞թէ մեր ազգը պէտք է կոտորուի եւ աշխարհիս երեսից վերանայ, ինչպէս իր բազմաթիւ հարեւանները անցեալում: Մի՞թէ չկայ արդարութիւն: Մի՞թէ քաղաքակիրթ Եւրոպան, որի ազատութեան եւ պատուին զոհարելու է հայութիւնը, չպէտք է օգնութեան հասնի: Մի՞թէ մեր գերմարդկային զահարելութեամբ, յանուն սպատութեան, մարդկային իրաւունքների, յեղափոխութեան փրկութեան եւ Դաշնակիցների յաղթութեան, մենք նախախնամութեան կողմից պիտի դատաւարտուինք ու այս կրիտիկական բոպէին թողնուինք մենակ եւ անօգնական: Ո՞ւր է արդարութիւնը, ո՞րն է մարդկանց պարտականութիւնը:

Վերջացնելով իր խօսքը, Ռոստոմը նստաւ սեղանի մօտ՝ մասնակցելու մեր ժողովին:

Այդ բոպէին դուռը բացուեց եւ սոցիալիստ-յեղափոխական Միքայէլ Տէր Պօղոսեանը ներս մտաւ ինդրելու, որ Ռոստոմը դուրս գայ:

Հարեւան սենեակում Տէր Պօղոսեանը յանձնել էր Ռոստոմին Պարսկաստանի էնզելի քաղաքից ստացուած նոր ռազիօ հեռագիրը, որով յայտնուում էր, թէ անգլիական հինգ հազարանոց մի զօրամաս այնտեղ պատրաստ է նաւերը նստելու եւ Բազուին օգնութեան հասնելու, եթէ միայն քաղաքը երկու օր պաշտպանուի եւ պահուի:

Ռոստոմը վերադարձաւ բոլորովին փոխուած: Նա, կարծես, նորէն յարութիւն էր առած: Կարգաց ռազիօ հեռագիրը եւ ասաց.

— Ինչ խօսք, որ կուում ենք, որ պահում ենք քաղաքը, պահում ենք ժողովուրդը, պահում ենք հայի պատիւը եւ պաշտպանում ենք մեր եւ Դաշնակիցների դատը... Ոչ մի խօսք բանակցութեան մասին թշնամուհեա: Կըռիւ եւ անպայման յաղթութիւն:

Ժողովը որոշեց լարել բոլոր ուժերը եւ պաշտպանել քաղաքը մինչեւ անգլիացիների օգնութեան հասնելը: Իսկոյն արուեցին շտապ կարգադրութիւններ եւ արուեցին համապատասխան հրահանգներ:

Քաղաքային կուսակցութեան կոմիտէները հաւաքեցին իրենց կոուղ ուժերը եւ ուղարկեցին ճակատները: Ընկերները անցան կենդանի զործի, հրապուրուած կուտի ցանկութեամբ եւ յաղթութեան տենչով:

Գիշերը ժամը 12ին, Ռոստոմի հեա միասին անցանք Սալեանի զօրանոցները, ուր գտնուում էր Համազասպի շտաբը: Յայտնելով ստացած լուրը եւ կոմիտէի որոշումը քաղաքի պաշտպանութեան մասին, անցանք ռազմաճակատները: Հրամանատարները, սպայութիւնը եւ զինուորները, իմանալով ուրախառիթ նորութիւնը, կերպարանափոխուեցին: Իրբեւ ընդհանուր նչա-

նարան գրուեց կոխ, յաղթութիւն եւ ազատութիւն: Անհատից անհատ, շարքից շարք, ջոկատից ջոկատ տարածուեց այդ նշանաբանը տասը հազար հայ մարտիկ զինուորներէ մէջ, դասաւորուած երեսուն վերստ տարածութեամբ ճակատներում, Բագուի շուրջը, երեք կողմից:

Կէս գիշեր էր: Բոլորը, սուինները ձեռներին, իրենց զիրքերումն են եւ, կարծէք, զրում են, որ մօտենում է մենամարտի վճռական ժամը:

Դիմացը կանգնած է թշնամու քսան հազարանոց բանակը, սուլթանական Գւարդիան, Գալիպոլիում երկու հարիւր հազար անգլիացիների դէմ յաղթութիւն տարած գիւլիգիանները, գլխաւորութեամբ Նուրի փաշայի, հեծերազօրի պետ Մուրսալ փաշայի եւ գերմանական ու տաճկական ականաւոր զօրավարների ու սպաների:

Ժամը երեքն է, դեռ մութ է: Պարզ երկնքում աստղերը շարունակում են ցոլալ, իսկ բարակ մահիկաձեւ կիսալուսինը պատրաստում է թագնուել հորիզոնի յետեւը: Նա, ինչպէս պաշտպանը իսլամի որդիներին, կարծես ըզգում է գալիք փոթորիկը եւ չկամենալով ականատես լինել իր հովանաւորեալների պարտութեան, հեռանում է:

Ի զուր սպասեց Նուրի փաշան, որ Բագուի ներկայացուցիչները գնալին իրեն յանձնելու քաղաքի բանալիները... Ի զուր նա սպասեց հայ մարտիկների ներկայացուցիչներին, որ գալին եւ յանձնէին իրենց զէնքերը: Ի զուր նա սպասեց Հ. Յ. Գալիպոլիումի եւ Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին:

Նա գիտէր արդէն Շահումեանի կառավարութեան հեռանալը: Նա տեսել էր արդէն Շարան Գաղի գազաթից տասնեակ նաւերի մեկնելը: Նա գիտէր, որ քաղաքում չկար իշխանութիւն: Նա կարծում էր, որ նաւթի աշխարհը արդէն գրաւուած էր: Նա չգիտէր միայն, որ հայ մարտիկ զինուորի կամքը պողպատի նման ամուր էր եւ նա պատրաստ էր ընդունել հարուածն ու տալ համապատասխան զարկը:

Չստանալով իր վերջնազօրի պատասխանը եւ չտեսնելով յիշեալ ներկայացուցիչներին, Նուրի փաշան զայրանում է եւ հրամայում զօրքերին՝ շարժուել եւ պատժել ըմբոստներին...

Ժամը երեք եւ կէսն է: Թշնամու կողմից լուում են ձայներ եւ նկատում շարժումներ: Մերթ ընդ մերթ փայլում են նրա զինուորների սուինները եւ լուում է ձիաների խրինջոցը: Թշնամին առաջ է խաղում եւ բոլոր ճակատներում սկսում է յարձակումը: Եւ ահա մի վայրկեան եւս, ու լրատում է տասնեակ գերմանական թնդանթների ահռելի որոտը, հարիւրաւոր գնդացիների ճոճոցը եւ հազարաւոր հրացանների վզվզոցը...

Որոտում է երկինքը, գզրգում է գետինը...

Հաւատացեալ ասկեարները կարմիր Փէսերով հազարներով, երեսուն վերստ տարածութեամբ, վազում են դէպի մերոնց զիրքերը եւ գոռում «Ալլա՛հ, Ալլա՛հ»... Եւ արձագանգի փոխարէն լսում են մեր զինուորների անընդհատ «ուռոտ»ները: Գործում են մեր հրետանիները, կրակում են մեր գնդացիները եւ բացում են մեր հազարաւոր հրացանները...

Քաղաքը զարթնեց: Զարթնեցին քաղաքացիները: Սարսափը պատեց

շատերին: Մահու ուրուականն էին պատկերացնում: Լոյսը բացուեց: Թշնամին հասաւ մեր զիրքերին: Երկու հակառակորդ բանակները խառնուեցին իրար, եւ սկսուեց կատաղի բռունցքամարտը:

Դժուար է նկարագրել կռուի իսկական պատկերը: Հարկաւոր է հանձարեղ բանաստեղծի գրիչը եւ տաղանդաւոր նկարիչի վրձինը:

Այսպէս 1918 թիւ, Յուլիս 31ի առաւօտեան սկսուեց անհաւասար ճակատամարտը հայ զինուորի եւ տաճիկ ասկեարի միջեւ: Սկսուեց եւ շարունակուեց անընդհատ վեց երկար օրեր: Կոխը չէր զաղարում գիշեր ու ցերեկ: Քաջ զինուորները զարձեւ էին գերմարդիկ, Հերկուլեսեան հսկաներ: Նրանք չէին ուտում, չէին խմում, չէին էլ մտածում սնունդի մասին: Ժամանակ չունէին: Մտածում էին միայն յաղթել կամ մեռնել:

Կատաղել էր եւ թշնամին: Նրա գրոհը մեծ էր: Բայց նա չէր սպասում հայ զինուորի այս սոսկալի յամառութիւնը, կատաղի դիմադրութիւնը: Գերիներ չկային երկու կողմերի համար: Սպանում էին հարիւրներով, հազարներով: Թշնամու դիակները անթիւ ու անհամար էին: Թշնամին վերջի ճիգերն էր թափում: Նրա նոր հասած թարմ ուժերը շարտուեցին կռուի դաշտը, իսկ սաւառնակները պտտում էին երկնքում եւ կրակ թափում զիրքերի վրայ:

Քաղաքի հայութիւնը(\*) անխտիր գործում էր: Բոլոր խաւերը, հարուստ եւ աղքատ, կին թէ տղամարդ, ծեր թէ երեխայ իրենց լուծան էին բերում ընդհանուրի ազատութեան գործին — մէկը կռուով, միւսը գործով, երրորդը դրամով, չորրորդը հացով, հինգերորդը փամփուշտ կրելով ու ջուր մատակարարելով...

Այո՛, գործում էր միայն հայութիւնը: Իսկ մեր հարեւանները:

Եթեանասուն հազար ուս ազգաբնակչութիւնը անտարբեր էր: Կոխը նրան կարծես չէր վերաբերում: Մեծ Թուսաստանի այդ հատուածը կարծես չէր հասկանում Բագուի նշանակութիւնը, նաւթի արժէքը եւ նրա ոյժը:

Բագուի քսան հազարանոց հրէութիւնը «չէզոքի» դերում էր: Նրան հետաքրքրում էր միայն աշխատանքը եւ նաւթի առեւտուրը:

Բագուի ինըսուն հազարանոց թրքութիւնը թշնամու կողմնակից էր եւ ըստ հնարաւորութեան օգնում էր նրան:

Կողմնակից էր թշնամուն եւ հինգ հազարանոց վրացիութիւնը. բայց նա կրաւորական դիրք էր բռնած:

Չէզոք էին նոյնպէս ուրիշ մանր ազգերը, — լեռնացիները, լեհերը եւ զանազան եւրոպացիներ:

Օգնեց հայ զինուորին որոշ չափով միայն Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնը, որին կողմնակից էր զինուորական նաւատորմի եւ ծովակալների մնացած մասը: Դրա շնորհիւ հնարաւոր եղաւ, երեք օր Կասպեան

(\*) Բագուի նահանգի հայութեան ընդհանուր թիւը հասնում էր հարիւր քսան հազարի, որից Բագու քաղաքում եօթանասուն հազար, 46 հայկական գիւղերում՝ երեսուն հազար եւ Լեհոբանում, Սայեանում, Աստարայում, Գեօղայում, Շամախում, Գեքեղում, Ղաբայում եւ ուրիշ փոքր վայրերում՝ մօտ քսան հազար:

ծովում փնտռելուց յետոյ, չըջապատել եւ յետ բերել փախած բոլշևիկներին, նաեւրը ու ռազմամթերքը ու վերջինովս բաւարարել ռազմաճակատը:

Օգնում էր հայ զինուորին նաեւ բոլշևիկներից մնացած գնդապետ Պետրովի պաշարման հրետանին, որը բաղկացած էր վեց հատ 6 եւ 8 դիցմանոց թնդանօթներից եւ ունէր հայ հրամանատար եւ զինուորներ: Չորս օր անդադար քաղաքի կեդրոնից, Պետրովսկայա հրապարակից, հաղարատը ռումբեր նա նետեց դէպի թշնամին եւ խաչաձեւ կրակով հերթով ուժրակոծեց թշնամու դիրքերն ու թիկունքը, նախապէս բաժանելով քառակուսի շրջանակների:

Գործում էին եւ Համադասպի չորրորդ եւ հինգերորդ հրետանիները, որոնք կարմրած թնդանօթների բերաններից անընդհատ ռումբեր էին նետում դէպի թշնամին:

Օգը սոսկալի տարացել էր. գետինը թնդանօթների շուրջը կրակ էր դարձել. թնդանօթաձիգները մեքենայ էին դարձել. նրանք տաքից այրում էին, հանել էին զգեստները եւ մերկ էին դործում: Հարիւրաւոր մարդիկ շուր էին կրում եւ անդադար չազում թնդանօթների վրայ եւ չըջակայ գետինը:

Կուուի դաշտը իրենից ներկայացնում էր մի հրարխային գետին: Օգը վառում էր, արիւնը հոսում եւ խկոյն չորանում: Կայծակահար որոտները խլացնում էին ամէն ինչ. մահը կլանում էր բոլորին եւ կարծես տօնում էր իր յաջողութիւնը:

Դանտեան դժոխք...

Թշնամու հաղարատը դիակներին միանում էին մերոնց հարիւրաւորները: Ընկնում էին քաջարի զինուորները: Ընկնում էր խիզախ սպայութիւնը: Ընկաւ ազնիւ եւ քաջ Սերգոն, Համադասպի անվեհեր օգնականը, բրիգադայի սիրտը, սէրը եւ յոյսը: Ընկաւ «Քալլադեօզ» եւ կտրիճ Իսակը, մեր հեծելազօրի պետը: Ընկաւ գեղեցիկ, խիզախ, ազնիւ ու կրակոտ Արամ Դովլաթեանը, 18րդ գումարտակի պետը, որը լինում էր միշտ գումարտակի առջեւ, մէջքը արած դէպի թշնամին, ձեռքերը բարձրացրած, ղեկավարելով գումարտակը, որպէս պարահանդէսի օրկէստը: Ընկաւ Սեբաստացի հսկան՝ Մուրատը, հայ հայդուկի իդէալը, Սուլթան Համիտի ահն ու սարսափը: Ընկաւ եւ կտակեց իր հաւատարիմ ընկեր Սեպուհին շարունակել սուրբ գործը: Ընկան շատ շատերը: Եւ բոլորն էլ ընկան ու մեռան միայն մի կարօտով, — արդեօ՞ք փրկեցին իրենց մահով հարազատներին եւ մեծ գաղափարը, արդեօ՞ք հասան անգլխացիները...

Աւա՛ղ: Միայն հինգերորդ օրը մտաւ քաղաք անգլիական գնդապետ Ստոքսը՝ քառասուն զանազան պաշտօնեաներով, թիկնապահներով ու կապիկներով(\*): Եկաւ, տեսաւ եւ զարմացաւ: Տեսաւ, ինչպէս հայ զինուորը պատժում է այն տաճիկին, որը Գալիպոլիում անպատուել էր իր զինակիցներին: Բայց ի՞նչ օգուտ: Թշնամին երկաթուղու գծով, թիֆլիսի վրայով եւ

(\*) Զինուորներից մի քանիսը իրենց գուարձութեան համար պահում էին իրենց մօտ փոքրիկ կապիկներ:

Հայաստանի միջով, Ալգոտաֆա կայարանով անդադար ստանում էր նոր ուժեր, որոնց չպրտում էր կուուի դաշտը:

Կուուի հինգերորդ օրն է, Օգոստոսի 4ը:

Թշնամին կարծես սկսում է յաջողութիւն շահել: Նրան թարմ, խոշոր ուժերը ամէն ջանք են թափում պատուել մերոնց չլթան, որի համար ընտրել են ամենադժուարին եւ ամուր ճակատը՝ Շիխոֆօ գիւղի ծովեզրը: Մի կողմից՝ ծովը, միւս կողմից՝ ժայռոտ բարձունքները, կախած ծովի վերայ: Թշնամին գիտակցաբար այդ վայրն է ընտրել հարուածի համար: Նըպատակն է խաբել մերոնց: Շղթան պատուում է: Թշնամու լուան հոսում է դէպի Բիրի-էյրաթի նաւթահանքերի ձորը, ուղղուելով դէպի քաղաք: Պահանջում է թարմ ոյժ, դուրս վոնտելու թշնամուն եւ նորից ծածկելու բացը:

Գնդապետ Աւետիսեանը խնդրում է Հ. Յ. Իսախանյանին կոմիտէից ոյժ: Իր հայդուկներից եւ քաղաքայիններից, երեկոյան ժամը 12ին, բեռնատար օտոմոբիլներով, կոմիտէն շտապ ուղարկում է հարիւր յիսուն հոգի՝ սպաներ թարաղարեանի եւ Սարումեանի ղեկավարութեամբ: Հասնելով վրտանդի վայրը, մերոնք կուուի են բռնում թշնամու հետ Բիրի-էյրաթի եւ քաղաքամաս Բայիլովի միջանցքում, որտեղ թշնամու տասնեակ գնդացիները պատրաստ են լինում մերոնց լափելու: Եւ լափում են: Ընկնում է թարաղարեանը: Ընկնում է զինուորութեան մեծագոյն մասը: Վիրաւորում է ծանր՝ Սարումեանը: Վիրաւորում են մնացած զինուորները: Եւ թշնամին շարժում է ծովափով Բայիլով քաղաքամասը եւ ապա՝ քաղաք:

Պատուել է եւ կեդրոնի շղթան, Թշնամին գրաւել է Սալեանի զորանոցները քաղաքի միւս ծայրում: Նրա ուժեղ 8 դիցմանոց թնդանօթները իրենց ամբողջ ուշադրութիւնը դարձրել են այդտեղ գործող մեր ջրէ հրետանու վրայ, որի պետն է գլխապետ Արզանովը եւ որի թնդանօթաձիգները ամբողջապէս բաղկացած են բարձրագոյն դպրոցների ուսանողներից: Ռումբերը պայթում են մերոնց գլխին, փչացնում են թնդանօթները, սպանում եւ վիրաւորում են ուսանողներից շատերին, որոնց թւում եւ Ռուբէն Շաթիրեանին(\*) — քառասուն եւ երկու տեղից:

Օգոստոս 5ն է, առաւօտեան ժամը 8ը: Թշնամին ոգեւորուած է: Նա արդէն կարծում է, թէ քաղաքը իրան է, եւ անդադար գոռում է՝ Ալլա՛հ, Ալլա՛հ...

Գնդապետ Աւետիսեանը, նստած իր գրասենեակում, գլխաւոր շտաբում, խորհում է եւ անում հեռախօսով վերջին կարգադրութիւնը: Նա հրամայում է տասներորդ գումարտակին, որը կատաղօրէն դիմադրում էր թըշնամուն՝ գերեզմաններում, Բիրի-էյրաթի բարձունքների վրայ. «Առանց բողբ կորցնելու՝ թողել տեղը թշնամուն, խկոյն վար իջնել նաւթահանքերի ձորը եւ թիկունքից խփել ծովափով քաղաք հոսող հակառակորդին»:

Հրամայում է եւ յայտնում պաշտօնակիցներին. — «Եթէ այս վերջին

(\*) Ռուբէն Շաթիրեանը մի տարի բժշկուելուց յետոյ եւ կորցնելով մի ոտը, մի աչքը, ծնօտի մի մասը, անցաւ Հայաստան եւ շարունակեց իր զինուորական ծառայութիւնը Հայաստանի զօրամասերում:

հրամանն կատարուի շտապ եւ ճշգրտէն, մենք փրկուած ենք, փրկուած է եւ քաղաքը. հակառակ դէպքում շուտով կը սկսուի քաղաքում տաճկական վանդէան»:

Անցնում է մի ժամ:

Յանկարծ գնդակի արագութեամբ տարածւում է ամբողջ քաղաքում ուրախ լուրը:

«Քշնամին փախչում է»:

Եւ իրօք կատարում է հրաշքը: Տասներորդ գումարտակը մատեմատիքական ճշգրտութեամբ կատարում է հրամանատար Աւետիսեանի հրամանը: Նա իրեն գցում է ձորը, անցնում թշնամու թիկունքը եւ սկսում գրոհը:

Քշնամին յանկարծակիի է գալիս եւ շուտով խուճապի է մատնւում, փախուստի մէջ փնտռելով իր փրկութիւնը: Եւ փախչում է յետ: Գլխակորոյս, թափելով գէնքերը, թողնելով գնդացիները, մերոնց հարուածի տակ, նա միեւնոյն ձորով փախչում է եւ անցնում Շիխովօ լեռների յետեւը, Պուտայի հովիտը եւ ապա Շաբան Դաղի բարձունքները:

Այդ փախուստը կայծակի արագութեամբ տարածւում է ռազմաճակատներում: Ամէն տեղ թշնամին, սարսափով բռնուած եւ խուճապի մատնուած, փախչում է ու փախչում, իսկ մերոնք, ոգեւորուած՝ հետապնդում են ու հարուածում:

Անողոք էր հարուածը, մեծ էր կոտորածը: Քշնամին միայն Պուտայի հովիտում թողնում է երկու հազարի չափ զիակներ:

Այսպէս փրկուեց Բագուն Օգոստոս 5ին, 1918 թուին:

Այսպէս նա ցոյց տուեց համայն աշխարհին հայ մարտիկի հերոսական ոյժը:

Փա՛ռք նահատակուածներին:

«ՀԱՅԲԵՆԻՔ» ամսագիր, Գ. տարի (1925), քիւ 9:

## ԱՐԱՍ ԱԼԶՈՒՋԵԱՆ

### Ի՞ՆՉՊԷՍ ՌՈՍՏՈՄԸ ՀԵՌԱՅԱԻ ԲԱԳՈՒՅՑ

Ռոստոմի հանդէպ, որպէս կուսակցական հիմնադրի, խոր յարգանք եմ ունեցել, մանկութեանս օրերից: Սակայն, նրան մօտից ճանաչեցի միայն 1917ին, նրա Բագու գալուց յետոյ: Երբ ճանաչեցի՝ յարգանքս վերածուեց պաշտամունքի բազում ընկերների պէս: Նրա հետ եղայ անբաժան մինչև Բագուից Իրան դադարը: Նրա հրահանգով՝ Պետրովսկի գնացի, ապա այնտեղից անցայ Հիւսիսային Կովկաս եւ այսպէս միայն բաժանուեցի նրանից:

Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի (ընտրուած ուսական յեղափոխութիւնից յետոյ) կազմի ամենակրտսեր անդամն էի: Եւ այն աշխատանքները, որ իմ ուսերի վրայ էին դրուած, պատճառ էին շարունակ, որ Ռոստոմի եւ Արրահամի հետ լինեմ, նրանց հաւանութիւնը եւ ցուցմունքները ստանամ: Այնպէս որ լիովին իրազեկ եմ Բագուի դէպքերին, ինչպէս եւ քաղաքը թողնելու վերջին ժամերի անցուդարձին:

Սեպտեմբերի սկզբներին արդէն անգլիական զօրամասը լքել էր Բագուի ճակատը եւ հեռացել: Ճակատի կացութիւնը դառնում էր խիստ յուսահատական, բայց մենք դեռ յամառում էինք դիմադրել: Սակայն, օրաուր դիմադրութիւնը դառնում էր անիմաստ թէ՛ ռազմական եւ թէ՛ քաղաքական մի շարք բարդութիւնների շնորհիւ, որոնց մասին տեղը չէ այստեղ խօսիլ:

Քաղաքը լքելու օրերը մօտենում էին, եւ ահա Սեպտեմբեր 17ի երեկոյեան, Կ. Կոմիտէն լայնացրած նիստ գումարեց՝ քաղաքը թողնելու խընդիրը քննելու համար: Որոշուեց քաղաքը թողնել նոյն գիշերը, ժամը 12ին: Որոշումը կայացաւ բուն վիճաբանութիւններից, յուսահատական եւ դրամատիկ ապրումներից յետոյ, երեկոյեան ժամը 8ին: Որով՝ շատ կարճ ժամանակ էր մնում քաղաքը թողնելու մասին պէտք եղած կարգադրութիւններն անելու ամբողջ ճակատին, բոլոր մարմիններէն եւ վարչական հաստատութիւններին, ինչպէս եւ ամբողջ ժողովրդին:

Ամբողջ ծովափում գտնուող նաւերը, մակոյկները եւ ուրիշ փոխադրական միջոցները դրուեցին նահանջը ղեկավարող ընդհանուր լիազօր՝ Գ. Բալայեանի տրամադրութեան տակ: Նա, ի հարկէ, անմիջապէս անցաւ գործի:

Սակայն, անցնենք մեղ հետաքրքրող խնդրին: Կ. Կոմիտէի պատմական այդ նիստի ամենաողորբական պահը Ռոստոմի հարցն էր:

— Ես պիտի մնամ քաղաքում, — ասաց նա. — ամբողջ ժողովուրդը տեղահան անել եւ քաղաքից հեռացնել չպիտի կարողանանք: Շատերն էլ իրենք չպիտի ցանկանան թողնել տուն-տեղ: Ունինք Շամախու ամբողջ գաւառի գիւղացիութիւնը, որ նահանջող բանակի հետ եկել հաւաքուել է Բագուում: Քաղաքը գրաւող տաճիկները անպայման պիտի կոտորած սարքեն: Բայց իմ

նրանց ձեռքը անցնելը եւ հրապարակով կախուելը շատ բան պիտի փոխի: Այս պայքարի դեկավարներէից մէկը պիտի մնայ ժողովրդի կողքին: Եւ կըրկնում եմ, դա միայն եւ պիտի լինիմ:

Ահա մօտաւորապէս նրա պատճառաբանութիւնը, որ ուսմբի պէս պայթեց ժողովի մէջ:

Մեր առարկութիւններն ու թախանձանքները չկոտրեցին նրա յամառութիւնը: Ընդհանուր յուզումը աննկարագրելի էր: Պապաշայի (Լեւոն Թադէոսեանի) զոյգ ակնոցների տակից արդէն արցունքները սահում էին այտերի վրայ:

Եկաւ Ազգային Խորհրդի նախկին նախագահ՝ Հայկ Տէր Միքայէլեանը: Երբ այս պատուական ծերունին լսեց Ռոստոմի որոշումը՝ մնալ քաղաքում, ուղղակի ինքն իրեն կորցրեց: Երկար համոզում էր նրան հրաժարուել այդ մտքից: Ինքը պատրաստ էր եւ պիտի զլխաւորէր այն յանձնախումբը, որ պիտի ընդառաջ երթար տաճիկ հրամանատարութեան: Ասում էր, որ Ռոստոմը պէտք չունէր մնալու եւ որ նրա պէս մի զոհ մենք պէտք չէ տանք: Ի վերջոյ, ծերունին, արտասուքները աչքերին, չոքեց Ռոստոմի առջեւ եւ խնդրեց, որ խօսք տայ, որ անպայման պիտի հեռանայ քաղաքից: Այդպէս էր ահա, որ զիջեց:

Հ. Յ. Դանակցութեան դիւցազնական պատմութեան մէջ այդ ժողովը պիտի մնայ եզակի: Սակայն, նրա մանրամասնութիւնների տեղը չէ այստեղ:

Բազմազան ու դժուարին խնդիրներ կային կարգադրելիք այդ կարճ ժամանակաշրջանում: Բայց հոգուս խորքում մի կասկած ծուարել էր Ռոստոմի հեռանալու խնդրի առթիւ: Մեր անզուգական Յովսէփ Այլամազեանին կանչեցի եւ կարգադրեցի աչքը չհեռացնել Ռոստոմից եւ հետեւել նրան շարունակ եւ մեզ իրազեկ պահել նրա շարժումների մասին:

Հեռախօսները անընդհատ գործում էին: Զիւարներ եւ մեքենաներով սուրհանդակներ թռչում էին ամէն կողմ: Բոլոր թաղամասերում տնէ տուն շրջում էին խմբակներ լուր տալու ժողովրդին քաղաքը թողնելու որոշման մասին, ինչպէս եւ յայտնելու իւրաքանչիւր թաղի համար նշանակուած մօտակայ նաւահանգիստը եւ նաւերը:

Արխիւներ, ռազմամթերք, հիւանդ կամ վիրաւոր փոխադրելու մասին գեկուցում էր թէ՛ Արրահամին եւ թէ՛ Ռոստոմին, որը ամէն տեղ էր եւ անմիջական կարգադրութիւններ էր անում:

Կ. Կոմիտէի զանազան մարմինների եւ Ազգային Խորհրդի, ինչպէս եւ մեր շէնքի շրջանում բնակուող ժողովրդի համար յատկացուած էր «Պուշկին» նաւը, որը գնալու էր Իրան եւ վերջինը թողնելու էր նաւահանգիստը:

Նաւերը թողնելու էին քաղաքը երեք ուղղութեամբ՝ դէպի Պետրոլսկ, Կրասնաւոտսկ եւ Էնդէլի (այժմ Փահլեփ):

Ճակատի դօրամասերը թողնելու էին զիրքերը հրամանատարութեան ցուցմունքներով: Արդէն ամենահեռուոր Արմէնիքենդ կոչուող թաղամասից ժողովուրդը իջել էր նաւահանգիստները: Քաղաքում բոլորը զիտէին, եւ հեռացողը հեռանում էր: Մեր թաղային մարմինների շէնքերը դատարկուած

էին, եւ մեր Կ. Կոմիտէի ու Ազգային Խորհրդի հսկայ շէնքը իր բազմաթիւ սենեակներով ամայացած էր:

Արրահամը, իր անբաժան պորտֆոլը թեւի տակ, մի խումբ ընկերների հետ արդէն զնայել էր որոշուած նաւը, իսկ Ռոստոմը դեռ չէր շտապում: Մօտեցայ իրեն.

- Ռոստոմ, 15 բոպէ մնաց, գնա՛նք:
- Ոչինչ, թշնամին անմիջապէս քաղաք չի մտնի:
- Բայց, նաւը կարող է շարժուել:
- Նա վերջինը պիտի մեկնի:

Սրընթաց ձիււոր սուրհանդակներ եկան, ապա գեկուցում տուին ու անցան:

Ժողովուրդը արդէն նկատելիօրէն սարսուտ էր: Ռոստոմը շարունակ հարց ու փորձ էր անում, թէ չի՞ մնացել արդեօք մի տեղ, ուր լուր տըրուած չէ քաղաքը թողնելու մասին: Էլ ոչ մի տեղից հեռախօսի պատասխան չկար: Լուսեց եւ հրամանատարութեան հեռախօսը:

Ճնշող ու ծանր վայրկեաններ էին ամայի եւ տակնուվրայ եղած մեր շէնքում:

- Գնանք, — ասաց Ռոստոմը:
- Ես եւ Յովսէփը ընկերացանք իրեն:

Կ. Կոմիտէի շէնքի փողոցը տանում էր ուղիղ ծովափ, ուր գտնուող նաւահանգիստի մօտ խարխիս էր ձգել «Պուշկին» նաւը: Փողոցը թաղուած էր անթափանց խաւարի մէջ: Շամախուց դաղթած դիւղացիները սայլերով, եզներով դեռ շարունակում էին գնալ դէպի ծովափ:

Բաւական գնացել էինք, երբ այդ մթի ու ժխորի մէջ կորցրինք Ռոստոմին: Մինչեւ նաւահանգիստ վաղեցինք, փողոցի իւրաքանչիւր մայթը մէկս վերցրած: Չկար, բայց մեղանից արագ գնալ չէր կարող:

Որոշեցինք նորից գնալ Կ. Կոմիտէի շէնքը տարբեր ուղիներով: Յարակից փողոցները կտրեցի, դուրս եկայ մինչեւ Բուշայա Մորսկայա եւ Տեղեֆոնայա փողոցով վերադարձայ Դրդ թաղամասի գրասենեակը, որը աւերուած ու դատարկ էր, ինչպէս մեր բոլոր հիմնարկների շէնքերը:

Յովսէփի հետ յուսահատ հանդիպեցինք ու վաղեցինք նաւահանգիստ: Նաւ մտնելը շատ դժուար էր արդէն, բայց մտանք եւ ստուգեցինք, որ Ռոստոմը չկայ:

Զգիտեմ ի՞նչ մղումով՝ նորից դուրս եկայ նաւից եւ վերադարձայ մեր շէնքը: Հեռուից արդէն նշմարում էի ափը թողնող նաւերը: Արդէն 12ից քառորդ անց էր, կէս ժամ վազվզել էի: Շէնքը նոյն պատկերն էր ներկայացրւում, բացի այն, որ մթերքների պահեստներով մի փոթորիկ էր անցել ու տակնուվրայ արել:

Չանգահարեցի մի քանի տեղ: Ապարդիւն: Յոգնած ու յուսահատ՝ կրկին դիմեցի դէպի նաւ: Տեղը չէ այստեղ նկարագրել նաւը ընկնելու պարագաները...

Երբ արդէն նաւի վրայ էինք, Արրահամը մի խումբ ընկերներով շրջապատեց երկուսիս:

— Երկու հոգի կորցրի՞ք նրան, — դարձացած հարցրեց Աբրահամը: Պատմեցինք մանրամասն:

— Դիտմամբ խոյս է տուել, — եզրակացրեց ընկերներից մէկը:

Ու այսպէս Ռոստոմը չկար:

Մեզանից առաջ զննցած նաւերով հեռացած լինել չէր կարող, անշուշտ: Ափից շատ հեռու, ուր թշնամու ուռածքերը մեզ չէին հասնում, նաւը կեցրել էինք եւ անցնող նաւերից նաւապետի միջոցով հարցնում էինք Ռոստոմի մասին: Սակայն, Ռոստոմը ոչ մի նաւի մէջ չէր:

Յուսահատութիւնը ընդհանուր էր: Լոյսը բացուել էր: Էլ ոչ մի նաւ չկար: Մենք արդէն մօտենում էինք Էնդելիին (Փահլեւի), երբ հորիզոնի վերայ նկատուեց մեզ հետեւող մի փոքրիկ նաւ: Մօտենում էր եւ արդէն որոշ էր, որ Կասպից ծովի ռազմանաւերից մէկն էր:

Նաւապետի սենեակի մօտ, բարձր տախտակամածի վրայ հաւաքուած, ամէն կողմից դիտում էինք մօտեցող նաւը, երբ ընկերներից մէկը գոչեց.

— Ռոստոմը...

Չեմ յիշում որի՞ հեռադիտակն էր: Ուղղակի պոկեցի նրա ձեռքից: Նաւի մէջ, տախտակամածի վրայ, աթոռի վրայ նստած էր մի զինուորական, որից մի քիչ հեռու մի քանի զինուորականներ նաւի եզրին, իսկ նրստողի մօտ անց ու դարձ էր անում քաղաքացիական զգեստներով մէկը, որը կասկածից դուրս էր, որ Ռոստոմն էր: Քանի նաւը մօտենում էր, այնքան արդէն որոշ էր դառնում, որ Ռոստոմն է նաւի մէջ:

«Պուշկին»ը իրօք լեփ-լեցուն էր: Բոլորը գիտէին, որ Ռոստոմը անյայտացել էր: Թէ՛ մեր ընկերները եւ թէ՛ ժողովուրդը յուսահատ ժամեր էին անցրել այն մտատանջութեամբ, թէ Ռոստոմը մնացել է Բագուում: Եւ երբ ռազմանաւը, մեր նաւապետի հետ խօսելուց յետոյ, մօտեցաւ մեզ, աննկարագրելի ուրախութեան բացազանչութիւններ թնդացրին օդը, ի տես Ռոստոմին, որը փոխադրուեց մեր նաւը:

Թողնենք ընկերների հանդիպումը նրա հետ, պատմենք այն, ինչ որ նա ասաց ինձ: Տեղի էր ունեցել հետեւեալը.

Ռոստոմը չէր կարողացել ստուգապէս իմանալ, թէ արդեօք զօրավար Բագրատունին, որ մի ոտքը կտրուած՝ գամուած էր աթոռին, տարուած էր նաւ, թէ՞ լքուած փախուստի ժխորի մէջ: Այս մտահոգութեամբ նա խոյս էր տուել մեզանից եւ փնացել հրամանատարութեան շէնքը, ուր ամէն ինչ տակնուվրայ էր եղած: Գտել էր նրան իր առանձնասենեակում՝ յուսահատ նստած: Մոռացել էին նրան տանել նաւը:

Ի՞նչ զժուարութիւններով, շալկած իջեցրել էր փողոց եւ ի՞նչ չարչարանքով հասցրել ծովափ, աւելորդ է պատմել: Ձինուորականների օգնութեամբ տարել էր նրան հրամանատարութեան նաւը եւ ցանկացել դուրս գալ՝ մեր նաւը դալու: Սակայն, զօրավարը ընդդիմացել էր եւ հրամայել, որ իր նաւը թողնի ափը, մատահ, որ մեր նաւը արդէն ափից հեռացել էր եւ Ռոստոմը մեզ հասնել չէր կարող: Ռազմանաւը կտրուել էր ափից այն պահին, երբ Բայիլովի բարձունքներից եկող թնդանօթի ուռածքերը արդէն պայթելիս են եղել նաւի շուրջը:

Այդ նաւը — անունը չեմ յիշում — հեռանալով ումրակոծութեան սահմաններից, մնացել էր Բագուի դիմաց, բաց էր թողել բոլոր նաւերը եւ, երբ արդէն ծովափին ոչ մի նաւակ չէր մնացել, թողել էր Բագուն եւ, խիստ արագընթաց լինելով, հասել էր մեզ:

Ահա թէ ի՞նչ պայմաններում եւ ի՞նչպէս Ռոստոմը թողել էր Բագուն այդ ծանր ու դժնդակ օրերին:

Ռոստոմի յատուկ էր մտահոգ լինել բոլորի մասին, բոլոր պայմաններում եւ երբեք իր մասին:

Արդեօք այդ չէ՞ր պատճառը նաեւ իր այնքա՞ն անժամանակ վախճանի...

«ԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, 1948, թիւ 1:

ԱՅԼ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Բագուի Հ. Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի մէկ ժողովը, որ կայացաւ քաղաքի անկման՝ Սեդուեմբեր 14ի երեկոյեան, յիշելն անհրաժեշտ է, մանաւանդ որ Կ. Կոմիտէի կազմից շատերը չկան այլևս: Ազգային Խորհուրդը միաձայնութեամբ որոշել էր, որ նախագահ Ա. Գիւլիանդանեանը եւ Ռոստոմ Զօրեանը անպայման հեռանան քաղաքից: Ազգային Խորհրդի ժողովից յետոյ կայացաւ Կեդրոնական Կոմիտէի վերջին խորհրդակցութիւնը, ուր Ա. Գիւլիանդանեանը, ներկայացրեց քաղաքի կացութիւնը, աւելացրէնելով նաեւ Ազգային Խորհրդի որոշումը՝ իրենց քաղաքից հեռանալու մասին: Զեկուցումից անմիջապէս յետոյ, Ռոստոմը դարձաւ Աբրահամին.

— Աբրահամ, դու պիտի մնաս եւ կախուես:

Շեշտը կտրուկ էր եւ հրամայական: Ազգային Խորհրդի նախագահը պէտք է կախուէր...

— Լա՛ւ, պատասխանեց Ա. Գիւլիանդանեանը, առանց որեւէ դժգոհանքի:

Ջուր մաղուեց բոլորի գլխին: Պապաշան (Լեւոն Թաղէոսեանը) խոր յուզումի մէջ էր: Պարզ էր, որ Ռոստոմը Աբրահամին մինակը ձգողը չէր Բագու՝ դաժան թուրքերի ձեռքը:

Ու պիտի կախուէին Ռոստոմն ու Աբրահամը Բագուի փողոցներում, թուրքերի ձեռքով, իրենց կողքին ունենալով նաեւ ուրիշներ...

Ո՛չ: Հ. Յ. Դաշնակցութեան Բագուի Կեդր. Կոմիտէն չէր կարող իւրացնել նման առաջարկ: Եւ գերակշռեց հաւաքականութեան կամքը:

«ԱԶԳԱԿ» շաբաթօրեակ, 1946, Փետր. 1:

ՄԻ ԷՋ ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԻՑ

1918 թ. Յուլիս ուղիղ 10ն էր. հայութեան համար մի չարաբաստիկ օր, երբ դօրքի աջ թեւը՝ Համազասպի բրիգադան սովից ու ծարաւից թուլացած ու անկողմակերպուած, թշնամու գերակշռող ուժից լքեց Մազրասա (Շամախու գաւառ) գիւղի Շուրուղինի Փրոնտը եւ խառն ի խուռն փախաւ մինչեւ Բագուայ զոները, որից յետոյ Բագուն օղակուեց չորս կողմից եւ սկսուեց հայ մարտիրոսազրութեան պատմութեան դրբում մի փայլուն էջ եւս բացուել: Այդ նահանջի ժամանակ Համազասպի շտաբում էր եւ Ռոստոմը, որը պատերազմի ամբողջ ընթացքում եղաւ յիշեալ բրիգադայի լաւագոյն ընկերը: Ինչպէս շեշտեցի, Համազասպի բրիգադան, աւելի շուտ դունդը, փախչում էր երկար շարաններով, որոնց երկարութիւնը 100 վերստի էր հասնում: Զօրքի նահանջի հետ դատարկուեցին Շամախու, Գէօջայի եւ Արէշի գաւառների բոլոր հայկական գիւղերը: 40-50 հազար ազգաբնակչութիւն բռնել էր Շամախու եւ Բագուի միջեւ եղած ճամբան: Բոլորս լքուած, յուսահատուած էինք: Մեզից իւրաքանչիւրը աշխատում էր շուտ փախչել, հեռանալ թշնամու հետեւող հեծելազօրքից, որը կտրել էր ճամբան եւ գիւղացիների մի քանի սայլեր յետ էր տուել դէպի տաճկական բանակը: Փախուստը այնքան անակնկալ եղաւ, որ 3100 զինուորներից մի 30 մարդ չմնաց, որ գաղթականների թիկունքը պաշտպանէ: Այդ խուճապի ժամանակ, մայրերը խելակորոյս ձգում էին իրենց մանուկներին թփերի տակ, խսկ որդիները իրենց ծնողներին էին թողնում եւ առաջ ընթանում: Այդ պահուն բոլորի մէջ գործում էր միայն փախուստի բնազդը: Հայրենիք, ընտանիք, պարտականութիւն՝ բոլորը ի դերեւ էին եղել մեր սրտից: Ահա մի այդպիսի վայնասունների, ճիչերի մոմենտից էր, որ հանդիպեցի Ռոստոմին մեն-մենակ, ուսական հասարակ զինուորի հազուատի մէջ, փոշիի մէջ կորած ուսարընակ Մարաղա (Շամախու գաւառ) գիւղում: Այդ գիւղում, բացի մեր սիրելի Ռոստոմից, ոչ ոք չկար: Նախօրօք արտոմորիլների մէջ փախել էին բոլշեւիկեան կառավարութեան յեղափոխական, ուլտրա-կոմունիստ կոմիսարները, մատնելով հիւանդ ու տգեղ գթութեան քոյրերին ճակատագրի անողոք քմահաճոյքին: Չկար Համազասպի շտաբից եւ ոչ ոք: Ռոստոմն էր, որ Մարաղայի նման ման էր գալիս գիւղի հիւանդանոցները, վիրաւոր եւ հիւանդ զինուորներին հաւաքում Բագու տեղափոխելու համար: Երբ Ռոստոմին հանդիպեցինք այդ դրութեան մէջ, դարմացանք, որ չէր մտածում փախչել: Առաջին մեր հարցումն եղաւ նրան.

— Ընկեր Ռոստոմ, ինչո՞ւ էք մնացել այստեղ, չէ՞ որ փախչող փախչողի յետեւից է: Մեր այդ հարցումին նա չպատասխանեց՝ պարզօրէն խուսափեց:

ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

— Ունի՞ք ձեզ հետ Փուրղոններ կամ սայլեր, — ղիմեց նա այս խօսքերով մեզ: Եւ երբ յայտնեցինք, որ մեզ հետ Բագու եւ զնուս թեթեւ բեռնաւորուած ուսս գիւղացիներէ վեց Փուրղոն, մի թեթեւ ժպիտ երեւաց նրա կնճառս ճակատին: Իսկոյն խնդրեց, որ իրեն տանենք կառասպաններէ մօտ, որոնք կազմ ու պատրաստ ուզում էին մեկնել գիւղից: Այնուհետեւ սկսուեց երկար ու բարակ մի սակարկութիւն Ռոստոմի եւ կառասպաններէ մէջ, որոնք սկզբում մերժում էին նրա պիմումները: Ռոստոմը կպել էր կառասպաններին եւ չէր ուզում նրանցից բաժանուել: Եթէ տեսնէիք, թէ ինչպէս էր խնդրում, ուղղակի կը դարձանայիք:

Հարագատ հայրը իր սրբիներէ համար այնպէս չէր հօգոյ, ինչպէս հանգուցեալը հայ գինուորի համար: Վերջուպէս Ռոստոմին յաջողակեց կառասպաններէ դուրսը շարժել ու համաձայնեցնել, որ իրենց հետ վերցնեն վիրաւորներին: Իր գործը աւարտած համարելով, մեզ էլ ճանապարհեց, իսկ ինքը մնաց, պատճառարանելով, որ ինքը ձիով է, երբ մենք եւ Փուրղոնները անցնենք մօտակայ գոտիները, ինքը կը հետեւի մեզ: Զտոխիւրը անցանք, դեռ մի 20 վերստ էլ առաջ, բայց չկար Ռոստոմը: Կէս գիշերին հետուից երեւացին երկու ձիաւորներ, որոնցից մէկի «բարեւ»ից խմացանք, որ Ռոստոմն է, որը մի կազ ձիու վրայ նստած, վեղարանման մեղուիլը գլխին, անցաւ մեր մօտից: Այդ դէպքից յետոյ Ռոստոմը իմ աչքում շատ բարձրացաւ: Այդ ժամանակ միայն հասկացայ, թէ ինչու նա վայելում է բոլորի սէրն ու յարգանքը:

«ԱՌԱՒՈՏ» շաբաթաթերթ (Թեհրան), 1919 Մարտ, քիւ 3:

Բագուի կոիւններու ամենատաք մէկ շրջանին էր, որ Մուրատի, Սեպուհի, Ստեփան Ծաղիկեանի ու բժիշկ Արշակ Պողոսեանի հետ հասանք այնտեղ:

Շամախի — Կէօքչայ ճակատին վրայ դանուող մեր գինուորները՝ թըշնամու գերազանց ուժերու ճնշումին տակ՝ սկսած էին նահանջել: Թրքական բանակը, որուն միացած էին Այրսկէյճանի ու Հիւսիսային Կովկասի իսլամները, աներկիւղ կ'արշաւէր դէպի Բագու...

Պուճապային օրեր էին: Բարերախտաբար, Բագուէն ուղարկուած նոր ու թարմ ուժերով ռազմաճակատի երկրուն վիճակը սկսած էր մասամբ դարձանուիլ, եւ այսպէսով հնարաւորութիւն կը տրուէր սլաշտպանութեան ղեկավարներուն՝ նոր, արմատական միջոցներու մասին մտածելու:

Ստեփան Շահումեանի հրաւէր-նամակին մէջ՝ մեղի յանձնարարուած էր առժամայէս տեղաւորուիլ Բագու, իր շատ մօտիկ ընկերներէն մէկուն՝ Սերգէյ Մարտիկեանի տունը: Վերջինը Մուրատին ու Սեպուհին ծանօթ էր, ուստի շոգենաւէն ուղիղ դնացինք այնտեղ:

Բնակարանը բաւական մեծ էր: Դիւրութեամբ տեղաւորուեցանք: Տեսակ մը կայան էր Մարտիկեանի բնակարանը, ուր մեզմէ առաջ բնակած էին ուրիշներ ալ, ի միջի այլոց, կամաւորական Ա. գունդէն իմ շատ մտերիմ ընկերս՝ Անաստաս Միկոյեանը, որ այդ օրերուն մեկնած էր Մոսկուա ու վերադառնալու էր շուտով:

Փակագծի մէջ, բատ կարգին, ըսեմ, որ Միկոյեանը արդէն Բագուի մէջ յայտնի դէմք էր, եւ ես անծանօթ էի այդ պարագային, որովհետեւ բոլշևիկ դառնալէն յետոյ, բնա՛ւ առիթ չէի ունեցած իրեն հանդիպելու: Շատ ուրախացայ, երբ լսեցի, որ պիտի վերադառնար ու պատեհէսութիւն պիտի ունենայի զինակից ընկերոջս տեսնելու: Միամտօրէն կ'ենթադրէի, թէ բարի, առաքինի ու հայրենասէր ընկերոջ մը պիտի տեսնէի, ինչպէս որ ճանչցած էի դայն՝ մեր կամաւորական շարքերուն մէջ, կուտի առաջաւոր գիրքերուն վրայ:

Հիասթափութեանս մասին վաղաժամ է խօսիլ, յուշերուս ընթացքին պիտի տեսնենք:

Մուրատն ու Սեպուհը աճապարեցին շտաբ երթալու, սրպէսպի հանդիպէին Ռոստոմին ու միւս ղեկավար ընկերներուն: Ստեփան Շահումեանի հետ ժամադրութիւնը ձգեցին, որ Սերգէյ Մարտիկեանը կարգադրէր յաջորդ օրուան համար:

Բաւական ուշ վերադարձան Մուրատն ու Սեպուհը: Իրենց ստացած տեղեկութիւնները Բագուի վիճակի մասին հետեւեալն էին.

— Բազուն ձգնամամային զրույթեան մէջ է: Մոսկուա վճռական կերպով մերժած է օգնական ուժեր գրկել, իսկ Անգլիացիներու կողմէ կնդէլիէն օգնական ուժեր գրկուելու առաջարկին՝ բացարձակապէս դէմ է Ստեփան Շահումեանը: Մեզի յանձնարարեցին, որ վաղուան մեր տեսակցութեան ընթացքին հայ ժողովուրդին սպառնացող ահաւոր վտանգը մատնանշենք եւ թախանձանօք խնդրենք, որ չընդվիճանայ Անգլիացիներու առաջարկին:

\*\*

Մղձաւանջային զիշեր մը եղաւ Բազուի մէջ մեր անցուցած առաջին զիշերը: Անհամբերութեամբ կը սպասէինք առաւօտեան, որպէսզի լսէինք Շահումեանի սրտումը:

Սերգէյ Մարտիկեանը շատ կանուխ արթնցած ու նախաճաշի պատրաստութիւն տեսած էր: Երբ լսեց մեր սանձայնէրը, ներս մտաւ ու հագորդեց, որ Շահումեանը պատրաստ է առաւօտեան ընդունելու Մուրատին ու Սեպուհին:

Հապճեպով նախաճաշ ընելէ յետոյ, անոնք մեկնեցան, իսկ մենք, բրժիշկ Պօղոսեանը, Մադիկեանն ու ես առիթէն օգտուելով, դուրս եկանք, ծանօթանալու համար Բազուին:

Կամաւորական Ա. Գնդին մէջ ունէինք բաւական բազուցիներ, որոնք ամէն օր Բազուն գոյնելով մեզ ձանձրացուցած էին: Յատկապէս աչքի կ'իյնար այդ տեսակէտէն իմ վաշտիս քարտուղար Յովհաննէս Ղազարեան Բաբայեանը:

— Բազուն ձեր տեսած քաղաքներից չէ: Պէտք է ապրել այնտեղ, ճանաչելու համար թէ ի՞նչ սքանչելի քաղաք է...

Անկեղծ բլլալու համար ըսեմ, որ ընկերներս ու ես առանձնապէս ըրջանչանալու որեւէ բան չտեսանք, հրապուրիչ որեւէ անկիւն չգտանք զիտելու, հիացումի առարկայ որեւէ չէնք, հրապարակ, կոթող չտեսանք, այլ միայն տխուր ու ազոտ փողոցներ ու հեռաւոր ռազմաճակատէն վերադարձող թափթփած ռուսական բանակի կորուստները զինուորներ...

Մադիկեանը առաջարկեց անցնիլ գլխաւոր Շտաբը. թերեւս հոն հանդիպէինք Մուրատին ու Սեպուհին, որոնք հաւանաբար վերադարձած պիտի ըլլային Շահումեանի պաշտօնատունէն:

Շտաբին մէջ գտանք բոլոր ընկերները, որոնք Բազուի պաշտպանութեան մէջ կարեւոր դեր կը կատարէին, — Ռոստոմը, Գիւլիանդանեանը, Արարատեանը, Բայրաշեանը եւ ուրիշ մեզի անձանօթ ընկերներ: Ամէնքն ալ անհամբեր կը սպասէին Մուրատի ու Սեպուհի վերադարձին՝ իմանալու համար Շահումեանին հետ իրենց ունեցած տեսակցութեան արդիւնքը:

Շատ չանցած՝ անոնք եկան: Բայց երկուքին ալ դէմքերը այնպիսի տխուր ու դայրալից արտայայտութիւն ունէին, որ ամէնքս ալ սահմուկած մնացինք:

Ռոստոմը, նկատելով անոնց յուզումնալից վիճակը, իսկոյն Գիւլիան-

դանեանին հետ ոտքի ելաւ եւ Մուրատն ու Սեպուհի ասնելով՝ մեկուսացաւ քովրնտի սենեակի մը մէջ:

Բաւական սպասեցինք, մինչեւ որ անոնք վերջացուցին իրենց զեկուցումը: Անեակէն դուրս եկան չորսն ալ՝ մտահոգ ու խորասուզում ծանր խոհերու մէջ: Ոչ ոք համարձակութիւն ունեցաւ որեւէ հարցում ընելու:

— Գնացէ՛ք ու հանգստացէ՛ք, — ըսաւ Ռոստոմը, — վաղը կրկին կը տեսնուենք:

\*\*

Դէպի տուն գնալու ժամանակ բժիշկ Պօղոսեանը փորձեց խօսեցնել Մուրատն ու Սեպուհի: Բայց Սեպուհին խոթող նայուածքը անմիջապէս լռեցուց զայն: Յուզարկաւորներու նման, անձայն, անչուկ տուն հասանք, ուր, բարեբախտաբար, այդ պահուն ոչ ոք չկար:

Հագիւ տեղաւորուած էինք, երբ ներս մտաւ Հոսէայ Աճառեանը, որ Շտաբէն դուրս գալու ժամանակ նկատած էր մեզ ու հետեւած մեզի:

Աճառեանին հանդէպ խոր յարգանք ունէին թէ՛ Մուրատը եւ թէ՛ Սեպուհը: Այնպէս որ, բնաւ տհաճելի չթուեցաւ իր ներկայութիւնը: Իսկ մենք շատ զոհ մնացինք, որովհետեւ վտահ էինք, որ Աճառեանը պիտի խօսք բանար Շահումեանի հետ տեղի ունեցած տեսակցութեան մասին:

— Երկուքդ ալ Աւագ Ուրբաթ դարձած էք, — ըսաւ Հրաչեան, — մարդ կը սարսափի երեսներուդ նայելու: Բայց մեր համբերութիւնն ալ չարաչար մի գործածէք: Ի՞նչ եղաւ ձեր տեսակցութեան արդիւնքը: Գոնէ երկու խօսք չէ՞ք ըսեր...

— Հրաչեայ, լաւ արդիւնք որ ունենար՝ առանց հարցումիդ ալ պիտի ըսէինք: Բայց ի՞նչ կրնանք ըսել, երբ յուսախար ու հրասթափ բաժնուեցանք Շահումեանին: Մեր եւ անոր տեսակէտներուն միջեւ այնպիսի խոր տարբերութիւններ կան, որ անկարելի է լաւ բան մը սպասել իրմէն:

— Բայց զո՞նէ Բազուի մէջ խճողուած հարիւր հազարէ աւելի հայութեան գոյութեան սպառնացող վտանգը չի՞ զգար Շահումեանը...

— Այո՛, կը զգայ, բայց չ'ուզեր մեր առաջարկած ձեւով հեռացնել այդ վտանգը: Անգլիացիները երբ Բազու մտնեն, — կ'ըսէ, — այլեւս չենք կրնար զանոնք հեռացնել: Մինչդեռ եթէ թուրքերը մտնեն, ռուսները շատ դիւրութեամբ զանոնք դուրս կը շարտեն:

Իսկ մինչեւ այդ շարտումը ի՞նչ կ'ըլլայ հայութեան վիճակը այստեղ: Բազուն թուրքերուն կողմէ զրաւուելէն յետոյ՝ ի՞նչ կ'ըլլայ Հայաստանի վիճակը: Չէ՞ որ Հայաստանը այժմ կապուած է գրեթէ Բազուի ճակատի անցուդարձերուն հետ: Բազուն զրաւելէ յետոյ՝ թուրքերը կը վերադառնան Հայաստան՝ ջարդելու համար մեր ժողովուրդը հոն եւս:

— Ծիչդ այդ հարցումը տուինք մենք: Բայց այդ հարցումը բոլոր հայերուն չըթնեանք վրայ է բացի բոլշեւիկներէն: Գիւտե՞ս թէ ինչ պատասխանեց մեզի Շահումեանը. «Համաշխարհային Յեղափոխութեան յաղթանակին համար ի՞նչ նշանակութիւն ունի հայ ժողովուրդի գոյութիւնը»...

— Եւ դուք լսեցի՞ք այդ անգութ արտայայտութիւնը պաղարիւնութեամբ:

— Թճեւ Ենք այդ յաղթանակին վրայ, որ պիտի շահուի հայ ժողովուրդին սչնչացումով, — բարնք ու բաժնուեցանք:

Հրաչեայ Աճառեանը իր հայրենասիրական զգացումներուն մէջ ա՛յնքան բուռն կերպով աղղուեցաւ Շահումեանի խօսքերէն, որ ուշագնաց եղաւ եւ բժիշկ Պօղոսեանի խնամքին յանձնեցինք զինք:

\*\*\*

Հայ-թաթարական կռիւներու շրջանին Մուրատն ու Սեպուհը շատ մօտէն ճանչցող ու անոնց հիացող բարեկամ մը, որ սոցիալիստ-յեղափոխական մըն էր (ախոս՝ս, անունը չեմ յիշեր), զիմելով Ռոստոմին, խնդրած էր, որ ինք ալ ներկայ ըլլար իր բնակարանին մէջ անոնց ի պատիւ տրուելիք ճաշկերոյթին ու հաւանութիւնը առնելէ յետոյ, երեկոյեան եկաւ մեր բնակարանը՝ անձամբ հրաւիրելու համար:

Մուրատն ու Սեպուհը Բագուի ներկայ պայմաններուն մէջ անպատեհ գտան առաջարկը: Սակայն, երբ լսուեցաւ, որ Ռոստոմն ու Գիւլխանդանեանն ալ պիտի մասնակցէին՝ համաձայնեցան:

Հակառակ Բագուի մէջ գրեթէ տիրող սովին, զարարողցի մեր բարեկամին օրհնեալ նահապետական սեղանին վրայ՝ ամէն տեսակի համադամները կարծես մրցումի ելած էին իրարու հետ: Մետաքսեայ զգեստներու եւ զարդակներու մէջ պճնուած Ղարաբաղի տարազով խաթունիկ տանախրուհին, մայրը մեզ հիւրասիրողին, սեղանին զլուխը փառասորապէս բազմելով, հրաւիրեց մեզ շրջապատելու սեղանը: Մօտաւորապէս, որքան կը յիշեմ, 20 հոգի կայինք:

Տանուտէրը՝ երիտասարդ, վայելչահասակ, սիրուն տղամարդ մըն էր, միաժամանակ զարգացած: Բոլորիս ալ բաժակները լեցնելէ յետոյ, ոտքի ելաւ, իր մայրիկը ներկայացուց հրաւիրեալներուն եւ, յուզիչ բարիկալուստի քանի մը խօսքերէ յետոյ, առաջարկեց ընկեր Բալայեանը թամատա ընտրել, որպէսզի կառավարէր սեղանը: Ներկաները միաձայն հաւանութիւն յայտնեցին ու Գերասիմը անցաւ իր պաշտօնին:

Ո՛վ պատեհութիւն ունեցած է Գերասիմը մօտէն ճանչնալու, ան միայն կրնայ գիտնալ, թէ ինչ անփիճելի շնորհ ունէր ան թամատա ըլլալու:

Առաջին բաժակները առաջարկեց խմել հայ ժողովուրդի երկու անըման հերոս գաւակներուն՝ Մուրատի ու Սեպուհի կենացը, մաղթելով որ անոնց զալուստը բարեբաստիկ ըլլայ Բագուի հերոսամարտին համար:

Յաջորդաբար, Ռոստոմին, Գիւլխանդանեանին կենացներէն յետոյ, ան առաջարկեց խմել երկու հերոսներուն զինակից-գործակիցներուն կենացը՝ ակնարկելով բժիշկ Արշակ Պօղոսեանին, Ստեփան Մաղիկեանին ու տողերս զրողին: Մասնաւորապէս ծանրանալով իմ վրայ՝ ան անդրադարձաւ յատկապէս Իշխան Արզուիթեանի գունդին մէջ ունեցած իմ գործունէութեան (ընկեր Գերասիմ Բալայեանը օգնականն էր Իշխանին, իսկ ես երրորդ վաշտի պետն

էի)․ զրուատեց Ռեվանտուզի զրուաման ընթացքին վաշտիս կատարած գերը, ողջունեց իմ մէջս թրքական բանակի նախկին սպան, որ հայ կամաւորական Ա․ եւ է․ գունդերուն մէջ, վաշտասպետի հանգամանքով ծառայած էր հայ ժողովուրդի պատազրական պայքարին․․․

Ընկեր Գերասիմին վերջին խօսքերը առանձին հետաքրքրութիւն արթնցուցին Ռոստոմի մէջ: Սկսաւ ուշադրութեամբ զիտել զիս եւ ըսաւ յանկարծ․

— Ամիրեա՛ն, ճաշից յետոյ քեզ հետ խօսելիք ունեմ:

Բաւական երկար տեսեց հայկերոյթը: Ռոստոմն ու Գիւլխանդանեանը շարասեցին մինչեւ վերջնալը: Սոխոյողական գործեր ունենալը պատճառաբանելով՝ ներողութիւն խնդրեցին տանակէրէն ու հրաժեշտ առին:

Մեկնումի պահուն մօտեցայ ընկեր Ռոստոմին՝ յիշեցնելով իր պատուէրը:

— Վաղը, առաւօտ, անցիր շտաբ, քեզ մի կարեւոր գործ պիտի տամ․․․

Ուշ ժամանակ վերադարձանք տուն՝ առանց քէֆէ, խրախճանքէ վերադարձողի դահուստի Ռոստոմն ունենալու: Բագուի վիճակը շատ յուսահատական էր, եւ մեր ունեցածը ահամայ կերուխում մըն էր․․․

\*\*\*

Յաջորդ առաւօտ, Մուրատին ու Սեպուհին ընկերանալով, գացի շտաբ: Ռոստոմը գտայ իր զրատեղանին վրայ՝ մխրճուած բազմաթիւ խնդիրներ լուծելու աշխատանքին մէջ: Ողջունելէ յետոյ, ըսաւ․

— Ամիրեա՛ն, թրքական բանակին վերաբերող ահագին վաւերաթուղթերի մի արխիւ զբաւել են մերոնք: Գրանք պրպտելու եւ որոշ մասերի էլ թարգմանութեան պէտք ունինք: Երէկ, երբ Գերասիմը շեշտեց թրքական բանակի սպայ լինելը, անմիջապէս յիշեցի, որ մենք պէտք ունինք քեզ: Աճառեանը զրադուած է այդ գործով, բայց ասում է, որ գինուորական տէր-միմներ, քեֆնիք բռներ ու ասացուածքներ կան, որ ինքը լիովին չի կարող թարգմանել: Եթէ Մուրատն ու Սեպուհը համաձայնեն, պիտի խնդրեմ, որ օգնես Աճառեանին՝ միասին կարգի դնելու համար այդ արխիւը:

— Ամիրեանը Ձեր տրամադրութեան տակ է՛րբ եւ ս՛րջափ ժամանակ որ պէտք ունենաք իրեն, — բարն Մուրատն ու Սեպուհը:

— Հիմա չափադանց կարեւոր զրադում ունեմ, — շարունակեց Ռոստոմը, — կէսօրէ յետոյ անցիր ինձ մօտ, որպէսզի միասին գնանք զլիաւոր շտաբը ու քեզ ծանօթացնեմ զնդապետ Աւետիսեանի (շտաբի պետ) ու Աճառեանի հետ:

— Արդէն ծանոթ եմ Աճառեանին:

— Այդ աւելի լաւ, միասին պիտի աշխատէք:

Գնդապետ Աւետիսեանը մեզ ընդունեց շատ սիրալիբ կերպով: Անմիջապէս զիս ծանօթացուց իր ստորադասներուն հետ ու ապա առաջնորդեց Հրաչեայ Աճառեանի գրասենեակը:

Թուղթերու ահագին դէզի մը մէջ ընկզմած գտանք Աճառեանը:

— Հրաշեալ, — ըստ Ռոստոմը, — քեզի մի օգնական եմ բերել, թըրքական բանակի մի սպայ: Յոյս ունիմ, որ դո՛ւ պիտի լինես:

— Բայց, Ամիրեան, մի՞թէ թըրքական բանակի սպայ ես, — մտերմիկ շեշտով մը ըսաւ Աճառեանը. — Ծօ՛, մնտոիկ, ինչո՞ւ մինչեւ հիմա ինձի չես ըսած այս պարագան: Մինակս կը տանջուիմ այստեղ, իսկ դուն սուսուփուս մէկ կողմ քաշուեր ես:

— Բայց ես ս՛րտեղէն պիտի իմանայի, որ պէտք ունէ՞ք իմ ծառայութեանս: Այսօրու ընէ՛ ահա տրամադրութեանդ տակ եմ:

Նոր սեղան մը միացուցինք Հրաշեայի գրասեղանին, եւ ես իսկոյն անցայ գործի:

Աստրո-Հունդարական ու գերմանական բանակներու կողքին գործող թըրքական բանակին պատկանող Տիվիզիայի մը զնդերէն մէկուն արխուն էր, որ յանձնեցին ինձի պրպտելու համար: Գրաւուած էր Գանձակի մօտերը տեղի ունեցած բուռն կռուի մը ընթացքին:

\*\*\*

Ուրեմն, թըրքական բանակը Բագուի դէմ, ուժեղացած նոյնիսկ հեռաւոր Սլովաքիայէն բերուած միաւորներով, ա՛յնքան յանդուզն դարձած էր, որ ռազմաճակատին վրայ ապահոված ըլլալով թուական գերակշռութիւնը, սկսած էր յարձակողական գործողութիւններու: Այդպիսի յարձակումի մը ընթացքին էր, որ ուժեղ ճնշումի մը զո՛ւ դարձաւ մեր սիրելի Մուրատը:

Զօր. Սեպուհի յուշերուն մէջ ա՛յնքան խոր յուզումով եւ մանրամասնութեամբ նկարագրուած է Մուրատի հերոսական մահը, որ ես պիտի խուսափիմ կրկնութիւններէ: Միայն այսքանը պիտի բռնեմ, որ անոր մահը խոր սուգի մատնեց ամբողջ Բագուի հայ ազգարնակչութիւնը: Մեր մեծ ընկեր Ռոստոմը ա՛յնքան խոր ազդուած էր, որ կարծես կորսնցուցած էր իր հարազատ դասակը: Այնուամենայնիւ՝ ան բնաւ չկորսնցուց Բագուի պաշտպանութեան վերաբերող իր անսպառ եռանդն ու կորովը:

Ինչպէս ընկեր Արամ Այլուջեանը ա՛յնքան գեղեցկօրէն նկարագրած էր «Հայրենիք» ամսագրի մէջ, Ռոստոմ ամէն օր նոր ծրագիր մը կը յղանար՝ ռազմաճակատի դրութիւնը բարելաւելու համար: Անոր մէկ յանդուզն ծրագիրն էր Քաղէսս Ամիրեանի խմբին կատարել տուած այն խիզախ յարձակումը, որ ուղղակի շէնքուց թշնամին:

Բագուն արդէն օղակուած (միայն ծովային յարաբերութիւնը կը պահուէր)՝ թուրքերը կը սպառնային գրաւելու քաղաքը: Թնդանօթներու ուժերը արդէն սկսած էին կատարել աւերը: Ժողովուրդին բարոյական կորովը երերալու նշաններ ցոյց կու տար, ինչ որ կ'անդրադառնար ե՛ւ ճակատի պաշտպաններուն տրամադրութեան վրայ:

Այս պարագաները նկատի ունենալով՝ Կասպեան նաւատորմը, համախորհուրդ միւս կուսակցութիւններուն հետ, յայտարարեց Տիֆլիսի, ձերբակալեց բոլոր բուլղերիկ զեկավարները, Շահումեան, Ջափարիձէ, զըն-

դապետ Պետրով Լույն, ու հրաւիրեց Անգլիացիները, որ օգնութեան հասնին...

Ճիշդ այդ օրը Անաստաս Միկոյեանը Աստրախանէն ռազմամթերք բեռնուած նաւով մը կը հասնի Բագու: Դեռ ծովուն վրայ, լսելով Կասպեան նաւատորմի տիքտաթուրա յայտարարելն ու բուլղերիկ զեկավարներու ձերբակալութիւնը, անմիջապէս շոգենաւին ցոտիկը դարձնել կու տայ դէպի հիւսիս ու ամենայն արագութեամբ կը վերադառնայ Աստրախան:

Չար լեզուներ կ'ըսէին, որ շոգենաւին վրայ դառնուած ռազմամթերքը ծով թափել տուած էր՝ կասկածելով, որ Կասպեան նաւատորմը կրնար հետապնդել շոգենաւը եւ, ձերբակալման պարագային, Բագուի պաշտպանները կրնային օգտուիլ ռազմամթերքէն:

\*\*

Սկզբնական օրերուն, երբ անգլիացի զինուորները սկսան երեւնալ Բագուի փողոցներուն ու պաշտպանութեան դիրքերուն վրայ, թէ՛ մեր զինուորներուն եւ թէ՛ մեր ժողովուրդին կորովը բարձրացաւ: Ամենուն դէմքին վերայ սկսաւ նկատուիլ ժպիտ եւ ուրախ տրամադրութիւն: Դժբախտաբար, երկար չտեսեց այդ ողբերգութիւնը: Անգլիացիները ողորմելի միաւոր մը միայն զրկած էին, որ չուտով հիասթափ բրաւ բոլորն ալ:

Բախտորոշ օրեր էին: Սեպուհը, երբ Ազգային Սորհուրդէն վերադարձաւ, պատուիրեց ինձի, որ ժամ մը յետոյ, Թէլէֆոննայա եւ Չէրնոմորըսկայա փողոցներուն անկիւնը գտնուող զեկարանին առջեւ սպասեմ Ռոստոմին՝ կարեւոր հրահանգ մը ստանալու համար:

Անմիջապէս փութացի ժամադրաւայրը՝ առանց սպասելու որոշեալ ժամին:

Դեղարանին ժամացոյցին ճիշդ դէմը կանգնած՝ անհամբեր կը սպասէի, երբ, յանկարծ, ձեռքի թեթեւ հպում մը զգացի ուսիս վրայ: Ռոստոմն էր: «Հետեւիր ինձ», ըսաւ ու շարունակեց ճանապարհը:

Անկիւնի բազմութիւնը մեր ետեւ ձգելէ յետոյ՝ ան կանգ առաւ ու հագիւ լսելի ձայնով մը ըսաւ.

— Վաղը առաւօտ, ժամը ճիշդ 10ին, այս հասցէով (գրուած հայերէն եւ ռուսերէն) կ'երթաս Չօր. Բաղրատունիին բնակարանը եւ կ'ասես, թէ ես զրկեցի քեզ: Այնտեղ պիտի լինի նոյնպէս անգլիական զօրամասի շտաբի պետ՝ Գնդապետ Սթոքսը: Մի կարեւոր գործողութեան մասին պիտի խորհրդակցենք եւ քեզ մի վեր պիտի առաջարկենք: Յոյս ունեմ, որ կը ստանձնես եւ յաջողութեամբ էլ կը կատարես: Մի բան խստօրէն կը պատուիրեմ ու կը պահանջեմ նոյնքան խստօրէն, որ բացարձակապէս դադարի պահես բոլոր անցուղարձը ու սչ ոքի ոչինչ չասես: Նոյնիսկ...

— Նոյնիսկ Սեպուհի՞ն:

— Այո՛, նոյնիսկ Սեպուհին, — հաստատեց Ռոստոմ, պիտե՛րու կըձկումով թեթեւ ժպիտ մը գծելով իր պատկանելի դէմքին վրայ:

Առանց դժուարութեան կարելի է երեւակայել, թէ ես ինչպէ՞ս անցու-

ցի այդ գիշերը: Բարերախտաբար, մեծահարուստ Աֆանասովներու բնակարանը բազմաթիւ բաժանմունքներ ունէր, եւ անկողնիս մէջ աջ ու ձախ դառնալու ժամանակ մասնակալին հանած աղմուկը չէր խանգարեր ոչ Սեպուհին, ոչ բժիշկ Պօղոսեանին եւ ոչ ալ Մաղիկեանին, որոնք հանդիստ կը քընանային:

Աֆանասովներու բարի ծառան, ըստ սովորութեան, սամովարը արդէն եռացուցած եւ թէյի հաճելի բուրմունքով լեցուցած էր ամբողջ բնակարանը, երբ աչքերս բացի, հաղիւ առաւօտեան դէմ վրաս եկած թմրիրէն:

Բոլորուեցանք նախաճաշի սեղանին շուրջ: Բայց, ի մեծ ցաւ բոլորիս, Ղազարեցի մեր բարեկամը, որ հաղիւ վերջացուցած էր իր ամէնօրեայ առաւօտեան սաղմօսը, մօտեցաւ ու յայտնեց, որ այդ օրուայ թէյը ինք պատրաստած էր հորի ջուրով, որովհետեւ քաղաքին ջրամբարներու ջրերը սպառած էին: Իրականին մէջ, թուրքերը պաշարումը ամբողջացնելէ յետոյ, ոչ ընչացուցած էին ջուր հայթայթող խողովակները:

Բագ՛ւ եւ ջր՛որի ջո՛ւր...

Այդ ու նախ ճոտով ջրհորի ջուրերը անկարելի էր գործածել. մեր սքանչելի թէյը միայն դոյն ունէր եւ ոչ համ: Այդ օրուրէն սկսեալ զրկուեցանք գոնէ թէյ մը ունենալու հաճոյքէն: Մեր ծարաւը կը յաղեցնէինք բերաննիս ցօղուելով ջրհորի ջրով, որ բարերախտաբար բաւական պաղ էր...

\*\*\*

Զօր. Բագրատունիի բնակարանը շատ հեռու չէր: Դիւրութեամբ գըտայ: Գեղեցիկ շէնքի մը երկրորդ յարկին մէջ կը բնակէր:

Զէի ճանչնար Զօրավարը: Եւ երբ սկսայ սանդուխներէն բարձրանալ, մտահոգութիւն մը սկսաւ տանջել զիս. ի՞նչ լեզուով պիտի խօսէինք իրարու հետ, եթէ ան ալ Նազարեկեանին նման ուստիսօս էր:

Պահակ զինուորը, ստուգելէ յետոյ ինքնութիւնս, զիս առաջնորդեց զբոսենեակ:

Համակրելի դէմքով երիտասարդ զօրավար մըն էր Բագրատունին: Ժպտաղէմ ընդունեց զիս՝ երկարօրէն սեղմելով ձեռքս, ստանց տեղէն շարժելու: Այդ պահուն ցաւով նկատեցի, որ հաշմանդամ էր:

— Բարո՛վ, հազար բարի, սիրելի՛ հայրենակից: Արի, ճիշդ դէմս նստիր: Ռոստոմը քիչ առաջ հեռախօսեց արդէն: Մինչեւ Գնդ. Սթոքսի գալլը, ձեզ կը բացատրեմ, թէ ի՞նչ ծրագիր ունենք եւ ինչպիսի ծառայութիւն կ'ակնկալենք ձեզանից:

Ա՛յնքան զիւրութեամբ ու ա՛յնքան սահուն հայերէն մը կը խօսէր, որ ուղղակի սպառնումնացի:

— Ինչո՞ւ չփոխած երկույթ առիք...

— Պարոն զօրավար, կը հիանամ ձեր հայերէնին վրայ: Մտահոգ էի, թէ ի՞նչպէս իրար պիտի հասկնայինք, եւ հիմա, երբ ձեզ լսեցի, սպառնացայ:

— Ա՛յ տղայ, ախալցխացի եմ: Մեծ հայրս էր զրումէն եկած է: Մինչեւ մեր տունէն դուրս գալս՝ ուրիշ լեզու չեմ խօսած: Մայրենի լեզուս չեմ

մոռցած, թէ եւ կը տիրապետեմ սուսերէն, գերմաներէն, անգլերէն ու ֆրանսերէն լեզուներուն:

— Ուրեմն, խօսինք մեր հայերէն լեզուովը: Ես ալ բարերոյցի եմ: Մեր ու էրզրումի բարբառները գրեթէ նոյնն են:

— Ահ, ուրեմն, խկապէս հայրենակիցներ ենք: Հիմա լսի՛ր. մօտեցի՛ր, որ քարտէսի վրայ ցոյց տամ, թէ ի՞նչ է մեր ծրագիրը.

— Հակահետախուզական պաշտօնատնից մեզ իմացնում են, որ թըրքական բանակը հեռոցհեռ նոր ու թարմ ուժեր պիտի ստանայ եւ վճռական յարձակողականի պիտի անցնի: Մեր գրութիւնը գրեթէ յուսահատական է: Անգլիացիները արամադրելի ուրիշ ուժեր չունին Բագուի համար: Բուլղերիները Ռոսաստանի ամբողջ տարածքին վրայ ա՛յնքան զրազուած են քաղաքացիական պատերազմով, որ չեն կարող մեզ օգնութեան հասնել: Մտածում ենք թրքական օդնական ուժերու գալը դանդաղեցնել: Մեր ծրագիրը հետեւեալն է.—

«Կասպից ծովի ափին, Մուզանի անապատի արեւելեան կողմը, Լենքորան անունով փոքրիկ մի նաւահանգիստ կայ: Որոշած ենք այդտեղ ցամաքահանում կատարել 10-12 հողինոց մի խումբով, որի մէջ պիտի լինես դու: Այս խումբը պիտի ունենայ իր տրամադրութեան տակ մի քանի թեթեւաչարժ մեքենաներ, որոնք պիտի ծառայեն որպէս արագ փոխադրական միջոց: Բոլոր մասնակցողները պիտի ունենան գերմանական բանակի համազգեստ: Քս գերը պիտի լինի այդ գերմանացիներին ընկերացող թուրք սպայի ղերը, որպէսզի, ի հարկին, թուրք զիւրացիներին հանդիպելու պարագային, կամ թրքական զիւրացից անցնելու ժամանակ, թրքական սպայի հանդամանքով յարարելութեան մտնես նրանց հետ ու զիւրացնես գործողութիւնը:

«Ահա եւ գործողութիւնը— .

«Մուզանի անապատը դուրս գալէ յետոյ, ամենաարագ կերպով պիտի ջանաք հասնել Եւրօխ: Մնացեալը կը կատարեն մասնագէտները: Երկաթուղային կամուրջը պայթեցնելէ յետոյ, սրարչաւ պիտի վերադառնաք Լենքորան, ուր պիտի գտնէք ձեզ փոխադրող շտեկանաւրը»:

— Բայց, Պրն. Զօրավար, ես անգլերէն չեմ գիտեր, ինչպէ՞ս պիտի կարենամ գործակցել անոնց հետ:

— Բնա՛ւ մի մտահոգուիր: Սումբի մէջ թուրքերէն հասկցողներ կան: Միայն թուրք սպայի գեր կատարող չկայ,— մի սպայ, որ գիտենայ ու խօսի մաքուր պոլսական թուրքերէն ու թրքական բանակի զինուորական գիտելիքներին տեղեակ լինի:

\*\*\*

Պօսակցութեան ընթացքին ներս մտաւ Գնդ. Սթոքսը, որ զօր. Տէնսթէյլի զօրամասին Շտաբի պետն է եղեր:

Փոխադարձ ծանօթութենէ յետոյ, զօր. Բագրատունին երբ բացատրեց, թէ ծրագրի մասին մանրամասնութեամբ խօսած էր ինծի հետ, Գնդ. Սթոքսը հարցուց, թէ թրքական բանակի սպայի համազգեստ ունի՞մ արդեօք:

— Ո՛չ, — պատասխանեցի :

— Մերիններն ալ չունին գերմանական համազգեստ : Եթէ չեմ սխալիր, գերման ու թուրք բանակներու համազգեստները՝ յար եւ նման են : Հետեւաբար, անմիջապէս խափի կտոր գնելով՝ 4-5 օրուայ ընթացքին կրնանք պատրաստել տալ :

Նկատելով, որ Զօրավարն ու Գնդապետը սկսան անզլերէն խօսակցութեան, աւելորդ նկատեցի այլեւս մնալս ու թոյլտուութիւն խնդրեցի մեկնելու համար :

— Դեռ սպասիր, Ամիրեան : Գնդապետը կը հետաքրքրուի ձեզմով ու կ'ուզէ գիտնալ, թէ դուք լաւ կ'ընէ՞ք էք ձեր ստանձնելիք պարտականութեան հետ կապուած բազմաթիւ վտանգներն ու ծանր հետեւանքները...

— Կատարե՛լապէս կ'ըմբռնեմ այդ բոլորը, Պրն. Զօրավար :

— Երկրորդ պարագայ մը. Գնդապետը կ'ուզէ գիտնալ, թէ նիւթական ի՞նչ վարձատրութիւն կ'ակնկալէք...

— Վարձատրութեան մասին ոչ մի խօսք : Ես պիտի կատարեմ Ռոստոմի յանձնարարութիւնը : Միայն խնդրանք մը ունիմ Գնդապետէն եւ կը փափաքեմ, որ այդ խնդրանքս նկատի ունենան ինծի ընկերակցողները :

— Ի՞նչպիսի խնդրանք է այդ :

— Յաջողութեան կամ ձախողութեան պարագային, եթէ ենթարկուինք գերի իյնալու անխուսափելիութեան, ու ես հնարաւորութիւն չունենամ անձնասպանութեան, ընկերներս թող գնդակահարեն գիտ :

— Շա՛տ անյարմար է, Ամիրեան, այդպիսի առաջարկ մը անել. կարող է վիրաւորուել :

Զօր. Բագրատունիի դէմքին վրայ լուրջ հարցական երեւոյթ մը նկատելով՝ Գնդապետը միջամտեց .

— Ի՞նչ բանի մասին տարակարծիք էք :

— Գիտե՞ք ինչ, Պրն. Գնդապետ : Ամիրեանը կը խնդրէ, որ կարգադրէք, որ գերի իյնալու պարագային ընկերները զինք գնդակահարեն :

— Բայց ո՞վ ըսաւ, թէ անզլիացի զինուորը գերութիւնը կը նախընտրէ...

Զօր. Բագրատունին երբ թարգմանեց, անմիջապէս ըսի .

— Նոյնիսկ վիրաւորանք համարուելու գնով, թախանձանօք պիտի խնդրեմ, որ այս պարագան խոստացուի ինծի : Իսկ ինչ կը մնայ անզլիացի զինուորին գերութիւնը չնախընտրելու պարագային, պիտի խնդրեմ նկատի ունենալ, որ կու՞ք էլ Ամարայի մէջ գերի ինկող զինուորները՝ անզլիական բանակին կը պատկանէին...

— Բաւական անախորժ զրուցեան մէջ դրիր ինձ, Ամիրեան : Պիտի աշխատիմ մեղմացուցիչ ձևով հասկցնել գնդապետին : Կենաց-մահու խընդիր է, հետեւաբար, չեմ ուզում խիղճս ծանրաբեռնել...

Չեմ գիտեր, թէ ի՞նչ ձեռով բացատրեց զօրավարը, բայց Գնդ. Սթոքսի դէմքին վրայի սկզբնական վրդովումը հետզհետէ տեղի տուաւ զարմանքի, յանգելու համար բարեկամական ձեռքի սեղմումի մը :

— Հիմա այլեւս ամէն բան պարզուեցաւ թէ՛ մեզի եւ թէ՛ ձեզի հա-

մար : Մեր ծրագրին յաջողութիւնը ամբողջապէս կապուած է գաղտնապահութեան հետ : Զերմօրէն պիտի խնդրեմ ու յանձնարարեմ, որ կատարելապէս պահես այս գաղտնիքը ու բացարձակապէս ոչ ոքի չասես, — եզրակացուց զօրավարը :

— Գերմանացի սպաներու հետ շփում ունենալու առիթներ պատահած է ձեզի, — հարցուց գնդապետը :

— Այո՛, բայց ոչ մտերմութեան մէջ, այլ միշտ պաշտօնական :

— Ծի՞ր չի է, որ գերմանացիք միշտ վերէն նայած են ձեր վրայ :

— Այո՛, այդ պարագան միշտ ալ նկատած ենք մենք՝ թրքական բանակի սպաներս, բայց գտած ենք, որ անոնք իրաւացի են :

— Ինչո՞ւ :

— Շա՛տ պարզ. կարգ-կանոնի, անխոնջ աշխատանքի տիպարներ էին գերմանացիք, եւ մենք ներքուստ թէեւ կ'ատէինք անոնց ինքնահասանութիւնը, բայց միաժամանակ կը զգայինք, որ անոնք շատ ու շատ բարձր են մեզմէ :

— Ուրեմն, դժգոհ չէ՞ք մնար, եթէ գերմանացի զինուորներու հետ գործ ունենաք : Է՛հ, կը շնորհաւորեմ ձեզ, — ըսաւ եւ յաջողութիւն մատակարարեց ինքնուրուի մեկնեցաւ Գնդ. Սթոքսը :

Յաջորդ օրուան համար ժամադրուելով՝ ես ալ մեկնեցայ զօր. Բագրատունիի պաշտօնատունէն :



Տուն վերադառնալով՝ ամբողջովին անձնատուր եղայ ստանձնած պարտականութեանս հետ կապուած խոհերուն : Լենքորան, Մուղան, Եւլախ անունները կ'արձագանգէին ականջներուս մէջ :

Երեկոյեան, երբ հաւաքուեցանք սեղանին շուրջ, ո՛չ Սեպուհը եւ ո՛չ ալ Ծաղիկեանը որեւէ ակնարկութիւն ըրին Բագրատունիի հետ ունեցած տեսակցութեանս առնչութեամբ : Ես ալ, բնականաբար, բնա՛ւ չխօսեցայ այդ մասին :

Զօր. Բագրատունիին երկրորդ այցելութեանս՝ անոր մօտ գտայ Ռոստոմն ալ, որ ինձ տեսնելուն պէս սկսաւ ծիծաղիլ՝ բռնելով .

— Մեր տղա՛յ, այդ ի՞նչ ես տեսի երէկ Գնդ. Սթոքսին : Զօրավարը բաւական նեղ զրուցեան մէջ ես դրել...

— Ընկեր Ռոստոմ, կը ցաւիմ պատահածին համար : Բայց կը խնդրեմ, ըսէք, իրաւունք չունէի՞ կու՞ք էլ Ամարայի խալտատակութիւնը յիշելու, երբ, անբարտաւան Անզլիացին կ'ըսէր, թէ անզլիացի զինուորը կը նախընտրէ մահը՝ գերութեանէն...

— Շատ լաւ ես արել եւ քարը ձեռք տեղն ես դրել : Անպիտանները միշտ յոխորտում են : Հիմա տեսնեք, թէ այս ուշացած ձեռնարկը ի՞նչպէս պիտի վերջացնես : Ի միջի այլոց, Աճառեանը պիտի մեկնի ինդէի : Յաճախ հանդիպիր գլխաւոր շտաբը. թերեւս թարգմանելիք բաներ գտնուին :

\*\*\*

«Ուրբաթը, սակայն, աւելի կանուխ եկաւ շարաթէն», կ'ըսէ մեր ժողովուրդը:

Այդպէս ալ պատահեցաւ մեր ծրագրին հետ: Դեպքերը այնպիսի թատաղլոր արագութեամբ բնթացան Բագուի մէջ, որ մտապայտեան տրուեցան օրերով սրճացում շատ մը ծրագիրները...

Բագուն չըջապատող թրքական բանակը անցաւ մտնական յարձակողականի եւ անոր անկումը դարձաւ այլևս անխուսափելի:

Գնդ - Բիշերախոփը, իր գործառնով սպամաճակատը լքելով, քաշուեցաւ դէպի հիւսիս՝ Պետրոփակ: Անդլիայիները սկսան իրենց սպորմելի միաւորները դանդաղորէն յետ քաշել եւ յեցնել չողենաւերուն մէջ:

Այս երկու պարագաները, միացած թրքական թնդանօթներու ոտմերթուն յարուցած ազմուկին, շատ վառ ազդեցին բանակին ու ժողովուրդին առանց այն ալ երկրուն բարոյական կորոյին վրայ՝ խուճապահար դէպի նաւահանգիստ, չողենաւերու վրայ սպաստանելու մղելով բոլորը, եւ գործ, եւ ժողովուրդը:

Ընկեր Արամ Այշուջեանը Բագուի պաշտպանութեան ողբերգական վերջաւորութիւնը ա՛յնքան յուզիչ ու մանրամասն նկարագրած էր, որ ես նոր բան մը չպիտի կրնամ աւելցնել, այլ միայն պիտի շեշտեմ անոր այն հիացական տողերը, որոնցմով ան ներքոյրած էր մեր մեծ ու պաշտելի բնկերծ՝ Ռոստոմին կատարած յանդուգն ու անձնազոհ քայլը: Երբ ամէն մարդ զրազած էր միայն իր զլուխը ազատելով, Ռոստոմը վերջին պահուն կ'անդրադառնայ, որ Զօր - Բագրատունին հաշմանդամ է, անկարող է նոյնիսկ փողոց դուրս գալ, ուստի ամէն վտանգ աչք տանելով՝ կ'երթայ ազատելու խեղճ զօրավարը, կը շալկէ զայն ու սանդուխներէն վար կ'իջեցնէ:

\*\*\*

Շողենաւը, որուն վրայ սպաստանում էինք մենք եւ որուն մէջ ծովու վրայ մեզի միացաւ բնկեր Ռոստոմը, խարսխեց կասպից ծովու հարաւոր գրունուղ էնդէլի փոքրիկ նաւահանգիստը:

Մեր խմբակը (Սեպուհ, բժ. Պօլոսեան, Սաեփան Մադիկեան եւ ինքս) զիմաւորեց Հրաչեայ Աճառեանը, որ ուղղակի առաջնորդեց մեզ իր տունը:

Մտոցայ բսելու, որ Հրաչեայ Աճառեանին Բագու գտնուելը պատահականութիւն էր եղած: Անիկա թաւրիզէն հրաւիրուած էր տեսչական պաշտօնով: Խեղճ մարդը շատ մը պատարութիւններով նոր նախիջեանէն հազիւ հասեր էր Բագու, երբ թաւրիզը դրասուեր էր թուրքերու կողմէն, ուստի ան չէր կրցեր շարունակել իր ճանապարհը ու ստիպուեր էր մնալ Բագու:

Բայց Հրաչեայ Աճառեանը անդործ նստող մարդ չէր: Դիմած էր Ազգ. Խորհուրդին ու ինքզինքը դրած՝ անոր տրամադրութեան տակ: Եւ ինչպէս տեսանք, ան նշանակուած էր թարգմանիչ գլխաւոր Շտաբին մէջ, ուր Ռոստոմի յանձնարարութեամբ ես իրեն օգնական դարձայ: Հետագային, երբ

Բագուի դրութիւնը դարձաւ յուսահատական, նկատի ունենալով իր ընտանեկան պարագաներով ծանրաբեռնուած բլրայր, խորհուրդ տրուեցաւ իրեն անցնել էնդէլի ու այնտեղ սպասել դէպքերու զարգացման...

Էնդէլի Ազգ. իշխանութիւնները, եկեղեցւոյ շրջափակին մէջ սենեակ մը տրամադրած էին Հրաչեային, ուր տեղաւորուած էին ինքը, իր համակրելի տիկինը՝ Արուսեակը, աները, զոքանչը ու քեներն (վերջին երեքը գրեթէ անգամայոյժ): Ահա այդ սենեակին մէջ էր, որ ան կ'ուղչեր մեզ եւս տեղաւորել:

Ի հարկէ, մերժեցինք: Հրաչեան քիչ մը քրթմնջեց, բայց վերջ ի վերջոյ համոզուեցաւ, որ իսկապէս անկարելի էր մէկ սենեակի մէջ խճողուած իրենց ընտանիքին վրայ հիւրընկալել նաեւ մեզ: Խնդրեց, որ զսնէ ճաշը միասին ունենանք: Երբ տիկինն ալ միանալով՝ պնդեց, չկրցանք սրտերնին կոտրել, պայմանաւ որ կենսամթերքի հայթայթումը մենք պիտի կատարէինք, ու իրենք միայն պատրաստելու յոգնութիւնը պիտի կրէին:

\*\*\*

Մքանչելի տղաւորութիւն թողուց իմ վրաս էնդէլին: Բուսական նմանութիւն ունէր Պոլսոյ: Ոսկեղջիւրին նմանող ջրային անցք մը կը բաժնէր զայն երկու մասի: Իրքըր գեղեցիկ, ծառերով, ծաղիկներով, զմրուխտ կանաչութիւնով քաղաք մըն էր:

Կենսամթերքի ա՛յնպիսի առատութիւն կտր, որ սոյաճար բազուցիներուս նախ տեսողութիւնը՝ ապա ստամոքսը դիւրութեամբ կ'ըստացուց: Իսկ բնակչութիւնը: Բարի, աշխատասէր ու խոցողասէր պարսիկներ, որոնք ա՛յնքան զգուշութեամբ փողոցը կ'անցնէին ըսվէղ, որ քեզ չանհանգստացընէին:

Ռոստոմը տեղաւորուեր էր հանդիպակաց կողմը, եւ զայն տեսնելու առիթ միշտ չունէինք: Սեպուհը գրեթէ ամէն օր կ'այցելէր ու մեզի նորութիւններ կը բերէր: Զօր - Բագրատունին սերտ յարաբերութեան մէջ էր անգլիական Շտաբին հետ ու անոնցմէ տեղեկութիւններ կը ստանար:

Մեր չար բախտէն էնդէլի անձրեւային եղանակը սկսաւ: Ուստի դիւրութեամբ կարելի էր երեւակայել, թէ ի՞նչ վիճակի մատնուեցան բացօթեայ ապրող մեր գաղթականները:

Ռոստոմի եւ զօր - Բագրատունիի միջոցաւ բացօթեայ մնացողները պատսպարելու համար անդլիայիներուն կատարուած զիմումները մասամբ միայն բաւարարուեցան. քաղաքը շատ փոքր էր ու տեղ չունէր բոլորին համար:

Օր մը շատ ջղայնացած՝ Ռոստոմը անձամբ զիմում կը կատարէ անգլիացիներուն: Վերջինները կ'ընդունին, որ շատ իրաւացի էր իր վրդովումը: Բայց հնարաւոր չէ այլևս նոր պատսպարան գտնելը: Միայն մէկ միջոց կայ, կ'ըսեն, — բանակի չորքոտանիներուն համար պատրաստուած խոտի պաշարը, որ զիզուած է տախտակէ տաղաւարներու մէջ, կը տրամադրենք ձեզի: Խոտը դուրս հրեցէք, մաքրեցէք ու բնակելի վիճակի վերածեցէք զանոնք

ու տրամադրեցէք բացօթեայ սպորտներուն :

Ռոստոմին և Սեպուհին համար անդլիտցիներուն այս կարգադրութիւնը նախախնամական բարիք էր : Անմիջապէս կոչ կ'ընեն Ժողովուրդին գործի անցնելու : Գժբախտաբար, իրենց կոչը կը մնայ ձայն բարբառայ յանապատի : Հազարաւորներու հասնող բազմութեան մէջէն չեն գտնուիր քանի մը ազնիւ մարդիկ, որոնք ընդառաջին կոչին : Յուսահատ՝ Երկուքով կ'երթան տաղաւարներուն մօտ, կը խորհրդակցին, թէ ի՞նչ ձևով կ'ընային խոտը դուրս կրել, եւ կու գան հետեւեալ եզրակացութեան .—

Մոտը դուրս տանիլ խուրձ առ խուրձ, պարաններով կապելէ յետոյ : Բայց պարան չկար : Հետեւաբար, մէջքերնէն կը քանդեն իրենց գօտիները եւ կը միացնեն իրարու : Ռոստոմը խուրձերը կը կազմէ, իսկ Սեպուհն ալ կը սկսի դուրս կրել . . .

Ո՞րքան կը տեւէ այս գործողութիւնը, չեմ գիտեր : Բարերախտաբար, այժմ, բազմութեան մէջ կը գտնուին մարդիկ, որ տեսնելով այս երկու մեծ անձերուն սիդիֆեան աշխատանքը, իսկոյն կը փութան յուր տալու դաշնակցական հայրուկներուն :

Շատ չանցած, տաղաւարները կը պաշարուին դաշնակցական մարտիկներով : Անոնց խմբադասներէն Արշակ Պոլոյեանը ներս կը մտնէ եւ զրեթէ բռնութեամբ դուրս կը հանէ Ռոստոմն ու Սեպուհը :

— Արշա՛կ, ձեզ պատասխանատու կը բռնեմ, եթէ այս տաղաւարները չմաքրուին, — կ'ըսէ Ռոստոմը :

— Վաղն առաւօտուն տաղաւարները ձեզի կը յանձնեմ, աւլուած, մաքրուած, բնակելի վիճակի մէջ . . .

\*\*\*

Այդ օրը շատ ուշ վերագարձաւ Սեպուհը Ռոստոմի քովէն, արիւնքրտինքի մէջ, փոշեթաթաւ ու տղմալից կոշիկներով :

Երբ ներս մտաւ, բոլորս ալ սարսափեցանք իր վիճակը տեսնելով : Այդ օրը անձրեւ չկար, հետեւաբար, չէինք կրնար ըմբռնել, թէ ինչո՞ւ անոր զգեստները խիստ կտրած էին . . .

Բժ. Պօղոսեանը իսկոյն նկատեց, որ խոնաւութիւնը քրտինքի արդիւնք էր, եւ, չկրնալով դասել հետաքրքրութիւնը, հարց տուաւ .

— Աղա՛ (այս փաղաքշական բառը կը գործածէր մեր սիրելի բժիշկը թէ՛ Մուրատին եւ թէ՛ Սեպուհին համար), ի՞նչ պատահեցաւ : Այս ի՞նչ վիճակ է . . .

— Ռոստոմին հետ քիչ մը աշխատեցանք, դաղթականները տեղաւորելու համար :

Այսքան միայն : Մեզմէ ոեւէ մէկը չհամարձակեցաւ ուրիշ հարցում ընելու :

Հետաքրքրութիւննիս լիովին զոհացուցին ականատեսները, որոնք դիտած էին անոնց աշխատանքը :

Առաւօտուն, երբ Ռոստոմին հետ այցելեցինք տաղաւարները, դուռը

գտանք Արշակ Պոլոյեանը, որ հպարտօրէն ու ինքնագոհ դիմաւորեց մեզ ու ըսաւ .

— Եթէ դեռ պակասութիւն մը նկատէք, խնդրեմ ըռէ՛ք . տնմիջապէս պատրաստ եմ լրացնելու :

— Այլրիս, Արշակ . ապրին քեզ օգնողները, բոլորն էլ : Սքանչելի է :

Ահա այսպէս էր մեր մեծ ընկեր Ռոստոմը, եւ այսպէս էին իր ղեկավարած կուսակցութեան մէջ դաստիարակուած երէց ու կրտսեր բոլոր հետեւորդները :

\*\*

Վերստին մեծ փակագիծ մը պիտի բանամ այստեղ՝ խօսելու համար չափազանց հետաքրքրական անձնաւորութեան մը մասին, որովհետեւ չեմ գիտեր, թէ կեանքիս այս վերջալուսին կրնա՞մ առիթ ունենալ զրի առնելու յուշերս, որոնք կը վերաբերին անոր հետ անցուցած օրերուս :

Այս անձը, հայ մշակոյթին փառք ու պարծանքներէն Հրաչեայ Աճառեանն է : Ա՛յնքան անկեղծ յարգանքով կը վերլուծեմ դայն, որ էնդէլիի մէջ մասնաւորապէս շատ մօտէն ու մտերմութեան մէջ անցուցած օրերէս կ'ուզեմ հակիրճ տպագրութիւններ գրել : Այլապէս անոր մասին ա՛յնքան երկար կարելի է գրել, որ չեմ կարծեր, թէ տհաճութեամբ պիտի կարգացուէր :

Հրաչեայ Աճառեանը շատ հետաքրքրական եւ անմեղ տարօրինակութիւններ ունեցող անձ մըն էր : Սահմանափակելով միայն էնդէլիի մէջ միասին անցուցած օրերուն, պիտի բռնեմ, որ երբեմն ծայրայեղութեան կը տանէր իր բծախնդրութիւնը :

Որոշած էր, որ կենսամթերքի գնումներուն միասին երթայինք, որպէսզի օգնէի իրեն : Որովհետեւ կասկածներ կային տարափոխիկ հիւանդութիւններու մասին, հացը կը գնէր ուղղակի փուռէն եւ պատասաբաղով կը քաշէր փոսպանին թիակին վրայէն մաքուր սաւանի մը վրայ, դոր ես պիտի կարկոտէի իրեն : Անմիջապէս կը ծածկէր դայն, որպէսզի ճանճ կամ փոշի չնստէր վրան :

Միւր կ'առնէր միա՛յն այն մսագործէն, որ նոր մորթած էր կենդանին : Կշիռքը մաքրել կու տար եւ դարձեալ պատասաբաղի օգնութեամբ կը ղետեղէր տունէն տարուած մաքուր կաթսայի մը մէջ :

Բանջարեղէններն ու պտուղները տուն տանելէ յետոյ՝ եռացած ջրով անգամ մը կը ցօղուէր ու յետոյ կը գործածէր :

Աւելը բոլորովին հեռացուցած էր տունէն : Մաքրութիւնը պիտի կատարուէր թաց լաթով մը . . .

Սեղանի շուրջը հաճոյք էր անոր հետ նստիլը ու ճաշէն յետոյ զրուցելը :

Ողնուծուծով հակարոյշելիկ էր . կ'ատէր ոչ միայն բառը, այլ դայն արտասանողներն ալ : Հետեւաբար, կրնաք երեւակայել, թէ ի՞նչ կ'ըլլար, երբ վէճի բռնուէր մարքսիստ-լենինիստի մը հետ :

Օր մը, ուրկէ ուր, սեղանակից ունեցանք հնչակեան մը, որ վէճի բռնուեցաւ Հրաչեային հետ : Հրաչեան, հողիով որքան բարի, լեզուով ալ նոյնքան կռուազան մարդ էր, ինքզինքը դասել չէր գիտեր եւ՝ տուր թէ կու

տաս՝ վերջն վար լուսաց հնչակեանք: Վերջինս դաշնակցական որակեց զինք.  
— Բայց քեզի ո՞վ ըստս, թէ ես դաշնակցական չեմ: Ոչ միայն դաշնակցական եմ, այլ քիչ մըն ալ աւելի եմ, վեթերան դաշնակցական եմ...

— Այլ էր պակաս, — պատասխանեց հնչակեանը, — ցոյց տուր անդամատետրդ:

Եւ ո՞վ զարմանք, Հրաչեան զրոյանէն դուրս հանեց անդամատետրը ըսելով.

— Բոլոր ազգասէր, հայրենասէր ու պարկեշտ մարդիկ դաշնակցական են: Եթէ մինչեւ այսօր չէիր գիտեր, հիմա գիտցիր:

Հնչակեանը լռեց:

Բայց թող ներեն ինծի բոլոր դաշնակցական բնկերներս, եթէ բռեմ, որ Ստեփան Ծաղիկեանն ու ես բնա՛ւ չուրախացանք, երբ Հրաչեայի դաշնակցական ըլլալը իմացանք, թէ եւ պէտք է, որ հպարտ ըլլայինք իմաստուն, այդպիսի մեծ արժանիքներով մարդու մը դաշնակցական ըլլալուն համար: Չուրախացանք, որովհետեւ չէինք փափաքեր, որ այսպիսի գիտուն մը մը խըրճուէր կուսակցական թոհուրոհին մէջ: Կը ցանկայինք զայն նուիրուած տեսնել միայն իր մասնագիտութեան:

Մեր ամէնօրեայ սեղանին վրայ կը գտնուէր տիկին Արուսեակին շնորհալի ձեռքերով գրուած «Արմատակաւ Բառարան»ի ձեռագիրը: Կը փափաքէինք զայն ամբողջացած տեսնել: Դեռ ա՛յնքան սքանչելի գործ կրնար տալ հանճարեղ լեզուարան Հրաչեան:

Բարեբախտաբար, Հրաչեան միայն սրտով ու հոգով մնաց դաշնակցական. իր թանկագին կեանքը ամբողջութեամբ նուիրեց հայ մշակութիւն ու, թէ եւ բոլշևիկները ձերբակալեցին, բանտարկեցին ու անասական ծանր դրութեան մատնեցին զայն, բայց ան յամառօրէն շարունակեց այն հոյակապ գործը, որ նախախնամութիւնը տնօրինած էր կարծես միայն իրեն: Իր լեռնակուտակ գործերը, զորս թողուց յետ մահու, կենդանի կոթողներ են...

\*\*\*

Ստեփան Ծաղիկեանն ու ես անտուն, անտէր մնացած մարդիկ էինք, անմիջական ընտանեկան հոգեր չունէինք: Բայց մեր հրամանատարը՝ Սեպուհը շատ մտահոգ վիճակ ունէր: Իմացեր էինք, որ կրնն ու զաւակները, Պաթումը թուրքերուն կողմէ գրաւուելէն առաջ, ապահով կերպով հեռացեր էին այնտեղէն: Բայց ո՞ւր էին զացեր: Անոնց հետքերը գտնելու համար կատարուած բոլոր պրպտումները անցան դուր: Յուսահատ՝ ան որոշեց անցնել Հիւսիսային Կովկաս՝ իրազեկներու հանդիպելու ենթադրութեամբ: Համամիտ էինք իրեն հետ. բայց Սեպուհը չէր ուզեր, որ ընկերանայինք իրեն:

— Անթիւ ու անհամար, երեւակայելի ու աներեւակայելի վտանգներ կան: Քաղաքացիական կռիւներ են ամէն կողմ, ո՛չ թշնամին յայտնի է, ո՛չ ալ բարեկամը: Չեմ ուզեր ձեր զժրախտութեան պատճառ դառնալ: Դուք մնացէք առայժմ այստեղ, մինչեւ որ հնարաւորութիւն ունենաք Հայաստան անցնելու, ուր եւ կը միանանք վերստին: Իմ պարագաս բոլորովին տարբեր

է: Կին ունիմ եւ զաւակներ. անոնց սիրոյն, ամէն վտանգ պիտի դիմագրաւեմ:

Ծաղիկեանին հետ միաբերան ըսինք.

— Ո՛ւր դուն, այնտեղ ալ մենք: Քեզի հետ մինչեւ դժոխք ալ որոշած ենք երթալ: Որքան շուտ, այնքան լաւ:

Ռոստոմին ու Գիւլիանդանեանին հանդիպեցանք: Սեպուհը բացատրեց իր ծրագրերը: Երկուքն ալ գտան շատ անխոհեմ ու վտանգաւոր եւ յանձնարարեցին քիչ մը եւս սպասել:

Անկարելի եղաւ համոզել Սեպուհը: Կնոջն ու զաւակներուն սէրն ու կարօտը ա՛յնքան զգայուն դարձուցած էին զինք, որ թոչունի թեւերով կ'ուզէր թռչիլ ու հասնիլ անոնց:

Ռոստոմը նկատեց Սեպուհին հոգեկան ծանր ապրումները եւ խորհուրդ տուաւ անցնիլ Ռաշտ, ուր ունէինք շատ ազնիւ բնկեր մը (ափսոս, անունը մոռցեր եմ, կարծեմ յուսանկարիչ էր), յանձնարարական մը գրեց անոր, որ պարսկական անցողիկները հայթայթէ բոլորիս այ:

Անմիջապէս մեկնեցանք Ռաշտ, ուր գիմեցինք մեր բնկերով: Պանութը փակեց, յաճախողները ճամբեց ու մեկ տարաւ սիմիլի պաշտօնատունը: Քանի մը վայրկեանէն բոլորս ալ այնտեղէն դուրս եկանք պարսկահպատակներ:

Մեր ընկերներէն բժիշկ Արշակ Պոյոսեանը՝ Ռաշտէն բաժնուեցաւ մեզմէ: Էնդէլի - Համասան - Պաղտատ ու զուլթեամբ ան մեկնեցաւ Միջագետք, ուր կը յուսար գտնել իր կրնն ու զաւակը, արտորայայրերուն մէջ...

Գիշեր մը միայն մնացինք Ռաշտի եկեղեցիին բակին մէջ, ուր սենեակ մը տրամադրեցին մեզի: Եկեղեցիին իր յարակից շէնքերով նոր շինուած էր: Ամէն կողմ մաքուր էր, նոյնիսկ արտաքնոցները...

\*\*\*

Բժ. Արշակ Պոյոսեանէն մեր բաժնումը շատ ազդեց մեր վրան: Հրեշտակային բարութեամբ, քաջ, ազնիւ ու անձնուէր բնկեր մըն էր, որուն հետ կապուած էինք ընկերական աւելի եղբայրական կապերով: Բաւական ժամանակ առաւ, մինչեւ որ հաշտուեցանք անոր բացակայութեան հետ:

Էնդէլի վերադառնալով՝ քանի մը օրուան մէջ պատրաստուեցանք մեկնելու: Արտասուալից աչքերով մեզի բարի ճանապարհ մաղթեցին Հ. Աճառեանը եւ իր ընտանիքին անդամները: Շողեհուր պատրաստ էր, տոմսակները՝ ապահովուած:

Վերջին անգամ գնացինք մնաք բարով բսելու ընկերներ Ռոստոմին, Գիւլիանդանեանին եւ զոր. Բագրատունիին: Վերջինը յանձնարարականներ տուաւ՝ Պետրովսկի գտնուող Գնդ. Բիշերախովին ուղղուած, Հիւսիսային Կովկասէն մեր անցքը դիւրացնելու համար:

Սեպուհին հետ զրկախառնուեցան Ռոստոմն ու Գիւլիանդանեանը, Մա-

զիկեանն ու ես ծոկեցանք համբուրելու երկուքին ալ ձեռքերը: Ընդդիմացան:

— Բախար մեզ զրկած է հայրական ձեռք համբուրելու երջանկութեանէն: Դուք ալ կը մերժէք մեզ այդ բանը...

— Եթէ այդպէս է, մօտեցէ՛ք, որ մենք ալ համբուրենք ձեր ճակատները...

Սեպուհը արդէն բարձրացած էր կամրջակը: Ծաղիկեանը եւ զիս քաշեցին մէկ կողմ ու հազիւ լսելի ձայնով մը փսփսացին.

— Սեպուհին խնայեցէք. երբ հարկ լինի, դուք նետուեցէք առաջ:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, ԼՂ. տարի (1960), քիւ 4:

### Յ. Տ Է Ր — Դ Ա Ի Ք Ե Ա Ն

#### ՌՈՍՏՈՄԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻՑ

Ռոստոմը 1918 թ. Դեկտեմբերի վերջերին Բազուից վերադարձաւ Թիֆլիս եւ մտադիր էր շուտով մեկնել Հայաստան:

Բազուի դէպքերից յետոյ երեւում էր շատ յոգնած: Հայ-վրացական պատերազմը, հայերի զանգուածային հալածանքները վրաց կառավարութեան կողմից չափազանց ազդել էին նրա վրայ: Անգլիական ներկայացուցիչների միջամտութիւններն ու ակներեւ կողմնակալութիւնը յօգուտ վրացիների, Հայաստանի տնտեսական ծանր տագնապը, սոսկալի մահացութիւնները սովից ու տիֆից՝ մռայլ, յուսահատական տրամադրութիւն էին ըստեղծում: Ռոստոմը ապրում էր ծանր հոգեկան վիճակ: Սակայն եւ այնպէս, Հայաստանը — հայ ազգի զարգացման ազատ օջախը իրողութիւն էր, եւ նա ամբողջ կութեամբ շտապում էր օր առաջ հասնել Երևան, անձամբ տեսնել ու զգալ այդ Հայաստանը, լծուել շինարար աշխատանքի...

Բայց Թիֆլիսում էլ Ռոստոմի ներկայութիւնը անհրաժեշտ էր. Երևանից եկել էր եւ պատրաստում էր Եւրոպա մեկնել Ահարոնեանի պատուիրակութիւնը՝ Հաշտութեան Վեհաժողովին հայկական պահանջները ներկայացնելու համար. կարիք կար խորհրդակցելու Ռոստոմի հետ: Միւս կողմից, հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել փոխելու համար վրացիներին հայահալած քաղաքականութիւնը. Ռոստոմը դեռ ուսանողական օրերից՝ ժընեւից մօտիկ բարեկամ էր վրաց կառավարութեան նախագահ Ժորդանիայի. պէտք էր տեսնել նրան, բացատրել վրաց իշխանութեան սխալ ընթացքը, պարզել մի շարք նուրբ խնդիրներ(\*):...

Ռոստոմը անդադար չարժման մէջ էր, թէպէտ արդէն հիւանդ էր եւ ծանր հիւանդ. դեռ Բազուից նա վարակուած էր բժաւոր տիֆով եւ կարծում էր, թէ մալարիա ունի: Գանդատում էր, թէ սաստիկ մրսում է, եւ ժողովներին միշտ տաք թէյ էր խնդրում՝ մեծ քանակութեամբ:

Առաջին չորս-հինգ օրերը չյաջողուեց նրան անկողին պառկեցնել. քի-

(\*) Ժորդանիան առաջին անգամ Ռոստոմին ընդունում է նախկին ֆոխարֆայի պալատի Սպիտակ դահլիճում:

Խօսակցութեան ժամանակ Ժորդանիան մտերմաբար ասում է Ռոստոմին.  
— Է, Ստեփան, մեր ժընեւ եղած ժամանակ կարո՞ղ էիմք երեւակայել, որ ես ու դու այս պալատում պիտի տեսնուե՞նք:

— Որ այս պալատում պիտի տեսնուէիմք, կարող էի երեւակայել, բայց որ ես ու դու իրար հետ բանակցութիւններ պիտի վարէիմք իբրեւ պատերազմոյ կողմերի ներկայացուցիչներ — այդ երբեք մտքովս չէր կարող անցնել, — իրեմ յատուկ հեղձանքով պատասխանում է Ռոստոմը:

Ժորդանիան կաս-կարմիր է կտրում եւ շտապում է փոխել խօսակցութեան ճիւղը:

նին էր ընդունում ու շարունակում էր ժողովներին մասնակցել եւ այցելութիւններ անել: (Յետոյ իմացանք, որ նոյնիսկ իր միակ տաք բրդէ շապիկն էլ հանել էր եւ պարտում էր թեթեւ շապիկով): Նա շատ վստահ էր իր ուժող կազմուածքի եւ տոկուն առողջութեան վրայ: Միայն ճիշդ օրը, երբ արդէն 40 աստիճան տաքութիւն ունէր եւ չէր կարողանում ոտքի վրայ մնալ, պառկեց, եւ պարզուեց, որ թոքերի բորբոքում եւ բժաւոր տիֆ ունի միաժամանակ:

Ութ-տասը օր միայն պայքարեց նրա ուժեղ, բայց խիստ յողնած կազմուածքը: Եւ Յունուար 18ի գիշերը, ժամը 4ին Ռոստոմը վախճանուեց: Վերջին 2-3 օրը նա այլևս կորցրել էր գիտակցութիւնը:

Պատկերաց երկու օր յետոյ, նա յիշեց Եկմալեանի «Հայր Մեր»ը եւ շարունակ երգում էր՝ պնդելով, որ «Հայր Մեր»ի ամենագեղեցիկ ներդաշնակութիւնն է: Խնդրեց, որ գտնենք այդ հազուագիւտ հրատարակութիւնը եւ իր կողմից նուէր ուղարկենք Ընկերվարական Միջազգային Բիւրոյի քարտուղար Հիւսիմանսին, որը շատ զնահատում էր հայկական եկեղեցական երգերը:

Ռոստոմի վերջին կտակն էր այս:

«ԻՐՕՇԱԿ», 1929 թիւ 1-2:

## ՌՈՍՏՈՄԻ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Թաղման Յանձնաժողովը Թիֆլիսում հրատարակել էր.

I. Սգահանդէսի ընթացքը հանդուցեալի ընկարանից՝ Թուժանովը-կայա № 88, Ռէուտովսկայա Միխայիլովսկի պր. Նիկոլաեւսկի կամուրջով եւ Մատաթովսկայա փողոցներով դէպի Վանք: Վանքից՝ Մատաթովսկայա, Բարևատինսկայա, Գոլովինսկի պրոս., էրլիանսկայա պլ., Պուշկինսկայա, Մուխրանսկի կամուրջով, Յիցիանովսկա պող. Կախեախինսկայա պլ. Լազարեւսկայա փողոցներով դէպի Խոջիվանքի Գերեզմանատունը:

Թաղումը Դաշնակցութեան պանթէոնում:

II. ա) Քաղաքացիներին խնդրում ենք շղթայից դուրս չգալ, բ) չըխանդարել թաղման յանձնախմբի սահմանած կարգերը, գ) սգահանդէսի կարգը պահպանելու եւ դաշնակցական բանուորները:

III. ձառեր արտասանուելու եւ հետեւեալ կարգով.

Հանդուցեալի տան մօտ — ընկ. Իշխանը (Արեւելեան Բիւրոյի կողմից), Վանքի մօտ — ընկ. Մ. Յարութիւնեան (Հայաստանի Հանրապետութեան կողմից):

Նոյն տեղը.— Ընկ. Հ. Մանուկեան (Տաճկահայ Դաշնակցութեան կողմից), Շահխաթունեան ընթերցարանի մօտ Դ. Դաւիթխանեան (Վրաստանի Կոմիտէի կողմից):

Երեւանեան հրատարակ.— Ընկ. Ա. Արեղեան (Դուժայի Փրակցիայի կողմից), եւ ընկ. Կորիւն՝ ուսերէն:

Նոյն տեղը.— Ա. Խոնդկարեան (Սոցիալ-Յեղափոխական Երջանային Կոմիտէի եւ Հայաստանի Խորհրդի սոցիալ-Եղափոխական Փրակցիայի կողմից):

Կախետինսկայա հրատարակ.— Ընկ. Ա. Նալչաջեան (Բանուորական կազմակերպութեան կողմից):

Գերեզմանատունը, 1) Կարսի Դաշնակցութեան ընկերների կողմից Հ. Նոհրատեան, 2) Ս. Աւագեան (Թիֆլիսի կոմիտէի կողմից), 3) Յ. Տէր Գրիգորեան (հայ գիւնուորների կողմից), 4) Այվազեան (Դաշնակցական Ուսանողական Միութեան կողմից), 5) Յ. Սարգսեան (Զաքաթալայի Դաշնակցութեան ընկերների կողմից), 6) բանուոր Խաչատուր (Թիֆլիսի Դաշնակցութեան Ներկայացուցչական Ժողովի կողմից), 7) Վ. Խորէնի (Վրաստանի Կենտրոնական Կոմիտէի օրգան «Յառաջ»ի խմբագրութեան կողմից):

4. Պատկներ չեն լինելու:

Յուղարկաւորութեան ժամանակ խօսողներին աւելացել են Վ. Ահարոնեան (ուսերէն), բանուոր Արամ եւայլն:

Յուղարկաւորութեան յատուկ ներկայացուցիչներ ունէին չրջանները, դաշնակցական մարմինները, քաղաքական կուսակցութիւնները, հասարակա-

կան կազմակերպութիւնները, պարսից հիւպատոսը եւ այլն :

Դազադին հետեւում էր բազմահազար ժողովուրդ :

Սգերթը առաջնորդում էր կարմիր դրօշակներով եւ զոյգ նուագախմբերով :

Դաշնակցութեան պանթէոնում՝ Սիմէոնի, Շահխաթունու, Դուժանի, Քեռու եւ միւս անամահների մօտ երբ Ռոստոմի ղազաղը գերեզման իջեցուեց, երեկոյեան հողմից ծածանուող կարմիր դրօշակները խոնարհուեցին գերեզմանին, իսկ բազմահազար սպաւորները մի ակնթարթ ծունկի եկան, հնչեց երաժշտութեան մեղեդին : Վայրկեանի խորհրդաւորութիւնից լսուեցին հեկեկոցներ, մինչեւ մեղեդին ընդհատուեց : Վերջում նուագախումբը թնդացրեց «Մեր Հայրենիք»ը :

Յուզարկաւորութիւնը, սկսուած առաւօտեան, վերջացաւ երեկոյեան ժամը 5ից անց :

«ԱՌԱՒՕՏ» շաբաթաթիթ (Թեհրան), — 1919 Մարտ, Թիւ 3:

## Ռ Ո Ս Տ Ո Մ

Դաշնակցութիւնը կորսնցուց իր առաջին երեք գմբէթակիր սիւներէն վերջինը եւ յեղափոխական ու վերածնող Հայաստանը՝ իր մեծագոյն զաւակներէն մին : Ռոստոմը, որուն անուան միակ ոգեկոչումը եռանդ էր եւ սթափում, Ռոստոմը, որ ծանր հիւանդութեամբ, քառասուն աստիճան տաքութեամբ, ոտքի վրայ կ'անցընէր՝ մէկ ժողովէն միւսը պարտնելով թափը իր կազմակերպչական ոգիին, Ռոստոմը մեռած համահարակէ մը :

Այն կուսակցութենէն, որ տարաւ հայկական հարցը այսօրուան փառաւոր հանգոյցին մէջ ձգող պայքարին մեծագոյն եւ գլխաւոր մասը, միայն Ռոստոմը կը մնար, որ Դաշնակցութեան այսօրուան կեանքին սեմէն պիտի դիտէր հայկական եռագոյն դրօշակը զգուշացուող առաջին արշալոյսը, որուն երկունքին մէջ զեռ իր կամքն ու եռանդը չէին յոգներ...

Ռոստոմը այն լուսաւոր դէմքերէն էր, որուն առջեւ իր կուսակցութեան հակառակորդներն իսկ իրենց բաճկոնակները կը հաւաքէին եւ ոչ ոք պիտի կրնայ փոխարինել զինքը այն մեծ աշխատանքին մէջ, որ պիտի տարուի վերածնուող Հայաստանի մէջ :

Ամենայրօքահատական եւ լքման բոպէներու մէջ իսկ, ուր մահերու, ժամանակաւոր պարտութիւններու, ջարդերու լուրեր կը հասնէին, Ռոստոմը կը դառնար խրախոյս ու ապաւին, որուն գործունէութեան հետ կեանք կ'աննէին դադարած ու յուսալքուած ուժերու աշխատանքները :

Անոր անուէր ո'չ մէկ տեղ կը լսուէր, ոչ մէկ աթոռ ընդունած է ինք եւ ոչ մէկ տիտղոս իր անուան քով. — Ռոստոմ... Բայց ինքն իսկ է ինքնաշարժ մեքենան բոլոր շարժումներուն, բոլոր գործողութիւններուն :

Իր բազմակողմանի պատրաստութեամբ ու պաշարովը եղած է դաստիարակիչը բազմանդամ սերունդի մը, որ զինքը յարգելէ առաջ կը սիրէր, որ իրմէ բան սորվելէ առաջ իրեն՝ անհատին կեանքը նմանցնել կը ձգտէր :

Կովկասեան վերջին դէպքերու շրջանին մէջ Ռոստոմն այն էր պատուհասուած հայրենակիցներուն հանդէպ, ինչ որ Խրիմեան Հայրիկն էր, — այսպէս ըսելու համար, — իր հօտին ցաւերուն հանդէպ :

Իր մեծ հոգատարութեան մէջ կը մտնէին անհատական ցաւերու մտահոգութենէն մինչեւ ընդհանրական շահերու պաշտպանութիւնը, որոնք կը կատարէր ճշմարիտ հօր մը հարազատութեամբ եւ սրտակցութեամբ :

Իր միջամտութիւնը կը բաւէր, որ կնճռոտ հարց մը պարզուէր եւ երկու պառակտուած ընկերներ իրարու ձեռք տային : Ասոր համար էր, որ Ռոստոմ ոչ մնայուն աթոռ մը ունէր, — ինչ հարկ աթոռի երբ բոլորն ալ իրն էին, — ոչ տիտղոս մը եւ ոչ տեղ մը. ամէն տեղ էր անիկա. ան կը ծառայար յանկարծ վերջին շրջանի կովկասեան քառսին մէջ, իր մանկունակ ժպիտովն ու պատկառանքովը տալու համար իր խորհուրդները, կարգադրու-

թիւնները, որոշումները. ամէն տեղ էր անիկա, նաեւ ճակատը եւ մանաւանդ ճակատը. այո՛, Ռոստոմն անոնցմէ էր, որ գիտէն ճակատն ըլլալ, որ քաղի- նետային աշխատանքնէն դուրս՝ գիտէն կանգնիլ պատնէշին վայ: Եւ Ռոս- տոմը էրգրում էր, Երզնկա էր, Բարերդ էր, Ալաշկերտ էր, բանակին հետ, բանակէն յետոյ, բանակէն առաջ:

Ճշմարտիւ Ռոստոմը ոգի մըն էր, մաքուր, որքան ոգին աննիւթ է, ուժեղ՝ որքան ոգիները հզօր են, տարածուն եւ գաղտնի՝ որքան ոգիները ամէն տեղ են եւ աննշմար: Քրիստափոր Միքայէլեանին ու Սիմոն Զաւար- Էանին հետ, Ռոստոմը պիտի մնայ նոր սերունդի մտքին մէջ այն լուսաւոր պատկերը, որ յեղափոխական, զաղափարապաշտ, վճիտ եւ անձնադո՛ս տի- պարներն էին եւ որոնք իրենց մարգարէական կեանքովը բազմաթիւ տարե- շրջաններ պիտի հրամայեն նոր սերունդին՝ իրենց փառաւոր ճամբայէն ըն- թանալ:

Եւ այդ Ռոստոմը ա՛լ չկայ...

Հայկական պետութեան երկունքի միջոցին, այս սոսկալի աշնանային փոթորիկին մէջ այնքա՛ն, այնքա՛ն տերեւներ թափեցան, մէկը միւսին ետե- լէն, անխնայօրէն, որոնցմէ իւրաքանչիւրին անկումը խաղաղ ժամանակնե- րու մէջ ազգային մեծ սուգ պիտի դառնար, բայց Ռոստոմինը այնքան կսկծալի է, որ ծառին խորտակումը կը թուի ըլլալ...

Այս մէկ քանի տողերը գրելն իսկ, հեկեկանքները կուրծքին մէջ, Ռոստոմին մէկ շատ սիրած աշակերտին համար, որ երկրորդ անգամ կ'որ- բանայ իր հօրմէն անոր մահովը՝ տաժանելի շարժարանք մը կը դառնայ:

Բայց թոյլ տուր, պաշտելի Ռոստոմ, ըսելու իմ բերնովս, հազարաւոր աշակերտներուց կողմէ քեզի եւ քու մեծ ընկերներուդ, — հանգի՛ստ ձեր ոս- կորներուն, — քանի որ ձեր բոլոր աշխատանքը, ճիգերը, գոհողութիւնները միացած՝ հոյակապ եւ մեծ մեսքով մը այսպէս կամ այնպէս ձեր սիրած հայրենիքին պետութիւնը կ'երկնեն ահա, ուր ձեր աշակերտները պիտի շա- րունակեն Ձեր ստաքեայի վսեմ ստուերներուն ընկերացած՝ այն գործը, որ Դուք իր մեծ հանգրուանին փառաշուքօրէն հասցուցիք:

Խմբագրական «ՎԵՐԱՄՆՈՒՆԻՊ»ի, — Գ. տարի, 15 Փետր. 1919 թիւ 4:

## Շ Ա Ն Ա Ն

### Ռ Ռ Ս Տ Ո Մ

Մուրատէն յետոյ Ռոստոմը...

Եւ ո՞վ կրնայ ըմբռնել ահաւորութիւնը այն պարագութեան, որ գա- ղափարականութեան այս երկու բիւրեղ մարմնացումներու պակասովը կը բացուի հայութեան հոգիին մէջ:

Անուններ կան, որոնք համանիչ են դարձած իրենց ազգին հետ: Եւ Ռոստոմ մէկն էր այդ անուններէն: Ան խտացումն էր հայ ցեղի բոլոր ազ- նուական յատկանիչներուն:

Քիչեր միայն կրցած են տեսնել ցեղային այն անպարտելի ուժը, որ հայ ցեղը ապրեցուցած է դարերու բռնակալութիւններու ընթացքին եւ դայն քալեցուցեր է բռնակալներու գերեզմաններու վրայէն: Այն անօրինակ եւ ա- նանուն կենսունակութիւնը, որ մեռելներուն յարութիւն է տուեր, այն անի- մանալի յանդգնութիւնը, որ այս ցեղին ճակատը բարձր բռնել տուեր է նոյ- նիսկ մահի սպառնալիքին տակ. այն սրտառու զոհարարութեան ոգին, որով այս ցեղն է արտայայտուել այնպիսի պահերու մէջ անգամ, երբ նման պա- հերու մէջ, աշխարհի ամենէն տակուն ցեղն անգամ դէպի խելագարութիւն պիտի հակէր — ահա այս յատկանիչներու մաքուր բիւրեղացումն էր Ռոս- տոմ, ժառանգած տառապանքային անմահացած ու մարտիրոսութիւններովն հերոսացած իր ցեղէն:

Ահա այդ ՄԱՐԴԵՆ է, ՄԱՐԴԸ, ՀԱՅԸ ու ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆԸ, որ այլեւս չկայ մեզի հետ:

Ու անկարելի պոթկումով մըն է, որ իր Մահի երեսին կը հարցնեմ փլուզուող հոգիով մը.

— Եւ ո՞վ պիտի լեցնէ իր տեղը...

Մահեր կան, որոնց առջեւ մարդ հազիւ թէ վայրկեան մը իսկ իր մահ- կանացութիւնը կը յիշէ ու կ'անցնի անոնց դադաղին առջեւ անտարբեր:

Մահեր ալ կան, որոնց առջեւ մարդ իր հիւլէացումը կը զգայ ու կը գիտակցի այն ահաւոր իրողութեան, թէ բնութեան օրէնքը չի գիտակցիր ան- գամ իր գոյութիւնը: Եթէ բնութեան անողոք ձեռքը կրնայ շանթել շանթա- մարտ գլուխը Ռոստոմի մը, ալ ի՞նչ կ'արժէ հասարակ մահկանացու մը, որ ծնելու ոճիրն է գործեր զիպուածարար ու անկամ:

Ռոստոմի մահը այս ընկճող մահերէն մէկն է. որովհետեւ Ռոստոմ- ները միշտ չեն ծնիր. անոնք ծնելու համար սերունդներ պէտք է որ երկուն- քի արիւնով քրտնին:

Ու եթէ դարձեալ իր՝ Ռոստոմի սրտապնդիչ խօսքը չըլլար, որ իր դա- գաղէն անգամ գիտէ հոգի ներշնչել գինքը ողբացող սգաւոր սիրտերուն, թէ այն ցեղը, որ իր տառապանքներէն ու յոյսերէն զիս կերտեց, կրնայ եւ շատ

ուրիշներ ալ ստեղծել, անկարելի պիտի ըլլար տեսնել Ռոստոմներու մահը եւ կանգնիլ նորէն:

Ճիշդ է, որ հայ ազգը ապացուցեր է իր ատակութիւնը գաղափարի կէս ճամբային ինկածներու տեղ նորերը կանգնեցնելու, բայց այս փաստն անգամ անկարող է տակաւին միխթարելու այն սգաւոր հոգիները, որոնք գիտէին, թէ ի՛նչ էր Ռոստոմը եւ ի՛նչ կ'արժէր անոր ներկայութիւնը մանաւանդ այս օրերուն:

Ամենէն աւելի ինք գիտէր այդ ինք, որ հայ տառապանքին պէս սահման չէր ճանչնար բնաւ. ինք, որ հայ զոհարարութեան չափ անսպառ էր ու անհուն. ինք, որ հայ կենսունակութեան մարմնացած քուրմն էր. ինք, որի մէջ ամէն դաւաճանուող յոյսի տեղ տաանեակներով յոյսեր կը ծնէին: Եւ, ո՞վ գիտէ, ինչպէս կատաղօրէն մարտնչեցաւ ան հոգէտու հրեշտակներու գունդին դէմ, դեռ քիչ մըն ալ ապրելու համար, որովհետեւ, ո՞վ աւելի լաւ գիտէր քան ինքը, թէ հայութեան այս արհաւիրքներէն յետոյ դեռ որքա՛ն շատ պէտք են անձնուէր գործիչները:

Մահը անողոք էր, սակայն, ու իր ուժերը սպառեցան: Ան փակեց իր աչքերը դեռ չտեսած պատմական Հայաստանի ազատ արեւը, որի համար երեսուն տարիներ աչքերը չփակեց ու կօշիկներուն կապերը չքակեց այս անըմբռնելի ուխտաւորը Ազատութեան Գաղափարին:

Ու ահա ինկաւ ինքն ալ՝ տիեզերական օրէնքէն դուրս մարդկային բոլոր ուժերու դէմ պայքարելու, յաղթականօրէն պայքարելու չափ զօրութիւն ունեցող այս առաքեալը, ու զնաց միանալ Քրիստափորին, Չաւարեանին, հայութեան նոր սրբարանին մէջ աւելցնելու սրբանոց մըն ալ, ուր այսօրի իր կրտսեր ընկերները պիտի այցի երթան ներշնչում առնելու, հոգի ստանալու, ամէն անգամ որ դուրս ու բռնակալութիւններ իրենց հոգին խորտակեն, եւ ուր ուխտի պիտի երթան գալիք սերունդներ, գաղափարականութեան սեմին վրայ իրենց առաջին քայլը դնելէ առաջ:

Ամենէն փառաւոր ու անմահ յուշարձանները հոգիներու մէջ միայն կրնան կանգնիլ: Եւ դուն, սիրելի՛ ընկեր, վստահ եղի՛ր, որ ո՛չ միայն քու ընկերներուդ, այլևս ամբողջ հայութեան հոգիին մէջ դուն քու յուշարձանդ ունիս կանգնած, որովհետեւ դուն հայութեան տառապանքին ու հերոսութեան մաքուր խտացումն էիր:

Իսկ վաղը, երբ Ազատ Հայաստանի արեւը ծագի, մենք քու աճիւններդ մասունքներու պէս կը հաւաքենք, կը տանինք անոր սահմաններէն ներս ու կը կանգնեցնենք քեզ մարմար յուշարձան մը, որի արժանի դարձար քու ամբողջ կեանքով:

«ՀԱՅՐԵՆԻՔ» օրաթերթ, 15 Մարտ 1919:

## ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ (Ռոստոմ)

Անխնայ հարուածները կ'իջնան իրարու ետեւէ:

Իբրեւ թէ բաւական չէին այն բաղմամբիւ եւ անփոխարինելի զոհերը, որ սուաւ հայ ժողովուրդը այս պատերազմի ընթացքին, մարտի դաշտի մէջ կամ թրքական բանտերուն եւ աքսորի երկարաձիգ ճամբաներուն վրայ, — հիւանդութիւնն ալ պիտի դար իր նախճիրը դործել:

Կորուստը, որ կ'ունենայ Հ. Յ. Դաշնակցութիւնը, յանձին Ռոստոմի, անփոխարինելի է եւ Հայաստանի վերածնութեան այս օրերուն՝ հայ ժողովուրդին հասած մեծ հարուած մը:

Ռոստոմը սահմանափակ չըջանի մը միայն ծանօթ եղած է: Շատ հայեր չեն ճանչնար զայն եւ հետեւաբար չպիտի զգան, թէ ինչ մեծ կորուստ է որ կ'ունենանք վստահաբար այս գործիչի մահով:

Զօրեան կը պատկանի մեր մէջ ա՛յն սերունդին, որոնք ԳՈՐԾԵԼ միայն գիտցած են գաղտնի կերպով եւ շատ քիչ, գրեթէ բնա՛ւ երեւցած չեն հրապարակի վրայ:

Գործին նուիրուած այս Մեծ Հայր ժամանակ չունեցաւ հրապարակազրուութեամբ զրազելու, թերթերու կամ գրքերու մէջ իր անունն ստորագրելու: Ոչ ալ բեմերէն երեւցաւ ան այնչափ յաճախ, որ կարենայինք ըսել, թէ հրապարակախօս է:

Յեղափոխական ԱԵՔԲԻՃ եւ դժուարին աշխատանքն էր միայն, որ գոհացում կու տար այդ մեծ մտքին: Անկէ դուրս, ամէն ինչ դուրին էր, կը խորհէր ան, եւ իւրաքանչիւր ընկերոջ ալ կարողութեան սահմանին մէջ կ'իյնար:

Հպարտութիւնը չէր, որ այսպիսով կը խօսէր համեստութեան տիպար այս անմահ գործիչին մէջ. ինք չէր ընտրած յեղափոխական ներքին կազմակերպիչի ընդարձակ եւ պատասխանատու գործը. կեանքը դէպի այդ ուղղութեամբ մղած էր զինքը, պահանջը այդ դերը տուած էր իրեն:

Օժտուած յեղափոխական կազմակերպիչի անմահ ձիրքով, ան եղաւ Դաշնակցութեան գրեթէ բոլոր մեծ ձեռնարկներուն ծրագրող եւ մղող ուժը՝ իր անձը պահելով միշտ ստուերի մէջ:

Ներկայացնել ջանալ այս բեղմնաւոր կեանքի գոնէ գլխաւոր գիծերը, պիտի նշանակէր ընել ամբողջ պատմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան, որուն հետ ա՛յնչափ սերտօրէն հիւսուած է իր կեանքը:

Յիշենք միայն գլխաւորները իր կեանքի վերջին դրուագներէն եւ ապագայ պատմագրին թողունք անոր ամբողջական գործի զնահատումն ու արձանագրութիւնը, եթէ այդ հսկայ աշխատանքին ընդունակ մարդ ունենանք, եթէ կարելի ըլլայ երեւան բերել անոր ամբողջ գործերը:

1905ի հայաթաթար ընդհարումներուն, ինք Կովկաս էր եւ Դաշնակցութիւնը անմահացնող այս շարժման մէջ ունեցած է ղեկավարողի արժանի դեր:

1907ի Պարսկաստանի յեղափոխական շարժումներուն ետեւը նոյնպէս կ'երևի հօր ձեռքը մեր ամէն տեղ հասնող Ռոստոմին: Ան զլխաւոր ծրագրողը եւ իրականացնողն էր այդ յիշատակելի շարժումին՝ իրը փորձ խորհրդական Նփրեմի, Քեոխի եւ բնկերներուն:

Իր անունը չլսուեցաւ, սակայն, հայ հասարակութիւնը մնաց անծանօթ յեղափոխական այս հսկային:

1908ի հուլիսուոր Օսմանեան սահմանադրութեամբ գործունէութեան նոր ասպարէզ բացուեցաւ գործի սիրահար մեր սիրելի Ռոստոմին, որ իրբեւ տեսուչ Կարինի ազգային վարժարաններու, կատարեց կրթական մեծ աշխատանք, միանգամայն պատրաստելով հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործը եւ հսկելով անոր վրայ:

1911ին, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովէն կ'ընտրուէր անդամ այն «զազանի մարմնին», որ քաղաքական այն օրուան անստուգութիւնները աչքի առաջ ունենալով, պիտի հսկէր ժողովուրդի պաշտպանութեան:

Այդ մարմնի անդամներէն երկրորդն էր Աերատացի անդերպազանցելի ուղմիկ Մուրատը, արժանի բնկերակիցը մարտիկի համարու չունեցող բայց մարտիկներ կերտող յեղափոխական մեծ վարպետ Ռոստոմին:

Պատերազմի բռնկումին, ան արդէն Կովկաս էր, լծուած կամաւորական գունդերու կազմակերպման եւ հայ ղեկավար մարմիններու խորհրդատուի իրեն պատշաճող պաշտօնին:

Երբ, հակառակ բոլորիս ակնկալութեան, պատերազմը կ'երկարէր, կամաւորական շարժումը կը կորսնցնէր իր սկզբնական թափը, Ռոստոմ կը թողուր Կովկասը եւ կ'անցնէր Մոսկուա ու Փեթրոկրատ, հայ դատի պրօպականտին համար աշխատելու սուսական այդ կեդրոններուն մէջ:

Հայ դատի յաջող լուծումն ապահովելու համար, տիրող դժնդակ պայմաններուն մէջ, պէտք էր փորձել ամէն միջոց, պէտք էր դարձնել ամէն դուռ, ա'յս էր Ռոստոմի հաւատքը:

1917ի վերջերը, ան անցաւ սքանախաւեան երկիրները, ուր մեծ զարկ տուաւ հայանպաստ շարժման եւ Սթոքհոլմ գումարուելիք սոցիալիստական համագումարին առջեւ ալ զօրաւոր կերպով պաշտպանելու համար հայկական դատը, ի գործ դրաւ մեծ աշխատանք:

Գերմանիա, երեսութապէս անընկճելի եւ իր զօրութեան գաղաթնակէտին էր այդ օրերուն. եւ Ռոստոմ չա՛տ կը վախնար, որ մի՛ դուցէ փոխադարձ դիջողութեամբ հաշտութիւն մը կայանայ եւ Գերմանիա յաջողի պահանջներէ թուրքիոյ ամբողջականութիւնը եւ, ա'յսչափ յոյսերէ եւ զոհերէ վերջ, անգամ մըն ալ գոհ ըլլանք անսիրտ դիւանագիտութեան:

«Հոսանքը մեզ քշում է եւ դեռ քշելու է. աշխատենք ժայռերի չզարնուել» կը գրէր Ռոստոմ Սթոքհոլմէն 1917 Դեկտեմբերին եւ կը պատրաստուէր վերադառնալ Կովկաս, ուր քաղաքական նոր յեղաշրջումներ անհրաժեշտ կը դարձնէին իր ներկայութիւնը:

Անցաւ Փեթրոկրատ, յաջողեցաւ իր հետ առնել զօրաւոր Բաղրատունին, որ բուռն իրական կառավարութիւնը բանտարկած էր իրբեւ Քերենսկիի կուսակցութեան պատկանող զինուորական, եւ փութաց զէպի Կովկաս:

Կուսի տաք օրերուն, մասնակցեցաւ Պաքուի կոխներուն եւ քաղաքի լոյսալէն վերջ անցաւ հիսուսային Պարսկաստան, ուր սկսաւ, Բաղրատունիի հետ եւ անդլիական օժանդակութեամբ, նոր բանակ կազմակերպել, օգնութեան փութալու համար պայքարող Կովկասին:

Անկէ վերջ, ա'լ չլսեցինք իրմէ: Վերջին տարիներու անդուլ եւ չտրքաչ աշխատանքը եւ հայ տառապանքը արդեօք ընկճեցի՞ն այդ անընկճելին, որ հիւանդացաւ եւ ա'լ ոտքի չկանդնեցաւ:

Յարգա՛նք քեզ, հայ ժողովուրդի արժանի՛ դուստկ: Դուն սպրեցար կեանքը ինչպէս որ պէտք էր. — տիրելով անոր քաջի՛ պէս:

Քու կեանքը պիտի ըլլայ առաջնորդը հայ նոր սերունդին, քու յեղափոխական սաներուդ, քու կրասեր բնկերներուդ՝ որոնք կ'սղրան քու անդարմանելի եւ վաղաժամ կորուստը եւ որբի՛ մը պէս կու լան քու թարմ չիբիդ առջեւ ծնրաղիբ:

Խմբագրական «ՀԱՅՐԵՆԻՔ» օրաթերթի, 15 Մարտ 1919

## Ռ Ո Ս Տ Ո Մ Ը

Այսօր բոլորում է ուղիղ մի տարին այն օրից, երբ մեր կուսակցութիւնը զրկուեց իր զեկափար ու ուսնախորհրդային Ռոսսոմից: Այս ծանր ու դաժան տարուայ ընթացքում աւելի քան երեք զոյացուել է նրա բացակայութիւնը մեր զեկափարութեան շարքերում, զոյացուել է նրա հեղինակաւոր խօսքի, կամքի ու բարոյականի թափուր մնացած տեղը: Ռոսսոմի հետ միասին գերեզման իջաւ նաև նրա հաստատարիմ ընկերը, սիրելի Արամը, Հայաստանի անկախութիւնը զարրնոյ զեկափարը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը երեսուն տարի անընդհատ ու շարունակ վարել է իր յեղափոխական գործը՝ մասսաներին առաջնորդելով, քաջերին առաջ քշելով և թոյլերին քաջալերելով զէպի յեղափոխութեան ու ազատութեան Գողգոթան: Եւ իր առաջին շարքում միշտ տնեցել է Քրիստափորին, Սիմէոնին ու Ռոսսոմին — գործի ու գաղափարի այդ անբաժան արիադան:

Վերջինը գերեզման իջաւ հենց այն մոմենտին, երբ հայ յեղափոխութիւնը հասաւ իր յաղթանակի որոշ փուլին՝ Հայաստանի անկախութեան իրագործմանը, եւ երբ մեր կուսակցութեան առաջ բացում էր քաղաքական գործունէութեան մի նոր ասպարէզ՝ հաստատել ու ամրապնդել հայ յեղափոխական աշխատանքութեան արիւնք-քրտինքով ձեռք բերուած ազատութիւնը, ստեղծելով ազատ ու զեմոկրատիկ կարգեր և ընչպէսզէն զստակարգին համապատասխան պետական սոցիալական կեանքի ձեւեր:

Դժուար ու անհնարին է տալ Ռոսսոմի կեանքի ու գործի ամբողջական պատկերն ու յեղափոխական լրիւ արժէքը, նոյնիսկ նրա մասնուանից մի տարի յետոյ, — այնքան նրա դաւանած գաղափարներն ու կատարած աշխատանքները մեծ են և նրա զէմքը՝ իրրեւ Մեծ Արեւելացու՝ վիթխարի: Հարկաւոր են տարիներ և նոյնիսկ տասնեակ տարիներ, որպէսզի պատմադիրը կոռուի ու պայքարի այժմէականութիւնից ազատազրուելով, կարող լինի տալ Ռոսսոմի ամբողջական զէմքը, որոշել նրա տեղն ու դիրքը ոչ միայն հայ մասսաների ազատագրման գործում, այլև Արեւելքի յեղափոխութեան պատմութեան մէջ:

Այսօր, երբ Արեւելքը շարժումների ու բախումների շրջանն է ապրում, երբ յեղափոխական և հակայեղափոխական ուժերը կուտակուած միմեանց զէմ, սկիզբն են դնում ապագայի քաղաքական կեանքին, Ռոսսոմի հեղինակաւոր զէմքը աւելի քան երեք անհրաժեշտ էր Արեւելքի այդ շարժման համար, նրան իսկական ու յեղափոխական հունի մէջ մտցնելու, նրա ուղիղ ու պարզ գործելակերպը որոշելու համար:

Նաեւ մեր կուսակցութեան համար, երբ մեր շարքերը թուլացել են յեղափոխական թափի բացակայութիւնից, երբ մեր բարոյական մակարդակն ընկել է, երբ մեր անձնագոհութեան ու անհատական խիզախութեան օրի-

նակները պակասել են, հարկաւոր էր նա, որի խօսքը յեղափոխականի համար նուիրական memento էր և որի անձը՝ բարոյականի սիմբոլ: Այսօր, մի տարուց յետոյ, աւելի ծանր է նրա կորուստի ցաւը, քան նրա մահուն առաջին օրերին, երբ վշտացած զգացմունքը հնարաւորութիւն չէր տալիս զխաղցելու՝ թէ Ռ՞ւմ և Ե՞րբ կորցրինք:

Այս տխուր տարեկարձի օրերին խոնարհուելով նրա շիրիմի առաջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը ուխտում է մնալ հաւատարիմ հիմնադիր Ռոսսոմի ընդդձած յեղափոխական ճանապարհին:

«ԱՇԽԱՏԱՒՈՐ» (Երեւան), — 18 Յունուար 1920

### ՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԽԻՂՃԸ

1919 թուի Յունուար 18ին Տիֆլիսում իր մահկանացուն կնքեց մեր արևնոս գոյամարտի եւ յեղափոխական աննախընթաց պոռթկումների ամենասականատր սխեմերից մէկը՝ Ռոստոմը:

Հայ ընչպարկ ղեմովրատիայի մարմնացած խիղճն էր նա, եւ յեղափոխութեան կարմիր երախից փրթած այդ խիղճը, իր յաղթ թիկունքի յետեւը թողած երեսունամեայ ազգային յեղափոխական աննահանջ պայքարի փոթորիկներն ու տագնապները, միշտ մնաց մաքուր ու անրիծ, միշտ անասան ու կորովի, միշտ անդաստան մեր ցեղի ազգային քաղաքական ուխտին, միշտ հաւատարիմ՝ հայ աշխատաւորութեան յեղափոխական սրբութիւններին:

Մի եզակի ու դժուարին, բայց եւ վսեմ ու հողեթով առաքելութիւն էր վիճակուել Դաշնակցութեան յարկի տակ Ռոստոմին՝ մանաւանդ Քրիստափորից ու Միմէոնից յետոյ: Ռոստական ու տաճկական բռնակալութիւնների յարուցած ամենազաժան հայածանքներն ու բռնութիւնները կուսակցութիւնը գրեւէ էին կեանքի ու մահու չափ նշանակալից խնդիրների առաջ. մեր աւագ ընկերների խոշոր մասը բանտերում էր կամ աստանդական. յուսալքումի մի յորդ ալիք ներս էր խուժել մեր կուսակցութեան շարքերը. Ռոստոմին եւ միայն նրան էր վիճակուած՝ այս ծանր փորձութեանց օրերը դիմադրուել, եւ նա յեղափոխական ուսուցչին վայել տոկունութեամբ ու անվհատ՝ դիմաւորեց Դաշնակցութեան մետասաներորդ ժամին:

Ռոստոմի մահը ամենահուժեղ ու բազանն էր, որ պայթեց Դաշնակցութեան եւ հայ աշխատաւորութեան գլխին անսպասելիորէն ճիշդ այն ժամին՝ երբ Հայաստանն ու հայ ժողովուրդը լծուած կեանքի եւ մահու տագնապալից պայքարին՝ անցել էին մեր պատմութեան ամենէն դաժան ու սոսկումնաբերով լի ճանապարհը եւ միացեալ ու անկախ հայրենիքի հիմերը խորը սխեմ, մանաւանդ՝ երբ իր յեղափոխական հասարակական փոթորկալից կեանքի շրջանից յետոյ՝ Ռոստոմը գնում էր իր երազած անկախ Հայաստանը տեսնելու եւ այնտեղ աշխատելու, որի կէս ճանապարհին փակեց յաւէտ իր իմացական աչքերը:

Երեսուն տարի շարունակ, Միմէոնի ու Քրիստափորի կենդանութեան օրօք թէ մահուանից յետոյ, Ռոստոմը Դաշնակցութեան երկաթէ քոչերը հազած՝ շրջեց երկրէ երկիր, անցաւ մեր պատմական հայրենիքի համարեա բոլոր անկիւնները՝ ամէնուրեք ուր տրուում էր հայ ժողովրդի մէկ փոքրաթիւ հատուածի սիրտը, եւ որպէս մեր ազատամարտի անյաղթահարելի քուրմը՝ անդադրում քարոզեց, հրապարակեց ու մարզեց մի ամբողջ յեղափոխական սերունդ եւ իր երկու անփոխարինելի ղեկակիրների պէս՝ մի դիւ-

թական ու վսեմ մահով ընկաւ պարտքի ճանապարհին:

Վերջին քառորդ դարու մեր հանրային կեանքի ու կամեցողութեան, մեր անկումի ու բարձրացման մէջ՝ թէ՛ մեր ցեղի գոյամարտի եւ թէ՛ կրթութեան կուլտուրական ճակատներում տեղի չի ունեցել մի նշանատր երեւոյթ, որի հետ այս կամ այն կերպ կապուած չլինի Ռոստոմի անունը:

Չնայած Ռոստոմի այսքան բեղուն ու հարուստ կեանքին, նա անսահմանորէն համեստ էր ու պարզ. իր հանրական ոգորումներին ծնունդ ու թրուիչք տուող դեմոկրատիայի նման, հասարակ ու չարքաշ, միշտ լծուած սեւ ու դժուարին աշխատանքի՝ անտրտունջ ու անաղմուկ: Իւր ողջ կեանքում երբեք հետամուտ չեղաւ մեծ պաշտօնների. կուսակցութեան յարկի տակ երբեք չջանաց պատասխանատու մարմինների մէջ մտնելու: Մեծ պաշտօններից ու իշխանութեան աթոռներից միշտ հեռու, Ռոստոմը սակայն իր ուսերի վրայ էր տանում կուսակցական ամենապատասխանատու աշխատանքները՝ այդու մարմիններին ոգևորում ու նոր թափով գործի մղում:

Ոչ ոք Քրիստափորից ու Միմէոնից յետոյ՝ մեր կուսակցութեան մէջ չունէր այնպիսի հեղինակութիւն ու բարոյական յեղափոխական կշիռ՝ ինչպէս Ռոստոմը եւ նա ըստ ամենայնի արժանի էր դրան:

Ինչո՞վ էր դիւթում ու համակում Ռոստոմը իր յեղափոխական ընկերների սրտերը. նա չունէր հռետորական շնորհք, արտաքին շուք, խօսքի պերճանք, ոչ էլ յախուռն տեմպերամենտ. խօսում էր քիչ, բայց խօսելիս՝ իր տրամաբանական յստակ, խորը մտածումների մէջ կարողանում էր դնել իր անսահման մաքուր հողին, իր անսպարփակելի անկեղծութիւնը, իր վսեմ գաղափարների հիմքում նստած աներեւ հաւատը: Իսկ երբ այս երեք խոշոր ունակութիւնները լծորդում էին Ռոստոմի վերլուծող մտքի հետ՝ նա դառնում էր մարդարէ, դիւթող, հմայող ու գերող՝ իր պաշտպանած գաղափարների խորը անկեղծութեամբ ելեկտրականացած:

Որպէս յեղափոխական ուսուցիչ Ռոստոմը աւելի հաւատում՝ քան ճանաչում էր մարդկանց: Նրա էութեան մէջ մարդը հետամտելու, տնդելու եւ ամբողջապէս ընդգրկելու ձգտում չկար՝ կամ եթէ կար թոյլ էր: Ինքը ամբողջապէս կենդանի գործ էր եւ զրաւիչ օրինակ իր քարոզած գաղափարների եւ դրանով էլ ներշնչում, կապում էր իր հետ եւ իր յետեւից քաշում ու տանում էր իր սաներին:

Ռոստոմը իր յեղափոխական ընդգրկումներն ու հանրական կամքը շատ յաճախ մեր երկրի ու ժողովրդի սահմաններից դուրս է արտայայտել ու վերածել այն իր կենդանի մասնակցութեամբ իրական գործի: Պարսկական յեղափոխութեան մէջ, առանձնապէս Ատրպատականի շրջանում, Ռոստոմ իր պատուաւոր տեղն ունի թէ՛ որպէս անմիջական մարտնչող եւ թէ՛ որպէս ղեկավարող ու կազմակերպող: Միջցեղային ամենաբարի յարաբերութիւնների եւ միջկուսակցական համերաշխ աշխատանքների ամենաջերմ պաշտպանն էր նա եւ այդ ուղղութեամբ իր ողջ կեանքում աշխատեց ու կապեր հաստատեց թէ՛ մեր հարեւանների մտաւորականութեան եւ թէ՛ կուսակցական ականաւոր ներկայացուցիչների հետ, որոնք անսահման յարգանքով ու հաւատով էին վերաբերում նրան:

Չորս տարի է անցել Ռոստոմի մահուան օրից եւ չորս տարուայ ընթացքում թէև խոչոր փոթորիկներ են անցել մեր հայրենիքի, ժողովրդի ու կուսակցութեան վրայով՝ սակայն Ռոստոմի զազադի առաջ մեր յեղափոխական շարքերի յառ փճիոր մնացել է անխախտ: Վխուշի բարձունքին ընկած Քրիստափորի յեղափոխական նշխարները Ռուլարիայից, Սիմէանի, Ռոստոմի եւ նրանց հետ նաև մեր բոլոր ազգային գործիչների նշխարները Խոջիվանքի գերեզմանատանից պէտք է փոխադրել Հայաստան: Եւ կը փոխադրուեն՝ հենց որ մեր ծուսատուած հայրենիքի ու տանջուած ժողովրդի այսօրուայ լուռ ու զսպուած զայրոյթը վեր ածուի յազիթական երգի:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ» շաբաթաթերթ, Թեհրան, Փետր. 1923, քիւ 60:

## Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ը

Պատմակշիռ եղան Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր Երրորդութեան դերն ու առաքելութիւնը հայոց նորագոյն պատմութեան, հայ ազատագրական շարժման ծաւալման ու ղեկավարման մէջ, — ՔՐԻՍՏԱՓՈՐ, ՍԻՄՈՆ ԵՒ ՌՈՍՏՈՄ:

Երրորդութեան բազկացուցիչ եւ լրացուցիչ այս երեք անբաժան ա՛նունները յեղափոխական ախտանեան դէմքեր չեն միայն, այլև անմեռանելի խորհրդանիշներ են:

Խորհրդանիշը յեղափոխական հայութեան, Հայ Յեղափոխութեան մարդակերտ, ազգակերտ ու հայրենակերտ սխրանքին: Խորհրդանիշը հայ ժողովուրդի քաղաքական, բնկերային ու յեղափոխական զարթօնքին, մարտունակ ու վերանորո՛գ հայութեան հայակերտումին, իրբեւ ինքնաճանաչ ու ինքնակալ պետական ազգ:

Եւ զուր չէ, որ մեր շարքերուն ու նաև ազգայնօրէն առողջ՝ համա՛յն հայութեան համար, Երրորդութեան մէջ եւ երեք հաւասարներուն մէջ առաջի՛նը՝ Քրիստափոր Միքայէլեան կը խորհրդանշէր Հ. Յ. Դաշնակցութեան ՄԻՏՔԸ, երկրորդը՝ Սիմոն Զաւարեան կը խորհրդանշէր անոր ԽԻՂՃԸ, եւ երրորդը նո՛յն հաւասարութեան մէջ՝ Ռոստոմ Զօրեան՝ Դաշնակցութեան ԿԱՄՔԸ:

Միտք, խիղճ եւ կամք, — ահա՛ Հայ Յեղափոխութեան բարոյական, մարդկային ու ազգային կերպարը կարկառող եռավէ՛մը, ազբի՛ւրը հայկազանց ողիի կենսական թռիչքին:

Այս եռավէ՛մին մէջ ամէնէ՛ն ամրակուռը սակայն եղաւ Ռոստոմը, ո՛չ թէ անոր համար լուկ, որ ամէնէն երկարակեացը եղաւ (բախտի խնդիր), այլ անոր համար, որ եղաւ ամենամերկան (ներգործութեան խնդիր):

Եթէ Քրիստափոր հողինները կը վարէր իր իմացական հմայքով ու ոգեկան շաղապատումով եւ Զաւարեան իր մարգարէական շունչով ու նախանձայուզութեամբ, Ռոստոմ կ՛ողեչնէր իր պարզութեամբ, իր ողջախոհութեամբ ու առինքնող կորովով:

Երրորդութեան մէջ ամէնէն պարզն էր, անտարակոյս, իր խառնուածքով ու յարաբերական կեանքով, նաև ամէնէն համեստն էր, իր արտաքին ու ներքին փայլով. եթէ ամէնէն սակաւապէտը չէր, անպայման ամէնէն սակաւախօսն էր, նոյնիսկ ամէնէն սակաւագիրն էր, սակայն միաժամանակ ամէնէն գործօն, այլև ցերեպրծօն նկարագիրն էր ան:

Միեւնո՛յն Երրորդութեան մէջ ամենամատչելին էր ան եւ ամենահարը նոյն ատեն, սակայն, հակառակ այս իրողութեան, անոր անձին ու գործին հմայքը չմաշեցաւ երբեք, այլ, ընդհակառակն, հետզհետէ աւելի աճեցաւ:

ու վարարեց յեղափոխական յաջորդական սերունդները :

Երրորդութեան ամէնէն սակաւախօսն ու սակաւագիրն էր թէեւ, սակայն նոյնքան պերճախօս ու նոյնքան տիրական էր իր շունչը, շնորհիւ իր լուրքեան, լուռ, այլ յարածուն կերպով ծաւալուն իր գործունէութեան, կազմակերպական շնորհին ու հաղորդականութեան :

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին երեսնամեակի պատմութեան մէջ, առաւել կամ նուազ կարեւորութեամբ, շատ քիչ գործեր կան, զորս կարելի ըլլայ կապել ուղղակի իր անունին թէ՛ իբրեւ յղացում եւ թէ՛ իբրեւ իրացում :

Սակայն նոյն երեսնամեակի ընթացքին Դաշնակցութեան յեղափոխական ձեռնարկներուն մէջ հազուադէպ են անոնք, որ ուղղակի կամ անուղղակի դրոշմը չեն կրեր Ռոստոմին :

Դրոշմ ունեցող մեծերէն էր ան, իր պարզութեան մէջ՝ վսեմ, իր համեստութեան մէջ՝ պատկառազու, իր լուրքեան մէջ՝ պերճախօս եւ իր անձի օրինակին մէջ՝ անխոցելի :

Բեմի մարդ չէր, յետսաբեմի՛ մարդն էր, բեմավա՛րն էր :

Հոն, ուր ներկայ էր Ռոստոմ, — եւ ան ներկա՛յ էր ամէնուրեք, — հոն իսկոյն կը դադրէին բոլոր վէճերը, կը հալէին բոլոր քէներն ու կիրքերը եւ բոլորին ակնարկը կը սեւեռուէր միակ նշանակէտի մը, — գործի :

Երրորդութեան մէջ ամէնէն իրապաշտն էր ան, ամէնէն գործնապաշտն ու գործունեան հաւանաբար. սակայն մաքրամաքուր ու լայնահուն գաղափարապաշտութեան մը Փոնին վրայ վսեմացեալ իրապաշտութիւն մըն էր իբրը, որ ոզի կը ներշնչէր եւ անձնուիրութեան կը հրաւիրէր :

Կամքերու կռանիչն էր ան, անզուգական կազմակերպիչը յեղափոխական կամաւոր բանակին եւ անոր անուսադիր զօրապետը անձնուէր ու արի :

Պարզ ու պայծառ ճակատով, պարզ ու պայծառ հոգիով, պարզ ու պայծառ վաստակով եւ աւելի քան պայծառ յիշատակով առաջնորդը հայկազանց անմեռ ցեղին :

Ռոստոմ՛, մեր նորագոյն դիւցազներգութեան եռամեծ ճարտարապետը, պարզ ու անպաճոյճ անունի մը տակ :

Յաւերժական անուն մը, որ իբրեւ ներշնչման աղբիւր պիտի ծառայէ եկող ու դեռ գալիք նոր սերունդներուն, զանոնք մղելու համար նորանոր սիրազործութեանց, վասն հայրենեաց եւ ազգի՛ :

Այսօր եւ ընդմիշտ :

Խմբագրակաթ «ԱԶԴԱԿ» ՇԱՐԱԹՕՐԵԱԿ – «ԴՐՕՇԱԿ»ի,

Ե. տարի, 24 Փետր. 1974, թիւ 10

**ՅԱՒԵԼՈՒԱԾ**

ՌՈՍՏՈՄ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Թումանյանի «միջավայրը» այդ տանը՝ Բազդի-քեռին էր իր Ֆան-տաստիկ պատմություններով եւ նրա քենակալի եղբորորդին՝ Ստեփանը, որ սովորում էր Թիֆլիսի ունիվերսիտետում(1)։ Ինչպէս Թումանյանն է բնութագրել իր յուշերում, Ստեփանն աչքի էր ընկնում մտաւոր զարգացմամբ. մանաւանդ լաւ գիտէր ռուս գրականութիւնը. «սիրում էր առանձնապէս Գոգոլին, անգիր գիտէր «Տարաս Բուլբան»։ Շարունակ կարդում էր, գիշերներն ուղղակի լուսացնում էր ընթերցանութեան վրայ»։ Ինչպէս ժամանակի յեղափոխական-նարոզիկական արամաւորութիւններով առգորուած պատանեկութեան եւ երիտասարդութեան մեծ մասը, Ջօրեանն եւ Տուրգենեւի պաշտամունքն է ունեցել։ Թումանյանը պատմում է, թէ Ստեփանը ինչպէս խոր է ապրել Տուրգենեւի մահուան վիշտը, որով համակել է եւ իրեն, որ դեռեւս անծանօթ էր ռուս այդ ակնաւոր վիպասանին։

Տարբեր միջավայրերից եկած, սարբեր զարոյցներում սովորող երկու պատանիներ, հանդիպելով Բազդի-քեռու տանը զրուցում են միմեանց հետ, կարծիքներ փոխանակում եւ աւելի շատ վիճում։ Չրոյցների եւ վէճերի նութը զլխաւորապէս զբաղանութիւնն ու պատմութիւնն էին։ Մըցում էին իրենց իմացածով եւ դէմ դիմաց հանում՝ Թումանյանը հայկականը, Ջօրեանը՝ ռուսականը։ «Եւ մի քանի տարուց յետոյ մեր վէճերը շատ էին փոխուել, — զրուս է Թումանյանը։ — Քանի եւ հակում էի դէպի օտար գրականութիւններն ու ցրում դէպի հեռուները՝ նա ուժեղ թափով կենտրոնանում էր հայութեան վրայ»։

Առհասարակ Ջօրեանը բարենպաստ ազդեցութիւն է ունեցել պատանի Թումանյանի գրական ճաշակի զարգացման վրայ, մասնաւորապէս սէր ու

(1) Ստեփան Ջօրեանը (Ռոստոմ) (1867-1919)՝ հետագայում Գաշնակցութեան հիմնադիրներից մէկը։ Նա այդ կուսակցութեան սակաւարիւ այն գործիչներից էր, որոնք խորապէս ըմբռնելով Հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան բախտորոշ նշանակութիւնը հայ ժողովրդի ազատագրութեան գործում, կողմնորոշուեցին դէպի Սովետական Ռուսաստանը. «Ռոստոմ Ջօրեանը, — գրում է պատմական գիտութիւնների դոկտոր Արամայիս Մնացականեանը, — 1917 բուականի վերջերին մեկնեց Պետրոգրադ, հանդիպումներ ունեցաւ Լենինի հետ, մասնակցեց ժողովուստների նիստին եւ ողջունեց սովետական կառավարութեան քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ։ Ջօրեանը վերադարձաւ Անդրկովկաս եւ հաստատուելով Բաբուսի իր համախոհների հետ միասին համագործակցեց Բաբուսի բանուորների, գիւմուրների եւ նաւաստիների սովետի հետ, իր արամադրութեան տակ եղած հայկական ազգային զորամասերն էլ միացրեց սովետական կարմիր բանակի զորամասերին, մասնակցեց Բաբուսի կոմունայի պաշտպանութեանը եւ թուրքական զարիչների դէմ մղուած կռիւներին, (Արամայիս Մնացականեան, Հոկտեմբերը եւ Հայաստանը. «Հայրենիքի ձայն», 1967, № 2, էջ 7)։

Հետագայ հիմն գրութիւնները կազմուած հատորին մէջ չկային, երբ սկսաւ տպագրութիւնը։

Առաջինը խորհրդահայ վկայութիւն մըն է, եւ ատով իսկ շահեկան՝ հակառակ կարգ մը աժան հաստատումներու (օրինակ՝ Ռոստոմի «սովետական կողմնորոշումը»...)։ Ան կը բացայայտէ Ռոստոմի ունեցած ազդեցութիւնը Յովհաննէս Թումանյանի անձին եւ գրական-մշակութային կազմաւորման վրայ։

Երկրորդը (ՌՈՍՏՈՄԻ «ՆՆԻԿ»Ը) եւ երրորդը (ՌՈՍՏՈՄԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ ԽԱԺԱԿԻՆ) երկու մանրավէպեր են Մեծ Յեղափոխականի կեանքէն եւ կը պատկանին Սիմոն Վրացեանի humour-ով հարուստ գրիչին։ Անոնք առնուած են Սիմոն Վրացեանի արխիւէն։

Չորրորդ գրութիւնը նամակ մըն է, որ վերջին պահուն գտնուեցաւ միւնխախտ արխիւին մէջ, «վէմ»երուն մէջ հրատարակուած եւ մեր կողմէ ներկայ հատորին մէջ արտատպուած նամակներու ձեռագիրներուն կարգին։ Ան ոչ «վէմ»երուն, ոչ ալ Վրացեանի «Հին թղթեր»ուն մէջ տեղ գտած է սակայն։ Բովանդակութեանն որոշ կը դառնայ, որ նամակը ուղղուած չէ Սիմոն Վրացեանին, այլ Սիմոն Զարեանին։ Աւելի ուշ, որեւէ ձեռով ան անցած պէտք է ըլլայ վրացեանի ձեռքը։ Այս հաւանականութիւնը կը շեշտուի բովանդակութեան կարգ մը կէտերով. — այսպէս, դժուար քէ Ռոստոմ «Ս. Կարապետ զու չե՞ս գալ» գրէր Պոսթըն գտնուող Սիմոն Վրացեանին, որ այդ օրերուն «Հայրենիք»ի խմբագրութիւնը կը վարէր, կամ Սարգիսին (ամենայն հաւանականութեամբ՝ Սարգիս Բարսեղեանի) «մի աշխատանք գտնել»ու յանձնարարութիւն ընէր անոր, երբ Սարգիսը Երկրէն Պոլիս կ'անցնէր, Տրապիզոնի վրայով։

Հինգերորդը, անտիպ՝ նախորդ երեք գրութիւններուն նման, առնուած է Նիկոլ Աղբալեանի արխիւէն։ Աղբալեանի ձեռագիրն է, գրուած չորս փոքր էջերու վրայ եւ կը կրէ «Է Փետրուար, Փարիզ» բուականը (տարեթիւ չկայ)։ Ռոստոմի բարոյական բնութագիրը ընող այս գրութիւնը յայտնապէս անմշակ է եւ հրատարակութեան պատրաստ վերջնական ձեւի դրուած չէ. հաւանաբար նոթերու շարք մըն է միայն, դասախօսութեան մը համար պատրաստուած։ Զայն կու տանք սակայն, իր հում ձեւին տակ իսկ, իրբեւ նշխար մը հայ մտքի մեծ տիրանէն։

Վեցերորդը, եւ վերջինը, Հրաչ Զարդարեանէն գրութիւն մըն է, առնուած Վահան Նաւասարդեանի արխիւէն։ Հոգեբանական վերլուծումով եւ խոր ապրումով տրուած գրական հատուած մը՝ Ռոստոմի ամբողջական արժեւորման իրբեւ փորձ։ Գրուած է յայտնապէս թերթի մը (արդեօ՞ք «Յուսարեք») բացառիկ թիւին համար եւ, ըստ ծանօթագրութեան, առնուած է Ռոստոմի նուիրուած Հրաչ Զարդարեանի մէկ աշխատասիրութեանէն (մեզի անծանօթ)։ Թուական չի կրեր։

Հետաքրքրութիւն առաջացնելով դէպի ուս գրականութիւնը:

Նրանց հանդիպումներն ու զրոյցները շարունակուել են Հետագայում եւս, երբ Թումանեանը վաղուց հեռացել էր Բաղդի-քեռու տնից: Բանաստեղծը պատմում է, որ «Հին կոխը» պոէմը գրելու զրդումը ստացել է Ձօրեանից. «...Հետագայում էլ մի քանի պատմութիւններ արաւ ու առաջարկեց, որ բանաստեղծութեան նիւթ առնեմ: Ես նրա պատմածներից միայն մէկից, որ պատմեց 1890 թուականին, մի տէրտէրի ու իր աղջկայ պատմութիւնից օգտուեցի ու նիւթ առայ մի պոէմի: Պոէմը թէեւ գրելիս բոլորովին փոխուեց եւ ուրիշ բան դուրս եկաւ, բայց նուիրեցի Ստեփանին: Բաւական տարիներ առաջ ուս ժանդարմաները խուզարկեցին, տարան կորցըրին էլ պոէմը եւ միայն մի երկու կտոր գտայ պատահմունքով, որ սպուեցին «Տանը», «Երկրում» եւ «Հայոց լեռներում» վերնագրերով»:

«ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ»

Հայկ. Ս. Ս. Հ. Գիտ. Ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան, 1969:

## ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

### ՌՈՍՏՈՄԻ «ՀՆԻԿ»Ը

Ռոստոմը մասնագիտութեամբ բնագէտ էր: Դպրոցում էլ բնագիտական առարկաներ էր դասաւանդում:

Պատերազմի տարիներին իր միտքը զբաղած էր արագ եւ ուժեղ հարուածող զէնք հնարելով: Առանձին խորհրդաւոր փորձեր էր անում քիմիական պանազան բաղադրութիւններով կամ բնագիտական-լուսարանական միջոցներով:

Լուրջ թէ կատակով՝ չգիտեմ, ասում էին, թէ նոր տեսակի ուումը հնարելու վրայ է: Ոստում էին, հեռուից քաղաքներ հրդեհեցնու գործիք է հնարել: Իրբեւ թէ «չնիկ» անունով մի փոքրիկ, ձեռքով վերցնելիք թնդանօթ էր շինել, որից կարելի էր զիրքերում պահուած թշնամիներին բնաջնջել:

Երբ իրենից բացատրութիւն էինք խնդրում, ուրախ ծիծաղում էր:

— Մի վախեցէք, ասում էր, ձեզ վտանգ չի սպառնայ...

Երբ կամաւորական խումբերի կարգադրիչ մարմինը փոխադրուեց Երեւան, Ռոստոմն էլ որոշ ժամանակ եկաւ այնտեղ եւ, յաճախ, ժամերով մնում էր Տէր-Աւետիքեանների մեքենայական գործարանում, Տէր-Աւետիքեանի կրտսեր եղբոր հետ: Սա էլ Երեւանում յայտնի էր իբրեւ զէնքի գիտարար:

Մի օր Ռոստոմը ժպտալով՝ ասաց Աղբալեանին եւ ինձ.

— Ուզո՞ւմ էք ներկայ լինել նոր զէնքի փորձի: Կէսօրից յետոյ երթանք միասին:

Մենք ի հարկէ ուզում էինք:

Կէսօրից յետոյ, Ռոստոմը, Աղբալեանը, գործարանատէր Տէր-Աւետիքեան, ինձ ծանօթ մի հայ սպայ եւ ես կառքով ելանք Քանաքեռի բարձունքը, թեքեցինք դէպի ձախ, Չանգուի ուղղութեամբ եւ կեցանք ամայի, քարքարոտ դաշտում: Տէր-Աւետիքեանը գրկում ունէր սպիտակ ծածկոցի տակ մի խորհրդաւոր առարկայ: Ռոստոմի «չնիկ»ն էր, որ այն ժամանակ մեր մէջ նոյնքան հետաքրքրութիւն էր առաջ բերել՝ ինչպէս վերջը հիւլէական ուումը:

Ռոստոմը վերցրեց «չնիկ»ի վրայից սպիտակ ծածկոցը: Եռոտանի գորտի նման մետաղէ առարկայ էր՝ թնդանօթի ձեւի փողով: Տէր-Աւետիքեանի օգնութեամբ գետեղեց մի հարթ քարի վրայ եւ դիտելով շուրջը՝ հրամայեց.

— Սիւրիները թող հեռանան այն ժայռի ետեւը:

Կառքը, Աղբալեանը եւ ես քաշուեցինք մի քանի մեթր այն կողմ, քարի ետեւը եւ դիտում էինք այնտեղից:

Ռոստոմը, ինչ որ լուրջ խորհրդակցութեան մէջ էր Տէր-Աւետիքեանի եւ սպայի հետ: Վերջը «չնիկ»ի գլուխը ուղղուեց Չանգուի կողմը:

Ինչ որ բան գրեց փողի մէջ եւ թելով քաշեց: Տէր-Աւետիքեանը եւ սպան վազեցին մեր կողմը: Ռոստոմը կեցաւ իր տեղը՝ թելով աչքերը ծածկած:

Բլթակի քաշելուն յաջորդեց մի խլացուցիչ որոտ: Թանձր ծուխը ծածկեց Ռոստոմին մեր աչքերից:

Երբ մենք մօտեցանք փորձի տեղը, «չնիկ»ը չքացեր էր: Ռոստոմը շարժում էր օդի մէջ ձախ ձեռքը, որից արիւն էր գալիս: Բարեբախտաբար, սակարը չէր վնասուել, բայց Ռոստոմի դէմքից զգացում էր սաստիկ ցաւ:

Ռոստոմը թաշկինակով կապեց վիրաւոր ձեռքը եւ սկսեց փնտռել անհետացած «չնիկ»ը: Գտաւ բաւական հետո՝ նոյնպէս վիրաւոր վիճակում: «Մասնագէտների խորհուրդը» հաստատեց, որ ինչ որ սխալ հաշիւի պատճառով «չնիկ»ը չէր կատարել իր պարտականութիւնը. փոխանակ թշնամուն այրելու, Ռոստոմի ձեռքն էր վիրաւորել: Փառք որ այդքանով պրծանք եւ վիրաւորի պատմութիւնը չկրկնուեց:

Այդ երեկոյ երեւանի Ամասնային Ակումբում ամէնքը խօսում էին Ռոստոմի «չնիկ»ի մասին:

### ՌՈՍՏՈՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԽԱԺԱԿԻՆ

Ռոստոմը «Դրօշակ»ի խմբագիր էր ժընեւում, Գարեգին Խաթակը ուսանող էր:

Եզրիպոստում սուր պայքար կար Հնչակեանների հետ, եւ ընկերներ պահանջում էին լեզուանի գործիչ ուղարկել:

Ռոստոմը համոզում է Խաթակին գնալ Եզրիպոստ:

— Իսկի քո տեղն է, Խաթակ, ասում է Ռոստոմը: Գնա՛, մի լաւ դաս սուր այդ անպիտաններին:

Խաթակը հասնում է Գահիրէ եւ բուրգերի նկարով մի բացիկ է ուղարկում Ռոստոմին: ...Երևակայիր, գրում է Խաթակը, այստեղ այնքան տաք է, որ եթէ աւազի մէջ հաւկիթ դնես, արագ կը խաչուի:

— Սիրելի Խաթակ, պատասխանում է Ռոստոմը, զգուշացիր, աւազի վրայ չնստես:

### ՆԱՄԱԿ ՄԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆԻՆ

2 Յունիս 1913

Սիրելի Սիմոն,

Ուսումնական տարին վերջանալու վրայ է: Շուտով կը դրուի իմ այստեղ մնալու խնդիրը: Չգիտեմ, քե ինչ պիտի ասեմ: Մի կողմից կ'ուզէի շարունակել սկսուած գործը. միւս կողմից տեսնում եմ, որ ներքակամ միջոցներ չկան: Ազգային մարմինները հին պարտեկրին նորը չեն աւելացնել. եւ անցեալ տարուայ քիւտնէն պիտի աշխատին կրճատել:

Արդեօք բժիշկը մի բան կ'անի՞ Պետերբուրգում: Քեզ արդէն գրել էի, որ նրանք խոստացել են նպաստի խնդիրը առաջ առնել առաջիկայ տարին: Զի՞ կարելի արդեօք Ստեփանից մի բան իմանալ: Մի բան գրեցի՞ր ինձ: Եթէ չես արել, շուտով գրիր եւ մի բան հասկացիր: Առանց այդ նպաստի անհնարին կը լինի դպրոցները պահել եւ անպատճառ վերի դասարանները կը փակուեն: Այդ դէպքում անկարելի կը դառնայ իմ այստեղ մնալը:

Եթէ հետանալու լինեմ այստեղից, կ'ուզեմայի Պոլիս հաստատուել. այդ պարագային գուցէ կիզան էլ համաձայնի գալ: Եթէ վարժարաններից մէկը յանձնէին մեզ երկուսիս, շատ լաւ բան կը լինէր: Զե՞ս կարող փորձ անել:

Եթէ այդ էլ չյաջողուեց, կը մնայ հաստատուել Սամսոնի նման մի տեղում: Տիգրանը գնալու է երկու շաբաթից յետոյ: Այնտեղ կը որոշի իր ապագայի անելիքը: «Բացառիկ» (դու յօդուած ուղարկե՞լ ես) հրատարակութեան ուշանալը շատ խնճեց իմ գործերը: Գոնէ գացողներին պէտք է վճարել: Բոլ բոլ խոստումներ արին, բայց բան դուրս չեկաւ: Վարդգէսն էլ ոչինչ չարեց:

Ի միջի այլոց փրանսիական դեսպանատան խոստումն էլ այնպէս մնաց: Եթէ մէկը առիք ունենայ տեսնուելու Buope-ի հետ (conseiller), քող յիշեցնի նրան իր խոստումը: Գրել էի հաշտութիւն այդ մասին, բայց երեւի նա այդտեղ չի եղել:

Քո ծրագրած դպրոցը ի՞նչ եղաւ:

Ս. Կարապետ դու չե՞ս գալ: 1,500ամեակը արժէ լաւ տօնել: Սպասում եմ Քաջագունուն: Գարոն գնաց Բայազետ, այնտեղից կ'անցնի վան. Մուշ մեզ կը միանայ Ս. Կարապետում: Հրաւեր եմ կարդացել Կովկաս էլ: Բայց վախեցում եմ, որ լրագրական լուրերի տարածած վախը մեծ արգելք հանդիսանայ:

Քո ՌՈՍՏՈՄ

Canpette-ը դեռ եւս ճանապարհների ընկերութեան մէջն է:

Մարգարի նամակը Տրապիզոնից շատ ուշ ստացուեց: Կարծելով որ հիւանդացել է, հեռագիր ուղարկեցինք: Մի աշխատանք յաւանդելով եմ գտած կը լինէ՞ք նրա համար:

Ռ.

ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ

Պարզ մարդ — իր արտաքինով. ոչ մի ուշադրաւութիւն. քիչ թափթը-  
փած, արհեստաւոր, նաեւ իր կազմով լայնաթիկունք, հաստակը, միջակէն  
վար երեւացող հասակով. իր դէմքը՝ անհարթ մորթով, կնճոռոտ ճակատ եւ  
լայն քիթ. թւում էր կոշտ, բայց բարի եւ իմացական աչքեր [ունէր] եւ  
առողջ ատամներ. մի պարզ, առողջ մարդ, հաստատուն ու ծանր քայլ-  
ուածքով, մկանայինը:

Պարզ էր իր պահուածքը. բարեացակամ պարզութիւն օտարի հան-  
դէպ, եւ հանդարտ ու մտերիմ պարզութիւն՝ ընկերների. խանդավառութիւն  
չկար հանդիպումի կամ մեկնումի ժամանակ, այլ հանդարտ սրտակցութիւն:  
Ուշադիր դէպի ամէնքը — փոքր, մեծ, կին, տղամարդ, ընկեր, ոչ ընկեր. ա-  
մէնքի մէջ մարդը տեսնելով եւ իրրեւ մարդ յարարեցելով: Նա եւ չունէր որ  
ամէնքին նկատում է նիւթ, այլ ամէնքին առնում էր իրր մարդ. ինքն էր  
նրանց յարմարում հողերանորէն — այսինքն նրանց հողսին, գործին, մտա-  
ծումին մերում — ուստի սիրելի ամենքին եւ վարուող ամենքի հետ: Իր  
մեծութիւնը իր եսի չբացման մէջ էր, կամ որ նոյնն է՝ անսահման լայնացման:

Այդպէս եւ հանրային կեանքում եւ կուսակցական. նա չէր պարտա-  
դրում, չէր պահանջում, չէր հրամայում — այլ կարծիք էր յայտնում, ա-  
ւելի ներշնչում. իր անձը զեր չունէր իր արածի եւ ասածի մէջ. փառքի,  
անուան, հեղինակութեան հետամուտ չէր: Անում էր իր անելիքն ու ասում  
ասելիքը առանց չքեցութեան, ճառի, վեհութեան — այլ պարզապէս իրր  
սոսկական մարդ, որ հետամուտ է ճշմարտութեան ու լաւին՝ առանց բռն-  
ութեան եւ պարտադրութեան: Նա սպանդաւոր չէր եւ ոչ վերացական. նա  
մի պարզ մարդ էր, բայց իմաստուն մարդ:

Նա գիտնական չէր, բայց գիտուն էր. մոլեռանդ չէր, բայց համո-  
ղումներ, աւելի՛ բարոյական սովորութիւններ ունէր. — որովհետեւ կեանքի եւ  
իր մէջ չկային վերացական գաղափարներ. նա կեանքն ու մարդկանց տես-  
նում էր անմիջապէս: Նրա համար մարդիկ թիւ եւ ցանկ չէին, այլ կենդա-  
նի մարդիկ. նա կեանքը բռնում էր իր բարդութեան մէջ, իր անհատացման  
մէջ, ուստի դաժան չէր եւ ոչ մեկուսի, կղզիացած, անհաղորդ — այլ մը-  
տերմական, բարեացակամ: Նրա ամբողջ օրը բռնուած էր վաղ առաւօ-  
տից ուչ երեկոյ. այցելութիւն, գործ ու ժողով — բայց նա մի գործի վը-  
րայ չէր, մի նպատակ հետապնդելով. — այլ բազմաթիւ գործեր. ինչ որ պա-  
տահի — բայց միշտ իրմէ դուրս գործեր:

Անանձնական տիպարն էր կատարեալ, իր անձը անանձնութեան մէջ  
էր. իր մասին հոգում էր ինչպէս ուրիշներից մէկի, նաեւ իր ընտանիքը.  
յատկապէս եւ, իմը չկար այլ նաեւ եւ, իմը եւ ամենից յետոյ: Բնական է

չունէր նախանձ բայց ունէր մեղմ հիացում, — աւելի գոհութիւն՝ ուրիշնե-  
րի լաւութեան:

Այս անանձնական պարզութիւնը իր հիմնական գիծն էր. երկուսի մա-  
հից յետոյ նա մնաց խորհրդանիշ, «պարագլուխ, գեկալար»: Բնաւ իր դիր-  
քը չփոխեց, մնաց նոյնը. նա իշխանութեան չէր ձգտում, ոչ էլ վարիչ դառ-  
նալու, այլ հաւատարիմ ազնիւ ընկերների հետ գործել նոյն դաշտի վրայ,  
նոյն նպատակով — հայ ժողովուրդի բարեկեցութիւնը: Նա ծրագրապաշտ  
չէր, ոչ էլ կանոնամուլ, այլ գործնական:

Նրա համար ընկերների եւ գործիչների միութիւնն էր կարեւոր — դա  
մի ուժ էր, եւ նա առանցքն էր այդ ուժի — իբր կապ. գործի մտահոգու-  
թիւնը համբերատար էր դարձնում դէպի գործերի թերին, որ սակայն նկա-  
տում էր եւ փորձում շտկել՝ առանց հետապնդելու. — մի խօսք սուր, մի  
ակնարկ տեղին, եւ այլն. կարծեմ ոչ ոքի ամբաստանած է եւ ոչ ոքի պատժած.  
բայց ինքը օրինակ էր — լիակատար անձնուիրութեան — եւ նրան մօտե-  
ցողը սովորում էր մեղմել իր եսը:

Ինքը դիրք չէր որոնում — դիրք որոնողները խպնում էին: Այսպէս  
նա բարոյական հեղինակութիւն դարձաւ ոչ իր կարծիքով, այլ իր անձով:

Ո՞րն է այն գործը որ կապուած է նրա անուան — դժուար է ասել,  
ո՞րն է այն գործը որ նրա դրոշմը չկրէ — նոյնպէս: Նա գնում էր ուր պէտք  
էր. անում էր ինչ պէտք էր. բազմատեսակ գործեր — գրաչարութիւն եւ  
ոուժի պատրաստութիւն, վարժարան եւ քաղաքական բանակցութիւն. զի  
նա մասնագէտ չէր — այլ մարդ՝ որ հասնում է մարդուն իր կարիքի մէջ —  
թէկուզ մի կարի մեքենայ, մի նամակ, մի ընկերով զուակ եւ իր մայրն ու  
քոյրը:

Հայ էր բայց վեր հայութիւնից. մարդ էր եւ այլազգի հանդէպ. բա-  
ցառիկ չէր, մոլեռանդ կամ կղզիացած — ամէնքի մէջ մարդ էր տեսնում եւ  
պիտանի (հանրային) յատկութիւնը գնահատում:

Նա մի բարոյական մեծութիւն էր — ոչ ճգնաւոր, ոչ դիւրակեաց,  
այլ աշխատաւոր՝ հանրութեան:

Դաշնակցութիւնը կենդանի է իր ընկերական ոգով. նպատակը չէ որ  
միացնում է, որքան գործն ու սէրը: Ռոտտոմը Հայ Յեղափոխականների Դաշ-  
նակցութեան մարդ էր, Դաշնակցութեան ընկերական ոգու պահպանն ու  
ծաւալիչը:

Ու քանի որ շատ տեղ էր եղած ու շատ մարդ տեսած՝ փորձառու,  
լայնասիրտ, նստած, իմաստուն, գործնական. նա մեկնում էր ոչ գաղափա-  
րից այլ կեանքից եւ տարածում էր ոչ աշխարհայեացք այլ բարք. — ոչ սրո-  
պազանդիստ էր, ո՛չ վիճարանող, ո՛չ հետադատող — այլ անձնուէր կեանքի  
չըջուն օրինակ եւ մարդկօրէն ընկերական մարդ:

Սրա մէջ էր իր հմայքն ու հեղինակութիւնը:

ՌՈՍՏՈՒՐԸ (\*)  
(Յեղին կառուցանող հանձարը)

Quelque chose de silencieux enveloppe  
ses actions...

Ce ne sont pas ses destinées que porte  
ce héros d'une nouvelle espèce, ce sont  
celles de son pays.

CHATEAUBRIAND

Կը ճանչնա՞ք Ռոստոմը: Տեսէ՛ք. կը յառաջանայ փողոցին մէջ, գանգ-  
ուածեղ, թխտակերպ, հաստարևատ, խոտան, տարերային: Ու յանկարծ՝ ժը-  
պիտ մը: Ու ամբողջ նախնական տարերքը կը փոխարկուի վճիտ հողի: Ան-  
տառային հանդարտութիւն, ուր պղտիկ ազմուկները կը չքանան, ուր ամենա-  
փոքր լոյսը իր ապաստանը ունի. անտառ՝ որ փայլատակումներ կրնան խը-  
ռովել: Համբերատար, սովորն ինչպէս Ղարաբաղի անտառիկ մէկ ժայռը, ու-  
րուն ոտքերուն կը փշրուին փորձանքներուն, ձախորդութիւններուն ալիքնե-  
րը: Այո՛, անտա՛ռ. այո՛, յե՛ռ: Կը կազդուրէ, կը վերանարողէ, կը վերա-  
ծնէ: Եւ նաեւ՝ մայր եկեղեցի: Ընդունարան իմացութեան եւ հողի վէտի-  
տումներուն: Ու լո՛ւտ: Իր կեանքը պարուրուած լուսութեամբ: Բայց ի՞նչ  
կեանք: Յեղին ճակատագիրները կըրող մարդիկը իրենց կեանքները կը լքեն:  
Ու Ուաշինկիթոնին համար բոսած սա խօսքերը՝ բնորոշումն են նաեւ Ռոս-  
տոմին: Ո՛վ աւելի իրատունք կրնայ ունենալ քան Ռոստոմ մը, մշակութային  
արտայայտութեան մը մէջ — ինչպէս մամուլի այս բացառիկ թիւը — իր  
տեղը ունենալու:

\*\*

Ահա տպաւորութիւններ, ուժեղ, որ մարդ կը ստանայ Ռոստոմին  
մերձեցումէն, որ կրեցի ես՝ փոքր մանուկ, երբ հայրս յանձնեց զիս իրեն  
Պոլիս՝ տանելու իր հետ Կարին, Սանասարեան վարժարանը, Օսմանեան Սահ-  
մանադրութեան տարիներուն: Փոքրիկ պատահարներ, որ յիշողութիւնս հա-  
ւատարմօրէն պահած է, խորհրդածութեան ազօրիքներէն անցնելէ յետոյ այ-  
սօր, բոլորն ալ կու գան յատկանշելու Ռոստոմին անհատականութեան էա-  
կան, — եթէ ոչ միակ էական, — մէկ զիծը:

Ամէն մէկ հայ անհատ կը ներկայացնէ մտային շփոթութեան, նկարա-  
զրի տատամսումի, հերձուածական միտումի ժառանգական տուեալներ: Այդ  
անհատներէն կազմուած զանազան խմբաւորումները, որպէս բնական հետե-  
ւանք, երեւան կը բերեն ուժգին, յամառ մղումներ զէպի կազմալուծումը,

(1) Այս վերտառութիւնը կրող աշխատասիրութեան հատուած մը:

հաւաքական կեանքի բեկումը եւ ծանօթ այս կարգի վէճերը, որոնց դոյու-  
թիւնը եւ աւերները կը հաստատենք ամէն օր, մեր ստանին թէ հասարակա-  
կան կեանքին մէջ: Եւ նաեւ կրքոտ խառնուածքը, ախտաւոր սէրը զէպի  
Փրագն ու հոնտորութիւնը, մտաւորական միջակորեարին իմաստակութիւնը  
չեն կազմեր մեր ճակատագրին թշուառութիւնը պայմանաւորող նուազագոյն  
ազդակները: Եւ հայ անհատին զիրահաւատութիւնը, արտակարգ պարզա-  
մտութիւնը եւ տարապայման խորամանկութիւնը, որ ի վերջոյ ատաջինին  
մէկ տեսակն է. ապացոյց, որ երկուքին այ գործնական արդիւնքը միեւնոյնն  
է: Աւելորդ է վերլուծումը այս բացասական տուեալներու պատճառներուն:  
Հոյ է Պատմութիւնը: Մեզի հարկաւորը՝ առարկայական հաստատումն է,  
ցոյց տալու համար, որ ցեղը — մի՛շտ կենդանի, ու իր պահպանման բը-  
նազդները մի՛շտ սրուած — ի՛նչ ձեւով կը թօթուէ ինքզինքը, կը յուժէ իր  
վրէժը թէ՛ եկուոր, թէ՛ ժառանգականօրէն բացասական իր միտումներէն,  
զրկելով մեր իրականութեան նայրանդեան մը, Խրիմեան մը, Անդրանիկ մը,  
Ռոստոմ մը, — որպէս խառնիխուռն բոսած անուններ:

Ռոստոմը ծագացաւ մեր իրականութեան մէջ որպէս շանթարգել մեր  
հաւաքական յոռի ձգտումներուն: Որքան հայ անհատը կը հաճոյանայ կազ-  
մալուծումէն, որքան հաւաքականութիւնները կը կրեն տարբայուծման սը-  
ղը, այնքան այ Ռոստոմը կը ներկայացնէ կազմակերպութեան տենչը, միա-  
ձուլումի մղումը, հաւաքական ու բարձրագոյն կամքի մը հետապնդումը:  
Ու այս՝ ստացական կամ մտային որոշումով ձեռք ձգուած առաքելութիւն  
չէ: Անոր բնախօսական պայմանաւորումն է: Ինչպէս ձուկը ջուրին մէջ  
միայն կրնայ ապրիլ, Ռոստոմները կրնան ապրիլ՝ կատարելով իրենց կա-  
ռուցումի գործը, որ ներքին գործառնութիւն է: Այդ առաքելութիւնը հա-  
զիւ սկսած էր քիչ մը բնականօրէն մեր քաղաքական վերապարթնումի ա-  
ռաջին օրերէն սկսեալ: Անոր ստորոգելիները սակայն բացառիկ էին Ռոստո-  
մին մօտ, ինչպէս բացառիկ է բնատուր տաղանդ մը, իր լայնքովը, իր խո-  
րութեամբը: Ու որքան ստրկացման, ուժացման ալիքները կը զբաւենն ցե-  
ղին մակերեսները, այնքան իր ծոցէն ժայթքած մէկ գաւկին հակաթոյնի  
կարողութիւնը կը հասնի անհատաւոր խորութիւններու:

Անցնինք, աւելի շուտ, փաստերուն: Տեսնենք մարդը՝ «գործելիս»:  
Այն ալ՝ սահմանափակ ժամանակամիջոցի մը մէջ, Պոլսէն զէպի Կարին այդ  
ճամբորդութեան իսկ ընթացքին: Նախ եւ առաջ նոթագրենք սա մէկ փոք-  
րիկ փաստը, որ կարող է շատ մասնակի թուիլ եւ որ սակայն մեծապէս բը-  
նորոշ է Ռոստոմին համար: Մեզի կ'ընկերանային բժիշկ Յ. Տէր-Դաւիթեա-  
նը՝ նոր պսակուած Օր. Ս. Պարտիզպանեանին հետ: Միտութիւն մը, որ մի-  
միայն գործն էր Ռոստոմին: Ոչ թէ անոր ստեղծած առիթներուն կամ գա-  
նազան դիւրացումներուն հետեւանքով: Ո՛չ: Անոր միջամտութեանը, անոր  
ստիպումին, անոր յամառ հարկադրանքին հետեւանքով: Հարկ կա՞յ բնոյզը-  
ծելու տարբերութիւնը: Ա՛ս՝ գործ չունի այն բարեմիաներու թեթեւանքին  
միջամտութիւններուն հետ, որոնց փափկազգայութիւններն ու վերապահում-  
ները վատհոգութեան կը քսուին: Հոս տեղի ունեցողը մեծ կամքի մը պրո-  
տիկ մէկ ալիքին կիրարկումն է: Հոս կեցած է մէկը, որ կը կատարէ առանց

աատամսու մի իր արու ժեսթը, միանգամ ընդմիջտ առնելով իր վրայ պատասխանատուութիւնները: Կամք՝ որուն բոլոր այիքները, մեծ թէ սղտիկ, նոյնքան բնագրական թափով, կը ձգտին կիրարկուելու: Այդ աքթը, հազարներու մէջէն սրպէս մէկ օրինակ, հաւատարմութիւնը — աշխարհահասկացքի մը — մէկ մանրիկ ցոյցումն է: Ամբողջացնելն պատկերը: Այդ միութենէն առաջ, նոյն կարգի ճիգերով, գլուխ բերած էր պատկեր դժայիկի Ս. Բարսեղեանին և Օր. Պ. Պարտիպոյանեանին միջև, քոյրը առաջինին: (Հազարներու մէջէն երկրորդ օրինակ մըն ալ միայն): Այս երկու քոյրերն ալ՝ մատուցած աղջիկներ, գուրս բերուած արդէն Ռոստոմին ձեռքովը հայ մանր «պուր-ժուպիայի» փարսիկն և լծուած հաւատարման կեանքի: Անա մէկ ցոյքը այդ կառուցողական նկարագրին, — գուրս բերել անհատները ետաւոր ուժացումի կեանքէն, զնել զանոնք մարդկային ուղիղ ճամբաներու վրայ, կայացրնել տարով բնականոն միութիւններ. իրարու քով բերել այդ մասնակի միութիւնները, հետապնդելու համար տեղական, ազգային, մշակութային նպատակներ. իրարու զօգել բոլոր այլ տեղական համախմբումները, ի խնդիր ցեղային խոչարի: Եւ ահա թէ ինչու այս գործի աստիճանադարին վրայ Ռոստոմը ի յայտ կը բերէր, որեւէ մէկ աստիճանին համար ալ, նոյնքան ուղիղ միջամտում և յամառ կամք: Յեղափոխ կամքի ջրվէժը կրնար հոսիլ միայն մասնակի առուակներուն սրղեղումովն ու միաձուլումովը:

Շարունակենք մեր ճամբան և հասնին Բարեբոյ: Անմիջապէս կու գայ մեզ տեսնելու յայտնի հայրուկը, — այժմ գործարար Սեպուհը, — որ անհամբեր կը սպասէր Ռոստոմին ժամանմանը: Սեպուհի վրայ է Իթթիհատականներու և հայերու ծանրակշիռ խնդիրը: Որքան փայլով կը բանի կարծի հայրուկին գէնքը ու յատակատեսութիւնը կռիւին մէջ, նոյնքան շփոթի ենթարկուած են իր առնելիք որոշումները, քաղքենի լարծուն գետիններուն վրայ: Ռոստոմը նստած՝ կը լսէ: Բայց ի՞նչ յսել, ի՞նչ բնական արուեստ: Ունկրնդութիւնն իսկ արդէն կամաց կամաց կը տարածէ լո՛յսը: Երբեմն բարի հեղանք մը: Երբեմն հարցում մը, որ որոշ կէտի մը վրայ մասնաւոր ու շարժութիւն կը կեդրոնացնէ: Յանկարծ ժպտար կը կորսուի գէմքէն, և բերանը կ'արտասանէ ամբողջական խօսք մը: Հիմնաքար մը կը դրուի: Կը սկսինք նուազ ծածանիլ օդին մէջ: Ոտքերը հաստատ հողի կը հանդիպին: Հայրուկը կը խօսի: Թէ՛յ կը խմենք: Յանկարծ Ռոստոմը բան մը կը պատմէ, վերջերս պատահած, այժմէական: Մեր շուրջը կը լուսաւորուի: Հայրուկը ի՞նքը գրտած է իր ճամբան: Ան զիտէ ալ, թէ ի՞նչ պէտք է բսել թուրքին, ինչպէ՛ս պէտք է բսել այս կամ այն կարելի պարագային: Բայց այդ մասնակի իրերահասկացողութենէն դուրս՝ ուրիշ գոհունակութիւն մը համակած է մեզ: Խորհրդաւոր գոհունակութիւն մը: Հաղորդութիւն մը կ'ստարուած է:

Թուրք ծառան անգամ մը եւս կը լեցնէ դաւաթները. չա՛յ կը խմենք: Կը շարունակենք մեր ճամբան: Երգնկայէն ոչ շատ հեռու, ուրիշ խան մը կ'իջեւանինք: Կը հասնի շքեղ կառք մը և. փարթամ տեսքով մարդիկ վար կ'իջնեն: Վարդգէսն է: Երբ կը մօտենայ կապալով՝ վարդի իւզի բուրում կը տարածուի, մինչ մանրկեկ աղամանդ մը կը շողջոյյ մետաքսեայ փողկապին վրայ: Ոտքը կը ցաւի: Խո՛ստ է ու աղմկալիցօրէն յանձնապատասխան:

Փառլամենթ, քանիտաթիւն, մեպուս, Դաշնակցութիւն, Իթթիհատ... Կրքի ուժեղ հոսանքներ կը ծամածռեն դէմքը, բարձրացնել կու տան ձայնը, կատարել կու տան մեծ ու հատու շարժումներ: Չափի զգացումն ու տարբարական ողջախոհութիւնը խորակուած են: Ռոստոմը մտիկ կ'ընէ, գլուխը ծրոած, լուրջ: Դիմացինին կրքի ուժեղ մէկ ցայտումին՝ կը բարձրացնէ գլուխը ու կը քննէ խօսակցը, յայտնապէս ուրիշ հարցումներու պատասխան փնտռելով քան թէ հետեւելով յորձանուտ խօսքերուն: Յետոյ, դարձեալ, լուս, կը կրէ գլուխը: Բուռն գրեթէ արտարանական թանձրութիւն կը ստանայ: Ռոստոմին հակադրուող, ծանրանիստ հանդարտութիւնը կը զայրագնէ միւսին կիրքը: Եւ յանկարծ կը պայթի սա խօսքը. «Եթէ... եթէ... եթէ... այն ժամանակ ես առանձին կը դնեմ իմ քանիտաթիւնս»:

Ռոստոմը, այս անգամ, գլուխն իսկ չի բարձրացնէր: Կը կատարէ իր ընտանի ժեսթերէն մէկը, — ոչ միջնամտը, վարժ ու զիտուն թուալումներով, կը կատարէ պեղումներ քթի խոռոչներուն մէջ: Երկու բուռն լուրջութիւն: Ապա, անխոսով մեղմութեամբ, կը հարցնէ.

— Ո՞տք է ցաւում, Վարդգէ՛ս:

Տիկինները մօտեցան և յայտնեցին, որ կրնայինք ընթրել: Յաջորդ առաւօտ, հեռուէն տեսայ, որ խօսակցութիւն մը կը թռչտի երկուքին միջև, պայծառ առաւօտուն մէջ, թեթեւ, գուարթ: Վարդգէսին սուր, քիչ մը կնոջական ձայնը երբեմն կը պայթի խնդուքի մը մէջ, մինչ Ռոստոմին դէմքը կը վսթիթի այնքան մտադի ու նուրբ ժպտի մը տակ: Երբ հրաժեշտ առինք, Վարդգէսին հին յեղափոխականի աչքերը իրենց ամենէն ազուր ակնարկներէն մէկը կը ցոլացնէին:

Ռոստոմին մեծզի ձեռքերը անդադար, այսպէս, ծեփեցին իր Տունը: Յեղին կառուցանող հանճարն է, որ նստած է իր լուսագոյն գաւակներէն մէկուն հոգիին: Ու ամենէն բարձր կառուցումը: Ոմանք, այդ ցեղին գաւակներէն, ուրիշներու հրապարակներուն վրայ բարձրացուցին ճարտարապետական յուշարձաններ, ոմանք նոյն հանճարին ցոլացումը եղան՝ թուղթն ու դրիչը գործածելով, ոմանք՝ ձայնանիչը, ժողովուրդը՝ ձայնը: Ռոստոմը գործածեց կամքերը իր տաճարը կառուցանելու համար: Տաճար՝ ուր պիտի պաշտուէր այն կուռքը, որմէ աւելի մեծ ժողովուրդները չեն ճանչցած, — անկախութեան, հողի պատուութեան խոչարը: Եւ եթէ ստրկացնող մուրճերը, դարերով, իջան ժողովուրդի երեսին անոր ցեղային դիմագիծը աղարտելու, ապա ուրեմն, նոյն ցեղին մէկ ընտրեալ գաւակին կառուցողական հանճարին թափը բաւ եղաւ ծառայելու համար կրթած հասակները, վերադարձնելու համար ամէն մէկ անգամին սկզբնական կրակը, ու խոնարհած հօտ մը՝ դարձնելու գիտակից զանգում, պատրաստ՝ կա՛մ դիմելու իր վսեմ ճակատագրին, կա՛մ զոհուելու:

Այդ թափին խորութիւնն ու լայնքը դադարաւոր կրնան տալ անհատին ծանրութեան մասին: Ժողովուրդներու ծառերը չեն կրնար արտաբերել աւելի ազնուենի պտուղ մը: Այդ հիմքով, մարդկութիւնը կարելի է բաժնել երկուքի: Անոնք՝ որոնց ժամանակը կը խեղդուի իրենց իսկ ոչլուտ կեանքին մէջ, և անոնք՝ որոնց կեանքը, իրենց կառուցումի մեծ ձգտումովը, կը միանայ

իր նմաններու ճակատագրին, կը նոյնանայ անոր հետ: Մեֆիսթոֆելը ևս ասանց մեծ դժուարութեան կը յաջողի քանկել Ֆաուստին մեղքի ըմբռնման պատուարը: Արդարև, այն բողոքին երբ պատճառներու վերլուծումը չարի արքը հասկնալի կը դարձնէ մեղքի, մեր բարոյական հակադրեցութիւնը կը դադրի գործելէ: Բայց պարտուած Ֆաուստը, մեղքի բոլոր փապուղիններէն անցնելէ յետոյ երբ կը վերադառնայ սկզբնական յրացման, անխորտակելի, կէօթէական միջնարկի մը մէջ կը ցցէ սա ճշմարտութիւնը, — այն՝, թե-րևս մեղքը, թերևս չարը չկայ, բայց աշխարհը կը բաժնուի երկու տեսակ մեծ ուժերու: Ասաջինը՝ կառուցանող, ստեղծագործող ուժերը՝ երկրորդը՝ տերու, հակաստեղծագործական ուժերը՝ սատանան: Ընարեակները՝ ստեղծագործողներն են, կառուցանողները: Ռոստոմները կառուցանողներն են, իրենց շինարարական մագնիսը կը քաշէ ու կը նետէ իրերուն զանդուածները կառուցողական խնայիլ փեմ պատյաններուն մէջ, ուր անձուկ անհատը կը մեռնի, ուր օրէնքը՝ հաւաքականութեան կամքն է: Անմահ կամքը՝ որ պատմութեան զարգանդին ընդմէջէն կը ձգտի իրագործուելու:

Ահա թէ ինչու Ռոստոմին՝ այս նոր տեսակի հերոսին գէնքերը խորհրդաւոր են, դժուար վերլուծելի: Ո՛չ փայլուն մատուցականութիւնն է իրենց յատկանիշը, ո՛չ հսկայութիւնը, ոչ իսկ բիրտ ուժին գիտութիւնը, ոչ ալ լայնուն նրբութիւնները քաղաքականութեան: Ի՞նչը հապա, ինչպէ՞ս...

Չանդուածեղ խառնուածք մը, որ չի փայլիր իրերուն մասին, կամ իրերուն առթիւ խօսելով կամ գրելով: Ան ունի մոգուրիւնը դառնալու այդ իրերուն նակատագիրը: Ուրիշներ կը խօսին կամ կը գրեն այս առթիւ, կամ այն մասին: Ան՝ կը գտնայ բանն իսկ: Ահա թէ ինչու իր նմանները կը պատկանին բոլորին և բոլոր ժամանակներուն:

Զոյց մը թոք չնշած Ղարաբաղի վճիռ օդերը, որ կը թաւալին իր արիւնին մէջ Գողթման հայրենիքի անիմանայի ու խորհրդաւորէն արգաւանդաւանդութիւնները: Պանծայի երկիր Զոհերու: Կը թեւակոխէ կեանքին մէջ երբ սլաւ ցեղը, (Յ)ական թուականներուն, իր մէկ քանի մեծագոյն զուակներուն ձայնովը, անման շեշտերով, կը ձայնարկէ մեծագոյն խնայը՝ մարդկայնակամը: Ու նախախնամօրէն այդ սնունդին կարօտ իր հողին կը զուգադիպի համապատասխան ժամանակաշրջանին: Մարքսէն, Կառլեյկէն, Մրենսերէն և այսպիսիներէն անհամեմատօրէն աւելի՝ իր զգայութիւնն ու մտածումը կը բարախէր Թուրքոյով: (Կը յիշեմ այն բացառիկ ու զուսպ խանդավառութիւնը, որով իր հսկայ մարմինը համակուած էր՝ երբ կարգաց ինծի ամբողջութեամբ Թուրքոյի «Երեք Մահը»):

Գուհիկը, շարքայինը, միջակը արժէքներու նեղլիկ աստիճանաչափ մը կ'ընդգրկէ, սկսելով վարէն, հիմնուելով իր անհատական շահերու ըմբռնումին ու ապա՝ դասակարգային ազգականած համերաշխութեան վրայ: Ասոնք անմիջապէս որ գտնուին այդ աստիճանէն վեր մակարդակի մը վրայ՝ կ'ունենան գլխու պտոյտ, կը սայթաքին, կամ յանցապարտօրէն կ'իյնան: Ռոստոմները իրենց լոյսը կ'առնեն վերէն: Արժէքներու նուիրապետութիւնը կը դասաւորուի անկէ սկսելով՝ խտէլէն, մարդկայնակամէն: Իսկ իտէլը՝ նախ ինքնուրացում է, զոհաբերում, կառուցանում: Ռոստոմը այս նոր կար-

գին պատկանող հերոսն է: Իրենց բերած հարստութիւնովն է, որ ցեղերը կ'ապրին:

\*\*

Վերջին օրն է. փայր կտրին պիտի հասնինք: Ձիերը կը վրնջեն, ու իրենց քաշած կտրին ապուկէն, խօսքան բացատներու վրայ, կենդանիներ՝ խրտչած, կը փախչին: Ռոստոմը գոտարթաւոր՝ ու հայեցողական տրամադրութեան մէջ է: Կ'ըմբռնէ խորհրդածութեան խորագոյն հաճոյքը: Այդ կտրի բնութեական հաճոյք վիտնականը կ'ունենայ. ստեղծագործում է այդ, — մնաց որ, ինչպէս յետագայ գլուխները ցոյց պիտի տան, պատրաստուած մասնագէտ մը կար իր մէջ, մասնաւորապէս բնական գիտութիւններու: Կը խօսինք. կը պատմենք:

... Վեհանձն առիւծը իմ ամբողջական, մանուկի խանդավառութիւնս ետուի մէջ է գրեր: Երեւակայեցէ՛ք... չէ բզկտեր փայտահատը: Ազնի՛ւ կենդանի: Ինչո՞ւ: Ոտքին փուշն է հաներ: Ա՛խ առիւծ մը ըլլար, առիւծի մը հանդիպէինք, է՛ս ալ մօտենայի, է՛ս ալ փուշ մը հանէի, է՛ս ալ բան մը ընէի... Վեհանձն անասուն: ...Ռոստոմին թուխ մազերուն, այտերուն, ճակատին, քիւնի, բերնին վրայ նրբին ժողխը ծաղկեցաւ: Իր փոքր, սև աչքերը փայլեցան այն ամենէն իմացական, բարի հեղանքի լոյսովը: Սեղմեց, կառքին մէջ, վախա իրանս կուրծքին ու ըսաւ.

— Եթէ հանդիպիս նրան՝ յամենայն դէպս չմօտենաս...

Վերջին գիշերը խառնի մէջ: Իտուսէն, ամէն կողմէ անապատօլութեան զգացում: Անեակին գոտը փաստած կղպանք մ'իսկ չունի: Ամէն կողմ ճեղքեր. խարխլած ձկուն: Քանի անգամ ըսեր ենք. «Եթէ գան, կողոպտեն, մեռցնեն՝ ի՞նչ պիտի բնենք: Իրենց ըրածը իրենց պիտի մնայ»: Իմ մանուկի տրտում ու արդէն անձկազին խառնուածքս գրեթէ նոպայի մը կը մատնուի: Ռոստոմը ներս կը մտնէ: Անկողինս ձիւղ իրենին քովը. ներքնակները իրար կպչած: ...Մողականօրէն սիրտս կը գտնէ իր հանդարտութիւնը, իր ջերմութիւնը: Երազանքը ալ չի խրտչիր: Հիմա ոչինչէ, ոչ ոքէ, ո՛չ ալ մահէն կը վախնամ: Խորհրդաւոր ամբարտակներ կը խորտակուին ու լոյսի, ու կեանքի կոհակները անընդհատ կը հոսին: Ես հանդարտօրէն կընամ քնանալ երբ մօտս կը շնչէ հսկայ մը: Փողովուրդները, իրենց տքնութիւնէն յետոյ, կընան անխռովօրէն փակել իրենց թարթիչները, արդարութեան մէջ, երբ Ռոստոմները կը հսկեն:

Ահա, անսպասելի, ինչպէս բնութիւնը կընայ ունենալ, շտեմարան մը: Այս ճամբորդութեան երկայնքին ու իր կեանքի երկայնքին, ան ցանց ներդաշնակութիւն: Ներդաշնակութիւններուն ամենէն տեսականը՝ հողեղէնին ներդաշնակութիւնը: Այն՝ ուր կընան ուռճանալ ժողովուրդի մը ձգտումները, այն՝ որուն կշռոյթն է մարդկայնականին բարախումը, այն՝ ուր ամէն ինչ խոհուն է ու պայծառ, այն՝ ուր ամէն ինչի ու ամէն ոքի համար տեղն ու ճամբան որոշուած է: Այն՝ ուր կը ծածանին բարիքն, մեծին, վեհանձնին դրօշակները:

Ա՛խ, պաշտելի՛, պաշտելի առիւծները իմ ցեղիս:

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- Հ. Յ. Գ. Բիրոյի խօսք  
ԳԵՐԱԶԱՆՑՕՐԷՆ ՅԵՎԱՓՈՆԱԿԱՆԸ . . . . . 3 - 4
- Այս հատորը (Հ. Տ.) . . . . . 5 - 8

### Ա. ՄԱՍ .— ՌՈՍՏՈՄԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

- 1.- Սիմոն Վրացեան, — ՌՈՍՏՈՄԸ («Յուշապատում Հ. Յ. Գաշնակցութեան») 11-17
- 2.- Միքայէլ Վարանդեան, — \* (\* Հ. Յ. Գաշնակցութեան Պատմութիւն», Ա. հտր.) 18-19
- 3.- ՌՈՍՏՈՄ ԵՒ ԱՐԱՄ (տոպոնիմի յօդուած «Գրօշակ»ի, քիւ 1-2, 1929) 20-23
- 4.- Զապէլ Եսայեան, — ՌՈՍՏՈՄ («Վերածնունդ», քիւ 3-4, 1920) 24-29

### Բ. ՄԱՍ .— ՌՈՍՏՈՄԷՆ ԳՐՈՒԹԻԻՆՆԵՐ

- 1.- ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ («Գիւտն Հ. Յ. Գաշնակցութեան», Ա. հտր.) . . . . . 33-35
- 2.- ԱՅԻ ՈՒ ԲԵՆ («Գրօշակ», Նոյ. 1893—Մայիս 1894) . . . . . 36-47
- 3.- ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՐԷԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ («Վէմ», քիւ 1, 1935) . . . . . 48
- 4.- ՄԱՀՄԵԳԱԿԱՆ ԱՄԲՈՆԻ ԳԵՐԸ («Գրօշակ», քիւ 5 և 6, 1896) . . . . . 49-54
- 5.- ՎՆԱՍԱԿԱՐ ՏԱՐԸՆԵՐ («Գրօշակ», քիւ 12, 1896) . . . . . 55-58
- 6.- ԳԻՊՈՒՄԱՏ ՀՐԷՇՆԵՐ («Գրօշակ», քիւ 19, 1896) . . . . . 59-61
- 7.- ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ («Գրօշակ», քիւ 1, 1901) . . . . . 62-64
- 8.- ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹԻՆՆԵՐ ԵՒ ԻՐ ՀԱՐԵԻԱՆՆԵՐԸ («Գրօշակ», քիւ 5, 1931) . . . . . 65-66
- 9.- ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԸՆԿԵՐԸ («Հայրենիք» բացատիկ, քիւ 2, 1914) . . . . . 67-72
- 10.- ՌՈՍՏՈՄԻ ՃԱՌԸ («Գրօշակ», քիւ 8-10, 1926) . . . . . 73-75
- 11.- ՄԱԿԵԳՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ («Հ. Յ. Գ. Վարսունամեակ») . . . . . 76-81
- 12.- ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՓՈՆՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՆՆԵՐԸ («Վէմ», քիւ 1, 1936) . . . . . 82-90
- 13.- ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ («Յուսաբեր», 16 Նոյ. 1917) . . . . . 91-92

### Գ. ՄԱՍ .— ՌՈՍՏՈՄԷՆ ՆԱՄԱԿՆԵՐ

- 1.- Ատրպատականի ընկերներում (1894 Սեպտ.-Հոկտ. ?) . . . . . 95
- 2.- «Գրօշակ»ի խմբագրութեան (1895 Մայիս ?) . . . . . 97
- 3.- » » (1895 Յունիս ?) . . . . . 98
- 4.- » » (11-6-1895, ծածկագիր) . . . . . 99
- 5.- » » (1895ի ամառ) . . . . . 101

6.- «Իրօջակ»ի իմրագրութեան	(12-9-1895)	104
7.- Թարիզի ընկերներուն	(22-9-1895)	104
8.- Յովհ. Եւստօֆեանին	(24-11-1895)	105
9.- Արիստակէս Զօրեանին	(25-12-1895)	106
10.- » »	(1-2-1896)	107
11.- Թարիզի կոմիտէին	(Փետր. 1896)	108
12.- «Իրօջակ»ի իմրագրութեան	(6-2-1896)	108
13.- Թարիզի կոմիտէին	(Փետր. 1896)	109
14.- » »	(1896ի գարուն)	110
15.- » »	(1896ի գարուն ?)	111
16.- » »	(15-5-1896)	112
17.- » »	(16/28-5-1896)	113
18.- «Իրօջակ»ի իմրագրութեան	(19-6-1896)	115
19.- Թարիզի կոմիտէին	(3-7-1896)	116
20.- » »	(29-8-1896)	117
21.- » »	(6-9-1896)	118
22.- » »	(1896 Հոկտեմբեր ?)	119
23.- » »	(13-10-1896)	120
24.- » »	(13-11-1896)	120
25.- » »	(16-11-1896)	122
26.- » »	(20-11-1896)	122
27.- Վազգէնին	(1896 Գեկտեմբեր)	123
28.- Տանկաստանի կոմիտէներին	(1896 Գեկտեմբեր ?)	124
29.- Թարիզի կոմիտէին	(31-12-1896)	125
30.- » »	(5-1-1897)	125
31.- Բիւրոյին, Թիֆլիս	(7-1-1897)	127
32.- Գարեգինին՝ իմրագրութեան կողմէ	(?)	127
33.- Աղեֆսանդրիոյ կոմիտէին		128
34.- Թարիզի կոմիտէին	(9 կամ 10 Փետր. 1897)	129
35.- Պոլսոյ կոմիտէին	(16-2-1897)	131
36.- Տրապիզոնի կոմիտէին	(16-2-1897)	132
37.- Ամերիկայի կոմիտէներուն	(18-2-1897)	132
38.- Աղեֆսանդրիոյ կոմիտէին	(19-2-1897)	136
39.- Հրաչ Թիրեաբեանին	(20-2-1897)	136
40.- Արշակ Վոստանին	(25-2-1897)	137
41.- Յովնան Գարեանին	(28-2-1897)	140
42.- Ատրպատականի Կ. Կոմիտէին	(1897 Փետրուար ?)	141
43.- Աղեֆսանդրիոյ կոմիտէին	(?)	143
44.- Հրաչ Թիրեաբեանին	(5-3-1897)	143
45.- Յովհ. Եւստօֆեանին	(12-3-1897)	144
46.- Բիւրոյին, Թիֆլիս	(25-3-1897)	145
47.- Պանֆ Օբքումանի սոցոց	(27-3-1897)	146
48.- Թարիզի կոմիտէին	(7-4-1897)	147

49.- Ամերիկայի Կ. Կոմիտէին	(15-4-1897)	147
50.- Զարիֆեանին	(22-4-1897)	149
51.- Պարսկաստանի ընկերներուն	(23-4-1897)	149
52.- Ամերիկայի Կ. Կոմիտէին	(27-4-1897)	151
53.- Յովհ. Եւստօֆեանին	(4-5-1897)	152
54.- Հրաչ Թիրեաբեանին	(8-5-1897)	152
55.- Միքայիլ Տամատեանին	(10-5-1897)	153
56.- Ատրպատականի Կ. Կոմիտէին	(1897 Յունուար ?)	153
57.- Բժ. Բրիտտոփոյ Օհանեանին	(13-8-1897)	156
58.- Թարիզի կոմիտէին	(1897 Օգոստոս ?)	157
59.- » »	(1897 Սեպտեմբեր կամ Հոկտեմբեր)	157
60.- » »	(13-11-1897)	158
61.- Ժընեւի ընկերներուն	(27-3-1898)	160
62.- » »	(2-4-1898)	160
63.- » »	(20-4-1898)	161
64.- » »	(24-4-1898)	161
65.- ?	(20-7-1901)	162
66.- Անիշխանական Գեկանդին	(6-6-1905)	163
67.- Հ.Յ.Դ. (Արեւել.) Բիւրոյին, Թիֆլիս	(10-1-1908)	164
68.- Եփրեմին	(26-7-1909)	169
69.- Յովսէփ Միրզայեանին	(26-3-1909)	170
70.- Սիմոն Վրացեանին	(22-1-1912)	171
71.- » »	(11-4-1912)	172
72.- » »	(13-5-1912)	173
73.- » »	(27-7-1912)	174
74.- » »	(10-10-1912)	174
75.- » »	(14-10-1912)	175
76.- » »	(16-12-1912)	176
77.- » »	(23-12-1912)	177
78.- » »	(27-1-1913)	177
79.- » »	(12-2-1913)	178
80.- » »	(24-2-1913)	179
81.- » »	(9-3-1913)	179
82.- » »	(7-4-1913)	180
83.- » »	(24-4-1913)	180
84.- » »	(26-4-1913)	181
85.- » »	(22-5-1913)	181
86.- » »	(11-8-1913)	182
87.- » »	(14-8-1913)	183
88.- » »	(20-10-1913)	184
89.- » »	(1913ի վերջը)	185
90.- » »	(5-1-1914)	185
91.- » »	(12-2-1914)	186

92.- Սիմոն վրացեանին	(2-4-1914)	. . . . .	188
93.- Ամերիկայի Կ. Կոմիտէին	(2-12-1917)	. . . . .	189

**Դ. ՄԱՍ. — ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ**

1.- Սիմոն վրացեան, — ՌՈՍՏՈՄ (կենսագրական ուրուագիծ)	(«Գրօշակ», քիւ 1-2, 1929)	. . . . .	193-209
2.- Յովսէփ Տէր Դաւթեան, — ՌՈՍՏՈՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ	(«Գրօշակ», քիւ 1-2, 1929)	. . . . .	210-212
3.- Մարտին Շաքիրեան, — ՌԻԱՆՆՈՂՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ, ՄՈՍԿՈՒԱ	(«Հայրենիք» ամս., քիւ 5, 1923)	. . . . .	213-217
4.- Կարէն, — ՍԱՄՈՎԱՐԻ ԽՈՐՀՐԳԱՆՈՐ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ	(«Գրօշակ», քիւ 11-12, 1930)	. . . . .	218-219
5.- Ռուբէն, — ԱՆԵՐԵՒՆՅԹ ՂԵԿԱՎԱՐՁ (Հայ յեղափոխականի մը յիշատակները), Ա. տիպ. Գ. հար.)	. . . . .	. . . . .	220-221
6.- Վահան Նաւասարդեան, — ՌՈՍՏՈՄԻ «ԽԱՐԴԱՅԻՆԻՒՆՆԵՐ»	(«Գաղափարների ողից») . . . . .	. . . . .	222-223
7.- Վահան Մազմանեան, — ՅՈՒՇԵՐ ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ	(«Գրօշակ», քիւ 1-2, 1929)	. . . . .	224-229
8.- Պերճուհի Բարսեղեան, — ՌՈՍՏՈՄԸ ՊՈՒԿԱՐԻՈՅ ՄԷՋ	(«Գրօշակ», քիւ 3, 1929)	. . . . .	230-231
9.- Սաքենիկ Տէր Դաւթեան, — ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԻՆ	(«Գրօշակ», քիւ 10, 1928)	. . . . .	232-233
10.- Սաքենիկ Տէր Դաւթեան, — ԲԵԿՈՐ ՄԸ ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԻՆ	(«Գրօշակ», քիւ 8-10, 1926)	. . . . .	234-235
11.- Մալխաս, — ԹԻՖԼԻՍ, 1903 («Ապրումներ») . . . . .	. . . . .	. . . . .	236-237
12.- Միքայէլ վարանդեան, — ՊԱՅՔԱՐԸ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՒԱԾՆԵՐՈՒ	ԳՐԱՆԻՄԱՆ ԳԷՄ («Հ.Յ.Գ. Պատմութիւն», Ա. հար.)	. . . . .	238-239
13.- Արշակ Ջամալեան, — ԻՄ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ	(«Գրօշակ», քիւ 1-2 եւ 3, 1929)	. . . . .	240-248
14.- Յովսէփ Թաղէսեան, — ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻ ՄԷՋ	(«Հայրենիք» ամս., Նոյ.-Գեկտ. 1946)	. . . . .	249-251
15.- Վահան Նաւասարդեան, — ԿԵՆԳԱՆԻ ԳՈՐԾԻ ՎԱՐՊԵՏԸ	(«Յուշապատում Հ. Յ. Գաղանկցութեան») . . . . .	. . . . .	252
16.- Խ. Եզանեան, — ՌՈՍՏՈՄԸ (Գրօշակ», քիւ 8-10, 1926)	. . . . .	. . . . .	253-254
17.- Ղազար, — ՄԻ ԷՋ ԹԱՒՐԻՋԻ ԿԵԱՆՔԻՑ (Գրօշակ», քիւ 1-2, 1929)	. . . . .	. . . . .	255
18.- Միքայէլ վարանդեան, — ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻԿ	ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ	(«Հ. Յ. Գ. Պատմութիւն», Բ. հար.) . . . . .	256-258
19.- Յ. Էլմար, — ՌՈՍՏՈՄԻ ՋԵՐՄ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ	ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ («Յիբիք») . . . . .	. . . . .	259-270
20.- Ամարէ Ամարեան, — ԱՏՐՊԱՏԱԿԱՆ, 1908-1909	(«Հ. Յ. Գաղանկցութիւնը Պարսկաստանում») . . . . .	. . . . .	271-275

21.- Յովակիմ Արշակունի, — ՅՈՒՇԵՐ ՌՈՍՏՈՄԸՆ	(«Հայրենիք» ամս., քիւ 3, 1952)	. . . . .	276-281
22.- Յովակիմ Արշակունի, — ՄԻ ԲԱՆԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՃՇՂՈՒՄՆԵՐ	. . . . .	. . . . .	282-284
23.- Սիմոն վրացեան, — ԿԱՐԻՆՈՒՄ («Կեանքի ողիցներով», Բ. հար.)	. . . . .	. . . . .	285-289
24.- Ռուբէն Դարբինեան, — ՌՈՍՏՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՌԸ («Երկեր», Ա. հար.)	. . . . .	. . . . .	290-292
25.- Ռուբէն Դարբինեան, — ԶԱՆԱՐԵԱՆ ԵՒ ՌՈՍՏՈՄ (Յոյն)	. . . . .	. . . . .	293-294
26.- Գուրգէն Միլիթարեան, — ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ	(«Յուսաբեր», 14 Գեկտ. 1940)	. . . . .	295-299
27.- Կարօ Սասունի, — ՌՈՍՏՈՄԸՆ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ	(«Գրօշակ», քիւ 1-2, 1929)	. . . . .	300-303
28.- Կարօ Սասունի, — ԱՐԱՄԻ ԵՒ ՌՈՍՏՈՄԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ (1915)	(«Արամք» հատորէն) . . . . .	. . . . .	304
29.- Բժ. Երուանդ Խաթանասեան, — ՌՈՍՏՈՄԸ (Ստեփան Զօրեան)	(«Հայրենիք» ամս., քիւ 1-5, Լե. տարի)	. . . . .	305-316
30.- Ռուբէն Դարբինեան, — ԲԱԳՈՒ, 1918 («Երկեր», Ա. հար.)	. . . . .	. . . . .	317-319
31.- Արամ Ալչուզեան, — ՌՈՍՏՈՄԸ ԲԱԳՈՒՄ	(«Հայրենիք» ամս., քիւ 7, 8, 10 եւ 11, 1936 եւ քիւ 1, 1957)	. . . . .	320-369
32.- Սերգէյ Մելիք-Յօլջեան, — ԲԱԳՈՒՆԻ ՀԵՐՈՍՍԱՐԱՐՏԸ	(«Հայրենիք» ամս., քիւ 9, 1925)	. . . . .	370-378
33.- Արամ Ալչուզեան, — ԻՆԶՊԵՍ ՌՈՍՏՈՄԸ ՀԵՆԱՅԱՆ ԲԱԳՈՒՆԻՑ	(«Հայրենիք» ամս., քիւ 1, 1948)	. . . . .	379-383
34.- Ա. Արշակունի, — ԱՅԼ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ	(«Ազգակ» շաբաթօրեակ, 1 Փետր. 1946)	. . . . .	384
35.- Գ. Սէյրան, — ՄԻ ԷՋ ՌՈՍՏՈՄԻ ԿԵԱՆՔԻՑ	(«Առատ» շաբաթօրեակ, քիւ 3, 1919 Մարտ)	. . . . .	385-388
36.- Գրիգոր Ամիրեան, — ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ	(«Հայրենիք» ամս., քիւ 4, 1960)	. . . . .	387-404
37.- Յովսէփ Տէր Դաւթեան, — ՌՈՍՏՈՄԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻՑ	(«Գրօշակ», քիւ 1-2, 1929)	. . . . .	405-406
38.- ՌՈՍՏՈՄԻ ՅՈՒՂԱՐԿԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ	(«Առատ» շաբաթօրեակ, քիւ 3, 1919 Մարտ)	. . . . .	407-408
39.- ՌՈՍՏՈՄ (խմբագրական «Վերածնունդ», քիւ 4, 1919)	. . . . .	. . . . .	409-410
40.- Շահան, — ՌՈՍՏՈՄ («Հայրենիք» օրաթերթ, 15 Մարտ 1919)	. . . . .	. . . . .	411-412
41.- ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ (Ռոստոմ), (խմբագրական «Հայրենիք» օրաթերթի, 15 Մարտ 1919)	. . . . .	. . . . .	413-415
42.- ՌՈՍՏՈՄԸ (խմբագրական «Աշխատառ»-ի, Երևան, 18 Յունուար 1920)	. . . . .	. . . . .	416-417
43.- ՀԱՅ ԳԵՄՈՎՐԱՏԻԱՅԻ ԽԵՂՃԸ («Նոր կեանք» շաբաթօրեակ, Թեհրան, Փետր. 1923, քիւ 60)	. . . . .	. . . . .	418-420
44.- ԱՌԱՋՆՈՐԴԸ (խմբագրական «Ազգակ» շաբաթօրեակ-«Գրօշակ»-ի, Ե. տարի, 24 Փետր. 1974, քիւ 10)	. . . . .	. . . . .	421-422

**Ե. ՄԱՍ .— ՅԱԻԵԼՈՒԱՆ**

- 1.- Արամ Իճիկեան, — ՌՈՍՏՈՄ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆ  
 («Յովհաննէս Թումանեան»  
 Հայկ. Ս. Ս. Հ. Գիտ. Ակադեմիայի  
 հրատարակչութիւն, Երեւան, 1969) . . . . . 425-426
- 2.- Սիման Վրացեան, — ՌՈՍՏՈՄԻ «ՇՆԻԿ»Ը  
 ՌՈՍՏՈՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԽԱԺԱԿԻՆ . . . . . 427-428  
 Ռոստոմի խորհուրդը Խաժակին . . . . . 427-428
- 3.- Ռոստոմ, — ՆԱՄԱԿ ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆԻՆ (2 Յունիս 1913) . . . . . 429
- 4.- Նիկոլ Աղբալեան, — ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ . . . . . 430-431
- 5.- Հրաչ Զարդարեան, — ՌՈՍՏՈՄԸ (Յեզիմ կառուցող հանճարը) . . . . . 432-437

**ՆԿԱՏՈՒԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ**

Էջ	տող	գրուած է	պէտք է ըլլայ
48	<i>վերջին</i>	<i>Յունուար-Ապրիլ 1965</i>	<i>Յունուար-Ապրիլ 1935</i>
185	<i>համակ թիւ 90</i>	<i>5-9-1914</i>	<i>5-1-1914</i>
238	<i>առաջին</i>	<i>Միջայիլ</i>	<i>Միջայիլ</i>

Խմբագիր

ՀՐԱՉ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ԳԻՆ

Լիբանանի 35 լ․ ոսկի  
Արտասահման 15 տոլար

**Կեդրոնատեղի**

Librairie HAMASKAÏNE  
10, Rue Hussein Beyhoum  
Beyrouth — LIBAN

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ  
ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ**

Պատուեր 527  
Տպագրանակ 2500  
Պրակ 28  
Աւարտում 25-5-1980



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ**